Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1294

22
76

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԻՊ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ [illegible] ՅԱԿՈԲԱՅ ՊՕՅԱՃԵԱՆԻ
1877

11402

Հրամանաւ Կայսերական ժողովոյ հասարակաց կրթութեան

ՑԱՆԿ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

	Երես
Աւետարան ըստ Մատթէոսի	1
» » Մարկոսի	99
» » Ղուկասու	161
» » Յովհաննու	265
Գործք Առաքելոց	343
Թուղթ Պօղոսի Առ Հռովմայեցիս	444
» » » Կորնթացիս Առաջին	487
» » » » Երկրորդ	528
» » » Գաղատացիս	556
» » » Եփեսացիս	570
» » » Փիլիպեցիս	584
» » » Կողոսացիս	594
» » » Թեսաղոնիկեցիս Ա.	604
» » » » Բ.	613
» » » Տիմոթէոս Ա.	619
» » » » Բ.	631
» » » Տիտոս	639
» » » Փիլիմոն	645
» » » Եբրայեցիս	647
» Կաթուղիկեայց Յակոբու	679
» » Պետրոսի Ա.	690
» » » Բ.	702
» » Յովհաննու Ա.	709
» » » Բ.	721
» » » Գ.	723
» » Յուդայի Առաքելոյ	225
Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ	728

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ
ՄԱՏԹԷՈՍԻ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Քրիստոսի ազգահամարը, մկրտութիւնը, անունը և ծնունդը։

1 ԱԲՐԱՀԱՄԻ որդի Դաւթի որդի Յիսուսի Քրիս-
տոսի ծննդեան գիրքը։
2 Աբրահամ ծնաւ Իսահակին. Իսահակ ծնաւ Յա-
կոբին. Յակոբ ծնաւ Յուդային և նորա եղբար-
3 ներին։ Յուդան ծնաւ Փարէսին և Զարային Թա-
մարիցը. Փարէս ծնաւ Եզրոնին. Եզրոն ծնաւ Ա-
4 րամին։ Արամ ծնաւ Ամինադաբին. Ամինադաբ
ծնաւ Նաասոնին. Նաասոն ծնաւ Սաղմոնին։
5 Սաղմոն ծնաւ Բոոսին՝ Հռաքէբայիցը. Բոոս ծնաւ
Օբէթին՝ Հռութիցը. Օբէթ ծնաւ Յեսսէին. Յես-
6 սէն ծնաւ Դաւիթ թագաւորին։ Դաւիթ թագա-
7 ւորը ծնաւ Սողոմոնին Ուրիայի կնկանիցը. Սողոմոն
ծնաւ Ռօբովամին. Ռօբովամ ծնաւ Աբիային. Ա-
8 բիան ծնաւ Ասափին. Ասափ ծնաւ Յօսափաթին.
Յօսափաթ ծնաւ Յօրամին. Յօրամ ծնաւ Ոզիային.
9 Ոզիան ծնաւ Յօվաթամին. Յօվաթամ ծնաւ Ա-

10 քազին. Աքազ ծնաւ Եզեկիային. Եզեկիա ծնաւ
Մանասէին. Մանասէ ծնաւ Ամոնին. Ամոն ծնաւ
11 Յովսիային. Յովսիան ծնաւ Յեքոնիային՝ եւ նորա
եղբայրներին. Բաբելացոց գերութեան ժամանակին.
12 Բաբելացոց գերութենից ետեւ՝ Յեքոնիան ծնաւ
Սաղաթիէլին. Սաղաթիէլ ծնաւ Զօրաբաբէլին.
13 Զօրաբաբէլ ծնաւ Աբիութին. Աբիութ ծնաւ
14 Եղիակիմին. Եղիակիմ ծնաւ Ազորին. Ազոր ծնաւ
Սադոկին. Սադոկ ծնաւ Աքիմին. Աքիմ ծնաւ
15 Եղիուդին. Եղիուդ ծնաւ Եղիազարին. Եղիազար
ծնաւ Մատթանին. Մատթան ծնաւ Յակոբին։
16 Յակոբ ծնաւ Յովսէփին՝ Մարիամին մարդն. որ նո-
րան նշանած էր Մարիամ կոյսը. որ նորանից ծըն-
17 ւաւ Յիսուս՝ որ կոչուեցաւ Քրիստոս։ Այսպէս ա-
մէն ազգերը Աբրահամից մինչեւ Դաւիթը՝ տասն-
ուչորս ազգ էն՝ եւ Դաւիթից մինչեւ Բաբելացոց
գերութիւնը տասնուչորս ազգ. եւ Բաբելացոց
գերութենիցը մինչեւ Քրիստոս՝ տասնուչորս ազգ։
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն այսպէս էր. նո-
րա մայր Մարիամը նշանած էր Յովսէփին, եւ դեռ
որ իրար մօտ չէին եկած՝ ինքը Սուրբ Հոգուցն յը-
19 ղացած գտնուաւ։ Եւ նորա մարդ Յովսէփը՝ որովհե-
տեւ արդար մարդ էր, եւ չէր ուզում որ նորան
խայտառակ անէ, միտք արաւ որ ծայն չհանած
20 արձակէ նորան։ Եւ դեռ որ նա այս մտածմունքիս
մէջն էր՝ ահա՛ Տէրին հրեշտակը երազում երեւե-
ցաւ նորան եւ ասաց. Դաւ'ւթի որդի Յովսէփ մի՛
վախենար՝ քո՛ Մարիամ կինդ քեզ մօտ առնել.
պատճառնոր նորանում ծնվածը՝ Սուրբ Հոգուցն է։
21 Նա որդի կ'ծնի եւ նորա անունը Յիսուս կ'դնես.

նորա համար որ նա իրեն ժողովուրդը կազատէ ի-
22 րենց մեղքերիցը։ Բայց այս ամէն բաներս այսպէս
էլաւ՝ որ կատարվի Տէրից ասված բանը Եսայի
23 մարգարէին ձեռովը թէ. Ահա՛ կոյսը կ'յղանայ եւ
որդի կ'ծնի. եւ նորա անունն էմմանուէլ կ'կան-
24 չեն. որ նշանակում է՝ Աստուած մեզ հետ։ Եւ
Յովսէփ որ քնից զարթնացաւ՝ արաւ ինչպէս որ Տէ-
րին հրեշտակը հրամայեց իրեն. եւ առաւ իրեն
25 կինն իրեն մօտ։ Եւ չէր գիտում նորան, մինչեւ
որ նա իրեն առաջինեկ որդին ծնաւ. եւ նորա ա-
նունը կոչեց Յիսուս։

ԳԼ. Բ.

Քրիստոս յայտնվումն իր մանկութեան ու զարգացման մէջ։

1 Եւ երբոր Յիսուս ծնաւ Հրէաստան երկրի Բեթ-
ղեհէմումը՝ Հերովդէս թագաւորի օրերումն, ահա
2 մոգեր արեւելքիցը եկին Երուսաղէմ, Եւ ասացին.
Ո՞րտեղ է որ ծնվաւ Հրէաների թագաւորը. որ
մենք նորան աստղը տեսինք արեւելքումը, եւ ե-
3 կինք որ երկրպագութիւն տանք նորան։ Եւ երբոր
Հերովդէս թագաւորը լսեց շփոթվեցաւ, եւ ամէն
4 Երուսաղէմն էլ նորա հետ։ Եւ ամէն քահանայա-
պետներին ու ժողովրդի կարդացողներին ժողովեց
եւ նորանից հարցուց, թէ Քրիստոսը ո՞րտեղ պի-
5 տի ծնվի։ Եւ նորանք ասացին նորան. թէ Հրէաս-
տանի Բեթղեհէմումը. ինչու որ՝ այսպէս է գըր-
6 ուած մարգարէի ձեռովը։ Դո՛ւ էլ Բե՛թղեհէմ.
Յուդայի երկիր՝ բնաւ փոքր չես Յուդայի իշխանե-

րին մէջ. քեզանից ինձ իշխան պիտի դուրս գայ,
7 որ իմ Իսրայէլ ժողովուրդս կառավարէ ։ Այն ժա-
մանակը Հերովդէս թագուն մոգերին իրեն մօտ կան-
չեց, եւ նորանցից այն երեւցած աստղի ժամանա-
8 կին հաստատ տեղեկացաւ ։ Եւ նորանց Բեթղեհեմ
ուղարկեց եւ ասաց. Գնացէ՛ք շիտակ իմացէ՛ք՝ այն
երեխային համար, եւ երբոր կ'գտնէք, ինձ էլ
իմաց արէք, որ ես էլ գամ նորան երկրպագու-
9 թիւն անեմ ։ Եւ նորանք երբոր լսեցին թագաւո-
րիցը՝ գնացին, եւ ահա այն աստղը որ արեւել-
քումը տեսել էին, ճանապարհը ցոյց տուաւ նո-
րանց՝ մինչեւ որ եկաւ կանգնեց այն տեղին վերայ,
10 որ տեղ որ երեխան էր ։ Երբոր այն աստղը տեսին,
11 շատ մեծ ուրախութիւնով ուրախացան ։ Եւ եր-
բոր տունը մտին, տեսին երեխային իրեն մայր Մա-
րիամին հետ, եւ երեսներին վերայ ընկնելով եր-
կրպագութիւն արին նորան. եւ իրենց գանձերը
բացին՝ եւ ընծայ տուին նորան՝ ոսկի եւ կնդրուկ
12 եւ զմուռս ։ Եւ երազում հրաման առին՝ որ կըր-
կին յետ չ'դառնան Հերովդէսի մօտ, եւ ուրիշ ճա-
նապարհով գնացին իրենց աշխարհը ։
13 Եւ երբոր նորանք այն տեղիցը գնացին, ահա Տէրին
հրեշտակը երազում երեւեցաւ Յովսէփին՝ եւ ասաց.
Վե՛ր կաց ա՛ռ երեխային եւ իրեն մօրը եւ փա-
խի՛ր Եգիպտոս. եւ այն տեղ մնա՛ մինչեւ որ ա-
սեմ քեզ, պատճառն որ՝ Հերովդէսն ուզում է այդ
14 երեխայիդ կորցնել ։ Եւ նա վերկացաւ առաւ երե-
խային եւ իրեն մօրը գիշերով եւ գնաց Եգիպտոս.
15 եւ այն տեղ էր մինչեւ Հերովդէսի մեռնիլը ։ Որ
կատարվի Տէրիցն ասվածը մարգարէի ձեռովը՝ որ

ասում. Եգիպտոսից կ'կանչեմ իմ որդիս ։
16 Այն ժամանակը երբոր Հերովդէս տեսաւ՝ թէ
այն մոգերիցը խաբվեցաւ, շատ բարկացաւ. եւ
ուղարկեց կոտորեց ամեն երախայքն որ Բեթղեհէ-
մումն ու նորան չորս կողմումն էին՝ երկու տարե-
կաններից սկսած եւ նորանցից ցածերը այն ժամա-
17 նակին նայելով որ մոգերիցն իմացաւ ։ Այն ժա-
մանակը կատարվեցաւ Երեմիա մարգարէին ձեռով
18 ասվածը՝ որ ասում. Լալոյ ձայն լսուեցաւ Հռա-
մային մէջ. սուգ եւ լաց եւ շատ վայ տալով գո-
ռալ. Հռաքէլ իրեն որդոց վերայ լաց էր լինում
եւ չէր կամենում մխիթարվիլ, ինչու որ՝ նորանք
չ'կային ։
19 Եւ երբոր Հերովդէս մեռաւ, ահա՛ Տէրին հրեշ-
տակը Եգիպտոսի մէջ երազում երեւեցաւ Յովսէ-
20 փին, Եւ ասաց. Վե՛ր կաց ա՛ռ երեխայիդ ու ի-
րեն մօրը եւ գնա՛ Իսրայէլացոց երկիրը. պատ-
ճառնոր՝ մեռան նորանք՝ որ երեխայիդ կեանքն
21 ուզում էին առնել ։ Եւ նա վերկացաւ, երեխա-
յին եւ իրեն մօրն առաւ եւ եկաւ Իսրայէլացոց
22 երկիրը ։ Եւ երբոր լսեց՝ թէ Արքեղայոս Հրէաս-
տանին վերայ թագաւորեց իրեն հայր՝ Հերովդէսի
տեղը, վախեցաւ գնալ այն տեղ. եւ երազում
23 հրաման առնելով գնաց Գալիլեայի կողմերը ։ Եւ
եկաւ բնակվեցաւ այն քաղաքումն՝ որ Նազարեթ
էր ասվում. որ կատարվի մարգարէներին խօսքը՝
թէ Նազօրեցի պիտի կոչվի ։

ԳԼ. Գ

Քրիստոսի մկրտութիւնը Յօհաննէսից ։

1 Այն օրերումը Յօհաննէս մկրտիչն եկաւ, որ Հը-
2 րէաստանի անապատումը քարոզ տայ ։ Եւ ասում
էր. Ապաշխարեցէ՛ք՝ որ երկնքի թագաւորութիւնը
3 մօտացել է ։ Ինչու որ սա՛ է՝ որի համար ասել
է Եսայի մարգարէին ձեռովը, որ ասումէ. Կան-
չողի ձայն անապատումը՝ թէ պատրա՛ստ արէք
Տէրին ճանապարհը, եւ շիտա՛կ արէք նորա գնալու
4 ճանապարհը ։ Եւ Յօհաննէս ինքը հագուստ ունէր
ուղտու բրդից եւ կաշիէ գօտի իրեն մէջքին, եւ
5 նորա կերակուրը մարախ էր եւ վայրի մեղր ։ Այն
ժամանակը ամեն Երուսաղէմացիք եւ ամեն Հը-
րէաստան եւ Յորդանանու ամեն կողմերը նորա
6 մօտ էին գնում, Եւ նորանից մկրտւում Յորդա-
7 նանի մէջ եւ իրենց մեղքերը խոստովանում ։ Եւ
երբ որ տեսաւ թէ սադուկեցիներիցն ու փարիսե-
ցիներիցը շատերը եկել էին որ իրանից մկրտվին,
ասաց նորանց. Իժի՛ ծնունդներ՝ ձեզ ո՞վ սովոր-
8 ցուց փախչել այն բարկութենիցն, որ գալու է ։ Այ-
սուհետեւ ապաշխարութեան արժանի պտուղ ա-
9 րէ՛ք ։ Եւ չ'կարծէք ասել ձեր միջումը՝ թէ. Մենք
Աբրահամը ունինք հայր. ասումեմ ձեզ, թէ Աստ-
ուած կարող է այս քարերից որդիք դուրս հա-
10 նել Աբրահամու համար ։ Ինչու որ՝ հիմիկ կացինը
ծառերի արմատին մօտ դրած է. ամեն ծառ որ
բարի պտուղ չի բերել, կ'կտրվի եւ կրակին մէջ

11 կ'ձգվի ։ Ես ջրով եմ մկրտում ձեզ՝ ապաշխարու-
թեան համար. բայց նա՝ որ ինձանից ետեւ կ'գայ,
ինձանից զօրաւոր է. եւ ես արժանի չեմ նորա
կօշիկները վեր առնել. նա ձեզ Սուրբ Հոգով եւ
12 կրակով կ'մկրտէ. Որ հօսելին իրեն ձեռին է, եւ
իրեն կալը կ'սրբէ եւ ցորենն կը հաւաքէ իրեն ամ-
բարը, դարմանը անհանգչելի կրակով կ'այրէ ։
13 Այն ժամանակը Յիսուս Գալիլեայիցն եկաւ
Յորդանան Յօհաննէսին մօտ՝ որ նորանից մկրտվի ։
14 Եւ Յօհաննէսն արգիլեց նորան եւ ասաց. Ինձ
պէտք է որ քեզանից մկրտվիմ՝ եւ դու ի՞նձ մօտ
15 ես գալիս ։ Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց
նորան. Թո՛ղ տուր հիմիկ, ինչու որ՝ այսպէս կը-
վայլէ մեզ՝ որ ամեն արդարութիւնն կատարենք.
16 եւ յետոյ թող տուաւ նորան ։ Եւ երբոր մկրտ-
վեցաւ Յիսուս՝ շուտով ջրիցը դուրս եկաւ, եւ
ահա՛ երկինքը բացվեց նորան համար. եւ Աստու-
ծոյ Հոգին տեսաւ որ իջնում էր աղաւնու պէս
17 եւ գալիս նորա վերայ ։ Եւ ահա՛ երկնքիցը ձայն
եկաւ՝ որ ասումէր. Դա՛ է իմ սիրելի Որդիս որ
զորան հաւանեցի ։

ԳԼ. Դ

Քրիստոսի փորձութիւնը և քարոզելոյ սկիզբը ։

1 Այն ժամանակը Յիսուս Հոգովը տարվաւ անա-
2 պատը՝ որ սատանայիցը փորձվի ։ Եւ քառասուն
ցերեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելուցն ետեւ՝
սովեց ։

3 Եւ փորձիչն եկաւ, նորան ասաց. Թէ որ դու
Աստուծոյ Որդին ես, ասա՛ որ այս քարերս հաց
4 լինին։ Նա պատասխան տուաւ եւ ասաց. Գրված է՝
որ. Ոչ թէ միայն հացով կ'ապրի մարդ, այլ ամեն
խօսքով՝ որ Աստուծոյ բերանից դուրս է գալիս։
5 Այն ժամանակը սատանան նորան առաւ տարաւ
սուրբ քաղաքը, եւ տաճարի աշտարակին վերայ
6 կանգնացրուց, Եւ նորան ասաց. Թէ որ Աստու-
ծոյ Որդին ես՝ այս տեղից քեզ վե՛ր ձգէ. Ինչու
որ գրված է՝ թէ իրեն հրեշտակներին հրամայելէ
քեզ համար՝ եւ ձեռներին վերայ կ'առնեն քեզ՝
որ ընաւ մին ժամանակ քո ոտք քարի չի դպչնես։
7 Կրկին Յիսուս նորան ասաց. Գրված է՝ թէ, Մի՛
փորձեր քո Տէր Աստուծոյդ։
8 Սատանան նորէն առաւ նորան տարաւ մին շատ
բարձր սարի վերայ՝ եւ ցոյց տուաւ նորան աշ-
խարհքի ամեն թագաւորութիւնները եւ նորանց
9 փառքը։ Եւ նորան ասաց. Այս ամենս քեզ
կ'տամ՝ թէ որ երեսիդ վերայ ընկնելով ինձ եր-
10 կրպագութիւն անես։ Այն ժամանակը Յիսուս նո-
րան ասաց. Գէ՛ն գնա ինձանից սա՛տանայ. Ինչու
որ գրված է՝ թէ, Քո Տէր Աստուծոյդ պէտք է
երկրպագութիւն անես եւ միայն նորան պաշտես։
11 Յետոյ սատանան թողեց նորան. եւ ահա հրեշ-
տակները մօտ եկին եւ ծառայութիւն էին անում
նորան։
12 Եւ երբոր Յիսուս լսեց՝ թէ Յօհաննէսը մատնվե-
13 ցաւ, ինքն հեռացաւ գնաց Գալիլեա։ Եւ Նազա-
րեթը թողեց. եկաւ բնակվեցաւ Կափառնայումի
մէջ ծովի եզրին մօտ. Զաբուղօնի եւ Նեփթաղիմի

14 երկրում. Որ կատարվի այն խօսքը՝ որ Եսայի մար-
15 գարէի ձեռովն ասված է՝ թէ, Զաբուղօնի երկիրը
եւ Նեփթաղիմի երկիրը՝ ծովու ճանապարհը՝ Յոր-
16 դանանու այն կողմն, Հեթանոսաց Գալիլեան. Ժո-
ղովուրդն որ խաւարին մէջ նստած էր, մեծ լոյս
տեսաւ. եւ լոյս ծագեց նորանց որ մահի երկրումն
17 ու շուքումը նստած էին։ Նորանից ետեւ Յիսուս
սկսեց քարոզել եւ ասել. Ապաշխարեցէ՛ք՝ որ եր-
կընքի թագաւորութիւնը մօտեցել է։
18 Երբոր Յիսուս Գալիլեացոց ծովի եզրումը ման
էր գալիս տեսաւ երկու եղբարք՝ Սիմօնին՝ որ Պետ-
րոս էր կոչված, եւ նորա Անդրէաս եղբօրը. որ
ուռկանը ձգել էին ծովը. Ինչու որ՝ ձկնորս էին,
19 Եւ նորանց ասաց. Իմ ետեւէս եկէ՛ք, եւ ձեզ
20 մարդկանց որսորդ կ'անեմ։ Նորանք էլ շուտով
իրենց գործիքները թողին՝ եւ նորա ետեւէն գնա-
21 ցին։ Եւ այն տեղից որ առաջ գնաց՝ երկու ու-
րիշ եղբարք տեսաւ, Յակոբոս Զեբեդեանը՝ եւ
նորա Յօհաննէս եղբօրը՝ որ նաւին մէջ իրենց հայր
Զեբեդէօսին հետ իրենց ուռկանները շինում էին,
22 եւ նորանց կանչեց։ Նորանք էլ շուտով նաւը
եւ իրենց հօրը թողին. եւ նորա ետեւէն գնացին։
23 Եւ Յիսուս ման էր գալիս Գալիլեայի ամեն կող-
մերը. նորանց ժողովարաններին մէջ սովորցնումէր՝
եւ արքայութեան աւետարանը քարոզում, եւ
ժողովրդի մէջ եղած ամեն հիւանդութիւններն ու
24 ցաւերը բժշկումէր։ Եւ նորա համբաւը դուրս ե-
կաւ Ասորոց ամեն երկիրը. եւ ամեն հիւանդներն
որ կերպ կերպ ցաւերով եւ չարչարանքներով տան-
ջված էին, նորա մօտ բերին. եւ դիւահարներն ու

լուսնոտները եւ անդամալոյծները. եւ նորանց բը-
25 ժշկեց ։ Եւ նորա ետեւէն շատ ժողովուրդներ էին
գնում Գալիլեայից եւ Դեկապօլիսից՝ եւ Երու-
սաղէմից. եւ Հրէաստանից, եւ Յորդանանու
կողմից՝ եւ նորանց բժշկեց ։

ԳԼ. Ե

Քրիստոսի քարոզը սարին վերայ՝
Քրիստոնէից երանութեան մասին, և օրէնքին միտքը ։

1 Եւ երբոր ժողովուրդներին տեսաւ վեր ելաւ սարը,
եւ երբոր այն տեղ նստեց, նորա աշակերտներն
2 եկին նորա մօտ. Եւ իրեն բերանը բանալով, նո-
րանց սովրեցնում էր՝ եւ ասում.
3 Երանի՛ հոգով աղքատներին՝ որ նորանցն է երկնքի
4 արքայութիւնը ։ Երանի՛ սգաւորներին՝ որ նորանք
5 պիտի մխիթարվին ։ Երանի՛ հեզահոգիներին՝ որ
6 նորանք պիտի ժառանգին երկիրը ։ Երանի՛ նորանց՝
որ սոված եւ ծարաւ են արդարութեան համար՝
7 որ նորանք պիտի կշտանան ։ Երանի՛ ողորմածնե-
8 րին՝ որ նոքանք պիտի ողորմութիւն գտնեն ։ Երա-
նի՛ նորանց՝ որ սրտով սուրբ են, որ նորանք պի-
9 տի Աստուծոյն տեսնեն ։ Երանի՛ խաղաղութիւն
անողներին՝ որ նորանք պիտի Աստուծոյ որդիք կո-
10 չուին ։ Երանի՛ նորանց՝ որ արդարութեան համար
հալածված են՝ որ նորանցն է երկնքի արքայութիւ-
11 նը ։ Երանի՛ է ձեզ՝ երբոր նախատինք կ'տան եւ
կ'հալածեն ձեզ, եւ իմ պատճառովս՝ ամեն չար
12 բան սուտ տեղը կ'ասեն ձեր վերայ ։ Ցնծացէ՛ք եւ

ուրախ եղէ՛ք՝ որ ձեր վարձքը շատ է երկնքումը.
ինչու որ՝ այսպէս էլ հալածեցին մարգարէներին
որ ձեզանից առաջ կային ։
13 Դուք երկրի աղն էք. թէ որ աղն անհամանայ,
ինչով պիտի աղվի. նորանից ետեւ ընաւ մին բա-
նի համար գործածելի չէ, միայն թէ դուրս ձգվի
14 եւ մարդկանց ոտի տակը կոխան լինի ։ Դուք աշ-
խարհքի լոյսն էք՝ այն քաղաքն որ սարի վերայ
15 կայ՝ չի կարող թաքուն մնալ ։ Եւ ճրագը չեն վա-
ռիլ եւ տաշտի տակ դնիլ, այլ ճրագակալի վե-
16 րայ՝ եւ լոյս կ'տայ ամենին՝ որ տանը մէջ են ։ Այն-
պէս էլ ձեր լոյսը պէտք է լուսաւորէ մարդկանց
առաջին, որ ձեր բարի գործքը տեսնեն, եւ փա-
ռաւորեն ձեր Հայրը որ երկնքումն է ։
17 Չ'կարծէք թէ ես եկել եմ՝ որ օրէնքը կամ մար-
գարէները քանդեմ. չեմ եկել քանդելոյ, բայց
18 կատարելոյ համար ։ Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ Որ
մինչեւ երկինքն ու երկիրս անցնին, օրէնքիցն ու
մարգարէներիցը մին կէտ՝ որ պզտիկ նշանագիր է,
19 չի անցնիլ մինչեւ ամենը կատարվի ։ Ո՛վ որ այս
փոքր պատվիրանքներիցս մին քանդէ, եւ մարդ-
կանց այնպէս սովրցնէ՝ նա փոքր կ'կոչվի երկնքի
արքայութենումը. բայց նա՝ որ կանէ եւ կ'սովր-
ցնէ, մեծ կ'կոչվի երկնքի արքայութենումը ։
20 Միայն թէ ասում եմ ձեզ՝ Թէ որ ձեր արդարու-
թիւնը չաւելանայ աւելի քան կարդացողներինը
եւ փարիսեցիներինը, չէք մտնիլ երկնքի արքայու-
թիւնը ։
21 Լսեցէ՛ք՝ որ առաջին մարդկանցն ասվեցաւ, թէ
Մի՛ սպաններ՝ ինչու որ՝ ով որ կ'սպանէ, պար-

22 տական կ'լինի դատաստանին ։ Բայց ես ասում եմ
ձեզ՝ թէ ով որ զուր տեղը կ'բարկանայ իրեն եղ-
բօր վերայ, պարտական կ'լինի դատաստանին. եւ
ով որ իրեն եղբօրը կ'ասէ՝ Ցիմար, պարտական կը
լինի մեծ դատաստանին. եւ ով որ իրեն եղբօրը
կ'ասէ Մօրօս, պարտական կ'լինի գեհենի կրակին։
23 Ուրեմն թէ որ սեղանի վերայ քո պատարագդ մա-
տուցանես՝ եւ այն տեղ միտքդ բերես՝ թէ քո
24 եղբայրդ քեզանից մին խռովութիւն ունի, Քո
պատարագդ սեղանին առաջին թող. եւ գնա՛ ա-
ռաջ հաշտուի՛ր քո եղբօրդ հետ. եւ յետոյ ե՛կ
25 քո պատարագդ արա՛ ։ Քո հակառակ ոսոխիդ հետ
շուտով քո բանդ շիտա՛կ արա՝ քանի որ նորա
հետ ճանապարհումն ես. որ չ'լինի թէ ոսոխդ քեզ
դատաւորին մատնէ, եւ դատաւորն դահճին. եւ
26 բանտն ընկնես ։ Ճշմարիտն ասում եմ քեզ. Դուրս
չես գալ այն տեղիցը, մինչեւ որ վերջին դանկն
էլ չ'վճարես ։
27 Լսեցէք՝ որ ասվեցաւ թէ Շնութիւն չանես ։
28 Բայց ես ասում եմ ձեզ. Թէ ամեն ով որ մին կըն-
կան մտիկ տայ նորան ցանկանալու համար, նա իւ-
29 կուն շնացաւ նորա հետ իրան սրտին մէջ։ Թէ որ
քո աջ աչքդ գայթակղացնում է քեզ, հանի՛ր նո-
րան եւ քեզանից դէ՛ն ձգիր. ինչու որ՝ լաւ է
քեզ համար, թէ քո անդամներիցդ մինը կորչի.
30 եւ քո ամեն մարմինդ չ'ընկնի գեհենը։ Եւ թէ որ
քո աջ ձեռքդ գայթակղացնում է քեզ, կտրի՛ր
նորան եւ քեզանից դէ՛ն ձգիր. ինչու որ լաւ է
քեզ համար՝ թէ քո անդամներիցդ մին կորչի. եւ
31 քո ամեն մարմինդ չ'ընկնի գեհենը ։ Այս էլ աս-

վեցաւ՝ թէ Ո՛վ որ իրեն կինը արձակէ, թող ար-
32 ձակման թուղթ տայ նորան ։ Բայց ես ասում եմ
ձեզ. թէ Ո՛վ որ իրեն կնին արձակէ առանց պո-
ռընկութեան պատճառի, նորա շնութեան պատ-
ճառն ինքն կ'լինի. եւ ով որ այն դուրս արածն
33 առնէ, շնութիւն կ'գործէ ։ Կրկին լսեցէք՝ որ աս-
վեցաւ առաջին մարդկանցը, թէ Սուտ երդում
չի անես, այլ Տէրին արած երդումնքդ վճարէ՛ ։
34 Բայց ես ասում եմ ձեզ. Բնաւ երդում մի անէք.
35 ոչ երկնքովը՝ որ Աստուծոյ աթոռն է. Եւ ոչ երկ-
րովս՝ որ նորա ոտն դնելու տեղն է, եւ ոչ Երու-
36 սաղէմովը՝ որ մեծ Թագաւորի քաղաքն է, Եւ ոչ
քո գլխովդ երդում անես՝ որ կարող չես մին մազ
37 սպիտակ անել կամ թուխ ։ Բայց ձեր խօսքն թող
լինի, այո՛ այո. եւ ոչն՝ ոչ. եւ նորանից աւելին
չարիցն է ։
38 Լսեցէք՝ որ ասվեցաւ՝ թէ աչքին տեղ աչք,
39 եւ ատամին տեղ ատամ։ Բայց ես ասում եմ ձեզ.
Չարին հակառակ մի՛ կենաք. ապա թէ որ մինը
ապտակ կ'տայ քո աջ երեսիդ, միւսն էլ նորան
40 դարձուր ։ Եւ ով որ կուզէ քեզ հետ կռիւ անել
եւ քո շապիկդ առնել, քո վերարկուդ էլ թող
41 նորա մօտ ։ Եւ ով որ զուր տեղը քեզ բռնած
մին մղոն ճանապարհ կ'քշէ, նորա հետ երկուսն
42 էլ գնա ։ Ով որ քեզանից բան ուզէ՝ տուր. եւ
ով որ կամենայ քեզանից փոխ առնել երեսդ յետ
մի դարձներ նորանից ։
43 Դուք լսեցէք՝ որ ասվեցաւ՝ թէ Քո ընկերիդ սի-
44 րէ եւ քո թշնամիդ ատէ ։ Բայց ես ասում եմ
ձեզ. Սիրեցէ՛ք ձեր թշնամիներին. օրհնեցէ՛ք ձեզ

անիծողներին. բարի արէ՛ք ձեզ ատողներին. եւ
աղօ՛թք արէք նորանց վերայ, որ ձեզ կ'չարչարեն
45 եւ կհալածեն, Որ որդիք լինիք ձեր Հօրն, որ
երկնքումն է. որ նա իրեն արեգակը ծագեցնումէ
չար եւ բարի մարդկանց վերայ, եւ անձրեւ է ա-
46 ծում արդարներին եւ մեղաւորներին վերայ։ Բայց
թէ որ միայն նորանց սիրէք որ ձեզ սիրումեն, էլ
ինչ վարձք կ'լինի ձեզ. չէ՞ որ մաքսաւորներն էլ
47 այնպէս են անում։ Եւ թէ որ միայն ձեր բարե-
կամներին բարեւ տաք, ինչ աւելի բան կ'անէք,
չէ՞ որ մաքսաւորներն եւ մեղաւորներն էլ այնպէս
48 են անում։ Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս
որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է։

ԳԼՈՒԽ Զ

Աստուածպաշտութեան մի քանի տեսակները՝
ողորմութիւն տալ, աղօթք, պահք, հոգս չանել։

1 Զգուշ կացէք ձեր ողորմութեան՝ որ մարդկանց
առաջին չի անէք, իբր նորանց ցոյց տալու հա-
մար. որ չ'լինի, թէ վարձք չառնէք ձեր Հօրից՝
2 որ երկնքումն է։ Բայց երբոր ողորմութիւն անես.
փող փչել չի տաս քո առաջիդ. ինչպէս որ կեղ-
ծաւորներն են անում ժողովարաններին մէջ եւ
փողոցներումը՝ որ մարդկանցից փառաւորվին. ճըշ-
մարիտ ասումեմ ձեզ, որ նորանց վարձքը միայն
3 նա է։ Բայց երբոր դու ողորմութիւն անես, թող
չիմանայ քո ձախ ձեռդ՝ թէ ինչ է գործում քո
4 աջդ. Որ այսպէս քո ողորմութիւնդ ծածուկ լինի,

եւ քո Հայրդ՝ որ ծածուկը տեսնումէ, յայտնի կը
հատուցանէ քեզ։
5 Եւ երբոր աղօթք անես, մի լինիր կեղծաւորնե-
րին պէս. ինչու որ նորանք սիրումեն ժողովարան-
ներին մէջ եւ փողոցների գլխումը աղօթք անել,
որ մարդկանց երեւին, Ճշմարիտ ասումեմ ձեզ,
6 որ նորանց վարձքը միայն նա է։ Բայց դու ինչ
ժամանակ որ աղօթք անես, մտի՛ր քո խուցդ՝ եւ
քո դուռերդ փակէ՛ եւ ծածուկ աղօթք արա դէպի
քո Հայրդ. եւ քո Հայրդ որ ծածուկը տեսնող է՝
7 յայտնի կ'հատուցանէ քեզ։ Եւ այն ժամանակը
որ աղօթք անէք, շատախօս մի՛ լինիք ինչպէս հե-
թանոսները. որ նորանք կարծումեն՝ թէ իրանց շատ
8 խօսելուն համար կ'լսվին։ Ուրեմն նորանց նման մի՛
լինիք. ինչու որ՝ ձեր Հայրը գիտումէ՝ թէ ինչ
պէտք է ձեզ, քանի որ մին բան դեռ չէք խնդ-
9 րել նորանից։ Ուրեմն դուք այսպէս աղօթք արէք.
Մեր Հայր որ երկնքումն ես՝ քո անունդ սուրբ
10 լինի։ Քո արքայութիւնդ գա՛յ, քո կամքդ լինի
ինչպէս երկնքումն, այնպէս էլ երկրիս վերայ։
11 Մեր ամեն օրվան հացն այսօր տո՛ւր մեզ։ (12) Եւ
մեր պարտքը թո՛ղ մեզ. ինչպէս որ մենք էլ թո-
13 ղումենք մեր պարտականներին։ Եւ մեզ փորձանքի
մէջ մի՛ ձգեր. բայց մեզ չարից ազատէ՛. ինչու
որ՝ քո է թագաւորութիւնը՝ եւ զօրութիւնը՝ եւ
փառքը՝ յաւիտեանս, ամեն։
14 Պատճառն որ՝ եթէ դուք մարդկանց իրենց մեղ-
քը թողէք՝ ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ թողու-
15 թիւն կ'տայ։ Ապա թէ որ դուք մարդկանց չէք
թողել իրենց մեղքը, ձեր Հայրն էլ ձեր մեղքը
ձեզ չի թողել։

16 Եւ այն ժամանակը որ ծոմ կ'պահէք, չ'լինի որ
կեղծաւորներին պէս տրտում երեւէք, որ իրենց
երեսը տխրացնումեն, որ մարդկանց երեւին թէ
ծոմ են պահում, ճշմարիտ ասումեմ ձեզ՝ թէ
17 նորանց վարձքը մինակ այն է։ Բայց դու ինչ ժա-
մանակ որ ծոմ պահես, քո գլուխդ իւղով օծէ՛
18 եւ քո երեսդ լուա՛։ Որ մարդկանց առաջին չե-
րեւիս ծոմ պահողի նման, բայց ծածուկ քո Հօրդ
առաջին. եւ քո Հայրդ՝ որ ծածուկը տեսնումէ,
յայտնի կ'հատուցանէ քեզ։
19 Ձեզ համար գանձ մի՛ հաւաքէք երկրիս վերայ,
որ տեղ որ ցեցն ու ժանկն ապականումեն. եւ որ
տեղ որ գողերը գետնի տակը փորումեն եւ գողա-
20 նում։ Բայց երկնքումն ձեզ համար գանձ ժողովե-
ցէք՝ որ այն տեղ ոչ ցեց եւ ոչ ժանկ չեն ապա-
կանում, եւ գողերը գետնի տակը չեն փորում եւ
21 գողանում։ Պատճառնոր՝ ինչ տեղ որ ձեր գան-
22 ձերն են, այն տեղ էլ ձեր սիրտը կ'լինի։ Մարմ-
նոյ ճրագն՝ աչքն է. թէ որ քո աչքդ պարզ է,
23 քո ամեն մարմինդ լուսաւոր կ'լինի։ Բայց թէ որ
քո աչքդ չար է, քո ամեն մարմինդ խաւար կ'լի-
նի։ Ուրեմն՝ թէ որ այն լոյսը որ քեզանում է՝
24 խաւար է, ապա խաւարը որչափ կ'լինի։ Ոչ ով
կարող չէ երկու տիրոջ ծառայութիւն անել. կամ
մինին կ'ատէ՝ եւ միւսին կ'սիրէ, կամ մինին կը
պատուէ՝ եւ միւսին ոչինչի տեղ կը համարէ։ Չէք
25 կարող Աստուծոյ ծառայել եւ մամոնային։ Սրա-
համար ասումեմ ձեզ. Հոգս մի՛ անէք ձեր հոգոյն
համար. թէ ինչ պիտի ուտէք, կամ ինչ պիտի
խմէք. եւ ոչ ձեր մարմնոյն համար թէ ինչ պիտի

հագնիք։ Չէ որ հոգին աւելի է կերակուրիցը՝ եւ
26 մարմինը շորերիցը։ Մտիկ արէք երկնքի թռչուննե-
րին՝ որ ոչ վարումեն, եւ ոչ հնձում, եւ ոչ ամ-
բարներումը ժողովում, եւ ձեր երկնաւոր Հայրը
կերակրումէ նորանց. չէ՞ որ դուք նորանցից աւելի
27 էք։ Հիմիկ՝ ձեզանից ո՞վ է կարող իրե՛ն հոգս ա-
նելովն իրեն հասակին վերայ մին կանգուն էլ ա-
28 ւելացնել։ Եւ շորերի համար ի՞նչու էք հոգս ա-
նում. մտի՛կ արէք վայրի շուշան ծաղկին՝ թէ
ի՛նչպէս է մեծանում. ոչ ջանք է անում՝ եւ ոչ
29 մանում. Ասումեմ ձեզ՝ թէ Սողոմոնն էլ իրան
ամեն փառքի մէջ նորանց մինին նման չ'հագաւ։
30 Բայց թէ որ վայրի խոտն՝ որ այսօր կայ եւ վաղը
կրակը կ'ձգուի՝ Աստուած այնպէս է հագցնում,
31 ապա ո՞րքան աւելի ձեզ՝ թե՛րեհաւատներ։ Սրա-
համար էլ հոգս մի՛ անէք՝ եւ մի՛ ասէք. թէ ի՛նչ
ուտենք, կամ ի՛նչ խմենք, կամ ի՛նչ հագնինք։
32 ինչու որ՝ այդ ամեն բաներդ հեթանոսներն են
ուզում. պատճառն որ՝ ձեր երկնաւոր Հայրը գի-
33 տումէ՝ թէ այդ ամենդ պէտք է ձեզ։ Դուք ա-
ռաջ Աստուծոյ արքայութիւնը եւ նորա արդա-
րութիւնը խնդրեցէ՛ք. եւ այդ ամեն բաներդ կա-
34 ւելանայ ձեզ։ Ուրեմն՝ վաղուան համար հոգս մի՛
անէք, ինչու որ՝ վաղվան օրն իրեն համար հոգս
կանէ. օրի համար բաւական է իրեն նեղութիւնը։

3969
1008
35466
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ССР
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

ԳԼ. Է

Չ'դատել, աղօթք անել, նեղ դռնովը մտնել, սուտ մարգարէներից զգուշանալ, քարի և աւազի վերայ շինած տների օրինակը։

1 Մի՛ դատէք՝ որ չ'դատուիք. (2) Պատճառնոր՝ ի՛նչ
դատաստանով որ ուրիշին դատէք, նորանով պիտի
դատուիք. եւ ի՛նչ չափով որ չափէք. նորանով կը
3 չափուի ձեզ։ Ի՞նչու քո եղբօրդ աչքին մէջի ծեղը
տեսնումես, եւ քո աչքիդ մէջին գերանը չե՛ս
4 տեսնում։ Կամ ի՞նչպէս ես ասում եղբօրդ՝ Թո՛ղ
քո աչքիցդ ծեղը հանեմ, եւ ահա քո աչքիդ
5 մէջին գերան կայ։ Կե՛ղծաւոր՝ առաջ քո աչքիցդ
գերանը հանէ, եւ յետոյ մտի՛կ արա՝ որ քո եղ-
բօրդ աչքիցը ծեղը հանես։
6 Սուրբ բանը մի՛ տաք շներին. եւ ձեր մարգա-
րիտները խոզերի առաջը մի՛ ձգէք. որ նորանց ո-
տով կոխ չ'տան՝ եւ յետ դառնան ձեզ պատա-
ռեն։
7 Խնդրեցէ՛ք եւ կ'տրուի ձեզ. մա՛ն եկէք եւ կ'գըտ-
8 նէք. դուռն թակեցէ՛ք եւ կ'բացուի ձեզ. Ինչու
որ՝ ամեն ո՛վ որ կ'խնդրէ՝ կ'առնէ, եւ ով որ ման
կ'գայ կ'գտնէ, եւ ո՛վ որ կ'թակէ կ'բացուի նո-
9 րան։ Ո՞վ է ձեզանից այն մարդն որ նորանից իրեն
10 որդին հաց ուզէ, միթէ քա՞ր կ'տայ նորան. Եւ
11 ձուկն ուզէ՝ միթէ օ՞ձ կ'տայ նորան։ Ուրեմն թէ
որ դուք որ չար էք՝ գիտումէք լաւ պարգեւներ
տալ ձեր որդոցն. ապա ո՞րքան աւելի ձեր Հայրն

որ երկնքումն է, բարի բաներ կ'տայ նորանց որ
ուզումեն իրենից։
12 Ամեն ինչ որ կամենումէք՝ թէ մարդիքը ձեզ ա-
նեն, այնպէս է՛լ դուք արէք նորանց. ինչու որ՝
իսկ սա է օրէնքը եւ մարգարէքը։
13 Նեղ դռնովը նե՛րս մտէք. ինչու որ՝ լայն է դու-
ռըն՝ եւ ընդարձակ ճանապարհն՝ որ դէպի կորուս-
տըն է տանում. եւ շատ են նորանք որ նորանով
14 մտնում են։ Քանզի նեղ է դուռը՝ եւ նեղ ճա-
նապարհը, որ դէպի կեանքն է տանում. եւ քիչ
են նորանք՝ որ գտնումեն նորան։
15 Զգո՛յշ կացէք սուտ մարգարէներիցն՝ որ ոչխարի
շորերով ձեզ մօտ են գալիս, եւ իրենց միջումը
16 յափշտակող գայլեր են։ Իրենց պտղիցը նորանց
ճանաչեցէ՛ք. կ'լինի՞ որ փշերիցը խաղող քաղեն.
17 կամ տատասկիցը թուզ։ Այսպէս ամեն բարի
ծառ՝ բարի պտուղ է բերում. եւ չար ծառը չար
18 պտուղ է բերում։ Չի՛ կարող բարի ծառը՝ չար
պտուղ բերել. եւ ոչ էլ չար ծառը բարի պտուղ
19 բերել։ Ամեն ծառ՝ որ բարի պտուղ չի բերում,
20 կտրվումէ եւ կրակի մէջ է ձգվում։ Ուրեմն իրենց
21 պտղիցը ճանաչեցէ՛ք նորանց։ Ո՛չ թէ ամեն ով որ
ինձ ասումէ՝ Տէ՛ր Տէ՛ր՝ երկնքի արքայութիւնը կը
մտնէ. բայց նա՝ որ իմ Հօրս կամքը կատարումէ՝
22 որ երկնքումն է։ Շատ մարդիք այն օրը կասեն ինձ
Տէ՛ր Տէ՛ր, չէ՞ որ մենք՝ քո անունովդ մարգա-
րէութիւն արինք, եւ քո անունովդ դեւեր հանե-
23 ցինք, եւ քո անունովդ շատ հրաշքներ արինք. Եւ
այն ժամանակը կասեմ նորանց՝ թէ, Բնաւ մին
ժամանակ ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէ՛ն գնա-

ցէք ամենքդ՝ որ անօրէնութիւն էիք գործում ։
24 Ամեն ով որ այս իմ խօսքերս լսում եւ նորանց
կատարում է, նա այն իմաստուն մարդուն նման կը
25 լինի, որ իրան տունը քարի վերայ շինեց. Անձ-
րեւներն եկին՝ եւ գետերը վարարեցին՝ քամիները
փչեցին եւ այն տունը թափեցին, եւ չ'կործանվե-
26 ցաւ. ինչու որ՝ քարի վերայ հաստատված էր. Եւ
ամեն ով որ այս իմ խօսքերս լսում եւ նորանց
չի՛ կատարում է, նա այն անխելք մարդուն նման
27 կ'լինի՝ որ իրեն տունը աւազի վերայ շինեց. Անձ-
րեւներն եկին՝ եւ գետերը վերկացան՝ քամիներ
փչեցին՝ եւ տունը թափեցին եւ ընկաւ, եւ նորա
կործանվիլը շատ սաստիկ էր ։
28 Եւ էլաւ երբոր Յիսուս այս ամեն բաներս կա-
տարեց, ժողովուրդները զարմանում էին նորա
29 վարդապետութեանը վերայ. ինչու որ՝ իշխանու-
թիւն ունօղի պէս էր սովրցնում. եւ ո՛չ թէ ի-
րենց կարգացօղներին պէս ։

ԳԼ. Ը

Քրիստոսի հրաշքները ծովին այս և այն կողմէն. բորոտը. հարիւրապետին տղան. Պետրոսի զոքանչը. ծովին փոթորիկը. երկու դիւահարներն և խոզերը ։

1 Բայց երբոր այն սարիցը վեր եկաւ, շատ ժողո-
2 վուրդներ նորան ետեւէն գնացին ։ Եւ ահա մի
բորոտ մարդ մօտ եկաւ երկրպագութիւն արաւ
նորան եւ ասաց. Տէ՛ր՝ թէ որ կամենաս, կարօղ
3 ես ինձ սրբել ։ Յիսուս իրեն ձեռը մեկնեց եւ նո-

րան հասցրուց եւ ասաց. կամենում եմ՝ սրբվի՛ր.
եւ շուտով բորոտութիւնը սրբվեցաւ նորանից,
4 Եւ Յիսուս ասաց նորան. Զգո՛յշ կաց՝ ընաւ մին
մարդու բան չասես. միայն թէ գնա՝ քո անձդ
ցո՛յց տուր քահանային. եւ Մօսէսիցը հրամայած
պատարագն արա՛, որ վկայութիւն լինի նորանց ։
5 Եւ երբոր մտաւ Կափառնայում, մի հարիւրապետ
6 եկաւ նորա մօտ, աղաչում էր նորան, Եւ ա-
սում. Տէ՛ր՝ իմ տղաս անդամալոյծ պառկած է
7 տանը մէջ եւ սաստիկ տանջվում է ։ Յիսուս նորան
8 ասաց. Ես կ'գամ եւ նորան կ'բժշկեմ ։ Հարիւրա-
պետը պատասխան տուաւ եւ ասաց. Տէ՛ր՝ արժա-
նի չեմ որ իմ տանս ծածկին տակը մտնես, բայց
9 մինակ խօսքով ասա՝ եւ իմ տղաս կ'բժշկվի ։ Ին-
չու որ՝ ես էլ մին իշխանութեան տակ լինօղ մարդ
եմ. իմ ձեռիս տակը զինւորներ ունիմ եւ ասու-
մեմ սորան թէ, գնա՛՝ եւ գնում է. եւ միւսին
թէ, Ե՛կ՝ եւ գալիս է. եւ իմ ծառայիս՝ թէ,
10 Այս բանս արա՛ եւ անում է ։ Երբոր Յիսուս լսեց,
զարմացաւ եւ ասաց նորանց որ իրեն ետեւէն գը-
նումէին. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ Իսրայէլին
մէջն էլ ընաւ մին ժամանակ այսպէսի հաւատք
11 չ'գտի ։ Բայց ասում եմ ձեզ, որ շատ մարդիք ա-
րեւելքիցն ու արեւմտիցը կ'գան, եւ Աբրահամի
եւ Իսահակի եւ Յակոբի հետ երկնքի արքայութե-
12 նումը կ'նստին ։ Եւ արքայութեան որդիքը դուրս
կելլին դրսի խաւարը, որ այն տեղ լաց եւ ա-
13 տամների կրճտելը կ'լինի ։ Եւ Յիսուս ասաց հա-
րիւրապետին. Գնա՛՝ եւ ինչպէս որ հաւատացիր
թող այնպէս լինի քեզ. եւ նորան տղան այն օրը
առողջացաւ ։

14 Եւ երբոր Յիսուս եկաւ Պետրոսի տունը, տեսաւ
15 որ նորա զոքանչը տենդի մէջ պառկած էր։ Նորան
ձեռքը բռնեց, եւ տենդը թողեց նորան. վերկա-
ցաւ եւ ծառայութիւն էր անում նորանց ։
16 Երբոր իրիկուն եղաւ՝ շատ դիւահարներ բերին
նորան մօտ՝ եւ մէն-մի խօսքով հանեց դեւերը, եւ
17 ամեն հիւանդները բժշկեց. Որ կատարուի Եսայի
մարգարէի ձեռով ասված բանը. Թէ Նա մեր
հիւանդութիւնները վերացրուց՝ եւ մեր ցաւերը
վեր առաւ ։
18 Յիսուս երբոր շատ ժողովուրդներ տեսաւ իրեն
չորս կողմը, հրաման տուաւ այն կողմը գնալ։
19 Եւ մին կարդացող մօտ եկաւ եւ նորան ասաց.
Վա՛րդապետ՝ ես էլ քո ետեւէդ կ'գամ՝ որ տեղ
20 որ գնաս։ Եւ Յիսուս նորան ասաց. Աղվէսները
կենալու փոսեր ունին, եւ երկնքի թռչունները բոյն.
բայց Որդին մարդոյ մին տեղ չունի՝ որ իրեն գլ-
21 ուխը դնէ։ Եւ նորա աշակերտներիցը մին ասաց
նորան. Տէ՛ր՝ ինձ հրաման տուր որ գնամ առաջ
22 իմ հայրս թաղեմ։ Յիսուս նորան ասաց. Ի՛մ ե-
տեւէս ե՛կ, եւ թո՛ղ մեռելները իրենց մեռելները
թաղեն ։
23 Եւ երբոր մտաւ նաւը, նորա աշակերտները նո-
24 րա ետեւէն գնացին։ Եւ ահա՛ մեծ ալէկոծութիւն
եղաւ ծովին մէջ, մինչեւ որ նաւն էլ ծածկվումէր
25 ալիքներից, եւ ինքը քնած էր։ Եւ աշակերտները
մօտ եկին՝ նորան զարթնացրին եւ ասացին. Տէ՛ր՝
26 մեզ փրկի՛ր՝ որ կորչումենք։ Եւ նորանց ասաց.
ինչո՞ւ վախկոտ էք պակասահաւատներ։ Այն ժա-
մանակը վերկացաւ՝ քամիներին եւ ծովին սաստեց,

27 եւ մեծ խաղաղութիւն եղաւ։ Եւ մարդիքը զար-
մացան եւ ասումէին. Սա ի՞նչպէսի մարդ է՝ որ
քամիներն ու ծովն էլ հնազանդվումեն սորան։
28 Եւ երբոր այն կողմն անցին Գերգեսացոց երկիրը
երկու դիւահար մարդ պատահեցին նորան, գե-
րեզմաններիցն դուրս եկած՝ որ այնքան շատ չար
էին, մինչեւ որ հնար չէր, թէ մին մարդ այն ճա-
29 նապարհովն անց կենայ։ Եւ ահա՛ աղաղակեցին
եւ ասացին. Յիսո՛ւս Որդի Աստուծոյ, քեզ ինչ
բան կայ մեզ հետ, որ եկել ես անժամանակ մեզ
30 տանջել։ Եւ նորանցից հեռու մին խոզի երամակ
31 կար որ արածումէր։ Եւ դեւերն աղաչումէին նո-
րան եւ ասում, թէ որ մեզ այս տեղից հանես,
հրամա՛ն տուր մեզ՝ որ գնանք այն խոզերին երա-
32 մակը։ Եւ նորանց ասաց՝ Գնացէ՛ք. եւ նորանք
դուրս եկին գնացին խոզերին երամակը. եւ խո-
զերին ամեն երամակն այն բարձր տեղիցը վազեց
33 ծովին մէջ, եւ ջրերին մէջը մեռան։ Եւ խոզարած-
ները փախան, եւ գնացին քաղաքը. պատմեցին
34 ամենը, եւ դիւահարներին բաներն էլ։ Եւ ահա՛
ամեն քաղաքը դուրս եկաւ Յիսուսի առաջը. եր-
բոր նորան տեսին՝ աղաչեցին որ գնայ իրենց երկ-
րիցը ։

ԳԼ. Թ

Քրիստոսի հրաշքներն իրեն քաղաքումը. անդամալոյծը. Մատթէոսին կանչելը. աշակերտաց պահք չպահելը. տե-ռատես կինը. Յայրոսի աղջկան յարութիւնը. երկու կոյրերը. դիւահար համրը ։

1 Եւ նաւը մտաւ անցաւ այն կողմը, եւ եկաւ ի-

2 րէն քաղաքը ։ Եւ ահա՛ մի անդամալոյծ բերին նո-
րան մօտ , որ մահճին մէջ դրած էր . եւ Յիսուս
նորանց հաւատքը տեսնելով՝ անդամալուծին ա-
3 սաց . Քո մեղքերդ թողված լինին քեզ ։ Եւ ահա՛
կարդացողներիցը մին քանիսը իրենց մտքումն ա-
4 սացին . թէ , Հայհոյումէ դա ։ Յիսուս նորանց
մտածմունքն իմացաւ եւ ասաց նորանց . ինչո՞ւ էք
5 չար բան մտածում դուք ձեր սրտերումը ։ Ո՞րն է
հեշտ , ասել՝ թէ , Քո մեղքերդ թողված լինին
6 քեզ , թէ ասել՝ Վե՛ր կաց եւ մա՛ն եկ ։ Բայց որ
դուք իմանաք՝ թէ Որդին մարդոյ իշխանութիւն ու-
նի երկրիս վերայ մեղաց թողութիւն տալոյ . այն
ժամանակն անդամալուծին ասաց . Վե՛րկաց քո
7 մահիճդ առ եւ գնա՛ քո տունդ ։ Եւ նա վերկա-
8 ցաւ եւ գնաց իրեն տունը ։ Երբոր ժողովուրդները
տեսին , զարմացան՝ եւ Աստուծոյ փառք էին տա-
լիս , որ այնպիսի իշխանութիւն է տուել մարդ-
կանց ։

9 Եւ Յիսուս երբոր այն տեղից առաջ գնաց , տե-
սաւ մին Մատթէոս անուն մարդ , որ նստած մաք-
սաւորութիւն էր անում . եւ նորան ասաց . իմ ե-
տեւէս ե՛կ . եւ նա վերկացաւ գնաց նորան ետե-
10 ւէն ։ Եւ էլաւ երբոր նորան տանը սեղանի նստած
էր , եւ ահա՛ ուրիշ էլ շատ մաքսաւորներ եւ մե-
ղաւորներ եկել էին . եւ Յիսուսի ու իր աշակերտ-
11 ներին հետ նստած էին ։ Երբոր փարիսեցիքը տեսին,
նորա աշակերտներին ասացին . Ի՞նչու ձեր վարդա-
պետը մաքսաւորներին եւ մեղաւորներին հետ հաց է
12 ուտում ։ Բայց Յիսուս երբոր լսեց , նորանց ասաց .
Կարողներին բժիշկ պէտք չէ՛ , այլ հիւանդներին ։

13 Գնացէ՛ք սովորեցէ՛ք՝ թէ ի՞նչ է որ խօսէ՝ Ողորմու-
թիւն եմ կամենում՝ եւ ո՛չ մատաղ . ինչուոր՝ ես
չեմ եկել որ արդարներին կանչեմ , այլ մեղաւոր-
ներին ։

14 Այն ժամանակը Յօհաննէսի աշակերտները նորան
մօտ եկին եւ ասացին . Ինչո՞ւ մենք եւ փարիսեցիքը
շատ ծոմ ենք պահում , եւ քո աշակերտներդ չեն
15 պահում ։ Յիսուս նորանց ասաց՝ Միթէ կարելի՞ է
որ հարսանիքի տղայք սուգ անեն քանի որ փեսան
նորանց հետ է . բայց օրեր կ'գան՝ որ փեսան նո-
16 րանցից կառնվի , եւ նորանից ետեւ կ'պահեն ։ Ո՛չ
ով չ'մաշված կարկատանի կտոր հին շորի վերայ չի՛
ձգել . ինչուոր՝ նա այն հին շորի ուժն էլ կառնէ
դուրս կ'գնայ՝ եւ նորա պատառվածքն է՛լ աւելի
17 չար կ'լինի ։ Եւ նոր գինին հին տկերի մէջ չեն ա-
ծել . ապա թէ ոչ՝ տկերը կը պատառվին՝ եւ գինին
կ'թափվի , եւ տկերն էլ կ'կորչին . բայց նոր գինին
նոր տկերի մէջ կ'ածեն , եւ երկուքն էլ կ'պահվին ։

18 Դեռ քանի որ նա սա խօսումէր նորանց հետ ,
ահա՛ մի իշխան եկաւ նորան երկրպագութիւն ա-
րաւ՝ եւ ասաց . իմ աղջիկս ճիշտ հիմիկ մեռնելոյ
վերայ է . միայն թէ ե՛կ եւ քո ձեռդ նորան վերայ
19 դի՛ր՝ եւ կապրի ։ Յիսուս վերկացաւ եւ աշակերտ-
ներովը գնաց նորան ետեւէն ։

20 Եւ ահա՛ մի կին , որ տասներկու տարի միշտ ա-
րիւն թափելով ցաւադար էր , մօտ եկաւ՝ եւ ե-
21 տեւից նորան շորի ծայրին դիպաւ ։ ինչուոր՝ իրեն
մտքումն ասումէր՝ թէ , Մինակ նորան շորին դպչիմ
22 կ'փրկվիմ ։ Բայց երբոր Յիսուս յետ դարձաւ եւ
նորան տեսաւ , ասաց . Ժի՛ր կաց ո՛վ դուստր՝ քո

հաւատքդ քեզ ապրեցրուց. եւ իսկ այն ժամին կինն
ազատեցաւ։
23 Երբոր Յիսուս եկաւ իշխանին տունը, տեսաւ
փող փչօղները եւ շատ ամբոխը, նորանց ասաց. Հե-
24 ռա՛ւ գնացէք, ինչու որ՝ այդ աղջիկը մեռած չէ՛,
25 բայց քնած է։ Եւ ծաղր էին անում նորան. եւ
երբոր ամբոխը դուրս ելաւ, ներս մտաւ՝ նորան ձե-
26 ռիցը բռնեց. եւ աղջիկը վերկացաւ։ Եւ այս համ-
բաւս դուրս եկաւ այն ամեն երկիրը։
27 Եւ ինչ ժամանակ որ Յիսուս այն տեղիցն անցա-
նումէր, երկու կոյր աղաղակումէին նորան ետեւէն՝
28 եւ ասում. Որդի Դաւթի՛ մեզ ողորմեա՛։ Եւ եր-
բոր տունը մտաւ, կոյրերը նորան մօտ եկին. եւ
Յիսուս նորանց ասաց. Հաւատումէ՞ք թէ կարող
եմ դա անել ձեզ. եւ նորան ասացին. Այո՛ Տէ՛ր.
29 Այն ժամանակը նորանց աչքերին մօտեցաւ՝ եւ
30 ասաց. Ձեր հաւատալոյն պէս թո՛ղ լինի ձեզ։ Եւ
նորանց աչքերը բացվան. եւ Յիսուս նորանց սաս-
տեց՝ եւ ասաց. Զգո՛յշ կացէք՝ որ մին մարդ չիմա-
31 նայ։ Եւ նորանք որ դուրս գնացին, այն ամեն երկ-
րումը նորա անունը յայտնի արին։
32 Եւ երբոր նորանք դուրս էին գնում, ահա՛ մի
33 համր դիւահար մարդ բերին նորա մօտ։ Եւ երբոր
դեւը դուրս եկաւ, համրը խօսեց. եւ ժողովուրդ-
ները զարմացան եւ ասացին. Բնաւ մին ժամանակ
34 Իսրայէլի մէջ այսպիսի բան չ'երեւեցաւ։ Բայց փա-
րիսեցիքն ասումէին. Թէ, Դա՝ դեւերի իշխանովն է
հանում դեւերը։
35 Եւ Յիսուս ամեն քաղաքներն ու գիւղերը մտն էր
գալիս, նորանց ժողովարաններին մէջ սովրցնումէր.

եւ արքայութեան աւետարանը քարոզում եւ ժո-
ղովուրդի միջի ամեն ցաւերն ու ամեն հիւանդու-
36 թիւնները բժշկումէր։ Եւ ժողովուրդներն որ տե-
սաւ՝ խեղճն եկաւ նորանց վերայ. որ աշխատած եւ
ցրված էին, ինչպէս ոչխարներ որ հովիւ չունին։
37 Այն ժամանակն իրեն աշակերտներին ասաց. Հունձ-
38 քը շատ են՝ եւ մշակները քիչ։ Ուրեմն աղաչեցէ՛ք
հնձի Տիրոջը՝ որ մշակներ ուղարկէ իրեն հունձը։

ԳԼ. Ժ

Տասներկու աշակերտքը և Քրիստոսի նորանց տուած պատուէրները։

1 Եւ իրեն տասներկու աշակերտներին իրեն մօտ կան-
չեց, եւ նորանց իշխանութիւն տուաւ ամեն պիղծ
դեւերին վե՛րայ, որ նորանց հանեն. եւ ամեն ցա-
ւերն ու ամեն հիւանդութիւնները բժշկեն։
2 Եւ այն տասներկու առաքելոց անունները սա էին.
առաջինը Սիմօն՝ Պետրոս կոչուածը, եւ նորա եղ-
3 բայր Անդրէասը, Յակոբոս Զեբեթեան՝ եւ նորա
եղբայր Յօհաննէսը. Փիլիպպոս եւ Բարթողիմէոս.
Թօմաս եւ Մատթէոս մաքսաւորը. Յակոբոս Ալ-
4 փեանը, եւ Ղեբէոսն որ Թադէոս կոչվեցաւ։ Սիմօն
Կանանացին՝ եւ Յուդա Իսկարիոտացին՝ նա, որ
մատնեց նորան։
5 Այս տասներկուսին Յիսուս ուղարկեց, նորանց
պատուէր տուաւ եւ ասաց. Հեթանոսներին ճանա-
պարհը չ'գնաք. եւ Սամարացոց քաղաքը չ'մտնէք։
6 Բայց աւելի գնացէ՛ք Իսրայէլի տան կորած ոչխար-

7 ներին մօտ ։ Եւ երբոր կ'գնաք , քարոզեցէ՛ք եւ ա-
8 սացէ՛ք · Երկնքի արքայութիւնը մօտացել է ։ Հի-
ւանդները բժշկեցէ՛ք · բորոտները սրբեցէ՛ք · դեւե-
9 րը հանեցէ՛ք · ձրի առէք՝ ձրի՛ տուէք ։ Վեր չի՛
առնէք ո՛չ ոսկի՝ եւ ո՛չ արծաթ , եւ ո՛չ պղնձէ
10 փող ձեր գօտիներումը ։ Ո՛չ ճանապարհի պարկ , եւ
ո՛չ երկու շոր՝ ո՛չ կօշիկ՝ ո՛չ գաւազան · ինչուոր՝
11 մշակն իրեն կերակրին արժանի է ։ Ո՛ր քաղաք՝
կամ գիւղ որ մտնէք , հարցրէ՛ք՝ թէ նորանում ո՛վ
է արժանի , եւ այնտեղ կացէ՛ք՝ մինչեւ որ այնտե-
12 ղից դուրս գնաք ։ Եւ երբոր տունը կ'մտնէք , ողջո՛յն
տուէք նորան եւ ասացէ՛ք · Ողջո՛յն այս տանս ։
13 Թէ որ այն տունը արժանի է , ձեր ողջոյնը նորա
վերայ կ'գայ · բայց թէ որ արժանի չէ՝ ձեր ողջոյնը
14 յետ կ'դառնայ դէպի ձեզ ։ Եւ ո՛վ որ ձեզ չ'ընդու-
նի՝ եւ ձեր խօսքին ականջ չի՛ դնէ , երբոր այն տա-
նիցը կամ այն քաղաքիցը դուրս կ'գնաք , ձեր ոտ-
15 ներիցը փոշին թա՛փ տուէք ։ Ճշմարիտ ասում եմ
ձե՛զ , որ Սոդոմացոց եւ Գոմորացոց երկրին համար
աւելի հեշտ կ'լինի դատաստանի օրումը քան այն
քաղաքին ։
16 Ահա՛ ես յուղարկում եմ ձեզ ինչպէս ոչխարներ
գայլերի մէջ . որահամար խորագէ՛տ եղէք՝ ինչպէս
17 օձերը , եւ միամի՛տ՝ ինչպէս աղաւնիքը ։ Զգուշ կա-
ցէք մարդկանցից · ինչուոր ձեզ դատաստան կ'քա-
շեն եւ իրենց ժողովարաններին մէջ կ'տանջեն ձեզ ։
18 Եւ դատաւորների եւ թագաւորների առաջը կ'տա-
նեն ձեզ իմ պատճառովս՝ որ նորանց եւ հեթա-
19 նոսներին վկայութիւն լինի ։ Բայց երբոր կ'մատնեն
ձեզ , հոգս մի՛ անէք՝ թէ ի՞նչպէս կամ ի՞նչ պիտի

խօսիք · ինչուոր՝ իսկ այն ժամումը կ'տրվի ձեզ ինչ
20 որ պիտի խօսիք ։ Պատճառնոր՝ չէ՛ թէ դուք էք որ
կ'խօսիք . բայց ձեր Հօրը Հոգին է որ ձեզանում կը
21 խօսի ։ Եղբայր եղբօրը մահու կ'մատնէ , եւ հայրն
որդուն . եւ որդիքը վեր կ'կենան իրենց հօրանց վե-
22 րայ՝ եւ նորանց կ'սպաննեն ։ Եւ ամենին ատելի կը
լինիք իմ անունիս համար . բայց ով որ կ'համբերէ
23 մինչեւ վերջը՝ նա՛ կապրի ։ Եւ երբոր այս քաղա-
քումս հալածեն ձեզ , փախէ՛ք ուրիշը . եւ թէ որ
նորանից էլ հալածեն ձեզ , փախէ՛ք այն միւսը ։
Ճշմարիտ ասում եմ ձեզ , Որ չէ՛ք վերջացնիլ Իս-
րայէլի քաղաքները . մինչեւ Որդին մարդոյ կ'գայ ։
24 Աշակերտը վարպետից աւելի չէ , եւ ոչ ծառան
25 իրեն տիրոջից ։ Բաւակա՛ն է՝ թէ աշակերտն իրեն
վարպետին նման լինի . եւ ծառան իրեն տիրոջը նը-
ման ։ Թէ որ տանուտէրը Բէեղզեբուղ կոչեցին , ա-
26 պա ո՞րքան աւելի նորան ընտանիքը ։ Որահամար էլ
մի՛ վախենաք նորանցից · ինչուոր՝ ոչինչ ծածուկ
բան չ'կայ՝ որ յայտնի չ'լինի . եւ թագուն բան՝
27 որ չիմացվի ։ Ինչ որ խաւարումս ասում եմ ձեզ ,
լուսի մէջն ասացէ՛ք , եւ ինչ որ ականջում լսու-
28 մէք՝ կտուրներին վերայ քարոզեցէ՛ք ։ Մի՛ վախենաք
նորանցից՝ որ մարմինը սպանումեն եւ հոգին չեն
կարող սպանել . բայց աւելի վախեցէ՛ք նորանցից՝
որ կարող է հոգին եւ մարմինը կորցնել գեհենին
29 մէջ ։ Չէ՞ որ երկու ծիտ մին դանկի են ծախվում ,
եւ նորանցից մինը չի՛ ընկնիլ գետինը առանց ձեր
30 Հօրը ։ Բայց ձեր գլխի ամեն մազերն էլ համարված
31 է ։ Ուրեմն մի՛ վախենաք . ինչուոր՝ դուք աւելի լաւ
32 էք քան շատ ծտեր ։ Ամեն ով որ ինձ մարդկանց

առաջին կ'դաւանէ՝ ես էլ նորան կ'դաւանեմ իմ
33 Հօրս առաջին որ երկնքումն է ։ Եւ ո՛վ որ ինձ կու-
րանայ մարդկանց առաջին՝ ես էլ նորան կուրանամ
34 իմ Հօրս առաջին՝ որ երկնքումն է ։ Զ'կարծէք թէ
եկել եմ երկրիս վերայ խաղաղութիւն ձգել. չեմ
35 եկել խաղաղութիւն ձգել, բայց սուր ։ Պատճառն
որ՝ եկի որ մարդն իրեն հօրից, եւ աղջիկն իրեն
մօրից, եւ հարսըն իրեն սկեսուրից բաժանեմ ։
36 Եւ մարդույ թշնամիներն իրեն ընտանիքը կ'լինին ։
37 Ո՛վ որ հօրը կամ մօրը ինձանից աւելի կ'սիրէ, նա
ինձ արժանի չէ՛. եւ ո՛վ որ իրեն որդին կամ աղ-
ջիկը ինձանից աւելի կ'սիրէ, նա ինձ արժանի չէ՝ ։
38 Եւ ո՛վ որ իրեն խաչը չառնէ եւ իմ ետեւէս գայ,
39 նա ինձ արժանի չէ՛ ։ Ո՛վ որ իրեն անձը կ'գտնէ՝
կ'կորցնէ նորան, եւ ո՛վ որ իրեն անձըն ինձ համար
40 կորցրուց, կը գտնէ նորան ։ Ո՛վ որ ձեզ կընդունի՝
ինձ կընդունի. եւ ո՛վ որ ինձ կընդունի, ինձ ու-
41 ղարկօղին կընդունի ։ Ո՛վ որ մարգարէ կընդունի
մարգարէի անունովը՝ նա մարգարէի վարձք կառ-
նէ. եւ ո՛վ որ արդարը կընդունի արդարի անունո-
42 նովը՝ արդարի վարձք կառնէ ։ Եւ ո՛վ որ այս փո-
քրներիցս մինին՝ միայն մին աման ցուրտ ջուր խը-
մացնէ աշակերտի անունովը, ճշմարիտ ասում եմ
ձեզ, նա չ'կորցնիլ իրեն վարձքը ։

ԳԼ. ԺԱ.

Յօհաննէս երկու աշակերտ է ուղարկում. Քրիստոս սաստիկ նախատումէ. յետոյ քաղցր հրաւիրում ։

1 Եւ էլաւ երբոր Յիսուս իրեն տասներկու աշակերտա-
ներին պատուիրանքները վերջացրուց, այն տեղից
գնաց որ նորանց քաղաքներումը քարոզ տայ եւ
սովորցընէ ։
2 Բայց Յօհաննէս երբոր բանտումը Քրիստոսին
գործքերը լսեց, իրեն աշակերտներին ձեռովն ուղար-
3 կեց, Եւ նորան ասաց. Դո՞ւ ես նա որ պէտք է
4 գայ, թէ՛ ուրիշ սպասենք ։ Յիսուս պատասխան
տուաւ եւ նորանց ասաց. Գնացէ՛ք՝ Յօհաննէսին
5 պատմեցէ՛ք, ինչ որ լսեցիք եւ տեսիք ։ Կուրերը
տեսնումեն, կաղերը գնումեն, բորոտները սրբվու-
մեն. խուլերը լսումեն, մեռելները յարութիւն են
առնում, եւ աղքատներին աւետարան է քարոզ-
6 վում ։ Եւ երանելի է նա, որ ինձ վերայ չ'գայթակ-
ղվի ։
7 Բայց երբոր նորանք գնացին, Յիսուս սկսեց ժո-
ղովուրդներին ասել Յօհաննէսին համար. Դուրս
գնացիք ի՞նչ տեսնելոյ անապատումը, մին եղէգ՝
8 որ քամուցը շարժվո՞ւմէ ։ Ապա ի՞նչ տեսնելոյ դուրս
գնացիք. մին մա՞րդ փափուկ շորերով զարդարված.
ահա՛ նորանք որ փափուկ հագած են՝ թագաւորաց
9 տներումն են ։ Ուրեմն ի՞նչ տեսնելոյ դուրս գնա-
ցիք. մին մարգարէ՞. իրաւի՛ ասում եմ ձեզ, որ
10 մարգարէից էլ շատ աւելի է ։ Ինչու որ՝ նա այն է՝

որ նորա համար գրված է. Թէ, Ահա՛ ես իմ հրեշ-
տակս կուղարկեմ քո երեսիդ առաջին, որ քո ա-
11 ռաջիդ քո ճանապարհդ պատրաստէ։ Ճշմարիտ
ասումեմ ձեզ. Որ կանանց ծնվածներին մէջ աւելի
մեծ առաջ եկած չէ՝ քան Յօհաննէս մկրտիչը.
բայց երկնքի արքայութեան միջին փոքրը նորանից
12 մեծ է։ Բայց Յօհաննէս մկրտչի օրերից մինչեւ հի-
միկ երկնքի արքայութիւնը ուժով է առնվում՝ եւ
13 ուժովները յափշտակումեն նորան։ Ինչուոր՝ ամեն
օրէնքն ու մարգարէքը մինչեւ Յօհաննէսը մարգա-
14 րէացան։ Եւ թէ կամենաք ընդունիլ, նա՛ է Ե-
15 ղիան, որ պէտք է գայ։ Ո՛վ որ լսելոյ ականջ ու-
16 նի՝ թող լսէ։ Ում նմանեցնեմ այս ազգս. այն
տղայոցը նման է՝ որ փողոցներումը նստին եւ ի-
17 րենց ընկերներին կանչեն, Եւ ասեն. Փող փչեցինք
ձեզ համար՝ եւ պար չեկիք. սուգ արինք ձեզ հա-
18 մար՝ եւ լաց չէլաք։ Յօհաննէսը եկաւ, ո՛չ ուտու-
մէր եւ ոչ խմում. եւ ասումեն՝ Դեւ կայ նորա-
19 նում։ Որդին մարդոյ եկաւ՝ ուտումէ եւ խմում, եւ
ասումեն. Ահա՛ ուտող եւ խմող մարդ. մաքսա-
ւորների եւ մեղաւորների բարեկամ. եւ իմաստու-
թիւնն արդարացաւ իրեն որդիքներիցը։
20 Այն ժամանակը սկսեց նախատինք տալ այն քա-
ղաքներին՝ ուր որ նորա շատ հրաշքներ էլան՝ եւ
21 չապաշխարեցին։ Վա՜յ քեզ Քօ՛րազին. վա՜յ քեզ
Բե՛թսայիդա. ինչուոր՝ եթէ Տիւրոսի եւ Սիդօնի
մէջն էլած էին այն հրաշքներն որ ձեր մէջն էլան,
շատ կանուխ քրձով եւ մոխրով ապաշխարել էին։
22 Բայց ասումեմ ձեզ. Դատաստանի օրն աւելի հեշտ
կ'լինի Տիւրոսի եւ Սիդօնի երկրին համար՝ քան

23 ձեզ։ Եւ դու Կա՛փառնայում. մինչեւ երկինքը
չի՛ բարձրանաս, բայց մինչեւ դժոխքը կ'ցածա-
նաս. ինչու որ՝ եթէ Սոդոմի մէջն էլած էին այն
հրաշքներն՝ որ քեզանում էլան, ուղորդ որ՝ մին-
24 չեւ այսօր դեռ մնումէին։ Բայց ասումեմ ձեզ՝ Որ
դատաստանի օրն Սոդոմացոց երկրին համար աւե-
լի հեշտ կ'լինի քան քեզ։
25 Այն ժամանակը Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց. Գոհանումեմ քեզանից. ո՛վ Հայր, եր-
կնքի եւ երկրի Տէր. որ իմաստուններիցն ու գի-
տուններիցն այս բանս ծածկեցիր՝ եւ տղայոցն
26 յայտնեցիր։ Իրաւի՛ է ո՛վ Հայր. ինչու որ՝ այս-
27 պէս հաճոյ էլաւ քո առաջիդ։ Ամեն բան ինձ
տրվաւ իմ Հօրիցս. եւ ո՛չ ով չի ճանաչում Որ-
դուն՝ բայց միայն Հայրը եւ ոչ ով չի՛ ճանաչում
Հօրն՝ բայց միայն Որդին. եւ ո՛ւմ որ Որդին կա-
28 մենայ յայտնել։ Ինձ մօտ եկէ՛ք՝ ամեն վաստա-
կածներ եւ բեռնաւորներ. եւ ես հանգիստ կ'տամ
29 ձեզ։ Իմ լուծս ձեր վերայ առէ՛ք. եւ ինձանից
սովորեցէ՛ք ինչու որ՝ ես հեզահոգի եմ եւ սըր-
տով խոնարհ. եւ ձեր անձին համար հանգստու-
30 թիւն կ'գտնէք։ Ինչու որ՝ իմ լուծս քաղցր է, եւ
իմ բեռս թեթեւ։

ԳԼ. ԺԲ

Քրիստոսի յանդիմանական պատասխանը փարիսեցիներին։

1 Այն ժամանակը Յիսուս շաբաթ օրը գնաց նո-
րանց արտերին մէջ, եւ նորան աշակերտները սո-
2 վեցին, եւ սկսեցին հասկ պոկել եւ ուտել։ Եր-

բոր փարիսեցիքը տեսին՝ նորան ասացին․ Ահա՛ քո
աշակերտներդ բան են անում, որ արժան չէ՛ շա-
3 բաթ օրը անել։ Նա էլ ասաց նորանց։ Դուք
չէ՞ք կարդացել նա՝ որ Դաւիթն արաւ այն ժա-
մանակն որ ինքը սովեց․ և նորանք էլ որ նորան
4 հետն էին․ թէ ինչպէս Աստուծոյ տունը մտաւ և
առաջաւորութեան հացը կերաւ․ որ օրէնք չէր
նորան ուտել, և ո՛չ էլ նորանց որ նորան
5 հետն էին․ բայց միայն քահանայից։ Կամ թէ
չէ՞ք կարդացել օրէնքումը, որ քահանայքը շաբաթ
օրերը տաճարին մէջ շաբաթը պղծումեն, և մեղք
6 չէ՛ նորանց։ Բայց ասումեմ ձեզ՝ Որ տաճարից էլ
7 մեծն է այս տեղ։ Բայց թէ որ գիտէիք ի՛նչ է այն
բանը՝ թէ Ողորմութիւն եմ ուզում և ո՛չ թէ
պատարագ․ դուք չէ՛իք դատապարտիլ այն անմեղնե-
8 րին։ Ինչու որ՝ շաբաթու տէրն՝ Որդին մարդոյ է։
9 Եւ Յիսուս այն տեղից գնաց՝ եկաւ նորանց ժո-
10 ղովարանը։ Եւ այն տեղ մին մարդ կար՝ որ նո-
րա ձեռքը չորացած էր․ նորան հարցրին և ա-
սացին՝ թէ Շաբաթ օրը պէ՞տք է բժշկութիւն ա-
11 նել․ որ նորա վերայ չարախօսեն։ Եւ նա ասաց
նորանց․ Ո՛վ է ձեզանից այն մարդը․ որ մին ոչ-
խար ունենայ և նա ընկնի փոսի մէջ շաբաթ օ-
12 րը, միթէ չի՞ բռնիլ նորան և վերկացնիլ։ Ապա
ո՛րքան աւելի է մարդ քան թէ ոչխար․ նորահամար
13 պէտք է շաբաթ օրը բարիք գործել։ Այն ժամա-
նակը ասաց այն մարդուն․ Ձեռքդ մեկնէ՛, նա էլ
14 մեկնեց․ և ողջ էլաւ այն միւսին պէս։ Բայց փա-
րիսեցիքը դուրս գնացին․ և նորա համար խոր-
հուրդ արին՝ թէ ի՛նչպէս կորցնեն նորան։

15 Եւ Յիսուս երբոր իմացաւ, այն տեղից հեռա-
ցաւ․ և շատ ժողովուրդներ նորա ետևէն գնա-
16 ցին․ և ամէնքը բժշկեց։ Եւ նորանց սաստեց՝ որ
17 իրենից մին մարդոյ բան չի՛ յայտնեն․ Որ կատար-
18 վի Եսայի մարգարէի ձեռով ասվածը․ Ահա՛ իմ
մանուկս՝ որ ես ընտրեցի․ և իմ սիրելիս՝ որ իմ
անձս հաւանել է՛ նորան․ իմ Հոգին նորա վերայ կը
դնեմ, և հեթանոսներին իրաւունքը կ'պատմէ։
19 Նա չի՛ հակառակիլ․ և չի՛ աղաղակիլ, և փո-
20 ղոցներին մէջ ո՛չ ով նորա ձայնը չի՛ լսել։ Ջարդ-
ված եղէգը չի փշրիլ, և վերջի կայծը հասած
պատրոյգը չի՛ անցնիլ․ մինչև դատաստանը գլուխ
21 հանէ յաղթութենով։ Եւ նորա անունին հեթա-
22 նոսները յոյս կ'դնեն։ Այն ժամանակը մին կոյր
և համր դիւահար բերին նորան մօտ՝ և նորան
բժշկեց․ այնպէս որ համրը և կոյրը խօսեց և
23 տեսաւ։ Բոլոր ժողովուրդները զարմացան և ա-
սումէին․ Ձ'լինի՞ թէ սա է Քրիստոսը Դաւթի որ-
24 դին։ Բայց փարիսեցիքն երբոր լսեցին՝ ասացին․
Թէ Դա դևերը ուրիշ բանով չի հանում․ բայց
25 միայն դևերի իշխան Բէեղզէբուղի ձեռովը։ Եր-
բոր Յիսուս նորանց միտքն իմացաւ, ասաց նո-
րանց․ Ամեն թագաւորութիւն որ իրեն մէջ բա-
ժանված է՝ կ'կործանվի․ և ամեն քաղաք կամ
26 տուն որ իրեն մէջ բաժանված է՝ չի՛ մնալ։ Եւ
թէ որ սատանան սատանային հանէ, իրեն միջու-
մը բաժանվեցաւ․ էլ ի՞նչպէս նորան թագաւորու-
27 թիւնը կ'կենայ։ Եւ եթէ ես Բէեղզէբուղաւն եմ
հանում դևերը, ապա ձեր որդիքն ի՞նչով կ'հա-
նեն․ նորահամար նորանք կ'լինին ձեզ դատաւոր։

28 Ապա թէ որ ես Աստուծոյ Հոգովն եմ՝ հանում
դեւերը. ուրեմն Աստուծոյ արքայութիւնը ձեզ
29 վերայ հասել է ։ Կամ ի՞նչպէս մին մարդ կարող
է զօրաւոր մարդոյ տունը մանել՝ եւ նորա բաները
յափշտակել. թէ որ առաջ այն զօրաւոր մարդը
30 չ'կապէ, եւ յետոյ նորա տունը յափշտակէ ։ Ո՛վ
որ ինձ հետ չէ՝՝ նա ինձ հակառակ է. եւ ո՛վ որ
31 ինձ հետ չի՛ ժողովում՝՝ նա ցրւումէ ։ Դորահամար
ասումեմ ձեզ. Ամեն մեղք եւ հայհոյանք կ'թող-
վին մարդկանց. բայց Հոգւոյն դէմ հայհոյանքը չի՛
32 թողվիլ ։ Եւ ո՛վ որ Որդւոյն մարդոյ դէմ՝ բան ա-
սէ՝ կ'թողվի նորան. բայց ո՛վ որ Սուրբ Հոգւոյն
դէմ ասէ, նորան չի՛ թողվիր. ո՛չ այս աշխարհ-
33 քումս՝ եւ ո՛չ այն ։ Կամ ծառը բարի՛ արէք՝ եւ
նորա պտուղն էլ բարի. կամ ծառը չա՛ր արէք՝
եւ նորա պտուղն էլ չար. ինչու որ՝ ծառն իրեն
34 պտղիցը կ'ճանաչվի ։ Իժի ձագուկներ՝ դուք ի՞նչ-
պէս կարող էք բարի բաներ խօսիլ՝ որ չար էք.
35 ինչու որ՝ սրտի աւելցածիցը կ'խօսի բերանը ։ Բարի
մարդը՝ իրեն սրտի բարի գանձիցը բարիք կ'հանէ,
եւ չար մարդը իրեն սրտի չար գանձիցը չար կ'հա-
36 նէ ։ Միայն թէ ասումեմ ձեզ. Թէ ամեն դատարկ
բանի համար որ մարդիկ կ'խօսին՝ պատասխան պի-
37 տի տան դատաստանի օրումը ։ Ինչու որ՝ քո խօս-
քերիցդ կարդարանաս, եւ քո խօսքերիցդ կը դա-
տապարտվիս ։

38 Այն ժամանակը մին քանիսը կ'արդացողների-
ցը եւ փարիսեցիներիցը պատասխան տուին եւ ա-
սացին. Վա՛րդապետ՝ ուզումենք որ քեզանից մին
39 նշան տեսնենք ։ Նա պատասխան տուաւ եւ նո-

րանց ասաց. Չար եւ շնացող ազգը նշան է ու-
զում. եւ նշան չի՛ տրվիլ նորան, բայց միայն
40 Յօնան մարգարէի նշանը ։ Պատճառնոր՝ ինչպէս
Յօնան երեք օր եւ երեք գիշեր կէտ ձկան փորումն
էլաւ, այնպէս էլ Որդին մարդոյ երեք օր եւ ե-
41 րեք գիշեր երկրի սրտումը կ'լինի ։ Նինուէացւոց
մարդիքը դատաստանին վեր կ'կենան այս ազգիս
հետ, եւ սորան կ'դատապարտեն. ինչուոր՝ նո-
րանք Յօնանու քարոզութենովը ապաշխարեցին.
եւ հիմիկ ահա՛ Յօնանիցն աւելի մեծն է այստեղ ։
42 Հարաւային երկրի թագուհին դատաստանին վեր
կ'կենայ այս ազգիս հետ, եւ սորան կ'դատա-
պարտէ. ինչուոր՝ նա երկրի ծայրիցն եկաւ՝ որ
Սողոմոնի իմաստութիւնն լսէ. եւ ահա՛ Սողոմո-
նիցն աւելի մեծն է այստեղ ։

43 Բայց ինչ ժամանակ որ պիղծ դեւը դուրս է գա-
լիս մարդիցը՝ անջուր տեղերումը ման է գալիս.
44 հանգիստ է խնդրում՝ եւ չի՛ գտնում ։ Այն ժա-
մանակն ասումէ. Յետ դառնամ իմ տունս՝ որ այն
տեղից դուրս եկի. եւ գալիս է նորան գտնում՝՝
45 պարապ, սրբված եւ պատրաստված ։ Այն ժա-
մանակը գնում իրենից էլ աւելի չար՝ եօթը դեւ
է առնում իրեն հետ, եւ մտնում բնակվումէ այն
տեղ. եւ այն մարդոյ յետինն աւելի չար է լինում
քան թէ առաջինը. այսպէս էլ կ'լինի այս չար
ազգիս ։

46 Դեռ քանի որ ան ժողովուրդներին հետ խօ-
սումէր, ահա՛ նորան մայրը եւ նորան եղբարքը
դուրսը կանգնել էին՝ եւ ուզումէին որ նորան հետ
47 խօսին ։ Եւ մին մարդ նորան ասաց. Ահա քո մայ-

րըդ եւ քո եղբարքդ դուրսը կանգնած են, եւ ու-
48 զումեն որ քեզ հետ խօսին ։ Նա պատասխան
տուաւ նորան՝ որ ասաց իրեն, եւ ասաց. Ո՞վ է
49 իմ մայրս կամ ո՞վ են իմ եղբարքս ։ Եւ իրեն
ձեռքը դէպի աշակերտներին մեկնեց՝ եւ ասաց.
50 Ահա՛ իմ մայրս եւ իմ եղբարքս ։ Ինչու որ՝ ո՛վ
որ իմ Հօրս կամքը կատարէ որ երկնքումն է, նա
է իմ եղբայրս՝ քոյրս եւ մայրս ։

ԳԼ. ԺԳ

Աստուծոյ արքայութեան առակները ։

1 Այն օրը Յիսուս տանիցը դուրս ելաւ՝ եւ ծովի
2 եզրին մօտ նստեց ։ Եւ շատ ժողովուրդներ նորան
մօտ ժողովեցան, մինչեւ որ նա նաւը մտաւ եւ
նստեց. եւ բոլոր ժողովուրդը ծովի եզրումը կանգ-
3 նել էր ։ Եւ նորանց հետ շատ բան էր խօսում ա-
ռակներով, եւ ասում ։
4 Ահա մին սերմ ցանող մարդ դուրս գնաց որ
սերմը ցանէ. եւ իրեն սերմելոյ ժամանակը մին քա-
նիսը ճանապարհի վերայ ընկաւ՝ եւ երկնքի թըռ-
5 չունը եկաւ եւ նորան կերաւ ։ Եւ միւսը քարքա-
րուտ տեղ ընկաւ՝ որ տեղ որ շատ հող չ'կար, եւ
շուտով բուսաւ հողի պակասութեան պատճառովը ։
6 Երբոր արեգակը ծագեց, տաքացաւ. եւ որովհե-
7 տեւ արմատ չունէր՝ չորացաւ ։ Եւ միւսը ընկաւ
փշերին մէջ եւ փշերը դուրս եկին ու խեղդեցին
8 նորան ։ Եւ միւսը բարի երկրի վերայ ընկաւ, եւ
պտուղ էր տալիս. կա՛ր որ հարիւր, եւ կար որ

9 վաթսուն, եւ կար որ երեսուն ։ Ո՛վ որ լսելոյ ա-
կանջ ունի՝ թո՛ղ լսէ ։
10 Եւ աշակերտները մօտ եկին՝ եւ նորան ասացին.
11 Ինչո՞ւ նորանց հետ առակներով ես խօսում ։ Նա
պատասխան տուաւ՝ եւ նորանց ասաց. Նորահա-
մար որ՝ ձեզ տուած է երկնքի արքայութեան խոր-
12 հուրդները գիտել, բայց նորանց չի՛ տուած ։ Պատ-
ճառնոր՝ ո՛վ որ ունի նորան կ'տվվի եւ կաւելա-
նայ. եւ ո՛վ որ չունի նորանից՝ նա էլ որ ունի,
13 վերկառնվի ։ Նորահամար առակներով եմ խօ-
սում նորանց հետ, որ տեսնումեն եւ չե՛ն տես-
նում. եւ լսումեն՝ եւ չե՛ն լսում, եւ մտքերը չե՛ն
14 առնում ։ Եւ Եսայեայի մարգարէութիւնը կա-
տարվումէ նորանց վերայ՝ որ ասումէ Լսելով կը
լսէք, եւ չէ՛ք իմանալ. եւ տեսնելով կ'տեսնէք, եւ
15 չէ՛ք տեսնիլ ։ Ինչուոր՝ այս ժողովրդիս սիրտը թանձ-
րացաւ, եւ իրենց ականջներովը ծանր լսեցին, եւ
իրենց աչքերը խփեցին՝ որ բնաւ մին ժամանակ
աչքերով չ'տեսնեն՝ եւ ականջներով չ'լսեն, եւ
սրտով չիմանան, եւ յետ դառնան եւ ես նորանց
16 բժշկեմ ։ Բայց երանի է ձեր աչքերին՝ որ տես-
17 նումեն, եւ ձեր ականջներին՝ որ լսումեն ։ Ճըշ-
մարիտ ասումեմ ձեզ. Որ շատ մարգարէներ եւ
արդարներ ցանկացան տեսնել նա՝ որ դուք էք
տեսնում, եւ չ'տեսին. եւ լսել նա՝ որ դուք էք
լսում՝ եւ չ'լսեցին ։
18 Եւ հիմիկ լսեցէ՛ք դուք սերմ ցանօղին առակը ։
19 Այն ամենիցը՝ որ արքայութեան բանը լսում եւ
միտք չի՛ առնում, գալիս է չարն՝ եւ նորա սրտի
մէջ սերմածը յափշտակում. սա նա է՝ որ ճանա-

20 պարհին վերայ սերմնեցաւ ։ Եւ նա որ քարքարուտ
տեղը սերմնեցաւ . նա է , որ երբոր բանը լսումէ՝
21 շուտով ուրախութենով ընդունումէ նորան ։ Բայց
որովհետեւ արմատ չունի իրեն մէջ , քիչ ժամա-
նակ է մնում . երբոր նեղութիւն եւ հալածանք են
լինում այն բանին համար , շուտով գայթակղւու-
22 մէ ։ Բայց նա որ փշերին մէջ սերմնեցաւ՝ նա է ,
որ երբոր բանը լսումէ , աշխարհքիս հոգերն եւ մե-
ծութեան խաբերայութիւնը այն բանը խեղդու-
23 մեն՝ եւ անպտուղ է լինում ։ Բայց նա որ բարի
երկրումը սերմնեցաւ՝ նա է , որ երբոր բանը լսու-
մէ՝ միտքն էլ է առնում եւ պտուղ տալիս . կայ
որ հարիւր , եւ կայ որ վաթսուն , եւ կայ որ ե-
րեսուն ։
24 Ուրիշ առակ էլ նորանց առաջին դրաւ եւ ա-
սաց . Երկնքի արքայութիւնը նմանվեցաւ մին մար-
25 դոյ՝ որ իրեն արտումը բարի սերմը ցանեց ։ Եւ որ
ժամանակ մարդիքը գնացին , նորա թշնամին ե-
26 կաւ եւ ցորենին մէջ որոմ ցանեց եւ գնաց ։ Եւ
երբոր խոտը բուսաւ՝ եւ պտուղ տուաւ՝ ապա ո-
27 րոմն էլ երեւեցաւ ։ Տան տիրոջ ծառաներն եկին
նորան ասացին . Տէ՛ր՝ չէ՞ որ դու քո արտումդ
բարի սերմը սերմեցիր , ապա ի՞նչ տեղից է այն
28 որոմը ։ Նա էլ ասաց նորանց . Թշնամի մարդ է ա-
րել այն ։ Ծառաներն ասացին նորան . Կամենո՞ւ-
29 մես որ գնանք նա քաղենք դուրս հանենք ։ Նա
էլ նորանց ասաց . Չէ՛ . չ՚լինի՛ թէ երբոր որոմը
30 քաղէք , ցորենն էլ նորա հետ դուրս հանէք . Թո՛ղ
տուէք որ երկուսը միատեղ մեծանան մինչեւ հունձ-

քը . եւ հնձի ժամանակը հնձօղներին կ'ասեմ՝ թէ,
Առաջ որոմը քաղեցէ՛ք եւ նորան խուրձ խուրձ
կապեցէ՛ք որ այրվի , եւ ցորենն իմ ամբարներիս
մէջ ժողովեցէ՛ք ։
31 Մին ուրիշ առակ էլ նորանց առաջին դրաւ՝
եւ ասաց . Երկնքի արքայութիւնը նման է մանա-
նեխի հատի . որ նորան մին մարդ առաւ՝ եւ իրեն
32 արտին մէջ սերմեց , Որ ամեն սերմունքից փոքր
է . եւ երբոր կաճի , ամեն բանջարի վերայ մեծա-
նումէ եւ ծառ լինում՝ մինչեւ որ երկնքի թռ-
չունները գան եւ նորա ճղերին վերայ հանգիստ
առնեն ։
33 Ուրիշ առակ էլ խօսեց նորանց հետ եւ ասաց .
Երկնքի արքայութիւնը նման է խմորի՝ որ նորան
մին կին առաւ՝ եւ երեք չափ ալիւրի մէջ պահեց,
մինչեւ որ ամենն էլ խմորվեցաւ ։
34 Այս ամեն բաներս Յիսուս առակներով խօսեց
ժողովուրդներին հետ . եւ առանց առակի բան
35 չէ՛ր խօսում նորանց հետ . Որ մարգարէի ասածը
կատարվի՝ թէ Առակներով կ'բանամ իմ բերանս՝
եւ դուրս կ'ըղխեմ աշխարհքի սկզբից ծածկված
բաները ։
36 Այն ժամանակը Յիսուս ժողովուրդները թողեց՝
եկաւ տուն . աշակերտները նորան մօտ եկին եւ
ասացին . Այն արտի որոմների առակը մեկնէ՛ մեզ ։
37 Նա պատասխան տուաւ եւ նորանց ասաց . Այն
38 բարի սերմը ցանօղը՝ Որդին մարդոյ է ։ Եւ արտը՝
այս աշխարհքս է . բարի սերմը նորանք են՝ որ ար-
քայութեան որդիք են . եւ որոմը՝ չարի որդիքն են.
39 Եւ թշնամին որ այն սերմեց , սատանան է . եւ

հունձքն աշխարհքի վերջն է. եւ հնձողները՝ հրե-
40 շտակներն են։ Ինչպէս որ որոմը հաւաքվում եւ
կրակի մէջ այրվում է, այնպէս էլ աշխարհքիս
41 վերջումը կ'լինի։ Որդին մարդոյ իրեն հրեշտակնե-
րը կուղարկէ՝ եւ նորա արքայութենիցն ամեն գայ-
թակղութիւնները կ'ժողովեն՝ եւ նորանց էլ՝ որ ա-
42 նօրէնութիւն են գործում։ Եւ նորանց կ'ձգեն
կրակի փուռը մէջ, որ այնտեղ լաց եւ ատամների
43 կրճտելը կ'լինի։ Այն ժամանակը արդարներն ա-
րեգական պէս կ'ծագին երկնքի արքայութեան մէջ։
Ով որ լսելոյ ականջ ունի՝ թո՛ղ լսէ։
44 Դարձեալ՝ երկնքի արքայութիւնը նման է մին
արտի մէջ պահված գանձի, որ նորան մին մարդ
գտաւ պահեց. եւ ուրախութենիցը գնում ամեն
ինչ որ ունի ծախումէ՝ եւ այն արտն առնում։
45 Դարձեալ՝ երկնքի արքայութիւնը նման է մին
վաճառական մարդոյ որ գեղեցիկ մարգարիտների
46 ման կ'գայ։ Եւ երբոր մին պատուական մարգա-
րիտ գտաւ, գնաց ամեն ինչ որ ունէր ծախեց՝ եւ
այն մարգարիտը գնեց։
47 Դարձեալ՝ երկնքի արքայութիւնը նման է մին
ծովը ձգած ուռկանի, որ ամեն կերպ ձկներ ժողո-
48 վեց։ Եւ երբոր լցվաւ՝ նորան ցամաքը հանեցին,
նստեցին եւ լաւերը ժողովեցին ամանների մէջ, եւ
49 անպէտները դուրս ձգեցին։ Այսպէս էլ կ'լինի
աշխարհքիս վերջին. հրեշտակները դուրս կ'գան
50 եւ չարերը կ'ջոկեն արդարների միջիցն, Եւ նորանց
կ'ձգեն կրակի փուռը մէջ, որ այնտեղ լաց եւ ա-
տամների կրճտելը կ'լինի։
51 Յիսուս ասաց նորանց. Հասկացա՞ք այս ամեն

52 բաներս. ասացին նորան. Այո՛ Տէ՛ր։ Նա էլ նո-
րանց ասաց. Սորահամար ամեն կարդացողը որ եր-
կնքի արքայութեան բաներին տեղեկացած է, նը-
ման է տանտէր մարդոյ՝ որ իրեն գանձիցը նոր եւ
հինը հանումէ։
53 Եւ էլաւ երբոր Յիսուս այս առակներս կատա-
54 րեց, այն տեղից գնաց։ Եւ եկաւ իրեն գաւառը
եւ նորանց ժողովարաններումը սովորցնումէր նո-
րանց, մինչեւ որ զարմանումէին նորանք եւ ա-
սում. Սորան ո՞ր տեղից է այս իմաստութիւնս եւ
55 զօրութիւններս։ Չէ՞ որ սա հիւսան որդին է. չէ՞
որ սորա մայրը՝ Մարիամ կ'կոչվի. եւ սորա եղ-
բարքը Յակոբոս՝ եւ Յօսէս՝ եւ Սիմօն, եւ Յու-
56 դաս։ Եւ չէ՞ որ սորա ամեն քոյրերը մեզ մօտ են.
57 ապա ո՞ր տեղից է սորան այս ամեն բաներս։ Եւ
գայթակղվումէին նորան վերայ. Յիսուս էլ նորանց
ասաց. Ոչ Մարգարէ անարգված չի՛ լինիլ՝ բայց
58 իրեն երկրին եւ իրեն տանը մէջ։ Եւ այն տեղ
շատ հրաշքներ չարաւ նորանց անհաւատութեա-
նը պատճառաւը։

ԳԼ. ԺԴ

Յօհաննու գլխատումը. 5000 մարդկանց կերակրելը.
ծովին վերայ գնալը։—

1 Այն ժամանակը Հերօդէս չորրորդապետը Յիսու-
2 սին համբաւը լսեց. Եւ իրեն ծառաներին ասաց.
Նա Յօհաննէս մկրտիչն է, նա մեռելներին միջիցը
յարութիւն առաւ. եւ նորահամար հրաշքներ են
լինում նորանով։

3 Պատճառնոր՝ Հերովդէս բռնեց Յովհաննէսին՝ նո-
րան կապեց եւ բանտի մէջ դրաւ՝ Հերովդիայի հա-
4 մար որ իրեն եղբայր Փիլիպպոսին կինն էր։ Ին-
չուոր՝ Յովհաննէս նորան ասումէր. թէ, Արժան
5 չէ՛ քեզ՝ որ դորան կի՛ն ունենաս։ Եւ ուզումէր որ
նորան սպանէ, բայց ժողովրդիցը վախումէր, ին-
6 չուոր՝ նորան մարգարէի տեղ էին դնում։ Եւ եր-
բոր Հերովդէսի ծննդեան օրն էլաւ, Հերովդիայի աղ-
ջիկը սեղանի նստածներին մէջ պար եկաւ՝ եւ Հե-
7 րովդէսին լաւ թուեցաւ. Նորահամար էլ երդու-
մով խոստացաւ նորան՝ թէ ինչ որ ուզէ՝ տայ նո-
8 րան։ Նա էլ ինչպէս որ առաջ ի՛րեն մօրիցը խր-
րատ էր առել՝ ասաց. Այս սկուտեղիս վերայ Յո-
9 հաննէս մկրտչի գլուխը տո՛ւր ինձ։ Եւ թագաւո-
րը տրտմեցաւ՝ բայց իրեն երդումին՝ եւ իրեն հետ
նստած մարդկանց համար՝ հրաման տուաւ, որ
10 տան նորան։ Եւ ուղարկեց բանտի մէջ Յովհաննէ-
11 սին գլուխը կտրեց։ Եւ նորա գլուխը սկուտեղի
վերայ բերին եւ աղջկանը տուին՝ եւ նա տարաւ
12 իրեն մօրը մօտ։ Եւ նորա աշակերտներն եկին նո-
րա մարմինը վեր առին եւ թաղեցին. եւ եկին Յի-
սուսին պատմեցին։

13 Եւ Յիսուս երբոր լսեց՝ այն տեղից նաւով գնաց
առանձին մին անապատ տեղ։ Ժողովուրդներն եր-
բոր լսեցին, այն տեղի քաղաքներիցն ոտով գնա-
ցին նորան ետեւէն։

14 Եւ երբոր դուրս եկաւ՝ եւ այն շատ ժողովուր-
դը տեսաւ, խղճաց նորանց վերայ, եւ նորանց հի-
ւանդները բժշկեց։

15 Եւ երբոր իրիկվան դէմ էլաւ՝ աշակերտները նո-

րան մօտ եկին եւ ասացին. Տեղս անապատ է՝ եւ
օրս էլ անցել է. այդ ժողովուրդներդ թո՛ղ տուր՝
որ գնան չորս կողմի գիւղերն իրենց համար կերա-
16 կուր գնեն։ Եւ Յիսուս ասաց. Պէ՛տք չէ դորանց
17 որ գնան. դո՛ւք տուէք դորանց ուտել։ Եւ նո-
րանք ասացին նորան. Մենք այստեղ բան չու-
նինք, բայց միայն հինգ հատ հաց՝ եւ երկու ձու-
18 կըն։ Եւ նորանց ասաց. Նա այստեղ բերէ՛ք։
19 Եւ հրաման տուաւ որ ժողովուրդը խոտի վերայ
նստացնեն. եւ այն հինգ հացը եւ երկու ձուկն
առաւ դէպի երկինքը նայեց՝ օրհնեց եւ կտրեց,
եւ այն հացերն աշակերտներին տուաւ՝ եւ աշա-
20 կերտներն էլ ժողովուրդներին։ Ամենքը կերին եւ
կշտացան, եւ աւելցած կտորներիցը տասներկու
21 քթոց լիքը վեր առին։ Եւ նորանք որ կերին՝ հինգ
հազարի չափ մարդիք էին՝ կանանցից եւ երեխա-
ներիցը զատ։

22 Եւ շուտով աշակերտներին ստիպեց որ նաւը
մտնեն՝ եւ իրենից առաջ անցնին այն կողմը. մին-
23 չեւ որ ինքն այն ժողովուրդներն արձակէ։ Եւ եր-
բոր ժողովուրդներն արձակեց, վեր էլաւ սարը,
որ մենակ աղօթք անէ. եւ երբոր իրիկուն էլաւ,
24 մենակ այնտեղ էր։ Եւ նաւն շատ ասպարէզ հե-
ռացել էր ցամաքիցը՝ եւ ալէկոծութեան մէջ էր.
25 ինչուոր՝ քամին ներհակ էր։ Եւ գիշերի չորս բա-
ժինի ժամանակը՝ Յիսուս ծովին վերայ գնալով՝
26 նորանց մօտ եկաւ։ Աշակերտներն երբոր տեսին
նորան՝ որ ծովին վերայ գնումէր. շփոթվեցան եւ
ասացին՝ թէ, Աչքի երեւոյթ բան է, եւ վախե-
27 լուցն աղաղակեցին։ Եւ Յիսուս շուտով խօսեց նո-

րանց հետ՝ եւ ասաց . Սրտապի՛նդ կացէք՝ ես եմ.
28 մի՛ վախնաք ։ Պետրոս պատասխան տուաւ նորան
եւ ասաց . Տէ՛ր՝ թէ որ դու ես , հրաման տուր
29 ինձ . որ ջրիս երեսովը քեզ մօտ գամ ։ Նա էլ
ասաց . Ե՛կ . եւ Պետրոս նաւիցը վէր եկաւ ջրի ե-
30 րեսովը գնաց՝ եւ եկաւ Յիսուսին մօտ ։ Եւ այն
սաստիկ քամին տեսնելով՝ վախեցաւ . եւ երբոր
սկսեց ընկղմիլ , աղաղակեց եւ ասաց . Տէ՛ր՝ ինձ
31 փրկէ ։ Եւ շուտով Յիսուս իրեն ձեռք մեկնեց՝ նո-
րան բռնեց եւ ասաց . Թե՛րահաւատ՝ ինչո՞ւ երկ-
32 մտեցիր ։ Եւ երբոր նաւը մտին , քամին հանդար-
33 տեց ։ Եւ նորանք որ նաւին մէջն էին՝ մօտ եկին
նորան երկրպագութիւն տուին՝ եւ ասացին . Ի-
րաւի՛ որ դու Աստուծոյ Որդին ես ։

34 Եւ անցին ցամաքը՝ եւ եկին Գեննեսարէթ ։
35 Եւ երբոր այնտեղի մարդիքը ճանաչեցին նորան ,
ուղարկեցին այն ամեն գաւառը՝ եւ ամեն հի-
36 ւանդները նորան մօտ բերին ։ Եւ նորան աղաչում
էին՝ որ գոնէ միայն նորա շորի ծայրին դպչին .
եւ նորանք որ մին անգամ դիպան , փրկվեցան ։

ԳԼ. ԺԵ

Աւանդութեան յանդիմանութիւնը . Քանանացի կնոջ աղջիկը . 4000 մարդկանց կերակրելը ։

1 Այն ժամանակը Յիսուսի մօտ եկին Երուսաղէ-
մից եկած փարիսեցիքն եւ կարդացողները , եւ
2 ասացին . Ինչո՞ւ քո աշակերտներդ ծերերի աւան-
դութենումն անցնում են . պատճառնոր՝ ձեռները

3 չեն լուանում երբոր հաց են ուտում ։ Նա էլ
պատասխան տուաւ եւ նորանց ասաց . Ապա դուք
ինչո՞ւ Աստուծոյ պատուիրանքումն էք անցնում
4 ձեր աւանդութեան պատճառաւը ։ Ինչուոր՝ Աս-
տուած ասաց . Թէ քո հօրդ եւ մօրդ պատուէ ։
5 Եւ նա որ իրեն հօրը կամ մօրը կ'բամբասէ , մա-
6 հով պիտի մեռնի ։ Եւ դուք ասումէք՝ թէ Ո՛վ որ
իրեն հօրը կամ մօրն ասէ՝ թէ , Պատարագ է նա ,
որ ինձանից պիտի շահվիս , եւ չի՛ պատուէ իրեն
հօրը եւ իրեն մօրը . եւ այսպէս ձեր աւանդութեա-
նը համար՝ Աստուծոյ խօսքը ոչինչի տեղ էք դը-
7 նում ։ Կե՛ղծաւորներ՝ լա՛ւ մարգարէացաւ ձեզ
8 վերայ Եսային՝ եւ ասումէ . Այս ժողովուրդս պը-
ռօշներումն է պատւում ինձ . եւ իրենց սիրտն ին-
9 ձանից հեռացած ջոկված է ։ Զուր տեղն են պաշ-
տում ինձ . մարդկանցից պատուիրած վարդապե-
տութիւններն են սովորցնում ։

10 Եւ ժողովուրդներն իրեն մօտ կանչեց , եւ նո-
11 րանց ասաց . Լսեցէ՛ք եւ մտքնե՛րդ առէք ։ Ո՛չ
թէ ինչ որ մտնումէ բերանը՝ պղծումէ մարդոյն ,
այլ ինչ որ բերանիցը դուրս է գալիս , նա է որ
մարդոյն պղծումէ ։

12 Այն ժամանակը նորա աշակերտներն եկին՝ նո-
րան ասացին . Գիտո՞ւմես՝ որ փարիսեցիքն երբոր
13 այն բանը լսեցին գայթակղվեցան ։ Նա պատաս-
խան տուաւ նորանց եւ ասաց . Ամեն տունկ որ
14 իմ երկնաւոր Հայրս չ'տնկեց . թո՛ղ պոկվի ։ Թո՛ղ
տուէք նորանց՝ կոյր են կուրերի առաջնորդ . կոյրն
երբոր կուրին առաջնորդէ , կը մոլորվի՝ եւ երկուքն
15 էլ փոսի մէջ կընկնին ։ Պետրոս նորան պատասխան

16 տուաւ՝ եւ ասաց. Այս առակս մեզ մեկնէ։ Յի-
17 սուս ասաց։ Դո՞ւք էլ դեռ անխելք էք. Եւ չէ՞ք
իմանում. թէ ամեն բան որ բերանն է մանում,
18 փորն է գնում։ Բայց այն որ բերանիցն է դուրս
գալիս, յատուկ սրտիցն է գալիս՝ եւ նա է մար-
19 դուն պղծում։ Ինչու որ՝ սրտիցն են դուրս գալիս
չար խորհուրդներ՝ սպանութիւններ, շնութիւններ,
պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայու-
20 թիւններ, հայհոյութիւններ։ Այս ամենս է՝ որ
մարդուն պղծում է. բայց անլուայ ձեռքով ուտելը՝
մարդուն չի՛ պղծում։
21 Եւ Յիսուս այն տեղից դուրս եկաւ գնաց Տիւ-
22 րոսի եւ Սիդօնի կողմերը։ Եւ ահա՛ մին Քանանա-
ցի կին նորանց երկրիցը դուրս եկաւ՝ աղաղակումէր
եւ ասում. Տէ՛ր՝ որդի Դաւթի՝ ինձ ողորմեա՛.
23 իմ աղջիկս սաստիկ դիւահարվում է։ Եւ նա պա-
տասխան չ՚տուաւ նորան. եւ նորա աշակերտներն
եկին նորան աղաչումէին՝ եւ ասում. Արձակէ՛
24 նորան. ինչու որ՝ մեր ետեւէն աղաղակում է։ Նա
պատասխան տուաւ եւ ասաց. ես ուրիշ տեղ չե՛մ
ուղարկվել՝ եթէ ոչ Իսրայէլի տան կորած ոչխար-
25 ներին մօտ։ Նա էլ մօտեցաւ նորան երկրպագու-
26 թիւն էր անում եւ ասում. Տէ՛ր՝ ինձ օգնէ։ Պա-
տասխան տուաւ նորան՝ եւ ասաց Լաւ չէ՛ երե-
27 խաներին հացն առնել՝ եւ շներին ձգել։ Նա էլ
ասաց. Ուղիղ է Տէ՛ր՝ ինչու որ՝ շներն էլ ի-
րենց տիրոջ սեղանիցն ընկած փշրանքներիցն են
28 կերակրվում։ Այն ժամանակը Յիսուս պատաս-
խան տուաւ նորան՝ եւ ասաց. Ո՛վ կին դու՝
մեծ է քո հաւատքդ. ինչպէս որ ուզումես՝ այն-

պէս լինի քեզ. եւ նորա աղջիկը բժշկվեցաւ իսկ այն
ժամումը։
29 Եւ Յիսուս այն տեղից գնաց Գալիլեացոց ծովի
եզրն եկաւ. եւ վեր ելաւ սարը, եւ այնտեղ նըս-
30 տեց։ Եւ շատ ժողովուրդներ նորան մօտ եկին, որ
իրենց հետ ունէին կաղեր՝ կոյրեր՝ համրներ՝ միա-
կողմանիներ, եւ ուրիշ շատեր էլ. եւ նորանց ձը-
31 գեցին նորա ոտները. եւ նորանց բժշկեց։ Մինչեւ
որ զարմանումէին այն ժողովուրդներն որ տեսնում
էին. որ համրները խօսում, կաղերը գնումէին,
միակողմանիները բժշկվում, կոյրերն տեսնումէին,
եւ փառաւորումէին Իսրայէլին Աստուածը։
32 Եւ Յիսուս աշակերտներն իրեն մօտ կանչեց եւ
ասաց Խեղճս գալիս է այս ժողովրդիս վերայ. ին-
չու որ՝ երեք օր է՝ որ իմ մօտ են. եւ բան չունին
որ ուտեն. եւ չե՛մ ուզում նորանց սոված ճանա-
պարհ ձգել. որ չ՚լինի թէ սովածութենիցը թու-
33 լանան ճանապարհումը։ Աշակերտները նորան ա-
սացին. Ապա մեզ այստեղ անապատումս ո՞ր տե-
ղից այնչափ հաց կ՚լինի՝ որ այդքան ժողովուրդ-
34 կշտացնենք։ Եւ Յիսուս նորանց ասաց. Քանի՞
հատ հաց ունիք. եւ նորանք ասացին՝ Եօթը, եւ
35 քիչ ձուկներ։ Եւ հրաման տուաւ ժողովրդին՝ որ
36 գետնի վերայ նստին. Եւ այն եօթը հացը՝ եւ ձըկ-
ներն առաւ, գոհացաւ եւ կոտրեց եւ աշակերտ-
37 ներին տուաւ՝ եւ նորանք էլ ժողովուրդին։ Ամեն-
քը կերին եւ կշտացան. եւ աւելցած կտորներիցը
38 եօթը քթոց լիքն վեր առին։ Եւ նորանք որ կե-
րին՝ չորս հազարի չափ մարդիք էին, կանանցից
եւ երեխաներիցը ջոկ։

39 Երբոր այն ժողովուրդներն արձակեց, մտաւ նա-
ւը եւ եկաւ Մագդաղէի կողմերը։

ԳԼ. ԺԶ

Փարիսեցիք նշան են խնդրում. Նորանց խմորը. Պետրոսի դաւանութիւնը եւ բանալիքը. Քրիստոսի չարչարանքը եւ իրեն հետեւողներին խաչը։

1 Եւ փարիսեցիքն ու սադուկեցիքը նորան մօտ ե-
կին. եւ փորձելով նորանից խնդրում էին՝ որ եր-
2 կնքից մին նշան ցոյց տայ իրենց։ Նա պատասխան
տուաւ՝ եւ ասաց նորանց. Որ ժամանակ իրիկուն
է լինում ասում էք թէ, Պարզ կ'լինի. ինչու որ՝
3 երկինքը կարմրացել է։ Եւ առաւօտն ասում էք
Այսօր մրրիկ կ'լինի. ինչու որ երկինքը տրտմութե-
նով կարմրացել է։ Ապա երկնքի երեսը կարող էք
քննել՝ բայց այս ժամանակիս նշանը չէ՞ք կարող
4 հասկանալ։ Չար եւ շնացող ազգը նշան է խնդ-
րում. եւ նշան չի՛ տրվիլ նորան, բայց միայն Յո-
նան մարգարէին նշանը. եւ նորանց թողեց եւ
գնաց։

5 Աշակերտներն էլ գնացին այն կողմը, եւ մոռա-
6 ցան հաց վեր առնել։ Յիսուս նորանց ասաց. Տե-
սէ՛ք եւ զգո՛յշ կացէք սադուկեցոց եւ փարիսեցոց
7 խմորից։ Նորանք իրենց մէջ միտք էին անում՝
8 եւ ասում. թէ Հաց չենք վեր առել։ Յիսուս ի-
մացաւ եւ ասաց. Ո՛վ թերահաւատներ՝ ինչո՞ւ
էք ձեր մտքումը հոգս անում՝ թէ հաց չունինք։
9 Դեռ չէ՞ք իմանում՝ եւ մտքներդ չէ՞ք բերում այն

հինգ հացը հինգ հազար մարդկանցը, եւ քանի
10 քթոց վեր առիք։ Եւ ո՞չ էլ այն եօթը հացը չորս
հազար մարդկանցը. եւ քանի՛ քթոց վեր առիք։
11 Ուրեմն ի՞նչպէս չէք իմանում՝ որ հացի համար
չասացի ձեզ՝ զգո՛յշ կացէք՝ փարիսեցոց եւ սա-
12 դուկեցոց խմորից։ Այն ժամանակը հասկացան որ
չասաց՝ թէ խմորից զգուշ կենան, այլ փարիսե-
ցոց եւ սադուկեցոց աղանդից։

13 Եւ Յիսուս դուրս գնաց Փիլիպպեայ Կեսարիայի
կողմերը, եւ աշակերտներին հարցնում էր եւ ա-
սում. թէ, Մարդիկն ինձ համար ո՛վ են ասում՝
14 որ Որդին մարդոյ լինի։ Եւ նորանք ասացին Մինն
ասում թէ Յովհաննէս մկրտիչն է. ուրիշներն էլ՝
թէ Եղիան. եւ կէսն էլ՝ թէ Երեմիան, կամ մար-
15 գարէներիցն մինը։ Յիսուս նորանց ասաց. Ապա
16 դուք ո՛վ էք ասում ինձ համար որ լինիմ։ Սիմօն
Պետրոս պատասխան տուաւ նորան եւ ասաց. Դու
17 ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին։ Յիսուս
պատասխան տուաւ՝ եւ ասաց նորա. Երանի՜
քե՛զ Յօնանի որդի Սիմօն, ինչու որ՝ մարմին եւ
արիւն քեզ չի՛ յայտնեց, բայց իմ հայրս՝ որ եր-
18 կնքումն է։ Եւ ես ասում եմ քեզ. որ Դու ես վէմ
եւ այդ վիմից վերայ իմ եկեղեցիս կը շինեմ, եւ
19 դժոխքի դռներն չեն յաղթիլ դորան։ Եւ երկնքի
արքայութեան բանալիքը քեզ կ'տամ, եւ այն որ
երկրի վերայ կը կապես, երկնքումն էլ կապված
կ'լինի. եւ այն որ երկրի վերայ կարձակես, եր-
20 կնքումն էլ արձակված կ'լինի։ Այն ժամանակը
աշակերտներին սաստեց՝ որ բնաւ մին մարդու չա-
սեն. թէ նա Քրիստոսն է։

21 Նորանից ետեւ Յիսուս սկսեց աշակերտներին
յայտնել, թէ պէ՛տք է նորան՝ որ Երուսաղէմ
գնայ եւ քահանայապետներիցն ու կարդացողնե-
րիցը եւ ծերերիցը շատ չարչարանքով
չարչարուի՝ սպանուի եւ երեք օրումը յարութիւն
22 առնէ։ Եւ Պետրոս նորան մին կողմ տարաւ. եւ
սկսեց նորա հետ հակառակիլ եւ ասել՝ Քաւ լիցի
23 քեզ Տէ՛ր՝ այդ բանդ չի՛ լինի քեզ։ Եւ նա դար-
ձաւ դէպի Պետրոսը՝ եւ ասաց. Յե՛տ գնա ինձա-
նից սատանայ՝ ինձ գայթակղութիւն ես. ինչու-
որ՝ դու Աստուծոյ բաները չես միտք անում, բայց
24 մարդկանց բաները։ Այն ժամանակը Յիսուս իրեն
աշակերտներին ասաց. Թէ որ մին մարդ կամենու-
մէ իմ ետեւէս գալ՝ նա թո՛ղ իրեն անձն ուրա-
նայ՝ եւ իրեն խաչն առնէ, եւ իմ ետեւէս գայ։
25 Պատճառն որ՝ ո՛վ որ իրեն անձը կուզէ ապրեցնել,
կ'կորցնէ նորան. եւ ո՛վ որ իրեն անձը կ'կորցնէ
26 ինձ համար, կ'գտնէ նորան։ Ի՞նչ օգուտ է մար-
դոյ՝ որ ամեն աշխարհքս առնայ՝ եւ իրեն անձին
վնաս տայ. կամ թէ ի՞նչ գին կ'տայ մարդ՝ իրեն
27 անձը փրկելու համար։ Ինչուոր՝ գալու է Որդին
մարդոյ իրեն Հօր փառքովը իրեն հրեշտակներին
հետ. եւ այն ժամանակն ամեն մէկին հատուցումը
28 կ'տայ իրեն գործքերի չափովը։ Ճշմարիտ ասում
եմ ձեզ, որ Այստեղ լինողներիցը մին քանիսը
կան, որ մահ չեն տեսնիլ՝ մինչեւ որ Որդին մար-
դոյ տեսնեն իրեն թագաւորութենովը եկած։

ԳԼ. ԺԷ

Քրիստոսի կերպարանքի պայծառ փոխվիլը. Լուսնոտը. Երկդրամեանը։

1 Եւ վեց օրից ետեւ Յիսուս Պետրոսին եւ Յակո-
բին եւ նորա եղբայր Յօհաննէսին իրեն հետ ա-
ռաւ, եւ նորանց առանձին մին բարձր սար հա-
2 նեց։ Եւ նորանց առաջին՝ նորա կերպարանքը փոխ-
վեցաւ՝ եւ նորա երեսն արեգական պէս լուսաւոր-
վեցաւ, եւ նորա շորերը լուսոյ պէս սպիտակ էլան։
3 Եւ ահա՛ Մօսէսը՝ եւ Եղիան նորանց երեւեցան՝
4 որ նորան հետ խօսումէին։ Պետրոս պատասխան
տուաւ՝ եւ ասաց Յիսուսին. Տէ՛ր՝ լաւ է որ մենք
այստեղ կենանք. թէ որ կամենաս, երեք տաղա-
ւար կ'շինենք՝ մինը քեզ համար՝ մինը Մօսէսին,
5 եւ մինը Եղիային համար։ Եւ դեռ քանի որ նա
խօսումէր՝ ահա՛ մին լուսաւոր ամպ շուք արաւ նո-
րանց վերայ. այն ամպիցը ձայն էլաւ՝ եւ ասաց.
Դա՛ է իմ սիրելի Որդիս՝ որ դորան հաւանել եմ.
6 դորան ակա՛նջ դրէք։ Երբոր աշակերտները լսեցին,
իրենց երեսներին վերայ վէր ընկան. եւ շատ վա-
7 խեցան։ Եւ Յիսուս մօտեցաւ՝ նորանց բռնեց եւ
8 ասաց. Վե՛րկացէք՝ եւ մի՛ վախենաք։ Իրենց աչ-
քերը բարձրացրին եւ ո՛չ ով չ'տեսին, բայց միայն
Յիսուսին։

9 Եւ երբոր այն սարիցը վէր էին գալիս, Յիսուս
նորանց պատուէր տուաւ եւ ասաց. Այդ տեսիլ-
քը ոչ մին մարդոյ չասէք, մինչեւ որ Որդին մար-

10 դոյ մեռելների միջիցը յարութիւն առնէ ։ Աշա-
կերտները նորան հարցրին եւ ասացին . Ի՞նչպէս է՝
որ կարդացողներն ասումեն՝ թէ առաջ Եղիան
11 պէ՛տք է գայ ։ Յիսուս պատասխան տուաւ՝ եւ ա-
սաց նորանց . Եղիան կ'գայ՝ եւ ամեն բան կ'հաս-
12 տատէ ։ Բայց ասումեմ ձեզ՝ որ Եղիան իսկ հիմիկ
եկած է՝ եւ նորան չ'ճանաչեցին . այլ ինչ որ ու-
զեցին՝ նորան արին . այնպէս էլ Որդին մարդոյ
13 նորանցից պիտի չարչարվի ։ Այն ժամանակն աշա-
կերտները հասկացան՝ թէ Յօհաննէս մկրտչին հա-
14 մար ասաց նորանց ։ Եւ երբոր ժողովրդին մէջ ե-
կին , մին մարդ մօտեցաւ՝ ծունր էր դնում եւ ա-
սում . Տէ՛ր իմ որդւոյս ողորմեա՛ . որ լուսնոտումէ՝
եւ սաստիկ հիւանդանում . շատ անգամ կրակն է
15 ընկնում . եւ մին քանի անգամ էլ ջուրը ։ Եւ նո-
րան քո աշակերտներիդ մօտ բերի՝ եւ չ'կարացին
16 բժշկել ։ Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց .
Ո՜վ անհաւատ եւ ծուռ ազգ . մինչեւ ե՞րբ ձեզ
հետ պիտի լինիմ՝ մինչեւ ե՞րբ ձեզ պիտի համբե-
17 րեմ . Նորան ինձ մօտ բե՛ր ։ Եւ Յիսուս նորան սաս-
տեց . եւ դեւը նորանից դուրս եկաւ , եւ տղան
18 իսկ այն ժամին բժշկվեցաւ ։ Այն ժամանակն ա-
շակերտներն առանձին մօտ եկին . եւ Յիսուսին
ասացին . Մենք ինչո՞ւ չ'կարացինք հանել նորան ։
19 Նա էլ նորանց ասաց . Ձեր թերահաւատութեանը
համար ։ Ճշմարիտ ասումեմ ձեզ՝ թէ որ մանա-
նեխի հատի չափ հաւատ ունենաք , եւ այս սա-
րիս ասէք՝ Այստեղից այնտեղ փոխվէ՝ կ'փոխվի .
եւ բնաւ մին բան անկարելի չի՛ լինիլ ձեզ հա-
20 մար ։ Միայն թէ՝ այս ցեղս ուրիշ բանով դուրս

չի՛ գալ՝ եթէ ոչ աղօթքով եւ ծոմով ։
21 Եւ դեռ քանի որ նորանք Գալիլեային մէջ ման
էին գալիս , Յիսուս նորանց ասաց . Որդին մար-
22 դոյ պէտք է մարդկանց ձեռքը մատնվի ։ Եւ նո-
րան կ'սպաննեն՝ եւ երեք օրումն յարութիւն կ'առ-
նէ . եւ նորանք շատ տրտմեցան ։
23 Երբոր նորանք եկին Կափառնայում , երկդրա-
մեան հարկ ուղօղներն եկին Պետրոսին մօտ եւ ա-
սացին . Ձեր Վարդապետը երկդրամեանը չի՞ տա-
24 լիս , եւ նա ասաց՝ Այո՛ ։ Եւ երբոր տունը մը-
տաւ , Յիսուս նորանից առաջ սկսեց եւ ասաց .
Սիմօ՛ն՝ ի՞նչպէս է երեւում քեզ . ազգերի թա-
գաւորները ումի՞ց են առնում գլխահարկը կամ
տուրքը , իրենց որդիքներէ՞ցը , թէ օտարներիցը ։
25 Եւ երբոր ասաց՝ թէ Օտարներիցը . Յիսուս նորան
26 ասաց . Ապա ուրեմն՝ որդիքները ազատ են ։ Բայց
որ նորանց չ'գայթակղացնենք՝ գնա՛ ծովը եւ կար-
թը ձգէ , եւ առաջին ձուկը որ դուրս կ'գայ՝ ա՛ռ ,
նորա բերանը բա՛ց՝ եւ մին սատեր կ'գտնես՝ եւ
նա ա՛ռ եւ նորանց տուր՝ իմ տեղս եւ քո տեղդ ։

ԳԼ. ԺԸ

Վա՜յ գայթակղութեան և անհաշտութեան . ծառաներից հաշիւ պահանջող թագաւորը ։

1 Այն օրը աշակերտները Յիսուսին մօտ եկին՝ եւ
ասացին . Մեզանից ո՛վ մեծ կ'լինի երկնքի ար-
2 քայութեանը մէջ ։ Եւ Յիսուս մին երեխայ կան-
չեց իրեն մօտ՝ եւ նորան կանգնացրուց նորանց մի-

3 ջուր։ Եւ ասաց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. Թէ
որ չ'դառնաք եւ չ'լինիք երեխաների նման, չէ՛ք
4 մտնիլ երկնքի արքայութիւնը։ Ուրեմն ո՛վ որ ի-
րեն անձն այս երեխային նման կ'խոնարհացնէ, նա՛
5 է մեծ երկնքի արքայութեանը մէջ։ Եւ ո՛վ որ մին
այսպէսի երեխայ իմ անունովս կ'ընդունի, նա
6 ինձ կ'ընդունի։ Եւ ո՛վ որ կ'գայթակղացնէ այս
փոքրներիցս մինը՝ որ ինձ հաւատացել են, լա՛ւ
էր նորան՝ որ մին իշու ջաղացի քար նորա վզիցը
կախվի եւ ծովի խոր տեղը խեղդվի։
7 Վա՛յ աշխարհքիս՝ գայթակղութիւններին հա-
մար. պէ՛տք է որ գայթակղութիւններ գան, բայց
վա՛յ այն մարդոյն՝ որ նորան ձեռովը կ'գայ գայ-
8 թակղութիւնը։ Թէ որ քո ձեռդ կամ ոտդ քեզ
գայթակղացնէ, կտրէ՛ նորան՝ եւ քեզանից ձգէ՛՝
լա՛ւ է քեզ՝ որ մին ձեռնանի կամ կաղ մտնես
կեանքը, քան թէ երկու ձեռք եւ երկու ոտք ու-
9 նենաս՝ եւ յաւիտենական կրակին մէջ ընկնիս։ Եւ
թէ որ քո աչքդ քեզ գայթակղացնէ, հանէ՛ նո-
րան՝ եւ քեզանից ձգէ՛. լա՛ւ է քեզ՝ որ մին աչ-
քանի մտնես կեանքը, քան թէ երկու աչք ու-
նենաս՝ եւ գեհենի կրակն ընկնիս։
10 Զգո՛յշ կացէք՝ որ այս փոքրերիցս մինը չանար-
գէք. ասում եմ ձեզ՝ որ նորանց հրեշտակները եր-
կնքումը միշտ իմ Հօրս երեսը տեսնումեն՝ որ եր-
11 կնքումն է։ Պատճառնոր՝ Որդին մարդոյ եկաւ՝ որ
12 կորածն ապրեցնէ։ Ի՞նչպէս է երեւում ձեզ՝ Թէ
որ մին մարդ հարիւր ոչխար ունենայ՝ եւ նորանցից
մինը մոլորվի, նա չի՞ թողիլ իննսուն եւ ինը ոչ-
խարը սարերումը, եւ գնալ այն մոլորվածին ման

13 գալ։ Եւ երբոր կը գտնէ նորան. Ճշմարիտ ասու-
մեմ ձեզ, որ նորա վերայ աւելի ուրախ կ'լինի,
քան այն իննսուն եւ իննին վերայ, որ չեն մոլոր-
14 ված։ Այսպէս էլ իմ Հայրս՝ որ երկնքումն է, չի՛
կամենում, որ այս փոքրներիցս մինը կորչի։
15 Թէ որ քո եղբայրդ քեզ դէմ մեղք անէ. գնա՛
նորան յանդիմանէ՝ երբոր դու եւ նա մենակ լի-
16 նիք. Թէ որ լսէ քեզ՝ քո եղբայրդ շահեցիր։ Բայց
թէ որ չ'լսէ քեզ. մին կամ երկու ուրիշն էլ քեզ
հետ ա՛ռ. ինչուոր՝ երկու կամ երեք վկայի բե-
17 րանով ամեն բան կ'հաստատվի։ Բայց թէ որ նո-
րանց էլ չի՛ լսէ, եկեղեցոյն ասա՛՝ ապա թէ որ
եկեղեցոյն էլ չի՛ լսէ, թո՛ղ լինի քեզ համար
ինչպէս հեթանոս կամ մաքսաւոր։
18 Ճշմարիտ ասում եմ ձեզ, Թէ Այն որ երկրիս
վերայ կը կապէք, երկնքումն էլ կապված կ'լինի.
եւ այն՝ որ երկրիս վերայ կարձակէք, երկնքումն
19 էլ արձակված կ'լինի։ Այս էլ ասում եմ ձեզ՝ Թէ
որ ձեզանից երկու հոգի երկրի վերայ միաբան լի-
նին ամեն բանի համար, ինչ որ խնդրեն՝ կ'լինի
20 նորանց իմ Հօրիցս որ երկնքումն է։ Ինչուոր՝ որ
տեղ երկու կամ երեք հոգի իմ անունովս ժողով-
ված լինին՝ այնտեղ ես նորանց մէջն եմ։
21 Այն ժամանակը Պետրոս նորան մօտ եկաւ եւ
ասաց. Տէ՛ր Թէ որ իմ եղբայրս ինձ դէմ մեղք
անէ, քանի՛ անգամ պէտք է թողութիւն տամ
22 նորան. մինչեւ եօ՞թն անգամ։ Յիսուս նորան ա-
սաց. Չե՛մ ասում քեզ՝ Թէ մինչեւ եօթն ան-
գամ, բայց մինչեւ եօթանասուն անգամ եօթը։
23 Սորա համար երկնքի արքայութիւնը նմանվեցաւ մին

թագաւոր մարդոյ. որ ուզում էր իրեն ծառաների-
24 ցը հաշիւ առնել: Եւ երբոր սկսեց առնել, նորան
մօտ մին տասն հազար քանքարի պարտական բե-
25 րին: Երբոր չունէր վճարել, նորա տէրը հրաման
տուաւ՝ որ նորան եւ նորա կինը եւ նորա որդիքը
եւ ամեն ինչ որ ունէր ծախեն՝ եւ պարտքը վճա-
26 րէ: Եւ ծառան երեսի վերայ ընկնելով երկրպա-
գութիւն էր անում նորան եւ ասում. Երկայնա-
մի՛տ կաց ինձ համար. եւ ամենը կ'հատուցանեմ
27 քեզ: Տէրը խղճաց այն ծառային վերայ՝ նորան
28 արձակեց, եւ փոխն էլ բաշխեց նորան: Եւ երբոր
այն ծառան դուրս եկաւ՝ իրեն ընկեր ծառաներիցը
մինը գտաւ՝ որ իրեն հարիւր դահեկան պարտա-
կան էր, եւ նորան բռնեց՝ խեղդում էր եւ ասում.
29 վճարէ՛ ինձ ինչ որ պարտական ես: Ապա այն ըն-
կեր ծառան՝ նորա ոտներն ընկաւ. նորան աղա-
չում էր եւ ասում, Երկայնամի՛տ կաց ինձ համար՝
30 եւ կը հատուցանեմ քեզ: Եւ նա չէ՛ր կամենում
այլ գնաց՝ նորան ձգեց բանտը մինչեւ որ պարտքը
31 վճարէ: Երբոր նորան ընկեր ծառաները տեսին ինչ
որ էլաւ, շատ տրտմեցան՝ եւ եկին ամեն ինչ որ
32 էլաւ, իրենց տիրոջը յայտնեցին: Այն ժամանա-
կըն իրեն տէրը կանչեց նորան եւ ասաց. Ո՛վ չար
ծառայ՝ ես ամեն պարտքդ բաշխեցի քեզ. որով-
33 հետեւ դու աղաչեցիր ինձ: Ուրեմն պէտք չէ՞ր քեզ
էլ՝ որ քո ընկեր ծառայիդ ողորմէիր՝ ինչպէս որ
34 ես քեզ ողորմեցայ: Եւ նորա տէրը բարկացաւ՝ եւ
նորան մատնեց դահիճների ձեռքը, մինչեւ որ ա-
35 մեն պարտքը վճարէ: Այսպէս էլ իմ Հայրս որ եր-
կնքումն է, ձեզ կ'անէ, թէ որ դուք ամեն մէկդ

իրեն եղբօրը ձեր բոլոր սրտից չ'թողէք նորանց
յանցանքը:

ԳԼ. ԺԹ

Կին արձակելը. երեխաներին օրհնելը. հարստութեան վտանգը:.

1 Եւ էլաւ՝ երբոր Յիսուս այս խօսքերս վերջացուց,
Գալիլեայիցը գնաց՝ եւ Հրէաստանի կողմերն ե-
2 կաւ, Յորդանանի այն կողմը: Եւ շատ ժողո-
վուրդներ նորա ետեւէն գնացին՝ եւ նորանց այն-
տեղ բժշկեց:
3 Եւ փարիսեցիքը նորա մօտ եկին՝ նորան փոր-
ձում էին եւ ասում. թէ, Արժա՞ն է մին մարդոյ
որ իրեն կինը արձակէ ամեն մասի համար որ լի-
4 նի: Նորանց պատասխան տուաւ եւ ասաց. Դուք
չէ՞ք կարդացել՝ թէ նա որ սկզբից ստեղծեց՝ նո-
5 րանց արու եւ էգ արաւ, եւ ասաց. Սորա համար
մարդն իրեն հայրը եւ մայրը կ'թողէ եւ իրեն կըն-
կանը հետ կ'գնայ՝ եւ երկուքը մին մարմին կ'լի-
6 նին: Ուրեմն երկու չեն, այլ մին մարմին են. ա-
պա նա որ Աստուած միաւորեց. թո՛ղ մարդը չը
7 ջոկէ: Նորան ասացին. ապա ինչո՞ւ Մովսէսը պա-
տուիրեց մեզ՝ որ արձակման թուղթ տանք եւ ար-
8 ձակենք: Նորանց ասաց. Մովսէս ձեր քարասրտու-
թեան համար պատուէր տուաւ ձեզ՝ որ ձեր կա-
նայքը արձակէք, բայց սկզբից այնպէս չէլաւ:
9 Միայն թէ ասում եմ ձեզ՝ Ամեն ո՛վ որ իրեն կինը
կարձակէ, եւ ոչ թէ պոռնկութեան պատճառաւ,

եւ ուրիշը կառնէ՝ նա շնութիւն է գործում. եւ
նա էլ՝ որ այն արձակածը կ'առնէ, շնութիւն է
10 գործում։ Իրեն աշակերտները նորան ասացին. Թէ
որ մարդոյ եւ կնկան մէջ այդպիսի ինչ դժուարու-
11 թիւն կայ, լա՛ւ է չամուսնանալը։ Եւ նա ասաց
նորանց. Ամենքը կարող չեն այդ բանի՛դ, բայց
12 նորանք՝ որ նորանց տուված է։ Ինչուոր՝ կան ներ-
քինիք՝ որ իրենց մօր փորից այնպէս են ծնվել.
եւ կան ներքինիք՝ որ մարդկանցից են եղած ներ-
քինիք. եւ կան ներքինիք՝ որ իրենց անձը ներքի-
նի են արել երկնքի արքայութեան համար. ո՛վ որ
կարող է տանել՝ թո՛ղ տանի։
13 Այն ժամանակն երեխաներ բերին նորա մօտ՝ որ
ձեռք դնէ նորանց վերայ եւ աղօթք անէ. եւ նո-
14 րա աշակերտները սաստեցին նորանց։ Յիսուս ա-
սաց. Թո՛յլ տուէք այդ երեխաներին՝ եւ դորանց
մի՛ արգելէք որ ինձ մօտ գան. ինչուոր՝ այդպէ-
15 սիններին է երկնքի արքայութիւնը։ Եւ նորանց
16 վերայ ձեռք դրաւ՝ եւ այնտեղից գնաց։ Եւ ահա
մինը նորա մօտ եկաւ եւ ասաց. Բարի՛ Վարդա-
պետ՝ ես ի՞նչ բարի բան գործեմ՝ որ յաւիտենա-
17 կան կեանքն ընդունիմ։ Նա էլ նորան ասաց. Ին-
չու ես ինձ բարոյ համար հարցնում. մին է բարի.
թէ որ կամենումես յաւիտենական կեանքն մտնել,
18 պատուիրանքները պահէ։ Նորան ասաց. Ո՞րը. Յի-
սուս նորան ասաց. Մի՛ սպանաներ, մի՛ շնար,
19 մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր։ Պատուէ՛ քո
հօրդ եւ քո մօրդ, եւ քո ընկերդ՝ քո անձիդ պէս
20 սիրէ՛։ Այն տղան նորան ասաց. Այդ ամենդ իմ
երեխայութենիցս պահեցի. ապա ի՞նչ բանով եմ

21 պակաս. Յիսուս նորան ասաց. Թէ որ կամենու-
մես կատարեալ լինիլ, գնա՛ քո ապրանքդ ծա-
խէ՛ եւ աղքատներին տուր, եւ գանձ կունենաս
22 երկնքումը եւ իմ ետեւէս ե՛կ։ Երբոր տղան այս
բանս լսեց, տրտմեցաւ եւ գնաց. պատճառնոր՝
շատ ապրանք ունէր։
23 Յիսուս աշակերտներին ասաց. Ճշմարիտ ասու-
մեմ ձեզ՝ որ հարուստ մարդը շատ դժուար կ'մըտ-
24 նէ երկնքի արքայութիւնը։ Դարձեալ ասումեմ
ձեզ. Աւելի հեշտ է՝ որ ուղտն ասեղի ծակիցն անց-
նի՝ քան թէ հարուստն երկնքի արքայութիւնը
25 մտնէ։ Աշակերտներն երբոր լսեցին, շատ զարմա-
26 ցան եւ ասացին. Ապա ո՞վ կարէ ապրիլ։ Յիսուս
նորանց մտիկ տուաւ եւ ասաց. Այդ բանդ մարդ-
կանց կողմանէ անկարելի է, բայց Աստուծոյ կող-
մանէ՝ ամեն բան կարելի է։
27 Այն ժամանակը Պետրոս պատասխան տուաւ եւ
ասաց նորան. Ահա՛ մենք ամեն բան թողինք եւ քո
28 ետեւէդ եկինք. ապա ի՞նչ պիտի լինի մեզ։ Յի-
սուս նորանց ասաց. Ճշմարիտ ասումեմ ձեզ՝ թէ
դուք որ իմ ետեւէս եկիք, իմ միւս անգամ գա-
լոյ ժամանակումն երբոր Որդին մարդոյ իրեն փա-
ռաց աթոռի վերայ կը նստի, դուք էլ տասներ-
կու աթոռի վերայ կը նստիք՝ եւ Իսրայէլի տաս-
29 ներկու ցեղին կ'դատէք։ Եւ ամեն ով որ թողեց
տունը՝ կամ եղբարքը՝ կամ քոյրերը՝ կամ հայրը
կամ մայրը կամ կինը կամ որդիքը կամ արտերը
իմ անունիս համար, հարիւրապատիկ կառնէ՝ եւ
30 յաւիտենական կեանքը կ'ժառանգէ։ Շատ առա-
ջիններ յետինք կ'լինին՝ եւ յետիններ առաջին։

ԳԼ. Ի

Այգիում աշխատողները · Քրիստոսի չարչարանքը ·
Աշակերտաց պատուասիրութիւնը · Երկու կոյրերը ։

1 Պատճառնոր՝ երկնքի արքայութիւնը նման է մին
տանուտէր մարդու՝ որ առաւօտանց դուրս եկաւ՝
2 իրեն այգու համար մշակներ բռնել ։ Եւ այն մշակ-
ներին՝ օրը մին դահեկան խօսեց, եւ նորանց ու-
3 ղարկեց իրեն այգին ։ Եւ երեք ժամին դուրս եկաւ՝
ուրիշներ էլ տեսաւ որ փողոցներին մէջ պարապ
4 կանգնել էին ։ Նորանց էլ ասաց. Դուք էլ գնա-
ցէք իմ այգին՝ եւ ինչ որ արժան է կ'տամ ձեզ ։
5 Նորանք էլ գնացին. եւ դարձեալ վեց ժամին եւ
6 ինը ժամին դուրս եկաւ՝ եւ այնպէս արաւ ։ Եւ
տասնումին ժամին էլ դուրս եկաւ՝ ուրիշներ գտաւ
որ պարապ կանգնել էին. նորանց ասաց. Ի՞նչու
7 էք այստեղ բոլոր ցերեկս պարապ կանգնել ։ Նո-
րան ասացին. Նորահամար որ՝ ո՛չ ով մեզ բանի
չ'բռնեց. Նորանց ասաց. Դուք է՛լ գնացէք իմ
8 այգին, եւ ինչ որ արժան է կ'առնէք ։ Եւ երբոր
իրիկուն էլաւ, այգու տէրն իրեն տան վերակա-
ցուին ասաց. Մշակները կանչէ եւ նորանց վարձը
տուր՝ յետիններիցն սկսած մինչեւ առաջինները ։
9 Երբոր նորանք եկին՝ որ տասնումին ժամին էին,
10 ամեն մէկը մին դահեկան առին ։ Առաջիններն էլ
եկին՝ եւ կարծումէին թէ աւելի կ'առնեն եւ նո-
11 րանք էլ ամեն մէկը մին դահեկան առին ։ Երբոր
առին, տանտիրոջիցը տրտնջումէին եւ ասում.
12 Թէ, Այդ յետիններդ մին ժամ աշխատեցին, եւ

դորանց մեզ հետ հաւասար արիր. որ օրի ծան-
13 րութիւնն ու տաքութիւնը քաշեցինք ։ Նա նո-
րանցից մինին պատասխան տուաւ եւ ասաց. Ո՛վ
ընկեր՝ չե՛մ զրկում քեզ. չէ՞ որ դու ինձ հետ մին
14 դահեկան ես խօսացել ։ Քունդ ա՛ռ եւ գնա՛. ես
ուզումեմ որ այս յետիններս տամ ինչպէս քեզ ։
15 Միթէ ես իշխանութիւն չունի՞մ իմ ապրանքիս
վերայ՝ որ ինչ որ ուզեմ անեմ. կամ թէ քո աչ-
16 քըդ չա՞ր է՝ որ ես առատաձեռն եմ ։ Այսպէս
յետիններն առաջինք կ'լինին, եւ առաջիններն
յետինք. ինչուոր՝ շատ են կանչված, բայց քիչ
են ընտրված ։
17 Երբոր Յիսուս գնումէր Երուսաղէմ, տասներ-
կուսըն առանձին իրեն հետ առաւ՝ եւ ճանապար-
18 հումն ասաց նորանց. Ահա՝ վեր ենք ելլում Երու-
սաղէմ՝ եւ Որդին մարդու կը մատնվի քահանայա-
պետներին եւ կարդացողներին ձեռքը, եւ մահու
19 կ'դատապարտեն նորան ։ Եւ նորան կ'մատնեն հե-
թանոսներին ձեռքը՝ որ նորան խայտառակեն եւ
ծեծեն եւ խաչ հանեն, եւ երեք օրումն յարութիւն
կ'առնէ ։
20 Այն ժամանակը Զեբեդիոսի որդոց մայրը իրեն
որդոցն հետ նորան մօտ եկաւ երկրպագութիւն
21 էր անում, եւ նորանից բան խնդրում ։ Նա էլ ա-
սաց նորան. Ի՞նչ ես խնդրում. Նորան ասաց.
Ասա՛ որ այս իմ երկու որդիքս մինը քո աջ կողմդ
եւ մինը ձախ կողմդ նստին քո արքայութեանումդ ։
22 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. Չէ՛ք գի-
տում՝ թէ ի՞նչ էք խնդրում. կարո՞ղ էք դուք
այն բաժակը խմել՝ որ ես պիտի խմեմ. կամ այն մը-

կրտութենովը մկրտվիլ՝ որ ես պիտի մկրտվիմ. Նո-
23 րանք ասացին. Կարող ենք: Յիսուս նորանց ասաց.
իմ բաժակս կ'խմէք, եւ այն մկրտութենովն որ ես
պիտի մկրտվիմ կ'մկրտվիք. բայց՝ իմ աջ եւ ձախ
կողմն նստացնելն՝ իմն չէ որ տամ. բայց միայն նո-
24 րանց որ իմ Հօրիցս տված է: Եւ այն տասներն
երբոր լսեցին, բարկացան այն երկու եղբարց վե-
25 րայ: Յիսուս նորանց կանչեց իրեն մօտ եւ ասաց.
Գիտումէք՝ որ ազգերին իշխանները նորանց վերայ
տիրապետութիւն են անում, եւ մեծամեծները նո-
26 րանց վերայ իշխանութիւն են անում: Այնպէս չի
պիտի լինի ձեր միջումը. բայց ձեզանից ո՛վ որ կա-
27 մենայ մեծ լինիլ, թո՛ղ ձեզ պաշտօնեայ լինի: Եւ
ձեզանից ո՛վ որ կամենայ առաջին լինիլ, թո՛ղ ձեզ
28 ծառայ լինի: Ինչպէս որ՝ Որդին մարդոյ չեկաւ որ
իրեն ծառայեն, բայց որ ինքը ծառայէ. եւ շա-
տերի տեղ իրեն անձը փրկութեան գին տայ:
29 Եւ երբոր Երիքովիցը դուրս ելին, շատ ժողո-
30 վուրդներ գնացին նորան ետեւէն: Եւ ահա երկու
կոյր ճանապարհին վերայ նստած էին. երբոր լսե-
ցին՝ թէ Յիսուսն անցանումէ, աղաղակեցին եւ
31 ասացին. Յէսուս որդի Դաւթի՛ մեզ ողորմեա՛: Եւ
ամբոխը սաստեց նորանց որ ձայն չ'հանեն. եւ
նորանք է՛լ աւելի աղաղակումէին եւ ասում. Տէ՛ր՝
32 ո՛րդի Դաւթի. մեզ ողորմեա: Յիսուս կանգնեց՝
կանչեց նորանց եւ ասաց. Ի՞նչ էք ուզում որ
33 անեմ ձեզ: Նորան ասացին. Տէ՛ր՝ որ մեր աչքե-
34 րը բացվին: Եւ Յիսուս խղճաց. նորանց աչքերին
մօտեցաւ՝ եւ շուտով տեսին. եւ նորա ետեւէն
գնացին:

ԳԼ. ԻԱ

Քրիստոսի Երուսաղէմ մտնելը. տաճարը մաքրելը. անպտուղ թզենին. երկու որդոց եւ չար մշակների առակները:

1 Երբոր Երուսաղէմին մօտեցան՝ եւ Բեթփագէ ե-
կին Ձիթենեաց սարին մօտ, այն ժամանակը Յի-
2 սուս իրեն աշակերտներիցն երկուսն ուղարկեց, Եւ
նորանց ասաց. Գնացէ՛ք այդ գիւղը՝ որ ձեր ա-
ռաջին է, եւ այն տեղ մին կապած էշ կ'գտնէք՝
եւ քուռակն էլ նորա հետ, նորան արձակեցէ՛ք
3 բերէ՛ք ինձ մօտ: Եւ թէ որ մին մարդ բան ասէ
ձեզ. ասացէ՛ք թէ, Նորանք Տէրին պէ՛տք են. եւ
4 շուտով կ'ուղարկէ նորանց: Բայց այս ամեն բա-
ները էլաւ՝ որ մարգարէի խօսքն կատարվի որ ա-
5 սումէ: Սիօնի աղջկան ասացէ՛ք. ահա՛՝ քո թա-
գաւորդ քեզ մօտ է գալիս. հեզահոգի՝ եւ էշն եւ
6 իշի քուռակն հեծած: Աշակերտները գնացին եւ
7 արին՝ ինչպէս որ Յիսուս հրամայեց նորանց: Եւ
էշն ու քուռակը բերին՝ եւ իրենց շորերը նորանց
8 վերայ ձգեցին, եւ նորանց վերայ նստեց: Եւ շատ
ժողովուրդներ իրենց հագուստը ճանապարհի վերայ
փռեցին. եւ ուրիշները ծառերիցը ճղներ էին կտ-
9 րում եւ ճանապարհի վերայ փռում: Եւ ժողո-
վուրդներն որ առաջին եւ ետեւէն գնումէին, ա-
ղաղակումէին եւ ասում, Օրհնութիւն Որդւոյ Դաւ-
թի. օրհնեալ է նա՝ որ գալիս է Աստուծոյ անու-
նովը. օրհնութիւն 'ի բարձունս:
10 Եւ երբոր նա Երուսաղէմ մտաւ, բոլոր քաղաքն

11 դղրդաց եւ ասաց՝ Սա ո՞վ է ։ Եւ ժողովուրդներն
ասացին . Սա՛ Յիսուս մարգարէն է՝ որ Գալիլեայի
Նազարէթիցն է ։
12 Եւ Յիսուս մտաւ տաճարն՝ եւ ամենը որ տա-
ճարին մէջ ծախում եւ առնումէին , դուրս հա-
նեց . եւ սառկ փոխողների տախտակները՝ եւ ա-
13 ղաւնի ծախողների աթոռները կործանեց ։ Եւ ա-
սաց նորանց . Գրված է՝ թէ , իմ տունս աղօթքի
տուն պէտք է կոչվի . եւ դուք աւազակների բոյն
էք արել դա ։
14 Եւ տաճարին մէջ կուրեր եւ կաղեր եկին նորան
15 մօտ՝ եւ նորանց բժշկեց ։ Երբոր քահանայապետ-
ներն ու կարդացողներն այն հրաշքները տեսին որ
արաւ , եւ երեխաներն որ տաճարի միջումն աղա-
ղակումէին եւ ասում . Ովսաննա , օրհնութիւն
16 Որդոյ Դաւթի , բարկացան ։ Եւ նորան ասացին .
Լսո՞ւմես թէ դորանք ի՞նչ են ասում ։ Յիսուս նո-
րանց ասաց . Այո՛ . դուք այն չէ՞ք կարդացել՝ թէ
տղաների եւ կաթընկերների բերանից օրհնութիւն
17 հաստատեցիր ։ Եւ նորանց թողեց՝ քաղաքից դուրս
գնաց դէպի Բեթանիա՝ եւ այնտեղ մնաց ։
18 Եւ առաւօտանց երբոր նորէն յետ դարձաւ քա-
19 ղաքը , սովեց ։ Եւ ճանապարհին վերայ մին թզի
ծառ տեսաւ՝ նորա մօտ եկաւ եւ նորա վերայ բան
չ'գտաւ , բայց միայն տերեւ . եւ նորան ասաց . Սո-
րանից ետեւ յաւիտեան քեզանից էլ պտուղ չ'լի-
20 նի . եւ շուտով այն թզի ծառը չորացաւ ։ Աշա-
կերտներն երբոր տեսին՝ զարմացան եւ ասացին
21 թէ ի՞նչպէս շուտով թզի ծառը չորացաւ ։ Յի-
սուս պատասխան տուաւ՝ եւ ասաց նորանց . Ճըշ-

մարիտ ասումեմ ձեզ . թէ որ հաւատք ունենաք
եւ չի՛ երկմտէք , ո՛չ թէ միայն թզի ծառին այդ
կանէք , այլ թէ որ այդ սարին էլ ասէք՝ Վե՛ր
22 կաց եւ ծովն ընկի՛ր , կ'լինի ։ Եւ ամեն ինչ՝ որ ա-
ղօթքի մէջ հաւատքով խնդրէք , կառնէք ։
23 Եւ երբոր եկաւ տաճարը՝ դեռ քանի որ այնտեղ
սովորցնումէր , քահանայապետներն ու ժողովրդի
ծերերն նորա մօտ եկին եւ ասացին . Դու ի՞նչ իշ-
խանութենով ես անում դա . եւ ո՞վ տուաւ քեզ
24 այդ իշխանութիւնդ ։ Յիսուս պատասխան տուաւ՝
եւ ասաց նորանց . Ես էլ ձեզանից մին բան կ'հար-
ցնեմ . թէ որ նա ինձ ասէք , ես էլ ձեզ կասեմ՝
25 թէ ի՞նչ իշխանութենով եմ անում սա ։ Յօհան-
նէսի մկրտութիւնն ո՞ր տեղից էր , երկնքի՞ցն էր ,
թէ մարդկանցից . եւ նորանք իրենց մէջ միտք
26 էին անում եւ ասում , Թէ որ ասենք՝ Երկնքից
էր , կասէ մեզ թէ՝ Ապա ինչո՞ւ չ'հաւատացիք
նորան . եւ թէ որ ասենք՝ Մարդկանցից , ժողո-
վրդից վախենումենք . ինչու որ՝ ամենքը Յօհաննէ-
27 սը մարգարէի տեղ էին դնում ։ Պատասխան տուին
Յիսուսին եւ ասացին . Չենք գիտում . նա էլ նո-
րանց ասաց . Ես էլ չե՛մ ասիլ ձեզ՝ թէ ի՞նչ իշ-
խանութենով եմ անում սա ։
28 Միայն թէ՝ ի՞նչպէս է երեւում ձեզ . մին մարդ-
երկու որդի ունէր . եւ եկաւ առաջինին ասաց .
29 Որդի՝ գնա՛ այսօր այգումը բա՛ն արա ։ Եւ նա
պատասխան տուաւ եւ ասաց . Կ'գնամ տէ՛ր . եւ
30 չ'գնաց ։ Այն միւսին մօտն էլ գնաց եւ այնպէս
ասաց . նա պատասխան տուաւ եւ ասաց . Չեմ
կամենում . Բայց յետոյ զղջացաւ՝ եւ գնաց այ-

31 գին ։ Հիմիկ այս երկուսից ո՞րն արաւ իրեն հօր
կամքը . ասացին՝ Յետինը ։ Յիսուս նորանց ասաց .
Ճշմարիտ ասում եմ ձեզ . որ մաքսաւորներն ու
պոռնիկները ձեզանից առաջ կ'մտնեն երկնքի ար-
32 քայութիւնը ։ Ինչուոր՝ Յովհաննէս արդարութեան
ճանապարհովն եկաւ՝ եւ չ'հաւատացիք նորան . եւ
մաքսաւորներն ու պոռնիկները հաւատացին նորան.
եւ դուք տեսիք եւ չ'զղջացաք՝ որ յետոյ հաւա-
տաք նորան ։

33 Ուրիշ առակ էլ լսեցէ՛ք . Մին տանուտէր մարդ-
կար՝ որ այգի տնկեց եւ նորան պարսպով պատեց .
եւ նորան մէջ հնձան փորեց եւ աշտարակ շինեց .
եւ տուաւ նորան մշակներին , եւ գնաց հեռու աշ-
34 խարհք ։ Երբոր պտղի ժամանակը մօտեցաւ , իրեն
ծառաներն ուղարկեց մշակներին մօտ՝ որ նորա
35 պտուղներն առնեն ։ Եւ մշակները նորա ծառանե-
րը բռնեցին՝ մինը տանջեցին , միւսը սպանեցին ,
36 միւսն էլ քարկոծեցին ։ Դարձեալ ուղարկեց ուրիշ
ծառաներ առաջիններիցը շատ՝ եւ նորանց էլ այն-
37 պէս արին ։ Յետոյ իրեն որդին նորանց մօտ ուղար-
կեց եւ ասաց . Կ'լինի որ այս իմ որդուցս ամա-
38 չեն ։ Բայց մշակներն երբոր որդին տեսին , իրենց
մտքումն ասացին . սա է ժառանգն . եկէ՛ք սորան
սպանե՛նք , եւ սորա ժառանգութեանը տիրապե-
39 տենք ։ Եւ բռնեցին նորան . այգուցը դուրս հա-
40 նեցին եւ սպանեցին ։ Ապա երբոր այն այգու տէրը
41 գայ , ի՞նչ կանէ այն մշակներին ։ Նորան ասացին.
Այն չարերը չար պատժով կ'կորցնէ , եւ այգին
կ'տայ ուրիշ մշակների՝ որ նորա պտուղները տան
42 իրեն ժամանակին ։ Յիսուս նորանց ասաց . Բնաւ

մին ժամանակ դուք չէ՞ք կարդացել գրքումը՝ թէ
Այն քարն , որ շինողներն անարգեցին , նա՛ էլաւ
անկիւնի գլուխ . այս բանս Տէրիցն էլաւ՝ եւ մեր
43 աչքերի առաջին զարմանալի է ։ Սորա համար ա-
սում եմ ձեզ . որ Աստուծոյ արքայութիւնը ձեզա-
նից վեր կառնվի , եւ այն ազգին կ'տվվի , որ նո-
44 րա պտուղները կ'բերէ ։ Եւ ո՛վ որ այս քարիս վե-
րայ ընկնի՝ կ'փշրվի . եւ ո՛ւմ վերայ որ նա ընկնի ,
կ'ջարդէ նորան ։

45 Երբոր քահանայապետներն ու կարդացողներն եւ
փարիսեցիքը նորան առակները լսեցին , հասկա-
46 ցան՝ որ իրենց համար ասաց ։ Եւ խնդրումէին որ
բռնեն նորան , բայց ժողովրդներիցը վախեցան .
ինչուոր՝ նորան մարգարէի տեղ էին դնում ։

ԳԼ. ԻԲ

Թագաւորի որդոյն հարսանիքը . կայսրին հարկ տալը .
յարութեան ապացուցումը . առաջին և մեծ
պատուիրանքը . ո՞ւմ որդին է Քրիստոս ։

1 Դարձեալ Յիսուս պատասխան տուաւ՝ եւ նորանց
2 ասաց առակներով ։ Երկնքի արքայութիւնը նմա-
նեցաւ թագաւոր մարդոյ , որ իրեն որդոյն հար-
3 սանիք արաւ , Եւ իրեն ծառաներն ուղարկեց՝ որ
հրաւիրած մարդիկը կանչեն հարսանիքը . եւ նո-
4 րանք չ'կամեցան գալ ։ Նորէն ուրիշ ծառաներ ու-
ղարկեց եւ ասաց . Ասացէ՛ք հրաւիրածներին . ա-
հա՛ իմ սեղանս պատրաստեցի . իմ արջառներս եւ
մասցուներս մորթված են , եւ ամէն բաներս պատ-

5 պատրաստ է, եկէ՛ք հարսանիքը։ Եւ նորանք հոգս չա-
րին ու գնացին, մինն իրեն արտը, եւ միւսն ի-
6 րեն առուտուրին ետեւէն։ Եւ ուրիշները նորա
ծառաները բռնեցին՝ թուքումուր տուին եւ սպա-
7 նեցին։ Բայց թագաւորն երբոր սա լսեց, բարկա-
ցաւ՝ եւ իրեն զօրքն ուղարկեց՝ եւ այն սպանողնե-
րը սատակացրուց, եւ նորանց քաղաքն այրեց։
8 Այն ժամանակն իրեն ծառաներին ասաց. Հար-
սանիքս պատրաստ է՝ եւ հրաւիրածներն արժանի
9 չէին. Ուրեմն գնացէ՛ք դէպի ճանապարհների անց-
քըն՝ եւ ո՛վ որ գտնէք, կանչեցէ՛ք հարսանիքս։
10 Եւ ծառաները դուրս գնացին՝ ճանապարհներին
վերայ ո՛վ որ գտին՝ չարը եւ բարին՝ ամենը ժո-
ղովեցին՝ եւ հարսանիքը հարսանքաւորներով լցվաւ։
11 Եւ թագաւորը մտաւ՝ որ սեղան նստողներին մտիկ
անէ, եւ այնտեղ մին մարդ տեսաւ՝ որ հարսանի-
12 քի շոր չէ՛ր հագած։ Եւ նորան ասաց. Ընկե՛ր՝
ի՞նչպէս մտիր դու այստեղ՝ որ հարսանիքի շոր չու-
13 նէիր. եւ նա պապանձվեցաւ։ Այն ժամանակը
թագաւորն ասաց ծառաներին, Դորա ոտներն ու
ձեռները կապեցէ՛ք. եւ դորան դրսի խաւարն հա-
նեցէ՛ք. այնտեղ որ լաց՝ եւ ատամների կրճտելը
14 կ՚լինի։ Ինչու որ՝ շատ են կանչված եւ քիչ են ընտ-
րըված։
15 Այն ժամանակը փարիսեցիքը գնացին՝ նորա հա-
մար խորհուրդ արին. թէ ինչպէս խօսքերով որո-
16 գայթ դնեն նորան։ Եւ իրենց աշակերտները Հե-
րօդէսեանների հետ նորա մօտ ուղարկեցին եւ ա-
սացին. Վա՛րդապետ՝ գիտումենք որ ճշմարիտ ես՝
եւ Աստուծոյ ճանապարհը ճշմարտութենով սովր-

ցընումես, եւ ընաւ մին մարդուց հոգս չունիս,
17 եւ մարդոյ երեսպաշտութիւն չե՛ս անում։ Ուրեմն
ասա՛ մեզ. ի՞նչպէս է երեւում քեզ. Կայսերին
18 հարկ տալ պէ՞տք է, թէ չէ։ Յիսուս նորանց չա-
րութիւնն իմացաւ եւ ասաց. ինչո՞ւ էք փորձում
19 ինձ կե՛ղծաւորներ։ Հարկի ստակը ցո՛յց տուէք
ինձ. եւ նորանք մին դահեկան հանեցին տուին
20 նորան։ Եւ նորանց ասաց. Այս պատկերս կամ
21 գիրս ո՞ւմն է։ Ասացին՝ կայսերին. այն ժամանա-
կըն ասաց նորանց. Գնացէ՛ք՝ կայսերինը կայսերին
22 տուէ՛ք, եւ Աստուծունն Աստուծոյն։ Երբոր լը-
սեցին, զարմացան. եւ նորան թողին եւ գնացին։
23 Այն օրը սադուկեցիքը նորա մօտ եկին՝ որ ա-
սումէին՝ թէ Յարութիւն չ՚կայ. եւ նորա հարցրին
24 Եւ ասացին. Վա՛րդապետ՝ Մօսէսն ասաց, թէ որ
մին մարդ առանց զաւակի մեռնի, նորա կինը
թո՛ղ իրեն եղբայրն առնէ, եւ իրեն եղբօր հա-
25 մար զաւակ յարուցանէ։ Մեզ մօտ եօթն եղբարք
կային. նորանց առաջինը կին առաւ եւ մեռաւ,
եւ որովհետեւ զաւակ չունէր՝ իրեն կինը թողեց
26 իրեն եղբօրը։ Այնպէս էլ երկրորդը եւ երրորդը՝
27 մինչեւ եօթներորդը։ Ամենիցն ետեւ կինն էլ մե-
28 ռաւ։ Ապա յարութեան ժամանակին այն եօթնի-
ցը նա ո՞րին պիտի լինի կին. ինչու որ՝ ամենքը նո-
29 րան իրենց կին առին։ Յիսուս նորանց պատասխան
տուաւ եւ ասաց. Մոլորվածներ՝ դուք ո՛չ գիրքն
30 էք գիտում եւ ո՛չ Աստուծոյ զօրութիւնը։ Ինչու
որ՝ յարութեան ժամանակին ո՛չ կին կ՚առնեն.
եւ ո՛չ մարդոյ կ՚գնան. բայց երկնքումն հրեշտակ-
31 ների նման են։ Միայն թէ մեռելների յարութիւն

առնելոյն համար դուք չէ՞ք կարդացել այն Աս-
32 տուածանից ձեզ ասուածը. Ես եմ Աբրահամի
Աստուածը, Իսահակայ Աստուածը, եւ Յակոբի
Աստուածը. եւ Աստուած մեռելների Աստուած
33 չէ՛, այլ կենդանիների ։ Երբոր ժողովուրդները լը-
սեցին, զարմանումէին նորան վարդապետութեանը
վերայ ։

34 Բայց փարիսեցիքն երբոր լսեցին, թէ սադուկե-
ցիները պապանձացրուց, մինտեղ հաւաքվեցան.
35 Եւ նոցանից մինն փորձելով հարցրուց նորան, եւ
36 ասաց. Վա՛րդապետ՝ օրէնքումն ո՞ր պատուիրանք
37 է մեծ ։ Եւ Յիսուս նորան ասաց. Սիրե՛ քո Տէր
Աստուածդ քո ամեն սրտովդ՝ քո ամեն անձովդ
38 եւ քո ամեն մտքովդ ։ Այս է մեծ եւ առաջին
39 պատուիրանքը ։ Եւ երկրորդը սորան նման. Քո ըն-
40 կերդ քո անձիդ պէս սիրե՛ ։ Այս երկու պատուի-
րանքից ամեն օրէնքն ու մարգարէքը կախված են ։
41 Եւ երբոր փարիսեցիքն հաւաքված էին, Յիսուս
42 նորանցից հարցրուց եւ ասաց. Ձեզ ի՞նչպէս է ե-
րեւում Քրիստոսի համար՝ ո՞ւմ որդին է. Նորան
43 ասացին. Դաւթի ։ Յիսուս էլ նորանց ասաց. Ա-
պա ի՞նչպէս Դաւիթ Հոգովը նորան Տէր է կոչում
44 եւ ասում ։ Տէրն իմ Տէրին ասաց. Թէ իմ աջ
կողմն նստի՛ր, մինչեւ քո թշնամիներդ քո ոտացդ
45 կոխելիք դնեմ ։ Ապա՝ թէ որ Դաւիթ նորան Տէր
46 է կոչում, ի՞նչպէս նորա որդին կ՚լինի ։ Եւ ո՛չ ով
կարող չէր մին բան պատասխան տալ նորան. եւ
այն օրիցն ետեւ՝ էլ մինը չէ՛ր համարձակվում՝ որ
նորանից ընաւ մին բան հարցնէ ։

ԳԼ. ԻԳ

Դպրաց և փարիսեցոց վարքին յանդիմանութիւնը. Երուսաղէմի կործանիլը ։

1 Այն ժամանակը Յիսուս ժողովուրդներին եւ ի-
2 րեն աշակերտներին հետ խօսեց, եւ ասաց. Մօ-
սէսի աթոռին վերայ կարդացողներն ու փարիսե-
3 ցիքը նստեցին ։ Ամեն ինչ որ կ՚ասեն ձեզ՝ արէ՛ք
եւ պահեցէ՛ք. բայց նորանց գործքերին պէս մի՛
4 անէք. ինչուոր՝ ասումեն եւ չեն անում ։ Ծանր եւ
դժուար տանելի բեռներ են կապում եւ մարդկանց
ուսերին վերայ դնում, եւ իրենց մատովը չե՛ն ու-
5 զում շարժել նորանց ։ Եւ իրենց ամեն գործքերը
մարդկանց ցոյց տալոյ համար են անում. իրենց
գրապանակներն լայնացնումեն. եւ իրենց շորերի
6 ծայրն երկայնացնում ։ Սեղան նստելոյ ժամանակը
սիրումեն վերեւի տեղերը, ժողովարաններին մէջ
առաջին աթոռները, եւ փողոցների մէջ բարեւ
7 առնելը, Եւ մարդկանցից Ռաբբի Ռաբբի կոչվե-
8 լը ։ Բայց դուք մինին Վարդապետ չ՚կանչէք. պատ-
ճառնոր ձեր Սովրցնողը մինն է. եւ դուք ամենքդ
9 եղբարք էք ։ Եւ երկրիս վերայ մինին ձեզ հայր չը
կանչէք. ինչուոր՝ ձեր Հայրը մինն է՝ որ երկնքումն
10 է ։ Եւ դուք սովրցնող չ՚կանչվէք. ինչուոր՝ ձեր
11 Սովրցնողը Քրիստոսն է ։ Եւ նա՝ որ ձեր միջումը
12 մեծ է, ձեզ ծառայ պիտի լինի ։ Ո՛վ որ իրեն ան-
ձը կ՚բարձրացնէ՝ կ՚խոնարհվի. եւ նա որ իրեն ան-
ձը կը խոնարհացնէ՝ կը բարձրանայ ։

13 Վա՛յ ձեզ կարդացողնե՛ր եւ փարիսեցինե՛ր
կեղծաւորնե՛ր. որ երկնքի արքայութիւնը մարդ-
կանց առաջին փակումէք. դուք չէ՛ք մտնում՝ եւ
նորանց որ մտնումեն՝ թոյլ չէք տալիս որ մտնեն։
14 Վա՛յ ձեզ կարդացողնե՛ր եւ փարիսեցինե՛ր կեղ-
ծաւորներ. որ որբեւէրիների տներն ուտումէք՝ եւ
պատճառներով երկար աղօթք էք անում նորա-
15 համար աւելի դատաստան կառնէք։ Վա՛յ ձեզ
կարդացողնե՛ր եւ փարիսեցինե՛ր կեղծաւորնե՛ր. որ
ծով եւ ցամաք շուռ էք գալիս՝ որ մին մարդ ե-
կամուտ անէք. եւ երբոր կ'լինի, նորան երկու-
տակ ձեզանից աւելի գեհենի որդի էք անում։
16 Վա՛յ ձեզ կոյր առաջնորդներ՝ որ ասումէք՝ թէ
Նա որ տաճարովն երդւում անէ, բա՛ն չէ. բայց
նա որ ոսկովն երդւում անէ որ տաճարի մէջն է,
17 պարտակա՛ն է։ Ա՛նմիտներ եւ կուրեր. ո՞րն է մեծ,
18 ոսկի՞ն թէ տաճարն՝ որ ոսկուն սրբումէ։ Եւ նա
որ սեղանովն երդւում անէ՝ բա՛ն չէ. բայց նա որ
նորա վերայ լինող պատարագովն երդւում անէ,
19 պարտակա՛ն է։ Յի՛մարներ եւ կուրեր. ո՞րն է մեծ,
պատարա՞գը թէ սեղանը, որ պատարագին սրբու-
20 մէ։ Ուրեմն ո՛վ որ սեղանովն երդւում արաւ, նա
նորանով եւ այն ամեն բաներովն երդւում արաւ՝
21 որ նորա վերայ են։ Եւ նա որ տաճարովն երդւում
արաւ՝ նորանով եւ նորա միջումը բնակողովն եր-
22 դւում արաւ։ Եւ նա որ երկնքովն երդւում արաւ,
Աստուծոյ աթոռովն երդւում արաւ, եւ նորանով
23 էլ՝ որ նորա վերայ նստումէ։ Վա՛յ ձեզ կարդա-
ցողնե՛ր եւ փարիսեցինե՛ր կեղծաւորնե՛ր. որ անա-
նուխին եւ սամիթին եւ չամանին տասանորդ էք

տալիս, եւ թողումէք օրէնքի ծանր ծանր բաները՝
դատաստանը, ողորմութիւնը եւ հաւատքը. սա
24 պէտք էր անել՝ եւ նա չ'թողել։ Կո՛յր առաջնորդ-
ներ. որ մժեղները քամումէք, եւ ուղտերը կուլ
25 էք տալիս։ Վա՛յ ձեզ կարդացողնե՛ր եւ փարիսե-
ցինե՛ր կեղծաւորնե՛ր. որ բաժակը եւ սկուտա-
կը դրսեւանց սրբումէք եւ ներսեւանց յափշտա-
26 կութենով եւ անկարգութենով լիքն էք։ Կո՛յր
փարիսեցի՝ առաջ բաժակի եւ սկուտակի մէջը
27 սրբի՛ր, որ նորանց դուրսն էլ սուրբ լինի։ Վա՛յ
ձեզ կարդացողնե՛ր եւ փարիսեցինե՛ր կեղծաւոր-
նե՛ր. որ նման էք ծեփած գերեզմաններին՝ որ դըր-
սեւանց գեղեցիկ են երեւում՝ եւ ներսեւանց մե-
ռելների ոսկերքով եւ ամեն պղծութենով լիքն են։
28 Այնպէս էլ դուք դրսեւանց արդար էք երեւում
մարդկանց՝ եւ ներսեւանց կեղծաւորութենով եւ
29 անօրէնութենով լիքն էք։ Վա՛յ ձեզ կարդացող-
ներ եւ փարիսեցինե՛ր կեղծաւորնե՛ր. որ մարգա-
րէների տապանները շինումէք՝ եւ արդարների գե-
30 րեզմանները զարդարումէք. Եւ ասում, Թէ որ
մեր հարանց օրերումը լինէինք, մենք մասնակից
31 չէինք լինիլ մարգարէների արիւնին։ Ուրեմն դուք
ձեզանից վկայումէք, թէ նորանց որդիքն էք՝ որ
32 մարգարէներին կոտորումէին։ Եւ դուք ձեր հա-
33 րանց չափը լցրել էք։ Օ՛ձեր՝ իժերի զաւակներ՝
34 ի՞նչպէս կ'փախչէք գեհենի դատաստանիցը։ Դորա-
համար՝ ահա՛ ես ձեզ մօտ մարգարէներ եւ իմաս-
տուններ եւ կարդացողներ կուղարկեմ. եւ դուք
նորանցից կ'սպանէք եւ խաչ կ'հանէք՝ եւ նորան-
ցից ձեր ժողովարաններին մէջ կ'տանջէք՝ եւ քա-

35 ղաքէց քաղաք կ'հալածէք․ Որ այսպէս ձեզ վրայ
գայ ամէն արդար արիւնը՝ որ երկրի վրայ թափ-
վել է․ արդար Աբէլի արիւնից մինչեւ Բարա-
քիայի որդի Զաքարիայի արիւնը, որ նորան տա-
36 ճարի եւ սեղանի մէջ սպանեցիք։ Ճշմարիտ ա-
սում եմ ձեզ․ որ այն ամէնը կ'գայ այս ազգիս վե-
րայ։
37 Երուսաղէ՛մ՝ Երուսաղէ՛մ՝ որ մարգարէները կո-
տորում էիր, եւ քեզ մօտ ուղարկվածները քար-
կոծում էիր․ քանի՛ անգամ կամեցայ քո երեխա-
ներդ ժողովել․ ինչպէս որ հաւն իրեն ձագերը թե-
38 ւերին տակն է ժողովում, եւ դուք չ'կամեցաք։ Ա-
39 հա՛ ձեր տունն աւերված կ'թողվի ձեզ։ Բայց ա-
սու՛եմ ձեզ․ թէ, Հիմիկուց ետեւ էլ չէ՛ք տես-
նիլ ինձ՝ մինչեւ որ ասէք․ Օրհնեալ է Տէրի ա-
նունով եկածը։

ԳԼ․ ԻԴ

Տաճարին կործանումը և Քրիստոսի գալուստը։

1 Եւ Յիսուս տաճարից դուրս եկաւ գնում էր՝ եւ
աշակերտները մօտ եկին՝ որ տաճարի շինուածքը
2 ցոյց տան նորան։ Եւ նա պատասխան տուաւ՝ եւ
ասաց նորանց․ Տեսնո՞ւմ էք այդ ամէնդ․ ճշմարիտ
ասում եմ ձեզ․ որ այդ տեղ քար քարի վրայ
չի՛ մնալ որ չ'քանդվի։
3 Եւ երբոր Ձիթենեաց սարին վրայ նստած էր, ա-
շակերտներն առանձին նորա մօտ եկին՝ եւ ասա-
ցին․ Ասա՛ մեզ․ այդ բանդ ե՞րբ կ'լինի․ կամ թէ

4 գալըդ եւ աշխարհքիս վերջին նշանն ի՞նչ է։ Յի-
սուս պատասխան տուաւ՝ եւ նորանց ասաց․ Զգո՛յշ
5 կացէք որ չ'լինի թէ մինը խաբէ ձեզ։ Ինչու որ՝
շատ մարդիք կ'գան իմ անունովս եւ կ'ասեն՝ թէ,
6 Ես Քրիստոսն եմ եւ շատերը կ'մոլորացնեն․ Կը-
ռիւներ եւ կռիւների համբաւ լսելու էք․ զգո՛յշ
կացէ՛ք, մի՛ շփոթվէք․ ինչու որ՝ այն ամէն բաները
7 պէտք է լինին․ միայն թէ դեռ վերջը չէ։ Ազգ
ազգի վրայ վեր կ'կենայ, եւ թագաւորութիւն
թագաւորութեան վրայ․ եւ սովեր կ'լինին․ եւ
սաստիկ մահեր՝ եւ տեղ տեղ երկրի շարժմունք-
8 ներ։ Բայց դեռ այն ամէնն՝ նեղութեանց սկիզբն
9 է․ Այն ժամանակը ձեզ նեղութեանց մէջ կ'ձը-
գեն․ եւ ձեզ կ'սպանեն, եւ իմ անունիս համար
10 ամէն ազգերին ատելի կ'լինիք։ Եւ այն ժամանա-
կը շատերը կ'գայթակղվին․ եւ իրար կ'մատնեն եւ
11 իրար կ'ատեն։ Եւ շատ սուտ մարգարէք դուրս կը
12 գան՝ եւ շատերը կ'մոլորացնեն։ Եւ անօրէնու-
թեան շատանալը պատճառաւը՝ շատերի սէրը կը
13 ցամաքի։ Բայց ո՛վ որ մինչեւ վերջը կ'համբերէ,
14 նա՛ կ'ապրի։ Եւ այս արքայութեան աւետարանս
ամէն աշխարհքումը կ'քարոզվի՝ որ ամէն հեթա-
նոսներին վկայութիւն լինի՝ եւ յետոյ վերջը կը
գայ։
15 Ուրեմն՝ երբոր աւերածի պղծութիւնը տեսնէք,
որ Դանիէլ մարգարէի ձեռքովը ասված է՝ Որ սըր-
բութեան տեղումը կ'կանգնի․ ո՛վ որ կարդայ
16 թո՛ղ միտք առնէ։ Այն ժամանակը նորանք՝ որ
17 Հրէաստանումն են, թո՛ղ սարերը փախչին։ Եւ
ո՛վ որ կտուրի վրայ է՝ թո՛ղ վեր չ'գայ, որ իրեն

18 տանիքը մին բան վեր առնէ։ Եւ ո՛վ որ յան-
դումն է՝ թո՛ղ յետ չ'դառնայ՝ որ իրեն շորերը վեր
19 առնէ։ Բայց այն օրերումը վա՜յ կ'լինի յղացած-
20 ներին եւ ծիծ տուօղներին։ Աղօ՛թք արէք՝ որ այն
ձեր փախչիլը ձմեռան ժամանակը եւ շաբաթ օրը
21 չ'լինի՛։ Պատճառնոր այն ժամանակը մեծ նեղու-
թիւն կ'լինի. ինչպէս որ աշխարհքիս ստեղծագոր-
ծութեան սկիզբիցը մինչեւ հիմիկ չէլաւ՝ եւ էլ
22 չի՛ լինիլ։ Եւ թէ որ այն օրերը չ'կարճանայի՛ն,
բնաւ մին մարմին չէ՛ր ազրիլ. բայց ընտրըվածնե-
23 րին համար այն օրերը կ'կարճանան։ Այն ժամա-
նակը թէ որ մինն ասէ ձեզ՝ Ահա՛ այստեղ է Քը-
24 րիստոսը կամ այնտեղ, մի՛ հաւատաք։ Ինչուոր՝
սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ դուրս կը
գան՝ եւ շատ մեծ նշաններ եւ հրաշքներ ցոյց կը
տան, մինչեւ որ, եթէ կարելի լինէր, ընտրըված-
25 ներին էլ կ'մոլորացնէին։ Ահա՛ առաջ ասացի
26 ձեզ։ Ապա թէ որ ասեն ձեզ. Ահա՛ անապատումն
է՝ դուրս չ'գա՛ք. եւ թէ Ահա՛ տան ներսն է՝ չի՛
27 հաւատաք։ Պատճառնոր՝ ինչպէս կայծակն՝ որ ա-
րեւելքից դուրս կ'գայ մինչեւ արեւմուտքը կե-
28 րեւի, այնպէս էլ Որդւոյ մարդոյ գալը կ'լինի։ Ինչուոր՝
ո՛ր տեղ մեռած մարմին կ'լինի, այնտեղ կ'հաւաք-
վին արծիւները։

29 Շուտով այն նեղութեան օրերից ետեւ՝ արե-
գակը կ'խաւարվի. եւ լուսինն իրեն լոյսը չի՛ տալ.
եւ աստեղներն երկնքից վեր կ'ընկնին, եւ երկնքի
30 զօրութիւնները կ'շարժվին։ Եւ յետոյ Որդւոյ մար-
դոյ նշանը երկնքումը կերեւի՝ եւ այն ժամանակն
երկրի ամեն ազգերը լաց կ'լինին. եւ Որդին մար-

դոյ կ'տեսնեն երկնքի ամպերին վերայ եկած զօրու-
31 թենով եւ շատ փառքով։ Եւ իրեն հրեշտակները
մեծ փողով կուղարկէ. եւ իրեն ընտրվածներին կը
ժողովեն չորս կողմից՝ երկնքի մին ծայրից մինչեւ
միւս ծայրը։

32 Այն թզի ծառից սովորեցէ՛ք առակը՝ որ եր-
բոր նորա ճղերը կ'կակղին, եւ տերեւը կ'բուսնէ,
33 գիտումէք որ ամառը մօտ է։ Այնպէս էլ դուք՝
որ ժամանակ այս ամեն բաներս կ'տեսնէք, իմա-
34 ցէք որ դուռնը մօտ է։ Ճշմարիտ ասումեմ ձեզ՝
թէ Այս ազգս չի՛ անցնիլ. մինչեւ այս ամենս լի-
35 նի։ Երկինքս ու երկիրը կ'անցնին՝ եւ իմ խօսքերս
չեն անցնիլ։

36 Միայն թէ այն օրին եւ ժամին համար՝ ո՛չ ով
չի գիտում՝ ո՛չ երկնքի հրեշտակները՝ եւ ո՛չ Որ-
37 դին՝ բայց միայն Հայրը։ Բայց ինչպէս էլան Նոյի
38 օրերն՝ այնպէս էլ կ'լինի Որդւոյ մարդոյ գալը։ Ին-
չուոր՝ ինչպէս որ այն օրերն էին՝ որ ջրհեղեղից
առաջ կային, որ ուտումէին եւ խմումէին, կին
էին առնում՝ եւ մարդոյ էին գնում, մինչեւ այն
39 օրն, որ Նոյ մտաւ տապանը։ Եւ չ'գիտացին՝ մին-
չեւ որ ջրհեղեղն եկաւ, եւ ամենքը վեր առաւ.
40 այնպէս էլ կ'լինի Որդւոյ մարդոյ գալը։ Այն ժա-
մանակը թէ որ երկու հոգի արտումը լինին՝ մինը
41 կառնվի՝ եւ միւսը կ'թողվի։ Եւ թէ որ երկու հո-
գի մին ջաղացում աղան՝ մինը կառնվի՝ եւ միւսը
կ'թողվի։

42 Արթո՛ւն կացէք՝ ինչուոր՝ չէք գիտում թէ ձեր
43 Տէրն ո՞ր ժամումը կ'գայ։ Նա իմացէ՛ք՝ թէ որ
տան տէրը գիտենար՝ թէ գողը գիշերի ո՛ր պահու-

մը կ՚գայ, արթուն կ՚կենար եւ թող չէր տար՝ որ
44 իրեն տան տակը փոս փորէ։ Սորահամար դուք էլ
պատրա՛ստ կացէք. ինչուոր՝ այն ժամին՝ որ դուք
45 չէ՛ք սպասիլ. Որդին մարդոյ կ՚գայ։ Ապա ով կ՚լի-
նի այն հաւատարիմ եւ իմաստուն ծառան՝ որ նո-
րան իրեն Տէրն՝ իրեն ծառաներին վերայ դրաւ,
46 որ նորանց կերակուր տայ իրենց ժամանակին, Ե-
րանի՜ է այն ծառային՝ որ տէրն երբոր կ՚գայ, նո-
47 րան այնպէս արած գտնէ։ Ճշմարիտ ասումեմ
ձեզ. Որ նորան իրեն ամեն ապրանքին վերայ կը
48 դնէ։ Ապա թէ որ չար ծառան իրեն սրտումն ա-
49 սէ, թէ, իմ տէրս գալն ուշացնումէ, Եւ սկսէ
իրեն ընկեր ծառաները ծեծել՝ եւ հարբեցողներին
50 հետ ուտէ եւ խմէ. Կ՚գայ այն ծառային տէրն այն
օրն՝ որ նա չի՛ սպասիլ, եւ այն ժամը՝ որ նա չի՛
51 գիտել. Եւ նորան միջիցը կ՚կտրէ եւ նորա բաժի-
նը կեղծաւորներին հետ կ՚դնէ. որ այնտեղ լաց եւ
եւ ատամների կրճտելը կ՚լինի։

ԳԼ. ԻԵ

Տասը կուսանք. քանքարների առակը. վերջին
դատաստանը.

1 Այն ժամանակն երկնքի արքայութիւնը կ՚նման-
վի տասն կուսանաց. ո՛ր իրենց լապտերները վեր
առին՝ եւ դուրս ելին փեսայի եւ հարսի առաջը։
2 Նորանցից հինգը յիմար էին եւ հինգն իմաստուն։
3 Յիմարները լապտերները վեր առին՝ եւ ձէթ վեր
4 չառին իրենց հետ։ Բայց իմաստունններն իրենց

5 լապտերներին հետ ամաններով ձէթ վեր առին։ Եւ
փեսան որ ուշացաւ՝ ամենքը թմրեցին եւ քնացին։
6 Կէս գիշերումը ձայն ելաւ՝ թէ Ահա՛ փեսան գա-
7 լիս է՝ դո՛ւրս ելէք նորան առաջը։ Այն ժամա-
նակն ամեն կուսանքը վեր կացան եւ իրենց լապ-
8 տերները պատրաստեցին։ Յիմարներն ասացին ի-
մաստուններին. Ձեր իւղից մեզ էլ տուէ՛ք. ին-
9 չուոր մեր լապտերները հանգչումեն։ Իմաստուննե-
րը պատասխան տուին՝ եւ ասացին. Գուցէ թէ
մեզ եւ ձեզ հերիք չ՚լինի. բայց գնացէ՛ք ծախող-
10 ներին մօտ եւ ձեզ համար գնեցէ՛ք։ Երբոր նորանք
գնացին որ գնեն, փեսան եկաւ՝ եւ պատրաստ կա-
ցածները նորան հետ հարսանիքը մտին՝ եւ դուռը
11 փակվեցաւ։ Յետոյն այն միւս կուսանքն էլ եկին՝
12 եւ ասացին. Տէ՛ր՝ Տէ՛ր՝ բա՛ց մեզ։ Նա պատաս-
խան տուաւ եւ ասաց. Ճշմարիտ ասումեմ ձեզ՝
13 թէ չեմ ճանաչում ձեզ։ Արթո՛ւն կացէք. ին-
չուոր՝ չէ՛ք գիտում ո՛չ օրն եւ ո՛չ ժամը։
14 Ինչպէս մին մարդ որ հեռու աշխարհք գնալու
ելաւ՝ իրեն ծառաները կանչեց. եւ իրեն ապրանքը
5 նորանց տուաւ։ Մինին հինգ քանքար տուաւ՝
միւսին երկու, եւ միւսին մին. ամեն մէկին իրեն
16 կարողութեան չափովը՝ եւ գնաց։ Նա՝ որ հինգն
առաւ, շուտով գնաց՝ նորան բանացրուց եւ ու-
17 րիշ հինգ էլ շահվեցաւ. Այնպէս էլ նա՝ որ եր-
18 կուսն առաւ, ուրիշ երկուս էլ շահվեցաւ։ Եւ
նա՝ որ մինը առաւ, գնաց. գետինը փորեց՝ եւ ի-
19 րեն տիրոջը արծաթը թաքցրուց։ Շատ ժամանա-
կից ետեւ այն ծառաներին տէրն եկաւ՝ եւ նորան-
20 ցից հաշիւ առաւ։ Եւ նա՝ որ հինգ քանքար ա-

ուած՝ առաջ եկաւ ուրիշ հինգ քանքար էլ բե-
րաւ տուաւ՝ եւ ասաց . Տէ՛ր՝ դու ինձ հինգ քան-
քար տուիր . եւ ահա՛ ուրիշ հինգ քանքար էլ
21 նորանց վերայ շահվեցայ ։ Իրեն տէրը նորան ա-
սաց . Ապրի՛ս ծառայ՝ բարի եւ հաւատարիմ՝ ո-
րովհետեւ այդ քիչ բանումդ հաւատարիմ ես ,
քե՛զ շատ բաների վերայ կ'դնեմ . մտի՛ր քո տի-
22 րոջդ ուրախութիւնը ։ Նա էլ որ երկու քանքար
էր առել , առաջ եկաւ եւ ասաց . Տէ՛ր՝ դու ինձ
երկու քանքար տուիր . ահա՛ երկու ուրիշ քան-
23 քար էլ՝ որ նորանց վերայ շահվեցայ ։ Իրեն տէրն
նորան ասաց . Ապրի՛ս ծառայ՝ բարի եւ հաւատա-
րիմ . որովհետեւ այդ քիչ բանումդ հաւատարիմ
ես , քեզ շատ բաների վերայ կ'դնեմ , մտի՛ր քու
24 տիրոջդ ուրախութիւնը ։ Նա էլ՝ որ մին քանքար
էր առել . առաջ եկաւ եւ ասաց . Տէ՛ր՝ գիտում
էի՝ որ դու մին քարասիրտ մարդ ես , որ հնձումես
նա՝ որ չ'սերմեցի՛ր . եւ այն տեղից հաւաքումես՝
25 որ չ'փռեցի՛ր . Վախեցայ՝ գնացի եւ քո քանքարդ
26 գետնի մէջ թաքցրի . ապա ահա՛ քունը քեզ ։ Տէ-
րըն պատասխան տուաւ՝ եւ ասաց նորան . Չա՛ր
եւ ծոյլ ծառայ՝ գիտումէիր՝ որ այն տեղից եմ
հնձում , որ չ'սերմեցի . եւ այնտեղից եմ հաւա-
27 քում՝ որ չ'փռեցի՛ . Պէ՛տք էր քեզ՝ որ իմ ար-
ծաթս սաակ փոխողներին տայիր՝ եւ ես կ'գայի եւ
28 շահով կառնէի իմս ։ Ապա առէ՛ք դորանից քան-
քարը , եւ տուէք նորան որ տասն քանքարն ունի ։
29 Ինչուոր՝ ամեն ո՛վ որ ունի՝ նորան կ'տրվի եւ կա-
ւելանայ . եւ նա որ չունի , նորանից նա էլ որ
30 ունի՝ վեր կառնվի ։ Եւ այդ անպիտան ծառայից-

հանեցէ՛ք դրսի խաւարն՝ որ այնտեղ լաց եւ ա-
տամների կրճտելը կ'լինի ։
31 Եւ ո՛ր ժամանակ Որդին մարդոյ իրեն փառքովը
կ'գայ՝ եւ ամեն հրեշտակները նորա հետ , այն ժա-
32 մանակն իրեն փառաց աթոռին վերայ կ'նստի ։ Եւ
ամեն ազգերը կ'ժողովվին նորան առաջին . եւ նո-
րանց կ'ջոկէ իրարից՝ ինչպէս մին հովիւ որ ոչխար-
33 ներն այծերիցը կ'ջոկէ ։ Եւ ոչխարներն իրեն աջ
կողմը կ'կանգնացնէ եւ այծերը ձախ կողմը ։
34 Այն ժամանակը թագաւորը կասէ նորանց՝ որ
աջ կողմն են , Եկէ՛ք՝ իմ Հօրս օրհնվածներ՝ ժա-
ռանգեցէ՛ք այն արքայութիւնը , որ աշխարհքի
35 սկիզբիցը պատրաստված է ձեզ համար ։ Ինչուոր՝
ես սովեցի՝ եւ տուիք ինձ ուտել . ծարաւեցի՝ եւ
խմացրիք ինձ . օտար էի՝ եւ ինձ ձեզ մօտ առիք ։
36 Մերկ էի՝ եւ ինձ հագցրիք . հիւանդ էի՝ եւ ինձ
ակն տուիք . բանտի մէջ էի՝ եւ ինձ մօտ եկիք ։
37 Այն ժամանակն արդարները պատասխան կ'տան
նորան եւ կասեն . Տէ՛ր՝ ե՞րբ տեսինք քեզ սոված
եւ կերակուր տուինք . կամ ծարաւ՝ եւ խմաց-
83 րինք ։ Ե՞րբ տեսինք քեզ օտար՝ եւ մեզ մօտ
39 առինք , կամ մերկ՝ եւ հագցրինք ։ Ե՞րբ տեսինք
քեզ հիւանդ՝ կամ բանտի մէջ՝ եւ եկինք քեզ
40 մօտ ։ Թագաւորն էլ պատասխան կ'տայ՝ եւ նո-
րանց կասէ . Ճշմարիտ ասումեմ ձեզ՝ որովհետեւ
այս իմ փոքր եղբայրներիցս մինին արիք , ինձ արիք ։
41 Այն ժամանակը նորանց էլ կասէ՝ որ ձախ կող-
մըն են . Ինձանից դէ՛ն գնացէք անիծածներ՝ յա-
ւիտենական կրակին մէջը , որ պատրաստված է սա-
42 տանային եւ նորա հրեշտակներին համար ։ Ինչու-

որ ես սովեցի՝ եւ չ'տուի՛ք ինձ ուտել. ծարաւե-
43 ցի՝ եւ ինձ չ'խմացրի՛ք ։ Օտար էի՝ եւ ինձ ձեզ
մօտ չառիք. մերկ էի՝ եւ ինձ չ'հագցրիք. հի-
ւանդ՝ եւ բանտի մէջ էի՝ եւ ինձ այն չ'տուիք ։
44 Այն ժամանակը նորանք էլ պատասխան կ'տան
եւ կ'ասեն. Տէ՛ր՝ քեզ ե՞րբ տեսինք սոված կամ
ծարաւ կամ օտար կամ մերկ՝ կամ հիւանդ կամ
45 բանտի մէջ՝ եւ քեզ ծառայութիւն չարինք ։ Այն
ժամանակը պատասխան կ'տայ նորանց՝ եւ կասէ.
Ճշմարիտ ասում եմ ձե՛զ՝ Որովհետեւ այս փոքր-
ներիցս մինին չարիք՝ ինձ էլ չարիք ։
46 Նորանք կ'գնան յաւիտենական տանջանքը, եւ
արդարները յաւիտենական կեանքը ։

ԳԼ. ԻԶ

Քրիստոսի օծումը. Յուդայի մատնութեան 30 արծաթը. Հաղորդութիւնը. Քրիստոսի աղօթելը. մատնիլը և դատաստանի տանիլը ։

1 Եւ էլաւ՝ երբոր Յիսուս այս ամեն խօսքերս վեր-
2 ջացրուց. իրեն աշակերտներին ասաց. Գիտո՞ւ-
մէք՝ որ երկու օրիցն ետեւ զատիկ կ'լինի. եւ Որ-
դին մարդոյ կ'մատնվի որ խաչվի ։
3 Այն ժամանակը քահանայապետներն ու կար-
դացողնե՛րը եւ ժողովրդի ծերերը ժողովեցան քա-
հանայապետին սրահն՝ որ նորան անունը Կայիափա
4 էր ։ Եւ խորհուրդ արին՝ որ հնարքով Յիսուսին
5 բռնեն եւ սպանեն ։ Բայց ասումէին՝ թէ Այս տօնիս
չէնէ, որ ժողովուրդին մէջ խռովութիւն չի լինի ։

6 Երբոր Յիսուս եկաւ Բեթանիա՝ Սիմօն բորոտին
7 տունը, Նորան մօտ մին կին եկաւ՝ որ մին շիշով
թանկագին իւղ ունէր եւ սեղան նստողներին մէջ
8 նորան գլխին վերայ թափեց ։ Երբոր աշակերտները
տեսին, բարկացան եւ ասացին ինչո՞ւ այդ իւղդ
9 կորաւ. ինչուոր՝ կարելի՛ էր շատ թանկ ծախել
10 դորան եւ աղքատներին տալ ։ Յիսուս իմացաւ եւ
նորանց ասաց. ինչո՞ւ էք այդ կնկանդ նեղութիւն
տալիս. դա՛ մին բարի բան գործեց ինձ վերայ ։
11 Ամեն ժամանակ աղքատները ձեզ հետ ունիք՝
12 բայց ինձ միշտ ձեզ հետ չունիք ։ Դորա այդ իւ-
ղըդ իմ մարմնոյս վերայ թափելն՝ իմ թաղվիլս նը-
13 շանակեց ։ Բայց ճշմարիտ ասում եմ ձեզ՝ որ Ամեն
աշխարհքի մէջ՝ որ տեղ որ այս աւետարանս կքա-
րոզվի, դորա յիշատակին համար նա էլ կ'խօսվի
որ դա արաւ ։
14 Այն ժամանակը տասներկուսից մինն՝ որ Յուդա
Իսկարիոտացի էր անուանված՝ գնաց քահանայա-
15 պետներին մօտ եւ ասաց. Ի՞նչ էք կամենում
տալ ինձ. եւ ես կ'մատնեմ նորան ձեր ձեռքը.
եւ նորանք երեսուն արծաթի փող խոստացան նո-
16 րան ։ Եւ նորանից ետեւ յարմար ժամանակ էր ու-
զում որ նորան մատնէ նորանց ձեռքը ։
17 Եւ բաղարջակերաց առաջին օրն աշակերտները
Յիսուսի մօտ եկին եւ ասացին. Ո՞ր տեղ ես կա-
մենում՝ որ քեզ համար զատիկ ուտելոյ տեղ
18 պատրաստենք ։ Նա էլ նորանց ասաց. Գնացէ՛ք
քաղաքն՝ այս անուն մարդոյ մօտ, եւ նորան ա-
սացէ՛ք. Վարդապետն ասում է՝ իմ ժամանակս մօ-
տացել է՝ զատիկն իմ աշակերտներիս հետ քեզ

19 մօտ կ'անեմ: Եւ աշակերտներն արին ինչպէս որ
Յիսուս հրամայեց նորանց. եւ զատիկը պատրաս-
տեցին:
20 Եւ երբոր իրիկուն էլաւ՝ տասներկու աշակերտ-
21 ներին հետ սեղան էր նստել: Եւ երբոր նորանք
դեռ ուտումէին. ասաց՝ Ճշմարիտ ասումեմ ձեզ՝
22 որ ձեզանից մինը կ'մատնէ ինձ: Եւ շատ տրտմե-
ցան. եւ նորանց ամեն մէկն սկսեցին նորան ա-
23 սել. Տէ՛ր՝ միթէ ե՞ս եմ: Նա պատասխան տուաւ
եւ ասաց. Նա որ ինձ հետ իրեն ձեռն սկաւա-
24 ռակի մէջը կ'մոցնէ, նա՛ կ'մատնէ ինձ: Մարդոյ
Որդին կ'գնայ ինչպէս որ նորա համար գրված է.
բայց վա՜յ այն մարդոյն՝ որ նորա ձեռովը Որդին
մարդոյ կ'մատնվի. լա՛ւ էր նորան՝ թէ այն մարդը
25 ծնված չ'լինէր: Յուդան որ նորան մատնելու էր՝
պատասխան տուաւ եւ ասաց. Միթէ ե՞ս եմ
Վա՛րդապետ. նորան ասաց՝ Դու ասցիր:
26 Եւ դեռ որ նորանք ուտումէին, Յիսուս հաց ա-
ռաւ՝ օրհնեց եւ կտրեց, եւ աշակերտներին տուաւ
27 եւ ասաց. Առէ՛ք կերէ՛ք՝ սա է իմ մարմինս: Եւ
բաժակն առաւ՝ գոհացաւ՝ նորանց տուաւ, եւ
28 ասաց. Դորանից ամենքդ խմեցէ՛ք. ինչուոր՝ դա
է իմ արիւնս նոր ուխտի եւ պայմանի՝ որ շատերի
վերայ թափվումէ, մեղաց թողութեան համար:
29 Միայն թէ՝ ասումեմ ձեզ՝ թէ Սորանից ետեւ որ-
թի բերքից էլ չեմ խմիլ՝ մինչեւ այն օրն՝ որ դո-
րան ձեզ հետ նոր խմեմ իմ Հօրս արքայութեա-
նը մէջ:
30 Եւ օրհնեցին՝ եւ դուրս էլան Ձիթենեաց սարը:
31 Այն ժամանակը Յիսուս նորանց ասաց. Դուք ա-

մենքդ այս գիշերս կ'գայթակղվիք ինձանից. ինչու-
որ՝ գրված է՝ թէ Հովիւը կ'զարկեմ՝ եւ հօտի ոչ-
32 խարները կ'ցրվին: Եւ իմ յարութիւն առնելուցն
33 ետեւ ձեզանից առաջ կ'գնամ Գալիլեա: Պետրոս
պատասխան տուաւ եւ ասաց նորան. Թէ եւ ա-
մենքն էլ գայթակղվին քեզանից, բայց ես չեմ
34 գայթակղվիլ: Յիսուս նորան ասաց. Ճշմարիտ
ասումեմ քեզ. թէ այս գիշե՛րս՝ դեռ հաւը չ'խօ-
35 սա՛ծ՝ երեք անգամ կուրանաս ինձ: Պետրոս նո-
րան ասաց. Թէ որ քեզ հետ մեռնելու էլ լի-
նիմ՝ չե՛մ ուրանալ քեզ. այնպէս էլ ամեն աշա-
կերտներն էին ասում:
36 Այն ժամանակը Յիսուս նորանց հետ մին գիւղ
եկաւ՝ որ նորա անունը Գեթսեմանի էր՝ եւ նո-
րանց ասաց. Այդ տեղ նստեցէ՛ք. մինչեւ որ գը-
37 նամ աղօթք անեմ: Եւ Պետրոս ու Զեբեթեայի
երկու որդիքն իրեն հետ առաւ, սկսեց տրտմիլ եւ
38 հոգս քաշել: Այն ժամանակը նորանց ասաց.
Իմ հոգիս մեռնելոյ չափ տրտմած է. այստեղ կա-
39 ցէ՛ք եւ ինձ հետ արթո՛ւն մնացէք: Եւ մին քիչ
առաջ գնաց՝ իրեն երեսին վերայ ընկաւ՝ աղօթք
արաւ՝ եւ ասաց, Իմ Հայր՝ թէ որ կարելի է թո՛ղ
այս բաժակս ինձանից անցանէ. բայց չէ՛ թէ ինչ-
40 պէս ես եմ կամենում, այլ ինչպէս դու: Եկաւ
աշակերտներին մօտ, եւ նորանց քնի մէջ գտաւ՝
եւ ասաց Պետրոսին. Այդպէս՝ մին ժամ է՞լ չը
41 կարացիք ինձ հետ արթուն կենալ: Արթո՛ւն կա-
ցէք՝ եւ աղօ՛թք արէք՝ որ փորձանքի մէջ չընկնիք.
42 հոգիս յօժա՛ր է՝ բայց մարմինս տկար: Դարձեալ
երկրորդ անգամ Յիսուս գնաց եւ աղօթք արաւ՝

եւ ասաց. Ի՛մ Հայր՝ թէ կարելի է, որ այս բա-
ժակս ինձանից անցանէ. ապա թէ ո՛չ՝ կ'խմեմ
43 սորան. թո՛ղ քո կամքդ լինի։ Եւ նորէն եկաւ նո-
րանց քնի մէջ գտաւ. ինչուոր՝ նորանց աչքերը
44 ծանրացել էին։ Նորանց թողեց եւ գնաց՝ եւ եր-
րորդ անգամ աղօթք արաւ՝ եւ նորէն այն խօսքն
45 ասաց։ Այն ժամանակն աշակերտներին մօտ ե-
կաւ՝ եւ նորանց ասաց։ Այսուհետեւ քո՛ւն է-
լէք՝ եւ հանգիստ առէք. ինչուոր՝ ահա՛ հասել է
ժամանակը՝ եւ Որդին մարդոյ մատնվումէ մեղա-
46 ւորաց ձեռքը։ Վե՛ր կացէք գնանք այս տեղից.
ինչուոր՝ ահա հասաւ նա՝ որ պիտի ինձ մատնէ։
47 Եւ դեռ քանի որ նա այն բանը խօսումէր, ա-
հա՛ Յուդան՝ այն տասներկուսիցը մինն՝ եկաւ՝ եւ
նորան հետ մեծ ամբոխ սրերով եւ բհրներով՝ քա-
48 հանայապետներից ու ժողովրդի ծերերից։ Եւ
նա՝ որ նորան մատնելու էր, նորանց նշան տուաւ
եւ ասաց. Որին որ ես կ'համբուրեմ՝ նա՛ է. նո-
49 րան բռնեցէ՛ք։ Եւ շուտով Յիսուսի մօտ եկաւ՝
եւ ասաց, Ո՛ղջ կաց Վարդապետ՝ եւ նորան համ-
50 բուրեց։ Եւ Յիսուս նորան ասաց. Ընկե՛ր ինչո՞ւ
համար եկիր. եւ այն ժամանակը մօտ եկին Յիսու-
51 սին ձեռք ձգեցին՝ եւ նորան բռնեցին։ Եւ ահա
նորանցից մինն՝ որ Յիսուսի հետ էին, ձեռը մեկ-
նեց եւ իրեն սուրը հանեց՝ եւ քահանայապետի
52 ծառային զարկեց, եւ նորա ականջը կտրեց։ Այն
ժամանակը Յիսուս նորան ասաց. Քո սուրդ իրեն
տեղը դի՛ր. պատճառ որ՝ նո՛րանք որ սուր կառ-
53 նեն, սրով պիտի ընկնին։ Կամ թէ կարծո՞ւմես
որ չեմ կարող իմ Հօրս աղաչել՝ եւ հիմիկ տաս-

ներկու գունդ հրեշտակներիցն աւելի կ'հասցնէ ինձ
54 այստեղ։ Բայց ինչպէս կ'կատարվին գրքերը՝ թէ
55 այսպէս պէտք է լինել։ Այն ժամանակը Յիսուս
այն ամբոխին ասաց. Ինչպէս մին աւազակի վե-
րայ սրերով եւ բհրներով դուրս եկիք ինձ բռնել.
միշտ ձեզ մօտ տաճարումը նստումէի՝ եւ սովոր-
56 ցնումէի՝ եւ չ'բռնեցիք ինձ։ Բայց այս ամենս ե-
ղաւ՝ որ մարգարէներին գրքերը կատարվին. այն
ժամանակն ամեն աշակերտները նորան թողին եւ
փախան։
57 Բայց նորանք Յիսուսին բռնեցին եւ տարան
Կայիափա քահանայապետին մօտ, որ տեղ որ կար-
58 դացօղներն ու ծերերը ժողովված էին։ Եւ Պետ-
րոս հեռուանց գնումէր նորա ետեւէն մինչեւ քա-
հանայապետին սրահը. եւ ներս մտաւ ծառանե-
59 րին հետ նստեց՝ որ վերջը տեսնէ։ Բայց քահա-
նայապետներն ու բոլոր ատեանը Յիսուսի համար
սուտ վկայութիւն էին ուզում՝ որ նորան սպանեն։
60 Եւ այն շատ սուտ վկաներից որ այն տեղ էին ե-
կել, բան չէին գտնում. յետոյ երկու սուտ վը-
61 կաներ առաջ եկին, Ասումէին՝ թէ Սա՛ ասումէր՝
ես կարող եմ Աստուծոյ տաճարը քանդել՝ եւ ե-
62 րեք օրումը շինել։ Եւ քահանայապե՛տը վերկա-
ցաւ՝ նորան ասաց. Պատասխան չե՞ս տալիս՝ ինչ
63 որ դորանք քեզանից գանգատումեն։ Եւ Յիսուս
լուռ էր կենում. քահանայապետը պատասխան
տուաւ, եւ նորան ասաց. Կենդանի Աստուծովն
եմ երդում տալիս քեզ՝ որ ասես մեզ՝ թէ Դո՞ւ
64 ես որդի Աստուծոյ Քրիստոսը։ Նորան ասաց. Դու
ասացիր. բայց ասումեմ ձեզ՝ որ հիմիկուց ետեւ

կ'տեսնէք Որդին մարդոյ Աստուծոյ զօրութեան աջ
կողմը նստած՝ եւ երկնքի ամպերին վերայ եկած ։
65 Այն ժամանակը քահանայապետն իրեն շորերը պա-
տառեց եւ ասաց . Հայհոյեց . էլ ի՞նչ պէտք է
մեզ վկայ . ահա՛ հիմիկ դորա հայհոյանքը լսեցիք ։
66 Ի՞նչ հաճոյ է ձեզ . Նորանք պատասխան տուին
67 եւ ասացին . Դա մահապարտ է ։ Այն ժամանակը
թքեցին նորա երեսին . եւ բռնցքով թակեցին .
եւ մին քանիսն էլ ապտակ տուին նորան , եւ ա-
68 սացին . Դո՛ւ Քրիստոս՝ մարգարէացի՛ր մեզ՝ նա
ո՛վ է որ քեզ զարկեց ։
69 Եւ Պետրոս դուրսը նստած էր սրահումը . մին
աղախին նորան մօտ եկաւ , եւ ասաց . Դու էլ
70 այն Յիսուս Գալիլեացոյն հետն էիր ։ Նա ամենի
առաջին ուրացաւ՝ եւ ասաց . Չե՛մ գիտում թէ
71 դու ինչ ես խօսում ։ Եւ երբոր նա դռնիցը դուրս
գնաց , մին ուրիշ կին նորան տեսաւ՝ եւ նորանց
որ այն տեղ կային ասաց . Սա՛ էլ Յիսուս Նա-
72 զօրեցոյն հետն էր ։ Եւ նորէն երդումով ուրացաւ՝
73 թէ Ես այն մարդը չե՛մ ճանաչում . Եւ մին քիչ
յետոյ՝ նորանք որ այնտեղ կանգնած էին , եկին
Պետրոսին ասացին . Իրաւի որ դու էլ նորանցից
74 ես . ինչու որ՝ քո խօսքդ էլ յայտնում է քեզ ։ Այն
ժամանակն սկսեց անիծել եւ երդվիլ՝ թէ Ես այն
մարդը չե՛մ ճանաչում , եւ շուտով հաւը կանչեց ։
75 Եւ Պետրոս յիշեց Յիսուսի այն խօսքն՝ որ ասաց .
թէ Հաւը դեռ չ'կանչա՛ծ՝ երեք անգամ կուրա-
նաս ինձ . եւ դուրս գնաց ու դառն արտասուն-
քով լաց էլաւ ։

ԳԼ. ԻԷ

Քրիստոսի չարչարանքները Պիղատոսի առաջին . փշեղէն պսակը , խաչելութիւնը , մահն ու թաղումը ։

1 Երբոր առաւօտ էլաւ , ամեն քահանայապետներն
ու ժողովրդին ծերերը Յիսուսի համար խորհուրդ-
2 արին՝ որ սպանեն նորան ։ Նորան կապեցին եւ ա-
ռին գնացին , եւ Պոնտացի Պիղատոս դատաւորի
ձեռքը տուին ։
3 Այն ժամանակը Յուդան՝ որ նորան մատնեց՝
տեսաւ որ դատապարտվեցաւ , զղջացաւ՝ եւ այն
արծաթը յետ դարձրուց քահանայապետներին եւ
4 ժողովրդի ծերերին ։ Եւ ասաց . Մեղայ՝ ինչու որ
արդար արիւն մատնեցի . Նորանք էլ ասացին՝
5 Մենք հոգս չունինք . դու գիտես ։ Եւ արծաթը
ձգեց տաճարին մէջ եւ յետ եկաւ , եւ գնաց
6 խեղդվեցաւ ։ Բայց քահանայապետներն այն ար-
ծաթն առին՝ եւ ասացին . Արժան չէ՛՝ որ դա
գանձանակին մէջն ընդունենք , ինչու որ՝ արիւնի
7 գին է ։ Խորհուրդ արին՝ եւ նորանով բրուտի ար-
տատեղը գնեցին՝ որ օտարականների գերեզմանա-
8 տեղ լինի ։ Նորահամար՝ այն արտատեղն՝ Արիւնի
9 արտ կոչվեցաւ մինչեւ այսօր ։ Այն ժամանակը կա-
տարվեցաւ նա՝ որ Երեմիա մարգարէի ձեռովը աս-
վեցաւ . Եւ այն երեսուն արծաթի փողն առին՝
այն ծախվածի գինն՝ որ նորան Իսրայէլի որդիքնե-
10 րիցն առել էին , Եւ նորան բրուտի արտին տուին՝
ինչպէս որ հրամայեց ինձ Տէրը ։

11 Եւ Յիսուս կանգնեց դատաւորին առաջին . դա-
տաւորը հարցրուց նորան՝ եւ ասաց . Դո՞ւ ես Հը-
րէից Թագաւորն . եւ Յիսուս ասաց . Դու ես ա-
12 սում ։ Եւ երբոր քահանայապետներն ու ծերերը
նորանից չարախօսութիւն էին անում, նա ոչինչ
13 պատասխան չ'տուաւ ։ Այն ժամանակը Պիղատոս
ասաց նորան . Չե՞ս լսում թէ դորանք ո՞րչափ
14 քեզ հակառակ են վկայում ։ Եւ նորան բնաւ մին
բան էլ պատասխան չ'տուաւ . մինչեւ որ դատա-
ւորն էլ շատ զարմացաւ ։

15 Բայց սովորութիւն էր դատաւորին՝ որ տօնի ժա-
մանակին մին բանտարկեալ արձակէ ժողովրդին
16 համար . որին որ ուզումէին ։ Այն ժամանակն մին
անուանի բանտարկեալ ունէին . որ նորան անունը
17 Յեսու Բարաբբա էր ։ Երբոր հաւաքվեցան, Պի-
ղատոս նորանց ասաց . Այս երկուսից ո՞րն էք
ուզում՝ որ ձեզ համար արձակեմ . Յեսու Բարաբ-
բա՞յին, թէ Յիսուսին, որ Քրիստոս է կոչված ,
18 Պատճառնոր՝ գիտումէր՝ որ նախանձով էին մատ-
նել նորան ։

19 Եւ դեռ քանի որ դատաստան էր նստած, նո-
րա կինն ուղարկեց նորան մօտ՝ եւ ասաց . Այդ
արդար մարդուդ հետ դու բան չունիս . ինչուոր՝
շատ բաներ երազումն այսօր իմ գլխովս անցան
նորան համար ։

20 Բայց քահանայապետներն ու ծերերը ժողովուրդ-
ներին հաւանացրին՝ որ Բարաբբային ուզեն՝ եւ
21 Յիսուսին կորցնեն ։ Պատասխան տուաւ դատաւո-
րըն ու ասաց նորանց՝ Այս երկուսից ո՞րն էք ու-
զում՝ որ արձակեմ ձեզ համար . եւ նորանք ա-

22 սացին՝ Բարաբբային ։ Պիղատոս ասաց նորանց . Ա-
23 պա ի՛նչ անեմ Քրիստոս կոչված Յիսուսին ։ Ամեն-
մենքն էլ ասացին պէտք է խաչվի . եւ նա ա-
սաց . Ի՞նչ չար բան է արել . եւ նորանք է՛լ ա-
ւելի աղաղակումէին եւ ասում՝ պէ՛տք է խաչվի ։
24 Եւ Պիղատոս երբոր տեսաւ՝ թէ բնաւ օգուտ չի՛
անում, բայց աւելի խռովութիւն է լինում . ջուր
առաւ՝ ժողովրդի առաջին ձեռները լուաց՝ եւ ա-
սաց . Ես այդ արդարիդ արիւնից անպարտ եմ,
25 դուք գիտէք ։ Բոլոր ժողովուրդը պատասխան տը-
ւաւ եւ ասաց ։ Դորա արիւնը մեզ վերայ եւ մեր
26 որդոց վերայ ։ Այն ժամանակը Բարաբբային ար-
ձակեց նորանց համար, եւ Յիսուսին ծեծեց, եւ
ձեռները տուաւ՝ որ խաչվի ։

27 Այն ժամանակը դատաւորի զինուորները՝ Յիսու-
սին տարան պալատը, եւ ամեն զինուորների գուն-
28 դը հաւաքեցին նորա վերայ ։ Նորան մերկացրին՝
29 եւ նորան վերայ մին կարմիր քղամիդ ձգեցին ։ Եւ
փշերիցը մին թագ բոլորացրին՝ նորան գլուխը դը-
րին, եւ նորա աջ ձեռին մին եղէգ . նորա առա-
ջին ծունր դնելով ծաղր էին անում եւ ասում.
30 Ո՛ղջ կաց Հրէից Թագաւոր ։ Եւ նորան թքելով
այն եղէգն առնումէին եւ նորա գլուխը թակում ։
31 Եւ ե՛րբոր ծաղր արին նորան, այն կարմիր քղա-
միդը նորանից հանեցին՝ եւ նորան տարան որ
խաչ հանեն ։

32 Եւ երբոր դուրս ելան, մին Կիւրենացի մարդ-
դտին՝ Սիմօն անուն . նորան ուժով բռնեցին քա-
33 շեցին՝ որ նորան խաչը վեր առնէ ։ Երբոր Գողգո-
թա ասված տեղն եկին, որ գլխատեղը տեղ է,

34 Նորան լեղւյ հետ խառնած գինի տուին խմել՝ եւ
35 երբոր համն առաւ, չէ՛ր կամենում որ խմէ։ Եւ
երբոր նորան խաչ հանեցին, նորա շորերը վիճա-
կով բաժանեցին․ որ կատարվի այն խօսքն՝ որ
մարգարէիցն ասված էր՝ թէ իմ շորերս իրենց մէջ
բաժանեցին՝ եւ իմ վերարկուիս վերայ վիճակ էին
36 ձգում։ Եւ նստած պահումէին նորան։ (37) Եւ
նորան վճռը գրեցին՝ եւ իրեն գլխին վերայ դրին՝
38 թէ Սա՛ է Յիսուս Հրէից Թագաւորը։ Այն ժա-
մանակը նորա հետ երկու աւազակներ էլ խաչ հա-
նեցին՝ մինը նորա աջ կողմը եւ միւսը նորա ձախ
կողմը։
39 Եւ նորանք որ այնտեղից անցանումէին, հայ-
40 հոյումէին նորան․ իրենց գլխները շարժում, Ու-
ասում․ Վա՛հ որ տաճարը քանդում՝ եւ երեք օ-
րում շինումէիր․ ապրեցո՛ւ քեզ՝ թէ որ Աստու-
41 ծոյ Որդին ես, վէ՛ր եկ խաչից։ Այնպէս էլ քա-
հանայապետները ծաղր էին անում կարդացողնե-
42 րին եւ ծերերին հետ՝ եւ ասում․ Ուրիշներին ապ-
րեցուց․ ինքն իրեն չի՛ կարում ապրեցնել․ թէ որ
Իսրայէլի Թագաւորն է, հիմիկ թո՛ղ վէր գայ խա-
43 չից, եւ հաւատանք դորան։ Թէ որ Աստուծոյն
յուսացաւ, հիմիկ թո՛ղ փրկէ դորան, թէ որ ու-
զումէ դորան․ ինչուոր՝ ասաց․ թէ Աստուծոյ Որ-
44 դի եմ։ Այնպէս էլ աւազակներն որ նորա հետ
խաչված էին՝ նորան նախատումէին։
45 Եւ օրի վեց ժամից մինչեւ ինը ժամն ամեն երկ-
46 րի վերայ խաւար էլաւ։ Եւ ինը ժամին դէմ, Յի-
սուս մեծ ձայնով կանչեց եւ ասաց․ Էլի՛ Էլի՛ լա-
մա սաբաքթանի․ որ կասվի․ Իմ Աստուած՝ ի՛մ

47 Աստուած՝ ինչո՞ւ թողիր ինձ։ Մին քանի մար-
դիք նորանցից՝ որ այնտեղ կանգնած էին՝ երբոր
48 լսեցին, ասումէին՝ Դա՛ Եղիային է կանչում։ Եւ
շուտով նորանցից մինը վազեց՝ մին սպունգ առաւ
քացախով լիքն՝ եղէգի վերայ անցրուց՝ եւ նորան
49 տուաւ, որ խմէ։ Եւ կէսն ասումէին․ Թո՛ղ տես-
նենք․ եթէ Եղիան կ'գա՞յ դորան փրկել։
50 Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնով կանչեց՝ եւ
արձակեց հոգին։
51 Եւ ահա՛ տաճարին վարագուրը երկու կտոր ճղ-
վեցաւ վերեւից մինչեւ ցածը, եւ երկիրը շարժ-
52 վեցաւ․ եւ քարեր պատառվեցան․ Եւ գերեզման-
ներ բացվան․ եւ շատ մարմիններ սուրբ ննջեցելոց
53 յարութիւն առին․ Եւ գերեզմաններիցը դուրս
եկին նորա յարութենիցն ետեւ՝ սուրբ քաղաքը
մտին՝ եւ շատերին երեւեցան։
54 Բայց հարիւրապետը եւ նորանք՝ որ նորա հետ
Յիսուսին պահումէին, երբոր այն շարժմունքը եւ
այն էլածները տեսին, շատ վախեցան եւ ասա-
ցին․ Ճշմարիտ որ սա՛ Աստուծոյ Որդի էր։
55 Այն տեղ շատ կանայք կային՝ որ հեռուանց
կանգնել էին՝ եւ մտիկ էին տալիս․ որ Գալիլեայի-
ցը Յիսուսի ետեւէն եկին որ ծառայութիւն անեն
56 նորան։ Սորանց միջումն էր Մարիամ Մագդաղե-
նացին՝ եւ Մարիամ Յակոբի եւ Յօսէի մայրը՝ եւ
Զեբեդիայի որդոց մայրը։
57 Եւ երբոր իրիկուն էլաւ, Արիմաթեայից մին
հարուստ մարդ եկաւ՝ որ նորա անունը Յօսէփ էր,
58 որ ինքն էլ աշակերտ էլած էր Յիսուսին։ Սա գը-
նաց Պիղատոսին մօտ եւ Յիսուսի մարմինը խնդ-

րեց , այն ժամանակը Պիղատոս հրամայեց՝ որ մար-
59 մինը տան ։ Եւ Յօսէփ մարմինն առաւ՝ խտակ կը-
60 տաւներով պատանեց , Եւ դն նոր գերեզմանի մէջ
դրաւ՝ որ քարին մէջ փորել էր . եւ գերեզմանի
դռան առաջին մին մեծ քար ձգեց փակելոյ հա-
61 մար . եւ գնաց ։ Այն տեղ էր Մարիամ Մագդա-
ղենացին եւ միւս Մարիամն , որ գերեզմանին դէմ
նստած էին ։

62 Եւ նորա վաղվան օրն՝ որ ուրբաթիցն ետեւ է ,
քահանայապետներն ու փարիսեցիները հաւաքվե-
63 ցան Պիղատոսի մօտ . Եւ ասացին ։ Տէ՛ր մտքներս
բերինք , որ այն մոլորացնողը դեռ քանի որ կեն-
դանի էր , ասումէր . Թէ Երեք օրից ետեւ յա-
64 րութիւն կառնեմ ։ Ուրեմն հրաման տուր . որ մին-
չեւ երեք օր գերեզմանը զգուշութենով պահեն .
որ չ՚լինի թէ աշակերտները գիշերը գան նորան
գողանան՝ եւ ժողովրդին ասեն՝ թէ Մեռելների մի-
ջից յարութիւն առաւ , եւ յետին մոլորութիւնը
65 չար լինի քան թէ առաջինը ։ Պիղատոս ասաց նո-
րանց . Պահապան զինւորներ ունիք . գնացէ՛ք ըզ-
66 գո՛յշ պահեցէք ինչպէս որ գիտումէք ։ Նորանք էլ
գնացին գերեզմանին պահպանութիւն արին . եւ
պահապան զինւորներին հետ քարը կնքեցին ։

ԳԼ. ԻԸ

Քրիստոսի յարութիւնն ու հրամանները իր աշակերտներին .

1 Եւ շաբաթ խրիկունն՝ որ մէկ շաբթի էր լուսա-
նում , Մարիամ Մագդաղենացին եկաւ՝ եւ միւս

2 Մարիամն էլ , որ գերեզմանը տեսնեն ։ Եւ մեծ
շարժում էլաւ՝ ինչու որ Տէրի հրեշտակն երկինքից
վէր եկաւ՝ գնաց դռնիցն այն քարը հեռու թա-
3 ւալեց՝ եւ նորան վերայ նստեց ։ Եւ նորան կեր-
պարանքը փայլակի պէս էր՝ եւ նորան հագուստը
4 ձիւնի պէս սպիտակ ։ Եւ նորան ահիցը պահապան-
5 ները շփոթվեցան , եւ մեռելի նման էլան ։ Հրեշ-
տակը պատասխան տուաւ՝ եւ այն կանանցն ա-
սաց . Դուք մի՛ վախենաք . գիտումեմ՝ որ Յիսուս
6 խաչվածն էք ուզում ։ Այստեղ չէ՛ . պատճառնոր՝
յարութիւն առաւ՝ ինչպէս որ ասաց . եկէ՛ք տե-
7 սէ՛ք այն տեղն որ նա կար ։ Եւ շուտով գնացէ՛ք
նորա աշակերտներին ասացէ՛ք՝ թէ Նա յարու-
թիւն առաւ . եւ ահա՛ նա ձեզանից առաջ Գա-
լիլեա կ՚գնայ . այն տեղ նորան կ՚տեսնէք . ահա՛
8 ասացի ձեզ ։ Եւ շուտով գերեզմանիցը դուրս ե-
կին՝ վախով եւ շատ ուրախութենով վազուեցին՝
որ աշակերտներին պատմեն ։

9 Եւ ահա՛ Յիսուս պատահեց նորանց՝ եւ ասաց .
Ողջ կացէք . եւ նորանք մօտ եկին՝ նորա ոտները
10 բռնեցին՝ եւ նորան երկրպագութիւն արին ։ Այն
ժամանակը Յիսուս նորանց ասաց . Մի՛ վախենաք .
գնացէ՛ք իմ եղբայրներիս ասացէք՝ որ գնան Գա-
լիլեա , եւ այնտեղ կ՚տեսնեն ինձ ։

11 Երբոր նորանք գնացին . ահա՛ զինւորներիցը մին
քանիսն եկին քաղաքը՝ եւ ամեն ինչ որ էլաւ՝
12 պատմեցին քահանայապետներին ։ Եւ նորանք ծե-
րերին հետ հաւաքված խորհուրդ արին՝ եւ այն
13 զինւորներին շատ փող տուին ։ Եւ ասացին .
Ասացէ՛ք՝ թէ նորա աշակերտները գիշերը դեռ որ

14 մենք քնած էինք՝ եկին գողցան նորան ։ Եւ թէ
որ այդ բանդ դատաւորին ականջը հասնէ , մենք
նորան կ'հաւանացնենք՝ եւ ձեզ անհոգ կանենք ։
15 Եւ նորանք փողն առին՝ եւ այնպէս արին ինչպէս
որ սովրեցին ․ եւ այս ձայնս Հրեաներին մէջ դուրս
եկաւ մինչեւ այսօր ։
16 Բայց տասնումին աշակերտները գնացին Գա-
լիլեա՝ այն սարն՝ որ Յիսուս նորանց հետ խօսք էր
17 կապել ։ Երբոր նորան տեսին , երկրպագութիւն
18 արին նորան , եւ մին քանիսն երկմտեցան ։ Եւ
Յիսուս մօտ եկաւ , նորանց հետ խօսեց՝ եւ ա-
սաց ․ Ամեն իշխանութիւնն ինձ տվաւ երկնքումն
եւ երկրումն ․ ինչպէս որ Հայրն ինձ ուղարկեց ,
19 այնպէս էլ ես ձեզ ուղարկումեմ ։ Ուրեմն գնա-
ցէ՛ք ամեն հեթանոսներն աշակե՛րտ շինեցէք՝ նո-
րանց մկրտեցէ՛ք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ
20 անունովը ։ Նորանց սովրցրէք՝ որ ամեն ինչ որ
ձեզ պատուիրեցի՝ պահեն ․ եւ ահա՛ ես ձեզ հետ
եմ ամեն օր , մինչեւ աշխարհքի վերջը ։

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ
ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

*Քրիստոսի մկրտութիւնը , փորձութիւնը , քարոզը ,
առաքեալքը կանչելը ․ և հիւանդներ բժշկելը ։*

1 ԱՍՏՈՒԾՈՅ Որդի Յիսուս Քրիստոսի աւետարա-
2 նին սկիզբը ։ Ինչպէս որ մարգարէներումը գրված
է՝ Ահա՛ ես իմ հրեշտակս կուղարկեմ քո առա-
ջիդ՝ որ քո ճանապարհդ քո առաջիդ պատրաստէ ։
3 կանչօղի ձայն անապատումը՝ Պատրա՛ստ արէք Տէ-
րի ճանապարհը՝ եւ շիտա՛կ արէք նորա գնալոյ ճա-
4 նապարհը ։ Եւ էլաւ՝ որ Յօհաննէս անապատու-
մը՝ մկրտումէր , եւ ապաշխարութեան մկրտութիւն
5 քարոզումէր՝ մեղաց թողութեան համար ։ Եւ Հրէ-
աստանի ամեն աշխարհքն ու ամեն Երուսաղէմա-
ցիքը գնումէին նորա մօտ՝ եւ նորանից մկրտվում
էին Յորդանան գետումն՝ իրենց մեղքերը խոստո-
6 վանելով ։ Եւ Յօհաննէս ուղտու բուրդ էր հա-
գած , եւ կաշվէ գօտիկ իրեն մէջքին՝ եւ նորա
7 կերակուրը մարախ էր եւ վայրի մեղր ։ Քարոզում
էր եւ ասում ․ Ինձանից զօրաւորն իմ ետեւէս

գալիս է՝ որ Նորան ես չե՛մ արժանի խոնարհվիլ
8 եւ Նորա կօշիկներին կապն արձակել։ Ես ջրով
մկրտեցի ձեզ՝ եւ Նա Սուրբ Հոգով կ՚մկրտէ ձեզ։
9 Եւ էլաւ որ այն օրերը Յիսուս Գալիլեացոց Նա-
զարէթիցն եկաւ, եւ Յօհաննէսից Յորդանանու-
10 մը մկրտվեցաւ։ Եւ շուտով որ ջրիցը դուրս եկաւ՝
տեսաւ երկինքը ճղված՝ եւ Աստուծոյ Հոգին ա-
11 ղաւնու պէս՝ որ վէր էր գալիս Նորա վերայ․ Ձայն
էլաւ երկնքիցն եւ ասաց՝ Դու ես իմ սիրելի Որ-
դիս, քե՛զ հաւանեցի։
12 Եւ շուտով Հոգին Նորան անապատը հանեց։
13 Եւ Նա այնտեղ էր քառասուն օր սատանայիցը
փորձված․ եւ գազանների հետ էր՝ եւ հրեշտակներ
ծառայումէին Նորան։
14 Եւ երբոր Յօհաննէս մատնվեցաւ՝ Յիսուս եկաւ
Գալիլեա․ Աստուծոյ աւետարանը քարոզումէր եւ
15 ասում․ Թէ, ժամանակը կատարվել է, եւ Աս-
տուծոյ արքայութիւնը հասել․ ապաշխարեցէք՝ եւ
աւետարանին հաւատացէք։
16 Երբոր Գալիլեացոց ծովի եզրին մօտ անցանում
էր, տեսաւ Սիմօնին եւ Նորա Անդրէաս եղբօրը՝
որ ուռկանները ծովը էին ձգել․ ինչուոր՝ ձկնորս
17 էին։ Եւ Յիսուս նորանց ասաց․ Իմ ետեւէս ե-
կէ՛ք՝ եւ կանեմ ձեզ որ մարդկանց որսորդ լինիք։
18 Եւ շուտով ուռկանները թողին եւ Նորա ետեւէն
19 գնացին։ Եւ այնտեղից որ մին քիչ առաջ գնաց՝
Յակոբոս Զեբեդեանին եւ Նորա Յօհաննէս եղբօրը
տեսաւ․ երբոր նորանք նաւին մէջ ուռկանները
20 շինումէին՝ եւ նորանց կանչեց։ Եւ շուտով իրենց
Զեբեդէոս հօրը վարձկաններին հետ նաւին մէջ

թողին, եւ Նորա ետեւէն գնացին։
21 Եւ մտին Կափառնայում՝ եւ շուտով շաբաթ
օրը ժողովարանին մէջ մտաւ՝ եւ սովրցնումէր նո-
22 րանց։ Եւ զարմանումէին Նորա վարդապետու-
թեանը վերայ․ ինչուոր՝ ինչպէս իշխանութենով
էր սովրցնում նորանց՝ եւ ո՛չ թէ նորանց կար-
23 դացօղներին պէս։ Եւ նորանց ժողովարանին մէջ
մին մարդ կար՝ որ պիղծ դեւ կար նորանում․ որ
24 աղաղակեց եւ ասաց․ Թո՛ղ արա՝ դու ի՞նչ բան
ունիս մեզ հետ՝ Յիսո՛ւս Նազօրեցի․ եկիր որ մեզ
կորցնես․ գիտումենք քեզ թէ ո՛վ ես դու՝ Աս-
25 տուծո՛յ Սուրբդ։ Յիսուս նորան սաստեց՝ եւ ա-
26 սաց․ Պապանձվի՛ր՝ եւ դորանից դո՛ւրս եկ։ Եւ
պիղծ դեւը նորան գետինը զարկեց․ եւ մեծ ձայ-
27 նով աղաղակեց, եւ նորանից դուրս եկաւ։ Եւ
ամենքը զարմացան մինչեւ որ իրար հետ քափա-
լով հարցնումէին՝ եւ ասում․ Սա ի՞նչ նոր վար-
դապետութիւն է՝ որ իշխանութենով պիղծ դեւե-
28 րին էլ սաստումէ՝ եւ հնազանդվումեն սորան։ Եւ
Նորա համբաւը Գալիլեացոց ամեն կողմերը դուրս
գնաց։
29 Եւ շուտո՛վ ժողովարանիցն որ դուրս էլաւ, ե-
կաւ Սիմօնի եւ Անդրէասի տունը՝ Յակօբի եւ Յօ-
30 հաննէսի հետ։ Եւ Սիմօնի զոքանչը տենդով պառ-
կած էր՝ եւ շուտով Նորա համար ասացին Նորան։
31 Եւ մօտ եկաւ Նորան ձեռիցը բռնեց՝ եւ Նորան
վերկացրուց․ եւ տենդը թողեց նորան՝ եւ Նա ծա-
ռայումէր նորանց։
32 Եւ երբոր իրիկուն էլաւ արեգակին մտնելոյ ժա-
մանակը, ամեն հիւանդներն ու դիւահարները բե-

33 ըին Նորա մօտ ։ Եւ բոլոր քաղաքը ժողովված էր
34 դռների առաջին ։ Եւ շատ հիւանդներ բժշկեց
կերպ կերպ ցաւերից՝ եւ շատ դեւեր հանեց. եւ
թոյլ չէ՛ր տալիս դեւերին որ խօսին. ինչու որ՝ գի-
տամէին Նորան որ Քրիստոս է ։

35 Եւ առաւօտանից որ լուսացաւ՝ վեր կացաւ դուրս
եկաւ եւ մին անապատ տեղ գնաց, եւ այնտեղ
36 աղօթք էր անում ։ Եւ Սիմօնն Նորա ետեւէն գը-
37 նաց, եւ նորանք էլ որ Նորա հետ էին ։ Եւ երբ-
որ Նորան գտին՝ ասացին Նորան, թէ՝ Ամենքը
38 քեզ են ման գալիս ։ Եւ Նորանց ասաց. Եկէ՛ք
ուրիշ մօտիկ գիւղաքաղաքներն էլ գնանք, որ
այնտեղ էլ քարոզեմ. ինչու որ ես իսկ սորա համա-
39 մար եմ եկած ։ Եւ ամեն Գալիլեացոց երկրին մէջ
նորանց ժողովարաններումը քարոզումէր, եւ դե-
ւեր էր հանում ։

40 Մին բորոտ Նորա մօտ եկաւ, աղաչումէր՝ ծունր
էր դնում՝ եւ ասում. Տէ՛ր՝ թէ որ կամենաս,
41 կարող ես ինձ սրբել ։ Յիսուս էլ խղճալով ձեռ-
քը մեկնեց, նորան մօտեցաւ՝ եւ նորան ասաց.
42 Կամենումեմ՝ սրբվի՛ր ։ Եւ երբոր սա ասաց նո-
րան, շուտով բորոտութիւնը գնաց նորանից՝
43 եւ սրբվեցաւ ։ Եւ նորան սաստելով շուտով
44 դուրս հանեց նորան, եւ ասաց նորան. Զգո՛յշ
կաց ընաւ մին մարդոյ բան չասես. բայց գնա՛
քահանային քեզ ցո՛յց տուր, եւ քո սրբութեա-
նըդ համար պատարագ արա՛՝ այն որ Մօսէսը հը-
45 րամայեց՝ նորանց վկայութիւն լինելոյ համար ։ Եւ
նա երբոր դուրս գնաց, սկսեց շատ քարոզել եւ
այն բանը տարածել, մինչեւ որ էլ նա կարող

չէ՛ր յայտնի մտնել քաղաք՝ բայց դուրս անա-
պատ տեղերում էր. եւ ամեն կողմերիցը գալիս
էին Նորա մօտ ։

ԳԼՈՒԽ Բ

Անդամալոյծը. Մատթէոսին կոչումը. Քրիստոսի պա-
տասխանը. պահք և շաբաթ չպահելոյ մասին ։

1 Եւ դարձեալ որ մտաւ Կափառնայումը մին քա-
2 նի օրից ետեւ, Լսվեցաւ թէ տանն է. եւ շատ
մարդիք ժողովվեցան՝ մինչեւ որ տեղ էլ չ'կար եւ
ո՛չ էլ դռան առաջին. եւ Աստուծոյ բանը խօ-
3 սումէր նորանց ։ Եւ գալիս էին Նորա մօտ՝ եւ մին
անդամալոյծ էին բերում չորս մարդով վեր ա-
4 ռած ։ Եւ երբոր չէին կարողանում մօտենալ նո-
րան՝ ամբոխի պատճառաւն՝ այն տան ծածքը քա-
կեցին, որ տեղ որ Յիսուսն էր. եւ օճորքը բաց
արին եւ այն մահիճը վէր բերին, որ նորանում
5 անդամալուծը կար ։ Եւ Յիսուս նորանց հաւատքը
տեսնելով՝ անդամալուծին ասաց. Որդի՛ քո մեղ-
6 քերդ թողված լինին քեզ ։ Եւ կարդացողներին
մին քանիսը կային՝ որ այն տեղ նստած էին. եւ
7 իրենց սրտումը միտք էին անում, Թէ Այս ի՞նչ
է՝ որ սա հայհոյութիւն է խօսում. ո՞վ է կարող
8 մեղք թողել եթէ ո՛չ մին Աստուածը ։ Եւ Յիսուս
իրեն հոգոյն մէջ գիտաց թէ իրենց սրտումն այն-
պէս են միտք անում, եւ ասաց. Ինչո՞ւ էք ձեր
9 սրտերումը դա մտածում ։ Ո՞րն է հեշտ. անդա-
մալուծին ասել՝ թէ, քո մեղքերդ թողված լինին
քեզ, թէ ասել՝ Վե՛ր կաց, քո մահիճդ ա՛ռ եւ
10 քո տունդ գնա՛ ։ Բայց որ իմանաք, թէ Որդին

մարդոյ իշխանութիւն ունի երկրիս վերայ մեղաց
11 թողութիւն տալ․ անդամալուծին ասաց, Ասու-
մեմ քեզ՝ վե՛ր կաց, քո մահիճդ ա՛ռ եւ գնա՛
12 քո տունդ։ Եւ նա շուտով վերկացաւ եւ մահիճն
առաւ՝ եւ ամենի առաջին դուրս գնաց․ մինչեւ
որ ամենքը զարմանումէին եւ Աստուծոյն փառա-
ւորում եւ ասում՝ թէ բնաւ մին ժամանակ այս-
պիսի բան չենք տեսել։
13 Եւ դարձեալ դէպի ծովի եզրը դուրս գնաց, եւ
ամեն ժողովուրդը նորա մօտ էր գալիս․ եւ նորանց
14 սովորցնումէր։ Եւ երբոր անցանումէր, տեսաւ
Ղեւի Ալփեանին՝ որ նստած մաքսաւորութիւն էր
անում․ եւ նորան ասաց․ Իմ ետեւէս եկ․ եւ
15 վերկացաւ՝ գնաց նորա ետեւէն։ Եւ էլաւ՝ երբոր
նորան տանը մէջ սեղանի նստած էր՝ եւ շատ
մաքսաւորներ եւ մեղաւորներ Յիսուսին եւ նորա
աշակերտներին հետ սեղան էին նստած․ պատ-
ճառոր՝ շատ մարդիկ էին՝ որ նորան ետեւէն գը-
16 նումէին։ Բայց կարդացօղներն ու փարիսեցիքն եր-
բոր տեսի՝ թէ մաքսաւորներին եւ մեղաւորներին
հետ ուտումէ՝ նորա աշակերտներին ասացին․ Դա
ի՞նչ է որ մաքսաւորներին եւ մեղաւորներին հետ
17 ուտում եւ խմումէք։ Յիսուս երբոր լսեց՝ ասաց
նորանց․ Առողջներին բժիշկ պէտք չէ՝ բայց հի-
ւանդներին․ եւ չեկի որ արդարներին կանչեմ՝
այլ մեղաւորներին։
18 Եւ Յօհաննէսի աշակերտներն ու փարիսեցիները
ծոմումն էին՝ եկին եւ նորան ասացին․ Ինչո՞ւ Յօ-
հաննէսի աշակերտներն ու փարիսեցիները ծոմ են
19 պահում, եւ քո աշակերտներդ չե՛ն պահում։ Եւ

Յիսուս նորանց ասաց․ Միթէ կարելի՞ է՝ որ հար-
սանիքի որդիքը ծոմ պահեն՝ դեռ քանի որ փեսան
նորանց հետ է․ քանի որ փեսան իրենց հետ ու-
20 նին՝ կարելի չէ որ ծոմ պահեն։ Բայց օրեր կ'գան
որ փեսան նորանցից վեր կառնվի եւ ապա այն
21 օրը կ'պահեն։ Ո՛չ ով նոր չ'մաշված կարկատանի
կտոր հին շորի վերայ չի՛ ձգիլ․ ապա թէ ո՛չ՝ նորն
իրեն ուժովն այն հնիցը կառնէ, եւ պատառվածքն
22 էլ աւելի չար կ'լինի։ Եւ ո՛չ ով նոր գինին հին
տիկերի մէջ չի՛ ածիլ․ ապա թէ ո՛չ՝ գինին տիկերը
կ'պատառէ՝ գինին կ'թափվի, եւ տիկերը կ'կորչին․
բայց նոր գինին՝ նոր տիկերի մէջ պէտք է ածվի։
23 Եւ էլաւ որ նա շաբաթ օրը արտերին մէջովը
անցանումէր․ եւ աշակերտներն իրենց գնալոյ ժա-
24 մանակն սկսեցին հասկ պոկել եւ ուտել։ Եւ փա-
րիսեցիքը նորան ասացին․ Տե՛ս ի՞նչ են գործում
25 քո աշակերտներդ շաբաթ օրն՝ որ արժան չէ։ Եւ
Յիսուս նորանց ասաց․ Դուք բնաւ չէ՞ք կարդա-
ցել նա, որ Դաւիթն արաւ, երբոր պէտք էլաւ՝
եւ սովեց նա եւ նորանք էլ, որ նորան հետն էին․
26 ինչպէս Աստուծոյ տունը մտաւ Աբիաթար քա-
հանայապետի օրերին․ եւ առաջաւորութեան հա-
ցը կերաւ՝ եւ նորանց էլ տուաւ որ նորան հետն
էին՝ որ ուրիշի օրէնք չէր ուտել՝ բայց միայն քա-
27 հանայիցը։ Եւ նորանց ասաց․ Շաբաթն մարդոյ
համար էլաւ, եւ ո՛չ թէ մարդը շաբաթի համար։
28 Ուրեմն Որդին մարդոյ շաբաթին էլ տէրն է։

ԳԼ. Գ

Չորացած ձեռքը. տասներկու աշակերտները. կարդացողներին հայհոյութիւնը. Քրիստոսի եղբարքը, քոյրերը և մայրը։

1 Եւ դարձեալ ժողովարանին մէջ մտաւ, եւ այն-
տեղ մին մարդ կար՝ որ նորա ձեռքը չորացած էր։
2 Եւ սպասումէին նորան՝ թէ շաբաթ օրը բժշկէ
3 նորան՝ որ չարախօսեն նորանից։ Եւ ասաց այն
մարդոյն՝ որ նորա ձեռքը չորացած էր. Վե՛ր կաց
4 ե՛կ մէջ տեղը։ Եւ նորանց ասաց. Ի՞նչ արժան
է շաբաթ օրը. բարի բա՞ն գործել՝ թէ չար ա-
նել. մին հոգի ապրեցնե՞լ՝ թէ կորցնել. եւ նո-
5 րանք լուռ կացան։ Եւ Յիսուս շատ բարկութե-
նով չորս կողմովը նորանց մտիկ տուաւ՝ նորանց
սրտերի կուրութեան համար տրտմելով՝ եւ այն
մարդոյն ասաց. Ձեռքդ մեկնէ. եւ նա մեկնեց,
6 եւ նորա ձեռքն ողջացաւ։ Եւ փարիսեցիները շու-
տով դուրս գնացին Հերովդէսեաններին հետ. նո-
րա համար խորհուրդ էին անում՝ թէ ինչպէս կոր-
ցընեն նորան։
7 Բայց Յիսուս իրեն աշակերտներին հետ ծովի եզ-
րը գնաց. եւ շատ ժողովուրդ նորա ետեւէն գը-
8 նումէին Գալիլեացիներիցը. եւ Հրէաստանիցը, Եւ
Երուսաղէմիցն ու Յորդանանի այն կողմիցը, եւ
նորանք էլ որ Տիւրոսից ու Սիդօնից էին, շատ
ժողովուրդ երբոր լսումէին՝ թէ որքան բաներ էր
9 անում, նորա մօտ էին գալիս։ Եւ իրեն աշակերտ-
ներին ասաց, որ մին պզտիկ նաւ պատրաստ լինի

իրեն համար այն ամբոխի պատճառաւն՝ որ չ'նե-
10 ղեն նորան։ Ինչու որ՝ շատերին բժշկեց. մինչեւ որ
եկին նորա վերայ թափվեցան՝ որ նորան դիպչին՝
11 նորանք որ մին ցաւ ունէին։ Եւ պիղծ դեւերն
երբոր նորան տեսնումէին, նորա առաջին ընկնում
12 էին, աղաղակում եւ ասում. Թէ, Դու ես Աս-
տուծոյ Որդին, եւ նա շատ սաստումէր նորանց,
որ զինքը չ'յայտնեն։
13 Վեր ելաւ սարը՝ եւ իրեն մօտ կանչեց նորանց
14 որ ինքը կամեցաւ. եւ նորա մօտ գնացին։ Եւ
տասներկու հոգի կարգեց՝ որ իրեն հետ լինին, եւ
15 որ նորանց ուղարկէ՝ որ քարոզեն, Եւ իշխանու-
թիւն ունենան ցաւերը բժշկելոյ՝ եւ դեւերը հա-
16 նելոյ։ Եւ Սիմոնի անունը Պետրոս դրաւ։ (17) Եւ
Զեբեդեան Յակոբին՝ եւ Յակոբի եղբայր Յօհան-
նէսին, նորանց անունը Բաներեգէս դրաւ, որ է՝
18 Որոտմունքի որդիք։ Եւ Անդրէասին, եւ Փիլիպ-
պոսին, եւ Բարթուղիմէոսին, եւ Մատթէոս մաք-
սաւորին, եւ Թօմասին, եւ Յակոբոս Ալփեանին,
19 եւ Թադէոսին, եւ Սիմոն Կանանացոյն։ Եւ Յու-
դա Իսկարիոտացոյն՝ նա որ մատնեց նորան,
20 Տուն եկին, եւ կրկին նորանց հետ ժողովուրդն
եկաւ՝ մինչեւ որ ժամանակ էլ չէլաւ նորանց՝ որ
21 հաց ուտեն։ Եւ երբոր նորա ընտանիքը լսեցին՝
դուրս եկին որ նորան բռնեն. ինչու որ՝ համարում
22 էին, թէ նա գժվել է։ Եւ կարդացողներն՝ որ
Երուսաղէմից էին եկել, ասումէին՝ թէ Բէեղզե-
բուղ կայ դորանում, եւ դեւերի իշխանովն է հա-
23 նում դա դեւերը։ Եւ նորանց իրենց մօտ կան-
չեց՝ առակներով նորանց հետ խօսումէր. Թէ ի՞նչ-

24 պէս սատանայ կարող է սատանային հանել։ Ու-
րեմն՝ եթէ թագաւորութիւն իրեն միջումը բա-
ժանուի, այն թագաւորութիւնը կարող չէ՛ կե-
25 նալ։ Եւ եթէ տուն իրեն միջումը բաժանուի, այն
26 տունը կարող չէ՛ կենալ։ Եւ եթէ սատանան ի-
րեն անձին վերայ վերկացաւ եւ բաժանուած է,
27 կարող չէ՛ կենալ, այլ վերջացած է։ Բայց ոչ ով
կարող չէ՛ զօրաւոր մարդոյ տուն մտնել եւ նորա
բաները յափշտակել, եթէ առաջ այն զօրաւորը
28 չ'կապէ, եւ ապա նորա տունը յափշտակէ։ Ճըշ-
մարիտ ասում եմ ձեզ՝ թէ Մարդկանց որդոցն ա-
մեն մեղքեր եւ հայհոյանքներ կ'թողուին՝ որքան որ
29 հայհոյեն. Բայց նա որ Սուրբ Հոգուն կ'հայհո-
յէ՝ յաւիտեան թողութիւն չունենալ. այլ յա-
30 ւիտենական մեղաց պարտական կ'լինի։ Պատճառն
որ՝ ասումէին՝ թէ Պիղծ դեւ կայ նորանում։
31 Նորա եղբարքն ու մայրն եկին, եւ դուրսը կանգ-
32 նած՝ ուղարկեցին եւ նորան կանչումէին։ Եւ այն-
տեղ ժողովուրդը նորա չորս կողմովը նստած էր.
եւ երբոր ասացին նորան՝ Ահա՛ քո մայրդ ու քո
եղբարքդ դուրսը կանգնած են, եւ քեզ են խնդ-
33 րում. Նորանց պատասխան տուաւ եւ ասաց՝ Ո՞վ
34 է իմ մայրս կամ եղբարքս։ Իրեն չորս կողմովը ա-
շակերտներին մտիկ տուաւ՝ որ նստած էին, եւ ա-
35 սաց. Ահա՛ իմ մայրս եւ իմ եղբարքս։ Ինչուոր՝
ո՛վ որ Աստուծոյ կամքը կատարէ՝ նա՛ է իմ եղ-
բայրս եւ քոյրս եւ մայրս։

ԳԼ. Դ

Սյլ և այլ առակներ. ծովին մրրիկը։

1 Նորէն ծովի եզրին մօտ սկսեց սովրցնել. եւ շատ
ժողովուրդներ նորա չորս կողմովը կիտուեցան, մին-
չեւ որ նաւ մտաւ, եւ ծովի վերայ նստաւ. եւ
ամեն ժողովուրդները ծովին եզրովը ցամաքը բըռ-
2 նած էին։ Եւ շատ բան առակներով սովրցնում
էր նորանց. եւ իրեն վարդապետութեանը մէջն
3 ասումէր նորանց. Լսեցէ՛ք՝ ահա՛ մին սերմ ցա-
4 նող դուրս գնաց, որ սերմը ցանէ։ Եւ սերմելոյ
ժամանակն էլաւ որ մինը ճանապարհի վերայ ըն-
5 կաւ, եւ թռչունն եկաւ եւ նորան կերաւ։ Եւ
միւսը քարքարուտ տեղ ընկաւ՝ որ այնտեղ շատ
հող չ'կար. եւ շուտով բուսաւ. ինչուոր՝ բաւա-
6 կան հող չ'կար։ Եւ երբոր արեգակը ծագեց՝ տա-
քացաւ, եւ որովհետեւ արմատ չունէր՝ չորացաւ։
7 Եւ միւսն ընկաւ փշերին մէջ, փշերը դուրս եկին
8 եւ խեղդեցին նորան. եւ պտուղ չ'տուաւ։ Եւ
միւսը բարի երկրի վերայ ընկաւ. եւ դուրս եկաւ
աճեց եւ պտուղ էր տալիս, եւ մինի տեղ երե-
սուն, եւ մինի տեղ վաթսուն, եւ մինի տեղ
9 հարիւր։ Եւ ասումէր. Ո՛վ որ լսելոյ ականջ ու-
նի՝ թո՛ղ լսէ։
10 Եւ երբոր մինակ էլաւ՝ նորանք որ նորան մօտ
էին աշակերտներին հետ՝ հարցրին նորան այն ա-
11 ռակները։ Եւ նորանց ասաց. Ձեզ տուած է Աս-
տուծոյ արքայութեան խորհուրդները գիտել, բայց

Նորանց որ դրսի են՝ ամեն բան առակներով է լի-
12 նում․ Որ տեսնելով տեսնեն՝ եւ չ՚տեսնեն, եւ
լսելով լսեն՝ եւ չիմանան․ որ բնաւ չ՚դառնան,
13 եւ թողութիւն լինի նորանց։ Եւ նորանց ասաց․
Այս առակս չէ՛ք գիտում, եւ ի՞նչպէս ամեն ա-
14 ռակները կ՚գիտենաք։ Նա որ սերմումէ՝ Աստուծոյ
15 բանն է սերմում։ Եւ նորանք են՝ որ ճանապար-
հի վերայ են՝ որտեղ որ բանը սերմվումէ․ եւ երբ-
որ նա լսումեն, սատանան գալիս է՝ եւ նորանց
16 սրտերումը սերմված բանը հանում։ Եւ որ քար-
քարուտ տեղը սերմվեցան, նորանք են՝ որ երբոր
բանը լսումեն, շուտով ուրախութենով ընդու-
17 նումեն։ Եւ իրենց մէջ արմատ չունին՝ էլ քիչ
ժամանակ են մնում․ յետոյ երբոր նեղութիւն
կամ հալածմունք են հասնում այն բանին հա-
18 մար, շուտով գայթակղվումեն։ Բայց որ փշերին
մէջ սերմվեցան՝ նորանք են, որ երբոր բանը լը-
19 սումեն, Աշխարհքի հոգսերն ու մեծութեան խա-
բեբայութիւնները մտնումեն եւ բանը խեղդում՝
20 եւ անպտուղ է լինում։ Եւ որ բարի երկրի վե-
րայ սերմվեցան՝ նորանք են՝ որ բանը լսումեն եւ
ընդունում, եւ պտուղ են տալիս՝ մինի տեղ ե-
րեսուն՝ եւ մինի տեղ վաթսուն՝ եւ մինի տեղ
հարիւր։

21 Եւ նորանց ասաց․ Միթէ ճրագը նորահամա՞ր
է գալիս՝ որ տաշտին կամ մահճին տակը դնվի․
22 չէ՞ որ ճրագակալի վերայ կ՚դնվի։ Ինչուոր՝ բնաւ
ծածուկ բան չ՚կայ՝ որ չ՚յայտնվի․ եւ թաքուն
23 բան չէլաւ․ որ դէպի յայտնութիւն չ՚գայ։ Թէ
որ մինը լսելոյ ականջ ունենայ՝ թո՛ղ լսէ։

24 Եւ նորանց ասաց․ Տեսէ՛ք թէ ի՛նչ էք լսում,
եւ կաւելանայ ձեզ նա որ լսումէք․ ինչ չափով
25 որ չափէք՝ նորանով էլ ձեզ կ՚չափվի։ Ո՛վ որ ու-
նի՝ նորան կ՚տվվի․ եւ ո՛վ որ չունի, նորանից նա
էլ որ ունի՝ վերկառնվի։

26 Եւ ասումէր․ Աստուծոյ արքայութիւնն այսպէս
է․ ինչպէս թէ մին մարդ սերմ ձգէ հողի մէջ,
27 Եւ գիշեր ու ցերեկ քնանայ եւ վերկենայ․ եւ
այն սերմը բուսնէ եւ աճի՝ եւ ինքը չ՚գիտում։
28 Ինչուոր՝ երկիրն ինքն իրեն է պտուղ բերում՝ ա-
ռաջ խոտը՝ եւ յետոյ հասկը՝ եւ նորանից ետեւ
29 լցված ցորենն իրեն հասկին մէջ։ Բայց երբոր պը-
տուղը կ՚տայ՝ շուտով մանգաղ կուղարկվի․ ին-
չուոր հունձքը հասել է։

30 Եւ ասումէր․ Աստուծոյ արքայութիւնն ո՞ւմ
նմանեցնենք․ կամ ի՞նչ առակով յայտնենք նո-
31 րան օրինակը։ Ինչպէս մանանեխի հատն՝ որ եր-
բոր հողի մէջ սերմվի, ամեն սերմունքերցն աւելի
32 փոքր է՝ որ երկրի վերայ են, Եւ երբոր սերմվի,
բուսնումէ եւ ամեն բանջարերցն աւելի մեծ է լի-
նում, եւ մեծ մեծ ճղեր է դուրս բերում, մինչեւ
որ բաւական է լինում՝ որ երկնքի թռչունները
նորա շուքին տակ բնակվին։

33 Եւ այնպէսի առակներով էր խօսում բանը նո-
րանց հետ, ինչպէս որ նորանք կարող էին լսել։
34 Եւ առանց առակի ո՛չ ինչ չէր խօսում նորանց
հետ, միայն թէ առանձին իրեն աշակերտներին
35 ամեն բան մեկնումէր։ Եւ այն օրն՝ երբոր իրիկ-
վան դէմ էր լինում, նորանց ասաց․ Եկէ՛ք անց-
36 նինք այն կողմը։ Ժողովուրդը թողին, եւ նորան

միասին նաւումն առին, եւ ուրիշ նաւերն էլ՝ որ
37 նորա հետ էին ։ Եւ քամու մեծ մրրիկ էր լինում,
եւ ալիքները նաւին մէջն էր թափում, մինչեւ որ
38 համարեա՛ թէ լցվումէր ։ Եւ ինքը նաւի յետին
կողմումը բարձի վերայ ննջումէր . Նորան զարթնաց-
նումէին եւ ասում. Վարդապե՛տ՝ դու հոգս չու-
39 նի՞ս, որ մենք կորչումենք այստեղ. Եւ նա զարթ-
նացաւ՝ եւ քամուն սաստեց՝ եւ ծովին ասաց. Դա-
դարե՛ պապանձվի՛ր. եւ քամին դադարեց, եւ մեծ
40 խաղաղութիւն էլաւ ։ Եւ նորանց ասաց. Ինչո՞ւ
այդպէս վախկոտ էք. դեռ հաւատք չունի՞ք. եւ
մեծ վախով վախեցան, եւ միմեանց ասացին.
Սա ո՞վ պիտի լինի՝ որ քամին եւ ծովն էլ հնա-
զանդվումեն սորան ։

ԳԼ. Ե

Դիւահարը . տեռատես կինը . Յայրոսի աղջիկը ։

1 Եւ եկաւ ծովի այն կողմը՝ Գերգեսացոց աշխարհ-
2 քը ։ Եւ նորա նաւից դուրս գալոյ ժամանակը,
նորան մին մարդ պատահեց գերեզմաններից՝ որ
3 նորան պիղծ դեւ բռնել էր. Որ նորա բնակու-
թիւնը գերեզմաններումն էր. եւ ո՛չ ով շղթանե-
4 րով էլ չէր կարող կապել նորան, ինչուոր՝ շատ
անգամ ոտաց կապերով եւ շղթաներով կապում
էին՝ եւ նա շղթաները կտրումէր, եւ ոտաց կա-
պերը ջարդումէր. եւ ո՛չ ով կարող չէր բռնել
5 նորան, ինչուոր՝ միշտ գիշեր ու ցերեկ գերեզման-
ներումն ու սարերումն աղաղակումէր. եւ ինքն ի-

6 րեն ծեծումէր քարերով ։ Երբոր հեռուանց Յիսու-
սին տեսաւ՝ վազեց գնաց եւ նորան երկրպագու-
7 թիւն արաւ, Մեծ ձայնով աղաղակեց՝ եւ ա-
սաց. Քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ՝ Յիսո՛ւս բարձ-
րեալ Աստուծոյ Որդի. Աստուծով երդում եմ
8 տալիս քեզ. մի՛ տանջեր ինձ ։ (Պատճառնոր՝ նո-
րան ասումէր՝ Ո՛վ պիղծ դեւ՝ այդ մարդուցդ
9 դո՛ւրս եկ ։) Եւ հարցնումէր նորան՝ թէ քո անու-
նըդ ի՞նչ է. եւ նորան ասումէր. Իմ անունս Լե-
10 գէոն է, ինչուոր մենք շատ ենք ։ Եւ նորան շատ
աղաչումէին, որ իրենց այն աշխարհքից դուրս
11 չուղարկէ ։ Եւ այնտեղ սարի մօտ խոզերի մին մեծ
12 երամակ կար՝ որ արածումէր ։ Ամեն դեւերը նո-
րան աղաչեցին եւ ասացին, Ուղարկէ՛ մեզ այն
13 խոզերին մէջ՝ որ նորանց մէջը մտնենք ։ Եւ հրաման
տուաւ նորանց. եւ պիղծ դեւերն երբոր դուրս ե-
կին, խոզերին մէջը մտին, եւ երամակն այն բարձր
տեղից դէպի ծովը վազեց. երկու հազարի չափ
14 էին, եւ ծովին մէջումը խեղդվումէին ։ Եւ խոզ-
արածները փախան՝ եւ քաղաքումն ու արտերումը
պատմեցին. եւ դուրս եկին որ տեսնեն թէ ինչ է
15 այն՝ որ գործվեցաւ ։ Յիսուսի մօտ եկին, եւ դի-
ւահարին տեսին որ նստած էր հագած եւ խելքը
գլուխն եկած՝ նա՝ որ լեգէոնն ունէր. եւ վախե-
16 ցան ։ Եւ նորանց պատմեցին՝ նորանք որ տեսել
էին, թէ ինչ էլաւ այն դիւահարին, եւ ինչ՝ խո-
17 զերի համար ։ Եւ սկսեցին աղաչել նորան՝ որ ի-
18 րենց երկրից դուրս գնայ ։ Եւ երբոր նա նաւը մը-
տաւ՝ դիւահարն աղաչումէր նորան՝ որ նորա հետ
19 լինի ։ Եւ Յիսուս թոյլ չ'տուաւ նորան, բայց նո-

- րան ասաց. Գնա՛ քո տունդ՝ քո ընտանեացդ
մօտ, եւ նորանց պատմէ՛ ամեն ինչ որ Տէրն արաւ
20 քեզ՝ եւ ողորմեցաւ քեզ։ Եւ գնաց եւ սկսեց Դե-
կապօլիսին մէջ քարոզել ինչ որ Յիսուս իրեն ա-
րաւ, եւ ամենքը զարմանումէին։
21 Եւ երբոր Յիսուս նորէն այն կողմն անցաւ՝ շատ
ժողովուրդ նորա մօտ ժողովվեցան, եւ նա ծովի
22 եզրումն էր։ Եւ ահա՛ ժողովրդապետներիցը մինը
գալիս էր՝ որ նորա անունը Յայրոս էր. եւ երբոր
23 նորան տեսաւ, ընկաւ նորա ոտները։ Նորան շատ
աղաչումէր եւ ասում՝ թէ իրեն աղջիկը մեռնելու
մօտ է, որ գայ ձեռքը նորան վերայ դնէ՝ որ ող-
24 ջանայ եւ ապրի։ Եւ նորան հետ գնաց. եւ շատ
ժողովուրդ էլ նորա ետեւէն գնումէին, եւ նորան
նեղացնումէին։
25 Եւ մին կին կար արիւն թափելու հիւանդու-
26 թեան մէջ տասներկու տարի։ Եւ շատ բժիշկնե-
րիցը շատ չարչարանք էր քաշել, եւ իրեն ամեն
ապրանքը ծախել՝ եւ մին օգուտ չէր առացել,
27 բայց ցաւն էլ աւելի սաստկացել էր։ Երբոր Յի-
սուսի համար լսեց՝ ամբոխին մէջ ետեւիցն եկաւ՝
28 եւ ձեռքը դպցրուց նորան շորին. (Ինչուոր՝ իրեն
մտքումը մտածումէր, թէ որ մինակ նորա շորերին
29 մօտենամ, կ'փրկվիմ։) Եւ շուտով նորա արիւնի
աղբիւրը ցամաքեցաւ. եւ իրեն մարմնումն իմա-
30 ցաւ՝ թէ այն տանջանքիցը բժշկվեցաւ։ Եւ շու-
տով իսկ այն ժամումը Յիսուս իրեն անձնումն ի-
մացաւ այն զօրութիւնն՝ որ իրենից դուրս գնաց,
դարձաւ դէպի ամբոխն ու ասաց. Ո՞վ դիպաւ իմ
31 շորերիս։ Եւ աշակերտներն ասացին նորան. Տես-

նումես որ այդ ամբոխդ նեղացնումէ քեզ, եւ ա-
32 սումես՝ թէ Ո՞վ իմ շորերիս դիպաւ։ Եւ չորս
կողմը նայումէր՝ որ տեսնէ՝ թէ նա ո՞վ արաւ։
33 Եւ կինը վախենալով եւ դողալով այն բանին հա-
մար՝ որ ծածուկ արաւ՝ ինչուոր՝ գիտումէր, ինչ
էլաւ իրեն. եկաւ ընկաւ նորան առաջին՝ եւ ա-
34 մեն բաները ճշմարտութենով ասաց։ Եւ Յիսուս
նորան ասաց. Դո՛ւստր՝ քո հաւատքդ ողջացրուց
քեզ. գնա՛ խաղաղութենով, եւ քո տանջանքիցդ
ո՛ղջ լինիս։
35 Դեռ քանի որ նա այն բանը խօսումէր, ժողո-
վրդապետի տանիցը մին քանիսն եկին եւ ասա-
ցին՝ թէ քո աղջիկդ մեռաւ. էլ ինչո՞ւ ես աշ-
36 խատացնում վարդապետիդ։ Եւ Յիսուս երբոր
ասած բանը լսեց՝ ժողովրդապետին ասաց. Մի՛
37 վախենար, բայց միայն հաւատա՛։ Եւ բնաւ մին
մարդ չ'թողեց՝ որ իրեն հետ գնայ, բայց միայն
Պետրոսին եւ Յակոբին եւ Յակոբի եղբայր Յօհան-
38 նէսին։ Ժողովրդապետի տունն եկաւ. այնտեղ
մեծ ամբոխ տեսաւ եւ լացողներ, եւ շատ աղա-
39 ղակ։ Եւ ներս մտաւ՝ եւ նորանց ասաց. Ինչո՞ւ
էք շփոթված եւ լաց էք լինում՝ երեխան մեռած
40 չէ՛, բայց քնած է։ Եւ ծաղր էին անում նորան.
եւ նա ամենը դուրս հանեց, եւ երեխայի հօրն ու
մօրը եւ նորանց որ նորան հետ էին՝ իրեն հետ ա-
41 ռաւ, մտաւ այնտեղն՝ որ երեխան դրած էր։ Եւ
երեխայի ձեռքիցը բռնելով՝ նորան ասաց Տա՛լի-
թա կո՛ւմի, որ կ'թարգմանվի. Ո՛վ աղջիկ՝ (քեզ
42 եմ ասում՝) վե՛ր կաց։ Եւ շուտով վերկացաւ
աղջիկը եւ գնումէր, ինչու որ տասներկու տարե-

կանի չափ էր. եւ մեծ զարմանքով զարմացան։
43 Եւ նորանց շատ պատուիրեց՝ որ ընաւ մին մարդ-
չիմանայ այն բանը. եւ ասաց՝ որ նորան բան տան
ուտելու։

ԳԼ. Զ

Քրիստոս անարգվում է. առաքեալներին ուղարկում է.
Յօհաննէսին գլխատումը. ժողովրդին կերակրելը.
ծովին վերայ գնալը։

1 Եւ այն տեղից դուրս գնաց, եկաւ իրեն գա-
ւառը. եւ նորա աշակերտները նորան ետեւէն գը-
2 նումէին։ Եւ էլաւ որ շաբաթ օրը սկսեց ժողովա-
րանին մէջ սովորցնել. եւ շատ մարդիկք երբոր լը-
սումէին՝ զարմանումէին նորա վարդապետութեան
վերայ եւ ասում. Սորան ո՞րտեղից է այս բանս,
կամ սա ի՞նչ իմաստութիւն է՝ որ տված է սո-
րան՝ որ այսպիսի զօրութիւններ են լինում սորա
3 ձեռքովը։ Չէ՞ որ սա հիւսան տղան է՝ եւ Մա-
րիամայ որդին, Յակոբի եւ Յօսէի եւ Յուդայի եւ
Սիմօնի եղբայրը. եւ չէ՞ որ դորա քոյրերը այս-
տեղ մեզ մօտ են. եւ նորա վերայ գայթակղվում
4 էին։ Եւ Յիսուս նորանց ասաց. Մարգարէ անարգ-
ված չէ՝ բայց միայն իրեն գաւառին եւ իրեն
5 տանը մէջ։ Եւ չէր կարօղանում այնտեղ ընաւ
մին զօրութիւն էլ անել բայց մին քիչ հիւանդ-
ների վերայ ձեռքը դնում եւ բժշկումէր նորանց։
6 Եւ նորանց անհաւատութեան համար զարմանում
էր։ Եւ գաւառների չորս կողմերը ման էր գալիս,
եւ սովորցնումէր։

7 Եւ տասներկուսին իրեն մօտ կանչեց, եւ սկը-
սեց նորանց երկու երկու ուղարկել՝ եւ նորանց իշ-
8 խանութիւն էր տալիս պիղծ դեւերին վերայ։ Եւ
նորանց պատուիրեց՝ որ ճանապարհի համար ընաւ
մին բան վեր չառնեն, բայց միայն մին գաւազան
ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ պղինձէ փող գօտինե-
9 րումը։ Բայց հողաթափ հագնին՝ եւ երկու վերար-
10 կու չի՛ հագնիք՝ ասաց։ Եւ նորանց ասումէր. Ո՛ր
տուն որ մտնէք, այնտեղ մնացէ՛ք՝ մինչեւ որ այն
11 տեղից դուրս գնաք. Եւ նորանք որ ձեզ չ՛ընդու-
նին, եւ ձեզ ականջ չ՛դնեն, երբոր այն տեղից
դուրս կ՛գնաք՝ ձեր ոտների փոշին թա՛փ տուէք՝
որ նորանց վկայութիւն լինի։
12 Եւ դուրս ելան, քարոզումէին՝ որ ապաշխարեն։
13 Եւ շատ դեւեր էին հանում, եւ շատ հիւանդներ
իւղով օծումէին՝ եւ նորանց բժշկում։
14 Եւ Հերօդէս թագաւորը լսեց, ինչու որ՝ նորա
անունը յայտնի էլաւ. եւ ասումէր՝ թէ Յօհան-
նէս մկրտիչը մեռելների միջից յարութիւն ա-
ռա՛ւ, եւ նորա համար զօրութիւններ են լինում
15 նորանով։ Ուրիշներն ասումէին՝ թէ Եղիան է. եւ
ուրիշները թէ Մարգարէ է, կամ թէ մարգարէ-
16 ներից մինին պէս։ Երբոր Հերօդէս լսեց, ասաց.
Սա Յօհաննէսն է՝ որ նորա գլուխը ես կտրեցի. նա
մեռելների միջից յարութիւն առաւ։
17 Ինչու որ՝ ինքն Հերօդէս ուղարկեց, Յօհաննէսին
բռնեց՝ եւ նորան կապեց՝ եւ դրաւ բանտի մէջ՝
Հերօդիայի համար, որ իրեն եղբօր Փիլիպպոսի կի-
նըն էր, պատճառով՝ նա իրեն կին առաւ նորան։
18 Ինչու որ՝ Յօհաննէս Հերօդէսին ասումէր՝ թէ Օ-

19 րենք չէ՛ քեզ՝ որ քո եղբօր կինը ունենաս ։ Եւ
Հերոդիան նորա դէմ ոխ էր պահում, եւ ուզում
20 էր սպանել նորան՝ եւ չէր կարողանում. Պատ-
ճառնոր՝ Հերոդէսն Յօհաննէսիցը վախումէր. ին-
չուոր՝ նորան արդար եւ սուրբ մարդ էր ճանա-
չում. եւ նորան մտիկ էր տալիս. եւ նորանից շատ
բան լսելով անումէր, եւ քաղցրութենով ականջ
21 էր դնում նորան ։ Երբոր մին յարմար օր պատա-
հեց, որ ժամանակ Հերոդէս իրեն ծննդեան օրն
ընթրիք էր տալիս իրեն իշխաններին եւ զօրապետ-
22 ներին եւ Գալիլեացոց մեծամեծներին ։ Եւ Հերո-
դիայի աղջիկն որ մտաւ՝ եւ պար եկաւ, Հերոդէ-
սին եւ նորա հետ նստածներին հաճոյ էլաւ. Թա-
գաւորն ասաց աղջկանը. Խնդրէ՛ ինձանից ինչ որ
23 կամենաս, եւ կ'տամ քեզ ։ Եւ շատ անգամ եր-
դւում արաւ նորան՝ թէ, ինչ բան որ դու խնդ-
րես ինձանից, կ'տամ քեզ, մինչեւ իմ թագա-
24 ւորութեանս կէսը ։ Նա դուրս գնաց եւ իրեն մօ-
րըն ասաց՝ ի՞նչ խնդրեմ. եւ նա ասաց, Յօհան-
25 նէս մկրտչին գլուխը ։ Եւ շուտով նորէն մտաւ
թագաւորին մօտ՝ եւ ասաց. Կամենումեմ որ հի-
միկ շուտով սկուտեղի վերայ տաս ինձ Յօհաննէս
26 մկրտչին գլուխը ։ Եւ թագաւորը շատ տրտմեցաւ.
բայց իրեն երդմունքին եւ կանչված մարդկանցը
27 համար չ'կամեցաւ անարգել նորան ։ Եւ թագա-
ւորը շուտով դահիճ ուղարկեց եւ հրամայեց, որ
նորան գլուխը բերէ. եւ գնաց նորան գլուխը կըտ-
28 րեց բանտին մէջ ։ Եւ նորա գլուխն սկուտեղով
բերաւ՝ եւ աղջկանը տուաւ. եւ աղջիկը տարաւ
29 տուաւ իրեն մօրը ։ Երբոր նորա աշակերտները լը-

սեցին, եկին նորա մարմինը վերաւին՝ եւ գերեզ-
մանի մէջ դրին ։
30 Առաքեալները Յիսուսի մօտ ժողովվեցան, եւ
նորան պատմեցին ամեն ինչ որ արին եւ ինչ որ
31 սովորցրին ։ Եւ Յիսուս նորանց ասաց. Դուք ա-
ռանձին անապատ տեղ եկէ՛ք, եւ մին քիչ հան-
գիստ առէք. պատճառնոր՝ շատ մարդիք էին՝ որ
գնում եւ գալիս էին, եւ հաց ուտելոյ ժամանակ
32 էլ չունէին ։ Եւ նաւով առանձին անապատ տեղ
33 գնացին ։ Եւ տեսին նորանց որ գնումէին՝ եւ շատ
մարդիկ իմացան. եւ ամեն քաղաքներիցն իրար
վերայ դիզված ոտով այնտեղ էին վազում՝ եւ
34 նորանց մօտենումէին ։ Եւ դուրս եկաւ, շատ ամ-
բոխ տեսաւ, եւ նորանց վերայ խղճաց. ինչուոր
ոչխարներին պէս էին, որ հովիւ չունէին. եւ սկը-
սեց նորանց շատ բան սովորցնել ։
35 Եւ երբոր շատ ժամանակ անցաւ՝ աշակերտները
մօտ եկին եւ ասացին. Այս տեղս անապատ է.
36 դեռ քանի որ ցերեկ է, թո՛ղ արա այդ ժողո-
վուրդներդ որ չորս կողմով էլած շէներն ու գիւ-
ղերը գնան՝ իրենց համար գնեն ինչ որ ուտելու
լինին. պատճառնոր՝ այստեղ ուտելոյ բան չու-
37 նին ։ Նա պատասխան տուաւ եւ նորանց ասաց.
Դո՛ւք տուէք դորանց ուտել. Նորան ասացին՝
Գնանք երկու հարիւր դահեկանի հաց գնենք, եւ
38 դորանց տանք՝ որ ուտեն ։ Նորանց ասաց. Քանի՞
հատ հաց ունիք՝ գնացէ՛ք տեսէ՛ք. երբ որ գի-
տացին, նորան ասացին. Հինգ՝ եւ երկու ձուկն ։
39 Եւ հրամայեց նորանց՝ որ դաս դաս կանանչ խո-
40 տի վերայ նստին ։ Եւ դաս դաս նստեցին մինտեղ

41 հարիւր՝ և մին տեղ յիսուն ։ Եւ այն հինգ հա-
ցըն ու երկու ձուկն առաւ , դէպի երկինքը նա-
յեց՝ օրհնեց , այն հացերը կոտրեց , և աշա-
կերտներին տուաւ՝ որ ձգեն նորանց առաջը ․ և
42 այն երկու ձուկը բաժանեց ամենին ։ Կերին և
43 կշտացան , Եւ մնացած կտորները տասներկու քը-
44 թոց լիքը վեր առին , և այն ձկներիցն էլ ։ Եւ
նորանք որ կերին՝ հինգ հազարի չափ մարդիկ էին ։
45 Եւ շուտով աշակերտները ստիպեց , որ նաւ
մտնեն , և իրենից առաջ այն կողմը Բեթսայիդա
գնան՝ մինչև որ ինքը ժողովուրդներն արձակէ ։
46 Եւ նորանցից բաժանուեցաւ , և վեր ելաւ սարն՝
47 որ աղօթք անէ ։ Եւ երբոր իրիկուն էլաւ՝ նաւը
48 ծովին մէջն էր , և ինքը ցամաքումը ։ Եւ նորանց
տեսաւ՝ որ նաւ վարելոյ ժամանակն ալէկոծվում
էին ․ ինչու որ քամին ներհակ էր նորանց ․ և գի-
շերի չորս բաժնի ժամանակը ծովի վերայ գնալով
նորանց մօտ եկաւ, և ուզումէր որ նորանցից անց-
49 նէ ։ Նորանք երբոր տեսին՝ որ ծովին վերայ գը-
նումէր՝ կարծեցին թէ աչքի երևոյթ բան լինի ,
50 և ձայնով աղաղակ բարձրացրին ։ ինչուոր՝ ամեն-
քը նորան տեսին՝ և շփոթվեցան ․ և Նա շուտով
նորանց հետ խօսեց և ասաց ․ Սրտապի՛նդ կա-
51 ցէք , ես եմ՝ մի՛ վախենաք ։ Եւ վեր ելաւ նաւը
նորանց մօտ՝ և քամին հանդարտեց ․ և իրենց
մտքերո՛ւմն էլ աւելի յիմարված էին , և շատ
52 զարմանումէին ․ ինչուոր՝ այն հացին վերայ էլ
չիմացան ․ պատճառնոր՝ նորանց սիրտը թմրած էր ։
53 Եւ երբոր այն կողմն անցան , Գեննեսարէթի եր-
54 կիրն եկին ։ Եւ երբոր այն նաւիցը դուրս եկին ,

այնտեղի մարդիկը շուտով ճանաչեցին նորան ։
55 Եւ այս կողմն այն կողմն ամեն գաւառը վազելով
սկսեցին հիւանդները մահիճներով բերել՝ որտեղ
56 որ լսումէին՝ թէ այնտեղ է ։ Եւ որտեղ որ մըտ-
նումէր գիւղեր կամ քաղաքներ կամ շէներ՝ ցա-
ւագարները փողոցներին մէջ էին դնում , և նո-
րան աղաչում՝ որ լինի թէ նորա շորերի ծայրին
մօտենան ․ և ամեն նորանք որ մօտեցան՝ փրկվե-
ցան ։

ԳԼ. Է

Փարիսեցոց կեղծաւորութիւնը ․ հեթանոս կնկան աղջիկը ․ խուլ ու համրը ։

1 Եւ ժողովվեցան նորա մօտ փարիսեցիներն ու կար-
դացողներիցը մին քանիսն՝ որ Երուսաղէմից էին
2 եկել ։ Եւ երբոր տեսին՝ որ նորա աշակերտներիցը
մին քանիսը՝ խառնակ ձեռքով , այսինքն՝ առանց
3 լուանալոյ հաց էին ուտում , բամբասեցին ։ Պատ-
ճառնոր՝ փարիսեցիներն ու ամեն Հրէաները՝ թէոր
մին լաւ չ՛լուանան ձեռները՝ հաց չեն ուտում ․
4 ինչուոր ծերերի աւանդութիւնն են պահում ։ Եւ
փողոցիցն որ գալիս են՝ եթէ առաջ չ՛լուացվին ,
չեն ուտում ․ և ուրիշ էլ շատ բան կայ՝ որ ըն-
դունեցին պահել ․ բաժակների և փարչերի և
պղնձէ ամանների և մահիճների լուացմունքներ ։
5 Յետոյ փարիսեցիներն ու կարդացողները հարցրին
նորան՝ թէ , ինչո՞ւ քո աշակերտներդ ծերերի ա-
ւանդութեան պէս չեն գնում ․ այլ խառնակ ձեռ-

6 քով հաց են ուտում։ Նա պատասխան տուաւ
եւ նորանց ասաց՝ թէ, Եսային լա՛ւ մարգարէա-
ցաւ ձեզ կեղծաւորներիդ վերայ՝ ինչպէս որ ա-
սաց. Այս ժողովուրդս պռօշներովս է պատուում
ինձ, եւ նորանց սրտերն ինձանից հեռացած ջոկ-
7 ված են, Զուր տեղն են պաշտում ինձ. մարդ-
կանցից պատուիրած վարդապետութիւններն են
8 սովրցնում։ Աստուծոյ պատուիրանքը թողած՝
մարդկանց աւանդութիւնն էք պահում, փարչերի
եւ ամանների լուացմունքներ՝ եւ սորանց նման էլ
9 շատ բաներ էք անում։ Եւ նորանց ասաց. Լա՛ւ
էք անարգում Աստուծոյ պատուիրանքն, որ ձեր
10 աւանդութիւնը պինտ պահէք. Ինչու որ՝ Մովսէս
ասաց. Քո հօրդ եւ մօրդ պատուէ՛. եւ նա որ հօ-
րիցը կամ մօրիցը չարախօսութիւն կանէ, թո՛ղ
11 մահով մեռնի։ Եւ դուք ասումէք՝ թէ որ մինը
հօրը կամ մօրն ասէ թէ, Կորբան, այսինքն պա-
12 տարագ է նա՝ որ ինձանից պէտք է շահվիս։ Եւ էլ
թողլ չէ՛ք տալիս նորան որ մին բան անէ հօրը
13 կամ մօրը։ Եւ Աստուծոյ բանն անարգումէք ձեր
աւանդութենովս որ աւանդեցիք. եւ ուրիշ էլ
շատ բաներ՝ որ սորան նման է՝ անումէք։
14 Եւ ամեն ժողովուրդն իրեն մօտ կանչեց, եւ նո-
րանց ասաց։ Ամենքդ ինձ լսեցէ՛ք՝ եւ մտքնե՛րդ
15 առէք։ Բնաւ մին բան չ'կայ որ դրսիցը մարդոյ
մէջ մտած՝ կարօղանայ պղծել նորան. այլ որ նո-
րանից դուրս է գալիս՝ նա է՝ որ մարդոյն պղծու-
16 մէ։ Ով որ լսելոյ ականջ ունի՝ թո՛ղ լսէ։
17 Եւ երբոր այն ամբոխիցը տուն եկաւ՝ աշակերտ-
18 ները հարցրին նորան այն առակին համար։ Եւ նո-

րանց ասաց. Այդպէս դո՞ւք էլ անխելք էք.
չէ՞ք իմանում՝ թէ ամեն ինչ որ դրսիցն է մըտ-
նում մարդոյն մէջ՝ չի՛ կարօղ պղծել նորան։
19 Պատճառն որ՝ ո՛չ թէ նորա սիրտն է մտնում,
բայց փորն՝ եւ դուրս է գալիս, եւ ամեն կերա-
20 կուրները մաքրումէ։ Եւ ասումէր՝ ինչ որ մար-
դուցը դուրս է գալիս՝ նա՛ է պղծում մարդոյն.
21 Ինչու որ ներսից՝ մարդկանց սրտից են դուրս գա-
լիս՝ չար խորհուրդներ, շնութիւններ, պոռնկու-
22 թիւններ, Գողութիւններ, սպանութիւններ, ա-
գահութիւններ, չարութիւններ, Նենգութիւն-
ներ, պիղծ ցանկութիւններ, նախանձութիւն,
հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգա-
23 մութիւն։ Այս ամեն չար բաներս ներսից են
դուրս գալիս, եւ մարդոյն պղծում են։
24 Եւ այնտեղից վերկացաւ՝ եւ եկաւ Տիւրոսի եւ
Սիդօնի կողմերը. եւ տուն որ մտաւ՝ չէր ուզում
որ մինին յայտնվի, եւ չ'կարօղացաւ ծածկվիլ։
25 Մին կին նորան համար լսեց՝ որ նորան աղջիկը
պիղծ դեւից չարչարված էր. եկաւ եւ նորա ա-
26 ռաջին ընկաւ։ Եւ այն կինը հեթանոս էր՝ փիւ-
նիկեցի Ասորոց ազգիցը. եւ աղաչումէր նորան՝ որ
27 դեւն իրեն աղջկանիցը դուրս հանէ։ Եւ Յիսուս
նորան ասաց. Թո՛ղ՝ որ առաջ երեխաները կշտա-
նան. ինչու որ՝ լաւ չէ՛՝ երեխաների հացն առնել
23 եւ շներին ձգել։ Նա պատասխան տուաւ եւ ա-
սաց. Տէ՛ր՝ շներն էլ երեխաների փշրանքներից են
29 կերակրվում։ Եւ նորան ասաց. Այդ խօսքիդ հա-
մար գնա՛, դեւը դուրս եկաւ քո աղջկանիցդ։
30 Գնաց իրեն տունը, եւ գտաւ որ դեւը դուրս էր

եկել, եւ աղջիկն՝ որ մահճի վերայ պառկած էր։
31 Եւ նորէն Տիւրոսի եւ Սիդօնի կողմերից դուրս
գնաց, եւ Գալիլեացոց ծովի եզրն եկաւ՝ Դեկա-
32 պօլիսի միջի կողմերը։ Եւ մին խուլ եւ համր մարդ
բերին Նորա առաջն. եւ աղաչումէին որ ձեռը
33 դնէ Նորա վերայ։ Եւ Նորան ամբոխից մին կողմ
տարաւ, իրեն մատները Նորան ականջներին մէջ
տարաւ՝ եւ թքեց այնտեղ, եւ Նորա լեզուիցը
34 բռնեց. Երկինքը նայեց, հոգոց հանեց եւ ասաց.
35 Եփփաթա՝ որ է ասել, բացվի՛ր։ Եւ շուտով իսկ
այն ժամումը Նորա ականջները բացվան, եւ լե-
զուի կապանքներն արձակվեցան. եւ շիտակ խօ-
36 սումէր։ Եւ Նորանց պատուիրե՛ց՝ որ ընաւ մինին
չասեն. եւ որչափ Նա պատուիրումէր Նորանց, Նո-
37 րանք էլ աւելի քարոզումէին. Եւ չափիցն էլ ա-
ւելի զարմանումէին եւ ասում. Սա ամեն բան
լա՛ւ գործեց. ինչուոր՝ խուլերին լսել է տալիս՝
եւ համրներին խօսել։

ԳԼ. Ը

Եօթը հացը. փարիսեցիք նշան են ուզում. Նորանց խմորը. կոյրին բժշկվիլը. Քրիստոսի չարչարանաց ու յարութեան գուշակութիւնը։

1 Այն օրերը դարձեալ շատ ժողովուրդ կար, եւ
բան չունէին ուտելոյ. իրեն աշակերտները կան-
2 չեց՝ եւ Նորանց ասաց. Խեղճս գալիս է այդ ժո-
ղովրդիդ վերայ. ինչուոր՝ հիմիկ երեք օր է՝ որ ինձ
3 մօտ են, եւ բան չունին որ ուտեն։ Եւ թէ որ
Նորանց սոված արձակեմ դէպի իրենց տունը, սո-

վածութենից կ'թուլանան ճանապարհումը. ին-
չուոր՝ դորանցից կան. որ հեռու տեղից են եկել։
4 Նորա աշակերտները պատասխան տուին Նորան.
Ո՞րտեղից կարող ես հացով կշտացնել դորանց
5 այս անապատ տեղումս։ Եւ Նորանց հարցնումէր՝
թէ քանի՞ հատ հաց ունիք. եւ Նորանք ասացին՝
6 Եօթն։ Եւ ժողովուրդին հրամայեց որ երկրի վե-
րայ նստին. եւ այն եօթն հացն առաւ՝ գոհա-
ցաւ, կտրեց, եւ աշակերտներին էր տալիս՝ որ
7 ձգեն. եւ ձգեցին ժողովրդին առաջը։ Եւ մին
քիչ ձուկն ունէին եւ Նա է՛լ օրհնեց. եւ հրա-
8 մայեց որ ձգեն, կերին եւ կշտացան. եւ աւել-
9 ցած կտորներն եօթը քթոց վերառին։ Եւ Նորանք
որ կերին՝ չորս հազարի չափ էին. եւ Նորանց ար-
10 ձակեց։ Եւ շուտով այն ժամին աշակերտներին
հետ նաւ մտաւ՝ եւ Դալմանութեայի կողմերն ե-
կաւ։

11 Փարիսեցիներն եկին՝ եւ սկսեցին Նորա հետ հա-
կառակիլ. եւ Նորան փորձելով՝ Նորանից մին Նը-
12 շան էին խնդրում երկնքից։ Եւ Նա շատ արտա-
մեցաւ իրեն սրտումն՝ եւ ասաց. Ի՞նչ է. որ այս
ազգս նշան է խնդրում. Ճշմարիտ ասումեմ ձեզ,
13 թէ որ այս ազգիս նշան տվվի։ Նորանց թողեց.
նորէն նաւ մտաւ՝ եւ այն կողմը գնաց։

14 Եւ մոռացան իրենց հետ հաց վերառնել՝ բայց
մինակ մին հաց ունէին իրենց հետ նաւին մէջ։
15 Եւ Նորանց պատուիրումէր եւ ասում. Զգո՛յշ կա-
ցէք այն փարիսեցիների խմորից եւ Հերոդէսեան-
16 ների խմորից։ Եւ իրար հետ միտք էին անում եւ
17 ասում, թէ Նորահամար որ հաց չունինք։ Յիսուս

իմացաւ եւ նորանց ասաց՝ թէ ի՞նչ էք միտք ա-
նում ձեր սրտերումդ ո՛վ թերահաւատներ, թէ
հաց չունիք. դեռ չէ՞ք իմանում եւ չէ՞ք յիշում.
18 թմրութիւնը բռնել է ձեր սրտերը։ Աչք ունիք՝
եւ չէք տեսնում. ականջ ունիք՝ եւ չէք լսում. եւ
19 դեռ չէք իմանում, եւ չէք յիշում, Որ ժամանակ
այն հինգ հացը հինգ հազարին համար կոտրեցի, քա-
նի՞ քթոց լիքը վեր առիք նորա կտորները. եւ նո-
20 րան ասացին՝ Տասներկու։ Եւ որ ժամանակ եօթը
հացը չորս հազարին համար, քանի՞ քթոց լիքը
վեր առիք նորա կտորները. եւ նորանք ասացին,
21 Եօթն։ Եւ նորանց ասաց. Ապա ի՞նչպէս չէք ի-
մանում։

22 Բեթսայիդա եկին, եւ նորա առաջը մին կոյր
բերին, եւ նորան աղաչումէին՝ որ մօտենայ նո-
23 րան։ Եւ կոյրին ձեռքիցը բռնեց՝ գիւղիցը դուրս
հանեց. նորա աչքերին մէջ թքեց, եւ ձեռքը դը-
րաւ նորան վերայ. եւ նորան հարցնումէր՝ թէ մին
24 բան տեսնո՞ւմէ։ Բացվաւ՝ եւ ասումէր. Մարդիք
25 տեսնումեմ՝ որ ծառերի պէս ման են գալիս. Նո-
րէն ձեռքերը նորան աչքերին վերայ դրաւ՝ բաց
արաւ, եւ տեսնումէր. ողջացաւ՝ եւ ամեն բան
26 համարձակ տեսնումէր։ Նորան ուղարկեց իրեն
տունը՝ եւ ասաց. գիւղը չի՛ մտնես, բայց քո
տունդ գնա՛. եւ երբոր գիւղը մտնես՝ գեղին մէջ
մինին չասես.

27 Եւ Յիսուս աշակերտներին հետ դուրս գնաց
Փիլիպպեայ Կեսարիայի գիւղերը. եւ ճանապար-
հումն աշակերտներին հարցնումէր եւ ասում՝ Մար-
28 դիքն ինձ համար ո՞վ են ասում՝ որ լինիմ։ Նո-

րանք պատասխան տուին՝ եւ ասացին. Թէ Յո-
հաննէս մկրտիչը, եւ ուրիշները Թէ Եղիան, եւ ու-
29 րիշները Թէ Մարգարէներիցը մինը։ Նորանց ասաց.
Ապա դուք ո՞վ էք ասում ինձ համար՝ որ լինիմ.
Պետրոս պատասխան տուաւ, եւ նորան ասաց.
30 Դու Քրիստոսն ես։ Եւ նորանց սաստեց՝ որ բնաւ
մինին բան չասեն իրեն համար։

31 Եւ սկսեց սովորցնել նորանց, թէ պէտք է՝ որ
Որդին մարդոյ շատ չարչարանք քաշէ, եւ անարգ-
վի ծերերիցն ու քահանայապետներիցը եւ կար-
դացողներիցը, եւ մեռնի՝ եւ երեք օրումը յարու-
32 թիւն առնէ։ Եւ համարձակ խօսեց բանը. եւ
Պետրոս նորան մին կողմ քաշեց՝ եւ սկսեց սաս-
33 տել նորան։ Եւ նա դարձաւ, աշակերտներին տե-
սաւ՝ Պետրոսին սաստեց եւ ասաց. Յե՛տ գնա ին-
ձանից սա՛տանայ. ինչուոր՝ դու Աստուծոյ բանե-
րը չես միտք անում՝ բայց մարդկանց բաները։

34 Եւ ժողովուրդն աշակերտներին հետ իրեն մօտ
կանչեց. եւ նորանց ասաց։ Թէ որ մինն ուզումէ,
իմ ետեւէս գալ՝ նա թո՛ղ իրեն անձն ուրանայ,
եւ իրեն խաչը վեր առնէ՝ եւ իմ ետեւէս գայ.
35 Պատճառնոր՝ ով որ կամենայ իրեն անձն ապրեցը-
նել՝ կ'կորցնէ՛ նորան. եւ ով որ իրեն անձն աւե-
տարանին համար կ'կորցնէ, կապրեցնէ նորան։
36 ի՞նչ օգուտ է մարդոյ՝ որ ամեն աշխարհքս ստա-
37 նայ՝ եւ իրեն անձին վնաս տայ։ Պատճառնոր՝ ի՞նչ
38 բան կ'տայ մարդն իրեն անձին տեղակ։ Ինչուոր՝
ով որ ինձ եւ իմ խօսքերս ամօթ կ'համարէ այս
շնացող եւ մեղաւոր ազգիս մէջ, Որդին մարդոյ էլ
նորան ամօթ կանէ՝ երբոր իրեն Հօր փառքովն ու

39 սուրբ հրեշտակներովը կ'գայ ։ Եւ նորանց ասաց .
Ճշմարիտն ասում եմ ձեզ . թէ այստեղ կանգնած-
ներիցը մին քանիսը կան՝ որ մահ չե՛ն տեսնիլ՝
մինչեւ որ Աստուծոյ արքայութիւնը տեսնեն զօ-
րութենով եկած ։

ԳԼ. Թ

*Քրիստոսի փառակերպութիւնը . լուսնոտը . խօսք խո-
նարհութեան եւ գայթակղութեան մասին ։*

1 Եւ վեց օրիցն ետեւ Յիսուս Պետրոսին եւ Յակո-
բին եւ Յօհաննէսին իրեն հետ առաւ , եւ նորանց
առանձին մին բարձր սար հանեց . եւ նորա կեր-
2 պարանքը փոխվեցաւ նորանց առաջին . Եւ նորա
շորերը փայլուն եւ շատ սպիտակ էլան . որ երկ-
րիս վերայ կտաւ սպիտակացնողները չեն կարող
3 այնպէս սպիտակացնել ։ Եւ Եղիան Մօսէսին հետ
նորանց երեւեցաւ , Եւ Յիսուսին հետ խօսումէին ։
4 Պետրոս պատասխան տուաւ՝ եւ Յիսուսին ասաց .
Ռա՛բբի՝ լա՛ւ է որ մենք այստեղ կենանք . եւ ե-
րեք տաղաւար կ'շինենք՝ մինը քեզ համար եւ մի-
5 նը Մօսէսին եւ մինը Եղիային Պատճառ որ՝ չէր
գիտում ինչ էր խօսում . ինչուոր՝ խիստ վախե-
6 ցած էին ։ Եւ մին ամպ էլաւ՝ որ նորանց վերայ
շուք արաւ . այն ամպիցը ձայն էլաւ՝ եւ ասաց .
Դա՛ է իմ սիրելի Որդին . դորան ականջ դրէք ։
7 Եւ շուտով որ այս կողմն այն կողմն նայեցին՝ էլ
ուրիշ մարդ չ'տեսին , բայց մինակ Յիսուսին ի-
8 րենց հետ ։ Եւ երբոր այն սարիցը վէր էին գալիս,
նորանց պատուիրեց՝ որ ընաւ մինին չ'պատմեն ինչ

որ տեսին , բայց այն ժամանակն որ Որդին մար-
9 դոյ մեռելների միջիցը յարութիւն առնէ ։ Եւ նո-
րանք այն խօսքը մտքներումը պահումէին , եւ իրար
հետ հարցնումէին՝ թէ ի՞նչ է այն մեռելների մի-
10 ջիցն յարութիւն առնելը ։ Նորան հարցրին եւ ա-
սացին . ի՞նչ է նա՝ որ կարդացողներն ասումեն՝
11 թէ . Պէտք է որ առաջ Եղիան գայ ։ Նա պա-
տասխան տուաւ նորանց՝ եւ ասաց . Եղիան առաջ
կ'գայ , եւ ամեն բան կարգին կ'դնէ . բայց ինչ-
պէս է գրված Որդոյ մարդոյ համար , թէ շատ պի-
12 տի չարչարվի եւ անարգվի ։ Միայն թէ ես ասու-
մեմ ձեզ՝ թէ Եղիան եկաւ , եւ ինչ որ ուզեցին ,
նորան արին . ինչպէս որ էլ նորան համար գըր-
ված է ։

13 Եւ երբոր եկին աշակերտներին մօտ , նորանց չորս
կողմին ամբոխ տեսին , եւ կարդացողներին՝ որ նո-
14 րանց հետ հակառակութիւն էին անում ։ Եւ շու-
տով ամեն ժողովուրդն երբոր տեսին նորան , զար-
մացան եւ առաջ վազելով նորան բարեւ էին տա-
15 լիս ։ Եւ նորանց հարցրուց թէ ի՞նչ էիք հակա-
16 ռակում նորանց հետ ։ Ժողովրդին միջիցը մինը
պատասխան տուաւ՝ եւ ասաց . Վա՛րդապետ՝ իմ
որդիս քեզ մօտ բերի , որ նորան համր դեւ բըռ-
17 նել է ։ Եւ որտեղ որ նորան հասնումէ՝ նորան
գետնով է տալիս . եւ փրփրացնումէ՝ եւ ատամնե-
րը կրճըտացնումէ եւ ցամաքում . եւ քո աշա-
կերտներին ասացի՝ որ հանեն , եւ չ'կարողացին
18 հանել նորան ։ Նորանց պատասխան տուաւ եւ
ասաց . Ո՛վ անհաւատ ազգ՝ մինչեւ երբ ձեզ հետ
պիտի լինիմ , մինչեւ ե՞րբ ձեզ պիտի համբերեմ .

19 Նորան ինձ մօտ բերէ՛ք ։ Եւ նորան բերին նորան
մօտ . երբոր դեւը նորան տեսաւ . շուտով սաստիկ
շարժեց նորան եւ գետինն ընկած թաւալւում եւ
20 փրփրումէր ։ Նորա հօրը հարցրուց եւ ասաց Քա-
նի՞ ժամանակ է՝ որ այդ բանդ էլաւ դորան . եւ
21 նա ասաց՝ Երեխայութենից . Շատ անգամ կրա-
կին մէջն է ձգում եւ ջրին մէջն՝ որ դորան կոր-
ցընէ . ապա թէ որ մին բան կարող ես՝ օգնէ՛ մեզ
22 Տէ՛ր՝ խղճալով մեզ վերայ ։ Եւ Յիսուս նորան ա-
սաց Ասացիր՝ թէ որ կարող ես . ամեն բան կա-
23 րելի է նորան՝ որ հաւատումէ ։ Եւ շուտով տղա-
յին հայրն աղաղակեց՝ եւ ասաց . Հաւատումեմ,
24 իմ անհաւատութեանս օգնէ՛ ։ Երբոր Յիսուս տե-
սաւ՝ թէ ժողովուրդը կիտվումէ , այն պիղծ դեւին
սաստեց եւ ասաց . Ո՛վ համր եւ խուլ դեւ՝ ես
հրամայումեմ քեզ . դորանից դո՛ւրս եկ , եւ այլ
25 եւս դորա մէջ չ'մտնես ։ Եւ շատ աղաղակեց՝ եւ
սաստիկ չարչարեց նորան , եւ դուրս եկաւ . եւ
տղան մեռածի պէս էլաւ . մինչեւ որ շատերն ա-
26 սումէին՝ թէ , Մեռաւ ։ Եւ Յիսուս նորա ձեռիցը
27 բռնեց , նորան վերկացրուց , եւ կանգնեց ։ Եւ
երբոր նա տուն մտաւ՝ աշակերտներն առանձին
հարցրին նորան . Մենք ինչո՞ւ չ'կարացինք հանել
28 նորան ։ Եւ նորանց ասաց . այդ ցեղդ ուրիշ բա-
նով դուրս չի՛ գալ , եթէ ո՛չ ծոմով եւ աղօթ-
քով ։

29 Եւ այնտեղից դուրս եկած՝ Գալիլեացոց միջովը
30 անցնումէին . եւ չէր ուզում որ մինն իմանայ ։ Ին-
չուոր՝ իրեն աշակերտները սովորցնումէր՝ եւ նորանց
ասումէր՝ թէ , Որդին մարդու մարդկանց ձեռքը

պիտի մատնվի , եւ նորան կ'սպանեն . եւ երբոր
31 կ'սպանվի , երեք օրումը յարութիւն կ'առնէ ։ Եւ
նորանք այն բանը չէին իմանում . եւ վախումէին
որ հարցնեն նորան ։

32 Կափառնայում եկաւ . եւ երբոր տուն մտաւ ,
նորանց հարցնումէր . Ճանապարհումն ի՞նչ էիք
33 հակառակում իրար հետ ։ Եւ նորանք լուռ էին
կենում . պատճառնոր՝ ճանապարհումն իրար հետ
34 հակառակումէին թէ ո՞վ լինի մեծը ։ Եւ երբոր
նստեց , տասներկուսին կանչեց , եւ նորանց ասաց .
Թէ որ մինն ուզումէ առաջին լինել՝ թո՛ղ ամենի-
35 ցը փոքր՝ եւ ամենին պաշտօնեայ լինի ։ Եւ մին ե-
րեխայ առաւ , կանգնացրուց նորանց մէջ . եւ նո-
36 րան առաւ իրեն գիրկն ու նորանց ասաց . Ո՛վ որ
այսպէսի երեխաներիցը մինն իմ անունովս կընդու-
նի՝ ինձ կընդունի . եւ ո՛վ որ ինձ կընդունի՝ ինձ
37 չի՛ ընդունիլ , այլ նորան՝ որ ինձ ուղարկեց ։ Յօ-
հաննէս նորան պատասխան տուաւ եւ ասաց .
Վա՛րդապետ՝ մինը տեսինք որ քո անունովդ դե-
ւեր էր հանում , եւ չէր հետեւում , եւ արգելե-
38 ցինք նորան ։ Եւ նա ասաց . Մի՛ արգելէք նորան .
ինչուոր՝ ո՛չ ով չ'կայ՝ որ իմ անունովս զօրութիւն
39 անէ , կարենայ հայհոյել ինձ , Պատճառնոր՝ նա
40 որ մեզ հակառակ չէ՛՝ մեր կողմն է ։ Եւ ով որ մին
բաժակով ջուր կ'խմացնէ ձեզ այս անունովս՝ թէ
դուք Քրիստոսինն էք , ճշմարիտ ասումեմ ձեզ՝
41 նա չի՛ կորցնիլ իրեն վարձքը ։ Եւ ո՛վ որ կ'գայ-
թակղացնէ այս փոքրներիցս մինն՝ որ ինձ հաւա-
տումեն , աւելի լաւ էր նորան՝ որ իրեն վզիցը մին
42 իշու ջաղացի քար անցնվի , եւ ծովը ձգվի ։ Եւ

եթէ քո ձեռդ քեզ գայթակղացնէ՝ կտրէ՛ նորան,
քեզանից գէ՛ն ձգէ. ինչուոր՝ լա՛ւ է քեզ՝ որ խեղ
մանես յաւիտենական կեանքը, քան թէ երկու
ձեռք ունենաս՝ եւ գեհենը գնաս այն անանցնելի
43 կրակին մէջ. Որտեղ որ նորանց որդը չի՛ մեռնում
44 եւ կրակը չի՛ անցնում։ Եւ եթէ քո ոտքդ քեզ
գայթակղացնէ, կտրէ՛ նորան՝ քեզանից գէ՛ն ձը-
գէ. լա՛ւ է քեզ որ կաղ մանես յաւիտենական
կեանքը, քան թէ երկու ոտք ունենաս՝ եւ գեհենն
45 ընկնես այն անանցնելի կրակին մէջ. Ուր տեղ որ
նորանց որդը չի՛ մեռնում՝ եւ կրակը չի՛ անցնում։
46 Եւ եթէ քո աչքդ քեզ գայթակղացնէ՝ դո՛ւրս
հանէ նորան. լա՛ւ է քեզ՝ որ մին աչքով Աստու-
ծոյ արքայութիւնը մանես, քան թէ երկու աչք
47 ունենաս՝ եւ գեհենն ընկնես, Ուր տեղ որ նորանց
48 որդը չի՛ մեռնում՝ եւ կրակը չի՛ անցնում. Պատ-
ճառնոր՝ ամեն բան կրակով պէտք է աղանվի, եւ
49 ամեն պատարագն աղով պէտք է աղանվի։ Աղը բա-
րի է. եւ թէ որ աղն անհամանայ, ինչո՞վ պիտի
համեղանայ. ուրեմն դուք աղը ունեցէ՛ք ձեր անձ-
ներումդ, եւ իրար հետ խաղաղութիւն արէ՛ք։

ԳԼ. Ժ

Կին արձակելը. երեխայոց օրհնելը. հարուստների վտանգը. Քրիստոսի չարչարանաց եւ մահուան նախա-գուշակումը. աշակերտաց պատուասիրութիւնը. կոյր Բարտիմէոսը։

1 Եւ այն տեղից վերկացաւ եկաւ Հրէաստանի
կողմերը՝ Յորդանանի այն կողմը. եւ նորէն ժողո-

վուրդը կիտված գնումէին նորան մօտ, եւ ինչպէս
որ նորան սովորութիւնն էր՝ նորէն սովորցնումէր
նորանց։
2 Բայց փարիսեցիները մօտ եկին. եւ փորձելով
նորան հարցնումէին եւ ասում. թէ Արժա՞ն է
3 մարդոյս՝ որ իրեն կինն արձակէ։ Նա պատասխան
տուաւ նորանց եւ ասաց. Մովսէսն ի՞նչ պատուի-
4 րեց ձեզ։ Եւ նորանք ասացին. Մովսէսն հրաման
տուաւ՝ արձակման թուղթ գրել, եւ արձակել։
5 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց.
Ձեր քարասրտութեան համար այն պատուիրանքը
6 գրեց ձեզ. Բայց աշխարհագործութեան սկզբից
Աստուած նորանց արու եւ էգ արաւ, եւ ասաց.
7 Սորահամար մարդն իրեն հօրն ու մօրը կ'թողէ, եւ
8 իրեն կնկանը հետ կ'գնայ. Եւ երկուքը մին մար-
մին կ'լինին եւ նորանից ետեւ երկու չեն՝ բայց մին
9 մարմին են։ Ուրեմն նա որ Աստուած միաւորեց՝
10 թո՛ղ մարդը չ'ջոկէ՛։ Եւ տան մէջն աշակերտները
11 նորէն իսկ այն բանը հարցրին նորան։ Եւ նորանց
ասաց. Թէ որ մարդ իրեն կինն արձակէ՝ եւ մին
12 ուրիշն առնէ, շնութիւն է գործում։ Եւ կինը՝
թէ որ իրեն մարդուցը դուրս գնայ՝ եւ ուրիշ մար-
դոյ լինի՝ շնութիւն է գործում։
13 Եւ նորա մօտ երեխաներ էին բերում՝ որ ձեռն
դնէ նորանց վերայ. բայց աշակերտները սաստում
14 էին նորանց՝ որ բերումէին։ Երբոր Յիսուս տեսաւ
բարկացաւ եւ նորանց սաստեց եւ ասաց. Թո՛ղ
տուէք այդ երեխաներիդ՝ որ ինձ մօտ գան, եւ
մի՛ արգելէք գորանց. ինչուոր այդպիսիներին է
15 Աստուծոյ արքայութիւնը։ Ճշմարիտ ասումեմ

ձեզ՝ Ով որ Աստուծոյ արքայութիւնը չ'ընդունի
16 ինչպէս երեխայ՝ նա չի մտնիլ նորան մէջ ։ Եւ նո-
րանց գիրկն առաւ՝ ձեռն դրաւ նորանց վերայ՝ եւ
նորանց օրհնեց ։
17 Եւ այնտեղից որ դուրս գնաց ճանապարհը, ա-
հա՛ մին հարուստ մարդ վազելով եկաւ՝ ծունր էր
դնում՝ նորան հարցնումէր եւ ասում. Բարի՛
Վարդապետ. ի՞նչ գործեմ՝ որ յաւիտենական
18 կեանքը ժառանգեմ ։ Եւ Յիսուս նորան ասաց.
Ինչո՞ւ ես ինձ բարի ասում՝ ո՛չ ով բարի չ'կայ,
19 բայց միայն մինն Աստուած ։ Պատուիրանքները
գիտումես՝ Մի՛ շնար, մի՛ սպաներ, մի՛ գողանար,
մի՛ սուտ վկայեր, Քո հօրդ ու մօրդ պատուէ՛ ։
20 Նա պատասխան տուաւ եւ նորան ասաց. Վա՛ր-
դապետ՝ այդ ամենդ իմ երեխայութենիցս արի.
21 ապա էլ ի՞նչ բանով եմ պակաս ։ Եւ Յիսուս նո-
րան մտիկ տուաւ՝ նորան սիրեց, եւ նորան ասաց.
Մին բան պակաս է քեզանից. Թէ որ կամենաս
կատարեալ լինիլ, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ՛
եւ աղքատներին տուր. եւ գանձ կունենաս եր-
կնքումը. եւ խաչդ ա՛ռ՝ եւ իմ ետեւէս ե՛կ,
22 Եւ նա այն բանին համար դժուարացաւ՝ եւ տրտ-
մած գնաց. պատճառնոր՝ շատ ապրանք ունէր ։
23 Եւ Յիսուս այս կողմն այն կողմը նայելով՝ աշա-
կերտներին ասաց. Ի՞նչքան դժուար է՝ որ նորանք
որ ապրանք ունին՝ Աստուծոյ արքայութիւնը մըտ-
24 նեն ։ Եւ աշակերտները զարմացել էին նորան խօս-
քերին վերայ. բայց Յիսուս նորէն պատասխան
տուաւ նորանց եւ ասաց. Որդեակնե՛ր՝ ո՞րքան
դժուար է՝ որ նորանք՝ որ իրենց յոյսը ապրանքի

վերայ են դրել, Աստուծոյ արքայութիւնը մտնեն ։
25 Աւելի հեշտ է որ ուղտն ասեղի ծակով անցանի,
քան թէ հարուստն Աստուծոյ արքայութիւնը մըտ-
26 նէ ։ Եւ նորանք էլ աւելի զարմանումէին՝ եւ մինը
27 մինին ասում. Ապա ո՞վ կարենայ ապրիլ ։ Յիսուս
նորանց մտիկ տուաւ եւ ասաց. Մարդկանց կող-
մանէ՝ այդ անկարելի է, բայց ո՛չ թէ Աստուծոյ
28 կողմանէ ։ Պետրոս սկսեց նորան ասել. Ահա՛ մենք
29 ամեն բան թողինք, եւ քո ետեւէդ եկինք ։ Յի-
սուս պատասխան տուաւ եւ ասաց. Ճշմարիտ ա-
սումեմ ձեզ՝ թէ ո՛չ ով չ'կայ՝ որ տունը կամ
եղբարները կամ քոյրերը կամ հայրը կամ մայրը
կամ որդիքը կամ արտերը թողեց՝ ինձ համար
30 կամ աւետարանին համար. Որ հարիւրապատիկ
հիմիկ այս ժամանակումս չառնէ տներ եւ եղբար-
ներ եւ քոյրեր եւ մայրեր եւ որդիք եւ արտեր
հալածմունքի հետ, եւ այն նոր գալու աշխարհ-
31 քումն՝ յաւիտենական կեանքը. Պատճառնոր՝ շատ
առաջիններ յետինք կ'լինին՝ եւ յետիններ առա-
ջինք ։
32 Եւ ճանապարհի վերայ էին՝ որ Երուսաղէմ
էին գնում, եւ Յիսուս նորանցից առաջ էր գը-
նում. եւ նորանք՝ որ ետեւէն գնումէին, զարմա-
ցած էին եւ վախենումէին ։ Եւ տասներկուսին նո-
րէն առանձին առաւ, սկսեց նորանց ասել՝ թէ
33 ինչ բաներ իրեն վերայ պիտի անցնին. Թէ,
Ահա՛ վեր ենք ելլում Երուսաղէմ. եւ Որդին մար-
դոյ կ'մատնվի քահանայապետներին ու կարդացող-
ներին ձեռքը. եւ նորան մահով կ'դատապարտեն,
34 եւ նորան հեթանոսներին կ'մատնեն. Եւ նորան

ծաղր կանեն, եւ նորան կ'ծեծեն, եւ նորա վերայ
կ'թքեն, եւ կ'սպանեն. եւ երեք օրումն յարու-
թիւն կառնէ ։
35 Եւ Զեբեդէոսի որդիքը՝ Յակոբոսն ու Յօհաննէ-
սը նորան մօտ էին գնում՝ եւ նորան ասացին.
Վա՛րդապետ՝ ուզումենք որ՝ ինչ որ քեզանից
36 խնդրենք՝ մեզ անես ։ Եւ նա նորանց ասաց. Ի՞նչ
37 էք խնդրում ինձանից՝ որ ձեզ անեմ ։ Եւ նորանք
ասացին նորան. Տո՛ւր մեզ՝ որ մինը քո աջ կողմ-
եւ միւսը քո ձախ կողմ նստինք քո փառքումդ ։
38 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց.
Չէ՞ք գիտում՝ թէ ինչ էք խնդրում. կարո՞ղ էք
այն բաժակը խմել՝ որ ես պիտի խմեմ, կամ այն
մկրտութեանը մկրտուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ ։
39 Եւ նորանք ասացին նորան. Կարող ենք. եւ Յի-
սուս նորանց ասաց. Այն բաժակն որ ես պիտի
խմեմ, կ'խմէք, եւ այն մկրտութեանն՝ որ ես պիտի
40 մկրտուիմ կ'մկրտուիք. Բայց իմ աջ եւ իմ ձախ
կողմս նստեցնելն իմն չէ՛ որ տամ. բայց նորանց՝
41 որ պատրաստուած է ։ Եւ այն տասներն որ լսեցին,
սկսեցին բարկանալ Յակոբին եւ Յօհաննէսին վե-
42 րայ ։ Եւ Յիսուս նորանց իրեն մօտ կանչեց, եւ
նորանց ասաց. Գիտումէք՝ որ հեթանոսներին իշ-
խան կոչուածները նորանց վերայ տիրումեն, եւ նո-
րանց մեծամեծներն իշխանութիւն են անում նո-
43 րանց վերայ ։ Այնպէս չ'պիտի լինի ձեր մէջումդ.
բայց ձեզանից ո՛վ որ կամենայ մեծ լինել՝ թո՛ղ
44 ձեզ պաշտօնեայ լինի ։ Եւ ձեզանից ո՛վ որ կամե-
նայ առաջին լինել՝ թո՛ղ ամենից ծառայ լինի.
45 Պատճառնոր՝ Որդին մարդոյ էլ չեկաւ՝ որ իրեն

ծառայեն՝ բայց որ ինքը ծառայէ, եւ իրեն անը
շատերի տեղակ փրկութեան գին տայ ։
46 Եւ Երիքով եկին. եւ երբոր նա աշակերտնե-
րովն ու շատ ժողովուրդներով Երիքովէցը դուրս
եկաւ, Տիմէի որդի Բարտիմէոս կոյրը ճանապար-
47 հի վերայ նստած էր մուրացող ։ Երբոր լսեց՝ թէ
Յիսուս Նազարեցին է, սկսեց աղաղակել եւ ա-
48 սել. Յիսո՛ւս որդի Դաւթի՛ ինձ ողորմեա՛ ։ Եւ
շատ մարդիք սաստումէին նորան՝ որ լուռ կենայ.
եւ նա էլ աւելի էր աղաղակում. Որդի՛ Դաւթի՛
49 ինձ ողորմեա՛ ։ Յիսուս կանգնեց եւ հրամայեց՝ որ
նորան կանչեն. կուրին կանչեցին՝ եւ նորան ա-
սացին. Սիրտ պի՛նդ բռնէ վե՛րկաց, քեզ կան-
50 չումէ ։ Եւ նա իրեն շորերը ձգեց՝ վերկացաւ եւ
51 Յիսուսին մօտ եկաւ ։ Յիսուս նորան պատասխան
տուաւ եւ ասաց. Ի՞նչ ես կամենում, որ անեմ
քեզ. կոյրը նորան ասաց. Ռա՛բբունի՝ որ բաց-
52 վիմ ։ Եւ Յիսուս նորան ասաց. Գնա՛ քո հաւատ-
քըդ քեզ ազատեց. եւ շուտով բացուաւ, եւ
ճանապարհումը նորան ետեւէն գնումէր ։

ԳԼ. ԺԱ.

*Քրիստոսի Երուսաղէմ մտնելը. թզենոյն անէծքը.
տաճարին մաքրելը ։*

1 Եւ երբոր Երուսաղէմին մօտեցան, Բեթփագէ եւ
Բեթանիա եկ. Ձիթենեաց սարին մօտ՝ այն աշա-
2 կերտներիցն երկուսը ուղարկեց, Եւ նորանց ասաց.
Գնացէք դուք այդ գիւղը՝ որ ձեր առաջին կայ.
եւ շուտով երբոր նորան մէջ մտնէք, մին աւա-

նաւ կ՚գտնէք կապած՝ որ նորա վերայ բնաւ մարդ
3 չէ՛ նստած . Նորան արձակեցէք եւ բերէ՛ք ։ Եւ
թէ որ մինն ասէ ձեզ . թէ ինչո՞ւ համար էք այդ
աւանակդ արձակում, ասացէ՛ք՝ թէ Նա տէրին
պէտք է . եւ շուտով նորան այստեղ կուղարկէ ։
4 Գնացին եւ աւանակը գտին դուրսը փողոցին մէջ
դռների առաջին կապած , եւ նորան արձակեցին ։
5 Եւ մին քանիսը նորանցից՝ որ այնտեղ կանգնած
էին՝ ասացին նորանց . Ի՞նչ էք անում . ինչո՞ւ
6 համար էք արձակում այդ աւանակդ ։ Եւ նորանք
ասացին նորանց , ինչպէս որ Յիսուս ասաց . եւ
7 թոյլ տուին նորանց ։ Աւանակը Յիսուսին մօտ բե-
րին . եւ նորա վերայ շորեր ձգեցին , եւ նորան վե-
8 րայ նստեց ։ Եւ շատ մարդիք իրենց շորերը ճանա-
պարհին վերայ փռումէին , եւ ուրիշները ծառերի-
ցը ճղեր էին կտրում եւ ճանապարհին վերայ փը-
9 ռում ։ Եւ նորանք որ առաջին եւ ետեւէն գնում
էին՝ աղաղակումէին եւ ասում . Ովսաննա Բարձ-
10 րելոյն . Օրհնեալ է՜ որ Տէրին անունովը գալիս
ես . օրհնեալ է մեր Դաւիթ հօր եկած թագաւո-
րութիւնը . խաղաղութիւն երկնքումը՝ եւ փառք
՚ի բարձունս ։

11 Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ՝ տաճարին մէջ .
եւ չորս կողմով ամեն բանի մտիկ տուաւ . եւ ո-
րովհետեւ իրիկվան ժամանակ էր , դուրս գնաց
Բեթանիա՝ տասներկուսին հետ ։

12 Եւ վաղվան օրն երբոր Բեթանիայից դուրս էին
13 գալիս , նա սովեց . Եւ հեռուանց մին թզի ծառ
տեսաւ տերեւով լիքն . եւ մօտ եկաւ՝ որ նորա
վերայ մին բան գտնէ . եւ երբոր եկաւ՝ բնաւ մին

բան չ՚գտաւ նորանում՝ բայց միայն տերեւ . ին-
14 չուոր դեռ թզի ժամանակը չէր . Պատասխան
տուաւ եւ նորան ասաց . Մինն քեզանից էլ յա-
ւիտեան պտուղ չուտէ . եւ նորա աշակերտները
լսումէին ։

15 Եկին Երուսաղէմ . եւ տաճարը մտաւ՝ սկսեց
դուրս հանել վաճառականներն ու գնողները՝ որ
տաճարումն էին . եւ ստակ փոխողներին սեղաննե-
րը ցրվեց , եւ աղաւնի ծախողներին աթոռները
16 կործանեց . Եւ չէ՛ր թողում՝ որ մինը մին անօթ
17 տաճարին միջովը անցուցնէ , Եւ սովորցնումէր ու
նորանց ասում . Գրված է՝ թէ , Իմ տունս աղօթ-
քի տուն պիտի կոչվի ամեն հեթանոսներին հա-
մար . եւ դուք աւազակների բոյն արիք դորան ։
18 Քահանայապետներն ու կարդացողները լսեցին եւ
խնդրումէին՝ թէ ի՞նչպէս կորցնեն նորան . բայց
վախենումէին նորանից . ինչուոր՝ ամեն ժողովուրդը
նորա վարդապետութեանը վերայ զարմացել էին ։

19 Եւ երբոր իրիկուն էր լինում՝ քաղաքիցը դուրս
էին գնում ։

20 Եւ առաւօտանց երբոր նորա մօտովն անցանում
էին՝ տեսին այն թզի ծառն արմատիցը չորացած ։
21 Պետրոս միտքը բերաւ՝ եւ նորան ասաց . Ռա՛բբի՝
22 ահա՛ այն թզի ծառն որ անիծեցիր՝ չորացաւ ։ Յի-
սուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց . Թէ
23 որ Աստուծոյ հաւատքն ունենաք , Ճշմարիտ ա-
սումեմ ձեզ , թէ Ով որ այս սարիս ասէ՝ թէ Վե՛ր
կաց եւ ծովն ընկի՛ր , եւ իրեն սրտումը չի՛ երկմը-
տի , բայց հաւատայ՝ թէ նա որ ասումէ կ՚լինի ,
24 նորան կ՚լինի ինչ որ կասէ ։ Սորա համար ասումեմ

ձեզ՝ թէ Ամէն բան, որ նորա համար աղօթք ա-
նելով խնդրէք, եւ հաւատաք՝ թէ կառնէք, նա
25 կ'լինի ձեզ։ Եւ որ ժամանակ աղօթք անէք, թո-
ղութիւն տուէ՛ք՝ թէ որ մինիցը մին բան ունե-
նաք. որ ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է՝ ձեր մեղ-
26 քը թողէ ձեզ. Պատճառնոր՝ եթէ դուք թողու-
թիւն չ՚տաք, ձեր հայրն էլ՝ որ երկնքումն է, ձեր
մեղքը չի՛ թողլ ձեզ։
27 Դարձեալ Երուսաղէմ եկին. եւ դեռ քանի որ
նա տաճարումը ման էր գալիս, քահանայապետ-
ներն ու կարգացողները եւ ծերերը նորան մօտ ե-
28 կին, Եւ նորան ասացին. Ի՞նչ իշխանութենով ես
անում դա՝ եւ ո՞վ տուաւ քեզ այդ իշխանու-
29 թիւնդ։ Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նո-
րանց, Ես էլ ձեզանից մին բան կ'հարցնեմ ինձ
պատասխան տուէ՛ք, եւ ես էլ կասեմ ձեզ՝ թէ
30 ի՞նչ իշխանութենով եմ անում սա։ Յօհաննէսի
մկրտութիւնն երկնքի՞ցն էր թէ մարդկանցիցը.
31 ինձ պատասխան տուէք։ Իրար հետ միտք էին ա-
նում եւ ասում. Եթէ ասենք՝ թէ Երկնքիցը,
մեզ կասէ. Ապա ինչո՞ւ չ'հաւատացիք նորան.
32 Բայց եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովրդիցը վա-
խենումենք. ինչու որ՝ ամենքը ճանաչումէին Յօհան-
33 նէսին՝ թէ մարգարէ էր։ Պատասխան տուին՝ եւ
Յիսուսին ասացին. Չենք գիտում։ Եւ Յիսուս նո-
րանց պատասխան տուաւ եւ ասաց. Ես էլ չեմ
ասիլ ձեզ, թէ ի՞նչ իշխանութենով եմ անում
սա։

ԳԼ. ԺԲ

Չար մշակները. կայսրին հարկ տալը. մեծ պատուի-
րանքը. Քրիստոս ո՞ւմ որդին է։

1 Եւ սկսեց նորանց հետ առակներով խօսիլ՝ եւ ա-
սել. Մին մարդ այգի տնկեց, եւ նորա չորս կող-
մովը պարիսպ քաշեց, եւ գուբ հնձան փորեց, եւ
աշտարակ շինեց՝ եւ նորան մշակներին տուաւ՝ եւ
2 հեռու աշխարհք գնաց։ Եւ ժամանակով մշակնե-
րին մօտ մին ծառայ ուղարկեց որ այն մշակներիցն
3 այգու պտղիցն առնէ։ Եւ նորանք բռնեցին՝ նորան
4 ծեծեցին, եւ դատարկ ճանապարհ ձգեցին։ Դար-
ձեալ ուրիշ ծառայ ուղարկեց եւ նորան գլուխը
պատառեցին՝ եւ թուքումուր տալով արձակեցին։
5 Դարձեալ ուրիշը ուղարկեց՝ եւ նորան սպանեցին.
եւ էլ շատ ուրիշները. մին քանիսը ծեծումէին
6 եւ մին քանիսը սպանում։ Ապա մին սիրելի որդի
ունէր՝ յետոյ նորան ուղարկեց նորանց մօտ, եւ
7 ասաց. Լինի որ այս իմ որդուցս ամաչեն։ Բայց
մշակներն երբոր տեսին նորան՝ որ գալիս էր, ի-
րար ասացին. Սա՛ է ժառանգը. եկէ՛ք սորա ըս-
8 պանենք՝ եւ ժառանգութիւնը մեզ լինի։ Եւ նո-
րան բռնեցին սպանեցին եւ այգուցը դուրս հա-
9 նեցին։ Ապա այգոյ տէրն ի՞նչ կանէ. կ'գայ եւ
այս մշակներս կ'կորցնէ, եւ այգին ուրիշներին
10 ձեռքը կ'տայ։ Եւ դուք չէ՞ք կարդացել այն գը-
րածը՝ թէ Այն քարն՝ որ շինօղներն անարգեցին՝
11 նա էլաւ անկիւնի գլուխ։ Տէրից էլաւ այս բա-

Նըս, եւ մեր աչքերին առաջին զարմանալի է։
12 Եւ կամենումէին՝ որ Նորան բռնեն, եւ ժողո-
վրդիցը վախեցան. ինչուոր՝ իմացան՝ թէ այն ա-
ռակն իրենց համար ասաց. եւ Նորան թողին եւ
գնացին։
13 Եւ փարիսեցիներիցն ու Հերոդէսեաններիցը մին
քանի հոգի Նորա մօտ ուղարկեցին՝ որ խօսքով որ-
14 սան Նորան։ Եւ Նորանք եկին՝ հարցնումէին Նո-
րան խաբեբայութենով եւ ասում. Վա՛րդապետ
գիտումենք՝ որ ճշմարիտ ես, եւ բնաւ մինից հոգս
չունիս՛ եւ մարդոց երեսպաշտութիւն չես անում,
բայց Աստուծոյ ճանապարհը ճշմարտութենով սո-
վորցնումես. ապա ասա՛ մեզ. Կայսերին հարկ տալ
15 արժա՞ն է՝ թէ չէ՝ տա՞նք՝ թէ չ՚տանք։ Եւ Յի-
սուս իմացաւ Նորանց կեղծաւորութիւնը. Նորանց
ասաց. Ինչո՞ւ էք փորձում ինձ՝ կե՛ղծաւորներ.
16 մին դահեկան բերէ՛ք ինձ՝ որ տեսնեմ Եւ Նորանք
բերին եւ Նորանց ասաց. Այս պատկերս կամ
գիրս ո՞ւմն է. եւ Նորանք ասացին Նորան՝ Կայսե-
17 րինը։ Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց Նո-
րանց. Գնացէ՛ք Կայսերինը կայսերին տուէ՛ք՝ եւ
Աստուծունը՝ Աստուծոյն. եւ զարմացան Նորան
վերայ։
18 Նորան մօտ եկին սադուկեցիքն որ ասումէն՝ թէ
Յարութիւն չ՚կայ. Նորան հարցնումէին եւ ասում,
19 Վա՛րդապե՛տ՝ Մօսէս մեզ համար գրեց. թէ որ մի-
նին եղբայրը մեռնի եւ կինը թողէ ու որդի չ՚թո-
ղէ՝ թո՛ղ Նորա եղբայրը Նորան կինն առնէ, եւ ի-
20 րեն եղբօրը համար զաւակ վերկացնէ։ Ապա մեզ
մօտ եօթն եղբարք կային. առաջինը կին առաւ՝

21 եւ մեռաւ, եւ զաւակ չ՚թողեց. Եւ երկրորդը Նո-
րան առաւ՝ եւ մեռաւ. եւ Նա էլ զաւակ չ՚թո-
22 ղեց. այսպէս էլ երրորդը Նորան առաւ։ Եւ իսկ
եօթն էլ՝ եւ զաւակ չ՚թողին. եւ ամենից ետեւ
23 կինն էլ մեռաւ։ Ապա յարութեան ժամանակին՝
երբոր յարութիւն կառնեն, Նորանցից որի՞ն կ՚լի-
24 նի կին. ինչուոր՝ եօթն էլ Նորան կին առին։ Յի-
սուս պատասխան տուաւ եւ Նորանց ասաց. Չէ՞
որ ճիշտ դորահամար մոլորված էք՝ որ ո՛չ գիրքն
25 էք գիտում եւ ո՛չ Աստուծոյ զօրութիւնը. Պատ-
ճառոր՝ երբոր մեռելների միջից յարութիւն
կառնեն՝ ո՛չ մարդիկ կին կառնեն՝ եւ ո՛չ կանայք
մարդոյ կ՚գնան՝ բայց հրեշտակներին պէս կ՚լինին՝
26 որ երկնքումն են, Միայն թէ մեռելների յարու-
թեան համար՝ թէ յարութիւն պիտի առնեն,
դուք չէ՞ք կարդացել Մօսէսի գրքին մէջ՝ թէ Աս-
տուած ինչպէս մորենոյն մէջ Նորանց ասաց. Ես
եմ Աբրահամու Աստուածը, եւ Իսահակայ Աս-
27 տուածը, եւ Յակոբայ Աստուածը։ Եւ Աստուած
մեռելների Աստուած չէ՛, բայց կենդանիներին. ու-
րեմն դուք շատ մոլորված էք։
28 Եւ կարդացողներիցը մինը մօտ եկաւ Նորանց լը-
սումէր՝ դեռ քանի որ հակառակումէին. երբոր
տեսաւ թէ լաւ պատասխան տուաւ Նորանց՝ Նո-
րան հարցրուց եւ ասաց. Առաջին պատուիրանքը
29 ո՞րն է. Եւ Յիսուս Նորան ասաց. Ամենից առա-
ջինը սա է՝ Լսէ՛ Իսրայէլ՝ մեր Տէր Աստուածը մին
30 Տէր է. Եւ սիրէ՛ քո Տէր Աստուածդ՝ քո ամեն
սրտովդ, եւ քո ամեն անձնովդ, եւ քո ամեն
մտքովդ, եւ քո ամեն զօրութենովդ. սա է առա-

31 ջին պատուիրանքը ։ Եւ երկրորդը սորան նման․
Քո ընկերդ քո անձիդ պէս սիրէ՛․ սորանցից աւե-
32 լի մեծ ուրիշ պատուիրանք չ'կայ ։ Եւ կարգացողը
նորան ասաց․ Լա՛ւ է վա՛րդապետ․ ճշմարտու-
թենով ասացիր՝ թէ մին Աստուած է, եւ նորան-
33 ցից ջոկ ուրիշ չ'կայ ։ Եւ նորան սիրելը ամեն սըր-
տով եւ ամեն զօրութենով եւ ամեն մտքով, եւ
ընկերն անձին պէս սիրելը՝ աւելի է քան թէ ող-
34 ջակէզներն ու մատաղները ։ Եւ Յիսուս որ տեսաւ՝
թէ իմաստութենով պատասխան տուաւ՝ նորան
ասաց․ Դու Աստուծոյ արքայութենիցը հեռու
չես․ եւ նորանից ետեւ էլ մինը չէր համարձակ-
վում՝ որ նորան մին բան հարցնէ ։
35 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց, դեռ
քանի որ տաճարումը սովորցնումէր․ Կարգացող-
ներն ի՞նչպէս են ասում՝ թէ Քրիստոսը Դաւթի
36 որդին է ։ Եւ ինքը Դաւիթ Սուրբ Հոգովը ասու-
մէ․ Տէրն իմ Տէրիս ասաց․ իմ աջ կողմս նստէ՛՝
մինչեւ քո թշնամիներդ քո ոտացդ կոխելիք դը-
37 նեմ ։ Ապա՛ թէ որ խկ ինքը Դաւիթ նորան Տէր է
կոչում՝ ի՞նչպէս նորան որդին կ'լինի․ եւ շատ
ժողովուրդներ քաղցրութենով լսումէին նորան ։
38 Եւ իրեն վարդապետութեան մէջ սովորցնելով
ասումէր Զգո՛յշ կացէք կարգացողներից՝ որ կա-
մենումեն պայծառ հագուստներով շուռ գալ, եւ
բաց փողոցներումն առաջին բարեւները խնդրել,
39 Եւ ժողովարաններին մէջ առաջին աթոռները,
եւ սեղան նստելոյ ժամանակը գլխաւոր անկիւնը,
40 Որ՝ որբեւէրիներին տներն ուտումեն, եւ պատ-
ճառներով երկար աղօթք են անում՝ որ էլ աւե-

լի դատապարտութիւն առնեն ։
41 Յիսուս գանձանակի դիմացը կանգնած էր՝ տես-
նումէր թէ ժողովուրդն ինչպէս էր պղինձ ձգում
գանձանակը․ եւ շատ հարուստները շատ բան ձը-
42 գեցին ։ Մին որբեւէրի եկաւ՝ եւ երկու լումայ ձը-
43 գեց, որ մին նաքարակիտ է ։ Եւ իրեն աշակերտ-
ներն իրեն մօտ կանչեց, եւ նորանց ասաց․ Ճըշ-
մարիտ ասումեմ ձեզ՝ թէ այն խեղճ որբեւէրին
շատ ձգեց քան թէ այն ամենքը՝ որ գանձանակը
44 ձգեցին, Պատճառը՝ ամենքն իրենց աւելցածնե-
րիցը ձգեցին․ բայց նա իրեն չքաւորութենիցն ա-
մեն ինչ որ ունէր՝ իրեն կեանքի ամեն ապրուստը
ձգեց ։

ԳԼ․ ԺԳ

Երուսաղէմի կործանումն ու աշխարհի վերջը ։

1 Եւ տաճարից որ դուրս գնաց՝ նորա աշակերտ-
ներիցը մինը նորան ասաց․ Վա՛րդապետ, տե՛ս
այս ինչպէսի քարեր են, եւ ի՛նչպէսի շինուածներ
2 են ։ Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց․
Տեսնո՞ւմես այդ ամեն շինուածներդ․ Ճշմարիտ
ասումեմ ձեզ․ որ այդտեղ քար քարի վերայ չի՛
թողվիլ՝ որ չ'քանդվի ։
3 Եւ երբոր նա Ձիթենեաց սարին վերայ նստած
էր տաճարին դիմացը, Պետրոսն ու Յակոբոսը եւ
Յովհաննէսն ու Անդրէասն առանձին հարցնումէին
4 նորան․ Ասա՛ մեզ․ այդ բաներդ ե՞րբ կ'լինի՝ եւ
նշանն ի՞նչ է՝ երբոր այդ ամեն բաներդ պիտի կա-

5 տարվին ։ Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց
ասաց . Զգո՛յշ կացէք , չ՚լինի՛ որ մինը խաբէ ձեզ .
6 ինչու որ շատ մարդիք կ՚գան իմ անունովս , եւ
կասեն՝ թէ Ես եմ Քրիստոսը եւ շատ մարդ կ՚մո-
7 լորացնեն ։ Բայց երբոր կռիւներ եւ կռիւների համ-
բաւը կ՚լսէք՝ մի՛ շփոթվիք , ինչու որ՝ պէտք է որ
8 նա լինի . բայց դեռ վերջը չէ՛ ։ Պատճառնոր՝ ազգ
ազգի վերայ վեր կ՚կենայ՝ եւ թագաւորութիւն
թագաւորութեան վերայ . եւ տեղ տեղ երկրի
շարժմունքներ կ՚լինին , եւ սովեր եւ սաստիկ մա-
հեր եւ խռովութիւններ . բայց այն ամենը նեղու-
9 թեանց սկիզբն է ։ Եւ ձեզ տիվաններին էլ կը
մատնեն , եւ ժողովարաններին մէջ կ՚ տանջվիք ,
եւ դատաւորների եւ թագաւորների առաջին կը
կանգնիք ինձ համար՝ որ նորանց վկայութիւն լի-
10 նի , Եւ ամեն հեթանոսներին . միայն թէ առաջ
11 պէտք է՝ որ այս աւետարանս քարոզվի . Բայց եր-
բոր ձեզ կ՚տանեն որ մատնեն՝ առաջուց հոգս չա-
նէք եւ չ՚մտածէ՛ք թէ ի՞նչ պիտի խօսիք . բայց
ինչ որ այն ժամումը կ՚տրվի ձեզ՝ նա պիտի խօսիք .
ինչու որ՝ դուք չէ՛ք՝ որ խօսումէք , բայց Սուրբ
12 Հոգին ։ Եղբայր եղբօրը կ՚մատնէ մահի մէջ՝ եւ
հայր որդոյն . եւ որդիք վերկըլենան հարանց վե-
13 րայ , եւ նորանց կ՚սպանեն ։ Եւ ամենին ատելի կը
լինիք իմ անունիս համար . բայց ո՛վ որ մինչեւ
14 վերջը կ՚համբերէ՝ նա կապրի ։ Եւ երբոր տեսնէք
աւերածի պղծութիւնն , որ այն տեղումը կ՚կանգ-
նի՝ որ արժանի չէ . (ով որ կարդումէ , մի՛տք առ-
նէ) . այն ժամանակը նորանք որ Հրէաստանումն են՝
15 թո՛ղ սարերը փախչին . Եւ ով որ կտերների վե-

րայ է՝ թո՛ղ վեր չ՚գայ տան մէջ եւ չ՚մտնէ՝ իրեն
16 տանիցը մին բան վերառնել ։ Եւ ով որ յանդումն
է՝ թո՛ղ յետ չ՚դառնէ , որ իրեն շորերն առնէ ։
17 Բայց այն օրերը վա՛յ կ՚լինի յղացածներին եւ ծծ
18 տուօղներին ։ Աղօ՛թք արէք՝ որ նա ձմեռան ժա-
19 մանակին չ՚լինի ։ Այն օրերն այնպէսի նեղութիւն-
ներ կ՚լինին՝ ինչպէս որ աշխարհքի սկզբիցը մինչեւ
հիմիկ ընաւ մին ժամանակ չեն եղած , եւ էլ չեն
20 լինիլ ։ Եւ թէ որ Աստուած իրեն ընտրվածներին
համար այն օրերը չէր կարճացրել , ընաւ մին մար-
մին չէր ապրիլ բայց այն ընտրվածներին համար՝
21 որ ընտրեց՝ այն օրերը կարճացրուց ։ Այն ժամա-
նակը թէ որ մինն ասէ ձեզ՝ թէ , Ահա՛ այստեղ
22 է Քրիստոսն կամ այնտեղ , մի՛ հաւատաք . Պատ-
ճառնոր՝ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ
վեր կ՚կենան . եւ նշաններ եւ հրաշքներ առաջ
կ՚բերեն՝ որ եթէ կարելի լինէր՝ ընտրվածներին էլ
23 կ՚մոլորացնէին ։ Բայց դուք զգո՛յշ կացէք . ահա՛
ամեն բանն առաջուց ասացի ձեզ ։
24 Բայց այն օրերն այն նեղութենիցն ետեւ արե-
գակը կ՚խաւարվի՝ եւ լուսինն իրեն լոյսը չի՛ տալ .
25 Եւ աստեղներն երկնքիցը կ՚թափվին , եւ զօրու-
26 թիւնները երկնքումը կ՚շարժվին ։ Եւ այն ժամա-
նակը կ տեսնեն Որդին մարդոյ ամպերով եկած ,
27 շատ զօրութենով եւ փառքով ։ Եւ այն ժամանա-
կըն իրեն հրեշտակները կուղարկէ , եւ իրեն ընտ-
րըվածներին չորս կողմիցը կ՚ժողովէ երկրի ծայրիցը
28 մինչեւ երկնքին ծայրը ։ Բայց դուք՝ թզի ծառիցը
սովորեցէ՛ք առակը . երբոր նորա ճղերը մին քիչ
կ՚կակղին եւ տերեւ կարձակվի նորանում՝ գիտու-

29 տէք թէ ամառը մօտ է. Այնպէս էլ դուք՝ երբոր
տեսնէք այս ամէն բաներս եղած՝ իմացէ՛ք թէ նա
30 մօտիկ է դռներին. Ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ
Այս ազգս չի՛ անցնիլ՝ մինչեւ որ այս ամենս լինի։
31 Երկինքն ու երկիրս կանցնին, բայց իմ խօսքերս
32 չեն անցնիլ. Միայն թէ այն օրին եւ ժամին հա-
մար ո՛չ ով չի՛ գիտում՝ ո՛չ հրեշտակներն երկն-
33 քումը՝ եւ ո՛չ Որդին. բայց միայն Հայրը. Զգո՛յշ
կացէք, արթո՛ւն մնացէք եւ աղօ՛թք արէք. ին-
չու որ՝ չէք գիտում, թէ այն ժամանակն երբ կ'լի-
34 նի. Ինչպէս մին մարդ՝ որ հեռու աշխարհք գնա-
լու ժամանակին՝ իրեն տունը կ'թողէ. եւ իրեն
ծառաներին իշխանութիւն կ'տայ. եւ ամեն մէկին
իրեն գործը. եւ դռնապանին հրաման կ'տայ՝ որ
35 արթուն կենայ. Ուրեմն արթո՛ւն կացէք. ինչու որ՝
չէք գիտում, տան տէրն երբ կ'գայ՝ իրիկո՞ւնն,
թէ մէջ գիշերը, թէ հաւի խօսելու ժամանակը,
36 թէ առաւօտանց. Որ չ'լինի թէ յանկարծ գայ՝
37 եւ ձեզ քնի մէջ գտնէ. Բայց ինչ որ ձեզ եմ
ասում՝ ամենին էլ ասում եմ. Արթո՛ւն կացէք։

ԳԼ. ԺԴ

Բեթանիայի օծումը. հաղորդութիւնը. պարտէզին աղօթքը. մատնութիւնը. բռնիլը. Կայիափայի մօտ դատաստանութիւնը. Պետրոսի ուրանալը։

1 Եւ երկու օրից ետեւ զատիկն էր եւ բաղարջա-
կերք. քահանայապետներն ու կարդացողները խնդ-
րումէին՝ թէ ի՞նչպէս նորան նենգութենով բռնեն

2 եւ սպանեն։ Բայց ասումէին՝ թէ, Այս տօնիս
չ'լինի՝ որ ժողովրդին մէջ խռովութիւն չ'լինի։
3 Եւ երբոր Բեթանիա էր՝ Սիմօն բորոտի տունը
սեղան նստած՝ մին կին եկաւ՝ որ մին շիշ ազնիւ
թանկագին նարդոսի իւղ ունէր, եւ այն շիշը կոտ-
4 րեց՝ եւ նորան գլխին վերայ թափեց։ Եւ աշա-
կերտները դժուարանումէին եւ ասում. ինչո՞ւ այդ
5 իւղդ զուր տեղը կորաւ։ Կարելի էր այդ իւղդ ե-
րեք հարիւր դահեկանից աւելի թանգ ծախել,
եւ աղքատներին տալ. եւ շատ բարկութենով տրը-
6 տնջումէին նորա վերայ։ Եւ Յիսուս նորանց ա-
սաց. Թո՛ղ արէք դորան. ինչո՞ւ էք նեղութիւն
տալիս դորան. ինչու որ՝ դա մին բարի բան գոր-
7 ծեց ինձ վերայ։ Ամեն ժամանակ աղքատները
ձեզ հետ ունիք, եւ երբոր կամենաք՝ կարող էք
նորանց բարի անել. բայց ինձ ամեն ժամանակ
8 ձեզ հետ չունիք։ Դա ինչ որ ունէր՝ արաւ. ա-
ռաջուց իմ մարմինս օծեց՝ որ պատանքի նշան
9 լինի։ Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ որ Ամեն աշխարհ-
քին մէջ որտեղ որ այս աւետարանս կ'քարոզվի՝
դորա յիշատակին համար նա էլ կ'խօսվի՝ որ դա
արաւ։
10 Եւ Յուդա Իսկարիովտացին՝ այն տասներկուսից
մինը, քահանայապետներին մօտ գնաց՝ որ նորան
11 մատնէ նորանց ձեռքը. Նորանք երբոր լսեցին՝ ու-
րախացան, եւ խոստացան՝ որ նորան արծաթ տան
եւ խնդրումէին՝ թէ ի՞նչպէս յարմար ժամանա-
կով մատնէ նորան։
12 Եւ բաղարջակերաց առաջին օրն որ ժամանակ
որ զատիկն գառը մորթումէին, աշակերտները նո-

րան ասացին․ ի՞նչ տեղ ես կամենում որ գնանք
13 պատրաստենք՝ որ զատիկն ուտես։ Եւ այն աշա-
կերտներիցն երկուսին ուղարկեց եւ նորանց ասաց․
Գնացէ՛ք քաղաքը, եւ երբոր մտնէք քաղաքը՝ մին
մարդ կ'պատահի ձեզ՝ որ ջրի կուժն ուսին վերայ
14 կունենայ․ Նորա ետեւէն գնացէ՛ք։ Եւ որ տուն
մտնէ, այն տան տիրոջն ասացէ՛ք․ Վարդապետն
ասումէ՝ Ո՞ւր է այն վեր գալոյ տեղն՝ որ Նորա-
15 նում զատիկն ուտեմ աշակերտներիս հետ։ Եւ Նա
մին մեծ զարդարված վերնատուն ցոյց կ'տայ ձեզ․
16 այն տեղ պատրաստեցէ՛ք մեզ համար։ Եւ Նորան
աշակերտները գնացին որ պատրաստեն․ քաղաքն
եկին՝ եւ այնպէս գտին ինչպէս որ նորանց ասաց․
եւ զատիկը պատրաստեցին։
17 Եւ երբոր իրիկուն էլաւ՝ տասներկուսին հետ ե-
18 կաւ։ Եւ երբոր սեղան նստեցին՝ եւ դեռ ուտում
էին, Յիսուս ասաց․ Ճշմարիտ ասումեմ ձեզ՝ որ
ձեզանից մինը կ'մատնէ ինձ․ Նա որ իսկ ինձ հետ
19 ուտումէ։ Եւ նորանք սկսեցին տրտմել՝ եւ մինը
մինից ետեւ ասել՝ Միթէ ե՞ս եմ․ եւ միւսը Միթէ
20 ե՞ս եմ։ Նա պատասխան տուաւ եւ նորանց ա-
սաց․ Այդ տասներկուսիցդ մինն՝ որ ինձ հետ
21 ձեռքն սկաւառակիդ մէջը մտցրուց։ Բայց Որդին
մարդոյ կ'գնայ՝ ինչպէս որ նորա համար գրված է․
սակայն վա՛յ է այն մարդոյն՝ որ նորան ձեռքովը
Որդին մարդոյ կ'մատնվի․ լա՛ւ էր նորան՝ թէ այն
մարդը բնաւ ծնված չ'լինէր։
22 Եւ դեռ քանի որ ուտումէին, Յիսուս հաց ա-
ռաւ՝ օրհնեց եւ կտրեց՝ տուաւ նորանց եւ ա-
23 սաց․ Առէք՝ դա՛ է իմ մարմինս։ Եւ բաժակն ա-

ռաւ՝ գոհացաւ, նորանց տուաւ, եւ ամենքը խը-
24 մեցին նորանից։ Եւ նորանց ասաց․ սա՛ է իմ ա-
րիւնս նոր ուխտի եւ պայմանի, որ շատերի տե-
25 ղակ թափվումէ։ Ճշմարիտ ասումեմ ձեզ․ Թէ
որթի բերքիցն էլ չե՛մ խմիլ մինչեւ այն օրն, երբ-
որ նորան նոր կ'խմեմ Աստուծոյ արքայութեանը
մէջ։
26 Եւ գոհացան՝ եւ դուրս էլան Ձիթենեաց սարը։
27 Եւ Յիսուս նորանց ասաց․ Ամենքդ այս գիշերս կը
գայթակղվիք ինձանից․ ինչուոր՝ գրված է՝ Թէ
28 Հովիւը կ'զարկեմ՝ եւ ոչխարները կ'ցրվին։ Բայց
իմ յարութենիցս ետեւ ձեզանից առաջ կ'գնամ
29 Գալիլեա։ Պետրոս պատասխան տուաւ եւ նորան
ասաց․ Թէեւ ամենքն էլ գայթակղվին, բայց ես
30 չէ՛։ Եւ Յիսուս նորան ասաց․ Ճշմարիտ ասու-
մեմ քեզ․ Թէ իսկ դու այս գիշերս՝ դեռ քանի
որ հաւը չի՛ խօսացել՝ երեք անգամ կուրանաս
31 ինձ։ Բայց Պետրոս էլ աւելի խօսքը հաստատում
էր եւ ասում․ Թէ որ քեզ հետ մեռնելու էլ լի-
նիմ, քեզ չեմ ուրանալ․ այնպէս էլ ամենքն էին
32 ասում։ Եկին այն գիւղն՝ որ նորան անունը Գեթ-
սեմանի էր․ եւ աշակերտներին ասաց․ Այստեղ
33 նստեցէ՛ք՝ մինչեւ որ ես աղօթք անեմ։ Եւ Պետ-
րոսին ու Յակոբին եւ Յօհաննէսին իրեն հետ ա-
34 ռաւ, եւ սկսեց տրտմիլ եւ հոգալ։ Այն ժամա-
նակը նորանց ասաց․ իմ անձս մեռնելոյ չափ տրտ-
մըված է․ այստեղ մնացէ՛ք եւ արթուն կացէք։
35 Եւ մին քիչ առաջ գնաց, իրեն երեսին վերայ գե-
տինն ընկաւ, եւ աղօթք էր անում՝ որ եթէ կա-
36 րելի է՝ այն ժամն իրենից անցնէ։ Եւ ասաց․ Աբ-

բա՛ Հայր՝ ամեն բան կարելի է քեզ. այս բաժակս
ինձանից անցուցո՛ւ՝ բայց չէ թէ ինչպէս ես եմ
37 կամենում, այլ ինչպէս որ դու ես կամենում։ Եւ
եկաւ գտաւ նորանց որ քնած էին՝ եւ Պետրոսին
ասաց. Սիմո՛ն քնում ե՞ս. չ՚կարացի՞ր մին ժամ
38 արթուն կենալ։ Արթուն կացէք եւ աղօ՛թք ա-
րէք, որ փորձութեան մէջ չ՚մտնէ՛ք. հոգին յօ-
39 ժար է, բայց մարմինս տկար։ Եւ դարձեալ գը-
նաց աղօթք արաւ, եւ ճիշտ այն խօսքերն ասաց։
40 Նորէն դարձաւ եւ նորանց քնի մէջ գտաւ. ին-
չուր՝ նորանց աչքերը ծանրացել էին, եւ չէին
41 գիտում՝ թէ ինչ պատասխան տան նորան։ Եր-
րորդ անգամ եկաւ եւ նորանց ասաց. Սորանից
ետեւ քնացէք եւ հանգիստ առէք, ինչուր՝ վեր-
ջըն հասել է. ժամն եկաւ, եւ ահա՛ Որդին մար-
42 դոյ մատնվումէ մեղաւորաց ձեռքը։ Ապա վե՛ր
կացէք գնանք. ահա՛ մօտեցաւ նա՝ որ պիտի ինձ
մատնէ։

43 Եւ դեռ քանի որ նա այն բանը խօսումէր. Յու-
դա Իսկարիոտացին՝ այն տասներկուսիցը մինն ե-
կաւ, եւ նորան հետ ամբոխ սրերով եւ ըհրներով
քահանայապետներիցն ու կարդացողներիցը եւ ծե-
44 րերիցը։ Մատնիչը նորանց նշան էր տուել՝ եւ ա-
սել. թէ Որին որ ես կ՚համբուրեմ՝ նա՛ է. նորան
45 բռնեցէ՛ք եւ զգուշութենով տարէ՛ք։ Եւ շուտով
մօտ եկաւ եւ նորան ասաց. Ռաբբի՛, Ռաբբի՛,
46 եւ նորան համբուրեց։ Եւ նորանք ձեռք ձգեցին
47 նորան՝ եւ նորան բռնեցին։ Եւ նորանցից մինն՝
որ նորա մօտ կային՝ սուրը քաշեց, եւ քահա-
նայապետի ծառային զարկեց, եւ նորա ականջը

48 կտրեց։ Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ա-
սաց. Ինչպէս մին աւազակի վերայ սրերով եւ ըհ-
49 րերով դուրս եկէք ինձ բռնել։ Միշտ ձեզ մօտ
էի եւ տաճարումը սովրցնումէի. եւ ինձ չ՚բռ-
նեցիք. բայց նորահամար՝ որ մարգարէներին գրքե-
50 րը կատարվին։ Այն ժամանակն ամեն աշակերտ-
51 ները նորան թողին՝ եւ փախան։ Եւ մին երիտա-
սարդ նորա ետեւէն գնումէր՝ որ մերկ մարմնոյն
վերայ կտաւ էր առել. եւ երիտասարդները բռ-
52 նումէին նորան։ Եւ նա կտաւը թողեց՝ եւ մերկ
փախաւ նորանցից։

53 Եւ Յիսուսին տարան Կայիափա քահանայապե-
տին մօտ. եւ ամեն քահանայապետներն ու կար-
54 դացողները եւ ծերերը նորան մօտ էին գալիս։ Եւ
Պետրոս հեռուանց գնումէր նորա ետեւէն մին-
չեւ իսկ քահանայապետին սրահի ներսը, եւ ըս-
պասաւորներին հետ նստումէր՝ եւ լուսոյն մօտ տա-
55 քանումէր։ Բայց քահանայապետներն ու ամեն
ատեանը Յիսուսին հակառակ մին վկայութիւն
էին ուզում՝ որ նորան սպանեն՝ եւ չէին գըտ-
56 նում։ Պատճառնոր՝ շատ մարդիկ սուտ վկայու-
թիւն էին վկայում նորանից. եւ վկայութիւններն
57 իրար նման չէին։ Ուրիշները վերկացան եւ նորա-
58 նից սուտ վկայում էին, եւ ասում. Թէ Մենք
դորանից լսեցինք, որ ասումէր՝ Ես այդ ձեռքով
շինած տաճարդ կ՚քանդեմ, եւ երեք օրում ուրիշը
59 կ՚շինեմ՝ որ ձեռքով չի՛ շինած։ Բայց եւ այնպէս
60 նորանց վկայութիւնն իրար նման չէ՛ր։ Ապա քա-
հանայապետը վերկացաւ մէջ տեղը՝ եւ Յիսուսին
հարցնումէր եւ ասում. Բնաւ պատասխան չե՞ս

61 տալիս. ի՞նչ են վկայում դորանք քեզանից։ Եւ
Նա լուռ էր կենում՝ եւ ընաւ մին պատասխան
չէր տալիս. քահանայապետը նորէն երկրորդ ան-
գամ Նորան հարցնումէր եւ ասում. Դո՞ւ ես Քը-
62 րիստոսը՝ օրհնեալ Աստուծոյ Որդին։ Յիսուս պա-
տասխան տուաւ եւ Նորան ասաց. Դու ասցիր՝
որ ես եմ. բայց կ'տեսնէք Որդին մարդոյ Զօրու-
թեան աջ կողմը նստած, եւ երկնքի ամպերով ե-
63 կած։ Եւ քահանայապետը շուտով իրեն շորերը
պատառեց՝ եւ ասաց. Էլ ի՞նչ պէտք է մեզ վը-
64 կայ։ Ահա՛ ամենքդ դորա բերանիցը հայհոյանքը
լսեցիք. ի՞նչպէս է երեւում ձեզ. եւ ամենքը դա-
տապարտեցին Նորան՝ թէ Մահապարտ է։
65 Եւ մին քանիսն սկսեցին Նորան երեսին թքել,
գլխին վերայ շոր ձգել, բռնցքով թակել եւ ա-
սել. Մեզ մարգարէացի՛ր Քրիստոս՝ թէ Նա ո՞վ
է՝ որ քեզ զարկեց. եւ սպասաւորները Նորան ապ-
տակ էին տալիս։
66 Եւ Պետրոս դեռ որ ներքին կողմը սրահին մէջն
67 էր, քահանայապետին մին աղախինը եկաւ, Եւ
Նորան տեսաւ՝ որ տաքանումէր. մտիկ տուաւ Նո-
րան՝ եւ ասաց. Դու էլ Յիսուս Նազօրեցոյն հետ
68 էիր։ Նա ուրացաւ եւ ասաց. Չե՛մ ճանաչում
եւ չե՛մ գիտում, թէ դու ինչ ես խօսում. եւ
երբոր դուրս գնաց դրսի սրահը, հաւը խօսեց։
69 Նորէն աղախինը Նորան տեսաւ, եւ սկսեց ասել
նորանց՝ որ չորս կողմումը կանգնած էին, թէ Սա՛
70 էլ նորանցից է։ Եւ Նա կրկին ուրացաւ. եւ մին
քիչ յետոյ նորանք՝ որ չորս կողմումը կանգնած
էին, նորէն ասացին Պետրոսին. Շիտակ՝ որ դու

էլ նորանցից ես, ինչու որ՝ Գալիլեացի ես, եւ իսկ
71 քո խօսելդ էլ նման է։ Եւ Նա սկսեց անիծել,
երդում ուտել եւ ասել՝ թէ Չե՛մ գիտում այն
72 մարդն՝ որ դուք ասումէք։ Եւ շուտով հաւն երկ-
րորդ անգամ խօսեց. եւ Պետրոս միտքը բերաւ
այն բանն՝ որ Յիսուս Նորան ասաց. թէ Հաւը
դեռ երկու անգամ չ'խօսած՝ դու երեք անգամ
ինձ կուրանաս. եւ սկսեց լաց լինել։

ԳԼ. ԺԵ

Քրիստոսի չարչարանքը Պիղատոսի մօտ. փշեղէն պսակը. խաչելութիւնը. մահն ու թաղումը։

1 Եւ շուտով առաւօտանց՝ քահանայապետները
ծերերին ու կարդացողներին հետ՝ եւ բոլոր ատեա-
նըն էլ խորհուրդ արին, եւ Յիսուսին կապեցին՝
2 եւ տարան մատնեցին Պիղատոսին։ Եւ Պիղատոս
Նորան հարցրուց եւ ասաց. Դո՞ւ ես Հրէից Թա-
գաւորը. Նա պատասխան տուաւ Նորան եւ ասաց.
3 Դու ես ասում։ Եւ քահանայապետները շատ չա-
րախօսութիւն էին անում Նորանից. եւ Նա ընաւ
4 պատասխան չէ՛ր տալիս։ Բայց Պիղատոս նորէն
հարցնումէր Նորան. Ընաւ պատասխան չե՞ս տա-
լիս, տե՛ս՝ ո՛րքան չարախօսութիւն են անում քե-
5 զանից։ Եւ Յիսուս նորանից ետեւ ոչ մին պա-
տասխան չ'տուա՛ւ, մինչեւ որ՝ Պիղատոս շատ զար-
մանումէր։
6 Բայց տօնին ժամանակին մին բանտարկեալ էր
արձակում նորանց համար՝ որին որ իրենք խնդ-

7 բուժէին։ Եւ մինը կար՝ որ նորան անունն Բարաբ-
բա էր՝ խռովութիւն անողներին հետ կապւած,
որ իրենց խռովութեանումը մին մարդ էին սպանել։
8 Ամբոխն սկսեց բարձր ձայնով աղաղակել, եւ խնդ-
րել՝ ինչպէս որ սովոր էր, որ Բարաբբային արձա-
9 կէ նորանց համար։ Պիղատոս պատասխան տուաւ
եւ նորանց ասաց. Կամենո՞ւմէք՝ որ Հրէից Թա-
10 գաւորն արձակեմ։ Պատճառն որ՝ գիտումէր որ քա-
11 հանայապետները նախանձով էին մատնել նորան, Որ
ամբոխին էլ հաւանացրին՝ որ Բարաբբային արձա-
12 կէ նորանց համար։ Պիղատոս նորէն պատասխան
տուաւ եւ նորանց ասաց. Ապա Հրէից Թագա-
13 ւորին ի՞նչ էք ուզում՝ որ անեմ։ Եւ նորանք քա-
հանայապետներիցը գրգռւած դարձեալ աղաղակե-
14 ցին՝ Խա՛չ հանէ դորան։ Պիղատոս նորանց ասաց Դա
ի՞նչ չար բան է արել. եւ նորանք էլ աւելի էին
15 աղաղակում եւ ասում. Խա՛չ հանէ դորան։ Բայց
Պիղատոս՝ որովհետեւ կամեցաւ ամբոխի կամքը կա-
տարել, Բարաբբային արձակեց նորանց համար եւ
Յիսուսին ծեծեց, եւ ձեռնները տուաւ որ խաչւի։
16 Եւ զինուորները նորան տարան ներսի սրահն՝ որ-
տեղ որ հրապարակն էր. եւ բոլոր գունդը մին
17 տեղ կանչեցին։ Եւ նորան կարմիր քղամիդ եւ
ծիրանի շորեր հագցրին, եւ փշերից շինած պսակ
18 նորան գլուխը դրին, Եւ սկսեցին նորան ողջոյն
19 տալ՝ եւ ասել. Ո՛ղջ կաց Հրէից Թագաւոր։ Եւ
նորան գլուխը եղէգով թակում ու երեսին թը-
քումէին՝ եւ ծունր դնելով երկրպագութիւն էին
20 տալիս նորան։ Եւ երբոր ծաղր արին նորան՝ այն
քղամիդն ու ծիրանի շորերը նորանից հանեցին, եւ

իրեն շորերը հագցրին իրեն, եւ դուրս տարան,
որ խաչ հանեն նորան։
21 Եւ ուժով բռնեցին Սիմոն Կիւրենացուն, Աղեք-
սանդրի եւ Ռուփի հօրն՝ որ յանդիցն եկած այն
տեղիցն անցնում էր որ նորա խաչափայտը վեր
22 առնէ։ Եւ տարան նորան Գողգոթա, մին տեղ՝
23 որ կ'թարգմանւի գլխատեղւոյ տեղ։ Եւ նորան զմըռ-
սած գինի էին տալիս. բայց նա չառաւ. եւ նո-
24 րան խաչ հանեցին։ Եւ նորա շորերը բաժանեցին,
վիճակ ձգելով նորանց վերայ՝ թէ ո՛վ ինչ պիտի
25 առնէ։ Ժամն երեքն էր՝ եւ նորան խաչ հանեցին։
26 Եւ նորա վնասին գիրը գրւած էր՝ թէ Հրէից Թա-
27 գաւորն է։ Եւ նորան հետ երկու աւազակ խաչ
հանեցին. մինը նորա աջ կողմը՝ եւ մինը ձախ կող-
28 մը։ Եւ կատարւեցաւ այն գիրն, որ ասում է՝ թէ
29 Անօրէններին հետ համարւեցաւ։ Եւ նորանք՝ որ
այնտեղով անցնում էին, նորան հայհոյումէին,
իրենց գլխները շարժում եւ ասում. Վա՛հ որ տա-
30 ճարը քանդումէիր՝ եւ երեք օրում շինում, Ազ-
31 րեցո՛ւ քո անձդ եւ վե՛ր եկ խաչիցդ։ Այնպէս էլ
քահանայապետները կարդացողներին հետ իրար
մէջ ծաղր էին անում՝ եւ ասում. Ուրիշներին
ազատեցուց՝ իրեն անձը չի՛ կարողանում ազատեցնել։
32 Այդ Քրիստոսդ՝ Իսրայէլի Թագաւորը՝ թո՛ղ հի-
միկ այդ խաչիցդ վե՛ր գայ, որ տեսնենք եւ դորան
հաւատանք. եւ նորանք էլ որ նորա հետ խաչւած
էին, նորան նախատինք էին տալիս։
33 Եւ երբոր ժամը վեցն էլաւ՝ խաւար ամեն երկ-
34 րին բռնեց մինչեւ իննը ժամը։ Եւ իննը ժամին Յի-
սուս մեծ ձայնով աղաղակեց եւ ասաց. Էլի Էլի

լա՛մա սաբաքթանի․ որ կ՚թարգմանուի՝ Ի՛մ Աս-
35 տուած, Ի՛մ Աստուած, ինչո՞ւ թողիր ինձ։ Եւ
մին քանիսը նորանցից՝ որ նորան մօտ կանգնած
էին, երբոր լսեցին, ասումէին՝ թէ Եղիային է
36 կանչում։ Եւ մինը վազեց մին սպունգ քացախով
լցրուց, եւ եղէգի վերայ անցրուց, եւ տուաւ նո-
րան՝ որ խմէ, եւ ասաց․ Թո՛ղ տեսնենք՝ թէ Ե-
ղիան կ՚գա՞յ որ նորան վէր բերէ։
37 Եւ Յիսուս մեծ ձայն արձակեց՝ եւ հոգին հա-
38 նեց։ Եւ տաճարի վարագոյրն երկու կտոր պա-
39 տառուեցաւ՝ վերեւից մինչեւ ցածը։ Եւ հարիւ-
րապետն՝ որ այնտեղ կանգնած էր, երբոր տեսաւ՝
թէ աղաղակեց եւ հոգին հանեց, ասաց․ Ճշմարիտ
40 որ՝ այս մարդս Աստուծոյ Որդի էր։ Կանայք էլ
կային՝ որ հեռուանց մտիկ էին տալիս․ որ նորանց
միջումն էր Մարիամ Մագդաղենացին, եւ Մա-
րիամ՝ փոքր Յակոբի եւ Յօսէի մայրը, եւ Սաղօ-
41 մէն, Որ նորանք՝ երբոր նա՝ Գալիլեա էր՝ նորա ե-
տեւէն ման էին գալիս եւ նորան ծառայումէին․
եւ էլ ուրիշ շատ կանայք՝ որ իսկ նորան հետ Ե-
րուսաղէմ էին եկել։
42 Եւ երբոր իրիկուն էլաւ, ինչուոր՝ ուրբաթ օր
43 էր՝ որ շաբաթն էր մտնում, Յօսէփն եկաւ՝ որ Ա-
րիմաթիայից էր՝ պարկեշտ իշխանաւոր մարդ՝ որ
ինքն էլ Աստուծոյ արքայութեանն սպասումէր․
սա համարձակվեցաւ՝ Պիղատոսի մօտ մտաւ, եւ
44 Յիսուսին մարմինը խնդրեց։ Եւ Պիղատոս զարմա-
ցաւ՝ որ այնքան շուտով մեռաւ․ եւ հարիւրապե-
տին իրեն մօտ կանչեց, նորան հարցրուց եւ ա-
45 սաց․ թէ Իրաւի որ այնքան շուտո՞վ մեռաւ։ Եւ

երբոր այն հարիւրապետից տեղեկացաւ՝ մարմինը
46 Յօսէփին շնորհեց։ Եւ Յօսէփ կտաւ գնեց՝ եւ նո-
րան վէր բերաւ եւ կտաւով պատեց, եւ գերեզ-
մանին մէջ դրաւ՝ որ նորան քարից փորել էր․
եւ մին մեծ քար ձգեց գերեզմանի դռան առա-
47 ջին։ Բայց Մարիամ Մագդաղենացին եւ Յակոբի
եւ Յօսէի Մարիամը տեսին այն տեղն՝ որ դրվաւ։

ԳԼ․ ԺԶ

Քրիստոսի յարութիւնն ու համբարձումը։

1 Եւ երբոր շաբաթն անցաւ, Մարիամ Մագդա-
ղենացին եւ Յակոբի Մարիամն ու Սաղօմէն՝ գնա-
ցին խունկ պատրաստեցին, որ գան նորան օծեն։
2 Եւ մէկշաբթի օրն առաւօտանց արեգական ծագե-
3 լոյ ժամանակն՝ եկին գերեզմանը։ Եւ իրար ասում
էին՝ Ո՞վ պիտի այն քարն մեզ համար գերեզմանի
4 դռնիցը թաւալէ։ Եւ նայեցին տեսին՝ որ քարը
գերեզմանիցն հեռու էր թաւալած․ ինչուոր շատ
5 մեծ էր։ Եւ գերեզմանին մէջն որ մտին, մին ե-
րիտասարդ տեսին՝ որ աջ կողմը նստած էր՝ սպի-
6 տակ վերարկու հագած, եւ շատ վախեցան։ Եւ
նա ասաց նորանց․ Մի՛ վախենայք, դուք Յիսուս
Նազօրեցի խաչվածն էք ուզում. Նա յարութիւն
առաւ․ այստեղ չէ՛․ ահա՛ այն տեղն՝ ուր որ նո-
7 րան դրին։ Բայց գնացէ՛ք նորա աշակերտներին
եւ Պետրոսին ասացէ՛ք՝ թէ ահա՛ նա ձեզանից ա-
ռաջ կ՚գնայ Գալիլեա․ այնտեղ կ՚տեսնէք նորան
8 ինչպէս որ նա ասաց ձեզ։ Եւ երբոր լսեցին՝ դուրս

եկին եւ փախան գերեզմանիցը, պատճառնոր՝ ա-
հով բռնված էին. եւ բնաւ մինին բան չասա-
9 ցին. ինչուոր վախենումէին ։ Յիսուս որ յարու-
թիւն առաւ՝ միակշաբթի առաւօտանց առաջ ե-
րեւեցաւ Մարիամ Մագդաղենացւոյն՝ որ նորանից
10 եօթը դեւ էր հանել ։ Եւ նա գնաց պատմեց նո-
րանց՝ որ նորան հետն էին, դեռ քանի որ սուգ
11 եւ լաց էին անում ։ Նորանք երբոր լսեցին՝ թէ
կենդանի է, եւ երեւեցաւ նորան՝ չ՚հաւատացին ։
12 Յետոյ ուրիշ կերպարանքով երեւեցաւ նորանց՝ որ
13 յանդն էին գնում ։ Նորանք գնացին ուրիշներին
պատմեցին՝ եւ նորանց էլ չ՚հաւատացին ։
14 Յետոյ՝ երբոր տասնումէկը սեղան էին նստած՝
նորանց երեւեցաւ եւ նորանց անհաւատութիւնն
ու քարասրտութի՛նը յանդիմանեց՝ որ չ՚հաւա-
տացին նորանց, որ ինքը մեռելների միջից յա-
րութիւն առած երեւեցաւ նորանց ։
15 Եւ նորանց ասաց. Գնացէ՛ք ամեն աշխարհք,
եւ աւետարանն ամեն ստեղծուածներին քարոզե-
16 ցէ՛ք ։ Ո՛վ որ հաւատայ եւ մկրտվի՝ կապրի. եւ
17 ո՛վ որ չ՚հաւատայ՝ կ՚դատապարտվի ։ Նորանց՝ որ
հաւատումեն, այս նշաններս կ՚հետեւին. իմ ա-
18 նունովս դեւեր կ՚հանեն. լեզուներ կ՚խօսին ։ Իրենց
ձեռներովս օձեր վեր կառնեն, եւ թէ որ մին մա-
հադեղ խմեն՝ վնաս չի՛ տալ նորանց. հիւանդնե-
րի վերայ ձեռք կ՚դնեն՝ եւ կ՚բժշկվին ։
19 Եւ ինքը՝ Տէր Յիսուսը նորանց հետ խօսելուցն ե-
տեւ՝ երկինքն համբարձաւ, եւ հօր աջ կողմը նըս-
20 տեց ։ Եւ նորանք դուրս գնացին, բոլոր աշխարհ-
քին մէջ քարոզումէին՝ Տէրի օգնականութենովը,
եւ Աստուծոյ խօսքը հաստատումէին նորանց ։

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ
ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Յօհաննու և Յիսուսի ծննդեան աւետիքները. Մարիամ գնումէ Եղիսաբեթին մօտ. Յօհաննու ծնունդը ։

1 ՈՐՈՎՀԵՏԵՒ շատ մարդիք յօժարեցին՝ որ նոր
կարգեն այն բաներին պատմութիւնն՝ որ մեր մէջն
2 հաստատվեցան. ինչպէս որ մեզ աւանդեցին նո-
րանք՝ որ սկզբից իրենց աչքովը տեսին եւ սպա-
3 սաւոր էլան բանին. Ես էլ, որ սկզբից ամեն բա-
ներին ճշմարտութենով հետեւեցի՝ կամեցայ, որ
կարգով գրեմ քեզ՝ ո՛վ պատուական Թէոփիլէ.
4 Որ իմանաս այն բաների ճշմարտութիւնն, որ սո-
վորեցիր ։
5 Եւ Հերոդէս Հրէաստանի թագաւորին օրերը,
մին քահանայ էլաւ Զաքարիա անուն՝ Աբիայի
դասակարգութենից. եւ նորա կինն Ահարոնի
6 աղջիկներիցը, եւ նորա անունը Եղիսաբեթ ։ Եւ
երկուսն էլ Աստուծոյ առաջին արդար էին՝ եւ
Տէրի ամեն պատուիրանքներումն ու իրաւունքնե-

7 րումն անմեղ էին գնում։ Բայց նորանք որդի չու-
նէին, պատճառնոր՝ Եղիսաբեթն ամուլ էր. եւ
երկուսն էլ իրենց օրերն անցուցրել էին։
8 Եւ էլաւ որ՝ երբոր նա Աստուծոյ առաջին քա-
հանայութիւն էր անում՝ իրեն հասած կարգի օ-
9 րերումը, Քահանայութեան սովորութեան պէս
վիճակ ընկաւ նորան՝ որ Աստուծոյ տաճարը մանէ,
10 եւ խնկարկութիւն անէ։ Եւ ժողովրդի ամեն բազ-
մութիւնը դուրսն աղօթք էին անում՝ խնկարկու-
11 թեան ժամանակին։ Եւ Տէրի հրեշտակն երեւե-
ցաւ նորան. որ կանգնած էր խնկի սեղանի աջ
12 կողմը։ Եւ Զաքարիան երբոր տեսաւ՝ շփոթվեցաւ,
13 եւ վախ ընկաւ նորան վերայ։ Տէրի հրեշտակը նո-
րան ասաց. Մի՛ վախենար Զա՛քարիա. ինչուոր՝
քո աղօթքդ լսվեցաւ, եւ քո Եղիսաբեթ կինդ
մին որդի կ'ծնի քեզ՝ եւ նորա անունն Յօհաննէս
14 կ'կանչես։ Եւ քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն
կ'լինի, եւ շատ մարդիք նորա ծնվելովը կուրախա-
15 նան. ինչուոր՝ նա մեծ կ'լինի Տէրին առաջին՝ եւ
գինի եւ օղի թող չ'խմէ՛, եւ դեռ իրեն մօրը փո-
16 րումը Սուրբ Հոգովը կ'լցվի։ Եւ Իսրայէլի որդիք-
ներիցը շատ հոգի կ'դարձնէ դէպի իրենց Տէր Ա-
17 ստուածը։ Եւ ինքը կ'գայ նորան առաջին Եղիայի
հոգովն ու զօրութենովն՝ որ հարանց սրտերը դէպի
որդիքը դարձնէ. եւ անհնազանդները դէպի ար-
դարների իմաստութիւնն՝ որ Տէրին համար բա-
18 րեկարգ ժողովուրդ պատրաստէ։ Եւ Զաքարիան
հրեշտակին ասաց. Ապա ինչո՞վ ճանաչեմ այդ
բանդ. պատճառնոր՝ ես ծեր եմ, եւ իմ կինս ի-
19 րեն օրերն անցուցրել է։ Հրեշտակը պատասխան

տուաւ եւ նորան ասաց. Ես Գաբրիէլն եմ՝ որ
Աստուծոյ առաջին կանգնում եմ, եւ ուղարկվե-
ցայ՝ որ քեզ հետ խօսիմ, եւ այդ բանդ քեզ
20 աւետիք տամ։ Եւ ահա՛ համր կ'լինիս, եւ չե՛ս
կարենալ խօսիլ, մինչեւ այն օրն՝ որ այդ բանդ
կ'լինի. պատճառնոր՝ չ'հաւատացի՛ր իմ խօսքերիս
21 որ իրենց ժամանակին պիտի կատարվին։ Եւ ժո-
ղովուրդն սպասումէին Զաքարիային՝ եւ զարմա-
նումէին նորա տաճարին մէջ ուշանալուն համար։
22 Եւ երբոր դուրս եկաւ՝ չէ՛ր կարողանում խօսիլ
նորանց հետ. եւ իմացան՝ թէ տաճարին մէջ տե-
սիլք տեսաւ. եւ նա նշաններով էր խօսում նո-
23 րանց հետ՝ եւ պապանձված էր մնում։ Եւ էլաւ՝
երբոր նորա պաշտօնի օրերը լցվան, գնաց իրեն
24 տունը։ Եւ այն օրերիցն ետեւ նորա Եղիսաբեթ
կինը յղացաւ, եւ հինգ ամիս իրեն անձը ծածուկ
25 պահումէր եւ ասում. Սա ի՞նչ բան է՝ որ Տէրն
ինձ վերայ գործեց այս օրերումս՝ որ ինձ վերայ
նայեց՝ որ իմ նախատինքս մարդկանց միջիցը վեր
առնէ։
26 Եւ վեցերորդ ամսինը Գաբրիէլ հրեշտակն Աս-
տուածանից ուղարկվեցաւ Գալիլեացոց մին քա-
27 ղաքն՝ որ նորա անունը Նազարէթ էր, Մին կոյսի
մօտ՝ որ նշանված էր մին մարդոյ՝ որ նորան անու-
նը Յօսէփ էր՝ Դաւթի տանիցը. եւ այն կուսին ա-
28 նունը՝ Մարիամ։ Եւ հրեշտակն որ նորա մօտ ե-
կաւ՝ ասաց. Ուրա՛խ լեր շնորհքով լցվածդ. Տէ-
29 րը քեզ հետ։ Եւ նա այն խօսքերին համար շը-
փոթվեցաւ, եւ իրեն մտքումը մտածումէր՝ թէ
30 ինչպիսի բան պիտի լինի այս բարեւս։ Եւ հրեշ-

հրեշտակը նորան ասաց. Մի՛ վախենար Մա՛րիամ. ին-
31 չու որ Աստուածանից շնորհք գտար. Եւ ահա՛ կը
յղանաս, եւ որդի կ'ծնիս. եւ նորա անունը Յի-
32 սուս կ'կանչես։ Նա մեծ կ'լինի, եւ Որդի Բարձ-
րելոյն կ'կոչվի. եւ Տէր Աստուած նորա Դաւիթ
հօր աթոռը կ'տայ նորան. եւ Յակոբայ տանը վե-
33 րայ յաւիտեան կ'թագաւորէ. Եւ նորա թագա-
34 ւորութեանը վերջ չի՛ լինիլ։ Եւ Մարիամն ասաց
հրեշտակին. Այդ բանդ ի՞նչպէս կ'լինի ինձ, որ
35 ես մարդ չե՛մ գիտում։ Հրեշտակը պատասխան
տուաւ եւ նորան ասաց. Սուրբ Հոգին կ'գայ քեզ
վերայ, եւ Բարձրելոյն զօրութիւնը քեզ վերայ
շուք կանէ. ինչու որ՝ նա էլ, որ քեզանից պիտի
36 ծնվի, սուրբ է, եւ Աստուծոյ Որդի կ'կոչվի։ Եւ
ահա՛ քո ազգական Եղիսաբեթը, նա էլ յղի է
իրեն պառաւութենումը. եւ սա նորան վեցերորդ
37 ամիսն է՝ որ ամուլ էր կոչված. ինչու որ՝ Աստու-
38 ծոյ առաջին ընաւ մին բան անկարելի չէ։ Եւ
Մարիամն ասաց. Ահա՛ ես Տէրին աղախինն եմ.
թո՛ղ քո խօսքիդ պէս լինի ինձ. եւ հրեշտակը
գնաց նորանից։

39 Մարիամն այն օրերին վերկացաւ, եւ փութա-
40 պէս սարերին կողմը գնաց Յուդայի քաղաքը։ Եւ
Զաքարիային տունը մտաւ, եւ Եղիսաբեթին բա-
41 րեւ տուաւ։ Եւ էլաւ երբոր Եղիսաբեթ Մարիա-
մին բարեւը լսեց, երեխան նորան փորումը խա-
42 ղաց. եւ Եղիսաբեթ Սուրբ Հոգով լցվաւ. Եւ
բարձր ձայնով աղաղակեց եւ ասաց. Օրհնեալ ես
դու կանանց մէջ, եւ օրհնեալ է քո փորիդ պը-
43 տուղը։ Եւ սա ի՞նչ տեղից է ինձ՝ որ իմ Տէրիս

44 մայրն ինձ մօտ գայ. ինչու որ՝ ահա՛ երբոր քո
բարեւիդ ձայնն իմ ականջս հասաւ, իմ երեխաս
45 իմ փորիս մէջն ուրախանալով խաղաց։ Եւ երա-
նի՜ է նորան՝ որ կ'հաւատայ՝ թէ այն բաները կը
46 կատարվին, որ Տէրից իրեն ասված են։ Եւ Մա-
րիամն ասումէր. Թո՛ղ իմ անձս փառաւորէ Տէ-
47 րին. Եւ իմ հոգիս ուրախացաւ՝ իմ Փրկիչ Աս-
48 տուծովս։ Պատճառնոր՝ իրեն աղախնոյն խոնար-
հութեանը մտիկ տուաւ, ինչու որ՝ ահա՛ հիմիկուց
49 ետեւ ամեն ազգերն երանի կ'տան ինձ. Պատճառն
որ՝ Զօրաւորը մեծ մեծ բաներ արաւ ինձ, եւ
50 սուրբ է նորան անունը։ Եւ նորա ողորմութիւնը
51 ազգից ազգ նորան վախեցօղներին վերայ է։ Զօ-
րութիւն արաւ իրեն բազուկովը՝ ցրվեց ամբար-
52 տաւաններին իրենց սրտի մտածմունքներովը։ Զօ-
րաւորներին իրենց աթոռից կործանեց, եւ խո-
53 նարհներին բարձրացրուց։ Սովածներին բարու-
թենով լցրուց. եւ հարուստներին դատարկ թո-
54 ղեց։ Իրեն Իսրայէլ ծառային խնամք տարաւ՝
55 իրեն ողորմութիւնները յիշելով։ Ինչպէս որ մեր
հարանց խօստացաւ՝ Աբրահամին եւ նորա զա-
ւակին՝ մինչեւ յաւիտեան։

56 Մարիամը մնաց նորան մօտ երեք ամսի չափ՝ եւ
յետոյ դարձաւ իրեն տունը։

57 Եւ Եղիսաբեթի ծնելոյ ժամանակը լցվաւ, եւ
58 որդի ծնաւ։ Եւ նորանք՝ որ նորա չորս կողմումն
էին՝ եւ նորա ազգականները լսեցին՝ թէ Տէրն իրեն
ողորմութիւնը մեծ արաւ նորան վերայ. եւ ուրա-
59 խացան նորան հետ։ Եւ էլաւ՝ ութերորդ օրը ե-
կին, որ երեխային թլփատեն, եւ նորան իրեն հօր

60 անունովը Զաքարիա էին կոչում։ Նորա մայրը
պատասխան տուաւ եւ ասաց. Ձէ՛, այլ Յօհան-
61 նէս պիտի կոչվի։ Եւ նորան ասացին՝ թէ Ո՛չ ով
չ՚կայ քո ազգումդ՝ որ նորան անունն Յօհաննէս
62 կոչվի։ Նորա հօրն աչքով էին անում՝ թէ ի՞նչ
63 կ՚կամենայ կոչել նորան։ Եւ նա տախտակ խնդ-
րեց, գրեց՝ եւ ասաց, դորա անունը Յօհաննէս է.
64 եւ ամէնքը զարմացան։ Եւ շուտով նորան բերա-
նըն ու լեզուն բացվաւ. եւ խօսումէր՝ եւ Աստու-
65 ծոյն օրհնում։ Եւ ահ ընկաւ ամէնին վերայ, որ
այս բաներ լսումէին, եւ որ նորանց չորս կողմովը
բնակված էին, եւ Հրէաստանի սարերի ամէն կող-
66 մերումն այս ամէն բաներս պատմվումէին։ Եւ ա-
մէնքն՝ որ լսումէին՝ իրենց սրտերումը դրին եւ ա-
սացին. Այս երեխաս ի՞նչ պիտի լինի. եւ Տէրին
ձեռքը նորան հետն էր։
67 Եւ նորա հայր Զաքարիան Սուրբ Հոգով լըց-
68 վաւ, մարգարէացաւ եւ ասաց. Օրհնեա՛լ է Իս-
րայէլի Տէր Աստուածն՝ որ մեզ տեսութիւն ե-
կաւ՝ եւ իրեն ժողովրդին համար փրկութիւն ա-
69 րաւ, Եւ իրեն Դաւիթ ծառայի տանիցը փրկու-
70 թեան եղջիւր վերկացրուց մեզ համար. Ինչպէս
որ խօսեց սրբոց բերանովն՝ որ յաւիտենից նորա
71 մարգարէներն էին. Փրկութիւն մեր թշնամիների-
72 ցը. եւ ամէն մեզ ատողների ձեռքիցը, Որ մեր
հարանց վերայ ողորմութիւն անէ, եւ իրեն սուրբ
73 ուխտն ու պայմանը յիշէ՝ Այն երդումն, որ մեր
74 հայր Աբրահամին երդվաւ՝ որ մեզ տայ, Որ մեր
թշնամիների ձեռքիցն ազատված՝ առանց վախի
75 պաշտենք իրեն, Սրբութենով եւ արդարութե-

թենով նորա առաջին՝ մեր կենաց ամէն օրերումը։
76 Եւ դո՛ւ ո՛վ երեխայ՝ Բարձրելոյն մարգարէ կ՚կոչ-
վիս. ինչուոր՝ պիտի գնաս Տէրին երեսաց առաջին՝
77 որ նորա ճանապարհը պատրաստես. Նորա ժողո-
վրդին փրկութեան գիտութիւն տաս իրենց մեղաց
78 թողութեան համար, Մեր Աստուծոյ քաղցր ողոր-
մութեանը համար, որ նորանով արեգակը վերե-
79 ւիցը տեսութիւն եկաւ մեզ. Որ երեւի նորանց՝ որ
խաւարումն ու մահի շուքումը նստած էին, որ
մեր ոտները դէպի խաղաղութեան ճանապարհը
ուղղէ։
80 Եւ երեխան աճո՛ւմէր՝ եւ հոգով զօրանում. եւ
անապատներումն էր մինչեւ այն օրն՝ որ նա երե-
ւեցաւ Իսրայէլին։

ԳԼ. Բ

Քրիստոսի ծնունդն ու թլփատումը և Տէրին առաջին կանգնացնելը. Սիմէօնն ու Աննան. տասներկու տարեկան գալիս է Յիսուս տաճարը. Նորա զարգանալը 'ի Նազարէթ։

1 Եւ էլաւ որ այն օրերը՝ հրաման դուրս եկաւ Օ-
գոստոս կայսերիցն, որ ամէն աշխարհքի միջի մար-
2 դիքը գրի տակ ձգվին։ Այս առաջին աշխարհա-
գիրս Կիւրենի Ասորոց դատաւորութեան ժամա-
3 նակումն էլաւ։ Եւ ամէնքը գնումէին՝ որ այն աշ-
4 խարհագիրը մտնեն՝ ամէն մէկն իրեն քաղաքը։ Յօ-
սէփն էլ Գալիլեայիցը՝ Նազարէթ քաղաքիցը գը-
նաց Հրէաստան Դաւթի քաղաքը, որ Բեթղէհեմ
է կոչվում. ինչուոր՝ նա Դաւթի տանիցն ու ազ-

5 գիցն էր, Որ աշխարհագիրը մտնէ Մարիամին հետ՝
6 որ նշանված էր նորան, եւ յղի էր։ Եւ երբոր նո-
րանք այնտեղ հասին, նորա ծնելոյ օրերը լցվան։
7 Եւ իրեն առաջինեկ որդին ծնաւ, եւ պատեց
խանձարուրների մէջ՝ եւ մսուրի մէջ դրաւ. ին-
չու որ՝ այն իջեւանումը տեղ չ՛կա՛ր նորանց հա-
մար,
8 Եւ այնտեղ հովիւներ կային դուրս տեղը կա-
ցող՝ որ գիշեր ժամանակն իրենց հօտերը պահում
9 էին։ Եւ Տէրի հրեշտակն երեւեցաւ նորանց. եւ
Տէրի փառքը նորանց վերայ ծագեց. եւ մեծ վա-
10 խով վախեցան։ Եւ հրեշտակը նորանց ասաց. Մի՛
վախենաք, ինչու որ՝ ահա՛ մեծ ուրախութեան ա-
ւետիք եմ տալիս ձեզ, որ ամեն ժողովրդին պիտի
11 լինի. Պատճառնոր՝ այսօր ձեզ Փրկիչ ծնվաւ՝
12 Դաւթի քաղաքումն. որ նա Օծեալ Տէր է։ Եւ
սա լինի՛ ձեզ նշան. մին երեխայ կ՛գտնէք խանձա-
13 րուրներով պատած, եւ մսուրի մէջ դրած։ Եւ
յանկարծակի այն հրեշտակին հետ էլաւ երկնաւոր
զօրքի բազմութիւնն, որ Աստուծոյն օրհնումէին՝
14 եւ ասում. Փառք Աստուծոյ 'ի բարձունս, եւ
երկրի վերայ խաղաղութիւն, եւ մարդկանց մէջ
15 հաճութիւն։ Եւ էլաւ երբոր հրեշտակները նորան-
ցից երկինքը վերացան, հովիւներն իրար ասցին.
Եկէ՛ք գնանք մինչեւ Բեթղէհէմ, եւ տեսնենք ի՛նչ
է այս բանս՝ որ էլաւ, որ Տէրը ցոյց տուաւ մեզ։
16 Եւ շուտով եկին եւ գտին Մարիամին եւ Յովսէ-
17 փին, եւ երեխային մսուրի մէջ դրած։ Եւ իմա-
ցան այն բանն՝ որ այն երեխային համար ասվեցաւ
18 նորանց։ Եւ ամենքն՝ որ լսումէին, զարմանումէին

այն բաներին համար՝ որ հովիւներն նորանց հետ
19 խօսեցին։ Եւ Մարիամն այս ամեն բաներս պա-
20 հում եւ իրեն սրտումը մտածումէր։ Եւ հովիւնե-
րը դարձան. Աստուծոյն փառաբանում եւ օրհ-
նումէին այն ամեն բաներին համար՝ որ տեսին.
ինչպէս որ նորանց պատմվեցաւ։
21 Եւ երբոր ութ օր լցվաւ՝ որ նորան թլփատեն,
նորան անունը Յիսուս կոչվեցաւ՝ նա որ հրեշտա-
կից էր կոչված, դեռ քանի որ նա չէ՛ր յղացված
փորումը,
22 Եւ երբոր նորա սրբութեան օրերը լցվան՝ Մովսէ-
սի օրէնքին պէս, նորան տարան Երուսաղէմ՝ որ
23 Տէրի առաջին կանգնացնեն, Ինչպէս որ Տէրի օ-
րէնքումը գրված է՝ թէ, Ամեն արու որ արգանդ
24 բանայ, Տէրին սուրբ պիտի կոչվի։ Եւ որ Տէրի օ-
րէնքումն ասածին պէս պատարագ բերեն մին զոյգ
25 տատրակ, կամ աղաւնու երկու ձագ։ Եւ ահա՛
Երուսաղէմումը մին մարդ կար՝ որ նորան անունը
Սիմէօն էր. եւ այն մարդն արդար եւ Աստուա-
ծավախ էր, եւ Իսրայէլի մխիթարութեանն էր ըս-
26 պասում, եւ Սուրբ Հոգի կար նորանում։ Եւ նա
Սուրբ Հոգուցը հրաման էր առել՝ որ մահ չ՛տես-
27 նէ՛, մինչեւ որ Տէրին Օծեալը տեսնէ։ Եւ նա Հո-
գովն եկաւ տաճարը. եւ երբոր ծնողները Յիսուս
երեխային բերին՝ որ օրէնքի սովորութեան պէս նո-
28 րա վերայ անեն. Նա էլ նորան առաւ ընդունեց
իրեն գիրկը, եւ Աստուծոյն օրհնեց, ու ասաց,
29 Տէ՛ր հիմիկ քո խօսքիդ պէս խաղաղութենով ես
30 արձակում քո ծառայիդ։ Ինչու որ՝ իմ աչքերս
31 քո փրկութիւնդ տեսին, Որ նորան ամեն ժողո-

32 վուրդների առաջին պատրաստեցիր. Լոյս՝ որ հե-
թանոսներին պիտի յայտնվի, եւ փառք քո Իս-
33 րայէլ ժողովրդիդ համար: Եւ նորան հայրն ու
մայրը զարմացել էին այն բաներին վերայ՝ որ նո-
34 րա համար խօսվում էին: Եւ Սիմէօնն օրհնեց նո-
րանց, եւ նորա մայր Մարիամին ասաց. Ահա՛ սա
կայ շատ մարդկանց համար ընկնելոյ եւ կանգնե-
լոյ պատճառ Իսրայէլին մէջ, եւ հակառակութեան
35 նշան: Եւ իսկ քո անձնովդ սուր կանցնէ, որ շատ
սրտերից խորհուրդները յայտնվին:
36 Եւ այնտեղ էր Աննա մարգարէն Փանուէլի աղ-
ջիկն Ասերի ազգից. սա ինքը շատ օրերը անցուց-
րել էր որ իրեն կուսութեան ժամանակից եօթն
37 տարի էր մնացել մարդոյ հետ: Եւ ութսուն եւ
չորս տարոյ չափ որբեւէրի էր՝ որ տաճարից չէր
հեռանում. բայց ծոմով եւ աղօթքով գիշեր ու
38 ցերեկ ծառայում էր Աստուծոյ: Եւ սա էլ այն
ժամումը վերկացաւ եւ Տէրից գոհանում էր, եւ
նորան համար ամենին հետ խօսում էր՝ որ Երուսա-
ղէմի փրկութեանն սպասում էին:
39 Եւ երբոր ամեն բաները Տէրի օրէնքին պէս կա-
տարեցին, յետ դարձան Գալիլեա՝ իրենց Նազա-
40 րէթ քաղաքը: Եւ երեխան աճում էր եւ զօրանում
իմաստութենով լցված. եւ Աստուծոյ շնորհքը նո-
րա վերայ էր:
41 Եւ նորա ծնողքը տարուց տարի Երուսաղէմ էին
42 գնում զատկի տօնին: Եւ երբոր նա տասներկու
տարեկան էլաւ, նորանք տօնի սովորութեան պէս
43 Երուսաղէմ գնացին: Եւ երբոր այն օրերը կա-
տարվեցան՝ եւ յետ դարձան, Յիսուս տղան Ե-

րուսաղէմումը մնաց. եւ նորա ծնողքը չիմացան.
44 կարծում էին՝ թէ նա ճանապարհի ընկերներին հետ
կ'լինի. մին օրվան չափ ճանապարհ եկին՝ եւ նորան
ման էին գալիս դրացիներին ու ծանօթներին մօտ:
45 Եւ երբոր չ'գտի՛ն, յետ դարձան Երուսաղէմ՝ որ
46 նորան ման գան: Եւ էլաւ որ երեք օրից ետեւ
նորան տաճարին մէջ գտին, որ վարդապետներին
հետ նստած էր. նորանց ականջ էր դնում, եւ նո-
47 րանցից հարցնում: Եւ ամենքն՝ որ նորանից լսում
էին՝ զարմանում էին նորան իմաստութեան եւ պա-
48 տասխաններին վերայ. Եւ երբոր նորան տեսին՝ շատ
զարմացան. եւ նորա մայրն ասաց նորան. Որ-
դեա՛կ՝ սա ի՞նչ բան արիր մեզ հետ. ահա՛ քո
հայրդ եւ ես մեծ նեղութենով ման էինք գալիս
49 քեզ համար: Եւ նորանց ասաց. Ի՞նչ էիք ինձ
ման գալիս. չէի՞ք գիտում՝ թէ պէտք է, որ ես
50 իմ Հօրս տանը լինիմ: Եւ նորանք չիմացան այն
51 բանն՝ որ նորանց հետ խօսեց: Եւ նորանց հետ վէր
եկաւ, եւ գնաց Նազարէթ. եւ նորանց հնազանդ
էր: եւ նորա մայրը այն ամեն բաները պահում էր
իրեն սրտումը:
52 Եւ Յիսուս աճում էր իմաստութենով եւ հասակով,
եւ շնորհքով Աստուծոյ եւ մարդկանց առաջին:

ԳԼ. Գ

Յօհաննու ապաշխարութեան քարոզն ու վկայութիւնը Քրիստոսի համար. Քրիստոսի մկրտութիւնն և ազգահամարը:

1 Տիբերիոս կայսերի տէրութեան տասն եւ հինգ-
տարին, Պոնտացի Պիղատոսի Հրէաստանի վերայ

դատաւորութեան ժամանակին , եւ Հերովդէսի Գա-
լիլեացոց վերայ չորրորդապետութեան ժամանակին,
եւ նորա եղբայր Փիլիպպոս Իտուրացոց եւ Տրաքո-
նացոց աշխարհքին վերայ չորրորդապետութեան
ժամանակին , եւ Լիւսանիայի Աբիլենացոց վերայ
2 չորրորդապետութեան ժամանակին , Եւ Աննայի եւ
Կայիափայի քահանայապետութեան օրերը՝ Աս-
տուծոյ խօսքը Զաքարիայի որդի Յօհաննէսին վե-
3 րայ եղաւ՝ անապատին մէջ ։ Եւ նա եկաւ Յորդա-
նանի ամեն կողմերն , որ ապաշխարութեան մկըր-
տութիւնը քարոզէ՝ մեղաց թողութեան համար ։
4 Ինչպէս որ Եսայի մարգարէի խօսքերի գրքումը գըր-
ված է . Կանչողի ձայն անապատումն . պատրա՛ստ
արէք Տէրի ճանապարհը , եւ շիտա՛կ արէք նորա
5 գնալոյ ճանապարհները . Թո՛ղ ամեն ձորերը լըց-
վին , եւ ամեն սարերն ու դարերը խոնարհվին . եւ
դժուարները հեշտ լինին , եւ դարուփոսերը հաւա-
6 սար ճանապարհներ լինին . Եւ թո՛ղ ամեն մար-
մին Աստուծոյ փրկութիւնը տեսնէ ։
7 Եւ այն ժողովուրդներին՝ որ դուրս էին եկած ,
որ նորանից մկրտվին՝ ասաց . Իժի զաւակներ՝ ո՞վ
սովորեցրուց ձեզ փախչել այն բարկութենիցն՝ որ
8 գալու է ։ Այսուհետեւ ապաշխարութեան արժա-
նի պտուղներ արէ՛ք . մի՛ սկսէք ասել՝ թէ Մենք
Աբրահամ ունինք հայր . ես ասումեմ ձեզ , թէ
Աստուած կարող է այս քարերից որդիք հանել
9 Աբրահամին համար ։ Բայց ահա՛ կացինը ծառերի
արմատին մօտ դրած է . ամեն ծառ՝ որ բարի պը-
տուղ չի՛ բերում , կ'կտրվի եւ կրակին մէջ կ'ձգ-
10 վի ։ Եւ ժողովուրդները նորան հարցնումէին եւ ա-

11 սում . Ապա ի՞նչ գործենք ։ Պատասխան տուաւ
եւ նորանց ասաց . Նա՝ որ երկու շոր ունի , թո՛ղ
մինը նորան տայ՝ որ չունի . եւ նա էլ՝ որ կերա-
12 կուր ունի , թո՛ղ այնպէս անէ ։ Մաքսաւորներն
էլ եկին՝ որ մկրտվին , եւ նորան ասացին . Վա՛ր-
13 դապետ ի՞նչ գործենք ։ Եւ նա ասաց նորանց .
14 Ձեզ հրամայածից աւելի բան մի՛ անէք ։ Զին-
ւորներն էլ նորան հարցնումէին եւ ասում . Ապա
մենք ի՞նչ գործենք . նորանց ասաց . Բնաւ մինին
մի՛ նեղացնէք՝ մինին զրպարտութիւն մի՛ անէք ,
ձեր վարձքերը բաւական լինին ձեզ ։
15 Դեռ որ ժողովուրդն սպասումէր՝ եւ ամենքն ի-
րենց սրտերումը մտածումէին Յօհաննէսին համար՝
16 մի՛ թէ սա՛ լինի Քրիստոսն . Նա ամենին պատաս-
խան տուաւ եւ ասաց . Ես ջրով եմ մկրտում
ձեզ . բայց ինձանից էլ զօրաւորն է գալիս՝ որ ես
արժանի չեմ նորա կօշիկները վեր առնել . Նա ձեզ
17 Սուրբ Հոգով եւ կրակով կ'մկրտէ . Որ նորա հո-
սելին իրեն ձեռին է՝ որ իրեն կալը կ'սրբէ՝ եւ ցո-
րենն իրեն համբարը կ'ժողովէ , եւ դարմանը կայրէ
18 անանցանելի կրակով ։ Ուրիշ էլ շատ բաներ մը-
խիթարութենով աւետիք էր տալիս ժողովրդին ։
19 Բայց Հերովդէս չորրորդապետը նորանից յանդի-
մանված իրեն եղբօր կնկան Հերովդիայի պատճառո-
վը , եւ այն ամեն չար գործքերին համար՝ որ Հե-
20 րովդէսն արաւ , Այն ամենին վերայ սա էլ աւելաց-
րուց՝ որ Յօհաննէսին բանտի մէջ դրաւ ։
21 Եւ եղաւ ամեն ժողովուրդի մկրտվելոյ ժամանա-
կին , եւ երբոր Յիսուս մկրտվեցաւ՝ եւ աղօթք էր
22 անում , երկինքը բացվաւ . Եւ Սուրբ Հոգին մարմ-

նաւոր կերպարանքով աղաւնու պէս վէր էր գա-
լիս նորա վերայ . եւ երկնքիցը ձայն եկաւ՝ որ ա-
սում էր . Դու ես իմ սիրելի Որդիս՝ քեզ հաւա-
նեցի ։
23 Եւ ինքն Յիսուս սկսած էր երեսուն տարեկանի
չափ լինել՝ որ ինչպէս որ կարծւում էր , Յովսէփի որ-
դին էր եւ նա՝ Յակոբին . եւ նա՝ Հեղիին . եւ նա՝
24 Մատաթիային . Եւ նա՝ Ղեւիին . եւ նա՝ Մեղ-
25 քիին . եւ նա՝ Յաննէին . եւ նա՝ Յովսէփին . Եւ
նա՝ Մատթէին . եւ նա՝ Ամօսին . եւ նա՝ Նաւու-
26 մին . եւ նա՝ Էսղիին . եւ նա՝ Նանգէին . Եւ նա՝
Մահաթիին . եւ նա՝ Մատաթին . եւ նա՝ Սե-
27 միին . եւ նա՝ Յովսէքին . եւ նա՝ Յոդին . Եւ նա՝
Յօնանին . եւ նա՝ Րեսին . եւ նա՝ Զօրաբաբէլին .
28 եւ նա՝ Սաղաթիէլին . եւ նա՝ Ներիին . Եւ նա՝
Մեղքիին . եւ նա՝ Ադդէին . եւ նա՝ Կոսամին .
29 եւ նա՝ Եղմօդադին . եւ նա՝ Էրին . Եւ նա՝ Յե-
սուին . եւ նա՝ Եղիազարին . եւ նա՝ Յորամին . եւ
30 նա՝ Մատթային . եւ նա՝ Ղեւիին . Եւ նա՝ Սի-
մէօնին . եւ նա՝ Յուդային . եւ նա՝ Յովսէփին . եւ
31 նա՝ Յօնամին . եւ նա՝ Եղիակիմին . Եւ նա՝ Մեղ-
թիին . եւ նա՝ Մէէննային . եւ նա՝ Մատաթին.
32 եւ նա՝ Նաթանին . եւ նա՝ Դաւթին . Եւ նա՝
Յեսսէին . եւ նա՝ Յօբէդին . եւ նա՝ Բոոսին . եւ
33 նա՝ Սաղմօնին . եւ նա՝ Նաասօնին . Եւ նա՝ Ամի-
նադաբին . եւ նա՝ Արամին . եւ նա՝ Ադմէին . եւ
նա՝ Առնէին . եւ նա՝ Էսրոմին . եւ նա՝ Փարեսին .
34 եւ նա՝ Յուդային . Եւ նա՝ Յակոբին . եւ նա Ի-
սահակին . եւ նա՝ Աբրահամին . եւ նա՝ Թարային.
35 եւ նա՝ Նաքօրին . Եւ նա՝ Սերուքին . եւ նա՝ Ռա-

գաւին . եւ նա՝ Փաղեկին . եւ նա՝ Եբերին . եւ
36 եւ նա՝ Սաղային . Եւ նա՝ Կայնանին . եւ նա՝ Ար-
փաքսադին . եւ նա՝ Սէմին . եւ նա՝ Նոյին . եւ
37 նա՝ Ղամեքին . Եւ նա՝ Մաթուսաղային . եւ նա՝
Ենոքին . եւ նա՝ Յարեդին . եւ նա՝ Մաղաղիէլին .
38 եւ նա՝ Կայնանին . Եւ նա՝ Ենօսին . եւ նա՝ Սէ-
թին . եւ նա՝ Ադամին . եւ նա՝ Աստուծոյն ։

ԳԼ. Դ

Քրիստոսի փորձութիւնը . քարոզում է Նազարէթում ու Կափառնայումում . մին դիւահար է բժշկում . բժշկում է Պետրոսի զոքանչին և ուրիշ հիւանդներին . քարոզում է Գալիլեայի ուրիշ քաղաքներում ։

1 Եւ Յիսուս Սուրբ Հոգովը լցված Յորդանանիցը
2 դարձաւ եւ Հոգովը վարվեցաւ անապատը ։ Քա-
ռասուն օր սատանայիցը փորձվեցաւ . եւ այն օրե-
րը ո՛չ կերաւ եւ ո՛չ խմեց . եւ երբոր նորանք կա-
տարվեցան , սովեց ։
3 Եւ սատանան նորան ասաց . Թէ որ դու Աս-
տուծոյ Որդին ես , այդ քարին ասա՛ որ հաց
4 լինի ։ Յիսուս նորան պատասխան տուաւ եւ
ասաց . Գրված է , թէ Ո՛չ մինակ հացով կապրի
մարդ , այլ Աստուծոյ ամեն խօսքովը ։
5 Եւ նորան մին բարձր սար հանեց , եւ աշխարհ-
քին ամեն թագաւորութիւնները ցոյց տուաւ նո-
6 րան մին աչքի թափ տալոյ ժամանակում ։ Եւ
սատանան ասաց նորան . Այս ամեն իշխանու-
թիւններս եւ սորանց փառքը քեզ կ'տամ . ինչու
որ՝ ինձ տվված է . եւ ում որ կամենամ՝ կ'տամ
7 սորան ։ Ուրեմն՝ եթէ իմ առաջիս ընկած երկրպա-

8 գութիւն անես, ամենքը քեզ լինի ։ Յիսուս Նո-
րան պատասխան տուաւ եւ ասաց. Գրված է՝
թէ, Քո Տէր Աստուծոյդ պէտք է երկրպագութիւն
անես, եւ Նորան մինակ պաշտես ։
9 Եւ տարաւ Նորան Երուսաղէմ, եւ տաճարին
աշտարակին վերայ կանգնացրուց, եւ Նորան ա-
սաց. Թէ որ Աստուծոյ Որդին ես, այստեղից
10 քեզ վէ՛ր ձգէ. Պատճառնոր՝ գրված է՝ թէ իրեն
հրեշտակներին հրամայել է քեզ համար՝ որ քեզ
11 պահեն. Որ ձեռներին վերայ քեզ վեր առնեն՝ որ
ընաւ մին ժամանակ քո ոտքդ քարի չի՛ դպցնես ։
12 Յիսուս Նորան պատասխան տուաւ եւ ասաց. Աս-
13 ված է՝ թէ Մի՛ փորձեր քո Տէր Աստուծոյդ ։ Եւ
սատանան երբոր այն ամեն փորձութիւնները կա-
տարեց, հեռացաւ Նորանից մին ժամանակ ։
14 Եւ Յիսուս Հոգւոյ զօրութենովը դարձաւ Գալի-
լեա. եւ Նորա համբաւը դուրս գնաց այն գաւա-
15 ռի ամեն կողմերը ։ Եւ Նա սովորցնումէր Նորանց
ժողովարաններումը, եւ ամենիցը փառաւորվումէր ։
16 Եւ եկաւ Նազարէթ՝ որտեղ որ մեծացել էր.
եւ իրեն սովորութեան պէս շաբաթ օրը ժողովա-
17 րանին մէջ մտաւ. Եւ Եսայի մարգարէի գիրքը
տուին Նորան՝ եւ վերկացաւ՝ որ կարդայ. եւ եր-
բոր գիրքը բացաւ՝ այն տեղը գտաւ՝ որ Նորանում
18 գրված է. Տէրին հոգին ինձ վերայ է. եւ իսկ Նո-
րահամար էլ օծեց ինձ. Նա ինձ ուղարկեց՝ աղ-
քատներին աւետիք տալ, սրտով կոտրվածներին
19 բժշկել, Գերիներին թողութիւն քարոզել, եւ կու-
րերին տեսութիւն. խոցվածներին արձակել դէպի
թողութիւն. Տէրի ընդունելի տարին քարոզել ։

20 Եւ գիրքը խփեց՝ եւ պաշտօնեային տուաւ, եւ
նստեց. եւ ժողովարանին մէջ ամեն լինողների
21 աչքերը Նորան էին մտիկ տալիս ։ Եւ սկսեց ասել
Նորանց՝ Այսօր այս գիրքս կատարվեցաւ ձեր ա-
22 կանջներումդ ։ Եւ ամենքը վկայումէին Նորան, եւ
զարմանումէին այն շնորհաց խօսքերին վերայ՝ որ
դուրս էին գալիս Նորա բերանիցը. եւ ասումէին՝
23 Չէ՞ որ սա Յօսէփի որդին է ։ Եւ Նորանց ասաց.
Լինի թէ այս առակս ասէք ինձ. Բժի՛շկ՝ քո ան-
ձըդ բժշկէ՛. որչափ բաներ լսեցինք՝ որ Կափառ-
նայումին մէջ արիր՝ այստեղ էլ արա՛ քո գաւա-
24 ռումդ ։ Եւ ասաց. Ճշմարիտ ասումեմ ձեզ՝ թէ
25 Մարգարէն ընդունելի չէ՛ իրեն քաղաքումը ։ Ի-
րաւի ասումեմ ձեզ. թէ Եղիայի օրերումն Իսրա-
յէլին մէջ շատ որբեւէրիներ կային՝ երբոր երկին-
քըն երեք տարի եւ վեց ամիս փակվեցաւ, եւ ա-
26 մեն երկրի մէջ մեծ սով էլաւ. Եւ Եղիան Նորան-
ցից մինին մօտ չուղարկվեցաւ, բայց միայն Սիդօ-
27 նացոց Սարեփթան՝ մին որբեւէրի կնկան մօտ ։ Եւ
շատ բորոտներ կային Իսրայէլին մէջ Եղիսէ մար-
գարէին ժամանակին. եւ Նորանցից ո՛չ ով չ՛որբ-
28 վեցաւ, բայց միայն Նէեման Ասորին ։ Եւ ամեն-
քըն՝ որ ժողովարանին մէջ էին, բարկութենով
29 լցվան՝ երբոր սա լսեցին ։ Եւ վերկացան՝ Նորան
քաղաքիցը դուրս հանեցին, եւ տարան Նորան
մինչեւ այն սարի գլուխն՝ որ Նորանց քաղաքը Նո-
րա վերայ շինված էր՝ որ բարձր տեղիցը վէր ձը-
30 գեն Նորան ։ Եւ Նա Նորանց միջովը անցաւ գը-
նաց ։
31 Եւ վերեկաւ Կափառնայում՝ Գալիլեացոց քա-

ղպքը, եւ շաբաթ օրերումը սովորցնումէր նորանց։
32 Եւ զարմանումէին նորա վարդապետութեան վե-
րայ, ինչուոր նորա խօսքն իշխանութենով էր։
33 Եւ ժողովարանին մէջ մին մարդ կար՝ որ նորան
պիղծ դեւ բռնել էր, եւ մեծ ձայնով աղաղա-
34 կեց, Եւ ասաց. Թո՛ղ արա. դու ի՞նչ բան ու-
նիս մեզ հետ՝ Յիսո՛ւս Նազարեցի. եկի՛ր՝ որ մեզ
կորցնե՞ս. գիտումենք քեզ՝ ո՛վ ես դու՝ Աստու-
35 ծո՛յ Սուրբդ։ Յիսուս սաստեց նորան եւ ասաց.
Պապանձվի՛ր եւ դուրս եկ դորանից. դեւն այն
մէջ տեղումը գետինը զարկեց նորան՝ եւ դուրս ե-
կաւ նորանից, եւ բնաւ մին վնաս չ'գործե՛ց նո-
36 րան։ Եւ զարմանք ելաւ ամենին վերայ. իրար
հետ խօսումէին եւ ասում. Սա ի՞նչ բան է՝ որ
իշխանութենով եւ ուժով պիղծ դեւերին սաս-
37 տումէ՝ եւ դուրս են գալիս։ Եւ նորա համբաւն
գնումէր այն գաւառի ամեն չորս կողմերը։
38 Եւ վերկացաւ այն ժողովարանիցն ու մտաւ Սի-
39 մոնին տունը։ Սիմոնին զոքանչը սաստիկ տենդով
չարչարվումէր՝ եւ նորան աղաչեցին նորա համար։
40 Նորա մօտ կանգնեց՝ սաստեց տենդին, եւ թողեց
նորան. եւ շուտով վերկացաւ՝ եւ նորանց ծառայ-
ումէր։
41 Եւ արեգական մտնելոյ ժամանակին՝ ամենքն՝ որ
կերպ կերպ ցաւերով հիւանդներ ունէին՝ նորանց
բերումէին նորա մօտ. եւ նա նորանց ամեն մէկին
վերայ ձեռք էր դնում՝ եւ նորանց բժշկումէր։
42 Շատ մարդկանցից էլ դուրս էին գալիս դեւեր,
եւ աղաղակումէին ու ասում՝ թէ Դու ես Աս-
տուծոյ Որդին. եւ նա սաստումէր նորանց՝ եւ

թոյլ չէր տալիս՝ որ խօսին. ինչուոր՝ գիտումէին՝
թէ նա Քրիստոսն է։
43 Եւ երբոր ցերեկ ելաւ՝ դուրս եկաւ գնաց անա-
պատ տեղ. եւ ժողովուրդները ման էին գալիս նո-
րան՝ եւ եկին մինչեւ նորան մօտը. եւ արգելում
44 էին նորան՝ որ չ'գնա՛յ իրենցից։ Եւ նա ասաց նո-
րանց. Պէտք է՝ որ ես ուրիշ քաղաքներին էլ Աս-
տուծոյ արքայութիւնն աւետարանեմ. ինչուոր՝
45 իսկ սորահամար ուղարկվեցայ։ Եւ Գալիլեացոց
ժողովարաններին մէջ քարոզումէր։

Գլ. Ե

Պետրոսին ձուկ բռնելը. բորոտին սրբվիլը. անդամա-
լուծին բժշկվիլը. Մատթէոսին կանչվիլը. Առաքելոց
պահք չ'պահելոյ մասին։

1 Եւ ելաւ որ ժողովուրդը նորա վերայ կիտվումէր,
եւ Աստուծոյ բանը լսում, եւ ինքն Գեննեսարե-
2 թի ծովակին մօտ կանգնած էր։ Եւ երկու նաւ
տեսաւ՝ որ ծովակին մօտ կանգնած էին, եւ ձուկ
որսողները նորանցից դուրս էին եկած՝ եւ գործիք-
3 ները լուանումէին։ Նա այն նաւերից մինին մէջ
մտաւ՝ որ Սիմոնինն էր, եւ նորան աղաչեց՝ որ
նաւը մին քիչ ցամաքից ներս տանի. նստեց՝ եւ
նաւիցը սովորցնումէր ժողովուրդներին։
4 Եւ երբոր խօսքը վերջացրուց, Սիմոնին ասաց.
Նաւը դէպի խորը տա՛ր, եւ ձեր գործիքները ձը-
5 գեցէ՛ք որսալոյ համար։ Սիմոն պատասխան տուաւ
եւ նորան ասաց. Վա՛րդապետ՝ այս բոլոր գիշերս

աշխատեցինք՝ եւ բնաւ մին բան չ՚բռնեցի՛նք ,
միայն թէ քո խօսքիդ համար գործիքներս կ՚ձը
6 գենք ։ Երբոր սա արին՝ ձկների մեծ բազմութիւն
ներս փակեցին , մինչեւ որ նորանց ուռկանները
7 պատառվումէին ։ Եւ աչքով էին անում միւս
նաւի մէջ լինող ընկերներին՝ որ գան իրենց օգ-
նեն . եւ եկին՝ եւ երկու նաւն էլ լցվան , մինչեւ
8 որ թաղվելու մօտ էին ։ Երբոր Սիմօն Պետրոս տե-
սաւ՝ ընկաւ Յիսուսի ծնկերն ու ասաց . Տէ՛ր ին-
ձանից հեռո՛ւ գնա , ինչու որ՝ ես մեղաւոր մարդ
9 եմ ։ Պատճառն որ՝ ահ պատեց նորան եւ ամենին
էլ՝ որ նորա հետ էին՝ այն ձկների որսին համար ,
10 որ բռնեցին . Այնպէս էլ Զեբեդիայի որդիքնե-
րին՝ Յակոբին եւ Յօհաննէսին , որ Սիմօնի ըն-
կերներն էին . եւ Յիսուս Սիմօնին ասաց . Մի՛ վա-
խենար՝ սորանից ետեւ մարդկանց կ՚որսաս դէպի
11 կեանքը ։ Եւ նաւը հանեցին ցամաքը , ամեն բա-
ները թողին , եւ նորան ետեւէն գնացին ։
12 Եւ էլաւ՝ երբոր նա քաղաքներիցը մինի մէջ
հասաւ , ահա՛ մին մարդ՝ որ բորոտութենով լիքն
էր , երբոր Յիսուսին տեսաւ՝ երեսին վերայ ընկաւ,
նորան աղաչեց՝ եւ ասաց Տէ՛ր՝ թէ որ կամենաս ,
13 կարող ես ինձ սրբել ։ Իրեն ձեռքը մեկնեց՝ հաս-
ցուց նորան՝ եւ ասաց . Կամենումեմ՝ սրբվէ՛ . եւ
14 շուտով բորոտութիւնը գնաց նորանից ։ Եւ նա
պատուիրեց նորան՝ որ բնաւ մինին չասէ , բայց
թէ՝ գնա՛ , քո անձդ ցո՛յց տուր քահանային . եւ
քո սրբութեանդ համար պատարագ բե՛ր՝ ինչպէս
որ Մօսէսն էլ հրամայեց , որ նորանց վկայութիւն
15 լինի ։ Եւ նորա համբաւն էլ աւելի շատանումէր .

եւ շատ ժողովուրդներ ժողովվումէին՝ որ լսեն եւ
16 իրենց հիւանդութիւններիցը բժշկվին ։ Եւ նա
քաշվումէր անապատ տեղերանք , եւ աղօթք էր
անում ։
17 Եւ մին օր էլաւ՝ որ ինքը սովրցնումէր՝ եւ փա-
րիսեցիներն ու օրինաց վարդապետները նստած է-
ին , որ Գալիլեացոց եւ Հրէաստանի ամեն քաղաք-
ներից ու Երուսաղէմից հաւաքված էին . եւ Տէ-
18 րի զօրութիւնը կար նորանց բժշկելու համար ։ Եւ
ահա՛ մարդիկ մին մարդ էին բերում մահիճով որ
անդամալոյծ էր , եւ ուզումէին՝ որ նորան ներս
19 տանեն , եւ նորա առաջին դնեն ։ Եւ երբոր տեղ
չէին գտնում՝ որ նորան ներս տանեն՝ այն ամբո-
խի պատճառովը , վեր ելան կտուրը , եւ օճոռքիցը
կապեցին նորան , եւ մահիճովը վէր բերին մէջ
20 տեղը Յիսուսին առաջին ։ Եւ նորանց հաւատքն
որ տեսաւ՝ նորան ասաց . Ո՛վ մարդ՝ քո մեղքե-
21 րըդ թողվա՛ծ լինին քեզ ։ Կարդացողներն ու փա-
րիսեցիները սկսեցին միտք անել , եւ ասացին . Սա
ո՞վ է՝ որ հայհոյանք է խօսում . ո՛վ է կարող
22 մեղքը թողել՝ բայց միայն Աստուած ։ Յիսուս երբ-
որ նորանց մտածմունքներն իմացաւ , պատասխան
տուաւ եւ նորանց ասաց . Ի՞նչ էք միտք անում
23 ձեր սրտերումդ ։ Ո՞րն է աւելի հեշտ . ասել՝ թէ
Քո մեղքերդ թողվա՛ծ լինին քեզ , թէ ասել՝ Վե՛ր
24 կաց եւ գնա՛ ։ Բայց որ իմանաք՝ թէ Որդին մար-
դու իշխանութիւն ունի՝ երկրիս վերայ մեղքերը
թողելու . անդամալուծին ասաց , Քեզ եմ ա-
սում՝ վե՛ր կաց քո մահիճդ ա՛ռ՝ եւ գնա՛ քո
25 տունդ ։ Եւ իսկ այն ժամին ամենին առաջին

վերկացաւ, իրեն վերայ առաւ նա՝ որ նորա վե֊
րայ ընկած դրած էր, գնաց իրեն տունը, եւ
26 փառք էր տալիս Աստուծոյն ։ Զարմանք բռնեց ա֊
մենին, եւ փառք էին տալիս Աստուծոյն․ աՀով
լցվան, եւ ասումէին՝ թէ, Այսօր նոր նշան տե֊
սինք ։

27 Եւ նորանից ետեւ Յիսուս այն տեղիցը դուրս
գնաց՝ եւ մին մաքսաւոր տեսաւ՝ որ նորան անու֊
նը Ղեւի էր, եւ նստած մաքսաւորութիւն էր ա֊
28 նում․ եւ նորան ասաց, իմ ետեւէս ե՛կ ։ Եւ նա
ամեն բան թողեց, վերկացաւ գնաց նորա ետե֊
29 ւէն ։ Եւ Ղեւին նորան մեծ Հացկերութիւն արաւ
իրեն տանը մէջ․ եւ շատ ժողովուրդ կար մաքսա֊
ւորների եւ ուրիշների՝ որ նորանց Հետ սեղան էին
30 նստել ։ Եւ փարիսեցիներն եւ նորանց կարդացող֊
ները նորանից տրտնջումէին նորա աշակերտներին
առաջին՝ եւ ասում․ ինչո՞ւ էք մաքսաւորների եւ
31 մեղաւորների Հետ ուտում եւ խմում ։ Յիսուս
պատասխան տուաւ եւ նորանց ասաց․ Առողջնե֊
32 րին բժիշկ պէտք չէ՛, այլ Հիւանդներին ։ Ջե՛մ
եկել՝ որ արդարները կանչեմ, այլ մեղաւորներն
որ ապաշխարեն ։

33 Եւ նորանք ասացին նորան․ ինչո՞ւ Յօհաննէսին
աշակերտները շատ ժամանակ ծոմ են պաՀում՝
եւ աղօթք անում, այնպէս էլ փարիսեցիները․ եւ
34 քո աշակերտները ուտումեն եւ խմում ։ Եւ նա նո֊
րանց ասաց․ Միթէ կարո՞ղ էք Հարսանիքի տղա֊
ներին, դեռ քանի որ փեսան նորանց Հետ է, Հը֊
35 րաման տալ որ ծոմ պաՀեն ։ Օրեր կ՚գան՝ երբոր
փեսան վերկառնվի նորանցից․ ապա այն օրերը կը

36 պաՀեն․ Մին առակ էլ ասաց նորանց, թէ Ո՛չ
ով մին նոր շորից Հին Հագուստի վերայ կարկատան
չի՛ ձգիլ․ ապա թէ չէ՝ այն նորն էլ կ՚պատառէ,
եւ կտորն՝ որ նորիցն է, Հնին Հետ չի՛ միաբան֊
37 վիլ ։ Եւ ո՛չ ով նոր գինին Հին տկերի մէջ չի՛ ա֊
ծիլ․ ապա թէ չէ՝ նոր գինին Հին տկերը կ՚պա֊
38 տառէ․ ինքը կ՚թափվի, եւ տկերը կ՚կորչին ։ Բայց
նոր գինին նոր տկերի մէջ պէտք է ածվի, եւ եր֊
39 կուքն էլ կ՚պաՀվին ։ Եւ ո՛չ ով չ՚կայ՝ որ Հինը
խմէ՝ եւ նորը կամենայ․ ինչուոր՝ ասումէ՝ թէ,
Հինն աւելի քաղցր է ։

ԳԼ․ Զ

Շաբաթի գործերը․ առաքելոց կանչվիլը․ Քրիստոսի
քարոզը սարին վերայ ։

1 Եւ էլաւ՝ որ նա երկրորդի առաջին շաբաթ օրն
արտերումը անցնումէր, եւ նորան աշակերտները
Հասկ էին պոկում՝ ափին մէջ փշրում, եւ ու֊
2 տում ։ Եւ փարիսեցիներիցը մին քանիսն ասացին
նորանց․ Դա ինչո՞ւ էք անում՝ որ շաբաթ օրն օ֊
3 րէնք չէ՛ ։ Յիսուս նորանց պատասխան տուաւ եւ
ասաց․ Դուք չէ՞ք կարդացել նա՝ որ Դաւիթն ա֊
րաւ, երբոր սովեց ինքը եւ նորանք՝ որ նորան Հե֊
4 տըն էին․ ինչպէս նա Աստուծոյ տունը մտաւ, եւ
առաջաւորութեան Հացը կերաւ, եւ նորանց էլ
տուաւ՝ որ նորան Հետն էին․ որ օրէնք չէր ու֊
5 տել, բայց միայն քաՀանայապետներին ։ Եւ նո֊
րանց ասաց․ Որդին մարդոյ շաբաթի էլ տէրն է ։

6 Եւ եղաւ՝ որ նա միւս շաբաթ օրը ժողովարանին
մէջ մտաւ՝ եւ սովորցնումէր․ եւ այնտեղ մին
7 մարդ կար՝ եւ նորա աջ ձեռքը չորացել էր։ Եւ
կարդացողներն ու փարիսեցիները սպասումէին նո-
րան՝ եթէ շաբաթ օրը բժշկէ, որ նորանից չարա-
8 խօսելոյ պատճառ գտնեն։ Եւ նա գիտումէր նո-
րանց մտածմունքները, եւ այն մարդոյն՝ որ նորա
ձեռքը չորացել էր՝ ասաց․ Վե՛ր կաց ե՛կ մէջ
9 տեղը․ եւ նա վերկացաւ կանգնեց։ Յիսուս նո-
րանց ասաց․ Մին բան հարցնեմ ձեզանից․ ի՞նչ
արժան է շաբաթ օրը, բարի՞ բան անել՝ թէ չար
10 գործել, մին հոգի ազատե՞լ թէ կորցնել։ Եւ
շատ բարկացած չորս կողմովը ամենին վերայ նա-
յեց՝ եւ նորան ասաց․ Քո ձեռքդ մեկնէ՛․ եւ նա
մեկնեց, եւ նորա ձեռքը միւսին պէս հաստա-
11 վեցաւ։ Նորանք յիմարութենով լցվան, եւ ի-
րար հետ խօսումէին՝ թէ ի՞նչ անեն Յիսուսին։
12 Եւ եղաւ այն օրերն՝ որ վեր ելաւ սարը աղօթք
անել, գիշերը լուսացրուց աղօթք անելով դէպի
13 Աստուած։ Եւ երբոր առաւօտ եղաւ՝ իրեն աշա-
կերտները կանչեց, եւ նորանցից տասներկուսին
14 ընտրեց՝ որ էլ առաքեալ անուանեց նորանց։ Սի-
մօնին՝ որ էլ Պետրոս անուանեց նորան, եւ նորա
Անդրէաս եղբօրը, եւ Յակոբին եւ Յօհաննէսին,
15 եւ Փիլիպպոսին եւ Բարթողիմէոսին, Եւ Մատ-
թէոսին եւ Թօմասին եւ Յակոբոս Ալփեանին, եւ
16 Սիմօնին՝ Նախանձայոյզ կոչվածին։ Եւ Յակո-
բայ Յուդային, եւ Յուդա Իսկարիօտացոյն՝ որ էլ
17 մատնիչ եղաւ։ Եւ վէր եկաւ նորանց հետ մին
տափակ տեղ․ եւ այնտեղ էր նորա աշակերտների

ժողովն ու ժողովրդի մեծ բազմութիւն, ամեն Հը-
րէաստանից ու Երուսաղէմից եւ միւս կողմերից
18 ու Տիւրոսի եւ Սիդօնի ծովի եզրից․ Որ եկին նո-
րանից լսել եւ իրենց հիւանդութիւններից բը-
ժշկվել․ եւ պիղծ դեւերից չարչարվածները բժշկ-
19 վումէին։ Եւ ամեն ժողովուրդը խնդրումէր՝ որ մօ-
տենայ նորան, ինչուոր՝ նորանից շատ զօրութիւն
էր դուրս գալիս՝ եւ ամենին բժշկումէր։
20 Եւ նա իրեն աչքերը դէպի իրեն աշակերտներին
բարձրացրուց՝ եւ ասաց․ Երանի՜ ձեզ՝ հոգով աղ-
քատներիդ, որ ձերն է Աստուծոյ արքայութիւնը։
21 Երանի՛ նորանց՝ որ հիմիկ սոված են, որ պիտի
կշտանան․ երանի՛ նորանց՝ որ հիմիկ լաց են լի-
22 նում, որ պիտի ծիծաղեն։ Երանի՜ ձեզ, երբոր
մարդիք նախատինք կ՚տան ձեզ, եւ երբոր ձեզ
կ՚ջոկեն եւ կատեն, եւ ձեզ վերայ չար անուն կը
23 հանեն՝ Որդոյ մարդոյ պատճառով․ Ուրա՛խ էլէք
այն օրը եւ ցնծացէ՛ք, ինչուոր՝ ահա՛ ձեր վարձը
շատ է երկնքումը․ իսկ այդ կերպով մարգարէնե-
24 րին էին անում նորանց հարքը։ Բայց վա՛յ ձեզ՝
հարուստներիդ, ինչուոր՝ ձեր մխիթարութիւնը ըն-
25 դունեցիք։ Վա՛յ ձեզ՝ որ հիմիկ կշտացել էք, ին-
չուոր՝ պիտի սովիք․ վա՛յ ձեզ՝ որ հիմիկ ծիծաղում
էք, ինչուոր՝ սուգ պիտի անէք, եւ լաց պիտի լի-
26 նիք։ Վա՛յ ձեզ՝ երբո՛ր ամեն մարդիկ ձեզանից
բարի ասեն, ինչուոր՝ այդպէս էլ սուտ մարգարէ-
ներին էին անում նորանց հարքը։
27 Բայց ձեզ՝ որ լսումէք, ասումեմ․ Սիրեցէ՛ք ձեր
28 թշնամիները, բարի՛ արէք ձեզ ատողներին․ Օրհ-
նեցէ՛ք ձեզ անիծողներին, աղօ՛թք արէք ձեզ նե-

29 զարնողներին վերայ ։ Նա որ քո մին երեսիդ զար-
կումէ՝ միւսն էլ դէմ արա նորան . եւ նա որ քո
վերարկուդ քեզանից հանումէ՝ շապիկդ էլ մի՛ ար-
30 գելեր նորանից ։ Ամենին՝ որ ուզումէ քեզանից՝
տո՛ւր , եւ ինչ որ մինը քեզանից հանումէ՝ յետ
31 մի՛ ուզեր ։ Եւ ինչպէս որ կամենումէք՝ թէ մար-
դիքը ձեզ անեն , այնպէս էլ դուք արէք նորանց ։
32 Եւ թէ որ դուք ձեզ սիրողներին սիրէք՝ ի՞նչ շը-
նորհք է ձեզ , ինչուոր՝ մեղաւորներն էլ իրենց սի-
33 րողներին սիրումեն ։ Եւ թէ որ ձեր բարերարներին
բարի անէք՝ ի՞նչ շնորհք է ձեզ , ինչուոր՝ մեղա-
34 ւորներն էլ իսկ այնպէս են անում ։ Եւ եթէ փոխ
տաք նորանց՝ որ նորանից յետ առնելոյ յոյս ու-
նէք՝ ի՞նչ շնորհք է ձեզ . ինչուոր՝ մեղաւորներն
էլ մեղաւորներին փոխ են տալիս , որ հաւասար
35 չափը յետ առնեն ։ Բայց սիրեցէ՛ք ձեր թշնամի-
ները , եւ բարի՛ արէք ձեզ ատողներին . եւ փո՛խ
տուէք նորանց՝ որ յետ առնելոյ յոյս չունէք . եւ
ձեր վարձքը շատ կ՚լինի , եւ Բարձրելոյ որդիք կ՚լի-
նիք . ինչուոր՝ նա քաղցր է չարերի եւ երախտա-
36 մոռների վերայ ։ Ուրեմն ողորմած էլէք՝ ինչպէս որ
37 ձեր Հայրն էլ ողորմած է ։ Մի՛ դատէք՝ եւ չէ՛ք
դատվիլ . մի՛ պատժէք՝ եւ չէ՛ք պատժվիլ . արձա-
38 կեցէ՛ք՝ եւ կարձակվիք ։ Տուէ՛ք՝ եւ կ՚տվվի ձեզ .
լաւ թափ տված շարժված առատ չափ կ՚տան
ձեր գոգը . որ չափով որ չափէք՝ նորանով կ՚չափ-
վի ձեզ ։

39 Մին առակ էլ ասաց նորանց՝ թէ , Միթէ կա-
րօ՞ղ է կոյրը կոյրին առաջնորդել , չէ՞ որ երկուքն
40 էլ փոսի մէջ կ՚նկնին ։ Աշակերտն իրեն վարդապե-

տիցը լաւ չէ՛ . ամեն կատարեալն իրեն վարդապե-
41 տին պէս կ՚լինի ։ Ինչո՞ւ քո եղբօրդ աչքին միջի
ծեղը տեսնումես , եւ քո աչքիդ միջի գերանը չե՛ս
42 տեսնում ։ Կամ ի՞նչպէս կարող ես քո եղբօրդ ա-
սել . Եղբա՛յր՝ թո՛ղ քո աչքիցդ ծեղը հանեմ ,
եւ քո աչքիդ միջի գերանը չե՛ս տեսնում . կե՛ղ-
ծաւոր՝ առաջ քո աչքիցդ գերանը հանէ՛ , եւ ա-
պա մտի՛կ արա՝ որ քո եղբօրդ աչքիցը ծեղը հա-
43 նես ։ Ինչուոր՝ բարի ծառ չ՚կա՛յ՝ որ չար պտուղ
բերէ , եւ այնպէս էլ չար ծառ չ՚կայ՝ որ բարի
44 պտուղ բերէ . ինչուոր՝ ամեն մէկ ծառ իրեն պը-
տղիցն է ճանաչվում . պատճառնոր՝ ո՛չ փշերիցը
թուզ են քաղում , եւ ո՛չ մորենիցը խաղող են
45 կ՚թում ։ Բարի մարդն իրեն սրտի բարի գանձը
բարիք է բղխում , եւ չար մարդը չար գանձը չա-
րիք է բղխում . ինչուոր՝ սրտի աւելացածիցն է
խօսում նորա բերանը ։

46 Ինչո՞ւ էք ինձ Տէ՛ր Տէ՛ր կոչում , եւ նա որ ա-
47 սումեմ , չէ՛ք անում ։ Ամեն՝ մէ որ ինձ մօտ է
գալիս , եւ իմ խօսքերս լսումէ՝ եւ նորանց ա-
48 նում , ցոյց տամ ձեզ՝ թէ ո՞ւմ նման է ։ Նման
է այն մարդուն որ տուն կ՚շինէ . որ փորեց եւ խո-
րացրուց , եւ հիմը քարի վերայ դրաւ . Ջրի հե-
ղեղներ որ վերկացան՝ գետն այն տանը թակեց , եւ
չ՚կարողացա՛ւ շարժել նորան , ինչուոր՝ նորա հի-
49 մը քարի վերայ հաստատված էր ։ Բայց նա՝ որ
իմ խօսքերս լսումէ՝ եւ չի՛ անում , նման է այն
մարդուն՝ որ տունը հողի վերայ կ՚շինէ առանց հի-
մունքի . գետը նորան թակեց , եւ շուտով վէր ըն-
կաւ . եւ այն տանը կործանվիլը սաստիկ էլաւ ։

ԳԼ. Է

Հարիւրապետին սպասաւորը. Նայինցի որբեւայրիի տղան. Յօհաննէս եւ իր աշակերտները. մեղաւոր կինը օծում Քրիստոսին ։

1 Եւ երբոր իրեն ամեն խօսքերը կատարեց ժողովր-
2 դի ականջներումը, մտաւ Կափառնայում ։ Մին
հարիւրապետի ծառայ խիստ հիւանդացած՝ մեռ-
3 նելոյ մօտ էր, որ պատուական էր նորան ։ Երբոր
Յիսուսին համար լսեց, Հրէաների ծերերն ուղար-
կեց՝ որ աղաչեն նորան՝ որ գայ իրեն ծառային
4 ապրեցնէ ։ Եւ նորանք Յիսուսին մօտ եկին՝ նորան
խիստ աղաչումէին՝ եւ ասում, Թէ Արժանի է
5 նա՝ որ այս շնորհքս անես նորան. Պատճառանոր՝
մեր ազգին սիրումէ, եւ ժողովարանը նա շինեց
6 մեզ համար ։ Եւ Յիսուս նորանց հետ գնաց. երբ-
որ տանիցը շատ հեռու չէր, հարիւրապետը բա-
րեկամներ ուղարկեց նորա մօտ, եւ նորան ասաց.
Տէ՛ր՝ աշխատանք մի՛ քաշեր, ինչուոր՝ արժանի
7 չեմ՝ որ իմ ծածքիս տակը մտնես ։ Նորահամար
էլ ես իմ անձս արժանաւոր չ'համարեցի՝ որ քեզ
մօտ գամ. բայց խօսքով ասա՝ եւ իմ տղաս կը
8 բժշկվի ։ Ինչուոր՝ ես էլ մին իշխանութեան տակ
լինող մարդ եմ. իմ ձեռքիս տակը զինուորներ ու-
նիմ, եւ մինին ասումեմ՝ Թէ Գնա՛, եւ նա գը-
նումէ. եւ միւսին՝ Թէ Ե՛կ, եւ գալիս է. եւ իմ
9 ծառայիս՝ Թէ Այս բանս արա՛, եւ անումէ ։ Եւ
երբոր Յիսուս սա լսեց՝ զարմացաւ, դարձաւ դէպի

ժողովուրդն՝ որ նորա ետեւէն գնումէին՝ եւ ա-
սաց. Ճշմարիտ ասումեմ ձեզ՝ Թէ Իսրայէլին մէջ
10 էլ այսքան հաւատք չ'գտի՛ ։ Եւ այն ուղարկված
մարդիկը յետ դարձան տուն, եւ հիւանդ ծա-
ռային բժշկված գտին ։
11 Եւ յետեւի օրումն էլաւ՝ որ մին քաղաք էր
գնում, որ նորան անունը Նային էր. նորա աշա-
կերտներն էլ նորա հետ գնումէին եւ շատ ժողո-
12 վուրդ էլ ։ Երբոր մօտեցաւ քաղաքի դռանը, ա-
հա՛ մին մեռեալ էին դուրս բերում՝ որ իրեն մօր
միածնունդ որդին էր, եւ նա որբեւէրի էր. եւ
13 քաղաքիցը շատ ժողովուրդ կար նորա հետ ։ Երբոր
Տէրը նորան տեսաւ՝ խղճաց նորա վերայ եւ ա-
14 սաց. Լաց մի՛ լինիր ։ Եւ մօտ եկաւ նաժին մօ-
տեցաւ. եւ նորանք՝ որ վեր առած տանումէին,
կանգնեցին. եւ ասաց, Ո՛վ երիտասարդ՝ քե՛զ
15 եմ ասում՝ վե՛ր կաց ։ Մեռեալը վերկացաւ, նըս-
տեց եւ սկսեց խօսել. եւ նորան տուաւ իրեն մօ-
16 րը ։ Եւ ահ բռնեց ամենին, եւ Աստուծոյն փառք
էին տալիս՝ եւ ասում, Թէ Մին մեծ մարգարէ
է առաջ եկել մեր միջումը, եւ Թէ Աստուած ի-
րեն ժողովրդին տեսութիւն եկաւ բարութենով ։
17 Եւ այս ձայնս նորա համար դուրս գնաց բոլոր Հը-
րէաստանն՝ ու այն աշխարհքի ամեն կողմերը ։
18 Եւ Յօհաննէսին պատմեցին իրեն աշակերտներն
19 այս ամեն բաներիս համար ։ Եւ Յօհաննէս իրեն
աշակերտներիցն երկու հոգի կանչեց իրեն մօտ,
ուղարկեց Տէրին մօտ եւ ասաց. Դո՞ւ ես նա որ
20 պէտք է գայ, Թէ ուրիշի սպասենք ։ Եւ այն
մարդիկը նորա մօտ եկին եւ ասացին. Յօհաննէս

մկրտիչը մեզ ուղարկեց քեզ մօտ՝ եւ ասում է,
Դո՞ւ ես նա որ պէտք է գայ, թէ ուրիշի սպա-
21 սենք ։ Եւ Յիսուս իսկ այն ժամումը շատ մարդ-
կանց բժշկեց հիւանդութիւններից եւ չարչարան-
քից եւ չար դեւերից, եւ շատ կոյրերին տեսնել
22 շնորհեց ։ Պատասխան տուաւ նորանց եւ ասաց.
Գնացէ՛ք Յովհաննէսին պատմեցէ՛ք՝ ինչ որ տեսիք
եւ լսեցիք. թէ կոյրերը տեսնում են, կաղերը գը-
նում են, բորոտները սրբվում են, խուլերը լսում են,
մեռելները յարութիւն են առնում, աղքատներին
23 աւետարան է քարոզվում ։ Եւ երանի՛ է նորան՝
որ ինձ վերայ չ'գայթակղվի ։
24 Եւ երբոր Յովհաննէսի ուղարկված մարդիկը գը-
նացին, սկսեց ժողովուրդներին հետ Յովհաննէսի
համար խօսել. Ի՞նչ տեսնելու դուրս գնացիք ա-
նապատը, մին եղէ՞գ՝ որ քամուցը շարժվում է ։
25 Ապա ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մին մա՞րդ
փափուկ շորերով զարդարուած. ահա՛ նորանք՝ որ
փառաւոր շորերումն ու փափկութենումն են՝ թա-
26 գաւորների պալատներումն են ։ Ապա ի՞նչ տես-
նելու դուրս գնացիք, մին մարգարէ՞. իրաւի ա-
27 սում եմ ձեզ՝ որ մարգարէից էլ աւելի է ։ Ինչու-
որ՝ սա նա՛ է՝ որ նորա համար գրված է, թէ Ա-
հա՛ իմ հրեշտակս ուղարկում եմ քո առաջից՝ որ
28 քո առաջից քո ճանապարհդ պատրաստէ ։ Ճշմա-
րիտ ասում եմ ձեզ՝ որ կանանց ծնվածներին մէջ
ո՛չ ով աւելի մեծ մարգարէ չ'կա՛յ՝ քան Յովհան-
նէսը. բայց Աստուծոյ արքայութեան միջի փոքրը
29 նորանից մեծ է ։ Եւ ամեն ժողովուրդն երբոր սա
լսեցին՝ եւ մաքսաւորները. Աստուծոյն արդարաց-

րին. ինչուոր՝ Յովհաննէսի մկրտութենովը մկրտվե-
30 ցան ։ Բայց փարիսեցիներն ու օրէնք գիտողներն
Աստուծոյ խորհուրդն անարգեցին իրենց անձնե-
րումը. ինչուոր՝ չ'մկրտվեցա՛ն նորանից ։
31 Ապա ո՞ւմ նմանեցնեմ այս ազգիս մարդիկը.
32 եւ ո՞ւմ նման են ։ Այն տղայոց նման են որ փո-
ղոցներումը նստին, իրար կանչեն եւ ասեն. Փող
փչեցինք ձեզ համար՝ եւ պար չեկաք, սուգ ա-
33 րինք՝ եւ լաց չէլաք ։ Յովհաննէս մկրտիչն եկաւ՝
ո՛չ ուտում էր եւ ո՛չ խմում էր, եւ ասում էիք՝ թէ
34 Դեւ կայ նորանում ։ Որդին մարդոյ եկաւ՝ ուտում է
եւ խմում է, եւ ասում էք. Ահա՛ ուտօղ եւ խմօղ
մարդ՝ մաքսաւորների եւ մեղաւորների բարեկամ
35 Եւ իմաստութիւնն արդարացաւ իրեն որդիքնե-
րիցը ։
36 Փարիսեցիներիցը մինն աղաչում էր նորան՝ որ հաց
ուտէ իրեն հետ. եւ մտաւ փարիսեցոյ տունը՝ եւ
37 սեղան նստեց ։ Եւ այն քաղաքումը մին մեղաւոր
կին կար. երբոր իմացաւ, թէ փարիսեցոյ տանը
սեղան է նստած, մին շիշ պատուական իւղ բե-
38 րաւ. Նորա ետեւիցը նորա ոտաց մօտ կանգնած
էր, եւ լաց էր լինում. եւ արտասուքներովը նո-
րա ոտները սկսեց թրջել, եւ իրեն գլխի մազերո-
վը սրբում էր, եւ նորա ոտները համբուրում էր եւ
39 իւղովը օծում ։ Եւ փարիսեցին՝ որ նորան կանչեց,
երբոր տեսաւ՝ իրեն մտքումն ասում էր. Սա թէ որ
մին մարգարէ էր, ապա կ'գիտէր՝ թէ ո՞վ կամ
ի՞նչպիսի կին է նա՝ որ իրեն մօտում է, ինչուոր
40 մեղաւոր է ։ Յիսուս պատասխան տուաւ եւ նո-
րան ասաց. Սիմօ՛ն մին բան ունիմ քեզ ասելու.

41 եւ նա ասաց․ Ասա՛ վա՛րդապետ․ եւ ասաց․ Եր-
կու մարդ պարտական էին մին փոխ տուօղի․ մինը
հինգ հարիւր դահեկան պարտական էր, եւ միւսը
42 յիսուն ։ Եւ երբոր նորանք բան չունէին՝ որ վճա-
րեն, երկուսին էլ բաշխեց․ հիմիկ ասա՛՝ նորանցից
43 ո՞վ աւելի կ'սիրէ նորան ։ Սիմօնն ասաց․ ինձ այս-
պէս է երեւում, թէ նա՝ որ նորան շատ բաշխեց․
44 եւ նա ասաց նորան․ Շիտակ դատեցիր ։ Եւ դար-
ձաւ դէպի կինն ու Սիմօնին ասաց․ Տեսնո՞ւմես
այս կինս, քո տունդ մտի՝ իմ ոտացս ջուր չի՛
տուիր, բայց սա իրեն արտասունքովն իմ ոտներս
45 թրջեց, եւ իրեն մազերովը սրբեց ։ Դու մին համ-
բոյր չ'տուի՛ր ինձ․ սա՝ ահա՛ քանի որ այստեղ
եմ մտել՝ իմ ոտներս համբուրելուցը չ'դադարեց ։
46 Դու իւղով չօծեցիր իմ գլուխս․ սա՝ անուշ իւ-
47 ղով օծեց ։ Նորահամար ասում եմ քեզ․ Սորա
շատ մեղքերն իրեն թողված կ'լինին, ինչուոր շատ
սիրեց․ պատճառնոր՝ որին որ շատ կ'թողվի՝ նա
48 շատ կ'սիրէ, եւ որին որ քիչ՝ նա քիչ ։ Եւ նորան
49 ասաց․ Քո մեղքերդ թողված լինին քեզ ։ Եւ նո-
րանք՝ որ նորա հետ սեղան էին նստած, սկսեցին
իրենց մտքումն ասել․ Սա ո՞վ է՝ որ մեղք է թո-
50 ղում ։ Եւ նա ասաց այն կնկանը․ Քո հաւատքդ
ազատեցրուց քեզ՝ գնա՛ խաղաղութենով ։

ԳԼ․ Ը

Յիսուսին հետեւօղ կանայքը․ Աստուծոյ խօսքին սերմը․
Ո՞վ են Քրիստոսի ազգականները․ ծովին դադարելը․
դիւահարները․ տեւատեւ կինը․ Յայրոսի աղջիկը ։

1 Եւ նորանից ետեւ էլաւ՝ որ նա մտն էր գալիս
քաղաքներն ու գիւղերը, քարոզումէր եւ Աստու-
ծոյ արքայութիւնն աւետարանում․ եւ այն տասն-
2 երկուքն էլ նորա հետ, Եւ քանի մի կանայք՝ որ
չար դեւերից եւ հիւանդութիւններից բժշկված
էին․ Մարիամն՝ որ Մագդաղենացի էր կոչվում,
3 որ նորանից եօթը դեւ էին դուրս եկել, Եւ Յո-
հաննան՝ Հերոդէսի տնտես Քուզայի կինը, եւ Շու-
շանը, եւ շատ ուրիշներ, որ իրենց ապրանքների-
ցը նորան ծառայութիւն էին անում ։
4 Եւ երբոր շատ ժողովուրդներ հաւաքվեցան, եւ
ամեն մէկ քաղաքներից նորա մօտ եկին՝ առակով
5 ասաց․ Մին սերմ ցանօղ մարդ դուրս գնաց՝ որ
իրեն սերմունքը ցանէ․ եւ իրեն սերմելոյ ժամա-
նակը կար որ ճանապարհի վերայ ընկաւ՝ եւ կոխ-
6 վեցաւ, եւ երկնքի թռչունները նորան կերին ։ Եւ
միւսը քարքարուտ տեղ ընկաւ․ եւ բուսնելոյ ժա-
մանակը՝ չորացաւ հողի պակասութեան պատճա-
7 ռովը ։ Եւ միւսը փշերին մէջ ընկաւ, եւ փշերը
8 նորա հետ բուսան՝ եւ խեղդեցին նորան ։ Եւ միւ-
սը բարի եւ պարարտ երկրի վերայ ընկաւ․ եւ բու-
սաւ՝ եւ հարիւրապատիկ պտուղ տուաւ․ երբոր
այս բանս խօսեց, ասաց․ Ով որ լսելոյ ականջ ու-
նի՝ թո՛ղ լսէ ։

9 Աշակերտները նորան հարցնումէին՝ թէ ի՞նչ է
10 այն առակը ։ Եւ նա ասաց . Ձեզ տուած է Աս-
տուծոյ արքայութեան խորհուրդները գիտել , բայց
ուրիշներին առակներով . որ տեսնեն՝ եւ չի՛ տես-
նեն , եւ լսեն՝ եւ չիմանան ։
11 Միայն թէ առակը աս է . սերմն Աստուծոյ բանն
12 է ։ Եւ որ ճանապարհի վերայ են , նորանք են՝ որ
լսումեն . եւ ապա սատանան գալիս՝ բանը նորանց
13 սրտիցն հանումէ , որ չ՛հաւատա՛ն եւ ապրին ։ Եւ
որ քարքարուտի վերայ են , նորանք են որ երբոր
լսեն՝ բանն ուրախութենով ընդունումեն , եւ ար-
մատ չունին . նորանք մին ժամանակ հաւատում ,
բայց փորձութեան ժամանակին հեռանումեն ։
14 Բայց նա՝ որ փշերին մէջն ընկաւ , նորանք են՝ որ
երբոր բանը լսումեն՝ հոգսերով եւ մեծութենով
եւ աշխարհքի ցանկութիւններով զբաղված՝ խեղդ-
15 վումեն , եւ պտուղ չեն տալիս ։ Բայց նա՝ որ պա-
րարտ երկրին վերայ ընկաւ , նորանք են՝ որ բարի
եւ յօժար սրտով բանը լսումեն՝ եւ ընդունում ,
եւ համբերութենով պտուղ են տալիս ։
16 Ո՛չ ով ճրագ չի՛ վառիլ եւ ամանի տակ թաք-
ցընիլ՝ կամ մահիճի տակ դնիլ , բայց ճրագակալի
վերայ կ՚դնէ , որ նորանք՝ որ ներս են մտնում , լոյս
17 տեսնեն ։ Բնաւ ծածուկ բան չ՚կա՛յ՝ որ չ՚յայտնը-
վի՛ . եւ ո՛չ թաքուն բան՝ որ չիմացվի , եւ դէպի
18 լոյսը գայ ։ Ապա տեսէ՛ք՝ թէ դուք ի՞նչպէս էք լը-
սում . ինչուոր՝ ով որ ունի , նորան կ՚տվվի , եւ
ով որ չունի՝ նա էլ որ կարծումէ՝ թէ ունի , նո-
19 րանից վեր կառնվի ։ Նորա մայրն ու նորան եղ-
բարքը նորա մօտ եկին , եւ չէին կարօղանում նո-

20 րա մօտ հասնել բազմութեան պատճառովը ։ Նո-
րան իմաց արին եւ ասացին . Քո մայրդ ու քո
եղբարքդ դուրսը կանգնած են՝ եւ ուզումեն քեզ
21 տեսնել ։ Եւ նորանց ասաց . Իմ մայրս եւ իմ եղ-
բարքս սորանք են՝ որ Աստուծոյ խօսքը լսումեն եւ
անում ։
22 Եւ էլաւ օրերից մինումն՝ որ ինքը նաւ մտաւ ,
եւ նորա աշակերտներն էլ , եւ նորանց ասաց . Ե-
կէ՛ք անցանենք ծովակին այն կողմը . եւ գնացին ։
23 Եւ դեռ որ նաւով գնումէին՝ նա քուն մտաւ .
եւ քամոյ մրրիկ ընկաւ այն ծովակին մէջ՝ եւ ծովը
24 բարձրանումէր , եւ նեղութեան մէջ էին ։ Մօտ
եկին , նորան զարթնացրին եւ ասացին . Վա՛ր-
դապետ վա՛րդապետ՝ աha՛ կորչումենք . եւ նա
վերկացաւ , եւ քամոյն եւ ջրին ալէկոծութեանը
սաստեց՝ եւ հանդարտեցին , եւ խաղաղութիւն է-
25 լաւ ։ Ասաց նորանց . Ի՞նչ տեղ է ձեր հաւատքը .
Եւ խիստ վախեցած զարմացան , եւ իրար ասում
էին . Սա օ՞վ պիտի լինի՝ որ քամիներին ու ջը-
րերին հրաման է տալիս , եւ հնազանդվումեն սո-
րան ։
26 Եւ նաւով գնացին , հասին Գերգեսացոց աշ-
27 խարհքն՝ որ այն կողմն է Գալիլեայի դիմացը ։ Եւ
երբոր նա դուրս էր գալիս ցամաքը , քաղաքիցը
մին մարդ պատահեց նորան՝ որ նորանում դեւեր
կային . եւ շատ ժամանակ շոր չէր հագած՝ եւ ո՛չ
28 տան մէջ բնակված , այլ գերեզմաններումը ։ Եւ
Յիսուսին որ տեսաւ , աղաղակեց եւ նորան առա-
ջին ընկաւ , եւ բարձր ձայնով ասաց . Քեզ ի՞նչ
բան կայ ինձ հետ՝ Յիսո՛ւս բարձրեալ Աստուծոյն

29 Որդի. աղաչումեմ քեզ՝ մի՛ տանջեր ինձ։ Պատ-
ճառնոր՝ նա պիղծ դևին հրաման էր տալիս՝ որ
այն մարդուցը դուրս գայ. ինչուոր շատ անգամ
յափշտակել էր նորան, և շղթաներով կապվում
էր, և երկաթների մէջ պահվում, և նա կա-
պանքները կտրում, և դևիցը քշվումէր անա-
30 պատ տեղ։ Յիսուս նորան հարցրուց՝ և ասաց.
Քո անունդ ի՞նչ է. և նա ասաց. Լեգէոն, ին-
31 չուոր՝ շատ դևեր էին մտած նորա մէջ։ Եւ ա-
ղաչումէին նորան՝ որ չ'հրամայէ նորանց գնալ ան-
32 դունդը։ Եւ այնտեղ շատ խոզերի մին երամակ
կար՝ որ այն սարին վերայ արածումէին, և աղա-
չեցին նորան՝ որ հրաման տայ իրենց մտնել նորանց
33 մէջ. և հրամայեց նորանց։ Եւ դևերն այն մար-
դուցը դուրս եկին՝ և խոզերին մէջ մտին. և ե-
րամակն այն բարձր տեղիցը վազեց ծովակին մէջ՝
34 և խեղդվեցաւ։ Երբոր խոզարածները տեսին այն
բաները՝ որ էլան, փախան, և այն քաղաքին ու
35 գիւղերին մէջ պատմեցին։ Եւ երբոր մարդիկ դուրս
էլան այն բաները տեսնելոյ, և Յիսուսին մօտ
եկին, այն մարդը գտին՝ որ նորանից դևերը դուրս
էին ելել, որ հագված և խելքը գլուխն եկած՝
Յիսուսին ոտներին մօտ նստած էր. և վախեցան։
36 Նորանք՝ որ տեսել էին, պատմեցին նորանց, թէ
37 ինչպէս փրկվեցաւ այն դիւահարը։ Եւ Գերգեսա-
ցոց ամեն չորս կողմերն էլած մարդիկն աղաչում
էին նորան՝ որ իրենց սահմաններիցը գնայ, պատ-
ճառնոր՝ սաստիկ ահով և վախով բռնված էին.
38 և նա նաւ մտաւ՝ և յետ դարձաւ։ Այն մար-
դըն՝ որ նորանից դևերը դուրս էին ելել, նորան

աղաչումէր՝ որ նորա հետ մնան գայ. արձակեց նո-
39 րան՝ և ասաց. Դարձի՛ր քո տունդ, և պատ-
մէ՛ ամեն ինչ որ Աստուած քեզ արաւ. Նա գը-
նաց քաղաքն՝ ու քարոզումէր ինչ որ Յիսուս ի-
րեն արաւ։
40 Եւ երբոր Յիսուս յետ դարձաւ, ժողովուրդն
ընդունեց նորան. ինչուոր՝ ամենքն էլ սպասում
41 էին նորան։ Եւ ահա՛ մին մարդ եկաւ՝ որ նորա
անունն Յայրոս էր, և նա ժողովարանի իշխան
էր. Յիսուսի ոտներն ընկած՝ աղաչումէր նորան,
42 որ իրեն տունը մտնէ. ինչուոր՝ մին միածնունդ
աղջիկ ունէր, իբր տասներկու տարեկան, և նա
մեռնելոյ մօտ էր. և նորա գնալոյ ժամանակը ժո-
ղովուրդները նեղացնումէին նորան։
43 Եւ մին կին կար արիւն թափելոյ հիւանդու-
թեան մէջ տասներկու տարուց՝ որ իրեն ամեն ապ-
րանքները բժիշկներին էր տուել՝ փճացրել. որ նո-
44 րան հնար չէր էլած՝ մինիցը բժշկելոյ. Սա մօտ ե-
կաւ, և ետևիցը նորա շորի ծայրերին դիպաւ.
և շուտով իսկ այն ժամին նորա արիւնի վազելը
45 դադարեց։ Եւ Յիսուս ասաց. Ո՞վ է՝ որ ինձ դի-
պաւ. երբոր ամենքն ուրանումէին, Պետրոս և
նորանք որ նորա հետ էին՝ ասացին. Վա՛րդապետ՝
ժողովուրդներդ պնդումեն և նեղացնումեն քեզ։
46 Եւ Յիսուս ասաց. Մինը դիպաւ ինձ. ինչուոր՝
47 իմացայ՝ որ զօրութիւն դուրս եկաւ ինձանից։ Երբ-
որ կինը տեսաւ՝ որ չ'ծածկվեցաւ նորանից, դո-
ղալով եկաւ՝ և նորան առաջին ընկաւ, և ա-
մեն ժողովրդի առաջին պատմեց՝ թէ ի՛նչ բանի
համար նորան դիպաւ, և թէ ի՛նչպէս իսկ այն

48 ժամին բժշկվեցաւ։ Եւ նա ասաց. Սրտապի՛նդ
կաց դո՛ւստր՝ քո հաւատքդ ողջացրուց քեզ, գը-
նա՛ խաղաղութենով։
49 Եւ դեռ որ նա խօսումէր, այն ժողովրդապետի
տանիցը մին մարդ եկաւ, եւ նորան ասաց. Քո
աղջիկդ մեռաւ, էլ դորան մի՛ աշխատացներ։
50 Բայց Յիսուս երբոր լսեց, նորան պատասխան տը-
ուաւ եւ ասաց. Մի՛ վախենար, միայն հաւատա՛
51 եւ նա կապրի։ Եւ տունն որ մտաւ՝ բնաւ մինին
չ'թողե՛ց որ մտնէ, բայց միայն Պետրոսին, եւ
Յակոբին եւ Յօհաննէսին, եւ երեխայի հօրն ու
52 նորա մօրը։ Ամէնքը լաց էին լինում՝ եւ նորա վե-
րայ սուգ անում. եւ նա ասաց, Լաց մի՛ լինիք,
53 ինչու որ՝ մեռած չէ՛, այլ քնած է։ Եւ նորանք
ծաղր էին անում նորան, ինչու որ՝ գիտումէին, որ
54 մեռաւ։ Եւ նա ամենին դուրս հանեց, Նորա ձե-
55 ռիցը բռնեց, խօսեց եւ ասաց. Ո՛վ երեխայ՝ վե՛ր
56 կաց, կանգնէ՛։ Եւ նորա հոգին դարձաւ, եւ շու-
տով կանգնեց. եւ հրամայեց՝ որ նորան բան տան
57 ուտելոյ։ Եւ նորա ծնողքը զարմացան. եւ նա պատ-
ուիրումէր՝ որ բնաւ մինին չասեն ինչ որ էլաւ։

ԳԼ. Թ.

Տասներկու առաքեալք. Հերովդէսի գաղափարը Յիսուսի մասին. 5000 մարդիկ կշտացնելը. Քրիստոսի չարչարանքը և իր հետեւողներին խաչը, Նորա կերպարանքին փոխվիլը. լուսնոտին բժշկութիւնը. աշակերտաց փառասիրութիւնը և նախանձը. Յիսուսին ճշմարիտ կերպիւ հետեւիլ։

1 Եւ տասներկու առաքեալներին կանչեց, եւ նո-
րանց զօրութիւն եւ իշխանութիւն տուաւ ամէն

դեւերին վերայ, եւ հիւանդութիւններ բժշկե-
2 լոյ. Եւ նորանց ուղարկեց՝ որ Աստուծոյ արքայու-
3 թիւնը քարոզեն. եւ ցաւագարները բժշկեն. Եւ
նորանց ասաց. Բնաւ մին բան վեր չառնէք ճանա-
պարհի համար, ո՛չ գաւազան, ո՛չ պարկ, ո՛չ
հաց եւ ո՛չ արծաթ, երկու հագուստ էլ չունե-
4 նաք։ Եւ որ տուն որ մտնէք՝ այն տեղ մնացէ՛ք,
5 եւ այն տեղից գնացէք։ Եւ նորանք՝ որ ձեզ չըն-
դունին, երբոր այն քաղաքից դուրս կ'գնաք,
ձեր ոտների փոշին թա՛փ տուէք՝ որ նորանց վը-
6 կայութիւն լինի։ Եւ դուրս գնացին եւ ման էին
գալիս քաղաքներն ու գիւղերը աւետարանը քա-
րոզումէին եւ ամեն տեղ բժշկութիւն անում։
7 Հերովդէս չորրորդապետն այն ամեն գործքերը լը-
սեց. եւ զարմանումէր նորա համար՝ որ մին քա-
8 նիսն ասումէին. Թէ Յօհաննէսը մեռելների միջից
յարութիւն առաւ, եւ մին քանիսը թէ, Եղիան
յայտնվեցաւ՝ եւ ուրիշները թէ, Առաջին մարգա-
9 րէներից մինը յարութիւն առաւ։ Եւ Հերովդէսն
ասաց. Յօհաննէսին գլուխը ես կտրեցի. բայց աս
ո՞վ է՝ որ նորանից այսպիսի բաներ եմ լսում. եւ
խնդրումէր, որ տեսնէ նորան։
10 Առաքեալները դարձան եւ պատմեցին նորան ա-
մեն՝ ինչ որ արին. եւ նորանց առաւ՝ եւ գնաց
առանձին մին անապատ տեղ, մին քաղաքի մօտ՝
11 որ նորա անունը Բեթսայիդա էր։ Եւ ժողովուրդ-
ներն երբոր գիտացին, նորան ետեւէն գնացին.
եւ նորանց ընդունեց եւ նորանց հետ խօսումէր,
եւ նորանց՝ որ բժշկութեան կարօտ էին՝ բժըշ-
կումէր։

12 Եւ օրն սկսեց մթնել. տասներկուքը մօտ եկին
եւ նորան ասացին. Թո՛ղ տուր այդ ժողովուրդը,
որ չորս կողմով եղած գիւղերն ու շէները գնան,
հանգիստ առնեն, եւ կերակուր գտնեն. ինչու որ՝
13 այստեղ անապատ տեղ ենք։ Նորանց ասաց.
Դուք տուէ՛ք դորանց ուտել. եւ նորանք ասացին.
Մենք հինգ հատ հացից եւ երկու ձկնից աւելի
բան չունինք, եթէ ո՛չ՝ գնանք այն ժողովրդի հա-
14 մար բաւական կերակուր գնենք։ Ինչու որ՝ հինգ
հազարի չափ մարդիկ էին։ Աշակերտներին ասաց.
15 Նստացրէ՛ք դորանց դաս դաս՝ յիսուն յիսուն։ Եւ
16 այնպէս արին, եւ ամենին նստացրին։ Եւ այն
հինգ հացն ու երկու ձուկն առաւ, դէպի երկին-
քը նայեց, օրհնեց եւ կտրեց, եւ տալիս էր աշա-
17 կերտներին՝ որ ձգեն ժողովրդին։ Ամենքը կերին
եւ կշտացան. եւ կտորների փշրանքները վերառին՝
տասներկու քթոց։

18 Եւ եղաւ՝ երբոր նա առանձին աղօթք էր ա-
նում՝ նորա աշակերտներն էլ նորա հետ էին.
հարցրուց նորանց եւ ասաց. Ժողովուրդներն ինձ
19 համար ո՞վ են ասում՝ որ լինիմ։ Եւ նորանք պա-
տասխան տուին եւ ասացին. Յօհաննէս մկրտիչը,
եւ ուրիշները՝ Եղիան, եւ ուրիշները թէ Առաջին
20 մարգարէներիցը մինը յարութիւն առաւ։ Նո-
րանց ասաց. Դուք ո՞վ էք ասում ինձ համար՝
որ լինիմ. Պետրոս պատասխան տուաւ եւ ասաց.
21 Աստուծոյ Քրիստոսը։ Նա սաստեց նորանց, եւ
22 պատուիրեց՝ որ այն բանը բնաւ մինին չասեն։ Եւ
ասաց՝ թէ, պէտք է, որ Որդին մարդոյ շատ չար-
չարուի եւ անարգուի քահանայապետներիցն ու ծե-

րերիցը եւ կարգադրողներիցը, եւ սպանուի՝ եւ երեք
23 օրումը յարութիւն առնէ։ Եւ ամենին ասում էր,
թէ որ մինը կամենում է իմ ետեւէս գալ՝ թո՛ղ ի-
րեն անձն ուրանայ՝ եւ ամեն օր իրեն խաչն առ-
24 նէ՝ եւ իմ ետեւէս գայ. Պատճառնոր՝ ով որ կա-
մենայ իրեն անձն ապրեցնել՝ կ'կորցնէ նորան. եւ
ով որ իրեն անձը կ'կորցնէ ինձ համար՝ կապրեցնէ
25 նորան։ Ի՞նչ օգուտ է մարդոյ՝ որ աշխարհքս
ստանայ, եւ իրեն անձը կորցնէ, կամ նորան վնաս
26 տայ։ Ինչու որ՝ ով որ ինձ եւ իմ խօսքերս ամօթ
կ'համարէ՝ Որդին մարդոյ էլ նորան ամօթ կանէ՝
երբոր իրեն եւ Հօր եւ սուրբ հրեշտակների փառ-
27 քովը կ'գայ։ Բայց ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ
Այստեղ լինողներիցը մին քանիսը կան, որ մահ
չեն տեսնիլ, մինչեւ որ Աստուծոյ արքայութիւնը
տեսնեն։

28 Եւ եղաւ՝ որ ութ օրի չափ այս խօսքերից ե-
տեւ, Պետրոսին եւ Յակոբին եւ Յօհաննէսին ա-
29 ռաւ՝ եւ վեր ելաւ. մին սար աղօթք անելոյ։ Եւ
նորան աղօթք անելոյ ժամանակը՝ նորան երեսի կեր-
պարանքն ուրիշ կերպ եղաւ. եւ նորա հագուստը
30 փոխվեցաւ՝ եւ սպիտակ փայլուն եղաւ։ Եւ ահա՛
երկու մարդ խօսում էին նորա հետ. որ նորանք Մօ-
31 սէսն ու Եղիան էին, փառքով երեւեցած՝ եւ նո-
րա վախճանին համար խօսում էին՝ որ Երուսաղէ-
32 մումը պէտք էր կատարէ։ Բայց Պետրոս եւ նո-
րանք՝ որ նորա հետ էին՝ որ քնով ծանրացած էին,
զարթնացան՝ տեսին նորա փառքը, եւ այն երկու
33 մարդն՝ որ նորա մօտ կանգնած էին։ Եւ եղաւ
երբոր նորանք հեռանում էին նորանից, Պետրոս ա-

ասաց Յիսուսին . Վա՛րդապետ՝ լաւ է , որ մենք
այստեղ կենանք , եւ երեք տաղաւար շինենք , մի-
նը քեզ համար . եւ մինը Մովսէսին եւ մինը Եղիա-
34 յին . եւ չէր գիտում՝ թէ ի՛նչ էր խօսում ։ Եւ
երբոր սա ասաց , մին ամպ եկաւ եւ նորանց վերայ
շուք արաւ , եւ վախեցան . երբոր այն ամպին մէջ
35 մտին , Ձայն էլաւ ամպից ու ասաց . Դա՛ է իմ
36 ընտրված Որդին դորան ակա՛նջ դրէք ։ Եւ այն
ձայնը որ էլաւ՝ Յիսուս մինակ գտնւաւ , եւ նորանք
լուռ կացան եւ այն օրերումը ընաւ մին մարդու չը
պատմեցին այն բաներից՝ որ տեսին ։
37 Եւ էլաւ վաղուան օրումն՝ երբոր այն սարից
վէր էին գալիս՝ շատ ժողովուրդ նորան առաջն ե-
38 կաւ ։ Եւ ահա այն ժողովրդից մին մարդ աղա-
ղակեց եւ ասաց . Վա՛րդապետ՝ աղաչում եմ քեզ ,
մտիկ տուր իմ որդուս . ինչու որ՝ միածնունդ է ինձ ։
39 Եւ ահա՛ դեւ բռնում է նորան , եւ յանկարծ գոռ-
գոռում է՝ եւ նորան գետնովը է տալիս , եւ թա-
ւալացնում է նորան եւ փրփրացնում , եւ դժուար
թէ նորան կոտրատելուցն ետեւ հեռանում է նորա-
40 նից ։ Եւ քո աշակերտներից աղաչեցի , որ հանեն
41 նորան , եւ չ'կարացին ։ Յիսուս պատասխան տը-
ուաւ եւ ասաց . Ո՛վ անհաւատ եւ ծուռ ազգ ,
մինչեւ ե՞րբ ձեզ հետ պիտի լինիմ եւ համբերեմ
42 ձեզ . քո որդին այստեղ բե՛ր ։ Եւ դեռ որ մօտ
էր գալիս , դեւը գետնովը զարկեց նորան՝ եւ շատ
43 սաստիկ շարժեց ։ Յիսուս սաստեց պիղծ դեւին ,
եւ տղային բժշկեց . եւ նորան տուաւ իրեն հօրը ։
44 Եւ ամենքը զարմանումէին Աստուծոյ մեծամեծ
գործքերին վերայ .

Եւ դեռ որ ամենքը զարմանումէին այն ամեն
բաներին վերայ՝ որ անումէր , իրեն աշակերտնե-
րին ասաց . Այս բաներս դրէ՛ք դուք ձեր ականջ-
ները . որ Որդին մարդու մարդկանց ձեռքը պիտի
45 մատնվի ։ Եւ նորանք չէին գիտում այն բանը եւ
ծածկված էր նորանցից՝ որ չ'գիտենան . եւ վա-
խումէին հարցնել նորան այն բանին համար ։
46 Մին խորհուրդ մտաւ նորանց մէջ՝ թէ նորանցից
47 ո՞վ լինի մեծը ։ Յիսուս երբոր նորանց սրտերի մը-
տածմունքներն իմացաւ՝ մին երեխայ առաւ՝ եւ
48 նորանց միջումը կանգնացրուց իրեն մօտ , Եւ նո-
րանց ասաց . Ով որ այս երեխայիս կընդունի իմ
անունովս՝ ինձ կընդունի . եւ ով որ ինձ կըն-
դունի՝ իմ ուղարկօղին կընդունի . պատճառնոր՝
ով որ ձեր ամենից մէջ շատ փոքրն է՝ նա մեծ
կ'լինի ։
49 Յօհաննէս պատասխան տուաւ եւ ասաց . Վա՛ր-
դապետ մինը տեսինք՝ որ քո անունովդ դեւեր էր
հանում՝ եւ արգելեցինք նորան , ինչու որ՝ մեզ հետ
50 ման չէր գալիս ։ Յիսուս նորանց ասաց . Մի՛ ար-
գելէք նորան . պատճառնոր՝ ով որ ձեր թշնամի
չէ՛՝ ձեր կողմն է ։
51 Եւ էլաւ՝ երբոր նորա վերանալու օրերը կատար-
վումէին , եւ ինքն երեսը հաստատեց՝ որ գնայ Ե-
52 րուսաղէմ ։ Եւ իրեն երեսի առաջին պատգամա-
ւորներ ուղարկեց՝ եւ երբոր գնացին Սամարացոց
մին գիւղ մտին որ նորա համար բան պատրաս-
53 տեն . Եւ չընդունեցին նորան . ինչու որ՝ իրեն երե-
54 սը գրած էր՝ որ Երուսաղէմ գնայ ։ Երբոր Յակո-
բոս եւ Յօհաննէս աշակերտները տեսին՝ ասացին .

Տէ՛ր՝ կ'կամենա՞ս՝ որ ասենք, եւ կրակ վէր գայ
55 երկնքից՝ ու նորանց սատակացնէ ։ Դարձաւ՝ սաս-
տեց նորանց եւ ասաց. Չէ՛ք գիտում՝ թէ ո՛ր հո-
56 գու էք դուք. Պատճառնոր՝ Որդին մարդու չեկաւ՝
որ մարդկանց հոգիները կորցնէ, այլ որ ապրեցնէ.
եւ գնացին ուրիշ գիւղ ։
57 Եւ դեռ որ ճանապարհումը գնումէին՝ մին մարդ
նորան ասաց. Ես էլ քո ետեւէդ կ'գամ՝ որ տեղ
58 որ գնաս ։ Յիսուս նորան ասաց. Աղուէսները բոյն
ունին, եւ երկնքի թռչունները դադարելու տեղ
եւ Որդին մարդու տեղ չունի՝ որ իրեն գլուխը դնէ ։
59 Մին ուրիշին ասաց՝ իմ ետեւէս ե՛կ. եւ նա ա-
սաց. Տէ՛ր՝ հրամա՛ն տուր՝ որ գնամ առաջ իմ
60 հայրս թաղեմ ։ Յիսուս նորան ասաց. Թո՛ղ մե-
ռելներին՝ որ իրենց մեռելները թաղեն. եւ դու
գնա՛ Աստուծոյ արքայութիւնը պատմէ ։
61 Մին ուրիշն էլ ասաց. Տէ՛ր՝ քո ետեւէդ կ'գամ.
միայն թէ առաջ հրամա՛ն տուր ինձ, որ իմ տա-
62 նըս բարեւ մնա անեմ ։ Յիսուս նորան ասաց. Ո՛չ
ով՝ որ ձեռքը մաճի վերայ դնէ՝ եւ յետ նայի՝ Ա-
ստուծոյ արքայութեան համար յաջողված չէ՛ ։

ԳԼ. Ժ

*Եօթանասուներկու աշակերտք. ողորմած Սամարացին.
Մարիամ ու Մարթա ։*

1 Սորանից ետեւ Տէրն ուրիշ եօթանասուն եւ եր-
կու հոգի էլ կարգեց. եւ նորանց երկու երկու ի-
րեն առաջին ուղարկեց այն ամեն քաղաքներն ու
2 տեղերն՝ որ տեղ որ ինքը պէտք էր գնայ ։ Եւ նո-

րանց ասաց. Հունձքը շատ է, եւ մշակները քիչ.
ուրեմն աղաչեցէք հնձի Տիրոջն՝ որ մշակներ ու-
3 ղարկէ իրեն հունձքը ։ Գնացէ՛ք. ահա՛ ուղարկում-
4 եմ ձեզ ինչպէս գառներ գայլերի մէջ ։ Վէր մի՛
առնէք ո՛չ քսակ, ո՛չ պարկ, ո՛չ կօշիկներ. եւ
5 ճանապարհումը ընաւ մինին բարեւ չ'տաք ։ Որ
տուն որ մտնէք՝ առաջ ասացէք՝ թէ Ողջո՛յն այս
6 տանս ։ Թէ որ այնտեղ ողջունի որդի լինի, ձեր
ողջոյնը նորա վերայ կ'մնայ. ապա թէ չէ՝ յետ
7 կ'դառնայ դէպի ձեզ ։ Եւ այն տանը մնացէք, նո-
րանցից կերէ՛ք եւ խմեցէ՛ք. ինչուոր՝ մշակն իրեն
8 վարձքին արժանի է. տանից տուն մի՛ փոխվէք. Որ
քաղաք որ մտնէք՝ եւ ձեզ ընդունին, կերէ՛ք՝ ինչ
9 որ կ'դնեն ձեր առաջին ։ Եւ հիւանդներին՝ որ այն-
տեղ լինին՝ բժշկեցէ՛ք. եւ նորանց ասացէ՛ք՝ Թէ
Աստուծոյ արքայութիւնը մօտացել է ձեր վերայ ։
10 Բայց որ քաղաք որ մտնէք, եւ ձեզ չ'ընդունին՝
երբոր դուրս գաք նորա բաց փողոցներն՝ ասացէ՛ք.
11 Այս փոշին էլ՝ որ ձեր քաղաքիցը մեր ոտներիս է
կպել՝ թափ ենք տալիս ձեզ վերայ. միայն թէ աս
գիտացէ՛ք, որ Աստուծոյ արքայութիւնը մօտա-
12 ցել է ։ Ասումեմ ձեզ՝ որ Սոդոմացոց համար ա-
ւելի հեշտ կ'լինի այն օրումը քան թէ այն քաղա-
13 քին համար ։ Վա՛յ քեզ Քորազին. վա՛յ քեզ
Բեթսայիդա. պատճառնոր՝ եթէ Տիւրոսին ու Սի-
դօնին մէջ եղած էին այն զօրութիւններն՝ որ ձեր
մէջն եղան՝ շատ առաջուց քրձի եւ մոխրի մէջ
14 նստած ապաշխարել էին. Բայց Տիւրոսի եւ Սի-
դօնի համար աւելի հեշտ կ'լինի դատաստանին օ-
15 րումը քանթէ ձեզ համար ։ Եւ դո՛ւ Կափառնա-

յում՝ որ մինչեւ երկինքը բարձրացած ես՝ մինչեւ
16 դժոխքը պիտի վեր գաս ։ Ով որ ձեզ կ'լսէ՝ ինձ կը
լսէ . եւ ով որ ձեզ կ'անարգէ՝ ինձ կանարգէ . եւ
ով որ ինձ կանարգէ , ինձ ուղարկօղին կանարգէ .
եւ ով որ ինձ կ'լսէ՝ նորան կ'լսէ , որ ինձ ու-
ղարկեց ։
17 Այն եօթանասուն եւ երկուքն ուրախութենով
յետ դարձան եւ ասացին . Տէ՛ր՝ դեւերն էլ հնա-
18 զանդվում են մեզ քո անունովդ ։ Եւ նորանց ա-
սաց . Տեսնում էի սատանային , որ կայծակի պէս
19 երկնքիցը վեր էր ընկնում ։ Ահա՛ իշխանութիւն
տուի ձեզ՝ որ օձերը եւ կարիճները եւ թշնամոյ ա-
մեն զօրութիւնը կոխէք , եւ ձեզ բնաւ վնաս չա-
20 նեն ։ Միայն թէ՝ նորա համար մի՛ ուրախանաք՝ որ
դեւերը հնազանդվում են ձեզ՝ բայց ուրախացէ՛ք՝
որ ձեր անուններն երկնքումը գրված են ։
21 Իսկ այն ժամումը Յիսուս Սուրբ Հոգովը ցնծա-
ցաւ եւ ասաց . Գոհանում եմ քեզանից ո՛վ Հայր՝
երկնքի եւ երկրի Տէր , որ իմաստուններիցն ու գի-
տուններիցն այս բանս ծածկեցիր եւ տղայոցը
յայտնեցիր սորան . Իրաւի՛ ո՛վ Հայր . ինչու որ՝
22 այսպէս հաճոյ էլաւ քո առաջին ։ Ամեն բան տրվ-
ված ինձ իմ Հօրիցս . եւ ո՛չ ով չ'գիտում՝ թէ
ո՛վ է Որդին՝ բայց միայն Հայրը . եւ թէ ո՛վ է
Հայրը բայց միայն Որդին , եւ ում որ Որդին կա-
մենայ յայտնել ։
23 Եւ դարձաւ դէպի աշակերտներն առանձին՝ եւ
ասաց . Երանի՛ է այն աչքերին՝ որ տեսնում են նա՝
24 որ դուք տեսնում էք ։ Ասում եմ ձեզ՝ թէ շատ
մարգարէներ եւ թագաւորներ կամեցան տեսնել

նա՝ որ դուք էք տեսնում, եւ չ'տեսի՛ն . եւ լսել
նա՝ որ դուք էք լսում, եւ չ'լսեցի՛ն ։
25 Եւ ահա՛ մին օրէնք գիտօղ վերկացաւ՝ նորան
փորձում էր եւ ասում . Վարդապե՛տ՝ ի՞նչ պիտի
26 անեմ՝ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ ։ Եւ
նա ասաց նորան . Օրէնքումն ի՞նչ է գրված , ի՞նչ-
27 պէս ես կարդում ։ Նա պատասխան տուաւ եւ ա-
սաց . Սիրէ՛ քո Տէր Աստուածդ քո ամեն սրտովդ ,
քո ամեն անձնովդ , քո ամեն զօրութենովդ եւ քո
28 ամեն մտքովդ . եւ քո ընկերդ քո անձիդ պէս ։ Եւ
նորան ասաց . Շիտակ պատասխան տուիր՝ դա ա-
29 րա՛՝ եւ կապրիս ։ Նա՝ որովհետեւ կամեցաւ իրեն
անձն արդարացնել՝ Յիսուսին ասաց . Եւ իմ ըն-
30 կերս ո՞վ է ։ Յիսուս պատասխան տուաւ եւ ա-
սաց . Մին մարդ Երուսաղէմիցը վեր էր գալիս Ե-
րիքով . եւ աւազակներին ձեռքն ընկաւ՝ որ մեր-
կացրին նորան՝ եւ խոցեր դրին նորա վերայ , կի-
31 սամահ թողին եւ գնացին ։ Պատահեց՝ որ մին քա-
հանայ իսկ այն ճանապարհովը գնում էր՝ եւ նորան
32 տեսաւ՝ անցաւ ։ Այնպէս էլ մին Ղեւտացի իսկ
33 այն տեղն եկաւ , տեսաւ եւ անցաւ ։ Մին Սամա-
րացի՝ որ ճանապարհ էր գնում՝ եկաւ իսկ նորա
34 մօտ . եւ նորան որ տեսաւ՝ խեղճն եկաւ . Եւ մօտ
եկաւ՝ նորա խոցերին վերայ ձէթ եւ գինի ածեց
եւ պատեց . եւ իրեն անասունին վերայ դրաւ՝ մին
իջեւան տարաւ նորան , եւ նորա համար հոգս քա-
35 շեց ։ Եւ հետեւի օրումն՝ երբոր այն տեղիցը դուրս
էր գնում՝ երկու դահեկան հանեց եւ իջեւանի
տիրոջը տուաւ եւ ասաց . Դորա համար հո՛գս
տար , եւ ինչ որ դորա համար կ'ծախսես՝ իմ միւս

36 անգամ գալըս ժամանակը կ'վճարեմ քեզ։ Հիմիկ
այն երեքիցն ո՞րն է երեւում քեզ՝ թէ մօտաւոր
37 է աւազակներին ձեռքն ընկած մարդուն։ Եւ նա
ասաց. Նա՛ որ ողորմութիւն արաւ նորա վերայ։
Յիսուս նորան ասաց. Գնա՛ դու էլ ճիշդ այնպէս
արա՛։

38 Եւ էլաւ որ նորանց գնալու ժամանակն ինքն էլ
մին գիւղ մտաւ. եւ մին կին Մարթա անուն նո-
39 րան ընդունեց իրեն տունը։ Եւ նա մին քոյր ու-
նէր՝ որ նորան անունը Մարիամ էր. որ էլ եկաւ
Տէրին ոտներին մօտ նստեց, եւ նորա խօսքերը լը-
40 սումէր։ Մարթան ծառայութեան համար շատ
զբաղմունքի մէջ էր. եկաւ նորան մօտ կանգնեց
եւ ասաց. Տէ՛ր՝ դու բնաւ հոգս չունի՞ս՝ որ իմ
քոյրս ինձ մինակ թողեց ծառայութեան մէջ. ա-
41 պա ասա՛ դորան՝ որ օգնէ ինձ։ Յիսուս պատաս-
խան տուաւ եւ ասաց. Մա՛րթա Մարթա՝ դու
հոգս ես քաշում եւ շատ բաներով զբաղված ես.
42 Բայց այստեղ քիչ բան պէտք է. Մարիամը բարի
բաժինն ընտրեց՝ որ վեր չառնվիլ նորանից։

ԳԼ. ԺԱ

Քրիստոս սովորցնումէր իր աշակերտներին աղօթել. պատասխան է տալիս դեւ հանելուն համար. նշան են ուզում. յանդիմանութիւն փարիսեցիներին։

1 Եւ էլաւ որ մին տեղ աղօթք էր անում. եւ երբ-
որ դադարեց, իրեն աշակերտներիցը միինն ասաց
նորան. Տէ՛ր՝ սովորցրո՛ւ մեզ աղօթք անել, ինչ-

պէս որ Յօհաննէսն իրեն աշակերտներին սովորցրուց։
2 Ասաց նորանց. երբոր աղօթք անէք, ասացէ՛ք.
Մեր Հա՛յր, քո անունդ սուրբ լինի՛. քո արքայ-
3 ութիւնդ գա՛յ։ Մեր ամեն օրվան հացն օրէց օր
4 տո՛ւր մեզ։ Եւ մեր մեղքերը թո՛ղ մեզ. որ մենք
էլ թողումենք այն ամենին՝ որ պարտական են մեզ.
եւ մեզ փորձանքի մէջ մի՛ ձգեր։

5 Եւ նորանց ասաց. Ձեզանից ո՞վ է, որ բարե-
կամ ունենայ, եւ կէս գիշերին նորա մօտ գնայ,
եւ նորան ասէ. Բարեկա՛մ՝ ինձ երեք հաց փո՛խ
6 տուր. ինչուոր՝ իմ բարեկամս ինձ մօտ եկաւ ճա-
նապարհիցը, եւ բան չունիմ՝ որ նորան առաջին
7 դնեմ։ Եւ նա՝ պատասխան տայ ներսիցն եւ ասէ.
Մի՛ աշխատացներ ինձ. ինչուոր՝ դռները փակված
են, եւ երեխաներս ինձ հետ անկողնումն են. չե՛մ
8 կարող վեր կենալ եւ տալ քեզ։ Ասումեմ ձեզ՝
թէ որ բարեկամութեան համար վեր չ'կենայ եւ
տայ նորան, բայց նորա խիստ աղաչանքին համար
վեր կ'կենայ եւ կ'տայ նորան՝ ինչ որ էլ պէտք լի-
9 նի։ Եւ ես ասումեմ ձեզ, խնդրեցէ՛ք՝ եւ կ'տվվի
ձեզ, ման եկէ՛ք՝ եւ կ'գտնէք, դուռը թակեցէ՛ք՝
10 եւ կ'բացվի ձեզ։ Ինչուոր՝ ամեն ով որ կ'խնդրէ՝
կառնէ, եւ ով որ ման կ'գայ՝ կ'գտնէ, եւ ով որ
11 կ'թակէ՝ կ'բացվի նորան։ Ձեզանից ո՞վ է այն հայ-
րըն՝ որ նորանից իրեն որդին ձուկն ուզէ, միթէ
12 ձկան տեղ օ՞ձ կ'տայ նորան։ Եւ կամ ձու ուզէ,
13 միթէ կարիճ կ'տա՞յ նորան։ Ապա թէ որ դուք,
որ չար էք՝ գիտումէք բարի պարգեւներ տալ ձեր
որդոցը, էլ ո՞րքան աւելի ձեր Հայրն երկնքիցը
բարի բաներ կ'տայ նորանց, որ ուզումեն նորանից։

14 Եւ մին համր դեւ էր հանում, եւ եղաւ այն
դեւի դուրս գալոյ ժամանակին՝ որ համրը խօսեց,
15 եւ ամեն ժողովուրդները զարմացան ։ Եւ նորանցից
մին քանիսն ասացին թէ՝ Դա դեւերին իշխան Բէ-
16 եզեբուղով է հանում դեւերը ։ Եւ ուրիշները
փորձում եւ երկնքիցը մին նշան էին խնդրում նո-
17 րանից ։ Բայց նա նորանց մտածմունքներն իմանա-
լով՝ նորանց ասաց . Ամեն թագաւորութիւն որ ի-
րեն մէջ բաժանված է՝ կաւերվի, եւ տուն՝ որ ի-
18 րեն մէջ բաժանված է՝ կ'կործանվի ։ Ապա թէ որ
սատանան էլ ինքն իրենից բաժանվեցաւ, Նորա
թագաւորութիւնն ի՞նչպէս կ'կենայ . պատճառնոր
ինձ համար ասում էք, թէ Դա դեւերի իշխան Բէ-
19 եզեբուղով է հանում դեւերը ։ Եթէ ես Բէեզե-
բուղով եմ հանում դեւերը, ձեր որդիքն ինչո՞վ
են հանում . դորահամար նորանք կ'լինին ձեզ դա-
20 տաւոր ։ Բայց եթէ Աստուծոյ մատովն եմ հանում
դեւերը, ապա Աստուծոյ արքայութիւնը ձեզ վե-
21 րայ հասել է ։ Երբոր զօրաւոր մարդ զէ՛նք հագած
իրեն տունը պահէ, նորան ապրանքները խաղաղու-
22 թենով են ։ Բայց թէ որ նորանից էլ աւելի զօրա-
ւոր գայ նորա վերայ՝ եւ նորան յաղթէ, նորա
զէնքերն՝ որ յոյսը նորանց վերայ էր դրել, կ'հանէ
23 եւ նորա աւարը կ'բաժանէ ։ Ով որ ինձ հետ չէ՝
ինձ հակառակ է, եւ ով որ ինձ հետ չի ժողո-
վում՝ ցրվում է ։
24 Երբոր պիղծ դեւը դուրս է գալիս մարդուցն՝ ան-
ջուր տեղերանքում է ման գալիս եւ հանգիստ
խնդրում . եւ երբոր չի գտնում՝ ասում է . Ցետ
25 դառնամ իմ տունս՝ որտեղից որ դուրս եկի ։ Եւ

գալիս է նորան սրբված եւ պատրաստված է գըտ-
26 նում ։ Այն ժամանակը գնում եւ իրենից էլ ա-
ւելի չար եօթը դեւ է առնում՝ եւ մտնում է բը-
նակվում այն տեղ, եւ այն մարդուն յետինն ա-
ւելի չար է լինում քան թէ առաջինը ։
27 Եւ եղաւ դեռ քանի որ սա խօսում էր, ժողովրդի
միջիցը մին կին ձայն բարձրացրուց եւ ասաց . Ե-
րանի՛ է այն փորին՝ որ քեզ պահեց, եւ այն ծը-
28 ծերին՝ որ քեզ ծծացրին ։ Եւ նա ասաց . Էլ ա-
ւելի երանի է՝ նորանց, որ Աստուծոյ բանը լսում
են եւ անում ։
29 Եւ երբոր ժողովուրդները, նորա վերայ դիզվում
էին՝ սկսեց ասել . Այս ազգս չար ազգ է . նշան է
խնդրում, եւ երկնքիցը նշան չի տվվիլ սորան՝ բայց
30 միայն Յօնանու նշանը . Պատճառնոր՝ ինչպէս որ
Յօնան նշան եղաւ Նինուէացոց համար, այնպէս
31 էլ Որդին մարդոյ այս ազգիս համար կ'լինի ։ Հա-
րաւային երկրի թագուհին դատաստանին վեր կը
կենայ այս ազգիս մարդկանց հետ եւ սորանց կը
դատապարտէ, պատճառնոր՝ նա երկրի ծայրիցն ե-
կաւ, որ Սաղօմոնի իմաստութիւնը լսէ, եւ ահա
32 Սաղօմոնիցն էլ աւելին այստեղ է ։ Նինուէացոց
մարդիկը դատաստանին վեր կ'կենան այս ազգիս
հետ եւ սորան կ'դատապարտեն, ինչուոր՝ նորանք
Յօնանու քարոզութենովն ապաշխարեցին . եւ ա-
հա՛ Յօնանիցն էլ աւելին այստեղ է ։
33 Ո՛չ ով ճրագ չի վառում եւ թաքուն տեղ դը-
նում եւ ո՛չ տաշտի տակ, բայց ճրագակալի վե-
րայ, որ նորանք որ ներս են մտնում՝ լոյս տեսնեն ։
34 Մարմնոյ ճրագն աչքն է . երբոր աչքը պարզ է,

ամէն մարմինը լուսաւոր կ'լինի. եւ երբոր աչքը
35 չար է՝ մարմինն էլ խաւար կ'լինի։ Ուրեմն զգո՛յշ
կաց, չ'լինի որ այն լոյսն, որ քեզանում է՝ խա-
36 ւար լինի։ Թէ որ քո ամէն մարմինդ լուսաւոր է
եւ ընաւ խաւարի մին մասը չ'կայ, ամէնը լուսա-
ւոր կ'լինի. ինչպէս այն ժամանակն՝ որ ճրագն ի-
րեն նշոյլներովը լուսաւորէ քեզ։

37 Եւ դեռ որ սա խօսումէր՝ մին փարիսեցի աղա-
չումէր նորան՝ որ նորա մօտ հաց ուտէ. եւ նա մը-
38 տաւ՝ եւ սեղան նստեց։ Երբոր փարիսեցին տե-
սաւ՝ զարմացաւ, որ ճաշիցն առաջ չ'լուացվա՛ւ։
39 Տէրն ասաց նորան. Հիմիկ դուք փարիսեցիներդ
բաժակի եւ պնակի դրսի կողմը սրբումէք. եւ ձեր
ներսինը յափշտակութենով եւ չարութենով լիքն
40 է։ Ա՛նմիտներ՝ չէ՞ որ նա որ դրսինն արաւ՝ ներ-
41 սինն էլ նա արաւ։ Բայց աւելի նա արէ՛ք որ ար-
ժանն է, ողորմութիւն տուէ՛ք եւ ահա՛ ձեր ամէն
42 բանը սուրբ է։ Բայց վա՜յ ձեզ փարիսեցիներիդ՝
որ անանուխի եւ փեգենայի եւ ամէն բանջարի
տասանորդ էք տալիս եւ Աստուծոյ իրաւունքովն
ու սիրովն անցանում էք. նա պէտք էր անել, եւ
43 նորանով չանցանել։ Վա՜յ ձեզ փարիսեցիներիդ,
որ ժողովարաններին մէջ վերեւի տեղերն էք սի-
րում, եւ փողոցներին մէջ առաջին բարեւները։
44 Վա՜յ ձեզ՝ որ դուք գերեզմաններին պէս էք, որ
չեն տեսնվում եւ մարդիք նորանց վերայ գնում
են եւ չեն գիտում։

45 Պատասխան տուաւ օրէնք գիտողներիցը մինը եւ
ասաց նորան՝ Վա՛րդապետ՝ այդ բաներդ ասելով
46 մեզ էլ նախատինք ես տալիս։ Եւ նա ասաց, Ձեզ

օրէնք գիտողներիդ էլ վա՜յ. ինչուոր՝ դժուար
տանելի բեռներ էք բեռնում մարդկանց, եւ դուք
47 մին մատով չէք մօտենում այն բեռներին։ Վա՜յ
ձեզ, որ մարգարէներին տապանները շինումէք եւ
48 ձեր հարքը սպանեցին նորանց. Ապա ուրեմն վկայ-
ումէք՝ թէ ձեր հարանց գործքերին հետ կամակից
էք. ինչուոր՝ նորանք կոտորեցին նորանց, եւ
49 դուք նորանց գերեզմանները շինումէք։ Սորահա-
մար Աստուծոյ իմաստութիւնն ասաց. Թէ՝ Մար-
գարէներ եւ առաքեալներ կուղարկեմ նորանց
50 մօտ, եւ նորանցից կ'սպանեն եւ կ'հալածեն. Որ
ամէն մարգարէների արիւնն որ աշխարհքի սկզբի-
51 ցը թափված է՝ այս ազգիցս խնդրվի։ Աբելի ա-
րիւնիցը մինչեւ Զաքարիայի արիւնն՝ որ սեղանին
ու տաճարին մէջ կորաւ. իրաւի՝ ասումեմ ձեզ,
52 Այդ ազգիցդ կ'խնդրվի։ Վա՜յ ձեզ օրէնք գիտող-
ներիդ՝ որ գիտութեան բանալիքը թաքցնումէք.
դուք չէք մտնում, եւ նորանց՝ որ մտնելու են ար-
գելումէք։

53 Եւ երբոր այս ամէն բաներս ասաց նորանց ա-
մեն ժողովրդի առաջին, շատ ամօթ էին քաշում՝
եւ կարդացողներն ու փարիսեցիները սկսեցին նա-
խանձով բարկանալ եւ շատ բաների համար նո-
54 րա հետ հակառակել։ Եւ սպասումէին՝ որ նորա
բերանիցը մին խօսք որսան, որ չարախօսին նորա
վերայ։

ԳԼ. ԺԲ

Քրիստոս զգուշացնում է կեղծաւորութենից և մարդկանց երկիւղից ու ժլատութենից. յորդորում է արթուն կե-նալ. ժամանակի նշանները։

1 Այն ժամանակն երբոր հազարաւոր ժողովուրդ-
ներ գիզվումէին՝ մինչեւ որ իրար կոխ էին տալիս՝
սկսեց իրեն աշակերտներին ասել. Առաջ անձնե-
րիդ զգո՛յշ պահեցէ՛ք փարիսեցոց խմորից՝ որ կեղ-
2 ծաւորութիւն է. ինչուոր՝ բնաւ ծածուկ բան չի
կայ՝ որ չ՚յայտնվի՝ եւ թագուն բան՝ որ չիմացվի.
3 Պատճառնոր՝ ինչ որ խաւարումն ասէք, լուսոյ մէջ
կ՚լսվի. ինչ որ ներսիններս տան մէջ ականջում
4 խօսիք՝ կտըրների վերայ կ՚քարոզվի։ Բայց ձեզ՝ իմ
սիրելիներիս ասումեմ. Մի՛ վախենաք նորանցից՝
որ մարմինն սպանումեն, եւ նորանից ետեւ աւելի
5 բան չունին՝ որ անեն։ Բայց ցոյց կ՚տամ ձեզ՝ թէ
ումից պէտք է վախենաք. Նորանից վախեցէ՛ք, որ
սպանելուցն ետեւ իշխանութիւն ունի գեհենի մէջ
ձգելոյ. իրաւի ասումեմ ձեզ՝ Նորանից վախեցէ՛ք։
6 Չէ՞ որ հինգ ծիտ երկու դանկի են ծախվում. եւ
նորանցից մինն էլ Աստուծոյ առաջին մոռացուած
7 չէ՛։ Բայց ձեր գլխի ամեն մազերն էլ համրված
է. մի՛ վախենաք. ինչուոր՝ դուք աւելի լաւ էք
8 քան շատ ծտեր։ Ասումեմ ձեզ՝ թէ Ամեն ով որ
ինձ մարդկանց առաջին կ՚դաւանէ՝ Որդին մարդոյ
էլ նորան կ՚դաւանէ Աստուծոյ հրեշտակներին ա-
9 ռաջին։ Եւ ով որ ինձ կուրանայ մարդկանց ա-

ռաջին՝ ուրացված կ՚լինի Աստուծոյ հրեշտակների
10 առաջին։ Եւ ամեն ով որ Որդոյ մարդոյ դէմ բան
ասէ՝ կ՚թողվի նորան. բայց ով որ Սուրբ Հոգոյն
11 հայհոյէ՝ նորան չ՚թողվիլ։ Բայց երբոր կ՚տանեն
ձեզ ժողովարանների մէջ եւ դատաւորների եւ իշ-
խանների առաջին, հոգս մի՛ անէք՝ իբր թէ ի՛նչ
պատասխան պիտի տաք, կամ ի՛նչ պիտի ասէք.
12 Պատճառնոր՝ Սուրբ Հոգին իսկ այն ժամին կ՚սո-
վորցնէ ձեզ՝ թէ ի՛նչ պէտք է խօսել։
13 Ժողովրդին միջից մինն ասաց նորան. Վա՛րդա-
պետ՝ իմ եղբօրս ասա՛՝ որ ժառանգութիւնն ինձ հետ
14 բաժանէ։ Եւ նա ասաց նորան. Ո՛վ մարդ՝ ինձ ո՞վ
կարգեց ձեզ վերայ դատաւոր կամ բաժին անօղ։
15 Եւ նորանց ասաց. Տեսէ՛ք եւ զգո՛յշ կացէք ամեն
ագահութենից, պատճառնոր՝ բնաւ մինի կեանքն
16 իրեն կիտված ապրանքներից չէ՛։ Նորանց մին ա-
ռակ խօսեց եւ ասաց. Մին հարուստ մարդոյ ար-
17 տերն առատ պտուղ տուին. Եւ իրեն մտքումը մը-
տածումէր եւ ասում. Ի՞նչ անեմ՝ որ տեղ չ՚կայ
18 որ իմ պտուղներս այնտեղ ժողովեմ։ Եւ ասաց.
Գիտումեմ ինչ կանեմ. իմ ամբարներս կ՚քան-
դեմ, եւ էլ աւելի մեծ կ՚շինեմ, եւ իմ ցորենս
19 եւ ամեն բարիքներս կ՚ժողովեմ այնտեղ։ Եւ իմ
անձիս կ՚ասեմ. Ո՛վ անձ՝ շատ բարիքներ ունիս
շատ տարիների համար ամբարված. ապա հան-
20 գի՛ստ առ՝ կե՛ր՝ խմէ՛ եւ ուրա՛խ լեր։ Աստուած
նորան ասաց. Ո՛վ անմիտ. այս գիշերս քո հոգիդ
քեզանից յետ կ՚խնդրեն. ապա նա որ պատրաս-
21 տեցիր՝ ո՞ւմ կ՚լինի։ Այնպէս էլ նա՝ որ իրեն ան-
ձին համար գանձ հաւաքէ, եւ Աստուծով չ՚հա-
րուստանայ։

22 Իրեն աշակերտներին ասաց. Դորա համար ասում
եմ ձեզ. Հոգս մի՛ անէք հոգոյ համար՝ թէ ի՛նչ
պիտի ուտէք, եւ ո՛չ մարմնոյ համար՝ թէ ինչ պի-
23 տի հագնիք. Ինչու որ՝ հոգին աւելի է քան թէ
24 կերակուրը, եւ մարմինը քան թէ հագուստը։ Մը-
տի՛կ արէք ագռաւներին. որ ո՛չ սերմում են եւ ո՛չ
հնձում. որ նորանք ո՛չ մառաններ ունին եւ ո՛չ
ամբարներ, եւ Աստուած կերակրում է նորանց.
ապա ո՞րքան էլ աւելի ձեզ՝ որ թռչուններից ա-
25 ւելի լաւ էք։ Ձեզանից ո՞վ կարող է իրեն հոգս
անելովն իրեն հասակին վերայ մին գազ աւելացը-
26 նել։ Ապա թէ որ փոքր բանի համար բաւական
չէք՝ ինչո՞ւ ուրիշ բաների համար հոգս էք անում։
27 Մտի՛կ արէք շուշաններին, թէ ի՛նչպէս է մեծանում.
ո՛չ ջանք է անում եւ ո՛չ մանում. ասում եմ ձեզ՝
թէ Սողոմոնն էլ իրեն ամեն փառքին մէջ նորանց
28 մինին նման չ՚հագաւ։ Բայց թէ որ խոտն որ այս
օր յանդումը կայ՝ եւ վաղը փուռն մէջ կ՚ձգվի,
Աստուած այնպէս է հագցնում, ապա ո՞րքան էլ
29 աւելի ձեզ՝ ո՛վ թերահաւատներ։ Եւ դուք մի՛
խնդրէք՝ թէ ի՛նչ պիտի ուտէք կամ ի՛նչ պիտի
30 խմէք, եւ հոգս մի՛ քաշէք. Ինչու որ՝ այդ ամեն
բաներդ աշխարհքի հեթանոսներն են խնդրում,
բայց ձեր Հայրը գիտում է՝ որ այն ամենը պէտք է
31 ձեզ։ Բայց Աստուծոյ արքայութիւնը խնդրեցէ՛ք,
32 եւ այն ամենը կաւելանայ ձեզ։ Մի՛ վախենար
փոքր հօտ. ինչու որ՝ ձեր Հօրը հաճոյ եղաւ՝ որ ար-
33 քայութիւնը տայ ձեզ։ Ձեր ապրանքը ծախեցէ՛ք՝
եւ ողորմութիւն տուէ՛ք. ձեզ համար քսակներ
շինեցէ՛ք՝ առանց հնանալոյ՝ անպակաս գանձ եր-

կնքումը, որտեղ որ՝ ո՛չ գող է մօտենում եւ ո՛չ
34 ցեցն է ապականում. Պատճառն որ՝ ինչ տեղ որ
ձեր գանձն է՝ այնտեղ էլ ձեր սրտերը կ՚լինին։
35 Թո՛ղ ձեր գօտիկները պինտ կապված լինին մէջ-
36 քերումդ՝ եւ ճրագները վառված։ Եւ դուք այն
մարդկանց նման՝ որ իրենց տիրոջն սպասումեն՝ թէ
երբ կ՚դառնայ հարսանիքիցը. որ երբոր գայ եւ
37 դուռը թակէ, շուտով բանան նորա համար։ Ե-
րանի՛ է այն ծառաներին՝ որ տէրն երբոր գայ, ար-
թուն գտնէ նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ
նա գօտիկը մէջքին կ՚կապէ եւ նորանց սեղան կը
38 նստացնէ եւ առաջ եկած կ՚ծառայէ նորանց։ Եւ
թէ որ գիշերի երկրորդ կամ երրորդ պահին գայ՝
եւ այնպէս գտնէ՝ երանելի են այն ծառաները։
39 Բայց սա իմացէ՛ք՝ թէ որ տան տէրը գիտէր՝ թէ
գողն ո՛ր ժամումը կ՚գայ՝ արթուն կ՚կենար եւ թող
40 չէր տալ որ իրեն տունը ծակէ։ Եւ դուք պատ-
րա՛ստ կացէք՝ ինչու որ՝ այն ժամին որ չէք կարծիլ,
Որդին մարդոյ կ՚գայ։
41 Պետրոս ասաց. Տէ՛ր. այդ առակդ մե՞զ ասա-
42 ցիր, թէ ամենին։ Եւ Տէրն ասաց. Ո՞վ է այն
հաւատարիմ եւ իմաստուն տնտեսն՝ որ նորան՝ ի-
րեն տէրը տան ընտանեաց վերայ կարգեց՝ որ նո-
43 րանց կերակուր տայ իրենց ժամանակին։ Երանի է
այն ծառային՝ որ իրեն տէրն երբոր գայ, այնպէս
44 արած գտնէ նորան։ Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ
45 իրեն ամեն ապրանքներին վերայ կ՚դնէ նորան։ Ա-
պա թէ այն ծառան իրեն սրտումն ասէ՝ թէ Իմ
տէրս ուշանում է գալ, եւ սկսէ ծառաներին եւ
աղախիններին ծեծել, ուտել եւ խմել եւ հարբե-

46 նալ. Կ'գայ այն ծառային տէրն այն օրը՝ որ նա
չի սպասիլ, եւ այն ժամին, որ նա չ'գիտիլ. Նո-
րան միջիցը կ'կտրէ, եւ նորա բաժինն անհաւատ-
47 ներին հետ կ'դնէ ։ Եւ ծառան որ իրեն տիրոջ
կամքը գիտենայ եւ նորա կամացն պէս չ'պատրաս-
48 տէ, շատ ծեծ կուտէ ։ Եւ նա որ չ'գիտենայ՝ եւ
ծեծի արժանի բան գործէ, քիչ ծեծ կուտէ. այն
ամենին ում որ շատ տվվաւ՝ նորանից շատ կը
խնդրվի. եւ ում որ շատ պահ տվվաւ՝ նորանից էլ
աւելի կ'խնդրեն ։
49 Ես եկի՝ որ կրակ ձգեմ երկրիս վերայ. եւ ի՞նչ
50 ուզումեմ որ իսկ հիմուկուց բորբոքվէր ։ Բայց մին
մկրտութիւն ունիմ որ պիտի մկրտվիմ. եւ քանի՞
51 հոգս եմ քաշում մինչեւ որ նա կատարվի ։ Մի-
թէ կարծո՞ւմէք թէ եկի խաղաղութիւն տալ երկ-
րիս վերայ. Ոչ՛ ասումեմ ձեզ՝ բայց բաժանմունք ։
52 Ինչուոր՝ սորանից ետեւ հինգ հոգի մին տան մէջ
բաժանված կ'լինին, երեքն երկուսիցը եւ երկուքն
53 երեքիցը ։ Հայրը կ'բաժանվի որդուցը՝ եւ որդին
հօրիցը, մայրն աղջկանիցը՝ եւ աղջիկն իրեն մօրի-
ցը. կեսուրը հարսիցը՝ եւ հարսն իրեն կեսուրիցը ։
54 Ժողովուրդներին էլ ասաց. Երբոր տեսնումէք
թէ արեւմտից ամպ է դուրս գալիս՝ շուտով ա-
սումէք՝ թէ, Անձրեւ կ'գայ, եւ այնպէս է լինում ։
55 Եւ երբոր հարաւային քամին փչումէ, ասումէք՝
56 թէ Տօք կ'լինի եւ այնպէս է լինում ։ Կե՛ղծաւոր-
ներ՝ երկնքի եւ երկրի երեսը գիտումէք փորձել.
57 բայց այս ժամանակս ինչո՞ւ չէք փորձում ։ Եւ ին-
չո՞ւ իսկ ձեզանից էլ չէք ընտրում նա՝ որ արժանն
58 է ։ Երբոր քո հակառակ ոսոխիդ հետ իշխանի մօտ

գնալու լինիս, ճանապարհումը տալիքդ տուր՝ որ
նորա ձեռքիցն ազատվիս. որ չ'լինի՛ թէ քեզ դա-
տաւորին մօտ քաշէ՝ եւ դատաւորը դահճին մատ-
59 նէ, եւ դահիճը բանտի մէջ ձգէ ։ Ասումեմ քեզ.
Այնտեղից դուրս չես գալ՝ մինչեւ որ վերջին դան-
կըն էլ չ'վճարես ։

ԳԼ. ԺԳ

Քրիստոս Գալիլէացոց պատժվելովը ապաշխարութիւն է քարոզում. անպտուղ թզենին. կծկված կնոջ բժշկվիլը. Աստուծոյ արքայութեան աճումը. Նեղ դուռը. Հերովդէսին յանդիմանութիւն. Երուսաղէմի կործանումը ։

1 Իսկ այն ժամանակին մին քանի մարդիկ եկին եւ
պատմեցին նորա այն Գալիլէացիներին համար, որ
նորանց արիւնը Պիղատոս նորանց մատաղին հետ
2 խառնեց ։ Պատասխան տուաւ եւ նորանց ասաց.
Միթէ կարծո՞ւմէք թէ այն Գալիլէացիներն աւելի
մեղաւոր էլան, քանթէ ամեն Գալիլէացիներն, որ
3 այնպիսի բան եկաւ նորանց վերայ. Ոչ՛, ասումեմ
ձեզ. Բայց թէ որ չապաշխարէք, ամենքդ էլ այն-
4 պէս կ'կորչիք. Կամ այն տասնութ հոգին որ Սե-
լովամի մէջ աշտարակը վեր ընկաւ նորանց վերայ,
եւ նորանց սպանեց. մի թէ կարծումէք թէ նո-
րանք աւելի՞ պարտական էլան քան ամեն մար-
5 դիք՝ որ Երուսաղէմումը բնակված են. Ոչ՛, ա-
սումեմ ձեզ. Բայց թէ որ չապաշխարէք՝ ամենքդ
էլ այնպէս կ'կորչիք ։
6 Այս առակըս էլ ասաց. Մին մարդ իրեն այգոյ

մէջ մին թզի ծառ էր տնկել. եւ եկաւ, որ պը-
7 տուղ խնդրէ նորանից, եւ չ՚գտաւ։ Այգեպանին
ասաց. Ահա՛ երեք տարի է՝ որ գալիս եմ պտուղ
խնդրել այդ թզի ծառիցդ, եւ չե՛մ գտնում. ու-
րեմն կտրէ՛ դորան, էլ ինչո՞ւ է դա երկիրդ խա-
8 փանում։ Նա պատասխան տուաւ եւ ասաց. Տէ՛ր՝
այս տարիս էլ թո՛ղ դորան, մինչեւ որ դորա չորս
9 կողմիլը փորեմ եւ աղբ ածեմ. Որ լինի թէ պը-
տուղ բերէ, ապա թէ չէ՝ տարուցն ետեւ կտրէ՛
դորան։

10 Եւ մին ժողովարանի մէջ սովորցնում էր շաբաթ
11 օրումը։ Եւ ահա՛ մին կին որ հիւանդութեան գե-
րունել էր նորան տասնութ տարի. եւ կծկված
էր՝ եւ բնաւ չէր կարօղանում դէպի վեր նայիլ.
12 Եւ Յիսուս որ նորան տեսաւ՝ իրեն մօտ կանչեց՝
եւ նորան ասաց. Ո՛վ կին՝ արձակված ես քո հի-
13 ւանդութենիցդ։ Եւ ձեռքը դրաւ նորա վերայ,
եւ շուտով շիտակվեցաւ, եւ Աստուծոյն փառա-
14 ւորում էր։ Ժողովարանին գլխաւորը շատ բարկա-
ցաւ, թէ ի՛նչու համար Յիսուս շաբաթ օրումը
բժշկեց. պատասխան տուաւ եւ ժողովրդին ասաց.
Վե՛ց օր կայ՝ որ նորանցում օրէնք է գործ գոր-
ծել, այն օրերը եկէ՛ք բժշկվեցէ՛ք, եւ չէ՛ թէ շա-
15 բաթ օրը։ Տէրը պատասխան տուաւ նորան եւ ա-
սաց. Կե՛ղծաւորներ՝ մի՞թէ ձեզանից ամեն մէկը
շաբաթ օրն իրեն եզը կամ էշը չի արձակիլ մսու-
16 րիցն ու տանիլ ջուր տալ։ Բայց սա՝ որ Աբրա-
համի աղջիկն էր. որ հիմիկ տասնութ տարի է,
որ սատանան կապել է սորան. միթէ արժան չէ՞ր
17 որ շաբաթ օրն այն կապանքիցն արձակվի։ Եւ երբ

որ սա ասաց՝ ամօթով էին լինում այն ամենքն՝
որ հակառակ կային նորան. եւ ամեն ժողովուրդն
ուրախանում էր այն ամեն փառաւոր գործքերին հա-
մար՝ որ նորանով գործվում էին։

18 Եւ ասում էր. Աստուծոյ արքայութիւնն ո՞ւմ
նման է. եւ ի՞նչ նմանութենով նմանցնեմ նորան։
19 Մանանեխի հատի նման է, որ նորան մին մարդ
առաւ իրեն պարտէզին մէջ ցանեց. մեծացաւ եւ
ծառ էլաւ՝ եւ երկնքին թռչունները նորա ճղերին
վերայ բնակված էին։

20 Եւ նորան ասաց. Ո՞ւմ նմանեցնեմ Աստուծոյ
21 արքայութիւնը. Խմորի նման է, որ նորան մին կին
առաւ եւ երեք չափ ալիւրի մէջ պահեց, մինչեւ
որ ամենը խմորվեցաւ։

22 Եւ նա էր գալիս քաղաքներումն ու գիւղերու-
մը եւ սովորցնում էր. եւ երբոր ճանապարհ ընկած
23 գնում էր դէպի Երուսաղէմ, Մինն ասաց նորան.
Տէ՛ր՝ միթէ քի՞չ են նորանք, որ պիտի ապրին.
24 Եւ նա ասաց նորանց. Ջա՛նք արէք որ նեղ դռնո-
վը ներս մտնէք. ասում եմ ձեզ, թէ, Շատ մար-
25 դիկ կ՚խնդրեն մտնել եւ չեն կարենալ։ Նորանից
ետեւ որ տան տէրը կ՚մտնէ եւ դուռը կ՚փակէ. եւ
կ՚սկսէք դուրսը կանգնիլ եւ դուռը թակել՝ եւ ա-
սել. Տէ՛ր Տէր՝ բա՛ց մեզ. պատասխան տալով կա-
սէ ձեզ. Չե՛մ ճանաչում ձեզ թէ ինչ տեղից էք։
26 Այն ժամանակը կ՚սկսէք ասել. Քո առաջին կե-
րինք եւ խմեցինք, եւ մեր փողոցներումը սովորցրիր։
27 Եւ կասէ. Ասում եմ ձեզ, ես չե՛մ ճանաչում
ձեզ. թէ ինչ տեղից էք. հեռու կացէք ինձանից
28 դուք անիրաւութեան ամեն մշակներդ։ Այնտեղ

կ'լինի լաց եւ ատամների կրճտել. երբոր Աբրա-
համին եւ Իսահակին եւ Յակոբին եւ ամեն մար-
գարէներին Աստուծոյ արքայութեան մէջը կ'տես-
29 նէք՝ եւ ձեզ դուրս հանած ։ Եւ արեւելքիցն ու
արեւմտից, եւ հիւսիսից ու հարաւից կ'գան
30 եւ Աստուծոյ արքայութեանումը կ'նստին ։ Եւ ա-
հա՛ յետիններ կան՝ որ առաջին կ'լինին. եւ ա-
ռաջիններ կան՝ որ յետին կ'լինին ։
31 Իսկ այն օրը մին քանի փարիսեցիք մօտ եկին եւ
նորան ասացին. Գո՛ւրս եկ եւ գնա՛ այս տեղից.
32 ինչու որ՝ Հերովդէս կամենում է որ քեզ սպանէ ։ Եւ
նորանց ասաց. Գնացէ՛ք ասացէ՛ք այն աղուէսին,
թէ Ահա՛ դեւեր եմ հանում եւ բժշկութիւններ
կատարում այսօր եւ վաղը. եւ երեք օրումը կ'կա-
33 տարեմ ։ Բայց այսօր եւ վաղը եւ միւս օրը պէտք
է գնալ. ինչու որ՝ կարելի չէ՛ որ մին մարգարէ Ե-
34 րուսաղէմից դուրս կորչի ։ Երուսաղէ՛մ Երուսա-
ղէմ՝ որ մարգարէները կոտորում, եւ քեզ մօտ
ուղարկվածները քարկոծումէիր. քանի՞ անգամ
կամեցայ քո որդիքներդ ժողովել՝ ինչպէս որ հաւն
35 իրեն ձագերը թեւերին տակը. եւ չ'կամեցաք ։ Ա-
հա՛ ձեր տունը թողված կ'լինի ձեզ. բայց ասում
եմ ձեզ՝ թէ Էլ ինձ չէք տեսնիլ՝ մինչեւ որ ա-
սէք. Օրհնեալ է Տէրի անունով եկածը ։

ԳԼՈՒԽ ԺԴ

Ջրգողվածին բժշկութիւնը. Քրիստոս հիւր է գնացել և քարոզում է. մեծ ընթրեաց առակը. նորա հետեւողներին անձնուրացութիւնը ։

1 Եւ էլաւ որ նա մին շաբաթ օր փարիսեցոց իշ-
խանների մինին տունը մտաւ՝ որ հաց ուտէ. եւ
2 նորանք սպասումէին նորան ։ Եւ ահա՛ այնտեղ մին
3 ջրգողված մարդ կար նորան առաջին ։ Յիսուս պա-
տասխան տուաւ եւ այն օրէնք գիտողներին եւ փա-
րիսեցիներին ասաց. Միթէ արժա՞ն է շաբաթ օրը
4 բժշկութիւն անել ։ Եւ նորանք լուռ կացան. եւ
ձեռով բռնեց նորան՝ եւ նորան բժշկեց եւ ար-
5 ձակեց. Եւ նորանց ասաց. Ձեզանից որի՞ էշը կամ
եզը ջրհորի մէջ ընկնի եւ շուտով չ'հանէ նորան
6 շաբաթ օրը ։ Եւ չ'կարացին պատասխան տալ նո-
րան այն բանին համար ։
7 Այն կանչված մարդկանց էլ մին առակ ասաց,
տեսնելով՝ թէ ինչպէս վերեւի տեղերն էին ընտ-
8 րում. ասաց նորանց. Երբոր մինը քեզ հարսանիք
կամ հացկերութիւն կանչէ, առաջին բարձին վե-
րայ մի՛ նստիր. չ'լինի թէ քեզանից էլ աւելի պա-
9 տուական մարդ լինի կանչված նորանից. Եւ նա՝
որ քեզ եւ նորան կանչեց, գայ եւ քեզ ասէ.
Սորան տե՛ղ տուր. եւ ապա սկսես ամօթով յե-
10 տին տեղը նստիլ ։ Բայց երբոր կանչվիս՝ գնա՛ յե-
տին տեղը նստէ՛. որ նա որ կանչեց քեզ՝ երբոր
գայ, ասէ քեզ. Բարեկամ՝ վերե՛ւ նստէ. այն

ժամանակը քեզ հետ նստողներին առաջին փառք
11 կ'լինի քեզ. Պատճառոր՝ ամեն ով որ իրեն ան-
ձը բարձրացնում է՝ կ'խոնարհվի. եւ ով որ իրեն
անձը խոնարհացնում է, կ'բարձրանայ։
12 Եւ հացկերութեան տիրոջն էլ ասաց. Երբոր
ճաշ կամ ընթրիք անես, մի՛ կանչեր քո բարե-
կամներից, եւ ո՛չ քո եղբայրներից, եւ ո՛չ քո
ազգականներից եւ ո՛չ քո հարեւաններից եւ ո՛չ
էլ մեծամեծներին. որ չ'լինի թէ նորանք էլ նորա
տեղ կանչեն քեզ եւ նա հատուցում լինի քեզ։
13 Բայց երբոր հացկերութիւն անես՝ կանչէ աղքատ-
14 ներին եւ խեղերին եւ կաղերին եւ կուրերին. Եւ
երանելի՛ կ'լինիս. ինչուոր՝ բան չունին որ նորա
տեղ վճարեն քեզ. եւ արդարների յարութեան
ժամանակին նորա տեղ հատուցում կ'լինի քեզ։
15 Երբոր այն սեղան նստողներից մինն այս բանս
լսեց՝ նորան ասաց. Երանի՛ նորան՝ որ Աստուծոյ
16 արքայութենումը ճա՛շ կուտէ, Եւ նա ասաց.
Մին մարդ ընթրիք արաւ եւ շատ մարդիկ հրաւի-
17 րեց, Եւ ընթրիքի ժամն որ եկաւ՝ իրեն ծառան
ուղարկեց՝ որ այն հրաւիրածները կանչէ՛ թէ, Ե-
18 կէ՛ք, որ ահա՛ ամեն բան պատրաստ է։ Եւ ա-
մենքն սկսեցին մին մին յետ քաշվիլ. առաջինն
ասաց. Արտ գնեցի, եւ պէտք է՝ որ գնամ նորան
19 տեսնեմ. աղաչումեմ քեզ՝ որ ինձ թո՛ղ տաս։ Եւ
միւսն ասաց. Հինգ զոյգ եզ գնեցի, եւ գնումեմ
որ նորանց փորձեմ. աղաչումեմ քեզ՝ որ ինձ թո՛ղ
20 տաս։ Եւ միւսն ասաց, Կին առի, եւ նորահա-
21 մար չե՛մ կարող գալ։ Եւ ծառան եկաւ եւ այս
բանս պատմեց իրեն տիրոջը. այն ժամանակը տան

տէրը բարկացաւ եւ իրեն ծառային ասաց. Գո՛ւրս
գնա շուտով քաղաքից բաց տեղերանքն ու փո-
ղոցները. եւ աղքատներին ու խեղերին, եւ կաղե-
22 րին ու կուրերին բե՛ր մտցրո՛ւ այս տեղս։ Եւ ծա-
ռան ասաց. Տէ՛ր՝ ինչ որ հրամայեցիր եղաւ, եւ
23 դեռ էլ տեղ կայ։ Եւ տէրն ասաց ծառային.
Գո՛ւրս գնա ճանապարհներն ու պատի տակերն՝
եւ ստիպէ՛ որ այստեղս մտնեն, որ իմ տունս լցվ-
24 վի։ Ասումեմ ձեզ՝ թէ, Այդ կանչվածներիցն ըն-
նաւ մինն էլ իմ ընթրիքիս համը չ'պիտի առնէ։
25 Եւ շատ ժողովուրդներ նորա հետ գնումէին.
26 դարձաւ եւ նորանց ասաց. Թէ որ մինն ինձ մօտ
գայ՝ եւ չատէ իրեն հօրն ու մօրը, կնկանըն ու որ-
դիքներին, եւ եղբայրներին եւ քոյրերին, եւ իսկ
իրեն անձին էլ. նա չի՛ կարող ինձ աշակերտ լի-
27 նել։ Ինչուոր՝ ով որ իրեն խաչն վեր չառնէ եւ իմ
ետեւէս գայ՝ նա չի կարող ինձ աշակերտ լինել։
28 Ձեզանից ո՛վ է՝ որ կամենայ աշտարակ շինել՝ եւ
առաջ չի՛ նստի եւ ծախսը համարէ՝ եթէ աւար-
29 տելոյ համար բաւական բան ունի՞. Որ չ'լինի՛ թէ
երբոր հիմունքը ձգէ եւ չ'կարողանա՛յ աւարտել,
30 ամենքն որ տեսնեն, սկսեն ծաղր անել նորան. Եւ
ասել. թէ Այս մարդս սկսեց շինել, եւ չ'կարողա-
31 ցաւ աւարտել։ Կամ թէ՝ ո՞ր թագաւոր կ'գնայ
ուրիշ թագաւորի հետ կռիւ կանէ. եւ չի նստիլ
առաջ միտք անել՝ թէ տասն հազարով կարող է
դէմ կենայ նորան՝ որ քսան հազարով պիտի գայ
32 իրեն վերայ։ Ապա թէ չէ՝ քանի որ հեռու է՝
պատգամաւոր կուղարկէ՝ եւ կաղաչէ՝ որ խաղա-
33 ղութիւն անէ։ Ուրեմն այսպէս էլ ձեզանից ամեն

մէկն՝ որ իրեն ամեն ապրանքից չ'հրաժարվի՝ չի՛
34 կարող ինձ աշակերտ լինել ։ Աղն լաւ բան է․ բայց
թէ որ աղն անհամանայ, ի՞նչով պիտի համեղա-
35 նայ․ Ո՛չ հողի համար է պիտանի եւ ո՛չ աղբի
համար, այլ պէտք է դուրս ձգվի․ Ով որ լսելու
ականջ ունի՝ թո՛ղ լսէ ։

ԳԼ․ ԺԵ

Կորած ոչխարն ու դրամը․ անառակ որդին ։

1 Եւ ամեն մաքսաւորներն ու մեղաւորները մօտե-
2 նումէին նորան որ լսեն նորանից ։ փարիսեցիներն
ու կարդացողները տրտնջումէին եւ ասում․ Սա
ինչո՞ւ է մեղաւորներին ընդունում՝ եւ նորանց հետ
ուտում ։
3 Այս առակը ասաց նորանց․ (4) Ձեզանից ո՞վ
է այն մարդը՝ որ հարիւր ոչխար ունենայ, եւ նո-
րանցից մինը կորցնէ․ նա չի՞ թողիլ այն իննսուն
եւ ինը անապատումը եւ այն կորածին ետեւէն գը-
5 նալ՝ մինչեւ որ գտնէ նորան ։ Եւ երբոր կ'գտնէ՝
ուրախանալով իրեն ուսերին վերայ կ'դնէ նորան․
6 Եւ տուն կ'գայ․ բարեկամներին եւ դրացիներին
կ'կանչէ եւ նորանց կասէ․ Ուրախացէ՛ք ինձ հետ․
7 ինչուոր իմ կորած ոչխարս գտի ։ Ասումեմ ձեզ,
թէ Այսպէս աւելի ուրախութիւն կ'լինի երկնքու-
մը մին մեղաւորի համար՝ որ ապաշխարէ, քանթէ
իննսուն եւ ինն արդարների համար՝ որ ապաշխա-
8 րութիւն պէտք չէ նորանց ։ Կամ ո՞վ է այն կինն
որ տասը դրամ ունենայ, եւ թէ որ մին դրամ

կորցնէ՝ ճրագ չի՞ վառիլ եւ տան մէջն աւելել եւ
9 շատ շուռ գալ՝ մինչեւ որ գտնէ ։ Եւ երբոր կը
գտնէ բարեկամներին եւ դրացիներին կ'կանչէ եւ
կասէ․ Ուրախացէ՛ք ինձ հետ․ ինչուոր իմ դրամս
10 գտի՝ որ կորցրել էի ։ Ասումեմ ձեզ, Այնպէս էլ՝
Աստուծոյ հրեշտակներին առաջին ուրախութիւն
կ'լինի մին մեղաւորի համար որ կապաշխարէ ։
11 Եւ ասաց․ Մին մարդ երկու որդի ունէր․
12 Նորանցից փոքրն ասաց հօրը․ Հա՛յր՝ ինձ բաժին
տո՛ւր ինչ որ կ'հասնէ ինձ ապրանքներիցդ, եւ նա
13 իրեն ապրանքը բաժանեց նորանց ։ Եւ շատ օր
չանցաւ՝ որ փոքր որդին ամեն բաները ժողովեց եւ
հեռու աշխարհք գնաց․ եւ այնտեղ իրեն ապ-
րանքը մսխեց, ինչուոր՝ անառակութենով էր կեանք
14 վարում ։ Եւ երբոր ամենը հատցրուց՝ սաստիկ սով
ելաւ այն աշխարհքումը՝ եւ ինքն սկսեց չքաւոր-
15 վիլ ։ Եւ գնաց այն աշխարհքի քաղաքացիներին
մինին մօտ մտաւ․ եւ նա նորան ուղարկեց իրեն
16 յանդն որ խոզ արածացնէ ։ Եւ ցանկանումէր՝ որ
իրեն փորը լցնէ այն եղջիւրովը՝ որ խոզերն ուտում
17 էին՝ եւ ո՛չ ով չէր տալիս նորան ։ Եւ երբոր ի-
րեն խելքը եկաւ, ասաց․ Քանի՞ բանվորներ կան
իմ հօրս տանը՝ հացով լցված՝ եւ ես այս տեղ
18 սովամահ կորչումեմ ։ Վեր կենամ գնամ իմ հօրս
մօտ՝ եւ նորան ասեմ․ Հա՛յր՝ ես մեղայ երկնքին
19 դէմ եւ քո առաջիդ․ Եւ էլ արժանի չեմ, որ
քեզ որդի կոչվիմ․ ինձ քո բանվորների մինին պէս
20 արա՛ ։ Եւ վերկացաւ եկաւ իրեն հօր մօտ․ եւ
դեռ որ հեռու էր՝ հայրը տեսաւ նորան եւ խղ-
ճաց․ վերկացաւ եւ առաջը վազեց՝ նորա վզովը

21 ընկաւ՝ եւ համբուրեց նորան ։ Եւ որդին ասաց
նորան . Հա՛յր՝ ես մեղայ երկնքի դէմ եւ քո ա-
ռաջին , եւ էլ չեմ արժանի՝ որ քեզ որդի կոչ-
22 վիմ ։ Հայրն ասաց իրեն ծառաներին . Շուտով ա-
ռաջին պատմուճանը հանեցէ՛ք եւ հագցրէ՛ք նո-
րան , եւ մատանի դրէ՛ք նորա ձեռքը եւ կօշիկներ
23 նորան ոտները . Եւ մազցու եզը բերէ՛ք մորթեցէ՛ք՝
24 ուտենք եւ ուրա՛խ լինինք . Ինչու որ՝ այս իմ որդիս
մեռած էր , եւ կենդանացաւ . կորած էր , եւ գըտ-
25 վաւ , եւ սկսեցին ուրախ լինիլ ։ Եւ նորա մեծ որ-
դին յանդումն էր . եւ երբոր գալիս էր եւ տանն
26 մօտեցաւ՝ տաղերի եւ պար գալոյ ձայնը լսեց . Եւ
ծառաներից մինին կանչեց իրեն մօտ՝ հարցնումէր
27 թէ դա ի՞նչ է ։ Եւ նա ասաց նորան . Նորահա-
մար որ քո եղբայրդ եկել է , եւ քո հայրդ մազ-
ցու եզը մորթեց՝ որովհետեւ ողջութենով ընդու-
28 նեց նորան ։ Բարկացաւ եւ չէր ուզում ներս մըտ-
նել՝ եւ հայրը դուրս եկաւ՝ աղաչումէր նորան ։
29 Պատասխան տուաւ՝ եւ ասաց հօրը . Ահա քանի՛
տարի է՝ որ քեզ ծառայումեմ՝՝ եւ քո պատուի-
րանքիցդ ընաւ մին ժամանակ դուրս չեմ եկել .
մին ուլ չ՚տուիր ինձ՝ որ իմ բարեկամներիս հետ
30 ուրախ լինիմ . Երբոր այդ քո որդիդ եկաւ՝ որ քո
ապրանքդ պոռնիկներին հետ կերաւ , մազցու եզը
31 մորթեցիր դորա համար ։ Եւ նորան ասաց . Ո՛րդ-
եակ՝ դու ամեն ժամանակ ինձ հետ ես , եւ ա-
32 մեն ինչ որ իմս է՝ քունն է ։ Բայց ուրախ լինել
եւ խնդալ պէտք էր . ինչու որ՝ այս քո եղբայրդ
մեռած էր եւ կենդանացաւ . կորած էր եւ գըտ-
վաւ ։

ԳԼՈՒԽ ԺԶ

Անիրաւ տնտեսը , և մեծատունն ու Ղազարոսը ։

1 Եւ աշակերտներին ասաց . Մին հարուստ մարդ-
կար՝ որ տնտես ունէր . եւ չարախօսութիւն էլաւ
նորանից իբր թէ նորա ապրանքը նա մսխումէ ։
2 կանչեց՝ եւ ասաց նորան . Սա ի՛նչ է որ ես լսում-
եմ քեզանից . քո տնտեսութեանդ համարը տո՛ւր .
3 ինչու որ՝ էլ կարող չես տնտես լինիլ ։ Տնտեսն ի-
րեն մտքումն ասաց . Ի՛նչ անեմ . որ իմ տէրս տըն-
տեսութիւնն ինձանից առնումէ . գործ գործել
4 չեմ կարող՝ եւ մուրանալ ամաչումեմ . Գիտումեմ
ինչ կանեմ , որ երբոր այս տնտեսութենիցս դուրս
5 գամ՝՝ մարդիկ ընդունին ինձ իրենց տները ։ Եւ իրեն
տիրոջ պարտականներին մին մին իրեն մօտ կան-
չեց , առաջինին ասաց . Ի՞նչքան բան ես պարտա-
6 կան իմ տիրոջս ։ Եւ նա ասաց . Հարիւր մար ձէթ .
նորան ասաց . Քո գիրդ ա՛ռ եւ նստէ՛ շուտով գը-
7 րէ՛ յիսուն ։ Տեսոյ միւսին էլ ասաց . Դու ի՞նչ-
քան բան ես պարտական . եւ նա ասաց . Հարիւր
քոռ ցորեն . եւ նորան ասաց . Քո գիրդ ա՛ռ եւ
8 նստէ գրէ՛ ութսուն ։ Եւ տէրն այն անիրաւ տըն-
տեսին գովեց , որ իմաստութենով գործեց . պատ-
ճառնոր՝ այս աշխարհքիս որդիքը լուսոյ որդիքնե-
9 րից աւելի իմաստուն են իրենց ցեղին մէջ ։ Եւ
ես ասումեմ ձեզ . թէ Անիրաւ մամոնայից բարե-
կամներ արէ՛ք ձեզ համար՝ որ երբոր նա պակասի ,
յաւիտենական բնակարաններին մէջ ընդունեն

10 ձեզ։ Ո՛վ որ քիչ բանի մէջ հաւատարիմ է, շատ
բանի մէջ էլ հաւատարիմ է. եւ նա որ քիչ բա
նի մէջ անիրաւ է, շատ բանի մէջ էլ անիրաւ
11 է։ Ուրեմն՝ թէ որ անիրաւ մամոնայի մէջ հաւա-
տարիմ չէլաք. ապա ճշմարիտն ո՞վ կ'տայ ձեր
12 ձեռքը։ Եւ թէ որ օտար բանի մէջ հաւատարիմ
չէլաք, ապա ձերն ո՞վ կ'տայ ձեզ։
13 Ո՛չ ով ծառայ չի՛ կարող երկու տիրոջ ծառա-
յել. ինչուոր կամ մինին կատէ եւ միւսին կ'սի-
րէ. կամ մինին կ'պատուէ եւ միւսին ոչինչի տեղ
կ'համարէ կարող չէք Աստուծոյ ծառայել եւ
մամոնային։
14 Այս ամեն բաներս երբոր փարիսեցիները լսում
էին՝ որովհետեւ արծաթասէր էին, ծաղր էին ա-
15 նում նորան։ Եւ նորանց ասաց. Դուք էք՝ որ
մարդկանց առաջին ձեր անձներդ արդարացնումէք՝
բայց Աստուած գիտումէ ձեր սրտերը. պատճառն
որ՝ ով որ մարդկանց առաջին բարձր է՝ նա պիղծ
16 է Աստուծոյ առաջին։ Օրէնքն ու մարգարէքը մին-
չեւ Յօհաննէսն էլան. նորանից ետեւ Աստուծոյ
արքայութիւնն է աւետարանվում, եւ ամեն մարդ
17 ուժով է բռնում նորան։ Աւելի հեշտ է որ եր-
կինքն ու երկիրս անցանեն, թէ քան օրէնքիցը մին
18 պզտիկ նշանագիր վէր ընկնի։ Ամեն ով որ իրեն
կինը դուրս է անում եւ ուրիշը առնում շնու-
թիւն է գործում. եւ նա որ այն դուրս արածն է
առնում՝ շնութիւն է գործում։
19 Մին հարուստ մարդ կար՝ եւ շատ աղնիւ բե-
հեզներ եւ ծիրանի շորեր էր հագնում՝ եւ ամեն
20 ժամանակ շատ ուրախութեան մէջ էր։ Եւ մին

աղքատ մարդ էլ կար՝ Ղազարոս անուն. որ խո-
21 ցերով լցված նորա դռան մօտ վէր ընկած էր. Եւ
ցանկանումէր՝ որ իրեն փորը լցնէ այն փշրանքնե-
րիցն՝ որ այն հարուստին սեղանիցն ընկնումէին՝
22 բայց շներն էլ գալիս նորա խոցերը լիզումէին։ Եւ
էլաւ որ աղքատը մեռաւ, եւ հրեշտակները տա-
րան նորան Աբրահամին գոգը. հարուստն էլ մե-
23 ռաւ՝ եւ թաղվեցաւ։ Եւ դժոխքին մէջ՝ երբոր
տանջանքի մէջ էր, իրեն աչքերը բարձրացուց Աբ-
րահամին հեռուանց տեսաւ՝ եւ Ղազարոսին էլ
24 որ նորա գոգումը հանգիստ առած էր. Եւ նա ա-
ղաղակեց եւ ասաց. Հա՛յր Աբրահամ՝ ինձ ողոր-
մէ՛, եւ Ղազարոսին ուղարկէ՛ որ իրեն մատի ծայ-
րը թացանէ ջրումը, եւ իմ լեզուս հովացնէ. ին-
չուոր այս սաստիկ տաքութենիցս պապակվումեմ։
25 Եւ Աբրահամն նորան ասաց. Ո՛րդի՝ միտքդ բե՛ր,
որ քո բարիքդ քո կեանքումդ ընդունեցիր՝ այն-
պէս էլ Ղազարոսն չարչարանքներ. հիմիկ՝ սա այս
տեղ մխիթարվումէ, եւ դու այդ տեղ պապակ-
26 վումես։ Եւ այս ամենիս վերայ՝ մեր մէջ՝ եւ ձեր
մէջ մեծ անդունդ կայ, որ եթէ կամենան այստե-
ղից ձեզ մօտ անցանել՝ չեն կարող, եւ ո՛չ էլ այդ
27 տեղից մինը կարող է մեզ մօտ անցանել։ Եւ ա-
սաց. Ապա աղաչումեմ քեզ հա՛յր՝ որ դորան ու-
28 ղարկես իմ հօրս տունը. ինչուոր՝ ես այնտեղ
հինգ եղբայր ունիմ. որ նորանց վկայութիւն տայ.
29 որ նորանք էլ չ'գան այս տանջանքիս տեղը։ Եւ
Աբրահամն ասաց. Նորանք Մօսէսին եւ մարգա-
30 րէներին ունին՝ թո՛ղ նորանց ականջ դնեն։ Եւ
նա ասաց. Չէ՛, հա՛յր Աբրահամ, բայց թէ որ

մեռելներիցը մինը նորանց մօտ գնայ, կապաշխա-
31 րեն : Եւ նորան ասաց. թէ որ Մօսէսին եւ մար-
գարէներին ականջ չեն դնում՝ թէ որ մեռելների-
ցը մինն էլ յարութիւն առնէ՝ չեն հաւատալ :

ԳԼ. ԺԷ

Գայթակղութեան, ներողամտութեան, հաւատքի եւ գործի մասին. տասն բորոտները. Աստուծոյ արքայութեան գալուստը :

1 Իրեն աշակերտներին էլ ասաց. թէ կարելի չէ՝
որ գայթակղութիւն չ'գայ. բայց վա՛յ է այն մար-
2 դուն՝ որ նորա ձեռովը կ'գայ. Աւելի լաւ էր նո-
րան՝ որ նորա վզիցը ջաղացի քար կախվէր եւ ծո-
վըն ընկներ՝ քան թէ այս փոքրներիցս մինին գայ-
3 թակղացնէ : Զգո՛յշ կացէք անձներիդ. թէ որ քո
եղբայրդ մեղք անէ՝ սաստէ՛ նորան. եւ թէ որ
4 ապաշխարէ՝ թողութիւն տո՛ւր նորան : Եւ թէ որ
եօթն անգամ քեզ դէմ մեղք անէ՝ եւ եօթն ան-
գամ քեզ մօտ դառնայ եւ ասէ՝ Ապաշխարումեմ՝
թողութիւն տո՛ւր նորան :
5 Եւ առաքեալներն ասացին Տէրին՝ Մեր հաւատքն
6 աւելացրո՛ւ : Եւ Տէրն ասաց. Թէ որ մանանեխի
հատին չափ հաւատք ունենաք, եւ այս թզի ծա-
ռիս ասէք. Պոկվէ՛ եւ ծովին մէջ տնկվէ՝ կ'հնա-
զանդվի ձեզ :
7 Բայց ձեզանից ո՛վ է նա՝ որ մին հողագործ կամ
հովիւ ծառայ ունենայ, որ երբոր յանդիցը գայ
տուն մտնէ՝ շուտով ասէ նորան՝ թէ Ե՛կ սեղան

8 նստէ՛. Բայց չասէ նորան՝ թէ Պատրաստէ՛ ինչ որ
ընթրիքս պիտի ուտեմ, եւ գօտիկդ կապած ինձ
ծառայէ՝ մինչեւ որ ուտեմ եւ խմեմ, եւ յետոյ
9 դու էլ կե՛ր եւ խմէ՛ : Միթէ այն ծառայիցը շը-
նորհակա՞լ կ'լինի՝ որ այն ամեն հրամաններն ա-
10 րաւ : Այնպէս էլ դուք՝ երբոր ամեն ձեզ հրա-
մայված բաներն անէք, ասացէ՛ք թէ՝ Մենք ան-
պիտան ծառաներ ենք. նա որ պարտական էինք
անելոյ, արինք :
11 Եւ էլաւ՝ երբոր նա Երուսաղէմ էր գնում՝ եւ
ինքը Սամարիայի եւ Գալիլեացոց միջիցն անցանում
12 էր, Եւ երբոր մին գիւղ էր մտնում, տասն բո-
րոտ մարդիկ պատահեցին նորան որ հեռուանց
13 կանգնեցին, Ձայները բարձրացրին՝ եւ ասացին.
14 Յիսո՛ւս Վարդապետ՝ մեզ ողորմէ : Եւ երբոր տե-
սաւ նորանց՝ ասաց նորանց. Գնացէ՛ք անձներդ
քահանաներին ցո՛յց տուէք. եւ էլաւ երբոր գնա-
15 ցին՝ շուտով սրբվեցան : Նորանցից մինն երբոր
տեսաւ՝ թէ բժշկվեցաւ, յետ դարձաւ՝ բարձր
16 ձայնով փառք էր տալիս Աստուծոյն : Իրեն երե-
սին վերայ ընկաւ նորան ոտներին առաջին, եւ
գոհանումէր նորանից. եւ ինքը Սամարացի էր.
17 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. Զէ՞ որ
տասն էին սորանք որ սրբվեցան. ապա այն ինն
18 ո՞ւր են, Որ բնաւ չ'գտվա՛ն որ յետ դառնան՝ եւ
Աստուծոյն փառք տան. բայց միայն այս այլազ-
19 գիս : Եւ ասաց նորան. Վե՛ր կաց գնա՛. ինչուոր
քո հաւատքդ ապրեցրուց քեզ :
20 Երբոր փարիսեցիներիցը հարցվեցաւ՝ թէ Աստու-
ծոյ արքայութիւնն ե՞րբ պիտի գայ. պատասխան

տուաւ նորանց եւ ասաց. Աստուծոյ արքայու-
21 թիւնը դրսի նշաններով չի՛ գալ, Եւ չեն ասիլ՝
թէ Ահա՛ այս տեղ է կամ այնտեղ. ինչու որ՝ ահա՛
Աստուծոյ արքայութիւնը ճիշդ ձեր ներսումն է։
22 Աշակերտներին էլ ասաց. Օրեր կ'գան՝ որ դուք
կ'ցանկանաք Որդոյ մարդոյ օրերիցը մինը տեսնե-
23 լոյ, եւ չէ՛ք տեսնիլ։ Եւ թէ որ ասեն ձեզ՝ Ահա՛
24 այստեղ է կամ այնտեղ՝ ետեւէն չ'գնա՛ք, Պատ-
ճառնոր՝ ինչպէս կայծակն որ փայլում է, երկնքի
տակը մի կողմից լոյս է տալիս երկնքի տակովը մին-
չեւ միւս կողմը՝ այնպէս էլ Որդին մարդոյ իրեն օ-
25 րումը։ Բայց առաջ պէտք է՝ որ նա շատ չարչար-
26 վի եւ անարգվի այս ազգիցս։ Եւ ինչպէս որ Նոյ-
ին օրերին էլաւ՝ այնպէս էլ Որդոյ մարդոյ օրե-
27 րին կ'լինի. Ուտումէին՝ խմումէին՝ կին էին առ-
նում՝ եւ մարդոյ էին գնում, մինչեւ այն օրն՝ որ
Նոյ մտաւ տապանը. եւ ջրհեղեղն եկաւ եւ ամե-
28 նին կորցրուց։ Այնպէս էլ՝ ինչպէս որ Ղովտին օ-
րերին էլաւ. ուտումէին, խմումէին, գնումէին,
29 ծախումէին, տնկումէին, շինումէին, Եւ այն օրն՝
որ Ղովտ Սոդոմիցը դուրս եկաւ՝ կրակ եւ ծծումբ
30 թափվեցաւ երկնքից ու ամենին կորցրուց։ Իսկ
այն կերպով էլ կ'լինի այն օրն՝ որ Որդին մարդոյ
31 կ'յայտնվի։ Այն օրն ով որ կտրի վերայ լինի եւ
իրեն բաները տան մէջը՝ թո՛ղ վէր չ'գայ, որ նո-
րանց առնէ. եւ ով որ յանդումը լինի՝ այնպէս
32 էլ թո՛ղ յետ չ'դառնայ։ Մտքներդ բերէք Ղովտ-
33 ի կինը։ Ով որ կ'կամենայ իրեն անձն ապրեցը-
նել՝ կ'կորցնէ նորան. եւ ով որ կ'կորցնէ, կապ-
34 րեցնէ նորան։ Ասումեմ ձեզ. Այն գիշերը եթէ

երկու հոգի մին մահճի մէջ լինին՝ մինը կառնվի
35 եւ միւսը կ'թողվի։ Եւ եթէ երկու հոգի մին-
տեղ աղալոյ վերայ լինին՝ մինը կառնվի եւ միւ-
սը կ'թողվի. եւ եթէ երկու հոգի յանդումը լի-
36 նին՝ մինը կառնվի եւ միւսը կ'թողվի։ Պատասխան
37 տուին՝ եւ նորան ասացին. Տէ՛ր՝ ո՞րտեղ։ Եւ նա
ասաց նորանց. Որտեղ որ մարմին կայ, արծիւնե-
րըն էլ այնտեղ կ'հաւաքվին։

ԳԼ. ԺԸ

Անիրաւ դատաւորը, փարիսեցին ու մաքսաւորը. Երե-
խաներ են բերվում Քրիստոսին. Հարստութեան վտան-
գը. Նորա ձգողներին վարձքը. Քրիստոսի չարչարանքը.
Երիքովի կոյրերը։

1 Մին առակ էլ ասաց նորանց՝ նորա վերայ թէ
պէտք է նորանց՝ որ ամեն ժամանակ աղօթք անեն
2 եւ չ'ձանձրանա՛ն։ Ասաց. Մին դատաւոր կար մին
քաղաքի մէջ, որ Աստուածանից չէր վախենում
3 եւ մարդկանցից էլ չէր ամաչում։ Եւ մին որբեւե-
րի էլ կար այն քաղաքումը, նորա մօտ էր գալիս
եւ ասում, թէ Իրաւունք արա՛ ինձ իմ հակա-
4 ռակ ոսոխիցս։ Եւ նա շատ ժամանակ չէր կամե-
նում. Նորանից ետեւ իրեն մտքումն ասաց. Թէեւ
Աստուածանից չեմ վախենում եւ մարդկանցից
5 չեմ ամաչում, Բայց որովհետեւ այս որբեւէրիս
աշխատացնումէ ինձ՝ իրաւունք կանեմ նորան՝ որ
6 չ'գայ աղաչելով իսպառ ձանձրացնէ ինձ։ Եւ Տէրն
ասաց. Լսեցէ՛ք թէ անիրաւ դատաւորն ինչ էր

7 ասում։ Բայց Աստուած միթէ իրեն ծառաներին
համար վրէժ չի՞ խնդրիլ, որ ցերեկ եւ գիշեր ա-
ղաղակումեն դէպի Նա. եւ մինակ նորանց համար
8 երկայնամիտ կ'լինի։ Իրաւի՛ ասումեմ ձեզ՝ թէ
շուտով վրէժխնդրութիւն կանէ նորանց համար.
բայց Որդին մարդոյ երբոր կ'գայ՝ միթէ հաւատք
կ'գտնէ՞ երկրի վերայ։
9 Մի՛ն քանի մարդկանց էլ՝ որ իրենց մտքերումը
պարծենումէին՝ իբր թէ արդար են՝ եւ ուրիշներին
10 ո՛չ ինչ էին համարում՝ այս առակս ասաց. Եր-
կու մարդ վեր ելան տաճարն որ աղօ՛թք անեն.
11 մինը փարիսեցի եւ միւսը մաքսաւոր։ Փարիսեցին
ջոկ կանգնած էր եւ առանձին այս աղօթքս էր
անում. Ի՛մ Աստուած, գոհանումեմ քեզանից՝
որ ես ուրիշ մարդկանց պէս չեմ՝ յափշտակողնե-
րի, եւ անիրաւների, եւ շնացողների, կամ թէ
12 այս մաքսաւորներիս պէս, Այլ շաբաթը երկու
անգամ պաս եմ պահում՝ եւ իմ ամեն ապրանք-
13 ներիցս տասանորդ եմ տալիս։ Եւ մաքսաւորը հե-
ռու կանգնած էր՝ եւ իրեն աչքերն էլ չէր կամե-
նում դէպի երկինքը բարձրացնել. բայց իրեն
կուրծքը թակումէր եւ ասում. Աստուա՛ծ՝ քաւէ՛
14 ինձ մեղաւորիս։ Ասումեմ ձեզ՝ թէ Սա արդարա-
ցած գնաց իրեն տունը քանթէ նա. ինչու որ՝ ա-
մեն ով որ իրեն անձը բարձրացնումէ՝ կ'խոնարհվի,
եւ ով որ իրեն անձը խոնարհացնումէ՝ կ'բարձրա-
նայ։
15 Երեխանե՛ր էլ էին բերում Նորա մօտ՝ որ Նո-
րանց մօտենայ. աշակերտներն երբոր տեսին, սաս-
16 տումէին նորանց։ Բայց Յիսուս նորանց իրեն մօտ

կանչեց, եւ ասաց. Թո՛յլ տուէ՛ք այդ երեխանե-
րիդ՝ որ ինձ մօտ գան, եւ մի՛ արգելէք դորանց.
ինչու որ՝ այդպէսիներին է Աստուծոյ արքայութիւ-
17 նը։ Ճշմարիտ ասումեմ ձեզ. թէ Ով որ Աստու-
ծոյ արքայութիւնը չ'ընդունի ինչպէս երեխայ՝ նա
չի՛ մտնիլ նորա մէջ։
18 Եւ մին իշխան՝ հարցրուց նորան եւ ասաց. Բա-
րի՛ Վարդապետ՝ ի՞նչ գործեմ, որ յաւիտենական
19 կեանքը ժառանգեմ։ Յիսուս նորան ասաց. Ինչո՞ւ
ես ինձ բարի ասում. ո՛չ ով բարի չ'կայ՝ բայց
20 միայն մինն Աստուած։ Պատուիրանքները գիտում-
ես. Մի՛ շնար, Մի՛ սպաներ, Մի՛ գողանար,
Մի՛ սուտ վկայեր, Պատուէ քո հայրդ, եւ մայ-
21 րըդ։ Եւ նա ասաց. Այդ ամենդ իմ երեխայու-
22 թենիցս պահեցի։ Յիսուս երբոր սա լսեց՝ նորան
ասաց. Մին բան էլ պակաս է քեզ. ամեն ինչ
որ ունիս, ծախէ՛ եւ աղքատներին տո՛ւր, եւ
գանձ կունենաս երկինքումը, եւ իմ ետեւէս ե՛կ։
23 Նա երբոր սա լսեց՝ տրտմեցաւ. ինչու որ՝ շատ
24 հարուստ էր։ Յիսուս երբոր նորան տրտմած տե-
սաւ, ասաց. Նորանք որ ապրանք ունին՝ ի՞նչպէս
դժուարութենով կ'մտնեն Աստուծոյ արքայու-
25 թիւնը։ Աւելի հեշտ է որ ուղտն ասեղի ծակով
անցանէ, քանթէ հարուստն Աստուծոյ արքայու-
26 թիւնը մտնէ։ Եւ նորանք որ լսեցին՝ ասումէին.
27 Էլ ո՞վ կարէ ապրիլ։ Եւ նա ասաց. Այն բանե-
րըն որ անկարելի են մարդկանց մօտ՝ Աստուծոյ
28 մօտ կարելի են։ Եւ Պետրոս ասաց. Ահա՛ մենք
մեր ամեն բաները թողինք եւ քո ետեւէդ եկինք։
29 Եւ նա ասաց նորանց. Ճշմարիտ ասումեմ ձեզ,

թէ Ո՛չ ով չ'կայ՝ որ տները կամ ծնողները կամ
եղբարները կամ կինը կամ որդիքը թողեց՝ Աս-
30 տուծոյ արքայութեան համար. Որ շատ աւելի
չառնէ այս ժամանակումս՝ եւ այն աշխարհքումն՝
որ գալու է՝ յաւիտենական կեանքը ժառանգէ։
31 Եւ այն տասներկուսին առանձին առաւ եւ նո-
րանց ասաց. Ահա՛ վեր ենք ելլում Երուսաղէմ.
եւ ամէն բաներն որ մարգարէների ձեռովն Որդւոյ
32 մարդոյ համար գրուած են, կ'կատարուին։ Ինչուոր՝
հեթանոսներին ձեռքը կ'մատնուի եւ ծաղր կ'լինի.
33 Եւ կ'ծեծեն եւ կ'սպանեն նորան. եւ երեք օրումը
34 յարութիւն կառնէ։ Եւ նորանք ո՛չ ինչ չիմացան
այն բաներիցը՝ բայց խօսքը ծածկուած էր նորանցից
եւ ասած բաները չէին գիտում։
35 Եւ երբոր նա Երիքովին մօտենումէր, մին կոյր
36 ճանապարհի վերայ նստած էր՝ մուրացկան։ Երբոր
ժողովրդի անցանելը լսեց, հարցնումէր՝ թէ Նա
37 ի՞նչ է։ Եւ պատմեցին նորան՝ թէ Յիսուս Նազո-
38 րեցին է անցանում։ Աղաղակեց եւ ասաց. Յիսուս
39 որդի Դաւթի՝ ինձ ողորմեա՛։ Եւ նորանք՝ որ ա-
ռաջ էին գնում, սաստումէին նորան՝ որ լուռ
կենայ. եւ նա էլ աւելի աղաղակումէր. Որդի՛
40 Դաւթի՝ ինձ ողորմեա՛։ Յիսուս կանգնեց եւ հը-
րամայեց՝ որ նորան իրեն մօտ բերին. եւ երբոր ի-
41 րեն մօտ եկաւ՝ հարցրուց նորան եւ ասաց։ Ի՞նչ
ես ուզում դու որ անեմ քեզ. եւ նա ասաց.
42 Տէ՛ր՝ որ իմ աչքերս բացուին եւ տեսնեմ։ Եւ Յի-
սուս ասաց նորան. Նայէ՛, քո հաւատքդ ապրեց-
43 րուց քեզ։ Եւ շուտով տեսաւ, եւ նորա ետե-
ւէն գնումէր՝ եւ Աստուծոյն փառաւորում. եւ

ամէն ժողովուրդն՝ որ տեսաւ՝ օրհնութիւն էր տա-
լիս Աստուծոյն։

ԳԼ. ԺԹ

Զաքէոս. Տասների առակը. Քրիստոսի Երուսաղէմ մըտ-
նելը, մարգարէութիւնն ու տաճարը մաքրելը։

1 Եւ մտաւ Երիքովի միջովն անցանում էր (2) Եւ
ահա՛ մին մարդ՝ անունը Զաքէոս կոչված. եւ նա
մաքսաւորների գլխաւորն էր, եւ ինքն էր հա-
3 րուստ. Եւ ուզումէր որ տեսնէ՝ թէ ո՞վ է Յէ-
սուսը, եւ մարդկանց բազմութեան պատճառովը
չէր կարօղանում. ինչուոր հասակովը կարճ էր։
4 Եւ առաջ վազեց ու վեր ելաւ մին ժանտաթզի
ծառ՝ որ տեսնէ նորան. ինչուոր Յէսուս իսկ այն-
5 տեղովը պէտք է անցնէ։ Երբոր այնտեղն եկաւ՝
Յիսուս վեր նայեց եւ նորան ասաց. Զաքէ՛ շուտ
արա՛ այդ տեղից վէ՛ր եկ, ինչուոր՝ պէտք է ինձ՝
6 որ այսօր քո տանդ վեր գամ։ Նա փութալով վէր
7 եկաւ եւ ուրախութենով ընդունեց նորան։ Ամեն-
քըն երբոր տեսին, տրտնջումէին եւ ասում. թէ,
Մեղաւոր մարդոյ մօտ մտաւ հանգիստ առնելոյ
8 համար։ Զաքէոսն եկաւ կանգնեց եւ Տէրին ա-
սաց. Տէ՛ր՝ ահա՛ իմ ապրանքներիս կէսն աղքատ-
ներին կ'տամ. եւ եթէ մինը զրկեցի՝ չորս տակ կը
9 վճարեմ։ Եւ Յիսուս նորան ասաց. Այս օր փրը-
կութիւն եղա՛ւ այս տանս. ինչու որ՝ սա էլ Աբ-
10 րահամու որդի է. Պատճառնոր՝ Որդին մարդոյ ե-
կաւ, որ ման գայ եւ ապրեցնէ կորածին։
11 Եւ դեռ որ նորանք այս բանս լսումէին՝ մին ա-

տակ աւելացրուց եւ ասաց, իրեն Երուսաղէմին
մօտենալու համար, եւ նորանց կարծելու համար՝
թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտ-
12 նուի. Ասաց. Մին մեծազգի մարդ գնաց հեռու՛ աշ-
խարհք, որ թագաւորութիւն առնէ իրեն համար
13 եւ յետ դառնայ, Եւ իրեն ծառաներին կանչեց,
տասը մնաս տուաւ նորանց, եւ ասաց նորանց.
14 Այդ բանացրէ՛ք մինչեւ որ գամ։ Եւ նորա քա-
ղաքացիները, նորան ատումէին. Նորան ետեւէն
պատգամաւորներ ուղարկեցին եւ ասացին. թէ,
15 Չենք ուզում որ դա թագաւորէ մեզ վերայ։ Եւ
էլաւ՝ որ նա թագաւորութիւնն առաւ՝ յետ դար-
ձաւ. եւ այն ծառաներին՝ որ արծաթը նորանց
էր տուել, կանչեց, որ գիտենայ, թէ ով ի՞նչ
16 շահվեցաւ։ Առաջինն եկաւ եւ ասաց. Տէ՛ր՝ քո
17 մնասդ տասը մնաս արաւ։ Եւ նորան ասաց. Ազ-
նիւ եւ բարի ծառայ՝ որովհետեւ այդ քիչ բա-
նումդ հաւատարիմ էլար՝ թո՛ղ տասը քաղաքի
18 վերայ իշխանութիւն ունենաս։ Երկրորդն եկաւ՝
19 եւ ասաց. Քո մնասդ հինգ մնաս արաւ։ Նորան էլ
ասաց. Թո՛ղ դու էլ հինգ քաղաքի վերայ լինիս։
20 Միւսն էլ եկաւ եւ ասաց. Տէ՛ր ահա՛ քո մնասդ՝
21 որ վարշամակի մէջ պատած պահումէի. Վախե-
նումէի քեզանից. ինչուոր՝ դու մին քարասիրտ
մարդ ես. վեր ես առնում նա՝ որ չ'դրիր՝ եւ հըն-
22 ձումես նա՝ որ չ'սերմանեցիր։ Եւ ասաց նորան.
Քո բերանիցդ քեզ կ'դատեմ, ա՛նհաւատ ծառայ.
դու գիտումէիր՝ որ ես մին քարասիրտ մարդ եմ,
վեր եմ առնում նա՝ որ չ'դրի, եւ հնձումեմ՝ որ
23 տեղ որ չ'սերմեցի. Էլ ինչո՞ւ իմ արծաթս ստակ

փոխողներին չ'տուիր, որ ես գայի շահով յետ առ-
24 նէի։ Եւ ծառաներին ասաց. Առէ՛ք դորանից այն
մնասը, եւ տարէք տուէ՛ք նորան՝ որ տասը մնասն
25 ունի։ Եւ նորան ասացին. Տէ՛ր. տասը մնաս ու-
26 նի։ Ասումեմ ձեզ, թէ, Ամենին որ ունի, կը
տվվի. եւ նա որ չունի, նորանից նա էլ, որ ունի,
27 վեր կառնվի։ Բայց այն իմ թշնամիներիս՝ որ չէին
ուզում, որ ես նորանց վերայ թագաւորեմ, այս-
28 տեղ բերէ՛ք եւ սպանեցէ՛ք իմ առաջիս. Եւ երբ
որ սա ասաց, առաջ գնաց, որ վեր ելլէ Երու-
սաղէմ։
29 Եւ էլաւ երբոր Բեթփագէին եւ Բեթանեային
մօտեցաւ այն սարին մօտ՝ որ Ձիթենեաց սար է
կոչվում՝ իրեն աշակերտներիցն երկուսը ուղարկեց
30 եւ ասաց. Գնացէ՛ք դուք առ այդ գիւղդ, որ մեր
դիմացն է. եւ երբոր մտնէք նորա մէջ՝ մին աւա-
նակ կ'գտնէք կապված, որ նորա վերայ բնաւ մին
ժամանակ մարդ չ'նստե՛ց. Նորան արձակեցէ՛ք եւ
31 բերէ՛ք։ Եւ թէ որ մինը հարցնէ ձեզ՝ թէ ինչո՞ւ
էք արձակում՝ նորան այսպէս ասացէ՛ք՝ թէ Տէրին
32 պէտք է սա։ Երբոր գնացին նորանք որ ուղարկվե-
ցան, այնպէս գտին ինչպէս որ նորանց ասաց, ա-
33 ւանակը կանգնած էր։ Եւ երբոր աւանակն ար-
ձակումէին՝ նորա տէրերն ասացին նորանց. Ին-
34 չո՞ւ էք արձակում այդ աւանակդ։ Եւ նորանք ա-
35 սացին. Տէրին պէտք է սա։ Եւ նորան բերին Յի-
սուսի մօտ. եւ շորեր ձգեցին նորա վերայ, եւ Յի-
36 սուսին հեծացրին։ Եւ գնա որ գնումէր՝ իրենց շո-
37 րերը փռումէին ճանապարհին վերայ։ Եւ երբոր մօ-
տեցաւ որ Ձիթենեաց սարիցը դէպի ցածը վէր

դնայ՝ աշակերտներին ամէն բազմութիւնը ուրա-
խութենով սկսեց օրհնութիւն տալ Աստուծոյն
բարձր ձայնով՝ այն ամէն եղած զօրութիւններին
38 համար որ տեսել էին. Եւ ասումէին. Օրհնեալ
է գա՝ որ գալիս է թագաւոր Տէրի անունովը.
խաղաղութիւն երկնքումը եւ փառք 'ի բարձունս ։
39 Եւ փարիսեցիներիցը մին քանիսն, որ ժողովուրդ-
ներին մէջ էին, Նորան ասացին. Վա՛րդապետ՝
40 սաստէ քո աշակերտներիդ ։ Պատասխան տուաւ
եւ ասաց՝ Ասումեմ ձեզ՝ որ եթէ սորանք էլ լռե-
կենան՝ այդ քարերդ կաղաղակեն ։
41 Եւ երբոր մօտեցաւ, տեսաւ քաղաքին՝ եւ լաց
42 եղաւ Նորա վերայ եւ ասաց. Եթէ գիտեա՛ այս օ-
րըս գիտենայի՛ր քո խաղաղութիւնդ. բայց հիմիկ
43 ծածկվեցաւ քո երեսիցդ ։ Ինչուոր՝ օրեր կ'գան
քեզ վերայ, եւ քո թշնամիներդ քո չորս կող-
մովդ պատնէշ կ'պատեն եւ քեզ կ'պաշարեն եւ
44 ամէն կողմից քեզ կ'նեղացնեն. Եւ հիմնայա-
տակ կանեն քեզ եւ քո որդիքդ էլ քո միջումդ.
եւ ընաւ քար քարի վերայ չեն թողել քո միջու-
մըդ. ինչուոր՝ չ'ճանաչեցիր Աստուծոյ քեզ տես
գալոյ ժամանակը ։
45 Եւ մտաւ տաճարն ու սկսեց դուրս հանել ա-
ղաւնի ծախողներին եւ գնողներին, եւ սաակ փո-
46 խողների տախտակները ցրւեց ։ Եւ նորանց ասաց.
Գրված է՝ թէ իմ տունս աղօթքի տուն պիտի լի-
նի, եւ դուք դորան աւազակների բոյն արիք ։
47 Եւ ամէն օր սովորցնումէր նորանց տաճարին մէջ.
բայց քահանայապետներն ու կարդացողները եւ
ժողովրդի գլխաւորները խնդրումէին, որ կորցնեն

48 նորան, Եւ չէին գտնում՝ թէ ի՛նչ անեն. պատ-
ճառնոր՝ բոլոր ժողովուրդը նորանից կախված էր
որ Նորա խօսքն լսէ ։

ԳԼ. Ի

Քրիստոս պատասխան է տալիս իր իշխանութեանը համար. այգոյ առակը. կայսրին հարկ տալ. մեռելոց յարութիւն. Քրիստոս ի՞նչպէս է Դաւթի որդի. զգուշանալ փարիսեցիներից ։

1 Եւ եղաւ որ այն օրերից մինումը դեռ քանի որ
տաճարումը սովորցնումէր ժողովրդին եւ աւետարա-
նումէր, քահանայապետներն ու կարդացողները ծե-
2 րերին հետ վերայ հասին, Եւ նորան ասացին. Ա-
սա՛ մեզ, դու ի՞նչ իշխանութենով ես անում
դա, կամ ո՞վ է նա, որ այդ իշխանութիւնդ
3 տուաւ քեզ ։ Պատասխան տուաւ եւ ասաց նո-
րանց. Ես էլ ձեզանից մին բան կ'հարցնեմ, եւ
4 ասացէ՛ք ինձ ։ Յօհաննէսի մկրտութիւնն երկնքի՞ցն
5 էր, թէ մարդկանցիցը ։ Եւ նորանք իրենց միջումը
6 միտք արին եւ ասացին. Թէ որ ասենք, Երկնքի-
ցը. կասէ. Ապա ինչո՞ւ չ'հաւատացի՛ք նորան.
եւ թէ որ ասենք՝ Մարդկանցիցը, ամէն ժողովուր-
դը մեզ քարկոծ կանեն. ինչուոր՝ իրենց մտքումը
հաստատ դրել են Յօհաննէսին համար՝ թէ մար-
7 գարէ է ։ Եւ պատասխան տուին՝ չ'գիտել, թէ որ
8 տեղից է ։ Եւ Յիսուս նորանց ասաց. Ես էլ չեմ
ասիլ ձեզ՝ թէ ի՛նչ իշխանութենով եմ անում սա ։
9 Ապա սկսեց այս առակս ասել ժողովրդին. Մին
մարդ այգի տնկեց, եւ մշակներին տուաւ նորան,

10 եւ ինքը ճանապարհ գնաց շատ ժամանակ։ Եւ
ժամանակին որ եկաւ՝ մին ծառայ ուղարկեց մշակ-
ներին մօտ, որ այգու պտղից իրեն տան. եւ մը-
շակները ծեծեցին նորան եւ դատարկ յետ արձա-
11 կեցին։ Եւ նորա վերայ մին ուրիշ ծառայ էլ ու-
ղարկեց. եւ նորան էլ ծեծեցին, թուքումուր
12 տուին եւ դատարկ յետ ուղարկեցին։ Եւ նորա
վերայ երրորդին էլ ուղարկեց. նորանք նորան էլ
13 խոցեցին եւ դուրս հանեցին։ Այգու տէրն ասաց.
ի՞նչ անեմ. իմ սիրելի որդիս կուղարկեմ՝ լինի
14 թէ սորանից ամաչեն։ Մշակներն երբոր նորան
տեսին՝ իրար հետ խորհուրդ արին եւ ասացի՛ն.
Սա՛ է ժառանգը. սպանե՛նք սորան, որ ժառան-
15 գութիւնը մեզ լինի։ Եւ այգուցը դուրս հանե-
ցին նորան եւ սպանեցին. ապա այգու տէրն ի՞նչ
16 պիտի անէ նորանց։ Չէ՞ որ կ'գայ եւ այն մշակ-
ները կ'կորցնէ եւ այգին ուրիշներին կ'տայ. երբ-
17 որ սա լսեցին՝ ասացին. Քա՛ւ լիցի։ Եւ նա մտիկ
տուաւ նորանց եւ ասաց. Ապա ի՞նչ է նա որ
գրված է՝ թէ, Այն քարն՝ որ շինողներն անար-
18 գեցին՝ նա եղաւ անկիւնի գլուխ։ Ամեն՝ ով որ
այս քարիս վերայ ընկնի՝ կ'փշրվի՝ եւ ում վերայ
19 որ նա ընկնի՝ կ'ջարդէ նորան։ Եւ կարդացողներն
ու քահանայապետները իսկ այն ժամումն ուզում
էին, որ ձեռք ձգեն նորա վերայ, եւ ժողովրդից
վախեցան. ինչու որ՝ գիտացին որ՝ իրենց համար
ասաց այն առակը։

20 Եւ ապա սպասեցին եւ նենգաւոր մարդիկ ու-
ղարկեցին՝ որ կեղծաւորութենով իրենց անձներն
արդար երեւացրին. որ խօսքով բռնեն նորան՝ որ

մատնեն նորան դատաւորի տէրութեանն ու իշ-
21 խանութեանը։ Նորան հարցրին եւ ասացին.
Վա՛րդապետ՝ գիտումենք, որ շիտակ ես խօսում
եւ սովորցնում, եւ երեսպաշտութիւն չես անում.
բայց ճշմարտութենով Աստուծոյ ճանապարհը սո-
22 վորցնումես։ Արժա՞ն է մեզ՝ որ կայսերին հարկ
23 տանք, թէ չէ՛։ Եւ նորանց չարութիւնը տեսնե-
24 լով՝ ասաց նորանց. ինչո՞ւ էք փորձում ինձ. Ցո՛յց
տուէք ինձ այն դահեկան. եւ նորանք ցոյց տուին.
եւ ասաց. Ո՞ւմ պատկերն ու գիրն ունի. պա-
25 տասխան տուին եւ ասացին. Կայսերին։ Եւ նա
ասաց նորանց. Ուրեմն գնացէ՛ք կայսերինը կայսե-
26 րին տուէ՛ք, եւ Աստուծոյնն Աստուծոյ։ Եւ չը
կարացին խօսքերով բռնել նորան ժողովրդի առա-
ջին. եւ նորա պատասխանին վերայ զարմացան
եւ լուռ կացան,

27 Սադուկեցիներից՝ որ հակառակումէին թէ յա-
րութիւն չ'կայ, մին քանիսը մօտ եկին եւ նորան
28 հարցրին. Եւ ասացին. Վա՛րդապետ. Մօսէսը
գրեց մեզ. Թէ որ մինի եղբայրը մեռնի, որ կին
ունենայ՝ եւ անորդի լինի, որ նորան եղբայրն այն
կինն առնէ, եւ իրեն եղբօր համար զաւակ վեր-
29 կացնէ։ Ապա՝ եօթն եղբարք կային՝ եւ առաջինը
30 կին առաւ եւ առանց զաւակի մեռաւ։ Երկրորդն
էլ նորան առաւ, եւ նա էլ առանց զաւակի մե-
31 ռաւ։ Երրորդն էլ նորան առաւ. այնպէս այն
32 եօթն էլ, եւ որդի չ'թողին։ Եւ ամենեցն ետեւ այն
33 կինն էլ մեռաւ։ Ապա յարութեան ժամանակին
նորանցից որի՞ն պիտի լինի կին. ինչու որ՝ այն եօ-
34 թըն էլ կին առին նորան։ Յիսուս պատասխան

տուաւ նորանց եւ ասաց. Այս աշխարհքիս որ-
35 դիքը են կին առնում եւ մարդի գնում։ Բայց
նորանք որ արժանի լինին այն աշխարհքին հասնե-
լու եւ մեռելների միջիցը յարութիւն առնելու,
36 ո՛չ կին կառնեն եւ ո՛չ մարդի կ'գնան, Պատ-
ճառնոր՝ էլ չեն կարող մեռնիլ. ինչուոր՝ հրեշ-
տակներին հաւասար են եւ Աստուծոյ որդիք, նո-
37 րահամար որ յարութեան որդիք են։ Բայց դորա-
համար թէ մեռելներն յարութիւն կառնեն՝ Մո-
ւսէսն էլ մարգարէացաւ մորենոյն մօտ՝ ինչպէս որ
Տէրին համար ասումէ՝ Աստուած Աբրահամու եւ
38 Աստուած Սահակայ եւ Աստուած Յակոբայ։ Եւ
Աստուած մեռելներին չէ՝ բայց կենդանիներին.
39 ինչուոր՝ ամենքը կենդանի են նորան։ Կարդացող-
ներիցը մին քանիսը պատասխան տուին նորան եւ
40 ասացին. Վա՛րդապետ՝ լաւ ասացիր. Եւ ընաւ
մինն էլ չէր համարձակվում՝ որ նորանից մին բան
հարցնէ։

41 Եւ նորանց էլ ասաց. Ի՞նչպէս են ասում Քրիս-
42 տոսի համար՝ թէ Դաւիթի որդին է։ Եւ Դաւիթ
ինքն Սաղմոս գրքումն ասումէ. Տէրն իմ Տէրին
43 ասաց՝ թէ իմ աջ կողմն նստէ, Մինչեւ որ քո
44 թշնամիներդ քո ոտացդ կոխելիք դնեմ։ Ապա՝
թէ որ Դաւիթ Տէր է կոչում նորան, ի՞նչպէս նո-
րա որդին կ'լինի։

45 Եւ ամեն ժողովրդի առաջին որ լսումէին՝ ասաց
46 աշակերտներին. Զգո՛յշ կացէք կարդացողներից՝
որ լայն պատմուճաններով կամենումեն ման գալ,
եւ սիրումեն բաց տեղերանքումը բարեւ առնելը,
եւ ժողովարաններին մէջ առաջին աթոռները՝ եւ

47 ընթրիքներումը վերեւի տեղերը. Որ որբեւէրիների
տներն ուտումեն, եւ պատճառներով երկար ա-
ղօթք են անում. Նորանք աւելի դատապարտու-
թիւն կընդունին։

ԳԼ. ԻԱ.

Որբեւայրի կնկան երկու լուման. Երուսաղէմի կործա-
նումն ու Տէրին գալուստը։

1 Եւ մտիկ տուաւ, տեսաւ հարուստներին՝ որ ի-
2 րենց տուրքը գանձանակն էին ձգում։ Մին որբե-
ւէրի աղքատ կին էլ տեսաւ՝ որ երկու լումայ ձը-
3 գեց այնտեղ. Եւ ասաց. Ճշմարիտ ասումեմ ձեզ՝
թէ այն աղքատ որբեւէրին ամենից աւելի ձգեց.
4 ինչուոր՝ նորանք ամենքն իրենց աւելացածներիցը
ձգեցին Աստուծոյ ընծաներին մէջ, բայց նա իրեն
կարօտութենից իրեն բոլոր կենաց ապրուստ՝ որ
ունէր՝ ձգեց։

5 Եւ երբոր մին քանի մարդ ասումէին տաճարին
համար՝ թէ, Գեղեցիկ քարերով եւ աշտարակնե-
6 րով զարդարված է, նա ասաց. Այդ ամենդ որ
տեսնումէք՝ օրեր կ'գան՝ որ այդտեղ քար քարի
7 վերայ չի՛ թողվիլ՝ որ չ'քանդվի։ Հարցրին նորան
եւ ասացին. Վա՛րդապետ՝ դա ե՞րբ կ'լինի, եւ
8 ի՞նչ է նշանն՝ երբոր այդ պիտի լինի։ Եւ նա ա-
սաց. Զգո՛յշ կացէք՝ որ չ'խաբվիք. ինչուոր՝ շատ
մարդիկ կ'գան իմ անունովս եւ կասեն՝ թէ, Ես
եմ. եւ ժամանակը մօտեցաւ. Նորանց ետեւէն
9 մի՛ գնաք։ Եւ երբոր կռիւներ եւ խռովութիւն-

ներ կ'լսէք՝ մի՛ շփոթվիք․ ինչու որ՝ պէտք է, որ
առաջ նա լինի, բայց դեռ շուտով վերջը չէ՛։
10 Այն ժամանակը նորանց ասաց․ Ազգ ազգի վերայ
վեր կ'կենայ եւ թագաւորութիւն թագաւորու-
11 թեան վերայ։ Եւ մեծամեծ գետնաշարժութիւն-
ներ՝ եւ տեղ տեղ սովեր եւ սաստիկ մահեր․ եւ
երկնքից ահաւոր բաներ եւ մեծամեծ նշաններ կը
12 լինին։ Բայց այս բաներից առաջ իրենց ձեռները
ձեզ վերայ կ'ձգեն եւ կ'հալածեն․ ժողովարաննե-
րի եւ բանտերի մէջ կ'մատնեն, եւ կ'տանեն դա-
տաւորների եւ թագաւորների առաջին իմ անու-
13 նիս համար։ Եւ նա կ'լինի ձեզ վկայութեան հա-
14 մար։ Ուրեմն ձեր սրտի մէջ դրէ՛ք՝ որ առաջուց
15 միտք չանէք պատասխան տալոյ համար։ Ինչու որ՝
ես բերան եւ իմաստութիւն կ'տամ ձեզ․ որ ձեր
ամեն հակառակողները չեն կարենալ դէմ կենալ
16 կամ պատասխան տալ նորան։ Կ'մատնվիք ծնող-
ներից եւ եղբայրներից եւ ազգականներից եւ բա-
17 րեկամներից էլ․ եւ ձեզանից կ'սպանեն։ Եւ ամե-
18 նին ատելի կ'լինիք իմ անունիս համար։ Բայց ձեր
19 գլխիցը մին մազ չի՛ կորչիլ։ Եւ ձեր համբերու-
թենովը ձեր հոգին կ'շահէք։
20 Բայց երբոր կ'տեսնէք թէ Երուսաղէմը չորս կող-
մովը պատած է զօրքերով՝ այն ժամանակը գիտա-
21 ցէ՛ք․ թէ նորա քանդվիլը մօտիկ է։ Այն ժամա-
նակը նորանք՝ որ Հրէաստանումն են՝ թո՛ղ սարե-
րը փախչին, եւ նորանք՝ որ նորան մէջ են՝ թո՛ղ
դուրս քաշվին, եւ նորանք՝ որ նորա գաւառնե-
22 րումն են՝ թո՛ղ չ'մտնեն նորան մէջ։ Ինչու որ՝ այն
օրերը վրէժ խնդրելոյ օրերն են՝ որ ամեն գրվածնե-

23 րը կատարվին։ Բայց այն օրերումը վա՛յ կ'լինի յղ-
ղացածներին եւ ծիծտուողներին․ ինչու որ՝ մեծ
նեղութիւն կ'լինի երկրիս վերայ, եւ Աստուծոյ
24 բարկութիւնն այն ժողովրդին վերայ։ Եւ սրի բե-
րան կ'ընկնին, եւ ամեն հեթանոսներին մէջ գերի
կ'տանվին․ եւ Երուսաղէմը հեթանոսներից կոխ-
ված կ'լինի՝ մինչեւ որ հեթանոսներին ժամանակ-
25 ները կատարվին։ Եւ նշաններ կ'լինին, արեգա-
կումն ու լուսնումը եւ աստղներումը, եւ երկ-
րումն հեթանոսների սաստիկ ահ եւ վախ ինչպէս
26 ծովի եւ խռովութեան ահաւոր ձայներից։ Որով-
հետեւ մարդկանց հոգիքը դուրս կ'գան վախի հա-
մար եւ այն բաներին մտիկ տալոյ համար՝ որ բո-
լոր աշխարհքի վերայ պիտի գան․ ինչու որ՝ երկն-
27 քի զօրութիւնները կ'շարժվին։ Եւ այն ժամանա-
կը կ'տեսնեն Որդին մարդոյ ամպերի վերայ եկած
28 զօրութենով եւ շատ փառքով։ Եւ երբոր այս բա-
ները կ'սկսեն լինել՝ վե՛ր առէք եւ բարձրացրէ՛ք
ձեր գլխներդ․ ինչու որ՝ ձեր փրկութիւնը մօտ է։
29 Եւ նորանց մին առակ ասաց․ Տեսէ՛ք թզի ծա-
30 ռըն ու ամեն ծառերը․ Երբոր իրենց պտուղն ե-
րեւացնումեն՝ տեսնումէք եւ նորանցից ճանաչում-
31 էք, թէ ամառը մօտ է։ Այնպէս էլ դուք՝ երբոր
այս ամեն բաներս էլած տեսնէք՝ գիտացէ՛ք, որ
32 Աստուծոյ արքայութիւնը մօտ է։ Ճշմարիտն ա-
սումեմ ձեզ՝ թէ Այս ազգս չի՛ անցանել, մինչեւ
33 որ՝ այս ամեն բաներս լինին։ Երկինքն եւ երկիրս
34 կանցանեն եւ իմ խօսքերս չեն անցանել։ Զգո՛յշ
կացէք անձներիդ՝ որ ձեր սրտերը չ'ծանրանան շա-
տակերութենով եւ արբեցութենով եւ աշխարհա-

կան հոգսերով, եւ այն օրը յանկարծ հասնէ ձեզ
35 վերայ. Ինչու որ՝ որոգայթի պէս կ'հասնէ այն ա-
մենին վերայ՝ որ բոլոր երկրին երեսին վերայ բնակ-
36 ված են։ Ուրեմն արթո՛ւն կացէք, ամեն ժամա-
նակ աղօ՛թք արէք, որ արժանի լինիք ազատվել
այն ամեն բաներից՝ որ պիտի լինին, եւ կանգնել
Որդու մարդու առաջին։
37 Եւ ցերեկը տաճարումը սովորցնումէր եւ գիշեր-
ները դուրս գալիս եւ կենում այն սարումն՝ որ Ձի-
38 թենեաց էր կոչվում։ Եւ ամեն ժողովուրդն առա-
ւօտանց շուտով գնումէր տաճարը նորա մօտ՝ որ
նորանից բան լսէ։

ԳԼ. ԻԲ

Մատնիչ Յուդան. պասեքն ու ընթրիքը. աշակերտաց փառասիրութիւնը. Քրիստոսի չարչարանքը պարտէզին մէջ և Կայիափայի մօտ. Պետրոսին ուրանալը։

1 Բաղարջակերաց տօնը մօտեցաւ՝ որ Պասքա էր
2 կոչվում։ Եւ քահանայապետներն ու կարդացօղնե-
րը խնդրումէին՝ թէ ինչպէս սպանեն նորան. բայց
ժողովրդից վախենումէին։
3 Ապա սատանան մտաւ Իսկարիովտացի ասած Յու-
4 դային մէջ որ տասներկուսի թւիցն էր։ Նա գը-
նաց քահանայապետներին ու կարդացօղներին եւ
ժողովրդի իշխաններին հետ խօսք կապեց՝ որ նորան
5 մատնէ նորանց։ Եւ նորանք ուրախացան եւ խոս-
6 տացան՝ որ արծաթ տան նորան։ Եւ նա խօսք
տուաւ եւ յարմար ժամանակ էր ուզում՝ որ նո-

րան ամբոխից հեռու գտած մատնէ նորանց։
7 Բաղարջակերաց օրն եկաւ՝ որ օրէնք էր պասեքը
8 նորանում մորթել։ Եւ Պետրոսին եւ Յօհաննէսին
ուղարկեց եւ ասաց. Գնացէք պասեքը պատրաս-
9 տեցէք մեզ համար որ ուտենք։ Եւ նորանք ասա-
ցին. Ի՞նչ տեղ ես կամենում՝ որ պատրաստենք։
10 Եւ նորանց ասաց. Ահա՛ երբոր քաղաքը կ'մտնէք՝
մին մարդ կ'պատահի ձեզ ջրի կուժը վերկալած.
նորան ետեւէն գնացէ՛ք այն տունն՝ որ նա կ'մըտ-
11 նէ. Եւ այն տան տիրոջն ասացէ՛ք. Վարդապետն
ասումէ քեզ՝ թէ Ո՞ւր է իմ վեր գալոյ տեղն՝ որ
նորանում պասեքն ուտեմ իմ աշակերտներիս
12 հետ։ Եւ նա մին մեծ զարդարված վերնատուն
13 ցոյց կ'տայ ձեզ, եւ այնտեղ պատրաստեցէ՛ք։ Եւ
գնացին այնպէս գտին՝ ինչպէս որ ասաց նորանց.
եւ պասեքը պատրաստեցին։
14 Եւ ժամն որ էլաւ՝ սեղան նստեց. եւ տասներկու
15 առաքեալներն էլ նորա հետ։ Եւ նորանց ասաց.
Ցանկանալով ցանկացայ՝ որ այս պասեքս ձեզ հետ
16 ուտեմ՝ իմ չարչարվելուցս առաջ։ Բայց ասումեմ
ձեզ՝ թէ սորանից էլ չեմ ուտիլ՝ մինչեւ որ՝ կա-
17 տարվի Աստուծոյ արքայութենումը։ Եւ բաժակն
առաւ՝ գոհացաւ եւ ասաց. Առէ՛ք դորան եւ ձեր
18 միջումը բաժանեցէ՛ք։ Ասումեմ ձեզ՝ թէ, Սորա-
նից ետեւ որթի բերքից չեմ խմիլ՝ մինչեւ որ՝ Աս-
տուծոյ արքայութիւնը գայ,
19 Եւ հաց առաւ, գոհացաւ, կտրեց եւ նորանց
տուաւ եւ ասաց. Սա՛ է իմ մարմինս՝ որ շատե-
րին համար տվվումէ. սա արէ՛ք իմ յիշատակիս
20 համար։ Այնպէս էլ ընթրիքից ետեւ բաժակն

առաւ, եւ ասաց. Այս բաժակս Նոր ուխտ եւ
պայման է իմ արիւնովս՝ որ ձեզ համար թափ-
վում է։
21 Բայց ահա՛ իմ մատնողիս ձեռքն ինձ հետ այս
22 սեղանումն է։ Եւ Որդին մարդոյ կ'գնայ ինչպէս
որ սահմանված է. բայց վա՛յ այն մարդոյն՝ որ նո-
23 րա ձեռովը կ'մատնուի։ Եւ նորանք սկսեցին հար-
ցընել իրենց մէջին՝ թէ իրենցից ո՞վ է նա՝ որ պի-
տի այն բանը գործէ։
24 Նորանց միջումը հակառակութիւն էլ էլաւ՝ թէ
25 իրենցից ո՞վ պիտի մեծ համարվի։ Եւ նա ասաց
նորանց. Ազգերին թագաւորները տիրապետում են
նորանց վերայ, եւ նորանք՝ որ իշխանութիւն են
26 անում նորանց վերայ՝ բարերար են կոչվում։ Բայց
դուք այնպէս չէ՛. այլ ով որ ձեր միջումը մեծ է՝
թո՛ղ փոքրի պէս լինի, եւ առաջնորդը ծառայի
27 պէս։ Ո՞վ է մեծ, սեղան նստողը՝ թէ ծառան.
չէ՞ որ սեղան նստողը. բայց ես՝ ձեր միջումը ծա-
28 ռայի պէս եմ։ Եւ դուք էք, որ միշտ ինձ հետ
29 էիք իմ փորձութիւններումս։ Եւ ես հաստատ
խոստանում եմ ձեզ արքայութիւնը՝ ինչպէս որ
30 Հայրն էլ ինձ հաստատ խոստացաւ. Որ ուտէք եւ
խմէք իմ սեղանիս վերայ իմ արքայութեանումս,
եւ տասներկու աթոռի վերայ նստիք՝ Իսրայէլի
տասներկու ցեղին դատաստան անելոյ համար։
31 Եւ Տէրն ասաց. Սի՛մոն Սի՛մոն. ահա՛ սատա-
32 նան ուզեց՝ որ ձեզ խախալէ ցորենի պէս. Բայց
ես աղաչեցի քեզ համար՝ որ քո հաւատքդ չ'պա-
կասի. եւ դու մին ժամանակ դառնաս եւ քո
33 եղբարներդ հաստատես։ Եւ նա ասաց նորան. Տէ՛ր,

ես պատրաստ եմ՝ որ քեզ հետ էլ բանտի եւ
34 մահի մէջ էլ գնամ։ Եւ նա ասաց նորան. Ա-
սում եմ քեզ Պետրէ՛, որ այսօր դեռ հաւը չ'խօ-
սած, դու երեք անգամ կուրանաս չ'գիտել ինձ։
35 Եւ նորանց ասաց. Երբոր ուղարկեցի ձեզ ա-
ռանց քսակի, եւ պարկի եւ կօշիկների՝ միթէ կա-
36 րօտացա՞ք մին բանի։ Եւ նորանք ասացին. Բնաւ
մին բանի էլ ոչ. ապա ասաց. բայց հիմիկ ով որ
քսակ ունի, թո՛ղ վեր առնէ, այնպէս էլ պարկը,
եւ ով որ չունի՝ թո՛ղ իրեն շորերը ծախէ եւ ի-
37 րեն համար սուր գնէ։ Բայց ասում եմ ձեզ, թէ
սա էլ որ գրված է, պէտք է կատարվի ինձանում՝
թէ, Անօրէններին հետ համարվեցաւ. պատճառն-
որ՝ ինչ որ ինձ համար ասված է՝ գլուխ է եկած։
38 Եւ նորանք ասացին. Տէ՛ր՝ ահա՛ այստեղ երկու
սուր կայ. եւ նա ասաց նորանց. Բաւական են։
39 Եւ դուրս էլաւ իրեն սովորութեան պէս գնաց
Ձիթենեաց սարը՝ աշակերտներն էլ նորա ետեւէն
40 գնացին։ Երբոր այնտեղը հասաւ՝ նորանց ասաց.
41 Աղօ՛թք արէք՝ որ փորձութեան մէջ չ'մտնէք։ Եւ
ինքը նորանցից հեռացաւ մին քար ձգելոյ չափով
42 ծունր դրաւ՝ աղօթք էր անում. Եւ ասում. Հա՛յր
եթէ կամենում ես՝ այս բաժակս անցուցրո՛ւ ինձա-
նից. միայն թէ՝ ո՛չ իմ կամքս՝ բայց քո կամքդ լի-
43 նի։ Եւ հրեշտակ երեւեցաւ նորան երկնքից, եւ
զօրացնում էր նորան, եւ մեռնելոյ չափ խռովու-
թեան մէջ էր, եւ աւելի ջանքով աղօթք էր ա-
44 նում։ Եւ քրտունքը վազում էր նորանից, ինչպէս
արիւնի կաթիլք՝ որ կլոր կլոր երկրի վերայ էին
թափվում։

45 Եւ աղօթքից վե՛ր կացաւ՝ եկաւ աշակերտներին
մօտ, եւ նորանց քնի մէջ գտաւ տրտմութեան
46 պատճառով. Եւ նորանց ասաց. ինչո՞ւ էք քը-
նում. վե՛ր կացէք աղօթք արէ՛ք, որ փորձութեան
մէջ չ'մտնէք:
47 Եւ դեռ որ խօսումէր՝ ահա՛ ամբոխ, եւ նա որ
Յուդա էր կոչվում՝ այն տասներկուսից մինն՝ ա-
ռաջնորդումէր նորանց. երբոր մօտեցաւ Յիսուսին՝
համբուրեց նորան. պատճառնոր՝ նա նշան էր տը-
ւել նորանց, թէ որին որ ես կ'համբուրեմ՝ նա՛
48 է՝ նորան բռնեցէ՛ք: Յիսուս նորան ասաց. Յու-
դա՛՝ համբուրելո՞վ ես Որդին մարդոյ մատնում:
49 Երբոր նորանք՝ որ նորա հետն էին՝ տեսին ինչ
որ էլաւ՝ նորան ասացին. Տէ՛ր սրով զարկե՞նք նո-
50 րանց: Եւ նորանցից մինը քահանայապետին ծա-
51 ռային զարկեց՝ եւ նորան աջ ականջը կտրեց: Յի-
սուս պատասխան տուաւ եւ ասաց. Թո՛ղ տուէք
մինչեւ այդ տեղդ. եւ ականջին մօտեցաւ եւ բը-
52 ժշկեց նորան: Եւ իրեն վերայ եկածներին՝ քահա-
նայապետներին ու տաճարի իշխաններին եւ ծերե-
րին ասաց. Ինչպէս մին աւազակի վերայ դուրս ե-
53 կիք սրերով եւ բհրերով: Ամէն օր ձեզ հետ էի
տաճարումը. եւ չէք ձեռները չ'ձգեցիք ինձ վերայ.
սա ձեր ժամն է եւ խաւարի իշխանութիւնը:
54 Եւ նորան բռնեցին տարան եւ մտցրին քահա-
նայապետին տունը. եւ Պետրոս հեռուանց գնում-
55 էր նորան ետեւէն: Երբոր սրահին մէջ կրակ վա-
ռեցին եւ չորս կողմով նստեցին, Պետրոսն էլ նըս-
56 տեց նորանց միջումը: Մին աղախին տեսաւ նո-
րան՝ որ լուսոյ մօտ նստած էր. մտիկ տուաւ նո-

րան եւ ասաց. Սա՛ էլ նորանց հետ էր՝ որ նորա
57 հետն էին: Բայց Պետրոս ուրացաւ եւ ասաց. Ո՛վ
58 կին. ես նորան չե՛մ գիտում: Եւ մին քիչ յե-
տոյ մին ուրիշը տեսաւ նորան եւ ասաց. Դո՛ւ էլ
նորանցից ես. Եւ Պետրոս ասաց. Ո՛վ մարդ՝ ես
59 նորանցից չե՛մ: Եւ երբոր մին ժամ վերայ ան-
ցաւ՝ մին ուրիշը հաստատումէր եւ ասում, Ճըշ-
մարիտ, որ սա՛ էլ նորան հետն էր. ինչուոր՝ Գալի-
60 լեացի է: Պետրոս ասաց. Ո՛վ մարդ՝ չեմ գի-
տում թէ դու ի՛նչ ես խօսում. եւ իսկ այն ժա-
մու՛ն դեռ որ նա այն բանը ասումէր՝ հաւը խօսեց:
61 Տէրն դարձաւ եւ մտիկ տուաւ Պետրոսին, եւ
Պետրոսը միտքը բերաւ Տէրի այն խօսքն որ ասաց
նորան, թէ Հաւը դեռ չ'խօսած, երեք անգամ
62 կուրանաս՝ չ'գիտել ինձ: Եւ դուրս գնաց եւ դա-
ռըն արտասունքով լաց էլաւ:
63 Եւ մարդիկն՝ որ նորան պահումէին՝ ծաղր
64 էին անում նորան եւ զարկում: Նորան երեսը
ծածկում եւ չարչարումէին, եւ նորան հարցնում
էին եւ ասում. Մարգարէացի՛ր՝ ո՞վ է նա՝ որ
65 քեզ զարկեց: Եւ էլ ուրիշ շատ բաներ հայհո-
յանքով խօսումէին նորա դէմ:
66 Եւ երբոր առաւօտ էլաւ՝ ժողովրդի ծերերն ու
քահանայապետներն ու կարդացողները ժողովվե-
ցան, եւ նորան հանեցին տարան իրենց ատեանը՝
եւ ասացին. Թէ որ դու Քրիստոսն ես, ասա՛ մեզ:
67 Նորանց ասաց. Թէ որ ասեմ ձեզ, այնպէս էլ
68 դուք չէ՛ք հաւատալ: Եւ թէ որ մին բան հարցը-
նեմ ձեզ, ինձ պատասխան չէ՛ք տալ կամ արձա-
69 կիլ: Բայց սորանից ետեւ Որդին մարդոյ՝ Աստու-

70 ծոյ զօրութեան աջ կողմը կ՚նստի ։ Եւ ամենքն ա-
սացին . Ուրեմն դո՞ւ ես Աստուծոյ Որդին . եւ նա
71 ասաց նորանց . Դուք էք ասում, որ ես եմ ։ Եւ
նորանք ասացին . Էլ ի՞նչ պէտք է մեզ վկայու-
թիւն , ինչուոր՝ իսկ մենք ինքս լսեցինք դորա բե-
րանիցը ։

ԳԼ. ԻԳ

Քրիստոսի չարչարանքը Պիղատոսի ու Հերովդէսի մօտ . խաչվիլը , մահն ու թաղումը ։

1 Եւ նորանց ամեն բազմութիւնը վերկացաւ՝ եւ նո-
2 րան տարին Պիղատոսի մօտ , Եւ սկսեցին չարախօ-
սութիւն անել նորանից եւ ասել . Սորան գտինք՝
որ մեր ազգին ծռում եւ արգելումէր կայսերին
հարկ տալուցը . եւ ինքն իրեն համար ասում՝ թէ
3 Քրիստոս թագաւորն է ։ Բայց Պիղատոս հարցրուց
նորան եւ ասաց . Դո՞ւ ես Հրէից թագաւորը . Նա
պատասխան տուաւ եւ նորան ասաց . Դու ասա-
4 ցիր ։ Պիղատոս ասաց քահանայապետներին ու ժո-
ղովրդին . Ես մին փաստ չե՛մ գտնում այս մար-
5 դումս . Եւ նորանք սաստկացնումէին եւ ասում .
թէ ժողովուրդները խռովացնումէ , եւ բոլոր Հը-
րէաստանին մէջ սովորցնում՝ Գալիլեայից սկսած
6 մինչեւ այստեղս ։ Բայց Պիղատոսն երբոր Գալի-
լեայի համար լսեց , հարցրուց՝ եթէ այդ մարդդ
7 Գալիլեացի՞ է ։ Եւ երբոր իմացաւ՝ թէ Հերովդէսի
իշխանութենից է . տանիլ տուաւ նորան Հերո-
դէսին մօտ . ինչուոր՝ նա էլ այն օրերը Երուսաղէ-
մումն էր ։

8 Եւ Հերովդէսն՝ երբոր Յիսուսին տեսաւ՝ շատ ու-
րա՛խ եղաւ . ինչուոր՝ շատ ժամանակից ետեւ ցան-
կանումէր տեսանել նորան . պատճառնոր՝ շատ ան-
գամ նորա համար լսումէր , եւ սպասումէր՝ որ մին
9 նշան տեսնէ նորանից եղած ։ Շատ խօսքերով հարց-
նումէր նորան՝ եւ նա ոչ մին պատասխան չ՚տու-
10 վաւ նորան ։ Քահանայապետներն ու կարդացողնե-
րը կանգնած էին՝ եւ շատ սաստիկ չարախօսումէին
11 նորանից ։ Հերովդէսն էլ իրեն զինուորներին հետ ա-
նարգեց նորան . եւ ծաղր անելով մին սպիտակ շոր
ձգեց նորա վերայ , եւ յետ տանիլ տուաւ Պիղա-
12 տոսի մօտ ։ Եւ Պիղատոս ու Հերովդէս բարեկամ
եղան այն օրը . ինչուոր՝ առաջ իրար հետ թշնա-
մի էին ։
13 Պիղատոս կանչեց քահանայապետներին ու իշ-
14 խաններին եւ ժողովրդին . Եւ նորանց ասաց . Դուք
ինձ մօտ բերիք այս մարդս ինչպէս ժողովրդի մոլո-
րացնող . եւ ահա՛ ձեր առաջին դատեցի՝ եւ մին
փաստ չ՚գտի այս մարդումս այն բաներին համար ,
15 որ դուք չարախօսեցիք դորանից ։ Եւ ո՛չ էլ Հերո-
դէսը . ինչուոր՝ դորան տանիլ տուի նորա մօտ .
եւ ահա՛ բնաւ մեռնելոյ արժանի բան չի գործել
16 դա ։ Կ՚խրատեմ դորան՝ եւ կարձակեմ ։ (17) Պատ-
ճառնոր՝ տօնին ժամանակին հարկաւոր էր՝ որ մին
18 մարդ արձակէ նորանց համար . Եւ նորանք ամեն
բազմութենովն աղաղակումէին եւ ասում . Դորան
վե՛ր առ՝ եւ Բարաբբային արձակէ՛ մեզ համար .
19 Որ նա քաղաքումն եղած խռովութեան եւ մար-
20 դասպանութեան համար բանտն էր մտել ։ Պիղա-
տոս նորէն սկսեց խօսիլ . ինչուոր՝ կամենումէր ար-

21 ձակել Յիսուսին ։ Եւ նորանք նորէն աղաղակում
22 էին եւ ասում. Խա՛չ հանէ դորան ։ Եւ նա երեք
անգամ ասաց նորանց . Ի՞նչ չար բան գործեց սա.
բնաւ մեռնելոյ վնաս չ'գտի սորանում. կ'խրատեմ
23 սորան եւ կարձակեմ ։ Եւ նորանք բարձր ձայնով
ստիպում եւ խնդրումէին՝ որ խաչ հանէ նորան .
եւ նորանց ու քահանայապետներին աղաղակները
24 զօրանումէր ։ Եւ Պիղատոս հաւանեցաւ՝ որ նորանց
25 խնդիրքն անէ ։ Բարաբբային արձակեց նորանց հա-
մար՝ որ խռովութեան եւ մարդասպանութեան հա-
մար բանտի մէջ էր ձգված . որ նորանք էլ իսկ
նորան էին խնդրում. եւ Յիսուսին մատնեց նո-
րանց կամացը ։
26 Երբոր նորան առին գնացին , մին մարդ՝ Սիմօն
Կիւրենացի բռնեցին՝ որ յանդիցն էր գալիս . խա-
չը նորա վերայ դրին , որ Յիսուսին ետեւէն բերէ ։
27 Եւ շատ ժողովուրդ էր գնում նորա ետեւէն . եւ
կանայք էլ՝ որ կոծ եւ սուգ էին անում նորա վե-
28 րայ ։ Յիսուս դարձաւ եւ նորանց ասաց . Երուսա-
ղէմի՛ աղջիկներ՝ լաց մի՛ լինիք ինձ վերայ՝ այլ լա՛ց
29 էլէք ձեր անձներիդ եւ ձեր որդոց վերայ ։ Ինչու
որ՝ օրեր կ'գան՝ որ նորանցում կասեն՝ թէ Երանի՜
ամուլներին եւ այն փորերին , որ չ'ծնան , եւ այն
30 ծծերին , որ չ'ծծացրին ։ Այն ժամանակը կ'սկսեն
ասել սարերին՝ թէ , Մեզ վերայ ընկէ՛ք , եւ բլ-
31 լուրներին՝ թէ , Ծածկեցէ՛ք մեզ ։ Ինչու որ՝ եթէ
կանանչ փայտին սա են անում , ապա չորին ի՞նչ
կ'լինի ։
32 Ուրիշ երկու չարագործ մարդիկ էլ տարան , որ
33 նորա հետ սպանեն ։ Երբոր եկին այնտեղն՝ որ Գա-

գաթն էր կոչվում , այնտեղ խաչ հանեցին նորան.
եւ այն չարագործներն էլ , մինը աջ կողմն ու մի-
34 սը ձախ կողմը խաչեցին ։ Եւ Յիսուս ասաց . Հա՛յր
թողութի՛ւն տուր դորանց . ինչու որ՝ չե՛ն գիտում
թէ ինչ են անում. եւ երբոր նորա շորերը բաժա-
35 նումէին , վիճակ ձգեցին ։ Եւ ժողովուրդը կանգ-
նած նայումէին , իշխանները նորանց հետ ծաղր
էին անում՝ եւ ասում. ուրիշներին ապրեցրուց՝
թո՛ղ իրեն անձն էլ ապրեցնէ՝ եթէ դա է Քրիս-
36 տոսն , Աստուծոյ ընտրված Որդին ։ Զինուորներն
էլ ծաղր էին անում նորան . եւ մօտ գալով քա-
37 ցախ էին տալիս նորան . Եւ ասում. Թէ որ դու
38 Հրէից թագաւորն ես՝ փրկէ՛ քո անձդ ։ Եւ գիր
էր գրված նորա վերայ , Յունարէն , Լատիներէն
եւ Եբրայեցերէն գրով , թէ Սա՛ է Հրէից թագա-
ւորը ։
39 Եւ այն կախված չարագործներից մինը հայհոյ-
ումէր նորան եւ ասում. Չէ՞ որ դու ես Քրիս-
40 տոսը . փրկէ՛ քո անձդ եւ մեզ էլ ։ Նորա ընկերը
պատասխան տուաւ սաստելով նորան՝ եւ ասաց .
Չե՞ս վախենում դու Աստուածանից , որ դու ճիշտ
41 այն պատժին մէջն ես ։ Եւ մենք իրաւունքով .
ինչու որ՝ մեր արած գործքերին արժանի հատու-
ցումն ենք առնում. եւ սա մին անիրաւ բան չը
42 գործեց ։ Եւ Յիսուսին ասաց . Տէ՛ր՝ ինձ յիշէ՛
43 երբոր քո թագաւորութենովդ գաս ։ Եւ Յիսուս
ասաց նորան . Ճշմարիտ ասումեմ քեզ , թէ այս
օր ինձ հետ դրախտումը կ'լինիս ։
44 Եւ վեց ժամին դէմ էր . եւ ամեն երկրի վերայ
խաւար էլաւ մինչեւ ինը ժամը . արեգակը խաւար-

45 վեցաւ ։ Եւ տաճարի վարագուրը միջիցը պատառ-
46 վեցաւ ։ Եւ Յիսուս մեծ ձայնով կանչեց եւ ա-
սաց ․ Հա՛յր՝ իմ հոգիս քո ձեռքդ եմ աւան-
դում ․ երբոր սա ասաց ․ հոգին հանեց ։
47 Եւ հարիւրապետն՝ որ տեսաւ ինչ որ եղաւ, Ա-
ստուծոյն փառք տուաւ եւ ասաց ․ Ճիտա՛կ որ՝ այս
48 մարդս արդար էր ։ Եւ ամեն ժողովուրդները, որ
եկել էին եւ այն եղած բաները տեսնումէին,
49 կուրծքերը թակումէին՝ եւ յետ դառնում ։ Նո-
րան ամեն ծանօթներն էլ հեռուանց կանգնած
էին, եւ այն կանայքն էլ, որ Գալիլեայիցը նորա
50 ետեւէն էին եկել՝ եւ տեսնումէին այն բաները ։ Եւ
ահա՛ մին մարդ՝ Յօսէփ անուն՝ որ իշխան էր՝ բա-
51 րեգործ եւ արդար մարդ ։ Սա չէ՛ր միաբանվել
նորանց խորհուրդին եւ գործքերին հետ ․ Հրեանե-
րի Արիմաթիա քաղաքիցը որ իսկ ինքն էլ սպա-
52 սումէր Աստուծոյ արքայութեանը ։ Սա գնաց Պի-
53 ղատոսին մօտ եւ Յիսուսին մարմինը խնդրեց ։ Եւ
վէրբերաւ նորան ազնիւ կտաւով պատեց, եւ քա-
րից փորած գերեզմանի մէջ դրաւ՝ որ այն տեղ
54 էլ ոչ մին մարդ դրած չէր ։ Եւ օրն ուրբաթ էր՝
եւ շաբաթ էր լուսանում ։
55 Եւ այն կանայքն՝ որ Գալիլեայիցը նորա հետ էին
եկել՝ գնումէին նորան ետեւէն, տեսին գերեզմա-
56 նը եւ թէ ինչպէս դրվաւ նորա մարմինը ։ Յետ
դարձան՝ եւ խնկեր եւ իւղեր պատրաստեցին ․ եւ
շաբաթ օրը հանգարտ մնացին պատուիրանքին
պատճառովը ։

ԳԼ․ ԻԴ

Քրիստոսի յարութիւնը, երեւանալը և համբարձումը ։

1 Բայց մէկ շաբթի օրն առաւօտանց կանուխ եկին
գերեզմանը, եւ բերին այն խնկերը, որ պատրաս-
2 տեցին ․ եւ ուրիշ կանայք էլ նորանց հետ ։ Եւ
քարը գերեզմանիցը հեռու թաւալեցրած գտին ։
3 Եւ ներս մտին եւ Տէր Յիսուսին մարմինը չ՛գտի՛ն ։
4 Եւ երբոր նորահամար շատ զարմանումէին՝ ահա՛
5 երկու մարդ հասին նորանց լուսաւոր շորերով ։ Եւ
երբոր ահով լցվան, եւ իրանց երեսները դէպի
երկիրը խոնարհացրին, նորանց ասացին ․ Ինչո՞ւ
6 էք կենդանին մեռելներին մէջ խնդրում ։ Այստեղ
չէ՛, բայց յարութիւն առաւ ․ մտքներդ բերէ՛ք՝
ինչպէս որ ձեզ հետ խօսեց՝ երբոր Գալիլեայումն
7 էր ․ Եւ ասումէր, թէ Պէտք է որ Որդին մարդոյ
մեղաւոր մարդկանց ձեռքը մտնիլ՝ եւ խաչ հան-
8 վիլ՝ եւ երեք օրումն յարութիւն առնէ ։ Եւ նորա
9 խօսքերը յիշեցին ։ Եւ յետ դարձան եւ այս ա-
մեն բաները պատմեցին տասնումէկին եւ ամեն ու-
10 րիշներին ։ Եւ նորանք էին Մարիամ Մագդաղենա-
ցին, եւ Յօհաննան, եւ Յակոբայ Մարիամը, եւ
նորանց հետ ուրիշներն էլ՝ որ այս բանս պատմե-
11 ցին առաքեալներին ։ Եւ նորանց ասածներն ա-
ռասպելական խօսքեր երեւեցաւ նորանց առաջին՝
12 եւ չէին հաւատում նորանց ։ Բայց Պետրոս վեր-
կացաւ վազեց գերեզմանին, եւ նայելով տեսաւ՝
որ կտաւները մինակ կային ․ եւ գնաց զարմանա-
լով իրեն մտքումը, թէ ի՛նչ եղաւ ։

13 Եւ ահա՛ նորանցից երկու հոգի իսկ այն օրը
մին գիւղ էին գնում՝ որ վաթսուն ասպարիզով
Երուսաղէմից հեռու էր, եւ նորա անունն Էմ-
14 մաւուս էր ։ Եւ նորանք իրար հետ խօսումէին այն
15 ամեն անցած բաներին համար ։ Եւ եղաւ երբոր
նորանք խօսում եւ հակառակումէին՝ իսկ Յիսուս
16 ինքն էլ մօտեցաւ՝ եւ գնումէր նորանց հետ ։ Եւ
նորանց աչքերը բռնված էին՝ որ չ՚ճանաչին նորան ։
17 Եւ նորանց ասաց. Դա ի՞նչ խօսքեր են՝ որ դո-
րանց համար իրար հետ հակառակումէք գնալու
18 ժամանակը, եւ տրտմած էք ։ Պատասխան տուաւ
նորանցից մինը, որ նորա անունը Կղէօպաս էր, եւ
ասաց նորան. Միթէ Երուսաղէմումը մենա՞կ դու
ես մնացել՝ որ չիմացար այն բանն, որ այս օրերս
19 գործվեցաւ նորանում ։ Եւ նա ասաց նորանց.
Ի՞նչ. եւ նորանք ասացին. Յիսուս Նազօրեցու հա-
մար՝ որ մին մարգարէ մարդ էր, զօրաւոր գործ-
քերով եւ խօսքերով Աստուծոյ եւ ամեն ժողո-
20 վրդի առաջին ։ Թէ ինչպէս մեր քահանայապետ-
ներն ու իշխանները մահի դատաստանին մատնեցին
21 նորան՝ եւ խաչ հանեցին նորան ։ Մենք յոյս ու-
նէինք թէ նա է՝ որ Իսրայէլին պիտի փրկէ. բայց
այս ամենիս վերայ, սա երեք օր է՝ որ այն բանը
22 գործվեցաւ ։ Եւ մեր միջից էլ մին քանի կանայք
զարմացրին մեզ. որ առաւօտանց կանուխ գնացին
23 գերեզմանը ։ Եւ նորա մարմինը չ՚գտին, եկին եւ
ասացին. թէ հրեշտակների տեսիլք էլ տեսին՝ որ
24 նորա համար ասումէին՝ թէ կենդանի է ։ Եւ մե-
զանից մին քանիսը գնացին գերեզմանը՝ եւ ճիշտ
այնպէս գտին, ինչպէս որ կանայքն ասացին, բայց

25 նորան չ՚տեսին ։ Եւ նա ասաց նորանց. Ո՛վ ան-
միտներ եւ թուլասիրտներ հաւատալու ամեն բա-
26 ներին՝ որ մարգարէները խօսեցին ։ Չէ՞ որ պէտք
էր՝ որ ճիշտ այնպէս չարչարվի Քրիստոսը, եւ ի-
27 րեն փառքը մտնէ. Եւ սկսեց Մովսէսից ու ամեն
մարգարէներից, մեկնումէր նորանց՝ ամեն ինչ որ
28 գրված էր իրեն համար ։ Երբոր մօտեցան այն գիւ-
ղին, որ գնումէին՝ նա այնպէս էր ցոյց տալիս՝ թէ
29 մին աւելի հեռու տեղ է գնալու ։ Եւ բռնադա-
տեցին նորան եւ ասացին, Մեզ մօտ մնա՛, ինչու
որ՝ իրիկուն է եւ օրս անցել է եւ մտաւ որ նո-
30 րանց հետ այնտեղ մնայ ։ Եւ եղաւ երբոր նա նո-
րանց հետ սեղան նստեց, հացն առաւ՝ օրհնեց,
31 կտրեց ու տուաւ նորանց ։ Եւ նորանց աչքերը
բացվան՝ եւ նորան ճանաչեցին. եւ նա աներեւոյթ
32 եղաւ նորանցից ։ Եւ իրար ասացին. Չէ՞ որ իսկ
մեր սրտերը հալվումէին մեզանում՝ երբոր ճանա-
պարհումը մեզ հետ խօսումէր, եւ ինչպէս գրքերը
բանումէր մեզ համար ։
33 Եւ շուտով վերկացան՝ յետ դարձան Երուսա-
ղէմ, եւ այն տասնումինին ժողոված գտին, եւ
34 նորանց էլ՝ որ նորանց հետ էին ։ Եւ ասացին. Թէ
Իրաւի՛ որ՝ Տէրը յարութիւն առաւ՝ եւ երեւեցաւ
35 Սիմօնին ։ Եւ նորանք պատմումէին նա՝ որ ճանա-
պարհումն եղաւ, եւ թէ ինչպէս իրեն ճանաչաց-
րուց իրենց հաց կտրելու ժամանակը ։
36 Դեռ քանի որ սա խօսումէին, իսկ ինքը Յիսուս
կանգնեց նորանց միջումն ու նորանց ասաց. Խա-
37 ղաղութիւն ձեզ հետ՝ ես եմ. մի՛ վախենաք ։ Եւ
ահով լցված վախեցան, եւ համարումէին՝ թէ

38 հոգի են տեսնում։ Եւ նորանց ասաց․ ինչո՞ւ էք
շփոթված՝ ինչո՞ւ համար խորհուրդներ են վերկե-
39 նում ձեր սրտերումը։ Տեսէ՛ք իմ ձեռներս եւ ոտ-
քերս որ իսկ ես նա եմ՝ բռնեցէ՛ք ինձ եւ տեսէ՛ք․
ինչու որ՝ հոգին մարմին եւ ոսկերք չունի, ինչպէ՛ս
40 որ ինձ տեսնումէք որ ունիմ։ Եւ սա որ ասաց,
41 ձեռքերն ու ոտքերը ցոյց տուաւ նորանց։ Եւ դեռ
քանի որ չէին հաւատում ուրախութենիցը եւ
զարմացած էին․ նորանց ասաց․ Կերակուր բան
42 ունի՞ք այստեղ։ Եւ նորանք խորոված ձկան կտոր
43 տուին նորան՝ եւ մեղրի հացի կտոր։ Եւ առաւ
կերաւ նորանց առաջին, եւ աւելցածները տուաւ
44 նորանց։ Եւ ասաց նորանց․ Սա այն բաներն են՝
որ ձեզ հետ խօսեցի՝ քանի որ ձեզ հետ էի, թէ,
Ամենը պէտք է կատարվի՝ որ Մօսէսի օրէնքումն
ու մարգարէներումը եւ սաղմոսներումը ինձ համար
45 գրված է։ Այն ժամանակը նորանց մտքները բա-
46 ցաւ՝ որ գրքերն իմանան։ Եւ նորանց ասաց․ թէ
Այսպէս պէտք էր, որ Քրիստոսը չարչարվի՝ եւ ե-
րեք օրումը մեռելների միջից յարութիւն առնէ․
47 Եւ նորա անունովը ապաշխարութիւն եւ մեղաց
թողութիւն քարոզվի ամեն ազգերի միջումն՝ Երու-
48 սաղէմից սկսած։ Եւ դուք էք էս բաներիս հա-
49 մար վկայ։ Եւ ահա՛ ես իմ Հօրս աւետիքը կու-
ղարկեմ ձեզ վերայ․ եւ դուք նստեցէ՛ք Երուսա-
ղէմ քաղաքումն՝ մինչեւ վերեւիցը զօրութիւն
հագնիք։
50 Եւ նորանց հանեց մինչեւ Բեթանիա․ եւ իրեն
51 ձեռները բարձրացրուց եւ նորանց օրհնեց։ Եւ ե-
ղաւ՝ դեռ որ նա օրհնումէր նորանց՝ հեռացաւ նո-

52 րանցից, եւ դէպի երկինքը վերանումէր։ Եւ նո-
րանք երկրպագութիւն արին նորան, եւ մեծ ու-
53 րախութենով յետ դարձան Երուսաղէմ։ Եւ ա-
մեն ժամանակ տաճարումն էին․ գովումէին եւ
օրհնումէին Աստուծոյն։

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ
ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մարմնացեալ բանը․ Յօհաննէս Մկրտիչը․ Յիսուսի առաջին աշակերտքը։

1 ՍԿԶԲՈՒՄՆ էր Բանը․ և Բանն Աստուծոյ մօտ
2 էր․ և Բանն Աստուած էր։ Նա սկզբումն Աս-
3 տուծոյ մօտ էր։ Ամեն ինչ նորանով էլաւ, և ա-
ռանց նորան բնաւ ո՛չ ինչ չէլաւ, ինչ որ էլաւ։
4 Նորանով կեանքն էր, և կեանքը մարդկանց լոյսն
5 էր։ Եւ լոյսը խաւարումը լոյս էր տալիս, և խա-
ւարը՝ չիմացա՛ւ նորան։

6 Մին մարդ էլաւ Աստուածանից ուղարկված, որ
7 նորան անունը Յօհաննէս էր։ Սա վկայութեան
համար եկաւ, որ Լուսոյ համար վկայէ. որ ամեն-
8 քը նորանով հաւատան։ Նա չէր Լոյսը, բայց որ
Լուսոյն համար վկայէ։
9 Նա էր ճշմարիտ Լոյսը, որ ամեն մարդուն լու-
սաւոր է անում՝ որ այս աշխարհքս գալու է։
10 Աշխարհքումն էր, և աշխարհքը նորանով էլաւ,
11 և աշխարհքը չ՚ճանաչեց նորան։ Իրեններին մէջ
12 եկաւ, և իրենները չ՚ընդունեցին նորան։ Բայց նո-
րանք՝ որ նորան ընդունեցին՝ իշխանութիւն տուաւ
նորանց՝ որ Աստուծոյ որդիք լինին. նորանց որ
13 նորա անունին հաւատումեն, Որ նորանք ո՛չ ար-
իւնից և ո՛չ մարմնոյ կամքից, և ո՛չ մարդոյ կամ-
14 քից, բայց Աստուածանից ծնվան։ Եւ Բանը մար-
մին էլաւ՝ և մեր միջումը բնակվեցաւ. և նորա
փառքը տեսինք ինչպէս Հօրից էլած միածին Որ-
դոյ փառքը. շնորհքով՝ և ճշմարտութենով լիքն։
15 Յօհաննէս վկայումէ նորա համար. աղաղակեց և
ասաց, Սա՛ է՝ որ սորա համար ասումէի, թէ Նա
որ ինձանից ետեւ գալու էր, ինձանից առաջ է-
16 լաւ. ինչուոր՝ Նա ինձանից առաջ էր. Ինչուոր՝
նորա լիութենիցը մենք ամենքս շնորհք առինք շը-
17 նորհքի տեղ։ Պատճառնոր՝ օրէնքը Մոսէսի ձեռ-
քովը տվվաւ. շնորհքն ու ճշմարտութիւնը Յիսու-
18 սի Քրիստոսի ձեռքովն էլաւ։ Ո՛չ ով չի տեսաւ
Աստուծոյն բնաւ մին ժամանակ, բայց միածին
Որդին՝ որ Հօր ծոցումն է՝ նա պատմեց։
19 Եւ սա է Յօհաննէսի վկայութիւնը, երբոր Հը-
րէաներն Երուսաղէմիցը քահանաներ և Ղեւտա-

ցիներ ուղարկեցին նորա մօտ՝ որ հարցնեն նորան՝
20 թէ Դու ո՞վ ես։ Եւ խոստովանեցաւ՝ թէ Ես չե՛մ
21 Քրիստոսը։ Եւ նորան հարցրին. Ապա դու ո՞վ
ես. միթէ Եղիա՞ն ես. եւ ասաց. Չեմ. Ապա
մարգարէ՞ն ես դու. պատասխան տուաւ՝ թէ Չէ՛։
22 Ապա ասա՛ մեզ, Դու ո՞վ ես, որ պատասխան
տանենք նորանց, որ մեզ ուղարկեցին. Ի՞նչ ես
23 ասում քեզ համար։ Ասաց. Ես եմ՝ ձայն կան-
չողի անապատումը՝ թէ շիտակեցէ՛ք Տէրին ճանա-
24 պարհը, ինչպէս որ Եսայի մարգարէն ասաց։ Եւ
նորանք՝ որ ուղարկվեցան, փարիսեցիներից էին։
25 Նորան հարցրին և ասացին. Ապա ինչո՞ւ ես մը-
կրտում, եթէ որ դու ո՛չ Քրիստոսն ես, և ո՛չ
26 Եղիան, և ոչ էլ մարգարէն։ Յօհաննէս պատաս-
խան տուաւ նորանց և ասաց. Ես ջրով եմ մկը-
տում ձեզ. ձեր միջումն կայ մինը՝ որ դուք նորան
27 չէք գիտում, Որ նա ինձանից ետեւ գալու է, որ
ինձանից առաջ էլաւ. որ ես արժանի չեմ՝ որ
28 նորա կօշիկներին կապանքն արձակեմ։ Սա Բեթաբ-
րայումն էլաւ, Յորդանանի այն կողմը. որ տեղ որ
Յօհաննէսն էր՝ եւ մկրտումէր։
29 Յետեւի օրը Յօհաննէս տեսաւ Յիսուսին՝ որ իրեն
մօտ էր գալիս, և ասաց. Ահա՛ Աստուծոյ Գառն՝
30 որ աշխարհքի մեղքը վեր է առնում։ Սա՛ է՝ որ
սորա համար ես ասումէի՝ թէ ինձանից ետեւ մարդ
կ՚գայ՝ որ ինձանից առաջ էլաւ. ինչուոր՝ նա իսկ
31 ինձանից առաջ էր։ Եւ ես նորան չէի գիտում.
բայց որ յայտնի լինի Իսրայէլին՝ նորահամար ես
32 եկի որ ջրով մկրտեմ։ Յօհաննէսն վկայեց եւ ա-
սաց. թէ Տեսնումէի Հոգին՝ որ աղաւնոյ պէս վէր

33 էր գալիս երկնքից՝ և նորա վերայ մնում։ Եւ ես
չէի ճանաչում նորան. բայց նա որ ինձ ուղարկեց՝
որ ջրով մկրտեմ, նա ասաց ինձ. Թէ Ում վերայ
տեսնես որ Հոգին վէր գայ և նորա վերայ մնայ՝
34 նա է որ Սուրբ Հոգովը կ'մկրտէ։ Եւ ես տեսի և
վկայեցի՝ թէ Սա՛ է Աստուծոյ Որդին։
35 Յետևեալ օրը Յօհաննէս կանգնած էր՝ և երկու
36 հոգի էլ նորա աշակերտներից. Եւ մտիկ տալով
Յիսուսին՝ որ ման էր գալիս, և ասաց. Ահա՛ Քը-
37 րիստոսն՝ Աստուծոյ Գառն։ Այն երկու աշակերտ-
ները լսեցին նորանից՝ որ խօսումէր, և Յիսուսի ե-
38 տևէն գնացին։ Երբոր Յիսուս դարձաւ և նորանց
տեսաւ՝ որ գնումէին իրեն ետևէն՝ նորանց ասաց.
Ի՞նչ էք ուզում. Նորանք ասացին նորան. Ռաբ-
բի՝ (որ թարգմանված ասվումէ՝ վա՛րդապետ) քո
39 բնակարանդ ո՞րտեղ է։ Նորանց ասաց. Եկէ՛ք և
տեսէ՛ք. եկին և տեսին՝ որ տեղ որ նորա բնակա-
րանն էր. և այն օրը նորա մօտ մնացին, ինչուոր՝
40 տասն ժամի մօտ էր։ Անդրէաս վէմ Սիմօնի եղ-
բայրն այն երկուսից մինն էր՝ որ Յօհաննէսից լը-
41 սեցին և նորան ետևէն գնացին։ Սա առաջ իրեն
Սիմօն եղբօրը գտաւ և նորան ասաց. Մեսիային
42 գտինք՝ որ կ'թարգմանվի Քրիստոս։ Սա նորան բե-
րաւ Յիսուսի մօտ. Յիսուս նորան մտիկ տալով և
ասաց. Դու Սիմօնն ես Յօնանի որդին. դու պիտի
կոչվիս Կեփաս, որ կ'թարգմանվի Պետրոս։
43 Յետևեալ օրը կամեցաւ, որ դուրս գնայ Գալի-
լեայ. Փիլիպպոսին գտաւ. և Յիսուս նորան ասաց.
44 Իմ ետևէս ե՛կ։ Եւ Փիլիպպոս Բեթսայիդայեցն
45 էր, Անդրէասի և Պետրոսի քաղաքից։ Փիլիպպոս

գտաւ Նաթանայելին՝ և նորան ասաց. Նա որ նո-
րա համար Մօսէսն օրէնքումը գրեց՝ և մարգարէ-
ները, գտինք Յօսէփի որդի Յիսուսին Նազարէթի-
46 ցը։ Նաթանայէլ նորան ասաց. Միթէ կարելի՞ է
որ Նազարէթիցը բարի բան լինի։ Փիլիպպոս նո-
47 րան ասաց. Ե՛կ և տե՛ս։ Երբոր Յիսուս տեսաւ
Նաթանայելին՝ որ իրեն մօտ էր գալիս՝ ասաց նո-
րա համար. Ահա՛ շիտակ իսրայելացի. որ նորա-
48 նում խաբէութիւն չ'կայ։ Նաթանայէլն ասաց
նորան. Ի՞նչ տեղից ես ճանաչում ինձ։ Յիսուս
պատասխան տուաւ և նորան ասաց. Դեռ որ Փի-
լիպպոսը քեզ չէր կանչել՝ որ թզի ծառին տակն
49 էիր՝ քեզ տեսի։ Նաթանայէլ պատասխան տուաւ
նորան և ասաց. Ռա՛բբի՝ դո՛ւ ես Աստուծոյ Որ-
50 դին, Դու ես Իսրայելին թագաւորը։ Յիսուս պա-
տասխան տուաւ նորան և ասաց. Որովհետև ա-
սացի քեզ՝ թէ թզի ծառին տակը տեսի քեզ՝ հա-
ւատումես. սորանից էլ աւելի մեծ բաներ կ'տես-
51 նես։ Եւ նորանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտ ա-
սումեմ ձեզ. Թէ սորանից ետև երկինքը բացված
կ'տեսնէք, և Աստուծոյ հրեշտակներն՝ որ վէր կել-
լին և վէր կ'գան Որդւոյ մարդոյ վերայ։

ԳԼ. Բ

Քրիստոս ջուրը գինի է դարձնում, տաճարի մաքրելը։

1 Եւ երրորդ օրը հարսանիք էր Գալիլեացոց Կանայ-
2 ումը, և Յիսուսին մայրն այնտեղ էր։ Յիսուս
էլ և նորա աշակերտները կանչվեցան այն հարսա-

3 նիքը ։ Եւ գինին որ պակասեցաւ՝ մայրն ասաց Յի-
4 սուսին. Գինի չունին ։ Եւ Յիսուս նորան ասաց.
Ո՛վ կին դու՝ քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ. իմ
5 ժամանակս դեռ չի հասել ։ Նորա մայրն սպասա-
6 ւորներին ասաց. Ինչ որ ասէ ձեզ՝ արէ՛ք ։ Այն
տեղ վեց քարէ կարաս կային Հրէաների լուաց-
մունքին համար՝ որ նորանցից ամեն մէկն երկու
7 կամ երեք մար էին տանում ։ Յիսուս նորանց ա-
սաց. Այդ կարասներդ ջրով լցէ՛ք. նորանց լցրին
8 մինչեւ բերանը ։ Եւ նորանց ասաց. Հիմիկ առէ՛ք
և բերէ՛ք սեղանապետին համար. և նորանք բե-
9 րին ։ Եւ երբոր սեղանապետն այն ջրի համն առաւ
որ գինի էր եղած՝ և չէր գիտում թէ ինչ տեղից
է. բայց սպասաւորները գիտումէին՝ որ ջուրը լց-
10 րել էին. սեղանապետը փեսային հետ խօսեց. Եւ
ասաց ։ Ամեն մարդ անոյշ գինին առաջ է տա-
լիս. և երբոր կ՚հարբենան՝ այն ժամանակը վատը.
Բայց դու այդ անոյշ գինիդ մինչեւ հիմիկ պահե-
11 ցիր ։ Նշանների սկիզբը Յիսուս սա արաւ Գալի-
լեացոց Կանայումը և իրեն փառքը յայտնեց. և
նորա աշակերտները հաւատացին նորան ։
12 Սորանից ետեւ Յիսուս վէր եկաւ Կափառնայ-
ումը, ինքը և իրեն մայրն ու իրեն եղբայրները.
և շատ օր չ՚մնացին այն տեղ ։
13 Եւ Հրէից զատիկը մօտիկ էր, և Յիսուս վէր ելաւ
14 Երուսաղէմ ։ Եւ տաճարումը գտաւ նորանց՝ որ եզ-
ներ և ոչխարներ և աղաւնիներ էին ծախում, և փող
15 փոխողներին էլ որ նստած էին ։ Եւ չուանէ խարա-
զան շինեց, և ամենին տաճարիցը հանեց, ոչխարներին
և եզներին՝ և փող փոխողների պղինձները ցրւեց և

16 տախտակները կործանեց ։ Եւ նորանք որ աղաւնի
էին ծախում, նորանց ասաց. Դորան վե՛ր առէք
այստեղից՝ և իմ Հօրս տունը մի՛ անէք առուտու-
17 րի տուն ։ Այն ժամանակը նորա աշակերտները յի-
շեցին թէ գրված է՝ Քո տանդ նախանձն ուտումէ
ինձ ։
18 Հրէաները պատասխան տուեին և ասացին նորան.
Դու ի՞նչ նշան ես ցոյց տալիս մեզ՝ որ դա անում
19 ես ։ Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց.
Քանդեցէ՛ք այդ տաճարդ, և երեք օրումը կ՚կանդ-
20 նացնեմ դորան ։ Հրէաներն ասացին նորան. Այս
տաճարս քառասուն և վեց տարում շինվեցաւ՝ և
21 դու երեք օրում կ՚կանգնացնե՞ս դորան ։ Բայց նա
22 իրեն մարմնոյ տաճարին համար էր ասում ։ Ապա
երբոր նա մեռելների միջիցը յարութիւն առաւ՝
նորա աշակերտները յիշեցին թէ սա նա է՝ որ նա
ասաց. և հաւատացին գրքին՝ և այն խօսքին որ
Յիսուսն ասաց ։
23 Եւ երբոր Երուսաղէմումն էր զատկի տօնումը
շատ մարդիկ հաւատացին նորա անունին. ինչու որ
24 տեսնումէին այն նշաններն՝ որ նա անումէր ։ Բայց
ինքն Յիսուս իրեն անձը չէր հաւատում նորանց.
25 պատճառնոր՝ ինքն ամեն բան գիտումէր, Եւ պէտք
չէր որ մինը վկայէր մարդոյ համար. ինչու որ՝ ինք
ինքն գիտումէր՝ թէ ինչ կայ մարդոյ ներսումը ։

ԳԼ․ Գ

Քրիստոսի խօսակցութիւնը Նիկոդեմոսի հետ․ Յովհաննէս Մկրտիչը դարձեալ վկայում է Յիսուսի համար։

1 Եւ փարիսեցիներից մին մարդ կար՝ անունը Նի-
2 կոդիմոս՝ Հրէաների իշխան։ Սա գիշերը նորա մօտ
եկաւ և նորան ասաց․ Ռա՛բբի՝ գիտումենք որ
Աստուածանից վարդապետ ես եկել․ ինչու որ՝ ո՛չ
ով չ՚կարող այդ նշաններդ անել՝ որ դու ես ա-
3 նում, թէ որ Աստուած նորա հետ չ՚լինի։ Յիսուս
պատասխան տուաւ և նորան ասաց․ Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ քեզ․ Թէ որ մինը նոր չ՚ծըն-
վի՝ կարող չէ Աստուծոյ արքայութիւնը տեսնել։
4 Նիկոդիմոս նորան ասաց․ Մարդ ի՞նչպէս կարող
է ծնվիլ՝ որ ծեր է․ միթէ կարելի՞ է՝ որ նորէն
երկրորդ անգամ իրեն մօր փորը մտնէ և ծնվի։
5 Յիսուս պատասխան տուաւ և ասաց․ Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ քեզ․ Թէ որ մինը ջրից և Հո-
գուց չ՚ծնվի, նա կարող չէ Աստուծոյ արքայու-
6 թիւնը մտնել․ Պատճառանոր՝ մարմնուց ծնվածը՝
7 մարմին է․ և Հոգուց ծնվածը՝ հոգի է։ Դու մի՛
զարմանար՝ որ ասացի քեզ, թէ Պէտք է ձեզ՝ որ
8 նոր ծնվիք։ ինչու որ՝ քամին որ տեղ որ ուզում է՝
փչում է, և նորա ձայնը լսում ես․ բայց չես գի-
տում՝ թէ ի՞նչ տեղից է գնում․ ճիշտ այսպէս է
9 և ամեն Հոգուց ծնվածը։ Նիկոդիմոս պատասխան
տուաւ և նորան ասաց․ Դա ի՞նչպէս կարող է
10 լինիլ։ Յիսուս պատասխան տուաւ և նորան ասաց․

Դու ես Իսրայէլի վարդապետ՝ և այդ բանդ չե՞ս
11 գիտում։ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ՝ թէ
ինչ որ գիտումենք՝ նա ենք խօսում, և ինչ որ տե-
սինք՝ նա ենք վկայում․ և մեր վկայութիւնը չէք
12 ընդունում։ Բայց թէ որ երկրաւոր բաներն ասացի
ձեզ և չէք հաւատում․ ապա ի՞նչպէս կ՚հաւատաք
13 թէ որ երկնաւոր բաներն ասեմ։ Եւ ո՛չ ով վեր
չելաւ երկինքը, եթէ ո՛չ Որդին մարդոյ՝ որ երկըն-
14 քիցը վեր եկաւ՝ նա որ երկնքումն է։ Եւ ինչպէս
որ Մօսէսն օձը բարձրացրուց անապատումը՝ իսկ
այնպէս էլ պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ․
15 Որ ամեն ով որ հաւատայ նորան՝ չի կորչի, այլ
16 յաւիտենական կեանքն ընդունի։ Պատճառանոր՝
Աստուած այնպէս սիրեց աշխարհքին՝ մինչեւ որ
իրեն միածին Որդին տուաւ․ որ ամեն ով որ հա-
ւատայ նորան՝ չ՚կորչի, այլ յաւիտենական կեան-
17 քըն ընդունի։ ինչու որ՝ Աստուած իրեն Որդին չու-
ղարկեց աշխարհքս՝ որ աշխարհքին դատէ՝ բայց
18 որ աշխարհքը նորանով փրկվի։ Ով որ հաւատում
է նորան՝ չի դատապարտվիլ՝ և ով որ չ՚հաւա-
տում նորան՝ արդէն դատապարտված է․ ինչու որ՝
չ՚հաւատաց Աստուծոյ միածին Որդոյն անուանը։
19 Եւ իսկ սա է դատաստանն՝ որ լոյսն եկաւ աշ-
խարհքս՝ և մարդիկ խաւարն աւելի սիրեցին քան
թէ լոյսը, ինչու որ՝ նորանց գործքերը չար էին։
20 Պատճառանոր՝ ամեն ով որ չար է գործում՝ լոյսն
ատում է, և դէպի լոյսը չի գալիս, որ նորա գործ-
21 քերը չ՚յանդիմանվին։ Բայց նա՝ որ ճշմարտու-
թիւն է գործում՝ դէպի լոյսն է գալիս, որ նորա
գործքերը յայտնի լինին թէ Աստուծով գործվե-
ցան։

22 Սորանից ետեւ Յիսուս եկաւ Հրէաստանի երկի-
րը, և նորա աշակերտներն էլ. և այնտեղ նորանց
23 հետ մնում էր գալիս և մկրտում էր։ Յօհաննէսն էլ
Այենոնումն էր մկրտում՝ Սաղեմայ մօտ. ինչուոր՝
շատ ջուր կար այնտեղ. և գալիս էին և մկրտ-
24 վում։ Պատճառոր՝ Յօհաննէս դեռ բանտի մէջ
չէր դրած։
25 Եւ Յօհաննէսին աշակերտները Հրէաներին հետ
26 հակառակեցին սրբութեան համար։ Յօհաննէսի
մօտ եկին և նորան ասացին. Ռա՛բբի՛ նա որ Յոր-
դանանի այն կողմն էր քեզ հետ՝ որ դու նորա
համար վկայեցիր, ահա՛ նա մկրտում է, և ամէնքը
27 նորա մօտ են գալիս։ Յօհաննէս պատասխան տուաւ
և ասաց. Մարդ բնաւ կարող չէ ինքն իրենից մին
բան առնել, թէ որ վերեւից երկնքից տուած չը
28 լինի նորան։ Դուք ձեզանից վկայում էք ինձ հա-
մար՝ որ ասացի ձեզ՝ թէ Ես Քրիստոսը չեմ՝ բայց
29 թէ նորա առաջին ուղարկուած եմ։ Ով որ հարսն
ունի՝ նա է փեսան. բայց փեսային բարեկամը՝ որ
կայ և լսում է նորան, փեսայի ձայնին համար ու-
րախութենով ուրախանում է. ուրեմն այս իմ ու-
30 րախութիւնս լցուած է։ Նորան պէտք է որ աճի,
31 և ես ցածանամ։ Նա որ վերեւից է գալիս, ա-
մենից վերեւ է. նա որ այս երկրից է՝ երկրից
32 է և երկրից է խօսում։ Նա որ երկնքից է գա-
լիս՝ ինչ որ տեսաւ և ինչ որ լսեց՝ վկայում է. և
33 նորա վկայութի՛ւնն բնաւ մինը չի ընդունում։ Ով
որ նորա վկայութիւնն ընդունում է՝ կնքով հաստա-
34 տեց թէ Աստուած ճշմարիտ է։ Պատճառոր՝ նա
որ Աստուած ուղարկեց նորան, Աստուծոյ բանն

է խօսում. ինչուոր՝ Աստուած Հոգին չափով չի
35 տալիս։ Հայրը սիրում է Որդուն՝ և ամեն բան նո-
36 րա ձեռքը տուաւ։ Ով որ հաւատում է Որդուն՝
յաւիտենական կեանքն ընդունում է. և ով որ չի
հնազանդվում Որդուն՝ կեանքը չի տեսնիլ, բայց
Աստուծոյ բարկութիւնն է մնում նորա վերայ։

ԳԼ. Դ

Սամարացի կինը. Թագաւորացեղի որդուն բժշկելը։

1 Երբոր Յիսուս գիտաց՝ թէ փարիսեցիները լսեցին՝
թէ Յիսուս շատ աշակերտներ է անում և Յօհան-
2 նէսից էլ աւելի մկրտում. (ինչուոր՝ չէ թէ Յի-
սուսն ինքն էր մկրտում՝ բայց նորան աշակերտնե-
3 րը։) Հրէաստանի երկիրը թողեց և նորէն եկաւ
4 Գալիլեա։ Եւ պէտք էր նորան՝ որ Սամարիայի մի-
5 ջովն անցանէր։ Ապա նա Սամարացոց մին քաղա-
քը եկաւ՝ որ նորան անունը Սիւքար էր. այն գիւ-
ղին մօտ՝ որ Յակոբ տուաւ իրեն որդի Յօսէփին։
6 Եւ Յակոբի մին աղբիւր կար այնտեղ. և Յիսուս
ճանապարհից վաստակել և այն աղբիւրին վերայ
նստել էր. և վեց ժամին դէմ էր։
7 Սամարիայից մին կին եկաւ՝ որ ջուր հանէ.
8 Յիսուս նորան ասաց. ինձ տո՛ւր որ խմեմ։ Պատ-
ճառոր՝ նորա աշակերտները քաղաքն էին գնա-
9 ցել՝ որ կերակուր գնեն։ Սամարացի կինն ասաց
նորան. Դու որ Հրեայ ես՝ ի՞նչպէս ես ուզում
ջուր խմել ինձանից՝ մին Սամարացի կնկանից.
ինչուոր՝ Հրէաները բնաւ չեն խառնվում Սամա-

10 րացոց հետ ։ Յիսուս պատասխան տուաւ նորան և
ասաց՝ թէ որ դու Աստուծոյ պարգևը գիտենա-
յիր, և թէ ո՛վ է նա՝ որ քեզ ասում է՝ Տո՛ւր
ինձ խմել, ապա դու նորանից կ'խնդրէիր՝ և նա
11 կենդանի ջուր կ'տար քեզ ։ Կինը նորան ասաց.
Տէ՛ր՝ դու ջուր քաշելոյ աման էլ չունիս՝ և հորս
խոր է. ապա ի՞նչ տեղից պիտի ունենաս կենդա-
12 նի ջուրը ։ Միթէ դու մին աւելի՞ մեծ մարդ ես
քան մեր հայր Յակոբը՝ որ այս հորս տուաւ մեզ.
և ինքը սորանից խմեց, և նորա որդիքն ու նորա
13 անասունները ։ Յիսուս պատասխան տուաւ նորան
և ասաց. Ամեն ով որ այդ ջրիցը խմէ՝ կրկին կը
ծարաւի. բայց ով որ ա՛յն ջրիցը խմէ՝ որ ես
14 կ'տամ նորան՝ նա յաւիտեան չ'ծարաւիլ ։ Բայց
այն ջուրն՝ որ ես կ'տամ նորան՝ ջրի աղբիւր կ'լի-
նի նորանում, որ յաւիտենական կենաց մէջ կը
15 բղխի ։ Կինը նորան ասաց. Տէ՛ր՝ տո՛ւր ինձ այն
ջուրն, որ չ'ծարաւիմ, և չ'գամ այստեղ ջուր
16 հանելոյ ։ Յիսուս նորան ասաց. Գնա՛ կանչէ՛ քո
17 մարդդ՝ և ե՛կ այստեղ ։ Կինը պատասխան տուաւ
նորան և ասաց. Ես մարդ չունիմ. Յիսուս նորան
18 ասաց. Լաւ ասացիր՝ թէ, Ես մարդ չունիմ. Պատ-
ճառնոր՝ դու հինգ մարդ ես փոխել՝ և նա որ հի-
միկ ունիս, քո մարդդ չէ. դա շիտակ ասացիր ։
19 Կինը նորան ասաց. Տէ՛ր՝ երևում է ինձ՝ թէ դու
20 մարգարէ ես ։ Մեր հարքն այս սարումն երկրպա-
գութիւն արին. և դուք ասում էք՝ թէ միայն Ե-
րուսաղէմումն է այն տեղն՝ որ պէտք է երկրպա-
21 գութիւն անել ։ Յիսուս նորան ասաց. Ո՛վ կին.
հաւատա՛ ինձ՝ որ ժամանակ կ'գայ, որ ո՛չ այս

սարումն երկրպագութիւն կանեն Հօրը, և ո՛չ էլ
22 Երուսաղէմումը ։ Դուք երկրպագութիւն էք անում
նորան՝ որ դուք չէ՛ք գիտում. մենք երկրպագու-
թիւն ենք անում նորան՝ որ գիտումենք. Ինչու որ՝
23 փրկութիւնը Հրէաներից է ։ Բայց ժամանակ կը-
գայ՝ և իսկ հիմիկ է, որ ճշմարիտ երկրպագօղները
հոգով և ճշմարտութենով երկրպագութիւն կա-
նեն Հօրը, պատճառնոր՝ Հայրն էլ այնպէս իրեն
24 երկրպագօղներ է ուզում ։ Աստուած Հոգի է, և
նորան երկրպագօղներն էլ պէտք է՝ որ հոգով և
25 ճշմարտութենով երկրպագութիւն անեն ։ Կինն
ասաց նորան. Գիտումենք՝ որ Մեսիան պիտի գայ՝
որ Քրիստոս է կոչվում. երբոր կ'գայ՝ նա ամեն
26 բան կ'պատմէ մեզ ։ Յիսուս նորան ասաց. Ես եմ՝
27 որ քեզ հետ խօսումեմ ։ Եւ այս խօսքիս վերայ նո-
րա աշակերտներն եկին, և զարմանումէին, որ այն
կնկան հետ խօսումէր. բայց նորանցից ընաւ մինը
չասաց՝ թէ ի՞նչ ես ուզում կամ ի՞նչ ես խօ-
28 սում դորան հետ ։ Կինն իրեն կուժը թողեց՝ և
29 գնաց քաղաքը, և մարդկանց ասաց. Եկէ՛ք տե-
սէ՛ք մին մարդ՝ որ ինձ ասաց այն ամենն՝ ինչ որ
30 գործել եմ. միթէ նա՞ է Քրիստոսը ։ Դուրս ելան
քաղաքիցը՝ և նորա մօտ էին գալիս ։
31 Եւ դեռ որ նորանք չէին եկած՝ աշակերտներն
աղաչումէին նորան և ասում. Ռա՛բբի՝ հա՛ց կեր ։
32 Նա նորանց ասաց. Ես կերակուր ունիմ ուտելոյ,
33 որ դուք չէք գիտում նորան ։ Աշակերտներն իրար
ասումէին. Միթէ մին մարդ դորան բան բերա՞ւ
34 ուտելոյ ։ Յիսուս նորանց ասաց. Իմ կերակուրս
նա է՝ որ նորա կամքն անեմ, որ ուղարկեց ինձ,

35 և նորա գործը կատարեմ։ Միթէ դուք չէ՞ք ա-
սում՝ թէ Չորս ամիս էլ կայ՝ և հունձը կ՚գայ.
ահա՛ ես ասում եմ ձեզ. Բարձրացրէ՛ք ձեր աչքե-
րը՝ և տեսէք արտերը որ սպիտակացել են՝ և հըն-
36 ձին հասել։ Եւ նա որ հնձում է՝ վարձք է առնում,
և յաւիտենական կենաց մէջ պտուղ ժողովում.
որ նա որ սերմանում է՝ և նա որ հնձում է՝ իրար հետ
37 ուրախանան։ Սորանով ճշմարիտ է այն խօսքն՝ թէ
ուրիշ է՝ որ սերմանում է, և ուրիշ է՝ որ հնձում է։
38 Ես ուղարկեցի ձեզ հնձել նա՝ որ դուք չ՚սերմե-
ցիք. ուրիշներն աշխատեցին, և դուք նորանց աշ-
խատանքին մէջը մտիք։
39 Եւ Սամարացոց այն քաղաքից շատ մարդիկ
հաւատացին նորան այն կնկան խօսքին համար՝ որ
վկայում էր՝ թէ Ասաց ինձ ամենը՝ ինչ որ գործել
40 էի։ Ապա երբոր Սամարացիները նորա մօտ եկին,
նորան աղաչեցին որ իրենց հետ մնայ. և երկու
41 օր մնաց այնտեղ։ Եւ էլ շատ մարդիկ հաւատա-
42 ցին նորան՝ նորա խօսքին համար։ Եւ այն կնկան
ասում էին՝ թէ Սորանից ետև ո՛չ թէ քո խօսքե-
րիդ համար ենք հաւատում. ինչու որ՝ իսկ մենք
ինքներս լսեցինք դորանից. և գիտումենք ճշմար-
տապէս՝ որ դա՛ է աշխարհքի փրկիչը։
43 Եւ երկու օրից ետև այնտեղից դուրս եկաւ և
44 գնաց Գալիլեա։ Պատճառանոր՝ իսկ ինքը Քրիստոս
վկայեց՝ թէ մարգարէ իրեն գաւառումը պատիւ
45 չունի։ Բայց երբոր նա Գալիլեա եկաւ, Գալիլեա-
ցիներն ընդունեցին նորան. ինչու որ՝ տեսել էին
այն ամեն նշանները, որ տօնի ժամանակին արաւ
Երուսաղէմին մէջ. պատճառանոր՝ նորանք էլ եկել
էին այն տօնը։

46 Նորէն Գալիլեացոց Կանան եկաւ՝ այնտեղ որ
ջուրը գինի արաւ. և այնտեղ մին թագաւորա-
ցեղ մարդ կար, որ նորան որդին Կափառնայումի
47 մէջ հիւանդ էր։ Նա երբոր լսեց, թէ Յիսուս Հը-
րէաստանից եկել է Գալիլեա. նորա մօտ եկաւ
և աղաչում էր՝ որ վէր գայ և իրեն որդին բժշկէ.
48 ինչու որ՝ մեռնելոյ մօտ էր։ Յիսուս նորան ասաց.
Թէ՛ որ նշաններ և հրաշքներ չ՚տեսնէք՝ չէք հա-
49 ւատալ։ Թագաւորացեղը նորան ասաց. Տէ՛ր՝ վէ՛ր
50 եկ դեռ քանի որ չի մեռել իմ տղան։ Յիսուս
նորան ասաց. Գնա՛ քո որդիդ կենդանի է. և
մարդը հաւատաց այն խօսքին՝ որ Յիսուս նորան
51 ասաց՝ և գնաց։ Եւ դեռ որ վէր էր գալիս, նորա
ծառաները նորան առաջը եկին, աւետիս տուին
52 և ասացին, թէ Քո տղադ կենդանի է։ Նորանց
հարցնում էր այն ժամին համար՝ որ նորանում ող-
ջացաւ. և նորան ասացին. Երեկ եօթը ժամին
53 տենդը թողեց նորան։ Նորա հայրն իմացաւ՝ թէ
իսկ այն ժամումն՝ որ Յիսուս նորան ասաց՝ թէ Քո
որդիդ կենդանի է. և հաւատաց ինքն ու նորա
54 բոլոր տունը։ Սա կրկին երկրորդ նշան արաւ Յի-
սուս՝ երբոր Հրէաստանից եկաւ Գալիլեա։

ԳԼ. Ե

Բեթհեզդա աւազանին մօտ հիւանդին բժշկութիւնը. Քրիստոս վկայում է իր Աստուածութեանն համար։

1 Սորանից ետև տօնն էր Հրէաներին. և Յիսուս
2 վէր էլաւ Երուսաղէմ։ Եւ Երուսաղէմի մէջ Պրո-

պատիկէ աւազանումը, որ Եբրայեցերէն Բեթհեզ-
3 դա էր կոչվում՝ հինգ սրահ կար, Որ նորանցում
խիստ շատ հիւանդներ կային վէր ընկած՝ կուրեր,
կաղեր, չորացածներ, որ ջրերի շարժվելուն էին
4 սպասում ։ Եւ Տէրին հրեշտակը ժամանակով վէր
էր գալիս այն աւազանը՝ և ջրերը շարժում. և
ով որ առաջ վէր էր գալիս այն շարժված ջրերին
մէջը՝ բժշկվումէր՝ որ ընաւ հիւանդութեան նշան
5 չէր մնում ։ Եւ այնտեղ մին մարդ կար, որ երե-
սուն և ութ տարի էր իրեն հիւանդութենումը ։
6 Երբոր Յիսուս նորան տեսաւ՝ որ վէր ընկած էր,
և գիտաց՝ թէ շատ ժամանակ է մնացել. Նորան
7 ասաց. Կամենո՞ւմես, որ ողջ լինիս ։ Հիւանդը
պատասխան տուաւ նորան. Տէ՛ր՝ ընաւ մին մարդ
չունիմ՝ որ երբոր ջրերը շարժվին՝ ինձ աւազանին
մէջը ձգէ. և մինչեւ որ ես շարժվումեմ, մին ու-
8 րիշը ինձանից առաջ վէր է գալիս ։ Յիսուս նորան
ասաց. Վե՛ր կաց, քո մահիճդ ա՛ռ և գնա՛ ։
9 Եւ մարդը ողջացաւ և վերկացաւ՝ իրեն մահիճն
առաւ և ման էր գալիս. և այն օրը շաբաթ էր ։
10 Հրէաներն ասացին բժշկվածին. Շաբաթ է, և
11 արժան չէ քեզ, որ քո մահիճդ վէր առնես ։ Նա
պատասխան տուաւ նորանց՝ և ասաց. Նա՝ որ ինձ
բժշկեց՝ նա ասաց ինձ՝ թէ Քո մահիճդ ա՛ռ և
12 գնա՛ ։ Հարցրին նորան և ասացին. Ո՞վ է այն
մարդն՝ որ քեզ ասաց՝ թէ Քո մահիճդ ա՛ռ և
13 մա՛ն եկ ։ Եւ բժշկվածը չէր գիտում թէ ո՞վ է.
ինչուոր՝ Յիսուս ամբոխին պատճառովը այնտեղիցը
14 քաշվեցաւ ։ Սորանից ետեւ Յիսուս նորան գտաւ
տաճարումը՝ և նորան ասաց. Ահա՛ ողջացար՝ էլ

չի մեղանչե՛ս՝ որ էլ աւելի չար բան չ՚լինի քեզ ։
15 Մարդը գնաց և Հրէաներին պատմեց՝ թէ Յիսուսն
էր որ ինձ բժշկեց ։
16 Եւ նորահամար Հրէաները Յիսուսին հալածում-
17 էին՝ որ շաբաթ օրն էր անում այն բանը ։ Եւ Յի-
սուս պատասխան տուաւ նորանց. Թէ իմ Հայրս
18 մինչեւ հիմիկ գործումէ՝ և ես էլ գործումեմ ։ Նո-
րահամար Հրէաներն էլ աւելի հետեւումէին՝ որ
սպանեն նորան. որ ո՛չ թէ մինակ շաբաթ օրերն
էր քանդում՝ բայց Աստուծոյն էլ իրեն Հայր էր
կոչում, և իրեն անձն Աստուծոյն հաւասար էր
19 անում ։ Յիսուս պատասխան տուաւ և ասաց նո-
րանց. Ճշմարիտ ճշմարիտ ասումեմ ձեզ. Թէ
Որդին մարդոյ իրենից կարող չէ մին բան անել,
թէ որ չ՚տեսնէ Հօրն որ անումէ. ինչուոր՝ ինչ որ
նա է անում, իսկ Որդին էլ այն բանն է նորա
20 նման անում ։ Պատճառնոր՝ Հայրը սիրումէ Որ-
դոյն, և ցոյց է տալիս նորան այն ամեն բանն, որ
ինքն է անում, և սորանցից էլ աւելի մեծ մեծ
գործքեր է ցոյց տալիս նորան, որ դուք նորա հա-
21 մար զարմանումէք ։ Պատճառնոր՝ ինչպէս որ Հայ-
րը մեռելները յարուցանումէ և կենդանի անում,
իսկ այնպէս էլ Որդին՝ ում որ կամենումէ՝ կեն-
22 դանի է անում ։ Եւ չէ թէ Հայրը մինը դատում
է, բայց ամեն դատաստանը տուաւ իրեն Որդւոյն,
23 Որ ամենքը պատուեն Որդւոյն, ինչպէս որ Հօրն են
պատուում. ով որ Որդւոյն չի պատուում՝ Հօրն
24 էլ չի պատուում, որ ուղարկեց նորան ։ Ճշմարի-
տըն ճշմարիտ ասումեմ ձեզ. Թէ Նա որ իմ խօս-
քիս ականջ է դնում և հաւատում նորան՝ որ

ինձ ուղարկեց, յաւիտենական կեանքը կ'ընդունի·
և դատաստան չի' մտնիլ, բայց մահից փոխվե-
25 ցաւ դէպի կեանքը։ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ
ձեզ. թէ ժամանակ է գալիս՝ և ճիշտ հիմիկ է,
երբոր մեռելներն Աստուծոյ Որդւոյ ձայնը կ'լսեն,
26 և նորանք, որ կ'լսեն՝ կապրին։ Պատճառնոր՝ ինչ-
պէս որ Հայրն իրեն անձնումը կեանք ունի, ճիշտ
այնպէս էլ Որդւոյն տուաւ՝ որ իրեն անձնումը կեանք
27 ունենայ. Եւ նորան իշխանութիւն տուաւ, որ
28 դատաստան անէ. ինչուոր՝ Որդի մարդոյ է. Նո-
րա վերայ ինչո՞ւ էք զարմանում. պատճառնոր՝
ժամանակ կ'գայ, որ ամենքն՝ որ գերեզմաններումն
29 են, նորա ձայնը կ'լսեն, Եւ դուրս կ'գան նորանք,
որ բարի են գործել՝ դէպի կենաց յարութիւնը,
և նորանք՝ որ չար են արել՝ դէպի դատաստանի
30 յարութիւնը։ Ես ինձանից չեմ կարող ընաւ մին
բան անել, բայց ինչպէս որ լսում եմ՝ այնպէս եմ
դատում, և իմ դատաստանս արդար է. պատ-
ճառնոր՝ իմ կամքս չեմ խնդրում, այլ նորա կամ-
31 քըն՝ որ ինձ ուղարկեց։ Թէ որ ե'ս ինձ համար վը-
32 կայում եմ՝ իմ վկայութիւնս ճշմարիտ չէ։ Ուրիշն
է՝ որ ինձ համար վկայում է. և դուք գիտումէք՝
թէ ճշմարիտ է այն վկայութիւնն՝ որ ինձ համար
33 վկայեց։ Դուք ուղարկեցիք Յօհաննէսին մօտ՝ և
34 վկայութիւն տուաւ ճշմարտութեանը։ Բայց ես
ո՛չ թէ մարդկանցից եմ վկայութիւն առնում.
35 բայց սա ասում եմ՝ որ դուք ապրիք։ Նա ճրագ
էր՝ որ վառվումէր և լոյս տալիս. և դուք կամե-
ցաք մին քիչ ժամանակ ուրախանալ նորա լուսո-
36 վը։ Բայց ես Յօհաննէսիցն էլ աւելի մեծ վկայու-

թիւն ունիմ. այն գործքերն՝ որ Հայրն ինձ տը-
ուաւ, որ կատարեմ նորանց. իսկ այն գործքերն՝
որ գործումեմ, ինձ համար վկայումեն, թէ Հայրն
37 ուղարկեց ինձ, Եւ Հայրն որ ինձ ուղարկեց նա
ինձ համար վկայեց. դուք ընաւ մին ժամանակ ո՛չ
նորա ձայնը լսեցիք, և ո՛չ նորա կերպարանքը տե-
38 սիք։ Եւ ո՛չ էլ նորա խօսքը ձեզանում բնակված
ունիք. պատճառնոր՝ նա որ նա ուղարկեց՝ դուք
39 չէք հաւատում նորան։ Քննեցէ՛ք գրքերն. որ
դուք կարծումէք թէ նորանցով ունիք յաւիտե-
նական կեանքը՝ և իսկ նորանք են, որ ինձ համար
վկայումեն՝ որ նորանցով կարծումէք թէ կեանքն
40 ունիք։ Եւ դուք չէք կամենում ինձ մօտ գալ՝ որ
41 կեանքն ունենաք։ Ես մարդկանցից փառք չեմ
42 առնում. Բայց ճանաչումեմ ձեզ՝ որ Աստուծոյ
43 սէրը չունիք ձեր անձներումը։ Ես իմ Հօրս անու-
նովս եկի՝ և ինձ չէք ընդունում. թէ որ մին ու-
րիշը կ'գայ իրեն անունովը, նորան կ'ընդունիք։
44 Ի՞նչպէս կարող էք դուք հաւատալ՝ որ իրարից էք
փառք առնում, և այն փառքն որ մին Աստուա-
45 ծանիցն է՝ չէք խնդրում։ Մի՛ կարծէք՝ որ ես Հօր
մօտ չարախօս եմ ձեզանից. կայ մինն որ ձեզանից
չարախօսումէ, այն Մօսէսն՝ որ դուք ձեր յոյսը
46 նորա վերայ էք դրել։ Ինչուոր՝ եթէ դուք Մօսէ-
սին հաւատայիք, ապա ինձ էլ կ'հաւատայիք.
47 պատճառնոր՝ նա ինձ համար գրեց։ Բայց թէ որ
նորա գրքերին չէք հաւատում, ի՞նչպէս իմ խօս-
քերիս կ'հաւատաք։

ԳԼ. Զ

Քրիստոս 5000 մարդկանց կերակրում է. գնում է ծովին վերայ. քարոզում է իր մարմնոյ ուտելն ու իր արեան խմելը ։

1 Սորանից ետեւ գնաց Յիսուս Գալիլեացոց Տիբե-
2 րիա ծովի միւս կողմը ։ Եւ շատ ժողովուրդ էր գը-
նում Նորան ետեւէն. ինչուոր՝ տեսնումէին այն
3 նշաններն՝ որ անումէր հիւանդներին վերայ ։ Յի-
սուս վեր ելաւ սարը, և աշակերտներին հետ նըս-
4 տումէր այնտեղ ։ Եւ Հրէաների զատիկ տօնը մօ-
տիկ էր ։
5 Յիսուս իրեն աչքերը բարձրացրուց և տեսաւ,
որ շատ ժողովուրդ էր գալիս իրեն մօտ. Փիլիպ-
պոսին ասաց. ի՞նչ տեղից հաց գնենք՝ որ դորանք
6 ուտեն ։ Այս բանս փորձելոյ համար էր ասում.
7 բայց ինքը գիտումէր՝ թէ ինչ պիտի անէր ։ Փի-
լիպպոսը պատասխան տուաւ Նորան. Երկու հար-
իւր դահեկանի հաց բաւական չէ դորանց համար՝
8 այնպէս որ ամեն մէկը մին քիչ առնէ ։ Նորա ա-
շակերտներիցը մինը [illegible] Անդրէաս՝ վէմ Սիմօ-
9 նի եղբայրն՝ ասաց Նորան ։ Այստեղ մին տղայ
կայ, որ հինգ գարէ հաց ունի և երկու ձուկ.
10 բայց նա ի՞նչ է այդչափ մարդկանց համար ։ Յի-
սուս ասաց. Այդ մարդկանցդ նստացրէ՛ք. և շատ
խոտ կար այն տեղը. և մարդիկը նստեցին համա-
11 րով իբր հինգ հազար ։ Եւ Յիսուս հացն առաւ
և գոհացաւ և բաժանեց նստողներին. այնպէս էլ
12 ձկներիցն որչափ որ կամեցան ։ Եւ երբոր կշտա-

ցան, աշակերտներին ասաց. ժողովեցէ՛ք այդ ա-
13 ւելցած կտորներն՝ որ բան չ՚կորչի ։ Ժողովեցին
և կտորներիցը տասն երկու քթոց լցրին այն հինգ
14 գարէ հացիցն՝ որ ուտողներիցն աւելացաւ ։ Բայց
մարդիկն երբոր տեսին այն նշանն որ արաւ, ա-
սումէին՝ թէ Այս այն ճշմարիտ մարգարէն է՝ որ
15 պէտք էր աշխարհք գայ ։ Յիսուս երբոր գիտաց՝
թէ գալու են իրեն յափշտակելոյ՝ որ թագաւոր
16 անեն իրեն՝ միւսանգամ գնաց սարը մինակ ։ Եւ
երբոր իրիկուն էլաւ՝ Նորան աշակերտները վէր ե-
17 կին ծովին եզրը ։ Եւ մտին նաւն ու գնացին ծովի
այն կողմը՝ Կափառնայում. և երբոր մթնացաւ՝
18 Յիսուս դեռ չէր եկել նորանց մօտ ։ Եւ ծովը սաս-
19 տիկ քամի փչելուցը շարժվումէր ։ Եւ երբոր քսան
և հինգ կամ երեսուն ասպարէզի չափ առաջ գը-
նացին՝ Յիսուսին տեսին՝ որ ծովին վերայ գալիս
20 էր՝ և նաւին մօտիկ էր՝ և շատ ահով լցվան ։ Եւ
21 Նա ասաց նորանց. Ես եմ՝ մի՛ վախենաք ։ Եւ կա-
մենումէին Նորան ընդունել նաւին մէջը. և նաւը
շուտով հասաւ այն երկիրն՝ որ գնումէին ։
22 Յետեւի օրն այն ժողովուրդն՝ որ ծովի այն կող-
մըն էր՝ տեսաւ որ ուրիշ նաւ չ՚կար այնտեղ այն
մեկիցը ջոկ՝ որ Յիսուսին աշակերտները նորա մէջ
մտին. և որ Յիսուս աշակերտներին հետ նաւը չէր
մտած, բայց մինակ նորան աշակերտները գնացին ։
23 Բայց Տիբերիայիցն ուրիշ նաւեր եկին այն տեղին
24 մօտ՝ որ հացը կերին ։ Ապա երբոր ժողովուրդը
տեսաւ՝ թէ ո՛չ Յիսուսն այնտեղ է և ո՛չ Նորան
աշակերտները, նորանք այն նաւերն առին և եկին
25 Կափառնայում, որ Յիսուսին ման գան ։ Եւ երբ-

որ նորան ծովի այն կողմն գտին՝ նորան ասացին․
26 Ռա՛բբի՝ ե՞րբ եկիր այստեղ։ Յիսուս պատասխան
տուաւ նորանց և ասաց․ Ճշմարիտ ճշմարիտ ա-
սում եմ ձեզ․ Դուք ինձ ման էք գալիս՝ չէ թէ նո-
րա համար՝ որ մին նշան տեսիք, բայց որ այն հա-
27 ցից կերէք՝ և կշտացաք։ Գնացէ՛ք ո՛չ թէ կորչե-
լու կերակուրը գործեցէ՛ք, բայց այն կերակուրն
որ յաւիտենական կեանքին մէջ կ'մնայ, որ նորան
Որդին մարդոյ կ'տայ ձեզ․ պատճառ որ՝ Աստուած
28 Հայրը կնքով հաստատեց նորան։ Նորան ասացին․
Ի՞նչ պիտի անենք՝ որ Աստուծոյ գործքերը գոր-
29 ծենք։ Յիսուս պատասխան տուաւ և նորանց ա-
սաց․ Սա է Աստուծոյ գործն՝ որ հաւատաք նո-
30 րան՝ որ նա ուղարկեց։ Նորան ասացին․ Ի՞նչ նը-
շան կանես՝ որ տեսնենք և հաւատանք․ ի՞նչ կը
31 գործես։ Մեր հարքն անապատին մէջ մանանայ
կերին․ ինչպէս որ գրված է թէ՝ Երկնքից հաց
32 տուաւ նորանց ուտել։ Յիսուս նորանց ասաց․
Ճշմարիտ ասում եմ ձեզ․ թէ Մօսէս չ'տուաւ ձեզ
այն հացն երկնքից, բայց իմ Հայրս երկնքից
33 ճշմարիտ հացը կ'տայ ձեզ։ Պատճառ որ՝ Աստուա-
ծանից հացը նա է՝ որ երկնքից է վէր գալիս՝ և
34 աշխարհքին կեանք տալիս։ Նորան ասացին․ Տէ՛ր՝
35 ամեն ժամանակ տո՛ւր մեզ այն հացը։ Յիսուս նո-
րանց ասաց․ Ես եմ կենաց հացը․ ով որ ինձ մօտ
է գալիս՝ չի սովիլ, և ով որ ինձ հաւատումէ՝ ը-
36 նաւ մին ժամանակ չ'ծարաւիլ։ Բայց ասացի ձեզ՝
37 թէ տեսիք ինձ՝ և չէք հաւատում։ Ամեն՝ ում որ
Հայրն տալիս է ինձ, ինձ մօտ կ'գայ․ և նա որ ինձ
38 մօտ է գալիս՝ դուրս չեմ հանիլ նորան․ Պատ-

ճառ որ՝ ես վէր չեկի երկնքից՝ որ իմ կամքս ա-
39 նեմ, բայց նորա կամքն՝ որ ինձ ուղարկեց։ Սա է
իմ Հօրս կամքն, որ ինձ ուղարկեց․ որ այն ամե-
նըն՝ որ Հայրն ինձ տուաւ՝ նորանից չ'կորցնեմ․
40 այլ յետին օրումը յարուցանեմ նորան։ Սա է
իմ Հօրս կամքն, որ ամեն ով որ տեսնէ Որդուն և
հաւատայ նորան, յաւիտենական կեանքն ընդու-
նի․ և ես յետին օրումը կ'յարուցանեմ նորան։
41 Հրէաները տրտնջումէին նորանից՝ որ ասաց, թէ
42 Ես եմ երկնքից վէր եկած հացը։ Եւ ասումէին․
Չէ՞ որ սա Յօսէփին որդին է՝ որ մենք գիտումենք
նորա հօրը․ ապա ի՞նչպէս է ասում՝ թէ Ես եր-
43 կընքից վէր եկի։ Յիսուս պատասխան տուաւ և
44 ասաց նորանց․ Մի՛ տրտնջէք իրար հետ։ Ո՛չ ով
կարող չէ ինձ մօտ գալ, եթէ Հայրն՝ որ ինձ ու-
ղարկեց՝ չ'քաշէ՛ նորան․ և ես յետին օրումը կ'յա-
45 րուցանեմ նորան։ Գրված է մարգարէներին մէջ
թէ՝ Եւ ամենքն Աստուածանից սովորած կ'լինին․
ամեն ով որ Հօրից է լսում և սովորում՝ գալիս
46 է ինձ մօտ։ Իրր չէ թէ մինը տեսել է Հօրը․ բայց
միայն նա՝ որ ինքն Աստուածանից է․ նա տեսաւ
47 Հօրը։ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ․ թէ
Ով որ ինձ հաւատումէ՝ յաւիտենական կեանքն
48 ընդունումէ։ Ես եմ կենաց հացը։ (49) Ձեր հար-
քը մանանան կերին անապատումը, և մեռան։
50 Սա է այն հացն, որ երկնքից է վէր եկել՝ որ եթէ
51 մինը սորանից ուտէ՝ չի մեռնիլ։ Ես եմ կենդանի
52 հացը, որ երկնքից է վէր եկել։ Թէ որ մինն այս
հացից ուտէ՝ յաւիտեան կապրի․ և այն հացն՝ որ
ես կ'տամ՝ իմ մարմինս է, որ ես նորան աշխարհ-
քի կենաց համար կ'տամ։

53 Հրէաներն իրար հետ կռւում էին և ասում. Սա
ի՞նչպէս կարող է իրեն մարմինը տալ մեզ ուտե-
54 լու ։ Յիսուս նորանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ ձեզ, թէ որ Որդու մարդու մարմինը չու-
տէք և նորան արիւնը չ'խմէք, կեանք չունիք ձեր
55 անձին մէջը ։ Ո՛վ որ իմ մարմինս ուտում է և իմ
արիւնս խմում, յաւիտենական կեանքն ունի. և
56 ես յետին օրումը կ'յարուցանեմ նորան ։ Ինչու որ՝
իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, և իմ արիւնս
57 ճշմարիտ խմելիք է ։ Ո՛վ որ իմ մարմինս ուտում է
և իմ արիւնս խմում՝ ինձանում կ'ընակի, և ես
58 նորանում ։ Ինչպէս որ կենդանի Հայրն ինձ ուղար-
կեց, և ես կենդանի եմ Հօր համար, այնպէս էլ
նա՝ որ ինձ ուտում է, կենդանի կ'լինի ինձ համար ։
59 Սա է այն հացն՝ որ երկնքից է վէր եկել, չէ թէ
ինչպէս որ ձեր հարքը մանանան կերին և մեռան.
ով որ այս հացս ուտում է՝ յաւիտեան կապրի ։
60 Այս բանս ժողովարանին մէջ ասաց՝ երբոր Կա-
61 փառնայումին մէջ սովորցնում էր ։ Եւ աշակերտ-
ներիցը շատերն երբոր էս լսեցին՝ ասացին. Դըժ-
ւար է այդ բանդ, ո՞վ կարող է լսել նորան ։
62 Երբոր Յիսուս գիտաց իրեն անձնումը՝ թէ աշա-
կերտները տրտնջում էին նորա համար, նորանց ա-
63 սաց. Դա՞ է գայթակղացնում ձեզ ։ Ապա եթէ
Որդին մարդու տեսնէք, որ վէր էլլի ուր որ առաջ
64 էր ։ Հոգին է կենդանացնող, մարմինը մին օգուտ
չի տալիս. այն բանն՝ որ ես ձեզ հետ խօսեցի՝ հո-
65 գի է և կեանք ։ Բայց ձեզանից մին քանիսը կան,
որ չեն հաւատում, պատճառն որ՝ Յիսուս սկզբիցը
գիտում էր, ո՞վ են նորանք՝ որ չեն հաւատում,

և ով է նա՝ որ պիտի մատնէր իրեն. և ասում էր.
66 Նորա համար ասացի ձեզ՝ թէ ոչ ով կարող չէ ինձ
մօտ գալ, եթէ իմ Հօրից տուած չ'լինի ։
67 Սորանից ետև նորա աշակերտներիցը շատերը
յետ գնացին, և էլ ման չէին գալիս նորա հետ ։
68 Յիսուս տասներկու աշակերտներին ասաց. Միթէ
69 դո՞ւք էլ էք կամենում գնալ ։ Սիմօն Պետրոսն
պատասխան տուաւ նորան. Տէ՛ր՝ ո՞ւմ մօտ գը-
նանք. դո՛ւ յաւիտենական կենաց խօսքեր ունիս.
70 Եւ մենք հաւատացինք և ճանաչեցինք՝ թէ դու ես
71 Քրիստոսն Աստուծոյ Որդին ։ Յիսուս պատասխան
տուաւ նորանց. Չէ՞ որ ես ձեզ տասներկուսիդ
72 ընտրեցի, և ձեզանից մինը սատանայ է ։ Եւ սա
Իսկարիոտացի Սիմօնեան Յուդային համար էր ա-
սում. ինչու որ՝ իսկ նա պիտի մատնէր նորան. և
ինքը տասներկուսիցը մինն էր ։

ԳԼ. Է

Քրիստոսի եղբարց անհաւատութիւնը. Նորա քարոզը տա-
ղաւարահարաց տօնին, ժողովրդին գաղափարները
նորա մասին. Նիկոդիմոս պաշտպանում է նորան ։

1 Եւ սորանից ետև Յիսուս ման էր գալիս Գալիլ-
եային մէջ. ինչու որ՝ չէր կամենում Հրէաստանու-
մը ման գալ, պատճառն որ՝ Հրէաները խնդրում էին
սպանել նորան ։
2 Եւ Հրէաներին տաղաւարահարաց տօնը մօտիկ
3 էր ։ Նորան եղբարներն ասացին նորան. Այստեղից
գո՛ւրս եկ և գնա՛ Հրէաստան, որ քո աշակերտ-

4 ներդ էլ տեսնեն քո գործքերդ՝ որ գործում ես։ Ին-
չու որ՝ ո՛չ ով չ՚կայ՝ որ թաքուն մին բան անէ, և
խնդրէ որ ինքը ճանաչված լինի. թէ որ դա գոր-
5 ծում ես, քո անձդ յայտնէ աշխարհքին։ Պատճա-
ռընոր՝ իսկ իւրեն եղբարներն էլ չէին հաւատացել
6 նորան։ Յիսուս նորանց ասաց. իմ ժամանակս դեռ
հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ
7 է։ Աշխարհքը կարող չէ ձեզ ատել. բայց ինձ
ատում է, ինչու որ՝ ես նորա համար վկայում եմ՝ թէ
8 նորա գործքերը չար են։ Դուք գնացէ՛ք այն տօ-
նը, ես չեմ գնում այն տօնը. ինչու որ՝ իմ ժամա-
9 նակս դեռ լցված չէ։ Սա որ ասաց՝ ինքը մնաց այն
10 տեղ Գալիլեային մէջ։ Երբոր նորան եղբարները
գնացին, ապա ինքն էլ գնաց այն տօնը, չէ՛ թէ
յայտնի, բայց իբր մին ծածուկ կերպով։
11 Եւ Հրէաները խնդրումէին նորան այն տօնումը
12 և ասում, թէ Նա ո՞րտեղ պիտի լինի։ Եւ ժողո-
վրդին մէջ տրտնջմունք կար նորա համար. կէսն
ասումէին՝ թէ Բարի մարդ է. ուրիշներն ասում
13 էին՝ չէ՛, այլ ժողովրդին մոլորացնումէ։ Եւ ո՛չ
ով համարձակ չէր խօսում նորա վերայ, Հրէանե-
րի վախին համար։
14 Երբոր տօնն կէս էլաւ, Յիսուս վեր էլաւ տա-
15 ճարն՝ ու սովորցնումէր։ Հրէաներն զարմանումէին
և ասում. Սա ի՞նչպէս է գիտում գրքերն, որ ըլ-
16 նաւ սովորած չէ։ Յիսուս պատասխան տուաւ նո-
րանց և ասաց. իմ վարդապետութիւնս իմս չէ,
17 այլ նորանն է՝ որ ինձ ուղարկեց։ Թէ որ մինը կա-
մենումէ նորա կամքն անել՝ նա կիմանայ իմ վար-
դապետութեանս համար, եթէ Աստուածանի՞ց է,

18 կամ եթէ ես իմ անձնիցս եմ խօսում։ Նա որ ի-
րեն անձնիցն է խօսում, իրեն անձին փառքն է
խնդրում. բայց նա՝ որ նորա փառքն է խնդրում՝
որ ուղարկեց նորան՝ նա ճշմարիտ է, և անիրաւու-
19 թիւն չ՚կայ նորանում։ Չէ՞ որ Մօսէսը տուաւ ձեզ
օրէնքը, և ձեզանից ո՛չ ով չի կատարում օրէնքը։
20 Ինչո՞ւ էք ուզում ինձ սպանել. Ժողովուրդը պա-
տասխան տուաւ և ասաց. Դեւ կայ քեզանում.
21 ո՞վ է ուզում՝ որ քեզ սպանէ։ Յիսուս պատաս-
խան տուաւ նորանց և ասաց. Մին գործ գործե-
22 ցի, և ամենքդ զարմացել էք։ Նորահամար Մօ-
սէսը ձեզ տուաւ թլփատութիւնը, չէ թէ որ Մօ-
սէսիցն էր, բայց այն հին հարանցիցը. և շաբաթ
23 օրը մարդ էք թլփատում։ Ապա եթէ մարդ շաբաթ
օրը թլփատութիւն է առնում, որ Մօսէսին օրէն-
քը չ՚քանդվի, ինձ վերայ բարկացա՞ծ էք՝ որ ես
24 ամբողջ մարդ բժշկեցի շաբաթ օրը։ Աչքի երե-
ւութով մի՛ դատէք, բայց շիտակ դատաստան ա-
րէ՛ք։
25 Երուսաղէմացիներիցը մին քանիսն ասումէին.
26 Չէ՞ որ սա նա է որ ուզումէին նորան սպանել։ Եւ
ահա՛ յայտնի խօսումէ, և բան չեն ասում՝ դո-
րան. չ՚լինի՞ որ իշխաններն էլ իմացան՝ որ սա՛ է
27 Քրիստոսը։ Բայց սորան գիտումենք թէ որտեղից
է. և Քրիստոսն երբոր կ՚գայ, ընաւ մինը չ՚գիտե-
28 նայ թէ որտեղից է։ Յիսուս աղաղակեց տաճա-
րումը, սովորցնումէր և ասում. Թէ ինձ գիտում
էք, և թէ ինչ տեղից եմ եկել գիտումէք. և իմ
անձնիցս չեմ եկել. բայց նա ճշմարիտ է՝ որ ինձ
29 ուղարկեց. որ դուք նորան չէք գիտում։ Ես գի-

տեմ Նորան, ինչու որ՝ իսկ Նորանից եմ, և Նա
30 ուղարկեց ինձ։ Եւ ուզումէին բռնել Նորան, և
Նորանց ձեռներիցը դուրս գնաց․ և ո՛չ ով ձեռք
չ'ձգեց Նորան․ ինչու որ՝ Նորա ժամանակը դեռ չէր
31 հասել։ Եւ ժողովրդիցը շատ մարդիկ հաւատացին
Նորան՝ և ասումէին․ Քրիստոսն երբոր կ'գայ՝ մի
թէ աւելի՞ նշաններ կանէ, քան Նա՝ որ սա է ա-
նում։

32 Եւ փարիսեցիներն լսեցին ժողովրդին այն տըր-
տունջն՝ որ Նորա համար արել էին․ և քահանայա-
պետներն ու փարիսեցիներն սպասաւորներ ու-
33 ղարկեցին՝ որ բռնեն Նորան։ Յիսուս ասաց․ Մի
քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ՝ և գնումեմ Նո-
34 րա մօտ, որ ուղարկեց ինձ։ Ինձ ման կ'գաք և
չէ՛ք գտնիլ, և որտեղ որ ես եմ գնում, դուք
35 չէք կարող գալ։ Հրէաներն իրար ասացին․ Ապա
դա ո՞րտեղ պիտի գնայ, որ մենք չ'գտնենք դո-
րան․ միթէ հեթանոսներին մէջ ցրւած ժողովուրդ-
ներին մօտը կ'գնայ և հեթանոսներին կ'սովորցնէ։
36 Ի՞նչ է այն խօսքն՝ որ ասաց․ Թէ Ինձ ման կ'գաք
և չէք գտնիլ՝ և որտեղ որ ես եմ գնում, դուք
չէք կարող գալ։

37 Տօնին վերջին մեծ օրը Յիսուս կանգնած էր՝ ա-
ղաղակումէր և ասում․ Թէ որ մինը ծարաւ է՝
38 թո՛ղ Ինձ մօտ գայ, և խմէ․ Նա որ Ինձ հաւա-
տումէ՝ ինչպէս որ գիրքն էլ ասումէ, Նորա փորի-
39 ցը կենդանի ջրերի գետեր կ'բղխին։ Այս բանս ա-
սումէր այն Հոգոյն համար՝ որ պիտի ընդունէին նո-
րանք, որ հաւատումէին Նորան, ինչու որ՝ դեռ Հո-
գին չ'կար, որովհետև Յիսուս դեռ չէր փառա-

40 ւորւած։ Ժողովրդիցը մին քանիսն երբոր այս խօս-
քերս լսումէին, ասումէին․ Սա ճշմարիտ մարգա-
41 րէն է։ Ուրիշներն ասումէին․ Սա՛ Քրիստոսն է․
բայց կէսն ասումէին՝ Միթէ Քրիստոսը Գալիլեայի՞-
42 ցը կ'գայ։ Չէ՞ որ գրքերն ասումեն, թէ Քրիստոսը
Դաւթին զաւակիցը, և Բեթղեհեմ գիւղիցը պի-
43 տի գայ՝ որտեղ որ Դաւիթն էր։ Եւ տարաձայ-
44 նութիւն ելաւ ժողովրդին մէջ Նորա համար։ Եւ
Նորանից մին քանիսը կամեցան բռնել Նորան․ բայց
ընաւ մինը ձեռք չ'ձգեց Նորա վերայ։

45 Եւ սպասաւորները յետ եկին քահանայապետ-
ներին ու փարիսեցիներին մօտ․ և սորանք ասա-
ցին նորանց․ Ինչո՞ւ համար Նորան չ'բերիք այս-
46 տեղ։ Սպասաւորները պատասխան տուին և ասա-
ցին․ ընաւ մին ժամանակ մին մարդ չ'խօսեց ինչ-
47 պէս որ այն մարդը։ Փարիսեցիքը պատասխան տը-
ուին և ասացին․ Միթէ դո՞ւք էլ մոլորվեցաք։
48 Միթէ իշխաններիցը կամ փարիսեցիներիցը մինը
49 հաւատա՞ց Նորան։ Բայց այն ռամիկ ժողովուրդը․
50 որ օրէնքը չի գիտում և անիծւած են։ Նիկոդի-
մոսն՝ որ առաջ գիշերը Նորա մօտ էր եկել՝ և նո-
51 րանցից մինն էր․ ասաց նորանց․ Միթէ մեր օրէնք-
ները դատո՞ւմեն մին մարդ՝ թէ որ առաջ բան
չ'լսեն նորանից կամ գիտենան՝ թէ ի՞նչ է գոր-
52 ծում։ Պատասխան տուին նորան և ասացին․
Միթէ դո՞ւ էլ Գալիլեայիցն ես, քննէ և տե՛ս
53 որ Գալիլեայիցը մարգարէ դուրս չի գալ։ Եւ ա-
մեն մէկը գնացին իրենց տեղը։

ԳԼ․ Ը

Շնացող կինը․ վկայութիւն Քրիստոսի անձին և պաշտօնին մասին․ Նորա անարատութիւնն ու Աստուածութիւնը ։

1 Բայց Յիսուս գնաց Ձիթենեաց սարը ։ (2) Եւ ա-
ռաւօտանց նորէն եկաւ տաճարը, և ամեն ժողո-
վուրդը նորա մօտ էր գալիս․ և նստած սովորեց-
3 նում էր նորանց ։ Կարդացողները, քահանայապետ-
ներն ու փարիսեցիները մին կին բերին շնութեան
4 մէջ բռնըված, և կանգնացրին նորան առաջին․ Նո-
րան ասացին․ Վա՛րդապետ՝ այս կինս որ բռնել
5 ենք՝ ինքը յայտնապէս շնացած է ։ Եւ օրէնքումը
Մովսէս պատուիրեց մեզ, որ այսպէսիները քար-
կոծվին․ ապա՝ դու ի՞նչ ես ասում դորա համար ։
6 Այս բանս նորան փորձելոյ համար էին ասում, որ
չարախօսութիւն ունենան նորանից․ բայց Յիսուս
7 ցած նայելով մատովը գրում էր երկրի վերայ ։ Բայց
երբոր ստիպեցին հարցնելով նորան, վեր նայեց՝ և
ասաց․ Ձեզանից ով որ անմեղ է՝ թո՛ղ առաջ նա
8 քար ձգէ դորա վերայ ։ Եւ նորէն ցած նայելով
9 գրում էր երկրին վերայ ։ Եւ սա որ լսեցին մինը մի-
նից ետև դուրս էին գնում, առաջիններիցն սկը-
սած մինչև յետինները․ և Յիսուս մենակ մնաց,
10 և կինը կանգնած էր նորան առաջին ։ Յիսուս պա-
տասխան տուաւ և ասաց նորան․ Ո՛վ կին՝ ո՞ւր
11 են, ո՛չ ով քեզ չ՚դատապարտեց ։ Եւ ասաց․
Չէ՛՝ Տէ՛ր․ և Յիսուս ասաց․ Ես էլ չեմ քեզ դա-

տապարտում․ գնա՛՝ սորանից ետև մեղք մի՛ գոր-
ծեր ։
12 Յիսուս նորէն խօսեց նորանց հետ և ասաց․ Ես
եմ աշխարհքին լոյսը․ ով որ իմ ետևէս գայ՝
նա խաւարով չի գնալ․ բայց կենաց լոյսը կընդու-
13 նի ։ Փարիսեցիներն ասացին նորան․ Դո՛ւ քո ան-
ձիդ համար ես վկայում՝ և քո վկայութիւնդ ճըշ-
14 մարիտ չէ ։ Յիսուս պատասխան տուաւ և ասաց
նորանց․ Թէև իմ անձիս համար վկայումեմ՝ իմ
վկայութիւնս ճշմարիտ է․ ինչուոր՝ գիտումեմ՝ թէ
ուրտեղից եկի և ուրտեղ եմ գնում․ բայց դուք չէք
գիտում՝ թէ ուրտեղից եմ գալիս, և ուրտեղ եմ
15 գնում ։ Դուք մարմնոյ վերայ նայելով էք դատաս-
16 տան անում․ ես չեմ դատում ո՛չ մինին էլ ։ Թէ
և դատեմ էլ մինին, իմ դատաստանս ճշմարիտ
է․ ինչուոր՝ մենակ չեմ՝ բայց ես և Հայրն՝ որ ինձ
17 ուղարկեց ։ Եւ իսկ ձեր օրէնքումն էլ գրած է՝ թէ
18 Երկու մարդկանց վկայութիւնը ճշմարիտ է ։ Ես
եմ՝ որ ինձ համար վկայումեմ, և Հայրն էլ՝ որ
19 ինձ ուղարկեց՝ ինձ համար վկայումէ ։ Ասումէին
նորան․ Ո՞ր տեղ է քո Հայրդ․ Յիսուս պատաս-
խան տուաւ և ասաց նորանց․ Ո՛չ ինձ էք գի-
տում՝ և ո՛չ իմ Հօրս․ Թէ որ ինձ գիտենայիք՝
լինի որ իմ Հօրս էլ գիտենայիք ։
20 Այս բանս Յիսուս գանձատան մէջ խօսեց նո-
րանց հետ՝ երբոր տաճարումը սովորցնումէր․ և ո՛չ
ով չ՚բռնեց նորան․ պատճառնոր՝ դեռ նորա ժա-
մը չէր հասել ։
21 Յիսուս նորէն ասաց նորանց․ Ես գնումեմ և
ինձ ման կ՚գաք, և ձեր մեղացը մէջ կ՚մեռնիք,

ինչուոր՝ որ տեղ որ ես եմ գնում, դուք չէք կա-
22 րող գալ։ Հրէաներն ասումէին. Միթէ ի՞նքն ի-
րեն կ՚սպանէ, որ ասումէ՝ թէ Որտեղ որ ես եմ
23 գնում՝ դուք չէք կարող գալ։ Եւ ասաց նորանց.
Դուք այս տեղից ներքեւիցն էք. և ես այն տեղից
վերեւիցն եմ. դուք այս աշխարհքիցս էք՝ ես չեմ
24 այս աշխարհքիցս։ Բայց ասացի ձեզ՝ թէ Ձեր մե-
ղացը մէջ կ՚մեռնիք. ինչուոր՝ եթէ չ՚հաւատաք՝
25 թէ նա ես եմ, ձեր մեղացը մէջ կ՚մեռնիք։ Ասա-
ցին նորան. Դու ով ես. Յիսուս ասաց նորանց.
26 Առաջ նա՝ որ ճիշտ ձեզ հետ խօսումեմ։ Շատ
բան ունիմ ձեզ համար խօսիլ և դատել. բայց
նա որ ինձ ուղարկեց՝ ճշմարիտ է. և ես ինչ որ
27 նորանից լսեցի՝ նա եմ խօսում աշխարհումը։ Եւ
չիմացան՝ թէ Հօր համար էր ասում նորանց։
28 Յիսուս ասաց նորանց. Երբոր Որդուն մարդու կը
բարձրացնէք՝ այն ժամանակը կիմանաք՝ թէ ես եմ.
և իմ անձնիցս բան չեմ անում. բայց ինչպէս իմ
29 Հայրս սովրցրուց ինձ, նա եմ խօսում։ Եւ նա՝
որ ինձ ուղարկեց՝ ինձ հետ է. ինձ մինակ չ՚թո-
ղեց, ինչուոր՝ ես միշտ այն բաներն եմ անում,
որ հաճոյ են նորան.
30 Երբոր այս բանս խօսեց՝ շատ մարդիկ հաւատա-
31 ցին նորան։ Եւ Յիսուս հաւատացեալ Հրէաներին
ասաց. Թէ որ դուք իմ խօսքիս մէջ կենաք՝ իմ
32 ճշմարիտ աշակերտներս էք։ Եւ ճշմարտութիւնը
կ՚ճանաչէք. և ճշմարտութիւնը կազատէ ձեզ։
33 Պատասխան տուին նորան և ասացին. Մենք Աբ-
րահամի զաւակ ենք, և բնաւ մինին չ՚ծառայե-
ցինք. էլ ի՞նչպէս ես ասում՝ թէ Ազատ կ՚լինիք։

34 Յիսուս պատասխան տուաւ նորանց. Ճշմարիտ
ճշմարիտ ասումեմ ձեզ՝ թէ Ամեն ով որ մեղք է
35 անում՝ մեղքի ծառայ է։ Եւ ծառան յաւիտեան
չի կենում տանը մէջ. բայց որդին յաւիտեան է
36 կենում։ Ուրեմն եթէ Որդին ազատէ ձեզ, ճշմա-
37 րիտ ազատ կ՚լինիք։ Գիտումեմ որ Աբրահամի զա-
ւակ էք. բայց ուզումէք՝ որ ինձ սպանէք. ինչու
38 որ՝ իմ խօսքիս համար տեղ չ՚կայ ձեզանում։ Ես
ինչ որ տեսի իմ Հօրս մօտ՝ նա եմ խօսում. և
39 դուք՝ ինչ որ ձեր հօրից լսեցիք անումէք։ Պա-
տասխան տուին նորան և ասացին. Մեր հայրն
Աբրահամն է. Յիսուս նորանց ասաց. Թէ որ Աբ-
րահամին որդիքը լինէիք՝ Աբրահամին գործքերը
40 կ՚գործէիք։ Բայց հիմիկ ուզումէք որ ինձ սպանէք,
մին մարդ՝ որ ճշմարտութիւնը խօսեցի ձեզ. նա որ
իմ Հօրից լսեցի. այդ բանդ Աբրահամ չարաւ։
41 Դուք ձեր հօր գործքերն էք անում. ասացին նո-
րան. Մենք պոռնկութենիցը չենք ծնված. մեր
42 Հայրը մին է՝ Աստուած։ Յիսուս նորանց ասաց.
Թէ որ ձեր Հայրն Աստուած լինէր, ապա ինձ կը
սիրէիք. ինչուոր՝ ես Աստուածանից դուրս ելայ և
եկի. և չէ թէ իմ անձնիցս եկի, բայց նա ու-
43 ղարկեց ինձ։ Ինչո՞ւ համար իմ խօսքս չէք իմա-
նում. Նորահամար որ դուք չէք կարող իմ բանս
44 լսել։ Դուք սատանայ հօրիցն էք. և կամենումէք
ձեր հօր ցանկութիւններն անել. ինչուոր՝ նա սկըզ-
բիցը մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չը
մնաց, պատճառնոր՝ ճշմարտութիւն չ՚կայ նորա-
նում. երբոր սուտ խօսի՝ իսկ իրեն բաներիցն է
խօսում. ինչուոր՝ սուտ է և (նորա) ստութեան հայր։

45 Բայց ես՝ որովհետեւ ճշմարտութիւնն եմ խօսում,
46 ինձ չէք հաւատում։ Ձեզանից ո՞վ է որ ինձ մե-
ղաց համար յանդիմանէ․ թէ որ ճշմարիտն եմ
47 ասում ձեզ՝ ինչո՞ւ չէք հաւատում ինձ։ Նա որ
Աստուածանից է՝ Աստուծոյ բանին ականջ է դը-
նում․ և դուք նորահամար ականջ չէք դնում, որ
48 Աստուածանից չէք։ Հրէաները պատասխան տուին
և Նորան ասացին․ Չէ՞ որ լաւ ենք ասում՝ թէ
49 դու Սամարացի ես, և դեւ կայ քեզանում։ Յի-
սուս պատասխան տուաւ և ասաց․ Ինձանում դեւ
չ'կայ՝ բայց իմ Հօրս պատուում եմ, և դուք ա-
50 նարգում էք ինձ։ Ես իմ փառքս չեմ խնդրում․
51 կայ մինն՝ որ խնդրում է և դատում։ Ճշմարիտն
ճշմարիտն ասում եմ ձեզ․ Թէ որ մինն իմ խօսքս
52 պահէ՝ նա մահ չի տեսնիլ յաւիտեան։ Հրէաներն
ասացին նորան․ Հիմիկ իմացանք՝ որ դեւ կայ քե-
զանում․ Աբրահամը մեռաւ և մարգարէները․ և
դու ասում ես՝ Թէ որ մինն իմ խօսքս պահէ՝ նա
53 յաւիտեան մահ չի տեսնիլ։ Միթէ դու մին աւե-
լի՞ մեծն ես քան մեր հայր Աբրահամը, որ մեռաւ
և մարգարէները մեռան, ապա դու քեզ ո՞վ ես
54 անում։ Յիսուս պատասխան տուաւ․ Թէ որ ես
իմ անձս փառաւորեմ, իմ փառքս ո'չինչ է, Հայ-
րըն է՝ որ ինձ փառաւորում է, որ դուք նորա հա-
55 մար ասում էք՝ թէ, Մեր Աստուածն է։ Եւ չէք
ճանաչում նորան․ բայց ես գիտում եմ նորան․ և
թէ որ ասեմ՝ թէ չեմ գիտում նորան, ձեզ նման
սուտ կ'լինիմ․ բայց գիտում եմ նորան, և նորա
56 խօսքն պահում եմ։ Աբրահամ ձեր հայրը ցանկա-
57 ցաւ իմ օրս տեսնել, տեսաւ և ուրախ եղաւ։ Հը-

րէաները նորան ասացին․ Դու դեռ յիսուն տա-
58 րեկան չես, և Աբրահամի՞ն էլ տեսիր։ Յիսուս
նորանց ասաց․ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ
59 ձեզ․ ես Աբրահամի լինելուցն էլ առաջ եմ։ Հը-
րէաները քարեր վեր առին, որ նորա վերայ ձգեն․
և Յիսուս մին կողմը քաշուեցաւ, և դուրս ելաւ
գնաց տաճարիցը։

ԳԼ․ Թ

*Ի ծնէ կուրին բժշկութիւնը․ այս հրաշքիս հարցաքննու-
թիւնը։*

1 Եւ երբոր անցանում էր՝ մին մարդ տեսաւ ծնըն-
2 դիցը կոյր։ Եւ նորա աշակերտները հարցրին նո-
րան և ասացին․ Ռա'բբի՝ ո՞ւմ մեղքն է, սորա՞ն
3 թէ իրեն հօրն ու մօրը, որ սա կոյր ծնուաւ։ Յի-
սուս պատասխան տուաւ․ Ո'չ դորան մեղք է, և
ոչ էլ իրեն հօրը և ո'չ մօրը․ բայց որ Աստուծոյ
4 գործքերը յայտնի լինին դորանում։ Եւ ինձ պէտք
է՝ որ նորա գործքերը գործեմ, որ ինձ ուղարկեց՝
դեռ քանի որ օր կայ․ գիշերը գալիս է՝ որ այն
5 ժամանակն ո'չ ով կարող չէ գործել։ Քանի որ
6 աշխարհքի մէջ եմ՝ աշխարհքի լոյսն եմ։ Երբոր
սա ասաց՝ թքեց գետինը՝ և այն թքիցը ցեխ շի-
նեց՝ և այն ցեխը ծեփեց կոյրին աչքերին վերայ։
7 Եւ նորան ասաց, Գնա՛ լուա'ց Սելովամայ աւա-
զանումը․ որ թարգմանվում է՝ Առաքեալ․ գնաց
8 լուացաւ՝ եկաւ և տեսնում էր։ Բայց դրացիներն և
նորանք՝ որ առաջուց տեսել էին նորան՝ որ մու-

րացկան էր, ասումէին թէ՝ Չէ՞ որ սա էր՝ որ նըս-
տումէր և մուրանում, կէսն ասումէին՝ թէ Նա՛
9 է։ Ուրիշներն ասումէին. թէ Չէ՛. բայց նորան
10 նման է. և ինքն ասումէր՝ թէ Ես եմ։ Նորան ա-
ասցին. Ապա քո աչքերդ ի՞նչպէս բաց էլան։
11 Նա պատասխան տուաւ. Մին մարդ՝ որ Յիսուս
են ասում, ցեխ շինեց և իմ աչքերիս ծեփեց և
ինձ ասաց. Գնա՛ Սելօամ, և լուա՛ց. գնացի լուա-
12 ցայ և տեսնումեմ։ Նորան ասացին. Նա ո՞րտեղ
է. Նորանց ասաց. Չեմ գիտում։
13 փարիսեցիներին մօտ տարան նորան, որ մին ժա-
14 մանակ կոյր էր։ Եւ շաբաթ օր էր՝ երբոր Յիսուս
15 ցեխը շինեց և կոյրին աչքերը բացաւ։ Նորէն փա-
րիսեցիներն էին հարցնում նորան՝ թէ ի՞նչպէս ես
տեսնում. և նա նորանց ասաց. Ցեխ դրաւ իմ
16 աչքերիս վերայ և լուացայ և տեսնումեմ։ Այն
փարիսեցիներիցը մին քանիսն ասացին. Այն մար-
դըն Աստուածանից չէ՝ ինչուոր՝ շաբաթ օրերը չի
պահում. կէսն ասումէին՝ Ապա ի՞նչպէս կարող է
մեղաւոր մարդը նշաններ անել. և տարաձայնու-
17 թիւն էր նորանց միջումը։ Նորէն ասացին կոյ-
րին. Դու ի՞նչ ես ասում նորա համար՝ որ քո աչ-
18 քերդ բացաւ. և նա ասաց թէ Մարգարէ՛ է։ Եւ
Հրէաները չէին հաւատում նորա համար՝ թէ կոյր
էր և բացվաւ. մինչեւ որ աչքը բացվածին ծնող-
19 քը կանչեցին։ Նորանց հարցրին և ասացին. Սա՞
է ձեր որդին՝ որ դուք նորա համար ասումէք՝ թէ
20 կոյր ծնվաւ. ապա ի՞նչպէս է տեսնում։ Նորա ծը-
նողքը պատասխան տուին և ասացին. Գիտումենք
21 որ սա մեր որդին է, և թէ կոյր ծնվաւ։ Բայց թէ

հիմիկ ի՞նչպէս է տեսնում՝ նա չենք գիտում. կամ
թէ ո՞վ բացաւ անոր աչքերը՝ մենք չենք գիտում.
իրեն հարցրէ՛ք. ինքը չափը հասած է՝ թո՛ղ ինքը
22 խօսի իրեն համար։ Նորա ծնողքը սա ասացին,
պատճառնոր՝ Հրէաներիցը վախենումէին. ինչուոր՝
Հրէաներն ուխտ էին դրել որ՝ եթէ մինը Քրիստոս
23 դաւանէ նորան՝ ժողովարանիցը դուրս լինի։ Նո-
րահամար նորա ծնողքն ասացին՝ թէ Ինքը չափը
24 հասած է՝ իրենից հարցրէ՛ք։ Նորէն երկրորդ ան-
գամ կանչեցին այն մարդուն՝ որ կոյր էր, և նո-
րան ասացին. Աստուծոյ փա՛ռք տուր. մենք գի-
25 տումենք՝ որ այն մարդը մեղաւոր է։ Եւ նա ա-
սաց. Եթէ մեղաւոր է՝ ես չեմ գիտում, միայն
թէ սա եմ գիտում, որ կոյր էի՝ և հիմիկ տես-
26 նումեմ։ Նորէն ասացին նորան. Ի՞նչ արաւ քեզ.
27 ի՞նչպէս բացաւ քո աչքերդ։ Նորանց պատասխան
տուաւ. Հիմիկ ձեզ ասացի և չ՛լսեցիք. ինչո՞ւ էք
կրկին կամենում լսել. միթէ դուք է՞լ էք կամե-
28 նում նորան աշակերտ լինել։ Նորանք հայհոյում
էին նորան և ասում. Դո՛ւ լինիս նորան աշակերտ.
29 մենք Մօսէսի աշակերտներն ենք։ Մենք գիտում-
ենք՝ որ Աստուած Մօսէսի հետ խօսեց. սորան չենք
30 գիտում՝ ո՞ր տեղից է։ Այն մարդը պատասխան
տուաւ և նորանց ասաց. Ճիշտ դա է զարմանալի
բան՝ որ դուք չէք գիտում՝ թէ սա ո՞րտեղից է՝ և
31 իմ աչքերս բացաւ։ Գիտումենք՝ որ Աստուած մե-
ղաւորներին չի լսում. բայց թէ որ մինն Աստուա-
ծապաշտ է՝ և նորա կամքը կատարումէ՝ նորան լը-
32 սումէ։ Յաւիտենից մին մարդ չ՛լսեց՝ թէ մինը ծը-
33 նընդից կոյր ծնվածի աչքերը բացաւ։ Թէ որ այն

մարդն Աստուածանից չէր՝ մին բան չէր կարող ա-
34 նել ։ Պատասխան տուին՝ և նորան ասացին . Դու-
իսպառ մեղքին մէջն ես ծնվել, և դու վարդա-
պե՞տ ես լինում մեզ . և դուրս հանեցին նորան ։
35 Յիսուս լսեց՝ որ նորան դուրս հանեցին, և եր-
բոր նորան գտաւ՝ նորան ասաց . Դու հաւատո՞ւմ
36 ես Աստուծոյ Որդուն ։ Նա պատասխան տուաւ և
37 ասաց . Տէ՛ր՝ ո՞վ է նա՝ որ հաւատամ նորան ։ Յի-
սուս նորան ասաց . Հենց տեսիր նորան . և իսկ
38 նա՛ է, որ քեզ հետ խօսումէ ։ Եւ նա ասաց .
Հաւատումեմ Տէ՛ր՝ և երկրպագութիւն արաւ նո-
39 րան ։ Եւ Յիսուս ասաց . Ես դատաստանի համար
եկի այս աշխարհքս՝ որ նորանք՝ որ չեն տեսնում՝
տեսնեն, և նորանք՝ որ տեսնումեն՝ կուրանան ։
40 փարիսեցիներիցը մին քանիսն՝ որ նորա հետ է-
ին՝ լսեցին և նորան ասացին . Միթէ մենք է՞լ
41 կոյր ենք ։ Յիսուս նորանց ասաց . Թէ որ կոյր լի-
նէիք՝ մեղք չէիք ունենալ . բայց հիմիկ ասումէք
թէ՝ Տեսնումենք, և ձեր մեղքերը հաստատված են
ձեզանում ։

ԳԼ. Ժ

Բարի հովիւը և նորա ոչխարները . Յիսուսն է Մեսիան ։

1 Ճշմարիտ ճշմարիտ ասումեմ ձեզ . Ով որ դռ-
նովը չի մտնում ոչխարներին գաւիթը՝ բայց ուրիշ
կողմիցն է վեր ելլում այն տեղ՝ նա գող է և աւա-
2 զակ ։ Բայց նա որ դռնովն է մտնում, ոչխարներին
3 հովիւն է ։ Դռնապանը նորա համար բանում է .

և ոչխարները նորա ձայնին լսումեն, և իրեն ոչ-
խարներն իրենց անունովն է կանչում, և նորանց
4 դուրս հանում ։ Եւ երբոր իրեններն ամենը հա-
նումէ, նորանց առաջին գնումէ, և ոչխարները
նորա ետեւէն գնումեն . ինչու որ՝ նորա ձայնը ճա-
5 նաչումեն ։ Օտարի ետեւէն չեն գնում . բայց նո-
րանից փախչումեն, ինչու որ՝ օտարների ձայնն չեն
ճանաչում ։
6 Այս առակս Յիսուս ասաց նորանց . և նորանք
չէին գիտում, թէ ի՛նչ էր նա, որ խօսումէր նո-
7 րանց հետ ։ Նորէն Յիսուս նորանց ասաց . Ճշմա-
րիտ ճշմարիտ ասումեմ ձեզ . թէ Ես եմ ոչխար-
8 ներին դուռն ։ Ամենքն՝ որ ինձանից առաջ եկին,
գողեր և աւազակներ էին . ոչխարներն էլ նորանց
9 չ'լսեցին ։ Ես եմ դուռն . թէ որ մինն ինձանով
ներս մտնէ՝ նա կապրի . կ'մտնէ և դուրս կ'գայ, և
10 արօտ կ'գտնէ ։ Գողը չի գալիս, բայց մինակ որ
գողանայ և սպանէ և կորցնէ . ես եկի որ կեանք
11 ունենան, և էլ աւելի ունենան ։ Ես եմ բարի հո-
վիւը . բարի հովիւն իրեն անձը գնումէ ոչխարնե-
12 րին վերայ ։ Բայց վարձկանն՝ որ հովիւ չէ՛, որ ոչ-
խարները իրենը չեն . երբոր տեսնումէ՝ որ գայլը
գալիս է, ոչխարները թողումէ և փախչում . և
13 գայլը յափշտակումէ նորանց և ցրվում ։ Պատ-
ճառնոր՝ վարձկան է, և ոչխարներին համար հոգս
14 չունի ։ Ես եմ բարի հովիւը, և իմոնքներին ճա-
15 նաչումեմ և իմոնքներիցն էլ ճանաչվումեմ ։ Ինչ-
պէս որ Հայրն ինձ գիտումէ, այնպէս էլ ես Հօրը
գիտումեմ, և իմ անձս գնումեմ ոչխարներին վե-
16 րայ ։ Եւ դեռ ուրիշ ոչխարներ էլ ունիմ, որ այս

գաւիթիցս չեն, և նորանց էլ պէտք է, որ ես
այստեղ բերեմ. և իմ ձայնիս կ'լսեն, և մին հօտ
17 և մին հովիւ կ'լինին ։ Նորահամար իմ Հայրս սի-
րումէ ինձ, պատճառնոր իմ անձս դնումեմ՝ որ
18 մին էլ առնեմ նորան ։ Ո՛չ ով նորան չի հանում
ինձանից. բայց ես ինքս իմ անձնովս եմ դնում
նորան. իշխանութիւն ունիմ նորան դնելու և իշ-
խանութիւն ունիմ նորան նորէն առնելու. այս
պատուէրս իմ Հօրիցս առի ։
19 Նորէն տարաձայնութիւն էր լինում Հրէաներին
20 մէջ՝ այս բաներիս համար ։ Եւ նորանցից շատերն
ասումէին՝ թէ Դեւ կայ նորանում և գժւումէ.
ինչո՞ւ համար իսպառ ականջ էք դնում նորան ։
21 Կէսն ասումէին. Այսպէսի խօսքեր դիւահարի չեն.
միթէ դեւը կարո՞ղ է կոյրի աչքերը բանալ ։
22 Այն ժամանակն Երուսաղէմումը նաւակատիք տօն
23 էլաւ՝ և ձմեռն էր ։ Եւ Յիսուս ման էր գալիս տա-
24 ճարումը Սաղոմոնի սրահին մէջ ։ Հրէաները նորան
չորս կողմովը պատեցին և ասացին. Մինչեւ ե՞րբ
մեր հոգիներս հանես. թէ որ դու ես Քրիստոսը,
25 համարձակ ասա՛ մեզ ։ Յիսուս պատասխան տուաւ
նորանց և ասաց. Ասացի ձեզ և ինձ չէք հաւա-
տում. այն գործքերն՝ որ իմ Հօրս անունովը գոր-
26 ծումեմ՝ իսկ նորանք վկայումեն ինձ համար ։ Բայց
դուք չէք հաւատում. ինչուոր՝ իմ ոչխարներիցս
27 չէք ։ Իմ ոչխարներս իմ ձայնիս լսումեն և ես ճա-
28 նաչումեմ նորանց, և իմ ետեւէս գալիս են ։ Եւ
ես յաւիտենական կեանքն եմ տալիս նորանց, և
յաւիտեան չեն կորչիլ՝ և ո՛չ ով չի յափշտակիլ
29 նորանց իմ ձեռքիցս ։ Իմ Հայրս՝ որ նորանց տը-

ւաւ ինձ, ամենիցը մեծ է, և ո՛չ ով կարող չէ
30 իմ Հօրս ձեռքիցը յափշտակել նորանց ։ Ես և իմ
Հայրս մին ենք ։
31 Հրէաներն քարեր վեր առին՝ որ նորան քարկոծ
32 անեն ։ Յիսուս նորանց պատասխան տուաւ. Շատ
բարի գործքեր ցոյց տուի ձեզ իմ Հօրիցս. նո-
րանցից ո՞ր գործի համար էք ինձ քարկոծ անում ։
33 Հրէաները պատասխան տուին. Բարի գործքի հա-
մար քեզ քարկոծ չենք անում, բայց հայհոյու-
թեան համար. և որ դու մարդ ես, և քո անձդ
34 Աստուած ես անում ։ Յիսուս նորանց պատասխան
տուաւ. Չէ՞ որ ձեր օրէնքումը գրված է՝ թէ Ես
35 ասացի՝ թէ աստուածներ էք ։ Ապա թէ որ նո-
րանց աստուածներ է ասում՝ որ Աստուծոյ խօսքն
էլաւ նորանց վերայ. և կարելի չէ որ գիրքը քանդ-
36 վի. Ապա նորան որ Հայրը սրբեց և ուղարկեց աշ-
խարհք, դուք ասումէք թէ հայհոյումես. պատ-
37 ճառնոր ասացի՝ թէ Աստուծոյ Որդի եմ ։ Թէ որ
իմ Հօրս գործքը չեմ գործում, մի՛ հաւատաք
38 ինձ ։ Ապա թէ որ գործումեմ, թէեւ ինձ չ'հա-
ւատաք, գոնեա՛ գործքերին հաւատացէք. որ գի-
տենաք և ճանաչէք, թէ Հայրն ինձանում է և ես
Հօր միջումը ։
39 Նորէն ուզումէին որ նորան բռնեն, և նորանց
40 ձեռքիցը դուրս եկաւ ։ Եւ կրկին գնաց Յորդանա-
նի այն կողմն՝ այնտեղն, որ Յօհաննէսն առաջուց
41 կար և մկրտումէր. և այնտեղ էր լինում ։ Շատ
մարդիկ նորա մօտ եկին՝ և ասացին. թէ Յօհան-
42 նէս մին նշան չ'գործեց. Բայց ամեն ինչ որ Յօ-
հաննէս նորա համար ասաց, ճշմարիտ էր. և այն-
տեղ շատ մարդիկ հաւատացին նորան ։

ԳԼ. ԺԱ.

Ղազարոսին յարութիւնը ։

1 Եւ մին Ղազարոս մարդ կար հիւանդ՝ Բեթա-
նիայիցը, Մարիամի և նորա քոյր Մարթայի գիւ-
2 ղիցը ։ Սա այն Մարիամն էր՝ որ Տէրին իւղով օ-
ծեց և նորա ոտները սրբեց իրեն մազերովը. որ
3 նորա Ղազարոս եղբայրը հիւանդ էր ։ Նորա քը-
վերքն ուղարկեցին նորա մօտ և ասացին. Տէ՛ր՝ ա-
4 հա՛ նա՝ որ դու սիրում էիր՝ հիւանդացել է ։ Յի-
սուս երբոր լսեց՝ ասաց. Այն հիւանդութիւնը
մեռնելոյ համար չէ՝ այլ Աստուծոյ փառաց հա-
մար. որ Որդին Աստուծոյ նորանով փառաւորվի ։
5 Եւ Յիսուս սիրում էր Մարիամին և նորա քոյր
6 Մարթային և Ղազարին ։ Երբոր լսեց՝ թէ նա հի-
ւանդացել է, երկու օր մնաց այն տեղն՝ որ էր ։
7 Ապա նորանից ետև ասաց նորանց. Եկէ՛ք նորէն
8 գնանք Հրէաստան ։ Աշակերտներն նորան ասացին.
Ռա՛բբի՝ ճիշտ հիմիկ Հրէաները ուզում էին քեզ
քարկոծ անել. և դարձեա՞լ այնտեղ ես գնում ։
9 Յիսուս պատասխան տուաւ. Չէ՞ որ օրը տասն
երկու ժամ ունի. թէ որ մինը ցերեկը կ'գնայ,
նա չի գայթակղվիլ. ինչու որ՝ այս աշխարհքիս
10 լոյսը տեսնում է ։ Ապա թէ որ մինը գիշերումը կը
գնայ՝ կ'գայթակղվի. ինչու որ՝ լոյս չ'կայ նորա հետ ։
11 Երբոր սա ասաց, սորանից ետև ասաց նորանց.
Մեր Ղազարոս բարեկամը քուն էլաւ. բայց կը
12 գնամ՝ որ զարթնացնեմ նորան ։ Աշակերտներն

նորան ասացին. Տէ՛ր՝ թէ որ քուն էլաւ՝ ապա
13 կառողջանայ ։ Բայց Յիսուս նորա մեռնելոյն հա-
մար էր ասում. նորանց այնպէս երևեցաւ թէ քը-
14 նի թեքընկած լինելոյն համար էր ասում ։ Այն
ժամանակը Յիսուս յայտնի ասաց նորանց. Ղա-
15 զարոսը մեռաւ ։ Եւ ես ուրախ եմ ձեզ համար՝
որ դուք հաւատաք ինձ, որ ես այնտեղ չէի.
16 բայց հիմիկ եկէ՛ք գնանք նորա մօտ ։ Թօմաս Եր-
կուորեակ կոչվածն իւրեան ընկեր աշակերտներին ա-
սաց. Ապա եկէ՛ք՝ որ մենք էլ նորա հետ մեռնինք ։
17 Յիսուս եկաւ՝ նորան չորս օր գերեզմանի մէջ
18 դրած գտաւ ։ Եւ Բեթանիա մօտ էր Երուսաղէմին
19 տասն հինգ ասպարէզի չափով ։ Հրէաներիցը շատեր
եկել էին Մարթային և Մարիամին մօտ, որ եղ-
20 բօր կողմանէ մխիթարեն նորանց ։ Երբոր Մարթան
լսեց՝ թէ Յիսուս գալիս է, գնաց նորա առաջը.
բայց Մարիամն այնտեղ տանը մէջ նստած էր ։
21 Մարթան Յիսուսին ասաց. Տէ՛ր՝ թէ որ դու այս-
22 տեղ էլած լինէիր՝ իմ եղբայրս չէր մեռել ։ Բայց
հիմիկ էլ գիտեմ, թէ ինչ որ Աստուածանից
23 խնդրես՝ Աստուած կ'տայ քեզ ։ Յիսուս նորան ա-
24 սաց. Քո եղբայրդ յարութիւն կառնէ ։ Մարթան
նորան ասաց. Գիտեմ որ յարութիւն կառնէ
25 յարութենումը յետին օրումը ։ Յիսուս նորան ա-
սաց. Ե՛ս եմ յարութիւն և կեանք. ով որ ինձ
26 հաւատում է՝ թէև մեռնի՝ կապրի ։ Եւ ամէն ով
որ կենդանի է և ինձ հաւատում է, նա յաւիտեան
27 չի մեռնիլ. հաւատո՞ւմ ես սորան ։ Նորան ասաց.
Այո՛՝ Տէ՛ր, ես հաւատացի՝ թէ դու ես Քրիստո-
սըն Աստուծոյ Որդին, որ պէտք է աշխարհք գա-

28 մեր։ Եւ երբոր սա ասաց, գնաց թաքուն կան-
չեց իրեն Մարիամ քոյրը և ասաց. Վարդապե՛տն
29 եկել է և քեզ կանչում է։ Նա երբոր լսեց՝ շու-
30 տով վերկացաւ, և եկաւ Յիսուսին մօտ։ Յիսուս
դեռ չէր եկել գիւղը՝ բայց այնտեղն էր՝ որտեղ
31 որ Մարթան եկաւ նորան առաջը։ Բայց Հրէանե-
րը՝ որ այնտեղ տանը մէջ նորա հետ էին՝ և նո-
րան մխիթարում էին, երբոր Մարիամին տեսին՝
թէ շուտով վերկացաւ և գնաց՝ նորանք էլ նորա
ետեւէն գնացին. կարծում էին՝ թէ գերեզմանն է
32 գնում, որ այնտեղ լաց լինի։ Բայց Մարիամն եր-
բոր եկաւ այնտեղը՝ որ Յիսուսն էր՝ և նորան տե-
սաւ, նորա ոտներն ընկաւ և ասաց. Տէ՛ր՝ թէ որ
այստեղ պատահած լինէիր՝ իմ եղբայրս չէր մե-
33 ռել։ Յիսուս երբոր նորան տեսաւ՝ որ լաց էր լի-
նում և Հրէաներն էլ՝ որ նորա հետ էին՝ լաց էին
լինում, իրեն հոգոյն մէջ դժուարացաւ շատ տրտ-
34 մածի նման։ Եւ ասաց. Ի՞նչ տեղ դրիք նորան.
35 նորան ասացին. Տէ՛ր՝ ե՛կ և տե՛ս։ Եւ Յիսուս
36 արտասուեց։ Հրէաներն ասում էին. Տեսէ՛ք՝ թէ
37 ո՛րքան էր սիրում նորան։ Նորանցից կէսն ասում
էին. Միթէ սա որ կոյրին աչքերը բացաւ՝ չէ՞ր
38 կարող անել՝ որ սա էլ չ'մեռնի։ Յիսուս նորէն
իրեն մտքումը սաստիկ տրտմած՝ եկաւ գերեզմա-
նը. և նա մին այր էր՝ և մին քար նորա վերայ
39 դրած։ Եւ Յիսուս ասաց. Այդ քարդ դէ՛ն ձը-
գեցէք. մեռելին քոյր՝ Մարթան նորա ասաց.
Տէ՛ր՝ հիմիկ հոտած կ'լինի. ինչուոր՝ չորս օրվան
40 է։ Յիսուս նորան ասաց. Չէ՞ որ քեզ ասացի.
41 եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը կ'տեսնես։ Եւ

երբոր քարը վերաւին, Յիսուս իրեն աչքերը դէպի
վեր բարձրացրուց և ասաց. Հա՛յր՝ գոհանում եմ
42 քեզանից, որ ինձ լսեցիր։ Եւ ես գիտում էի՝ որ
ամեն ժամանակ լսում ես ինձ. բայց այս ժողովր-
դիս համար եմ անում՝ որ չորս կողմիս կանգնած
43 են, որ հաւատան թէ դու ուղարկեցիր ինձ։ Եր-
բոր սա ասաց, մեծ ձայնով աղաղակեց և ասաց.
44 Ղա՛զարէ՝ վեր կաց՝ դո՛ւրս եկ։ Եւ մեռեալը դուրս
եկաւ կապած ոտներով, և ձեռները շորերով պա-
տած, և երեսը վարշամակներով պատած. և Յի-
սուս նորանց ասաց. Արձակեցէ՛ք դորան և թողէ՛ք
որ գնայ։
45 Հրէաներիցը շատերն՝ որ Մարիամին մօտն էին
եկել՝ երբոր տեսին նա՝ որ նա արաւ, հաւատա-
46 ցին նորան։ Եւ նորանցից մին քանիսը գնացին
փարիսեցիներին մօտ, և նորանց պատմեցին ինչ
որ Յիսուսն արաւ։
47 Քահանայապետներն ու փարիսեցիներն ատեան
ժողովեցին, և ասացին. Ի՞նչ անենք, ինչուոր՝
48 այն մարդը շատ նշաններ է անում։ Թէ որ նորան
այսպէս թողենք՝ ամենքը կ'հաւատան նորան, և
Հռոմայեցիքը կ'գան ու մեր ազգը և տեղը վեր
49 կառնեն։ Նորանցից մինը Կայիափա անունով՝ որ
այն տարվան քահանայապետն էր՝ նորանց ասաց.
50 Դուք բնաւ բան չէք գիտում, Եւ բնաւ էլ չէք
մտածում, թէ լաւ է մեզ համար՝ որ մին մարդ
մեռնի ժողովրդիս վերայ՝ և ամեն ազգս չ'կորչի։
51 Այս բանս ո՛չ թէ իրենից ասաց. բայց որովհե-
տև այն տարվան քահանայապետն էր, մարգա-
րէացաւ՝ թէ Յիսուս պիտի մեռնէր ազգին վերայ։

52 Եւ ո՛չ թէ մինակ ազգին վերայ, բայց որ Աս-
տուծոյ ցրուած որդիքներն էլ միատեղ ժողովէ։
53 Ապա այն օրիցն ետեւ խորհուրդ արին՝ որ Նո-
54 րան սպանեն։ Եւ Յիսուս նորանից ետեւ էլ հա-
մարձակ չէր ման գալիս Հրէաներին մէջ. բայց այն-
տեղից գնաց մին երկիր, որ անապատին մօտ էր,
մին քաղաքի մէջ՝ որ Նորան անունը Եփրայիմ էր.
և այնտեղ էր կենում աշակերտներին հետ։
55 Եւ Հրէաներին զատիկը մօտ էր, և այն գաւա-
ռից շատ մարդիկ առաջ վեր ելան Երուսաղէմ,
56 որ իրենց անձները սրբեն։ Ման էին գալիս Յի-
սուսին, և իրար ասում՝ երբոր տաճարումն էին.
Ի՞նչպէս է երեւում ձեզ. միթէ այս տօնիս չի՞
գալ Նա այստեղ. Բայց քահանայապետներն ու
փարիսեցիները հրաման էին տուել, որ եթէ մինը
գիտենայ՝ թէ ինչ տեղ է, Նորա համար իմաց
տայ՝ որ բռնեն Նորան։

ԳԼ. ԺԲ

Քրիստոսին օծումը. Երուսաղէմ մտնելը. Նորա մահուան պտուղը. երկնքից եկած ձայնը. հրէից անհաւատութիւնը։

1 Բայց Յիսուս զատիկից վեց օր առաջ եկաւ Բե-
թանիա, որտեղ որ մեռած Ղազարոսն էր՝ որ Նո-
2 րան մեռելների միջից յարոյց։ Եւ այնտեղ հաց-
կերութիւն արին Նորա համար. և Մարթան ծա-
ռայում էր սեղանին, և Ղազարը Նորա հետ նըս-
3 տողներից մինն էր։ Բայց Մարիամը մին լիտրկար-

դօսի ազնիւ մեծագին իւղ առաւ. և Յիսուսին
ոտներն օծեց, և իրեն մազերովը սրբում էր Նորան
4 ոտները. և տունը լցուաւ այն իւղին հոտովը։ Ա-
շակերտներիցը մինը՝ Յուդա Իսկարիովտացին, որ
5 Նորան մատնելու էր՝ ասաց. Ինչո՞ւ համար այդ
իւղդ երեք հարիւր դենարի չ՚ծախվեցաւ, և աղ-
6 քատներին տվուաւ։ Սա ասաց չէ՛ թէ որ նա աղ-
քատների համար հոգս ունէր. բայց նորա համար
որ գող էր՝ և քսակը ինքն ունէր. և ինչ որ ընկ-
7 նում էր՝ նա էր պահում։ Յիսուս ասաց. Թո՛յլ
տուր դորան, որ մինչեւ իմ պատանքիս օրը պա-
8 հէ դա։ Աղքատներն ամեն ժամանակ ձեզ հետ
ունիք. Բայց ինձ ամեն ժամանակ չունիք ձեզ հետ։
9 Երբոր Հրէաներից շատ ժողովուրդ գիտաց՝ թէ
Նա այնտեղ է՝ եկին, ո՛չ թէ մինակ Յիսուսին հա-
մար, բայց որ Ղազարին էլ տեսնեն, որ Նորան
10 մեռելների միջից յարոյց։ Քահանայապետները
11 խորհուրդ արին՝ որ Ղազարին էլ սպանեն։ Պատ-
ճառնոր՝ Հրէաներիցը շատ մարդիկ գնումէին և
հաւատում Յիսուսին։
12 Նորա յետեւի օրը շատ ժողովուրդ՝ որ եկել
էին տօնը, երբոր լսեցին՝ թէ Յիսուս գալիս է Ե-
13 րուսաղէմ. Արմաւի ծառի ճղեր առին, և դուրս
գնացին Նորան առաջը, աղաղակումէին և ասում.
Ովսաննա, օրհնեալ որ Տէրի անունովը գալիս ես՝
14 դու Իսրայէլի թագաւորդ։ Եւ Յիսուս մին էշ գը-
տաւ, և նորա վերայ նստեց. ինչպէս որ գրուած
15 է՝ թէ. Մի՛ վախենար Սիօնի աղջիկ, ահա՛ քո
թագաւորդ գալիս է՝ իշի աւանակի վերայ նըս-
16 տած։ Եւ աշակերտներն առաջ չիմացան այն բա-

նը. բայց երբոր Յիսուս փառաւորվեցաւ՝ այն ժա-
մանակը մտքները բերին՝ թէ նա էր՝ որ նորա հա-
17 մար գրված էր. և այն բանն արին նորան։ Եւ
ժողովուրդն՝ որ նորա հետ էր՝ վկայումէր, թէ
Ղազարին գերեզմանիցը մինակ դուրս կանչեց. և
18 այնպէս մեռելների միջիցը յարոյց նորան։ Եւ նո-
րա համար ժողովուրդը գնաց նորան առաջը, ին-
19 չուոր՝ լսեցին թէ նա այն նշանն արել էր։ Բայց
փարիսեցիներն իրար մէջ ասումէին. Տեսնո՞ւմէք՝
որ բնաւ հնար չէք գտնում. ահա՛ ամեն աշխարհք
նորա ետեւէն գնաց։

20 Այն տեղ մին քանի հեթանոսներ էլ կային
նորանց միջումը. որ եկել էին այնտեղ, որ երկր-
21 պագութիւն անեն այն տօնումը։ Նորանք եկին
Փիլիպպոսին մօտ՝ որ Գալիլեացոց Բեթսայիդայիցն
էր, նորան աղաչումէին և ասում. Տէ՛ր՝ կամե-
22 նումենք Յիսուսին տեսնել։ Փիլիպպոսն եկաւ և
Անդրէասին ասաց. Անդրէասն ու Փիլիպպոսն ա-
23 սացին Յիսուսին։ Եւ Յիսուս պատասխան տուաւ
նորանց՝ և ասաց. Ժամը հասաւ՝ որ Որդին մար-
24 դոյ փառաւորվի։ Ճշմարիտն ճշմարիտն ասումեմ
ձեզ. Թէ որ ցորենի հատը հողի մէջ չ'ընկնի և մեռ-
25 նի, ինքն մինակ կ'մնայ. բայց թէ որ մեռնի՝ շատ
պտուղ կ'բերէ. ով որ իրեն անձը սիրումէ՝ կ'կոր-
ցընէ նորան. և ով որ իրեն անձն ատումէ այս
աշխարհքումս, յաւիտենական կենաց մէջ կ'պա-
26 հէ նորան։ Թէ որ մինը ծառայէ ինձ՝ թո՛ղ նա
իմ ետեւէս գայ. և որտեղ որ ես եմ՝ այնտեղ
էլ իմ պաշտօնեայս կ'լինի. թէ որ մինը ծառայէ
27 ինձ, իմ Հայրս կ'պատուէ նորան։ Բայց հիմիկ

իմ անձս տրտմած է. և ի՞նչ ասեմ։ Հա՛յր՝ ազ-
րեցրո՛ւ ինձ այս ժամիցս. բայց իսկ նորահամար
28 եկի այս ժամիս մէջը։ Հա՛յր՝ փառաւորէ քո Որ-
դույդ. երկնքիցը ձայն եկաւ, Փառաւորեցի և նո-
29 րէն կ'փառաւորեմ։ Եւ ժողովուրդն՝ որ կանգնած
էր և լսումէր՝ ասումէին, թէ Որոտմունք է լի-
նում. և կէսն ասումէին՝ թէ Հրեշտակ խօսեց նո-
30 րա հետ։ Յիսուս պատասխան տուաւ և ասաց.
Այս ձայնս ո՛չ թէ ինձ համար եկաւ, բայց ձեզ
31 համար։ Հիմիկ է այս աշխարհքիս դատաստանը.
32 հիմիկ այս աշխարհքիս իշխանը դուրս կ'ձգվի։ Եւ
ես երբոր կ'բարձրանամ երկրիցս, ամենին կ'քա-
33 շեմ ինձ մօտ։ Այս բանս ասումէր՝ որ ցոյց տայ
34 թէ ի՛նչ մահով պիտի մեռնի։ Ժողովուրդը պա-
տասխան տուաւ նորան. Մենք օրէնքիցը լսեցինք՝
թէ Քրիստոսը յաւիտեան կ'կենայ. և դու ի՞նչ-
պէս ես ասում՝ թէ պէտք է՝ որ Որդին մարդոյ
35 բարձրանայ. ո՞վ է այն Որդին մարդոյ։ Յիսուս
նորանց ասաց. Մին քիչ ժամանակ դեռ լոյսը
ձեզ հետ է. գնացէ՛ք, քանի որ լոյսն ունիք՝ որ
խաւարը ձեզ չ'հասնէ. պատճառնոր՝ ով որ խա-
ւարումն է գնում, չի գիտում Թէ ո՞ւր է գնում։
36 Դեռ քանի որ լոյսը ձե՛զ հետ ունիք՝ հաւատա-
ցէ՛ք լուսոյն, որ լուսոյ որդիք լինիք. Յիսուս աս
խօսեց, և գնաց թաք կացաւ նորանցից։

37 Եւ այնքան նշաններ էր արել նորանց առաջին.
38 և նորանք չէին հաւատում նորան. Որ Եսայի մար-
գարէին խօսքը կատարվի՝ որ ասաց. Տէ՛ր՝ մեր
խօսքին ո՞վ հաւատաց, և Տէրին բազուկն ո՞ւմ
39 յայտնվեցաւ։ Նորահամար չէին կարօղանում հա-

40 ւատալ. ինչու որ՝ Եսային նորէն ասում է, թէ նո-
րանց աչքերը կուրացրուց, և նորանց սրտերը
թմրացրուց. որ աչքով չ'տեսնեն, և սրտով չի-
41 մանան, և դառնան՝ և բժշկեմ նորանց ։ Եսային
սա ասաց. երբոր նորա փառքը տեսաւ, և նորա
42 համար խօսեց ։ Բայց այնպէս էլ իշխաններիցը շա-
տերը հաւատացին նորան. բայց փարիսեցոց պատ-
ճառովը չէին յայտնում, որ ժողովարանիցը դուրս
43 չ'լինին ։ ինչու որ՝ մարդկանց փառքն աւելի սիրե-
ցին քան թէ Աստուծոյ փառքը ։
44 Եւ Յիսուս աղաղակումէր և ասում. Նա որ ինձ
հաւատումէ՝ ո՛չ թէ ինձ հաւատում, բայց նո-
45 րան՝ որ ինձ ուղարկեց ։ Եւ նա որ ինձ տեսնումէ,
46 նորան է տեսնում՝ որ ինձ ուղարկեց ։ Ես լոյս ե-
կի աշխարհքս, որ ամեն ով հաւատումէ ինձ՝ խա-
47 ւարի մէջ չ'մնայ ։ Եւ թէ որ մինն իմ խօսքերիս
լսէ և չ'պահէ, ես չեմ դատիլ նորան. պատ-
ճառնոր՝ ես չեկի՝ որ աշխարհքը դատեմ, այլ որ
48 աշխարհքը փրկեմ ։ Ով որ ինձ անարգումէ, և
իմ խօսքերս չի ընդունում. կայ՝ որ կ'դատէ նո-
րան. այն խօսքն՝ որ ես խօսեցի, նա կ'դատէ նո-
49 րան յետին օրումը ։ ինչու որ՝ ես իմ անձնիցս չը
խօսեցի. բայց Հայրն՝ որ ինձ ուղարկեց, նա պա-
տուէր տուաւ ինձ՝ թէ ի՛նչ պիտի ասեմ՝ և ի՛նչ
50 պիտի խօսիմ ։ Եւ գիտումեմ՝ որ այն պատուի-
րանքը յաւիտենական կեանք է. ապա ինչ որ ես
խօսումեմ, այնպէս եմ խօսում՝ ինչպէս որ Հայրն
ասաց ինձ ։

ԳԼ. ԺԳ

Յիսուս լուանում է աշակերտաց ոտքերը. կանխաւ ասում է իր մատնչին համար. իր փառաւորվիլն ու Պետրոսին մեղանչելն. հրամայում է սէր ։

1 Զատկի տօնիցն առաջ՝ Յիսուս գիտաց, որ իրեն
ժամը հասել է՝ որ այս աշխարհքիցս փոխվի դէպի
Հայրը, իրեններին՝ որ այս աշխարհքումն են՝ սի-
2 րեց. և մինչեւ վերջը սիրեց նորանց ։ Եւ երբոր
ընթրիքն էր լինում, սատանան Սիմօնեան Յուդա
իսկարիովտացոյն սրտին մէջ էր ձգել՝ որ մատնէ
3 նորան ։ Յիսուս գիտաց՝ որ Հայրն ամեն բան ի-
րեն ձեռքը տուաւ, և որ Աստուածանից եկաւ,
4 և Աստուծոյ մօտն է գնում ։ Հացկերութենիցը
վերկացաւ և շորերը վէր դրաւ, և մին ղենջակ ա-
5 ռաւ մէջքովը պատեց. Եւ յետոյ ջուր առաւ՝
լցրուց տաշտակը, և սկսեց աշակերտներին ոտնե-
րը լուանալ, և այն ղենջակովը՝ որ մէջքումը պա-
6 տած էր՝ սրբումէր ։ Սիմօն Պետրոսին մօտ եկաւ,
և նա նորան ասաց. Տէ՛ր՝ դո՞ւ ես իմ ոտներս
7 լուանում ։ Յիսուս պատասխան տուաւ նորան՝ և
ասաց. Ինչ որ գործումեմ, դու հիմիկ չես գի-
8 տում, բայց յետոյ կ'գիտենաս ։ Պետրոս նորան
ասաց. Դու իմ ոտներս յաւիտեան չ'պիտի լուա-
նաս. Յիսուս պատասխան տուաւ. Թէ որ քո ոտ-
ներդ չ'լուանամ, դու ինձ հետ բաժին չունիս ։
9 Սիմօն Պետրոս նորան ասաց. Տէ՛ր՝ ո՛չ թէ իմ
ոտներս մինակ, բայց իմ ձեռներս և գլուխս էլ ։

10 Յիսուս նորան ասաց. Լուացածին բան պէտք չէ՝
բայց միայն որ ոտները լուանայ. ինչուոր՝ խապա-
սուրբ է. և դուք սուրբ էք, բայց չէ թէ ամէն-
11 քըդ։ Պատճառնոր՝ գիտումէր նորան, որ իրեն
պիտի մատնէր. նորահամար ասաց, թէ Ամէնքդ
12 սուրբ չէք։ Եւ երբոր նորանց ոտները լուացաւ,
իրեն շորերն առաւ՝ և նորէն սեղան նըստեց, և
նորանց ասաց. Գիտո՞ւմէք թէ ես ինչ արի ձեզ։
13 Դուք ինձ Վարդապետ և Տէր էք կոչում. և լաւ
14 էք անում, ինչուոր ես ճիշտ նա եմ։ Ապա թէ որ
ես՝ Տէրս և Վարդապետս ձեր ոտները լուացի,
15 դուք էլ պէտք է՝ որ իրար ոտները լուանաք։ ին-
չուոր՝ ձեզ մին օրինակ տուի, որ ինչպէս որ ես
16 ձեզ արի, դուք էլ անէք։ Ճշմարիտ ճշմարիտ
ասումեմ ձեզ. Ծառան աւելի մեծ չէ քան թէ
իրեն տէրը. և ո՛չ էլ ուղարկվածն աւելի մեծ է՝
17 քան թէ նա՝ որ ուղարկեց նորան։ Թէ որ սա գի-
տումէք, էլ աւելի երանելի էք՝ թէ որ սա անէք։
18 Ձեզ ամենիդ համար չեմ ասում. ինչուոր՝ ես գի-
տումեմ նորանց, որ ընտրեցի. բայց որ գիրքը կա-
տարվի՝ թէ, Նա որ ինձ հետ հաց էր ուտում՝
19 ինձ խաբէութիւն արաւ։ Իսկ հիմիկուց ետեւ ա-
սումեմ ձեզ՝ դեռ քանի որ չի էլէլ. որ երբոր լի-
20 նի՝ հաւատաք թէ ես եմ։ Ճշմարիտ ճշմարիտ
ասումեմ ձեզ. Ով որ ընդունումէ մինին՝ որ ես
կուղարկեմ՝ ինձ է ընդունում. և նա որ ինձ է
ընդունում, նորան է ընդունում, որ ինձ ուղար-
կեց։
21 Յիսուս երբոր սա ասաց՝ տրտմեցաւ իրեն հոգոյն
մէջ, վկայեց և ասաց. Ճշմարիտ ճշմարիտ ա-

սումեմ ձեզ, թէ ձեզանից մինը պիտի մատնէ ինձ։
22 Աշակերտները տարակուսած՝ իրար մտիկ էին տա-
23 լիս, թէ ո՞ւմ համար ասած լինի։ Եւ աշակերտ-
ներիցը մինը Յիսուսին մօտ նստած էր, որ Յիսուս
24 նորան սիրումէր։ Սիմօն Պետրոս նորան աչքով
էր անում՝ որ հարցնէ՝ թէ նա ո՞վ է, որ նորա
25 համար ասումէ։ Եւ նա Յիսուսի լանջքումն ընկաւ,
26 և նորան ասաց. Տէ՛ր՝ նա ո՞վ է։ Յիսուս պա-
տասխան տուաւ և ասաց. Նա է՝ որ ես պատա-
ռը թաց կանեմ և նորան կ'տամ. և պատառը
27 թաց արաւ և տուաւ Յուդա Իսկարիոտացոյն։ Եւ
այն պատառիցն ետեւ՝ սատանան մտաւ նորան
մէջը. և Յիսուս նորան ասաց. Հիմիկ ինչ անելու
28 ես՝ շուտով արա՛։ Եւ այս բանս այն սեղան նըս-
տողներիցն ո՛չ ով չիմացաւ՝ թէ ի՞նչ պատճա-
29 ռով ասաց նորան։ Ինչուոր՝ մին քանիս կարծում
էին՝ թէ որովհետեւ Յուդան փողի քսակն ունէր,
Յիսուս նորան ասաց՝ թէ Գնէ՛ ինչ բան որ այս
տօնիս պէտք է մեզ. կամ թէ՝ որ աղքատներին
30 բան տայ։ Եւ նա երբոր պատառն առաւ, շու-
տով դուրս գնաց. և գիշեր էր։
31 Եւ երբոր դուրս գնաց, Յիսուս ասաց. Հիմիկ
Որդին մարդոյ փառաւորվեցաւ. և Աստուած նո-
32 րանում փառաւորվեցաւ. Որ՝ եթէ Աստուած նո-
րանում փառաւորվեցաւ, Աստուած էլ նորան
կ'փառաւորէ իրեն անձնումը. և շուտով կ'փա-
33 ռաւորէ նորան։ Իմ որդեակներս՝ մին քիչ ժամա-
նակ էլ ձեզ հետ եմ. ինձ ման կ'գաք. և ինչ-
պէս որ Հրէաներին ասացի, թէ Որտեղ որ ես գը-
նումեմ՝ դուք չէք կարօղ գալ. և հիմիկ ձեզ եմ

34 ասում։ Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ ի-
րար սիրէք. ինչպէս որ ես ձեզ սիրեցի, որ դուք
35 էլ իրար սիրէք։ Սորանով կ'գիտենան ամենքը՝ որ
36 իմ աշակերտներս էք, եթէ իրար սիրէք։ Սիմոն
Պետրոսը նորան ասաց. Տէ՛ր՝ ո՞ւր ես գնում. Յի-
սուս պատասխան տուաւ. Որտեղ որ ես գնում եմ՝
դու հիմիկ չես կարող իմ ետեւէս գալ. բայց յե-
37 տոյ իմ ետեւէս կ'գաս։ Պետրոս նորան ասաց.
Տէ՛ր՝ ինչո՞ւ չեմ կարող հիմիկ քո ետեւէդ գալ.
38 իսկ իմ անձս էլ քեզ վերայ կ'դնեմ։ Յիսուս պա-
տասխան տուաւ. Քո ա՞նձդ կ'դնես ինձ վերայ.
ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ. որ դեռ հա-
ւը չ'խօսած՝ դու երեք անգամ կուրանաս ինձ։

ԳԼ. ԺԴ

Յիսուսի վերջի խօսքը իր աշակերտներին հետ. Սուրբ
Հոգւոյն խոստումը։

1 Ձեր սրտերդ թող չ'փոթվին. բայց Աստուծոյն
2 հաւատացէ՛ք՝ և ինձ հաւատացէ՛ք։ Իմ Հօրս տա-
նը շատ բնակարաններ կան. ապա թէ չէր՝ ես ձեզ
ասած կ'լինէի, որ կ'գնամ և ձեզ համար տեղ
3 կ'պատրաստեմ։ Եւ թէ որ գնամ և ձեզ համար
տեղ պատրաստեմ, նորէն կ'գնամ և ձեզ ինձ
մօտ կառնեմ. որ տեղ որ ես լինիմ՝ այնտեղ էլ
4 դուք լինիք։ Եւ որտեղ որ ես գնում եմ՝ գիտում
էք, և ճանապարհը գիտում էք։
5 Թովմաս նորան ասաց. Տէ՛ր՝ չենք գիտում՝ ո՛ր-
տեղ ես գնում, և ի՞նչպէս կարենանք ճանապար-

6 հը գիտել։ Յիսուս նորան ասաց. Ես եմ ճանա-
պարհը և ճշմարտութիւնը և կեանքը. ո՛չ ով չի
7 գալ Հօր մօտ՝ եթէ ո՛չ ինձանով։ Թէ որ ինձ գի-
տենայիք՝ իմ Հօրս էլ կ'գիտենայիք. և սորանից
ետեւ կ'գիտենաք նորան, և տեսել էք նորան։
8 Փիլիպպոս նորան ասաց. Տէ՛ր՝ Հայրը ցո՛յց տուր
9 մեզ՝ և բաւական է մեզ։ Յիսուս նորան ասաց.
Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, և ինձ չ'ճանա-
չեցի՞ր՝ Փիլի՛պպոս. ով որ ինձ տեսաւ՝ Հօրը տե-
սաւ. և դու ի՞նչպէս ես ասում, թէ Հայրը ցո՛յց
10 տուր մեզ։ Չե՞ս հաւատում՝ որ ես Հօր մէջն եմ,
և Հայրն ինձանում. այն բանն՝ որ ես խօսում եմ
ձեզ հետ, չէ թէ իմ անձնիցս եմ խօսում, բայց
Հայրն՝ որ ինձանում բնակված է, նա է գործում
11 այն գործքերը։ Հաւատա՞ցէք ինձ, որ ես Հօր
12 մէջն եմ՝ և Հայրն ինձանում։ Ապա թէ չէ՛ գոնե-
ա՛ գործքերին համար հաւատացէ՛ք ինձ. ճշմա-
րիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ Ով որ ինձ
հաւատում է, այն գործքերն որ ես եմ գործում՝
նա էլ կ'գործէ, և նորանցից աւելի մեծ բաներ
էլ կ'գործէ. ինչուոր՝ ես Հօր մօտն եմ գնում։
13 Եւ ինչ որ խնդրէք իմ անունովս՝ նա կանեմ,
14 Որ Հայրը փառաւորվի Որդովը։ (15) Թէ որ ինձ
16 սիրումէք՝ իմ պատուիրանքներս պահեցէ՛ք։ Եւ ես
Հօրը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կ'տայ ձեզ.
17 որ յաւիտեան ձեզ հետ բնակվի։ Ճշմարտութեան
Հոգին՝ որ աշխարհ.քս կարող չէ ընդունել նորան.
և չի ճանաչում նորան. բայց դուք նորան ճանա-
չումէք, ինչուոր՝ ձեզ մօտ կ'բնակվի՝ և ձեզ հետ
18 կ'լինի։ Ձեզ որբ չեմ թողիլ. ձեզ մօտ կ'գամ։

19 Մի՛ն փոքր ժամանակ էլ՝ և աշխարհքն էլ չի տես-
նիլ ինձ, բայց դուք կ'տեսնէք ինձ. ինչու որ՝ ես
20 կենդանի եմ, և դուք կենդանի պիտի լինիք։ Այն
օրը դուք կ'ճանաչէք, որ ես իմ Հօրս մէջն եմ, և
21 դուք ինձանում՝ և ես ձեզանում։ Ով որ իմ պատ-
ուիրանքներս ունի՝ և նորանց պահում է, նա է՝
որ ինձ սիրում է. և նա՝ որ ինձ սիրում է՝ իմ Հօ-
րիցս կ'սիրվի. և ես կ'սիրեմ նորան, և ինձ կե-
րևացնեմ նորան։
22 Յուդան՝ ո՛չ թէ այն Իսկարիովտացին, նորան
ասաց. ինչո՞ւ համար է, որ մեզ կ'յայտնես քեզ՝
23 և աշխարհքին չէ։ Յիսուս պատասխան տուաւ և
նորան ասաց. Թէ որ մինն ինձ սիրում է՝ իմ խօս-
քըս կ'պահէ, և իմ Հայրս կ'սիրէ նորան. և նո-
րան մօտ կ'գանք և բնակութիւն կանենք նորա
24 մօտ։ Եւ նա որ ինձ չի սիրում, իմ խօսքս չի՛
պահում. և իմ խօսքս՝ որ լսում էք՝ իմս չէ, բայց
25 Հօրն է՝ որ ինձ ուղարկեց։ Այս խօսեցի ձեզ հետ՝
26 դեռ քանի որ ձեզ մօտ եմ։ Բայց Մխիթարիչը՝
Սուրբ Հոգին՝ որ Հայրն իմ անունովս կուղարկէ.
նա ամեն բան կ'սովորցնէ ձեզ, և ինչ որ ձեզ ա-
27 սացի, ձեր մտքներդ կ'բերէ։ Խաղաղութիւն եմ
թողում ձեզ, իմ խաղաղութիւնս եմ տալիս ձեզ.
չէ թէ՝ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ
28 ձեզ. ձեր սրտերդ չ'շփոթվին և չ'վախենան։ Լը-
սեցիք, որ ես ասացի ձեզ, թէ գնում եմ և էլ
կ'գամ ձեզ մօտ. Թէ որ ինձ սիրէիք, ապա ու-
րախ կ'լինէիք՝ որ ես Հօր մօտն եմ գնում. ինչու
29 որ՝ իմ Հայրս մեծ է ինձանից։ Եւ հիմիկ ասացի
ձեզ. դեռ քանի որ չի եղել՝ որ երբոր լինի, հա-

30 ւատաք։ Էլ շատ չեմ խօսիլ ձեզ հետ. այս աշ-
խարհքիս իշխանը գալիս է, և ինձանում բան չի
31 գտնում։ Բայց որ աշխարհքը գիտենայ՝ թէ ես սի-
րում եմ Հօրը. և ինչպէս որ Հայրը պատուիրեց
ինձ, այնպէս եմ անում. է՛լ վե՛ր կացէք գնանք
այստեղից։

ԳԼՈՒԽ ԺԵ

Քրիստոս որթ. Քրիստոսի սէրը. աշխարհքի ատելութիւնը։

1 Ես եմ ճշմարիտ որթն, և իմ Հայրս մշակն է։
2 Ամեն ճիւղն որ ինձանում է՝ և պտուղ չ'տալիս,
նորան կտրում է. և այն ամենն՝ որ պտուղ է տա-
լիս՝ սրբում է նորան, որ էլ աւելի պտղաբեր լինի։
3 Հիմիկ դուք սուրբ էք՝ այն բանիս համար՝ որ ձեզ
4 հետ խօսեցի։ Կացէ՛ք ինձանում՝ և ես ձեզանում.
ինչպէս որ ճիւղն իրեն անձնիցը կարօղ չէ պտուղ
բերել, եթէ որթումը հաստատված չ'լինի, այնպէս
էլ դուք՝ եթէ ինձանում հաստատված չ'լինիք։
5 Ես որթն եմ՝ և դուք ճիւղ. նա՝ որ ինձանում է
հաստատված՝ և ես նորանում, նա շատ պտուղ է
բերում. ինչու որ՝ առանց ինձ՝ բնաւ մին բան չէք
6 կարօղ անել։ Թէ որ մինն ինձանում չէ հաստատ-
ված, նա դուրս է ձգվում ինչպէս ճիւղ՝ և չորա-
նում է. և ժողովում են նորան և կրակի մէջ են ձը-
7 գում՝ և այրվում է։ Թէ որ կենաք ինձանում՝ և
իմ խօսքերս ձեզանում կենան, ինչ որ կամենաք,
8 կ'խնդրէք՝ և կ'լինի ձեզ։ Սորանով փառաւորվեցաւ
իմ Հայրս՝ որ շատ պտուղ բերէք. և իմ աշա-
կերտներս լինիք։

9 Ինչպէս որ իմ Հայրս ինձ սիրեց՝ ես էլ ձեզ սի-
10 րեցի․ հաստա՛տ կացէք իմ սիրոյս մէջը։ Թէ որ
իմ պատուիրանքներս պահէք, իմ սիրոյս մէջը կը
կենաք․ ինչպէս որ ես իմ Հօրս պատուիրանքները
11 պահեցի, և նորա սիրոյն մէջը կենում եմ։ Սա խօ-
սեցի ձեզ հետ՝ որ իմ ուրախութիւնս ձեզանում
12 լինի, և ձեր ուրախութիւնը լցված լինի։ Սա է
իմ պատուիրանքս՝ որ իրար սիրէք, ինչպէս որ ես
13 ձեզ սիրեցի։ Ոչ ով աւելի մեծ սէր չունի քան
թէ նա՝ որ իրեն անձը դնէ իրեն բարեկամներին
14 վերայ։ Դուք իմ բարեկամներս էք, թէ որ անէք
15 նա՝ որ ես պատուիրում եմ ձեզ։ Էլ ծառայ չեմ
կանչում ձեզ. ինչու որ՝ ծառան չի գիտում՝ թէ
իրեն տէրն ինչ է գործում․ բայց ձեզ բարեկամ
կանչեցի, ինչու որ՝ ամեն ինչ՝ որ լսեցի իմ Հօրիցս,
16 իմացրի ձեզ։ Չէ՛ թէ դուք ինձ ընտրեցիք․ բայց
ես ձեզ ընտրեցի՝ և ձեզ դրի, որ դուք գնաք՝ և
պտղաբեր լինիք․ և ձեր պտուղը մնայ․ և ինչ որ
իմ Հօրիցս խնդրէք իմ անունովս՝ նա կ'տայ ձեզ։
17 Սա եմ պատուիրում ձեզ՝ որ իրար սիրէք։
18 Թէ որ աշխարհքն ատում է ձեզ, գիտացէ՛ք՝ որ ա-
19 ռաջ ինձ ատեց։ Թէ որ այս աշխարհքիցս լինէիք՝
ապա աշխարհքն իրեններին կ'սիրէր․ բայց որովհետև
աշխարհքիցն չէք․ այլ ես ընտրեցի ձեզ աշխարհ-
20 քից, նորա համար աշխարհքն ատում է ձեզ։ Յիշե-
ցէ՛ք այն խօսքն՝ որ ասացի ձեզ․ թէ Ծառան իրեն
տիրոջիցը մեծ չէ․ թէ որ ինձ հալածեցին, ապա
ձեզ էլ կ'հալածեն․ թէ որ իմ խօսքս պահեցին՝
21 ապա ձերն էլ կ'պահեն։ Բայց այն բաներն կանեն
ձեզ իմ անունիս համար, ինչու որ՝ չ'ճանաչեցին

22 նորան՝ որ ինձ ուղարկեց։ Թէ որ ես չէի եկել՝ և
նորանց հետ խօսացել, նորանք մեղք չէին ունե-
նալ․ բայց հիմիկ ընաւ պատճառ չունին իրենց մե-
23 ղացը համար։ Ով որ ինձ է ատում՝ իմ Հօրս էլ
24 է ատում։ Թէ որ այն գործքերը՝ չէի գործել նո-
րանց մէջ, որ մին ուրիշ մարդ չ'գործեց, նորանք
ընաւ մեղք չունէին․ բայց հիմիկ տեսին՝ և ատե-
25 ցին ինձ՝ և իմ Հօրս․ Բայց որ այն բանը կատար-
վի՝ որ նորանց օրէնքումը գրված է․ թէ Զուր տե-
26 ղըն ատեցին ինձ։ Այլ երբոր Մխիթարիչը կ'գայ՝
որ նորան ես Հօրիցը կուղարկեմ ձեզ, ճշմարտու-
թեան Հոգին, որ Հօրիցն է դուրս գալիս, նա կը
27 վկայէ ինձ համար։ Եւ դուք էլ կ'վկայէք, ինչու որ՝
սկզբիցն ինձ հետ էք։

ԳԼ․ ԺԶ

Սուրբ Հոգոյն պաշտօնը․ Տրտմութիւնից յետոյ ուրախու-
թիւն․ Յիսուսի անունով խնդրել․ խաղաղութիւն և
երկիւղ․ աշխարհքին յաղթեցի։

1 Սա խօսեցի ձեզ հետ, որ չ'գայթակղվիք։ (2) Ի-
րենց ժողովարաններիցը ձեզ դուրս կ'հանեն․ բայց
ժամանակ կ'գայ՝ որ ամեն ով որ սպանէ ձեզ, կը
կարծէ թէ Աստուծոյն պաշտօն է մատուցանում։
3 Եւ նա կանեն ձեզ վերայ․ ինչու որ՝ ո՛չ Հօրը ճա-
4 նաչեցին՝ և ո՛չ ինձ։ Բայց սա էլ խօսեցի ձեզ
հետ, որ երբոր ժամանակը կ'գայ՝ միտքներդ բե-
րէ՛ք, թէ ես ասացի ձեզ։
5 Այս բանս սկզբումը չասացի ձեզ․ պատճառն

որ՝ ես ձեզ հետ էի ։ Բայց հիմիկ ես ինձ ուղար-
կողին մօտն եմ գնում. և ձեզանից ընաւ մինը չի
6 հարցնում ինձ, թէ Ո՞ւր ես գնում ։ Այլ որով-
հետեւ ես խօսեցի ձեզ հետ, տրտմութիւնը լց-
7 րուց ձեր սրտերը ։ Բայց ես ճշմարիտն ասումեմ
ձեզ՝ թէ լա՛ւ է ձեզ համար, որ ես գնամ. ինչու-
որ՝ եթէ ես չ'գնամ, Մխիթարիչը չի գայ ձեզ
8 մօտ ։ Եւ նա երբոր կ'գայ աշխարհքին կ'յանդի-
մանէ, մեղաց համար, և արդարութեան համար,
9 և դատաստանին համար ։ Մեղաց համար՝ որ ինձ
10 չեն հաւատում ։ Արդարութեան համար՝ որ ես իմ
Հօրս մօտն եմ գնում, և էլ ինձ չէք տեսնիլ ։
11 Դատաստանին համար՝ որ այս աշխարհքիս իշխանը
12 դատապարտուած է ։ Էլ շատ բան ունիմ որ ձեզ
13 ասեմ, բայց հիմիկ չէք կարող տանել ։ Երբոր նա՝
ճշմարտութեան Հոգին կ'գայ, նա ձեզ ամեն ճշ-
մարտութենով կառաջնորդէ. պատճառն որ՝ չէ թէ
իրեն անձնիցը մին բան կ'խօսի, բայց ինչ որ կը
լսէ՝ նա կ'խօսի, և նոր գալու բաները կ'պատմէ
14 ձեզ ։ Նա ինձ կ'փառաւորէ, ինչու որ՝ իմ բաների-
15 ցըս կառնէ և կ'պատմէ ձեզ ։ Ամեն ինչ որ Հայրն
ունի՝ իմս է. նորահամար ասացի ձեզ, թէ իմ բա-
16 ներիցս կառնէ և կ'պատմէ ձեզ ։ Մին քիչ ժա-
մանակ էլ, և էլ չէք տեսնիլ ինձ. և յետոյ մին
քիչ էլ, և կ'տեսնէք ինձ. և ես Հօրը մօտն եմ
գնում ։
17 Աշակերտներիցը մին քանիսն իրար ասումէին.
Սա ի՞նչ է որ ասումէ մեզ. թէ Մին քիչ ժամա-
նակ՝ և էլ չէք տեսնիլ ինձ, և նորէն՝ մին քիչ
էլ, և կ'տեսնէք ինձ, և թէ ես իմ Հօրս մօտն եմ

18 գնում ։ Եւ ասումէին. Ի՞նչ է այն մին քիչ ժա-
19 մանակը. չենք գիտում՝ թէ ինչ է խօսում ։ Յի-
սուս իմացաւ՝ թէ ուզումէին հարցնել իրեն՝ և ա-
սաց նորանց. Դորահամար հարցնումէք իրար մէջ,
որ ասացի՝ թէ Մին քիչ ժամանակ, և չէք տես-
նիլ ինձ, և նորէն մին քիչ էլ, և կ'տեսնէք ինձ ։
20 Ճշմարիտն ճշմարիտն ասումեմ ձեզ, որ դուք լաց
կ'լինիք և կ'ողբաք, և աշխարհքը կուրախանայ.
դուք կ'տրտմիք, բայց ձեր տրտմութիւնը ուրա-
21 խութիւն կ'լինի ։ Մին կին, երբոր ծնի՝ տրտմու-
թիւնը բռնումէ նորան, ինչու որ՝ նորա ժամանակը
հասել է. բայց երբոր երեխան ծնվումէ, այն նե-
ղութիւնը չի յիշում այն ուրախութեան համար՝
22 որ մին մարդ ծնվաւ աշխարհքին մէջ ։ Եւ դուք
հիմիկ տրտմութիւն ունիք, բայց նորէն կ'տեսնեմ
ձեզ, և ձեր սրտերն ուրախ կ'լինին. և ձեր ուրա-
23 խութիւնը ընաւ մինը չի հանիլ ձեզանից ։ Եւ այն
օրը ընաւ մին բան չէք հարցնիլ ինձ. Ճշմարիտն
ճշմարիտն ասումեմ ձեզ՝ թէ ինչ որ իմ Հօրից
24 խնդրէք իմ անունովս, նա կ'տայ ձեզ ։ Մինչեւ
հիմիկ՝ ընաւ բան չ'խնդրեցիք իմ անունովս. խնդ-
րեցէ՛ք և կառնէք, որ ձեր ուրախութիւնը կա-
25 տարեալ լինի ։ Այս բանս առակով խօսեցի ձեզ
հետ. ժամանակ կ'գայ, երբոր էլ առակով չեմ
խօսիլ ձեզ հետ. բայց յայտնի կ'պատմեմ ձեզ
26 Հօր համար ։ Այն օրն իմ անունովս կ'խնդրէք. և
չեմ ասում ձեզ՝ թէ ես ձեզ համար կաղաչեմ Հօ-
27 րը ։ Ինչու որ՝ իսկ Հայրն ինքը սիրումէ ձեզ. ինչու
որ՝ դուք ինձ սիրեցիք և հաւատացիք, թէ ես
28 Աստուածանից դուրս եկի ։ Հօրիցը դուրս եկի՝ և

եկի աշխարհք. դարձեալ աշխարհքը թողումեմ
29 և Հօրը մօտ գնում, Աշակերտները նորան ասա-
ցին. Ահա՛ հիմիկ յայտնի ես խօսում, և բնաւ
30 մին առակ չես ասում։ Հիմիկ գիտումենք՝ որ դու
ամեն բան գիտումես. և բնաւ պէտք չէ՝ որ մինը
հարցնէ քեզ. սորանով հաւատումենք՝ թէ դու
31 Աստուածանից դուրս եկիր։ Յիսուս պատասխան
տուաւ և նորանց ասաց. Հիմիկ հաւատո՞ւմէք։
32 Ահա՛ ժամանակ կ'գայ, և ճիշտ հիմիկ եկած է,
որ ամեն մէկդ կ'ցրվիք իրեն տեղը, և ինձ մինակ
կ'թողէք. այլ մինակ չեմ. ինչուոր՝ Հայրն ինձ հետ
33 է. Սա խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղա-
ղութիւն ունենաք. այստեղ աշխարհքումս նեղու-
թիւն կունենաք, բայց սրտապինդ կացէք, ինչու
որ ես աշխարհքին յաղթեցի։

ԳԼ. ԺԷ

*Քրիստոսի աղօթքը իրեն համար, նոյնպէս և իր աշա-
կերտաց ու հաւատացելոց համար։*

1 Երբոր Յիսուս սա խօսեց՝ իրեն աչքերը բարձրաց-
րուց դէպի երկինքն ու ասաց. Հա՛յր՝ ժամը հա-
սել է, փառաւորէ քո Որդուդ՝ որ քո Որդիդ էլ
2 քեզ փառաւորէ։ ինչպէս որ նորան իշխանութիւն
տուիր ամեն մարմնոյ վերայ, որ յաւիտենական
3 կեանքը տայ այն ամենին՝ որ տուիր նորան. Սա է
յաւիտենական կեանքը, որ քեզ միայն ճշմարիտ
Աստուած ճանաչեն, և նորան, որ ուղարկեցիր
4 Յիսուսին Քրիստոսին։ Ես քեզ փառաւորեցի երկ-

րի վերայ. այն գործը կատարեցի, որ տուիր ինձ՝
5 որ անեմ։ Եւ հիմիկ Հա՛յր՝ փառաւորէ՛ ինձ քեզ
մօտ այն փառքովը որ նորան աշխարհքի լինելուցն
6 առաջ ունէի քեզ մօտ։ Քո անունդ յայտնեցի
այն մարդկանց՝ որ աշխարհքիցս տուիր ինձ. քո
էին, և ինձ տուիր նորանց. և քո խօսքդ պահե-
7 ցին։ Հիմիկ իմացան՝ որ այն ամեն բանն՝ որ ինձ
8 տուիր՝ քեզանից է։ ինչուոր՝ այն խօսքն՝ որ ինձ
տուիր՝ նորանց տուի. և նորանք ընդունեցին, և
ճշմարտութենով իմացան՝ որ քեզանից դուրս ե-
կի. և հաւատացին՝ թէ դու ուղարկեցիր ինձ։
9 Ուրեմն ես նորանց համար եմ աղաչում, և աշ-
խարհքի համար չեմ աղաչում. բայց նորանց հա-
10 մար՝ որ ինձ տուիր, ինչուոր՝ քո էին։ Եւ ինչ որ
իմս է՝ այն ամենը քո է. և ինչ որ քո է՝ նա իմս
11 է. և ես փառաւորված եմ նորանցում։ Եւ ես էլ
աշխարհքումս չեմ, և նորանք աշխարհքումս են,
և ես քեզ մօտ եմ գալիս. ո՛վ Հայր սուրբ՝ պա-
հէ նորանց քո անունովդ, որ նորանով տուիր ինձ.
12 որ մին լինին, ինչպէս որ մենք էլ մին ենք։ Դեռ-
քանի որ աշխարհքումը նորանց հետ էի, ես էի
պահում նորանց քո անունովդ, նորանց որ տուիր
ինձ, էլ պահեցի. և նորանցից մինը չ'կորաւ, բայց
13 մինակ կորուստի որդին, որ գիրքը կատարվի։ Բայց
հիմիկ քեզ մօտ եմ գալիս. և այս բանս աշխարհ-
քումը խօսումեմ, որ իմ ուրախութիւնս լիութե-
14 նով ունենան իրենց անձներումը։ Ես քո խօսքդ
նորանց տուի, և աշխարհքս նորանց ատեց, պատ-
ճառնոր՝ աշխարհքիցս չեն, ինչպէս որ ես էլ աշ-
15 խարհքիցս չեմ։ Սա չեմ աղաչում, որ աշխարհ-

քիցս վեր առնես նորանց. բայց որ չարիցը պահես
16 նորանց: Այս աշխարհքիցս չեն, ինչպէս որ ես էլ
17 աշխարհքիցս չեմ: Նորանց սո՛ւրբ արա քո ճշ-
մարտութեանովդ. ինչուոր՝ քո խօսքդ ճշմարտու-
18 թիւն է: Ինչպէս որ ինձ ուղարկեցիր աշխարհք,
19 ես էլ նորանց ուղարկեցի աշխարհք: Եւ ես նո-
րանց վերայ իմ անձս սուրբ եմ անում; որ նորանք
20 էլ ճշմարտութեանով սրբված լինին: Բայց ո՛չ թէ
միայն նորանց համար եմ աղաչում, այլ ամենին
համար էլ՝ որ նորանց խօսքովը կ՚հաւատան ինձ:
21 Որ ամենքը մին լինին, ինչպէս որ՝ դու Հա՛յր, ին-
ձանում՝ և ես քեզանում, որ նորանք էլ մեզա-
նում լինին. որ աշխարհքը հաւատայ՝ թէ դու ու-
22 ղարկեցիր ինձ: Եւ ես՝ այն փառքն՝ որ ինձ տուիր՝
նորանց տուի, որ մին լինին՝ ինչպէս որ մենք էլ
23 մին ենք: Ես նորանցում՝ և դու ինձանում, որ
մինի մէջ կատարեալ լինին. և աշխարհքը գիտե-
նայ՝ թէ դու ուղարկեցիր ինձ. և ես սիրեցի նո-
24 րանց՝ ինչպէս որ դու ինձ սիրեցիր: Հա՛յր՝ նո-
րանք՝ որ դու ինձ տուիր, կամենում եմ որ՝ ինչ-
տեղ որ ես եմ, նորանք էլ ինձ հետ լինին. որ իմ
փառքս տեսնեն, որ տուիր ինձ. ինչուոր՝ աշխարհ-
25 քի լինելուցն առաջ սիրեցիր ինձ: Արդա՛ր Հա՛յր՝
աշխարհքը չ՚ճանաչեց քեզ. բայց ես ճանաչեցի
քեզ, և սորանք ճանաչեցին, որ դու ուղարկեցիր
26 ինձ: Եւ քո անունդ ճանաչացրի նորանց, և կը
ճանաչացնեմ. որ այն սէրն, որ ինձ սիրեցիր՝ նո-
րանցում լինի, և ես էլ նորանցում:

ԳԼ. ԺԸ

Քրիստոս բռնվում է պարտէզում, հարցաքննվում է քա-
հանայապետից. Պետրոս ուրանում է. Քրիստոս Պիղա-
տոսին առաջին:

1 Յիսուս երբոր սա ասաց, աշակերտներին հետ
դուրս գնաց Կեդրոնի ձորի միւս կողմը, ուրտեղ որ
պարտէզ կար. որ նորա մէջ մտաւ ինքը և իրեն
2 աշակերտները: Յուդան էլ՝ որ պիտի մատնէր նո-
րան, գիտումէր այնտեղը. ինչուոր՝ Յիսուս շատ
անգամ ժողովել էր այնտեղ աշակերտներին հետ:
3 Եւ Յուդան զինուորների գունդն ու քահանայա-
պետներիցն ու փարիսեցիներիցը սպասաւորներ ա-
ռաւ իրեն հետ, և եկաւ այնտեղ ջահերով և
4 լապտերներով և զէնքերով: Բայց Յիսուս երբոր
տեսաւ այն ամենն, որ իրեն վերայ էր եկել, դուրս
5 եկաւ և նորանց ասաց. Ո՞ւմ էք ուզում: Պա-
տասխան տուին նորան թէ՝ Յիսուս Նազօրեցուն.
Յիսուս նորանց ասաց. Ես եմ. Յուդան էլ՝ որ նո-
6 րան մատնումէր՝ կանգնած էր նորանց հետ: Երբ-
որ Յիսուս ասաց թէ Ես եմ, նորանք յետ գնացին,
7 և գետնի վերայ ղարկվեցան: Նորէն հարցրուց նո-
րանց՝ թէ Ո՞ւմ էք ուզում. և նորանք ասացին.
8 Յիսուս Նազօրեցուն: Յիսուս նորանց պատասխան
տուաւ. Ձեզ ասացի թէ Ես եմ. ուրեմն թէ որ
ինձ էք ուզում, թո՛ղ տուէք դորանց, որ գնան,
9 Որ կատարվի այն բանն՝ որ ասաց, թէ Նորանց՝ որ
ինձ տուիր, նորանցից բնաւ մինն էլ չեմ կորցը-

10 նիլ ։ Բայց Սիմոն Պետրոսը՝ որովհետեւ սուր ունէր
քաշեց նորան և քահանայապետի ծառային զար-
կեց . և նորան աջ ականջը կտրեց . և այն ծառա-
11 յին անունը Մաղքոս էր ։ Յիսուս Պետրոսին ա-
սաց . Սուրդ դարձրո՛ւ դիր իրեն պատեանին մէջ .
այն բաժակն որ իմ Հայրս տուաւ ինձ , նա չ՚խը-
մե՞մ ։

12 Բայց զինուորներին գունդը և հազարապետն ու
Հրէաներին սպասաւորները բռնեցին Յիսուսին , և
13 կապեցին , Եւ տարան նորան Աննային մօտ , որ
Կայիափային աներն էր . որ նոյն տարվան քահա-
14 նայապետն էր ։ Սա այն Կայիափան էր , որ Հրէա-
ներին խրատ տուաւ՝ թէ Լա՛ւ է , մին մարդ մեռ-
15 նի ժողովրդի վերայ ։ Եւ Սիմոն Պետրոսն ու միւս
աշակերտը գնումէին Յիսուսին ետեւէն ։ Այն ա-
շակերտը՝ որովհետեւ ճանաչ էր քահանայապե-
տին , Յիսուսին հետ մտաւ քահանայապետին սը-
16 րահը ։ Եւ Պետրոս դռան մօտ կանգնած էր դուր-
սը . այն միւս աշակերտը , որ քահանայապետին
ճանաչ էր , դուրս եկաւ և դռնապանին ասաց ,
17 և Պետրոսին ներս մտցրուց ։ Այն աղջիկն՝ որ դռ-
նապան էր՝ Պետրոսին ասաց . Միթէ դու է՞լ այն
մարդոյ աշակերտներիցն ես . և նա ասաց՝ թէ Չեմ ։
18 Այնտեղ ծառաներն և սպասաւորը կանգնած էին ,
կրակը վառած , ինչուոր՝ ցուրտ էր՝ և տաքանում
էին . Պետրոսն էլ նորանց հետ կանգնած էր և
19 տաքանումէր ։ Եւ քահանայապետն Յիսուսին հարց-
րուց իրէն աշակերտներին համար՝ և իրեն վարդա-
20 պետութեան համար ։ Յիսուս պատասխան տուաւ
նորան . Ես յայտնի խօսեցի աշխարհքին մէջ . ես

ամեն ժամանակ սովորցրի ժողովարանումը , և ճիշտ
տաճարին մէջ , որտեղ որ ամեն Հրէաները ժողով-
21 ված էին , և բնաւ մին ծածուկ բան չ՚խօսեցի ։ Ին-
չո՞ւ ես ինձ հարցնում՝ նորանց հարցրո՛ւ՝ որ լսե-
ցին , թէ ինչ խօսեցի նորանց հետ . ահա՛ նորանք
22 գիտումեն՝ ինչ որ խօսեցի ։ Երբոր նա սա ասաց ,
սպասաւորներիցը մինը , որ այնտեղ կանգնած էր ,
Յիսուսին ապտակ տուաւ՝ և ասաց . Այդպէս ես
23 պատասխան տալիս քահանայապետին ։ Եւ Յիսուս
նորան ասաց . Թէ որ չար բան խօսեցի՝ վկայէ՛ այն
չարին համար . բայց թէ որ բարի , ինչո՞ւ ես զար-
24 կում ինձ ։ Եւ Աննան նորան կապած ուղարկեց
25 Կայիափա քահանայապետին մօտ ։ Եւ Սիմոն Պետ-
րոսն այնտեղ կանգնած էր՝ և տաքանումէր . Նո-
րան ասացին , Միթէ դո՞ւ էլ նորան աշակերտա-
26 ներիցն ես . Նա ուրացաւ և ասաց՝ թէ Չեմ ։ Եւ
քահանայապետին ծառաներիցը մինն՝ որ ազ-
գական էր նորան , որ Պետրոս նորան ականջը կըտ-
րեց , ասաց . Չէ՞ որ հենց ես տեսի քեզ այն պար-
27 տէզումը նորա հետ ։ Պետրոս դարձեալ ուրացաւ .
28 և շուտով հաւը խօսեց ։ Եւ Յիսուսին Կայիփային
տանիցը տարան դատաւորին պալատը . և առաւօտ
էր . և նորանք չ՚մտին պալատին մէջ , որ չ՚պղծ-
29 վին , բայց որ զատիկն ուտեն ։ Պիղատոս դուրս ե-
կաւ նորանց մօտ և ասաց . Այն մարդոյն համար
30 ի՞նչ չարախօսութիւն էք անում ։ Պատասխան տը-
ուին և նորան ասացին . Թէ որ այն մարդը չարա-
գործ չ՚լինէր , ապա նորան չէինք մատնել քեզ ։
31 Պիղատոս նորանց ասաց . Դուք առէ՛ք նորան , և
ձեր օրէնքին պէս դատեցէ՛ք . Հրէաները նորան ա-

տացին. Մեզ արժան չէ՛ որ մին մարդ սպաննենք.
32 Որ Յիսուսին խօսքը կատարվի՝ որ ասաց, ցոյց տա-
33 լով թէ ի՞նչ մահով պիտի մեռնի: Պիղատոս նո-
րէն մտաւ պալատը, Յիսուսին կանչեց՝ և նորան
34 ասաց. Դո՞ւ ես Հրէաներին թագաւորը: Յիսուս
պատասխան տուաւ. Քեզանի՞ց ես ասում դա,
35 թէ ուրիշներն ասացին քեզ ինձ համար: Պիղատոս
պատասխան տուաւ. Միթէ ե՞ս էլ Հրէայ եմ.
քո ազգդ և քահանայապետները քեզ մատնեցին
36 ինձ, դու ի՞նչ բան ես արել: Յիսուս պատասխան
տուաւ. Իմ թագաւորութիւնս այս աշխարհքիցս
չէ. թէ որ իմ թագաւորութիւնս այս աշխարհ-
քիցս լինէր, ապա իմ ծառաներս կռիւ կանէին՝
որ չմատնվիմ Հրէաներին ձեռքը. բայց հիմիկ իմ
37 թագաւորութիւնս այստեղիցս չէ: Պիղատոս ասաց
նորան. Ապա թէ որ այդպէս է, դու մին թագա-
ւոր ես. Յիսուս պատասխան տուաւ. Դու ես ա-
սում՝ որ ես թագաւոր եմ. բայց ես իսկ դորա-
համար եմ ծնված, և իսկ դորահամար եմ եկել
աշխարհք, որ ճշմարտութեանը վկայեմ. ամեն՝ ով
38 որ ճշմարտութենիցն է՝ իմ խօսքիս լսումէ: Պիղա-
տոս նորան ասաց. Ի՞նչ է ճշմարտութիւնը. երբոր
սա ասաց, նորէն դուրս գնաց Հրէաներին մօտ և
նորանց ասաց. Ես ընաւ մին պատճառ չեմ գըտ-
39 նում նորանում: Բայց ձեր սովորութիւնն է՝ որ
զատկի ժամանակին մին մարդ արձակեմ ձեզ հա-
մար. ուրեմն կամենո՞ւմէք՝ որ Հրէաներին թագա-
40 ւորն արձակեմ ձեզ համար: Ամենքն աղաղակե-
ցին՝ և ասումէին. Դորան չէ՛, բայց Բարաբբային.
և այն Բարաբբան մի աւազակ էր:

ԳԼ. ԺԹ

Յիսուսին ծեծվիլը. փշեղէն պսակը. խաչվըլութիւնը.
մահը և թաղումը:

1 Այն ժամանակը Պիղատոս Յիսուսին տուաւ և
2 ծեծեց: Եւ զինուորները փշերից մին պսակ շինե-
ցին, նորան գլուխը դրին, և ծիրանի շոր հագց-
3 րին նորան: Եւ գալիս էին նորա մօտ, և ասում.
Ո՛ղջ կաց Հրէից թագաւոր. և ապտակներ էին
4 տալիս նորան: Պիղատոս նորէն դուրս գնաց և նո-
րանց ասաց. Ահա՛ նորան դուրս եմ բերում ձեզ
մօտ, որ գիտենաք թէ՝ ես ընաւ մին վնաս չեմ
5 գտնում նորանում: Յիսուս դուրս եկաւ և փշե-
ղից պսակ ունէր, և ծիրանի հագուստ. և նորանց
6 ասաց. Ահա՛ այդ մարդդ ձեր առաջին: Երբոր
քահանայապետներն ու սպասաւորները նորան տե-
սին, աղաղակեցին՝ և ասացին. Խա՛չ հանէ դո-
րան. Պիղատոս նորանց ասաց. Ձեզ մօ՛տ առէք
դորան, և իսկ ձեզանից խա՛չ հանեցէք. ինչուոր՝
7 ես ընաւ վնաս չեմ գտնում դորանում: Հրէաները
պատասխան տուին նորան. Մենք օրէնք ունինք,
և մեր օրէնքին պէս պէտք է մեռնի. ինչուոր՝ ի-
8 րեն անձն Աստուծոյ Որդի արաւ: Երբոր Պիղա-
9 տոս այս բանս լսեց, էլ աւելի վախեցաւ: Նորէն
մտաւ պալատին մէջ, և Յիսուսին ասաց. Դու
ի՞նչ տեղից ես. և Յիսուս պատասխան չ՚տուաւ
10 նորան: Պիղատոս ասաց նորան. Ինձ հետ չե՞ս խօ-
սում. միթէ չե՞ս գիտում, որ իշխանութիւն ու-

նիմ քեզ խաչ հանելու, և իշխանութիւն ունիմ
11 քեզ արձակելու ։ Յիսուս պատասխան տուաւ. Դու
իշխանութիւն չէիր ունենալ ինձ վերայ, թէ որ
վերեւից չէր տրված քեզ. Նորահամար՝ նա որ ինձ
12 մատնեց քեզ, նորա մեղքը աւելի մեծ է ։ Եւ նո-
րանից ետեւ Պիղատոս ուզում էր՝ որ նորան արձա-
կէ. և Հրէաներն աղաղակում էին և ասում, Թէ որ
դորան արձակես՝ կայսերին բարեկամ չես. ամեն
մէկ որ իրեն անձը թագաւոր է կոչում, նա կայսե-
13 րին հակառակ է ։ Պիղատոս երբոր այս բաները
լսեց, Յիսուսին դուրս բերաւ, և բեմին վրայ նըս-
տեց, այն տեղը՝ որ Քարայատակ էր կոչվում, և
14 Եբրայեցերէն Կապպաթա ։ Զատկի ուրբաթն էր՝
իբր վեց ժամն էր, և Հրէաներին ասաց. Ահա՛
15 ձեր թագաւորը ձեր առաջին ։ Եւ նորանք աղա-
ղակում էին, Մեղանից վե՛ր առ, մեղանից վե՛ր
առ՝ և խա՛չ հանէ դորան. Պիղատոս նորանց ա-
սաց. Ես ձեր թագաւորին խա՞չ հանեմ. քահա-
նայապետները պատասխան տուին. Մենք թագա-
16 ւոր չունինք կայսերից զատ ։ Այն ժամանակը նո-
րան տուաւ նորանց ձեռքն, որ խաչ հանվի ։
17 Եւ նորանք առին տարան նորան. և խաչափայ-
տըն իրքն էր վերառել, և դուրս էր գնում այն
տեղը՝ որ Գագաթան էր ասվում, և Եբրայեցերէն
18 Գողգոթա էր կոչվում ։ Այնտեղ խաչ հանեցին
նորան. և նորա հետ երկու ուրիշ մարդ էլ նորա
այս կողմը և այն կողմը, և Յիսուսին մէջ տեղը ։
19 Պիղատոս էլ մին տախտակ գրեց, և խաչին վերայ
դրաւ. և գրած էր. ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՐԵՑԻ՝ ԹԱ-
20 ԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ ։ Այն տախտակը Հրէաներիցը շատ

մօրդիկ կարդացին. ինչու որ քաղաքին մօտ էր
այն տեղը՝ որ Յիսուս խաչվեցաւ. և այն գըր-
ված էր Եբրայեցերէն, Լատիներէն և Յունարէն ։
21 Հրէաներին քահանայապետներն ասացին Պիղատո-
սին. Մի՛ գրեր Թագաւոր Հրէից, այլ թէ Նա ա-
22 սաց՝ թէ Թագաւոր եմ Հրէից ։ Պիղատոս պատաս-
խան տուաւ. Ինչ որ գրեցի՝ գրեցի ։
23 Բայց զինուորներն երբոր Յիսուսին խաչ հանե-
ցին, նորա շորերն առին՝ և չորս բաժին արին, ա-
մեն մէկ զինուորի համար մին բաժին. բայց պատ-
մուճանը՝ որովհետեւ առանց կարի էր՝ վերեւից
24 բոլորը մին հիւսված ։ Իրար ասացին. Դորան չը
պատառենք, բայց վիճակ ձգենք դորա վերայ՝ ում
որ դուրս գայ. որ գիրքը կատարվի, որ ասում է.
Թէ իմ շորերս իրենց մէջ բաժանեցին և իմ պատ-
մուճանիս վերայ վիճակ ձգեցին. զինուորներն այն
բանն արին ։
25 Եւ Յիսուսի խաչին մօտ կանգնած էին նորա
մայրը, և նորա մօր քոյրը Մարիամ Կղէօպան՝ և
26 Մարիամ Մագդաղենացին ։ Յիսուս երբոր տեսաւ
իրեն մօրը և այն աշակերտին՝ որ սիրում էր, որ մօ-
տիկ կանգնած էր, մօրն ասաց. Ո՛վ կին՝ ահա՛
27 քո որդիդ ։ Յետոյ աշակերտին ասաց. Ահա՛ քո
մայրդ. և այն ժամանակից՝ այն աշակերտն իրեն
մօտ առաւ նորան ։
28 Սորանից ետեւ երբոր Յիսուս գիտաց, թէ ամեն
բան կատարված է, որ գիրքը կատարվի՝ ասաց.
29 Ծարաւ եմ ։ Եւ այնտեղ մին աման կար քացա-
խով լիքը. և նորանք մին սպունգ լցրին քացախով
լեղու հետ՝ և զոպայի մշտիկի վերայ պատած նորա

30 բերանին մօտեցրին ։ Երբոր Յիսուս այն քացախն
ընդու հետ առաւ՝ ասաց․ Ամեն բան կատարված
է․ և գլուխը խոնարհեցրուց և հոգին աւանդեց ։
31 Բայց Հրէաները՝ որովհետև ուրբաթ օրն էր,
որ մարմինները չ՚մնան խաչի վերայ մինչև շաբաթ
օրը, ինչուոր՝ այն շաբաթի օրն մեծ էր․ Պիղա-
տոսին աղաչեցին, որ նորանց ծնկները ջարդեն․ և
32 վեր առնվին ։ Զինուորներն եկին և առաջինին
ծնկները ջարդեցին, այնպէս էլ միւսին՝ որ նորա
33 հետ խաչված էր ։ Բայց երբոր Յիսուսի մօտ եկին
և տեսին, որ նա մեռած էր, նորա ծնկները չը
34 ջարդեցին ։ Այլ զինուորներիցը մինը գեղարդով
նորա կողը խոցեց․ և շուտով արիւն և ջուր դուրս
35 եկաւ ։ Եւ նա որ այն բաները տեսաւ՝ վկայեց․ և
վկայութիւնը ճշմարիտ է․ և նա գիտումէ թէ
36 ճշմարիտն է ասում․ որ դուք էլ հաւատաք ։ Սա
էլաւ՝ որ գիրքը կատարվի, թէ Նորա ոսկորը չը
37 պիտի փշրվի ։ Եւ կրկին ուրիշ գիրք ասումէ, թէ
Մտիկ կ՚տան նորան՝ որ խոցեցին ։
38 Սորանից ետև Պիղատոսին աղաչեց Յօսէփը, որ
Արիմաթեայիցն էր՝ Հրէաների վախիցը ծածուկ ա-
շակերտ Յիսուսին, որ Յիսուսին մարմինը վեր առ-
նէ․ և Պիղատոս հրաման տուաւ․ և ապա եկաւ
39 և վեր առաւ նորան ։ Նիկոդիմոսն էլ եկաւ՝ որ
առաջ Յիսուսի մօտն էր եկել գիշերը․ և զմուռ
հալուէի հետ խառնած բերաւ՝ հարիւր լտրի չափ ։
40 Յիսուսի մարմինն առին, և այն խնկերին հետ կը-
տաւներով պատեցին, ինչպէս որ Հրէաների օրէնք
41 էր պատել ։ Եւ այն տեղումը, որ խաչվեցաւ՝ մին
պարտէզ կար, և այն պարտէզումը մին նոր գե-

րեզման, որ նորանում ընաւ մին ժամանակ մին
42 մարդ չէր դրված ։ Այնտեղ դրին Յիսուսին Հը-
րէաների ուրբաթին համար․ պատճառնոր՝ գերեզ-
մանը մօտ էր ։

ԳԼ․ Ի

Քրիստոսի յարութիւնը և Հրէաստանում յայտնվիլը ։

1 Եւ մէկ շաբթի օրը Մարիամ Մագդաղենացին
առաւօտանց լուսանալըս ժամանակին եկաւ գե-
րեզմանը, և տեսաւ որ քարը գերեզմանի դունիցը
2 վեր էր առած ։ Ապա վազեց և եկաւ Սիմօն Պետ-
րոսին մօտ և միւս աշակերտին մօտ՝ որ Յիսուս
սիրումէր նորան, և ասաց նորանց․ Տէրին վեր ա-
ռին այն գերեզմանիցը, և չենք գիտում՝ թէ ուր-
3 տեղ դրին նորան ։ Դուրս եկաւ Պետրոսն ու միւս
4 աշակերտը և գալիս էին գերեզմանը ։ Երկուքը մին
տեղ վազումէին․ և միւս աշակերտը շուտով ան-
5 ցաւ Պետրոսից, և առաջ եկաւ գերեզմանը ։ Եւ
վէր խոնարհված տեսաւ՝ որ կտաւներն այնտեղ
6 կային, բայց ներս չ՚մտաւ ։ Սիմօն Պետրոսն էլ
եկաւ՝ որ նորա ետևէն գալիս էր, և մտաւ գե-
րեզմանին մէջը, և կտաւները տեսաւ՝ որ այն տեղ
7 կային ։ Եւ վարշամակն՝ որ նորա գլխին էր՝ ուրիշ
կտաւներին հետ չ՚կար, բայց ջոկ ծալած մէկ կող-
8 մը դրած էր ։ Այն ժամանակը միւս աշակերտն էլ
ներս մտաւ, նա որ առաջ գերեզմանն էր եկել,
9 տեսաւ և հաւատաց ։ Ինչուոր դեռ չէին գիտում
գրքերը՝ թէ պէտք է որ նա մեռելների միջիցը յա-

10 րուԹիւն տանէ ։ Ապա աշակերտները դարձեալ
գնացին իրար մօտ ։
11 Բայց Մարիամը գերեզմանին դուրսը կանգնած
էր՝ և լաց էր լինում . և լաց լինելոյ ժամանակը
12 խոնարհվեցաւ գերեզմանին մէջ ։ Եւ երկու հրեշ-
տակ տեսաւ սպիտակ շորերով , որ նստած էին ,
մինը գլխի կողմը և միւսն ոտների կողմը , որտեղ
13 որ Յիսուսին մարմինը կար ։ Եւ նորանք ասացին
նորան . Ո՛վ կին՝ ինչո՞ւ ես լաց լինում . Նորանց
ասաց . Նորահամար՝ որ իմ Տէրիս վեր առին
այս գերեզմանիցս , և չեմ գիտում՝ Թէ որտեղ
14 դրին նորան ։ Երբոր սա ասաց , դարձաւ իրեն յե-
տին կողմը , և Յիսուսին տեսաւ՝ որ կանգնած էր .
15 և չէր գիտում՝ Թէ Յիսուսն է ։ Յիսուս նորան ա-
սաց . Կին դու՝ ինչո՞ւ ես լաց լինում , ո՞ւմ ես
ման գալիս Նորան այնպէս երեւեցաւ՝ Թէ նա
պարտէզպանն է , նորան ասաց . Տէ՛ր՝ Թէ որ դու
վեր առիր նորան՝ ասա՛ ինձ՝ որտեղ ես դրել նո-
16 րան , որ ես վեր առնեմ նորան ։ Յիսուս նորան ա-
սաց . Մա՛րիամ . և նա յետ դարձաւ , և նորան
ասաց՝ Եբրայեցերէն . Ռա՛բբունի , որ կ'Թարգման-
17 վի՝ Վարդապետ ։ Յիսուս նորան ասաց . Մի՛ մօ-
տենար ինձ , ինչուոր՝ դեռ չեմ վեր ելել իմ Հօ-
րըս մօտ . բայց դու գնա՛ իմ եղբարներիս մօտ ,
և նորանց ասա՛ . Ես վեր եմ ելլում իմ Հօրս մօտ՝
և ձեր Հօր մօտ , իմ Աստուծոյս մօտ՝ և ձեր Ա-
18 ստուծոյն մօտ ։ Մարիամ Մագդաղենացին եկաւ՝
և աշակերտներին պատմեց , Թէ նա տեսաւ Տէ-
րին , և այս բանս իրեն ասաց ։
19 Եւ մէկ շաբԹի օրը , երբոր իրիկուն էր՝ և դռ-

ները փակված , այնտեղն որ աշակերտները ժողով-
ված էին հրեաների վախից , Յիսուս եկաւ՝ և նո-
րանց միջումը կանգնեց և նորանց ասաց . Ողջո՜ւն
20 ձեզ ։ Երբոր սա ասաց՝ իրեն ձեռներն ու իրեն կո-
ղը ցոյց տուաւ նորանց . և աշակերտներն ուրա-
21 խացան երբոր Տէրին տեսին ։ Նորէն ասաց նորանց .
Ողջո՛յն ձեզ . ինչպէս որ իմ Հայրս ինձ ուղարկեց ,
22 ես էլ ձեզ եմ ուղարկում ։ Եւ երբոր սա ասաց՝
փչեց դէպի նորանց և ասաց . Առէ՛ք Սուրբ Հո-
23 գին ։ Թէ որ մինի մեղքը Թողէք՝ Թողվա՛ծ կ'լինի
նորանց . Թէ որ մինինը բռնէք՝ բռնված կ'լինի ։
24 Բայց Թօմաս տասներկուսից մինը՝ Երկուորեակ
կոչվածը , նորանց հետ չէր՝ երբոր Յիսուս եկաւ ։
25 Միւս աշակերտներն ասումէին նորան , Թէ Տէրին
տեսինք . և նա ասաց նորանց , Թէ որ նորա ձեռ-
ներումն բեւեռների նշանը չ'տեսնեմ , և իմ մատ-
ներս չ'դնեմ բեւեռներին տեղը , և իմ ձեռներս
չ'մտցնեմ նորա կողը՝ չեմ հաւատալ ։
26 Եւ ուԹ օրից ետեւ աշակերտները նորէն ներ-
սումն էին , և Թօմասն էլ նորանց հետ . Յիսուս
դռները փակված լինելով եկաւ և նորանց միջումը
27 կանգնեց և ասաց . Ողջո՜ւն ձեզ ։ Յետոյ Թօմասին
ասաց . Բե՛ր քո մատներդ և այստեղ դի՛ր , և իմ
ձեռներս տե՛ս , և քո ձեռներդ բե՛ր՝ և իմ կողս
մտցրո՛ւ , և մի՛ լինիր անհաւատ՝ այլ հաւատաց-
28 եալ ։ Թօմաս պատասխան տուաւ և նորան ասաց .
29 Ի՛մ Տէրս և ի՛մ Աստուածս ։ Յիսուս նորան ա-
սաց . Դա որ տեսիր ինձ՝ հաւատացիր . Երանի՛ նո-
րանց՝ որ չեն տեսել և հաւատումեն ։
30 Յիսուս ուրիշ էլ շատ նշաններ արաւ իրեն ա-

շակերտներին առաջին՝ որ չեն գրուած այս գըր-
31 քումս ։ Բայց աս այնքան գրուեցաւ՝ որ հաւատաք,
թէ Յիսուս է Քրիստոսն Աստուծոյ Որդին . և որ
հաւատաք , և յաւիտենական կեանքն ընդունիք
նորա անունովը ։

ԳԼ․ ԻԱ

Քրիստոս յայտնվում է Գալիլեայում Տիբերեայ ծովին մօտ. Նորա մարգարէութիւնը Պետրոսի և Յօհաննէսի մասին ։

1 Սորանից յետև Յիսուս դարձեալ իրեն անձը
յայտնեց իրեն աշակերտներին Տիբերեայ ծովի եզ-
2 րին մօտ . և այս կերպովս յայտնեց ։ Մինտեղ էին
Սիմօն Պետրոսը . և Թօմասն երկուորեակ անուան-
վածը , և Նաթանայէլը՝ որ Գալիլեացոց Կանայիցն
էր , և Զեբեդիայի որդիքները , և այն աշակերտա-
3 ներիցն ուրիշ երկու հոգի էլ ։ Սիմօն Պետրոսը նո-
րանց ասաց . Ես գնումեմ ձուկն բռնելոյ . Նորան
ասացին . Մենք էլ կ'գանք քեզ հետ . գնացին և
մտին նաւը , և այն գիշերը ընաւ բան չ'բռնեցին ։
4 Եւ առաւօտ էլաւ՝ Յիսուս ծովին եզրումը կանգ-
նած էր , բայց աշակերտները չ'ճանաչեցին , թէ
5 Յիսուսն է ։ Յիսուս նորանց ասաց . Մանկունք՝ մին
ուտելոյ բան ունի՞ք . պատասխան տուին և նորան
6 ասացին . Ոչ՛ ։ Նորանց ասաց . Ուռկանն աջի կող-
մըն ձգեցէ՛ք , և կ'գտնէք . Նորանք ձգեցին , և չէին
կարօղանում քաշել՝ ձկների շատութեան պատճա-
7 ռովը ։ Այն աշակերտն՝ որ Յիսուս սիրում էր նո-
րան՝ Պետրոսին ասաց . Նա Տէրն է . Սիմօն Պետ-

րոսն երբոր լսեց՝ թէ Տէրն է , շորն իրեն վերայ ա-
ռաւ , ինչուոր՝ մերկ էր , և ինքն իրեն ձգեց ծո-
8 վըն մէջ ։ Եւ միւս աշակերտները նաւովը էին գա-
լիս . ինչուոր ցամաքիցը հեռու չէին . բայց երկու
հարիւր գազի չափ , և ուռկանը ձկներովը քաշում
9 էին ։ Երբոր դուրս եկին ցամաքը , տեսին անծուխի
կրակ վառած , և նորա վերայ մին ձուկ և հաց ։
10 Յիսուս նորանց ասաց . Բե՛րէ՛ք ինձ այդ ձկներիցն
11 որ դուք հիմիկ բռնեցիք ։ Սիմօն Պետրոսը մտաւ
և ուռկանը քաշումէր դէպի ցամաքը՝ մեծ մեծ
ձկներով լիքը , հարիւր յիսուն և երեք հատ . և
այնքան բան կար՝ և գործիքը չ'պատառուեցաւ ։
12 Յիսուս նորանց ասաց . Եկէ՛ք ճաշ կերէ՛ք . և ա-
շակերտներիցը ո՛չ ով չէր համարձակվում հարցը-
նել՝ թէ Դու ո՞վ ես . ինչուոր՝ գիտումէին թէ Տէ-
13 րըն է ։ Յիսուս եկաւ՝ և հացն առաւ՝ և նորանց
14 տուաւ , և այնպէս էլ ձուկն ։ Այս երեք անգա-
մը Յիսուս աշակերտներին երևեցաւ , մեռելների
միջիցը յարութիւն առնելուցն յետև ։
15 Եւ երբոր ճաշը կերին , Յիսուս ասաց Սիմօն Պետ-
րոսին . Սի՛մօն Յօնանի որդի՝ դորանցից աւելի սի-
րո՞ւմես ինձ . Նորան ասաց . Այո՛ Տէր , դու էլ
գիտումես՝ որ քեզ սիրումեմ . Նորան ասաց . Ա-
16 րածացրո՛ւ իմ գառներս ։ Նորէն ասաց նորան .
Սի՛մօն Յօնանի որդի՝ սիրո՞ւմես ինձ . Նորան ասաց .
Այո՛ Տէր՝ դու էլ գիտումես՝ որ քեզ սիրումեմ .
17 Նորան ասաց . Արածացրո՛ւ իմ ոչխարներս ։ Նո-
րէն երեք անգամն ասաց նորան . Սի՛մօն Յօնանի
որդի՝ սիրո՞ւմես ինձ . Պետրոսը տրտմեցաւ . որով-
հետև երեք անգամ նորան ասաց՝ թէ Սիրումես

ինձ․ և նորան ասաց․ Տէ՛ր՝ դու ամեն բան գի-
տումես, և ամեն բան ճանաչումես, և որ՝ սիրում
եմ քեզ․ Յիսուս նորան ասաց․ Արածացրո՛ւ իմ
18 ոչխարներս ։ Ճշմարիտ ճշմարիտ ասումեմ քեզ,
թէ դեռ քանի որ տղայ էիր՝ ինքդ քո գօտիկդ
կապումէիր՝ և որ տեղ որ ուզումէիր՝ գնումէիր․
և երբոր կ՚ծերանաս, ձեռներդ վեր կառնես․ և
ուրիշները գօտիկ կ՚կապեն քեզ, և կ՚տանեն՝ որ-
19 տեղ որ չես ուզիլ ։ Սա ասաց՝ ցոյց տալով թէ նա
ի՞նչ մահով պիտի փառաւորէ Աստուծոյն. և երբ-
որ սա ասաց, նորան ասաց․ իմ ետևէս ե՛կ․
20 Պետրոսը յետ դարձաւ՝ և տեսաւ այն աշակեր-
տին, որ Յիսուս սիրումէր նորան, որ ետևէն գա-
լիս էր, նա՝ որ էլ նորա լանջքին ընկաւ և ասաց․
21 Տէ՛ր՝ ո՞վ է նա՝ որ քեզ պիտի մատնէ ։ Պետրոսն
երբոր տեսաւ նորան, Յիսուսին ասաց․ Տէ՛ր՝ ա-
22 պա սա ի՞նչ ։ Յիսուս նորան ասաց․ Թէ որ կա-
մենումեմ, որ դա կենայ, մինչև որ ես գամ․ դու
23 ի՞նչ հոգս ունիս, դու իմ ետևէս ե՛կ ։ Եւ այս
բանս դուրս եկաւ եղբայրներին միջումը՝ և կարծե-
ցին թէ այն աշակերտը չի մեռնիլ․ և Յիսուս չա-
սաց նորան՝ թէ չի մեռնիլ․ բայց թէ՝ որ կամե-
նումեմ որ դա կենայ մինչև որ ես գամ, դու
ի՞նչ հոգս ունիս ։
24 Այս աշակերտս է, որ այս բանիս համար վկայ-
ումէ․ որ էլ այս բաներս գրեց, և գիտումենք
25 որ նորա վկայութիւնը ճշմարիտ է ։ Բայց ուրիշ էլ
շատ բաներ կան՝ որ Յիսուս արաւ, որ եթէ նո-
րանք մին մին գրված լինէին, կարծումեմ թէ աշ-
խարհքս էլ բաւական չէր լինիլ այն գրքերը տա-
նելու, թէ որ գրված լինէին ։

ԳՈՐԾՔ
ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Քրիստոսի համբառնալը․ Մատթիային առաքեալ ընտրվիլը։

1 ԱՌԱՋԻՆ խօսքն արի՝ ո՞վ Թէօփիլէ՝ ամեն բա-
նի համար․ որ Յիսուս սկսեց անել և սովրցնել ։
2 Մինչև այն օրն՝ որ Սուրբ Հոգով ձեռովը պատ-
ուէր տուաւ առաքեալներին․ որ ընտրեց, և վեր-
3 կացաւ ։ Որ իրեն չարչարանքիցն ետև զինքը կեն-
դանի կանգնացրուց նորանց առաջին՝ շատ հրաշք-
ներով՝ որ քառասուն օր երևեցաւ նորանց՝ և Աս-
4 տուծոյ արքայութեան համար խօսեց ։ Եւ նորանց
հետ հացով հաղորդվելու ժամանակը, պատուէր
էր տալիս նորանց՝ որ Երուսաղէմից չ՚հեռանան,
բայց սպասեն Հօր աւետիքին, որ ասաց ինձանից
5 լսեցիք ։ Ինչուոր՝ Յօհաննէսը ջրով մկրտեց․ բայց
դուք Սուրբ Հոգովը կ՚մկրտվիք, ո՛չ թէ շատ օ-
6 րերից ետև ։ Եւ նորանք մօտ եկին հարցնումէին
նորան՝ և ասում Տէ՛ր՝ միթէ հիմիկ այս ժամա-
նակումս պիտի հասցնե՞ս Իսրայէլի թագաւորու-
7 թիւնը ։ Ասաց նորանց․ Ձեզ պէտք չէ որ գիտե-

նաք ժամերն ու ժամանակներն, որ Հայրն իրեն
8 իշխանութենումը դրաւ. Բայց երբոր Հոգին ձեզ
վերայ կ'համնի, դուք զօրութիւն կառնէք. և ինձ
վկայ կ'լինիք Երուսաղէմումն ու ամեն Հրէաստանի
9 և Սամարիային մէջ, մինչև երկրի ծայրերը։ Եւ
երբո՛ր սա ասաց, դեռ քանի որ նորանք նայում
էին՝ վերացաւ. և ամպը վեր առաւ նորան նորանց
10 աչքերից։ Եւ դեռ որ խիստ մտիկ տալով նայ-
ումէին նորա դէպի երկինքը գնալոյն, և ահա՛ եր-
կու մարդիկ երեւեցան նորանց սպիտակ շորերով,
11 Որ էլ ասացին. Ո՛վ Գալիլեացի մարդիկ՝ ի՞նչ էք
կանգնած և մտիկ էք տալիս դէպի երկինքը. այս
Յիսուս որ ձեզանից վերկացաւ երկինքը, ճիշդ
այսպէս կ'գայ՝ ինչպէս որ նորան տեսիք դէպի եր-
12 կինք գնալիս։ Այնուհետև այն Ձիթենեաց ան-
ուանված սարից յետ դարձան Երուսաղէմ. որ
մօտ էր Երուսաղէմին՝ շաբաթ օրի ճանապարհի
13 չափ։ Եւ երբոր մտին, վեր ելան վերնատունն՝ որ-
տեղ որ բնակված էին. Պետրոսն ու Յակոբոսը,
Յօհաննէսն ու Անդրէասը, Փիլիպպոսն ու Թօմասը,
Բարթողիմէոսն ու Մատթէոսը, Յակոբոս Ալփեանն
ու Շմաւօն Նախանձայոյզը՝ և Յուդա Յակոբեանը։
14 Սորանք ամենքը միշտ միաբան աղօթք էին անում
կանանց հետ, և Յիսուսի մայր Մարիամի՝ և նորա
եղբարներին հետ։

15 Եւ այն օրերը Պետրոս վերկացաւ եղբարներին
մէջ և ասաց. և այնտեղ հարիւր և քսան հոգի-
16 ների չափ բազմութիւն կային. Մա՛րդիկ եղբարք՝
պէտք էր որ այն գրվածը կատարվէր. որ առաջուց
ասաց Սուրբ Հոգին Դաւթի բերանովը Յուդային

համար, որ Յիսուսի բռնողներին առաջնորդ ե-
17 ղաւ. Պատճառնոր՝ նա մեզ հետ մեր համարումն
էր. և այս պաշտօնիս վիճակը նորան էլ հասած
18 էր։ Սա անիրաւութեան վարձքովը մին գիւղ ըս-
տացաւ. և ուռաւ միջից ճղվեցաւ, և նորա ամեն
19 փորը դուրս թափվեցաւ. Եւ յայտնի ելաւ ամե-
նին՝ որ Երուսաղէմումը բնակված են. մինչև որ
այն գիւղի անունն իրենց լեզուովն Ակեղդամայ
20 կոչվեցաւ. որ է ասել՝ Արիւնի գիւղ. Ինչու որ՝
Սաղմոս գրքումը գրված է՝ Նորա բնակութիւնն
աւերակ պիտի լինի, և մինն էլ չ'լինի՝ որ նորա-
նում բնակվի. և նորան կարգը ուրիշը պիտի առ-
21 նէ։ Հիմիկ պէ՛տք է՝ որ այս մարդկանցից որ մեզ
հետ եկել են այն ամեն ժամանակն՝ որ Տէր Յի-
22 սուսը մեզ հետ ներս մտաւ և դուրս ելաւ. Յօ-
հաննէսի մկրտութենից սկսած մինչև այն օրն՝ որ
մեզանից վերացաւ. որ սորանցից մինը մեզ հետ
23 վկայ լինի նորա յարութեանը։ Եւ երկու մարդ
կանգնացրին. Յօսէփին՝ որ Բարսաբա էին կոչում,
24 որ Յուստոս անուանվեցաւ՝ և Մատաթիային։ Եւ
աղօթք անելով ասացին. Դո՛ւ Տէր՝ որ ամենի
սիրտը գիտումես՝ այս երկուսից մինը յայտնէ՛
25 որն որ ընտրեցիր, Որ այս պաշտօնիս և առաքեալ
լինելոյ վիճակն առնէ, որ նորանից Յուդան վէր
26 ընկաւ՝ որ գնայ իրեն տեղը։ Եւ նորանց վերայ վի-
ճակ ձգեցին, և վիճակն ընկաւ Մատաթիային վե-
րայ, և նա տասնումին առաքեալներին հետ հա-
մարվեցաւ։

ԳԼ. Բ

*Հոգեգալուստ . Պետրոսի քարոզը . առաջին մկրտութիւ-
նը . նոր ժողովրդեան աճումն ու կենցաղավարութիւնը ։*

1 Եւ երբոր Պէնտէկոստէի օրերը կատարվումէին ,
2 ամէնքը միաբան մին տեղ էին ։ Եւ յանկարծակի
երկնքիցը սաստիկ ձայն էլաւ՝ սաստիկ քամու պէս
եկած . և լցրուց այն բոլոր տունն՝ որ նորանում
3 նստած էին ։ Եւ երեւեցան նորանց՝ բաժանված
լեզուներ ինչպէս կրակից . և նստեց նորանց ամէն
4 մէկին վերայ ։ Եւ ամէնքն Սուրբ Հոգով լցվան ,
և սկսեցին ուրիշ լեզուներով խօսել՝ ինչպէս որ Հո-
5 գին նորանց խօսել էր տալիս ։ Եւ Երուսաղէմու-
մը բնակված էին Հրեաներ՝ Աստուածավախ մար-
6 դիկ՝ երկնքի ներքեւ ամէն ազգերիցը ։ Եւ երբոր
այս ձայնս էլաւ՝ բազմութիւնն եկաւ մինտեղ և
կիտվեցաւ . պատճառոր՝ լսումէին նորանց՝ որ ա-
7 մէն մէկի լեզուներովը խօսումէին . Հիանումէին ա-
մէնքն և զարմանում՝ և մինն մինին ասում . Ահա՛
չէ՞ որ սորանք ամէնքը որ խօսումեն , Գալիլեացի
8 են ։ Եւ ի՞նչպէս է՝ որ մենք ամէն մէկս մեր լե-
զուներովս լսումենք՝ որ նորանում ծնված ենք .
9 Պարթեւներ և Մարք և Ելամացիք , և նորանք՝ որ
բնակված են Միջագետումը , Հրէաստանումը , և
10 Գամիրքումը , Պոնտոսումը , և Ասիայի մէջ . Փը-
ռիւգիայի և Պամփիլիայի մէջ , Եգիպտոսում , և
Լիբիացոց չորս կողմերումը . նորանք՝ որ Կիւրենա-
11 ցոց հետ էն , և նոր եկած Հռօմայեցիքը . Հրէա-

ներ՝ և նորանց մօտ դարձածներ , Կրետացիք և
Արաբացիք , լսումենք որ՝ նորանք մեր լեզուներովս
12 Աստուծոյ մեծամեծ բաները խօսումեն ։ Հիանում-
էին ամէնքը և զարմանում , և մինը մինին ասում .
13 Սա ի՞նչ պիտի լինի ։ Եւ կէսերը ծաղր անելով ա-
սումէին , թէ Քաղցուով հարբած են ։
14 Վերկացաւ Պետրոս այն տասնումինին հետ՝ իրեն
ձայնը՝ բարձրացրուց՝ և նորանց հետ խօսեց . Ո՛վ
Հրէաստանցի մարդիկ , և ամէնքդ՝ որ բնակված էք
Երուսաղէմումը, սա ձեզ յայտնի՛ լինի՛ և իմ խօս-
15 քերիս ակա՛նջ դրէք ։ Չէ՛ թէ ինչպէս որ դուք կար-
ծումէք , թէ սորանք հարբած են . ինչուոր՝ դեռ
16 օրիս երեք ժամն է ։ Բայց սա է՝ որ Յովէլ մարգարէի
17 ձեռովս ասվեցաւ ։ Եւ կ'լինի սորանից ետեւ յե-
տին օրերումն՝ Աստուած ասումէ , որ իմ Հոգուցս
կ'թափեմ ամէն մարմնոյ վերայ . և ձեր որդիքնե-
րը , և ձեր աղջիկները կ'մարգարէանան . և ձեր ե-
րիտասարդները տեսիլքներ կ'տեսնեն , և ձեր ծե-
18 րերը երազներով երազ կ'տեսնեն ։ Եւ իմ ծառա-
ներիս վերայ՝ և իմ աղախիններիս վերայ՝ այն օ-
րերն իմ Հոգուցս կ'թափեմ , և կ'մարգարէանան .
19 Եւ նշաններ կ'տամ վերեւ երկնքումը , և նշաններ
ներքեւ երկրումս , արիւն և կրակ և ծխի մրրիկ ։
20 Արեգակը խաւար կ'դառնայ , և լուսինն արիւն՝
21 դեռ որ Տէրի մեծ և երեւելի օրը չեկած ։ Եւ կը
լինի ամէն՝ ով որ Տէրի անունը կ'կանչէ՝ կապրի ։
22 Ո՛վ Իսրայէլացի մարդիկ՝ այս բաներս լսեցէ՛ք .
Յիսուս Նազօրեցին՝ այն մարդն՝ որ Աստուածանից
ցոյց տված ձեզանում զօրութենով և նշաննե-
րով և հրաշքներով , որ Աստուած նորանով արաւ

ձեր միջումը․ ինչպէս որ դուք ինքներդ էլ գի-
23 տումէք․ Նորան՝ որ Աստուծոյ սահմանված խոր-
հրդովն ու կանուխ գիտութենովը մատնված էր ա-
նօրէնների ձեռքովը, փայտի վերայ բեւեռած ըս-
24 պանեցիք։ Որ նորան Աստուած յարոյց մահի ցա-
ւերը խափանելով․ ինչուոր՝ կարելի չէ՛ր, որ նա
25 բռնվի նորանից։ Դաւիթ ինքն էլ է ասում նո-
րա համար․ Առաջուց տեսնումէի Տէրն ամեն ժամ
իմ առաջին․ ինչուոր՝ իմ աջ կողմն էր, որ չը
26 սասանվիմ․ Սորահամար իմ սիրտս ուրախ էլաւ,
և իմ լեզուս ցնծացաւ, և իմ մարմինս էլ յու-
27 սով կ'ընակվի․ Պատճառնոր՝ իմ անձս չես թո-
ղիլ դժոխքումը և քո Սրբոյդ ապականութիւն
28 տեսնել չե՛ս տալ։ Կեանքի ճանապարհները ճանա-
չացրիր ինձ․ քո երեսիդ ուրախութիւնովն լցրիր
29 ինձ։ Մարդիկ եղբարք՝ պէ՛տք է որ համարձակու-
թենով ասեմ Դաւիթ նահապետին համար․ թէ
նա մեռաւ և թաղվեցաւ․ և նորա գերեզմանը
30 մինչեւ այս օր մեր միջումը կայ։ Բայց որովհետեւ
մարգարէ էր, և գիտումէր՝ որ Աստուած երդու-
մով երդվաւ նորան, որ նորա փորի պտղիցը նորա
31 աթոռին վերայ նստացնէ․ Առաջուց իմացած խօ-
սեց Քրիստոսի յարութեան համար․ որ նորա հո-
գին դժոխքումը չ'թողվաւ՝ և նորա մարմինն ապա-
32 կանութիւն չ'տեսաւ։ Այս Յիսուսիս Աստուած
33 յարոյց՝ որ նորան մենք ամենքս վկայումենք․ Ա-
ստուծո՛յ աջովը բարձրացած․ և Սուրբ Հոգոյ աւե-
տիքը Հօրիցն առած՝ փռեց սա, որ դուք տես-
34 նում և լսումէք։ Պատճառնոր՝ ո՛չ թէ Դաւիթը
վեր ելաւ երկինքը․ բայց և ինքն է ասում՝ Տէրն

35 իմ Տէրին ասաց․ Իմ աջ կողմն նստէ՛, Մինչեւ
36 քո թշնամիներդ քո ոտացդ կոխելիք դնեմ։ Հիմիկ
թո՛ղ ճշմարտութենով գիտենայ Իսրայէլի բոլոր
տունը, որ Աստուած նորան Տէր և Օծեալ արաւ․
այն Յիսուսին՝ որ դուք խաչեցիք։
37 Եւ երբոր սա լսեցին, իրենց սրտերումը զղջա-
ցան․ և ասացին Պետրոսին և միւս առաքեալնե-
38 րին․ Ի՞նչ պիտի գործենք՝ մարդիկ եղբարք։ Պետ-
րոս նորանց ասաց․ Ապաշխարեցէ՛ք՝ և ձեզանից
ամեն մէկը թո՛ղ մկրտվի Տէր Յիսուսի Քրիստոսի
անունովը՝ մեղաց թողութեան համար․ և Սուրբ
39 Հոգոյ աւետիքը կընդունիք։ Ինչուոր՝ ձեզ և ձեր
որդոց համար է այս աւետիքս, և այն ամեն հե-
ռաւորներին համար՝ որ նորանց մեր Տէր Աստուա-
40 ծը կ'կանչէ։ Եւ ուրիշ շատ խօսքերով վկայու-
թիւն էր դնում, և յորդորում նորանց՝ և ասում․
41 Ազատվեցէ՛ք այս ծուռ ազգիցս։ Մին քանիսը նո-
րա խօսքը յօժարութենով ընդունեցին և մկրտվե-
ցան․ և այն օրն երեք հազարի չափ հոգիք աւե-
42 լացան։ Եւ միշտ առաքելոց վարդապետութեանն
ու հաղորդութեանը, և հացի կտրելոյն և աղօթքին
հետեւում էին։
43 Եւ ամեն անձին վերայ ահ և վախ էր լինում․
շատ նշաններ և հրաշքներ էին գործվում առա-
44 քելոց ձեռքովը։ Ամեն հաւատացեալներն իրար
հետ միատեղ էին, և ամեն բան հասարակաց ու-
45 նէին։ Եւ ապրանքներն ու ամեն բաները ծախում
և բաշխումէին այն ամենին, ո՛ւմ որ մին բան
46 պէտք էր լինում։ Միշտ և ամեն օր միաբանու-
թենով տաճարն էին գնում, և հացը տներում

կտրում, և ուրախութենով և սրտի միամտութե-
47 նով կերակուր առնում։ Աստուծոյն օրհնումէին,
և ամեն ժողովրդի առաջին շնորհք ունէին. և
Տէրը միշտ և ամեն օր փրկվածներ էր աւելաց-
նում՝ նորանց հետ։

ԳԼ. Գ

Պետրոսին հրաշագործութիւնը կաղին վերայ և քարոզն որ ապաշխարեն Քրիստոսին հաւատալով։

1 Պետրոսն ու Յօհաննէսը գնումէին տաճարն աղօթ-
2 քի ժամը իններին, Եւ մին մարդ կար իրեն մօր փո-
րիցը կաղ՝ որ նորան ամեն օր վերառած դնումէին
տաճարի դռան մօտ՝ որ Գեղեցիկ էր կոչվում, որ
ողորմութիւն խնդրէ նորանցից՝ որ տաճարն էին
3 մտնում։ Երբոր տեսաւ Պետրոսին և Յօհաննէսին՝
որ տաճարն էին մտնում, աղաչումէր՝ որ ողորմու-
4 թիւն առնէ նորանցից։ Պետրոսը Յօհաննէսին հետ
մտիկ արաւ նորան՝ և ասաց. Դէպի մեզ նայէ՛։
5 Նա դարձաւ դէպի նորանց, և յոյս ունէր՝ որ մին
6 բան առնէ նորանցից։ Եւ Պետրոս ասաց. Արծաթ
և ոսկի չունիմ. բայց ինչ որ ունիմ, նա քեզ կը-
տամ. Յիսուսի Քրիստոսի Նազօրեցոյ անունովը
7 վե՛ր կաց՝ և գնա՛։ Եւ նորա աջ ձեռիցը բռնեց՝
և վերկացրուց նորան. և շուտով հաստատվեցան
8 նորա բարձքը՝ և ոտաց սրունքը. Վեր վազեց՝ և
սկսեց գնալ, և նորանց հետ մտաւ տաճարը. և
գնումէր՝ և վազ էր տալիս՝ և Աստուծոյն օրհ-
9 նում։ Եւ ամեն ժողովուրդը տեսաւ նորան, որ

10 գնումէր՝ և Աստուծոյն օրհնում։ Եւ գիտումէին
նորան, որ սա՛ նա էր, որ ողորմութեան համար
նստումէր տաճարի Գեղեցիկ դրանը, և զարման-
քով լցվան այն նշանին համար՝ որ էլաւ։
11 Եւ դեռ որ նա Պետրոսին և Յօհաննէսին բռը-
նած էր, ամեն ժողովուրդը վազեց նորանց մօտ
այն սրահն՝ որ Սողոմոնի էր կոչվում, և զարմա-
12 ցան։ Երբոր Պետրոս տեսաւ, պատասխան տուաւ
ժողովրդին. Ո՛վ Իսրայէլացի մարդիկ՝ ինչո՞ւ էք
զարմացել սորա վերայ՝ կամ մեզ վերայ ինչո՞ւ էք
սաստիկ նայում, իբր թէ՝ մենք մեր զօրութենով
և քաջութենով տուած լինինք դորան գնալը։
13 Աբրահամու Աստուածը՝ Սահակայ Աստուածը՝
և Յակոբայ Աստուածը, մեր հարանց Աստուածը
փառաւորեց իրեն Որդի Յիսուսին. նորան՝ որ դուք
մատնեցիք, և ուրացաք Պիղատոսի առաջին,
14 երբոր նա դատումէր՝ որ արձակէ։ Եւ այն Սուր-
բին և Արդարին ուրացաք, այլ խնդրեցիք՝ որ մին
15 մահապարտ մարդ շնորհէ ձեզ։ Եւ կենաց Առաջ-
նորդին սպանեցիք, որ նորան Աստուած մեռելների
միջիցը յարոյց. որ նորան իսկ մենք վկայումենք։
16 Եւ նորա անունի հաւատքովը սորան որ տեսնում-
էք և գիտումէք, նորա անունը հաստատեց. և
հաւատքն՝ որ նորանով է՝ այս առողջութիւնս տը-
17 ւաւ դորան ձեր ամենից առաջին։ Եւ հիմիկ՝ ե՛ղ-
բարք, գիտումեմ, որ անգիտութենով արիք՝ ինչ-
18 պէս որ ձեր իշխաններն էլ։ Բայց Աստուած՝ ինչ-
պէս որ ամեն մարգարէների բերանովը պատմեց ի-
րեն Քրիստոսի չարչարվիլը, այնպէս էլ կատարեց։
19 Ուրեմն՝ զղջացէ՛ք և յետ դարձէ՛ք, որ ձեր մեղ-

20 քերը ջնջվին, Որ տէրի երեսից հանգստանալու
ժամանակները գան. և Յիսուսին Քրիստոսին ու-
ղարկէ, որ առաջուց ձեզ համար սահմանված է,
21 Որ նորան երկինքը պէտք է ընդունի մինչեւ այն
ամեն բաների հաստատվելու ժամանակները. որ
նորանց համար խօսեց Աստուած իրեն սուրբ մար-
22 գարէների բերանովը: Մօսէս մեր հարանցն ասաց,
թէ Ձեր Տէր Աստուածը մարգարէ վեր կ'կացնէ
ձեզ համար ձեր եղբարների միջից՝ ինձ նման,
նորան լսեցէ՛ք ամեն բանի համար՝ ինչ որ կ'խօսի
23 ձեզ. Եւ կ'լինի, որ ամեն անձն՝ որ այն մարգա-
րէին չ'լսէ, նա ժողովրդի միջից թող սատակվի:
24 Եւ ամեն մարգարէներն՝ որ Սամուէլից մինչեւ
հիմիկ մարգարէացան, ճիշտ այս օրերս պատմեցին:
25 Դուք էք այն մարգարէների որդիքն՝ և այն ուխ-
տին, որ Աստուած մեր հարանց հետ հաստատեց,
և Աբրահամին ասաց. Քո զաւակովդ պիտի օրհնը-
26 վին երկրի ամեն ազգերը: Աստուած առաջ ձեզ
համար վերկացրուց իրեն Որդին, և նորան ուղար-
կեց՝ որ ձեզ օրհնէ, որ ձեր ամեն մէկդ յետ դառ-
նաք ձեր չարութենից:

ԳԼ. Դ

Երկու առաքեալք բռնվումն և քննվում. Նորանց ետ դառած ժամանակը ժողովքը աղօթք է անում. հաւատացելոց կեանքն ու վիճակը:

1 Եւ դեռ քանի որ նորանք ժողովրդին հետ խօսում-
էին, քահանայապետներն ու տաճարի իշխանները

2 և սադուկեցիքը նորանց վերայ հասին: Սաստիկ
բարկացած նորա համար՝ որ նորանք ժողովրդին սո-
վորցնումէին, և Յիսուսի ձեռովը մեռելների յա-
3 րութիւն առնելը պատմումէին. Իրենց ձեռները
ձգեցին նորանց, և բանտի մէջ դրին մինչեւ ա-
4 ռաւօտը. ինչուոր՝ իրիկվան դէմ էր: Բայց այն
խօսքը լսողներից շատերը հաւատացին. և մարդ-
կանց համարը հինգ հազարի չափ էլաւ:
5 Եւ յետեւի օրն էլաւ՝ որ նորանք իշխաններին
և երէցներին ու կարգացողներին ժողովեցին Երու-
6 սաղէմ, Եւ Աննա քահանայապետին՝ և Կայիա-
փային, և Յօհաննէսին և Աղէքսանդրոսին, և այս
7 ամենին՝ որ քահանայական ցեղից էին. Եւ նո-
րանց կանգնացրին մէջ տեղը՝ և նորանց հարց-
նումէին. Ի՞նչ զօրութենով կամ ո՞ր անունով
8 արիք դուք սա: Այն ժամանակը Պետրոս Սուրբ
Հոգով լցված՝ նորանց ասաց. Ո՛վ ժողովրդի իշ-
9 խաններ՝ և Իսրայէլի երէցներ. Թէ որ արժան է՝
որ մեզ այսօր դատէք մին տկար մարդոյ երախտիք
անելոյ համար, թէ ում՝ ձեռովը սա բժշկվեցաւ,
10 Թո՛ղ յայտնի լինի ձեզ ամենիդ՝ և ամեն Իսրայէ-
լի ժողովրդիդ. որ Յիսուսի Քրիստոսի Նազօրեցոյ
անունովն որ նորան դուք խաչեցիք՝ որ նորան Աս-
տուած յարոյց մեռելների միջից, ճիշտ նորանով
11 սա հիմիկ ձեր առաջիդ ողջացած կայ: Նա՛ է ձե-
զանից շինողներիցդ անարգված քարը, որ անկիւ-
12 նի գլուխ էլաւ: Եւ էլ մին ուրիշ բանով փըր-
կութիւն չ'կայ. ինչուոր՝ էլ ուրիշ անուն չ'կայ
երկնքի ներքեւ մարդկանց տվված՝ որ նորանով կա-
13 րելի լինի մեզ ապրիլ: Պետրոսի և Յօհաննէսի հա-

համարձակութիւնը տեսնելով, և գիտենալով թէ ա-
գէտ և առանց ուսմունքի մարդիկ են, զարմանում
էին. պատճառնոր ճանաչումէին նորանց՝ որ Յի-
14 սուսի հետ էին։ Եւ այն բժշկված մարդուն էլ
տեսնումէին՝ որ նորանց հետ կար. և բնաւ չէին
15 կարող մին պատասխան տալ։ Եւ հրամայեցին նո-
րանց՝ որ ատեանից դուրս գնան, և իրար հետ
16 խորհուրդ արին։ Եւ ասացին. ի՞նչ անենք այս
մարդկանցս՝ որ երեւելի նշան էլաւ սորանց ձեռո-
վը. որ ամեն Երուսաղէմի մէջ բնակողներին էլ
17 յայտնի է, և կարող չենք ուրանալ։ Միայն թէ՝
որ աւելի չ'տարածվի ժողովրդին մէջ՝ ահ տանք
նորանց, որ էլ այն անունովը չ'խօսին մարդկանց
18 մինի հետ։ Եւ նորանց կանչեցին և պատուէր ար-
ուին՝ որ բնաւ չ'խօսին, և էլ չ'սովրցնեն Յիսուսի
19 անունովը։ Բայց Պետրոսն ու Յօհաննէսը պատաս-
խան տուին՝ և նորանց ասացին. վ՛ճի՛ռ կտրեցէք,
եթէ արժա՞ն է Աստուծոյ առաջին՝ որ ձեզ աւե-
20 լի ականջ դնենք՝ քան թէ Աստուծոյն. ինչուոր՝
մենք չենք կարող չ'խօսիլ նա՝ որ տեսինք և լսե-
21 ցինք։ Նորանք ահ տալով արձակեցին նորանց,
և ո՛չ ինչ բան չ'գտին՝ թէ ի՛նչպէս պատիժ տան
նորանց՝ ժողովրդի պատճառովը. ինչուոր՝ ամենքն
էլ այն էլած բաներին համար փառք էին տալիս
22 Աստուծոյն։ Պատճառնոր՝ այն մարդը քառասուն
տարուց էլ աւելի էր, որ նորա վերայ այս բժըշ-
կութեան նշանս էլաւ։

23 Եւ այն տեղից՝ որ արձակվեցան՝ եկին իրենցնե-
րին մօտ, և պատմեցին որքան բան որ քահանայա-
24 պետներն ու երեցներն ասացին նորանց։ Եւ նորանք

երբոր լսեցին, իրենց ձայները բարձրացրին դէպի
Աստուած և ասացին. Դո՛ւ Տէր Աստուած՝ որ արիր
երկինքը և՝երկիրս՝ ծովը և ամեն բան՝ որ նորանցում
25 է. Որ մեր Հայր Դաւթի՝ քո ծառայի բերանովը խօ-
սեցիր և ասացիր Սուրբ Հոգոյ ձեռովը. ինչո՞ւ հա-
մար հեթանոսները խռովվեցան՝ և ժողովուրդները
26 ունայն բաներ մտածեցին։ Երկրի թագաւորները վեր-
կացան և իշխանները մինտեղ հաւաքվեցան Տէրին
27 համար՝ և նորա Օծեալին համար։ Իրաւի որ հա-
ւաքվեցան այս քաղաքումս քո սուրբ Որդի Յիսու-
սին վերայ, որ նորան օծեցիր. Հերովդէսը և Պոն-
տոս Պիղատոսը՝ հեթանոսներովս ու Իսրայէլի ժո-
28 ղովուրդներովը, Որ անեն՝ որչափ որ քո ձեռքդ և
29 կամքդ առաջուց սահմանեց որ լինի։ Եւ հիմիկ՝
Տէ՛ր, նայէ՛ նորանց ահ տալոյն, և տո՛ւր քո ծա-
ռաներիդ՝ որ ամեն համարձակութենով քո բանդ
30 խօսին. Նորանով՝ որ քո ձեռքդ մեկնես, որ բժըշ-
կութիւն, և նշաններ և հրաշքներ լինին, քո
31 սուրբ Որդի Յիսուսի անունովը։ Եւ դեռ քանի որ
նորանք աղօթք էին անում՝ շարժվեցաւ այն տե-
ղը՝ որ ժողովված էին, և ամենքը Սուրբ Հոգով
լցվան. և Աստուծոյ բանը համարձակութենով
խօսումէին։

32 Եւ այն հաւատացելոց բազմութիւնը մին սիրտ՝
և մին անձն էր. և նորանցից բնաւ մինն էլ չէ՛ր
ասում իրեն ապրանքներին համար՝ թէ իրենն են.
33 բայց նորանց ամեն բաները հասարակաց էր։ Եւ
առաքեալները շատ զօրութենով վկայութիւն էին
տալիս Տէր Յիսուսի Քրիստոսի յարութեան առնե-
լոյն համար. և մեծ մեծ շնորհքներ կային նորանց

34 ամենին վերայ ։ Եւ նորանց մէջ ո՛չ մինը կարօ-
տութիւն չունէր . պատճառնոր՝ նորանք ամենքը՝
որ գեղերի կամ տների տէ՛րէին՝ ծախում, և ծախ-
35 ւածի գինը բերումէին ։ Առաքելոց ոտներին մօտ
դնում . և ամենին բաժանումէին՝ ինչպէս որ մի-
36 նին մին բան պէտք էր լինում ։ Յօսէփին՝ որ ա-
ռաքեալներիցը Բառնաբաս կոչվեցաւ , որ Մխիթա-
րութեան որդի կասվի . Ղեւտացի ցեղիցը՝ Կիպրո-
37 սեցի ։ Նա մին գիւղ ունէր , ծախեց՝ և գինը բե-
րաւ առաքելոց ոտներին մօտ դրաւ ։

ԳԼ. Ե

Անանիայի ու Սափիրայի յանկարծօրէն մահը . առաքե-
լոց բանտարկվիլը և ազատվիլը. Գամաղիէլին խրատը ։

1 Բայց մին Անանիա անուն մարդ , իրեն Սափիրա
2 կնկան հետ՝ մի ագարակ ծախեց , Եւ նորա գնիցը
գողեց որ կինն էլ գիտումէր . և մին քիչ բաժին
3 բերաւ առաքելոց ոտներին մօտ դրաւ ։ Պետրոս
ասաց . Անանիա՝ ինչո՞ւ համար սատանան քո
սիրտդ լցրուց՝ որ դու սուտ խօսիս Սուրբ Հոգուն ,
4 և ագարակի գնիցը գողես ։ Զէ՞ որ դեռ քանի որ
կար՝ քոնն էր , և երբոր ծախումէիր՝ քո իշխանու-
թեանդ տակն էր . ի՞նչ է՝ որ այս բանս դրիր քո
սրտիդ մէջ . ո՛չ թէ մարդկանց սուտ ասացիր ,
5 բայց Աստուծոյն ։ Եւ Անանիան երբոր այս բանս
լսեց , վերընկաւ և հոգին հանեց . և մեծ վախ ե-
6 լաւ ամենին վերայ՝ որ նա լսեցին ։ Երիտասարդնե-
րը վերկացան պատանեցին նորան , և տարան թա-

7 ղեցին ։ Եւ էլաւ երբոր երեք ժամ անցան , և նո-
րա կինն որ չէր գիտում ինչ որ էլած էր , ներս
8 մտաւ ։ Պետրոս պատասխան տուաւ նորան՝ և ա-
սաց . Դու ինձ ասա՛՝ թէ ա՞յնչափ գնով ծախե-
ցիք այն ագարակը . և նա ասաց . Այո՛ այնչափ ։
9 Եւ Պետրոսն ասաց նորան . Ի՞նչ է՝ որ միաբան-
վեցաք դուք , որ Տէրի Հոգին փորձէք . ահա՛ նո-
րանց ոտները՝ որ քո մարդը թաղեցին՝ դուռան մօտ
10 են՝ քեզ էլ կ՚հանեն ։ Եւ շուտով վերընկաւ նո-
րա ոտներին առաջին՝ և հոգին հանեց . երիտա-
սարդները ներս մտին՝ նորան մեռած գտին , և
11 հանեցին իրեն մարդոյն մօտ թաղեցին ։ Եւ մեծ
ահ էլաւ ամեն եկեղեցոյն վերայ , և ամենին վե-
րայ՝ որ սա լսեցին ։
12 Եւ առաքեալների ձեռովը նշաններ և հրաշքներ
էին լինում ժողովրդին մէջ . և ամենքը միաբան
13 Սողոմոնի սրահումն էին ։ Եւ այն ուրիշներիցը ոչ
մինը չէր համարձակվում մօտենալ նորանց . բայց
14 ժողովուրդը պատիւ էր տալիս նորանց ։ Եւ էլ ա-
ւելի շատանումէին Տէրի հաւատացեալները . մարդ-
15 կանց և կանանց բազմութիւնը , Մինչեւ որ հի-
ւանդները հանումէին բաց փողոցները , և իրենց
սայլերովն ու մահիճներովը այնտեղ դնում . որ երբ-
որ Պետրոսն անցանէ , լինի թէ նորա շուքը նո-
16 րանցից մինին հասնէ ։ Եւ այն չորս կողմի քաղաք-
ներիցը բազմութիւն էին հաւաքվում Երուսաղէմ ,
բերումէին հիւանդներն ու պիղծ դեւերիցը չար-
չարվածները . որ ամենքն էլ բժշկվումէին ։
17 Վերկացաւ քահանայապետն ու ամենքը՝ որ նո-
րան հետ էին , և սադուկեցոց աղանդը՝ նախան-

18 ձող լցվան, Եւ ձեռք ձգեցին առաքեալներին,
19 և նորանց յայտնի դրին բանտին մէջ. Բայց յե-
տոյ Տէրի հրեշտակը գիշերով բանտի դռները բաց
20 արաւ, նորանց հանեց՝ և ասաց. Գնացէ՛ք տաճա-
րին մէջ կանգնեցէ՛ք, և այս կեանքիս ամեն հը-
21 րամանները խօսեցէ՛ք ժողովրդի հետ։ Եւ երբոր լը-
սեցին, առաւօտանց մտին տաճարին մէջ՝ և սո-
վորցնումէին. եկաւ քահանայապետը և նորանք՝
որ նորա հետ էին, ատեանը, և Իսրայէլի որդոց
ամեն ծերակոյտը կանչեցին միասեղ. և ուղարկե-
22 ցին բանտն՝ որ բերեն նորանց։ Եւ երբոր սպա-
սաւորներն եկին՝ նորանց չ'գտին բանտին մէջ.
23 յետ դարձան և պատմեցին, Եւ ասացին. Թէ
Բանտն ամեն զգուշութենով փակված գտինք, և
պահապաններն էլ՝ որ դռանը մօտ կանգնած էին.
24 բացինք՝ և ներսումն բնաւ մարդ չ'գտինք։ Երբոր
տաճարին իշխաններն ու քահանայապետները այս
բանս լսեցին, զարմանումէին նորանց համար, թէ
25 նա ի՛նչ պիտի լինի։ Եւ մինն եկաւ նորանց պատ-
մեց՝ թէ Ահա՛ այն մարդիկն՝ որ բանտի մէջ դը-
րիք, տաճարումը կանգնած են՝ և սովորցնումեն
26 ժողովրդին։ Այն ժամանակն իշխանն սպասաւոր-
ներին հետ գնաց՝ նորանց բերին առանց բռնու-
թեան. պատճառնոր՝ ժողովրդիցը վախենումէին՝
27 որ չ'քարկոծվին։ Եւ երբոր բերին նորանց՝ կանգնաց-
րին ատեանին առաջին. քահանայապետը հարց-
28 րուց նորանց, Եւ ասաց. Չէ՞ որ պատուիրելով
պատուիրեցինք ձեզ՝ որ չ'սովորցնէք այն անուանո-
վը. և հիմիկ՝ ահա՛ Երուսաղէմը լցրիք ձեր ու-
սմունքով, և կամենումէք այն մարդու արիւնը մեզ
վերայ բերել։

29 Պատասխան տուաւ Պետրոսը և առաքեալները,
և ասացին. Աստուծոյ պէտք է աւելի հնազանդ-
30 վել՝ քան մարդկանց։ Մեր հարանց Աստուածը
յարոյց այն Յիսուսին՝ որ դուք փայտից կախած
31 սպանեցիք. Աստուած նորան Առաջնորդ և Փըր-
կիչ բարձրացրուց իրեն աջովը որ Իսրայէլին ապաշ-
32 խարութիւն տայ և մեղաց թողութիւն։ Եւ մենք
ենք նորա վկաներ այս խօսքերիս համար, և Սուրբ
Հոգին՝ որ Աստուած իրեն հնազանդ լինօղներին
33 տուաւ նորան։ Եւ նորանք երբոր լսեցին, բար-
կանումէին. և մտածումէին, որ նորանց սպանեն։
34 Մին փարիսեցի վերկացաւ ատեանին մէջ. որ
նորա անունը Գամաղիէլ էր. օրէնք սովորցնօղ՝ ա-
մեն ժողովրդի առաջին պատուական. հրաման տը-
ւաւ որ այն մարդկանց մին քիչ դուրս անեն,
35 Եւ նորանց ասաց. Իսրայէլացի՛ մարդիկ՝ ձեզ վե-
րայ նայեցէ՛ք այս մարդկանցս համար, թէ ի՞նչ
36 պէտք է անել։ Այս օրերից առաջ Թեւդասը
վերկացաւ՝ իրեն համար ասելով՝ թէ ինքը մին մեծ
բան է. որ չորս հարիւրի չափ մարդիկ նորա ետե-
ւէն ընկան. որ սպանվեցաւ՝ և ամենքն էլ՝ որ նո-
րա հետ միաբանված էին, քանդվեցան՝ և ոչինչ
37 էլան։ Նորանից ետեւ Գալիլեացի Յուդան վեր-
կացաւ աշխարհագրի օրերումը. և շատ ժողովուրդ
ապստամբացրուց իրեն հետ. նա էլ կորաւ՝ և ա-
38 մենքն էլ՝ որ նորան հաւանել էին՝ ցրվեցան։ Եւ
հիմիկ ասումեմ ձեզ. Հեռի՛ կացէք այդ մարդ-
կանցից, և թողէ՛ք դորանց. պատճառնոր՝ եթէ
այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է՝
39 կ'քանդվի. Բայց թէ որ Աստուածանից է՝ չէք կա-

բօղ քանդել դորանց. չ՚լինի որ Աստուծոյ դէմ
40 կռիւ անօղ էլ գտնվէք ։ Հաւան կացան նորան.
և առաքեալներին կանչեցին՝ ծեծեցին, և պատ-
ուէր տուին՝ որ էլ չ՚խօսին Յիսուսի անունովը. և
41 արձակեցին նորանց ։ Եւ նորանք ուրախանալով
գնացին ատեանին երեսիցը, ինչուոր՝ արժանի է-
42 ղան Տէրի անունին համար անարգվիլ ։ Եւ ամեն
օր չէին դադարում տաճարումը և տներումը սո-
վորցնել՝ և Յիսուսի Քրիստոսի համար աւետա-
րանել ։

ԳԼ. Զ

Եօթը սարկաւագաց ընտրութիւնը. Ստեփաննոս ամ-
բաստանվում է ։

1 Եւ այն օրերն՝ երբոր աշակերտները շատացան,
Յունաց տրտունջ ելաւ Եբրայեցոց դէմ. ինչուոր՝
նորանց որբեւէրի կանայքն ամեն օրվան պաշտա-
2 մունքին մէջ անարգվումէին ։ Տասներկուքը կան-
չեցին աշակերտների բազմութիւնը և ասացին.
Մեզ հաճոյ չէ՝ որ Աստուծոյ խօսքը թողէնք՝ և
3 սեղանին ծառայենք ։ Ե՛ղբարք՝ եօթը մարդ ընտ-
րեցէ՛ք, որ ձեզանից բարի վկայութիւն ունին, և
Սուրբ Հոգով և իմաստութենով լցված են, որ
նորանց այս պէտքական բաներիս վերայ կանգնա-
4 ցընենք ։ Եւ մենք աղօթքին և բանի ու պաշտա-
5 մունքին հետեւենք ։ Եւ այն խօսքն ամեն բազմու-
թեան առաջին հաւանելի երեւեցաւ. և ընտրեցին
Ստեփաննոսին՝ որ Սուրբ Հոգով և հաւատքով

լցված մարդ էր, և Փիլիպպոսին և Պրոխորոնին և
Նիկանորային և Տիմոնային և Պարմենային և Ան-
6 տիոքացի նոր դարձած Նիկողայոսին ։ Նորանց
կանգնացրին առաքեալներին առաջին. և աղօթք
7 անելով ձեռք դրին նորանց վերայ ։ Եւ Աստուծոյ
խօսքը մեծանումէր՝ և աշակերտների համարն ա-
ւելի շատանում Երուսաղէմումն. և քահանանե-
րիցը շատ բազմութիւն հնազանդվումէին հաւատ-
քին ։
8 Ստեփաննոս՝ շնորհքով և զօրութենով լցված
մարդ մը, մեծ մեծ նշաններ և հրաշքներ էր անում
9 ժողովրդին մէջ ։ Մին քանի մարդիկ՝ այն ժողովա-
րանիցն՝ որ Լիբէացոց էր կոչվում, և Կիւրենացոց
և Աղէքսանդրացոց՝ և նորանց՝ որ Կիւլիկիայիցն ու
Ասիայիցն էին, վերկացան, որ Ստեփաննոսին հետ
10 վիճաբանութիւն անեն. Բայց չէին կարօղանում
հակառակ կենալ այն իմաստութեանը՝ և այն Հոգ-
11 ւոյն, որ նորանով խօսումէր նա ։ Այն ժամանակը
մին քանի մարդկանց սովրըրին՝ որ նորանց ասեն,
թէ Մենք լսեցինք դորանից՝ որ հայհոյութեան բա-
ներ էր խօսում՝ Մօսէսին և Աստուծոյն հակա-
12 ռակ ։ Եւ ժողովրդին և երէցներին ու կարդացող-
ներին խռովացրին. և վերայ հասին յափշտակեցին
13 նորան՝ և տարան ատեանը ։ Եւ սուտ վկաներ
կանգնացրին՝ որ ասումէին. Այս մարդս չի դա-
դարում սուրբ տեղւոյն և օրէնքին դէմ հայհոյու-
14 թեան բաներ խօսելուցը ։ Մենք լսեցինք դորանից՝
որ ասումէր, թէ Յիսուս Նազօրեցին՝ նա այս տե-
ղըս կ՚քանդէ, և այն օրէնքն՝ որ Մօսէսը տուաւ
15 մեզ, կ՚փոխէ ։ Եւ ամենքն՝ որ այն ատեանումը

նստած էին, մտիկ տուին նորան, և նորա երեսն
հրեշտակի երեսի նման տեսին ։

ԳԼ․ Է

Ստեփաննոսին պատասխանը, յափշտակվիլը ու մահը ։

1 Եւ քահանայապետն ասաց․ Թէ Շիտակ որ այդ-
2 բանդ այդպէ՞ս է ։ Եւ նա ասաց. Մա՛րդիկ եղբարք
և հա՛րք՝ ինձ լսեցէ՛ք․ փառաց Աստուածն երեւե-
ցաւ մեր հայր Աբրահամին՝ դեռ որ Միջագետու-
մըն էր, դեռ որ նորան Խառանին մէջ չէր բնա-
3 կացրել․ և ասաց նորան․ Գո՛ւրս ել քո երկրիցդ
և քո ազգիցդ, և ե՛կ այն երկիրն՝ որ ես ցոյց կը-
4 տամ քեզ ։ Այն ժամանակը Քաղդէացոց երկրից
դուրս եկաւ՝ Խառանումը բնակվեցաւ․ և նորա
հօր մեռնելուցն ետեւ՝ նորան այնտեղից փոխեց,
և պանդխտացրուց այս երկրումս, որ սորանում
5 հիմի՛կ դուք բնակված էք ։ Եւ սորանում ժառան-
գութիւն չ'տուաւ նորան, և ո՛չ մին ոտի քայլի
չափ․ և խոստացաւ՝ որ այս տեղս բնակութիւն
տայ նորան․ և նորանից ետեւ՝ նորա զաւակին,
6 դեռ որ նա որդի չունէր ։ Աստուած այսպէս խօ-
սեց․ Թէ Նորա զաւակը պանդուխտ կ'լինի օտար
երկրի մէջ, և ծառայութեան մէջ կ'ձգեն նորան,
7 և կ'չարչարեն չորս հարիւր տարի ։ Եւ այն ազգին
որ կ'ծառայեն, նորան ես կ'դատեմ, ասաց Աստ-
ուած․ և սորանից ետեւ դուրս կ'գան՝ և այս տե-
8 ղումս ինձ կ'պաշտեն ։ Եւ նորան Թլփատութիւն
ուխտ տուաւ․ և յետոյ Սահակին ծնաւ, և ութ

օրումը թլփատեց նորան․ և Սահակը Յակոբին, և
9 Յակոբն էլ տասներկու նահապետներին ։ Եւ նա-
հապետները նախանձվեցան Յօսէփին հետ, և ծա-
խեցին Եգիպտոս․ և Աստուած նորան հետ էր ։
10 Եւ նորան փրկեց իրեն ամեն նեղութիւններից․
և նորան շնորհք և իմաստութիւն տուաւ Եգիպ-
տացոց փարաւօն թագաւորին առաջին․ և նորան
իշխան կանգնացրուց Եգիպտացոց, և իրեն բոլոր
11 տանը վերայ ։ Եւ սով եկաւ Եգիպտոսի ամեն եր-
կիրը, և Քանան էլ՝ և մեծ նեղութիւն կար․ և
12 մեր հարքը կերակուր չէին գտնում ։ Եւ Յակոբն՝
որ լսեց թէ Եգիպտոսումը կերակուր է գտնվում,
13 մեր հարանցն ուղարկեց առաջին անգամը ։ Եւ
երկրորդ անգամը Յօսէփ զինքը ճանաչել տուաւ
իրեն եղբարներին․ և նորա ազգը յայտնի էլաւ
14 փարաւօնին․ Յօսէփն ուղարկեց և կանչեց իրեն
հայր Յակոբին, և ամեն ազգատոհմին՝ եօթանա-
15 սուն և հինգ հոգիք ։ Եւ Յակոբը վեր եկաւ Եգիպ-
16 տոս՝ և վախճանվեցաւ ինքը և մեր հարքն էլ ։ Եւ
փոխվեցան Սիւքեմ, և դրվան այն քարայրին մէջ,
որ նորան Աբրահամը Եմօրայի որդիքներից գնեց
17 արծաթով Սիւքեմումը ։ Երբոր այն ուխտիքի ժա-
մանակը մօտեցաւ՝ որ Աստուած Աբրահամին խոս-
տացաւ, ժողովուրդը մեծացաւ և շատացաւ Ե-
18 գիպտոսումը ։ Մինչեւ որ ուրիշ թագաւոր վերկա-
ցաւ Եգիպտոսումը՝ որ Յօսէփին չէր ճանաչում ։
19 Նա հնարք գործեց մեր ազգին համար, և մեր
հարանցը չարչարեց՝ որ իրենց երեխաները դուրս
20 ձգեն՝ որ չապրին, Որ Մօսէսն էլ այն ժամանա-
կումը ծնվաւ, և գեղեցիկ էր Աստուծոյ առաջին․

որ էլ իրեն հօր տանն երեք ամիս կերակրվեցաւ ։
21 Եւ երբոր դուրս ձգեցին նորան, փարաւօնի աղ-
ջիկը վերառաւ նորան, և մեծացրուց նորան՝ որ
22 իրեն որդեգիր լինի ։ Եւ Մօսէս վարժվեցաւ Եգիպ-
տացոց ամեն իմաստութենովը. և զօրաւոր էր ի-
23 րեն խօսքերովն ու գործքերովը ։ Երբոր նորա քա-
ռասուն տարեկան ժամանակը լցվաւ, նորա սըր-
տին մէջ ընկաւ որ իրեն եղբարներին՝ Իսրայէլի
24 որդիքներին մէջ մտն գայ ։ Եւ երբոր տեսաւ, որ
մինը զրկված էր, դժուար եկաւ իրեն. այն զրկ-
վածին համար վրէժխնդրութիւն արաւ՝ և Եգիպ-
25 տացոյն սպանեց. Կարծումէր՝ թէ նորա եղբարքը
կիմանան, որ Աստուած նորա ձեռովը փրկութիւն
26 պիտի տայ նորանց. և նորանք չիմացան ։ Եւ յե-
տեւի օրումն երեւեցաւ նորանց՝ որ կռիւ էին ա-
նում, և յորդորեց նորանց դէպի խաղաղութիւն,
ասաց. Մա՛րդիկ՝ դուք եղբարք էք, ինչո՞ւ էք ի-
27 րար զրկում ։ Բայց նա՝ որ ընկերին զրկումէր, նա-
խատեց նորան՝ և ասաց. Քեզ ո՞վ կանգնացրուց
28 մեզ վերայ իշխան և դատաւոր. Միթէ կամե-
նո՞ւմես ինձ էլ սպանել, ինչպէս որ երէկ Եգիպ-
29 տացոյն սպանեցիր ։ Եւ այս խօսքիցս Մօսէս փա-
խաւ, և պանդուխտ էլաւ Մադիամի երկրումը. ուր
30 որ երկու որդիք ծնաւ ։ Եւ երբոր քառասուն տա-
րին կատարվեցաւ, Սինա սարի անապատումը Տէ-
րին հրեշտակը երեւեցաւ նորան կրակի բոցով մո-
31 րենոյն մէջ ։ Եւ Մօսէսն երբոր տեսաւ՝ զարմացաւ
այն տեսիլքին համար, և երբոր մօտենումէր որ
32 մտիկ անէ, Տէրին ձայնն էլաւ. Ես եմ քո հա-
րանց Աստուածը, Աբրահամու և Սահակայ և Յա-

կոբայ Աստուածը. և Մօսէս սաստիկ ահով բըռ-
33 նված էր՝ և չէր համարձակվում նայել ։ Եւ Տէրն
ասաց նորան. Կօշիկներդ հանէ՛ ոտներիցդ, պատ-
ճառնոր՝ տեղդ՝ որ դու կանգնել ես, սուրբ երկիր
34 է ։ Տեսնելով տեսի իմ ժողովրդիս չարչարանքներն
որ Եգիպտոսումն է, և լսեցի նորանց հառաչանքը
և վէր եկլի որ նորանց փրկեմ. և հիմիկ ե՛կ քեզ
35 ուղարկեմ Եգիպտոս ։ Այն Մօսէսին՝ որ նորան
ուրացան և ասացին. Քեզ ո՞վ կանգնացրուց մեզ
վերայ իշխան և դատաւոր, իսկ նորան Աստուած
իշխան և փրկիչ ուղարկեց այն հրեշտակին ձեռո-
36 վըն որ մորենոյն մէջ երեւեցաւ նորան ։ Նա հա-
նեց նորանց՝ և նշաններ և հրաշքներ արաւ Եգիպ-
տացոց երկրումը. և կարմիր ծովումն, ու անա-
37 պատումը քառասուն տարի. Սա է այն Մօսէսը,
որ Իսրայէլի որդոցն ասաց. Ձեր Տէր Աստուածը
մարգարէ վէր կ'կացնէ ձեզ համար ձեր եղբարնե-
38 րիցը ինձ նման, նորան լսեցէ՛ք ։ Սա է՝ որ էլաւ
ժողովրդին մէջ անապատումը հրեշտակին հետ,
որ նորա հետ Սինայ սարումը խօսեց՝ և մեր հա-
րանց հետ. որ կենդանի հրամաններ առաւ՝ որ
39 տայ մեզ ։ Որ մեր հարքը չ'կամեցան հնազանդ լի-
նել նորան. բայց դէն ձգեցին՝ և իրենց սրտերովը
40 դարձան Եգիպտոսի մէջ, Եւ Ահարօնին ասացին.
Մեզ համար աստուածներ շինէ՛, որ մեր առաջին
գնան. պատճառնոր՝ այն Մօսէսն՝ որ Եգիպտացոց
երկրիցը մեզ հանեց, չենք գիտում ի՞նչ էլաւ նո-
41 րան ։ Եւ այն օրերը մին հորթ շինեցին, և մատաղ
արին կըռքերին, և ուրախանումէին իրենց ձեռ-
42 ներին գործքերովը ։ Աստուած նորանցից երես դարձ-

րուց և Նորանց մատնեց՝ որ երկնքի զօրութիւնը
պաշտեն . ինչպէս որ գրված է մարգարէներին գըր-
քերումը . Միթէ մատաղներ և պատարագներ բե-
րի՛ք ինձ քառասուն տարի անապատումը . ո՛վ
43 Իսրայէլի տուն ։ Եւ Մողոքայ վրանն առիք , և Հը-
ռեմփա Աստուծոյ աստղը . այն պատկերն՝ որ ա-
ռիք Նորանց երկրպագութիւն տալոյ համար . և
44 ձեզ կ'փոխեմ Բաբելացոց այն կողմը ։ Վկայու-
թեան խորանը մեր հարանց հետ անապատումն էր .
ինչպէս հրաման տուաւ նա՝ որ Մովսէսին հետ խօ-
սումէր , որ Նորան անէ այն օրինակին պէս՝ որ տե-
45 սաւ , Որ Նորան էլ մեր հարքն առին բերին Յեսու-
ուայ հետ այն ազգերին երկիրը , որ Աստուած
դուրս ձգեց մեր հարանց երեսիցը . մինչև Դաւ-
46 թին ժամանակը , Որ նա Աստուծոյ առաջին շը-
նորհք գտաւ , և խնդրեց՝ որ Յակոբի Աստուծոյ
47 համար բնակարան գտնէ ։ Սողոմոնն էլ Նորա հա-
48 մար տուն շինեց ։ Բայց Բարձրեալը ո՛չ թէ ձեռ-
քով շինած տաճարումն է բնակվում , այլ ինչպէս
49 որ մարգարէն ասումէ . Երկինքն իմ աթոռս է , և
երկիրն իմ ոտաց դնելոյ տեղը . ի՞նչպիսի տուն
շինեցիք ինձ , ասումէ Տէրը , կամ ո՞րն է իմ հան-
50 գիստ առնելոյ տեղը ։ Չէ՞ որ իմ ձեռս արաւ այս
51 ամենս ։ Խստապարանոցներ՝ և սրտերով ու ա-
կանջներով չ'թլփատվածներ . դուք միշտ Սուրբ
Հոգոյն հակառակ էք կենում . ինչպէս որ ձեր հար-
52 քըն՝ այնպէս էլ դուք ։ Մարգարէներիցն ո՞րին չը
հալածեցին ձեր հարքը . և սպանեցին Նորանց՝ որ
առաջուց պատմեցին այն Արդարին գալոյն հա-
մար , որ դուք հիմիկ Նորան մատնիչ և սպանող է-

53 ղաք , Որ դուք օրէնքն առիք հրեշտակներին հրա-
մանքովը և չ'պահեցիք ։
54 Եւ երբոր լսումէին այս բաները , իրենց սրտերու-
մը շատ սաստիկ բարկանումէին և ատամները կըր-
55 ճրտացնում Նորա վերայ ։ Եւ նա լցված էր Սուրբ
Հոգով . դէպի երկինքը նայեց՝ և Աստուծոյ փառքը
տեսաւ , և Յիսուսին՝ որ կար Աստուծոյ աջ կող-
մը . և ասաց . Ահա՛ տեսնումեմ երկինքը բաց-
ված , և մարդոյ Որդին՝ որ կայ Աստուծոյ աջ
56 կողմումը ։ Մեծ ձայնով աղաղակեցին՝ իրենց ա-
կանջներն խփեցին , և ամենքն առ հասարակ վա-
57 զեցին Նորա վերայ , Եւ քաղաքիցը դուրս հանե-
ցին՝ և Նորան քարկոծումէին . վկաներն էլ իրենց
շորերը մին երիտասարդ մարդոյ ոտաց մօտ դնում
58 որ Սաւուղ էր կոչվում , Եւ քարկոծումէին Ստե-
փաննոսին , որ կանչումէր և ասում . Տէ՛ր Յիսուս՝
59 իմ հոգիս ընդունէ՛ ։ Ծունր դրաւ՝ և բարձր ձայ-
նով աղաղակեց . Տէ՛ր՝ սա դորանց համար մեղք
մի համարիր . և երբոր սա ասաց , ննջեց ։ Եւ Սօ-
ղոս կամակից էր Նորա սպանվելոյն ։

ԳԼ. Ը

Սօղոս հալածումէ աշակերտներին . Սամարացիք դարձի են գալիս . Սիմոն կախարդը . Եթովպացի իշխանին հաւատալը ։

1 Եւ այն օրերը մեծ հալածմունք եղաւ Երուսաղէ-
մումը եկեղեցոյն վերայ . և ամենքը ցրվեցան Հը-
րէաստանի գիւղերին մէջ և Սամարիայի մէջ , ա-
2 ռաքեալներիցը զատ ։ Եւ Աստուածավախ մարդիկ

Ստեփաննոսին վերաւին՝ և մեծ սուգ արին նորա
3 վերայ։ Բայց Սօղոս վնաս էր տալիս եկեղեցւոյն.
և տանից տուն էր մտնում, և մարդկանց և կա-
նանց քաշում՝ և մատնում բանտի մէջ։
4 Եւ ցրվածները ման էին գալիս՝ և Աստուծոյ խօս-
5 քըն աւետարանում։ Բայց Փիլիպպոսը վէր եկաւ
Սամարացոց քաղաքը՝ և Քրիստոսին քարոզում էր
6 նորանց։ Ժողովուրդները միաբան ականջ էին դը-
նում Փիլիպպոսին խօսքերին, երբոր նորանք լը-
սում էին և տեսնում այն նշաններն, որ անում էր։
7 Պատճառնոր՝ շատերն որ պիղծ դևեր ունէին՝ մեծ
8 ձայնով աղաղակում էին, և դուրս գալիս։ Շատ
9 անդամալուծներ և կաղեր էլ բժշկվում էին։ Եւ
շատ ուրախութիւն էլաւ այն քաղաքումը։ Մին
Սիմոն անուն մարդ՝ առաջուց այն քաղաքումն էր.
կախարդ էր, և Սամարացոց ազգը յիմարացնում
էր՝ իրեն անձին համար ասելով թէ մին մեծ բան
10 է, Որ փոքրներիցը մինչև մեծերը ամենքը նորան
էին նայում, և ասում. Թէ Սա՛ է Աստուծոյ զօ-
11 րութիւնը՝ որ մեծ է կոչվում։ Մտիկ էին տալիս
նորան. ինչուոր՝ շատ ժամանակ կախարդութիւն-
12 ներով յիմարացրել էր նորանց։ Բայց երբոր հա-
ւատացին Փիլիպպոսին, որ Աստուծոյ արքայու-
թեանը համար էր աւետարանում, և Յիսուսի Քը-
րիստոսի անունին համար, ամենքը մկրտվում էին՝
13 մարդիկը և կանայքը։ Եւ Սիմոն ինքն էլ հաւա-
տաց, և երբոր մկրտվեցաւ՝ միշտ Փիլիպպոսին հետ
էր. և երբոր տեսնում էր այն նշաններն ու մեծ
մեծ զօրութիւնները՝ որ լինում էին, զարմանում էր։
14 Երբոր առաքեալքն՝ որ Երուսաղէմումն էին՝ լսե-

ցին, թէ Սամարիայի մէջն էլ Աստուծոյ խօսքն
ընդունեցին, Պետրոսին և Յօհաննէսին ուղարկե-
15 ցին նորանց մօտ, Որ նորանք վէր եկին և աղօթք
արին նորանց վերայ, որ Սուրբ Հոգին առնեն.
16 ինչուոր՝ մինչև այն ժամանակը դեռ նորանցից ոչ
մինին վերայ Սուրբ Հոգին չէր հասել. բայց միայն
17 Տէր Յիսուսի անունովը մկրտված էին։ Այն ժա-
մանակը ձեռները դրին նորանց վերայ՝ և նորանք
18 Սուրբ Հոգին առնում էին։ Սիմոնն երբոր տեսաւ՝
թէ առաքեալների ձեռն վերադնելովը՝ Սուրբ Հո-
19 գին տրվում է, փող բերաւ նորանց և ասաց. Ի՛նձ
էլ տուէք այս իշխանութիւնս, որ ո՛ւմ վերայ
20 ձեռք դնեմ՝ Սուրբ Հոգին առնէ։ Եւ Պետրոսնո-
րան ասաց. Քո արծաթդ քեզ հետ կորչի՛. պատ-
ճառնոր՝ դու կարծեցիր թէ Աստուծոյ պարգևնե-
21 րը փողով կառնես։ Դու բաժին և վիճակ չո՛ւնիս
այդ բանումդ. պատճառնոր՝ քո սիրտդ շիտակ չէ
22 Աստուծոյ առաջին։ Ապաշխարէ՛ դու քո այդ չա-
րութենիցդ՝ և Տէրին աղաչէ՛, որ գուցէ թողու-
թիւն լինի քեզ քո սրտիդ գէշ խորհուրդներիցը։
23 ինչուոր՝ տեսնումեմ քեզ՝ որ մաղձի դառնութե-
նումն ու անիրաւութեան կապանքներումն ես։
24 Սիմոն պատասխան տուաւ և ասաց. Դուք ինձ
համար աղաչա՛նք արէք Տէրին, որ ինձ վերայ մին
25 բան չ՛գայ նորանցից, որ դուք ասացիք։ Եւ նո-
րանք վկայութիւն տալով՝ Աստուծոյ բանը խօսե-
ցին, և դարձան Երուսաղէմ. և Սամարացոց շատ
գիւղերի մէջն աւետարանում էին։
26 Տէրին հրեշտակը խօսեց Փիլիպպոսին հետ՝ և ա-
սաց. Վե՛ր կաց դու և գնա՛ հարաւային կողմն՝

այն ճանապարհովն, որ Երուսաղէմիցը վեր է գա-
27 լիս Գազայ, որ է անապատ ։ Եւ վեր կացաւ գը-
նաց. և ահա՛ Մին Եթովպացի մարդ, Եթովպացոց
Կանդակ թագուհոյ ներքինի և իշխան. որ նորա
ամեն գանձին վերայ էր. որ եկել էր Երուսաղէմ
28 երկրպագութիւն անելոյ ։ Եւ այնտեղից յետ էր
դառնում. և իրեն կառքումը նստած, Եսայեայ
29 մարգարէութիւնը կարդումէր ։ Սուրբ Հոգին Փի-
լիպպոսին ասաց. Մօտեցի՛ր և հասի՛ր այդ կառ-
30 քին ։ Եւ Փիլիպպոսն առաջ վազեց՝ և լսումէր որ
Եսայեայ մարգարէութիւնը կարդումէր, և ասաց.
31 Գիտո՞ւմես դա որ դու կարդումես ։ Նա էլ ա-
սաց՝ ի՞նչպէս կ'կարողանամ, թէ որ մինը չառաջ-
նորդէ ինձ. և Փիլիպպոսին աղաչեց՝ որ վերելլի
32 նստի նորա հետ ։ Եւ գրի գլուխն՝ որ կարդումէր՝
սա էր. Ինչպէս ոչխար վարվեցաւ սպանվելոյ տեղը.
և ինչպէս գառն իրեն խուզողին առաջին լուռ կա-
33 ցած՝ այնպէս չի բանում իրեն բերանը ։ Նորա
խոնարհութենովը նորա դատաստանն վեր առաւ,
նորա ցեղն ո՛վ պիտի պատմէ. ինչու որ՝ նորա
34 կեանքը երկրից վեր է առնվում ։ Ներքինին պա-
տասխան տուաւ Փիլիպպոսին՝ և ասաց. Աղաչում-
եմ քեզ՝ մարգարէն սա ո՞ւմ համար է ասում. ի-
35 րե՞ն համար, թէ մին ուրիշին համար ։ Փիլիպպոսն
իրեն բերանը բացաւ, և այս գրքից սկսած՝ Յի-
36 սուս Քրիստոսն աւետարանեց նորան ։ Երբոր ճա-
նապարհումը գնումէին, եկին մին ջրի մօտ. և
ներքինին ասաց. Ահա՛ ջուր՝ ի՞նչ կարգելէ ինձ՝ որ
37 մկրտվիմ ։ Եւ նորան ասաց. Թէ որ քո բոլոր սըր-
տովդ հաւատումես, կարելի է. նա պատասխան

տուաւ և ասաց. Հաւատումեմ՝ թէ Յիսուս Քը-
38 րիստոսն Աստուծոյ Որդին է ։ Եւ հրաման տուաւ,
որ կառքը կանգնացնեն. և երկուսն էլ վեր եկին
ջուրը՝ Փիլիպպոսն ու ներքինին, և մկրտեց նորան ։
39 Եւ երբոր այն ջրիցը դուրս եկին, Սուրբ Հոգին
եկաւ ներքինոյն վերայ. և Տէրին հր'շտակը Փի-
լիպպոսին յափշտակեց, և ներքինին էլ չ'տեսաւ
նորան. և ուրախութենով գնումէր իրեն ճանա-
40 պարհը ։ Բայց Փիլիպպոս Ազոտոսումը գտվաւ
և ման էր գալիս ու աւետարանում՝ մինչեւ որ ե-
կաւ Կեսարիա ։

ԳԼ. Թ

Պօղոսի դարձը. Պետրոսին հրաշքները Ենեային և Տաբի-
թային վերայ ։

1 Բայց Սօղոսն՝ որ դեռ լցված էր ահուվախ տալո-
վը, և Տէրի աշակերտները սպանելոյ մտքովը, քա-
2 հանայապետներին մօտ եկաւ, Եւ նորանցից թըղ-
թեր խնդրեց Դամասկոսի ժողովարաններին վերայ.
որ եթէ մինը գտնէ այն ճանապարհին հետեւող՝
մարդիկ կամ կանայք, նորանց կապած բերէ Երու-
3 սաղէմ ։ Եւ երբոր նա գնումէր՝ մօտեցան Դամաս-
կոսին, և յանկարծակի նորա չորս կողմովը լոյս
4 փայլեց երկնքից. Եւ վերընկաւ գետնին և ձայն
լսեց՝ որ ասումէր նորան, Սաւո՛ւղ Սաւո՛ւղ՝ ին-
5 չո՛ւ ես ինձ հալածում ։ Եւ նա ասաց. ո՞վ ես
Տէր. և նա ասաց. Ես Յիսուսն եմ՝ որ դու հա-
լածումես. դժուար է քեզ խթանին քացի տալ ։

6 Եւ խիստ վախով բռնված ու ապուշ մնացած ա-
սաց, Տէ՛ր՝ ինձ ի՞նչ ես կամենում որ ես անեմ։
7 Եւ Տէրն ասաց նորան. Կանգնէ՛ և մտի՛ր այդ
քաղաքը, և կ՚պատմվի քեզ՝ թէ ինչ պէտք է քեզ
որ անես. Բայց այն մարդիկն՝ որ նորա հետ գը-
նումէին, ապուշ կանգնած էին. միմիայն ձայնը լը-
8 սումէին, բայց ոչ մին բան չէին տեսնում։ Սօղոս
վերկացաւ գետնիցը, և բաց աչքով ոչ մինին չէ՛ր
տեսնում. Նորա ձեռիցը բռնած մտցրին Դամաս-
9 կոս։ Եւ այնտեղ էր երեք օր՝ և չէ՛ր տեսնում.
և ո՛չ կերաւ և ո՛չ խմեց։
10 Եւ Դամասկոսումը մին աշակերտ կար Անանիա
անուն, որ Տէրը տեսիլքին մէջ նորան ասաց.
11 Ա՛նանիա, և նա ասաց. Այստեղ եմ Տէ՛ր։ Եւ
Տէրը նորան ասաց. Վե՛ր կաց՝ և գնա՛ այն փո-
ղոցն՝ որ Շիտակ է կոչվում, և Յուդայի տանը
մա՛ն եկ մին Սօղոս անուն Տարսոնացի մարդին, որ
12 դեռ աղօթք է անում։ Եւ տեսիլքին մէջ տեսաւ
մին Անանիա անուն մարդ՝ որ մտաւ և ձեռքը դը-
13 րաւ իրեն վերայ, որ տեսնէ։ Անանիան պատաս-
խան տուաւ. Տէ՛ր՝ ես այս մարդոյն համար շատե-
րիցը լսեցի՝ թէ Երուսաղէմումը ո՛րչափ չարիք ա-
14 րաւ քո սրբերին։ Եւ այստեղ էլ քահանայա-
պետիցն իշխանութիւն ունի՝ որ այն ամենքը կա-
15 պէ, որ քու անունդ կանչումեն։ Տէրն ասաց նո-
րան. Գնա՛ դու, ինչու որ՝ նա ինձ համար ընտրը-
ված աման է, որ իմ անունս վեր առնէ տանի
հեթանոսներին, թագաւորներին և Իսրայէլի որ-
16 դոց առաջին։ Ինչու որ՝ ես նորան ցոյց կ՚տամ՝ թէ
նա ո՛րչափ իմ անունիս համար պիտի չարչարվի։

17 Եւ Անանիան գնաց՝ և մտաւ այն տունը. և ձեռ-
ները դրաւ նորա վերայ, և ասաց. Սա՛ւուղ եղ-
բայր՝ վե՛ր նայէ. Տէրն ուղարկեց ինձ, այն Յի-
սուսն՝ որ երեւեցաւ քեզ ճանապարհումը երբ որ
գալիս էիր. որ տեսնես՝ և Սուրբ Հոգով լցվիս։
18 Եւ շուտով նորա աչքերիցը կեղեւներ պես վէր
19 ընկան. տեսաւ՝ և վերկացաւ և մկրտվեցաւ։ Եւ
կերակուր առաւ՝ զօրացաւ. և մին քանի օր Դա-
մասկոսումն աշակերտներին հետ էլաւ։
20 Եւ շուտով ժողովարաններումը Յիսուսին քա-
21 րոզեց, թէ սա՛ է Աստուծոյ Որդին։ Ամենքն էլ՝
որ լսումէին, զարմացած էին, և ասումէին. Չէ՞
որ սա էր՝ որ Երուսաղէմումը կործանումէր նորանց,
որ Յիսուսին անունը կանչումէին և իսկ նորա հա-
մար է այստեղ եկել, որ սորանց կապած՝ տանի
22 քահանայապետներին մօտ։ Բայց Սօղօսն էլ աւե-
լի զօրանում և յաղթումէր այն Հրէաներին, որ
Դամասկոսումը բնակված էին. հաստատ հասկա-
23 ցընումէր՝ թէ սա՛ է Քրիստոսը։ Երբոր շատ օրեր
անցանումէին, Հրէաները խորհուրդ արին՝ որ ըս-
24 պանեն նորան։ Նորանց նենգութիւնը յայտնի է-
լաւ Սօղօսին, ինչու որ՝ գիշեր և ցերեկ դռները
25 պահումէին՝ որ նորան սպանեն։ Եւ աշակերտները
նորան գիշերն առին, և քթոցով պարսպիցը կա-
խելով վէր բերին։
26 Երբոր Սօղոս Երուսաղէմ եկաւ, ջանք էր ա-
նում, որ աշակերտներին հետ միաւորվի. և ամեն-
քը նորանից վախենումէին, և չէին հաւատում
27 թէ աշակերտ է։ Բայց Բառնաբաս նորան առաւ
տարաւ առաքեալներին մօտ. և նորանց պատմեց՝

թէ ինչպէս ճանապարհումը Տէրին տեսաւ, և թէ
նորա հետ խօսեց, և թէ Դամասկոսումը համար-
28 ձակ քարոզեց Յիսուսին անունը ։ Եւ նորանց հետ
էր Երուսաղէմումը մտնելով և դուրս գալով, և
29 Յիսուսի անունը համարձակ քարոզելով ։ Յունաց
հետ էլ խօսում՝ և վիճաբանութիւն էր անում.
և նորանք խորհուրդ էին անում որ սպանեն նո-
30 րան ։ իսկ եղբարքն՝ որ իմացան, նորան տարան
Կեսարիա, և ուղարկեցին նորան Տարսոն ։
31 Բայց եկեղեցին բոլոր Հրէաստանի՝ Սամարիայի
և Գալիլեայի մէջ խաղաղութիւն ունէր, շինվում
էր և Տէրի երկիւղին հետեւում. և Սուրբ Հոգու
մխիթարութենովը շատանում էր ։
32 Եւ էլաւ երբոր Պետրոս ման էր գալիս չորս կող-
մովը ամենին մօտ, եկաւ այն սրբերին մօտ, որ
33 Լիւդիայի մէջ բնակված էին ։ Եւ այնտեղ մին
մարդ գտաւ, որ նորա անունն Ենա էր. ութ տա-
34 րի մահիճի մէջ անդամալուծ դրած ։ Եւ Պետրոսն
ասաց նորան. Ե՛նա՝ Տէր Յիսուս Քրիստոս քեզ
բժշկէ՛, վե՛ր կաց, դու ինքդ քո անկողինդ թա՛փ
35 տուր շինէ՛. և շուտով վերկացաւ ։ Եւ ամենքը
նորան տեսին՝ որ բնակված էին Լիւդիայի և Սա-
36 րօնի մէջ, և նորանք էլ դարձան դէպի Տէրը ։ Եւ
Յոպպէի մէջ մին աշակերտ էլած կին կար՝ անու-
նը Տաբիթա, որ կ'թարգմանվի Այծեմնիկ. սա
լի՛քն էր բարի գործքերով և ողորմութեննով որ ա-
37 նումէր ։ Եւ էլաւ այն օրերն՝ որ նա հիւանդացաւ
և մեռաւ, լուացին նորան և դրին վերնատունը ։
38 Եւ Լիւդիան մօտիկ էր Յոպպէին. երբոր աշա-
կերտները լսեցին՝ թէ Պետրոսն այնտեղ է, նորա

մօտ երկու մարդ ուղարկեցին աղաչելով, որ չուշա-
39 նայ նորանց մօտ գալ ։ Եւ Պետրոս վերկացաւ՝ և
նորանց հետ եկաւ. երբոր եկաւ, նորան հանե-
ցին այն վերնատունը. և ամեն որբեւէրինները նո-
րա չորս կողմովը կանգնեցին. լաց էին լինում, և
ցոյց տալիս այն հագուստներն ու այն շորերը, որ-
40 չափ որ Այծեմնիկը նորանց համար անումէր ։ Եւ
Պետրոսն ամենին դուրս հանեց, ծունր դրաւ ա-
ղօթք արաւ. և դարձաւ դէպի մարմինը և ասաց.
Տա՛բիթա՝ վե՛ր կաց Տէր Յիսուսի Քրիստոսի անու-
նովը. և նա աչքերը բացաւ. և Պետրոսին որ տե-
41 սաւ՝ շիտակ նստեց ։ Եւ ձեռքը տուաւ նորան՝ և
վերկացրուց նորան. և կանչեց որբերին և որբեւէ-
րիններին, և նորանց առաջին կենդանի կանգնաց-
42 րուց նորան ։ Եւ յայտնի էլաւ ամեն Յոպպէի մէջ,
43 և շատերը հաւատացին Տէրին ։ Եւ նա շատ օր
մնաց Յոպպէումը՝ մին կաշի քերող Սիմօնի մօտ ։

ԳԼ. Ժ

*Քրիստոնէութիւնը անցնում է հեթանոսներին. Կոռնէ-
լիոսն ու իր ընտանիքը մկրտվումեն ։*

1 Կեսարիայումն մին մարդ կար՝ Կոռնէլիոս անուն
հարիւրապետ, այն գնդիցն՝ որ Իտալիացի էր կոչ-
2 վում, Բարեպաշտ և աստուածավախ իրեն ամեն
տանովը. և շատ ողորմութիւն էր անում ժողո-
վրդին մէջ. և ամեն ժամ աղօթք էր անում դէպի
3 Աստուած ։ Նա օրի ինը ժամումը տեսիլքին մէջ
յայտնի տեսաւ Աստուծոյ հրեշտակը, որ մտնում

էր նորան մօտ՝ և նորան ասում. Ո՛վ Կոռնէլիոս։
4 Եւ նա երբոր նայեց դէպի նա՝ շատ վախով բռ-
նըվեցաւ, և ասաց. Ի՞նչ է՝ Տէ՛ր. և նա ասաց
նորան. Քո աղօթքդ՝ և քո ողորմութիւններդ վեր
5 ելան Աստուծոյ առաջին՝ որ յիշվին։ Եւ հիմիկ
մարդիկ ուղարկէ Յոպպէ՝ և մին Սիմօն մարդ կան-
6 չէ՝ որ Պետրոս է կոչվում։ Նա մնել է մին կաշի
քերօղ Սիմօնի մօտ, որ նորա տունը ծովին մօտ
7 է։ Եւ երբոր գնաց այն հրեշտակն՝ որ նորա հետ
խօսումէր, իրեն ծառաներից երկուսին՝ և իրեն
սպասաւորներիցը մին բարեպաշտ զինուոր կանչեց.
8 Եւ ամենը պատմեց նորանց, և ուղարկեց նորանց
Յոպպէ։
9 Եւ յետեւի օրը՝ երբոր նորանք ճանապարհ ըն-
կան, և այն քաղաքին մօտեցան, Պետրոս վեր ե-
10 լաւ կտուրը վեց ժամին՝ որ աղօթք անէ։ Սովեց՝
և կամենումէր հաց ուտել. և երբոր նորանք դեռ
պատրաստումէին՝ յափշտակութիւն ելաւ նորա
11 վերայ, Եւ տեսաւ երկինքը բացված. և մին մեծ
կտաւի պէս աման՝ չորս ծայրիցը կապած կախած,
12 և վէր եկաւ և նստաւ երկրի վերայ, Որ նորա-
նում կային երկրի ամեն կերպ չորս ոտանիքներ և
13 սողացօղներ և երկնքի թռչուններ։ Եւ երկնքից
ձայն եկաւ նորան. Վե՛ր կաց Պետրոս, մորթէ՛ և
14 կե՛ր։ Եւ Պետրոսն ասաց. Քա՛ւ լիցի Տէ՛ր, ին-
չուոր՝ ոչ մին ժամանակ խառնակ և պիղծ բան
15 չ՛կերայ։ Դարձեալ ձայն եկաւ նորան. Նա որ
16 Աստուած սրբեց՝ դու պիղծ մի՛ համարիր։ Սա ե-
րեք անգամ ելաւ՝ և այն ամանը վերացաւ երկին-
17 քը։ Եւ Պետրոս դեռ որ զարմացած էր իրեն մը-

քումը, թէ ի՛նչ պիտի լինի այն տեսիլքը՝ որ տե-
սաւ. ահա՛ այն Կոռնէլիոսից ուղարկված մար-
դիկը՝ Սիմօնի տան համար հարցրին, և դրան մօտն
18 կանգնեցին. Կանչեցին և հարցնումէին, թէ Այն
Սիմօնն՝ որ Պետրոս է կոչվում՝ այստե՞ղ է կե-
19 նում։ Եւ դեռ որ Պետրոս տեսիլքին համար միտք
էր անում, Հոգին նորան ասաց. Ահա՛ մին քանի
20 մարդիկ քեզ ուզումեն։ Բայց վե՛ր կաց վէ՛ր եկ,
և նորանց հետ գնա՛ առանց մին խղճմտանք անե-
21 լոյ, ինչուոր՝ ես ուղարկեցի նորանց։ Եւ երբոր
Պետրոս վէր եկաւ նորանց մօտ, ասաց. Ահա՛ ես
եմ՝ որ ուզումէք. ի՞նչ բան կայ՝ որ նորա համար
22 եկիք դուք։ Եւ նորանք ասացին, Կոռնէլիոս հար-
իւրապետը՝ արդար և աստուածավախ մարդ, որ
Հրէաների բոլոր ազգիցը բարի վկայութիւն ունի.
նա հրաման առաւ սուրբ հրեշտակից՝ որ քեզ
23 կանչէ իրեն տունը՝ և քեզանից խօսքեր լսէ։ Ներս
կանչեց նորանց՝ և իրեն մօտ պահեց.
Եւ յետեւի օրը Պետրոս վերկացաւ՝ և նորանց
հետ գնաց. և այն եղբայրներիցն՝ որ Յոպպէյումն
24 էին, մին քանիսը նորա հետ եկին։ Եւ հետեւեալ
օրը մտին Կեսարիա. և Կոռնէլիոս իրեն ազգա-
կաններին և ընտանի բարեկամներին կանչել էր,
25 և սպասումէր նորանց։ Եւ ելաւ երբոր Պետրոս
ներս էր մտնում՝ Կոռնէլիոսը դուրս եկաւ նորա
առաջը, և նորա ոտներն ընկած երկրպագութիւն
26 էր անում։ Եւ Պետրոս կանգնացրուց նորան՝ և
27 ասաց. Վե՛ր կաց՝ ես ինքս էլ մարդ եմ։ Եւ նո-
րա հետ խօսելով ներս մտաւ. և այնտեղ շատ
28 մարդ ժողոված գտաւ։ Եւ նորանց ասաց. Դուք

ինքներդ գիտումէք՝ Թէ ինչպիսի չի վայելում Հը-
րէայ մարդոյ՝ որ մի՛ն օտարազգի գիպչի կամ մօտե-
տենայ. և Աստուած ինձ ցոյց տուաւ, որ մարդ-
կանցից ոչ մինն էլ խառնակ կամ անսուրբ չ'պի-
29 տի ասել։ Սորա համար էլ առանց մի՛ բան մտա-
ծելոյ եկի, երբոր կանչւեցայ. բայց հիմիկ հարց-
30 նումեմ, ի՞նչ բանի համար կանչեցիք ինձ։ Եւ
Կոռնէլիոսն ասաց. Չորս օրից առաջ մինչեւ այս
ժամս՝ իմ տանս մէջ աղօթք էի անում իննը ժա-
մին և ահա՛ մին մարդ եկաւ՝ կանգնեց իմ առա-
31 ջիս սպիտակ շորերով, և ասաց. Կոռնէ՛լիոս՝ քու
աղօթքդ լսւեցաւ. և քո ողորմութիւններդ յիշ-
32 ւեցան Աստուծոյ առաջին։ Եւ հիմիկ ուղարկէ՛
Յոպպէ՝ և կանչէ՛ այն Սիմօնն՝ որ Պետրոս է կոչ-
ւում. սա մնել է մին կաշի քերող Սիմօնի տուն
33 ծովին մօտ. որ նա գայ, և քեզ հետ խօսի։ Եւ
ես շուտով քեզ մօտ ուղարկեցի. դու շատ լաւ
արիր՝ որ եկիր. հիմի՛ մենք ամենքս Աստուծոյ ա-
ռաջին կանգնած ենք՝ որ լսենք այն ամենն, որ
Տէրիցը քեզ հրամայած է։
34 Պետրոսն իրեն բերանը բացաւ՝ և ասաց. Ճըշ-
մարտութենով հասկացել եմ, որ Աստուծոյ առա-
35 ջին երեսպաշտութիւն չ'կայ. Այլ թէ ամեն ազ-
գերումը, ով որ վախենումէ նորանից՝ և արդա-
36 րութիւն գործում, ընդունելի է նորան։ Նա այն
բանն ուղարկեց Իսրայէլի որդոցը համար՝ որ խա-
ղաղութիւն աւետարանէ Յիսուսի Քրիստոսի ձե-
37 ռովը. սա՛ է ամենի Տէրը։ Դուք ինքներդ գի-
տումէք այն բանն, որ էլաւ ամեն Հրէաստանումը
Գալիլեայիցն սկսած՝ այն մկրտութենիցն ետեւ, որ

38 Յօհաննէսը քարոզեց։ Այն Յիսուսն՝ որ Նազա-
րէթիցն էր՝ որ նորան Աստուած Սուրբ Հոգով և
զօրութենով օծեց. որ նա եկաւ բարի անելոյ՝ և
սատանայիցն ամեն բռնւածները բժշկելոյ համար.
39 ինչու որ՝ Աստուած նորա հետն էր։ Եւ մենք վկայ
ենք այն ամենին՝ որ Հրէաստանի երկրումը՝ և Ե-
րուսաղէմումն արաւ. որ նորան էլ փայտից կա-
40 խած սպանեցին։ Նորան Աստուած յարոյց երեք
41 օրումը. և նորան յայտնի արաւ։ Ո՛չ թէ ամեն
ժողովրդին, բայց մեզ Աստուածանից առաջ ըն-
տըրւած վկաներիս. որ էլ կերինք և խմեցինք նո-
րա հետ՝ նորա մեռելների միջիցն յարութիւն առ-
42 նելուցն ետեւ։ Եւ պատուիրեց մեզ՝ որ ժողովրդին
քարոզենք՝ և վկայութիւն դնենք, թէ նա Աստ-
ուածանից սահմանուած է կենդանիների և մե-
43 ռելների դատաւոր։ Նորան ամեն մարգարէները
վկայութիւն են տալիս, որ նորա անունովը մեղաց
թողութիւն կառնեն այն ամենքը՝ որ հաւատումեն
նորան։
44 Եւ դեռ քանի որ Պետրոսն այս բանս խօսումէր,
Սուրբ Հոգին վէր եկաւ այն ամենին վերայ՝ որ այն
45 խօսքը լսումէին։ Զարմացած այն թլփատութենիցը
հաւատացեալներն՝ որ Պետրոսին հետ եկել էին.
որ հեթանոսներին մէջ էլ Սուրբ Հոգոյ պարգեւ-
46 ները թափւումէին, ինչու որ՝ լսումէին՝ որ նորանք
լեզուներով խօսումէին՝ և Աստուծոյն փառաւո-
47 րում։ Այն ժամանակը Պետրոս պատասխան ար-
ուաւ՝ և ասաց. Միթէ մինը կարո՞ղ է ջուրն ար-
գելել՝ որ սորանք չ'մկրտւին. որ Սուրբ Հոգին ըն-
48 դունեցին՝ ինչպէս որ մենք։ Եւ նորանց հրաման

տուաւ որ Յիսուսի Քրիստոսի անունովը մկրտվին․
այն ժամանակը աղաչեցին նորան՝ որ մին քանի
օր այնտեղ կենայ ։

ԳԼ․ ԺԱ

Պետրոսի պատասխանատուութիւնը իր հեթանոսաց մօտ գնալուն համար․ նորանց դարձը․ Անտիոքի ժողովուրդը ։

1 Առաքեալները և այն եղբայրները՝ որ Հրէաստանի
կողմերումն էին՝ լսեցին, որ հեթանոսներին մէջ էլ
2 Աստուծոյ խօսքն ընդունեցին ։ Բայց երբոր Պետ-
րոս վեր ելաւ եկաւ Երուսաղէմ, այն հաւատաց-
եալներն՝ որ թլփատութենիցն էին՝ քաշվումէին նո-
3 րանից ։ Եւ ասում, թէ Նա անթլփատ մարդ-
4 կանց մօտ գնաց, և նորանց հետ կերաւ ։ Եւ Պետ-
րոսն սկսեց կարգով պատմել նորանց՝ և ասաց․
5 Ես Յոպպէ քաղաքումն աղօթք էի անում՝ և յա-
փշտակութիւնով տեսիլք տեսի․ որ մին մեծ կը-
տաւի պէս աման՝ չորս ծայրիցը կախած երկնքիցը
6 վէր էր գալիս՝ և հասաւ մինչեւ ինձ մօտ ։ Նորան
պըլշած նայումէի․ և տեսի երկրի չորս ոտանիքներն
ու գազանները, և սողացողներն ու երկնքի թըռ-
7 չունները ։ Եւ ձայն լսեցի՝ որ ասումէր ինձ․ Պ՛ետ-
8 րոս՝ վե՛ր կաց՝ մորթէ՛ և կե՛ր ։ Եւ ասացի․ Քա՛ւ
լիցի Տէ՛ր․ ինչուոր՝ ոչ մին ժամանակ մին խառ-
9 նակ և անսուրբ բան իմ բերանս չէ մտած ։ Այն
ձայնը երկնքիցն ինձ երկրորդ անգամ պատասխան
տուաւ․ Նա որ Աստուած սրբեց՝ դու խառնակ
10 մի՛ համարեր ։ Սա երեք անգամ ելաւ, և բոլոր

11 ամանը նորէն վերացաւ երկինքը ։ Եւ ահա՛ շու-
տով երեք մարդիկ եկին կանգնեցին՝ այն տան ա-
ռաջին, որ տեղ որ ես կայի, Կեսարիայիցն ինձ
12 մօտ ուղարկված ։ Եւ Հոգին ինձ ասաց՝ որ նորանց
հետ գնամ՝ և բնաւ խղճմտանք չանեմ․ սորանք էլ
այս վեց եղբարքս ինձ հետ եկին, և մտինք այն
13 մարդոյն տունը ։ Եւ պատմեց մեզ՝ թէ ինչպէս տե-
սաւ հրեշտակին իրեն տանը մէջ, որ կանգնած էր
և ասումէր նորան․ Ուղարկէ՛ Յոպպէ, և Պետրոս
14 կոչված Սիմօնին կանչէ՛․ Որ քեզ հետ բաներ կը
խօսի, որ նորանով կապրիս դու՝ և քո ամեն տու-
15 նըդ ։ Եւ երբոր սկսեցի խօսիլ, Սուրբ Հոգին ե-
կաւ նորանց վերայ․ ինչպէս որ մեզ վերայ սկըզ-
16 բումը ։ Յիշեցի Տէրի այն խօսքն՝ որ ասումէր․ Յօ-
հաննէսը ջրով մկրտեց․ բայց դուք Սուրբ Հոգով
17 կ՚մկրտվիք ։ Ուրեմն՝ թէ որ Աստուած հաւասարակաց
պարգեւը նորանց էլ տուաւ, ինչպէս որ մեզ՝ որ
Տէր Յիսուս Քրիստոսին հաւատացինք․ ես ի՞նչպէս
18 կարող էի Աստուծոյն արգելել ։ Եւ երբոր սա լը-
սեցին, լուռ կացան և փառաւորումէին Աստու-
ծոյն և ասում. Ուրեմն հեթանոսներին էլ Աստ-
ուած կենաց ապաշխարութիւնը տուաւ ։
19 Եւ նորանք որ ցրւած էին այն նեղութենիցն՝ որ
Ստեփաննոսի վերայ ելաւ, մինչեւ Փիւնիկէ և Կիպ-
րոս և Անտիոքիա հասին․ ոչ մինին Աստուծոյ բա-
20 նը չէին խօսում, բայց մինակ Հրէաներին ։ Եւ նո-
րանցից մին քանիսը կային Կիպրացի և Կիւրենացի
մարդիկ, որ Անտիոք մտած խօսումէին Յունաց
21 հետ՝ և աւետարանում Տէր Յիսուսը ։ Եւ Տէրին
ձեռքը նորանց հետ էր․ և շատերը հաւատացին՝

22 և դէպի Տէրը դարձան ։ Այս բանս , որ նորանց
համար եղաւ՝ լսվեցաւ այն եկեղեցոյ ականջներու-
մը , որ Երուսաղէմումն էր , և Բառնաբասին ու-
23 ղարկեցին մինչև Անտիոք ։ Նա երբոր եկաւ , և
Աստուծոյ շնորհքները տեսաւ՝ ուրախ եղաւ , և
մխիթարումէր ամենին՝ որ սրտի յօժարութենով
24 Տէրին հետ մնան . ինչուոր՝ նա արթուն մտքով
մարդ էր՝ և Սուրբ Հոգով և հաւատքով լցված .
25 և շատ ժողովուրդ աւելցաւ Տէրին համար ։ Եւ
դուրս եկաւ գնաց Տարսոն՝ որ Սօղոսին խնդրէ , և
26 նորան գտաւ բերաւ Անտիոք ։ Եւ եղաւ որ նո-
րանք այն բոլոր տարին ժողովվումէին այն եկեղե-
ցոյն մէջ՝ և շատ ժողովուրդ սովրցնում . և աշա-
կերտներն առաջ Անտիոքումն Քրիստոնեայ ան-
ուանվեցան ։
27 Եւ այն օրերը Երուսաղէմիցը մարգարէներ վէր
28 եկին Անտիոք ։ Նորանցից մինը՝ Ագաբոս անուն
վերկացաւ՝ Հոգովը նշանակեց , Թէ բոլոր աշխարհ-
քիս մէջ մեծ սով պիտի լինի , որ Կղօդիոսի ժա-
29 մանակումն եղաւ ։ Բայց այն աշակերտներիցն , ինչ-
պէս որ մինը կարող էր՝ նորանց ամեն մէկն ընտրե-
ցին՝ որ պէտք լինող բան ուղարկեն այն եղբարնե-
30 րին՝ որ Հրէաստանումը բնակված էին , Որ արին
էլ՝ և ուղարկեցին երէցներին մօտ՝ Բառնաբասի և
Սօղոսի ձեռովը ։

ԳԼ. ԺԲ

Յակոբին մահը . Պետրոսին ազատիլը . Հերովդէսին սատակումը ։

1 Այն ժամանակները Հերօդէս Թագաւորը ձեռք
2 ձգեց՝ որ եկեղեցուցը մին քանիսը չարչարէ ։ Եւ
3 Յօհաննէսի՝ եղբօրը Յակոբին սրով սպանեց ։ Երբոր
տեսաւ՝ թէ Հրէաներին հաճոյ է , է՛լ աւելցաւ՝
Պետրոսին էլ բռնեց . և բաղարջակերաց օրերն էր ։
4 Երբոր նորան բռնեց՝ բանտի մէջ դրաւ , և մատ-
նեց չորս անգամ չորս զինուորներին՝ որ պահեն .
և կամենումէր՝ որ զատկիցն ետև նորան բերէ ժո-
5 ղովրդին ։ Եւ Պետրոս բանտին մէջ պահված էր .
և նորա համար անդադար աղօթք էր լինում եկե-
6 ղեցուցը դէպի Աստուած ։ Երբոր Հերօդէս կամե-
ցաւ՝ որ նորան դուրս բերէ . այն գիշերը Պետրոսը
քնած էր երկու զինուորների մէջ՝ երկու շղթայով
կապած և պահապանները դռան առաջին բանտը
7 պահումէին ։ Եւ ահա՛ Տէրին հրեշտակը եկաւ
կանգնեց նորա վերայ , և տանը մէջ լոյս ծագեց ,
և խթեց Պետրոսի կողերին՝ և նորան զարթնացրուց
և ասաց . Վե՛ր կաց շուտով . և շղթաները վէր
8 ընկան նորա ձեռներիցը ։ Եւ հրեշտակն ասաց նո-
րան . Քո գօտիկդ կապէ՛ և հողաթափներդ դիր
ոտքերդ , և այնպէս արաւ . և ասաց նորան . Շո-
9 րերդ քեզ վերայ ձգէ՛ և իմ ետևէս ե՛կ ։ Եւ
դուրս եկաւ գնումէր նորա ետևէն , և չէ՛ր գի-
տում՝ թէ ճշմարիտ է այն բանն՝ որ հրեշտակիցն

ելաւ . ինչուոր՝ կարծումէր՝ թէ երազ է տեսնում ։
10 Եւ երբոր նորանք անցան առաջին պահապաններու-
մը և երկրորդ պահապաններումը , եկին մինչև եր-
կաթի դուռն՝ որ դէպի քաղաքն էր տանում . որ
ինքն իրենից բացվեցաւ նորանց համար , և մտին
մին փողոց անցան , և շուտով հրեշտակը նորանից
11 հեռացաւ ։ Եւ Պետրոսին միտքն երբոր իրեն վե-
րայ եկաւ , ասաց . Հիմիկ շիտակ իմացայ , որ Տէ-
րըն իրեն հրեշտակն ուղարկեց . և փրկեց ինձ Հե-
րովդէսին ձեռքիցը , և այն ամէն բաներիցն՝ որ Հը-
12 րէաների ժողովուրդն սպասումէր ։ Եւ երբոր միտք
արաւ՝ եկաւ Յօհաննէսին մայր Մարեմայ տունը ,
որ Մարկոս կոչվեցաւ . որ այնտեղ շատեր կային
13 ժողովված՝ և աղօթք էին անում ։ Եւ դուռն որ
թակեց , մին աղախին՝ որ նորա անունը Հռօդէ
14 էր՝ մօտ եկաւ , որ ականջ դնէ ։ Եւ Պետրոսի ձայ-
նըն որ ճանաչեց՝ ուրախութենիցը դուռը բաց չա-
րաւ . ներս վազեց և պատմեց , թէ Պետրոսը
15 դռանը կանգնած է ։ Նորանք ասացին նորան՝ Յի-
մարվել ես . և նա է՛լ աւելի հաստատումէր՝ թէ
այսպէս է . և նորանք ասումէին թէ Նորա հրեշ-
16 տակը կ՚լինի ։ Եւ Պետրոս շուտ շուտ դուռն թա-
կումէր . երբոր բացին , տեսին նորան՝ և զարմա-
17 ցան ։ Եւ նա ձեռով ցոյց էր տալիս նորանց որ
լուռ կենան . և պատմեց՝ թէ ինչպէս Տէրը բան-
տիցն իրեն հանեց . և ասաց , Այս բանս պատ-
մեցէ՛ք Յակօբին և եղբարներին . և դուրս եկաւ
18 գնաց ուրիշ տեղ ։ Եւ երբոր առաւօտ ելաւ՝ մեծ
խռովութիւն էր այն զինուորներին մէջ , թէ Պետ-
19 րոսն ի՞նչ ելաւ ։ Բայց Հերովդէսն երբոր նորան ու-

զեց՝ և չ՚գտաւ , պահապաններին հարցրուց՝ և հը-
րաման տուաւ՝ որ սպանեն նորանց . և Հրէաստա-
նիցը վէր եկաւ Կեսարիա՝ և այնտեղ էր լինում ։
20 Եւ Հերովդէս շատ բարկացած էր Տիւրացոց և
Սիդօնացոց վերայ . և նորանք ամէնքը միաբան ե-
կին նորան մօտ . և Բղաստոսին թագաւորի ներքի
տան վերակացուին հաւանացնելով խաղաղութիւն
էին խնդրում . ինչուոր՝ նորանց երկիրը՝ թագաւո-
21 րի երկրիցն էր կերակրվում ։ Մին հանդիսաւոր օր՝
Հերովդէսը թագաւորական շոր էր հագել՝ և ատ-
եանումը նստած էր և ամենին առաջին խօսումէր
22 նորանց հետ ։ Եւ ամբոխն աղաղակումէր՝ թէ Այդ
23 Աստուծոյ ձայն է , և ոչ մարդոյ ։ Եւ շուտով Տէ-
րին հրեշտակը զարկեց նորան , ինչուոր՝ Աստուծոյն
փառք չ՚տուաւ . և որդունքներով լցվաւ՝ և սա-
տակվեցաւ ։
24 Եւ Աստուծոյ խօսքն աճումէր և շատանում ։
25 Բառնաբասն ու Սօղոսն երբոր պաշտամունքը կա-
տարեցին՝ Երուսաղէմիցը յետ դարձան . և Յօհան-
նէսին էլ իրենց հետ էին առել՝ որ Մարկոս էր
կոչված ։

ԳԼ. ԺԳ

Պօղոս և Բառնաբաս գնումեն Կիպրոս և փոքր Ասիա և քարոզումեն Աւետարանը ։

1 Անտիոքումը՝ այնտեղ լինող եկեղեցոյն մէջ կային
մին քանի մարգարէներ և վարդապետներ . Բառ-
նաբասը՝ և Նիգէր ասված Շմաւօնը , և Ղուկիոս

Կիւրենացին, և Հերովդէս չորրորդապետի ծծմոր
2 որդի Մանայէնը, և Սօղոսը։ Դեռ քանի որ Տէրի
պաշտօնին մէջն էին՝ և պաս էին պահում, Սուրբ
Հոգին ասաց ինձ համար ջոկեցէ՛ք Բառնաբասին
և Սօղոսին՝ այն գործին համար, որ ես դորանց
3 կանչել եմ։ Այն ժամանակը պաս պահեցին՝ և
աղօթք արին, նորանց վերայ ձեռք դրին՝ և ար-
ձակեցին։

4 Եւ նորանք Սուրբ Հոգուցն ուղարկված՝ վէր ե-
կին Սելեւկիա, և այնտեղից նաւով գնացին Կիպ-
5 րոս։ Եւ Սաղամինա որ հասին՝ Աստուծոյ խօսքը
պատմումէին Հրէաների ժողովարաններումը. Յօ-
6 հաննէսին էլ պաշտօնեայ ունէին։ Ման եկին բո-
լոր կղզումը մինչեւ ի Պափոս, և այնտեղ մին կա-
խարդ մարդ գտին՝ սուտ մարգարէ՝ Հրեայ, որ նո-
7 րա անունը Բարէյեսու էր, Որ փոխանակ բդեշխ
Սերգիոս Պօղոս իմաստուն մարդուն հետ էր. Նա
Բառնաբասին և Սօղոսին աղաչելով խնդրումէր որ
8 Աստուծոյ խօսքը լսէ։ Նորանց հակառակ կացաւ
Եղիմաս կախարդը. ինչու որ՝ այսպէս է թարգման-
վում նորա անունը. ուզումէր փոխանակ բդեշխին
9 հաւատքիցը փոխել։ Բայց Սօղոսն, որ և Պօղոս՝
10 Սուրբ Հոգով լցված մտիկ տուաւ նորան, Եւ ա-
սաց. Ո՛վ դու՝ որ ամեն խաբեբայութենով և խա-
րամանկութենով լցված ես, սատանայի որդի և
ամեն արդարութեան թշնամի. չե՞ս դադարում
11 Տէրի ուղիղ ճանապարհներն ծռելուց։ Եւ հիմիկ
ահա՛ Տէրի ձեռքը քեզ վերայ, և կոյր կ'լինիս՝ որ
չ'տեսնես արեգակը մինչեւ մին ժամանակ և շու-
տով մութ և խաւար ընկաւ նորա վերայ, և ման

12 էր գալիս — ձեռք բռնող մարդիկ էր ուզում։ Այն
ժամանակը փոխանակ բդեշխն երբոր տեսաւ այն
բաներն՝ որ էլան, հաւատաց, և Տէրի վարդապե-
տութեանը վերայ զարմացաւ։

13 Եւ Պօղոսն ու հետը լինող մարդիկը Պափեայիցը
դուրս էլան՝ եկին Պամփիւլիայի Պերգէ քաղաքը.
Բայց Յօհաննէս նորանցից հեռացաւ՝ և յետ դար-
14 ձաւ Երուսաղէմ։ Եւ նորանք Պերգեայիցը գնա-
ցին՝ եկին Պիսիդիայի Անտիոք. և շաբաթ օրը
15 ժողովարանին մէջ մտին՝ նստեցին։ Եւ օրէնքն ու
մարգարէները կարդալուցն ետեւ, ժողովրդապետ-
ները նորանց մօտ ուղարկեցին և ասացին. Մա՛ր-
դիկ եղբարք՝ թէ որ դուք այդ ժողովրդիդ համար
16 մխիթարութեան խօսքեր ունիք՝ խօսեցէ՛ք։ Պօղոս
վերկացաւ՝ իրեն ձեռքը շարժեց և ասաց. Ո՛վ Իս-
րայէլացի մարդիկ, և դուք որ Աստուածանից վա-
17 խումէք՝ լսեցէ՛ք։ Այս Իսրայէլացի ժողովրդիս
Աստուածը մեր հարանցն ընտրեց. և ժողովուրդը
բարձրացրուց պանդխտութենումը Եգիպտացոց երկ-
րին մէջ. և բարձր բազկով նորանց այնտեղից դուրս
18 հանեց, Եւ քառասուն տարոյ չափ ժամանակ նո-
19 րանց կերակրեց անապատին մէջ. Եւ Քանանու
երկրումը եօթն ազգեր կործանեց՝ և նորանց երկի-
20 րը նորանց ժառանգել տուաւ՝ Չորս հարիւր և
յիսուն տարոյ չափ. և սորանից ետեւ նորանց դա-
տաւորներ տուաւ մինչեւ Սամուէլ մարգարէն,
21 Եւ յետոյ առաջ գալով՝ թագաւոր ուզեցին, և
Աստուած տուաւ նորանց Կեսիայի որդի Սաւու-
ղը՝ մին մարդ Բենիամենի ցեղիցը, քառասուն տա-
22 րի։ Եւ երբոր նորան փոխեց, Դաւթին նորանց

համար Թագաւոր կանգնացրուց, որ նորան էլ վը-
կայութիւն տուաւ և ասաց. Յեսսէի որդի Դաւ-
թին գտի իմ սրտիս ուզածին պէս մարդ՝ որ նա
23 իմ ամեն կամքըս կանէ։ Սորա զաւակիցն Աստ-
ուած աւետիքին պէս Իսրայէլացոց համար Յիսուս
24 փրկիչը վերկացրուց։ Ինչպէս որ Յօհաննէս Նորա
երեսի առաջին մտնելու ժամանակն, առաջուց ա-
պաշխարութեան մկրտութիւնը քարոզեց Իսրայէլի
25 ամեն ժողովրդին։ Եւ երբոր Յօհաննէս վերջացը-
նումէր իրեն գնալը՝ ասումէր. ինձ համար ո՞վ էք
կարծում՝ որ լինիմ. ես նա չեմ. բայց ահա՛ իմ
ետևէս գալիս է նա, որ ես չե՛մ արժանի նորա
26 ոտաց կօշիկներն արձակելու։ Մա՛րդիկ եղբարք՝
Աբրահամի ցեղի որդիքներ, և ո՛վ որ ձեզանում
Աստուածավախ են. ձեզ ուղարկուեցաւ այս փըր-
27 կութեան խօսքս։ Բայց նորանք որ բնակված են
Երուսաղէմումը, և նորանց իշխանները նորան չը
ճանաչեցին. և մարգարէների խօսքերին պէս, որ
ամեն շաբաթներումը կարդվումեն՝ դատաստան ա-
28 նելով կատարեցին։ Եւ թէպէտ նորա վերայ մին
մեռնելու պատճառ չ'գտին, Պիղատոսիցն ուզեցին՝
29 որ նորան սպանէ։ Եւ երբոր այն ամենն՝ որ նորա
համար գրված էր կատարեցին, փայտիցը վէր բե-
30 րին՝ և գերեզմանի մէջ դրին։ Բայց Աստուած նո-
րան մեռելների միջից յարոյց. որ շատ օրերով
31 երևեցաւ նորանց, Որ նորա հետ Գալիլեայիցը վեր
էին ելել Երուսաղէմ. որ նոցանք հիմիկ էլ նորա
32 համար վկաներ են ժողովրդի առաջին։ Եւ մենք
աւետարանումենք ձեզ այն խոստմունքն՝ որ հա-
33 րանցն էլած էր։ Ինչուոր՝ Աստուած նա կատա-

րեց մեզանում՝ որ նորանց որդիքն ենք, Յիսուսին
յարուցանելով. ինչպէս որ երկրորդ սաղմոսումը
գրված է. Դու իմ Որդիս ես. ես այսօր ծնայ
34 քեզ։ Եւ նա որ մեռելների միջից յարոյց նորան,
և որ է՛լ չ'պիտի դառնայ ապականութեան մէջ՝
այսպէս ասաց. թէ, Ձեզ կ'տամ Դաւթի հաւա-
35 տարիմ սրբութիւնները։ Ինչուոր՝ ուրիշ տեղումն
էլ ասումէ. Քո Սրբոյդ չե՛ս տալ որ ապականու-
36 թիւն տեսնէ։ Բայց Դաւիթն այն իրեն ազգումը
ծառայեց Աստուծոյ կամքին, և ննջեց, և գնաց
աւելացաւ իրենց հարանցը հետ՝ և ապականու-
37 թիւն տեսաւ։ Բայց նորան՝ որ Աստուած յարոյց,
38 նա ապականութիւն չ'տեսաւ։ Թո՛ղ յայտնի՛ լի-
նի ձեզ մա՛րդիկ եղբարք, որ սորանով մեղաց թո-
ղութիւն է աւետարանում ձեզ. և այն ամեն բա-
ներիցն՝ որ Մօսէսի օրէնքովը չ'կարացիք արդարա-
39 նալ. Սորանով ամեն ով որ հաւատայ՝ կարդարա-
40 նայ։ Զգո՛յշ կացէք՝ որ չ'լինի թէ ձեզ վերայ գայ
41 նա որ մարգարէներիցն ասված է թէ. Տեսէ՛ք ա-
նարգողներ, և զարմացէ՛ք և փչացէ՛ք. ինչուոր՝
ես մին գործ եմ գործում ձեր օրերումը. այնպիսի
գործ, որ նորան չէ՛ք հաւատալ՝ թէ որ մինը պատ-
մէ ձեզ։

42 Եւ երբոր այնտեղից դուրս եկին, աղաչումէին
որ միւս շաբաթումն էլ այն բանը խօսին իրենց
43 համար։ Երբոր ժողովուրդն արձակվեցաւ, այն Հը-
րէաներիցը՝ և նոր դարձած աստուածապաշտ մարդ-
կանցիցը շատերը գնումէին Պօղոսին և Բառնաբա-
սին ետևէն. որ էլ նորանց հետ խօսումէին, և
նորանց հաւանացնում՝ որ Աստուծոյ շնորհքին

44 մէջ կենան մնան ։ Եւ երբոր միւս շաբաթն եկաւ,
համարեա՛ թէ բոլոր քաղաքը հաւաքվեցաւ՝ որ
45 Աստուծոյ խօսքը լսեն ։ Երբոր Հրէաներն այն ամ-
բոխը տեսին՝ նախանձով լցվան . և Պօղոսից աս-
ված խօսքերին հակառակ կենալով հայհոյումէին ։
46 Պօղոսն ու Բառնաբասը համարձակութենով ա-
սումէին . Առաջ պէ՛տք էր Աստուծոյ բանը ձեզ
խօսել . և որովհետև դուք դուրս էք անում նո-
րան, և արժան չէ՛ք համարում ձեզ յաւիտենա-
կան կենացը, ահա՛ դէպի հեթանոսներն ենք դառ-
47 նում . Պատճառնոր՝ Տէրն այսպէս պատուիրեց
մեզ . Ես քեզ հեթանոսներին լոյս դրի՝ որ դու
48 փրկութիւն լինիս մինչև երկրին ծայրերը ։ Երբոր
հեթանոսները աս լսումէին՝ ուրախանումէին, և
Տէրի խօսքն փառաւորում . և հաւատացին նորանք՝
որ կարգված էին դէպի յաւիտենական կեանքը ։
49 Եւ Աստուծոյ խօսքը փռվումէր այն ամեն գաւառը ։
50 Բայց Հրէաները դրդեցին աստուածապաշտ պար-
կեշտ կանանցը և քաղաքի գլխաւորներին, և հա-
լածանք վերկացնելով Պօղոսին և Բառնաբասին
վերայ՝ նորանց դուրս հանեցին իրենց սահմանне-
51 րիցը ։ Եւ նորանք իրենց ոտների փոշին թափ տը-
52 ւին նորանց վերայ, և եկին Իկոնիոն ։ Եւ աշա-
կերտները լցվումէին ուրախութենով և Սուրբ Հո-
գով ։

ԳԼ. ԺԴ

Պօղոս և Բառնաբաս գնումեն Իկոնիոն . Լիւստրա և ու-
րիշ քաղաքներ . Նորանց արած հրաշքները . Աստուած
համարվիլը . և յետոյ քարկոծվիլը . Անտիոք են դառնում ։

1 Եւ էլաւ Իկոնիոնումը որ նորանք իրար հետ մըտ-
նումէին Հրէաների ժողովարանին մէջ, և այնպէս
խօսում, մինչև որ Հրէից և Յունաց խիստ շատ
2 հոգիք հաւան կացան ։ Բայց անհաւան Հրէաները
հեթանոսների անձները վերկացրին՝ և չարաչար
3 դրդեցին եղբարներին վերայ ։ Շատ ժամանակ մնան
էին գալիս համարձակված Տէրի վկայութենովը՝ նո-
րա շնորհաց խօսքովը . և նշաններ ու հրաշքներ
4 տուաւ լինել նորանց ձեռովը ։ Եւ տարաձայնու-
թիւն էլաւ քաղաքի բազմութեանը մէջ . որ մին
քանիսը Հրէաների կողմն էին, և մին քանիսն ա-
5 ռաքեալներին կողմը ։ Երբոր էլաւ որ հեթանոս-
ներն ու Հրէաներն իրենց իշխաններովը վերայ վա-
զեցին՝ որ նորանց նախատինք տան և քարկոծ ա-
6 նեն ։ Նորանք իմացան՝ և փախան Լիկայոնացոց
Լիւստրա և Դերբէ քաղաքները՝ և գաւառի չորս
կողմերը, և այնտեղ աւետարանումէին ։
7 Եւ մին Լիւստրացի մարդ ոտներով տկար նըս-
տած էր՝ որ իրեն մօր փորիցը կաղ էր ծնված, և
8 բնաւ չէր ման եկած ։ Սա լսեց Պօղոսին խօսքերը .
նա էլ նորա վերայ նայեց, և տեսաւ՝ որ հաւատք
9 ունի փրկվելոյ, Մեծ ձայնով ասաց . Քեզ եմ ա-
սում՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովը քո

ոտներիդ վերայ շիտակ կանգնէ՛. և նա վազումէր
10 և գնումէր։ Եւ ժողովուրդն որ տեսաւ այն բանը՝
որ Պօղոսն արաւ, իրենց ձայնը բարձրացրին Լի-
կայոներէն՝ և ասացին. Աստուածները մարդկանց
11 նման ելած վեր եկին մեզ մօտ։ Եւ Բառնաբասին
Դիոս էին կոչում, և Պօղոսին Հերմէս. ինչու որ՝
12 նա էր խօսքի առաջնորդը։ Բայց Դիոսի քուրմը
որ քաղաքին առաջին էր, արջառներ և պսակներ
հասցրուց դուռը՝ և այն բազմութեան հետ կամե-
13 նումէր մատաղ անել։ Եւ երբոր Բառնաբաս և
Պօղոս առաքեալները լսեցին, իրենց շորերը պա-
տառած՝ ամբոխի մէջիցը դուրս վազեցին. մեծ
14 ձայնով կանչումէին, Եւ ասում. Մա՛րդիկ՝ դա
ի՞նչ էք անում. մենք էլ ձեզ նման կրօտութիւն
ունեցող մարդիկ ենք. որ աւետարանումենք ձեզ՝
որ այդպէսի ոչի՛նչ բաներից յետ դառնաք դէպի
կենդանի Աստուածը. որ ստեղծեց երկինքն ու եր-
կիրս և ծովը՝ և այն ամենն՝ որ նորանց մէջն է,
15 Որ անցկացած ազգերումը թող տուաւ ամեն հե-
թանոսներին՝ որ իրենց ճանապարհներովը գնան.
16 Միայն թէ ինքն իրեն առանց վկայութեան չ՚թո-
ղեց. ինչու որ՝ բարերարութենով երկնքիցը տուաւ
ձեզ անձրեւներ՝ և պտղաբեր ժամանակներ, որ
կերակուրներով և ուրախութենով ձեր սրտերը լըց-
17 նէ։ Եւ սա ասելով հազիւ թէ ժողովուրդները
դադարացնումէին՝ որ մատաղ չանեն իրենց հա-
մար. բայց գնան ամեն մէկն իրենց տեղը։
18 Եւ երբոր նորանք ման էին գալիս և սովորցը-
նում, Հրէաներ եկին հասին Իկոնիոնիցը և Ան-
տիոքիցը. և նորանք որ համարձակութենով վիճ-

մունք էին անում, ժողովուրդները խաբեցին՝ որ
յետ կենան նորանցից, և ասումէին՝ թէ Բնաւ
ճշմարտութիւն չե՛ն ասում, բայց ամենը սուտ են
խօսում. և Պօղոսին քարկոծ անելով քաղաքիցը
դուրս քաշեցին, և նորան մեռած էին համարում։
19 Եւ երբոր աշակերտները նորա չորս կողմովը պա-
տեցան, վերկացաւ մտաւ քաղաքը. և առաւօտը
Բառնաբասին հետ դուրս եկաւ գնաց Դերբէ։
20 Այն քաղաքումն աւետարանեցին, և շատերին ա-
շակերտ շինեցին. և ապա յետ դարձան Լիւստրա՝
21 և Իկոնիոն՝ և Անտիոքիա։ Աշակերտներին անձ-
ները հաստատեցին և մխիթարեցին՝ որ հաստատ
կենան հաւատքին մէջ. և թէ շատ նեղութիւննե-
րով պէտք է մեզ մտնել Աստուծոյ արքայութիւ-
22 նը։ Նորանց ամեն մէկ եկեղեցիներին համար երէց-
ներ ձեռնադրեցին. աղօթք արին ծոմ պահելով,
և յանձնեցին նորանց Տէրին՝ որ հաւատացել էին
23 նորան։ Եւ Պիսիդիային մէջ ման եկած՝ Պամփի-
24 լիայի մէջ եկին։ Եւ երբոր Պերգէի մէջ Տէրի բա-
25 նը խօսեցին, վեր եկին Ատալիա։ Եւ այնտեղիցը
նաւով գնացին Անտիոք, որ Այնտեղից Աստուծոյ
շնորհքին յանձնուած էին՝ այն գործոյն համար՝
26 որ կատարեցին։ Եւ եկին մինտեղ ժողովեցին եկե-
ղեցին՝ պատմեցին ինչ որ Աստուած արաւ իրենց
հետ. և թէ նա հեթանոսներին համար՝ հաւատքի
27 դուռը բացաւ։ Եւ քիչ ժամանակ չէլաւ՝ որ ա-
շակերտներին հետ ման եկին։

ԳԼ. ԺԵ

Առաքելոց ժողովը հաւատքով արդարանալոյ և թլփատութեան համար. Պօղոսի և Բառնաբասի բաժանվիլը ։

1 Եւ մին քանիսն որ Հրէաստանիցը վէր էին եկած՝
եղբարներին սովորցնումէին, թէ որ չ'թլփատվիք
2 Մօսէսի օրէնքին պէս՝ չէ՛ք կարող ապրիլ ։ Եւ Պօ-
ղոսի և Բառնաբասի հակառակութիւն և վիճմունք
քիչ չէր՝ որ նորանց հետ արին. խօսք դրին որ
Պօղոսն ու Բառնաբասը և նորանցից մին քանիսն
այն խնդիրքին համար գնան Երուսաղէմ առաք-
3 եալներին և երէցներին մօտ ։ Նորանք ժողովրդիցը
ճանապարհ դրվեցան, և փիւնիկէի ու Սամարիային
մէջ ման եկին. պատմումէին հեթանոսների դառ-
նալը, և մեծ ուրախութիւն անում ամեն եղբար-
4 ներին ։ Եւ երբոր հասին Երուսաղէմ, եկեղեցուցն
ու առաքեալներիցը և երէցներիցը ընդունվեցան,
և պատմեցին որչափ բան որ Աստուած իրենց հետ
5 արաւ ։ փարիսեցոց հերձուածիցը մին քանի հա-
ւատացեալներ վերկացան, և ասումէին՝ թէ,
Պէ՛տք է թլփատել դորանց, և պատուէր տալ՝ որ
Մօսէսին օրէնքը պահեն ։

6 Եւ առաքեալներն ու երէցները ժողովվեցան՝ որ
7 տեսնեն այս բանիս համար ։ Եւ շատ քննութիւն
լինելուցն ետե՛ւ՝ Պետրոս վերկացաւ՝ և նորանց ա-
սաց. Մա՛րդիկ եղբարք՝ դուք ինքներդ գիտումէք,
որ առաջին օրերիցը ձեր միջումը Աստուած ընտ-
րեց՝ որ իմ բերանովս հեթանոսներն աւետարանի

8 խօսքը լսեն, և հաւատան ։ Եւ սիրտ գիտող Աստ-
ուածը վկայութիւն տուաւ նորանց, Սուրբ Հոգին
9 տալով նորանց ինչպէս որ էլ մեզ ։ Եւ ո՛չ ինչ
ջոկութիւն չարաւ նորանց և մեր մէջ, որ հաւատ-
10 քով սրբեց նորանց սրտերը ։ Հիմիկ՝ ինչո՞ւ էք Աս-
տուծոյն փորձում, որ լուծ էք դնում աշակերտ-
ների վզին, որ ո՛չ մեր հարքը՝ և ո՛չ էլ մենք չը
11 կարացինք վեր առնել ։ Բայց Տէր Յիսուսի Քրիս-
տոսի շնորհքովը հաւատումենք ապրիլ, ինչպէս որ
էլ նորանք ։

12 Բոլոր ժողովուրդը լուռ կացաւ, և Բառնաբա-
սին և Պօղոսի պատմելոյն լսումէին. թէ Աստուած
որչափ նշաններ և հրաշքներ արաւ նորանց ձեռ-
13 վը հեթանոսներին մէջ ։ Եւ երբոր նորանք լռե-
կացան, Յակոբոսը պատասխան տուաւ՝ և ասաց.
14 Մա՛րդիկ եղբարք՝ ինձ լսեցէ՛ք. Շմաւոնը պատ-
մեց՝ թէ ինչպէս Աստուած առաջուց տեսութիւն
արաւ՝ որ հեթանոսներիցը ժողովուրդ առնէ իրեն
15 անունին համար ։ Եւ նորա հետ միաբանվումեն
մարգարէներին խօսքերը ։ ինչպէս որ էլ գրված է.
16 Թէ Սորանից ետեւ կ'դառնամ՝ և Դաւթի բնակա-
րանը կ'շինեմ, և նորա վէր ընկածը և քանդվածը
17 նոր կ'շինեմ՝ և կ'կանգնացնեմ նորան. Որ մարդ-
կանց մնացածները Տէրին խնդրեն. և ամեն հեթա-
նոսներն՝ որ նորանց վերայ իմ անունս կոչված է,
18 ասումէ Տէրը. որ այս ամենս անումէ ։ Յաւիտե-
19 նիցն հետէ յայտնի է Տէրին իրեն գործը ։ Նորա-
համար ես էլ իրաւունք եմ համարում, որ նե-
ղութիւն չ'տան նորանց՝ որ հեթանոսներիցը դառ-
20 նում են դէպի Աստուած ։ Բայց որ թուղթ գրվ-

վի նորանց, ո՛ր քաշվին կուռքերի կերակուրների-
ցը, և պոռնկութենից, և մեռած բաներից՝ և
21 արիւնից։ Ինչու որ՝ Մովսէս առաջին ազգերից ե-
տեւ՝ ամեն քաղաքներումն իրեն քարոզիչներն ու-
նի. որովհետեւ ժողովարաններին մէջն ամեն շա-
բաթ օրերը կարդվումէ։
22 Այն ժամանակը հաճոյ երեւեցաւ առաքեալնե-
րին և երէցներին և ամէն եկեղեցուն, որ իրենցից
ընտրված մարդիկ ուղարկեն Անտիոք Պօղոսի և
Բառնաբասի հետ, այն Բարսաբայ կոչված Յու-
23 դային, և Շիղային՝ գլխաւոր մարդկանցը։ Նորանց
ձեռովը եղբարներին գրեցին այս բանս.
Առաքեալներս և երէցներս և եղբարներս, Ան-
տիոքի և Սիւրիայի և Կիւլիկիայի մէջ եղբարնե-
24 րիդ՝ որ հեթանոսներից էք, ողջո՛յն։ Որովհետեւ
լսեցինք՝ թէ մին քանիսն իրր թէ մեր կողմանէ՝
խռովցրին ձեզ խօսքերով, որ ձեր անձներն տա-
ղահան անեն. ասումեն թէ պէտք է թլփատվիլ՝
և օրէնքը պահել. օր նորանց մենք հրաման չենք
25 տուել։ Մեզ միաբան ժողովվածներիս հաճոյ ե-
րեւեցաւ՝ որ ընտրեալ մարդիկ ուղարկենք ձեզ
26 մօտ մեր սիրելի Բառնաբասի և Պօղոսի հետ։ Այն-
պիսի մարդիկ՝ որ իրենց անձները մատնեցին մեր
27 Տէր Յիսուսի Քրիստոսի անունին համար։ Սորա-
համար Յուդային և Շիղային ուղարկեցինք. որ նո-
28 րանք էլ խօսքով իսկ այն բանը պատմեն. Ինչու-
որ՝ Սուրբ Հոգուն և մեզ էլ հաճոյ երեւեցաւ, որ
ընաւ աւելի բեռն չ'դնենք ձեզ վերայ, բայց միայն
29 այս հարկաւոր բաներս. Որ հեռու կենաք կռքի
մատաղ արածիցը՝ և արիւնից՝ և խեղդվածից՝ և

պոռնկութենից. որոնցից որ պահէք ձեր անձնե-
րըն՝ լաւ կանէք. ո՛ղջ կացէք.
30 Եւ նորանք՝ որ արձակվեցան՝ վէր եկին Անտիոք,
և ժողովուրդը հաւաքեցին՝ և այն թուղթը տը-
31 ուին։ Եւ երբոր կարդացին, ուրախ էլան այն մը-
32 խիթարութեանը վերայ։ Յուդան և Շիղան՝ որով-
հետեւ նորանք էլ մարգարէք էին՝ շատ խօսքերով
33 մխիթարեցին և հաստատեցին եղբարներին։ Եւ
երբոր մին ժամանակ այն տեղ էլան, եղբարների-
ցը խաղաղութենով արձակվեցան գնալ դէպի ա-
34 ռաքեալները. Եւ Շիղային հաճոյ երեւեցաւ՝ որ
35 այնտեղ մնայ։ Բայց Պօղոսն ու Բառնաբասը Ան-
տիոքին մէջ ման էին գալիս, որ Տէրի խօսքը շատ
ուրիշների հետ սովրցնեն և աւետարանեն։
36 Բայց մին քանի օրից ետեւ Պօղոսն ասաց Բառ-
նաբասին. Դառնանք և ման գանք եղբարներին
մօտ՝ այն ամեն քաղաքներն, որ նորանցում Տէրի
խօսքը քարոզեցինք, տեսնենք թէ ինչպես կան։
37 Բառնաբաս կամենումէր այն Մարկոս կոչված Յո-
38 հաննէսին էլ վեր առնել։ Բայց Պօղոսն աղաչում-
էր՝ որ այն Պամփիւլիայի մէջ իրենցից ջոկվածը,
և նորանց հետ գործի մէջ չեկածն իրենց հետ
39 չառնեն։ Եւ կռիւ էլաւ նորանց միջումը. մինչեւ
որ նորանք ջոկվեցան իրարից. Բառնաբասը Մար-
40 կոսին առաւ որ նաւով գնայ Կիպրոս։ Եւ Պօղոսը
Շիղային ընտրեց, և այն եղբարներից Աստուծոյ
41 շնորհքին յանձնված դուրս եկաւ, Եւ Ասորոց և
Կիւլիկեցոց կողմերն ման էր գալիս, և եկեղեցինե-
րըն հաստատումէր։

ԳԼ. ԺԶ

Պօղոս Տիմոթէոսին և Ղուկասին հետ գնում է փոքր Ասիա և յետոյ Մակեդօնիա. Փիլիպպէի անցքը։

1 Եւ եկաւ հասաւ Դերբէ և Լիւստրա. և ահա՛
մին աշակերտ կար այնտեղ՝ Տիմոթէոս անուն. որ
Հրէայ հաւատացեալ կնկան՝ և հեթանոս հօր որ-
2 դի էր. Որ բարի վկայութիւն ունէր Լիւստրացի
3 և Իկոնիացի եղբարներիցը։ Պօղոս կամեցաւ որ
սորան տանի իրեն հետ. և առաւ թլփատեց նո-
րան՝ Հրէաների պատճառովը, որ այնտեղերումն
էին. ինչու որ՝ ամենքը գիտումէին՝ որ նորա հայրը
4 հեթանոս էր։ Երբոր անցանումէին այն քաղաք-
ներովը՝ աւանդեցին նորանց պահել այն հրաման-
ները, որ Երուսաղէմումը լինող առաքեալներիցն
5 ու երէցներիցը պատուիրած էին։ Եւ եկեղեցիները
հաւատքի մէջ հաստատվումէին, և օրէ օր թը-
ւով աւելանում։

6 Եւ Փռիւգիայի և Գաղատացոց կողմերը ման ե-
կին, Սուրբ Հոգուցն արգելված՝ որ Ասիայի մէջն
7 Աստուծոյ բանը չ'խօսին։ Բայց երբոր եկին Մի-
սիայի կողմերը, ջանք էին անում որ գնան Բիւ-
թանիա, և Յիսուսի Հոգին թոյլ չ'տուաւ նո-
8 րանց։ Եւ Միւսիայովն որ անցան՝ վէր եկին Տը-
9 րօադա։ Եւ Պօղոսին գիշերը տեսիլք երեւեցաւ.
մին Մակեդօնացի մարդ կանգնած էր, աղաչումէր
նորան՝ և ասում. Անցի՛ր Մակեդօնիա՝ և մեզ
10 օգնէ՛։ Եւ երբոր տեսաւ այն տեսիլքը՝ շուտով

խնդրեցինք որ դուրս գանք Մակեդօնիա. ինչու որ՝
իմացանք՝ որ Տէրը հրաւիրեց մեզ, որ աւետարա-
նենք նորանց։

11 Եւ Տրօադայիցը դուրս եկած՝ շիտակ գնացինք
12 Սամոթրակէ. և յետեւի օրը Նոր քաղաքը։ Եւ
այնտեղից Փիլիպպուսը, որ Մակեդօնացոց առա-
ջին բաժինն է՝ կօղօնիա քաղաք. և մենք որ այն-
տեղ քաղաքումը մին քանի օր դադարեցինք մնա-
13 ցինք. Շաբաթ օրը քաղաքիցը դուրս ելանք դէպի
գետին ափն՝ որ այնտեղ սովոր էին աղօթք անել.
և նստած խօսումէինք ժողովված կանանցը հետ։
14 Եւ մին կին Լիդիա անուն՝ ծիրանի ծախող՝ որ
Թիւատիր քաղաքիցն էր՝ Աստուածանից վախող՝
լսեց. որ իսկ Տէրը նորա սիրտը բացաւ, որ Պօղո-
15 սի խօսքերին միտք անէ։ Եւ երբոր ինքը և իրեն
տունը մկրտվեցաւ, աղաչումէր և ասում. Թէ որ
ինձ Տէրին հաւատացած համարիք, մտէ՛ք իմ տու-
նըս, այնտեղ մնացէ՛ք. և ստիպեց տարաւ մեզ։
16 Եւ ելաւ դեռ քանի որ մենք գնումէինք աղօթք
անել, մին աղախին պատահեց մեզ՝ որ կախար-
դութեան դեւ ունէր. որ կախարդութեննովն իրեն
17 տէրերին շատ շահ էր բերում։ Նա Պօղոսի և մեր
ետեւէն ընկած՝ աղաղակումէր և ասում. Այս
մարդիկս բարձրեալ Աստուծոյ ծառաներն են, որ
18 ձեզ պատմումեն փրկութեան ճանապարհները։ Եւ
շատ օրեր այս բանս անումէր. Պօղոսին դժուար
եկաւ՝ յետ դարձաւ և դեւին ասաց Յիսուսի Քը.
րիստոսի անունովը պատուիրումեմ քեզ՝ դո՛ւրս եկ
դօրանից և դեւը իսկ այն ժամումը դուրս եկաւ։
19 Երբոր նորա տէրերը տեսին՝ թէ իրենց շահին յոյ-

որ կորվեցաւ, Պօղոսին և Շիղային առին՝ քաշե-
20 ցին ատեանն իշխաններին մօտ ։ Եւ նորանց տա-
րան զօրագլուխներին մօտ և ասացին. Այս մար-
դիկս խռովացնում են մեր քաղաքը՝ իրենք Հրեաներ
21 են, Եւ մեզ այնպիսի օրէնք են պատմում՝ որ մեզ
արժան չէ՝ ո՛չ ընդունել, և ո՛չ անել. ինչուոր՝
22 մենք Հռոմայեցի ենք ։ Եւ ամբոխը կիտվեցաւ նո-
րանց վերայ. և զօրագլուխներն իրենց շորերը պա-
23 տառեցին, և հրաման տուին որ ծեծեն ։ Եւ երբ-
որ նորանց վերայ շատ խոցեր դրին՝ բանտին մէջ
քցեցին. և բանտապետին պատուիրեցին, որ նո-
24 րանց զգուշութենով պահէ ։ Նա էլ որ այսպէսի
պատուէր առաւ, նորանց ներսի բանտը ձգեց. և
նորանց ոտները կոճեղումը ամրացրուց ։
25 Եւ կէս գիշերին Պօղոսն ու Շիղան աղօթք էին
անում, և օրհնութիւն տալիս Աստուծոյ. և փ—
26 բռնվածներն նորանց ականջ էին դնում ։ Եւ յան-
կարծակի մեծ շարժմունք էլաւ՝ մինչև որ բանտի
հիմունքներն էլ շարժվումէին. և շուտով ամեն
դռները բացվան, և ամենի կապանքներն արձակ-
27 վեցան ։ Երբոր բանտապետը զարթնացաւ, և տե-
սաւ որ բանտի դռներն բացված էին, սուրը քա-
շեց՝ և կամենումէր ինքն իրեն սպանել. ինչուոր՝
28 կարծումէր՝ թէ կապածները փախել են ։ Եւ Պօ-
ղոս մեծ ձայնով կանչեց՝ և ասաց. Քո անձիդ չար
բան մի՛ գործեր, ինչուոր՝ մենք ամենքս այստեղ
29 ենք ։ Ճրագ ուզեց՝ և ներս վազեց. և շատ վա-
խով բռնված Պօղոսի և Շիղայի առաջին վէր ըն-
30 կաւ ։ Եւ նորանց դուրս հանեց և ասաց. Տէրե՛ր՝
31 ես ի՞նչ պէտք է անեմ որ ապրիմ ։ Եւ նորանք ա-

սացին. Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին և կապ-
32 րիս դու՝ և քո ամե՛ն տունդ ։ Եւ Տէրի բանը խօ-
սեցին նորան՝ և այն ամենին, որ նորա տանն էին ։
33 Եւ նորանց վեր առաւ գիշերի այն ժամին այն խո-
ցերիցը լուացաւ. և շուտով մկրտվեցաւ ինքը՝ և
34 նորա բոլոր ընտանիքը ։ Եւ նորանց տարաւ իրեն
տունը, նորանց առաջին սեղան դրաւ. և ուրախ
էլաւ ամեն ընտանիքներովը՝ որ Աստուծոյն հաւա-
35 տաց ։ Եւ երբոր լուսացաւ, զօրագլուխներն ու-
ղարկեցին ատեանի պաշտօնեաներին՝ և ասացին.
36 Արձակէ այդ մարդկանցդ ։ Եւ բանտապետն այն
խօսքերը Պօղոսին պատմեց, թէ զօրագլուխներն ու-
ղարկեցին՝ որ արձակվիք. ուրեմն դո՛ւրս եկէք, և
37 գնացէ՛ք խաղաղութենով ։ Բայց Պօղոսն ասաց նո-
րանց. Ամենի առաջին ծեծեցին մեզ՝ որ անմեղ
Հռոմայեցի մարդիկ ենք, և բանտը ձգեցին. և
հիմիկ մեզ թաքո՞ւն են հանում. այդպէս չէ՛,
38 բայց թո՛ղ իսկ իրենք գան մեզ հանեն ։ Եւ ա-
տեանի պաշտօնեաներն այն խօսքերը զօրագլուխնե-
րին պատմեցին. շատ վախեցան՝ երբոր լսեցին թէ
39 Հռոմայեցիք են. և եկին աղաչեցին նորանց ։ Եւ
երբոր հանեցին, աղաչումէին՝ որ այն քաղաքիցը
40 գնան ։ Եւ բանտիցը դուրս եկին՝ մտին Լիդիային
մօտ. և եղբարներին որ տեսին՝ նորանց մխիթարե-
ցին և գնացին ։

ԳԼ․ ԺԷ

Պօղոս 'ի Թեսաղոնիկէ, Բերիա ու Աթէնք։

1 Եւ Ամփիպօլիսի ու Ապօղօնիային մէջ ման գա-
լով եկին Թեսաղոնիկէ, որ այնտեղ Հրէաների ժո-
2 ղովարան կար։ Եւ Պօղոս՝ սովորութեանը պէս մը-
տաւ նորանց մօտ, և երեք շաբաթ նորանց հետ
3 խօսեց գրքերից․ Բանում էր՝ և առաջին դնում,
թէ պէտք էր՝ որ Քրիստոսը չարչարվի՝ և մեռելնե-
րի միջից յարութիւն առնէ․ և թէ՝ այն Յիսու-
4 սը որ ես պատմում եմ ձեզ, Քրիստոսն է։ Եւ նո-
րանցից մի քանիսը հաւանեցին, և Պօղոսին ու
Շիղային հետ միաւորվեցան․ բայց աստուածա-
պաշտ Հեթանոսների շատ բազմութիւն կար, և
5 գլխաւոր կանանցից էլ քիչ չէ։ Եւ Հրէաները
նախանձվեցան, և մի քանի ռամիկ անօրէն մար-
դիկ առին՝ ամբոխ արին, քաղաքին մէջ շփոթու-
թիւն շինեցին․ և Յասօնի տան մօտ հաւաքված՝
ուզում էին, որ նորանց տանեն դատաստանատու-
6 նը։ Եւ երբոր չ'գտին նորանց՝ Յասօնին և մի
քանի եղբայրներին քաշում էին քաղաքապետներին
մօտ․ և սաստիկ աղաղակում էին՝ թէ սորանք՝ որ
7 աշխարհքը շփոթացրին, այստեղ էլ հասին․ Որ
Յասօնն ընդունել է նորանց․ և սորանք ամենքը
կայսերի հրամաններին հակառակ են գործում․ որ
8 մի Յիսուս թագաւոր են ասում։ Եւ շփոթացրին
ժողովուրդներին և քաղաքապետներին՝ որ սա լը-
9 սում էին։ Եւ Յասօնից ու ուրիշներից երաշխա-

10 ւորութիւն առին՝ և նորանց արձակեցին։ Բայց
եղբայրներին՝ Պօղոսին և Շիղային շուտով գիշերը
ճանապարհ ձգեցին դէպի Բերիա․ որ նորանք երբ-
որ այնտեղ հասին, գնացին Հրէաներին ժողովա-
11 րանը․ Ինչու որ՝ սորանք աւելի ազնիւ անձինք էին՝
քան նորանք՝ որ Թեսաղօնիկէումն էին․ որ Աստու-
ծոյ խօսքն ամեն յօժարութենով ընդունեցին․ միշտ
12 գրքերը քննում էին, թէ սա այսպէս է։ Եւ նո-
րանցից շատերը հաւատացին․ և Յոյն պարկեշտ
13 կանանցից ու մարդկանցից էլ քիչ չէ։ Բայց
այն Հրէաներն՝ որ Թեսաղօնիկէումն էին, երբոր
գիտացին՝ թէ Բերիայի մէջն էլ Աստուծոյ խօսքը
պատմվեցաւ Պօղոսից այնտեղ էլ եկին՝ որ ժողո-
14 վուրդները շարժեն և շփոթացնեն։ Այն ժամա-
նակն եղբայրները Պօղոսին շուտով ուղարկեցին՝ որ
մինչեւ ծովի եզրը գնայ․ և Շիղան և Տիմոթէոսն
15 այնտեղ մնացին։ Եւ նորանք՝ որ Պօղոսին տա-
նում էին, նորան մինչեւ Աթէնքը տարան․ և որ
պատուէր առին նորանից Շիղային և Տիմօթէոսին
համար, որ շուտով գան նորա մօտ․ գնացին։
16 Եւ Պօղոսն երբոր Աթէնքումը նորանց սպասում
էր, նորա հոգին սաստիկ դժուարանում էր ներսու-
մը․ Ինչու որ՝ այն քաղաքը կռապաշտութեան մէջ
17 էր տեսնում։ Եւ ժողովարանումը Հրէաներին հետ
և աստուածապաշտներին հետ խօսում էր՝ փողոց-
ներումն էլ ամեն օր նորանց հետ՝ որ պատահում
18 էին։ Եպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաներից
մի քանիսը նորա հետ հակառակում էին․ և մի
քանիսն ասում էին․ Այս սերմնաքաղս ի՞նչ է կա-
մենում խօսիլ․ բայց ուրիշները թէ, Երեւում է,

որ մին օտար կռքի համար է պատմում. պատ-
ճառնոր՝ Յիսուսին և յարութիւնն էր աւետարա-
19 նում ։ Եւ առին տարան նորան Արիսպագոսը՝ և
ասումէին. Կարո՞ղ ենք իմանալ՝ թէ ի՞նչ է այդ
20 նոր վարդապետութիւնդ՝ որ դու պատմումես ։ Մին
նոր օտար բան ես բերում մեր ականջներին. կա-
մենումենք իմանալ՝ թէ սա ի՞նչ բան պիտի լինի ։
21 Ինչուոր՝ ամեն Աթենացիք՝ և այնտեղ եկած օ-
տարները՝ էլ ուրիշ բանի չէին հետևում, բայց
մինակ որ նոր բան ասեն կամ լսեն ։
22 Պօղոս կանգնեց Արիսպագին մէջ և ասաց. Ո՛վ
Աթենացի մարդիկ, ես ձեզ ամեն կողմանէ կրօ-
23 նասէր եմ տեսնում. Պատճառնոր՝ ես ման եկի և
ձեր պաշտամունքները տեսի, մին սեղան գտի՝ որ
նորա վերայ գրած էր Չ'ՃԱՆԱՉՎԱԾ ԱՍՏՈՒ-
ԾՈՅՆ. Նա որ դուք առանց ճանաչելոյ էք պաշ-
24 տում, ես ճիշտ նա եմ պատմում ձեզ ։ Աստ-
ուած՝ որ այս աշխարհքս և ամեն բան՝ որ նորա-
նում կայ՝ արաւ, նա երկնքի և երկրիս Տէրն է.
նա ձեռքով շինած տաճարներին մէջ չի բնակ-
25 վում, Եւ մարդկանց ձեռքով չի պաշտվում՝ իբր
թէ մին բանի կարօտ լինի. Նա ամենին կեանք և
26 շունչ՝ և ամեն բան տալիս է ։ Նա մին արիւնից
մարդկանց ամեն ազգերն արաւ՝ որ երկրի ամեն
երեսին վերայ բնակվին. կարգված ժամանակներ
և սահմաններ հաստատեց նորանց բնակութեան
27 համար՝ որ Աստուծոյն խնդրեն. Որ լինի թէ քըն-
նեն նորան և գտնեն. և ինքը հեռու չէ մեր ամեն
28 մէկիցս էլ ։ Ինչուոր՝ մենք նորանով ենք ապրում
և շարժվում՝ և կանք. ինչպէս որ ձեր իմաս-

տուններիցը մին քանիսն էլ ասացին թէ հենց նո-
29 րա ազգիցն էլ ենք ։ Եւ հիմի՝ որովհետև Աս-
տուծոյ ազգիցն ենք, պէտք չէ՝ որ մենք համա-
րենք՝ թէ Աստուածութիւնը նման լինի ոսկոյ՝ կամ
արծաթի կամ քարի, որ մարդոյ վարպետութե-
30 նով և մտքով փորված շինած է ։ Բայց Աստուած՝
որ անգիտութեան ժամանակներն անտես արաւ
հիմիկ մարդկանց սա է պատուիրում, որ ամեն
31 մէկն ապաշխարէ ։ Պատճառնոր՝ մի օր հաստատեց՝
որ նորանում արդարութենով աշխարհքս պիտի
դատէ այն մարդոյ ձեռովը որ սահմանեց նորանով
ամենին հաւատքը տալ՝ որ նորան մեռելների մի-
ջիցն յարոյց ։
32 Երբոր լսեցին մեռելների յարութիւն առնելը,
մին քանիսը ծաղր էին անում. կեսերն ասումէին՝
Այդ բանիդ համար քեզանից դարձեալ պիտի լը-
33 սենք ։ Եւ յետոյ Պօղոսը նորանց միջիցը դուրս ե-
34 կաւ գնաց ։ Եւ մին քանի մարդիկ նորա կողմն ըն-
կան, և հաւատացին. որ նորանց հետն էր Դիո-
նէսիոս Արիսպագացին, և մին Դամարիս անուն
կին՝ և ուրիշներ էլ նորանց հետ ։

ԳԼ. ԺԸ

Պօղոս գնումէ Կորնթոս, Եփեսոս, Երուսաղէմ
և Անտիոք ։

1 Սորանից ետև Պօղոսն այն Աթենացիներիցը հե-
2 ռացաւ՝ եկաւ Կորնթոս ։ Եւ մին Հրէայ գտաւ
Պոնտացոց ազգիցը՝ Ակիւղաս անուն, որ խա-

լիայից նոր էր եկել, և նորա Պրիսկիղա կինն էլ,
Կղօդիայի հրամանին համար՝ որ ամեն Հրեաները
3 Հռօմից դուրս գնան. և նորանց մօտ գնաց։ Եւ
որովհետև ճիշտ նոյն արուեստից էր, մնաց նո-
րանց մօտ՝ և բան էր անում. պատճառ որ՝ ար-
4 ուեստով խորանակար էին։ Եւ ժողովարանին մէջ
ամեն շաբաթ օր խօսումէր և Հրեաներին և Հե-
5 թանոսներին հաւանեցնում։ Երբոր Շիղան և Տի-
մոթէոսը վեր եկին Մակեդօնիայից, Պօղոս հոգո-
վը վառվումէր՝ որ վկայութիւն դնէ Հրեաներին՝
6 թէ Յիսուսն է Քրիստոսը։ Եւ երբոր նորանք ներ-
հակ էին գտնում և հայհոյում, շորերը թափ
տուաւ՝ և նորանց ասաց. Ձեր արիւնը ձեր գլուխ-
ներիդ վերայ, ես անպարտ եմ. հիմիկուց ետև
7 Հեթանոսներին մօտն եմ գնում։ Եւ այնտեղից
գնաց մտաւ մինի տունը՝ որ նորա անունը Տիտոս
Յուստոս էր, մին Աստուածապաշտ մարդ, որ նո-
8 րա տունը ժողովարանին մօտ էր։ Կրիսպոս ժողո-
վրդապետն իրեն ամեն տանովը հաւատաց Տէրին.
և Կորնթացոց շատերն երբոր լսեցին՝ հաւատացին
9 և մկրտվեցան։ Եւ Տէրը գիշերը տեսիլքով Պօղո-
սին ասաց. Մի՛ վախենար՝ բայց խօսէ՛ և լուռ
10 մի՛ կենար։ Ինչու որ՝ ես քեզ հետ եմ, և ո՛չ ով
քեզ ներհակ չի գտնուլ՝ որ քեզ չարչարէ. պատ-
ճառ որ ես շատ ժողովուրդ ունիմ այս քաղաքու-
11 մըս։ Եւ այնտեղ մին տարի և վեց ամիս նստեց՝
և նորանց Աստուծոյ խօսքը սովրեցնումէր։
12 Աքայեցոց Գաղլիոս փոխանակ բդեշխի ժամանա-
կին Հրեաները միաբան վերկացան Պօղոսին վերայ,
13 և նորան քաշեցին դատաստան. Եւ ասումէին,

թէ Սա մարդկանց խաբումէ՝ որ օրինաց հակառակ
14 Աստուած պաշտեն։ Եւ երբոր Պօղոս մօտ էր որ
իրեն բերանը բանայ, Գաղլիոն Հրեաներին ասաց.
Ո՛վ Հրեաներ, թէ որ մին անիրաւութիւն կամ
մին չար նենգութիւն լինէր, ինձ արժան էր որ
15 լսէի։ Բայց թէ որ ձեր օրէնքին և խօսքի և ա-
նունների համար խնդիրք կան, դուք ինքդ տե-
սէ՛ք. ինչու որ՝ այդպէսի բաների դատաւոր չեմ
16 կամենում լինիլ։ Եւ նորանց այն դատաստանից
17 դուրս հանեց։ Եւ ամեն Յոյները Սոսթենէս ժողո-
վրդապետին բռնեցին՝ և ատեանին առաջին ծե-
ծումէին. և Գաղլիոն նորա համար ո՛չ ինչ հոգս
չունէր։
18 Բայց Պօղոս դեռ շատ օրեր մնալուցն ետև,
եղբայրներից հրաժարեց, և նաւով գնումէր դէպի
Ասորիք. և Պրիսկիղան ու Ակիւղան նորա հետ,
Կենքրայումը գլուխը խուզեց. ինչու որ՝ ուխտ դրած
19 էր։ Եւ երբոր հասին Եփեսոս, նորանց այնտեղ
թողեց, և ինքը մտաւ ժողովարանը և Հրեաներին
20 հետ խօսումէր։ Եւ աղաչումէին նորան՝ որ շատ
21 ժամանակ այնտեղ մնայ, ու չ'կամեցաւ։ Բայց
նորանցից հրաժարեց և ասաց. Աստուծոյ կամքովը
կրկին ձեզ մօտ յետ կ'դառնամ. Եփեսոսից վեր-
22 կացաւ։ Եւ վեր եկաւ Կեսարիա, վեր ելաւ և
23 ողջոյն տուաւ եկեղեցոյն. վեր եկաւ Անտիոք։ Եւ
այնտեղ որ մին ժամանակ մնաց, դուրս եկաւ՝ որ
Գաղատացոց աշխարհքումն ու Փռիւգիային մէջ
կարգով ման գայ, ամեն աշակերտները հաստա-
տելով։
24 Մին Ապեղէս անուն Հրեայ՝ ազգով Աղէքսանդ-

բացի, ճարտար խօսող մարդ՝ եկաւ հասաւ Եփե-
25 սոս. Նա գրքերովը զօրաւոր էր։ Սա Տէրի ճանա-
պարհին տեղեկացած էր, հոգով վառվում էր. Յի-
սուսին համար խօսում և ճշմարտութենով սովորց-
նում էր. այլ միայն Յօհաննէսի մկրտութիւնն էր
26 գիտում։ Սա սկսեց ժողովարանին մէջ համարձակ
խօսիլ. և երբոր Ակիւղան և Պրիսկիղան նորանից
լսեցին, նորան իրենց մօտ առին, և էլ աւելի
ճշմարտութենով Աստուծոյ ճանապարհը պատմե-
27 ցին նորան։ Երբոր նա կամեցաւ գնալ Աքայիա,
եղբարները յօժար եղան և գրեցին աշակերտներին՝
որ նորան ընդունեն. երբոր նա այնտեղ հասաւ,
հաւատացեալներին շատ օգնութիւն էր տալիս շը-
28 նորհքի ձեռովը. ինչուոր՝ խիստ պնդութենով
յանդիմանում էր Հրէաներին ամենին առաջին. գըր-
քերը ցոյց տալով թէ Յիսուսն է Քրիստոսը։

ԳԼ. ԺԹ

Պօղոս Եփեսոսումը. մեծ հրաշք և խռովութիւն։

1 Եւ էլաւ դեռ քանի որ Ապօղոս Կորնթոս էր,
Պօղոսն որ վերի կողմերումը ման էր եկել վէր ե-
կաւ Եփեսոս. և մին քանի աշակերտներ գտաւ.
2 Ասաց նորանց. Մի՞թէ Սուրբ Հոգին ընդունեցիք՝
երբոր հաւատացիք. նորանք ասացին նորան. Մենք
3 բնաւ չենք էլ լսել՝ եթէ Սուրբ Հոգի կայ։ Եւ
ասաց. Ապա ինչո՞վ մկրտվեցաք. նորանք ասա-
4 ցին. Յօհաննէսի մկրտութենովը։ Եւ Պօղոսն ա-
սաց. Յօհաննէսն ամեն ժողովրդին ապաշխարու-

թեան մկրտութիւնը քարոզեց. և ասում էր. թէ
նա՛ որ նորա ետեւէն պիտի գայ, նորան հաւա-
5 տան. այսինքն է՝ Յիսուս Քրիստոսին։ Եւ երբոր
6 լսեցին, Տէր Յիսուսի անունովը մկրտվեցան։ Եւ
երբոր Պօղոս ձեռքը դրաւ նորանց վերայ, Սուրբ
Հոգին եկաւ նորանց վերայ. լեզուներ էին խօ-
7 սում՝ և մարգարէանում։ Եւ ամենքը տասներկու
8 մարդոյ չափ էին։ Եւ ժողովարանին մէջ մտած՝
երեք ամիս համարձակ խօսում էր. և Աստուծոյ ար-
9 քայութեանը հաւանացնում. Երբոր մին քանիսը
պնդվում էին՝ և ներհակ դառնում՝ այն ճանապար-
հը բամբասելով բազմութեան առաջին, նա հե-
ռացաւ նորանցից՝ և աշակերտները ջոկեց. ամեն
օր մին Տիւրան մարդու ժողովարանումն էր խօսում։
10 Եւ սա էլաւ մին երկու տարի, մինչեւ որ Ասիայի
ամեն բնակիչներ՝ Հրէաներն ու Հեթանոսներ Տէրի
11 խօսքը լսեցին։ Եւ Աստուած քիչ զօրութիւններ
12 չէր որ անում էր Պօղոսի ձեռովը։ Մինչեւ որ նորա
քրտնքիցը թաշկինակներ և վարշամակներ տանում
էին դնում հիւանդներին վերայ, և ցաւերը հե-
ռանում էին նորանցից, և չար դեւերն դուրս էին
13 գալիս։ Մին քանիսն այն ման եկող Հրէաներիցն՝
որ երդում տուող էին՝ համարձակվեցան Տէր Յի-
սուսի անունն ասել նորանց վերայ՝ որ չար դեւեր
ունէին, և ասում էին. Երդում եմ տալիս ձեզ
14 այն Յիսուսովն՝ որ Պօղոսը քարոզում է։ Մին Սկեւէ
Հրէայ քահանայապետի եօթն որդիք կային, որ
15 սա անում էին։ Չար դեւը պատասխան տուաւ և
ասաց նորանց. Յիսուսին գիտեմ՝ և Պօղոսին
16 ճանաչում եմ, բայց դուք ո՞վ էք։ Եւ այն մար-

գըն՝ որ նորանում չար դեւ կար՝ վազեց այն եր-
կուսին բռնեց, նորանց տակը ձգեց, մինչեւ որ
17 մերկ և խոցված այն տանիցը փախան։ Եւ այն
յայտնի եղաւ ամեն Հրէաներին ու հեթանոսնե-
րին՝ որ Եփեսոսումը բնակված էին. և ահ ընկաւ
նորանց ամենին վերայ. և Տէր Յիսուսի անունը
18 մեծանումէր։ Եւ հաւատացեալներիցը շատերը
գալիս խոստովանումէին, և իրենց գործքերն պատ-
19 մում։ Եւ կախարդութեան հնաեւօղներից շատե-
րը գրքերը բերում, և ամենի առաջին այրումէին.
և նորանց գինը համարեցին՝ և գտնումէին յիսուն
20 հազար արծաթի։ Եւ այսպէս Աստուծոյ խօսքն ա-
ճումէր և զօրանում։

21 Եւ երբոր սա կատարվեցաւ. Պօղոս միտքը դը-
րաւ՝ որ Մակեդօնիայի և Աքայիայի միջովն ան-
ցանէ գնայ Երուսաղէմ. ասաց՝ թէ իմ այնտեղ
գնալուցն ետեւ, պէ՛տք է ինձ՝ որ Հռօմ էլ տես-
22 նեմ։ Իրեն պաշտօնեաներիցն երկուսին՝ Տիմօթէո-
սին և Երաստոսին ուղարկեց Մակեդօնիա, և ին-
քը մին ժամանակ մնաց Ասիայի մէջ։

23 Եւ այն ժամանակումը շատ խռովութիւն եղաւ
24 այն ճանապարհին համար. ինչուոր՝ մին արծաթա-
գործ՝ Դեմետրիոս անուն, Արտ՛միս կուքի արծա-
թէ տաճարներ էր շինում. և քիչ շահ չէր՝ որ
25 տալիս էր վարպետներին. Որ այն արուեստի բան-
վորներն էլ ժողովեց՝ և ասաց. Ո՛վ մարդիկ՝ դուք
ինքներդ գիտումէք, որ այս գործիցս մենք շահ ու-
26 նինք։ Եւ տեսնում ու լսումէք՝ որ այս Պօղոսը չէ
թէ միայն Եփեսացոց, բայց համարեա թէ՝ բոլոր
Ասիացոց շատ ժողովուրդ հաւանացնելով՝ այն կող-

մը դարձրուց. որ ասումէ՝ թէ ձեռքով շինած
27 բաներն աստուած չեն։ Եւ չէ թէ միայն մեր բա-
նըն է ջոկք անում որ անարգվի, բայց մեծ աս-
տուծոյ Արտեմիայի տաճարն էլ ո՛չ ինչի տեղ է
համարվում. և նորա մեծութիւնն էլ կ՚քանդվի,
որ բոլոր Ասիան՝ և աշխարհք պաշտում են նո-
28 րան։ Եւ երբոր սա լսեցին, բարկութենով լըց-
վան. աղաղակումէին՝ և ասում, Մեծ է Եփեսա-
29 ցոց Արտեմիսը։ Եւ քաղաքը շփոթութենով լըց-
վաւ. ամենքն էլ միատեղ վազեցին թէատրոնը.
և առին քաշեցին Գայիոսին և Արիստարքոս Մա-
30 կեդօնացոյն՝ Պօղոսի ճանապարհի ընկերներին։ Բայց
Պօղոսն երբոր կամեցաւ ամբոխի մէջ մտնել, աշա-
31 կերտները չ՛թողին նորան։ Ասիայի գլխաւորներիցը
մին քանիսն էլ՝ որ նորա բարեկամներն էին, ու-
ղարկեցին նորա մօտ՝ և աղաչումէին, որ իրեն ան-
32 ձը չ՛տայ թէատրօնին մէջ։ Այն ամբոխումն ամեն
մէկը մին ուրիշ բան էր աղաղակում. ինչուոր՝ նորանց
ժողովքը խռովված էր. և նորանցից շատերը չէին
33 գիտում, թէ ինչո՞ւ համար են հաւաքված։ Եւ
այն մեծ ամբոխին միջիցն Աղէքսանդրոսին բռնե-
ցին դուրս քաշեցին. և երբոր Հրէաները նորան
առաջ բերին, Աղէքսանդրոսը ձեռքը շարժեց՝ և
34 կամենումէր ամբոխին պատասխան տալ։ Երբոր
գիտացին՝ թէ այն մարդը Հրէայ է, ամենքն էլ
մին ձայնով երկու ժամի չափ աղաղակումէին, թէ
35 մեծ է Եփեսացոց Արտեմիսը։ Կարգացօղներին գըլ-
խաւորը այն ամբոխին դադարացրուց՝ և ասաց.
Ո՛վ Եփեսացի մարդիկ՝ ո՞վ է այն մարդն՝ որ չի
գիտում թէ այս Եփեսացոց քաղաքս մեծ Արտե-

միս կուռքի և Դիոպետի կուռքերի տաճարներովը զար-
36 դարված է ։ Եւ որովհետեւ դա շիտակ այդպէս է ,
պէտք է ձեզ որ հանդարտվէք , և չափիցը դուրս
37 բան չ'գործէք ։ Այդ մարդկանցդ բերիք այստեղ ,
ո՛չ կուռքի տուն են կողոպտել՝ և ո՛չ մեր աստու-
38 ծոյն հայհոյանք տուել ։ Ուրեմն՝ թէ որ Դեմետ-
րիոսը նորա հետ լինող վարպետները՝ մինին հետ
բան ունենան , թո՛ղ դնան ատեանը և դատա-
ւորներ կան , և թո՛ղ մինը մինիցը դանգատ անեն ։
39 Այս թէ որ ուրիշ բանի համար խնդիր լինի , թող
40 օրինաւոր ժողովքին մէջ կատարեն ։ Ինչուոր՝ մեզ
էլ մեծ վտանգ կայ այսօրվան կռվիս համար . ո-
րովհետեւ յանցանք չ'կայ , այս ժողովքիս համար
չենք կարող պատասխան տալ . և սա ասելով ժո-
ղովուրդն արձակեց ։

ԳԼ. Ի

Պօղոս գնում է Մակեդոնիա և Յունաստան , յետոյ փոքր Ասիա ։ Եւտիքեսին յարութիւնը . Միլիտէյի բաժանվիլը ։

1 Եւ ամբոխի դադարելուցն ետեւ՝ Պօղոս աշա-
կերտներին կանչեց , և մխիթարեց . ողջոյն տուաւ՝
2 և դուրս եկաւ գնաց Մակեդոնիա ։ Եւ այն կող-
մերն որ ման եկաւ՝ և շատ խօսքերով մխիթարեց
3 նորանց , եկաւ Եղլադա ։ Երբոր այնտեղ երեք ա-
միս կացաւ , Հրէաները որոգայթ ձգեցին նորան ,
դեռ քանի որ կամենումէր դուրս գալ Ասորւոց
երկիրը . խորհուրդ արաւ՝ որ Մակեդոնիայի միջովը
4 յետ դառնայ ։ Եւ մինչեւ Ասիա նորա հետ գը-

նումէր Սոսիպատրոս Բերիացին՝ Պիւռոսի որդին .
և Թեսաղոնիկեցիներից Արիստարքոսն ու Սեկուն-
դոսը՝ և Գայիոս Դերբեացին և Տիմօթէոսը , և Ա-
5 սիացիներից՝ Տիւքիկոսն ու Տրոփիմոսը ։ Սորանք
առաջ գնացին՝ սպասումէին մեզ Տրօադային մէջ ։
6 Եւ մենք բաղարջակերաց օրերից ետեւ նաւով գը-
նացինք Փիլիպպիայից , և մինչեւ հինգ օր եկինք
Տրօադա նորանց մօտ . այն տեղ եօթն օր դադա-
րեցինք ։
7 Եւ շաբաթ օրը՝ դեռ որ ժողովված էինք հաց
կտրելու համար , Պօղոս նորանց հետ խօսումէր՝ ին-
չուոր՝ յետեւի օրը պէտք էր գնայ . և խօսքն եր-
8 կարացրուց մինչեւ կէս գիշերը ։ Եւ շատ լապտեր-
ներ կային այն վերնատանը՝ որ մենք ժողովված
9 էինք ։ Եւ մին Եւտիքոս անուն երիտասարդ պա-
տուհանին վերայ նստած էր . Պօղոսի երկար խօ-
սելու ժամանակը , թանձր քնին մէջը ննջումէր . և
որ խոր քնով բռնված էր՝ տան երրորդ դստիկոնի-
10 ցը վէր ընկաւ , և մեռած վեր առվաւ ։ Եւ Պօղոս
վէր եկաւ նորա վերայ ընկաւ . և նորան՝ գիրկն էր
առնում և ասում . Մի՛ շփոթվիք , ինչուոր՝ սորա
11 հոգին սորանում է ։ Եւ վեր ելաւ հացը կտրեց՝ և
կերաւ . և էլ շատ խօսեց մինչեւ առաւօտը , և
12 յետոյ դուրս եկաւ և գնաց ։ Եւ այն տղային բե-
13 րին կենդանի , և շատ մխիթարվեցան ։ Եւ մենք
նաւը մտինք՝ գնացինք Ասօն . այնտեղից յոյս ու-
նէինք՝ որ նորէն Պօղոսին մեզ հետ առնենք . ին-
չուոր՝ այնպէս էր պատուիրել՝ դեռ որ ինքը ցամա-
14 քովը գնալու էր ։ Եւ երբոր Ասօնումը հանդիպե-
ցաւ մեզ , վեր առինք նորան եկինք Միտիլինէ ։

15 Եւ այնտեղից նաւով գնացինք՝ յետեւի օրը հա-
սինք Քիոյի դիմացը․ և միւս օրը հասինք Սամոս․
16 և յետեւի օրը եկինք Միլիտոն․ ինչուոր՝ Պօղոսն
իրեն մտքին մէջ դրել էր՝ որ Եփեսոսի մօտովը նա-
ւով անցանէ՝ որ չ'լինի թէ նա Ասիային մէջ մին
ժամանակ յետ մնայ․ պատճառնոր՝ փոյթ ունէր,
որ եթէ կարելի լինի նորան՝ Պէնտէկոստէի օրը գը-
նայ Երուսաղէմ։
17 Եւ Միլետէյիցն ուղարկեց Եփեսոս՝ եկեղեցոյ ե-
18 րէցները կանչեց։ Եւ երբոր եկին նորա մօտ, նո-
րանց ասաց․ Դուք ինքներդ գիտումէք՝ թէ այն
առաջին օրիցն ետեւ որ Ասիա եկի՝ ինչպէս էլայ
19 բոլոր ժամանակները ձեզ հետ․ Որ ամէն խոնար-
հութենով Տէրին ծառայեցի, և շատ արտասուն-
քով և փորձութիւններով որ Հրէաների հնարքնե-
20 րիցը պատահեցին ինձ։ Ինչպէս որ բնաւ մին օգ-
տակար բան վախով չ'ծածկեցի, որ չ'պատմեմ և
սովրցնեմ ձեզ՝ թէ փողոցումը և թէ տանը մէջ․
21 Հրէաներին և հեթանոսներին վկայութիւն տուի
այն ապաշխարութեան համար՝ որ դէպի Աստուած
է, և մեր Տէր Յիսուս Քրիստոսին հաւատալոյն
22 համար։ Եւ հիմիկ՝ ահա՛ ես հոգովը կապված գը-
նումեմ Երուսաղէմ․ և չեմ գիտում՝ թէ այնտեղ
23 ի՛նչ պիտի անցանէ ինձ վերայ․ Միայն թէ՝ Սուրբ
Հոգին քաղաքից քաղաք վկայումէ ինձ՝ և ասում,
թէ կապանքներ և նեղութիւններ են սպասում
24 քեզ․ Բայց ես ոչ մին բանով էլ իմ անձս պատ-
ուական չեմ համարում՝ որ ուրախութենով կա-
տարեմ իմ վազելս, և այն պաշտօնն՝ որ Տէր Յի-
սուս Քրիստոսիցն առի, որ Աստուծոյ շնորհաց ա-

25 ւետարանին վկայ լինիմ։ Եւ հիմիկ՝ ահա ես գի-
տումեմ, որ էլ իմ երեսս չէք տեսնիլ դուք ա-
մէնքդ, որ ձեր մէջը ման եկի Աստուծոյ արքայու-
26 թիւնը քարոզելոյ համար։ Սորահամար՝ այսօր վը-
կայութիւն եմ դնում ձեզ՝ որ ձեր ամէնիդ արիւ-
27 նիցն անմեղ եմ․ ինչուոր՝ յետ չ'քաշվեցայ Աս-
28 տուծոյ ամէն կամքը ձեզ պատմելուց։ Զգո՛յշ կա-
ցէք անձներիդ՝ և ամէն հօտիդ, որ Սուրբ Հոգին
ձեզ վերակացու դրաւ նորանում, որ արածացնէք
Տէրի ժողովուրդը․ նորան՝ որ իրեն արիւնովն ապ-
29 րեցուց․ Պատճառնոր՝ ես գիտումեմ, որ իմ հե-
ռանալուցս ետեւ՝ յափշտակօղ գայլեր կ'գան ձեր
30 մէջը, որ հօտիդ չեն խնայիլ, Եւ ձեզանից էլ
մարդիկ վեր կ'կենան՝ որ ծուռ բաներ կ'խօսին, որ
31 աշակերտներին իրենց ետեւէն քաշեն։ Սորահամար
արթո՛ւն կացէք, և մտքնե՛րդ բերէք՝ որ երկու-
տարի գիշեր և ցերեկ չ'դադարեցի ամէն մէկիդ
32 արտասունքով խրատել։ Եւ հիմիկ՝ ձեզ Աստու-
ծոյ եմ յանձնում՝ և նորա շնորհաց խօսքին, որ
նա կարող է շինել՝ և ամէն սրբերին հետ ձեզ
33 ժառանգութիւն տալ։ Ձեզանից մինի արծաթին
34 կամ ոսկոյն կամ շորերին չ'ցանկացայ։ Դուք ձե-
զանից գիտումէք՝ որ այս ձեռներս վաստակեցին
35 իմ պէտքս, և նորանցն էլ՝ որ ինձ հետ էին։ Եւ
ամէն ինչ ցոյց տուի ձեզ՝ որ այսպէս պէտք է աշ-
խատիլ, և հիւանդներին հոգս տանել, և Տէր
Յիսուսի խօսքը շինել, որ իսկ ինքն ասաց․ Աւելի
36 երանելի է տալը քան թէ առնելը։ Եւ երբոր սա
ասաց, ծունր դրաւ ամէնին հետ՝ և աղօթք ա-
37 րաւ։ Ամէնքն էլ շատ լաց էին լինում․ և Պօղոսի

38 վզովն ընկած՝ նորան համբուրումէին։ Սրտերն էլ
մանաւանդ կ՚սկծումէին այն խօսքին համար՝ որ ա-
սումէր, թէ նորա երեսն էլ չ՚պիտի տեսնեն. և
նորան ճանապարհ ձգեցին դէպի նաւը։

ԳԼ. ԻԱ

Պօղոս գնումէ Երուսաղէմ և այնտեղ ձերբակալվում։

1 Եւ երբոր էլաւ՝ որ մենք դուրս եկինք և նորանցից
ջոկվեցանք, շիտակ գնալով եկինք Կով. և յե-
2 տեւի օրը Հռոդոս, և այնտեղից Պատարայ։ Եւ
մին նաւ որ գտինք՝ որ փինիկէն էր գնում, նո-
3 րան մէջը մտինք գնացինք։ Եւ երբոր Կիպրոսն ե-
րեւեցաւ՝ նորան մեր ձախ կողմը թողինք, նաւը
շիտակեցինք դէպի Ասորիք, և վեր եկինք Տիւրոս.
ինչուոր՝ նաւը բեռներն այնտեղ պիտի թափէր։
4 Եւ աշակերտներին որ գտինք՝ այնտեղ եօթն օր
մնացինք. որ նորանք Սուրբ Հոգով ձեռովը Պօղոսին
5 ասումէին, որ վեր չելլի Երուսաղէմ։ Եւ երբոր
մենք այն օրերը կատարեցինք, դուրս եկինք գնա-
ցինք. ամենքը մեզ կանանցով և որդիքներով ճա-
նապարհ ձգեցին մինչեւ քաղաքի դուրս կողմը. և
ծովի եզրին մօտ ծունր դրինք ու աղօթք արինք։
6 Եւ իրարից բաժանվեցանք և վեր ելանք նաւը. և
7 նորանք յետ դարձան իրենց տեղերը։ Եւ մենք
նաւը Տիւրոսից առաջ ձգեցինք՝ հասինք Պաղո-
մայիդա. և եղբարներին ողջոյն տուինք՝ նորանց
8 մօտ մին օր մնացինք։ Եւ յետեւի օրն այնտեղից
դուրս ելանք՝ եկինք Կեսարիա. և փիլիպպոս աւե-

տարանչի տունը մտինք՝ որ նա այն եօթնից էր,
9 և նորա մօտ մնացինք։ Նա չորս կոյս աղջիկներ
10 ունէր՝ որ մարգարէ էին։ Եւ երբոր մենք այնտեղ
շատ օրեր մնումէինք, մին Ագաբոս անուն մար-
11 գարէ վէր եկաւ Հրէաստանից, Եւ մեզ մօտ որ
եկաւ, Պօղոսի գօտին առաւ՝ իրեն ոտներն ու
ձեռները կապեց և ասաց. Սուրբ Հոգին այսպէս
է ասում. Այն մարդն՝ որ այս գօտին նորանն է,
Հրէաները Երուսաղէմումն այսպէս կ՚կապեն, և նո-
12 րան հեթանոսներին ձեռքը կ՚մատնեն։ Եւ երբոր
նա լսեցինք՝ մենք աղաչումէինք, և նորանք էլ՝ որ
13 այնտեղ էին՝ որ նա վեր չելլի Երուսաղէմ։ Այն
ժամանակը Պօղոս պատասխան տուաւ և ասաց.
ի՞նչ էք անում, ինչո՞ւ համար էք լաց լինում և
իմ սիրտս կսկծացնում. ինչուոր՝ ես ո՛չ թէ մի-
նակ կապվելոյ՝ բայց Երուսաղէմումն մեռնելոյ էլ
պատրաստ եմ Տէր Յիսուսի Քրիստոսի անունին
14 համար։ Եւ երբոր նա ականջ չ՚դրաւ, լուռ կա-
ցանք՝ և ասացինք. Թո՛ղ Տէրի կամքը լինի։
15 Եւ այն օրերից ետեւ՝ պատրաստվեցանք՝ վեր
16 էինք ելլում Երուսաղէմ։ Այն Կեսարացի աշա-
կերտներից էլ մեզ հետ եկին, և տանումէին մեզ
մին Մնասօն անուն Կիպրացի մարդոյ՝ առաջին ա-
շակերտի մօտ, որ նորա մօտ պէտք էր կենայինք։
17 Եւ երբոր մենք Երուսաղէմ մտինք, եղբարքը մեզ
18 ուրախութենով ընդունեցին։ Բայց յետեւի օրը
Պօղոս մեզ հետ մտաւ Յակոբի մօտ. և բոլոր ե-
19 րէցները եկին։ Եւ ողջոյն տուաւ նորանց՝ մին մին
պատմումէր ինչ որ Աստուած հեթանոսներին մէջն
20 արաւ իրեն ծառայութենովը։ Եւ երբոր նորանք

լսեցին, փառք էին տալիս Աստուծոյ. և նորան
ասում. Ե՛ղբայր՝ տեսնո՞ւմես, որչափ հազարաւոր
հաւատացեալ Հրէաներ կան, և ամենքն օրէնքին
21 համար նախանձով լցուած են ։ Բայց քեզ համար
այնպէս են իմացել՝ թէ հեթանոսներին մէջ լինող
Հրէայներին սովորցնումես, որ Մովսէսից յետ
քաշվին. ասումես թո՛ղ իրենց որդիքները չ՛թլփ-
22 փատեն, և օրինաց կրօնքի պէս չ՛վարվին ։ Հիմիկ
ի՞նչ կ՛լինի՝ իրաւի որ՝ կ՛լսեն որ դու եկել ես ։
23 Հիմիկ սա արա՝ որ քեզ ասումենք. Մեզանում
չորս մարդ կան՝ որ ուխտ են դրած իրենց անձնե-
24 րին վերայ. Նորանց ա՛ռ՝ և նորանց հետ սրբվէ՛.
և նորանց վերայ ծա՛խք արա՝ որ իրենց գլխները
ածիլեն. և ամենքը կ՛գիտեն, թէ ինչ որ քեզ
համար իմացել էին՝ ո՛չ ինչ է. և թէ դու էլ
25 միաբան ես օրէնքը պահելոյ համար ։ Բայց այն հա-
ւատացեալներին համար՝ որ հեթանոսներիցն են,
մենք ուղարկեցինք՝ ինչպէս որ սահմանեցինք, որ
նորանք այնպէսի բան չ՛պահեն, բայց միայն յետ
կենան կռքի մատաղից և արիւնից, և խեղդվա-
26 ծիցն ու պոռնկութենից ։ Այն ժամանակը Պօ-
ղոս այն մարդկանցն առաւ, յետեւի օրը նորանց
հետ սրբվեցաւ, և տաճարը մտաւ ցոյց տալով
սրբութեան օրերի կատարվիլը. մինչև որ նորանց
ամեն մէկին վերայ պատարագ էլաւ ։
27 Եւ երբոր այն եօթը օրերը կատարվելոյ մօտ
էին, Ասիացի Հրէաները նորան տաճարումը տե-
սին, և ամեն ամբոխին նորա վերայ թափեցին,
28 և նորա ձեռք ձգելով աղաղակումէին. Ո՛վ Իս-
րայէլացի մարդիկ՝ օգնեցէ՛ք. սա ա՛յն մարդն է՝

որ ժողովրդին՝ և օրէնքին և այս տեղիս հակառակ
ամենին ամեն տեղ սովորցնումէ՝ մինչև որ Հեթա-
նոսներ էլ մտցրուց տաճարին մէջ՝ և այն սուրբ
29 տեղը պղծեց ։ Ինչուոր՝ Տրոփիմոս Եփեսացին ա-
ռաջուց նորա հետ քաղաքումը տեսել էին. և
կարծումէին՝ թէ Պօղոս մտցրուց նորան տաճարին
30 մէջ ։ Բոլոր քաղաքը շարժվեցաւ, և ժողովուրդը
կիտվեցաւ. և Պօղոսին բռնած տաճարիցը դուրս
31 էին քաշում՝ և շուտով դռներն փակվեցան ։ Եւ
ուզումէին՝ որ նորան սպանեն. զրուց հասաւ գըն-
դի հազարապետին՝ թէ ամեն Երուսաղէմը շփոթ-
32 վել է ։ Նա էլ շուտով զինուորներ և հարիւրա-
պետներ առաւ՝ և նորանց վերայ վազեց. և նո-
րանք երբոր հազարապետին և զինուորներին տե-
33 սին, Պօղոսին ծեծելուց դադարեցին ։ Այն ժա-
մանակը հազարապետը մօտեցաւ բռնեց նորան՝ և
հրամայեց, որ երկու շղթայով կապեն. և հարց-
34 նումէր՝ թէ ո՞վ է, և ի՞նչ է արել ։ Ամեն մէկն
ամբոխին մէջ մին ուրիշ բան էր աղաղակում նո-
րանից. երբոր ամբոխի շփոթութենից չ՛կարողա-
ցաւ ճշմարիտն իմանալ, հրամայեց որ նորան տա-
35 նեն բանակը ։ Եւ երբոր հասաւ աստիճանները,
պէտք էլաւ որ ամբոխի ստիպելոյն պատճառովը՝
36 զինուորները նորան վերառնեն բերեն. ինչուոր՝
շատ ժողովուրդ էր ետեւէն գնում, և ասումէին.
37 Միջիցն վե՛ր առ դորան ։ Դեռ քանի որ Պօղոս
բանակը մտնելոյ վերայ էր, հազարապետին ասաց.
Կարելի է ինձ՝ որ քեզ հետ խօսիմ. Նա էլ ա-
38 սաց՝ Յունարէն գիտո՞ւմես. Չ՛լինի թէ դու այն
Եգիպտացին ես, որ այս օրերից առաջ շփոթու-

թիւն արիր՝ և չորս հազար սիկարեան մարդիկ հա-
39 նեցիր անապատը ։ Եւ Պօղոս ասաց. Ես Հրէայ
մարդ եմ Կիլիկեցոց Տարսօնիցը. ո՛չ թէ աննշան
քաղաքի քաղաքացի. աղաչումեմ քեզ՝ հրամա՛ն
տուր ինձ, որ այդ ժողովրդիդ հետ խօսիմ ։
40 Եւ երբոր նա հրամայեց, Պօղոս աստիճաններին
վերայ կանգնեց՝ և դէպի ժողովուրդը ձեռքը շար-
ժեց. երբոր շատ լուռ կացան, սկսեց Եբրայեցոց
լեզուովը խօսիլ՝ և ասաց.

ԳԼ. ԻԲ

Պօղոս պատասխան է տալիս և ասում թէ Հռօմայեցի է ։

1 Մ՛արդիկ եղբարք և հարք՝ հիմիկ իմ ձեզ պա-
2 տասխան տալս լսեցէ՛ք ։ Երբոր լսեցին՝ թէ Եբ-
րայեցոց լեզուովը նորանց հետ խօսեց, էլ աւելի
3 լուռ կացան ։ Եւ նա ասաց. Ես Հրէայ մարդ եմ
Կիլիկեցոց Տարսօնումը ծնված այս քաղաքումս
մեծացած Գամաղիէլի ոտքին մօտ, ճշմարիտ հայ-
րենական օրէնքին պէս վարժված. Աստուծոյ կող-
մանէ խիստ նախանձոտ էի՝ ինչպէս որ այսօր դուք
4 ամենքդ էք ։ Որ իսկ այս ճանապարհս հալածեցի
մահու չափ. որ մարդկանց և կանանց կապում
5 և մատնումէի բանտերի մէջ. Ինչպէս որ քահա-
նայապետն էլ ինձ վկայումէ՝ և ծերերի ամէն ժո-
ղովն էլ. որ նորանցից էլ թղթեր առած գնումէի
Դամասկոս եղբարներին մօտ, որ այնտեղից էլ կա-
6 պածներ բերեմ Երուսաղէմ, որ պատժվին ։ Եւ է-
լաւ երբոր ես գնումէի՝ և Դամասկոսին մօտենում,

կէս օրվան դէմ՝ յանկարծակի երկնքիցը մին սաս-
7 տիկ լոյս փայլեց իմ չորս կողմովս, Եւ վէր ընկայ
գետնին վերայ, և ձայն լսեցի՝ որ ասումէր ինձ.
8 Սաւո՛ւղ Սաւո՛ւղ՝ ինձ ինչո՞ւ ես հալածում ։ Եւ
ես պատասխան տուի՝ թէ Տէ՛ր՝ դու ո՞վ ես. և
ինձ ասաց. Ես Յիսուս Նազօրեցին եմ՝ որ դու
9 հալածումես ։ Բայց նորանք՝ որ ինձ հետ էին՝ լոյ-
սը տեսնումէին, իսկ այն ձայնն չէին լսում՝ որ
10 ինձ հետ խօսումէր ։ Եւ ասացի. Ի՛նչ անեմ՝ Տէ՛ր.
և Տէրն ասաց ինձ. Վե՛ր կաց՝ գնա՛ Դամասկոս,
և այն տեղ կ'պատմվի քեզ ամեն բանի համար՝
11 որ քեզ հրաման է որ անես ։ Երբոր այն լուսոյ
փառքիցը կարող չէի տեսնել, նորանք՝ որ ինձ հետ
12 էին, ձեռքիցս բռնեցին՝ և մտի Դամասկոս ։ Մին
Անանիա մարդ՝ աստուածավախ օրէնք պահօղ,
Դամասկոսումը բնակված ամեն Հրէաներիցը բարի
13 վկայութիւն ունօղ ։ Նա եկաւ ինձ մօտ կանգնեց՝
14 և ասաց. Սա՛ւուղ եղբայր՝ վեր նայէ ։ Եւ ես իսկ
այն ժամին դէպի նա վերև նայեցի, և նա ինձ
ասաց. Մեր հարանց Աստուածն առաջուց քեզ
ընտրեց՝ որ նորա կամքը ճանաչես, և այն Արդա-
15 րը տեսնես, և նորա բերանիցը խօսք լսես, Որ
նորան վկայ լինիս բոլոր մարդկանցը մէջ՝ այն բա-
16 ներին համար, որ տեսիր և լսեցիր ։ Եւ հիմիկ ին-
չո՞ւ ես ծուլանում, վե՛ր կաց մկրտվէ և քո մեղ-
17 քերդ լուա՛ նորա անունը կանչելով ։ Եւ էլաւ երբ-
որ ես յետ դարձայ Երուսաղէմ, և տաճարումը
18 աղօթք էի անում, ափշութիւն ինձ բռնեց, Եւ
նորան տեսի՝ որ ինձ ասումէր. փութա՛ շուտով
դո՛ւրս եկ Երուսաղէմիցը. պատճառով՝ չեն ըն-

դունիլ քո վկայութիւնդ՝ որ ինձ համար տալիս
19 ես ։ Եւ ես ասացի . Տէ՛ր՝ իսկ նորանք գիտումեն՝
որ ես էի՝ որ քեզ հաւատացողներին բանտի մէջ
էի տալիս , և ամեն ժողովարաններումը ծեծումէի ։
20 Եւ երբոր քո Ստեփաննոս վկայիդ արիւնը թափ-
վումէր , ես ինքս էի՝ որ նորա մօտ կանգնած , եւ
նորա սպանողներին կամակից էի , և նորա սպա-
21 նողների շորերը պահում ։ Եւ ասաց ինձ . Գնա՛ ,
ինչուոր՝ ես հեռու հեթանոսների մէջ կուղարկեմ
քեզ ։
22 Եւ մինչեւ այս խօսքս ականջ էին դնում նո-
րան . յետոյ իրենց ձայները բարձրացրին՝ և ասա-
ցին . Այդպէսի մարդը երկրիցս վեր առ . ինչու-
23 որ՝ պէտք չէ որ այդպէսիդ ապրի ։ Եւ երբոր նո-
րանք աղաղակումէին՝ և շորերն վեր ձգում , և փո-
24 շին օդին մէջը ցանում . Հազարապետը հրամայեց
որ նորան բանակին մէջ մտցնեն . ասումէր՝ պէ՛տք
է ծեծելով հարցնել նորան՝ որ գիտենամ , թէ
ի՛նչ յանցանքի համար էին նորա վերայ այնպէս
25 աղաղակում ։ Եւ երբոր նորան կաշվէ փոկերով
պինդ կապեցին , Պօղոսն ասաց հարիւրապետին՝ որ
մօտ կանգնած էր , թէ Արժա՞ն է որ դուք Հռօ-
26 մայեցի անմեղ մարդ ծեծէք ։ Երբոր լսեց հարիւ-
րապետը , մօտեցաւ հազարապետին պատմեց՝ և
ասաց . Ի՞նչ ես կամենում անել , ինչուոր՝ այս
27 մարդս Հռօմայեցի է ։ Եւ հազարապետը մօտ ե-
կաւ՝ և նորան ասաց . Դու ինձ ասա՛՝ Հռօմայեցի՞
28 ես . և նա ասաց . Այո ։ Հազարապետը պատաս-
խան տուաւ . Ես շատ բանով ստացայ այս ըլինուո-
րութիւնս . և Պօղոսն ասաց . Ես իսկ դորանում

29 ծնված եմ ։ Եւ նորանք՝ որ նորան պիտի ծեծէին ,
շուտով հեռացան նորանից . և հազարապետն էլ
վախեցաւ՝ երբոր իմացաւ թէ Հռօմայեցի է . ին-
չուոր՝ կապել էր նորան ։
30 Եւ յետեւի օրը կամենումէր՝ որ ճշմարիտն ի-
մանայ , թէ ի՞նչ է Հրէաների չարախօսութիւնը .
նորան արձակեց՝ և հրամայեց որ քահանայապետն
ու բոլոր ատեանը կանչեն . և Պօղոսին էլ վեր բե-
րաւ նորանց մէջը կանգնացրուց ։

ԳԼ. ԻԳ

Պօղոս ատեանին առաջին . Հրէայք երդվում են նորան սպանելոյ , բայց նա ուղարկվումէ Կեսարիա ։

1 Եւ Պօղոս ատեանին մտիկ տուաւ՝ և ասաց .
Մա՛րդիկ եղբարք՝ ես ամեն չիտակ մտքով վարվել
2 եմ Աստուծոյ առաջին մինչեւ այսօր ։ Եւ Անա-
նիա քահանայապետը ծառաներին հրամայեց՝ որ
3 նորա բերանը թակեն ։ Այն ժամանակը Պօղոսն ա-
սաց նորան . Աստուած պիտի քեզ զարկէ՝ բռով
ծեփած պա՛տ . և դուն նստե՞լ ես որ ինձ օրէն-
քին պէս դատես , և օրէնքին հակառակ հրամայու-
4 մես՝ որ ինձ թակեն ։ Եւ նորանք՝ որ նորան մօտն
էին՝ ասացին . Դու Աստուծոյ քահանայապետին
5 հայհոյա՞նք ես տալիս ։ Եւ Պօղոսն ասաց . Ե՛ղ-
բարք՝ ես չէի գիտում՝ որ քահանայապետ է . ին-
կապէս գրված է՝ թէ Քո ժողովրդի իշխանը չ՛հայ-
6 հոյես ։ Երբոր Պօղոսն իմացաւ թէ մին կողմը սա-
դուկեցոյն է՝ և միւս կողմը փարիսեցոցը , ատեա-

նին մէջն աղաղակումէր. Մա՛րդիկ եղբարք՝ ես
փարիսեցի եմ՝ և փարիսեցոյ որդի. ահա՛ մեռել-
ների յուսոյն՝ և յարութիւն առնելոյն համար
7 եմ դատվում ես հիմիկ։ Եւ երբոր սա ասաց,
փարիսեցոց ու սադուկեցոց մէջը տարաձայնու-
թիւն ընկաւ. և բազմութիւնը պատառվեցաւ,
8 Պատճառնոր՝ սադուկեցիքն ասումեն, թէ ոչ յա-
րութիւն կայ՝ ո՛չ հրեշտակ՝ և ո՛չ հոգի. բայց
9 փարիսեցիքը երկուսն էլ դաւանումեն։ Եւ մեծ ա-
ղաղակ էլաւ. փարիսեցոց կողմիցը մին քանի կար-
դացողներ վերկացան, հակառակումէին և ասում.
Մենք բնաւ չարութիւն չենք գտնում այս մար-
դումս. միայն թէ հոգի խօսեց դորանում կամ
10 հրեշտակ։ Եւ երբոր խռովութիւնը շատացաւ,
հազարապետը վախեցաւ՝ որ չ'լինի թէ Պօղոս նո-
րանցից ճեղքվի. զինուորներին հրամայեց՝ որ վեր
գան նորան նորանց միջիցը խլեն, և բերեն բա-
11 նակին մէջ։ Եւ յետևի գիշերը Տէրը կանգնեց
նորան մօտ և ասաց. Սրտապի՛նդ կաց՝ Պօղէ, ին-
չուոր՝ ինչպէս ինձ համար Երուսաղէմումը վկայե-
ցիր, այնպէս էլ պէ՛տք է Հռոմումը վկայես։
12 Եւ երբոր առաւօտ էլաւ Հրէաները ժողովք ա-
րին՝ իրենց անձներին վերայ նզովք դրին, որ չու-
13 տեն՝ և չ'խմեն, մինչև որ Պօղոսին սպանեն։ Եւ
քառասուն մարդուց աւելի էին նորանք՝ որ այս
14 երդումս իրար հետ արել էին։ Նորանք քահա-
նայապետների ու երէցների մօտ եկին՝ և ասա-
ցին. Նզովքով նզովեցինք մեր անձներս՝ որ ո՛չ
15 ինչ չուտենք՝ մինչև Պօղոսին սպանենք։ Բայց
դուք ատեանին հետ իմաց արէ՛ք հազարապետին.

որ նորան վէր բերէ ձեզ մօտ. իբր թէ կամենաք
էլ աւելի ճշմարտութենով բան իմանալ նորա
համար. մենք էլ նորա մօտ գալուցն առաջ՝
16 պատրաստ ենք՝ որ սպանենք նորան. Եւ Պօղոսի
քըվոր որդին՝ երբոր նորանց այն արած հնարքները
լսեց, եկաւ մտաւ այն բանակը և Պօղոսին պատ-
17 մեց։ Եւ Պօղոսն այն հարիւրապետներիցը մինին
կանչեց իրեն մօտ՝ և ասաց. Այս տղայիս տա՛ր
հազարապետին մօտ. ինչուոր՝ բան ունի նորան
18 պատմելոյ։ Եւ նա առաւ նորան հազարապետին
մօտ տարաւ՝ և ասաց. Կապած Պօղոսն ինձ կան-
չեց՝ և աղաչեց, որ այս տղային բերեմ քեզ մօտ
19 որ մին բան ունի քեզ հետ խօսելոյ։ Հազարապե-
տը նորա ձեռիցը բռնեց. գնաց առանձին տեղ՝
հարցնումէր, թէ ի՞նչ բան ունիս ինձ հետ խօսե-
20 լոյ։ Եւ նա ասաց. Հրէաներն իրար հետ խօսք դը-
րին՝ որ քեզ աղաչեն, որ վաղը Պօղոսին վէր բե-
րես ատեանին մէջ. իբր թէ կամենան մին աւելի
21 ճշմարիտ քննութիւն անել նոցա համար։ Բայց
դու մտիկ չի՛ անես նորանց. պատճառնոր՝ նորան-
ցից քառասուն մարդուց էլ աւելի հնարք են գոր-
ծել նորա համար որ անձներն էլ նզովեցին՝ որ
չուտեն և չ'խմեն՝ մինչև որ նորան սպանեն. հի-
միկ էլ պատրաստ են՝ և քո հրամանիդ են սպա-
22 սում։ Ապա հազարապետն այն տղային թող ա-
րաւ՝ պատուէր տուաւ, որ ոչ մինին չասէ, որ
այս բանս իմաց արիր ինձ։
23 Եւ հարիւրապետներիցը երկուսին կանչեց և ա-
սաց. Երկու հարիւր զինուոր պատրաստեցէ՛ք, որ
գնան մինչև Կեսարիա. և եօթանասուն ձիաւոր՝

և երկու հարիւր էլ տիգաւոր գիշերի երեք ժամի
24 ժամանակումը. Եւ գրաստներ էլ պատրաստեն՝ որ
25 Պօղոսին այնտեղ վէր բերեն ազատեն։ Եւ Փէ-
լիքս դատաւորին թուղթ գրեց, որ նորա օրինակն
26 սա էր. Կղօդիոս Լիւսիաս՝ պատուական Փէլիքս
27 դատաւորին, ողջոյն. Այս մարդս Հրէաներից
բռնված՝ և նորանցից սպանվելոյ մօտ էր. ես զին-
ուորներով վերայ հասի ազատեցի, իմանալով որ
28 Հռոմայեցի է. Ուզեցի որ նորա յանցանքն իմա-
նամ՝ որ նորա համար դանգատ էին անում դո-
29 րանից. վէր բերի դորան՝ նորանց ատեանը։ Նա
գտի՝ որ իրենց օրէնքին մին վիճմունքին համար
ամբաստանված է, և ընաւ մեռնելոյ կամ կապ-
30 վելոյ արժանի յանցանք չունէր։ Երբոր իմ ական-
ջըս հասաւ՝ որ նորանք այդ մարդոյդ համար հը-
նարք են գործել՝ նորան քեզ մօտ ուղարկեցի. և
չարախօսներին էլ հրաման տուի՝ որ դորանից քո
առաջիդ խօսեն. Ո՛ղջ կաց։
31 Եւ զինուորները նորա հրամանին պէս՝ գիշերու-
32 մը Պօղոսին առին տարան Անտիպատրոս։ Եւ յե-
տևի օրն արձակեցին այն զինուորները որ նորա
33 հետ գնացել էին, և յետ դարձան բանակը։ Նո-
րանք մտին Կեսարիա. և թուղթը դատաւորին
տուին, և Պօղոսին էլ նորա առաջին կանգնաց-
34 րին։ Երբոր կարդաց՝ հարցրուց թէ ո՞ր գաւառից
է. և երբոր տեղեկացաւ թէ Կիւլիկիայից է,
35 Ասաց. Կ'լսեմ քեզ՝ երբոր քո չարախօսներդ էլ
կ'գան. և հրամայեց՝ որ Հերօդէսի պալատումը
պահեն նորան։

ԳԼ. ԻԴ

*Պօղոսից ամբաստանութիւն. Նորա պատասխանատուու-
թիւնը Փէլիքսի ատեանումը. քարոզումէ նորան
բայց 'ի զուր։*

1 Եւ հինգ օրից ետև՝ Անանիա քահանայապետը
մին քանի ծերերի և մին ճարտար խօսող Տերտիւ-
ղոս անուն մարդոյ հետ վէր եկաւ, որ սորանք էլ
2 իմաց արին դատաւորին՝ Պօղոսին համար։ Եւ երբ-
որ նորան կանչեց՝ Տերտիւղոսն սկսեց դանգատ
անել և ասել. Որովհետև քեզանից շատ խաղա-
ղութիւն ենք գտել՝ և այս ազգիս համար շատ բա-
3 ների շինակութիւն՝ քո խնամք տանելովդ. Ամեն
կերպով և ամեն տեղ շատ գոհութենով շնորհա-
4 կալ ենք քեզանից ո՛վ ազնուական Փէլիքս. Բայց
որ չ'լինի թէ էլ աւելի նեղութիւն տամ քեզ,
աղաչումեմ՝ որ մին քիչ լսես մեզ քո հեզութե-
5 նովդ. Պատճառնոր՝ մենք գտինք այս մարդս՝ որ
ապականումէ և խռովացնումէ այն ամեն Հրէանե-
րին, որ բոլոր աշխարհքումը կան. և Նազօրեցոց
6 հերձուածի առաջնորդ է. Որ նա իսկ տաճարն էլ
կամեցաւ պղծել. որ էլ նորան բռնեցինք. և մեր
7 օրէնքին պէս ուզեցինք դատաստան անել։ Լիւ-
սիաս հազարապետն եկաւ՝ և մեծ բռնութենով
8 մեր ձեռներից հանեց։ Հրամայեց՝ որ նորա չարա-
խօսներն էլ գան քեզ մօտ. որ դու ինքդ նորէն
դատաստան անելով կարող ես տեղեկանալ նորա-
նից ամեն բանի համար՝ որ մենք դանգատումենք

9 դողանից ։ Հրէաներն էլ միաբան ելած՝ ասացին
Այդպէս է ։
10 Պօղոս պատասխան տուաւ՝ երբոր դատաւորը
նորան աչքով արաւ որ խօսի . Գիտումեմ որ դու
շատ տարուց հետէ այս ազգիս դատաւորն ես .
ապա յօժար սրտով իմ բաներիս համար պատաս-
11 խան եմ տալիս ։ ինչուոր՝ դու կարող ես գիտել .
որ տասներկու օրից աւելի չէ՝ որ ես եկի երկրպա-
12 գութիւն անել Երուսաղէմումը . Եւ տաճարումն
ինձ չեն գտել՝ որ մին մարդոյ հետ խօսացել եմ ,
և կամ շատ մարդ մինտեղ հաւաքելեմ՝ ոչ ժողո-
13 վարանումը , Եւ ո՛չ քաղաքումը . և չեն կարող
քո առաջիդ ցոյց տալ նա որ հիմիկ նորահամար
14 չարախօսումեն ինձանից ։ Բայց սա եմ խոստովան-
վում քեզ , թէ այն ճանապարհումն՝ որ ասումեն
հերձուած , այնպէս եմ պաշտում հայրենական
Աստուծոյն , ամեն բաներին հաւատալով՝ որ օրէն-
15 քումն ու մարգարէներումը գրված է ։ Յոյս ունիմ
դէպի Աստուած , որ դորանք էլ սպասումեն նո-
րան՝ թէ արդարների և մեղաւորների յարութիւն
16 պիտի լինի , Որ ճիշտ նորանով ես էլ ջանք եմ
անում , որ ամեն ժամ անմեղ խղճմտանք ունե-
նամ Աստուծոյ առաջին՝ և մարդկանց առաջին ։
17 Շատ տարիներից ետեւ եկի՝ որ իմ ազգիս մէջ ո-
18 ղորմութիւն անեմ . և պատարագացու տուի , Սո-
րանով ինձ գտին տաճարումը սրբված՝ ո՛չ շատե-
19 րով և ո՛չ էլ ամբոխով ։ Մին քանի Ասիացի Հր-
էաներ՝ որ նորանց պէտք էր գալ քո առաջիդ՝ և
գանգատ անել , թէ որ մին բան ունենան ինձա-
20 նից ։ Եւ կամ իսկ սորանք՝ թո՛ղ ասեն . ինձա-

նում ի՛նչ անիրաւութիւն գտին՝ դեռ քանի որ
21 ատեանումը կայի ։ Բայց միայն այս խօսքիս հա-
մար՝ որ երբոր նորանց մէջ կանգնած էի , աղա-
ղակեցի , թէ Մեռելների յարութիւն առնելոյն
22 համար՝ եմ ես այսօր դատվում ձեզանից ։ Եւ փե-
լիքս նորանց ուշացրուց՝ ինչուոր՝ շատ լաւ տեղե-
կացած էր այն ճանապարհին համար , ասաց . Երբ-
որ Լիւսիաս հազարապետն այստեղ կ'գայ , կ'տե-
23 ղականամ ձեզ համար ։ Հարիւրապետին հրամա-
յեց՝ որ նորան պահէ . և իրեն մարդկանցից ընաւ
մինին չարգելէ՝ նորան ծառայութիւն անելոյ ։
24 Եւ մին քանի օրից ետեւ փելիքս եկաւ իրեն
Դրուսիլա կնկանը հետ՝ որ նա Հրէայ էր . Պօղոսին
կանչեց՝ և նորանցից՝ Յիսուսի Քրիստոսի հաւատ-
25 քին համար բան լսեց ։ Եւ երբոր նա խօսումէր
արդարութեան և պարկեշտութեան և նոր գալու-
դատաստանին համար , փելիքս շատ ահով բռնը-
վեցաւ , և պատասխան տուաւ . Դու հիմիկս գը-
նա՛՝ և երբոր ժամանակ կ'լինի , կ'կանչեմ քեզ ։
26 Բայց նա այնպէս յոյս էլ ունէր՝ որ Պօղոսից մին
բան տվվի իրեն . և նորահամար շատ անգամ կան-
27 չումէր նորան՝ և նորա հետ խօսում ։ Եւ երբոր
երկու տարին կատարվեցաւ , փեստոս Պորկիոսն ե-
կաւ փելիքսին տեղը . որովհետեւ փելիքս կամե-
ցաւ՝ որ Հրէաներին մին շնորհք անէ . Պօղոսին
կապած թողեց ։

ԳԼ. ԻԵ

Պօղոս Փեստոսի առաջեւումը բողոքումէ առ Կայսրը ; ներկայացնվումէ Ագրիպպասին ։

1 Փեստոս երբոր իշխանութեանը հասաւ , երեք օ-
2 րից ետեւ Կեսարիայից վեր ելաւ Երուսաղէմ ։ Եւ
քահանայապետներն ու Հրէաների գլխաւորները
3 Պօղոսին համար իմացում տուին նորան , Եւ աղա-
չումէին՝ այս շնորհքս խնդրելով նորանից , որ Ե-
րուսաղէմ կանչէ նորան . ինչուոր՝ հնարք էին
4 գործել՝ որ ճանապարհումն սպանեն նորան ։ Բայց
Փեստոս պատասխան տուաւ՝ որ նորան Կեսարիայ-
ումը կ'պահէ . և որ իսկ ինքն էլ շուտով այնտեղ
5 կ'գնայ ։ Եւ ձեզանից ով որ կարող են , ասաց՝
թո՛ղ ինձ հետ գան . և թէ որ այն մարդումը մին
յանցանք կ'լինի՝ թո՛ղ նորանից գանգատ անեն ։
6 Եւ այնտեղ ութ կամ տասն օրից աւելի չ'մնա-
ցած՝ վեր եկաւ Կեսարիա . և յետեւի օրը ատեան
7 նստեց , և հրամայեց որ Պօղոսին բերեն ։ Եւ երբ-
որ եկաւ՝ նորա չորս կողմովը կանգնեցին՝ այն Հը-
րէաներն , որ Երուսաղէմից եկել էին . շատ և
ծանր յանցանք էին դնում նորա վերայ՝ որ չէին
8 կարող ցոյց տալ ։ Պատճառնոր՝ Պօղոս պատասխան
էր տալիս , թէ՝ Ո՛չ Հրէաների օրէնքին՝ և ո՛չ
9 կայսերին դէմ մին մեղք եմ գործել ։ Բայց Փես-
տոս որ կամեցաւ Հրէաներին շնորհք անել , պա-
տասխան տուաւ Պօղոսին՝ և ասաց . Կամենո՞ւմես
Երուսաղէմ գնալ՝ և այնտեղ այդ բաներիդ հա-

10 մոր դատվիլ իմ առաջին ։ Եւ Պօղոս ասաց .
Կայսերի ատեանին եմ հասած կանգնած , որ այն-
տեղ պէտք է ես դատվիմ . Հրէաներին մին վնաս
չեմ տուել , ինչպէս որ դու էլ լաւ գիտումես ։
11 Բայց թէ որ վնաս տուող եմ և մեռնելոյ արժանի
բան գործեցի՝ մեռնելուց չեմ վախենում . այլ
թէ որ բնաւ այնպեսի բան չ'կայ , որ սորանք ին-
ձանից գանգատումեն , ո՛չ ով ինձ կարող չէ դո-
րանց ձեռքը տալ . ես դէպի կայսերն եմ բողո-
12 քում ։ Այն ժամանակը Փեստոս խորհրդակցին հետ
խօսեց՝ և պատասխան տուաւ , Դէպի կայսերը բո-
ղոքեցիր , կայսերին մօտ գնա՛ ։
13 Երբոր մին քանի օր անցաւ , Ագրիպպաս թա-
գաւորն ու Բերինիկէն եկին Կեսարիա՝ Փեստոսին
14 ողջոյն տալոյ համար ։ Եւ երբոր այնտեղ շատ օ-
րեր անցուցրին , Փեստոսը Պօղոսին համար իմաց-
րուց թագաւորին՝ և ասաց . Այստեղ մին մարդ
15 է մնացել Փելիքսից կապված , Որ նորա համար
երբոր Երուսաղէմ գնացի , քահանայապետներն
ու Հրէաների գլխաւորներն իմացրին ինձ . խնդ-
16 րումէին ինձանից՝ որ նորան պատիժ տամ ։ Նո-
րանց էլ պատասխան տուի , թէ Հռոմայեցոց օ-
րէնք չէ՝ որ մինը մին ուրիշի ձեռքը տվվի՝ դեռ որ
ամբաստանվածն իրեն չարախօսներին իրեն դիմա-
ցը չունենայ՝ և այն չարախօսութեան համար պա-
17 տասխան տալոյ կարողութիւն չառնէ ։ Եւ երբոր
այստեղ եկին՝ չ'յետացրի , բայց յետեւի օրը ատ-
եան նստած՝ հրամայեցի որ այն մարդուն բերեն ։
18 Եւ երբոր չարախօսներն առաջ եկին , նորա հա-
մար բնաւ մին չարախօսութեան վնաս չէին առաջ

19 բերում՝ ինչ որ ես կարծում էի։ Բայց իրենց պաշ-
տամունքին համար վիճմունք ունէին նորա հետ.
և մին մեռած Յիսուսի համար՝ որ նորա համար
20 Պօղոսն ասում էր՝ թէ կենդանի է։ Երբոր ես բա-
ւական չէի այնպէսի բաները քննելոյ՝ ասացի, թէ
կամենո՞ւմ ես Երուսաղէմ գնալ՝ և այնտեղ դատ-
21 վել այդ բաներիդ համար։ Բայց Պօղոսն երբոր
բողոքեց՝ որ կայսերի քննութեան համար պահվի,
հրաման տուի՝ որ նորան պահեն, մինչև որ տա-
22 նել տամ կայսերին մօտ։ Ագրիպպասը փեստոսին
ասաց. Ես էլ կամենում էի որ լսեմ այն մարդուն.
և նա ասաց՝ Վաղը կ'լսես։

23 Եւ յետևւի օրն երբոր Ագրիպպասն ու Բերինի-
կէն՝ շատ և փառաւոր հանդիսով եկին, և հազա-
րապետներին ու քաղաքի պատուական մարդկանցը
հետ ատեանը մտին, փեստոս հրամայեց՝ և Պօղո-
24 սին բերին։ Եւ փեստոսն ասաց. Ո՛վ Ագրիպպաս
թագաւոր՝ և ամե՛ն մարդիկդ՝ որ մեզ հետ էք,
տեսնո՞ւմ էք սորան. Հրէաների ամեն ժողովուրդն
իմ առաջին գանգատ արին սորա համար Երուսա-
ղէմումը, և այստեղ աղաղակում էին՝ թէ պէտք
25 չէ՛ որ դա ապրի։ Բայց ես տեղեկացայ՝ որ դա բը-
նաւ մեռնելոյ արժանի բան չի գործել. և երբոր
դա ինքն իրեն դէպի կայսերը բողոքեց, խորհուրդ
26 արի որ ուղարկեմ, Որ նորա համար մին հաստատ
բան չունիմ՝ որ գրեմ իմ տէրին. Նորահամար դո-
րան բերի ձեր առաջին՝ և մանաւանդ քո առա-
ջիդ՝ ո՛վ Ագրիպպաս թագաւոր. որ կրկին քննե-
27 լով կարող լինիմ մին բան գրել. Ինչուոր՝ ինձ ան-
պատշաճ է երևում, որ մին կապած մարդ տանել
տամ, և նորան մին արած վատութիւն չիմացնեմ։

ԳԼ. ԻԶ

*Ագրիպպաս վկայում է Պօղոսին անմեղութեանը նորա պա-
տասխանատուութիւնից յետոյ։*

1 Եւ Ագրիպպաս Պօղոսին ասաց. հրամա՛ն է որ
քեզ համար խօսիս. այն ժամանակը Պօղոս ձեռքը
2 մեկնեց՝ և պատասխան էր տալիս։ Այն ամեն ամ-
բաստանութեան համար՝ որ Հրէաներն արին ին-
ձանից՝ ո՛վ Ագրիպպաս թագաւոր՝ իմ անձս երա-
նելի եմ համարում, որ այսօր քու առաջիդ պա-
3 տասխան պիտի տամ։ Մանաւանդ՝ որ իսկ դու
տեղեակ ես Հրէաների ամեն սովորութիւններին և
վիճմունքներին. Նորահամար աղաչում եմ՝ որ համ-
4 բերութենով լսես ինձ։ Ինչուոր՝ ամեն Հրէաները
տեղեակ են իմ կեանքիս՝ որ տղայութենիցս հետէ
սկզբիցն իմ ազգիս մէջ Երուսաղէմումն եմ եղել։
5 Առաջուց շատ վաղուց հետէ գիտումեն, թէ որ
կամենան վկայութիւն տալ. որ ես մեր օրէնքի ա-
ւելի ճշմարիտ կրօնքովն եմ ապրել՝ փարիսեցի լի-
6 նելով։ Եւ հիմիկ՝ ատեանին մէջ կանգնած դա-
տապարտվումեմ այն յուսոյն համար՝ որ մեր հա-
րանցն Աստուածանից տըված աւետիքին վերայ է,
7 Որ մեր տասներկու ցեղը գիշեր և ցերեկ անդա-
դար պաշտելով, սպասումեն հասնել նորան. և
այս յուսոյս համար ամբաստանվումեմ Հրէանե-
8 րիցը՝ ո՛վ թագաւոր։ Ի՞նչ անհաւատալի բան է
երևում ձեզ՝ որ Աստուած մեռելներին յարու-
9 թիւն առնել է տալիս։ Իսկ ես ինքս հարկաւոր

էի համարում՝ որ Յիսուս Նազօրեցու անունին հա-
10 կառակ շատ բաներ գործեմ. Որ Երուսաղէմումն
էլ արի. և սրբերից շատերին ես բանտի մէջ դը-
նել էի տալիս. ինչուոր՝ քահանայապետներիցն
իշխանութիւն էի առել՝ և նորանց սպանվածների
11 համար բերումէի նորանց մօտ։ Եւ ամեն ժողո-
վարաններումը շատ անգամ պատիժ տալով նո-
րանց բռնադատումէի որ հայհոյեն. և էլ աւելի
նորանց վերայ կատաղած՝ հալածումէի մինչև դըր-
12 սի քաղաքները։ Այս պատճառով երբոր քահա-
նայապետների իշխանութենովն ու հրամանովը գը-
13 նումէի Դամասկոս, կէս օրի ժամանակին ճանա-
պարհին վերայ տեսի՝ ո՛վ թագաւոր՝ որ արեգա-
կան լուսիցն աւելի մին պայծառ լոյս երկնքիցը
ծագեց իմ չորս կողմովս՝ և նորանցով էլ՝ որ ինձ
14 հետ գնումէին։ Եւ մենք ամենքս գետնին վերայ
ընկանք, և մին ձայն լսեցի՝ որ հեբրայեցոց լե-
զուովս ինձ ասումէր. Սաւո՛ւղ Սաւուղ՝ ինձ ին-
չո՞ւ ես հալածում. դժուա՛ր է քեզ՝ որ խթանի
15 դէմ քացի տաս։ Եւ ես ասացի. Դու ո՞վ ես
Տէ՛ր. և Տէրն ասաց. Ես Յիսուսն եմ՝ որ դու հա-
16 լածումես։ Բայց վե՛ր կաց՝ և ոտներիդ վերայ
կանգնէ՛՝ որ նորահամար երևեցայ քեզ՝ որ քեզ
ձեռքս առնեմ պաշտօնեայ և վկայ լինելոյ այն
բաներին՝ որ դու տեսիր, և այն բաներին որ նո-
17 րանցով պիտի երևիմ քեզ, Որ ազատեմ քեզ
այդ ժողովրդիցդ՝ և հեթանոսներիցն, որ ես նո-
18 րանց մէջ պիտի ուղարկեմ քեզ. Որ նորանց աչ-
քերը բանաս՝ և յետ դարձնես խաւարիցը դէպի
լոյսը, և սատանայի իշխանութենիցը դէպի Աստ-

ուած. որ նորանք ինձ հաւատալովս իրենց մեղաց
թողութիւն՝ և սրբերին հետ ժառանգութիւն առ-
19 նեն։ Սորահամար՝ ո՛վ Ագրիպպաս թագաւոր՝ ան-
20 հաւան չէլայ այն երկնային տեսիլքին, Բայց ա-
ռաջ նորանց՝ որ Դամասկոսումը և Երուսաղէմումն
էին, և ամեն Հրէաստանի և հեթանոսների գա-
ւառներումը՝ պատմեցի, որ զղջանան և դառնան
կենդանի Աստուծոյ մօտ, որ ապաշխարութեան
21 արժանի գործքեր գործեն։ Սորահամար Հրէաները
ինձ տաճարումը բռնելով ուզումէին որ սպանեն։
22 Որովհետև Աստուածանից ինձ օգնութիւն հա-
սաւ՝ մինչև այս օր կանգնեցի և վկայեցի փոքրին
և մեծին. Նորանից դուրս բան չասելով՝ քան որ
մարգարէները, և Մովսէսը խօսեցին այն նոր գալու
23 լինելիքներին համար. Թէ Քրիստոսը պիտի չար-
չարվի, թէ նա էլ առաջինը պիտի լինի մեռելնե-
րի յարութենիցը՝ և լոյս պիտի քարոզէ ժողովր-
դին՝ և հեթանոսներին։
24 Եւ նա երբոր այս պատասխան տուաւ, Փեստոս
մեծ ձայնով ասաց. Գժված ես՝ Պօ՛ղոս, շատ
25 կարդացողութիւններդ մոլորացնումեն քեզ։ Պօղոս
ասաց. Չեմ գժվում՝ ո՛վ ազնիւ Փեստոս, բայց
հեզութեան և ճշմարտութեան բաներ եմ խօ-
26 սում։ Թագաւորն էլ այս բաներիս տեղեակ է,
որ նորա հետ էլ համարձակ խօսումեմ. ինչուոր՝
չեմ կարծում որ սորանցից մինն էլ քեզանից
ծածկված լինի. պատճառնոր՝ այս բանս ո՛չ թէ
27 մին անկիւնի մէջ է եղած։ Հաւատո՞ւմես դու
մարգարէներին՝ ո՛վ Ագրիպպաս թագաւոր. գի-
28 տումեմ որ հաւատումես։ Եւ Ագրիպպաս Պօղոսին

ասաց. Մին քիչ է մնում որ ինձ հաւանացնես որ
29 քրիստոնեայ լինիմ։ Եւ Պօղոսն ասաց. Աստուա-
ծանից խնդրումէի՝ թէ քիչով թէ շատով՝ լինի որ
ո՛չ թէ մինակ դու, բայց այն ամենքն էլ՝ որ այս-
օր լսումեն ինձ, այնպէս լինէին՝ ինչպէս որ ես
եմ, այս կապանքներիցս ջոկ։
30 Վերկացաւ թագաւորը և դատաւորը և Բե-
րինկէն, և նորանք էլ՝ որ նորանց հետ նստած էին։
31 Եւ երբոր գնացին, իրար հետ խօսումէին և ա-
սում. թէ, Այս մարդս ընաւ մեռնելոյ կամ կա-
32 պանքի արժանի բան չի գործել։ Բայց Ագրիպպաս
Փեստոսին ասաց. Կարելի էր այս մարդս արձակել՝
թէ որ դէպի կայսրը չէր բողոքել։

ԳԼ. ԻԷ

Պօղոս գնումէ նաւով Իտալիա։

1 Երբոր հրաման ելաւ մեզ՝ որ նաւով գնանք Իտա-
լիա, Պօղոսին՝ և ուրիշ մին քանի կապվածներ էլ
տուին մին հարիւրապետի, որ նորա անունը Յու-
2 լիոս էր՝ Սեբաստոսի գնդիցը։ Եւ որ վեր ելանք
մին Ադրամինտացի նաւ՝ որ պէտք էր գնայ Ա-
սիացոց կողմերը, գնացինք. Արիստարքոս Մակե-
3 դօն Թեսաղօնիկեցին էլ մեզ հետ էր։ Եւ վեր ե-
կինք Սիդօն. և Յուլիոս սէր ցոյց տալով Պօղոսին՝
հրամայեց որ բարեկամներին մօտ գնայ՝ և հան-
4 գիստ գտնէ։ Եւ այնտեղից նաւով գնացինք Կիպ-
րոսի ցած կողմովը քամու ներհակ լինելոյ պատ-
5 ճառովը։ Այն ժամանակը Կիլիկիայի և Պամփի-

լիայի ծովին միջումը գնալով՝ վեր եկինք Լիկիացոց
6 Սմիւռան։ Եւ հարիւրապետն այնտեղ մին Աղեք-
սանդրացի նաւ գտաւ՝ որ Իտալիա էր գնում, և
7 մեզ այնտեղ մտցրուց։ Եւ շատ օր նաւովը ծանր
գնալով՝ դժուար հասինք Կնիդի կողմերը. և երբ-
որ քամին չ'թողեց մեզ, նաւով գնացինք Կրե-
8 տէի ցած կողմը Սաղմօնեայի մօտ։ Երբոր նորա-
նով դժուար անցանք՝ եկինք մին տեղ, որ գեղեցիկ
նաւահանգիստ էր կոչվում. որ Ղասէ քաղաքը
նորա մօտ էր։
9 Եւ երբոր շատ ժամանակ էլ անցել էր՝ և նա-
ւով գնալոյ համար սխալմունք էր լինում, ինչու-
որ՝ ծոմի ժամանակն էլ անցել էր, Պօղոս խրատ
10 էր տալիս, Եւ նորանց ասում. Ո՛վ մարդիկ՝ ես
տեսնումեմ որ. այս նաւորդութիւնս նեղութենով
և շատ վնասով պիտի լինի, ո՛չ թէ մինակ բեռ-
11 նից և նաւից, բայց մեր անձներից էլ։ Իսկ հար-
իւրապետը նաւապետին և նաւ քշողին աւելի էր
12 ականջ դնում՝ քան թէ Պօղոսի խօսքերին։ Որով-
հետեւ այն նաւահանգիստը անյարմար էր երեւում
ձմեռն անցուցնելոյ համար, շատերը մտածեցին՝
որ այնտեղից գնան. որ լինի թէ ձմեռը մնալոյ հա-
մար կարողանան Փիւնիկէն հասնիլ Կրէտացոց այն
նաւահանգիստը որ դէպի հարաւի կողմի և աչ-
13 խարհքն էր նայում։ Եւ երբոր հարաւի քամին
փչեց, կարծումէին թէ աչքը դրած տեղը կ'հաս-
նեն. և մօտ ձգած՝ Կրէտէի կողմովն անցանում
14 էին։ Եւ որ շատ ժամանակ չէր անցած՝ նորա վե-
րայ ուռած քամի ընկաւ՝ որ Եւրակիկլօն է կոչ-
15 վում։ Երբոր նաւը բռնվեցաւ՝ և քամուն դէմ

չ՚կարաց դիմանալ, թոյլ տուած գնում և գա-
16 լիս էինք։ Երբոր ջանք արինք գնալ մին կղզի՝ որ
Կղօդա էր կոչւում, դժուար կարացինք մակոյկը
17 բռնել, Որ առին նաւին հետ օգնութեան համար
կապեցին, և վախելով որ չ՚լինի թէ յորձանուտը
ընկնին, առագաստը վէր թողին՝ այնպէս գնում
18 և գալիս էին։ Եւ երբոր մենք շատ նեղութիւն
էինք քաշում, յետեւի օրումն կարասին ծովին
19 մէջ էին ձգում։ Եւ երրորդ օրն իրենց ձեռովը
20 նաւի գործիքը դուրս ձգեցին։ Երբոր շատ օրեր՝
ո՛չ արեւ և ոչ աստղներ չէին երեւում, և ձը-
մեռն էլ քիչ չէր որ մեզ վէրայ կար, ապա մեր
21 ազատվելոյ ամեն յոյսը կտրվեցաւ։ Եւ որովհետեւ
շատ օր սոված էին, այն ժամանակը Պօղոս նո-
րանց մէջ կանգնած՝ ասաց. Ո՛վ մարդիկ՝ պէտք
էր ձեզ՝ որ ինձ լսէիք, և Կրէտայիցը դուրս չի
22 գայիք՝ և այս նեղութիւնս և վնաս չ՚քաշէիք։ Եւ
հիմիկ խրատումեմ ձեզ՝ որ սրտապինդ կենաք.
ինչուոր՝ ձեզանից ընաւ մինի անձին էլ վնաս չի
23 լինիլ. այդ նաւիցդ ջոկ. Պատճառնոր՝ այս գիշե-
րըս երեւեցաւ ինձ այն Աստուծոյ հրեշտակն՝ որ
24 ես նորանն եմ, և նորան պաշտումեմ, Եւ ասաց.
Մի՛ վախենար, Պօ՛ղոս. պէտք է քեզ՝ որ կայսերի
դիմացն էլ կանգնիս. և ահա՛ Աստուած բաշ-
խել է քեզ այդ ամենքդ՝ որ քեզ հետ այդ նա-
25 ւիդ մէջը կան։ Սորահամար՝ սրտապինդ կացէ՛ք՝
ո՛վ մարդիկ. ինչուոր՝ հաւատումեմ Աստուծոյն՝
26 որ այսպէս լինի ինչպէս որ ինձ հետ խօսեց։ Բա՛յց
պէ՛տք է որ՝ գնանք մին կղզի ընկնինք։
27 Երբոր տասնուչորս գիշերն էլաւ՝ քանի որ գեռ-

հանդրինի անդունդներումն այս կողմն այն կողմն
էինք շարժվում կէս գիշերումը նաւավարները կար-
28 ծումէին՝ թէ մին աշխարհքի հասած լինին։ Եւ
գնդերը ձգեցին, քսան գիրկ խոր գտին. և մին
քիչ որ կացան՝ նորէն ձգեցին՝ և տասնուհինգ
29 գիրկ գտին։ Վախեցան որ չ՚լինի թէ պինդ տե-
ղերի մէջ ընկնին. և յետեւի կողմիցը չորս խա-
30 րիսխ ձգեցին. սպասումէին որ լուսանայ։ Բայց
նաւավարներն ուզումէին՝ որ այն նաւիցը փախչին.
և կուրը վէր բերին ծովը. այն պատճառանքովը՝
իբր թէ առաջի կողմիցն էլ պիտի խարիսխ ձգեն։
31 Պօղոս հարիւրապետին և զինուորներին ասաց,
թէ որ դորանք այս նաւումն չ՚մնան, դուք չէք
32 կարող ապրիլ։ Այն ժամանակը զինուորները կրի
33 չուանները կտրեցին՝ և նորան դուրս ձգեցին։ Եւ
գեռ քանի որ ուզումէր որ առաւօտ լինի, Պօղոսն
ամենին աղաչումէր՝ որ կերակուր առնեն, ասում
էր. Սա տասնուչորս օրն է՝ որ դուք սպասելով
34 անօթի էք մնացել, և մին բան չէք կերել։ Նորա-
համար աղաչումեմ ձեզ՝ որ կերակուր ուտէք, որ
իսկ նա ձեր փրկութեան համար է. ինչուոր՝ ձե-
35 զանից մինի գլխիցը ընաւ մին մազ չի կորչիլ։ Եւ
երբոր սա ասաց, հաց առաւ ամենի առաջին Աստ-
36 ուածանից գոհացաւ. կտրեց՝ և սկսեց ուտել։ Եւ
ամենքը սրտապնդվեցան, և նորանք էլ կերակուր
37 առին։ Եւ նաւին մէջ ամենքս երկու հարիւր եօ-
38 թանասուն և վեց հոգիք էինք։ Երբոր այն կերակ-
րովը կշտացան, նաւը թեթեւացրին՝ և ցորենը
ծովին մէջ թափեցին։
39 Եւ երբոր առաւօտ էլաւ՝ այն երկիրը չէին ճա-

նաչում, բայց մին գոգ տեսնումէին՝ որ ծովի եզ-
րըն է. մտածումէին որ եթէ հնար լինի, նաւն
40 այնտեղ պրծացնեն։ Եւ այն խարիսխներն որ հաս-
տատված էր՝ ծովը ձգեցին. թեւերի կապվածները
թուլացրին. և առագաստը վերաւին, և քամուն
41 տուին դէպի ծովի եզրի կողմը։ Մինտեղ ընկան՝
որ երկու կողմից ծով ունէր՝ նաւը ծռեցին. և
նաւի առաջին կողմը խրված անշարժ էր մնում,
և յետին կողմը ալիքների սաստկութենից քանդ-
42 վումէր։ Եւ զինուորները խորհուրդ էին արել՝ որ
կապվածներն սպանեն, որ չ՚լինի թէ մինը լողայ
43 փախչի։ Եւ հարիւրապետը՝ որովհետեւ կամեցաւ
որ Պօղոսին ապրեցնէ, նորանց այն խորհրդից խա-
փանեց. հրամայեց որ՝ ո՛վ որ կամենայ լող տալ՝
44 առաջ ընկնին՝ և դուրս գնան ցամաքը։ Եւ ու-
րիշներն էլ՝ որը տախտակներով՝ և որն այն նաւի
մին ուրիշ կտրատիքներովը. և այնպէս էլաւ՝ որ
ամենքը պրծան դուրս եկին ցամաքը։

ԳԼ. ԻԸ

Պօղոսի հրաշքը Մելիտինէումն. հռոմ գալն ու այնտեղ քարոզելը։

1 Եւ երբոր ապրեցանք, այն ժամանակը գիտա-
ցինք՝ որ այն կղզու անունը Մելիտինէ էր. բայց
բարբարոսները քիչ մարդասիրութիւն չէր՝ որ ցոյց
2 տուին մեզ. ինչուոր՝ կրակ վառեցին՝ և մեզ ա-
մենիս ընդունեցին այն անձրեւին համար՝ որ վե-
3 րայ էր գալիս. և սաստիկ ցրտին համար։ Եւ երբ»

որ Պօղոս՝ մին քիչ խոշոր էր հաւաքում, և դը-
նում կրակին վերայ, այն տաքութենից մին իժ
4 դուրս եկաւ՝ և նորա ձեռքից բռնեց։ Եւ երբոր
բարբարոսները տեսին՝ որ այն գազանը նորա ձեռ-
քից կախված էր, իրար ասումէին. Ուրեմն այս
մարդս մարդասպան է, որ թէեւ ծովից պրծաւ,
5 բայց արդար խրատունքները չ՚թողին որ ապրի։ Եւ
նա այն գազանը կրակին մէջ թափ տուաւ. և
6 նորան ոչ մին վնաս էլ չէլաւ։ Բայց նորանք ըս-
պասումէին՝ թէ կամ կուռչի կամ վէր կընկնի և
շուտով կ՚մեռնի. երբոր շատ սպասեցին, և տե-
սին որ բնաւ վնաս չէլաւ նորան, իրենց խօսքը նո-
րէն դարձրին և ասումէին, թէ սա մին աստուած
7 է։ Եւ այնտեղի չորս կողմն՝ այն կղզու գլխաւո-
րին գիւղեր կային՝ որ նորա անունը Պոպլիոս էր.
որ խօսք տալով մեզ երեք օր իրեն մօտ առաւ՝ և
8 սիրով ընդունեց։ Եւ էլաւ՝ որ Պոպլիոսի հայրը
տենդով և փորի լուծելովը հիւանդացած պառ-
կած էր. Պօղոս նորա մօտ մտաւ՝ և աղօթք ա-
րաւ, և ձեռքը նորա վերայ դրաւ, և նորան ըն-
9 ժշկեց։ Եւ երբոր սա էլաւ, ուրիշ հիւանդներ որ
10 այն կղզումը կային, գալիս էին և բժշկվում. Որ
նորանք էլ շատ պատուով պատուեցին մեզ. և
երբոր գնացինք, ինչ որ մեզ պէտք էր՝ տուին։
11 Եւ երեք ամսից ետեւ վէր էլանք մին Աղէք-
սանդրացի նաւ՝ որ այն ձմեռն այն կղզումն էր ան-
12 ցուցրել՝ և Դիոսկուրացոց նշանն ունէր։ Եւ վէր
եկինք Սիրակուսա՝ և երեք օր այնտեղ մնացինք։
13 Այն տեղից գնացինք հասինք Հռեգիոն. և մին
օրից ետեւ երբոր հարաւի քամին փչեց, երկրորդ

14 որը եկինք Պատիոլոս, Որ այնտեղ եղբարներ էլ
գտինք, նորանք աղաչեցին՝ որ եօթն օր այնտեղ
15 մնանք. և յետոյ դուրս եկինք Հռօմ։ Եւ երբոր
այնտեղից եղբարները մեզ համար լսեցին՝ մեր ա-
ռաջը դուրս եկին մինչև Ապփիոսի որդստան՝ և
Երեք խանութները. Պօղոս որ նորանց տեսաւ,
Աստուածանից գոհացաւ՝ և սրտապինդ էլաւ։
16 Եւ երբոր մտինք Հռօմ, Պօղոսին հրաման էլաւ՝
որ իրեն պահապան զինուորին հետ առանձին կե-
17 նայ. Եւ երեք օրից ետև էլաւ՝ որ նա Հրէաների
գլխաւորներին կանչեց. և երբոր եկին, նորանց
ասաց. Մա՛րդիկ եղբարք՝ ես թէև ժողովրդին
կամ հայրենական կրօնքին հակառակ մին բան չեմ
գործել, Երուսաղէմից կապված մատնվեցայ Հռօ-
18 մայեցոց ձեռքը։ Նորանք երբոր ինձ դատեցին՝
կամեցան թող տալ, ինչուոր՝ ինձանում ընաւ
19 մին մեռնելոյ վնաս էլ չ'գտին։ Բայց երբոր Հը-
րէաները ներհակութիւն էին անում, պէտք էլաւ
որ ես դէպի կայսրը բողոքեմ. ո՛չ թէ որ իմ ազ-
20 գիցս մի չարախօսելոյ բան ունէի։ Այս պատճառ-
ներիս համար աղաչեցի ձեզ՝ որ տեսնեմ ձեզ և
խօսիմ. ինչուոր՝ Իսրայէլի յուսոյն համար ես այս
21 շղթայիս մէջն եմ։ Եւ նորանք ասացին նորան.
Մենք քեզ համար Հրէաստանից ո՛չ թուղթ ենք
ստացել՝ և ո՛չ էլ եղբարներից մինն եկաւ պատ-
22 մեց՝ կամ քեզ համար մին չար բան խօսեց։ Բայց
աղաչումենք որ քեզանից լսենք՝ թէ ի՛նչ խորհուրդ
ունիս. ինչուոր՝ այդ հերձուածին համար իսկ մեզ
յայտնի է, որ ամեն տեղ ներհակութիւն է քա-
23 շում։ Երբոր նորա հետ մին օր ժամանակ դրած

էին, շատ մարդիկ նորա մօտ եկին այն բնակարա-
նումը որ նորանց Աստուծոյ արքայութիւնը վկայ-
ութիւնով պատմումէր. և Յիսուսին համար նո-
րանց հաւանացնում, Մօսէսի օրէնքից ու մար-
24 գարէներից՝ առաւօտանց մինչև իրիկունը։ Եւ
մին քանիսը խօսքերին հաւանումէին, և կէսերը
25 չէին հաւանում։ Եւ իրար հետ չ'միաբանված՝ ար-
ձակվեցան, երբոր Պօղոս այն մին խօսքն ասաց.
թէ Սուրբ Հոգին Եսայի մարգարէի ձեռովը մեր
26 հարանց հետ լաւ խօսեց. Եւ ասաց. Գնա՛ ժողո-
վրդին մօտ՝ և ասա՛։ Դուք լսելով կ'լսէք՝ և չէք
իմանալ. և տեսնելով կ'տեսնէք՝ և չէք տեսնիլ։
27 Պատճառնոր՝ այն ժողովրդի սիրտը թանձրացաւ,
և իրենց ականջներովը, ծանր լսեցին, և իրենց
աչքերը խփեցին. որ ընաւ աչքով չ'տեսնեն՝ և
ականջներով չ'լսեն, և սրտով չիմանան՝ և յետ
28 դառնան, և ես բժշկեմ նորանց։ Եւ հիմիկ՝ յայտ-
նի լինի ձեզ՝ որ Աստուծոյ այս փրկութիւնս ու-
ղարկվեցաւ հեթանոսներին, և նորանք կ'լսեն։
29 Եւ երբոր սա ասաց՝ Հրէաները դուրս գնացին նո-
րանից. որ նորանք իրենց մէջ շատ վիճմունք ու-
նէին։

30 Եւ բոլոր երկու տարի, իրեն վարձքովը էլաւ
31 այնտեղ։ Եւ այն ամենին՝ որ նորա մօտ էին մըտ-
32 նում, ընդունումէր, Աստուծոյ արքայութիւնն
քարոզում, և Տէր Յիսուսի Քրիստոսի համար սո-
վորցնում անխափան ամեն համարձակութենով։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ողջոյն և առաջաբանութիւն. Աւետարանի հաւատքով արդարանալը Աստուծոյ առաջին. Հեթանոսաց ապականութիւնը վկայում է որ բնական օրէնքն ու նորա գործերը անզօր են ։

1 ՊՕՂՈՍ՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ կանչված
առաքեալ՝ Աստուծոյ աւետարանին համար ընտ-
2 րըված. Նա որ առաջուց խոստացաւ իրեն մար-
3 գարէներին ձեռովը սուրբ գրքերումը, Իրեն Որդոյ
համար՝ որ մարմնոյ կողմանէ Դաւթի զաւակից ե-
4 ղաւ ։ Եւ Աստուծոյ Որդին սահմանվեցաւ զօրու-
թենով՝ սրբութեան Հոգոյն կողմանէ՝ մեռելների
միջից յարութիւն առնելուցը՝ մեր Տէր Յիսուսի
5 Քրիստոսի համար. Որ նորանով ընդունեցինք շը-
նորհք և առաքելութիւն՝ որ հաւատքի հնազան-
դութիւնն ամեն հեթանոսներին մէջ հաստատվի
6 նորա անունին համար. Որ նորանց միջումը դուք
7 էլ Յիսուսի Քրիստոսի կանչված էք ։ Ձեզ ամե-
նիդ՝ որ Հռովմումն էք՝ Աստուծոյ սիրելիներիդ՝

կանչված սրբերիդ՝ շնորհք ձեզ հետ և խաղաղու-
թիւն Աստուած մեր Հօրից և Տէր Յիսուս Քրիս-
տոսից ։
8 Առաջ գոհանումեմ իմ Աստուածանիցս՝ Յի-
սուսի Քրիստոսի ձեռովը ձեզ ամենիդ համար. ին-
չուոր՝ ձեր հաւատքն ամեն աշխարհքի մէջ պատ-
9 մըված է ։ Աստուած ինձ վկայ է՝ որ նորան ես
պաշտումեմ իմ հոգովս՝ նորա Որդոյ աւետարա-
նովը՝ թէ ինչպէս ձեր յիշատակութիւնն անում-
10 եմ ։ Ամեն ժամանակ իմ աղօթքումս աղաչելով՝
որ լինի թէ մին անգամ յաջողվի ինձ՝ Աստուծոյ
11 կամքովը ձեզ մօտ գալ. Ինչուոր՝ շատ ցանկանում-
եմ ձեզ տեսնելոյ՝ որ մին հոգեւոր շնորհք ձեզ
12 վերայ դարձնեմ, ձեզ հաստատելոյ համար. Այ-
սինքն՝ որ ձեզ հետ մխիթարվիմ այս իմ և ձեր
13 հաւատքին համար՝ որ իրար հետ ունինք ։ Ե՛ղ-
բարք՝ չեմ կամենում որ դուք չ'գիտենաք, թէ
շատ անգամ յօժար էլայ՝ որ ձեզ մօտ գամ, այլ
մինչեւ հիմիկ արգելվեցայ. որ ձեր միջումն էլ մին
պտուղ գտնեմ ինչպէս որ ուրիշ հեթանոսներին
14 մէջ էլ ։ Պատճառնոր՝ ես Յունաց և Բարբարո-
սաց. իմաստուններին և անմիտներին պարտական
15 եմ ։ Այնպէս՝ որքան որ ձեռքիցս գալիս է՝ յօ-
ժար եմ ձեզ էլ, որ Հռովմումն էք՝ աւետարանը
քարոզելոյ,
16 Ինչուոր՝ աւետարանն ամօթ չե՛մ համարում.
պատճառնոր՝ Աստուծոյ զօրութիւն է այն ամենը
փրկելոյ համար՝ որ հաւատումեն, առաջ Հրէային՝
17 և յետոյ Հեթանոսին ։ Ինչուոր՝ Աստուծոյ արդա-
րութիւնը նորանով յայտնվումէ՝ հաւատքից հա-

ւատքի մէջ․ ինչպէս որ էլ գրված է․ թէ Արդա-
րը հաւատքից կապրի։
18 Պատճառնոր՝ Աստուծոյ բարկութիւնը երկնքից
կ՚յայտնվի մարդկանց ամեն ամբարշտութեան և
անիրաւութեան վերայ, որ ճշմարտութիւնն անի-
19 րաւութենով խափանումեն․ Նորահամար որ՝ Աս-
տուծոյ գիտութիւնը յայտնի է նորանցում․ ին-
20 չուոր՝ իսկ Աստուած յայտնեց նորանց։ Պատ-
ճառնոր՝ նորա աներեւոյթ բաները, որ է՝ նորա
միշտ լինելը և զօրութիւնը և Աստուածութիւնը
աշխարհքի սկզբից ստեղծվածներովս իմացվելով
տեսնվումեն, այնպէս որ բնաւ չ՚կարօղանան պա-
21 տասխան տալ։ Ինչուոր՝ Աստուծոյն ճանաչեցին,
այլ նորան Աստուծոյ պէս չ՚փառաւորեցին՝ կամ
շնորհակալ եղան․ բայց իրենց մտածմունքներումը
փչացան՝ և նորանց սրտերն անմտութենով խա-
22 ւարվեցան։ Իրենց անձները՝ որ իմաստունի տեղ էին
23 համարում, յիմարեցան։ Եւ չապականելի Աստու-
ծոյ փառքը փոխեցին ապականելի մարդոյ և թռ-
չունների և չորս ոտանիների և սողացողների պատ-
24 կերին նմանութեանը հետ։ Նորահամար Աստուած
նորանց մատնեց իրենց սրտերի ցանկութեան մէջ
որ պղծվին․ որ իրենց մարմիններն իրենց անձնե-
25 րումը խայտառակեն․ Նորանք որ Աստուծոյ ճըշ-
մարտութիւնը ստութեան հետ փոխեցին․ հնա-
զանդվեցան և պաշտեցին ստեղծվածներին, և ո՛չ
թէ Ստեղծօղին․ որ օրհնված է յաւիտեան․ ա-
26 մէն։ Նորահամար Աստուած մատնեց նորանց խայ-
տառակ ցանկութիւնների մէջ․ որ նորանց կա-
նայքը բնական գործածութիւնը փոխեցին անբնա-

27 կան գործածութեան հետ։ Այնպէս էլ որձ մար-
դիկը կանանց բնական գործածութիւնը թողին,
և իրենց ցանկութիւններովս իրար հետ բորբոքվե-
ցան․ որձ մարդ որձ մարդոյ հետ խայտառակու-
թիւն էին գործում, և այն փոխադարձն՝ որ ար-
ժան էր իրենց մոլորութեանն՝ իրենց անձներումն
28 ընդունումէին։ Եւ նորահամար որ չընտրեցին՝ Աս-
տուծոյն ճանաչել, Աստուած մատնեց նորանց ա-
նարգութեան մտքի մէջ որ անարժան բաներ գոր-
29 ծեն․ Այն լցվածներն ամեն անիրաւութենով,
պոռնկութենով, անզգամութենով, ագահութե-
նով, չարութենով, լի՛քն նախանձութենով, մար-
դասպանութենով՝, կռվով, խաբեբայութենով,
30 չարասրտութենով․ քսուներ, Բամբասօղներ, Աս-
տուածատօղներ, թշնամանք խօսօղներ, ամբար-
տաւաններ, գոռոզներ, չար բաներ հնարօղներ,
31 ծնօղներին անարգօղներ, Անմիտներ, խօսք չ՚պա-
հօղներ, անգութներ, անմարդիներ, անողորմներ․
32 Որ նորանք լաւ հասկանումէին Աստուծոյ իրա-
ւունքները, թէ նորանք որ այսպէսի բաներ են
գործում՝ մահի արժանաւոր են․ և չէ՛ թէ որ
մինակ սա անումեն, այլ և որ սա գործօղներին
կամակից են լինում։

ԳԼ. Բ

Հրէայք ալ հեթանոսաց պէս մեղաւոր են թէեւ պարծենում են Մօսէսի օրէնքովն ու թլփատութեամբ ։

1 Նորահամար դու առանց պատասխան տալոյ ես՝
ո՛վ մարդ, որ դատումես. պատճառ որ՝ ինչ բա-
նով որ քո ընկերիդ դատումես, նորանով քո ան-
ձըդ դատապարտումես. ինչու որ՝ դու էլ իսկ նոյն
2 բանն ես գործում՝ որ նորանով դատումես. Պատ-
ճառ որ՝ գիտումենք թէ Աստուծոյ դատաստանը
շիտակ է նորանց վերայ, որ այնպէսի բաներ են
3 գործում ։ Բայց՝ ո՛վ մարդ, որ դատումես նո-
րանց՝ որ այսպէսի բաներ են գործում, և դու իսկ
նոյնն ես գործում, միթէ կարծո՞ւմես՝ թէ դու
4 ազատ կ'մնաս Աստուծոյ դատաստանիցը ։ Միթէ
նորա քաղցրութեան մեծութիւնը և ներելն ու
երկայնամտութիւնը ո՛չ ի՞նչ կ'համարես. միթէ
չե՞ս գիտում, որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ
5 դէպի ապաշխարութիւն է տանում ։ Բայց դու քո
խստութենովդ և անզեղջ սրտովդ բարկութիւն ես
կիտում քո անձիդ համար՝ բարկութեան և Աս-
տուծոյ արդար դատաստանի յայտնութեան օրու-
6 մը. Նա որ ամեն մէկին իրենց գործքերին պէս հա-
7 տուցումն կ'տայ ։ Նորանց՝ որ համբերութենով
բարի գործքերի մէջ կացած են՝ և փառք և պա-
տիւ և չապականելի բաներ են ուզում, յաւիտե-
8 նական կեանքը. Բայց նորանց՝ որ հակառակող
են՝ և ճշմարտութենիցն ապստամբած՝ և անիրա-

ւութեան ետեւէն գնացած, բարկութիւն և սրտ-
9 մտութիւն ։ Նեղութիւն և վիշտք այն ամեն մար-
դոյ վերայ՝ որ չարութիւն է գործում. առաջ Հը-
10 րէային՝ և յետոյ հեթանոսին ։ փառք և պատիւ
և խաղաղութիւն այն ամենին վերայ՝ որ բարի է
գործում. առաջ Հրէային՝ և յետոյ հեթանոսին,
11 ինչու որ՝ Աստուծոյ մօտ երեսպաշտութիւն չ'կայ ։
12 Նորանք՝ որ օրէնքիցը դուրս մեղք գործեցին, էլ
օրէնքիցը դուրս կ'կորչին. և նորանք՝ որ օրէնքի
13 տակ մեղք գործեցին, օրէնքովը կ'դատվին ։ Պատ-
ճառ որ՝ չէ թէ նորանք՝ որ օրէնք լսող են՝ Աս-
տուծոյ առաջին արդար են, բայց օրէնք կատա-
14 րողները կարդարանան ։ Ուրեմն հեթանոսները՝ որ
օրէնքը չունին՝ երբոր բնութենով օրէնքին գործ-
քերն անեն, նորանք՝ որ օրէնքը չունին, իրենց
15 անձներին համար իսկ իրենք են օրէնք ։ Որ ցոյց
են տալիս թէ օրէնքի գործքը նորանց սրտերումը
գրված է՝ որ նորանց միտքն էլ վկայումէ, և նո-
րանց մտածմունքներն իրար յանդիմանումեն, կամ
16 թէ պատասխան են տալիս, Այն օրն՝ որ Աստ-
ուած մարդկանց ծածուկ բաները կ'դատէ՝ իմ
աւետարանիս պէս Յիսուսի Քրիստոսի ձեռովը ։
17 Ապա դու՝ որ Հրէայ անուանված ես, և օրէն-
քին վերայ յոյս ես դնում, և Աստուծով պար-
18 ծենում. Եւ նորա կամքը գիտումես, և նա որ
19 լաւն է ընտրում, և օրէնքիցն խրատված ես. Քո
անձիդ վերայ վստահութիւն ունիս՝ որ կուրերի ա-
20 ռաջնորդ լինիս՝ և խաւարվածների լոյս. Անմիտ-
ների խրատ տուող՝ տղաների վարդապետ. որ օ-
րէնքի գիտութեան և ճշմարտութեան կերպարան-

21 քըն ունիս ։ Ուրեմն դու՝ որ քո ընկերիդ սովորց-
նում ես, քո անձիդ չես սովորցնում՝ դու որ քա-
22 րոզում ես՝ թէ չ՚գողանան, գողանում ես. Որ ա-
սում ես՝ թէ շնութիւն չ՚գործեն՝ շնութիւն ես
գործում. դու որ կուքերիցը գարշում ես՝ սեղաննե-
23 րըն ես թալանում. Դու՝ որ օրէնքովը պարծենում
ես, օրէնքին դէմ գործելով Աստուծոյն անար-
24 գում ես ։ Ինչու որ՝ Աստուծոյ անունը ձեր պատճա-
ռովը հայհոյվում է հեթանոսներին մէջ, ինչպէս որ
էլ գրված է ։
25 Թլփատութիւնը շահաւոր է՝ թէ որ օրէնքը պա-
հես. ապա թէ որ օրէնքին դէմ գործես, քո թըլ-
26 փատութիւնդ անթլփատութիւն էլաւ ։ Բայց թէ
որ անթլփատութիւնն օրէնքի իրաւունքները պա-
հէ, չէ՞ որ նորա անթլփատութիւնը թլփատու-
27 թիւն կ՚համարվի ։ Եւ նա որ բուն անթլփատու-
թիւն է՝ օրէնքը կատարելով կ՚դատէ քեզ, որ
գրով և թլփատութենով օրէնքի դէմ գործող
28 ես. Պատճառնոր՝ ո՛չ թէ նա է Հրեայ՝ որ դրսի
երեւութով է, և ո՛չ թէ նա է թլփատութիւնն՝
29 որ մարմնով դրսի երեւութով է. Բայց նա՝ որ
ներսեւանց ծածուկ Հրեայ է, և սրտի թլփատու-
թիւնը հոգովը՝ և ո՛չ թէ գրով. որ նորա գովա-
սանքը ո՛չ թէ մարդկանցից է, այլ Աստուածա-
նից ։

ԳԼ. Գ

Արդարութիւնը հաւատքից է ։

1 Ապա ուրեմն՝ Հրէան ի՞նչ աւելի բան ունի,
կամ այն թլփատութենից ի՞նչ օգուտ է գալիս ։
2 Շատ բաներ՝ ամեն կողմանէ. առաջ իսկ նա որ
Աստուծոյ ավանդները նորանց հաւատացվեցան ։
3 Բայց ի՞նչ է. թէ որ մին քանիսը չ՚հաւատացին՝
միթէ նորանց անհաւատութիւնն Աստուծոյ հա-
4 ւատքը կ՚խափանէ՞. քա՛ւ լիցի ։ Ուրեմն թո՛ղ
Աստուած ճշմարիտ լինի՝ և ամեն մարդ սուտ.
ինչպէս որ էլ գրված է նորահամար. Որ արդար
լինիս քո խօսքերումդ, և յաղթես՝ երբոր դատ-
5 վիս ։ Բայց թէ որ մեր անիրաւութիւնն՝ Աստու-
ծոյ արդարութիւնը յայտնի երեւացնում է, էլ
ի՞նչ ասենք. միթէ անիրա՞ւ է Աստուած՝ որ
6 բարկութիւն է թափում ։ Մարդոյ կերպով եմ
ասում. քա՛ւ լիցի. ապա թէ չէ՝ Աստուած ի՞նչ-
7 պէս կ՚դատէ աշխարհքս ։ Ինչու որ՝ եթէ Աստու-
ծոյ ճշմարտութիւնն իմ ստութենովս աւելցաւ
նորա փառքին համար, էլ ինչո՞ւ ես մեղաւորի
8 պէս կ՚դատվիմ ։ Եւ կամ թէ՝ ինչպէս որ մենք
հայհոյվումենք, և ինչպէս որ մին քանիսն ասում
են մեզ համար՝ որ ասացինք, թէ չար գործենք՝
որ բարին գայ. որ նորանց դատաստանն արդար է ։
9 Եւ հիմիկ՝ ի՞նչ բանով աւելի ենք. իրաւի որ՝
բնաւ մին բանով էլ չէ. պատճառնոր՝ առաջ մե-
ղադրեցինք Հրեաներին և հեթանոսներին՝ որ ա-

10 մենքը մեղքին տակն են. ինչպէս որ էլ գրված
11 է, Թէ Արդար չ'կայ՝ բնաւ մինն էլ չէ. Եւ ո՛չ
ով չ'կայ՝ որ իմանայ, և ո՛չ ով չ'կայ՝ որ Աստու-
12 ծոյն խնդրէ: Ամենքը ճանապարհիցը դուրս գնա-
ցին՝ և անպիտան էլան. ո՛չ ով չ'կայ՝ որ քաղց-
րութիւն անէ. ո՛չ ով չ'կայ մինչեւ մինն էլ չը-
13 կայ: Նորանց կոկորդը բաց գերեզման է, և ի-
րենց լեզուներովը խաբեբայութիւն են անում. օ-
14 ձերի թոյնը նորանց պռօշներին տակն է: Նորանց
15 բերանը անէծքով և դառնութենով լիքն է: Նո-
րանց ոտները շուտագնաց են արիւն թափելոյ
16 համար: Կորուստ և թշուառութիւն է նորանց
17 ճանապարհներումը, Եւ խաղաղութեան ճանա-
18 պարհը չ'ճանաչեցին: Աստուծոյ վախը նորանց աչ-
19 քերին առաջին չէ: Բայց գիտումենք՝ թէ ամեն
ինչ որ օրէնքն ասէ՝ նորանց է ասում, որ օրէնքին
տակն են. որ ամեն բերան խըփվի, և ամեն աշ-
խարհք Աստուծոյ առաջին դատապարտելի լինի:
20 Պատճառնոր՝ օրէնքի գործքերիցը բնաւ մին մար-
մին չի արդարանալ նորա առաջին. ինչուոր՝ օ-
րէնքովը մեղքի գիտութիւն է լինում:
21 Բայց հիմիկ՝ իսկ առանց օրէնքին Աստուծոյ ար-
դարութիւնը յայտնված է՝ նա որ օրէնքիցն ու
22 մարգարէներիցը վկայված է: Պատճառնոր՝ Աստու-
ծոյ արդարութիւնը Յիսուսի Քրիստոսի հաւատքի-
ցըն այն ամենին վերայ է գալիս՝ որ հաւատումեն.
23 և բնաւ ջոկութիւն չ'կայ: Նորահամար որ՝ ամեն-
քը մեղանչեցին, և Աստուծոյ փառքիցը պակա-
24 վեցան: Եւ ձրի են արդարանում նորա շնորհքո-
վը՝ այն փրկութեան ձեռովը՝ որ Յիսուս Քրիստո-

25 սումն էլաւ. Որ Աստուած նորան առաջ դրաւ՝
քաւութիւն լինելոյ համար նորա արիւնովը հա-
ւատքի ձեռովը. որ իրեն արդարութիւնը ցոյց տայ՝
այն առաջուց գործված մեղքերի թողութեան հա-
26 մար. Երբոր Աստուած ներումէր՝ որ իրեն արդա-
րութիւնն երեւացնէ այս ժամանակումս. որ ինքն
արդար լինի, և արդարացնէ նորան՝ որ Յիսուսի
27 Քրիստոսի հաւատքիցն է: Ուրեմն հիմիկ ո՞րտեղ
մնաց պարծանքը. խափանվեցաւ. ո՞ր օրէնքով,
միթէ գործքերի՞ օրէնքովը. չէ՛. այլ հաւատքի
28 օրէնքովը. Պատճառնոր՝ համարումենք, որ մար-
դը հաւատքով է արդարանում առանց օրէնքի
29 գործքերին: Միթէ Աստուած մինակ Հրէաներին
է՝ և հեթանոսներին չէ՞. այո՛՝ հեթանոսներին էլ
30 է. Պատճառնոր՝ մին Աստուած է՝ որ թլփատու-
թիւնը հաւատքիցն արդարացնումէ՝ և ապա ան-
31 թլփատութիւնն էլ իսկ նոյն հաւատքովը: Ապա
միթէ օրէնքը խափանո՞ւմենք հաւատքովս. քա՛ւ
լիցի. բայց օրէնքն հաստատումենք:

ԳԼ. Դ

Հաւատքից արդարանալոյ վասը Աբրահամու օրինակիցը:

1 Ապա ի՞նչ ասենք՝ նա որ մեր նահապետ Աբրա-
2 համը գտաւ մարմնոյ կողմանէ. ինչուոր՝ եթէ Ա-
բրահամ գործքերովն արդարացած լինէր՝ իրաւի որ
պարծենալոյ պատճառ ունէր. բայց չէ թէ Աս-
3 տուծոյ առաջին: Սակայն գիրքն ի՞նչ է ասում.
Աբրահամ հաւատաց Աստուծոյն, և արդարու-

4 թիւն համարվեցաւ նորան ։ Բայց նորան՝ որ գործք
է անում, վարձքը չեն համարվում շնորհքի տեղ,
5 բայց պարտքի տեղ ։ Իսկ նորան՝ որ գործք չանէ՝
բայց հաւատայ նորան՝ որ ամբարիշտներն արդա-
րացնում է, նորա հաւատքն է համարվում արդա-
6 րութեան տեղ ։ Ինչպէս որ Դաւիթն էլ երանելի
է ասում այն մարդոյն՝ որ Աստուած նորան ար-
7 դարութիւն է համարում առանց գործքերի ․ Ե-
րանի՜ նորանց՝ որ նորանց անօրէնութիւնները թող-
8 վան, և նորանց մեղքերը ծածկվեցան ։ Երանի՜
է այն մարդոյն՝ որ Տէրը նորա մեղքերը նորան չի
9 համարիլ ։ Ապա այս երանութիւնս միթէ թլփա-
տութեան վերայ է՝ կամ թէ անթլփատութեան
վերայ ․ ինչուոր՝ ասումենք՝ թէ Աբրահամի հա-
10 ւատքն արդարութիւն համարվեցաւ ։ Ապա ի՞նչ-
պէս համարվեցաւ ․ երբոր թլփատութեանո՞ւմն էր՝
թէ դեռ որ անթլփատութեանումն էր ․ ո՛չ թէ թլ-
փատութեանումը ․ բայց անթլփատութեան ժամա-
11 նակումը ։ Եւ թլփատութիւնը նշանի տեղ առաւ՝
որ այն հաւատքի արդարութեանը կնիք լինի՝ որ
12 անթլփատութեանումն ունէր ․ Որ նա հայր լինի այն
ամեն հաւատացեալներին՝ որ անթլփատութենիցն
են՝ որ նորանց էլ համարվի արդարութիւնը ․ և
էլ թլփատութեան հայր՝ չէ թէ միայն նորանց՝
որ թլփատութենիցն են ․ բայց նորա՛նց էլ՝ որ այն
հաւատքի ճանապարհումն են գնում, որ մեր հայր
13 Աբրահամն անթլփատութեանումն ունէր ։ Պատճա-
ռընոր՝ ո՛չ թէ օրէնքումն էլան Աբրահամին և նո-
րա զաւակին այն աւետիքն որ աշխարհքի ժա-
ռանգ լինին, բայց հաւատքի արդարութենիցը ։

14 Ինչուոր՝ եթէ նորանք՝ որ օրէնքիցն են, ժառանգ
լինէին՝ ապա հաւատքն ունայն էր՝ և աւետիքը
15 դատարկ ։ Պատճառնոր՝ օրէնքը բարկութիւն է
գործում․ բայց որտեղ որ օրէնք չ'կայ՝ այնտեղ
16 էլ օրէնքի դէմ մեղք չ'կայ ։ Սորահամար հա-
ւատքիցն է՝ որ շնորհքովը լինի ․ որ աւետիքը հաս-
տատ լինի ամեն զաւակին համար ․ ո՛չ թէ միայն
նորա համար՝ որ օրէնքիցն է, բայց նորա համար
էլ՝ որ Աբրահամի հաւատքիցն է, որ նա մեր ամե-
17 նիս հայրն է ։ Ինչպէս որ էլ գրված է, թէ Շատ
ազգերի հայր կանեմ քեզ՝ Աստուծոյ առաջին ․
որ նա հաւատաց նորան՝ թէ մեռելները կենդանի
է անում՝ և չ'լինօղ բանը լինօղին պէս է կանչում,
18 Որ չ'յուսալու բանին մէջ յուսով հաւատաց՝ որ
նա շատ ազգերի հայր լինի ․ ինչպէս որ էլ ասվե-
19 ցաւ՝ թէ Այնպէս պիտի լինի քո զաւակդ ։ Եւ նա
չերկմտեցաւ հաւատքիցը, թէ և իրեն մարմինն
այնուհետև մեռածի պէս տեսաւ ․ ինչուոր հար-
իւր տարեկանի չափ էր, և Սառայի փորն էլ մե-
20 ռած ․ Բայց Աստուծոյ աւետիքին համար չերկմը-
տեցաւ անհաւատութենով, բայց հաւատքով զօ-
21 րացաւ, Աստուծոյ փառք տուաւ ։ Եւ իրեն մըտ-
քումը հաստատ դրաւ, թէ նա՝ որ նա խոստա-
22 ցաւ, կարօղ է անել ։ Նորահամար՝ արդարութիւն
համարվեցաւ նորան ։

23 Բայց նա՝ որ գրվեցաւ, ո՛չ թէ միայն նորա հա-
մար է՝ թէ նորան համարվեցաւ արդարութիւն,
24 Այլ մեզ համար էլ՝ որ մեզ պիտի համարվի ․ որ
մենք հաւատումենք նորան՝ որ մեր Տէր Յիսուս
25 Քրիստոսին յարոյց մեռելներիցը ։ Որ նա մատնը-

վեցաւ մեր մեղաց համար . և յարութիւն առաւ
մեղ արդարացնելոյ համար ։

ԳԼ. Ե

Հաւատքով արդարանալոյ պտուղները . Քրիստոս և Ադամ բաղդատված ։

1 Ուրեմն մենք՝ որ հաւատքովը արդարացած ենք ,
Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենանք՝ մեր Տէր
2 Յիսուսի Քրիստոսի ձեռովը , Որ նորանով էլ ըն-
դունեցինք հաւատքով մտնելն այս շնորհքիս մէջ
որ նորանում կացած ենք , և Աստուծոյ փառաց
3 յուսովը պարծենումենք ։ Եւ ո՛չ թէ մինակ այս-
չափ , բայց մեր նեղութիւններին համար էլ պար-
ծենումենք . ինչուոր՝ գիտումենք , որ նեղութիւն-
4 ները համբերութիւն են գործում , Համբերութիւ-
5 նը՝ փորձութիւն , փորձութիւնը յոյս ։ Յոյսը ըն-
նաւ մին ժամանակ չի ամաչացնում . պատճառն-
որ՝ Աստուծոյ սէրը փռված է մեր սրտերի մէջ
6 Սուրբ Հոգոյ ձեռովը՝ որ տվվաւ մեզ ։ Ինչուոր՝ երբ-
որ մենք դեռ տկար էինք՝ Քրիստոս մեզ համար
իրեն ժամանակին ամբարիշտներին վերայ մեռաւ ։
7 Ինչուոր դժուար կ'լինի՝ որ մին արդարի համար
մինը մեռնի . բայց մին բարի մարդոյ համար կ'լի-
8 նի , որ մինը համարձակվի մեռնիլ ։ Աստուած ի-
րեն սէրը մեզ վերայ յայտնեց , որ երբոր մենք
9 դեռ մեղաւոր էինք , Քրիստոս մեզ համար մեռաւ .
ապա ո՞րքան աւելի հիմիկ՝ որ արդարացանք նորա
արիւնովը՝ կ'փրկուինք նորանով այն բարկութե-

10 նիցը . Պատճառնոր՝ եթէ դեռ որ թշնամի էինք ,
Աստուծոյ հետ հաշտվեցանք նորա Որդոյն մահո
վը՝ էլ ո՞րքան աւելի՝ որ հաշտված ենք . կապրինք
11 նորա կեանքովը ։ Եւ ո՛չ թէ մինակ այսչափ , բայց
Աստուծով էլ ենք պարծենում՝ մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի ձեռովը , որ իսկ նորանով հիմիկ հաշ-
տութիւնն ընդունեցինք .
12 Պատճառնոր՝ ինչպէս որ մին մարդոյ ձեռովը
մեղքը մտաւ աշխարհքս և այն մեղքովը էլ մահը .
և այնպէս մահն ամեն մարդկանց վերայ փռվեցաւ ,
13 որովհետեւ ամենքը մեղանչեցին . Ինչուոր՝ մինչեւ
օրէնքը՝ մեղք կար աշխարհքումս , բայց մեղքը չի
14 համարվում որտեղ որ օրէնք չ'կայ ։ Այլ մահը
թագաւորեց Ադամիցը մինչեւ Մօսէս նորանց վե-
րայ էլ՝ որ Ադամի մեղքին նման չ'մեղանչեցին . որ
նա օրինակ է նորա համար՝ որ յետոյ գալու էր ։
15 Բայց շնորհքն այնպէս չէ՝ ինչպէս որ մեղքը . Ին-
չուոր՝ եթէ մինի մեղքովը շատ մարդիկ մեռան՝
էլ ո՞րքան աւելի Աստուծոյ շնորհքն ու պարգեւը
մին Յիսուս Քրիստոս մարդոյ շնորհքովը աւելացաւ
16 շատերի վերայ ։ Եւ պարգեւն այնպէս չէ՝ ինչպէս
նա որ մին մեղաւորիցն էլաւ . Ինչուոր՝ դատաս-
տանն այն մին մեղքիցը դատապարտութիւն բե-
րաւ . բայց շնորհքը շատ մեղքերիցն արդարու-
17 թեան մէջ է տանում ։ Պատճառնոր՝ եթէ մինի
մեղքին համար մահը թագաւորեց այն մինի ձեռո-
վը , ո՞րքան էլ աւելի նորանք , որ շնորհաց լիու-
թիւնն ու արդարութեան պարգեւներն առնեն ,
կեանքով կ'թագաւորեն՝ այն մին Յիսուսի Քրիս-
18 տոսի ձեռովը ։ Ապա ուրեմն՝ ինչպէս որ մինի մեղ-

քովն ամեն մարդկանց վերայ դատապարտութիւն
էկաւ, իսկ այնպէս էլ մինի արդարութենովն ամեն
19 մարդկանց վերայ կենաց արդարութիւն, ինչու որ՝
ինչպէս որ մին մարդու անհնազանդութենովը շատ
մեղաւորներ էլան, այնպէս էլ մինի հնազանդու-
20 թենովը շատ արդարներ կ'լինին ։ Բայց օրէնքը մէջ
ընկաւ՝ որ մեղքը շատանայ. ինչու որ որտեղ որ ա-
ւելի էլաւ մեղքը՝ այնտեղ էլ աւելի շատացաւ
21 շնորհքը, Պատճառնոր՝ ինչպէս որ մեղքը թագա-
ւորեց մահին ձեռովը, այնպէս էլ շնորհքը կ'թա-
գաւորէ արդարութենով յաւիտենական կեանքին
մէջ՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը ։

ԳԼ. Զ

Սրբութիւն և հնազանդութիւն իբրև պտուղ հաւատքով արդարանալոյ ։

1 Ուրեմն ի՞նչ պիտի ասենք. էլ աւելի՞ վարվինք
2 մեղքին մէջ, որ շնորհքը շատանայ ։ Քա՛ւ լիցի.
մենք որ մեռանք մեղքին, էլ ի՞նչպէս դեռ ապ-
3 րինք նորանում ։ Կամ թէ չէ՞ք գիտում՝ թէ մենք
ամենքս, որ Յիսուս Քրիստոսումը մկրտվեցանք՝ նո-
4 րա մահին մէջ մկրտվեցանք ։ Մկրտութենովը նորա
հետ թաղվեցանք մահի մէջ. որ ինչպէս Քրիստոս
Հօր փառքովը մեռելների միջից յարութիւն ա-
ռաւ, իսկ այնպէս էլ մենք նորոգված կեանքումը
5 ման գանք ։ Պատճառնոր՝ եթէ մենք նորա հետ
տնկվեցանք, որ նորա մահին նման լինինք. ապա
6 նորա յարութեանն էլ նման կ'լինինք ։ Սա գի-

տացէք, որ մեր հին մարդը նորա հետ խաչվեցաւ,
որ մեղաց մարմինը խափանվի, որ մենք էլ չ'ծա-
7 ռայենք մեղքին ։ Պատճառնոր՝ նա որ մեռնումէ՝
8 արդարացած է մեղքիցը ։ Բայց թէ որ Քրիստոսի
հետ մեռանք, հաւատումենք՝ որ նորա հետ կապ-
9 րինք էլ ։ Գիտումենք որ՝ Քրիստոս մեռելների մի-
ջից յարութիւն է առել. սորանից ետև չի մեռ-
10 նում, և մահը նորա վերայ էլ չի տիրում, ինչու-
որ՝ նա որ մեռաւ՝ մեղքին մեռաւ միանգամ, և
11 նա որ կենդանի է՝ Աստուծոյն է կենդանի ։ Իսկ
այնպէս էլ դուք ձեր անձներդ մեղքին մեռած
համարեցէ՛ք, և Աստուծոյն կենդանի մեր Տէր Յի-
12 սուսի Քրիստոսի ձեռովը, Սորահամար թո՛ղ մեղ-
քը չ'թագաւորէ ձեր մահկանացու մարմիններիդ
վերայ՝ որ նորա ցանկութիւններին հնազանդվէք ։
13 Եւ չ'լինի որ ձեր անդամներդ մեղքի անիրաւու-
թեանը զէնք պատրաստէք. բայց ձեր անձներդ
պատրաստեցէ՛ք Աստուծոյն՝ ինչպէս մեռելներիցը
կենդանի էլած, և ձեր անդամներդ արդարութեան
14 զէնք՝ Աստուծոյ համար ։ Ինչու որ՝ մեղքը չի տի-
րել ձեզ վերայ. պատճառնոր՝ օրէնքի ներքեւը
չէք, բայց շնորհքի ներքեւը ։
15 Ապա ի՞նչպէս. միթէ մե՞ղք գործենք՝ նորահա-
մար որ օրէնքի ներքեւը չենք՝ բայց շնորհքի ներ-
16 քեւը. քա՛ւ լիցի ։ Չէ՞ք գիտում, թէ ում որ
ձեր անձներդ ծառայ էք պատրաստում՝ նորան
հնազանդվելոյ համար, նորա ծառայ էք՝ որ հնա-
զանդվումէք նորան. թէ մեղքին՝ դէպի մահ, և
թէ արդարութեան հնազանդութեանը՝ դէպի կեան-
17 քը ։ Բայց շնորհակալութիւն Աստուծոյ. որ մեղ-

քի ծառայ էիք՝ և սրտով հնազանդվեցաք այն
վարդապետութեան օրինակին՝ որ նորան յանձնվե-
18 ցաք ։ Ապա ուրեմն դուք մեղքերից ազատված՝
19 ծառայեցէ՛ք արդարութեանը ։ Մարդկանց կեր-
պով կասեմ՝ ձեր մարմնոյ տկարութեան համար .
որ ինչպէս որ ձեր անդամներդ ծառայ պատրաս-
տեցիք պղծութեան և անօրէնութեան՝ անօրէնու-
թիւն գործելոյ համար , ճիշտ այնպէս էլ հիմիկ
ձեր անդամներդ ծառայ պատրաստեցէ՛ք արդարու-
20 թեանը՝ սրբութեան համար ։ Ինչուոր՝ երբոր մեղ-
21 քի ծառայ էիք՝ ազատ էիք արդարութենից ։ Ա-
պա ի՞նչ պտուղ ունէիք այն ժամանակը , որ նորա
համար հիմիկ ամօթ էք քաշում . Ինչուոր՝ նորա
22 վերջը մահն է ։ Բայց հիմիկ որ մեղքից ազատված
և Աստուծոյ ծառայ էք եղած՝ ձեր պտուղն նա ու-
նիք՝ որ սուրբ լինիք , և նորա վերջը յաւիտենա-
23 կան կեանքն է . Պատճառնոր՝ մեղքին պաշարը
մահն է , բայց Աստուծոյ շնորհքը՝ յաւիտենական
կեանք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը ։

ԳԼ. Է

Օրէնքից ազատութիւն . օրինաց ներգործութիւնը . ներքին և արտաքին մարդոյ պատերազմը ։

1 Միթէ չէ՞ք գիտում՝ եղբարք , (ինչուոր՝ օրէնք
գիտողներին հետ եմ խօսում) որ օրէնքը մարդոյ
վերայ տիրումէ՝ քանի ժամանակ որ նա կենդանի
2 է . Պատճառնոր՝ մարդ ունող կին՝ իրեն կենդանի
մարդոյն հետ կապված է օրէնքովը . բայց թէ որ

մարդը մեռնի՝ նա մարդոյ օրէնքիցը արձակված է ։
3 Ապա ուրեմն՝ քանի որ մարդը կենդանի է՝ նա շը-
նացող է կոչվում՝ թէ որ ուրիշ մարդոյ գնայ . և
թէ որ մարդը մեռնի , այն օրէնքից ազատ է՝ որ
4 չ՛համարվի շնացող՝ եթէ ուրիշ մարդոյ գնայ ։ Ու-
րեմն դուք էլ՝ եղբարք , Քրիստոսի մարմնովը մե-
ռաք օրէնքին՝ որ ուրիշի լինիք՝ նորան որ մեռելնե-
րի միջից յարութիւն է առել , որ պտուղ բե-
5 րենք Աստուծոյն ։ Ինչուոր՝ քանի որ մարմնով է-
ինք , մեղաց ցանկութիւնները՝ որ օրէնքովն էին՝
զօրանումէին մեր անդամներումը , որ մենք պտուղ
6 բերենք մահին ։ Բայց հիմիկ այն օրէնքից արձակ-
վեցանք . Ինչուոր՝ մեռանք նորան՝ որ նորանով
բռնված էինք , որ մենք հոգոյ նորոգութենովը ծա-
ռայենք՝ և ո՛չ թէ գրի հնութենովը ։
7 Ապա ի՞նչ ասենք . միթէ օրէնքը մե՞ղք է . քա՛ւ
լիցի . բայց մեղքը չէի գիտենալ՝ եթէ ո՛չ օրէնքո-
վը . և ցանկութիւնը չէի ճանաչել՝ թէ որ օրէնքը
8 չէր ասել՝ թէ Մի՛ ցանկանար ։ Մեղքը պատճա-
ռաւ պատուիրանքովը , և ինձանում ամեն ցան-
կութիւն գործեց . Ինչուոր՝ առանց օրէնքին մեղ-
9 քը մեռած էր ։ Եւ ես առանց օրէնքին մին ժա-
մանակով կենդանի էի . բայց երբոր պատուիրանքը
10 հասաւ ինձ , մեղքը կենդանի էլաւ ։ Եւ ես մե-
ռայ , և իսկ այն պատուիրանքը՝ որ կենաց համար
11 էր , ինձ մահի պատճառ էլաւ ։ Ինչուոր՝ մեղքը
պատճառ առած պատուիրանքովը խաբեց ինձ , և
12 նորանով սպանեց ։ Ուրեմն՝ օրէնքը սուրբ է՝ և
պատուիրանքն էլ սուրբ և արդար և բարի ։
13 Ապա միթէ նա՝ որ բարի է , ինձ համար մա՞հ

եղաւ. քա՛ւ լիցի. բայց մեղքը. որ երեւի թէ՝
մեղքը բարիովը ինձ մահ գործեց. որ մեղքն էլ
14 աւելի մեղաւոր լինի պատուիրանքի ձեռովը։ Գի-
տումենք՝ որ օրէնքը հոգեւոր է. բայց ես մարմնա-
15 ւոր եմ՝ մեղքին ներքեւ ծախված։ Ինչուոր՝ չեմ
գիտում ինչ որ գործումեմ. որ ոչ թէ ինչ որ
կամենումեմ՝ նա եմ գործում. բայց ինչ որ ա-
16 տումեմ՝ նա եմ գործում։ Ապա թէ որ՝ ինչ որ
չեմ կամենում՝ նա եմ գործում, օրինաց համար
17 վկայումեմ՝ թէ բարի է։ Ապա ուրեմն ո՛չ թէ ես
եմ գործում նա, բայց մեղքն՝ որ բնակված է ին-
18 ձանում։ Գիտումեմ որ ինձանում՝ այսինքն իմ
մարմնումս մին բարի բան բնակված չ'կայ. ինչու-
որ՝ կամք կայ ինձ մօտ, և բարին անելը չ'կայ.
19 Պատճառնոր՝ ո՛չ թէ բարին՝ որ կամենումեմ, ա-
նումեմ. բայց չարը՝ որ չեմ կամենում, նա եմ
20 գործում։ Ապա թէ որ նա՝ որ չեմ կամենում,
նա եմ անում. էլ ես չեմ անում, բայց մեղքն՝
21 որ ինձանում բնակված է։ Ուրեմն գտնումեմ նո-
րա օրէնքն՝ որ կամենումէ բարին անել ինձանում.
22 և չարն իմ առաջիս կայ։ Հաւանումեմ Աստու-
23 ծոյ օրէնքին՝ ներսի մարդովը, Բայց տեսնումեմ ու-
րիշ օրէնք իմ անդամներումս՝ որ իմ մտքիս օրէն-
քին դէմ հակառակ է կենում, և ինձ գերի է
բռնում այն մեղքին օրէնքովը՝ որ իմ անդամնե-
24 րումս է։ Ես մին խղճալի մարդ եմ՝ ո՞վ կապրե-
25 ցնէ ինձ այս մահի մարմնիցս։ Միայն թէ Աստու-
ծոյ շնորհքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը.
ուրեմն ես ինքս իմ մտքովս ծառայումեմ Աստու-
ծոյ օրէնքին, և մարմնովս մեղքի օրէնքին։

ԳԼ. Ը

Նոր ծնվածների ազատութիւնը և փորձը. որդեգրութեան հոգին. արարածոց հառաչանքը. արդարացածներին մխիթարութիւնը։

1 Թէ որ այդպէս է՝ բնաւ դատապարտութիւն չը-
կայ նորանց համար՝ որ Յիսուս Քրիստոսումն են՝
2 որ մարմնոյ պէս չեն վարվում։ Ինչուոր՝ կենաց հո-
գոյ օրէնքը Յիսուս Քրիստոսում՝ ազատեց ինձ
3 մեղքի և մահի օրէնքիցը. Պատճառնոր՝ նա որ
անկարելի էր օրէնքին. որովհետեւ տկար էր մարմ-
նոյ պատճառովը, Աստուած իւրեն Որդին ուղար-
կեց մեղաւոր մարմնոյ նմանութենովը և մեղքին
համար, և մեղքին դատապարտեց այն մարմնու-
4 մը, Որ օրէնքի արդարութիւնը կատարվի մեզա-
նում, որ մարմնոյն պէս չենք վարվում՝ բայց հո-
5 գոյն պէս։ Ինչուոր՝ նորանք որ մարմնոյն պէս են՝
մարմնոյ բաներն են մտածում. և նորանք՝ որ հո-
6 գոյն պէս՝ հոգոյ բաները. Պատճառնոր՝ մարմնոյ
մտածմունքը մահ է. և հոգոյ մտածմունքը՝ կեանք
7 և խաղաղութիւն։ Ինչուոր՝ մարմնոյ մտածմունքն
Աստուծոյ դէմ թշնամութիւն է. նորահամար որ՝
Աստուծոյ օրէնքին չի հնազանդվում, և չէ էլ
8 կարող. Պատճառնոր՝ նորանք՝ որ մարմնումն են,
9 չեն կարող Աստուծոյ հաճոյ լինել։ Բայց դուք
մարմնով չէք՝ այլ հոգով, թէ որ Աստուծոյ Հոգին
ձեզանում բնակված է. ապա թէ որ մինը Քրիս-
10 տոսի Հոգին չունի՝ նա նորանը չէ։ Բայց թէ որ

Քրիստոս ձեզանում է՝ ապա մարմինը մեռած է
մեղքին համար, և հոգին կենդանի է արդարու-
11 թեան համար։ Թէ որ նորա Հոգին՝ որ Յիսուսին
յարոյց մեռելներիցը՝ ձեզանում բնակված է, ա-
պա նա՝ որ Յիսուս Քրիստոսին յարոյց մեռելների-
ցը, ձեր մահկանացու մարմիններն էլ կ'կենդանա-
ցընէ իրեն Հոգովը, որ ձեզանում բնակված է։
12 Ուրեմն՝ եղբարք, պարտական ենք ո՛չ թէ մարմ-
13 նոյն՝ որ մարմնոյն պէս ապրինք․ Ինչուոր՝ եթէ
մարմնոյն պէս ապրիք՝ կ'մեռնիք․ բայց թէ որ հո-
14 գով մարմնոյ գործքերը սպանէք՝ կապրիք․ Պատ-
ճառնոր՝ նորանք որ Աստուծոյ Հոգովն են վար-
15 վում, նորանք Աստուծոյ որդիք են։ Ինչուոր՝ ծա-
ռայութեան հոգին չէք առել՝ որ նորէն վախենաք․
բայց որդեգիր լինելոյ հոգին էք առել, որ նորա-
16 նով աղաղակումենք՝ Աբբա, Հայր։ Իսկ այն Հո-
գին վկայութիւն է տալիս մեր հոգոյն, որ մենք
17 Աստուծոյ որդիք ենք։ Եւ թէ որ որդիք՝ ապա էլ
ժառանգներ․ Աստուծոյ ժառանգներ և Քրիստո-
սի ժառանգ ընկերներ․ թէ որ նորա չարչարանք-
ներին ընկեր լինինք՝ փառքին էլ մասնակից կ'լի-
նինք։
18 Ինձ այնպէս է երեւում՝ թէ այս ժամանակիս
չարչարանքները չեն արժանի այն նոր գալու փառ-
19 քին՝ որ մեզանում պիտի յայտնվի․ Ինչուոր՝ ըս-
տեղծվածների յոյսն Աստուծոյ որդոց յայտնու-
20 թեանն է սպասում․ Պատճառնոր՝ ստեղծվածները
հնազանդվեցան ունայնութեանը, ո՛չ թէ իրենց
կամքովը՝ բայց նորա համար՝ որ հնազանդացրուց
21 յուսով։ Ինչուոր՝ իսկ իրենք ստեղծվածներն էլ

ապականութեան ծառայութենիցը կազատվին՝ Աս-
22 տուծոյ որդոց փառաւոր ազատութեան պէս․ Պատ-
ճառնոր՝ գիտումենք՝ թէ ամեն ստեղծվածները
մինչեւ հիմիկ հառաչումեն՝ և սաստիկ ցաւի և
23 աշխատանքի մէջ են։ Եւ ո՛չ թէ մինակ այսքան․
բայց իսկ մենք էլ՝ որ Հոգոյ պտուղն ունինք, ինք-
ներս մեր անձներումս հառաչումենք՝ որովհետեւ
որդեգիր լինելոյն ենք սպասում․ մեր մարմնոյ ազա-
24 տութեանը։ Ինչու որ մենք յուսով ապրեցանք․
բայց յոյսն՝ որ տեսնվումէ, յոյս չէ․ պատճառն-
որ՝ այն բանն, որ մինը տեսնումէ՝ ի՞նչպէս էլ կը
25 յուսայ նորան։ Բայց թէ որ նա՝ որ չենք տես-
նում, նորան յոյս ունինք, ապա համբերութենով
26 սպասումենք․ Ճիշտ այնպէս էլ Հոգին ձեռն է
տալիս մեր տկարութեան․ ինչուոր՝ մենք չենք գի-
տում թէ ինչ բանի համար աղօթք անենք ինչպէս
որ արժան է․ բայց ինքը Հոգին անձայն հառա-
27 չանքով բարեխօս է լինում։ Իսկ նա՝ որ սրտերը
քննումէ, նա գիտումէ թէ ինչ է Հոգոյն խոր-
հուրդը․ ինչուոր Աստուծոյն վայելած կերպով
սրբոց համար բարեխօսումէ։
28 Բայց գիտումենք, որ նորանց՝ որ Աստուծոյն սի-
րումեն՝ նա ամեն բանի մէջ օգնական է լինում
դէպի բարին նորանց՝ որ հրաւիրելովը կանչվեցան․
29 Պատճառնոր՝ նորանց՝ որ առաջուց ճանաչեց, ա-
ռաջուց հրաւիրեց՝ որ նորա Որդոյ պատկերին նը-
ման լինին․ որ նա առաջինեկ լինի շատ եղբարնե-
30 րի մէջ։ Եւ նորանց՝ որ առաջուց հրաւիրեց, նո-
րանց էլ կանչեց․ և նորանց՝ որ կանչեց, նորանց
էլ արդարացրուց․ և նորանց որ արդարացրուց,

31 Նորանց էլ փառաւոր արաւ ։ Այս ի՞նչ ասենք
առաջամար . թէ որ Աստուած մեր կողմն է՝ էլ
32 ո՞վ կ'լինի մեզ հակառակ , Որ իրեն Որդուն էլ
չ'խնայեց՝ այլ մեզ ամենիս համար մատնեց նո-
րան . էլ ի՞նչպէս նորան հետ ամեն բան չի շնոր.
33 հիլ մեզ ։ Ո՞վ է նա՝ որ Աստուծոյ ընտրվածներին
վերայ մեղանդրանք կանէ . Աստուած է որ արդա-
34 րացնումէ ։ Ուրեմն ո՛վ է նա՝ որ մեզ կ'դատա-
պարտէ . Քրիստոս Յիսուս , որ մեռաւ՝ և աւելի
էլ որ իսկ ինքն յարութիւն առաւ և Աստուծոյ
աջ կողմն է , որ իսկ ինքն էլ մեզ համար բարե-
35 խօս է ։ Այս ո՞վ կ'բաժանէ մեզ Քրիստոսի սի-
րուցը . նեղութի՞ւն , թէ չարչարանք , թէ հալած-
մունք , թէ սով , թէ մերկութիւն , թէ վիշտ ,
36 թէ սուր . ինչպէս որ էլ գրված է , թէ քեզ հա-
մար ամեն օր մեռնումենք , և մորթվելու ոչխարի
37 պէս համարվեցանք ։ Բայց այս ամեն բաներումն
էլ աւելի յաղթումենք նորա ձեռովը՝ որ մեզ սի-
38 րեց . Պատճառնոր՝ հաստատ գիտումեմ , որ ո՛չ
մահ և ո՛չ կեանք , և ո՛չ հրեշտակներ և ո՛չ իշ-
խանութիւններ , և ո՛չ հիմիկվան բաներ և ո՛չ
39 յետոյ եկօղներ , և ո՛չ զօրութիւններ , Եւ ո՛չ
բարձրութիւններ և ո՛չ խորութիւններ , և ո՛չ մի
ուրիշ ստեղծված բան կարօղ է մեզ բաժանել
Աստուծոյ սիրուցը որ մեր Տէր Յիսուս Քրիստո-
սումն է ։

ԳԼ. Թ

Ընտրութիւնը կախված է Աստուծոյ շնորհքիցը ։

1 Ճշմարիտն ասումեմ Քրիստոսումը՝ և սուտ չեմ
ասում , որ նոյնը իմ խղճմտանքս էլ վկայումէ ինձ
2 Սուրբ Հոգումը , Որ սաստիկ տրտմութիւն ունիմ՝
3 և անպակաս ցաւ իմ սրտիս մէջ . ինչուոր՝ փա-
փաքելով խնդրումէի՝ որ իսկ ես ինքս նզոված լի-
նիմ Քրիստոսիցն իմ եղբարներիս և մարմնաւոր
4 ազգականներիս համար , Որ նորանք Իսրայելացի
են . որ նորանցն է որդեգիր լինելը , և փառքը , և
կտակարանները , օրէնսդրութիւնն ու պաշտօնը և
5 աւետիքը , Որ նորանցն են հարքը՝ որ նորանից էլ
Քրիստոսն է մարմնոյ կողմանէ՝ նա որ ամենին վե-
րայ է Աստուած , օրհնեալ յաւիտեանս . ամէն ։
6 Բնաւ կարելի չէ՝ որ Աստուծոյ խօսքը գետին ընկ-
նի . ինչուոր՝ ո՛չ թէ ամենքն որ Իսրայելիցն են՝
7 նորանք Իսրայելացիք են ։ Եւ ո՛չ թէ՝ նորանք որ
Աբրահամի զաւակ են՝ այն ամենքը որդիք են .
այլ Իսահակով քեզ համար զաւակ պիտի կանչ-
8 վի ։ Այսինքն՝ ո՛չ թէ նորանք որ մարմնոյ որդիք
են՝ Աստուծոյ որդիք են . այլ աւետիքի որդիքը
9 զաւակ կ'համարվին , Պատճառնոր՝ սա է յատուկ
աւետիքի խօսքը , թէ այս ժամանակումն կ'գամ
10 և Սառային որդի կ'լինի ։ Եւ ո՛չ թէ մինակ այս-
քան . բայց Հռեբեկան էլ մեր հայր Իսահակին
11 մին անկողնիցը յղանալով , Որ դեռ նորանք չէին
ծնված , և դեռ մին բարի կամ չար բան չէին

գործած . որ ընտրութեան պէս Աստուծոյ առա-
12 ջուց սահմանվածը հաստատ մնայ . Ո՛չ թէ գործ-
քերից՝ այլ նորանից՝ որ կանչեց , ասվեցաւ նո-
13 րան . Թէ Մեծը պիտի ծառայէ փոքրին . ինչպէս
որ էլ գրված է , թէ Յակոբին սիրեցի , և Եսաւին
ատեցի ։

14 Ապա ի՞նչ ասենք . միթէ Աստուծոյ մօտ անի-
15 րաւութի՞ւն կայ . քա՛ւ լիցի ։ Պատճառնոր՝ նա
Մօսէսին ասումէ . Կողորմիմ՝ ում որ՝ կողորմիմ,
16 և գթած կ'լինիմ՝ ում որ գթած կ'լինիմ ։ Ապա
նորանից չէ՝ որ կամենումէ և ո՛չ էլ նորանից՝ որ
վազումէ , բայց Աստուածանից՝ որ ողորմումէ ։
17 Պատճառնոր՝ գիրքն ասումէ փարաւօնին , թէ Նո-
րահամար դրդեցի քեզ՝ որ քեզանում ցոյց տամ
իմ զօրութիւնս , և իմ անունս ամեն երկրի մէջ
18 պատմվի ։ Ապա ուրեմն՝ ում որ կամենումէ՝ ողոր-
19 մումէ . և ում կամենումէ՝ պինդ է կենում ։ Ապա
լինի որ ասես թէ , Էլ նա ինչո՞ւ է մեղադրում՝
պատճառնոր՝ ո՛չ ով նորա կամքին հակառակ չի
20 կենալ ։ Ապա դու ո՞վ ես՝ մարդ՝ որ Աստուծոյն
պատասխան տաս . միթէ ստեղծվածը կասէ՞ իրեն
21 Ստեղծողին՝ թէ ինչո՞ւ այդպէս արիր ինձ ։ Միթէ
բրուտն իշխանութիւն չունի՞ հողին վերայ , որ
իսկ մին շաղախվածքից ամաններ շինէ՝ մինը՝ որ
22 պատուաւոր լինի , և միւսը՝ որ անարգ լինի ։ Ապա
թէ որ Աստուած կամենումէր ցոյց տալ բարկու-
թիւնը , և յայտնել իրեն զօրութիւնն՝ որ շատ
երկայնմտութեամբ համբերեց բարկութեան աման-
ներին՝ որ կորուստի համար պատրաստված էին .
23 Որ յայտնի ցոյց տայ իրեն փառաց մեծութիւնը՝

ողորմութեան ամաններին վերայ , որ նորանց պատ-
24 րաստեց փառաց համար . Որ նորանցում մեզ էլ
կանչեց , ո՛չ թէ միայն Հրէաներիցը , բայց հե-
25 թանոսներիցն էլ ։ Ինչպէս որ Յօսէէն ալ ասումէ .
Նա որ իմ ժողովուրդս չէ , ինձ ժողովուրդ կ'կան-
26 չեմ . և չ'սիրեցածը՝ սիրեցած ։ Եւ կ'լինի որ այն-
տեղն որ ասվեցաւ նորանց՝ թէ դուք իմ ժողո-
վուրդ չէք՝ այնտեղ նորանք կենդանի Աստուծոյ
27 որդիք կ'կոչվին ։ Եսային աղաղակումէ Իսրայէլի
համար . Թէ որ Իսրայէլի որդոց համար ծովի ա-
ւազին պէս շատ լինի՝ նորանցից քիչ մնացուք կ'մը-
28 նան . Պատճառնոր՝ մին կարճ և համառօտ բան
կ'կտրէ արդարութեամբ . Տէրն կարճ կանէ բանն
29 երկրի վերայ ։ Եւ ինչպէս որ Եսային ասումէ . Թէ
որ զօրութեանց Տէրը մեզ համար զաւակ չէր թո-
ղած , մենք Սոդոմին պէս կ'լինէինք և Գոմորին կը
նմանէինք ։

30 Ապա ի՞նչ ասենք . Նա որ հեթանոսներն՝ որ
արդարութեան ետեւէն չէին գնում՝ արդարու-
թեան հասին , այն արդարութեանն՝ որ հաւատքի-
31 ցըն է ։ Բայց Իսրայէլը՝ արդարութեան օրէնքի ե-
տեւէն էր գնում՝ և արդարութեան օրէնքին չը
32 հասաւ ։ Ինչո՞ւ համար . Նորահամար՝ որ ո՛չ թէ
հաւատքիցը , բայց օրէնքի գործքերիցը . պատճա-
ռընոր՝ նորանք գայթակղութեան քարին վերայ
33 գլորվեցան . Ինչպէս որ էլ գրված է . Ահա՛ ես
Սիօնին մէջ գայթակղութեան քար և գլորելոյ վէմ
եմ դնում . և ամեն ով որ կ'հաւատայ նորան՝ նա
չի ամաչիլ ։

ԳԼ. Ժ

Հրէից խստասրտութիւնը որ աւետարանի արդարութիւնն ու ընտրութիւնը չեն ճանաչում։

1 Եղբա՛րք՝ իմ սրտի կամքն ու դէպի Աստուած
2 աղօթքը նորանց համար նա է, որ փրկվին. ինչու-
որ՝ վկայում եմ նորանց՝ որ Աստուծոյ համար նա-
3 խանձ ունին՝ բայց գիտութենով չէ. Պատճառն-
որ՝ Աստուծոյ արդարութիւնն չեն գիտում, և իսկ
իրենցն են կամենում կանգնացնել. Նորահամար
որ Աստուծոյ արդարութեանը չ'հնազանդվեցան.
4 ինչուոր՝ Քրիստոսն է օրէնքին վախճանը որ արդար
լինի ամեն՝ ով որ հաւատում է նորան։
5 Մովսէս գրում է այն արդարութեան համար՝ որ
օրէնքիցն է, թէ որ մին մարդ նա անէ՝ կապրի
6 նորանով։ Բայց հաւատքի արդարութեանը համար
այսպէս է ասում. Զի՛ ասես քո սրտումդ, Ո՞վ
վերկելլի երկինքը՝ այսինքն՝ Քրիստոսն վէր բերելոյ
7 համար. կամ թէ՝ ո՞վ վէր կ'գայ անդունդը՝ այ-
սինքն՝ Քրիստոսին մեռելների միջիցը հանելոյ հա-
8 մար։ Բայց գիրքն ի՞նչ է ասում. Այն խօսքը մօ-
տիկ է քո բերանիդ, և քո սրտումդ է. այսինքն,
9 հաւատքի խօսքն՝ որ քարոզումենք։ Պատճառնոր՝
եթէ քո բերանովդ Յիսուսին Տէր դաւանես, և
քո սրտումդ հաւատաս՝ թէ Աստուած յարոյց
10 նորան մեռելներիցը՝ դու կապրիս։ Ինչուոր՝ սրտ-
տով հաւատումենք արդարանալոյ համար, և բե-
11 րանով դաւանումենք փրկվելոյ համար։ Պատճառն՝

գիրքն ասում է. Ամեն ով որ կ'հաւատայ նորան՝
12 չի ամաչիլ։ Ինչուոր՝ ջոկութիւն չ'կայ Հրէայի և
Հեթանոսի մէջ. նորահամար որ՝ ամենին իսկ մին
Տէր է, որ բաւական է ամենին համար՝ որ կան-
13 չումեն նորան։ Ինչուոր ամեն ով որ Տէրի անու-
նը՝ կ'կանչէ՝ կապրի։
14 Ապա ի՞նչպէս կանչեն նորան, որ չ'հաւատացին.
կամ ի՞նչպէս հաւատան նորան, որ չ'լսեցին.
15 կամ ի՞նչպէս լսեն, թէ որ մինը չ'քարոզէ. Կամ
ի՞նչպէս քարոզեն, թէ որ չուղարկվին. ինչպէս որ
էլ գրված է. Թէ ինչպէս գեղեցիկ են նորանց
ոտներն՝ որ խաղաղութիւն են քարոզում և բարի
16 բաների աւետիք են տալիս։ Բայց ամենքը հնա-
զանդ չէլան աւետարանին, ինչպէս որ Եսային ա-
17 սումէ. Տէ՛ր՝ ո՞վ հաւատաց մեր խօսքին։ Ուրեմն
հաւատքը լսելուցն է, և լսելը՝ Քրիստոսի խօսքի-
18 ցը։ Բայց ասումեմ. Միթէ չ'լսեցի՞ն. Իրաւի է
որ նորանց ձայնը դուրս գնաց բոլոր երկիրը, և
19 նորանց խօսքը մինչեւ աշխարհքի ծայրերը։ Բայց
ասումեմ. Միթէ Իսրայէլը չ'լսե՞ց. առաջ Մովսէսն
է ասում. Ես ձեզ նախանձաւոր կ'շինեմ մին ո՛չ
ինչ ժողովրդով, և մին անմիտ ազգով կ'կսկծացը-
20 նեմ ձեզ։ Բայց Եսային էլ աւելի համարձակվում
է և ասում. Ես գտվայ նորանցից՝ որ ինձ չէին
խնդրում. յայտնի էլայ նորանց՝ որ ինձ համար
21 չէին հարցնում։ Բայց Իսրայէլին ասում է. Ամեն
օր իմ ձեռս մեկնեցի դէպի անհաւատ և հակա-
ռակող ժողովուրդը։

ԳԼ. ԺԱ

Իսրայէլի մերժումն ու կրկին կենդանանալը ։

1 Ապա ասում եմ. Միթէ Աստուած դէ՞ն ձգեց ի-
րեն ժողովուրդը. քա՛ւ լիցի. ինչու որ՝ ես էլ Իս-
րայէլացի եմ՝ Աբրահամի զաւակից, Բենիամինի
2 ցեղից ։ Աստուած դէն չ՚ձգեց իրեն ժողովուրդն՝
որ նորան առաջուց ճանաչեց. կամ թէ չէ՞ք գի-
տում թէ գիրքն ի՞նչ է ասում Եղիայի համար.
թէ ի՞նչպէս նա Իսրայէլին դէմ ամբաստանում է
3 Աստուծոյ առաջին ։ Տէ՛ր՝ քո մարգարէներին կո-
տորեցին և քո սեղաններին կործանեցին. ես մի-
4 նակ մնացի, և իմ անձիս են ման գալիս ։ Բայց
պատասխանն ի՞նչ է ասում նորան. Եօթն հազար
մարդ՝ ասում է, թողի ինձ համար, որ Բահաղին
5 ծունր չ՚դրին ։ Ճիշտ այնպէս էլ այս ժամանակու-
միս շնորհքի ընտրութեան պէս մնացածներ էլան ։
6 Բայց թէ որ շնորհքով է՝ էլ գործքերից չէ. ա-
7 պա թէ չէ՝ շնորհքն էլ շնորհք չ՚լինիլ ։ Ապա ու-
րեմն՝ ինչ որ Իսրայէլը խնդրում էր՝ նորան չ՚հասաւ.
բայց ընտրվածները հասին, և միւսները կուրա-
8 ցան ։ Ինչպէս որ էլ գրված է. թէ Աստուած տը-
ուաւ նորանց թմրութեան հոգի. աչքեր՝ որ նո-
րանով չ՚տեսանեն, և ականջներ՝ որ նորանով չ՚լը-
9 սեն, մինչեւ այս օրվան ժամանակս ։ Եւ Դաւիթն
ասում է. Նորանց սեղանները թո՛ղ որոգայթ լի-
նին նորանց՝ և ակնատ և գայթակղութիւն՝ և նո-
10 րանց համար հատուցում ։ Թո՛ղ նորանց աչքերը

խաւարվին՝ որ չ՚տեսանեն. և նորանց թիկունքները
11 միշտ ծռացրո՛ւ ։ Ուրեմն ասում եմ. Միթէ նորա-
համա՞ր գլորվեցան՝ որ կործանվին. քա՛ւ լիցի.
բայց նորանց գլորվելովը հեթանոսների փրկութիւ-
12 նըն էլաւ՝ որ նախանձ ձգէ նորանց սիրտը ։ Բայց
թէ որ նորանց ընկնիլն աշխարհքի մեծութիւն է-
լաւ, և նորանց տակ ձգուիլը՝ հեթանոսների մե-
ծութիւն. էլ ո՞րքան աւելի նորանց լիութիւնը ։
13 Բայց ձեզ հեթանոսներիդ ասում եմ. քանի ժամա-
նակ որ հեթանոսների առաքեալ եմ՝ իմ պաշտօ-
14 նըս փառաւոր կանեմ, Որ լինի թէ՝ իմ մարմնովս
նախանձ ձգեմ նորանց սիրտը, և նորանցից մին
15 քանիսն ազատեմ ։ Պատճառն որ՝ թէ որ նորանց
երեսից ձգվիլը՝ աշխարհքի հաշտութիւն է. ապա
նորանց ընդունելութիւնն ի՞նչ է, եթէ ո՛չ կենդանի
16 լինիլ մեռելներից ։ Եւ թէ որ սկիզբը սուրբ է՝
ապա հունցվածն էլ. և թէ որ արմատը՝ ապա ճը-
17 ղերն էլ ։ Թէ որ ճղերից մին քանիսը փշրվեցան,
և դու որ վայրի ձիթենի էիր՝ նորանց վերայ պատ-
րուավեցար, և հաղորդ էլար արմատին՝ և ձիթե-
18 նոյ պարարտութեանը. Մի՛ պարծենար այն ճղե-
րին դէմ. ապա թէ որ պարծենաս՝ դու չես արմա-
19 տը վեր առնում, այլ արմատը՝ քեզ. Ուրեմն կ՚լի-
նի որ ասես, Ճղերը փշրվեցան՝ որ ես պատրուա-
20 վիմ ։ Լա՛ւ է. նորանք անհաւատութենով փշրը-
վեցան, և դու հաւատքով հաստատվեցար. մի՛
21 լինիր ամբարտաւան, այլ վախէ՛ ։ Ինչու որ՝ եթէ
Աստուած բնական ճղերին չ՚խնայեց, կ՚լինի որ
22 քեզ էլ չ՚խնայէ ։ Ուրեմն տե՛ս Աստուծոյ քաղց-
րութիւնը և սաստկութիւնը. կործանվածներին

վերայ սաստկութիւնը, և քեզ վերայ Աստուծոյ
քաղցրութիւնը, թէ որ դու խիկ այն քաղցրու-
թենումը կենաս. ապա թէ չէ՝ դու էլ կ'կտրվիս ։
23 Եւ նորանք թէ որ այն անհաւատութենումն էլ
չ'կենան՝ կ'պատրուսվին. ինչու որ՝ Աստուած կա-
24 րող է նորէն պատրուսել նորանց ։ Պատճառն որ՝
եթէ դու բնական վայրի ձիթենոյն կտրվեցար՝ և
բնութեան դէմ բարի ձիթենոյ վերայ պատրուս-
վեցար, էլ ո՞րքան աւելի նորանք՝ որ բնական են՝
25 կ'պատրուսվին իրենց ձիթենոյն վերայ ։ Չե՛մ կա-
մենում ե՛ղբարք՝ որ չ'գիտենաք այս խորհուրդս,
որ ձեր անձներումդ ձեզ իմաստուն չ'համարիք.
նա որ փոքր 'ի շատէ Իսրայէլին կուրութիւն էլաւ,
26 մինչեւ որ հեթանոսների լիութիւնը մտնէ ։ Եւ նո-
րանից ետեւ բոլոր Իսրայէլը կապրի. ինչպէս որ էլ
գրված է, թէ Սիօնից փրկիչ կ'գայ՝ և ամբա-
27 րշտութիւնները դէն կ'ձգէ Յակոբից ։ Եւ սա է
ուխտապայմանս՝ որ ես նորանց հետ կ'դնեմ՝ երբ-
28 որ նորանց մեղքերը վեր կառնեմ ։ Աւետարանին
մտիկ տալով նորանք թշնամի են ձեր պատճառո-
վը, ընտրութեան մտիկ տալով սիրելի են հարանց
29 համար ։ Պատճառն որ՝ Աստուծոյ շնորհքն ու կո-
30 չումը՝ զղջանալ չունի ։ Ինչու որ՝ ինչպէս որ դուք
էլ մին ժամանակ ապստամբված էիք Աստուածա-
նից՝ և հիմիկ ողորմութիւն գտիք նորանց ապըս-
31 տամբութենովը. ճիշտ այնպէս էլ նորանք հիմիկ
ապստամբ էլան ձեր ողորմութենովը. որ նորանք
32 էլ ողորմութիւն գտնեն ։ Պատճառն որ՝ Աստուած
ամենին անհաւատութեան մէջ արգելեց՝ որ ամե-
նին ողորմի ։

33 Ո՞վ Աստուծոյ մեծութեան և իմաստութեան
խորութիւնը. ի՛նչպէս անքննելի են նորա դատաս-
տանները, և անհասկանալի են նորա ճանապարհ-
34 ները ։ Պատճառն որ՝ ո՞վ գիտաց Տէրի միտքը,
35 կամ ո՞վ խորհրդի ընկեր կ'լինի նորան ։ Կամ
ո՞վ նորան փոխ տուաւ, որ նորա հատուցումն առ-
36 նէ նորանից ։ Պատճառն որ՝ նորանից և նորանով
և նորանում է ամեն բան. նորան փա՛ռք յաւի-
տեանս. ամէն ։

ԳԼ. ԺԲ

Յորդորանք սրբութեան, խոնարհութեան, շնորհաց պարգեւներն ուղիղ գործածելոյ, սիրոյ, հեզութեան և ուրիշ առաքինութեանց համար ։

1 Աղաչում եմ ձեզ ե՛ղբարք՝ Աստուծոյ ողորմու-
թենովը, որ ձեր մարմիններդ պատրաստէք կենդա-
նի սուրբ և Աստուծոյ ընդունելի պատարագ որ
2 նա ձեր բանաւոր պաշտօնը լինի ։ Եւ մի՛ կերպա-
րանվիք այս աշխարհքիս կերպարանքովը. բայց նո-
րոգվեցէ՛ք ձեր մտքի նորոգութենովը, որ դուք
քննէք նա՝ որ լաւն է. և թէ ի՞նչ է Աստուծոյ
3 կամքը՝ այն բարին և հաճելին և կատարեալն ։ Աս-
տուծոյ շնորհքովը՝ որ ինձ տըված է՝ սա եմ ա-
սում ամենին, որ ձեր միջումն է, որ բնաւ մին
բան չ'մտածէք նորանից աւելի, քան թէ նա որ
արժան է մտածելոյ. բայց որ մտածելումը պար-
կեշտ կենաք այնպէս՝ ինչպէս որ Աստուած ամեն
4 մէկին հաւատքի չափը բաժանեց ։ Ինչպէս որ մին

մարմնոյ մէջ շատ անդամներ ունինք, և այն ամէն
5 անդամները մին գործ չունին ։ Այնպէս էլ մենք
շատերս մին մարմին ենք Քրիստոսումը, բայց ա-
6 մեն մէկն իրար հետ անդամ ենք ։ Միայն թէ
կերպ կերպ շնորհքներ ունինք այն շնորհքին պէս՝
որ մեզ տուած է. եթէ մարգարէութիւն՝ հաւատ-
7 քի չափովը, Եթէ պաշտօն՝ պաշտամունքի չափո-
վը եթէ նա՛ որ սովորցնում է՝ վարդապետութեան
8 չափովը ։ Եթէ նա՛ որ մխիթարում է՝ մխիթարու-
թեան չափովը. նա որ առատաձեռն է՝ ուրախու-
թենով. նա որ վերակացու է՝ հոգս տանելովը. նա
9 որ ողորմութիւն է անում՝ ուրախ սրտով ։ Սէր՝
առանց կեղծաւորութեան. չարն ատեցէ՛ք, բա-
10 րոյն հետեւեցէք ։ Եղբայրսիրութենով իրար վե-
րայ գթա՛ծ էլէք. պատիւ տալով իրար առաջ
11 անցէ՛ք ։ Ջա՛նք անելովը՝ թո՛յլ չի՛ լինիք. հոգովը
12 ջերմեռա՛նդ էլէք, Տէրին ծառայեցէ՛ք. Յուսով
ուրախացէ՛ք, նեղութեան համբերեցէ՛ք, աղօթքին
13 խիստ հետեւեցէ՛ք ։ Սրբոց հարկաւոր լինող բանին
14 հաղո՛րդ էլէք. օտարասիրութեան հետեւեցէ՛ք ։ Ձեզ
անիծողներին օրհնեցէ՛ք, օրհնեցէ՛ք և մի՛ անի-
15 ծէք ։ Ուրախացողներին հետ ուրախացէ՛ք, և լաց
16 լինողներին հետ լա՛ց էլէք ։ Իրար հետ մին խոր-
հուրդ ունենաք. ամբարտաւան մի՛ լինիք, բայց
խոնարհներին հետ խոնարհվեցէ՛ք. ձեր անձներու-
17 մըդ ձեզ իմաստուն մի՛ համարէք ։ Մինին չարի
տեղ չար մի՛ հատուցանէք. ամէն մարդկանց ա-
18 ռաջին բարի խորհուրդ ունենաք ։ Եթէ կարելի
լինի ձեզ՝ ամէն մարդկանց հետ խաղաղութիւն ու-
19 նենաք ։ Ձեր անձներիդ համար վրէժխնդրութիւն

մի՛ անէք սի՛րելիներ, բայց բարկութեան տե՛ղ
տուէք. Ինչուոր՝ գրված է՝ թէ Վրէժխնդրութիւն
անելն իմն է. և ես հատուցումը կ'տամ, ասում է
20 Տէրը ։ Բայց թէ որ քո թշնամիդ սոված լինի՝ հա՛ց
տուր նորան. և թէ որ ծարաւ լինի՝ ջո՛ւր տուր
նորան. սա անելով կրակի կայծակներ կ'ժողովես
21 նորա գլխին վերայ ։ Մի՛ յաղթվիր չարից, այլ
բարիովը յաղթէ՛ չարին ։

ԳԼ. ԺԳ

*Հնազանդութիւն իշխանութեան. ընկերին դէմ պարտա-
կանութիւնք. լուսոյ մէջ վարք ։*

1 Ամեն անձն՝ որ իշխանութեան ներքեւ է՝ թո՛ղ
հնազանդութենով կենայ. պատճառնոր՝ իշխանու-
թիւնը ոչ մինից չէ, եթէ ո՛չ Աստուածանից. և
նորանք որ կան՝ Աստուածանից են կարգված ։
2 Ապա ուրեմն՝ նա որ իշխանութեանը հակառակ է
կենում՝ Աստուծոյ հրամանին է հակառակ կե-
նում. և նորանք՝ որ հակառակ են կենում՝ իրենց
3 անձներին համար դատաստան կընդունին ։ Ինչու-
որ՝ իշխանները բարի գործքերին վախի պատճառ
չեն, բայց չար գործքերին. կամենո՞ւմես որ այն
իշխանութենից չ'վախենաս, բարի գործք արա՛,
4 և նորանից գովասանք կընդունես ։ Պատճառնոր՝
նա Աստուծոյն պաշտօնեայ է քեզ համար դէպի
բարին. ապա թէ որ չարագործ լինիս՝ վախէ՛, ին-
չուոր՝ նա զուր տեղը սուրը չի կապել մէջքին.
նա Աստուծոյն սպասաւոր է՝ բարկութենով վրէժ-

խնդրութիւն անելոյ նորան՝ որ չարն է գործում։
5 Նորահամար պէտք է հնազանդ լինել՝ ո՛չ թէ մի-
նակ բարկութեան համար, բայց խղճմտանքին հա-
6 մար էլ։ Նորահամար հարկ էլ էք վճարում. ին-
չու որ՝ նորանք Աստուծոյ սպասաւորներ են՝ իսկ
7 այն բանին պարապվելոյ համար։ Ուրեմն ամենին
վճարեցէ՛ք ինչ պարտք որ կայ. ում որ հարկ՝
հարկը. ում որ մաքս՝ մաքսը. ում որ վախ՝ վախը.
ում որ պատիւ՝ պատիւը։
8 Եւ ո՛չ մինին պարտական չ'մնաք՝ նորանից ջոկ՝
որ իրար սիրէք. ինչու որ՝ նա որ ընկերը սիրում է՝
9 նա օրէնքը կատարում է։ Այն Մի՛ շնարը, և Մի՛
գողանարը, և Մի՛ սուտ վկայերը, և Մի՛ ցանկա-
նարը, և էլ ինչ որ ուրիշ պատուիրանք կայ, այն
խօսքումը ժողովված բոլորվումն, թէ Քո ընկերիդ
10 քո անձիդ պէս սիրէ։ Սէրն իրեն ընկերին չար չի
անիլ. օրէնքին բոլորվիլը՝ սէրն է։
11 Այս ժամանակիս համար սա էլ գիտացէ՛ք. որ
իսկ հիմիկ ժամանակն է՝ որ քնիցը զարթնենք.
պատճառնոր՝ հիմիկ մեզ աւելի մօտ է փրկութիւ-
նը՝ քան թէ այն ժամանակն՝ որ հաւատացինք։
12 Գիշերը հեռացաւ և ցերեկը մօտեցաւ. ուրեմն հե-
ռու անենք խաւարի գործքերը, և լուսոյ զէնքը
13 հագնենք։ Ինչպէս ցերեկումը պարկեշտ եղած ման
գանք. չ'լինի՛ որ անառակութենով և հարբեցու-
թենով և խառն պառկվածներով և պղծութիւն-
ներով, և չ'լինի՛ որ նախանձով և հակառակու-
14 թենով։ Բայց Տէր Յիսուս Քրիստոսին հագէ՛ք. և
մարմնոյ համար հոգս մի՛ անէք դէպի ցանկութիւն։

ԳԼ. ԺԴ

*Թէ ինչպէս պէտք է վարվիլ տկարահաւատին մօտ քրիս-
տոնէական ազատութիւնը գործածելիս։*

1 Բայց հաւատքի մէջ տկարացածներին ընդունե-
ցէ՛ք առանց տարակուսանք անելոյ խղճմտանքին։
2 Մինը հաւատում է՝ թէ ամեն բան կարող է ու-
3 տել. և նա որ հիւանդ է՝ բանջար կուտէ։ Նա՝
որ ուտում է, թո՛ղ չանարգէ նորան՝ որ չի ուտում.
և նա՝ որ չի ուտում, թո՛ղ չ'դատէ նորան՝ որ
ուտում է, ինչու որ Աստուած ընդունեց նորան։
4 Դու ո՞վ ես՝ որ ուրիշի ծառային դատես. իրեն
Տիրոջն է կենում՝ կամ ընկնում. բայց կ'կենայ,
5 ինչու որ Տէրը կարող է հաստատել նորան։ Մինը
պահում է օր օրի վերայ, և միւսը պահում է ամեն
օր. ամեն մէկը թո՛ղ իրեն մտքին ուղածն անէ։
6 Նա՝ որ օրին մտիկ է անում, Տէրին համար է մը-
տիկ անում. և նա՝ որ օրին մտիկ չի անում,
Տէրին համար մտիկ չի անում. և նա՝ որ ուտում
է, Տէրին համար է ուտում, և Աստուածանից
գոհանում. և նա՝ որ չի ուտում, Տէրին համար
7 չի ուտում, և Աստուածանից գոհանում։ Պատ-
ճառնոր՝ մեզանից մինը չ'կայ՝ որ ինքն իրեն համար
8 ապրի և ինքն իրեն համար մեռնի։ Թէ որ ապ-
րինք՝ Տէրին ենք ապրում, և թէ որ մեռնինք՝
Տէրին ենք մեռնում. ուրեմն թէ ապրինք և թէ
9 մեռնինք՝ Տէրին ենք։ Պատճառնոր՝ իսկ նորահա-
մար էլ Քրիստոս մեռաւ և կենդանացաւ՝ որ մե-

ռելներին և կենդանիներին վերայ առհասարակ
10 տիրապետէ ։ Դու ինչո՞ւ համար ես եղբօրդ դա-
տում, կամ ինչո՞ւ ես քո եղբօրդ անարգում.
ինչու որ՝ մենք ամենքս Քրիստոսի դատաստանի ա-
11 թոռի առաջին պիտի կենանք ։ Պատճառնոր՝ գըր-
ված է՝ թէ Ես կենդանի եմ, ասում է Տէրը. որ
ամեն ծունր ինձ պիտի չոքվի, և ամեն լեզու պի-
12 տի խոստովան լինի Աստուծոյն ։ Ուրեմն մեզանից
ամեն մէկն իրեն անձին կողմանէ պիտի համար տայ
13 Աստուծոյն ։ Սորա համար իրար չ'դատենք. բայց
աւելի սա դրէ՛ք ձեր միտքը, որ եղբօրը բնաւ
14 գայթակղութիւն չ'դնէք ։ Ես գիտեմ, և հաս-
տատ իմանում Յիսուս Քրիստոսումը՝ որ ո՛չ մին
բան պիղծ չէ իրենով. բայց ով որ մին բան պիղծ
15 կ'համարէ՝ նորա համար է պիղծ ։ Բայց թէ որ կե-
րակուրի պատճառով քո եղբայրդ տրտմում է, էլ
դու նորա հետ սիրով չ'վարվեցար. քո կերակու-
րովդ մի՛ կորցներ նորան, որ նորա համար Քրիս-
16 տոս մեռաւ ։ Չ'լինի որ ձեր բարի բանը հայհոյվի ։
17 Պատճառնոր՝ Աստուծոյ արքայութիւնը ուտելիք
և խմելիք չէ. բայց արդարութիւն և խաղաղու-
18 թիւն և ուրախութիւն Սուրբ Հոգովը ։ Ինչու որ՝
նա որ սորանում Քրիստոսին ծառայում է, Աստու-
19 ծոյն հաճոյ է, և մարդկանց պատուելի ։ Ապա
ուրեմն խաղաղութեան ետեւէն գնանք, և այն շի-
20 նութեան՝ որ իրար մէջ է ։ Կերակուրի պատճառո-
վը մի՛ քանդեր Աստուծոյ գործը. ամեն բան սուրբ
է. բայց չար այն մարդոյն համար՝ որ խղճմտան-
21 քով է ուտում նորան ։ Աւելի լաւ է՝ ո՛չ միս ու-
տել և ո՛չ գինի խմել, և ո՛չ այն բանն անել՝ որ

նորանով քո եղբայրդ գայթակղվում է կամ գըլոր-
22 վում կամ տկարանում ։ Դու հաւատք ունիս.
ապա քեզ առանձին բռնէ՛ Աստուծոյ առաջին.
երանի՛ է նորան՝ որ իրեն անձը չ'դատապարտէ նո-
23 րանով՝ որ ընկերին փորձում է ։ Բայց նա՝ որ խղճ-
մտանք է անում, թէ որ ուտէ՝ դատապարտված
է. ինչու որ հաւատքից չէ. բայց ամեն ինչ որ
24 հաւատքից չէ, մեղք է. Բայց նորան որ կարող
է ձեզ հաստատ պահել իմ աւետարանիս պէս,
և Յիսուսի Քրիստոսի քարոզութեան պէս, այն
խորհրդոյ յայտնութեան պէս՝ որ յաւիտենից ժա-
25 մանակից լուռ պահուած էր, Եւ հիմիկ մարգա-
րէից գրքերովը յայտնվեցաւ՝ յաւիտենական Աս-
տուծոյ հրամանին պէս, և հաւատքի հնազանդու-
թիւնը գործելոյ համար՝ ամեն հեթանոսների մէջ ի-
26 մացում տվվաւ. Այն միայն իմաստուն Աստու-
ծոյն՝ նորան փառք յաւիտեանս Յիսուսի Քրիստո-
սի ձեռովը. ամէն ։

ԳԼ. ԺԵ

Թէ հրէաներից և հեթանոսներից եղած քրիստոնեայք
ինչպէս պէտք է իրար յարգեն ։ Առաքեալին պաշ-
տօնը և ճանապարհորդելոյ դիտաւորութիւնը ։

1 Մենք որ կարող ենք՝ պէտք է որ տկարների տը-
կարութիւնը վեր առնենք, և մինակ մեր անձնե-
2 րին հաճոյ չ'լինինք ։ Այլ մեզանից ամեն մէկը թո՛ղ
հաճոյ լինի ընկերին դէպի բարին՝ շինութեան հա-
3 մար. Պատճառնոր՝ Քրիստոս էլ չէ թէ իրեն ան-

ձին հաճոյ ելաւ , բայց ինչպէս որ էլ գրուած է ,
թէ Քեզ նախատինք տուօղների նախատինքներն
4 ինձ վերայ ընկան ։ Բայց ինչ որ գրուեցաւ՝ մեր վար-
դապետութեան համար գրուեցաւ , որ համբերու-
թենով և գրքերի մխիթարութենովը յոյսն ընդու-
5 նինք ։ Բայց համբերութեան և ամեն մխիթարու-
թեան Աստուածը տայ ձեզ՝ որ իսկ մին մտածմունք
6 ունենաք իրար հետ՝ Յիսուսի Քրիստոսին պէս , Որ
միաբան մին բերանով փառաւոր անէք Աստու-
7 ծոյն , և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հօրը ։ Նո-
րահամար իրար ընդունեցէ՛ք , ինչպէս որ Քրիստոս
էլ ձեզ ընդունեց Աստուծոյ փառաց համար ։
8 Միայն թէ ասումեմ ձեզ . թէ Նա որ Քրիստոս
թլփատութեան սպասաւոր էլաւ՝ Աստուծոյ ճշշ-
մարտութեանն համար էր , որ հարանց էլած աւե-
9 տիքը հաստատէ ։ Բայց հեթանոսները ողորմու-
թեան համար փառաւորումեն Աստուծոյն , ինչպէս
որ էլ գրուած է . թէ Սորահամար կ'գոհանամ քե-
զանից հեթանոսներին մէջ , և քո անունիդ սաղ-
10 մոս կասեմ ։ Եւ նորէն՝ թէ Ուրախացէ՛ք ո՛վ հե-
11 թանոսներ նորա ժողովրդի հետ ։ Եւ նորէն՝ թէ
Օրհնեցէ՛ք Տէրին ամեն հեթանոսներ , և գովեցէ՛ք
12 նորա ամեն ժողովուրդներ ։ Եւ նորէն ասումէ Ե-
սային . Յեսսէից արմատ կ'լինի , և Նա որ հեթա-
նոսներին համար իշխան կ'կանգնի . նորա յոյս կը
13 դնեն հեթանոսները ։ Բայց յուսոյ Աստուածը լի՛-
քըն անէ ձեզ ամեն ուրախութենով և խաղաղու-
թենով , որ յուսով աւելանաք Սուրբ Հոգւոյ զօ-
րութենովը ։
14 Եւ ինքս էլ՝ իմ եղբա՛րքս՝ ձեզ համար հաստատ

եմ , որ դուք լիքն էք բարութենով . լիքն էք ամեն
15 գիտութենով , կարող էք իրար խրատել ։ Բայց հա-
մարձակվեցայ ե՛ղբարք՝ և փոքր 'ի շատէ գրեցի
ձեզ . իբր թէ ձեր մտքներդ բերելով այն շնորհքն՝
16 որ ինձ տուված է Աստուածանից , Որ ես Յիսուսի
Քրիստոսի սպասաւոր լինիմ հեթանոսներին մէջ .
Աստուծոյ աւետարանը ցանկալի անելոյ , որ հե-
թանոսների պատարագն ընդունելի լինի՝ Սուրբ
17 Հոգովը սրբուած ։ Սորահամար պարծանք ունինք Յի-
18 սուս Քրիստոսումն Աստուծոյ առաջին ։ Ինչուոր՝
չեմ համարձակվում մին բան խօսիլ՝ որ նորան Քը-
րիստոս չ'գործեց ինձանով՝ հեթանոսները հնազան-
19 դոցնելոյ համար՝ խօսքերով և գործքերով , Նշան-
ների և հրաշքների զօրութենով , Սուրբ Հոգւոյ զօ-
րութենով . ինչպէս որ ես Երուսաղէմից մինչև
Իլիւրիկացոց կողմերը Քրիստոսի աւետարանը լցրի ։
20 Այնպէս ջանք տրի աւետարանը քարոզել , չէ թէ
որտեղ որ Քրիստոսի անունն անուանվեցաւ՝ որ չը
լինի թէ իբր ուրիշի հիմունքի վերայ շինեմ . բայց
21 ինչպէս որ էլ գրուած է . Թէ նորանք որ նորանց
չի պատմված նորա համար՝ կ'տեսնեն , և նորանք
22 որ չեն լսել՝ միտք կառնեն ։ Սորահամար շատ ան-
23 գամ խափանվեցայ ձեզ մօտ գալուց , Բայց հիմիկ
ես այս կողմերումն էլ տեղ չունիմ . և շատ տա-
րուց ետև սաստիկ փափաք ունիմ՝ որ ձեզ մօտ
24 գամ ։ Երբոր կանցանեմ Սպանիա , յոյս ունիմ
որ դէպի նորանց անցանելոյ ժամանակը տեսնեմ
ձեզ . և ձեզանից ճանապարհ դնվիմ այն տեղ՝ ե-
թէ առաջ փոքր 'ի շատէ ձեզանով կշտանամ ։
25 Բայց հիմիկ Երուսաղէմ եմ գնում որ սրբերին

26 ծառայութիւն կատարեմ։ Պատճառնոր՝ Մակե-
դոնացոց և Աքայեցոց հաճոյ երեւեցաւ՝ որ մին
հաղորդութիւն անեն աղքատ սրբերին հետ՝ որ Ե-
27 րուսաղէմումն են ։ Հաճոյ երեւեցաւ, ինչուոր՝ իսկ
պարտական էլ են նորանց. պատճառնոր՝ եթէ
հեթանոսները նորանց հոգեւորին մասնակից էլան,
պէտք է՝ որ մարմնականին էլ մասնակից անեն նո-
28 րանց ։ Ուրեմն սա որ կատարեմ՝ և նորանց պտու-
ղըն իրեն տեղը դնեմ, կանցանեմ Սպանիա ձեր
29 միջովը ։ Սա գիտումեմ՝ որ երբոր ձեզ մօտ գամ,
Քրիստոսի աւետարանի առատ օրհնութենովը կը-
գամ ։

30 Աղաչումեմ ձեզ եղբարք՝ մեր Տէր Յիսուսի Քը-
րիստոսի ձեռովը և Հոգւոյ սիրովը, որ ինձ պատե-
րազմի ընկեր լինիք՝ ինձ համար աղօթք անելով
31 դէպի Աստուած, Որ փրկվիմ այն ապստամբներէ
ձեռքից՝ որ Հրէաստանումն են, և իմ ծառայու-
թիւնս՝ որ Երուսաղէմի մէջ եմ տանում՝ սրբերին ըն-
32 դունելի լինի, Որ ուրախութենով ձեզ մօտ գամ
Աստուծոյ կամքովը, և ձեզ հետ հանգիստ առ-
33 նեմ։ Եւ խաղաղութեան Աստուածը ձեզ ամենից
հետ լինի. Ամէն ։

ԳԼ. ԺԶ

*փիւբէի յանձնարարութիւնը. ողջոյններ. խրատ հերձուա-
ծողներից զգուշանալոյ համար. Աստուծոյ փառաբանութիւն։*

1 Յանձնումեմ ձեզ մեր փիփէ քոյրը, որ Կենքրա-
2 ցոց եկեղեցոյն սպասաւոր է, Որ նորան ընդունիք

Տէրով. ինչպէս որ սրբերին արժան է. և նորան
ձեռն տուող էլէք՝ ինչ հարկաւոր բանի համար որ
կանչէ ձեզ. պատճառնոր՝ նա էլ շատ մարդկանց
ձեռն ածաւ, և յատուկ ինձ էլ
3 Ողջո՛յն տուէք Պրիսկային և Ակիւղային՝ իմ
4 գործընկերներիս Քրիստոս Յիսուսումը Որ իմ ան-
ձիս տեղակ իրենց վզերն առաջ դրին, որ նորան-
ցից ո՛չ թէ մինակ ես եմ շնորհակալ՝ բայց հե-
5 թանոսների ամեն եկեղեցիներն էլ, Եւ նորանց
տանը լինող եկեղեցոյն էլ. ողջո՛յն տուէք Եպեն-
տին՝ իմ սիրելոյս՝ որ Ասիացոց պտուղն է Քրիս-
6 տոսումը. Ողջո՛յն տուէք Մարիային՝ որ շատ աշ-
7 խատանքով աշխատեց ձեր միջումը. Ողջո՛յն տուէք
Անդրոնիկէին և Յունէին՝ իմ ազգականներիս, և
գերութեան ընկերներիս. որ առաքեալներին մէջ
երեւելի են՝ որ նորանք հենց ինձանից առաջ Քը-
8 րիստոսումն էլան ։ Ողջո՛յն տուէք Ամպղեային իմ
9 սիրելոյս Տէրով ։ Ողջո՛յն տուէք Ուրբանէին՝ իմ
10 գործընկերիս Տէրով, և Ստաքէին իմ սիրելոյս ։ Ող-
11 ջո՛յն տուէք Ապելլին՝ որ ազնիւ է Տէրով Ողջո՛յն
տուէք նորանց՝ որ Արիստաբուլի տանիցն են. ող-
ջո՛յն տուէք Հերոդիոնին՝ իմ ազգականիս. ողջո՛յն
տուէք նորանց, որ Նարկիսէի տանիցն են՝ Տէրով ։
12 Ողջո՛յն տուէք Տրիփոնին և Տրիփոսին՝ աշխատա-
ւորներին Տէրով. ողջո՛յն տուէք Պերսիդէին սիրե-
13 լոյն՝ որ շատ աշխատանքով աշխատեց Տէրով ։ Ող-
ջո՛յն տուէք Ռուփային՝ որ ազնիւ է Տէրով. և նո-
14 րա և իմ մօրը ։ Ողջո՛յն տուէք Ասինկրիտին, Փը-
ղէնգոնտին, Երմէին, Պատրոբին, Երմին, և եղ-
15 բարներին՝ որ նորանց հետ են ։ Ողջո՛յն տուէք Փի-

լողոգին և Յուլիային և Ներէային և նորա Ողիմ-
պիա քվորը և ամեն սրբերին՝ որ նորանց հետ են ։
16 Ողջո՛յն տուէք իրար սուրբ համբուրովը . ողջոյն են
տալիս ձեզ Քրիստոսի ամեն եկեղեցիները ։
17 Աղաչում եմ ձեզ ե՛ղբարք . որ մտիկ տաք նո-
րանց՝ որ հերձուածներ և գայթակղութիւններ են
շինում այն վարդապետութենիցը դուրս՝ որ դուք
18 սովորեցիք և հեռո՛ւ քաշվեցէք նորանցից ։ Պատ-
ճառոր՝ այնպէսիները մեր Տէր Քրիստոսին չեն ծա-
ռայում , բայց իրենց փորին . և քաղցր խօսքերով
և օրհնութենով խաբում են անմեղների սրտերը ։
19 ինչուոր՝ ձեր հնազանդութիւնն ամենին հասաւ .
և սորահամար ուրախ եմ ձեզ համար . միայն թէ
ուզում եմ՝ որ դուք իմաստուն լինիք դէպի բարին՝
20 և անմեղ չարի կողմանէ ։ Եւ խաղաղութեան Աս-
տուածը կ՚խորտակէ սատանային ձեր ոտաց ներ-
քեւը շուտով . մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհ-
քը լինի՛ ձեզ հետ ։
21 Ողջո՛յն է տալիս ձեզ Տիմոթէոս եղբայրը և իմ
գործընկերս , և Ղուկիոս և Յասօն և Սոսիպատ-
22 րոս՝ իմ ազգականներս ։ Ողջոյն եմ տալիս ձեզ
ես Տերտիոսս էլ՝ որ այս թուղթս գրեցի Տէրովը ։
23 Ողջոյն է տալիս ձեզ Գայիոս՝ որ իմ և ամեն ե-
կեղեցոյ ընդունողն է . ողջոյն է տալիս ձեզ Երաս-
տոս՝ քաղաքիս հոգատարը , և Կուարտոս եղբայ-
24 րը ։ Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեզ ա-
մենից հետ . Ամէն ։
25 Բայց նորան՝ որ կարող է ձեզ հաստատ պահել
իմ աւետարանիս պէս՝ և Յիսուսի Քրիստոսի քա-
րոզութեան պէս . այն խորհրդոյ յայտնութեանը

պէս՝ որ յաւիտենից ժամանակիցը լուռ պահված
26 էր , Բայց հիմիկ մարգարէից գրքերովը յայտնուե-
ցաւ՝ յաւիտենական Աստուծոյ հրամանին պէս և
հաւատքի հնազանդութիւնն ամեն հեթանոսների
27 միջումն իմացում տվվաւ . Այն միայն իմաստուն
Աստուծոյն , նորան պատիւ և փառք յաւիտեանս
յաւիտենից Յիսուս Քրիստոսի ձեռովը . Ամէն ։

(Հռովմայեցւոց վերայ գրվեցաւ Կորնթոս քաղաքէցն,
Փեբէ սարկաւագի ձեռօք ։)

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Առաջաբանութիւն . խրատ միութեան ու խոնարհութեան համար . խաչին խօսքը ։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի կանչված առաքեալ՝
2 Աստուծոյ կամքովը , և Սօսթենէս եղբայր . Աս-

տուծոյ եկեղեցույդ՝ որ Կորնթոսումն է, Յիսուս Քը-
րիստոսումը սրբուածներիդ՝ կանչուած սրբերիդ՝ այն
ամենին հետ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անու-
նը կանչումեն ամեն նորանց և մեր տեղերումը։
3 Շնորհք ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր
Հօրից՝ և Տէր Յիսուս Քրիստոսից։
4 Ամեն ժամանակ գոհանումեմ իմ Աստուծա-
նիցս ձեզ համար, Աստուծոյ այն շնորհքներին հա-
5 մար՝ որ տուած են ձեզ Յիսուս Քրիստոսումը, Որ
ամեն բանի մէջ հարստացաք նորանով՝ ամեն խօս-
6 քով և ամեն գիտութենով։ Ինչպէս որ իսկ Աս-
տուծոյ վկայութիւնը հաստատուեցաւ ձեր միջումը,
7 Որ դուք չ'պակասիք ոչ մին շնորհքով էլ՝ և մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի յայտնութեանն սպասէք,
8 Որ նա էլ հաստատ կ'պահէ ձեզ մինչև վերջը՝ որ
անմեղ լինիք մինչև մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
9 օրը։ Հաւատարիմ է Աստուած՝ որ դուք նորանով
կանչուեցաք դէպի Նորա Որդոյ մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի հաղորդութիւնը։
10 Աղաչումեմ ձեզ եղբարք՝ մեր Տէր Յիսուսի Քը-
րիստոսի անունովը, որ ամենքդ իսկ մին խօսք ու-
նենաք, և հերձուածք չ'լինի ձեր միջումդ. ինչու-
որ՝ իսկ մին մտքի և մին կարծիքի մէջ հաստատ-
11 ուած էիք։ Եղբարք՝ ես այն Քղուացիներիցն իմա-
ցայ ձեզ համար՝ որ հակառակութիւններ կան ձե-
12 զանում։ Ուրեմն սա եմ ասում՝ որ ձեզանից ա-
մեն մէկն ասումէ՝ թէ Ես Պօղոսեան եմ, և միւսը՝
թէ Ես Ապողոսեան, և միւսը՝ թէ Ես Կեփասեան,
13 և միւսը՝ թէ Ես Քրիստոսեան։ Ապա ուրեմն բա-
ժանուա՞ծ է Քրիստոս. միթէ Պօղո՞ս խաչուեցաւ

ձեզ համար՝ կամ Պօղոսի՞ անունովը մկրտուեցաք։
14 Գոհանումեմ իմ Աստուածանիցս՝ որ ձեզանից մի-
նին չ'մկրտեցի. բայց միայն Կրիսպոսին և Գայիո-
15 սին. որ մինը չասէ, թէ դուք իմ անունովս մկրտ-
16 ուեցաք։ Ստեփանի տունն էլ մկրտեցի. մին, ու-
րիշը բնաւ չեմ գիտում, թէ մկրտեցի։
17 Պատճառնոր՝ Քրիստոս չուղարկեց ինձ մկրտե-
լոյ, բայց աւետարանը քարոզելոյ. ո՛չ թէ վար-
պետաբան խօսքերով, որ ունայն չ'լինի Քրիստոսի
18 խաչը. Ինչուոր՝ խաչի խօսքը կորածներին համար՝
յիմարութիւն է, բայց մեզ փրկուածներիս համար՝
19 Աստուծոյ զօրութիւն. Ինչուոր՝ գրուած է. թէ Ի-
մաստունների իմաստութիւնը կ'կորցնեմ, և խելա-
20 ցիների խորհուրդները կանարգեմ։ Էլ ո՞րտեղ կայ
իմաստուն, ո՞րտեղ կարդացող, ո՞րտեղ այս աշ-
խարհքիս քննող. չէ՞ որ Աստուած այս աշխարհ-
21 քիս իմաստունը յիմարացրուց։ Նորահամար որ՝
Աստուծոյ իմաստութենովս աշխարհք իմաստու-
թենով չ'ճանաչեց Աստուծոյն. Աստուած կամե-
ցաւ որ յիմար քարոզութենով ապրեցնէ հաւա-
22 տացեալներին։ Բայց որովհետև Հրէաները նշան
են ուզում, և Հեթանոսներն իմաստութիւն են
23 խնդրում. Մենք կ'քարոզենք խաչուած Քրիստոսին,
Հրէաներին համար գայթակղութիւն և Հեթանոս-
24 ներին համար յիմարութիւն. Բայց իսկ նոյն Հը-
րէաներին և Հեթանոսներին համար, որ կանչուած
են, Քրիստոսին [illegible] Աստուծոյ զօրութիւն
25 և Աստուծոյ իմաստութիւն. Պատճառնոր՝ Աս-
տուծոյ յիմարն աւելի իմաստուն է քան թէ մար-
դիկ. և Աստուծոյ տկարն աւելի զօրաւոր է քան

26 Թէ մարդիկ։ Եւ հենց ձեր կոչումը տեսէ՛ք ե՛ղ-
բարք, որ ո՛չ շատ իմաստուններ մարմնոյ կողմա-
նէ, և ո՛չ շատ զօրաւորներ, և ո՛չ շատ ազնուա-
27 կաններ. Բայց այս աշխարհքիս յիմարներին Աս-
տուած ընտրեց՝ որ ամօթ անէ իմաստուններին.
և աշխարհքիս տկարներին Աստուած ընտրեց՝ որ
28 ամօթ անէ զօրաւորներին. Եւ աշխարհքիս ցած
մարդկանց և անարգվածներին Աստուած ընտրեց՝
և ոչինչներին՝ որ մին բան լինօղներին ոչնչացնէ,
29 Որ ո՛չ մին մարմին չ՚պարծենայ Աստուծոյ առա-
30 ջին. ինչուոր՝ նորանից դուք էք Յիսուս Քրիստո-
սումն՝ որ Աստուածանից մեզ համար եղաւ իմաս-
տութիւն, արդարութիւն և սրբութիւն և փրկու-
31 թիւն, Որ ինչպէս որ էլ գրված է. Նա որ պար-
ծենումէ՝ թո՛ղ Տէրով պարծենայ։

ԳԼ. Բ

Աւետարանի պարզ քարոզութիւնը հոգով և զօրութեամբ. բարձրագոյն իմաստութիւնը։

1 Եւ ես էլ ե՛ղբարք՝ ձեզ մօտ եկի, ո՛չ թէ իմաս-
տութեան բարձր խօսքերով Աստուծոյ վկայութիւ-
2 նը ձեզ պատմելոյ. Պատճառնոր՝ միտքս չէի դը-
րած՝ մին ուրիշ բան գիտել ձեր միջումը՝ բայց
3 միայն Յիսուս Քրիստոսին և նորան խաչված։ Եւ
ես տկարութենով և շատ վախով և դողութենով
4 էլայ ձեզ մօտ։ Եւ իմ խօսքս և քարոզութիւնս՝
ո՛չ թէ իմաստութեան խաբեբայ խօսքերով էլաւ,
5 այլ Հոգոյ ներգործութենովն ու զօրութենովը, Որ

ձեր հաւատքը մարդկանց իմաստութենովը չ՚լինի՝
6 բայց Աստուծոյ զօրութենովը։ Իմաստութիւն ենք
խօսում կատարեալներին հետ, չէ թէ այս աշ-
խարհքիս իմաստութիւնը, և ո՛չ էլ այս աշխարհ-
7 քիս իշխաններինն՝ որ պիտի խափանվին։ Բայց Աս-
տուծոյ իմաստութիւնն ենք խօսում՝ ծածուկ խոր-
հրդով, որ Աստուած յաւիտենից առաջ սահմա-
8 նեց նորան մեր փառաց համար, Որ նորան այս աշ-
խարհքի իշխաններիցն ո՛չ ով չ՚ճանաչեց. ինչուոր՝
եթէ ճանաչած լինէին՝ էլ փառաց Տէրը բնաւ
9 խաչ չէին հանել։ Բայց ինչպէս որ էլ գրված է.
Ինչ որ աչք չ՚տեսաւ՝ և ականջ չ՚լսեց՝ և մարդոյ
սիրտը չընկաւ՝ նա պատրաստեց Աստուած իրեն
10 սիրօղներին համար։ Բայց մեզ Աստուած յայտ-
նեց իրեն Հոգովը. ինչուոր՝ Հոգին ամեն բան քըն-
11 նումէ, և Աստուծոյ խոր բաներն էլ։ Պատճառն
որ՝ մարդկանցից ո՞վ է նա՝ որ մարդոյ բանը գի-
տենայ՝ եթէ ո՛չ մարդոյ հոգին, որ նորանում է.
այնպէս էլ Աստուծոյ բանն ո՛չ ով չի գիտում,
12 եթէ ո՛չ Աստուծոյ Հոգին։ Բայց մենք ո՛չ թէ
այս աշխարհքիս հոգին առինք, այլ այն Հոգին՝
որ Աստուածանից է. որ ճանաչենք այն շնորհքն՝
13 որ Աստուածանից տվվաւ մեզ։ Որ սա էլ խօսում
ենք՝ չէ թէ մարդկանցից սովորած վարպետաբան
խօսքերով, բայց Հոգոյ վարդապետութենովը՝ հո-
գևորները հոգևորներին հետ համեմատումենք.
14 Պատճառնոր՝ մարմնաւոր մարդն Աստուծոյ Հոգոյ
բաները չի ընդունում. ինչուոր՝ յիմարութիւն է
նորա առաջին. և չի կարօղ գիտել՝ որ հոգևոր
15 կերպով պէտք է քննվի։ Բայց հոգևոր մարդն ա-

մեն բան քննում է և ինքն ո՛չ մինից էլ չի քննը-
16 վում։ Ապա ո՞վ է որ Տէրի միտքը գիտաց, որ
բան սովորցնէ նորան․ բայց մենք Քրիստոսի միտքն
ունինք։

ԳԼ․ Գ

Սովորցնողները պաշտօնեաներ, մշակ և շինողներ են․
բայց փրկութեան տէրն ու հիմը Քրիստոսն է։

1 Եւ ես եղբարք՝ չ՛կարացի ձեզ հետ խօսել ինչ-
պէս հոգևորների հետ, այլ ինչպէս մարմնաւորնե-
2 րի հետ ինչպէս տղաներին Քրիստոսումը՝ կաթը
տուի ձեզ ուտել և չէ թէ կերակուր․ ինչուոր՝
դեռ չէիք կարող, և իսկ հիմիկ էլ կարող չէք․
3 Նորահամար որ դեռ մարմնաւոր էք։ Որովհետև
դեռ հիմիկ կռիւ և նախանձ կայ ձեզանում․ չէ՞
որ մարմնաւոր էք՝ և մարդկանց կերպով էք վար-
4 վում։ Երբոր ձեզանից մինն ասում է՝ թէ Ես Պօ-
ղոսեան եմ, և միւսը՝ թէ Ես Ապողոսեան․ չէ՞
որ դուք մարդիկ էք․ ապա ո՞վ է Պօղոսը կամ
5 ո՞վ է Ապողոսը։ Պաշտօնեաներ են՝ որ նորանց ձե-
ռովը հաւատացիք․ և ամեն մէկն՝ ինչպէս որ Տէրը
6 տուաւ։ Ես տնկեցի․ Ապողոսը ջուր տուաւ, բայց
7 Աստուած մեծացրուց։ Ուրեմն ո՛չ նա՝ որ տնկեց,
մին բան է․ և ո՛չ նա՝ որ ջուր տուաւ․ բայց Աս-
8 տուած որ մեծացրուց։ Նա՝ որ տնկեց և նա՝ որ
ջուր տուաւ, մին են․ բայց ամեն մէկն իրեն վարձ-
9 քը կառնէ իրեն աշխատանքի չափովը։ Ինչուոր՝
մենք Աստուծոյ գործընկեր ենք․ դուք Աստուծոյ

10 գործն էք, Աստուծոյ շինվածն էք։ Աստուծոյ շը-
նորհքի չափովն՝ որ ինձ տվված է, իմաստուն ճար-
տարապետի պէս հիմն դրի․ բայց ուրիշն է՝ որ շի-
նում է․ միայն թէ ամեն մէկը լաւ մտիկ տայ՝ թէ
11 ինչպէս շինէ․ Ինչուոր՝ ո՛չ ով ուրիշ հիմունք չէ
կարող դնել՝ քան թէ նա որ դրուած է, որ է
12 Յիսուս Քրիստոսը։ Թէ որ մինն այս հիմունքիս վե-
րայ շինէ ոսկի, արծաթ, ազնիւ ակունքներ,
13 փայտ, խոտ, եղէգ, Ամեն մէկի գործքը պիտի
յայտնվի․ ինչուոր՝ օրը կերևացնէ․ ինչուոր՝ կրա-
14 կով պիտի յայտնվի։ Եւ ամեն մէկի գործքը թէ
15 ի՞նչպէս է՝ կրակը կ՛փորձէ։ Թէ որ մինի գործքը՝ որ
շինեց, հաստատ կենայ՝ վարձք կառնէ․ և թէ որ
մինի գործքն այրվի՝ վնաս կ՛քաշէ, բայց ինքն կապ-
16 րի․ բայց այնպէս՝ ինչպէս որ կրակով։ Չէ՛ք գի-
տում՝ որ դուք Աստուծոյ տաճար էք, և Աստու-
17 ծոյ Հոգին բնակված է ձեզանում։ Թէ որ մինն
Աստուծոյ տաճարն ապականէ, նորան էլ Աստուած
կապականէ․ ինչուոր՝ Աստուծոյ տաճարը սուրբ է՝
որ նա դուք էք։

18 Զ՛լինի՛ որ մինն իրեն անձը խաբէ․ թէ որ ձե-
զանից մինը կամենայ իմաստուն լինել այս աշ-
խարհքումս, թո՛ղ նա յիմար լինի՝ որ իմաստուն
19 լինի․ Պատճառնոր՝ այս աշխարհքիս իմաստութիւ-
նը յիմարութիւն է Աստուծոյ առաջին․ ինչուոր՝
գրված է՝ Բէ իմաստուններին կ՛բռնէ իրենց խորա-
20 գիտութեան մէջ։ Եւ դարձեալ թէ Տէրը ճանա-
նաչում է իմաստունների մտածմունքներն, որ ու-
21 նայն են․ Ուրեմն՝ չ՛լինի որ մարդկանցից մինը պար-
22 ծենայ․ Պատճառնոր՝ ամեն բան ձերն է․ թէ Պօ-

ղոս, թէ Ապողոս, թէ Կեփաս, թէ աշխարհք,
թէ կեանք, թէ մահ, թէ հիմիկ լինողը և թէ նոր
23 գալու բաները. ամեն բան ձերն է, Դուք Քրիս-
տոսին և Քրիստոս Աստուծոյն ։

ԳԼ. Դ

Քրիստոսի պաշտօնեաներին մասին սխալ գաղափարներ. առաքելոց խոնարհութիւնն ու չարչարանքը. հայրական խրատ ու սպառնալիք ։

1 Թո՛ղ մարդիկ այսպէս համարեն մեզ՝ ինչպէս Քը-
րիստոսի պաշտօնեաները և Աստուծոյ խորհուրդնե-
2 րի տնտեսները ։ Հիմիկ տնտեսների միջումը նա են
3 խնդրում՝ որ մինը հաւատարիմ գտնվի ։ Բայց ինձ
համար սա էլ հեշտ բան է՝ որ ձեզանից դատվիմ՝
կամ ոչ մին մարդուց. ես էլ չեմ քննում իմ
4 անձս, ինչուոր՝ իմ անձիս համար բան չեմ գի-
տում. բայց ո՛չ թէ սորանով արդարանումեմ.
5 պատճառնոր՝ նա՝ որ ինձ քննումէ, Տէրն է ։ Սո-
րահամար՝ ժամանակից առաջ մի՛ դատէք. մին-
չեւ որ Տէրը կ'գայ՝ որ խաւարի ծածուկ բաները
լուսոյ մէջ կ'բերէ, և սրտերի խորհուրդները կը
յայտնէ. և ապա ամեն մէկին գովասանք կ'լինի
Աստուածանից ։
6 Այս բանը ե՛ղբարք՝ իմ անձիս և Ապողոսին վե-
րայ առակով ասացի՝ ձեզ համար. որ մեզանից
սովորիք գրվածքից աւելի բան չիմանալ. որ չ'լի-
նի թէ մարդ ընկերի վերայ հպարտանայ ընկերի
7 պատճառովը ։ Ապա ո՞վ է՝ որ քեզ կ'քննէ. ի՞նչ

ունիս դու՝ որ նա չես առել. և թէ որ առելես՝
ինչո՞ւ ես պարծենում չառածի պէս ։
8 Իսկ հիմիկ կշտացելէք՝ և իսկ հիմիկ հարստա-
ցաք, առանց մեզ թագաւորեցիք. և երանի՛ թէ
թագաւորէիք, որ մենք էլ ձեզ հետ թագաւո-
9 րէինք ։ Ինձ այսպէս է երեւում՝ թէ Աստուած մեզ
առաքեալներիս շատ յետին արաւ՝ մահապարտնե-
րի պէս. ինչուոր աշխարհքի տեսարան էլանք, հը-
10 րեշտակաց էլ՝ մարդկանց էլ ։ Մենք յիմար Քրիս-
տոսի համար, և դուք՝ իմաստուն Քրիստոսումը.
մենք տկար՝ և դուք զօրաւոր. դուք փառաւորված
11 և մենք անարգված ։ Մինչեւ այս օրվան ժամանա
կըս սովեցինք և ծարաւեցինք, և մերկ գնացինք
և գլխներս զարկվեցաւ և հանգստութիւն չ'գտինք ։
12 Եւ աշխատեցինք մեր ձեռներովս. բամբասումէին
մեզ՝ և մենք օրհնումէինք, հալածումէին՝ և մենք
13 սիրով համբերումէինք ։ Հայհոյումէին՝ և մենք ա-
ղաչանք էինք անում. ինչպէս խայտառակութեան
օրինակ էլանք ամեն աշխարհքին՝ մինչեւ հիմիկ
14 ջնջոց լինելով ամեն մարդկանց առաջին ։ Չէ թէ
ձեզ ամօթ անելոյ համար եմ սա գրում. բայց
15 ինչպէս իմ սիրելի որդիքներս խրատումեմ ։ Թէ և
հազարաւոր վարդապետներ ունենաք Քրիստոսումը՝
բայց ո՛չ թէ շատ հարք. ինչուոր Յիսուս Քրիս-
16 տոսումն ես ծնայ ձեզ աւետարանովը, Ուրեմն ա-
ղաչումեմ ձեզ՝ որ ինձ նմանող լինիք, ինչպէս որ
17 ես էլ Քրիստոսի ։ Նորահամար Տիմոթէոսին ու-
ղարկեցի ձեզ մօտ, որ իմ սիրելի և հաւատարիմ
որդիս է Տէրով. որ ձեր մտքներդ բերէ իմ ճանա-
պարհներս՝ որ Յիսուս Քրիստոսումն են. ինչպէս որ

ամեն տեղ ամեն եկեղեցիներումը սովորցնումեմ,
18 Մի՛ն քանիսն ամբարտաւանութենով պարծենում
19 են՝ իբր թէ ես չ'պիտի գամ ձեզ մօտ ։ Բայց կը-
գամ այս մօտիկ ժամանակներումս՝ թէ որ Տէրն
կամենայ ․ և միտքս կառնեմ՝ ո՛չ թէ գոռոզա-
20 ցածների խօսքերը՝ բայց զօրութիւնը ․ ինչու որ՝ Ա-
ստուծոյ արքայութիւնն ո՛չ թէ խօսքերով է՝ բայց
21 զօրութենով ։ Ապա ի՞նչպէս էք կամենում, գաւա-
զանո՞վ գամ ձեզ մօտ, թէ սիրով և հեզութեան
ու արդարութեան ու խոնարհութեան հոգովը ։

ԳԼ․ Ե

*Պոռնկութեան պատիժ ․ խմորը հանել դէն ձգել ․ մեղ-
ներից բաժանուիլ ։*

1 Եւ ձեր միջումը ինչո՞ւ է պոռնկութիւն բնաւ
անուանվում, և այնպէսի պոռնկութիւն՝ որ հե-
թանոսներին մէջ էլ չ'կայ , այնպէս որ մինն իրեն
2 հօր կինն ունենայ ։ Եւ դուք գոռոզացած էք՝ և
աւելի սուգ չէք մնում՝ որ ձեր միջից վեր առ-
3 նուի նա՝ որ այն բանը գործեց ։ Ես թէ և մարմնով
հեռու եմ, բայց հոգով մօտիկ եմ ․ և սորահա-
մար իսկ հիմիկ մօտ լինողի պէս վճռեցի՝ որ նորան՝
4 որ այնպէսի բան գործեց ․ Մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի անունովը՝ ձեր և իմ հոգուս մին տեղ ժո-
ղովվելու ժամանակումը՝ մեր Տէր Յիսուսի Քրիստո-
5 սի զօրութեան հետ , Այնպէսին մատնեմ սատա-
նայի ձեռքն՝ որ մարմինը սատակվի , որ հոգին ապ-
6 րի մեր Տէր Յիսուսի Քրիստոսի օրումը ։ Ձեր պար-

ծանքը լաւ չէ ․ չէ՞ք գիտում՝ որ մին փոքր խմոր
7 ամեն շաղաղվածը խմորացնումէ ․ Դէ՛ն ձգեցէք հին
խմորն՝ որ նոր շաղաղված լինիք , ինչպէս որ դուք
չ'խմորված էք , պատճառն որ Քրիստոս մեզ համար
8 զատիկ մորթվեցաւ ։ Սորահամար տօն կատարենք ․
ո՛չ թէ հին խմորով , և ո՛չ թէ չարութեան և
չարագործութեան խմորովը , բայց արդարութեան
9 և ճշմարտութեան չ'խմորվածովը ։ Գրեցի ձեզ այդ
10 թղթումը՝ որ չ'խառնվիք պոռնիկների հետ ։ Եւ
նա՝ ո՛չ թէ այս աշխարհքիս պոռնիկներին հետ ,
կամ ագահներին հետ , կամ յափշտակողներին
հետ , կամ կռապաշտներին հետ ․ ապա թէ չէ՝
պէտք էր ձեզ՝ որ հենց աշխարհքիցս դուրս գնա-
11 յիք ։ Բայց հիմիկ գրեցի ձեզ՝ որ չ'խառնվիք ․ թէ
որ մինն՝ որ եղբայր է անուանուած , կամ պոռ-
նիկ լինի , կամ ագահ , կամ բամբասօղ կամ
հարբեցօղ կամ յափշտակօղ , այնպիսոյն հետ հաց
12 էլ մի՛ ուտէք ։ Ինձ ի՞նչ պէտք է՝ որ դրսինները
դատեմ ․ չէ՞ որ դուք ներսիններն պիտի դատէք ։
13 Եւ դրսիններն Աստուած կ'դատէ ․ դուք չարը ձեր
միջից վե՛ր առէք ։

ԳԼ․ Զ

Դատաստանական կռիւներ և պոռնկութիւն ։

1 Ձեզանից մինը՝ թէ որ բան ունենայ ընկերին հետ,
համարձակվո՞ւմ է՝ որ անիրաւների առաջին դա-
2 տաստան անէ և ո՛չ թէ սրբերի առաջին ։ Կամ
թէ չէ՞ք գիտում՝ որ սրբերն աշխարհքս կ'դատեն.

և թէ որ ձեզանով աշխարհքը կ'դատուի՝ ապա չէ՛ք
արժան՝ որ ցած բաների վերայ դատաստան անէք։
3 Չէ՞ք գիտում որ մենք հրեշտակները կ'դատենք.
4 էլ ո՞րքան աւելի երկրաւոր բաները։ Երկրաւոր
բաների համար թէ որ դատաստան ունիք՝ եկեղե-
ցու ցած մարդկանցը ձեզ համար դատաւոր նըս-
5 տացրէ՛ք։ Ձեր ամօթին համար եմ ասում. էլ
այնքան մին իմաստուն մարդ չ'կա՞յ ձեր միջումը՝
որ կարող լինի իրաւունք անել իրեն եղբայրներին
6 մէջ։ Բայց եղբայր եղբօր հետ դատաստան է գը-
7 նում. և նա էլ անհաւատների մէջ։ Եւ հիմիկ
հենց խապառ վատ բան է՝ որ ձեր միջումը դա-
տաստան և կռիւ կայ. ինչո՞ւ դուք չէք զրկվում.
8 և աւելի չէ՞ք դուք նեղը մնում։ Բայց դուք զըր-
կումէք և նեղացնումէք՝ և նա էլ ձեր եղբարնե-
9 րին։ Կամ թէ չէ՞ք գիտում՝ որ անիրաւներն Ա-
տուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ. մի՛ խաբ-
վէք. ո՛չ պոռնիկները, ո՛չ կռապաշտները, ո՛չ
10 շնացողները, Ո՛չ իգի տեղ անցնողները, ո՛չ ար-
ուադէտները, ո՛չ գողերը, ո՛չ բամբասողները, և
ո՛չ յափշտակողներն՝ Աստուծոյ արքայութիւնը
11 չեն ժառանգիլ։ Եւ դուք մին քանիներդ այնպէ-
սիներ էիք. բայց լուացվեցաք՝ բայց սրբվեցաք՝
բայց արդարացաք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ա-
նունովը և մեր Աստուծոյ Հոգովը։
12 Ամէն բան կարելի է ինձ, բայց ամէն բան օ-
գուտ չէ. ամէն բան կարելի է ինձ, բայց չ'լինի
13 որ ես մին բանի իշխանութեան տակը լինիմ։ Կե-
րակուրը փորին համար, և փորը կերակուրին հա-
մար. բայց Աստուած սորան և նորան կ'խափանէ.

միայն թէ՝ մարմինը պոռնկութեան համար չէ,
բայց Տէրին համար, և Տէրը մարմնոյն համար։
14 Բայց Աստուած՝ որ մեր Տէրն յարոյց, ձեզ էլ
15 կ'յարուցանէ իրեն զօրութենովը։ Չէ՞ք գիտում՝
որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներ են. ա-
պա Քրիստոսի անդամներն առնենք և պոռնիկի ան-
16 դա՞մ շինենք. քա՛ւ լիցի։ Կամ թէ չէ՞ք գի-
տում՝ որ նա՝ որ պոռնիկին մօտենումէ, մին մար-
մին է նորա հետ. Երկուսն՝ ասումէ, մին մարմին
17 կ'լինին։ Եւ նա՝ որ Տէրին մօտենումէ՝ մին հոգի
18 է նորա հետ։ Փախէք պոռնկութենիցը. ամէն մեղք
ինչ որ մարդ գործումէ, իրեն մարմնիցը դուրս է.
բայց նա՝ որ պոռնկութիւն է անում, իրեն մարմ-
19 նոյն դէմ է մեղանչում։ Կամ թէ չէ՞ք գիտում,
որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են՝ որ
ձեզանում է, որ նորան Աստուածանից ունիք. և
20 ձեր անձին տէր չէք։ Պատճառոր՝ մեծ գին տա-
լով՝ գնվեցաք. էլ փա՛ռք տուէք Աստուծոյն ձեր
մարմնումը և ձեր հոգումը որ են Աստուծոյն։

ԳԼ. Է

Ամուսնացեալների, կոյսերի և որբեւայրիների մասի
հարցումների պատասխաններ։

1 Բայց այն բանի համար որ ինձ գրեցիք, Լա՛ւ է
2 մարդոյ համար՝ որ կնիկան չ'մօտենայ։ Միայն թէ
պոռնկութեան պատճառովը թո՛ղ ամէն մէկ մարդ
իրեն կինը առնէ. և ամէն մէկ կին թո՛ղ իրեն
3 մարդը առնէ։ Կնկանն իրեն մարդը թո՛ղ պարտ-

քը վճարէ. և այնպէս էլ կինն իրեն մարդոյն։
4 Պատճառնոր՝ կինն իրեն մարմնոյն վերայ իշխանու-
թիւն չունի՝ բայց մարդը. այնպէս էլ մարդն իրեն
մարմնոյն վերայ իշխանութիւն չունի՝ բայց կինը։
5 Չ՚լինի որ իրար զրկէք. բայց եթէ իրար հետ միա-
բանվիք մին քիչ ժամանակ, որ աղօթքի պարապ-
վիք. և նորէն միատեղ դարձէք, որ սատանան չի
փորձէ ձեզ՝ ձեր անժուժկալութեան պատճառովը։
6 Սա ներելով եմ ասում, և ո՛չ թէ հրաման տա-
7 լով։ Պատճառնոր կամենումեմ՝ որ ամեն մարդ
ինձ պէս լինէր բայց ամեն մարդ իրեն շնորհքն ու-
նի Աստուածանից. մինն այսպէս և մինն այնպէս։
8 Այլ կին չունօղներին և որբեւէրիներին ասում
եմ թէ՝ Լա՛ւ է նորանց համար՝ որ ինձ պէս կե-
9 նան։ Ապա թէ որ չ՚դիմանան՝ թո՛ղ ամուսնա-
նան. ինչուոր աւելի լաւ է ամուսնանալ, քան
10 թէ տաքանալ։ Բայց ամուսնացածներին պատուի-
րումեմ, ո՛չ թէ ես՝ այլ Տէրը. որ կինը չ՚ջոկվի
11 իրեն մարդուցը։ Ապա թէ որ ջոկվի թո՛ղ առանց
մարդոյ մնայ՝ կամ կրկին իրեն մարդոյն հետ հաշտ-
12 վի. և որ մարդն էլ իրեն կինը չարձակէ։ Բայց
ուրիշներին ես եմ պատուիրում, չէ թէ Տէրը. որ
Եթէ մին եղբայր անհաւատ կին ունենայ, և նո-
րան հաճոյ լինի նորա հետ բնակվիլ՝ թո՛ղ չարձա-
13 կէ նորան։ Եւ մին կին որ անհաւատ մարդ ունե-
նայ, և նա կամենայ նորա հետ բնակվիլ՝ նա թո՛ղ
14 մարդոյն չ՚թողէ։ Պատճառնոր անհաւատ մարդն՝
սրբված է կնկանովը, և անհաւատ կինը սրբված
է մարդովը. ապա թէ չէ՝ ձեր որդիքը պիղծ կ՚լի-
15 նէին. բայց հիմիկ սուրբ են։ Իսկ թէ որ անհա-

ւատը ջոկվելու լինի, թո՛ղ ջոկվի. ինչուոր՝ այս-
պիսի բաների մէջ քվոր կամ եղբօր վերայ հար-
կաւորութիւն չ՚կայ. նորահամար որ՝ Աստուած
16 կանչեց մեզ խաղաղութեան մէջ։ Ի՞նչ ես գի-
տում ո՛վ կին՝ որ քո մարդդ կապրեցնես. և ի՞նչ
ես գիտում ո՛վ մարդ՝ որ քո կինդ կապրեցնես։
17 Միայն թէ ամեն մէկին ինչպէս որ Տէրը բաժա-
նեց նորան. ամեն մէկն ինչպէս որ Աստուած կան-
չեց նորան, այնպէ՛ս գնա՛յ. և այնպէս ամեն եկե-
ղեցիներումը պատուէր եմ տալիս։
18 Մին որ թլփատված կանչվեցաւ, թո՛ղ անթլ-
փատութեանը չ՚ցանկանայ. մինն որ անթլփատու-
19 թենիցը կանչվեցաւ՝ թո՛ղ չ՚թլփատվի։ Ինչուոր՝
թլփատութիւնն ո՛չ ինչ է, և անթլփատութիւնն
ո՛չ ինչ. այլ Աստուծոյ պատուիրանքների պահ-
20 պանութիւնը։ Բայց ամեն մէկն՝ ո՛ր կոչումի մէջ
21 որ կանչվեցաւ, թո՛ղ նորանում կենայ։ Ծառայ
կանչվեցար՝ թո՛ղ՝ հոգս մի՛ անէր. բայց թէ որ
կարենաս ազատ էլ լինել՝ քեզ համար այնպէս էլ
22 լաւ է. Պատճառնոր՝ ծառան որ Տէրովը կանչված
է՝ նա Տէրի ազատն է. իսկ այնպէս էլ ազատն
23 որ կանչված է՝ Քրիստոսի ծառայ է։ Մեծ գնով
24 գնվեցաք՝ մարդկանց ծառայ մի՛ լինիք։ Ամեն մէ-
կըն ինչ կոչումի մէջ որ կանչվեցաւ՝ ե՛ղբարք,
թո՛ղ նորանում կենայ Աստուծոյ առաջին։
25 Բայց կուսանքներին համար մին հրաման չունիմ
Տէրից. միայն թէ խրատ եմ տալիս՝ ինչպէս մինն
որ Տէրից ողորմութիւն գտաւ հաւատարիմ լինե-
26 լոյ։ Ես համարումեմ՝ թէ այնպէս լաւ է. բայց
վտանգին համար՝ որ մօտիկ է, լաւ է մարդոյն՝

27 որ այնպէս լինի ։ Կնկան հետ որ կապված ես՝ մի՛
հետեւիր արձակվելու. կնկանիցն որ արձակված
28 ես՝ կին մի՛ ուզեր ։ Բայց թէ՛ որ ամուսնանաս՝ չը
մեղանչեցիր. և թէ որ մին կոյս ամուսնանայ չ'մե-
ղանչեց. միայն թէ այնպէսիները մարմնոյ նեղու-
29 թիւն կունենան. բայց ես խնայումեմ ձեզ ։ Միայն
սա եմ ասում ե՛ղբարք՝ թէ ժամանակս կարճ է
սորանից ետեւ, որ նորանք որ կին ունին ինչպէս
30 թէ չունենային. Եւ նորանք՝ որ լաց են լինում
ինչպէս թէ լաց չ'լինէին. և նորանք՝ որ ուրախա-
նումեն, ինչպէս թէ չուրախանային. և նորանք՝
որ ծախու առնումեն, ինչպէս թէ չունենային.
31 Եւ նորանք՝ որ այս աշխարհքս վայելումեն, ինչպէս
թէ չ'վայելէին. ինչուոր այս աշխարհքիս գեղեց-
32 կութիւնն անցել է ։ Բայց կամենումեմ որ դուք
հոգսի մէջ չ'լինիք. պատճառնոր նա՝ որ կին չու-
նի՝ Տէրի բաներին համար է հոգս անում, թէ
33 ինչպէս հաճոյ լինի Տէրին ։ Եւ նա՝ որ կին ունի,
աշխարհքի բաներին համար է հոգս անում, թէ
34 ինչպէս հաճոյ լինի իրեն կնկանը ։ Եւ այսպէս էլ
իրարից ջոկված են պսակված կինը և կոյսը. ին-
չուոր՝ կոյսը Տէրի բաներին համար է հոգս անում՝
որ սուրբ լինի մարմնով և հոգով, և պսակված
կինն աշխարհքի կողմանէ է հոգս անում՝ թէ ինչ-
35 պէս հաճոյ լինի իրեն մարդոյն ։ Միայն թէ՝ սա
ձեր շահին համար եմ ասում. և չէ թէ ձեր վը-
զերին խեղդելու չուան եմ ձգում. բայց պարկեշ-
տութեան համար՝ և առանց զբաղմունքի Տէրին
36 հետեւելոյ համար ։ Ապա թէ որ մինն ամօթ հա-
մարէ իրեն կուսին համար՝ որ տարերի չափիցը

դուրս է ելել, և այնպէսի բան պէ՛տք է լինիլ.
նա ինչպէս որ կամենումէ թող անէ. չի մեղան-
37 չում՝ թո՛ղ պսակվի ։ Բայց նա՝ որ իրեն սրտին
մէջ հաստատել է՝ և մին վտանգ չ'կայ նորա հա-
մար, էլ իրեն կամքին վերայ իշխանութիւն ունի.
և նա ընտրեց իրեն սրտումն՝ որ իրեն կոյսը պահէ,
38 նա լա՛ւ է անում ։ Եւ նա՝ որ իրեն կոյսը մարդոյ
է տալիս, լա՛ւ է անում, և նա՝ որ մարդոյ չի
39 տալիս, էլ աւելի լա՛ւ է անում ։ Կինը կապված
է՝ քանի ժամանակ որ նորա մարդը կենդանի է.
բայց թէ որ նորա մարդը ննջէ, ապա ազատ է
պսակվելու ում հետ կ'կամենայ, միայն թէ Տէ-
40 րով ։ Բայց էլ աւելի երանելի է. թէ որ այնպէս
կենայ՝ իմ տված խրատիս պէս. ես այսպէս եմ
համարում. թէ ինձանում էլ Աստուծոյ Հոգին
կայ ։

ԳԼ. Ը

Կուռք զոհը և քրիստոնէական ազատութիւնը առանց գայթակղութեան գործածելը ։

1 Բայց կուռքերի մատաղներին համար գիտումենք,
որ ամենքս գիտութիւն ունինք. գիտութիւնը հը-
2 պարտացնումէ, բայց սէրը շինումէ ։ Թէ որ մինը
մտքի մէջ դնէ թէ բան գիտէ, նա դեռ բան չը
3 գիտաց՝ ինչպէս որ պէտք է գիտել. Բայց նա՝ որ
Աստուծոյն սիրումէ, նա ճանաչված է նորանից ։
4 Ուրեմն զոհված կերակուրներին համար գիտումենք
որ կուռքերը ո՛չ ինչ են աշխարհքումս. պատճառն-

5 որ՝ ոչ մին Աստուած չ'կայ այն մինից ջոկ ։ Որ
թէ և կան՝ որ Աստուածներ անուանվին՝ թէ եր-
կընքումը և թէ երկրիս վերայ. ինչպէս որ շատ
6 աստուածներ կան և շատ տէրեր ։ Բայց մենք մին
Աստուած ունինք՝ Հայրը, որ նորանից ամեն բան
է, և մենք նորա համար. և մին Տէր Յիսուս Քը-
րիստոս՝ որ նորանով է ամեն բան, և մենք նորա-
7 նով ։ Միայն թէ ամենքը գիտութիւն չունին. ին-
չուոր՝ մին քանիսը մինչև հիմիկ կռքի բանը զոհ-
ված բանի պէս խղճմտանքով են ուտում, և նո-
8 րանց խղճմտանքն՝ որ տկար է, պղծվումէ ։ Բայց
կերակուրը նա չէ՝ որ մեզ ընդունելի է անում
Աստուծոյ առաջին. որ եթէ չուտենք՝ մին բանով
չենք պակասվիլ, և եթէ ուտենք՝ մին բանով չենք
9 աւելանալ ։ Միայն թէ զգո՛յշ կացէք՝ որ այդ ձեր
ազատութիւնդ՝ գայթակղութիւն չ'լինի տկարնե-
10 րին համար ։ Թէ որ մինը քեզ՝ որ այդ գիտութիւ-
նըդ ունիս՝ կռքի տան մէջ տեսնէ սեղան նստած,
չէ՞ որ նորա խղճմտանքը՝ որ տկարութենով բռնը-
11 ված է՝ նորէն կ'դրդվի որ զոհված բանն ուտէ ։ Եւ
այն տկար եղբայրը կ'կորչի քո գիտութենովդ,
12 նա՝ որ նորա համար Քրիստոս մեռաւ ։ Եւ այսպէս
եղբարներին դէմ մեղանչելով, և տկարների խղճ-
մտանքը դրդելով՝ Քրիստոսին դէմ մեղք էք գոր-
13 ծում ։ Նորահամար՝ թէ որ կերակուր իմ եղբօրս
գայթակղացնումէ, ես յաւիտեան միս չեմ ու-
տիլ, որ իմ եղբօրս չ'գայթակղացնեմ ։

ԳԼ. Թ

*Առաքեալը ինչպէս է գործադրում քրիստոնէական ազա-
տութիւնը իր պաշտօնը գործադրելիս ։*

1 Չէ՞ որ ազատ եմ, չէ՞ որ առաքեալ եմ, չէ՞ որ
մեր Տէր Յիսուսին Քրիստոսին իմ աչքովս տեսի,
2 չէ՞ որ դուք իմ գործս էք Տէրով ։ Թէ և ուրիշ-
ներին համար առաքեալ չ'լինիմ, բայց դէպի ձեզ
եմ. ինչուոր իմ առաքելութեանս կնիքը դուք էք
3 Տէրով ։ Որտեղ որ ինձ հարցնեն, իմ պատասխա-
4 նըս այս է ։ Միթէ իշխանութիւն չունի՞նք ուտե-
5 լոյ և խմելոյ ։ Միթէ իշխանութիւն չունի՞նք քոյ-
րեր՝ կանայք մանածելոյ մեզ հետ, ինչպէս որ ու-
րիշ առաքեալները և Տէրի եղբարքն էլ, և Կե-
6 փասն էլ ։ Միթէ մինակ ես և Բառնաբա՞ս իշխա-
7 նութիւն չունինք որ բան չ'գործենք ։ Ո՞վ կայ
երբէք որ իրեն պաշարովը զինուորութիւն անէ.
ո՞վ է որ այգի տնկէ՝ և նորա պտղիցը չուտէ. ո՞վ
է որ հօտ արածացնէ և հօտի կաթնիցը չուտէ ։
8 Միթէ այս բանս մարդո՞յ կերպով եմ ասում,
9 կամ չէ՞ որ օրէնքն էլ է այս բանս ասում ։ Իսկ
Մօսէսի օրէնքումը գրված է՝ թէ կալի մէջ աշխա-
տող եզան դունչը մի՛ կապիր. միթէ Աստուած
10 եզներին համա՞ր էր հոգս անում ։ Չէ՞ որ մեզ
համար է ասում. պատճառնոր՝ մեզ համար գրըվե-
ցաւ, որ նա որ ցանումէ, պէտք է յուսով ցա-
11 նել. և նա՝ որ կասումէ, յուսով վայելել ։ Թէ
որ մենք ձեզանում հոգևորները սերմեցինք՝ էլ

մե՞ծ բան է՝ որ ձեզանից մարմնաւորները հնձենք ։
12 Թէ որ ուրիշներն այդ ձեզ վերայ իշխանութիւնը
կ'վայելեն , էլ աւելի ինչո՞ւ մենք չէ՛ . միայն թէ
մենք այս իշխանութիւնս չ'բանացրինք . բայց ա-
մեն բանի համբերումենք , որ ընաւ խափանմունք
13 չ'դնենք Քրիստոսի աւետարանին ։ Չէ՞ք գիտում
թէ նորանք՝ որ տաճարումը գործումեն , այն տա-
ճարիցն են ուտում . և նորանք՝ որ սեղանի պաշ-
14 տօնեաներ են , այն սեղանիցն են վայելում ։ Այն-
պէս էլ Տէրը հրաման տուաւ , որ նորանք որ ա-
ւետարանը են քարոզում , այն աւետարանիցն ապ-
15 րին ։ Բայց ես սորանցից ոչ մինն էլ չ'բանացրի .
և այդ բանդ չ'գրեցի նորահամար որ՝ ինձ էլ այդ-
պէսի բան լինի . էլ աւելի լաւ է ինձ՝ որ մեռ-
նիմ , քան թէ՝ որ մինն իմ պարծանքս ունայն
16 համարէ . Պատճառնոր՝ թէ որ աւետարանը քա-
րոզեմ , նա պարծանք չէ ինձ համար . ինչուոր՝ նա
հարկ է ինձ վերայ . բայց վա՛յ է ինձ՝ թէ որ չա-
17 ւետարանեմ ։ Թէ որ նա յօժար կամքով անեմ ,
վարձ կ'լինի ինձ . և թէ որ ակամայ՝ էլ տնտե-
18 սութիւնը յանձնուած է ինձ ։ Ապա ես ի՞նչ
վարձք ունիմ , նա որ՝ աւետարանելոյ ժամանակն
ձրի տամ աւետարանը , որ իմ իշխանութիւնս վատ
19 չ'բանացնեմ՝ որ այն աւետարանումն է . Պատ-
ճառնոր՝ ամեն մարդուց ազատ էի , և իմ անձս ա-
մենին ծառայ արի , որ շատ մարդկանց շահեմ ։
20 Հրէաներին հետ Հրէայի պէս էլայ , որ Հրէաները
21 շահեմ ։ Օրէնքին ներքեւ լինօղներին հետ նորանց
պէս էլայ , որ օրէնքի ներքեւն էին . իբր թէ չէ՛
որ ես օրէնքի ներքեւն էի , բայց որ նորանց էլ

շահեմ՝ որ օրէնքի ներքեւն են . անօրէններին հետ
անօրէնի պէս էլայ . իբր չէ թէ ես Աստուծոյ ա-
ռաջին մին անօրէն էի , բայց Քրիստոսի օրէնքի
22 ներքեւն , որ անօրէններին շահեմ ։ Տկարներին հետ
տկարի պէս էլայ՝ որ տկարներին շահեմ . ամենին
հետ ամեն բան էլայ , որ լինի թէ մին քանիսն
23 ազատեցնեմ ։ Այս ամեն բաներս աւետարանին հա-
մար եմ անում , որ բաժին ունենամ նորա հետ ։
24 Չէ՞ք գիտում՝ թէ նորանք որ ասպարէզին մէջ վա-
զումեն , վազելով ամենքն են վազում , բայց մինն
է՝ որ յաղթութեան պսակն առնումէ . դուք այն-
25 պէս վազեցէք՝ որ հասնիք ։ Ամեն՝ ով որ պատե-
րազմ է անում , ամեն բանից ժուժկալ է կե-
նում . նորանք՝ որ մին ապականելի պսակ առնեն ,
26 և մենք՝ նա որ չի ապականվիլ ։ Ուրեմն ես իսկ
այնպէս եմ վազում , չէ թէ ինչպէս աներեւոյթ
բանի համար . այնպէս եմ կռվում , չէ թէ ինչ-
27 պէս քամիների զարկելով ։ Բայց իմ մարմինս ներ-
քեւ եմ ձգում՝ և հնազանդացնում , որ չ'լինի
թէ ես՝ որ ուրիշներին քարոզեցի , ինքս անպիտան
գտնվիմ .

ԳԼ. Ժ

*Մարմնաւոր ապահովութիւնից և կռապաշտութեան հա-
ղորդակցութիւնից հեռանալ ։*

1 Չե՛մ կամենումեմ ե՛ղբարք՝ որ չ'գիտենաք՝ թէ
մեր հարքն ամենքն էլ ամպին տակն էին . և ա-
2 մենքը ծովին միջովն անցան ։ Եւ ամենքը Մօսէսի

3 ձեռովը մկրտվեցան՝ այն ամպին և ծովին մէջ։ Եւ
4 ամենքն էլ նոյն հոգևոր կերակուրը կերին, Եւ
ամենքն էլ այն հոգևոր խմելիքը խմեցին. ինչու-
որ՝ այն հոգևոր վէմիցն էին խմում՝ որ գնումէր
5 նորանց հետ. և այն վէմը Քրիստոս ինքն էր։ Բայց
Աստուած նորանցից շատերին չ'հաւանեցաւ. ին-
չուոր՝ այն անապատին մէջ՝ գետինն ձգված փռո-
6 ված վէրընկան։ Եւ նա եղաւ՝ որ մեզ օրինակ լի-
նի. որ չար բաների ցանկացող չ'լինինք, ինչպէս
7 որ նորանք ցանկացան։ Եւ կռապաշտ չ'լինինք՝
ինչպէս որ նորանցից մին քանիսը. ինչպէս որ գըր-
ված է, թէ Ժողովուրդը նստեց որ ուտէ և խմէ՝
8 և վերկացան որ խաղ անեն։ Եւ պոռնկութիւն
չանենք, ինչպէս որ նորանից մին քանիսը պոռըն-
կութիւն արին, և մին օր քսան և չորս հա-
9 զար մարդ վէր ընկան։ Եւ Տէրը չ'փորձենք,
ինչպէս որ նորանցից մին քանիսը փորձեցին, և
10 այն օձերիցը սատակվեցան։ Եւ չ'տրտնջենք, ինչ-
պէս որ նորանցից մին քանիսը տրտնջեցին, և այն
11 սատակօղի ձեռովը կորան։ Բայց այն ամենն օրի-
նակի համար էր նորանց վերայ անցնում, բայց
մեզ խրատի համար գրվեցաւ, որ ժամանակներին
12 վերջը հասաւ մեզ։ Ուրեմն ով որ համարէ՝ թէ
հաստատ է կանգնած, թո՛ղ զգուշ լինի, որ վէր
13 չ'ընկնի։ Ուրիշ փորձութիւն ձեզ վերայ չի եկել՝
բայց միայն մարդկանցից. բայց Աստուած հաւա-
տարիմ է՝ որ չի ձգիլ ձեզ փորձութեան մէջ ձեր
կարողութենիցն աւելի, բայց այն փորձութեան
հետ դուրս գալն էլ կանէ՝ որ կարենաք համբե-
րել։

14 Նորահամար ի՛մ սիրելիքս՝ փախէ՛ք կռապաշ-
15 տութենիցը։ Ինչպէս իմաստուններին հետ եմ խօ-
սում, դուք ինքդ դատեցէ՛ք նա՝ որ ասումեմ,
16 Օրհնութեան բաժակն՝ որ օրհնումենք, չէ՞ որ նա
հաղորդութիւն է Քրիստոսի արիւնին. հացն՝ որ
կտրումենք, չէ՞ որ նա հաղորդութիւն է Քրիստո-
17 սի մարմնոյն։ Որովհետեւ մին հաց մին մարմին ենք
մենք շատերս. ինչուոր ամենքս նոյն մին հացիցն
18 ենք վայելում։ Տեսէ՛ք Իսրայէլին մարմնոյ կողմա-
նէ. չէ՞ որ նորանք՝ որ մատաղներիցն են ուտում,
19 մասնակից են սեղանին։ Ապա ի՞նչ ասեմ. միթէ
զոհվածը մին բա՞ն է, և կամ թէ կուռքերն էլ մին
20 բա՞ն են։ Բայց նա, որ հեթանոսները մատաղ են
անում, դեւերին են մատաղ անում, և ո՛չ թէ
Աստուծոյն. չե՛մ կամենում՝ որ դուք դեւերին
մասնակից լինիք. պատճառնոր՝ չէ՛ք կարող Տէրին
21 բաժակը խմել՝ և դեւերի բաժակն էլ։ Եւ չէ՛ք
կարող Տէրին սեղանիցը վայելել՝ և դեւերի սեղա-
22 նիցն էլ։ Կամ թէ Տէրը նախա՞նձ շարժենք. մի-
թէ նորանից աւելի զօրաւո՞ր ենք. ամեն բան կա-
րելի է ինձ. բայց ամեն բան օգուտ չէ։
23 Ամեն բան կարելի է ինձ, բայց ամեն բան շի-
24 նութիւն չի տալիս։ Չ'լինի որ մինն իրեն անձին
բանին մինակ հետեւի, բայց նորանն էլ որ ընկե-
25 րինն է։ Ամեն ինչ բան՝ որ սպանդանոցումը ծախ-
վումէ, կերէ՛ք՝ և չ'քննէք խղճմտանքի պատճառո-
26 վը։ Պատճառնոր՝ երկիրը Տէրինն է իրեն ամեն
27 լիութենովը։ Թէ որ անհաւատներիցը մինն կանչէ
ձեզ՝ և դուք կամենաք գնալ, ամեն բան որ ձեր
առաջին դնվի՝ կերէ՛ք, և չ'քննէ՛ք խղճմտանքի

28 պատճառովը։ Ապա թէ որ մինն ասէ ձեզ՝ թէ
Այդ զոհված բան է, մի՛ ուտէք՝ Նորա պատճա-
ռովն՝ որ իմացում տուաւ, և խղճմտանքի պատ-
29 ճառովը։ Բայց խղճմտանք եմ ասում ո՛չ թէ ի-
րանը, այլ ընկերինը. էլ ինչո՞ւ իմ ազատու-
թիւնս պիտի բնաւ դատվի ուրիշի խղճմտանքիցը։
30 Թէ որ ես շնորհակալութենով եմ վայելում, ին-
չո՞ւ հայհոյվիմ այն բանի համար՝ որ ես նորա հա-
31 մար գոհանումեմ։ Ուրեմն՝ թէ ուտէք՝ թէ խմէք՝
թէ ինչ գործ էլ որ անէք, ամեն բան Աստուծոյ
32 փառաց համար արէ՛ք։ Առանց գայթակղութիւն
տալոյ լինիք Հրէաներին և հեթանոսներին և Աս-
33 տուծոյ եկեղեցոյն։ Ինչպէս որ ես էլ ամեն բա-
նով ամենին հաճոյ եմ լինում. իմ անձիս օգու-
տը չեմ խնդրում, բայց շատերինը՝ որ փրկվին։

ԳԼ. ԺԱ.

Արանց և կանանց դիրքը աղօթելոյ և մարգարէանալոյ ժամանակին. սուրբ ընթրեաց արժանաւորապէս վայելումը։

1 Ինձ նմանող եղէ՛ք, ինչպէս որ ես էլ Քրիստո-
2 սին։ Գովումեմ ձեզ՝ որ իմ ամեն բաներս յիշում-
էք, և ինչպէս որ պատուիրեցի ձեզ՝ այն պատուի-
3 րանքները պահումէք։ Կամենումեմ՝ որ դուք գի-
տենաք, թէ ամեն մարդոյ գլուխը Քրիստոս է, և
կնկան գլուխը մարդը, և Քրիստոսի գլուխն՝ Աս-
4 տուած։ Ամեն մարդ՝ երբոր աղօթք անէ՝ կամ
մարգարէանայ՝ և գլուխը ծածկած ունենայ, ա-
5 մօթ է անում իրեն գլուխը։ Եւ ամեն կին՝ երբոր

աղօթք անէ՝ կամ մարգարէանայ բաց գլխով, ա-
մօթ է անում իրեն գլուխն. ինչու որ՝ այնպէս է
6 համարվում՝ թէ վերարած է. Որ եթէ կին քօղ
չ՚ձգէ՝ թո՛ղ իրեն մազերն էլ կտրէ. ապա թէ որ
կնկան անպատշաճ է մազերը կտրել կամ վերանել՝
7 թո՛ղ քօղ ձգէ։ Արու մարդու պէտք չէ՛ որ իրեն
գլուխը ծածկէ, պատճառն որ՝ Նա Աստուծոյ պատ-
կեր և փառք է. բայց կինն իրեն մարդոյն փառքն
8 է։ Ինչու որ՝ ո՛չ թէ մարդը կնկանիցն է, բայց
9 կինը մարդուցը։ Պատճառն որ՝ ո՛չ թէ մարդը
կնկան համար ստեղծուեցաւ՝ բայց կինը մարդոյն
10 համար։ Նորահամար պէտք է, որ կինը մեծարանքի
նշան դնէ գլխին վերայ հրեշտակներին համար։
11 Միայն թէ՝ ո՛չ կինն առանց մարդոյ է, և ոչ մար-
12 դըն առանց կնկան Տէրումը։ Ինչու որ՝ ինչպէս որ
կինը մարդուցը, այնպէս էլ մարդը կնկանիցը. բայց
13 ամէնն Աստուածանից։ Բայց դուք ինքներդ իրա-
ւունք դատեցէք. միթէ կնկան արժա՞ն է՝ որ բաց
14 գլխով աղօթ անէ Աստուծոյ առաջին։ Եւ բնու-
թիւնն ինքն էլ չի՞ սովորցնում ձեզ. պատճառն
որ՝ թէ որ մարդը մազեր ունի՝ նա անարգանք է
15 նորան։ Բայց կինը թէ որ երկար մազեր ունի՝ նա
փառք է նորան. ինչու որ՝ երկար մազերը հագուս-
16 տի տեղ է տրված նորան։ Ապա թէ որ մինը կա-
մենումէ հակառակել, մենք այնպէսի սովորութիւն
չունինք՝ և ո՛չ էլ Աստուծոյ եկեղեցիները։
17 Բայց սա էլ պատուիրումեմ՝ և չեմ գովում
ձեզ, որ դուք ո՛չ թէ դէպի լաւն՝ այլ դէպի վատն
18 ընկած վաղումէք։ Առաջ՝ երբոր մին տեղ էք ժո-
ղովվում եկեղեցւոյն մէջ, լսումեմ որ հերձուած-

ներ կան ձեր միջումը . և մին քիչ էլ հաւատա-
19 ցի ։ Բայց հերձուածներ էլ պիտի լինին ձեր միջու-
մըդ՝ որ նորանք՝ որ ձեղանում ընտիր են՝ յայտնի
20 լինին ։ Ուրեմն երբոր մին տեղ էք ժողովվում՝ Տէ-
21 րի տունը ձեզ համար հաց ուտելոյ տեղ չէ ։ Պատ-
ճառն որ՝ ամէն մէկը շտապում է անում իրեն ընթ-
րիքն ուտելոյ . և մինը սոված է , և մինը հարբած ։
22 Միթէ տուն չունի՞ք ուտելոյ և խմելոյ . կամ թէ
Աստուծոյ եկեղեցին ոչ ինչ էք համարում , և չը-
քաւորներին ամօ՛թ էք ձգում . ինչ ասեմ . գովե՞մ
23 ձեզ . այդ բանումը չե՛մ գովում ։ Պատճառն որ՝
ես Տէրիցն ընդունեցի նա՝ որ ձեզ էլ տուի . որ
Տէր Յիսուսն այն գիշերումն որ մատնվումէր , հաց
24 առաւ , Գոհացաւ , կտրեց և ասաց , Առէ՛ք , կե-
րէ՛ք . աս է իմ մարմինս՝ որ ձեզ համար տվվումէ .
25 աս արէ՛ք իմ յիշատակիս համար ։ Այնպէս էլ՝
ընթրիք ուտելուցն ետեւ բաժակն առաւ և ասաց .
Այս բաժակս նոր ուխտ և պայման է իմ արիւնո-
վըս . աս արէ՛ք՝ քանի անգամ որ խմէք , իմ յի-
26 շատակիս համար ։ Քանի անգամ որ այս հացս ու-
տէք , և այս բաժակս խմէք , Տէրի մահը պատմե-
27 ցէ՛ք՝ մինչեւ որ նա կ'գայ ։ Ուրեմն ով որ այս հա-
ցըս ուտէ՝ կամ Տէրի բաժակը խմէ անարժանու-
թենով , նա պարտական կ'ըլնի Տէրի մարմնոյն և
28 արիւնին ։ Թո՛ղ մարդը փորձէ իրեն անձը , և ապա
29 այն հացիցն ուտէ՝ և այն բաժակիցը խմէ ։ Պատ-
ճառնոր՝ նա որ անարժանութենով է ուտում և
խմում , իրեն անձին համար դատաստան է ու-
տում և խմում . ինչուոր՝ նա չի՛ ջոկում Տէրի
30 մարմինը ։ Իսկ նորահամար էլ ձեր միջումը շատ

հիւանդներ և ցաւագարներ կան . և շատ էլ նո-
31 րանք են՝ որ ննջած են ։ Ինչուոր՝ եթէ մեր անձ-
32 ներս կ'քննէինք , ապա չէինք դատապարտվիլ ։ Եւ
թէ որ դատվինք՝ Տէրիցը խրատվումենք , որ աշ-
33 խարհքի հետ չ'դատապարտվինք ։ Ուրեմն ե՛ղբարք՝
երբոր ժողովվիք ուտելոյ համար , իրար սպասեցէ՛ք ։
34 Ապա թէ որ մինը սոված է՝ թո՛ղ իրեն տանն ու-
տէ . որ դատապարտութեան համար չ'ժողովվիք .
բայց ուրիշ բաներն՝ երբոր կ'գամ՝ այն ժամանակը
կ'պատուիրեմ ։

ԳԼ. ԺԲ

Հոգեւոր պարգևները . մարմնոյ և անդամների օրինակը ։

1 Բայց հոգեւոր շնորհքներին համար , ե՛ղբարք՝ չե՛մ
2 կամենում որ չ'գիտենաք ։ Իսկ դուք լաւ գիտում-
էք՝ որ երբոր հեթանոս էիք , ինչպէս դէպի այն
3 անձայն կուռքերը գնում և գալիս էիք ։ Նորահամար
յայտնի ասումեմ ձեզ , որ ո՛չ ով չ'կայ՝ որ Աս-
տուծոյ Հոգովը խօսի՝ և Յիսուսին նզովք կարդայ .
և ո՛չ ով չի կարող Յիսուսին Տէր ասել՝ եթէ ոչ
4 Սուրբ Հոգով ։ Թէեւ շնորհքները բաժանված են ,
5 բայց Հոգին ճիշտ մին է ։ Թէ որ պաշտօնները բա-
6 ժանված են , բայց Տէրն ճիշտ մին է ։ Թէ որ յա-
ջողութիւնները բաժանված են՝ բայց Աստուած
ճիշտ մին է , որ ամենն ամեն բանին մէջ յաջո-
7 ղումէ ։ Բայց ամեն մէկին տված է Հոգու յայտ-
8 նութիւնը՝ ամեն մէկի շահին համար ։ Մինին տըվ-
ված է Հոգուցը իմաստութեան խօսքը . ուրիշին

9 գիտութեան խօսք՝ ճիշտ նոյն Հոգւոյ ձեռովը. Միւ-
սին հաւատք ճիշտ նոյն Հոգովը. ուրիշին բժշկու-
10 թեան շնորհք ճիշտ նոյն Հոգովը։ Ուրիշին զօրու-
թիւններ անելոյ յաջողութիւն. ուրիշին մարգա-
րէութիւն. ուրիշին հոգիներին ընտրութիւն. ու-
րիշին կերպ կերպ լեզուներ. ուրիշին լեզուների
11 թարգմանութիւններ. Բայց այս ամենս ճիշտ նոյն
մին Հոգին է յաջողում, և ամեն մէկին բաժա-
նում է ինչպէս որ կամենում է։
12 Ինչպէս որ մարմինը մին է, և շատ անդամներ
ունի. և մարմնոյ այն ամեն շատ անդամները մին
13 մարմին են. այնպէս էլ Քրիստոս։ Պատճառնոր՝
մենք ամենքս մին Հոգով մկրտուեցանք մին մարմին
լինելոյ. թէ Հրէաներ, թէ հեթանոսներ, թէ ծա-
ռաներ, թէ ազատներ, ամենքս մին Հոգին խը-
14 մեցինք։ Ինչու որ՝ մարմինը մին անդամ չէ, այլ
15 շատ։ Թէ որ ոտն ասէ. Որովհետեւ ձեռ չեմ՝ էլ
նոյն մարմնիցը չեմ. միթէ նորանով այն մարմնիցը
16 չի՞ լինիլ։ Եւ թէ որ ականջն ասէ, Որովհետեւ ե՛ս
աչք չեմ՝ էլ նոյն մարմնիցը չեմ. միթէ նորանով
17 նոյն մարմնիցը չի՞ լինիլ։ Թէ որ բոլոր մարմինն
աչք լինէր՝ էլ ո՛ր տեղ էր ականջը. և թէ որ բո-
լոր մարմինը լսելիք լինէր՝ էլ ո՛ր տեղ էր հոտո-
18 տելիքը։ Բայց հիմիկ Աստուած անդամները՝ նո-
րանցից ամեն մէկը մին մին դրաւ մարմնոյ մէջ՝ ինչ-
19 պէս որ կամեցաւ։ Ապա թէ որ ամենը մին ան-
20 դամ լինէր, ո՞ր տեղ էր մարմինը։ Բայց հիմիկ՝
21 անդամները շատ են, այլ մարմինը՝ մին։ Աչքը չի
կարող ձեռքին ասել. Թէ ինձ պէտք չես. կամ
դարձեալ գլուխը ոտներին՝ Թէ ինձ պէտք չէք։

22 Բայց աւելի էլ՝ մարմնոյ այն անդամներն՝ որ երե-
ւում են թէ շատ տկար են, նորանք շատ հարկա-
23 ւոր են։ Եւ նորանք՝ որ երեւում են՝ թէ մարմնոյ
շատ անարգվածներն են, նորանց էլ աւելի պա-
տիւ ենք անում. և մեր ամօթալիքներն էլ աւելի
24 պարկեշտութիւն ունին։ Եւ մեր պարկեշտ անդամ-
ները մին բան պէտք չէ. պատճառնոր՝ Աստուած
մարմինը բարեխառնեց, և ցածին էլ աւելի պա-
25 տիւ տուաւ. Որ նոյն մարմնոյն մէջ տարաձայնու-
թիւն չ'լինի. բայց որ իսկ նոյն անդամներն իրար
26 համար հոգս ունենան։ Եւ թէ որ մին անդամ
ցաւում է, ամեն անդամներն էլ նորա հետ ցաւու-
մեն. և թէ որ մին անդամ փառաւորվում է, ա-
մեն անդամներն էլ նորա հետ ուրախանումեն։
27 Բայց դուք Քրիստոսի մարմին էք, և նորա ան-
28 դամներից անդամներ։ Եւ նորանք՝ որ Աստուած
եկեղեցումը դրաւ, նորանք են. առաջ՝ առաքեալ-
ները. երկրորդ՝ մարգարէները. երրորդ՝ վարդա-
պետները. յետոյ զօրութիւնները. յետոյ բժըշ-
կութեան շնորհքները, օգնութիւնները, կառա-
վարութիւնները, կերպ կերպ լեզուները, լեզունե-
29 րի թարգմանութիւնները։ Միթէ ամենքն առա-
քեա՞լ են. միթէ ամենքը մարգարէ՞ են. միթէ
ամենքը վարդապե՞տ են. միթէ ամենքը զօրու-
30 թի՞ւն են։ Միթէ ամենքը բժշկութեան շնորհք-
նե՞ր ունին. միթէ ամենքը լեզունե՞ր են խօսում.
միթէ ամենքը թարգմանո՞ւմեն։
31 Բայց դուք խիստ հետեւեցէ՛ք այն շնորհքներին
որ շատ լաւ են. բայց ես էլ աւելի լաւ ճանա-
պարհ եմ ցոյց տալիս ձեզ։

ԳԼ. ԺԳ

Սիրոյ գովեստը ։

1 Թէ որ մարդկանց և հրեշտակների լեզուներովը
խօսիմ՝ և սէր չունենամ, ես պղնձի պէս կ'լինիմ՝
որ ձայն է հանում, կամ ծնծղաների պէս՝ որ ձայ-
2 նումեն ։ Եւ թէ որ մարգարէութիւն ունենամ, և
ամեն խորհուրդները գիտենամ՝ և ամեն գիտու-
թիւնը. և թէ որ ամեն հաւատք ունենամ՝ մին-
չեւ որ սարերն էլ փոփոխեմ, և սէր չունենամ,
3 ո՛չ ինչ եմ ։ Եւ թէ որ իմ ամեն ապրանքս աղ-
քատներին ուտացնեմ, և իմ մարմինս մատնեմ՝
որ այրուի, և սէր չունենամ, ես ոչ մին օգուտ
4 չեմ ունենալ ։ Սէրը երկայնամիտ է՝ քաղցր է.
սէրը չի նախանձվում, չի գոռոզանում, չի հպար-
5 տանում, Չի լրբանում, իրեն բանը չի ուզում.
6 չի գրգռվում, չար բան չի մտածում. Անիրաւու-
թեան համար չի ուրախանում, բայց ճշմարտու-
7 թեան համար ուրախանումէ. Ամեն բանի դիմա-
նումէ. ամեն բանի հաւատումէ, ամեն բանի
8 համար յոյս ունի, ամեն բանի համբերումէ ։ Սէ-
րըն ոչ մին ժամանակ վէր չի ընկնիլ. Թէ որ
մարգարէութիւններ կան՝ կ'խափանվին. թէ որ լե-
զուներ՝ լուռ կ'կենան. թէ որ գիտութիւն՝ կ'խա-
9 փանվի ։ Պատճառոր՝ փոքր 'ի շատէ գիտումենք.
10 և փոքր 'ի շատէ մարգարէանումենք ։ Բայց երբոր
կատարեալը կ'գայ, այս փոքր 'ի շատես կ'խափան-
11 վի ։ Երբոր տղայ էի՝ տղայի պէս էի խօսում, տղա-

յի պէս էի մտածում, տղայի պէս էի համա-
րում. բայց երբոր մարդ էլայ՝ այն տղայութեան
12 բաները հեռու խափանեցի ։ Հիմիկ իբր թէ հայե-
լոյ մէջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժա-
մանակը դէմադէմ. հիմիկ փոքր 'ի շատէ տեղեակ
եմ, բայց այն ժամանակն այնպէս կ'գիտենամ՝
13 ինչպէս որ էլ նա ինձ ճանաչեց ։ Ուրեմն կ'մնան
հաւատք, յոյս, սէր. այս երեքս. և սորանցում
մեծը սէրն է ։

ԳԼ. ԺԴ

*Հոգեւոր պարգեւների ուղիղ գործադրութիւնը. մարգա-
րէանալոյ և լեզուներ խօսելոյ կարգը. ժողովքի կարգ
ու կանոն ։*

1 Սիրոյն հետեւեցէ՛ք, և հոգեւոր շնորհքներին ետե-
ւէ՛ն էլէք և աւելի նորան՝ որ դուք էլ մարգա-
2 րէանաք. Պատճառոր՝ նա որ լեզուներով է խօ-
սում, մարդկանց հետ չի խօսում, այլ Աստուծոյ
հետ. ինչուոր ո՛չ ով չ'կայ՝ որ լսէ, բայց Հոգովը
3 խորհուրդներ է խօսում ։ Իսկ նա՝ որ մարգարէա-
նումէ, մարդկանց շինութիւն և մխիթարութիւն
4 և սիրտ տուող բան է խօսում ։ Նա որ լեզունե-
րով է խօսում, իրեն անձն է շինում, և նա՝ որ
5 մարգարէանումէ, եկեղեցին է շինում ։ Կամենում
եմ որ դուք ամենքդ լեզուներով խօսիք. բայց էլ
աւելի որ մարգարէանաք. ինչուոր՝ աւելի լաւ է
նա՝ որ մարգարէանումէ, քանթէ նա՝ որ լեզունե-
րով խօսումէ. միայն թէ որ թարգմանէ՝ որ եկե-
ղեցին շինութիւն առնէ ։

6 Բայց հիմիկ ե՛ղբարք՝ թէ որ ես ձեզ մօտ գամ
և լեզուներով խօսիմ, ի՞նչ օգուտ կ'լինի ձեզ՝
որ չ'խօսիմ կամ յայտնութենով, կամ գիտու-
թենով, կամ մարգարէութենով, կամ վարդա-
7 պետութենով ։ Այնպէս՝ ինչպէս որ շունչ չու-
նօղ բաներն որ ձայն են տալիս, փող լինի,
թէ քնար լինի. թէ որ ձայնի մին ջոկութիւն
չաննեն, ի՞նչպէս կ'ճանաչվի փողի փչելը. կամ
8 քնարի ձայն հանելը ։ Ինչուոր՝ եթէ փողը խառ-
նած ձայն դուրս տայ, էլ ո՞վ կ'պատրաստվի
9 պատերազմի համար ։ Այնպէս էլ դուք՝ թէ որ
լեզուներովը բանն յայտնի չասէք՝ այն խօսքն ի՞նչ-
պէս կիմացվի. ինչուոր՝ իբր թէ օդին հետ խօսած
10 կ'լինիք ։ Պատճառնոր՝ այնքան կերպ ձայներ կան
աշխարհքումս. և նորանց ոչ մինն էլ առանց ձայ-
11 նի չէ ։ Ուրեմն թէ որ ես ձայնի զօրութիւնը չ'գի-
տենամ, ապա նորան՝ որ ինձ հետ խօսումէ՝ խուժ
12 կ'լինիմ, և նա որ ինձ հետ խօսումէ՝ դուժ ։ Այն-
պէս էլ դուք՝ որ հոգևոր շնորհներին հետևումէք,
եկեղեցայ շինութեան համար ջանք էք անում՝ որ
13 էլ աւելի աւելանաք ։ Ուրեմն նա՝ որ լեզուներով
է խօսում, թո՛ղ աղօթք անէ՝ որ թարգմանէ էլ ։
14 Թէ որ ես աղօթք անեմ՝ լեզուով՝ իմ հոգիս է ա-
15 ղօթք անում բայց միտքս պտուղ չի տալիս ։ Ա-
պա ուրեմն ի՛նչ պիտի լինի. աղօթք անեմ մտքով
էլ. սաղմոս ասեմ հոգով, սաղմոս ասեմ մտքով
16 էլ ։ Ապա թէ չէ՝ թէ որ դու օրհնես հոգով, նա
որ տգէտի կարգումն է՝ ինչպէս Ամէն ասէ քո օրհ-
նութեանդ համար պատճառնոր՝ նա չի գիտում
17 այն որ դու ասումես ։ Իրաւ է՝ որ դու լաւ ես գո-

18 հանում. բայց ընկերը չի շինվում ։ Գոհանումեմ
Աստուածանից՝ նորահամար որ ձեր ամենիցդ աւե-
19 լի եմ խօսում լեզուներով ։ Բայց եկեղեցոյն մէջ
աւելի կամենումեմ որ հինգ խօսք խօսիմ՝ մտքով.
որ ուրիշներին խրատ տամ, քան թէ շատ խօս-
քե՛ր՝ լեզուներով ։
20 Ե՛ղբարք՝ մտքով տղայ մի՛ լինիք բայց չարու-
թենիցը տղայացէք, և մտքով կատարեա՛լ էլէք.
21 Պատճառնոր՝ օրէնքումն էլ գրված է, թէ Օտար
լեզուներով և օտար պռօշներով կ'խօսիմ այդ ժո-
ղովրդին հետ. բայց այնպէս էլ ինձ ականջ չեն
22 դնիլ՝ ասումէ Տէրը ։ Ապա ուրեմն՝ լեզուները նշա-
նի համար են՝ ո՛չ թէ հաւատացեալներին այլ
անհաւատներին. բայց մարգարէութիւնն ո՛չ թէ
անհաւատներին՝ այլ հաւատացեալներին համար
23 է ։ Ապա թէ որ բոլոր եկեղեցին մին տեղ գայ,
և ամենքը լեզուներով խօսին. և տգէտներ և ան-
հաւատներ մտնեն այնտեղ, միթէ չե՛ն ասիլ թէ՝
24 դուք գժված էք ։ Բայց թէ որ ամենքը մարգա-
րէանան, և մին անհաւատ կամ տգէտ մարդ այն
տեղ մտնէ, նա ամենիցը կ'յանդիմանվի, և ամե-
25 նիցը կ'քննվի ։ Եւ նորա սրտին ծածուկը յայտնի
կ'լինի. և ապա երեսին վերայ ընկած Աստուծոյն
երկրպագութիւն կանէ, և խոստովան կ'լինի թէ՝
ուղորդ որ Աստուած ձեր միջումն է ։
26 Ուրեմն ի՞նչպէս է ե՛ղբարք երբոր մինտեղ ժո-
ղովվէք, ձեզանից ամեն մէկը թէ սաղմոս ունենայ,
թէ վարդապետութիւն ունենայ, թէ յայտնու-
թիւն ունենայ, թէ լեզուներ ունենայ. թէ թարգ-
մանութիւն ունենայ, այն ամենը թո՛ղ շինութեան

27 համար լինի ։ Թէ որ մինը լեզուներով խօսի՝ թո՛ղ
երկու , և թէ որ էլ աւելի շատ՝ երեք լինին . և
ապա մինը մինիցն ետեւ և մինը թո՛ղ թարգմա-
28 նէ ։ Ապա թէ որ մին մարդ չ՚կայ որ թարգմանէ ,
թո՛ղ լուռ կենայ եկեղեցումը . թո՛ղ իրեն մըտ-
29 քումն ու Աստուծոյ հետ խօսի ։ Բայց մարգարէ-
ները թո՛ղ երկու կամ երեք խօսին , և ուրիշները
30 քննեն ։ Բայց թէ որ մին ուրիշի որ այնտեղ նըս-
տած է՝ յայտնութիւն լինի , այն առաջինը թո՛ղ
31 լուռ կենայ . Պատճառնոր՝ կարող էք մի՛ը մինից
ետեւ մարգարէանալ . որ ամէնքը սովորին , և ա-
32 մէնքը մխիթարւին ։ Ինչուոր՝ իսկ մարգարէների հո-
33 գիներն էլ՝ մարգարէներին հնազանդվում են . Պատ-
ճառնոր՝ Աստուած խռովութեան Աստուած չէ ,
բայց խաղաղութեան . ինչպէս որ սրբերի ամէն ե-
կեղեցիներումը ։
34 Կանայքն ամէն եկեղեցիներումը լո՛ւռ կենան .
ինչուոր՝ նորանց հրաման չ՚կայ որ խօսին՝ այլ որ
հնազանդ լինին . ինչպէս որ օրէնքն էլ ասում է ։
35 Ապա թէ որ մին բան կամենան սովորիլ՝ թո՛ղ տա-
նը մէջ իրենց մարդկանցիցը հարցնեն . ինչուոր՝
36 կնկանը չի վայելում՝ որ եկեղեցումը խօսի ։ Միթէ
Աստուծոյ խօսքը ձեզանի՞ց դուրս եկաւ . կամ թէ
37 մինակ ձե՞զ հասաւ ։ Բայց թէ որ մինը կարծէ՝ որ
նա մարգարէ է՝ կամ հոգեւոր , թո՛ղ գիտենայ
38 այդ որ գրեցի ձեզ , որ Տէրի պատուիրանքն է ։ Ա-
39 պա թէ որ մինը տգէտ է , թող տգէտ լինի ։ Ու-
րեմն ե՛ղբարք՝ ջանք արէք որ մարգարէանաք , և
40 լեզուներով խօսելը մի՛ արգելէք ։ Եւ ձեր ամէն
բանը թո՛ղ պարկեշտութենով և կարգով լինի ։

ԳԼ. ԺԵ

Գրոց ասածին պէս աւետարանը . մեռելոց յարութիւնը ։

1 Իմացնում եմ ձեզ ե՛ղբարք այն աւետարանն՝ որ
աւետարանեցի , որ նորան էլ ընդունեցիք , որ նո-
2 րանում էլ հաստատված էք , Որ նորանով ապրե-
ցաք , այն բանով՝ որ ձեզ աւետարանեցի . թէ որ
բռնած ունենաք , եթէ զուր տեղն չէք հաւատա-
3 ցել . Պատճառնոր՝ ես առաջուց այն տուի ձեզ՝ որ
ես էլ ընդունեցի , թէ Քրիստոս մեր մեղաց հա-
4 մար մեռաւ՝ գրքերի ասածին պէս , Եւ թէ թաղ-
վեցաւ , և թէ երեք օրումն յարութիւն առաւ՝
5 գրքերին պէս ։ Եւ թէ երեւեցաւ Կեփասին , և յե-
6 տոյ այն տասներկուսին . Յետոյ երեւեցաւ հինգ-
հարիւրից աւելի եղբարներին մինտեղ . որ նորան-
ցից շատերն մինչեւ հիմիկ կան , և մին քանիսն
7 ննջեցին ։ Եւ յետոյ երեւեցաւ Յակոբին , յետոյ
8 ամէն առաքեալներին ։ Ամէնիցն ետեւ իբր թէ մին
9 անպիտանի՝ ինձ էլ երեւեցաւ . Ինչուոր՝ ես ա-
ռաքեալների յետինն եմ . որ արժանի էլ չեմ ա-
ռաքեալ կոչվելոյ ինչուոր՝ Աստուծոյ եկեղեցին
10 հալածեցի ։ Բայց Աստուծոյ շնորհքովն եմ ինչ որ
եմ . և նորա շնորհքն՝ որ ինձանում է՝ ունայն չէ-
լաւ . այլ նորանցից ամէնիցն աւելի աշխատեցի .
և սա՝ ո՛չ թէ ես , բայց Աստուծոյ շնորհքն՝ որ
11 ինձ հետ է ։ Ապա թէ ես՝ և թէ նորանք՝ այսպէս
քարոզեցինք , և դուք այսպէս հաւատացիք ։
12 Ապա թէ որ Քրիստոս է քարոզվում՝ որ մեռել-

ների միջից յարութիւն է առել, էլ ի՛նչպէս ձե-
զանից մի՛ քանիսն ասումեն՝ թէ Մեռելների յա-
13 րութիւն չ'կայ։ Թէ որ մեռելների յարութիւն
չ'կայ, ապա Քրիստոս էլ յարութիւն չի առել։
14 Եւ թէ որ Քրիստոս յարութիւն չի առել՝ ունայն
է մեր քարոզութիւնը, ունայն է ձեր հաւատքն
15 էլ. Եւ մենք էլ Աստուծոյ սուտ վկաներ ենք գըտ-
նըվում, որ Աստուծոյ համար վկայեցինք՝ թէ Քը-
րիստոսին յարոյց որ իրաւի չ՚յարոյց՝ թէ որ մե-
16 ռելներն յարութիւն չառնեն։ Բայց թէ որ մե-
ռելներն յարութիւն չեն առնում՝ ապա Քրիստոս
17 էլ յարութիւն չի առել։ Եւ թէ որ Քրիստոս յա-
րութիւն չի առել՝ ունայն է ձեր հաւատքը. և
18 դեռ այն ձեր մեղաց մէջն էք կենում. Ապա նո-
19 րանք՝ որ Քրիստոսումը ննջեցին կորա՞ն։ Թէ որ
մենք մինակ այս կեանքումս յոյս ունինք Քրիստոսի
վերայ, ամեն մարդկանցից աւելի ողորմելի ենք։
20 Բայց հիմիկ՝ Քրիստոս յարութիւն է առել մեռել-
ների միջից՝ ինքն ննջածների առաջինեկ պտուղը։
21 Պատճառնոր՝ մարդով ելաւ մահը, և մարդով մե-
22 ռելների յարութիւնը։ Ինչպէս որ Ադամումն ամեն-
քը մեռնումեն՝ այնպէս էլ Քրիստոսումն ամենքը
23 կենդանի կ'լինին։ Ամեն մէկն իրեն կարգումը. ա-
ռաջ Քրիստոս, և յետոյ Քրիստոնեաները նորա
24 գալըստ ժամանակումը, Եւ ապա վերջը, երբոր թա-
գաւորութիւնն Աստուծոյ և Հօր ձեռքը կ'տայ.
երբոր կ'խափանէ ամեն իշխանութիւններն ու ամեն
25 պետութիւնը և զօրութիւնը։ Պատճառնոր՝ պէտք
է որ նա թագաւորէ՝ մինչեւ որ ամեն թշնամիներն
26 իրեն ոտացը ներքեւ դնէ։ Յետին թշնամին՝ որ կը

խափանվի՝ մահն է. Ինչու որ ամեն բան հնազան-
27 դացրուց նորա ոտացը տակ։ Բայց երբոր ասէ՝ թէ
Ամեն բան հնազանդ է նորան, յայտնի է որ նո-
րանցից ջոկ որ ամեն բան հնազանդացրուց նորան։
28 Բայց երբոր ամենը կ'հնազանդվի նորան՝ այն ժա-
մանակն ինքն Որդին էլ կ'հնազանդվի նորան՝ որ
ամենը հնազանդացրուց նորան. որ Աստուած լի-
29 նի ամենն ամեն բանի մէջ. Ապա թէ չէ՝ ի՞նչ կա-
նեն նորանք, որ մեռելներին համար մկրտվումեն՝
թէ որ մեռելներն յարութիւն չառնեն էլ ինչո՞ւ
30 են բնաւ նորանց համար մկրտվում։ Ինչո՞ւ մենք
31 էլ ամեն ժամանակ նեղութիւն ենք քաշում, Եւ
ամեն ժամանակ մեռնում. երդւում եմ ուտում
ե'ղբարք՝ ձեր պարծանքովն՝ որ մեր Տէր Յիսուս Քը-
32 րիստոսումն ունիմ. Թէ որ մարդոյ համար Եփեսո-
սումը գազանների կռվի մէջ մտել էի՝ նա ի՞նչ
օգուտ էր ինձ համար, թէ որ մեռելներն յարու-
թիւն չեն առնում. ուտենք՝ խմենք, ինչու որ վա-
33 ղը կ'մեռնինք։ Մի խաբվիք. չար խօսքեր ապա-
34 կանումեն քաղցր վարքերը։ Արթո՛ւն կացէք ար-
դարութենով և մեղք մի՛ գործէք. ինչու որ՝ մին
քանիսն Աստուծոյ գիտութիւնը չունին. սա ձեր
ամօթի համար եմ ասում։

35 Բայց կ'լինի որ մինն ասէ. Մեռելներն ի՞նչպէս
յարութիւն կառնեն՝ կամ թէ ի՞նչ մարմնով կը-
36 գան։ Ա՛նմիտ, նա որ դու սերմանումես, չի կենդա-
37 նանալ՝ թէ որ չ'մեռնի։ Եւ նա որ սերմանումես, չէ
թէ այն մարմինն ես սերմանում, որ պիտի ծնվի,
բայց մին մերկ հատ. թէ ցորենի լինի. և թէ ու-
38 րիշ սերմունքների։ Եւ Աստուած մարմին է տա-

լիս նորան՝ ինչպէս որ էլ կամենումէ, և ամեն մէկ
39 սերմունքներին իրենց մարմինը։ Ամեն մարմին նոյն
մարմինը չէ. այլ՝ ուրիշ մարմին է մարդկանց, ու-
րիշ մարմին անասուններին. ուրիշ մարմին թըռ-
40 չուններին՝ և ուրիշ մարմին ձկներին։ Եւ կան երկ-
նաւոր մարմիններ՝ և երկրաւոր մարմիններ. բայց
ուրիշ փառք ունին երկնաւորներն՝ և ուրիշ փառք
41 երկրաւորները։ Ուրիշ փառք է արեգականն՝ և
ուրիշ փառք է լուսնին, ուրիշ փառք աստեղնե-
րին. և մին աստղը միւս աստղից աւելի է փառ-
42 քով։ Այնպէս էլ մեռելների յարութիւնը. սերմ-
վումէ ապականութենով և յարութիւն է առնում
43 առանց ապականութեան. Սերմվումէ անարգու-
թենով և յարութիւն է առնում փառքով. սերմ-
վումէ տկարութենով և յարութիւն է առնում
44 զօրութենով։ Սերմվումէ շնչաւոր մարմին՝ և յա-
րութիւն է առնում հոգեւոր մարմին. թէ որ շըն-
45 չաւոր մարմին կայ, հոգեւոր էլ կայ։ Այնպէս էլ
գրված է. Առաջին մարդ Ադամը կենդանի շունչ
ստեղծվեցաւ. երկրորդ Ադամը կենդանի անող հո-
46 գի։ Միայն թէ հոգեւորն առաջ չէ, բայց շըն-
47 չաւորը, և յետոյ հոգեւորը։ Առաջին մարդն երկ-
րիցն է՝ հողից եղած. բայց երկրորդ մարդն է՝ Տէ-
48 րը, երկնքից։ Ինչպէս որ այն հողեղէնը, այնպէս
էլ հողեղէններս. և ինչպէս որ այն երկնաւորը,
49 այնպէս էլ երկնաւորները։ Եւ ինչպէս որ հողեղէնի
պատկերը հագանք. երկնաւորի պատկերն էլ պիտի
50 հագնենք։ Միայն թէ սա եմ ասում ե՛ղբարք՝ որ
մարմին և արիւն չեն կարող Աստուծոյ արքայու-
թիւնը ժառանգել. և ո՛չ ապականութիւն անա-
պականութիւնն է ժառանգում։

51 Ահա՛ մին խորհուրդ եմ ասում ձեզ. Ո՛չ թէ
մենք ամենքս կ՚ննջենք, այլ ամենքս կ՚նորոգվինք.
52 Յանկարծ աչքի թօթափելում յետին փողի ժա-
մանակին. ինչուոր փողը կ՚փչվի, և մեռելներն յա-
րութիւն կառնեն առանց ապականութեան, և
53 մենք կ՚նորոգվինք։ Պատճառնոր՝ պէտք է որ այս
ապականութիւնս անապականութիւնը հագնէ, և
54 այս մահկանացուս անմահութիւնը հագնէ։ Բայց
երբոր այս մահկանացուս անմահութիւնը կ՚հագ-
նէ, և այս ապականութիւնս անապականութիւնը,
այն ժամանակը կ՚լինի այն բանն՝ որ գրված է, թէ
55 Մահը քո յաղթութեանդ մէջ կուլ տվվաւ։ Ո՛վ
մահ՝ ո՞րտեղ է քո յաղթութիւնդ. դժո՛խք՝ ո՞ր-
56 տեղ է քո ծակողդ։ Մահին ծակողը մեղքն է,
57 և մեղքի զօրութիւնը՝ օրէնքը։ Բայց շնորհակա-
լութիւն Աստուծոյ, որ մեզ յաղթութիւն տուաւ
58 մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը։ Ուրեմն իմ
սիրելի՛ եղբարքս, հաստա՛տ էլէք, անշա՛րժ կա-
ցէք, ամեն ժամանակ աւելի առաջացէ՛ք Տէրի
գործումը, գիտացէ՛ք՝ որ ձեր աշխատանքը զուր
չեն Տէրի առաջին։

ԳԼ. ԺԶ

Երուսաղէմայ կարօտ Քրիստոնեից համար օգնութիւն հաւաքել. խրատներ. ողջոյններ. վերջաբանութիւն։

1 Բայց այն տուրք ժողովելոյն կողմանէ՝ որ սրբերին
համար է, ինչպէս որ Գաղատացոց եկեղեցիներու-
2 մը պատուիրեցի, այնպէս էլ դո՛ւք արէք։ Ամեն

մէկ՝ մէկ շաբթի օրերը ձեզանից ամեն մէկը թո՛ղ
3 իրեն մօտ հաւաքէ՝ ինչ որ կ՚յաջողվի ։ Որ չ՚լինի
թէ երբոր գամ. այն ժամանակը լինի ժողովելը՝
բայց երբո՛ր գամ՝ իսկ այն որ ձեր թղթերովը ընտ-
րեցիք, նորանց կուղարկեմ՝ որ ձեր շնորհքը տա-
4 նեն Երուսաղէմ. Ապա թէ որ ինձ էլ պէտք լինի
5 գնալ՝ թո՛ղ ինձ հետ գնան, Բայց ձեզ մօտ կը-
գամ՝ երբոր Մակեդոնիայիցն կանցանեմ իսկ երբ-
6 որ Մակեդոնիային մէջ մտն կ՚գամ. Եթէ բանն
այնպէս բերէ, ձեզ մօտ կ՚մնամ՝ կամ թէ ձմեռը
կանցացնեմ. որ դուք ինձ ճանապարհ դնէք՝ որ-
7 տեղ որ գնալու լինիմ ինչու որ՝ չե՛մ կամենում
որ ձեզ հիմիկ անցանողի պէս տեսնեմ. յոյս ու-
նիմ որ մին ժամանակ ձեզ մօտ կենամ. թէ որ
8 Տէրը հրամայէ ։ Բայց հիմիկ Եփեսոսումն եմ կե-
9 նում՝ մինչև Պէնտէկոստէն. ինչու որ՝ մեծ և հար-
կաւոր դուռն բացուած է ինձ, և հակառակողնե-
րը շատ են ։

10 Հիմիկ թէ որ Տիմոթէոսը գայ՝ նայեցէ՛ք թէ ինչ-
պէս անվախ լինի ձեզ մօտ. ինչու որ՝ Տէրի գործ-
11 քըն է գործում, ինչպէս որ ես ։ Չ՚լինի որ մինն
անարգէ նորան. և խաղաղութենով ճանապարհ
դրէ՛ք նորան՝ որ ինձ մօտ գայ. ինչու որ՝ սպասում
12 եմ նորան եղբարներին հետ ։ Բայց Ապողոս եղբօր
համար՝ որ շատ աղաչեցի նորան՝ որ ձեզ մօտ գայ
եղբարներին հետ. և իրաւի որ կամք չունէր՝ որ
հիմիկ գայ. բայց կ՚գայ երբոր պարապութիւն կու-
նենայ ։

13 Արթո՛ւն էլէք, հաստա՛տ կացէք հաւատքումը.
14 ժի՛ր էլէք և ուժովացէք ։ Ձեր ամեն բաները թո՛ղ
սիրով լինին ։

15 Աղաչումե՛մ ձեզ ե՛ղբարք՝ գիտումէք Ստեփանի
և Փորտունատի տունը, որ Աքայեցոց պտուղն
են, և իրենց անձները սրբերի ծառայութեան տը-
16 ւելին, Որ դուք էլ հնազանդ լինիք այնպէսինե-
րին. և ամենին՝ որ գործքի և աշխատանքին ընկեր
17 են ։ Ուրախ էլայ Ստեփանի և Փորտունատի և
Աքայիկոսի գալոյն համար, ինչու որ նորանք ձեր
18 պակասութիւնն լցրին. Պատճառանոր՝ իմ և ձեր
հոգւոյն հանգիստ տուին. ուրեմն ճանաչեցէ՛ք այն-
պիսիներին ։

19 Ողջոյն են տալիս ձեզ Ասիացոց եկեղեցիները.
շատ ողջոյն են տալիս ձեզ Տէրով Ակիւղասը և
Պրիսկիղան՝ այն եկեղեցոյն հետ՝ որ նորան տանն
20 է. Ողջոյն են տալիս ձեզ բոլոր եղբարքը. ողջո՛յն
տուէք իրար սուրբ համբուրովը ։

21 Այդ ողջոյնդ՝ իմ Պօղոսիս ձեռքինն է ։ (22) Թէ
որ մինը Տէր Յիսուսին չ՚սիրէ, անիծված լինի՝ մա-
23 րանաթա ։ Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը
24 ձեզ հետ լինի ։ Եւ իմ սէրս ձեզ ամենիդ հետ
Քրիստոս Յիսուսումը. Ամէն ։

(Կորնթացւոց վերայ առաջին թուղթ Փիլիպպէ քաղաքէն
գրուեցաւ՝ Ստեփանի և Փորտունատի և Աքայիկոսի
ձեռամբ ։)

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ողջոյն . առաքելոյն մխիթարութիւնը և համատառութիւնը ։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ՝ Աստուծոյ
կամքովը , և Տիմոթէոս եղբայրը . Աստուծոյ եկե-
ղեցույն՝ որ Կորնթոսումն է՝ ամեն սրբերին հետ՝ որ
2 Աքայեցոց ամեն կողմերումն են , Շնորհք ձեզ հետ
և խաղաղութիւն՝ Աստուած մեր Հօրիցը , և Տէր
Յիսուս Քրիստոսիցը .
3 Օրհնված է Աստուած և մեր Տէր Յիսուսի Քը-
րիստոսի Հայրը . ողորմութեան Հայրը , և ամեն
4 մխիթարութեան Աստուածը , Որ նա մխիթարումէ
մեզ մեր ամեն նեղութիւններումն , որ մենք կարող
լինինք մխիթարել նորանց՝ որ ամեն նեղութիւննե-
րի մէջ են , այն մխիթարութենովն՝ որ մենք Աստ-
5 ուածանից նորանով մխիթարվումենք ։ Պատճառն-
որ՝ ինչպէս որ Քրիստոսի չարչարանքներն աւելա-
ցան մեզանում . այնպէս էլ Քրիստոսի ձեռովը մեր
6 մխիթարութիւնն աւելի կ'լինի ։ Որ թէ նեղութիւն

քաշենք՝ նա ձեր մխիթարութեան և փրկութեան
համար է . և թէ որ մխիթարվինք՝ ձեր մխիթարու-
թեան և փրկութեան համար է , որ յաջողվումէ
իսկ այն չարչարանքների համբերութենովն , որ մենք
7 չարչարվումենք ։ Եւ մեր յոյսը ձեզ համար հաս-
տատ է . ինչուոր՝ գիտումենք թէ՝ ինչպէս որ չար-
չարանքներին մասնակից էնք՝ այնպէս էլ մխիթա-
8 րութեանը ։ Պատճառնոր չեմ կամենում ե՛ղբարք՝
որ դուք չ'գիտենաք այն նեղութիւնն որ Ասիային
մէջ մեզ վերայ եկաւ . ինչուոր՝ մեր կարողութե-
նիցն աւելի ծանր եկաւ մեզ վերայ . մինչեւ որ մեր
9 կենաց յոյսն էլ կտրել էինք ։ Բայց և մենք ինք-
ներս մեզ վերայ մեռնելոյ վճիռն առինք . Նորա-
համար որ՝ մեր անձներիս վերայ յոյս չ'դնենք ,
բայց Աստուծոյ վերայ՝ որ մեռելներին յարուցա-
10 նումէ , Որ նա այնպէսի մահիցը մեզ փրկեց՝ և էլ
11 կ'փրկէ ։ Ինչուոր՝ յոյս ունինք՝ որ դեռ էլ կ'փըր-
կէ ձեր մեզ համար արած աղօթքի օգնականութե-
նովը . որ այն շատ կերպ շնորհքներիցն՝ որ մեզա-
նում են՝ շատերի ձեռովը գոհութիւնները շատա-
նան մեզ համար ։
12 Պատճառնոր՝ մեր պարծանքը սա է , մեր խղճմը-
տանքի վկայութիւնը . որ սրբութենով ու Աստու-
ծոյ ճշմարտութենովը՝ և չէ թէ մարմնական իմաս-
տութենով , բայց Աստուծոյ շնորհքովը վարվեցանք
13 աշխարհքին մէջ . և էլ աւելի ձեզ հետ ։ Ինչու-
որ՝ ուրիշ բան չենք գրում ձեզ , բայց մինակ նա
որ կարդումէք՝ և տեղեակ էք . որ յոյս ունիմ թէ
14 մինչեւ վերջը կ'գիտենաք ։ Ինչպէս որ էլ փոքր 'ի
շատէ հասկացաք մեզ . ինչուոր՝ մենք ձեր պար-

ծանք ենք. ինչպէս որ դուք էլ մերը՝ Տէր Յիսու-
սի Քրիստոսի օրումը։
15 Եւ սորա վերայ վստահացած՝ կամենումէի որ
առաջ ձեզ մօտ գամ, որ դուք երկու չափով շը-
16 նորհք ընդունիք։ Եւ որ ձեզանից գնամ Մակե-
դօնիա. և դարձեալ Մակեդօնիայից ձեզ մօտ
գամ, և ձեզանից ճանապարհ ձգվիմ դէպի Հը-
17 րէաստան. Բայց թէ որ սա միտք արի՝ միթէ թե-
թեւամտութենո՞վ վարվեցայ. և կամ թէ նա որ
միտք եմ անում՝ մարմնո՞յ կերպով եմ միտք ա-
նում. որ իմ կողմանէս էլ այոն՝ այո լինի, և չէն՝
18 չէ՛։ Աստուած հաւատարիմ է՝ որ մեր խօսքն՝ որ
19 ձեզ հասաւ, այո և չէ չէլաւ։ Ինչուոր՝ Աստու-
ծոյ Որդին Յիսուս Քրիստոսը, որ մեզանով ձեր մի-
ջումդ քարոզվեցաւ, ինձանով և Սիղուանոսով և
Տիմօթէոսով այո և չէ չէլաւ. բայց այոն նորա-
20 նում էլաւ։ Պատճառնոր՝ որքան Աստուծոյ աւե-
տիքներ որ կան՝ նորանում են այոն. և նորահա-
մար էլ ամենը նորանով որ Աստուծոյն փառք լի-
21 նի մեզանով. Բայց Աստուած է՝ որ մեզ ձեզ հետ
22 հաստատեց Քրիստոսումը և մեզ օծեց, Որ նա էլ
կնքեց մեզ. և Հոգւոյ գրաւը մեր սրտին մէջ դը-
23 րաւ։ Բայց ես Աստուծոյն վկայ եմ կանչում իմ
անձիս վերայ. որ ձեզ խնայելոյ համար՝ կրկին չե-
կի Կորնթոս. ինչու որ՝ չէ թէ հաւատքումս ձեզ
վերայ տիրապետումենք՝ բայց ձեր շնորհացդ գործ-
ընկեր ենք, ինչուոր՝ հաւատքով հաստատ կանգ-
նած էք։

ԳԼ. Բ

Զղջացող մեղաւորին կրկին ընդունել։

1 Բայց ես սա ընտրեցի՝ որ կրկին տրտմութենով
2 չ'գամ ձեզ մօտ։ Ինչուոր՝ թէ որ ես ձեզ տրտ-
մացնեմ էլ ո՞վ է՝ որ ինձ ուրախացնէ՝ եթէ ո՛չ
3 նա՝ որ ինձանից տրտմութիւն է առնում. Եւ սա
գրեցի՝ որ չ'լինի թէ երբոր գամ՝ տրտմութիւն քա-
շեմ այն կողմանէ՝ որ պէտք էր ինձ ուրախ լինիլ.
յուսա դրած եմ ձեզ ամենիդ վերայ, որ իմ ու-
4 րախութիւնս՝ ձեր ամենինդ է։ Պատճառնոր՝ շատ
ցաւից և սրտիս նեղութենիցը գրեցի ձեզ շատ ար-
տասուքով չէ՛ թէ՝ որ տրտմիք բայց որ իմ սէ-
րըս գիտենաք, որ աւելի ունիմ ձեզ վերայ։
5 Ապա թէ որ մինը տրտմացրուց չէ թէ ինձ տրտ-
մացրուց. բայց փոքր 'ի շատէ, որ ձեզ ամենիդ
6 ծանրութիւն չ'տամ. Բաւական է այնպիսի մար-
դուն համար այն պատիժն՝ որ նա շատերից է։
7 Սորանից ետեւ՝ նորա հակառակը՝ աւելի ներեցէ՛ք
դուք նորան, և մխիթարեցէ՛ք. որ չ'լինի թէ շատ
8 սաստիկ տրտմութենիցն այնպիսին խեղդվի։ Սորա-
համար աղաչումեմ ձեզ՝ որ սէրը հաստատէք նո-
9 րա վերայ. Իսկ նորահամար էլ գրեցի ձեզ, որ
ձեզ փորձով գիտենամ՝ եթէ ամեն բանի մէջ հը-
10 նազանդ էք. Բայց թէ որ դուք մինին ներէք՝ ա-
պա ես էլ պատճառնոր՝ ես էլ թէ որ ներեմ,
ինչ բան որ ներումեմ՝ ձեզ համար է Քրիստոսի
11 առաջին։ Որ չ'գրկվինք սատանայիցը. ինչուոր՝
նորա մտքի խորհուրդներին անտեղեակ չենք։

12 Բայց երբոր ես հասի Տրովադա Քրիստոսի աւե-
տարանին համար, և դուռն ինձ համար բաց էր
13 Տէրով. իմ հոգիս հանգիստ չ'առաւ. ինչուոր՝ ես
իմ Տիտոս եղբօրս էնտեղ չ'գտի. բայց նորանցից
բարեւմնաս առած գնացի Մակեդոնիա.
14 Բայց շնորհակալութիւն Աստուծոյն՝ որ ամեն
բանի մէջ մեզ հռչակաւոր է անում Քրիստոս Յի-
սուսումը. և իրեն գիտութեան հոտը մեզանով
15 յայտնում է ամեն տեղ. ինչուոր՝ մենք Քրիստոսի
անուշ հոտ ենք Աստուծոյ առաջին, փրկվածնե-
16 րին մէջ և կորածներին մէջ. Մին քանիսին հա-
մար՝ հոտ մահիցը դէպի մահը. և մին քանիսին
համար՝ հոտ կեանքիցը դէպի կեանքը. և այս բա-
17 նիս համար ո՞վ բաւական կ'լինի. Պատճառնոր՝
ուրիշների պէս չենք, որ Աստուծոյ խօսքը վաճա-
ռականութիւն են անում. բայց ինչպէս հաստա-
տութենիցը, ինչպէս Աստուածանից՝ Աստուծոյ ա-
18 ռաջին խօսումենք Քրիստոսումը.

ԳԼ. Գ

Ա. Աւետարանի պաշտօնէից փառքը և զօրութիւնը. գիր և հոգի. Մոսէսին քօղը և Նոր ուխտի փառքը.

1 Ուրեմն նորէն սկսումենք մեր անձներս գովելով
ձեր առաջին դնել. թէ և պէտք չեն մեզ՝ ինչպէս
որ մին քանիսին՝ ձեզ վերայ՝ կամ ձեզանից գովու-
2 թեան թղթեր. Բայց մեր թուղթս դուք էք՝ մեր
սրտի մէջ գրած՝ ամեն մարդկանցից իմացված և
3 կարդացված. Դուք որ յայտնի էլած էք՝ թէ Քը-

րիստոսի թուղթն էք, մեզանից ծառայված. և
գրված՝ ո՛չ թէ թանաքով. բայց կենդանի Աստու-
ծոյ Հոգովը. ո՛չ թէ քարէ տախտակների վերայ,
4 բայց սրտի մարմնէ տախտակների վերայ. Մին
այսպիսի յոյս ունինք Աստուծոյն Քրիստոսի ձեռո-
5 վը, Որ ո՛չ թէ մենք մեզանով բաւական ենք մին
բան միտք անել ինչպէս մեզանից, բայց մեր ա-
6 մեն բաւական լինիլն Աստուածանից է, Որ նա էլ
բաւական արաւ մեզ Նոր կտակարանի պաշտօնեայ
լինելոյ՝ ո՛չ թէ գրով. այլ Հոգով. ինչուոր՝ գիրն
7 սպանում է, այլ Հոգին կենդանացնում է. Բայց թէ
որ մահի պաշտամունքն՝ որ գրով քարէ տախտակ-
ների վերայ փորած էր՝ փառքով էլաւ, մինչեւ որ
Իսրայէլի որդիքը չէին կարող Մոսէսի երեսին մտիկ
անել՝ նորա երեսի փառքին համար. որ խափան-
8 վելու էր. Էլ ո՞րքան աւելի հոգոյ պաշտամունքը
9 փառքով պիտի լինի. Ինչուոր եթէ դատապարտու-
թեան պաշտամունքը փառքով էր, էլ ո՞րքան ա-
ւելի արդարութեան պաշտամունքը փառքով է.
10 Սորահամար՝ այն փառաւորն էլ փառաւոր չէ՛ այս
կողմանէս՝ այն աւելի աւելացած փառքին համար.
11 Պատճառնոր՝ թէ որ նա որ խափանվելու էր՝ փառ-
քով էր, էլ ո՞րքան աւելի փառքով է նա՝ որ
12 պիտի հաստատ կենայ. Ուրեմն՝ որ այսպէսի յոյս
ունինք, էլ շատ համարձակութենով վարվինք.
13 Եւ ո՛չ թէ ինչպէս որ Մոսէսն իրեն երեսին վերայ
քօղ էր ձգում՝ որ Իսրայէլի որդիքը չ'նային այն
14 բանի վերջին՝ որ պէտք էր խափանվի. Բայց նորանց
միտքը կուրացաւ. ինչուոր՝ մինչեւ այս օրվան ժա-
մանակս իսկ այն քօղը ձգված է Հին կտակարանի

կարդացմունքին վերայ․ և վեր չի առնվում, որ
15 նա Քրիստոսով պէտք է խափանվի։ Բայց մինչև
այսօր՝ երբոր Մօսէսին կարդումեն, իսկ այն ծած-
16 կոցը նորանց սրտերին վերայ կայ։ Այլ երբոր դէ-
պի Տէրը կ՚դառնան՝ ապա այն ծածկոցը վեր կառ-
17 նըվի։ Ինչուոր՝ Տէրն է Հոգին․ որտեղ որ Տէրի
18 Հոգին է՝ այնտեղ ազատութիւն է։ Բայց մենք ա-
մենքս՝ որ բաց երեսով Տէրի փառքն ինչպէս հայե-
լըյն մէջ տեսնումենք՝ իսկ այն պատկերի նման նո-
րոգվումենք՝ փառքից դէպի փառք․ ինչպէս թէ
Տէրին Հոգուցը։

ԳԼ․ Դ

Աւետարանի գիտութեան զօրութիւնը տկարութեան և նեղութեան մէջ։

1 Սորահամար մենք այս պաշտօնս ունինք, ինչպէս
որ ողորմութիւն գտինք՝ և չենք ձանձրանում,
2 Բայց ամօթալի ծածուկ բաներիցը յետ քաշվե-
ցանք որ խորամանկութենով չ՚վարվինք, և Ա-
տուծոյ խօսքը չ՚ծռենք․ այլ ճշմարտութեան յայտ-
նութենովը մեր անձներս ընդունելի անենք ամեն
3 մարդկանց խղճմտանքին՝ Աստուծոյ առաջին։ Ապա
թէ մեր աւետարանը ծածկված էլ լինի, նա կո-
4 րածներին մէջն է ծածկված․ Որ այս աշխարհիս
Աստուածն այն անհաւատների սրտերն կուրաց-
րուց, որ Քրիստոսի փառաւոր աւետարանի լու-
սաւորութիւնը չ՚ծագէ նորանց վերայ․ որ նա ա-
5 ներևոյթ Աստուծոյ պատկերն է։ Ինչուոր՝ մենք

ո՛չ թէ մեր անձներս ենք քարոզում, բայց Յի-
սուս Քրիստոսին՝ թէ նա Տէրն է․ և մենք ձեր
6 ծառաներ՝ Քրիստոսի համար։ Պատճառնոր՝ Ա-
տուած՝ որ ասաց թէ՝ խաւարից լոյս ծագէ․ ին-
քըն մեր սրտերին մէջ ծագեց՝ Աստուծոյ փառաց
գիտութեան լուսաւորութիւնը տալոյ Յիսուսի Քը-
7 րիստոսի դէմքովը։ Բայց այս գանձս ունինք հողէ
շինած ամաններումը․ որ զօրութեան մեծութիւնն
8 Աստուածանից լինի, և ո՛չ թէ մեզանից։ Ամեն
բանի մէջ նեղացած՝ բայց չենք թուլացած, կա-
րօտութեան մէջ կացած՝ բայց տարակուսութիւն
9 չ՚քաշած․ Հալածված՝ բայց երեսից չընկած․ չար-
10 չարված՝ բայց չ՚ապականված․ Ամեն ժամանակ Յի-
սուսի մահն մեր մարմնումը տանումենք՝ որ Յիսու-
11 սի կեանքն էլ մեր մարմնումս յայտնվի։ Պատճա-
ռըն որ՝ մենք որ կենդանի ենք, միշտ Յիսուսի հա-
մար մեռնելոյ մէջ ենք մատնվում․ որ Յիսուսի
կեանքն էլ յայտնվի մեր մահկանացու մարմնումս։
12 Ուրեմն մահը մեզանում է զօրանում, և կեանքը
13 ձեզանում։ Բայց մին հաւատքի հոգին ունինք․
ինչպէս որ էլ գրված է Հաւատացի՝ և նորահա-
մար էլ խօսեցի․ մենք էլ հաւատումենք՝ և իսկ
14 սորահամար էլ խօսումենք։ Սա ենք գիտում, որ
նա՝ որ Յիսուսին յարոյց, մեզ էլ Յիսուսի հետ
կ՚յարուցանէ, և ձեզ հետ էբէն առաջին կը
15 կանգնացնէ։ Պատճառնոր՝ ամեն բան ձեզ հա-
մար է․ որ շատացած շնորհքն այն շատերի գո-
հութենիցն՝ աւելանայ Աստուծոյ փառաց համար։
16 Նորահամար էլ չենք թուլանում․ բայց թէ և
մեր դրսի մարդն ապականվումէ, այլ մեր ներսի

17 մարդս օրէ ցօր նորոգվումէ։ ինչու որ՝ մեր ժամա-
նակաւոր թեթեւ նեղութեան շատութիւնը՝ յա-
ւիտենական աւելութենով փառքի մեծութիւն է
18 գործում մեզ համար։ Պատճառնոր՝ այս երեւօղ
բաներս չենք գիտում, բայց նա որ չի երեւում.
ինչու որ՝ երեւօղներս մին քիչ ժամանակ են, և
չերեւօղներն յաւիտենական։

ԳԼ· Ե

Երկնային բնակարանի փափագ· առաքելական պաշտօնի կչիռը· բոլորը նորացել է· հաշտութեան խօսքը։

1 Պատճառնոր՝ գիտումենք որ՝ եթէ մեր երկրաւոր
շինուածքի տաճարը քանդվի, Աստուածանից մին
շինուածք ունինք՝ մին տաճար առանց ձեռքի գործ-
2 ված, որ յաւիտենական է երկնքումը, Եւ սորա-
համար զզվումենք· ինչու որ՝ ցանկանումենք հագ-
3 նիլ այն բնակութիւնն՝ որ երկնքից է։ Միայն
4 թէ՝ երբոր նա հագնինք՝ մերկ չ'գտնվինք։ Պատ-
ճառնոր՝ որ մենք այս ծածքիս տակը ծանրացած
զզվումենք· որ չենք կամենում մերկանալ, բայց
նա սորա վերայ հագնիլ· որ այս մահկանացուս այն
5 կեանքին մէջ առնվի։ Բայց նա՝ որ այս բանս յա-
ջողումէ մեզ՝ Աստուած է· որ Հոգւոյ գրաւը տուաւ
6 մեզ։ Նորահամար ամեն ժամանակ համարձակու-
թիւն ունինք, և գիտումենք թէ՝ քանի որ այս
մարմնումս ուշանումենք՝ Տէրիցն օտարանումենք։
7 ինչու որ՝ հաւատքով ենք գնում, և ոչ թէ կար-
8 ծիքով։ Բայց սիրտք ենք անում, և էլ աւելի հա-

ճոյ է մեզ այս մարմնիցս դուրս գնանք՝ և Աստու-
9 ծոյ մօտ մնանք։ Նորահամար էլ ջանք ենք ա-
նում, որ եթէ ուշանանք՝ և եթէ դուրս գնանք՝
10 մինակ հաճոյ լինինք նորան։ Պատճառնոր՝ մենք
ամենքս պէտք է յայտնի լինինք Քրիստոսի դա-
տաստանի աթոռի առաջին· որ ամեն մէկն ընդու-
նի իրեն մարմնովը՝ ինչ որ առաջ գործեց՝ թէ բա-
րի, և թէ չար։
11 Ուրեմն՝ մենք Տէրի ահաւորութիւնը լաւ գիտե-
լով, մարդկանց միտքը հաւանացնումենք· բայց
Աստուծոյ առաջին պիտի յայտնվինք· և ես յոյս
12 ունիմ՝ որ ձեր մտքումդ էլ յայտնի եմ. Չէ՛ որ՝
իբր թէ նորէն մեր անձներս գովելով ձեր առաջին
դնենք· բայց պատճառ ենք տալիս ձեզ՝ մեզ հա-
մար պարծենալոյ, որ մին բան ունենաք նորանց
դէմ՝ որ երեւութին պէս են պարծենում, և ո՛չ
13 թէ սրտով։ Ինչու որ՝ թէ որ չափիցն անցանք՝ նա
Աստուծոյ համար է· և թէ որ չափաւոր ենք՝ նա
14 ձեզ համար է։ Պատճառնոր՝ Քրիստոսի սէրն ըս-
տիպումէ մեզ՝ որ սա միտք անենք· ինչու որ՝ եթէ
մինն ամենին տեղ մեռաւ, ապա ամենքը մեռած
15 են։ Եւ նա ամենին վերայ մեռաւ, որ նորանք որ
կենդանի են՝ ո՛չ թէ իրենց անձներին համար կեն-
դանի լինին, այլ նորա համար՝ որ իրենց վերայ
16 մեռաւ, և յարութիւն առաւ։ Էլ սորանից ե-
տեւ մենք ոչ մինին չենք գիտում մարմնոյ կողմա-
նէ· և թէ և Քրիստոսին էլ գիտումէինք մարմնոյ
կողմանէ, բայց հիմիկ՝ էլ այնպէս չենք գիտում։
17 Բայց թէ որ մինը Քրիստոսումն է՝ մին նոր ստեղծ-
ված է· ինչու որ հինն անցաւ, և հիմիկ ամեն բան

18 նոր էլաւ ։ Միայն թէ՝ այն ամենն Աստուածանից
է, որ մեզ իրեն հետ հաշտացրուց Քրիստոսի ձե-
ռովը · և մեզ հաշտութեան պաշտօնն տուաւ ։
19 ինչուոր՝ Աստուած էր նա, որ Քրիստոսով աշ-
խարհքս հաշտացրուց իրեն հետ · և նորանց մեղ-
քերը չ՚համարեց նորանց · և հաշտութեան խօսքը
20 մեր միջումը դրաւ ։ Ուրեմն Քրիստոսի կողմանէն
պատգամաւոր ենք, ինչպէս որ Աստուած էլ յոր-
դորումէ մեզանով · աղաչումենք Քրիստոսի կողմա-
21 նէն՝ հաշտուեցէ՛ք Աստուծոյ հետ ։ Պատճառնոր՝
ինքը նորան՝ որ մեղք չէր գիտում, մեզ համար
մեղք արաւ · որ մենք նորանով Աստուծոյ արդա-
րութիւն լինինք ։

ԳԼ. Զ

Աստուծոյ շնորհքը արժանաւոր կերպով գործածելոյ մասին · առաքելոց սէրն ու օրինակը · անհաւատներից բաժանվիլ ։

1 Ձեր գործքի ընկեր ենք՝ և աղաչումենք, որ դուք
2 Աստուծոյ շնորհքը զուր տեղը չ՚ընդունիք ։ Պատ-
ճառնոր՝ ասումէ · ընդունելի ժամանակումը լսեցի
քեզ, և փրկութեան օրումն օգնեցի քեզ · ահա՛
ընդունելի ժամանակ է · հիմիկ փրկութեան օրը ։
3 Չ՚լինի որ ոչ մին բանով գայթակղութիւն տաք,
4 որ պաշտօնը չ՚նախատվի · Բայց ամեն բանի մէջ
ձեր անձներդ առաջ դրէ՛ք ինչպէս Աստուծոյ պաշ-
տօնեաներ՝ շատ համբերութենով նեղութիւննե-
5 րում, վիշտերում, չարչարանքներում, Ծեծուե-

լում, բանտերում, խռովութիւններում, աշխա-
6 տանքներում, հսկմունքներում, ծոմերում, Սըր-
բութենում, գիտութենում, երկայնմտութենում,
քաղցրութենում, Սուրբ Հոգով, առանց կեղծա-
7 ւորութեան սիրով · ճշմարտութեան խօսքերովը,
Աստուծոյ զօրութենովը՝ արդարութեան զէնքն ա-
8 ռած աջ կողմանէ և ձախ կողմանէ ։ Փառքով և
անարգանքով, գովասանքով և բամբասանքով,
9 ինչպէս մոլորացնողներ՝ և ճշմարիտ խօսողներ · ինչ-
պէս չ՚ճանաչվածներ՝ և ճանաչվածներ · ինչպէս մե-
ռածներ՝ և ահա՛ կենդանի ենք · ինչպէս պատժը-
10 վածներ՝ և մահապարտ չ՚դատվածներ ։ ինչպէս տրտ-
մածներ՝ և միշտ ուրախ ենք · ինչպէս աղքատներ՝
և շատերին հարստացնումենք · ինչպէս թէ ո՛չ ինչ
11 ունինք՝ և ամեն բան ունինք ։ Մեր բերանս բաց-
ված է դէպի ձեզ Կո՛րնթացիք, և մեր սիրտս լայն
12 արձակ էլած ։ Մեզանից մին բանով նեղութիւն
13 չունիք, եթէ ոչ ձեր սրտի գութովը նեղվիք ։ Հի-
միկ՝ որ ճիշտ մին հատուցումն ինչպէս թէ իմ որ-
դիքներիս հետ ունենամ · դուք էլ լայն արձակ է-
լէք ։
14 Ու անհաւատներին հետ լծի ընկեր մի՛ լինիք ·
պատճառնոր՝ ի՞նչ հաղորդութիւն կայ արդարու-
թեանն՝ անօրէնութեան հետ · և կամ թէ ի՞նչ
15 հաւասարութիւն լուսոյն՝ խաւարին հետ ։ Ու կամ
թէ ի՞նչ միաբանութիւն կայ Քրիստոսին՝ Բելիա-
րին հետ · կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալն
16 անհաւատին հետ ։ Կամ ի՞նչ նմանութիւն կայ
Աստուծոյ տաճարին՝ կուքերի տան հետ · բայց
դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք, ինչպէս որ

Աստուած ասաց, թէ Նորանց միջումը կ'բնակ-
վիմ, և նորանց միջումը ման կ'գամ. և Նորանց
Աստուած կ'լինիմ, և նորանք իմ ժողովուրդս ։
17 Նորահամար՝ նորանց միջիցը դուրս գնացէ՛ք և
ջոկվեցէ՛ք, ասում է Տէրը, և պիղծ բաների մի՛
18 մօտենաք ։ Եւ ես կընդունիմ ձեզ. և ես Հօր տեղ
կ'լինիմ ձեզ, և դուք ինձ որդիքների և աղջիկնե-
րի տեղ կ'լինիք, ասում է Ամենակարող Տէրը ։

ԳԼ. Է

Յորդորանք սրբութեան հետեւելոյ համար. աստուածային տրտմութիւն. կորնթացոց նախանձն ու հնազանդութիւնը ։

1 Բայց որովհետեւ մենք այս աւետիքս ունինք սի՛-
րելիներ՝ մեր անձներս սրբենք հոգոյ և մարմնոյ ա-
մեն պղծութենիցը, սրբութիւնը կատարենք Աս-
տուծոյ ահովը ։
2 Մտիկ արէք մեզ՝ որ մինի դէմ մեղք չարինք,
3 և մինի վնաս չ'տուինք, և մինին չ'զրկեցինք ։ Ո՛չ
թէ ձեզ դատապարտելոյ համար եմ ասում սա.
պատճառնոր՝ հենց առաջուց ասացի, որ դուք մեր
սրտումն էք՝ մինչեւ ձեզ հետ կենդանի լինիլ և
4 մեռնիլ ։ Շատ համարձակութիւն ունիմ դէպի
ձեզ. շատ պարծանք ունիմ ձեզ համար. մխիթա-
րութենով լիքն եմ. ուրախութենով աւելացած
5 եմ մեր ամեն նեղութիւններումն ։ Պատճառնոր՝
երբոր հասինք Մակեդոնիա, ոչ մին բանով էլ
հանգիստ չ'գտվաւ մեր մարմնոյն համար, բայց ա-
մեն բանի մէջ նեղութիւն քաշեցինք. ինչուոր՝

6 դրսից կռիւ՝ և ներսից ահ և վախ ։ Բայց Նա որ
խոնարհներին մխիթարում է՝ Աստուած մխիթարեց
7 մեզ Տիտոսի գալովն ։ Ո՛չ թէ մինակ Նորա գա-
լովն, բայց էլ էն մխիթարութենովն՝ որ Նա ձեր
միջումն մխիթարվեցաւ, երբոր Նա պատմեց մեզ
ձեր սրտի փափաքն՝ ձեր ողբալն՝ և ձեր ջերմեռան-
դութիւնն ինձ համար, մինչեւ որ էլ աւելի ու-
8 րախացայ. Որ թէ և տրտմացրի ձեզ այն թղթո-
վըն՝ չե՛մ զղջանում, և թէ որ զղջացած էլ էի.
որովհետեւ տեսնումեմ՝ որ էն թուղթն մին փոքր
9 ժամանակ ձեզ տրտմացրուց ։ Էլ հիմիկ ուրախ
եմ, ո՛չ թէ Նորահամար որ տրտմեցաք՝ բայց որ
տրտմեցաք ապաշխարութենով. ինչուոր՝ դուք Աս-
տուծոյ տրտմեցաք, որ 'ի մեզանից ոչ մին բանով
10 վնաս չ'քաշէք ։ Պատճառնոր՝ այն տրտմութիւնն որ
Աստուծով է, ապաշխարութիւն է գործում փրը-
կութեան համար առանց զղջանալոյ. բայց աշ-
11 խարհքի տրտմութիւնն՝ մահ է գործում ։ Հիմիկ՝
հենց նա որ դուք Աստուծով տրտմեցաք, ո՛րքան
ջանք գործեց ձեզանում, կամ աղաչանք՝ կամ
յանդիմանութիւն՝ կամ վախ՝ կամ փափաք՝ կամ
նախանձաւորութիւն՝ կամ վրէժխնդրութիւն. ին-
չուոր՝ ամեն բանով ցոյց տուիք ձեր անձներդ՝ որ
12 անմեղ էք այդ բանումդ ։ Ուրեմն թէ և ես գրեցի
ձեզ՝ ո՛չ թէ նորա համար էր՝ որ զրկանք արաւ,
և ո՛չ թէ նորա համար՝ որ զրկանք քաշեց. բայց
որ ձեր ջանքն՝ որ մեզ վերայ ունիք, յայտնի լինի
13 ձեզ մօտ Աստուծոյ առաջին ։ Նորահամար մխի-
թարված ենք ձեր մխիթարութեան համար. և էլ
աւելի ուրախացանք Տիտոսի ուրախութեան հա-

մար. ինչուոր՝ նորա հոգին ձեր ամենիցդ հանգիստ
14 էր առած։ Պատճառնոր՝ ինչ որ էլ ձեզ համար
պարծեցայ նորա առաջին՝ չամաչեցի բայց ինչպէս
որ ամեն բան ճշմարտութենով խօսեցինք ձեզ հետ,
այնպէս էլ մեր պարծանքն ճշմարիտ էլան Տիտոսի
15 առաջին։ Բայց նորա սէրն էլ աւելի ձեզ վերայ
կապված է. ինչուոր՝ մեր միտքս էր բերում ձեր
ամենի հնազանդութիւնն, թէ ինչպէս ահով և
16 դողալով ընդունեցիք իրան։ Սորահամար՝ ուրախ
եմ, որ ամեն բանի մէջ վստահութիւն ունիմ ձեզ
վերայ։

ԳԼ. Ը

Յորդորանք աղքատաց համար ողորմութիւն տալոյ համար։

1 Եղբարք՝ ցո՛յց եմ տալիս ձեզ Աստուծոյ այն շը-
նորհքն՝ որ Մակեդոնացոց եկեղեցիներին տված
2 է։ Ինչուոր նեղութեան մեծ փորձումն էլ աւելի
շատ էլաւ նորանց ուրախութիւնը և նորանց ծա-
նըր աղքատութիւնն էլ աւելի էլաւ նորանց հա-
3 մար մեծ առատութիւն։ Պատճառնոր՝ իրենց կա-
րօղութեան չափովը՝ վկայումեմ, և կարօղութենի-
4 ցըն էլ աւելի։ Ինքն իրե՛նց կամքով շատ աղա-
չանքով աղաչումէին՝ որ այն պաշտօնի շնորհքը,
և հաղորդութիւնն՝ որ սրբերին է լինում, մեր ձեռ-
5 քը տան։ Ո՛չ թէ որքան որ յոյս ունէինք, բայց
իրենց անձներն էլ տուին, առաջ Տէրին՝ և ապա
6 մեզ՝ Աստուծոյ կամքովը, Որ մենք էլ Տիտոսին ա-
ղաչեցինք՝ որ ինչպէս որ առաջուց սկսեց՝ այնպէս

7 էլ այդ շնորհքդ կատարէ ձեր միջումը։ Բայց ինչ-
պէս որ ամեն բանի մէջ աւելանումէք հաւատքով
և խօսքով և գիտութենով և ամեն ջանքով և ձեր
սիրովն որ դէպի մեզ է. ապա այդ շնորհքումդ էլ
8 աւելացէ՛ք։ Ո՛չ թէ իբր հրաման տալով եմ ա-
սում, բայց ուրիշների ջանք անելոյն համար, և
ձեր սիրոյ համար՝ ձեր հաւատարմութիւնն եմ
9 փորձում, ինչուոր՝ գիտումէք մեր Տէր Յիսուսի Քը-
րիստոսի շնորհքը. որ ձեզ համար աղքատացաւ
նա՝ որ հարուստ էր, որ դուք նորա աղքատութե-
10 նովը հարստանաք։ Եւ այս բանիս մէջ մին խրատ
եմ տալիս ինչուոր՝ նա օգուտ է ձեզ. որ ո՛չ թէ
միմիայն անելը՝ բայց էլ կամենալն առաջուց սկսե-
11 ցիք՝ անցած տարուցն հետէ։ Իսկ հիմիկ անելն էլ
կատարեցէ՛ք. որ ինչպէս որ յօժարութիւնը կամ-
քիցն է առաջ գալիս այնպէս էլ անելն՝ ունեցա-
12 ծի չափովը։ Ինչուոր՝ եթէ յօժարութիւն կայ,
ունե՛ցածի չափովն ընդունելի՛ է՝ և չէ թէ չունե-
13 ցածի չափովը։ Պատճառնոր՝ չէ թէ ուրիշներին
հանգստութիւն եմ կամենում, և ձեզ նեղութիւն,
14 Բայց հաւասարութենով՝ հիմիկվայ ժամանակումս
ձեր աւելութիւնդ նորանց պակասութեանն ծառա-
յէ. որ նորանց աւելութիւնն էլ ծառայէ ձեր պա-
կասութեանը, որ հաւասարութիւն լինի. ինչպէս
15 որ էլ գրված է, Թէ նա՝ որ շատ արաւ, չաւե-
16 լացաւ. և նա որ քիչ՝ չ'պակասեցաւ։ Բայց շը-
նորհակալութիւն Աստուծոյն՝ որ իսկ այն ջանքը
17 ձեզ համար ձգեց Տիտոսին սիրտը։ Ինչուոր՝ իմ
աղաչանքս ընդունեց, և շատ յօժար սրտով փու-
18 թաց որ ձեզ մօտ գայ։ Եւ նորա հետ ուղարկե-

ցինք այն եղբօրն՝ որ նորա գովասանքն աւետարա-
19 նումն է ամեն եկեղեցիների մէջ․ Եւ չէ թէ միայն
այդքան, բայց նա եկեղեցիներից էլ ձեռնադրը-
ված՝ մեր պանդխտութեան ընկեր էլաւ այս շնորհ-
քումն՝ որ մենք ծառայումենք նորան՝ Աստուծոյ
20 փառաց համար և մեր յօժար սրտովս․ Բայց այս
բանիցս զգուշութիւն էինք անում, որ չ'լինի թէ
մինը մին աղտ ձգէ այս հաստատ լիութեանս վե-
21 րայ՝ որ մենք ծառայումենք նորան․ Պատճառն-
որ՝ բարի բաներ ենք մտածում, չէ թէ միայն Տէ-
22 րի առաջին, բայց մարդկանց առաջին էլ․ Եւ նո-
րանց հետ ուղարկեցինք մեր եղբօրն՝ որ նորան շատ
բանի մէջ ընտրեցինք և շատ անգամ ժիր գտինք․
և հիմիկ՝ էլ աւելի ջանք անօղ այն մեծ վստահու-
23 թենովն՝ որ ունի դէպի ձեզ․ Բայց թէ որ Տիտոսի
համար խօսք լինի, նա իմ հաւասարս է՝ և ձեզ
համար գործընկերս․ և թէ որ մեր եղբարներին՝
նորանք եկեղեցոյ առաքեալներն են և Քրիստոսի
24 փառք․ Ուրեմն ձեր սիրոյ չափն՝ և մեր ձեր հա-
մար պարծենալոյ պատճառն, ցո՛յց տուէք դորանց՝
ամեն եկեղեցիների առաջին․

ԳԼ․ Թ

Ուրախութեամբ նուէր տալոյ օրհնութիւնը․

1 Բայց այն պաշտամունքին համար՝ որ սրբերին է
2 լինում, աւելո՛րդ է ինձ որ գրեմ ձեզ․ ինչուոր՝
գիտումեմ ձեր յօժարութիւնն, որ նորանով Մա-
կեդօնացոց մէջ ձեզ համար պարծեցել եմ․ թէ

Աքայեցիքն անցած տարուցն հետէ պատրաստ են,
3 և ձեր ջանքը շատերին յորդորեց․ Եւ եղբարնե-
րին ուղարկեցինք, որ մեր ձեզ վերայ պարծենալը
զուր չ'լինի այդ կողմանէդ․ բայց ինչպէս որ խօ-
4 սել եմ, լաւ պատրա՛ստ գտնվէք․ Որ չ'լինի թէ
երբոր Մակեդօնացիքը մեզ հետ գան՝ և ձեզ չը
պատրաստված գտնեն, մենք էլ՝ որ չասենք թէ
դուք, ամօթ լինինք այդ մեր պարծանքի կողմանէ․
5 Նորահամար հարկաւոր համարեցի եղբարներին ա-
ղաչել, որ առաջուց ձեզ մօտ գան, և առաջուց
պատրաստեն ձեր առաջուց խոստացած օրհնութիւ-
նըն՝ որ պատրաստ լինի, այնպէս՝ ինչպէս օրհնու-
6 թիւն՝ և ո՛չ թէ ինչպէս ագահութիւն․ Պատճա-
ռընոր՝ նա որ խնայելով է սերմում, խնայելով էլ
հնձումէ․ և նա՝ որ առատութենով է սերմում,
7 առատութենով էլ հնձումէ․ Ամեն մէկն ինչպէս
որ սրտի յօժարութիւն կայ, չէ թէ հարկադրու-
թենով և տրտմութենով․ ինչուոր՝ Աստուած ու-
8 րախ տուօղներին է սիրում․ Բայց Աստուած կա-
րօղ է ամեն շնորհքներն աւելացնել ձեզանում․
որ ամեն բանի մէջ ամեն ժամանակ ամեն բաւա-
կանութիւն ունէք, և ամեն բարի գործքերով
9 աւելանաք․ Ինչպէս որ էլ գրված է․ փռեց և աղ-
քատներին տուաւ․ Նորա արդարութիւնը մնումէ
10 յաւիտեան․ Բայց նա՝ որ սերմ ցանօղներին սերմ
է ընծայում, և հաց՝ կերակուրի համար, նա էլ
կ'ընծայէ և կ'շատացնէ ձեր սերմունքները, և ձեր
11 արդարութեան պտուղը կ'մեծացնէ, Որ ամեն բա-
նի մէջ հարուստ լինիք ամեն լիութենով որ նա
12 մեզանով գոհութիւն է բերում Աստուծոյն․ Ին-

չուոր՝ այս տուրքիս պաշտօնը չէ թէ մինակ սրբե-
րի պակասութիւնը լցնելոյ համար է՝ բայց էլ որ
շատերի ձեռովն Աստուծոյ գոհութիւնը շատանայ,
13 Որ այս պաշտամունքիս փորձովն Աստուած փառա-
ւորվի ձեր Քրիստոսի աւետարանի հնազանդ դա-
ւանութեանը համար. և այն առատ հաղորդու-
14 թեանովը՝ որ նորանց և ամենին հետ է լինում. Եւ
նորանց ձեզ համար արած աղօթքովը, որ նորանց
փափագը ձեզ վերայ է՝ Աստուծոյ այն հարուստ շը-
15 նորհքներին համար՝ որ ձեզանում են, Բայց շնոր-
հակալութիւն Աստուծոյ՝ իրեն անպատմելի պար-
գեւներին համար ։

ԳԼ. Ժ

*Առաքելական հակառակորդացն ու սուտ առաքելոց բամ-
բասանացը և հպարտութեանը դէմ։*

1 Բայց իսկ ես Պօղոս աղաչում եմ ձեզ՝ Քրիստոսի
հեզութեանովն ու հանդարտութեանովը, որ ես ձեր
դէմացը ցած եմ ձեր միջումը բայց հեռուանցից
2 համարձակ եմ դէպի ձեզ. Աղաչում եմ որ չլինի՝
թէ մօտիցն էլ վստահութեանով համարձակ լինիմ
կամ այնպէս համարվիմ՝ որ յանդուգն լինիմ մին
քանիսին դէմ, որ մեզ համար կարծումեն՝ թէ
3 մարմնոյ պէս ենք վարվում. ինչուոր՝ թէ և մարմ-
նով ենք վարվում՝ բայց չէ թէ մարմնոյն պէս ենք
4 զինուորութիւն անում. Պատճառնոր՝ մեր զինուո-
րութեան զէնքը մարմնաւոր չէ, բայց Աստուծով
զօրաւոր, բերդերը քանդելոյ. խորհուրդներն ենք

5 քանդում, Եւ ամեն բարձրութիւնն՝ որ գոռոզա-
նումէ Աստուծոյ գիտութեան դէմ. և ամեն միտ-
քը գերի ենք անում՝ որ հնազանդ լինի Քրիստո-
6 սին, Եւ պատրաստ կացած ենք վրէժխնդրութիւն
անելոյ ամեն անհնազանդութեան համար՝ երբոր
ձեր հնազանդութիւնն էլ կատարեալ կ՚լինի ։
7 Ամեն մէկի երեսին նայեցէք, թէ որ մինն իրեն
անձին վերայ վստահ է՝ որ նա Քրիստոսինն է, թող
իրեն մտքումն սա էլ մտածէ՝ թէ ինչպէս որ նա
8 Քրիստոսինն է՝ այնպէս էլ մենք ։ Ինչուոր՝ եթէ էլ
աւելի պարծենալու լինիմ մեր իշխանութեան հա-
մար՝ որ Տէրը տուաւ մեզ, ձեզ շինելոյ՝ և ո՛չ թէ
9 քանդելոյ համար, բնաւ չեմ ամաչիլ ։ Որ չերե-
ւիմ իբր թէ վախ ձգել ձեզ վերայ այս թղթերո-
10 վըս ։ Լինի՞ որ ասէք, Թղթերս ծանր են և սաս-
տիկ. բայց մարմնոյ կերպարանքը տկար՝ և խօսքն
11 էլ ո՛չ ինչ համարված ։ Այնպէսին թո՛ղ սա միտք
անէ, թէ մենք ինչպէս որ հեռուանց ենք այդ թըղ-
թերիդ խօսքերովն, այնպէս էլ մօտանց գործքով ։
12 Պատճառնոր՝ մենք չենք համարձակվում մեր ան-
ձը կշռել և հաւասարել մին քանիսին հետ՝ որ
իրենց անձները գովելով ձեր առաջին են դնում.
բայց նորանք ինքն իրենցով իրենց անձները չա-
փումեն, և այնպէս իրենք իրենց կշռելով բան չե՛ն
13 հասկանում ։ Բայց մենք ո՛չ թէ չափից դուրս ենք
պարծենում. այլ այն կանոնի չափովն, որ նորա-
նով Աստուած բաժանեց մեզ՝ հասնել մինչեւ ձեզ
14 մօտ ։ Ո՛չ թէ՝ իբր թէ ձեզ մօտ հասած չ՚լինէինք,
և մեր անձներս երկայնացնէինք. ինչուոր՝ մինչեւ
15 ձեզ մօտ հասինք Քրիստոսի աւետարանովը ։ Եւ

չափից դուրս չենք պարծենում՝ օտար աշխատանք-
քովը, բայց յոյս ունինք՝ որ ձեր հաւատքի մե-
ծանալոյ ժամանակումը՝ նորէն մեծանանք ձեզա-
16 նում աւելութենով մեր կանոնիս պէս, Որ ձեզա-
նից այն կողմն էլ աւետարանը քարոզենք՝ և չէ
թէ օտար կանոնով պատրաստուածների վերայ պար-
17 ծենանք։ Ինչուոր՝ ով որ պարծենումէ՝ թո՛ղ Տէ-
18 րովը պարծենայ։ Պատճառնոր՝ ոչ թէ նա՝ որ ի-
րեն անձն գովելով առաջի է դնում՝ նա է ընտրը-
ված. այլ նա՝ որ Տէրը նորան գովելով առաջի է
դնում։

ԳԼ. ԺԱ

Առաքեալին նեղութիւնքը եկեղեցիները կազմելոյ ժա-
մանակին։

1 Լա՛ւ կ՚լինէր՝ թէ որ մին քիչ իմ յիմարութեա-
2 նըս էլ ներէիք. և ի՞նչ էլ համբերեցէ՛ք։ Ձեզ հա-
մար նախանձաւոր եմ Աստուծոյ նախանձովն ինչու-
որ՝ ձեզ մին մարդոյ հետ նշանեցի՝ որ ինչպէս մին
3 սուրբ կոյս Քրիստոսի առաջին կանգնացնեմ։ Բայց
վախենումեմ՝ որ չ՚լինի թէ ինչպէս օձն իրեն խո-
րամանկութենովը խաբեց Եւային՝ այնպէս էլ ձեր
միտքն ապականվի այն միամտութենիցն՝ որ Քրիս-
4 տոսումն է։ Ինչուոր՝ թէ որ մինը գայ և ուրիշ
Քրիստոս քարոզէ՝ որ մենք չ՚քարոզեցինք, կամ ու-
րիշ հոգի առնէք՝ որ չառիք, կամ ուրիշ աւետա-
րան՝ որ չընդունեցիք, ապա լաւ կ՚համբերէիք նո-
5 րանց։ Բայց ես այսպէս եմ համարում՝ թէ ոչ

մին բանով էլ պակաս չեմ՝ քան թէ այն լաւ ա-
6 ռաքեալները։ Թէ և տգէտ լինիմ խօսքով՝ բայց
չէ թէ գիտութենով. միայն թէ ամեն բանի մէջ
7 իսպառ անձներս յայտնեցինք ձեզ։ Կամ թէ մին
մե՞ղք գործեցի՝ որ իմ անձս խոնարհացրի. և նա
նորա համար՝ որ դուք բարձրանաք. ինչուոր՝ Ա-
8 ստուծոյ աւետարանն ձրի աւետարանեցի ձեզ։ Ու-
րիշ եկեղեցիները թալանեցի՝ և վարձք առի՝ որ
9 ձեզ ծառայեմ։ Եւ երբոր ձեզ մօտ եկի, թէ և
մին բանի պակասութիւն քաշեցի, ձեզանից մինին
ծանրութիւն չ՚տուի. ինչուոր՝ իմ պակասութիւնս
այն Մակեդօնացիներիցն եկած եղբարքը լցրին. և
ամեն բանի մէջ առանց ձեզ ծանրութիւն տալոյ՝
10 իմ անձս պահեցի, և էլ կ՚պահեմ։ Պատճառնոր՝
Քրիստոսի ճշմարտութիւնն ինձանում կայ. որ այս
պարծանքս Աքայեցոց կողմերումը չեն խափանվիլ
11 ինձանից. Ինչո՞ւ համար. իբր թէ ձեզ չե՞մ սի-
12 րում. նա Աստուած է գիտում։ Նա որ անում-
եմ՝ էլ կանեմ. որ պատճառը կտրեմ նորանց՝ որ
պատճառն են խնդրում. որ ինչուոր պարծենում-
13 են՝ նորանք էլ մեզ նման գտնվին։ Ինչուոր՝ այն-
պէսիները սուտ առաքեալներ, խաբեբայ մշակներ,
Քրիստոսի առաքեալների կերպարանքովը կերպա-
14 րանվումեն։ Եւ զարմանալի բան էլ չէ՛. ինչուոր՝
իսկ ինքը սատանան էլ լուսոյ հրեշտակի կերպա-
15 րանքն իրեն վերայ է առնում։ Եւ բնաւ մեծ բան
չէ՝ որ նորա պաշտօնեաներն էլ արդարութեան
պաշտօնեաներին նման կերպարանվին. որ նորանց
16 վերջն էլ իրենց գործքերին պէս կ՚լինի։ Դարձեալ
ասումեմ. չ՚լինի՛ որ մինն ինձ յիմար համարէ.

տպա թէ չէ՝ գոնեա՛ յիմարի պէս ընդունեցէ՛ք
17 ինձ, որ ես էլ մին քիչ պարծենամ։ Եւ սա ինչ
որ խօսումեմ՝ ո՛չ թէ Տէրին մօտիկ տալով եմ խօ-
սում. այլ ինչպէս յիմարութենով ինչպէս որ այդ
18 պարծանքիդ կարգը բերումէ։ Եւ որովհետեւ շա-
տերը մարմնոյ կողմանէն պարծենումեն՝ ես էլ այն-
19 պէս կ'պարծենամ։ Ցօժար մտքով համբերումէք
20 անմիտներին՝ ձեր իմաստութենովը։ Պատճառոր՝
համբերումէք թէ որ մինը խաբէ ձեզ, թէ որ մինը
ծառայացնէ, թէ որ մինը ձեր բանն ուտէ, թէ
որ մինը բան առնէ, թէ որ մինը գոռոզանայ, թէ
21 որ մինը ձեր երեսին զարկէ։ Այդ անարգանքիդ
համար եմ ասում, իբր թէ մենք տկարացա՞նք
արդեօք. ինչ բանով որ մինն համարձակվի, (յի-
մարութենով եմ ասում.) ես էլ կ'համարձակվիմ։
22 Եբրայեցի՞ են, ես էլ. Իսրայէլացի՞ են, ես էլ.
23 Աբրահամի զաւա՞կ են, ես էլ. Քրիստոսի պաշ-
տօնեանե՞ր են, համարձակութենով կասեմ՝ թէ
էլ աւելի ես էլ, թէ աշխատանքով աւելի, թէ
ծեծով էլ աւելի, թէ բանտով նորանցից աւելի,
24 թէ մահով շատ անգամ։ Հրէաներիցը հինգ ան-
գամ՝ քառասունից մինը պակաս ծեծ կերայ.
25 Երեք անգամ ծաղկով ծեծվեցայ. մին անգամ
քարկոծվեցայ. երեք անգամ նաւակոծ էլայ. ցե-
26 րեկ և գիշեր անդնդումը նեղութի՛ւնքաշեցի։ Շատ
անգամ ճանապարհներումը, գետերիցը նեղութիւն-
ներ, աւազակներիցը նեղութիւններ, ազգիցս նե-
ղութիւններ, հեթանոսներիցը նեղութիւններ, քա-
ղաքի մէջ նեղութիւններ, անապատի մէջ նեղու-
թիւններ, ծովի մէջ նեղութիւններ, սուտ եղբար-

27 ներիցը նեղութիւններ. Ջանքի մէջ և աշխատանքի
մէջ. շատ անգամ արթնութիւնների մէջ սովի և
ծարաւի մէջ. շատ անգամ ծոմի մէջ ցրտի և
28 մերկութեան մէջ. Թո՛ղ ուրիշ նեղութիւններն
էլ. և որ ամեն ժամանակ շատ զբաղմունք էր ինձ
29 վերայ կիտվում՝ և ամեն եկեղեցիների հոգսը. Ո՞վ
կ'հիւանդանայ՝ և ես չե՞մ հիւանդանալ. և ո՞վ
30 կ'գայթակղվի՝ և ես չեմ բորբոքվիլ. Թէ որ պար-
ծենալ պէտք լինի ինձ, իմ տկարութենովս կ'պար-
31 ծենամ։ Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի
Հայրն՝ որ յաւիտեան օրհնեալ է՝ գիտումէ որ
32 սուտ չեմ ասում։ Դամասկոսումն Արետա թագա-
ւորի ազգապետը Դամասկացոց քաղաքին պահ էր
33 դրել՝ որ ինձ բռնէ։ Եւ պատուհանիցը քթոցով
կախվեցայ պարսպիցը, և փախայ նորա ձեռքիցը։

ԳԼ. ԺԲ

*Առաքեալին յայտնութիւնքը, փորձութիւնքը և անշա-
հասէր սէրը։*

1 Ապա՝ պարծենալ որ պէտք լինի, էլ օգուտ չի
բերում ինձ. բայց կ'գամ Տէրի տեսիլքներին և
2 յայտնութիւններին մէջ։ Մին մարդ եմ գիտում
Քրիստոսումը տասն չորս տարուց առաջ, եթէ
մարմնով էր՝ չեմ գիտում, և եթէ առանց մարմ-
նոյ էր՝ չեմ գիտում, Աստուած է գիտում. նա
3 յափշտակվեցաւ մինչեւ երրորդ երկինքը։ Եւ գի-
տումեմ այնպէսի մարդն եթէ մարմնով և եթէ ա-
ռանց մարմնոյ էր՝ չեմ գիտում. Աստուած է գի-

4 տում, Որ նա յափշտակվեցաւ դրախտի մէջ. և
անասելի բաներ լսեց՝ որ մարդոյն պէտք չէ նորանց
5 խօսել։ Այնպէսոյն համար պարծենամ. բայց իմ
անձիս համար չ'պարծենամ, բայց մինակ իմ տկա-
6 րութեանս համար. Ինչուոր՝ թէ էլ կամենամ
պարծենալ՝ յիմար չեմ լինիլ. պատճառնոր՝ ու-
ղորդ եմ ասում, բայց խնայումեմ՝ որ չ'լինի թէ
մինն ինձ համար աւելի բան համարէ, քանթէ
7 նա՝ որ ինձանում տեսնէ կամ ինձանից լսէ։ Եւ
որ փառաւոր յայտնութիւններումս չ'հպարտանամ,
մարմնոյ խայթ տվվաւ ինձ՝ Սատան հրեշտակ, որ
8 ինձ բռունցքով ծեծէ, որ չ'գոռոզանամ։ Եւ նո-
րահամար երեք անգամ աղաչեցի Տէրին, որ նա
9 հեռացնէ ինձանից։ Եւ ինձ ասաց. իմ շնորհքս
բաւական է քեզ համար, ինչուոր՝ իմ զօրութիւ-
նըս տկարութեան մէջն է կատարվում. և նորա-
համար աւելի լաւ կ'լինի ինձ տկարութիւններով
պարծենալ, որ Քրիստոսի զօրութիւնը բնակվի ին-
10 ձանում։ Նորահամար ուրախ եմ տկարութիւննե-
րումը, թշնամանքներումը, վիշտերումը, հալա-
ծանքներումը, և նեղութիւններումը Քրիստոսի
համար. ինչուոր՝ երբոր տկարանումեմ, այն ժա-
11 մանակը զօրանումեմ։ Յիմար էլայ, ինչուոր դուք
բռնադատեցիք. պատճառնոր՝ պէտք էր ինձ ձե-
զանից վկայութիւն առնել՝ թէ ոչ մին բանով
պակաս չէլայ քանթէ այն լաւ առաքեալները որ
12 թէ և ես ո՛չ ինչ եմ։ Բայց առաքելոյն նշաննե-
րը ձեր միջումը գործվեցան՝ ամեն համբերութե-
նով՝ նշաններով և հրաշքներով և զօրութիւննե-
13 րով։ Ապա ի՞նչ է՝ որ նորանով պակաս գտվաք

քանթէ ուրիշ եկեղեցիները. եթէ ո՛չ նորանով որ
ես ծանրութիւն չ'տուի ձեզ. բաշխեցէ՛ք ինձ այդ
վնասդ։
14 Ահա՛ աս երեք անգամն է՝ որ պատրաստված եմ
ձեզ մօտ գալոյ՝ և ձեզ բեռն չեմ լինիլ. պատ-
ճառնոր՝ չե՛մ ուզում ձեր բանը՝ բայց ձեզ. ին-
չուոր՝ ո՛չ թէ որդիքը հարանց համար պէտք է
15 գանձ հաւաքեն՝ այլ հարքն որդոց համար։ Բայց
ես յօժար սրտով ձեր անձներիդ համար ծախք
կանեմ, և ծախք կ'լինիմ. թէ և աւելի սիրելով
ձեզ՝ ես քիչ սիրվիմ։
16 Բայց կ'լինի՝ որ ես ոչ մին բանով ծանրութիւն
չէլայ ձեզ միայն թէ՝ ես որ խորագէտ էի, խեղ-
17 քով բռնեցի ձեզ։ Միթէ նորանց ձեռովն որ ձեզ
18 մօտ ուղարկեցի՝ մին բա՞ն քաշեցի ձեզանից։ Ա-
ղաչեցի Տիտոսին՝ և նորա հետ այն եղբօրն էլ ու-
ղարկեցի. միթէ Տիտոս ձեզանից մին բա՞ն քաշեց.
չէ՞ որ մենք իսկ մին հոգով վարվեցանք. չէ՞ որ
իսկ մին ճանապարհ գնացինք։
19 Մին էլ կարծումէք՝ թէ անուշ խօսքով ձեզ ա-
ղաչո՞ւմենք. Աստուծոյ առաջին Քրիստոսումը խօ-
սումենք, որ ամեն բան սի՛րելիներ՝ ձեր շինութեան
20 համար է։ Բայց վախումեմ, որ չ'լինի թէ իմ գա-
լոյ ժամանակը ձեզ այնպէս չ'գտնեմ՝ ինչպէս որ
կամենումեմ և ես գտնվիմ ձեզ համար՝ ինչպէս
որ դուք էլ չէք կամենում. որ նորէն չ'լինի՝ կը-
ռիւ, նախանձ, բարկութիւններ, գրգռութիւն-
ներ, չարախօսութիւններ, խօսք խառնելը, գոռո-
զութիւններ, ամբարտաւանութիւններ, խռովու-
21 թիւններ. Որ չ'լինի թէ նորէն իմ գալոյ ժամա-

նակն՝ իմ Աստուածս ցածացնէ ձեզ մօտ. և սուգ-
մնեմ շատերին համար՝ որ առաջուց մեղք գոր-
ծեցին, և չապաշխարեցին՝ այն պղծութեան և պո-
ռնկութեան և գիճութեան համար՝ որ գործեցին ։

ԳԼ. ԺԳ

Պաւղոյ սպառնալիք Քրիստոսի զօրութեամբ. յորդորանք ինքնաճանաչութեան և ապաշխարութեան համար ։

1 Սա երեք անգամն է՝ որ ձեզ մօտ եմ գալիս, որ
երկու և երեք վկայի բերանից ամեն բան հաս-
2 տատվի ։ Առաջուց ասացի և կրկին առաջ ա-
սումեմ՝ իբր մօտ լինող երկու անգամը. և հիմիկ
հեռուանց գրումեմ այն առաջուց մեղք գործած-
ներին՝ և ամեն ուրիշներին. որ եթէ միւսանգամ
3 գամ չեմ խնայիլ ։ Միթէ ուզումէք փո՞րձ առ-
նել Քրիստոսի, որ ինձանով ձեզ հետ խօսումէ.
4 որ ձեր միջումը զօրաւոր է, և տկար չէ ։ Ինչուոր
թէ և խաչվեցաւ մեր տկարութենիցը, բայց կեն-
դանի է Աստուծոյ զօրութենովը. և մենք թէ և
տկարանանք նորա համար՝, բայց կենդանի կ՚լինինք
5 նորա հետ Աստուծոյ զօրութենովը ։ Փորձեցէ՛ք ձեր
անձերդ, եթէ այն հաւատքին մէջ կանգնած էք.
քննեցէ՛ք անձներդ, կամ թէ չէք գիտում անձնե-
րըդ՝ որ Յիսուս Քրիստոս ձեզանումէ. եթէ ո՛չ
6 անպիտան լինիք ։ Բայց յոյս ունիմ որ գիտենաք.
7 թէ մենք անպիտան չենք ։ Միայն խնդրումեմ Ա-
ստուածանից՝ որ չար բան չանէք. ո՛չ թէ որ մենք
ընտիր երեւինք, բայց որ դուք բարին գործէք, և

8 մենք անպիտան գտնվինք. Ինչուոր՝ չենք կարօղ
հակառակ լինիլ ճշմարտութեան. բայց ճշմար-
9 տութեան վերակացու ենք ։ Ուրախ ենք՝ երբոր
մենք տկարանումենք՝ և դուք զօրանումէք. իսկ
դորահամար աղօթք էլ ենք անում, որ դուք հաս-
10 տատ լինիք ։ Նորահամար սա հեռուանց եմ գը-
րում. որ չ՚լինի թէ իմ գալոյ ժամանակը սաստ-
կութենով վարվիմ, իմ իշխանութեան չափովը,
որ Տէրը նորան տուաւ ինձ շինելոյ՝ և չէ թէ քան-
դելոյ համար ։
11 Էլ այսուհետեւ ե՛ղբարք, ո՛ղջ եղէք, հաստա՛տ
կացէք, մխիթարվեցէ՛ք, միաբան եղէք, և խաղա-
ղութենով վարվեցէք. և խաղաղութեան և սիրոյ
12 Աստուածը ձեզ հետ լինի ։ Իրար ողջո՛յն տուէք
սուրբ համբուրովը. ողջոյն են տալիս ձեզ ամեն
13 սրբերը ։ Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը, և
Աստուծոյ սէրը, և Սուրբ Հոգոյ հաղորդութիւնը
ձեզ ամենից հետ, Ամէն ։

Կորնթացւոց երկրորդ թուղթը Փիլիպէ քաղաքէն գրեցաւ՝ Տիտոսի և Ղուկասի ձեռքով ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Գաղատացոց փոփոխամտութիւնը. Պօղոսին առաքելութիւնը ։

1 ՊՕՂՈՍ *առաքեալ ո՛չ մարդկանցից և ո՛չ մար-*
դոյ ձեռով, այլ Յիսուսի Քրիստոսի ձեռովը՝ և
Հայր Աստուծոյ, որ մեռելներիցն յարոյց նորան ։
2 *Եւ ամեն եղբարքը՝ որ ինձ հետ են. Գաղատացոց*
3 *եկեղեցիներիդ ։ Շնորհք ձեզ հետ և խաղաղու-*
թիւն Աստուած Հօրիցը՝ և մեր Տէր Յիսուս Քրիս-
4 *տոսից, Որ իրեն անձն մեր մեղաց համար տուաւ,*
որ մեզ այս չար աշխարհքիցս փրկէ՝ Աստուծոյ և
5 *մեր Հօր կամքին պէս, Որ նորան փառք յաւի-*
տեանս, ամէն ։

6 *Զարմանում եմ՝ որ այդպէս շուտով փոփոխվում*
էք նորանից՝ որ ձեզ կանչեց Քրիստոսի շնորհքի
7 *մէջ դէպի ուրիշ աւետարան. Որ էլ ուրիշ չ՚կայ.*
միայն թէ որ մին քանիսը կան՝ որ ձեզ խռովացը-
նում են, և կամենում են Քրիստոսի աւետարանը

8 *փոխել ։ Բայց թէ որ մենք, կամ երկնքիցը հրեշ-*
տակ աւետարանէ ձեզ աւելի քանթէ նա՝ որ մենք
9 *աւետարանեցինք ձեզ, նզովված լինի ։ Ինչպէս որ*
առաջ ասացինք՝ նորէն հիմիկ ենք ասում, թէ որ
մինն աւելի աւետարանէ քան նա՝ որ դուք ա-
10 *ռիք, նզոված լինի՛ ։ Այս մարդկա՞նց հաճոյ լի-*
նիմ, թէ Աստուծոյն. կամ ուզեմ որ մարդկա՞նց
հաճոյ լինիմ. թէ որ դեռ մարդկանց հաճոյ լինէի,
ապա Քրիստոսի ծառայ չէի ։
11 *Ցոյց եմ տալիս ձեզ ե՛ղբարք՝ այն աւետարանն,*
որ ինձանից աւետարանվեցաւ. որ նա մարդոյ բան
12 *չէ ։ Պատճառն որ՝ ես էլ մարդուց չառի, և ոչ մի-*
նից չ՚սովորեցի. բայց Յիսուսի Քրիստոսի յայտ-
13 *նութենիցը ։ Ինչուոր՝ լսել էք դուք իմ վարքս,*
որ մին ժամանակ Հրէութեան մէջն էի. որ չափիցը
դուրս հալածումէի Աստուծոյ եկեղեցոյն, և թա-
14 *լանումէի նորան ։ Եւ Հրէութեան մէջ աւելի ա-*
ռաջ էի՝ քան իմ շատ հասակակից ընկերներս, որ
իմ ազգիս մէջն էին. աւելի նախանձաւոր էի իմ
15 *հայրենական աւանդութիւններին համար ։ Բայց*
երբոր Աստուած կամեցաւ՝ որ իմ մօրս փորիցն ինձ
16 *ջոկէց, և իրեն շնորհքովը կանչեց, Որ իրեն Որդին*
ինձանով յայտնէ. որ նորան հեթանոսների մի-
ջումն աւետարանեմ. այն ժամանակը շուտով մարմ-
17 *նոյ և արիւնի բնաւ խմաց չ՚տուի ։ Եւ չ՚գնացի Ե-*
րուսաղէմ նորանց մօտ, որ ինձանից առաջ ա-
ռաքեալներ էին. բայց գնացի Արաբիա, և կրկին
18 *դարձայ Դամասկոս ։ Յետոյ երեք տարուց ետեւ*
գնացի Երուսաղէմ, որ Պետրոսին տեսնեմ. և
19 *տասնուհինգ օր նորա մօտ էլայ ։ Առաքեալներիցն*

ուրիշ մինին չ'տեսի, այլ մինակ Տէրի եղբայր
20 Յակոբին։ Բայց այս բանը՝ որ ձեզ գրում եմ, ա-
21 հա՛ Աստուծոյ առաջին՝ որ սուտ չեմ ասում։ Յե-
22 տոյ եկի Ասորոց և Կիլիկեցոց կողմերը։ Եւ երե-
սով ճանաչ չէի այն եկեղեցիներին՝ որ Թլփատու-
23 թենիցն էին Քրիստոսումը։ Միայն թէ՝ նոքա լսել
էին, թէ նա՛ որ այն ժամանակին մեզ հալածում-
էր, հիմիկ այն հաւատքն է աւետարանում՝ որ ա-
24 ռաջ քանդումէր։ Եւ ինձանով փառաւորումէին
Աստուծոյն։

ԳԼ. Բ

Պօղոսի բաղդատութիւնը միւս առաքելոց հետ. Պետրոսին յանդիմանելը. հաւատքով արդարանալոյ քարոզութիւնը։

1 Յետոյ տասնուչորս տարուց ետեւ կրկին մին ան-
գամ Բառնաբասին հետ գնացի Երուսաղէմ, և
2 Տիտոսին էլ ինձ հետ առի։ Եւ ինչ ելած յայտ-
նութեան պատճառովը գնացի. և նորանց իմացրի
այն աւետարանն՝ որ հեթանոսներին մէջ քարո-
զումէի, և մասնաւորապէս նորանց՝ որ մեծ էին
համարված որ չ'լինի թէ՝ զուր տեղը վազած լի-
3 նիմ կամ վազեմ. Բայց Տիտոսն էլ՝ որ հեթանոս-
ների միջից ինձ հետ էր, չ'բռնադատուեցաւ թլ-
4 փատվիլ։ Եւ այն ներս պրծած սուտ եղբայրների
պատճառով, որ ներս պրծան մտնել՝ մեր ազատու-
թիւնը քննելոյ համար՝ որ Քրիստոսի Յիսուսումն
5 ունինք, որ մեզ ծառայացնեն։ Սորանից ոչ մին
քիչ ժամանակ էլ ականջ չ'դրինք՝ հնազանդ լի-

նելոյ համար. որ աւետարանի ճշմարտութիւնը ձե-
6 զանում հաստատվի։ Բայց այն կարծվածներին
համար՝ թէ մին բան լինին. ինչպէս մին ժամանակ
էին. ես ընաւ հոգս չեմ անում. պատճառն որ՝
Աստուած մարդկանց երեսին չի նայում. ինչու որ
այն կարծվածներն այնպէսի բան չիմացրին ինձ։
7 Բայց նորա հակառակն՝ երբոր տեսին թէ անթլ-
փատութեան աւետարանն ինձ հաւատացված է,
8 ինչպէս որ Պետրոսին թլփատութեան. Պատճառն-
որ՝ նա որ Պետրոսի առաքելութիւնը յաջողեց թլ-
փատութեանը մէջ ինձ էլ յաջողեց հեթանոսնե-
9 րին մէջ. Երբոր իմացան այն շնորհքն որ ինձ տըր-
ված էր. Յակոբոսն ու Կեփաս և Յօհաննէսը, որ
նորանք էին կարծված սիւները, ինձ և Բառնա-
բասին ձեռք տուին և հաւանեցան. որ մենք հե-
թանոսներին մէջ լինինք, և նորանք թլփատված-
10 ներին. Բայց միայն որ աղքատները յիշենք. որ ես
11 էլ ջանք արի նա անելոյ. Իսկ երբոր Կեփաս եկաւ
Անտիոք, ես հակառակ կացայ նորան. պատճառն-
12 որ՝ իրր մեղադրելի էր։ Ինչու որ՝ դեռ որ մին քա-
նի մարդիկ չէին եկած Յակոբիցը, առանց ջոկելոյ
հեթանոսներին հետ ուտումէր. բայց երբոր եկին,
իրեն անձն ջոկումէր և բաժանվում, վախենալով
13 նորանից՝ որ թլփատութենիցն էին։ Եւ նորա հետ
ուրիշ Հրէաներ էլ կեղծաւորութիւն արին մին-
չեւ որ Բառնաբաս էլ ծավեցաւ դէպի նորանց կեղ-
14 ծաւորութիւնը. Բայց երբոր տեսի որ աւետարանի
ճշմարտութեան մէջ շիտակ չեն գնում, ամենին
առաջին ասացի Կեփասին՝ Եթէ դու որ Հրէայ
ես, հեթանոսի պէս ես վարվում՝ և ո՛չ թէ Հը-

րէայի պէս, էլ ինչո՞ւ համար ես բռնադատում
15 հեթանոսներին՝ որ Հրէայի պէս վարվին ։ Ինչու որ
մենք բուն Հրէաներ ենք, և ո՛չ թէ հեթանոսնե-
16 րին միջիցը մեղաւորներ ։ Եւ գիտենք՝ որ մար-
դը՝ օրէնքի գործքերիցը չի արդարանում, բայց
միայն Յիսուսի Քրիստոսի հաւատքիցը. և մենք
Յիսուս Քրիստոսի հաւատացինք, որ Քրիստոսի հա-
ւատքիցն արդարանանք, և ո՛չ թէ օրէնքի գործ-
քերիցը. պատճառնոր՝ օրէնքի գործքերիցն ոչ մին
17 մարմին չի արդարանալ ։ Ապա թէ որ մենք՝ երբոր
ուզումենք Քրիստոսովն արդարանալ, էլ մեղաւոր
գտնվինք. ուրեմն Քրիստոս մեղքի պաշտօնեա՞յ է-
18 լաւ. քա՛ւ լիցի ։ Պատճառնոր՝ եթէ նա՝ որ քան-
դեցի, իսկ նորան կրկին շինեմ, ապա ես ինքս իմ
19 անձս մեղաւոր եմ երեւացնում. ինչուոր ես օրէն-
քովը մեռայ օրէնքին, որ ապրիմ Աստուծոյն, և
20 ես Քրիստոսի հետ խաչվիմ ։ Եւ սորանից ետեւ
կենդանի եմ, չէ թէ ես՝ այլ Քրիստոսը կենդանի
է ինձանում. բայց ինչ որ հիմիկ կենդանի եմ
մարմնովս՝ Որդոյ Աստուծոյ հաւատքովն եմ կենդա-
նի, որ ինձ սիրեց և իրեն անձն ինձ համար մատ-
21 նեց ։ Եւ ես Աստուծոյ շնորհքը չեմ անարգում,
ինչուոր՝ եթէ արդարութիւնն օրէնքիցն էր, ապա
Քրիստոս զուր տեղը մեռաւ ։

ԳԼ. Գ

Հաւատքին արդարութիւնը. օրէնքին նպատակը ։

1 Ո՛վ անմիտ Գաղատացիք, ո՞վ նախանձով լեց-
րուց ձեզ որ ճշմարտութեանը չ'հնազանդվիք. որ
համարեա թէ ձեր աչքերից առաջին գրվեցաւ Յի-
2 սուս Քրիստոսը խաչ հանված ։ Սա եմ մինակ կա-
մենում սովորիլ ձեզանից. Օրէնքի գործքերի՞ցն
ընդունեցիք Հոգին՝ թէ հաւատքի քարոզութենի-
3 ցըն ։ Միթէ այդքան անմի՞տ էք. հոգով սկսեցիք,
4 և հիմիկ մարմնո՞վ էք վերջանում ։ Միթէ այնքան
նեղութիւնները ձեր գլխովը զուր տեղն անցան՝ թէ
5 որ զուր լինի ։ Ապա նա՝ որ Հոգին բաժանեց ձեզ՝
և ձեր միջումն զօրութիւններ յաջողեց, նա օրէն-
քի գործքերի՞ցն է՝ թէ հաւատքի քարոզութենիցը ։
6 ինչպէս որ Աբրահամն հաւատաց Աստուծոյն՝ և
7 նա արդարութիւն համարվեցաւ նորա ։ Ուրեմն գի-
տացէ՛ք. թէ նորանք՝ որ հաւատքիցն են, նո-
8 րանք են Աբրահամի որդիք ։ Գիրքն առաջուց գի-
տալով թէ Աստուած հաւատքիցը կարդարացնէ
հեթանոսներին, առաջուց Աբրահամին խոստացաւ
9 թէ Քեզանում պիտի ամեն ազգեր օրհնվին ։ Ու-
րեմն նորանք՝ որ այն հաւատքիցն են՝ օրհնված Աբ-
10 րահամի հետ կօրհնվին ։ Պատճառնոր նորանք ա-
մենքը՝ որ օրէնքի գործքերիցն են, անէծքի տակ
են. ինչուոր գրված է. թէ Անիծեա՛լ լինի
ամեն մարդ՝ որ չ'կենայ օրէնքի գրքի միջի ամեն
11 գրվածներումն, որ ամենն անէ ։ Պատճառնոր՝ օ-

ընքովը ո՛չ ով չի արդարանում Աստուծոյ առա-
ջին, նա յայտնի է ինչուոր արդարն՝ ասումէ,
12 հաւատքիցը պիտի ապրի ։ Բայց օրէնքը հաւատքի-
ցըն չէ, այլ ով որ նորան կ'կատարէ՝ նա կապրի
13 նորանով ։ Քրիստոս գնեց մեզ օրէնքի անէծքիցը,
մեզ համար անէծք լինելով. ինչուոր՝ գրված է.
Թէ Անիծեալ լինի ամէն, ով որ փայտիցը կախ-
14 ված լինի ։ Որ Աբրահամի օրհնութիւնը հեթանոս-
ներին մէջ լինի Յիսուս Քրիստոսումը, որ մենք
Սուրբ Հոգւոյ աւետիքն ընդունինք հաւատքով ։
15 Մարդկանց սովորութեան պէս եմ ասում ե՛ղբարք.
շիտակ որ մին մարդոյ հաստատված կտակը ոչ մի-
նը չի կարող անարգել և ո՛չ էլ նորա վերայ ու-
16 րիշ հրաման աւելցնել ։ Ապա Աբրահամին խոս-
տացվեցան այն աւետիքները. և նորա զաւակին.
և չի ասում՝ Զաւակներին՝ ինչպէս շատերին. բայց
ինչպէս մինին, թէ՝ Եւ քո զաւակիդ. որ է Քրիս-
17 տոսը ։ Բայց սա եմ ասում. Այն կտակին, որ ա-
ռաջուց Աստուածանից հաստատված էր Քրիստոսի
վերայ. օրէնքն որ չորս հարիւր և երեսուն տա-
րուցն ետեւ գրվաւ, չի կարող քանդել՝ այնպէս որ
18 աւետիքը խափանվի ։ Եթէ ժառանգութիւնն օրէն-
քիցը լինէր, ապա աւետիքիցը չէր. բայց Աստ-
ուած՝ Աբրահամին շնորհեց աւետիքով ։
19 Ապա օրէնքն ի՞նչ է. նա յանցանքների պատ-
ճառովը աւելացաւ. մինչեւ որ գայ այն զաւակն,
որ խոստմունքը նորա համար էլան. և հրեշտակնե-
20 րով կարգվեցաւ միջնորդին ձեռովը ։ Բայց միջնորդ-
21 մինին չէ՝ այլ Աստուած մին է ։ Ապա ուրեմն օ-
րէնքն Աստուծոյ աւետիքներին հակառա՞կ է. քա՛ւ

լիցի. պատճառնոր՝ եթէ օրէնք տրված լինէր՝ որ
կարող էր կենդանի անել, ապա հաստատ այն օ-
22 րէնքիցն էր արդարութիւնը ։ Բայց գիրքն ամէնին
մեղքի ներքեւ փակեց, որ աւետիքը Յիսուսի Քը-
րիստոսի հաւատքիցը տրվի հաւատացեալներին ։
23 Դեռ որ հաւատքը չէր եկել՝ օրէնքի ներքեւը փակ-
ված պահվումէինք՝ դէպի այն նոր գալու հաւատ-
24 քը, որ մեզանում պէտք էր յայտնվի ։ Ուրեմն օ-
րէնքը մեզ համար դաստիարակ էլաւ՝ դէպի Յի-
25 սուս Քրիստոս, որ հաւատքիցն արդարանանք. Բայց
երբոր հաւատքը եկաւ, էլ այն վարպետի հրամա-
26 նին տակ չենք ։ Ինչուոր ամենքդ Աստուծոյ որդիք
27 էք՝ Յիսուսի Քրիստոսի հաւատքովը ։ Դուք ամեն-
քըդ՝ որ Քրիստոսումը մկրտվեցաք, Քրիստոսին հա-
28 գած էք. Ջոկութիւն չ'կայ. Ո՛չ Հրէայի՝ և ո՛չ
հեթանոսի, ո՛չ ծառայի՝ և ո՛չ ազատի, ոչ ար-
ձի՝ և ո՛չ էգի. պատճառնոր՝ դուք ամենքդ մին
29 էք Քրիստոս Յիսուսումը ։ Ապա թէ որ դուք Քրիս-
տոսին էք, ուրեմն Աբրահամի զաւակներն էք՝ ա-
ւետիքին պէս ժառանգներ ։

ԳԼ. Դ

Հին ուխտի անչափահասութիւնը. ազախինը և ազատը ։

1 Սա եմ ասում Թէ դեռ քանի ժամանակ որ ժա-
ռանգը տղայ է՝ նա ընաւ աւելի չէ քան թէ ծա-
2 ռան. թէ և ամեն բանի տէր է, Բայց վերակա-
ցուների և տնտեսների ներքեւն է՝ մինչեւ հօր դը-
3 րած հաստատած ժամանակը ։ Այնպէս էլ մենք՝

դեռ քանի որ տղայ էինք՝ աշխարհքի սկզբունքների
4 ներքեւը ծառայութեան մէջ էինք։ Բայց երբոր
ժամանակի լրլումն եկաւ, Աստուած ուղարկեց ի-
րեն Որդին՝ որ կնկանից էլաւ, և օրէնքի ներքեւ
5 մտաւ. Որ գնէ նորանց՝ որ օրէնքի տակն են, որ
6 մենք որդեգրութիւնն ընդունինք։ Եւ դուք որով-
հետեւ որդիք էք՝ Աստուած իրեն Որդու Հոգին ու-
ղարկեց մեր սրտերին մէջն՝ որ աղաղակումէ Աբբա
7 Հայր։ Ուրեմն չես ծառայ՝ բայց որդի. և թէ որ
8 որդի՝ էլ Աստուծոյ ժառանգ։ Բայց այն ժամա-
նակն՝ որ Աստուծոյն չէիք գիտում, նորանց էիք
9 ծառայում՝ որ յատուկ Աստուածներ չէին։ Իսկ
հիմիկ որ ճանաչեցիք Աստուծոյն, մանաւանդ թէ
Աստուածանից էլ ճանաչվեցաք, էլ ի՞նչպէս կըր-
կին յետ էք դառնում դէպի այն տկար և աղքատ
սկզբունքներն, որ կամենումէք կրկին ձեր անձնե-
10 րըդ նորանց ծառայութեանը մէջ ձգել։ Զգու-
թիւն էք անում օրերի մէջ՝ և ամիսների՝ և ժա-
11 մանակների՝ և տարիների մէջ։ Վախումեմ ձեզա-
նից՝ որ չ՚լինի թէ զուր տեղն աշխատեցի ձեր մի-
ջումը։
12 Ինձ նման էլէք, ինչուոր ես էլ ձեզ նման էի.
ե՛ղբարք՝ աղաչումեմ ձեզ, դուք ինձ դէմ մին
13 մեղք չէք արել։ Դուք գիտումէք՝ որ մարմնոյ տը-
կարութենով առաջին անգամն աւետարանեցի
ձեզ. և այն փորձանքներն՝ որ իմ մարմնումն էին,
14 Զանարգեցի՛ք՝ և երեսից չ՚ձգեցիք. բայց ինչպէս
Աստուծոյ հրեշտակ ընդունեցիք ինձ՝ ինչպէս Յի-
15 սուս Քրիստոսին։ Ապա ո՞րտեղ է այն ձեր երա-
նութիւնը. վկայումեմ ձեզ համար, որ եթէ կա-

րելի էր՝ ձեր աչքերը կ՚հանէիք և ինձ կ՚տայիք։
16 Ուրեմն՝ միթէ թշնամի՞ ելայ ձեզ, նորահամար որ
17 ճշմարիտն ասացի։ Բայց նորանք ձեզ նախանձով
են շարժում՝ չէ թէ բարի բանի համար. և կա-
մենումեն արգելել ձեզ՝ որ նորանց համար նախան-
18 ձաւոր լինիք։ Բայց լա՛ւ է բարի բաների համար
ամեն ժամանակ նախանձաւոր լինելը, և չէ թէ
19 մինակ երբոր ձեր միջումը լինիմ։ Իմ որդեակներս,
որ ձեզ նորէն ցաւով ծնումեմ, մինչեւ որ Քրիս-
20 տոս կերպարանվի ձեզանում։ Կամենումէի որ հի-
միկ ձեզ մօտ գամ՝ և իմ ձայնս փոխեմ. ինչուոր՝
տարակուսանքի մէջ եմ ձեզ համար։
21 Ասացէ՛ք ինձ դուք՝ որ կամենումէք օրէնքին ներ-
քեւը լինիլ, միթէ դուք օրէնքը չէ՞ք կարդացել.
22 Որ գրված է՝ թէ Աբրահամը երկու որդիք ունէր
23 մինն աղախնից, և միւսն ազատից։ Բայց նա՝ որ
աղախնից էր՝ մարմնոյ կողմանէն էր ծնված, և
24 նա՝ որ ազատից աւետիքին պէս, Որ սա օրինակի
առակ է. ինչուոր՝ իսկ այս երկու Կտակարաններն
են, մինը Սինայ սարից ծառայութեան մէջ ծըն-
25 ված՝ որ Հագարն էր. Պատճառնոր՝ Հագարը Սի-
նա սարն է՝ Արաբիայումը, և հաւասար է այս Ե-
26 րուսաղէմիս. որ իրեն որդիքներովը ծառայ է։ Բայց
վերին Երուսաղէմն ազատ է, որ մեր ամենի մայրն
27 է։ Պատճառնոր գրված է թէ, Ուրա՛խ կաց ո՛վ
ամուլդ՝ որ չէիր ծնում, կանչէ և աղաղակիր դու՝
որ երեխայ բերելոյ ցաւ չէիր քաշում. ինչուոր դու
արձակվածդ աւելի որդիք ունիս՝ քան թէ մարդ
28 ունողն։ Բայց մենք ե՛ղբարք՝ Իսահակին պէս աւե-
29 տիքի որդիքն ենք։ Միայն ինչպէս որ այն ժամա-

նակումը նա՝ որ մարմնոյ կողմանէ ծնված էր, հա-
լածումէր նորան՝ որ հոգոյ կողմանէն էր, այնպէս
30 էլ հիմիկ ։ Բայց գիրքն ի՞նչ է ասում. Դո՛ւրս
հանէ աղախինը և նորա որդին. որ աղախնի որդին
ժառանգութիւն չ'առանայ ազատի որդոյն հետ ։
31 Սորահամար ե՛ղբարք՝ մենք աղախնի որդիք չենք,
բայց ազատին. այն ազատութենովն՝ որ Քրիստոս
նորանով մեզ ազատ արաւ ։

ԳԼ. Ե

*Յորդորանք քրիստոնէական ազատութիւնն բարի գործա-
ծելոյ համար. մարմին և հոգի միմեանց թշնամիք ։*

1 Ուրեմն հաստա՛տ կացէք՝ և նորէն ծառայութեան
2 լծի ներքևը մի՛ մտնէք ։ Ահա՛ ես Պօղոս ասում
եմ ձեզ. որ եթէ թլփատվիք, Քրիստոսն ձեզ բը-
3 նաւ օգնութիւն չի անիլ ։ Վկայումեմ ամեն մար-
դոյ համար՝ որ թլփատվումէ, թէ նա պարտական
4 է ամեն օրէնքը կատարել ։ Քրիստոսիցն հեռացած
էք՝ որ օրէնքովն էք կամենում արդանալ. և շը-
5 նորհքիցը վէրընկած էք. Ինչուոր՝ մենք Հոգովը
հաւատքիցն ենք սպասում արդարութեան յուսոյն ։
6 Պատճառնոր Քրիստոս Յիսուսումն՝ ո՛չ թլփատու-
թիւնը մին բան կարող է՝ և ո՛չ անթլփատու-
թիւնը. բայց հաւատք որ սիրով յաջողված է ։
7 Լա՛ւ էիք վազում, ձեզ ո՞վ յետ կանգնացրուց՝
8 որ չ'հաւանիք ճշմարտութեանը ։ Ինչուոր այն հա-
9 ւանացնելը՝ նորանից չէ՛՝ որ կանչեց ձեզ ։ Մին քիչ
10 խմոր բոլոր շաղաղվածը խմորացնումէ ։ Բայց ես

ձեզ վերայ յոյս ունիմ Տէրովն՝ որ ուրիշ բան չը
մտածէք. և նա որ խռովացնումէ ձեզ՝ դատաստան
11 կ'քաշէ՝ ով որ լինի ։ Այլ ես ե՛ղբարք՝ թէ որ թըլ-
փատութիւն քարոզէի՝ էլ ինչու համար եմ դեռ
հալածվում. ապա ուրեմն խաչի գայթակղութիւնը
12 խափանված լինէր ։ Երանի՛ թէ կըտրվէին նորանք՝
որ խռովացնումեն ձեզ ։
13 Ինչուոր՝ դուք ազատութեան մէջ էք կանչվել
ե՛ղբարք. միայն թէ ձեր ազատութիւնը պատճառ
չ'տայ մարմնոյն. բայց սիրո՛վ ծառայեցէք իրար ։
14 Պատճառնոր՝ ամեն օրէնքն այն մին խօսքումն է
կատարվում. Դու քո ընկերդ քո անձիդ պէս սիրէ ։
15 Բայց թէ որ իրար կծէք՝ և ուտէք, զգո՛յշ կացէք՝
16 որ չ'լինի թէ իրարից սատակվիք ։ Բայց ես եմ ա-
սում. Հոգո՛վ գնացէք, և մարմնոյ ցանկութիւնը
17 մի՛ կատարէք ։ Պատճառնոր՝ մարմինը ցանկանումէ
հոգոյն հակառակ, և հոգին մարմնոյն հակառակ.
և որովհետև սորանք իրար հակառակ են, չ'լինի
18 թէ նա որ դուք կամենաք՝ նա անէք ։ Բայց թէ որ
19 հոգով վարվիք՝ ապա օրէնքի ներքևը չէք ։ Պատ-
ճառնոր՝ յայտնի են մարմնոյ գործքերը, որ սո-
րանք են՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն,
20 գիջութիւն, կռապաշտութիւն, կախարդութիւն,
թշնամութիւն, կռիւ, նախանձ, բարկութիւն,
հակառակութիւններ, երկպառակութիւններ. բա-
21 ժանմունքներ, Չար աչքով նայիլը, սպանութիւն-
ներ, հարբեցութիւններ, անառակութիւններ, և
ինչ որ սորանց նման են. սա որ առաջուց ասում
եմ ձեզ, ինչպէս որ էլ սկիզբն ասումէի, թէ նո-
րանք որ այսպիսի բան են գործում՝ Աստուծոյ ար-

22 քայութիւնը չեն ժառանգիլ ։ Բայց Հոգոյ պտուղը սա է սէր, ուրախութիւն, խաղաղութիւն,
23 երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն,
հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. այսպէ-
24 սիներին օրէնքը հակառակ չէ ։ Սակայն նորանք՝
որ Քրիստոսինն են, իրենց մարմինները խաչ հա-
25 նեցին ախտերին և ցանկութիւններին հետ ։ Թէ
որ Հոգով ենք ապրում, էլ Հոգոյն հետ միաբան
26 լինինք ։ Եւ ունայն պարծանքին չ'հետեւինք՝ իրար
գրգռելով, և իրար վերայ նախանձելով ։

ԳԼ. Զ

Հոգւով կամ մարմնով ապրելը. Քրիստոսին խաչը ։

1 Ե՛ղբարք՝ թէ որ ձեզանից մինը յանկարծ բռնվի
ինչ սխալմունքով որ լինի, դուք որ հոգեւոր էք՝
այնպէսիններին հաստատեցէ՛ք հեզութեան հոգովը.
զգո՛յշ կացէք ձեր անձներիդ՝ որ դուք էլ չ'փորձ-
2 վէք ։ Իրար բեռը վեր առէ՛ք, և այսպէս Քրիստո-
3 սի օրէնքը կատարեցէ՛ք ։ Թէ որ մինը համարի թէ
մին բան է՝ և չ'լինի, նա իրեն անձը խաբում է ։
4 Ամեն մէկը թո՛ղ իրեն գործը կշռէ, և ապա մի-
նակ իրեն անձին պարծանք տայ, և չէ թէ իրեն
5 ընկերին մօտ ։ Ինչուոր՝ ամեն մէկն իրեն բեռը պի-
տի վեր առնէ ։

6 Աշակերտը թո՛ղ հաղորդութիւն անէ վարդա-
7 պետին՝ ամեն բարի բաներով ։ Մի՛ խաբվէք. Աս-
8 տուած չի անարգվիլ. Պատճառնոր՝ ինչ որ մարդը
սերմանէ՝ իսկ նա կ'հնձէ. Նա՝ որ իրեն մարմնոյն

մէջն է սերմում, այն մարմնիցն ապականութիւնը
կ'հնձէ. և նա՝ որ Հոգոյն մէջն է սերմում, այն
9 Հոգուցն էլ յաւիտենական կեանքը կ'հնձէ ։ Բայց
չ'ձանձրանանք բարի գործելուցը, ինչուոր՝ իրեն ժա-
10 մանակումը կ'հնձենք առանց պակասելոյ ։ Ուրեմն
քանի որ ժամանակը ձեռներումս է՝ բարի գործենք
ամենին համար, մանաւանդ հաւատքի ընտանիք-
ներին ։

11 Տեսէ՛ք թէ ինչպէսի գրերով գրեցի ձեզ իմ ձե-
12 ռովս ։ Այն ամենքն՝ որ կամենումեն հաճոյ երեւիլ
մարմնոյ կողմանէ, նորանք են ստիպում ձեզ՝ որ
թլփատվէք. միմիայն նորահամար՝ որ Քրիստոսի խա-
13 չի եսեւէն չ'գնան ։ Ինչուոր իսկ նորանք էլ՝ որ
թլփատված են, նորանք օրէնքը չեն պահում. այլ
կամենումեն՝ որ դուք թլփատվէք, որ ձեր մարմնո-
14 վը պարծենան ։ Բայց ինձ քա՛ւ լիցի պարծենալ,
բայց միայն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի խաչովը.
որ նորանով աշխարհքն ինձ համար խաչված է,
15 և ես էլ աշխարհքին ։ Պատճառնոր՝ Յիսուս Քրի-
ստոսումը՝ ո՛չ թլփատութիւնը մին բան է՝ և
16 ո՛չ անթլփատութիւնը, բայց նոր ստեղծված ։ Եւ
ամենքն՝ որ այս կանոնիս միաբան են, նորանց վե-
րայ խաղաղութիւն և ողորմութիւն՝ և էլ Աստու-
17 ծոյ Իսրայէլին վերայ ։ Սորանից ետեւ թո՛ղ մինը
չաշխատացնէ ինձ. ինչուոր ես Քրիստոսի չարչա-
18 րանքներն իմ մարմնոյս մէջն եմ տանում ։ Մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը ե՛ղբարք՝ ձեր հո-
գոյն հետ լինի. ամէն ։

Գաղատացւոց վերայ Հռոմ քաղաքէից գրուեցաւ ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Փառաբանութիւն Աստուծոյ իր շնորհքներին համար. աղօթք հաւատացելոց լուսաւորվելոյն մասին. Քրիստոս եկեղեցոյ գլուխ։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ Աստուծոյ
կամքովը՝ սրբերին որ Եփեսոսումն են, և Քրիստո-
2 սումը հաւատացեալներին, Շնորհք ձեզ հետ և
խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցը՝ և Տէր Յի-
սուս Քրիստոսիցը։
3 Օրհնեա՛լ է Աստուած. և մեր Տէր Յիսուսի Քը-
րիստոսի Հայրը. որ մեզ օրհնեց ամեն հոգեւոր
օրհնութենով երկնաւոր բաներումը Քրիստոսով.
4 ինչպէս որ ընտրեց մեզ նորանով աշխարհքի լինե-
լուցն առաջ, որ մենք սուրբ և անարատ լինինք
5 նորա առաջին սիրով։ Առաջուց սահմանեց մեզ.
որ իսկ իրեն որդեգիր լինինք Յիսուսի Քրիստոսի
6 ձեռովը՝ իրեն կամքի հաճութեան պէս, իրեն փա-
ռաւոր շնորհաց գովասանքին համար. որ սորանով

7 ուրախացրուց մեզ՝ այն սիրելիովը։ Որ նորանով ու-
նինք փրկութիւն նորա արիւնովը, մեղաց թողու-
8 թիւնն՝ իրեն շնորհաց մեծութեան չափովը Որ նա
աւելացաւ մեզանում ամեն իմաստութենով և
9 գիտութենով։ Ցոյց տուաւ մեզ իրեն կամքի խոր-
հուրդներն՝ իրեն հաճութեան պէս. նա որ առա-
10 ջուց դրաւ նորանով, ժամանակների լցվելոյ տըն-
տեսութեան համար, որ ամեն բան բոլորվի Քրիս-
տոսովը, ինչ որ երկնքումն է՝ և ինչ որ երկրումը՝
11 իսկ նորանում, Որ նորանով էլ ստացանք ժառան-
գութիւնը մենք՝ որ առաջուց հրաւիրվեցանք, Աս-
տուծոյ առաջադրութեան պէս. որ ամեն բան յա-
12 ջողումէ իրեն կամքի խորհուրդներին պէս. Որ մենք
գովասանք լինինք նորա փառացը, որ առաջուց մեր
13 յոյսը Քրիստոսի վերայ ենք դրել, Որ նորանով
դուք էլ երբոր ճշմարտութեան խօսքը լսեցիք՝ ձեր
փրկութեան աւետարանը, որ նորան էլ երբոր հա-
14 ւատացիք՝ աւետիքի Սուրբ Հոգովն կնքվեցաք. Որ
նա մեր ժառանգութեան գրաւն է, մինչեւ ըս-
տացվածի փրկութիւնը, որ նորա փառացը գովա-
սանք լինի։
15 Նորահամար ես էլ երբոր լսեցի ձեր հաւատքը՝
որ ունէք Տէր Յիսուսին վերայ, և այն սէրն որ դէ-
16 պի ամեն սրբերն ունիք, Չե՛մ դադարում ձեզ
համար գոհութիւն տալուց՝ և յիշումեմ ձեզ ա-
17 ղօթքումս. Որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Աստ-
ուածը փառաց Հայրը՝ տայ ձեզ իմաստութեան
18 և յայտնութեան հոգին՝ իրեն գիտութենովը, Որ
լուսաւոր անէ ձեր սրտերի աչքերը՝ որ մենք գիտե-
նանք՝ թէ ի՞նչ է այն մեր կոչումի յոյսը, և ի՞նչ

է իրեն ժառանգութեան փառաւոր մեծութիւնը,
19 որ է սրբերումը։ Եւ ի՞նչ է Նորա զօրութեան գե-
րազանց մեծութիւնը մեզանում՝ որ հաւատացինք,
20 իրեն կարող զօրութեան յաջողութեան պէս, Որ
Քրիստոսումը յաջողեց. ինչուոր յարոյց Նորան
մեռելներին միջից, և իրեն աջ կողմը նստացրուց
21 երկնքումը, Ամեն իշխանութեան և պետութեան
և զօրութեան և տէրութեան վերայ՝ և ամեն ա-
նուններին վերայ՝ որ անուանվում են, ո՛չ թէ մի-
նակ այս աշխարհքումս՝ բայց էլ այն նոր եկողին
22 մէջ։ Եւ ամեն բան հնազանդացրուց Նորա ոտաց
ներքեւը, և Նորան գլուխ դրաւ եկեղեցոյ ամեն
23 բաներին վերայ. Որ նա Նորա մարմինն է, Նորա
լիութիւնն՝ որ ամենն ամենին մէջ լցնում է։

ԳԼ. Բ

Հեթանոսաց և Հրէից հոգեւոր մահը. Նորա վերակենդա-նութիւնը. մէջ տեղի պատին վերանալը. հոգեւոր տաճարը։

1 Եւ դուք՝ որ մեռած էիք ձեր մեղքերումն ու
2 յանցանքներումը. Որ նորանցում մին ժամանակ
գնումէիք այս աշխարհքիս սովորութեան պէս՝ այն
իշխանին պէս՝ որ այս օդիս մէջն իշխանութիւն է
անում, այն չար հոգոյն պէս՝ որ հիմիկ մտել է
3 ապստամբութեան որդիքներին մէջ. Որ նորանց մի-
ջումը մենք ամենքս էլ մին ժամանակ ման էինք
գալիս՝ մեր մարմնոյ ցանկութիւններումը, և մարմ-
նոյ ու մտքի կամքն էինք կատարում, և իրաւի

4 բարկութեան որդիք էինք՝ ինչպէս ուրիշները. Բայց
Աստուած՝ որ մեծ է ողորմութենով, իրեն շատ սի-
5 րոյն համար՝ որ սիրեց մեզ, Երբոր մեռած էինք
մեղացը մէջ, մեզ կենդանի արաւ Քրիստոսումը.
6 ինչուոր շնորհքով ապրեցանք։ Նորա հետ մեզ յա-
րոյց, և Նորա հետ երկնքումը նստացրուց՝ Քրիս-
7 տոս Յիսուսումը. Որ նոր եկող ժամանակներումն
յաւիտեան ցոյց տայ՝ իրեն շնորհաց գերազանց
մեծութիւնը, այն քաղցրութենովն՝ որ մեզ վերայ
8 էլաւ Քրիստոս Յիսուսումը։ Պատճառնոր՝ Նորա
շնորհքովը փրկված էք հաւատքի ձեռովը. և սա
ո՛չ թէ ձեզանից է, այլ Աստուծոյ պարգեւն է։
9 Ո՛չ թէ գործքերից, որ ոչ մինը չ՚պարծենայ։
10 Ինչուոր՝ Նորա ստեղծվածն ենք՝ Քրիստոսով Յի-
սուսով հաստատված բարի գործքերին համար. որ
Աստուած նորանց համար առաջուց պատրաստեց
մեզ, որ նորանցում վարվինք։
11 Նորահամար դուք էլ մտքներդ բերէ՛ք՝ որ ժա-
մանակով հեթանոս էիք մարմնոյ կողմանէ, որ ան-
թլփատութիւն են կոչված այն մարմնաւոր ձեռքով
12 արած թլփատութենից, Որ այն ժամանակումն
առանց Քրիստոսի էիք, և օտարացած Իսրայէլի
քաղաքավարութենից. և դուրս արած աւետիքի
ուխտ ու պայմանից, ընաւ յոյս չունէիք, և ա-
13 ռանց Աստուծոյ էիք աշխարհքումս. Բայց հիմիկ
Յիսուսի Քրիստոսի ձեռովը, դուք՝ որ ժամանակով
հեռաւոր էիք՝ մօտաւոր էլաք Քրիստոսի արիւնովը։
14 Պատճառնոր՝ Նա է մեր խաղաղութիւնը՝ որ եր-
կուսին մին արաւ. և մէջտեղ դրած պատն այ-
սինքն թշնամութիւնը քանդեց՝ իրեն մարմնովը։

15 Եւ հրամանքներով գրած պատուիրանքների օրէն-
քը խափանեց. որ իսկ իրենով երկուսին մին նոր
16 մարդ հաստատէ, և խաղաղութիւն անէ, Եւ եր-
կուսին մին մարմնով հաշտացնէ Աստուծոյ հետ՝ ի-
րեն խաչովը. ինչուոր՝ թշնամութիւնն սպանեց ի-
17 րեն անձնումը, Եւ եկաւ աւետարանեց խաղաղու-
թիւն ձեզ հեռաւորներիդ՝ և խաղաղութիւն մօ-
18 տաւորներին. Պատճառնոր՝ նորանով երկուքս մին
19 Հոգով ունինք մօտենալը Հօր մօտ: Ապա այսու-
հետև օտար և պանդուխտ չէ՛ք, բայց սրբերին
հետ քաղաքացիներ և Աստուծոյ ընտանիքներ:
20 Առաքելոց և մարգարէից հիմունքին վերայ շինուած.
21 որ նորա անկիւնի գլուխն Յիսուս Քրիստոս է, Որ
նորանում բոլոր շինուածքը միաւորված և յարմար-
ված է՝ և աճումէ որ լինի սուրբ տաճար Տէրովը:
22 Որ նորանում դուք էլ նորա հետ շինվումէք Աս-
տուծոյ բնակարան Հոգովը:

ԳԼ. Գ

Առաքելոյն պաշտօնը և աստուածային սիրոյ խորհուրդը:

1 Սորահամար ես Պօղոսս՝ որ Յիսուսի Քրիստոսի
2 կապվածն եմ ձեզ հեթանոսներիդ համար, Կ'լինի
որ՝ դուք լսած էք Աստուծոյ շնորհաց այն տնտե-
3 սութիւնն, որ ինձ տվված է ձեզ համար. Որ
յայտնութենով ցոյց տվված ինձ այն խորհուրդը.
4 ինչպէս որ առաջուց կարճառօտ գրեցի ձեզ. Որ
կարող լինիք կարդալ և մտքներդ առնել իմ տե-
ղեկութիւնս՝ որ Քրիստոսի խորհրդին համար է.

5 Որ ուրիշ անցած ազգերի մարդկանց զաւակներին
ցոյց չ'տվվաւ ինչպէս որ հիմիկ իրեն սուրբ առաք-
եալներին և մարգարէներին յայտնվեցաւ՝ Հոգովը.
6 Նա որ հեթանոսները ժառանգութեան՝ և մարմնոյ
ընկեր են, և Քրիստոս Յիսուսումն աւետիքին մաս-
7 նակից՝ աւետարանովը. Որ նորան ես Պօղոս ըս-
պասաւոր եղայ՝ Աստուծոյ շնորհաց պարգևին պէս՝
որ տվվաւ ինձ, ինչպէս որ նորա զօրութիւնը յա-
8 ջողումէ ինձ՝ որ ամեն սրբերի յետինն եմ, տրվ-
վաւ այս շնորհքս, որ հեթանոսներին միջումն ա-
9 ւետարանեմ Քրիստոսի անքննելի մեծութիւնը. Եւ
ամենին լուսաւորեմ, թէ ի՞նչ է այն խորհրդի
տնտեսութիւնն, որ ամեն յաւիտենի ժամանակից
հետև ծածկված էր Աստուծոյ մօտ՝ նա որ ամեն
10 բան արաւ. Որ հիմիկ իշխանութիւններին և պե-
տութիւններին՝ որ երկնքումն են, եկեղեցոյ ձեռ-
ովը յայտնի Աստուծոյ այն շատ կերպ իմաստու-
11 թիւնը, Այն յաւիտենական առաջադրութեան
պէս՝ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն արաւ.
12 Որ նորանով ունինք համարձակութիւն և յուսով
մօտենալը՝ նորան հաւատալովը:
13 Նորահամար աղաչումեմ՝ որ չ'ձանձրանաք մեր
նեղութենումն որ ձեզ համար է. որ ձեր փառքն
14 է: Սորահամար ծունր եմ դնում մեր Տէր Յիսու-
15 սի Քրիստոսի Հօր առաջին Որ նորանից ամեն նա-
հապետութիւն երկնքումն ու երկրումն անուն է
16 առնում, Որ իրեն մեծ փառքին պէս տայ ձեզ,
որ նորա Հոգով ձեռովը հաստատվիք ներսի մարդու-
17 մը Որ Քրիստոս հաւատքով բնակվի ձեր սրտե-
րումդ. և սիրով արմատ ձգած և հաստատված

18 լինիք, Որ կարող լինիք՝ ամեն սրբերին հետ իմա-
նալ, թէ ի՞նչ է այս խորհրդին լայնութիւնն ու եր-
կարութիւնը և բարձրութիւնն ու խորութիւնը.
19 Որ Քրիստոսի ամեն գիտութեանից գերազանց սէրը
ճանաչէք. որ Աստուծոյ ամեն լիութեանովը լցվիք։
20 Բայց նորան՝ որ կարող է առատութեանով անել
այն ամեն բաներից աւելի՝ քան թէ նա՝ որ մենք
խնդրում և իմանում, այն զօրութեան չափովն՝ որ
21 մեզանում յաջողված է, Նորան փառք եկեղեցու-
մը, որ Քրիստոս Յիսուսումն է՝ ամեն ազգերին մէջ
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳԼ. Դ

Յորդորանք միութեան, աճման և նոր կենաց համար։

1 Ուրեմն աղաչումեմ ձեզ ես՝ որ կապված եմ Տէ-
րին համար, որ այնպէս գնաք ինչպէս որ այն կո-
2 չումին կ'վայելէ՝ որ նորա մէջ կանչվեցաք. Ամեն
խոնարհութեանով և հեզութեանով և երկայնմտու-
3 թեանով, և իրար համբերեցէ՛ք սիրով, Ջա՛նք ա-
րէք Հոգոյ միաբանութիւնը պահել՝ խաղաղութեան
4 կապովը։ Մին մարմին՝ և մին հոգի. ինչպէս որ էլ
5 կոչվեցաք ձեր կոչումի մին յուսոյ մէջ. Մին Տէր
6 է, մին հաւատք, մին մկրտութիւն, Մին Աստ-
ուած, և ամենի Հայր՝ որ ամենին վերայ և ամենին
7 հետ՝ և մեր ամենիս մէջ։ Բայց մեր ամեն մէկիս
տվված է շնորհքը՝ Քրիստոսի պարգեւների չափին
8 պէս։ Սորահամար էլ ասումէ. Եւ Վեր ելաւ բար-
ձրը տեղերը՝ գերի առաւ գերութիւնը. և մարդ-

9 կանց պարգեւներ տուաւ։ Նա՝ որ վեր ելաւ՝ ի՞նչ
է, եթէ ո՛չ՝ որ առաջ վէր եկաւ երկրի ցած կող-
10 մը։ Նա՝ որ վէր եկաւ, իսկ նա է՝ որ ամեն եր-
կինքներից աւելի բարձր վեր ելաւ, որ ամենը
11 լցնէ։ Եւ նա մին քանիսին տուաւ որ առաքեալ
լինին, մին քանիսին մարգարէ, մին քանիսին ա-
ւետարանիչ, մին քանիսին հովիւ և վարդապետ.
12 Որ սրբերը հաստատվին՝ պաշտամունքի գործին հա-
13 մար, Քրիստոսի մարմնոյ շինութեան համար, Մին-
չեւ որ ամենքս հասնինք հաւատքի մին միաբանու-
թեան մէջ՝ և Աստուծոյ Որդոյ գիտութեան մէջ.
և կատարեալ մարդ լինինք Քրիստոսի կատարեալ
14 հասակին չափովը. Որ սորանից ետեւ տղայ չ'լի-
նինք շփոթված և այս կողմս այն կողմը շարժված
վարդապետութեան ամեն քամիներիցը՝ մարդկանց
խաբեբայութեանովը. որ խորամանկութեանով խաբեն
15 և մոլորացնեն։ Բայց ճշմարիտ լինինք սիրով, և ա-
ճինք ամեն բանով նորանում՝ որ է գլուխը Քրիս-
16 տոս, Որ նորանից բոլոր մարմինն իրար հետ կապ-
ված՝ և հաղորդութեան ամեն խաղերովը յարմար-
ված՝ այն զօրութեան չափովն՝ որ ամեն մէկ անդա-
մումն է՝ այն մարմնոյ աճիլը գործումէ՝ իրեն անձը
սիրով շինելոյ համար։
17 Ուրեմն սա եմ ասում՝ և վկայում Տէրով. որ
դուք նորէն չ'գնաք այն կերպովն՝ ինչպէս որ ուրիշ
հեթանոսներն են գնում իրենց մտքի ունայնութե-
18 նովը, Որ նորանց սրտերը խաւարված են, և օտար
են Աստուծոյ կեանքիցը. այն տգէտութեան պատ-
ճառովն՝ որ նորանցում է. իրենց սրտերի կուրու-
19 թեան համար, Որ իրենց անձները յոյսը կորե-

ցին, և իրենց անձերը մատնե՛ցին գիջութեան,
ամեն պղծութեան գործքերի մէջ ագահութենով։
20 Բայց դուք Քրիստոսին այսպէս չ'սովորեցիք։ (21) Թէ
որ նորանից լսեցիք, և նորանով սովորեցիք՝ ինչ-
22 պէս որ ճշմարտութիւն է Յիսուսումը. Որ ձեզանից
դուրս հանէք հին մարդոյն այն առաջին գնացքին
պէս, նա՝ որ խաբեբայ ցանկութիւններով ապա-
23 կանված է, Եւ ձեր մտքի հոգւովը նորոգվիք,
24 Եւ նոր մարդոյն հագնիք՝ որ Աստուծոյն պէս ըս-
տեղծված է՝ ճշմարիտ արդարութենով և սրբու-
25 թենով։ Նորահամար ձգեցէք սուտ ասելը. խօսե-
ցէ՛ք ճշմարտութիւնն ամեն մարդ իրեն ընկերին
26 հետ. ինչուոր մենք իրար անդամ ենք։ Թէ որ
բարկանաք՝ էլ մի՛ մեղանչէք. Թո՛ղ արեգակը ձեր
27 բարկութեան վերայ չ'մտնէ։ Եւ պատճառ չ'տաք
28 սատանային։ Նա՝ որ գողանումէր՝ թո՛ղ էլ չ'գո-
ղանայ. բայց էլ աւելի աշխատի իրեն ձեռներովը
բարին գործելով. որ բաւական ունենայ տալու՝ ում
29 որ պէտք է։ Ամենևին գէշ խօսք չի՛ դուրս գայ
ձեր բերանիցը. բայց նա՝ որ բարի է՝ շինութեան
համար հարկաւոր. որ շնորհք տայ նորանց՝ որ լը-
30 սումեն։ Եւ մի՛ տրտմացնէք Աստուծոյ Սուրբ Հո-
գին, որ նորանով կնքվեցաք դէպի փրկութեան
31 օրը։ Ամեն դառնութիւն և բարկութիւն և սրտ-
մտութիւն և աղաղակ և հայհոյութիւն թո՛ղ վեր-
32 առնվի ձեր միջիցն՝ ամեն չարութեան հետ։ Իրար
հետ քա՛ղցր էլէք, գթած՝ որ իրար ներէք, ինչ-
պէս որ Աստուած էլ Քրիստոսովը մեզ ներեց.։

ԳԼ. Ե

Յորդորանք սուրբ կենաց համար. ամուսնութեան խորհուրդը։

1 Նմանո՛ղ էլէք Աստուծոյն՝ ինչպէս սիրելի որդիք-
2 ներ։ Եւ սիրով գնացէ՛ք, ինչպէս որ Քրիստոս էլ
սիրեց մեզ, և իրեն անձը մեզ համար մատնեց,
պատարագ և մատաղ՝ Աստուծոյ անոյշ հոտ լինե-
3 լու։ Բայց պոռնկութիւն և ամեն պղծութիւն,
կամ ագահութիւն՝ թո՛ղ էլ չանուանվի ձեր մի-
4 ջումը, ինչպէս որ սրբերին կ'վայելէ, Եւ գարշու-
թիւն, կամ յիմար խօսքեր, կամ ծաղրաբանու-
թիւն՝ որ չ'վայելում. բայց էլ աւելի գոհութիւն։
5 Սորան տեղեկացէ՛ք գիտացէ՛ք. որ ամեն պոռնիկ՝
կամ պիղծ՝ կամ ագահ, որ նա կռապաշտ է՝ ժա-
ռանգութիւն չունի Քրիստոսի և Աստուծոյ ար-
6 քայութենումը։ Զ'լինի՛ որ մինը խաբէ ձեզ ու-
նայն խօսքերով. ինչուոր իսկ այս պատճառովս էլ՝
Աստուծոյ բարկութիւնը գալիս է անհաւանու-
7 թեան որդիքներին վերայ։ Ուրեմն մասնակից մի՛
8 լինիք նորանց հետ։ Որ թէ և մին ժամանակ խա-
ւար էիք, էլ հիմիկ լոյս էք Տէրումը. լուսոյ որ-
9 դիքներին պէս գնացէ՛ք։ Ինչուոր լուսոյ պտուղն
ամեն բարութենով է, և արդարութենով, և
10 ճշմարտութենով։ Փորձեցէ՛ք՝ թէ ի՛նչ է հաճոյ
11 Տէրին։ Եւ մասնակից մի՛ լինիք խաւարի անպտուղ
12 գործքերին. բայց էլ աւելի յանդիմանեցէ՛ք։ Պատ-
ճառնոր նա՝ որ նորանց միջումը ծածուկ է գործ-

13 վում, նա խօսքով ամէն էլ գարշելի է ։ Բայց ա-
մէն բան՝ լուսիցն որ յանդիմանվի՝ յայտնի է լի-
նում. ինչուոր ամէն բան՝ որ յայտնի է՝ նա լոյս
14 է ։ Սորա համար էլ ասում է. Վերկաց դու՝ որ քը-
նած ես, և վե՛ր կանգնէ մեռելներիցը, և Քրիս-
տոս կ'լուսաւորէ քեզ ։
15 Նայեցէ՛ք թէ ինչպէս շիտակ գնաք. չէ թէ ինչ-
16 պէս անխելքները, Բայց ինչպէս խելացիները. գը-
17 նեցէ՛ք ժամանակս, ինչուոր՝ օրերս չար են ։ Նո-
րա համար մի՛ լինիք անմիտ, այլ իմացէք՝ թէ ի՞նչ
18 է Տէրի կամքը ։ Եւ մի՛ հարբենաք գինով, որ նո-
րանում անառակութիւն կայ, բայց աւելի լցվե-
19 ցէ՛ք Հոգով. Որ ձեր սրտերումդ սաղմոսներ և օրհ-
նութիւններ խօսիք՝ և հոգեւոր երգեր. որ Տէրին
20 երգէք և սաղմոս ասէք ձեր սրտերումդ ։ Ամէն ժա-
մանակ ամէն բանի վերայ գոհացէ՛ք Աստուածա-
նից և Հօրիցը՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անու-
նովը ։
21 Իրար հնազանդ էլէք Քրիստոսի վախովը ։ (22)Կա-
նայքն թո՛ղ հնազանդ լինին իրենց մարդկանցն՝
23 ինչպէս Տէրին ։ Պատճառն որ մարդն է կնկան գը-
լուխը՝ ինչպէս որ Քրիստոս էլ եկեղեցոյ գլուխն է,
24 և ինքն էլէն մարմնոյ փրկիչն է ։ Բայց ինչպէս որ
եկեղեցին հնազանդ է լինում Քրիստոսին, այնպէս
էլ կանայքն իրենց մարդկանցն ամէն բանի մէջ ։
25 Մա՛րդիկ՝ սիրեցէ՛ք ձեր կանանցդ. ինչպէս որ Քը-
րիստոսն էլ սիրեց եկեղեցուոյն. և իրեն անձը մատ-
26 նեց նորա համար Որ նորան սրբէ աւազանի սըր-
27 բութենովը՝ խօսքովը. Որ ինքն իրեն առաջին փա-
ռաւոր կանգնացնէ եկեղեցոյն, որ բնաւ չունենայ

մին արատ կամ կեղտոտութիւն կամ ուրիշ այս-
պէսի բաներ. բայց որ սուրբ և անարատ լինի ։
28 Իսկ այնպէս պէտք է՝ որ մարդիկն իրենց կանանցը
սիրեն, ինչպէս իրենց մարմինները. Նա որ իրեն
29 կնկանը սիրումէ իրեն անձն է սիրում ։ Ինչուոր
ոչ մինը չ'կայ՝ որ իրեն անձն ատէ բայց կերակ-
րումէ և պահպանում նորան. ինչպէս որ Քրիստոս
30 էլ եկեղեցուն ։ Պատճառն նորա մարմնոյ անդամ-
ներն ենք. նորա մարմնիցը և նորա ոսկորներիցը ։
31 Սորա համար մարդը կ'թողէ իրեն հօրն ու մօրը, և
իրեն կնկան հետ կ'գնայ, և երկուսը մին մարմին
32 կ'լինին ։ Այս խորհուրդս մեծ է. բայց ես Քրիս-
33 տոսի և եկեղեցոյ վերայ եմ ասում ։ Իսկ այնպէս
դուք էլ ամէն մէկդ. ինչուոր ամէն մէկն իրեն
կնկանը թո՛ղ այնպէս սիրէ, ինչպէս իրեն անձը.
և կինը վախենայ իրեն մարդուցը ։

ԳԼ. Զ

Քրիստոնէական պատուէրներ բնտանեաց համար. հոգե-
ւոր զինավառութիւն. վերջ ։

1 Ո՛րդիք՝ հնազա՛նդ էլէք ձեր ծնողներին Տէրովը.
2 ինչուոր էն է արժանն ։ Պատուի՛ր քո հօրդ և մօ-
րըդ. որ էս առաջին պատուիրանն է աւետիքին
3 հետ ։ Որ քեզ լաւ լինի, և երկար ապրիս երկրի
4 վերայ ։ Հա՛րք՝ մի՛ բարկացնէք ձեր որդիքներդ.
բայց մեծացրէ՛ք նորանց խրատով և Տէրի ու-
5 սմունքովը ։ Ծա՛ռաներ՝ հնազանդ էլէք ձեր մարմ-
նաւոր տէրերին, վախով և դողալով և ձեր սրտի

6 միամտութենովդ՝ ինչպէս որ Քրիստոսին ։ Ո՛չ թէ
միայն աչքերի առաջին ծառայելով ինչպէս մար-
դու հաճոյ լինողները . բայց ինչպէս Քրիստոսի ծա-
7 ռաներն՝ որ Աստուծոյ կամքն են անում ։ Եւ յօ-
ժար մտքով են ծառայում ինչպէս Տէրին, և ո՛չ
8 թէ ինչպէս մարդկանց ։ Գիտացէ՛ք որ ամեն մէկն
ինչ բարի որ անէ, իսկ նա կընդունի Տէրիցը . թէ
9 ծառայ լինի և թէ ազատ ։ Եւ դուք տէրերդ՝
ճիշտ նա արէ՛ք նորանց . որ ներելով անէք պատի-
ժը . գիտացէ՛ք որ նորանց և ձեզ էլ Տէր կայ եր-
կինքումը . և նորա առաջին երեսպաշտութիւն չը-
կայ ։
10 Այսուհետև զօրացէ՛ք Տէրով, և նորա զօրու-
11 թեան կարողութենովը, Եւ Աստուծոյ զէնքերը
հագէ՛ք . որ կարող լինիք սատանայի հնարքներին
12 հակառակ անել ։ Ինչու որ մենք մարմնոյ և արիւնի
հետ պատերազմ չունինք . բայց իշխանութիւննե-
րին և պետութիւններին հետ, այս խաւար աշ-
խարհքիս տիրապետողներին հետ, այն չար դևե-
13 րին հետ՝ որ երկնքի ներքևն են ։ Սորա համար Աս-
տուծոյ զէնքերն առէ՛ք, որ կարող լինիք չարին
14 հակառակ կենալ՝ չարութեան օրումը . Եւ երբոր
ամենը կատարէք, հաստա՛տ կացէք . տեղո՛ւմդ-
կանգնեցէք՝ ձեր մէջքերդ ճշմարտութենով պնդա-
15 ցրած, և արդարութեան զրահն հագած, Եւ ոտ-
ները կօշիկ հագած՝ խաղաղութեան աւետարանի
16 պատրաստութենովը . Եւ ամենին վերայ հաւատ-
քի վահանն առէ՛ք . որ կարող լինիք չարի ամեն
17 մուխ տված նետերն անցնել . Եւ փրկութեան սա-
ղաւարտն առէ՛ք, և Հոգու սուրն՝ որ Աստուծոյ

18 խօսքն է ։ Ամեն աղօթքով և աղաչանքով աղօ՛թք
արէք ամեն ժամանակ Հոգով . և նորանում ար-
թո՛ւն կացէք ամեն համբերութենով և ամեն սըր-
19 բերին համար աղաչանք անելով, Եւ ինձ համար .
որ խօսք տվվի ինձ իմ բերանս բանալոյ ժամանա-
կը, որ համարձակութենով ցոյց տամ աւետարա-
20 նի խորհուրդները . Որ նորա համար իմ կապան-
քումս պատգամաւոր եմ . որ նորանով համարձակ
լինիմ, ինչպէս որ էլ պէտք է ինձ խօսիլ ։
21 Բայց որ դուք էլ գիտենաք ինձ համար՝ թէ ինչ
եմ գործում . ամեն բան ցոյց կ'տայ ձեզ Տիւքի-
կոս սիրելի եղբայրը՝ և Տէրումը հաւատարիմ պաշ-
22 տօնեան, Որ նորան դորա համար ուղարկեցի ձեզ
մօտ . որ դուք ինձ համար գիտենաք՝ և մխիթար-
վիք ։
23 Խաղաղութիւն եղբարներին հետ, և սէր հաւատ-
քով Աստուած Հօրիցը և Տէր Յիսուս Քրիստոսի-
24 ցը ։ Շնորհք այն ամենին հետ, որ մեր Տէր Յի-
սուսին Քրիստոսին սիրումեն առանց ապականու-
թեան . ամէն ։

(Եփեսացոց վերայ գրվեցաւ Հռոմ քաղաքից՝ Տիւքիկոսի ձեռովը ։)

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Կապեալ Պօղոսին շնորհակալութիւնը, աղօթքը, վստահութիւնը և խրատը ։

1 ՊՕՂՈՍ և Տիմոթէոս Յիսուսի Քրիստոսի ծառա-
ները՝ ամեն սրբերին Յիսուս Քրիստոսումը, որ Փի-
լիպեցոց կողմերումն են՝ եպիսկոպոսներին և սար-
2 կաւագներին հետ. Շնորհք ձեզ հետ և խաղաղու-
թիւն Աստուած մեր Հօրիցը, և Տէր Յիսուս Քը-
րիստոսիցը ։
3 Գոհանում եմ իմ Աստուածանից ամեն ժամա-
4 նակ որ ձեզ յիշում եմ, Որ ամեն ժամանակ իմ
ամեն աղաչանքներումս՝ ձեզ ամենիդ համար ա-
5 ղօթք եմ անում ուրախութենով ։ Ձեր աւետա-
րանին հաղորդ լինելոյն համար՝ այն առաջին օրիցն
6 մինչեւ հիմիկ ։ Եւ հաստատ յոյս ունիմ նորա վե-
րայ՝ թէ նա՝ որ ձեզանում սկսեց այս բարի գոր-
ծըս, էլ կ'կատարէ մինչեւ Յիսուսի Քրիստոսի օրը.
7 Ինչպէս որ իրաւունք է երեւում ինձ մտածելս

այս բանս ձեզ ամենիդ համար. ինչուոր ձեզ իմ
սրտիս մէջն ունիմ իմ կապանքներումս և իմ պա-
տասխան տալոյ և աւետարանին հաստատելոյ ժա-
մանակումս. որ դուք ամենքդ ինձ հետ շնորհացը
8 հաղորդ էլաք. Աստուած ինձ վկայ է թէ ինչպէս
ձեզ ամենիդ ցանկանում եմ Քրիստոսի Յիսուսի
9 քաղցր սիրովը ։ Եւ նա եմ աղօթք անում. որ ձեր
սէրն աւելի և աւելի հարստանայ գիտութենով և
10 ամեն իմաստութենով. Որ դուք լաւն ընտրէք, որ
հաստատ լինիք և առանց գայթակղութեան Քը-
11 րիստոսի օրումը, Արդարութեան պտուղներով լըց-
ված՝ Յիսուսի Քրիստոսի ձեռովը, Աստուծոյ փառ-
քին և գովասանքին համար ։
12 Կամենում եմ ե՛ղբարք. որ գիտենաք. թէ ինչ
բան որ ինձ վերայ էլաւ, աւելի և աւելի յաջո-
13 ղեց աւետարանին առաջանալը, Մինչեւ որ իմ
կապանքներս Քրիստոսումը յայտնի էլան ատեանի
14 բոլոր տանը մէջ և ուրիշ ամենքին էլ ։ Եւ շատ
եղբայրներին՝ Տէրումը, որ իմ կապանքներովս սիրտ
առին՝ որ աւելի համարձակ էլան՝ առանց վախի
15 Աստուծոյ բանը խօսելոյ ։ Մին քանիսը նախան-
ձաւորութենով և հակառակութեան պատճառով,
և մին քանիսը բարեյօժար մտքով քարոզումեն
16 Քրիստոսին ։ Եւ մին քանիսը սիրով. ինչուոր գի-
տումեն թէ աւետարանը ջատագովելոյ համար
17 կանգնած եմ ։ Եւ մին քանիսը ծուռ մտքով են
պատմում Քրիստոսին, և ո՛չ թէ պարզ կամքով.
ինչուոր կարծումեն թէ իմ կապանքներիս վերայ
18 նեղութիւն բերեն ։ Բայց սա ի՞նչ է. որ կերպով
որ լինի, թէ պատճառանքով և թէ ճշմարտութե-

նով՝ Քրիստոսն է պատմվում. և սորահամար ու-
19 րախ եմ՝ և էլ ուրախ կ'լինիմ։ Ինչու որ գիտում-
եմ՝ թէ այս բանս ինձ փրկութեան պատճառ կը
լինի ձեր աղօթքներովը՝ և Յիսուսի Քրիստոսի Հո-
20 գու պարգևներովը, ինչպէս որ ես սպասումեմ և
յոյս ունիմ. որ ոչ մին բանով ամօթ չ'լինիմ,
բայց ամեն համարձակութենով՝ ինչպէս որ ամեն
ժամանակ, հիմիկ էլ Քրիստոս փառաւորվի իմ
21 մարմնումս, թէ կեանքով՝ և թէ մահով։ Պատ-
ճառնոր ինձ համար Քրիստոս՝ կեանք է, և մեռնե-
22 լը՝ շահ։ Բայց թէ որ այս մարմնոյս կեանքն իմ
գործոյս պտուղ է բերում. էլ չե՛մ գիտում՝ թէ
23 ո՞րն ընտրեմ։ Երկուսիցը նեղացած եմ. դուրս գա-
լոյ՝ և Քրիստոսի հետ լինելոյ ցանկանալն՝ աւելի
24 լաւ եմ համարում, Եւ այստեղ մարմնումս կենալ
25 մնալն՝ աւելի հարկաւոր՝ ձեզ համար։ Եւ հաստատ
յուսով սա եմ գիտում, որ կ'կենամ և կ'մնամ
ձեզ ամենիդ հետ, որ դուք առաջանաք և ուրախ
26 լինիք հաւատքումը. Որ ձեր պարծանքն աւելի լի-
նի Յիսուս Քրիստոսումն ինձանով՝ երբոր ես կրկին
կ'գամ ձեզ մօտ։
27 Միայն թէ ինչպէս որ կ'վայելէ աւետարանին՝
այնպէս գնացէ՛ք. որ թէ գամ և տեսնեմ ձեզ,
և թէ հեռու լինիմ և լսեմ ձեզանից՝ որ հաստատ
էք մին հոգով, և ինչ հետ մին մտքով կանգնիք ա-
28 ւետարանին հաւատքին համար։ Եւ ոչ մին բա-
նով մի՛ վախենաք այն հակառակօղներիցն, որ նա
29 նորանց կորստի նշան է, և ձեր փրկութեան։ Եւ
ձեզ Աստուածանից դա շնորհք էլաւ Քրիստոսի
համար, որ չէ թէ միայն հաւատաք նորան, այլ

30 և նորա համար չարչարվիք։ Եւ իսկ այն պատե-
րազմը քաշէք՝ որ ինձանում տեսիք, և հիմիկ ին-
ձանից լսումէք։

ԳԼ. Բ.

Խրատ խոնարհութեան համար. օրինակ՝ Քրիստոսի խո-
նարհութիւնը և բարձրանալը։

1 Ուրեմն թէ որ մին մխիթարութիւն կայ Քրիստո-
սումը, թէ սիրով սրտի հովութիւն, թէ Հոգու
հաղորդութիւն, թէ գթածութիւն և ողորմու-
2 թիւն։ Ապա լցրէ՛ք իմ ուրախութիւնս. որ մին
միտք ունենաք, մին սէր ունենաք ձեր միջումդ,
3 մին շունչ, մին խորհուրդ։ Ոչ մին բան չ'լինի գըր-
գռութենով, և ո՛չ էլ ունայն պարծանքի հա-
մար. բայց խոնարհութենով թո՛ղ մինը միւսին
4 իրեն անձնիցն աւելի լաւ համարէ։ Մինակ անձ-
ներիդ բանին մտիկ չ'տաք, բայց ամեն մէկն իրեն
5 ընկերի բանին։ Ձեր ամեն մէկը թո՛ղ նա մտածէ,
6 որ էլ Քրիստոս Յիսուսումը, Որ Աստուծոյ կերպա-
րանքումը լինելով, ընաւ յափշտակութիւն չ'հա-
7 մարեց Աստուծոյն հաւասար լինիլը. Այլ իրեն
անձն ունայնացրուց, և ծառայի կերպարանքն ա-
ռաւ, և մարդոյ նման էլաւ՝ և կերպարանքով մար-
8 դու պէս գտնվաւ. Իրեն անձը խոնարհացրուց, և
հնազանդ էլաւ մինչև 'ի մահ՝ և էլ խաչի մահը։
9 Նորահամար Աստուած էլ աւելի բարձրացրուց
նորան, և նորան շնորհեց այնպիսի անուն, որ ամեն
10 անուններիցն աւելի բարձր է. Որ Յիսուսի Քրիս-

տսի. անունով ամեն ծունր գնկի երկնաւորներին
11 և երկրաւորներին և երկրի տակ լինողներին, Եւ
ամեն լեզու դաւանի, թէ Յիսուս Քրիստոս Տէր է
12 Հօր Աստուծոյ փառքին համար: Ուրեմն իմ սի-
րելիներս, ինչպէս որ ամեն բանով հնազանդվեցաք՝
չէ թէ միայն իմ գալոյ ժամանակը, բայց էլ ա-
ւելի հիմիկ՝ երբոր հեռու եմ ձեզանից, ահով և
դողալով գործեցէ՛ք ձեր անձներիդ փրկութիւնը:
13 Պատճառնոր Աստուած է՝ որ յաջողում է ձեզա-
նում կամենալը և անելը իրեն հաճութեան պէս:
14 Ամեն բան գործեցէ՛ք առանց տրտնջելոյ և փափ-
15 սալոյ. Որ լինիք անբիծ և անարատ՝ Աստուծոյ որ-
դիք, անմեղ այն կամապաշտ և ծուռ ազգումը.
որ նորանց միջումն երեւիք ինչպէս լոյս տուօղներն
16 աշխարհքին մէջ. կենաց խօսքը պահելով ձեր անձ-
ներումդ՝ որ նա պարծանք լինի ինձ Քրիստոսի օ-
րումը. որ զուր տեղը չ'վազեցի՝ և զուր չաշխատե-
17 ցի: Բայց թէ և մատաղ լինիմ ձեր հաւատքի
պատարագին և պաշտամունքին վերայ՝ էլ ուրախ
18 եմ, և ձեզ ամենիդ հետ ուրախանումեմ: Այն-
պէս էլ դուք ուրա՛խ էլէք՝ և ինձ հետ ուրախա-
ցէ՛ք:

19 Բայց յոյս ունիմ Տէր Յիսուսումն, որ Տիմոթէո-
սին շուտով ուղարկեմ ձեզ մօտ, որ իմ սիրտս
էլ հանգիստ լինի, երբոր ձեզ վերայ մին բան ի-
20 մանամ: Պատճառնոր չունիմ մինն ինձ հետ միա-
սիրտ, որ ընտանոյ պէս հոգս տանի ձեզ համար:
21 Ինչուոր ամենքն իրենց բաներին են մանգալիս, և
22 չէ թէ Յիսուսի Քրիստոսի բաներին: Բայց դուք
էլ փորձելէք գիտումէք նորան, որ ինչպէս որդի

էրէն հօրն՝ այնպէս ինձ հետ ծառայեց աւետարա-
23 նին: Ուրեմն յոյս ունիմ, որ սորան ուղարկեմ
շուտով իսկ այն ժամանակումն՝ որ իմ անձիս հա-
24 մար կ'տեղեկանամ: Բայց յոյս ունիմ Տէրումն,
25 որ իսկ ես էլ շուտով գամ: Միայն լաւ համարե-
ցի՝ որ Եպափրոդիտոս եղբօրն՝ իմ գործոյս և զի-
նուորութեան ընկերն, այն ձեր առաքեալը, և իմ
պէտք լինող բաների պաշտօնեան՝ ուղարկեմ ձեզ
26 մօտ. Ինչուոր իսկ ինքն էլ խիստ փափագ ունի,
որ ձեզ ամենիդ տեսնէ. և հոգս էք քաշում՝ որ
27 դուք լսել էիք՝ թէ նա հիւանդացաւ: Եւ իրաւի
որ հիւանդացաւ մինչեւ մահի մօտ, բայց Աստ-
ուած ողորմեցաւ նորան. չէ թէ միայն նորան,
բայց ինձ էլ, որ տրտմութիւն տրտմութեան վե-
28 րայ չ'քաշեմ: Ուրեմն շուտով ուղարկեցի նորան,
որ տեսնելով նորան նորէն ուրախ լինիք, և ես ա-
29 ռանց տրտմութեան լինիմ: Ընդունեցէ՛ք նորան
Տէրումն ամեն ուրախութենով, և այնպէսիներին
30 պատուական համարեցէ՛ք: Ինչուոր Տէրի գործոյ
համար մինչեւ 'ի մեռնիլը մօտեցաւ. հոգոյ չափ
ջանք անելով, որ լցնէ ինչ որ ձեզ պակասումէր
իմ ծառայութեան կողմանէ:

ԳԼ. Գ

Հաւատքով արդարանալը 'սուտ առաքելոց դէմ:

1 Այսուհետեւ իմ եղբարք, ուրա՛խ էլէք Տէրու-
մը. միայն մին բան գրելը ձեզ՝ ինձ համար ձանձ-
րութիւն չէ՝ և ձեզ շատ զգուշութիւն է տալիս:

2 Զգո՛յշ կացէք այն շներիցը. զգո՛յշ կացէք այն չար
մշակներիցը. զգո՛յշ կացէք այն ծայրի կտրածնե-
3 րիցը. Ինչու որ թլփատութիւնը մենք ենք, որ Ա-
տուծոյ Հոգովը պաշտումենք, և Քրիստոս Յիսու-
սովը պարծենում, և մարմնով պարծանք չենք ա-
4 նում: Թէև իսկ ես էլ այն համարձակութիւնը
ունիմ մարմնոյ կողմանէ. Թէ որ մին ուրիշ մարդ
կարծէ որ մարմնով համարձակ լինի՝ էլ աւելի ես,
5 Որ ութ օրումը թլփատուեցայ. Իսրայէլի ազգիցը՝
Բենիամենի ցեղիցը. Եբրայեցի Եբրայեցուց ծնւած.
6 օրինաց կողմանէ՝ փարիսեցի. Ջերմեռանդութեան
կողմանէ՝ հալածումէի եկեղեցուն. օրէնքի արդա-
7 րութեանը մտիկ տալով անարատ էի: Բայց ինչ
բան որ ինձ շահ էր, նա վնաս եմ համարում Քը-
8 րիստոսի համար: Եւ ամեն բան էլ իսկ վնաս եմ
համարում այն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գերա-
զանց գիտութեանը համար, որ նորա համար ա-
մեն բանից զրկվեցայ՝ և նորանց աղբ եմ համարում,
9 որ Քրիստոսին ստանամ, Եւ նորանում գտնվիմ.
չէ որ իբր թէ իմ արդարութիւնս ունենամ՝ որ օ-
րէնքիցն է, բայց նա՝ որ Քրիստոսի հաւատքիցն է.
10 որ այն արդարութիւնն Աստուածանից է, Որ հա-
ւատքով ճանաչեմ նորան՝ և նորա յարութեան
զօրութիւնը՝ և նորա չարչարանքին մասնակից լի-
11 նելն, որ նորա մահին նման կերպարանվիմ. Որ լի-
12 նի թէ մեռելների յարութեանը հասնիմ: Չէ որ՝
իբր թէ իսկ հիմիկ առած լինիմ, կամ թէ իսկ
հիմիկ կատարեալ եղած լինիմ. հետևումեմ որ
հասնեմ նորան, որ նորա համար էլ Քրիստոս Յի-
13 սուսիցը բռնված եմ: Ե՛ղբարք՝ ես իմ անձս չեմ

համարում՝ որ հասած լինիմ. բայց մին բան է՝ նա
որ յետևի բաներն մոռացել եմ, և դէպի առաջ
14 լինօղներն եմ հասնելոյ ջանք անում: Միտք դը-
նելով վազումեմ դէպի Աստուծոյ կոչումին պատա-
15 կը՝ Քրիստոս Յիսուսումը: Նորահամար դուք ամեն-
քըդ՝ որ կատարեալ էք, սա մտածեցէ՛ք. և թէ
որ մին ուրիշ բան մտածէք, նա էլ Աստուած կը
16 յայտնէ ձեզ: Միայն թէ նորանում որ մենք հա-
սինք՝ իսկ մին կերպով մտածենք՝ և իսկ մին կա-
17 նոնում միաբան լինինք: Ինձ նմանօղ եղէ՛ք ե՛ղ-
բարք և գիտացէ՛ք այնպէսիներին, որ այն կերպով
են գնում ինչպէս որ մեզ օրինակ ունիք ձեզ հա-
18 մար: Պատճառնոր շատերն են գնում, որ նորանց
համար շատ անգամ ասումէի ձեզ. և հիմիկ էլ
լալով եմ ասում, Քրիստոսի խաչի թշնամիներին
19 համար, Որ նորանց վերջը կորուստ է. որ նորանց
աստուածն իրենց փորն է. և փառքն իրենց ամօթն
է. որ միմիակ երկրաւոր բաներն են մտածում:
20 Բայց մեր քաղաքավարութիւնը երկնքումն է, որ
այնտեղից մտիկ ենք տալիս փրկչին՝ Տէր Յիսուս
21 Քրիստոսին. Որ մեր խոնարհ մարմինը կ'նորոգէ՝ որ
իրեն փառաւոր մարմնոյ կերպարանքին նման լինի,
այն զօրութեան չափովն, որ կարօղ է ամեն բան
հնազանդացնել իրեն ներքևը:

ԳԼ. Դ

*Քրիստոնէից հաստատամութիւնը և հոգևոր ուրախու-
թիւնը. Փիլիպեցւոց Պօղոսին արած նուիրատուութիւնը :*

1 Ուրեմն ի՛մ սիրելի և ցանկալի եղբարք, իմ ու-
րախութիւնս և պսակս. այսպէս հաստա՛տ կացէք
Տէրումը՝ սի՛րելիներ :
2 Եւոդիային աղաչում եմ, և Սիւնտիքին էլ ա-
ղաչում եմ, որ իսկ մին միտք ունենան Տէրումը :
3 Շիտակ որ՝ քեզ էլ եմ աղաչում՝՝ իմ լծի հարա-
զատ ընկերս, դու էլ օգնէ՝ նորանց՝ որ աւետա-
րանումն ինձ հետ մին տեղ պատերազմեցին՝ Կղէ-
մէսի և իմ գործոյս ուրիշ ընկերներին հետ, որ-
4 նորանց անունները կենաց գրքումն են : Ուրա՛խ է-
լէք Տէրումն ամեն ժամանակ. կրկին ասում եմ՝՝ ու-
5 րա՛խ էլէք : Ձեր հեզահոգի լինիլը թո՛ղ յայտնի
6 լինի ամեն մարդկանց. Տէրը մօտ է : Հոգս մի՛ ա-
նէք մին բանի համար. բայց ամեն աղօթքով և
աղաչանքով և գոհութենով ձեր խնդրուածքները
7 թո՛ղ յայտնի լինին Աստուծոյ առաջին : Եւ Աս-
տուծոյ խաղաղութիւնն՝ որ ամեն մտքից վերև է,
պահպանէ՛ ձեր սրտերն ու մտքները Քրիստոս Յի-
8 սուսումը : Ուրեմն ե՛ղբարք՝ ինչ որ ճշմարտութե-
նով է, ինչ որ պարկեշտութենով, ինչ որ արդա-
րութենով, ինչ որ սրբութենով, ինչ որ սիրով,
ինչ որ բարի անուանով, ինչ որ բարեգործութե-
9 նով, ինչ որ գովութենով նա մտածեցէք : Նա՛ որ
սովորեցիք՝ և ընդունեցիք՝ և լսեցիք՝ և ինձանում

տեսիք՝ նա արէ՛ք. և խաղաղութեան Աստուածը
ձեզ հետ կ՚լինի :
10 Ես շատ ուրախացայ Տէրումը. որ դուք էլ մըտք-
ներդ բերիք հոգս տանել ինձ համար, ինչպէս որ
էլ հոգս էիք անում. բայց պատշաճ ժամանակ
11 չէիք գտնում : Չէ՛ թէ կարօտութեան պատճառով
եմ ասում սա. ինչու որ ես ս[illegible]ցի բաւական
12 լինել նորանով որ ունիմ : Գիտեմ պակասու-
թիւն քաշել, և աւելութենով լինել. ամեն բա-
նի մէջ ամենին լաւ տեղեկացած եմ. կշտանալն
էլ՝ սովելն էլ. աւելութենով լինելն էլ՝ պակասու-
13 թիւն քաշելն էլ : Ամեն բան կարող եմ նորա ձե-
14 ռովն՝ որ ինձ զօրացրուց : Բայց լաւ արիք, որ հա-
15 ղորդ էլաք ինձ իմ նեղութենումս : Դուք էլ գի-
տումէք փի՛լիպեցիք, որ աւետարանելոյ սկզբումն
երբոր Մակեդօնիայիցը դուրս եկի, ոչ մին եկե-
ղեցի էլ հաղորդութիւն չարաւ ինձ՝ տալոյ և առ-
16 նելոյ համարովը, բայց միայն դուք : Ինչու որ Թե-
սաղօնիկէի մէջ էլ մին երկու անգամ բերել տը-
17 ուիք ինձ պէտք եկած բաներ : Ո՛չ թէ այնպէս՝ որ
տուրքն եմ ուզում, այլ պտուղն եմ ուզում որ
18 աւելանայ ձեր համարումը : Բայց ես ամեն բան
առել եմ և աւելութիւն ունիմ. լիքն եմ, որ Ե-
պափրոդիտոսի ձեռովն ընդունեցի այն, որ ձեզա-
նից է՝ անուշ հոտ, ընդունելի պատարագ՝ Աս-
19 տուծոյ հաճոյ : Եւ իմ Աստուածս լցնէ ձեր ամեն
կարօտութիւնն իրեն հարստութեան չափովը՝ փառ-
20 քով Քրիստոս Յիսուսումը : Բայց Աստուծոյ մեր
Հօրը փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն :
21 Ողջոյն տուէք ամեն սրբերին՝ Քրիստոս Յիսու-

22 սումը : Ողջոյն են տալիս ձեզ եղբայրներն՝ որ ինձ
23 հետ են : Ողջոյն են տալիս ձեզ ամեն սրբերը․
24 մանաւանդ նորանք՝ որ կայսերի տանիցն են : Տէր
Յիսուսի Քրիստոսի շնորհքն ձեր հոգոյն հետ․ ա-
մէն :

Փիլիպպեցւոց վերայ գրեցաւ Հռոմ քաղաքից
Եպափրոդիտոսի ձեռով :

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Քրիստոսով եղած փրկագործութիւնը քարոզւում է խօսքի միջոցով մարդկանց :

1 ՊՕՂՈՍ՝ Յիսուսի Քրիստոսի առաքեալ Աստու-
2 ծոյ կամքովը, և Տիմոթէոս եղբայրը : Կողոսացի
սրբերիդ և հաւատացեալ եղբայրներիդ Քրիստո-
3 սումը : Շնորհք ձեզ հետ՝ և խաղաղութիւն Աս-
տուած մեր Հօրիցն՝ ու Տէր Յիսուս Քրիստոսիցը :

Գոհանումենք Աստուածանից և մեր Տէր Յիսու-
սի Քրիստոսի Հօրից․ և ամեն ժամանակ աղօթք
4 եմ անում ձեզ համար : Երբոր լսեցինք ձեր հա-
ւատքն՝ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի վերայ է,
5 և սէրն՝ որ ամեն սրբերին հետ ունիք, Այն յու-
սոյն համար՝ որ պահվումէ ձեզ համար երկնքումն․
որ նորա համար լսեցիք աւետարանի ճշմարիտ խօս-
6 քովը, Որ նա հասաւ ձեզ, ինչպէս որ ամեն աշ-
խարհքի մէջ, և մեծանումէ և պտուղ բերում․
ինչպէս որ ձեր միջումն էլ․ այն օրիցն հետէ՝ որ
լսեցիք և Աստուծոյ շնորհքն ճանաչեցիք ճշմար-
7 տութենով․ Ինչպէս որ էլ սովորեցիք սիրելի Եպափ-
րասից․ մեր ծառայութեան ընկերիցը, որ ձեզ
8 համար Յիսուսի հաւատարիմ պաշտօնեայ է, Որ
էլ պատմեց մեզ ձեր սէրը հոգով․
9 Նորահամար մենք էլ այն օրիցն հետէ որ լսե-
ցինք՝ չենք դադարում ձեզ համար աղօթք անել,
և խնդրվածք մատուցանել, որ լցվիք նորա կամաց
գիտութենովը, ամեն իմաստութենով և հոգևոր
10 խելքով․ Որ դուք գնաք ինչպէս որ արժանի է Տէ-
րին, ամեն բանի մէջ հաճոյ լինելով, ամեն բարի
գործքերով պտղաբեր լինիք և Աստուծոյ գիտու-
11 թենումը մեծանաք․ Եւ ամեն զօրութենովը զօրա-
նաք իրեն փառքի զօրութեան չափովը․ ամեն համ-
բերութենով և երկայնմտութեամբ ուրախութե-
12 նով․ Եւ գոհութիւն տաք Հօրը՝ որ մեզ կանչեց
13 մասնակից լինելոյ սրբերի վիճակին լուսումը․ Որ
փրկեց մեզ խաւարի իշխանութենիցը, և փոխեց
տարաւ մեզ իրեն սիրելի Որդոյ արքայութեան մէջ․
14 Որ նորա ձեռովն ունինք փրկութիւն՝ նորա արիւ-

15 նովը, և մեղաց թողութիւն նորա մարմնովը. Որ
նա աներևոյթ Աստուծոյ պատկերն է՝ ամեն ըս-
16 տեղծվածների առաջինեկը: Ինչու որ՝ նորանով ա-
մեն բան ստեղծվեցաւ, ինչ որ երկնքումը՝ և ինչ
որ երկրումն. նա որ երևում է՝ և նա որ չի՛ երև-
ւում. թէ աթոռները, թէ տէրութիւնները, թէ
պետութիւնները, թէ իշխանութիւնները. ամեն
17 բան նորանով և նորա համար ստեղծվեցաւ: Եւ
նա ամենից առաջ է, և ամեն բան նորանով բո-
18 վանդակ էլաւ: Եւ նա մարմնոյ՝ այսինքն եկեղեցոյ
գլուխն է. որ նա է սկիզբը, մեռելներից առաջի-
նեկը. Նորահամար որ նա ամեն բանի մէջ առաջի-
19 նը լինի: Պատճառ որ հաճոյ էլաւ Աստուծոյն, որ
նորանում Աստուածութեան ամեն լիութիւնը բը-
20 նակվի. Եւ նորանով ամենքն՝ իրեն հետ հաշտա-
ցընէ. նա խաղաղութիւն արաւ իրեն խաչի արիւ-
նովը, նա որ երկրումն է՝ և նա որ երկնքումն է:
21 Եւ ձեզ էլ՝ որ ժամանակով օտարացած էիք,
22 և թշնամի մտքով չար գործքերումը, հիմիկ հաշ-
տացրուց իրեն մարմնոյ անդամներովն՝ իրեն մահո-
վը, որ ձեզ սուրբ՝ և անբիծ՝ և անարատ կանգ-
23 նացնէ նորա առաջին: Թէ որ հաւատքի մէջ ար-
մատ ձգած կենաք և հաստատված. և առանց
շարժվելոյ այն աւետարանի յուսիցն՝ որ լսեցիք,
որ երկնքի տակ լինող ամեն ստեղծվածներին քա-
րոզվեցաւ. որ ես Պօղոսս նորա պաշտօնեայ էլայ:
24 Եւ հիմիկ ուրախ եմ իմ չարչարանքներումն ձեզ
համար. և Քրիստոսի նեղութիւնների պակասը
լցնում եմ իմ մարմնումն՝ նորա մարմնոյն համար՝
25 որ եկեղեցին է. Որ ես Պօղոսս նորա պաշտօնեայ

էլայ՝ Աստուծոյ այն տնտեսութեան պէս, որ ինձ
տվված է ձեզանում՝ որ Աստուծոյ խօսքը կատա-
26 րեմ. Այն խորհուրդն՝ որ ծածկված էր յաւիտե-
նից ու ազգերից. որ հիմիկ յայտնվեցաւ իրեն
27 սրբերին. Որ Աստուած կամեցաւ ցոյց տալ նո-
րանց, թէ ի՞նչ է իրեն խորհրդոյ փառաւոր մե-
ծութիւնը հեթանոսներումն, որ նա Քրիստոսն է
28 ձեզանում՝ փառաց յոյսը. Որ մենք քարոզումենք
նորան, և ամեն մարդ խրատում՝ և ամեն մարդ
սովորցնում ամեն հոգևոր իմաստութենով, որ
ամեն մարդ կատարեալ կանգնացնենք Քրիստոս
29 Յիսուսումը: Նորահամար էլ աշխատումեմ պա-
տերազմ անելով նորա յաջողութեան չափովն՝ որ
ինձանում յաջողված է զօրութենով:

ԳԼ. Բ

Աւանդութիւնք, Քրիստոս, սուրբ մկրտութեան և Քը-
րիստոսի մահուան զօրութիւնը:

1 Կամենումեմ որ գիտենաք դուք՝ թէ ինչպէսի
պատերազմ ունիմ իմ անձնումն՝ ձեզ համար և
Լաւոդիկեցոց համար, և նորանց համար որ իմ
2 երեսս մարմնով չեն տեսել, Որ նորանց սրտերը մը-
խիթարվին և տեղեկանան սիրով. և կատարեալ
իմաստութեան ամեն մեծութենով, որ իմանան
3 Աստուծոյ խորհուրդը Քրիստոս Յիսուսումը. Որ
նորանում ծածկված կան իմաստութեան և գի-
4 տութեան ամեն գանձերը: Բայց սա եմ ասում,
չ՚լինի թէ մինը մոլորացնէ ձեզ խաբերայ խօսքե-

5 րով ։ Ինչո՞ւ՝ Թէ և մարմնով հեռու եմ, բայց
հոգով ձեզ հետ եմ. ուրախանում եմ՝ երբոր ձեր
կարգը տեսնում եմ, և ձեր հաւատքի հաստատու-
6 թիւնն՝ որ Քրիստոս Յիսուսումն է ։ Ուրեմն ինչ-
պէս որ Քրիստոս Յիսուս Տէրն ընդունեցիք, նորա-
7 նով էլ գնացէ՛ք․ Արմատ ձգած՝ և նորանում
շինված, և հաւատքումն հաստատված, ինչպէս որ
սովորեցիք՝ և առաջացէք նորանում գոհութենով ։
8 Զգո՛յշ կացէք՝ որ չ՚լինի թէ մինը թալանէ ձեզ
փիլիսոփայութենով և ունայն խաբեբայութենով,
որ մարդկանց աւանդութեան պէս՝ և աշխարհքիս
սկզբունքին պէս է՝ և չէ թէ Յիսուս Քրիստոսին
9 պէս ։ Ինչու որ նորանում բնակված է Աստուածու-
10 թեան ամեն լիութիւնը մարմնապէս ։ Եւ դուք նո-
րանով լցված էք, որ նա ամեն իշխանութիւննե-
11 րի և պետութիւնների գլուխն է․ Որ նորանով
դուք թլփատվեցաք հաւատքով այն առանց ձեռ-
քի եղած թլփատութենովը, մարմնոյ անդամները
12 յեղանէս հանելովը՝ Քրիստոսի թլփատութենովը․ Որ
թաղվեցաք նորա հետ մկրտութենումը, որ նորա-
նով էլ յարութիւն առիք նորա հետ այն հաւատ-
քովն՝ որ Աստուած գործեց, որ յարոյց նորան
13 մեռելների միջիցը ։ Եւ ձեզ՝ որ մին ժամանակ մե-
ռած էիք մեղքումը՝ և ձեր մարմնոյ անթլփատու-
թենումը, իրեն անձնովը կենդանացրուց․ մեր ա-
14 մեն մեղքերը բաշխեց մեզ, Եւ ջնջեց այն ձեռա-
գիրն՝ որ մեզ հակառակ էր՝ իրեն հրամաններովը․
որ նա մեզ հակառակ կար՝ նորան վեր կալաւ մէջ
15 տեղիցը՝ և խաչափայտին վերայ բեւեռեց ։ Իշխա-
նութիւններին և պետութիւններին մերկացրուց,

յայտնի նորանց խայտառակեց և յաղթութեան
նշան արաւ իրեն անձնովն իրեն յարութենումը ։
16 Ուրեմն թո՛ղ մինը չ՚դատէ ձեզ՝ ուտելոյ կամ
խմելոյ համար, կամ տօների կամ ամսագլխների
17 կամ շաբաթների կողմանէ․ Որ սորանք նոր գալու
բաների շուաքներն են․ բայց մարմինը Քրիստոս
18 է ։ Չ՚լինի՛ որ մինը խաբէ ձեզ, որ կամենայ խո-
նարհութենով և հրեշտակների պաշտամունքով
զուր տեղը հետեւիլ այն բանին՝ որ տեսած չ՚լի-
նի և զուր տեղն գոռոզացած լինի իրեն մարմնա-
19 ւոր միտքովը․ Եւ չունենայ Քրիստոս գլուխը, որ
նորանից ամեն մարմինը յօդվածներով և խաղե-
րով ջոկված և խառնված՝ մեծանում է Աստուծոյ
20 աճմունքովը ։ Թէ որ Քրիստոսի հետ մեռաք այս
աշխարհքիս սկզբունքներից՝ էլ ինչո՞ւ էք այս աշ-
խարհքիս մէջ կենդանիներին պէս հետեւում օ-
21 րէնքին ։ Մի՛ մօտենար, համ մի՛ առներ, մի՛
22 դիպչիր․ Որ այս ամենս ապականվելու է գործածու-
թենով, և մարդկանց պատուիրանքներին և վար-
23 դապետութեան պէս է, Որ մին իմաստութիւն է
համարվում, իրեն կամքով հաստատված պաշտա-
մունքով և խոնարհութենով և մարմնոյն չ՚խնայե-
լով, և մարմնոյն պատիւ չ՚տալով որ կշտացնեն
նորան ։

ԳԼ. Գ

Քրիստոնէական առաքինութեան գործեր, մանաւանդ ընտանեաց անդամների դէմ։

1 Թէ որ Քրիստոսի հետ յարութիւն առիք, ապա
խնդրեցէ՛ք այն վերինն՝ որտեղ որ Քրիստոսն է
2 նստում Աստուծոյ աջ կողմը։ Այն վերինը մտա-
3 ծեցէ՛ք, չէ թէ նա՝ որ այս երկրումս է։ Պատճա-
ռըն որ դուք մեռաք՝ և ձեր կեանքը Քրիստոսի
4 հետ ծածկված է Աստուծոյ մէջ։ Բայց երբոր Քը-
րիստոս՝ ձեր կեանքը կ՚յայտնվի, այն ժամանակը
դուք էլ նորա հետ կ՚յայտնվիք փառքով։
5 Ուրեմն սպանեցէ՛ք ձեր երկրաւոր անդամները.
ձգեցէք պոռնկութիւնը՝ պղծութիւնը՝ կեղտոտու-
թիւնը՝ չար ցանկութիւնը, և ագահութիւնը՝ որ
6 կռապաշտութիւն է. Որ սորա համար Աստուծոյ
բարկութիւնը գալիս է անհաւատութեան որդիք-
7 ների վերայ. Որ նորանցով դուք էլ մին ժամա-
նակ գնումէիք, երբոր կենդանի էիք նորանցում։
8 Բայց հիմիկ դուք էլ թափ տուէք այն ամենը.
բարկութիւնը՝ սրտմտութիւնը՝ չարութիւնը՝ հայ-
հոյութիւնը՝ ծաղրաբանութիւնը ձեր բերանիցը։
9 Սուտ մի՛ խօսիք իրար հետ, ձեզանից հանեցէ՛ք
10 հին մարդն իրեն գործքերովը։ Եւ նոր մարդուն հա-
գէ՛ք՝ որ նորոգված է գիտութենով՝ իրեն Ստեղծո-
11 ղի պատկերին պէս, Որ այնտեղ ո՛չ Հրեայ կայ՝ և
ո՛չ հեթանոս, ո՛չ թլփատութիւն՝ և ո՛չ անթլը-
փատութիւն, խուժ՝ դուժ՝ Սկիւթացի՝ ծառայ՝

ազատ. բայց ամենը և ամենին մէջ Քրիստոսն է։
12 Ուրեմն ինչպէս Աստուծոյ ընտրվածներ՝ սրբեր և
սիրելիներ, հագէ՛ք գթածութիւնը՝ ողորմութիւ-
նը՝ քաղցրութիւնը՝ խոնարհութիւնը՝ հեզութիւ-
13 նը՝ երկայնմտութիւնը։ Իրար ներեցէ՛ք, և իրար
թողեցէ՛ք, թէ որ մինը միւսիցը տրտնջմունք ու-
նենայ, ինչպէս որ Աստուած Քրիստոսով ձեզ թո-
14 ղութիւն արաւ՝ այնպէս էլ դուք։ Եւ ամենի վե-
րայ հագէ՛ք սէրն՝ որ կատարելութեան կապն է։
15 Եւ Քրիստոսի խաղաղութիւնն հաստատվի՛ ձեր
սրտերումը, որ նորա մէջ էլ կանչվեցաք մին մարմ-
16 նով. և գոհացօ՛ղ էլէք. Որ Քրիստոսի խօսքը լիու-
թենով բնակվի ձեր միջումը. որ ամեն իմաստու-
թենով իրար սովորցնէք և խրատէք, սաղմոսներով
և օրհնութիւններով և հոգևոր երգերով և շը-
17 նորհքով Աստուծոյն օրհնէք ձեր սրտերումը. Եւ
ամեն ինչ՝ որ անէք խօսքով և գործով, այն ամե-
նը Տէր Յիսուսի անունովն արէք. և նորա ձեռովը
գոհութիւն տուէ՛ք Աստուծոյն և Հօրը։
18 Կա՛նայք՝ հնազանդ էլէք ձեր մարդկանց, ինչ-
19 պէս որ կ՚վայելէ Տէրումը։ Մա՛րդիկ՝ սիրեցէ՛ք
20 ձեր կանանցը, և մի՛ դառնացնէք նորանց։ Ո՛ր-
դիք՝ հնազա՛նդ էլէք ձեր ծնողներին ամեն բանի
21 մէջ՝ որ նա հաճոյ է Տէրին։ Հա՛րք մի՛ կըսկծացը-
22 նէք ձեր որդոց սիրտը, որ չ՚տրտմին։ Ծա՛ռա-
ներ՝ հնազա՛նդ էլէք ձեր տէրերին ամեն բանի մէջ.
չէ թէ աչքի առաջին ծառայութիւն անելով ե-
րեսպաշտներին պէս. բայց սրտի միամտութենով
23 Տէրիցը վախենալով։ Ինչ որ անէք՝ յօժար սրտով
արէք՝ ինչպէս Տէրին, և չէ թէ ինչպէս մարդկանց։

24 Գիտացէ՛ք որ Տէրից կառնէք ձեր ժառանգու-
թեան հատուցումը. ինչու որ Տէր Քրիստոսին էք
25 ծառայում: Բայց անօրէնն իրեն անիրաւութեան
չափովը կընդունի. պատճառ որ երեսպաշտութիւն
չ'կայ Աստուծոյ առաջին :

ԳԼ. Դ

Յորդորանք աղօթքի և բարի կենցաղավարութեան համար :

1 Դուք էլ տէ՛րեր՝ ի՛նչ որ իրաւունք և հաւասար
է՝ շնորհեցէ՛ք ձեր ծառաներին. գիտացէ՛ք՝ որ
դուք էլ Տէր ունիք երկնքումը :
2 Աղօթքին միշտ հետեւեցէք. և արթո՛ւն կացէք
3 նորանում գոհութենով: Մեզ համար էլ աղօթք
արէք, որ Աստուած խօսքի դուռն բանայ մեզ
համար՝ որ Քրիստոսի խորհուրդը խօսինք, որ նո-
4 րա համար էլ ես կապված եմ. Որ յայտնեմ նո-
5 րան՝ ինչպէս որ ինձ արժան է խօսիլ: Իմաստու-
թենով վարվեցէք դրսիններին հետ, և ժամանակը
6 գնեցէք: Եւ ձեր խօսքը թո՛ղ ամեն ժամանակ
Տէրի շնորհքովը լինի՝ իբր աղով համեղացած լի-
նի, որ գիտենաք թէ ինչպէս արժան է ձեզ՝ ամեն
7 մէկին պատասխան տալ: Բայց ինչ որ իմ մասին
է՝ ամենը ցոյց կ'տայ ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայ-
րը և հաւատարիմ պաշտօնեան, և ծառայու-
8 թեանս ընկերը Տէրումն, Որ նորան իսկ դորահա-
մար ուղարկեցի ձեզ մօտ, որ մեզ համար գիտե-
9 նաք, և ձեր սրտերը մխիթարվին. Օնեսիմոս հա-
ւատարիմ և սիրելի եղբօրն հետ, որ նա ձեզա-

նից է. նորանք ամեն բան ցոյց կ'տան ձեզ՝ ինչ որ
10 այստեղ լինումէ: Ողջոյն են տալիս ձեզ Արիստար-
քոս՝ իմ գերութեան ընկերս, և Մարկոս Բառ-
նաբասի եղբօր որդին. որ նորա համար պատուի-
րանք առիք՝ որ եթէ ձեզ մօտ գայ՝ ընդունիք նո-
11 րան: Եւ Յիսուսն՝ որ Յուստոս անուանված է, որ
նորանք թլփատութենիցն են, որ միայն դորանք
իմ գործոյս ընկեր էլան Աստուծոյ արքայութե-
նումը, որ ինձ համար էլ մխիթարութիւն էլան:
12 Ողջոյն է տալիս ձեզ Եպափրասը՝ Յիսուսի Քրիս-
տոսի ծառան, որ ձեզանից է. որ ամեն ժամանակ
ձեզ համար պատերազմումէ աղօթքումն, որ կա-
տարեալ և լցված լինիք Աստուծոյ ամեն կամքու-
13 մը: Վկայում եմ նորան՝ որ շատ աշխատանք է
քաշում ձեզ համար, և Լաւոդիկեցոց համար,
14 և նորանց համար էլ՝ որ Յերապօլիսումն են: Ող-
ջոյն է տալիս ձեզ Ղուկաս բժիշկը և սիրելին, և
15 Դեմասը, Ողջո՛յն տուէք եղբարներին՝ որ Լաւո-
դիկեայումն են և Նիմփային, և եկեղեցուն՝ որ նո-
16 րա տանն է: Եւ երբոր այս թուղթս ձեզ մօտ
կարդացված լինի՝ արէ՛ք որ Լաւոդիկեցոց եկեղե-
ցոյ միջումն էլ կարդացվի. և նա որ Լաւոդիկե-
17 ցոցն է՝ որ դուք էլ կարդաք: Եւ Արքիպոսին ա-
սացէ՛ք. Զգո՛յշ կաց քո պաշտօնութեանդ՝ որ
18 ընդունեցիր Տէրումը, որ դորան կատարես: Այդ
ողջոյնդ իմ Պօղոսիս ձեռքին է. իմ կապանքս թո՛ղ
ձեր մտքներումդ լինին. շնորհքը ձեզ հետ, ամէն:

Կողոսացւոց վերայ գրվեցաւ Հռոմ քաղաքից Տիւքիկոսի
և Օնեսիմոսի ձեռքով :

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Աստուծոյ փառաբանութիւն Թեսաղոնիկեցոց ճշմարիտ դարձին համար։

1 ՊՕՂՈՍ և Սիղուանոս և Տիմոթէոս Թեսաղոնիկե-
ցոց եկեղեցւոյ՝ Աստուած մեր Հօրումը և Տէր Յի-
2 սուս Քրիստոսումը։ Շնորհք ձեզ հետ և խաղա-
ղութիւն.
Ամէն ժամանակ գոհանումենք Աստուածանից
ձեզ ամէնիդ համար՝ որ անդադար յիշումենք մեր
3 աղօթքումը, Եւ յիշումենք ձեր հաւատքի գործը՝
և սիրոյ աշխատանքը, և այն յուսոյ համբերու-
թիւնն՝ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի վերայ ու-
4 նիք Աստուծոյ և մեր Հօր առաջին։ Աստուածա-
նից սիրուած եղբարք, գիտումէք ձեր ընտրութիւ-
5 նըն, Որ մեր աւետարանը ձեզ մօտ ո՛չ մինակ
խօսքով էլաւ, բայց էլ զօրութենով և Սուրբ
Հոգով և շատ լիութենով. ինչպէս որ էլ լաւ գի-
տումէք, թէ ինչպէս ձեր միջումը վարվեցանք ձեզ

6 համար։ Եւ դուք նմանեցաք մեզ՝ և Տէրին, և
խօսքն ընդունեցիք շատ նեղութեան մէջ՝ Սուրբ
7 Հոգոյ ուրախութենովը. Որ դուք օրինակ էլաք այն
ամէն հաւատացեալներին, որ Մակեդոնիայի և
8 Աքայիայի մէջն են։ Պատճառնոր ձեզանից դուրս
ելաւ Աստուծոյ խօսքի ձայնը. ո՛չ մինակ Մակե-
դոնիայի և Աքայիայի մէջ, բայց ամէն տեղ փռը-
վեցաւ ձեր հաւատքն՝ որ դէպի Աստուած ունիք.
որ էլ այսուհետեւ բնաւ պէտք չէ մեզ՝ որ մին
9 բան խօսինք. Ինչուոր իսկ նորանք են պատմում
մեզանից, թէ ինչպէս էլաւ մեր ձեզ մօտ մտնելը.
և ինչպէս այն կռքերիցը դարձաք դէպի Աստուած,
որ ծառայէք կենդանի և ճշմարիտ Աստուծոյն,
10 Եւ մտիկ տաք նորա Որդւոյն երկինքիցը, որ նորան
յարոյց մեռելների միջիցը այն Յիսուսին, որ մեզ
պիտի փրկէ այն գալու բարկութենիցը։

ԳԼ. Բ

*Զօրութեամբ քարոզուած Աւետարանը հաւատքով ըն-
դունելու մասին։*

1 Դուք ինքներդ գիտումէք եղբարք՝ այն մեր ձեզ
2 մօտ մտնելն. որ բնաւ ունայն չէլաւ։ Բայց որ
առաջ չարչարվեցանք՝ և թուքումուր քաշեցինք,
ինչպէս որ դուք էլ լաւ գիտումէք. Փիլիպպեցոց
միջումն էլ համարձակվեցանք մեր Աստուծովն՝ որ
Աստուծոյ աւետարանը ձեզ պատմենք մեծ պատե-
3 րազմով։ Պատճառնոր՝ մեր յորդորմունքն ո՛չ մո-
լորութենից է՝ և ո՛չ պղծութենից՝ և ո՛չ խաբե-

4 բայութենից ։ Բայց ինչպէս որ մենք Աստուածա-
նից ընտրուեցանք աւետարանին հաւատարիմ լինե-
լոյ, այնպէս էլ խօսումենք. չէ թէ որ մարդկանց
հաճոյ լինինք, բայց Աստուծոյն՝ որ մեր սրտերը
5 քննումէ ։ Ինչուոր ոչ մին ժամանակ շողոքորթե-
լոյ խօսքերով չ՚վարուեցանք ձեզ հետ, ինչպէս որ
դուք էլ լաւ գիտումէք. և ո՛չ էլ ագահութեան
պատճառանքով, ինչպէս որ Աստուած էլ վկայու-
6 մէ. Եւ մարդկանցից փառք չ՚խնդրեցինք, ո՛չ ձե-
7 զանից, և ո՛չ ուրիշներիցը ։ Կարող էինք ինչպէս
Քրիստոսի առաքեալները ծանրութիւն տալ, բայց
հեզահոգի էլանք ձեր միջումը՝ մի՛ն ծծամօր պէս,
8 որ երեխաներ է մեծացնում ։ Իսկ այնպէս էլ մենք
քաղ՚ցր սիրով էինք վարվում ձեզ հետ. ախորժ
էր երեւում մեզ՝ չէ թէ մինակ Աստուծոյ աւետա-
րանն տալ ձեզ, բայց մեր անձներս էլ, պատճա-
9 ռըն որ մեր սիրելիներն էլաք ։ Յիշեցէ՛ք ե՛ղբարք՝
մեր աշխատանքն ու ջանքը, որ գիշեր և ցերեկ
գործումէինք որ ձեզանից ոչ մինին ծանրութիւն
չ՚տանք. և Աստուծոյ աւետարանը քարոզումէինք
10 ձեզ ։ Դուք ինքնին վկայումէք՝ և Աստուած էլ,
թէ ինչպէս սրբութենով և արդարութենով և ա-
նարատութենով՝ վարուեցանք ձեր հաւատացեալ-
11 ներիդ միջումը ։ Ինչպէս որ էլ գիտումէք, որ ձե-
զանից ամեն մէկին՝ ինչպէս որ հայր՝ որդիքներին
12 Յորդորումէինք և մխիթարում. և վկայութիւն
տալիս՝ որ դուք գնաք, ինչպէս որ Աստուծոյն կը
վայելէ, որ ձեզ իրեն արքայութեան և փառաց
13 մէջ կանչեց ։ Նորահամար էլ մենք անպակաս գո-
հանումենք Աստուածանից, որ դուք Աստուծոյ

խօսքի քարոզութիւնը մեզանից առած՝ ընդունե-
ցիք. ո՛չ թէ իբր մարդկանց խօսք, այլ ինչպէս
Աստուծոյ ճշմարիտ խօսքը. որ նա էլ յաջողված
14 է ձեզանում հաւատացեալներումդ ։ Ինչուոր ե՛ղ-
բարք՝ դուք նման էլաք Աստուծոյ այն եկեղեցի-
ներին՝ որ Հրէաստանումն են Քրիստոս Յիսուսումը.
ինչուոր դուք էլ իսկ այն չարչարանքովը չարչար-
վեցաք ձեր ազգականներիցն, ինչպէս որ նորանք
15 էլ Հրէաներիցը, Որ նորանք Տէր Յիսուսին էլ սպա-
նեցին՝ և մարգարէներին, և մեզ էլ հալածե-
ցին, և Աստուծոյ աչքիցը դուրս էլան. և ամեն
16 մարդկանց հակառակ կացան ։ Եւ մեզ էլ արգե-
լումէին, որ չ՚խօսինք հեթանոսներին՝ որ փրկվին.
որ ամեն ժամանակ իրենց մեղքերը կատարել
անեն. պատճառնոր հասել է նորանց վերայ բար-
կութիւնը մինչեւ վերջը ։

17 Բայց մենք ե՛ղբարք՝ թէ և մին քիչ ժամանակ
ձեզանից որբ մնացինք, երեսով և ո՛չ սրտով. էլ
աւելի փութացինք ձեր երեսդ տեսնելոյ մեծ ցան-
18 կութենով ։ Նորահամար ես Պօղոս մին երկու ան-
գամ կամեցայ՝ որ ձեզ մօտ գամ, և սատանան
19 խափանեց մեզ ։ Ինչուոր ո՞վ է մեր յոյսը կամ
ուրախութիւնը կամ պարծանքի պսակը. եթէ ո՛չ
դուք Տէրումը՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի առա-
20 ջին նորա գալոյ ժամանակումը. Պատճառնոր դուք
էք մեր փառքն ու ուրախութիւնը ։

ԳԼ. Գ

Պօղոսի ուրախութիւնը Թեսաղոնիկեցւոց հաւատքի մէջ հաստատ մնալուն համար ։

1 Այս պատճառով էլ աւելի համբերութիւն չու-
նինք. որ լաւ երեւեցաւ մեզ՝ որ մենք մինակ մը-
2 նանք Աթէնքումը. Եւ ուղարկեցինք մեր Տիմո-
թէոս եղբօրս և Աստուծոյ և Քրիստոսի Հօր աւե-
տարանի գործընկերին՝ որ ձեզ հաստատէ և մխի-
3 թարէ ձեր հաւատքին համար, Որ չ'թուլանաք այս
նեղութիւններումս. ինչու որ իսկ դուք էլ գի-
4 տումէք, որ ճիշտ սորա համար կանգնած ենք։ Եւ
երբոր ձեզ մօտ էինք՝ առաջուց ասումէինք ձեզ,
թէ նեղութիւններ կ'հասնեն մեզ վերայ. ինչպէս
5 որ էլ էլաւ՝ և դուք իմացաք։ Նորա համար ես
էլ՝ որ համբերութիւն չունէի, ուղարկեցի՝ որ ձեր
հաւատքը գիտենամ. որ չ'լինի թէ փորձիչը ձեզ
6 էլ փորձեց, և մեր աշխատանքն զուր լինի։ Բայց
հիմիկ երբոր Տիմոթէոսը ձեզանից եկաւ մեզ մօտ,
և ձեր հաւատքի և սիրոյ աւետիքը տուաւ մեզ,
որ ամեն ժամանակ մեր բարի յիշատակը մտքումէ-
ունիք. և ցանկանումէք մեզ տեսնել՝ ինչպէս որ
7 մենք էլ ձեզ. Նորա համար ե՛ղբարք՝ մխիթարվե-
ցանք ձեզ վերայ այն մեր ամեն վիշտերումն ու
8 նեղութիւններումը՝ ձեր հաւատքի ձեռովը։ Ինչու-
որ հիմիկ մենք կենդանի ենք՝ թէ որ դուք հաս-
9 տատ կենաք Տէրումը, Էլ ի՞նչ գոհութիւն կա-
րօղ ենք տալ Աստուծոյ ձեզ համար՝ այն ամեն

ուրախութեան պատճառովն, որ ուրախանումենք
10 ձեզ համար մեր Աստուծոյ առաջին։ Գիշեր և ցե-
րեկ էլ աւելի աղաչումեմ՝ որ ձեր երեսը տեսնեմ,
11 և ձեր հաւատքի պակասութիւնը հաստատեմ։ Բայց
ինքն Աստուած և մեր Հայրը՝ և մեր Տէր Յիսուս
12 Քրիստոսը՝ ուղղէ մեր ճանապարհը դէպի ձեզ։ Եւ
Տէրն ինքը տա՛յ ձեզ շատանալ և աւելանալ սի-
րով իրար հետ և դէպի ամենը, ինչպէս որ մենք
13 էլ դէպի ձեզ. Որ ձեր սրտերը հաստատվին և ա-
նարատ լինին սրբութենով Աստուծոյ և մեր Հօր
առաջին՝ այն ժամանակումն, որ մեր Տէր Յիսուս
Քրիստոսը կ'գայ իրեն ամեն սրբերովը։

ԳԼ. Դ

Խրատ սրբութեամբ ապրելոյ համար. մխիթարութիւն մեռելների յարութիւնից ։

1 Ուրեմն ե՛ղբարք՝ աղաչումենք ձեզ՝ և յորդորում
Քրիստոս Յիսուսումը. որ ինչպէս ընդունեցիք մե-
զանից, թէ ինչպէս պէտք է ձեզ գնալ և հաճոյ
լինիլ Աստուծոյ՝ ինչպէս որ էլ գնումէք, որ աւե-
2 լի և աւելի առաջանաք նորանում։ Եւ գիտումէք՝
թէ ինչպէսի պատուիրանք տուինք ձեզ Տէր Յի-
3 սուսումը։ Ինչու որ աս է Աստուծոյ կամքը, ձեր
սրբութիւնը. որ դուք յետ կենաք պոռնկութե-
4 նից. Եւ ձեզանից ամեն մէկը գիտենայ իրեն ա-
5 մանը պահել սրբութենով և պատուով. Չէ՛ թէ
ցանկութեան ցաւերով, ինչպէս ուրիշ հեթանոս-
6 ներն՝ որ Աստուծոյն չեն գիտում։ Չ'լինի՛ որ մի-

նըն այդ բանումդ չափիցն անցանէ և իրեն եղբօրը
զրկէ. ինչու որ Տէրն այդ ամեն բաներից վերայ վը-
րէժխնդիր է. ինչպէս որ առաջուց ասացինք ձեզ՝
7 և վկայութիւն տուինք: Պատճառնոր Աստուած
մեզ չ'կանչեց պղծութեան մէջ՝ այլ սրբութեան
8 մէջ: Ուրեմն նա՝ որ սա անարգումէ, ո՛չ թէ մարդ
է անարգում, այլ Աստուծոյն՝ որ էլ Սուրբ Հո-
գին տուաւ ձեզ:
9 Բայց եղբայրսիրութեան համար պէտք չէ՛ մին
բան գրել ձեզ. ինչու որ դուք ինքներդ Աստուա-
10 ծանից սովրած էք իրար սիրել. Որ իսկ դա էլ ա-
նումէք այն ամեն եղբայրներին՝ որ Մակեդոնացոց
ամեն կողմերումն են. աղաչումենք ձեզ ե՛ղբարք՝
որ էլ աւելի աւելանաք և ջանք անէք. որ հան-
11 դարտ լինիք: Եւ ամեն մէկն իրեն գործ գործէ.
և ձեր ձեռքով աշխատէք. ինչպէս որ պատուիրե-
ցինք ձեզ՝ որ պարկեշտութենով վարվիք դրսինե-
րին հետ՝ և ոչ մին բանով կարօտ չ'լինիք:
12 Ձե՛մ կամենում ե՛ղբարք՝ որ տգէտ լինիք ննջե-
ցելոց կողմանէ. որ չ'տրտմիք ինչպէս ուրիշներն՝ որ
13 յոյս չունին: Թէ որ հաւատումենք՝ որ Յիսուս մե-
ռաւ և յարութիւն առաւ. իսկ այնպէ՛ս էլ Աս-
տուած ննջեցեալներին Յիսուսի ձեռով կ'բերէ նո-
14 րա հետ: Բայց սա ենք ասում Տէրի խօսքովը, թէ
մենք՝ որ կենդանի մնացած ենք մինչեւ Տէրին գա-
15 լը. ննջեցեալներիցը չենք առաջանալ: ինչու որ
Տէրը ինքը հրամանովը, հրեշտակապետի ձայնովն
ու Աստուծոյ փողովը վէր կ'գայ երկնքիցը. և Քը-
րիստոսով մեռելներն առաջ յարութիւն կառնեն:
16 Յետոյ մենք էլ որ կենդանի ենք մնացած՝ նորանց

հետ միասեղ ամպերով օդին մէջ կ'յափշտակվինք
Տէրին առաջը. և այնպէս ամեն ժամանակ Տէրին
17 հետ կ'լինինք: Ուրեմն իրար մխիթարեցէ՛ք այս
խօսքերովս:

ԳԼ. Ե

Քրիստոսի գալստեան ժամանակը յայտնի չէ, և թէ ինչպէս պէտք է պատրաստվինք նորա գալստեանը համար:

1 Բայց ժամերին և ժամանակներին համար ե՛ղ-
2 բարք՝ պէտք չէ որ գրեմ ձեզ: ինչու որ դուք ինք-
ներդ հաստատ գիտումէք, թէ Տէրին օրն ինչպէս
3 գիշերվան գողը՝ այնպէս կ'հասնէ: Երբոր կասեն
թէ խաղաղութիւն և շինութիւն է, այդ ժամա-
նակը յանկարծակի կորուստը կ'հասնէ նորանց վե-
րայ՝ ինչպէս որ ցաւը յղացածին վերայ, և բնաւ
4 չեն պրծնիլ: Բայց դուք ե՛ղբարք՝ չէ՛ք խաւարու-
մըն, որ այն օրն ինչպէս գող ձեզ վերայ հասնէ:
5 ինչու որ՝ դուք ամենքդ լուսոյ որդիք էք՝ և ցերեկի
6 որդիք, գիշերին չենք՝ խաւարին չենք: Ապա ու-
րեմն չ'լինի՛ որ քնի մէջ ընկնինք ուրիշներին պէս,
7 բայց արթուն և զարթուն լինինք: Պատճառնոր՝
նորանք՝ որ քնումեն՝ գիշերն են քնում, և նո-
րանք՝ որ հարբենումեն՝ գիշերն են հարբենում:
8 Բայց մենք որ ցերեկի ենք՝ արթո՛ւն լինինք, և
հաւատքի և սիրոյ զրահը հագնենք, և փրկութեան
9 յուսոյ սաղաւարտը դնենք: ինչու որ՝ Աստուած
մեզ բարկութեան համար չ'դրաւ, բայց որ փրկու-
թենով կենդանի լինինք՝ մեր Տէր Յիսուսի Քրիս-

10 տալու ձեռովը․ Որ նա մեզ համար մեռաւ․ որ թէ
արթուն լինինք՝ և թէ քնենք, նորա հետ ապրինք։
11 Սորահամար իրար մխիթարեցէ՛ք, և իրար շինե-
ցէք՝ ինչպէս որ էլ անումէք ։
12 Աղաչումենք ձեզ ե՛ղբարք՝ որ ճանաչէք ձեր
աշխատաւորներին և վերակացուներին Տէրումը, և
13 ձեր խրատողներին էլ։ Եւ նորանց աւելի սիրով ար-
ժանի համարեցէ՛ք իրենց գործքին համար․ իրար
14 հետ խաղաղութենով վարվեցէ՛ք ։ Աղաչումենք
ձեզ ե՛ղբարք՝ խրատեցէ՛ք անկարգներին, մխիթա-
րեցէ՛ք թուլասրտներին, օգնական էլէք տկարնե-
15 րին, երկայնամի՛տ էլէք ամենին հետ ։ Զգո՛յշ կա-
ցէք՝ որ չ՚լինի թէ մինը չարին չար հատուցանէ,
բայց ամեն ժամանակ բարոյն հետեւեցէ՛ք՝ իրար
16 հետ և ամենին հետ ։ Ամեն ժամանակ ուրա՛խ է-
17 լէք ։ Անդադար աղօ՛թք արէք ։ (18) Ամեն բանի
մէջ գոհացէ՛ք․ ինչուոր սա է Աստուծոյ կամքը
19 ձեզ վերայ՝ Քրիստոս Յիսուսումը ։ Հոգին մի՛ ան-
20 ցընէք ։ Մարգարէութիւնները մի՛ անարգէք ։
21 Ամեն բան փորձեցէ՛ք, և բարին ընդունեցէ՛ք ։
22 Ամեն չար բաներից հեռո՛ւ կացէք ։ (23) Եւ խա-
ղաղութեան Աստուածն ինքը ձեզ սուրբ անէ ա-
մեն կերպով․ և ձեր բոլոր հոգին և շունչն ու մար-
մինն՝ անարատ պահվի մինչեւ մեր Տէր Յիսուսի
24 Քրիստոսի գալը ։ Հաւատարիմ է նա՝ որ կանչեց
ձեզ, որ իսկ նա էլ կանէ ։
25 Ե՛ղբարք՝ աղօ՛թք արէք մեզ վերայ էլ ։ (26) Ող-
ջո՛յն տուէք ամեն եղբարներին սուրբ համբուրովը։
27 Երդում եմ տալիս ձեզ Տէրումն, որ այս թուղ-
թըս ամեն սուրբ եղբարներին առաջին կարդաք ։

28 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն ձեզ հետ․
ամէն ։

Թեսաղոնիկեցւոց վերայ առաջին Թուղթն Աթենք
քաղաքէն գրուեցաւ ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Քրիստոսի գալստեան ժամանակի վարձատրութիւնը՝ հալածումներին համբերող *(?)*

1 ՊՕՂՈՍ և Սիղուանոս և Տիմօթէոս՝ Թեսաղոնի-
կեցոց եկեղեցույդ՝ Աստուած մեր Հօրումը և Տէր
2 Յիսուս Քրիստոսումը ։ Շնորհք ձեզ հետ և խա-
ղաղութիւն Աստուած մեր Հօրից՝ և Տէր Յիսուս
Քրիստոսից ։
3 Պէտք է մեզ որ ամեն ժամանակ Աստուծոյ գո-
հութիւն տանք ձեզ համար ե՛ղբարք՝ ինչպէս որ
էլ արժան է․ ինչուոր ձեր հաւատքն առաջանա-

լով մեծանումէ, և ձեր ամեն մէկի սէրն աւելա-
4 նումէ իրար վերայ. Մինչեւ որ մենք էլ ձեզանով
պարծենումենք Աստուծոյ եկեղեցիներումը՝ ձեր
համբերութեան և հաւատքին համար՝ այն ձեր ա-
մեն հալածանքներումն ու նեղութիւններումն, որ
5 դուք համբերումէք. Որ նա՛ Աստուծոյ արդար
դատաստանի նշան է. որ դուք արժանի լինիք Աս-
տուծոյ արքայութեան, որ նորա համար էլ նե-
6 ղութիւն էք քաշում. Որ պէտք է Աստուծոյ ա-
ռաջին՝ որ ձեզ նեղացնողներին նեղութիւն հա-
7 տուցանէ, Եւ ձեզ նեղացածներիդ հանգիստ մեզ
հետ՝ երբոր Տէր Յիսուսը կ'յայտնվի երկնքիցն իրեն
8 զօրութեան հրեշտակներովը. Կրակի բոցով վրէժ
առնելոյ նորանցից՝ որ Աստուծոյն չեն ճանաչում,
և մեր Տէր Յիսուսի աւետարանին չեն հնազանդ-
9 վում, Որ նորանք պատիժ կ'քաշեն յաւիտենական
կորուստը՝ Տէրի երեսիցը՝ և նորա փառաւոր զօ-
10 րութենիցը. Երբոր կ'գայ՝ որ փառաւոր լինի իրեն
սրբերումը, և զարմանալի ամեն հաւատացեալնե-
րումը. որ մեր վկայութիւնն որ ձեզ արինք՝ հա-
11 ւատարիմ կ'լինի այն օրումը, Որ այս պատճառո-
վըս էլ ամեն ժամանակ աղօթք ենք անում ձեզ
համար, որ Աստուած ձեզ արժանի անէ ձեր կո-
չումին՝ մինչեւ որ կատարէ ամեն բարի հաճոյու-
12 թիւնը, և հաւատքի գործքերը զօրութենով. Որ
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունը փառաւոր լի-
նի ձեզանում՝ և դուք նորանում, մեր Աստուծոյ
և Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքին պէս:

ԳԼ. Բ

*Մարգարէութիւն նեռին համար որ Քրիստոսի գալըս-
տեան առաջ պէտք է երևի:*

1 Աղաչումեմ ձեզ ե՛ղբարք՝ մեր Տէր Յիսուսի Քը-
րիստոսի գալըյն, և մեր նորա մօտ ժողովվելոյն
2 համար: Զ'լինի՛ թէ դուք շուտով շարժվիք ձեր
մտքիցը՝ և մի՛ զարհուրիք, ո՛չ հոգով և ո՛չ խօս-
քով և ո՛չ թղթերով իբր թէ մեզանից. ինչպէս
3 թէ Տէրի օրն եկած հասած լինի: Զ'լինի՛ որ մինը
խաբէ ձեզ՝ և ոչ մին բանով էլ. պատճառնոր նա-
նէ գալ եթէ առաջ չ'գայ այն ապստամբութիւնը,
և յայտնվի անօրէնութեան մարդը՝ կորստի որ-
4 դին, Այն հակառակօղն՝ որ գոռոզացած է այն
ամենին վերայ, որ Աստուած՝ կամ Աստուծոյ
պաշտօն է անուանված. մինչեւ որ նա Աստուծոյ
տաճարին մէջ կ'նստի, և իրեն անձը ցոյց կ'տայ
5 թէ Աստուած է: Չէ՞ք յիշում՝ որ դեռ քա-
6 նի որ ձեզ մօտ էի՝ այս բանս ասումէի: Եւ հի-
միկ դուք ինքներդ գիտումէք նա՝ որ խափանումէ,
7 որ իրեն ժամանակումը յայտնվի: Ինչուոր անօ-
րէնութեան խորհուրդն իսկ հիմիկ զօրանումէ.
միայն թէ մինչեւ այն ժամանակն որ մէջ տեղիցը
8 վերառնվի նա՝ որ հիմիկ խափանումէ. Եւ ապա
կ'յայտնվի այն անօրէնն՝ որ նորան Տէր Յիսուսը
կ'սատակացնէ իրեն բերանի հոգովը, և կ'խա-
9 փանէ իրեն գալըյ յայտնութենովը. Որ այն ան-
օրէնին գալը սատանայի ներգործութենիցն է, ամեն

զօրութենով և սուտ նշաններով և հրաշքներով.
10 Եւ ամեն անիրաւութեան խաբեբայութիւններով
նորանց վերայ՝ որ կորած են. Նորահամար որ ճըշ-
մարտութեան սէրը չընդունեցին՝ որ ապրին. Իսկ
նորահամար Աստուած մոլորութեան ներգործու-
թիւնը կուղարկէ նորանց՝ որ հաւատան ստու-
11 թեան. Որ դատապարտվին ամէնքն՝ որ չ'հաւա-
տացին ճշմարտութեան, բայց հաւանեցին անօ-
րէնութեան:
12 Իսկ մենք պէտք է որ ամեն ժամանակ Աստուա-
ծանից գոհանանք ձեզ համար՝ Տէրիցը սիրված եղ-
բարք, որ Աստուած սկզբից ընտրեց ձեզ՝ որ փըր-
կութիւն ստանանք Հոգւոյ սրբութենովը՝ և ճշմա-
13 րիտ հաւատքովը. Որ նորա մէջ ձեզ էլ կանչեց՝
մեր աւետարանովը մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
փառաւոր փրկութեան մէջ:
14 Ուրեմն ե՛ղբարք՝ հաստա՛տ կացէք, և պի՛նդ-
բռնեցէք այն աւանդութիւններն՝ որ սովորեցիք,
15 թէ խօսքով և թէ մեր թղթով: Բայց ինքն մեր
Տէր Յիսուս Քրիստոսը և մեր Հայր Աստուածը,
որ սիրեց մեզ՝ և յաւիտենական մխիթարութիւն
16 տուաւ մեզ՝ և բարի յոյս շնորհքով, Նա մխիթա-
րէ՛ ձեր սրտերը՝ և ամեն բարի խօսքերի և գործ-
քերի մէջ հաստատէ:

ԳԼ. Գ

Առաքեալը յորդորում է աշխատաւոր լինել և փախչել դատարկապորտութենից:

1 Այսուհետեւ ե՛ղբարք՝ աղօ՛թք արէք մեզ վե-
րայ, որ Աստուծոյ խօսքն առաջանայ, և ամեն
2 տեղ փառաւոր լինի՝ ինչպէս որ էլ ձեզ մօտ. Որ
փրկվինք անօրէն և անզգամ մարդկանց ձեռքիցը.
3 ինչուոր հաւատքն ամենի բան չէ: Բայց Տէրը հա-
ւատարիմ է, որ էլ կ'հաստատէ ձեզ՝ և այն չա-
4 րիցն կ'պահէ: Վստահութիւն ունինք ձեզ վերայ
Տէրով, որ այն որ պատուիրեցինք ձեզ՝ էլ անում
5 էք՝ և էլ կանէք: Բայց Տէրը շիտակէ՛ ձեր սրտերը
դէպի Աստուծոյ սէրը՝ և դէպի Քրիստոսի համբե-
րութիւնը:
6 Պատուիրումեմ ձեզ ե՛ղբարք՝ մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի անունովը, որ յետ քաշվիք ամեն եղ-
բայրներից՝ որ անկարգութենով են վարվում. և
չէ թէ այն պատուիրանքին պէս՝ որ ընդունեցիք
7 մեզանից: Ինչուոր դուք ինքներդ գիտումէք՝ թէ
ինչպէս պէտք է ձեզ՝ որ մեզ նմանօղ լինիք. որ
ձեզ մօտ բնաւ անկարգութենով չ'վարվեցանք:
8 Եւ ոչ մինի հացն էլ ձրի չ'կերինք, բայց ջանքով
և աշխատանքով գիշեր և ցերեկ գործումէինք՝ որ
9 ձեզանից ոչ մինին ծանրութիւն չ'տանք: Չէ թէ
որ իշխանութիւն չունինք. բայց որ մեր անձներս
10 օրինակ տանք ձեզ՝ որ մեզ նմանօղ լինիք: Ինչու-
որ երբոր ձեզ մօտ էինք՝ սա էինք պատուիրում,

թէ՝ նա որ չ'կամենայ գործել՝ թո՛ղ էլ չ'ուտէ ։
11 Բայց ձեզանից մին քանիսին համար լսումենք՝ որ
անկարգութենով են վարվում. մին բան չեն գոր-
ծում, բայց ծուլացած հետաքրքիր ման են գա-
12 լիս ։ Այնպէսիններին պատուիրումենք՝ և աղաչում-
ենք Տէր Յիսուս Քրիստոսումն, որ հանդարտու-
13 թենով աշխատեն՝ և իրենց հացն ուտեն ։ Բայց
դուք ե՛ղբարք՝ մի՛ ձանձրանաք բարիք գործելու-
14 ցը ։ Ապա թէ որ մինը չ'հնազանդվի մեր խօսքին
այդ թղթովդ, դուք նշանեցէ՛ք նորան. և մի՛
15 խառնվիք նորա հետ՝ որ ամաչէ ։ Բայց թշնամու
պէս մի՛ համարէք, այլ խրատեցէ՛ք նորան ինչպէս
16 եղբայր ։ Եւ ինքն խաղաղութեան Տէրը՝ տայ ձեզ
խաղաղութիւն ամեն ժամանակ, և ամեն բանի
մէջ. Տէրը ձեզ ամենից հետ ։
17 Ողջոյնս իմ Պօղոսիս ձեռինն է, որ նշան է ա-
18 մեն թղթերումս. այսպէս եմ գրում. Մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեզ ամենից հետ լի-
նի՛. ամէն ։

Թեսաղոնիկեցոց վերայ երկրորդ (թուղթ) Աթէնք
քաղաքից գրվեցաւ ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Օրէնքին և Աւետարանին վարդապետութիւնը Պօղոսին օրինակովը բացատրուած ։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ՝ մեր Փըր-
կիչ Աստուծոյ հրամանովը՝ և Յիսուս Քրիստոսի մեր
2 յուսոյ. Տիմոթէոսի՝ սիրելի որդոյս հաւատքով.
շնորհք՝ ողորմութիւն՝ և խաղաղութիւն՝ Աստուած
Հօրիցը և մեր Տէր Յիսուս Քրիստոսիցը ։
3 Ինչպէս որ աղաչեցի քեզ՝ որ Եփեսոսումը մնաս՝
երբոր ես գնումէի Մակեդոնիա. որ պատուիրես
4 մին քանիսին՝ որ օտար ուսմունք չ'սովորցնեն, Եւ
մտիկ չ'տան առասպել բաներին և ազգահամար-
ներին, որ չափ չունին, որ աւելի վիճաբանու-
թիւններ են գրգռում, և չէ թէ Աստուծոյ տըն-
5 տեսութիւնն՝ որ հաւատքով է ։ Ինչուոր պատուի-
րանքի գլուխը սէրն է, սուրբ սրտից, և բարի
6 մտքից, և անկեղծ հաւատքից. Որ մին քանիսը
նորանցից թեքվեցան՝ և ունայն բաների ետեւէն

7 գնացին ։ Կամենում են օրէնքի վարդապետ լինել,
և իրենք չե՛ն իմանում թէ ինչ են խօսում, և ո՛չ
8 էլ այն բաներն՝ որ նորանց հետեւումեն ։ Գի-
տեմք՝ որ օրէնքը բարի է, թէ որ մինն օրինա-
9 ւոր կերպով վարէ նորան ։ Բայց սա պէտք է գի-
տենայ՝ որ արդարներին վերայ օրէնք չ՚կայ, բայց
անօրէններին, անհնազանդներին, ամպարիշտնե-
րին, մեղաւորներին, անսուրբներին. պիղծերին,
հօր և մօր անարգօղներին, մարդ սպանօղներին,
10 Պոռնիկներին, արուագէտներին, մարդգողացօղնե-
րին, սուտ ասօղներին, սուտ երդում ուտօղնե-
րին վերայ. և թէ ուրիշ բան կայ՝ որ հակառակ
11 է ողջամիտ վարդապետութեանն, Որ երանելի Աս-
տուծոյ փառաւոր աւետարանին պէս է, որ ես
12 հաւատարիմ եղայ նորան ։ Շնորհակալ եմ նորա-
նից՝ որ զօրացրուց ինձ մեր Տէր Յիսուս Քրիստո-
սումը. որ ինձ հաւատարիմ համարեց՝ և սպասա-
13 ւորութեան մէջ դրաւ, Որ ես առաջուց հայհոյօղ
և հալածօղ և թշնամանօղ էի. բայց ողորմու-
թիւն գտի, ինչուոր տգիտութենով և անհաւա-
14 տութենով էի գործում նա ։ Բայց էլ աւելի շատ
եղաւ մեր Տէրի շնորհքը հաւատքովն ու սիրովը՝ որ
15 Քրիստոս Յիսուսումն է ։ Ճշմարիտ է այս խօսքս՝ և
ամեն կողմանէ արժանի է ընդունվելոյ. որ Յիսուս
Քրիստոս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելոյ, որ
16 նորանց գլխաւորը ես եմ ։ Այլ նորահամար ողոր-
մութիւն գտի, որ առաջ ինձանում Յիսուս Քը-
րիստոս ցոյց տայ ամեն երկայնմտութիւնն՝ որ օ-
րինակ լինի նորանց՝ որ հաւատալու են նորան յա-
17 ւիտենական կեանքն ստանալոյ համար ։ Բայց յա-

ւիտենական Թագաւորին՝ այն անապականելոյն և
աներեւութին, այն մին Աստուծոյն՝ փառք և պա-
տիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն ։
18 Այս պատուիրանքս աւանդում եմ քեզ՝ իմ Տի-
մոթէո՛ս որդեակս, այն մարգարէութիւններին պէս՝
որ առաջուց քեզ վերայ եղան. որ նորանցով բա-
19 րի զինուորութենով պատերազմիս ։ Եւ հաւատք
ունենաս սուրբ մտքով, որ նորան մին քանիսն
դուրս ձգեցին իրենց անձներիցը՝ և հաւատքումը
20 նաւակոծութիւն քաշեցին, Որ նորանց միջումն են
Հիմենոսն ու Աղէքսանդրոսը, որ նորանց մատնեցի
սատանային, որ խրատվին չ՚հայհոյել ։

ԳԼ. Բ

Աղօթք և ուրիշների համար խնդրուածք. կանայք պէտք
է ժողովքների մէջ չի սովրեցնեն ։

1 Սորահամար աղաչումեմ, որ ամենիցն առաջ ա-
ղօթք անվի, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն
2 ամեն մարդկանց համար. Մանաւանդ թագաւոր-
ներին և ամեն իշխաններին համար. որ խաղաղու-
թենով և հանդարտութենով մեր կեանքը վա-
րենք, ամեն աստուածպաշտութենով և սրբութե-
3 նով ։ Ինչուոր նա է բարի և ընդունելի մեր Փըր-
4 կիչ Աստուծոյ առաջին, Որ կամենումէ՝ որ ամեն
մարդիկ ապրին, և դէպի ճշմարտութեան գիտու-
5 թիւնը գան ։ Պատճառնոր մին Աստուած կայ, և
մին միջնորդ Աստուծոյ և մարդկանց մէջ՝ Յիսուս
6 Քրիստոս մարդը, Որ իրեն անձն ամենին համար

փրկութեան գին տուաւ, որ վկայութիւն լինի՝ ի-
7 րեն ժամանակներումը. Որ ես նորա քարոզիչ և
առաքեալ կարգուեցայ. ճշմարիտն եմ ասում Քը-
րիստոսումը՝ և սուտ չե՛մ խօսում. Ես եղայ հե-
թանոսների վարդապետ հաւատքով և ճշմարտու-
8 թենով: Ուրեմն կամենում եմ որ մարդիկ ամեն տեղ
աղօթք անեն. սուրբ ձեռներ վեր բարձրացնեն ա-
9 ռանց բարկութեան և երկմտութեան: Այնպէս
էլ կանայքը խոնարհութեան զարդարանքով ամօթ-
խածութենով զգաստութենով իրենց անձները
զարդարեն. չէ թէ ոսկէ հիւսուածներով մարգա-
10 րիտներով շարած՝ կամ պայծառ շորերով. Բայց
ինչպէս որ վայել է այն կանանցն՝ որ աստուած-
պաշտութիւնն անձներն են առել՝ բարի գործքե-
11 րով: Կինը թո՛ղ ցածութենով սովորի՝ ամեն հը-
12 նազանդութենով: Կնկան հրաման չե՛մ տալիս՝ որ
սովորցնէ, և ո՛չ էլ մարդուցն աւելի խօսք խօսի.
13 բայց որ լուռ կենայ: Պատճառնոր Ադամ առաջ
14 ստեղծուեցաւ՝ և յետոյ Եւան: Եւ Ադամ չ'խաբ-
ուեցաւ՝ բայց կինը խաբուեցաւ և մեղք գործեց:
15 Միայն թէ կապրի որդեծնութեան համար՝ թէ որ
կենայ հաւատքով և սիրով և սրբութենով պար-
կեշտութեան հետ:

ԳԼ. Գ

Եկեղեցւոյ սպասաւորները և նորանց ընտանիքը ինչպէս պէտք է լինին. Աստուածպաշտութեան խորհուրդը:

1 Ճշմարիտ է այս խօսքս. թէ որ մինն եպիսկոպո-
սութեան ցանկանայ՝ մին բարի գործի է ցանկա-

2 նում: Եպիսկոպոսին պէտք է որ անարատ լինի,
մին կնկան մարդ, հեզահոգի՝ խոնարհ՝ պարկեշտ՝
3 օտարասէր՝ սովորցնող. Չէ՛ թէ նախատինք տուող,
և ո՛չ զարկող. բայց համդարտ. չէ՛ թէ կռիւ ա-
4 նող. և ո՛չ արծաթասէր. Որ լաւ իրեն տանը բա-
րի վերակացու եղած լինի. որ որդիքներ ունենայ
5 որ հնազանդ են ամեն պարկեշտութենով: Բայց
թէ որ մինը չ'գիտենայ իրեն տանը վերակացու լի-
նիլ. նա ի՞նչպէս Աստուծոյ եկեղեցուն հոգաբար-
6 ձու կ'լինի: Ո՛չ թէ հաւատքը նոր եկած, որ չ'լի-
նի թէ գոռոզանայ և սատանայի դատաստանի մէ-
7 ջըն ընկնի: Բայց պէտք է նորան, որ դրսիներից
էլ բարի վկայութիւն ունենայ. որ նախատինքի
և սատանայի որոգայթին մէջ չընկնի:
8 Այնպէս էլ սարկաւագները պարկեշտ լինին.
ո՛չ երկու կերպ խօսող, ո՛չ գինեսէր, ո՛չ պիղծ
9 շահ սիրող. Բայց հաւատքի խորհուրդը սուրբ մըտ-
10 քով ունենան: Իրենք առաջ թո՛ղ փորձվին, և
յետոյ այն պաշտօնին մէջ մտնեն, որ անարատ
11 լինին: Այնպէս էլ նորանց կանայքը՝ պարկեշտ.
չէ թէ չարախօս, հեզահոգի՝ ամեն բանի մէջ հա-
12 ւատարիմ: Սարկաւագները մին կնկան մարդիք լի-
նին. որ իրենց որդոցը բարի վերակացու եղած լի-
13 նին, և իրենց տներին: Ինչու որ նորանք՝ որ պաշ-
տօնը լաւ են կատարում, իրենց անձներին համար
բարի աստիճան են շահվում, և շատ համարձա-
կութիւն այն հաւատքումն՝ որ Քրիստոս Յիսու-
սումն է:
14 Սա գրում եմ քեզ՝ որ յոյս էլ ունիմ թէ մօտիկ
15 ժամանակումն գամ: Բայց թէ որ ուշանամ՝ որ

գիտենաս թէ ի՞նչպէս պէտք է վարուիլ Աստուծոյ
տանը մէջ. որ նա կենդանի Աստուծոյ եկեղե-
ցին է, ճշմարտութեան սիւն և հաստատութիւն:
16 Եւ յայտնի էլ մեծ է Աստուածպաշտութեան
խորհուրդը. որ նա երեւեցաւ մարմնով, արդա-
րացաւ Հոգով, յայտնւեցաւ հրեշտակներին, քա-
րոզւեցաւ հեթանոսներին, հաւատացւեցաւ աշ-
խարհքումս և վերացաւ փառքով:

ԳԼ. Դ

*Առաքեալը զգուշացնում է վերջին ժամանակի փորձու-
թիւններից:*

1 Բայց Սուրբ Հոգին յայտնի ասում է, թէ յետին
ժամանակներումը մին քանիսը հաւատքից կ'հե-
ռանան. և մոլորութեան հոգիներին և դեւերի
2 վարդապետութիւններին մտիկ կ'տան, Նորանց՝ որ
կեղծաւորութենով սուտ են խօսում, և իրենց
3 խղճմտանքովը խանձ են, Որ պսակւելուցը կարգե-
լեն, և կ'հրաժարեն այն կերակուրներիցն՝ որ Ա-
ստուած ստեղծեց՝ որ նորանց վայելեն հաւատաց-
եալները, և նորանք որ ճշմարտութիւնը ճանաչել
4 են. Պատճառ որ՝ Աստուծոյ ամեն ստեղծվածները
բարի են, և ոչ մին բան անարգելի չէ. մանա-
5 ւանդ այն որ գոհութենով է ընդունվում: Ինչու-
որ՝ Աստուծոյ խօսքովս ու աղօթքով սրբվում է:
6 Այս խրատս որ եղբայրներին տաս՝ Քրիստոսի Յի-
սուսի բարի պաշտօնեայ կ'լինիս, կ'մեծանաս և
կապրիս հաւատքի խօսքերովը, և այն բարի վար-

7 դապետութենովս՝ որ նորան հետեւեցիր: Բայց
պիղծ խօսքերիցն ու պառաւների առասպելներիցը
յե՛տ կաց. այլ վարժացրո՛ւ քո անձդ աստուածա-
8 պաշտութենումը. Ինչու որ՝ մարմնոյ վարժութիւ-
նը քիչ բանի համար օգուտ ունի. բայց աստ-
ուածապաշտութիւնն ամեն բանի համար օգուտ
ունի. և հիմիկվան և նոր գալու կենաց աւետիքն
9 ունի: Ճշմարիտ է այս բանս՝ և ամեն կողմանէ
10 արժանի ընդունվելոյ. Ինչու որ՝ իսկ սորահամար
ենք աշխատում և նախատինք քաշում. որ կեն-
դանի Աստուծոյ վերայ ենք դրել յոյսն, որ նա
Փրկիչ է ամեն մարդկանց, և մանաւանդ հաւա-
11 տացեալներին: Այդ բանդ պատուիրէ՛ և սովոր-
12 ցրո՛ւ: Չ'լինի՛ որ մինը քո տղայութիւնդ անար-
գէ. բայց օրինակ լինի՛ր հաւատացեալներին խօս-
քերով, վարքով, սիրով, հաւատքով, սրբութե-
13 նով: Մինչեւ որ գամ՝ միտք դիր կարդացմուն-
քին, յորդորմունքին և վարդապետութեանը:
14 Անհոգ մի՛ լինիր այն շնորհքին համար՝ որ քեզա-
նում է. որ տրվաւ քեզ մարգարէութենով ե-
15 րէցների ձեռնադրութենիցը: Դա մտածէ՝ դորա-
նում ջա՛նք արա. որ քո առաջանալդ ամենին
16 յայտնի լինի: Զգո՛յշ կաց անձիդ և վարդապե-
տութեանդ՝ և դորանում մնա՛. դա թէ որ ա-
նես՝ քո անձդ կ'ապրեցնես, և նորանց էլ՝ որ քեզ
կ'լսեն:

ԳԼ. Ե

*Հոգալու համար այրիներ ընտրել. սովորցնողներին պար-
տականութիւնները։*

1 Ծերին սաստիկ մի՛ յանդիմանիր, բայց յորդո-
րէ նորան ինչպէս հօր. երիտասարդներին՝ ինչպէս
2 եղբայրներին. պառաւներին՝ ինչպէս մայրեր. մատ-
ղաշ կանանց ինչպէս քոյրեր՝ ամեն սրբութենով։
3 Որբեւէրիներին պատուի՛ր՝ նորանց որ ճշմարիտ որ-
4 բեւէրի են։ Բայց թէ որ մին որբեւէրի՝ որդիք և
թոռներ ունենայ, թո՛ղ նորանք առաջ սովորին
իրենց տանը բարի անել՝ և ծնողաց փոխ հատու-
ցանել. ինչուոր նա է բարի՝ և Աստուծոյ առա-
5 ջին ընդունելի։ Բայց նա՝ որ ճշմարիտ որբեւէրի
է և մենակ կացած՝ յոյսն Աստուծոյ վերայ է դը-
նում, և գիշեր և ցերեկ աղօթքին և աղաչանքին
6 հետեւում։ Այլ փափկասէր որբեւէրին՝ հենց կեն-
7 դանի մեռած է։ Սա պատուիրէ՛ որ անարատ լի-
8 նին. Բայց թէ որ մինն իրեններին և մանաւանդ
ընտանիքներին համար հոգս չունենայ, նա հա-
ւատքից ուրացած է՝ և անհաւատներից էլ չար
9 է։ Այն որբեւէրին որբեւէրիների կարգին մէջ
դասուի՛ որ վաթսուն տարուց պակաս չէ՝ և մին
10 մարդոյ կին եղած է. Եւ բարի գործքերով վկա-
յուած է՝ որ երեխաներ մեծացրած լինի, որ օտար-
ներին ընդունած լինի, որ սրբերի ոտներն լուա-
ցած լինի, որ նեղացածներին ձեռնտուած լինի,
11 որ ամեն բարի գործքերին հետեւած լինի։ Բայց

մատղաշ որբեւէրիներից յե՛տ կաց. ինչուոր երբ-
որ ուրախութենով աւելանումեն՝ Քրիստոսին հա-
12 կառակ՝ կամենումեն պսակվիլ, Եւ դատաստան
են ընդունում իրենց վերայ՝ որ առաջին հաւատ-
13 քը ձգեցին։ Սորանից էլ գործքից դատարկ մը-
նալ են սովորում՝ տանից տուն մանգալով. և չէ
թէ մենակ դատարկ՝ բայց էլ շատախօս և հետա-
14 քրքիր. և խօսումեն՝ ինչ որ պէտք չէ։ Կամե-
նումեմ որ մատղաշ որբեւէրիները պսակվին, որ-
դիք ծնին, տնաշէն լինին. և հակառակօղին ըն-
15 նաւ պատճառ չ'տան հայհոյանք անելոյ։ Ինչուոր՝
իսկ հիմիկ մին քանիսը ճանապարհից դուրս գնա-
16 ցին սատանային ետեւէն։ Թէ որ մին հաւատա-
ցեալ՝ որբեւէրիներ ունենայ՝ նա թո՛ղ հոգս անէ
նորանց համար, և եկեղեցոյն ծանրութիւն չ'տայ.
որ ճշմարիտ որբեւէրիներին բաւական լինի։
17 Երէցներն որ լաւ վերակացութիւն են անում՝
թող երկու պատիւ պատուոյ արժանի լինին. և
մանաւանդ նորանք՝ որ խօսքով և վարդապետու-
18 թենով են աշխատում։ Պատճառնոր գիրքն ա-
սումէ. Կալին մէջն աշխատող եզի դունչը մի՛ կա-
պիր. և թէ Մշակն արժանի է իրեն վարձքին։
19 Երէցի վերայ չարախօսութիւն մի՛ ընդունիր. բայց
20 միայն երկու կամ երեք վկայով։ Իսկ նորանք՝ որ
մեղք են գործում, ամենի առաջին յանդիմանէ,
21 որ ուրիշներն էլ վախենան։ Վկայութիւն են դը-
նում Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի և ընտրված
հրեշտակներին առաջին, որ դա պահես առանց
քո մտքի հաճոյութեան նայելոյ. ոչ մին բան հա-
22 նես երեսպաշտութենով։ Ձեռն մի՛ դներ շուտով

մինի վերայ, և ուրիշների մեղացը մասնակից մի՛
լինիր. քո անձդ սուրբ պահէ:
23 Այսուհետեւ մինակ ջուր չ'խմես, բայց մին քիչ
գինի էլ խառնէ քո ստամոքսի և շուտ շուտ հի-
ւանդութիւններիդ համար:
24 Կան մարդիկ՝ որ նորանց մեղքերն յայտնի են, և
առաջ դատաստանի մէջ հասած. և կան էլ որ ե-
25 տեւէն են գալիս: Այնպէս էլ բարի գործքերն յայտ-
նի են. և ուրիշ կերպ էլ՝ որ լինին՝ չեն կարող
ծածուկ կենալ:

ԳԼ. Զ

Ծառայք, մոլորեցուցիչներ, հարուստներ, և հաւատքի պատերազմ:

1 Նորանք որ ծառայութեան լծի տակն են՝ ամեն
մէկը թո՛ղ իրենց տէրերին պատուոյ արժանի հա-
մարեն. որ Աստուծոյ անունն ու վարդապետու-
2 թիւնը չ'հայհոյվի: Բայց նորանք որ հաւատացեալ
տէրեր ունին՝ չ'լինի՛ որ անարգեն, նորահամար որ
եղբարք են. բայց էլ աւելի ծառայութիւն անեն,
նորահամար՝ որ հաւատացեալ և սիրելի են, որ
բարերարութեանը մասնակից են. սա սովորցրո՛ւ
3 և յորդորէ: Բայց թէ որ մինն ուրիշ կերպով սո-
վորցնէ՝ և մօտիկ չ'տայ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
ողջամիտ խօսքերին, և այն վարդապետութեանն՝
4 որ աստուածպաշտութեանը կ'վայելէ: Այնպէսի
մարդը գոռոզացած է, և ընաւ բան չի՛ գիտում.
բայց այրվումէ վիճաբանութիւններով և հակա-
ռակութեան խօսքերով, որ նորանից լինումէ նա-

խանձութիւն, կռիւ, հայհոյութիւններ, չար
5 կարծիքներ, խարդախութիւններ մարդկանց՝ որ
միտքով ապականված և ճշմարտութենից օտարա-
ցած են. որ աստուածպաշտութիւնը շահեկան
արհեստ են համարում. բայց դու յե՛տ քաշվէ
6 այնպէսիներիցը: Սակայն մեծ շահ է աստուածա-
7 պաշտութիւնը՝ բաւականութեան հետ: Պատ-
ճառնոր՝ ոչ մին բան չենք բերել այս աշխարհքս՝ և
8 էլ չենք կարենալ մին բան դուրս տանիլ: Բայց թէ
որ կերակուր և շորեր ունինք, էլ նորանով բա-
9 ւական լինինք: Իսկ նորանք որ կամենումեն հա-
րստանալ՝ փորձութեան և որոգայթի և շատ ան-
միտ և վնասակար ցանկութիւնների մէջ են ընկ-
նում. որ մարդկանց սատակացնումեն և կորուստի
10 մէջ ձգում: Պատճառնոր՝ ամեն չարի արմատն ար-
ծաթի սէրն է. որ մին քանիսը ցանկացան նորան՝
և հաւատքից թէքվեցան, և իրենց անձները շատ
ցաւի մէջ ձգեցին:
11 Բայց դու ո՛վ Աստուծոյ մարդ՝ փախի՛ր նորան-
ցից, և հետեւէ արդարութեան, աստուածպաշ-
տութեան, հաւատքին, սիրոյն, համբերութեան,
12 հեզութեան: Դու պատերազմէ՛ հաւատքի բարի
պատերազմովը, և պի՛նտ բռնէ յաւիտենական
կեանքն՝ որ նորա մէջ կանչվեցար, և դաւանեցիր
13 բարի դաւանութիւն շատ վկաների առաջին: Պա-
տուիրումեմ քեզ Աստուծոյ առաջին՝ որ ամեն
բան կենդանի է անում, և Յիսուսի Քրիստոսի ա-
ռաջին՝ որ բարի դաւանութիւն վկայեց Պոնտացի
14 Պիղատոսի առաջին. Որ դու պատուիրանքը մա-
քուր և անարատ պահես, մինչեւ մեր Տէր Յի-

15 տուսի Քրիստոսի յայտնութիւնը․ Որ Նորան իրեն
ժամանակումը ցոյց կ'տայ այն Երանելին՝ և միակ
Զօրաւորը, Թագաւորների Թագաւորը և տէրերի
16 Տէրը․ Որ նա միայն անմահութիւն ունի՝ անմօ-
տենալի լուսոյ մէջ բնակված․ որ մարդկանցից ոչ
մինը չ'տեսաւ Նորան՝ և ո՛չ էլ կարող է տեսնել․
Նորան պատիւ և զօրութիւն յաւիտեանս, ամէն ։
17 Հարուստներին՝ որ այս աշխարհքումն են՝ պա-
տուիրէ՛ որ չ'գոռոզանան՝ և ունայն մեծութեան
վերայ յոյսը չ'դնեն, բայց Աստուծոյ վերայ՝ որ
ամեն բան տալիս է մեզ լիութենով՝ որ վայելենք․
18 Որ բարի գործեն, բարի գործքերով հարստանան,
19 առատաձեռք, սիրելի, հաղորդօղ լինին ։ Իրենց
անձներին համար բարի հիմն դիզեն նոր եկօղնե-
րումը․ որ ճշմարիտ կեանքը ձեռք բերեն ։
20 Ո՛վ Տիմոթէէ՛ պահէ՛ աւանդը․ և յե՛տ կաց պիղծ
և նորաձայն խօսքերից ու սուտ անուն ունօղ գի-
21 տութեան հակառակութիւններից․ Որ Նորան մին
քանիսն ընդունեցին՝ և հաւատքից թեքվեցան․
Շնորհքը քեզ հետ լինի․ ամէն ։

Տիմոթէոսին գրուած առաջին թուղթը գրուեցաւ Լաոդիկէ
քաղաքից՝ որ Փակատիանացւոց մայրաքաղաքն է ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Խրատ ճշմարիտ վարդապետութեան մէջ հաստատ մնալոյ համար․ Յիսուսի Քրիստոսի շնորհքը ։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ Աստուծոյ
կամքովը, կեանքի աւետիքին պէս՝ որ Քրիստոս Յի-
2 սուսումն է ։ Տիմոթէոս սիրելի որդոյս՝ շնորհք, ո-
ղորմութիւն և խաղաղութիւն լինի Աստուած Հօ-
րից և մեր Տէր Յիսուս Քրիստոսից ։
3 Շնորհակալ եմ Աստուածանից՝ որ իմ առաջին
հարանցիցս եկած Նորան պաշտումեմ սուրբ մըտ-
քով․ որ անպակաս քեզանից յիշատակ եմ ա-
4 նում իմ աղօթքներումս՝ գիշեր և ցերեկ ։ Ցան-
կանումեմ քեզ տեսնել՝ յիշելով քո արտասուն-
5 քըդ՝ որ ուրախութենով լցվիմ ։ Ինչուոր իմ միտ-
քըս եմ բերում այն անկեղծ հաւատքն՝ որ քե-
զանում է․ որ առաջ քո Լաւոդիա տատումդ և
քո Եւնիկէ մօրումդ բնակվեցաւ․ հաստատ գի-
6 տումեմ որ էլ քեզանում է ։ Նորահամար քո

միտքդ եմ բերում որ զարթնացնես Աստուծոյ այն
շնորհքն որ քեզանում է՝ իմ ձեռնադրութենիցս։
7 Պատճառնոր Աստուած չ՚տուաւ մեզ վախկոտու-
թեան հոգի, այլ զօրութեան՝ և սիրոյ՝ և պար-
8 կեշտութեան։ Ուրեմն ամօթ մի՛ համարիր մեր
Տէրի վկայութիւնն և ո՛չ էլ ինձ՝ որ նորա կապ-
ուածն եմ. բայց մասնակից լինիր չարչարանքին՝ ա-
9 ւետարանի համար՝ Աստուծոյ զօրութենովը. Որ
փրկեց մեզ, և սուրբ կոչումով կանչեց. ո՛չ թէ
մեր գործքերին համար՝ այլ իրեն առաջադրու-
թեան և շնորհքին պէս. որ տուաւ մեզ Քրիստոս
Յիսուսումն յաւիտենական ժամանակներից ա-
10 ռաջ։ Բայց յայտնուեցաւ հիմիկ՝ երբ որ Փրկիչ
Յիսուս Քրիստոսն երևեցաւ. որ խափանեց մահին
և լուսոյ մէջ բերաւ կեանքն ու անմահութիւնն
11 իրեն աւետարանովը. Որ ես նորա քարոզիչ և ա-
ռաքեալ կարգուեցայ, և հեթանոսների վարդա-
12 պետ։ Նորահամար էլ այս չարչարանքներս քա-
շում եմ, բայց ընաւ ամօթ չեմ համարում.
պատճառնոր՝ գիտումեմ՝ թէ ո՞ւմ եմ հաւատա-
ցել. և հաստատ եմ՝ թէ կարո՛ղ է իմ աւանդս
13 պահել մինչեւ այն օրը։ Ողջամիտ խօսքերի օրի-
նակն ունենաս, որ ինձանից լսեցիր՝ հաւատքով և
սիրով որ Քրիստոս Յիսուսումն է։
14 Այն բարի քեզ պահ տուած բանն պահէ՛ Սուրբ
15 Հոգւոյ ձեռովն որ մեզանում բնակուած է։ Սա գի-
տենաս՝ որ մեզանից ջոկուեցան այն ամենքն՝ որ Ա-
սիային մէջ էին. որ նորանց միջումն են Փիգելոս
16 և Հերմոգինէս։ Աստուած ողորմութիւն տայ Ոնե-
սիփորի տանն. ինչուոր շատ անգամ հանգստաց-

րո՛ւց ինձ, և իմ կապանքներս ամօթ չ՚համարեց։
17 Բայց երբոր եկաւ Հռոմ, շատ ջանքով ման եկաւ
18 ինձ և գտաւ։ Տէրը տա՛յ նորան՝ որ ողորմութիւն
գտնէ Տէրից այն օրումը. և որքան որ Եփեսո-
սումը ծառայութիւն արաւ ինձ՝ նա դու ինքդ ես
լաւ գիտում։

ԳԼ. Բ

*Խրատ պաշտօնը հաւատարմապէս վարելու համար. մխի-
թարութիւն նեղութեան մէջ. մի քանի մոլորութիւննե-
րից հեռանալ։*

1 Բայց դու իմ որդեակս, զօրացի՛ր այն շնորհքո-
2 վըն՝ որ Քրիստոս Յիսուսումն է. Եւ նա որ ինձա-
նից լսեցիր շատ վկաների առաջին՝ նա յանձնէ
հաւատարիմ մարդկանց՝ որ կարող են ուրիշներն
3 էլ սովորցնել։ Նեղութեան ընկեր լինի՛ր ինչպէս
4 Քրիստոսի Յիսուսի բարի զինուոր։ Ոչ ով որ զի-
նուորութիւն է անում, այս աշխարհքի բաներո-
5 վըն չի՛ զբաղվում՝ որ զօրապետին հաճոյ լինի։ Եւ
թէ որ մինը կռուի մէջ մտնէ՝ պսակ չի՛ առանալ՝
6 թէ որ կարգի պէս չ՚կռուի։ Եւ հողագործն որ աշ-
խատումէ՝ առաջ պէտք է որ պտղից վայելէ։
7 Իմացի՛ր ինչ եմ ասում. Տէրը տայ քեզ իմաս-
8 տութիւն ամեն բանի մէջ։ Յիշէ Յիսուս Քրիստո-
սին մեռելների միջից յարութիւն առածին՝ որ
9 Դաւթի զաւակից է, իմ աւետարանիս պէս. Որ
նորա համար չարչարվումեմ մինչեւ կապանքի մէջ
լինիլ՝ մին չարագործի պէս. բայց Աստուծոյ խօսքը

10 կապված չէ ։ Նորահամար ամեն բանի համբերում.
եմ ընտրվածների պատճառով՝ որ նորանք էլ հաս-
նեն այն փրկութեանն՝ որ Քրիստոս Յիսուսումն է՝
11 երկնաւոր փառքին հետ ։ Ճշմարիտ է այս խօսքս.
որ եթէ նորա հետ մեռանք՝ նորա հետ էլ կապ-
12 րինք ։ Թէ որ համբերենք, նորա հետ էլ կ'թա-
գաւորենք. և թէ որ ուրանանք՝ նա էլ կուրանայ
13 մեզ ։ Եւ թէ որ չ'հաւատանք, նա հաւատարիմ
14 կ'մնայ. իրեն անձն չի կարող ուրանալ ։ Այս բա-
նըս յիշացրու և Աստուծոյն առաջին վկայութիւն
տուր, որ խօսքերով կռիւ չանեն՝ որ նա անպիտան
15 է և լսողներին կործանումէ ։ Ջա'նք արա որ քո
անձդ ընտիր կանգնացնես Աստուծոյ առաջին՝ մը-
շակ առանց ամօթոյ, որ ճշմարտութեան խօսքն
16 շիտակ կարճառոտ քարոզէ ։ Բայց պիղծ և ունայն
խօսքերից յե'տ քաշվէ. ինչուոր՝ աւելի առաջ են
17 գնում ամբարշտութիւնների մէջ ։ Եւ նորանց խօս-
քերը կերցաւի պէս ուտելով առաջանումեն. որ
18 նորանց միջումն են Հիմէնոսն և Փիլէտոսը. Որ
նորանք ճշմարտութենիցը թեքվեցան, և ասումեն՝
թէ Մեռելների յարութիւնը իսկ հիմիկ եղած է.
19 և մին քանիսի հաւատքը կործանում ։ Բայց Աս-
տուծոյ հաստատ հիմն կանգնած կայ՝ և այս կը-
նիքս ունի, թէ Տէրը ճանաչումէ նորանց՝ որ իրենն
են. և թէ հեռու լինի անիրաւութենիցն այն ա-
20 մենն՝ որ Տէրի անունն անուանումէ ։ Բայց մին մեծ
տան մէջ չէ թէ մինակ ոսկէ և արծաթէ աման-
ներ կան. բայց փայտէ և հողէ էլ. կան՝ որ պա-
տուաւոր բանի համար են, և կան՝ որ անարգ բա-
21 նի համար են ։ Թէ որ մինը իրեն անձն սրբէ այն-

պէսի մուրդարներից ; նա պատուական աման կ'լինի
սրբված և իրեն տիրոջն օգտակար՝ ամեն բարի
22 գործքերի համար պատրաստված ։ Բայց երիտա-
սարդական ցանկութիւններիցը փախի'ր. և հետե-
ւէ արդարութեան՝ հաւատքին՝ սիրոյն՝ խաղաղու-
թեան՝ սրբութեան, նորանց հետ միատեղ՝ որ Տէ-
23 րի անունը կանչումեն սուրբ սրտով ։ Բայց յիմար
և անխրատ վիճաբանութիւններիցն յե'տ քաշվէ.
գիտացի'ր որ նորանցից կռիւներ են առաջ գա-
24 լիս ։ Սակայն Տէրի ծառային պէտք չէ՝ որ կռիւ
անէ, այլ որ ամենին հետ հեզահոգի լինի, ու-
25 սուցող՝ ոխ չ'պահող, հակառակողներին հանդար-
տութենով խրատէ. որ լինի թէ Աստուած նո-
րանց ապաշխարութիւն տայ՝ որ ճշմարտութիւնն
26 իմանան, Եւ զգաստանան սատանայի որոգայթ-
ներիցն, որ նորանից որսացվել են՝ նորա կամքն
անելոյ համար ։

ԳԼ. Գ

Վերջի ժամանակների մոլորութիւնները և Սուրբ Գրոց փառաւոր օգուտը ։

1 Սա գիտացի'ր՝ որ յետի օրերումը չար ժամա-
2 նակներ կ'գան ։ Ինչուոր մարդիկ կ'լինին անձնա-
սէր, արծաթասէր, հպարտ, ամբարտաւան, հայ-
հոյող, ծնողաց չ'հնազանդող, երախտամոռ, չա-
3 րագործ, Անմարդի, անգութ, խռովութիւն սեր-
մանող. անժուժկալ, կատաղած, բարին չ'սիրող,
4 Մատնիչ, յանդուգն, գոռոզ, ցանկութիւն ա-

5 ւելի սիրող՝ քան թէ Աստուծոյն սիրող. Որ աս-
տուածապաշտութեան կերպարանքն ունին, և նո-
րա զօրութենից ուրացած են. և յե՛տ քաշվէ
6 նորանցից ։ Ինչու որ նորանց միջից են՝ որ տանից
տուն են մտնում, և գերի են տանում այն կա-
նանցն՝ որ մեղքերով լցված կիտված են՝ և կերպ
7 կերպ ցանկութիւններով վարված, Որ ամեն ժա-
մանակ սովորումեն, և դէպի ճշմարտութեան գի-
8 տութիւնն ոչ մին ժամանակ չեն հասնում ։ Բայց
ինչպէս որ Յանէսն ու Յամբրէսը Մօսէսին հակառակ
կացան. այնպէս էլ սորանք են հակառակ կենում
ճշմարտութեանը. մարդիկ՝ մտքով ապականված՝
9 և անպիտան հաւատքի համար ։ Բայց ընաւ աւե-
լի չեն առաջանալ լաւութեան մէջ. ինչու որ նո-
րանց անմտութիւնն ամենին յայտնի կ'լինի. ինչ-
10 պէս որ էլ նորանցն էլաւ ։ Բայց դու հետեւեցի՛ր
իմ վարդապետութեան, առաջնորդութեան, յօ-
ժարութեան, հաւատքի, երկայնմտութեան, սի-
11 րոյ, համբերութեան, Հալածմունքներիս, չարչա-
րանքներիս. ինչպէս որ էլան ինձ վերայ Անտիո-
քումը՝ և Իկոնիոնումը՝ և Լուստրայումը. ինչպէս
որ այն հալածմունքներին համբերեցի. և այն ա-
12 մենից Տէրն ինձ ազատեց ։ Եւ ամենքն՝ որ կա-
մենումեն աստուածապաշտութենով ապրիլ Քրիս-
տոս Յիսուսումը, հալածմունքների մէջ պիտի կե-
13 նան ։ Բայց չար և կախարդ մարդիկ աւելի առաջ
կ'գնան չարութեան մէջ. մոլորված են և մոլորա-
14 ցընումեն ։ Իսկ դու հաստա՛տ կաց նորանում, որ
սովորեցիր և հաւատացիր. գիտումես թէ ումից
15 սովորեցիր. Որ տղայութենից սուրբ գրքերը գի-

տումես, որ նորանք կարող են քեզ իմաստուն ա-
նել փրկութեան համար՝ այն հաւատքի ձեռովը՝
16 որ Քրիստոս Յիսուսումն է ։ Ամեն Գրքերն աս-
տուածաշունչ և օգտակար են վարդապետութեան,
և յանդիմանութեան, և շտակելոյ և արդարու-
17 թեան խրատ տալոյ համար, Որ Աստուծոյ մարդը
կատարեալ լինի՝ ամեն բարի գործքերի մէջ հաս-
տատված ։

ԳԼ. Դ

Քարոզչին պէտք է խոհեմ զգուշութիւն. Պօղոսին պա-
տերազմն ու պսակը ։

1 Այս վկայութիւնս գնումեմ Աստուծոյ և Յիսու-
սի Քրիստոսի առաջին՝ որ կենդանիներին և մե-
ռելներին պիտի դատէ՝ իրեն յայտնութենումն ու
2 թագաւորութենումը ։ Քարոզէ բանը. պատշաճ
ժամանակ լինի թէ չ'լինի՝ վերա՛յ հասիր, յանդի-
մանէ՛, սաստէ՛, մխիթարէ՛ ամեն երկայնմտու-
3 թենով և վարդապետութենով ։ Պատճառնոր ժա-
մանակ կ'գայ՝ որ ողջամիտ վարդապետութեանը
չեն ականջ դնիլ. բայց իրենց յատուկ ցանկու-
թիւններին պէս՝ վարդապետներ կ'դիզեն իրենց վե-
րայ, ինչպէս որ իրենց ականջների եռալոյն համար
4 է ։ Եւ ականջները ճշմարտութենից յետ կ'դար-
5 ձընեն և առասպել բաների մէջ կ'ընկնին ։ Բայց
դու արթո՛ւն կաց ամեն բանի մէջ, Ջա՛նք արա,
աւետարան քարոզողի գործքն գործէ. քո պաշտօ-
6 նըդ կատարեալ բռնէ ։ Ինչու որ ես այսուհետեւ

նուիրուած եմ, և իմ գարձ անելոյս ժամանակը
7 հասած է : Այն բարի պատերազմը պատերազմեցի,
8 վազելս կատարեցի, հաւատքը պահեցի : Այսու-
հետեւ պատրաստուած մնում է ինձ արդարութեան
պսակն՝ որ նորան Տէրը կ'տայ ինձ այն օրումը՝ այն
արդար դատաւորը. և չէ թէ միմիակ ինձ, բայց
էլ ամենին, որ սիրեցին նորա յայտնութիւնը :
9 Փութացիր որ շուտով ինձ մօտ գաս. ինչուոր
Դիմաս թողեց ինձ՝ և աշխարհքը սիրեց, և գը-
10 նաց Թեսաղոնիկէ : Կրեսկէսն էլ՝ Գալիլեա. Տիտո-
11 սըն՝ Դաղմատիա : Ղուկասը միմիակ է ինձ հետ.
Մարկոսին առնես քեզ հետ բերես. ինչուոր պէտք
12 է ինձ ծառայութեան համար : Տիւքիկոսին ուղար-
13 կեցի Եփեսոս : Փիլոնը Դրօադայումը Կարպոսին մօտ
թողի. երբոր գաս՝ գրքերն էլ բե՛ր, և մանաւանդ
14 մագաղաթի գրքերը, Աղէքսանդրոս պղնձին ինձ
շատ չարչարանք տուաւ. Տէրը նորան հատուցու-
15 մը տա՛յ իրեն գործքերին պէս : Դու էլ քո անձդ
հեռու պահէ նորանից. ինչուոր նա շատ հակա-
16 ռակ կացաւ մեր խօսքերին : Առաջին ատեանին
մէջ ո՛չ ով չ'կացաւ իմ կողմս, բայց ամէնքը թո-
17 ղին ինձ. նա թո՛ղ չ'համարվի նորանց : Բայց Տէրն
օգնեց ինձ, և զօրացրուց ինձ՝ որ ինձանով քա-
րոզութիւնը հաստատվի, և ամեն հեթանոսները
լսեն. և ես էլ ազատվեցայ առիւծի բերանիցը :
18 Տէրը կ'փրկէ ինձ ամեն չար բաներից, և ազատ
կ'հասցնէ իրեն արքայութեան մէջ՝ որ երկնքումն
է. որ նորան փառք յաւիտեանս յաւիտենից.
ամէն :
19 Ողջո՛յն տուր Պրիսկէին և Ակիւղային, և Ոնե-

20 սիփորի տանը : Երաստոսը մնաց Կորնթոսումը. Տը-
21 րոփիմոսին թողի հիւանդ Մելիտոսումը : Փութա-
ցիր որ ձմեռուցն առաջ գաս. ողջո՛յն են տալիս
քեզ Եւբուղոսը, և Պուդէսը և Լինոսը, և Կը-
22 ղաւդիա՝ և ամեն եղբարքը : Տէր Յիսուս Քրիստո-
սը քո հոգւոյդ հետ լինի՝. շնորհքը քեզ հետ.
ամէն :

Տիմոթէոսի վերայ երկրորդ թուղթը որ նա Եփեսացւոց եկեղեցւոյ առաջին ձեռնադրուած եպիսկոպոսն էր՝ Հռոմ քաղաքէն գրուեցաւ երբոր Պօղոս երկրորդ անգամ ատեանամը կանգնեց Հռոմայ կայսեր Ներոնի առաջին :

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Թէ սովորցնողները ինչպէս պէտք է լինին և ինչպէս սաստիկ պատժին :

1 ՊՕՂՈՍ Աստուծոյ ծառայ և Յիսուսի Քրիստոսի
առաքեալ, Աստուծոյ ընտրվածների հաւատքին

պէս, և ճշմարտութեան գիտութեան համար՝ որ
2 աստուածպաշտութենովն է. Յաւիտենական կենաց
յուսովն՝ որ նորան յաւիտենական ժամանակնե-
րիցն առաջ խոստացաւ Աստուած, որ սուտ չի՛
3 խօսում. Բայց իրեն ժամանակովն յայտնեց իրեն
խօսքը քարոզութենով, որ ինձ հաւատացվեցաւ
4 մեր փրկիչ Աստուծոյ հրամանին պէս. Տիտոսի սի-
րելի որդւոյս, մեր հասարակաց հաւատքին պէս,
շնորհք՝ ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աստ-
ուած Հօրից՝ և մեր փրկիչ Քրիստոս Յիսուսից:
5 Նորահամար թողի քեզ Կրետէի մէջն՝ որ ամեն
ինչ որ պակաս է՝ կարգի դնես, և ամեն մէկ քա-
ղաքների մէջ երէցներ կանգնացնես՝ ինչպէս որ ես
6 պատուիրեցի քեզ: թէ որ մինն անարատ է, մին
կնկան մարդ, հաւատացեալ որդիք ունենայ՝ որ
նորանց վերայ չարախօսութիւն չ'կայ՝ թէ անառակ
7 կամ անհնազանդ են: Պատճառնոր՝ եպիսկոպոսը
պէտք է որ անարատ լինի ինչպէս Աստուծոյ տըն-
տես. և ո՛չ յանդուգն, ո՛չ բարկացող, ո՛չ նա-
խատինք խօսող, ո՛չ զարկող, ո՛չ պիղծ շահ քա-
8 ղող. Բայց օտարասէր, բարեսէր, խոնարհ, ար-
9 դար, սուրբ, ժուժկալ. Որ վարդապետութեան
խօսքի հաւատարիմ վերակացու է, որ կարող լինի
ուղղամիտ վարդապետութենով յորդորել, և հա-
10 կառակողներն յանդիմանել: Պատճառնոր՝ շատ
անհնազանդներ, զուր խօսողներ, և միտք խաբող-
ներ կան. մանաւանդ նորանք որ թլփատութենիցն
11 են. Որ պէտք է նորանց բերանը խըցկել, որ ամեն
տները կործանումեն, և սովորցնում նա որ արժան
12 չէ՝, պիղծ շահ քաղելոյ պատճառովը: Նորանից

մինն՝ իսկ իրենց յատուկ մարգարէ ասաց. Կրե-
տացիները միշտ ստախօս են, չարաճճիներ, դա-
13 տարկափոր: Եւ այս վկայութիւնս ճշմարիտ է.
Նորահամար սաստիկ յանդիմանես նորանց՝ որ ա-
14 ռողջ լինին հաւատքումը: Եւ մտիկ չ'տան Հրէա-
կան առասպելներին և այն մարդկանց պատուի-
րանքներին՝ որ ճշմարտութենից թեքված են:
15 Ամեն բան սուրբ է սրբերին. բայց պղծերին և
անհաւատներին ոչ մին բան սուրբ չէ. այլ պղծ-
16 ված է նորանց միտքն ու խորհուրդները. Եւ խոս-
տանումեն թէ Աստուծոյն գիտենան, և իրենց
գործքերովն ուրանումեն. որ պիղծ են և անհաւատ
և ամեն բարի գործքերի համար անպիտան:

ԳԼ. Բ

Ինչպէս պէտք է այլ և այլ վիճակների մարդիկների խրատել:

1 Բայց դու խօսէ ինչ որ կ'վայելէ ողջամիտ վար-
2 դապետութեանդ: Ծերերին՝ որ զգաստ լինին,
պարկեշտ, խոնարհ, ողջամիտ հաւատքի, սիրոյ,
3 համբերութեան, ժուժկալութեան մէջ: Այնպէս
էլ պառաւներին՝ որ զգաստութենով լինին՝ սըրբե-
րին վայելած վարքով՝ ո՛չ չարախօս, ո՛չ գինեմոլ,
4 բայց բարի խրատ տուօղ. Որ զգաստացնեն մատ-
ղաշ կանանցն էրէնց մարդկանցը սիրելոյ և զաւակ-
5 ները սիրելոյ, խոնարհ, սուրբ, տնաշէն, բարի ա-
նող, իրենց մարդկանց հնազանդ լինելոյ. որ Աս-
տուծոյ խօսքն ու վարդապետութիւնը չ'հայհոյվի:

6 Այնպէս էլ յորդորէ երիտասարդներին՝ որ խոնարհ
7 լինին : Ամեն բանի մէջ քո անձդ բարի գործքերի
օրինակ դիր՝ որ վարդապետութենով ունենաս ա-
նարատութիւն , ողջութիւն , պարկեշտութիւն ,
8 Ողջամիտ խօսքն՝ որ մեղադրելի չէ . որ նա՝ որ հա-
կառակող է , ամօթ լինի , և բնաւ մեզ վերայ չար
9 ասելոյ բան չունենայ : Ծառաներին՝ որ իրենց տէ-
րերին հնազանդ լինին , և ամեն բանի մէջ հաճոյ ,
10 հակառակող չ՚լինին , Բան չ՚քաշեն պահեն՝ բայց
ամեն հաւատարմութիւն ցոյց տան լաւութենով .
որ մեր փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը զար-
11 դարեն ամեն բաների մէջ : Պատճառնոր Աստուծոյ
փրկութիւն տուող շնորհքն երեւեցաւ ամեն մարդ-
12 կանց . Որ էլ խրատումէ մեզ՝ որ ուրանանք ամբա-
րշտութիւնն ու աշխարհական ցանկութիւնները .
և պարկեշտութենով , և արդարութենով և աստ-
ուածպաշտութենով ապրինք այս աշխարհքումս .
13 Եւ մտիկ տանք այն երանելի յուսոյն՝ և մեծ Աս-
տուծոյ և մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի փառա-
14 ւոր յայտնութեանը . Որ իրեն անձն մեզ համար
տուաւ , որ մեզ ամեն անօրէնութենիցը փրկէ , և
սրբելով իրեն համար յատուկ ժողովուրդ շինէ՝ որ
ջերմեռանդութենով բարի գործքերին հետեւի :
15 Դա խօսէ՛ և յորդորէ՛ և յանդիմանէ՛ ամեն սաստ-
կութենով . որ մինը չ՚լինի՛ , որ քեզ անարգէ :

ԳԼ. Գ

*Տէրութիւնը յարգել , Աստուծոյ բարութիւնը գովել , ան-
չափ հարցումներից և հերձուածողներից հեռու կենալ :*

1 Եւ նորանց միտքները բե՛ր՝ որ իշխանութիւններին
և պետութիւններին հնազանդ լինին , հպատակ
կենան , և ամեն բարի գործքերի համար պատրաստ
2 գտնվին : Մինին հակառակ չ՚հայհոյեն , կռիւ չա-
նեն , հեզ լինին , ամեն մարդկանց ամեն խոնար-
3 հութիւն ցոյց տան : Ինչուոր մենք էլ մին ժամա-
նակ անմիտ էինք , անհնազանդ , մոլորված , ցան-
կութիւնների և կերպ կերպ անառակութիւններին
ծառայումէինք . չարութենով և նախանձով վար-
4 վումէինք , ատելի էինք և իրար ատումէինք : Բայց
երբոր մեր Փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնն ու
5 մարդասիրութիւնը յայտնվեցաւ , Չէ թէ արդա-
րութեան գործքերին համար որ մենք արինք , այլ
իրեն ողորմութեան համար՝ ապրեցրուց մեզ նոր
ծնվելոյ աւազանովը , և Սուրբ Հոգոյ նորոգութե-
6 նովը . Որ նորան առատութենով թափեց մեզ վե-
7 րայ , մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի ձեռովը . Որ
շնորհքով արդարացած՝ յուսով այն յաւիտենա-
8 կան կեանքին ժառանգ լինինք : Ճշմարիտ է այս
խօսքս . և կամենումեմ՝ որ իսկ սորանում հաստատ
լինիս . որ նորանք որ Աստուծոյն հաւատումեն ,
ջանք անեն բարի գործքերի վերայ կենալոյ . Ինչու-
9 որ նա է բարի և մարդկանց օգտակար : Բայց յի-
մար վիճաբանութիւնները , և ազգահամարները և

հակառակութիւնները, և օրէնքի կռիւները ձգէ՛.
10 ինչու որ անօգուտ և ունայն են։ Հերձուածող մար-
դուց երբոր մին երկու անգամ խրատել ես, յե՛տ
11 կաց։ Գիտա՛ որ այնպէսին ծռված է և մեղք է
գործում՝ ինքն իրեն անձն դատապարտելով։
12 Բայց երբոր Արտեմասին կամ Տիւքիկոսին ու-
ղարկեմ քեզ մօտ՝ փութա որ գաս Նիկոպոլիս ինձ
մօտ. ինչու որ միտքս դրի՝ որ ձմեռն այն տեղ մը-
13 նամ։ Եւ օրէնք գիտող Զենոնին՝ և Ապողոսին
շուտով արձակէ՛. մին բան չ'պակասի՛ նորանց։
14 Բայց մերոնքն էլ թո՛ղ սովորին բարի գործքերի
վերայ կենալ հարկաւոր բաներին համար, որ ա-
15 ռանց պտղոյ չ'լինին։ Ողջոյն են տալիս քեզ այն
ամենքն՝ որ ինձ հետ են. ողջո՛յն տուր նորանց՝ որ
սիրումեն մեզ հաւատքով. շնորհքը ձեզ ամենից
հետ լինի. ամէն։

Տիտոսի Կրետացւոց եկեղեցւոյ առաջին ձեռնադրուած ե-
պիսկոպոսին վերայ Մակեդոնացւոց Նիկոպոլիս (քաղա-
քէն) գրուեցաւ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

Պօղոսի խնդրուածքը Ոնէսիմոսի համար, որ մէկ հաւա-
տացեալ ծառայ էր։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի կապվածս՝ և Տիմո-
թէոս եղբայրը՝ փիլիմօն սիրելոյն և մեր գործընկե-
2 րին. Եւ Ապփիա քոյրին՝ և Արքիպոսին մեր զին-
ուորութեան ընկերին՝ և եկեղեցւոյն որ քո տանդ
3 է, Շնորհք ձեզ հետ, և խաղաղութիւն Աստուած
մեր Հօրից՝ և Տէր Յիսուս Քրիստոսից։
4 Գոհանումեմ իմ Աստուածանից ամեն ժամա-
5 նակ՝ յիշելով քեզ իմ աղօթքումս, Երբոր լսում-
եմ քո հաւատքդ և այն սէրն, որ ունիս դէպի
6 Տէր Յիսուսը՝ և դէպի ամեն սրբերն, Որ քո հա-
ւատքի հաղորդակցութիւնը պտղաբեր լինի այն ա-
մեն բարի բաների գիտութենովն՝ որ ունիք Քրիս-
7 տոս Յիսուսումն։ Շատ ուրախութիւն և մխիթա-
րութիւն ընդունեցի քո սիրոյդ պատճառովը. և
սրբերի սրտերը քեզանով հանգիստ են գտել ո՛վ
եղբայր։

8 Նորա համար էլ շատ համարձակութիւն ունիմ՝
Քրիստոսումը՝ հրամայել քեզ նա որ արժան է.
9 Բայց սիրոյ համար աւելի աղաչում եմ՝ իսկ այնպէ-
սի լինելով ինչպէս որ ծերացած Պօղոս, և հիմիկ
10 էլ Յիսուսի Քրիստոսի կապված։ Աղաչում եմ քեզ
իմ Օնեսիմոս որդույս համար՝ որ նորան ծնայ իմ
11 կապանքներումն. Որ մին ժամանակ անպիտան էր
12 քեզ. բայց հիմիկ քեզ և ինձ օգտակար. Նորան
ուղարկեցի քեզ մօտ։ Եւ դու ընդունէ դորան՝
13 ինչպէս իմ ներքի աղիքս։ Կամենումէի նորան ինձ
մօտ պահել, որ քո տեղդ ծառայութիւն անէ ինձ
14 աւետարանի կապանքներումը։ Բայց առանց քո
կամացդ չ'կամեցայ մին բան անել, որ քո բարի-
քըդ բռնադատութենով չ'լինի՝ բայց կամքով։
15 Եւ կարելի է՝ թէ նորա համար մին ժամանակ հե-
ռացաւ քեզանից, որ յաւիտեան ունենաս դորան։
16 Ո՛չ թէ կրկին ինչպէս ծառայ, այլ ծառայից ա-
ւելի վեր, ինչպէս սիրելի եղբայր. որ եթէ ինձ
այսպէս է, ո՞րքան էլ աւելի քեզ՝ թէ մարմնոյ և
17 թէ Տէրի կողմանէ։ Թէ որ ինձ քո ընկեր համա-
18 րիս, ընդունէ դորան՝ ինչպէս է։ Եւ թէ որ քեզ
մին վատ բան արած լինի՝ կամ պարտք ունենայ,
19 նա ինձ համարէ՛։ Ես Պօղոս իմ ձեռովս գրեցի.
ես կ'վճարեմ. որ չասեմ քեզ՝ թէ դու քո անձդ
20 ինձ պարտական ես։ Այնպէս է եղբայր, թո՛ղ
հատուցումն առնեմ քեզանից Տէրումը. հանգըս-
21 տացրո՛ւ այդ իմ աղիքս Քրիստոսումը։ Քո հնա-
զանդութեան վերայ վստահացած՝ գրեցի քեզ. ին-
չու որ գիտեմ որ էլ աւելի կանես, քան թէ
նա որ ասում եմ։

22 Սորա վերայ կենալոյ տեղ էլ պատրաստէ ինձ.
ինչու որ յոյս ունիմ՝ որ ձեր աղօթքներով շնորհ-
23 վիմ ձեզ։ Ողջոյն է տալիս քեզ Եպափրան իմ
24 գերութեան ընկերս՝ Քրիստոս Յիսուսումը. Եւ
Մարկոս, և Արիստարքոս, և Դեմաս, և Ղուկաս՝
25 իմ գործոյ ընկերներս։ Տէր Յիսուսի շնորհքն ձեր
հոգույդ հետ. ամէն։

Փիլիմոնին և Ապփիային՝ Օնեսիմոսի ձեռքին, և
Արքիպոսին Կողոսայոց եկեղեցու սարկավագին վերայ
Հռոմ քաղաքից գրվեցաւ, Օնեսիմոս ծառայի ձեռքով։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Քրիստոս Աստուծոյ որդի է և բարձր քան թէ հրեշտակները։

1 ՇԱՏ կերպերով և շատ օրինակներով Աստուած
առաջուց մեր հարանց հետ խօսեց մարգարէների
2 ձեռովը. Այս վերջին օրերումն մեզ հետ խօսեց

Որդովը, որ նորան ամեն բանի ժառանգ դրաւ,
3 որ նորանով էլ յաւիտեաններն արաւ ։ Որ նորա
փառաց լոյսն է՝ և նորա էութեան պատկերը. որ
իրեն զօրաւոր խօսքովն ամեն բան պահպանում է.
որ երբոր մեր մեղքերի սրբութիւն արաւ՝ մեծու-
4 թեան աջ կողմն նստեց 'ի բարձունս ։ Եւ հրեշ-
տակներիցն այնքան աւելի գերազանց էլաւ՝ որքան
նորանցից աւելի գերազանց անուն ժառանգեց ։
5 Ինչու որ հրեշտակներից որի՞ն ասաց. Դու իմ որ-
դիս ես, ես այսօր ծնայ քեզ. և դարձեալ թէ
Ես նորան Հայր կ'լինիմ, և նա ինձ Որդի կ'լինի ։
6 Եւ դարձեալ երբոր առաջնեկին աշխարհք է մըտ-
ցընում՝ ասում է. Թո՛ղ երկրպագութիւն տան նո-
7 րան Աստուծոյ ամեն հրեշտակները ։ Բայց հրեշ-
տակների համար ասում է. Նա որ իրեն հրեշտակ-
ները հոգի արաւ, և իրեն պաշտօնեաները կրակի
8 բոց ։ Բայց Որդուն ասում է. Աստուած քո աթոռդ
յաւիտեանս յաւիտենից. քո թագաւորութեան
9 գաւազանը, շիտակ գաւազան է ։ Սիրեցիր արդա-
րութիւնը և ատեցիր անօրէնութիւնը. սորա համար
Աստուա՛ծ՝ քո Աստուածդ օծեց քեզ ուրախու-
10 թեան իւղովն՝ աւելի քան թէ քո ընկերներդ ։ Եւ
դու ո՛վ Տէր, սկիզբիցն երկիրը հաստատեցիր. և
11 երկինքը քո ձեռքիդ գործն է ։ Նորանք կ'կորչին
բայց դու կ'կենաս՝ կ'մնաս. ամենքը շորերի պէս կը
12 մաշվին, Եւ վերարկուի պէս կ'գալարես նորանց
հագուստի պէս՝ և կ'գալարվին. բայց դու հենց
13 նա ես՝ և քո տարիներդ չեն պակասիլ ։ Հրեշտակ-
ներից բնաւ որի՞ն ասաց. Իմ աջ կողմս նստէ մին-
չև որ քո թշնամիներդ քո ոտացդ կոխելիք դը-

14 նեմ ։ Չէ՞ որ ամենքը պաշտօնեայ հոգիներ են՝ որ
ուղարկվումեն սպասաւորութիւն անելոյ նորանց
համար՝ որ փրկութիւնը պիտի ժառանգեն ։

ԳԼ. Բ.

Քրիստոսի խօսքը պէտք է ընդունիլ. Նա ամեն բանից վեր է. մարդացել է ։

1 Նորահամար պէտք է մեզ, որ էլ աւելի ականջ
դնենք այն ասած բաներին, որ չ'լինի թէ դատար-
2 կացած պակասվինք ։ Պատճառն որ՝ եթէ այն բանն
հաստատ էլաւ՝ որ հրեշտակների ձեռովը խօսվե-
ցաւ, և ամեն յանցանքն ու անհնազանդութիւնն
3 ընդունեց իրեն արդար պատիժը. Ապա մենք ինչ-
պէս կ'պրծնվինք, թէ որ անհոգ լինինք այնպէսի
փրկութեան համար՝ որ սկզբումը քարոզվեցաւ Տէ-
րիցը, և նորանց ձեռովն որ լսեցին՝ մեր 'մէջումը
4 հաստատվեցաւ. Որ Աստուած նորան վկայեց նը-
շաններով և հրաշքներով, և կերպ կերպ զօրու-
թիւններով, և Սուրբ Հոգոյ բաշխած պարգևնե-
րով ինչպէս որ ինքն կամեցաւ ։
5 Պատճառն որ՝ չէ թէ հրեշտակներին հնազանդ-
արաւ այն նոր գալու աշխարհքն, որ մենք նորա-
6 նից խօսումենք ։ Մինը վկայեց մի տեղ և ասում է.
Մարդն ի՞նչ է՝ որ դու յիշես նորան, կամ մար-
7 դոյ որդին՝ որ տես գաս նորան ։ Մին քիչ ցած
արիր նորան քան թէ հրեշտակները. փառքով և
պատուով պսակեցիր նորան՝ և քո ձեռքի գործքե-
8 րին վերայ կանգնացրիր նորան ։ Ամեն բան հնա-

զանդ արիր նորա ոտաց տակը. ուրեմն ամենն որ
հնազանդացրուց՝ ոչ մին բան չ'թողեց՝ որ հնա-
զանդ չ'լինի նորան. բայց հիմիկ դեռ չենք տես-
9 նում՝ թէ ամեն բան հնազանդ է նորան։ Բայց
նորան որ մին քիչ աւելի ցած էլաւ քան թէ հը-
րեշտակները՝ տեսնումենք որ Յիսուսն է, մահի
չարչարանքին համար. փառքով և պատւով պը-
սակված. որ Աստուծոյ շնորհքովն ամենին համար
10 մահի համն առնէ։ Պատճառնոր վայելումէր նո-
րան՝ որ ամեն բան նորահամար՝ և ամեն բան նո-
րանով է, որ շատ որդիք փառքի մէջ տանի, և
նորանց փրկութեան առաջնորդը չարչարանքով
կատարէ։
11 Ինչուոր՝ նա որ սրբումէ, և նորանք՝ որ սրբվում-
են, ամենքն այն մինիցն են. և նորահամար ամօթ
12 չի՛ համարում՝ նորանց եղբայր կոչել և ասել. Կը
պատմեմ քո անունդ իմ եղբարներիս, և եկեղե-
13 ցոյ միջումը կօրհնեմ քեզ, Եւ դարձեալ՝ թէ Ես
յոյս կ'դնեմ նորա վերայ. և դարձեալ. Ահա՛ ես
և իմ մանուկներս՝ որ նորանց Աստուած տուաւ
14 ինձ։ Ուրեմն որովհետեւ մանկունքն արիւնին և
մարմնոյ մասնակից էլան, իսկ ինքն էլ մօտաւոր
լինելով մասնակից էլաւ նորանց. որ իրեն մահովը
խափանէ նորան, որ մահի իշխանութիւն ունէր,
15 այսինքն՝ սատանային։ Եւ ապրեցնէ նորանց, որ
մահիցը վախենալով միշտ ծառայութեան մէջ ըն-
16 կած բռնված էին, Պատճառնոր՝ նա բնաւ հրեշ-
տակներին ձեռք չի տալիս. բայց Աբրահամի զաւ-
17 կին է ձեռք տալիս։ Իսկ նորահամար պէտք էր նո-
րան՝ որ իսպառ եղբարներին նմանվի. որ ողորմած

լինի, և հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ
առաջին անելոյ բաներումն, որ ժողովրդի մեղքե-
18 րը քաւէ։ Ինչուոր՝ նորանով որ ինքն չարչարվե-
ցաւ և փորձվեցաւ, կարող է նորանց էլ օգնու-
թիւն տալ՝ որ փորձվումեն։

ԳԼ. Գ

Յորդորանք խստանալից և անհաւատութիւնից զգուշանալոյ համար։

1 Ուրեմն սո՛ւրբ եղբարք՝ որ երկնաւոր կոչումին
մասնակից էք, մտի՛կ տուէք մեր դաւանութեան
առաքելոյն և քահանայապետին՝ Յիսուս Քրիստո-
2 սին. Որ հաւատարիմ է իրեն հաստատողին, ինչ-
3 պէս որ Մօսէսն էլ նորա բոլոր տանը։ Պատճառն-
որ նա էլ աւելի փառքի արժան էլաւ քան թէ
Մօսէս. որքան որ տուն շինօղն աւելի պատիւ ու-
4 նի քան թէ տունը։ Ինչուոր ամեն տուն՝ որ շին-
վումէ, մնից է շինվում. բայց նա որ ամենն ա-
5 րաւ՝ Աստուած է։ Մօսէս հաւատարիմ է նորա
բոլոր տանը մէջ՝ ինչպէս ծառայ՝ այն ասելոյ բա-
6 ներին վկայ լինելով։ Բայց Քրիստոս՝ ինչպէս որդի
իրեն տան վերայ. որ նորա տունն իսկ մենք ենք.
միայն թէ այն յուսոյ համարձակութիւնն ու պար-
ծանքը մինչեւ վերջը հաստատ բռնենք։
7 Նորահամար Սուրբ Հոգին այսպէս է ասում.
8 Այսօր թէ նորա ձայնը լսէք, Մի՛ պնդացնէք
ձեր սրտերը՝ ինչպէս որ այն բարկացնելոյ ժամա-
նակումը, փորձութեան օրումն՝ անապատին մէջ.

9 Որ այնտեղ ձեր հայրքը փորձեցին ինձ. քննեցին
ինձ՝ և իմ գործքերս տեսին քառասուն տարի։
10 Նորահամար զզվեցայ այն ազգիցը՝ և ասացի. Միշտ
մոլորված են սրտով. և նորանք չ՚ճանաչեցին իմ
11 ճանապարհներս։ Ինչպէս որ երդւում կերի իմ բար-
կութենումս, թէ Որ մտնեն իմ հանգստիս մէջ։
12 Նայեցէ՛ք ե՛ղբարք, որ չ՚լինի՛ թէ ձեզանից մինն
անհաւատութեան չար սիրտ ունենայ՝ որ ապըս-
13 տամբ լինի կենդանի Աստուածանից։ Բայց իրար
մխիթարեցէ՛ք ամեն ժամանակ, քանի որ այս օրս
առաջիդ կայ. որ չ՚լինի՛ թէ ձեզանից մինը պըն-
14 տանայ մեղքի խաբէութենովը։ Պատճառնոր մաս-
նակից եղանք Քրիստոսի. միայն թէ այն սկսած
հաստատութիւնը մինչև վերջը պինդ բռնենք։
15 Նա որ ասումէ. թէ Այսօր՝ թէ որ նորա ձայնն
լսէք, մի՛ պնդացնէք ձեր սրտերն ինչպէս որ բար-
16 կացնելոյ ժամանակումը։ Ինչու որ մին քանիսն լը-
սեցին և բարկացրին. բայց ո՛չ թէ այն ամէնքն
որ Եգիպտոսիցը դուրս էին եկած Մօսէսի ձեռո-
17 վը։ Ումի՞ց զզվեցաւ այն քառասուն տարին. չէ՞
որ այն մեղք գործօղներիցն, որ նորանց ոսկորներն
18 ընկան այն անապատին մէջ։ Ո՞ւմ երդւում կերաւ՝
որ իրեն հանգստին մէջ չ՚պիտի՛ մտնեն, եթէ ո՛չ
19 այն անհաւատներին։ Եւ տեսնումենք՝ որ չ՚կա-
րացին մտնել անհաւատութեան պատճառովը։

ԳԼ. Դ

*Քրիստոսի խօսքին հաւատալով կ՚մտնենք հանգստու-
թեան մէջ։*

1 Ուրեմն վախենանք՝ որ չ՚լինի թէ նորա հանգստին
մէջ մտնելոյ աւետիքը թողելով՝ ձեզանից մինը պա-
2 կասած գտնվի։ Պատճառնոր՝ աւետիքը քարոզվե-
ցաւ մեզ ինչպէս որ նորանց էլ. բայց նորանց բը-
նաւ օգուտ չի բերում խօսքի քարոզութիւնն,
3 որ չ՚կակղացան հաւատքի հնազանդութեանը։ Բայց
մենք այն հանգստին մէջ ենք մտնում՝ որ հաւա-
տացինք. ինչպէս որ նա էլ ասաց. թէ ինչպէս որ
երդւում արի իմ բարկութենումս, եթէ մտնեն իմ
հանգստիս մէջ. թէև գործքերն աշխարհքի սկըզ-
4 բիցը կատարված էին. Ինչու որ մինտեղ եօթնե-
րորդ օրին համար այսպէս է ասում. Եւ Աստուած
եօթներորդ օրումը հանգիստ առաւ իրեն ամեն
5 գործքերիցը։ Եւ այստեղ դարձեալ ասումէ՝ և թէ
6 մտնեն իմ հանգստիս մէջ։ Ուրեմն որովհետև մը-
նումէ որ մին քանիսը նորա մէջ մտնեն, և նորանք
որ առաջուց աւետիքը քարոզվեցաւ նորանց՝ չ՚մը-
7 տին անհաւատութեան պատճառովը. Կրկին ուրիշ
օր է հաստատում՝ այն այսօրն Դաւթումը, և
այսքան ժամանակներիցն ետև ասումէ, ինչպէս
որ առաջ ասաց. Այսօր որ նորա ձայնը լսէք մի՛
8 պնդացնէք ձեր սրտերը։ Ինչու որ եթէ Յեսուն նո-
րանց հանգստի մէջ էր տարել՝ էլ նորանից ետև
9 ուրիշ օրի համար չէր խօսիլ։ Ապա ուրեմն մնումէ

շաբաթի հանգիստ Աստուծոյ ժողովրդին համար։
10 Պատճառնոր՝ նա որ նորա հանգիստը մտաւ, նա
էլ հանգստացաւ այն իրեն գործքերից. ինչպէս
11 որ Աստուած էլ իրենններից։ Ուրեմն ջանք անենք
այն հանգստին մէջ մտնելոյ. որ չ՚լինի՛ թէ մինն
իսկ այն անհաւատութեան օրինակին պէս ընկնի։
12 Ինչուոր Աստուծոյ խօսքը կենդանի է և զօրաւոր՝
և աւելի կտրուկ քան թէ ամեն երկուբերանի
սուր, և ներս է մտնում մինչև շունչի և հոգոյ
և խաղերի և ծուծի բաժանվիլը. և մտքներ և
13 սրտի խորհուրդներ քննող է։ Եւ ոչ մին ստեղծ-
ված աներևոյթ չէ նորա երեսից. բայց ամեն
բան մերկ և յայտնի է նորա աչաց առաջին՝ որ
նորա վերայ մենք խօսումենք։
14 Ուրեմն որովհետև մեծ քահանայապետ ունինք՝
Յիսուսին Աստուծոյ Որդոյն, որ երկնքումն անցաւ.
15 էլ պինտ բռնենք դաւանութիւնը։ Պատճառնոր
չէ թէ այնպիսի քահանայապետ ունինք՝ որ չ՚կա-
րենայ մեր տկարութեան հետ չարչարակից լինիլ.
բայց նա ամեն բանով փորձվեցաւ մեզ նման՝ բայց
16 առանց մեղաց։ Ուրեմն համարձակութենով մօտե-
նանք նորա շնորհաց աթոռին, որ ողորմութիւն
ընդունինք և շնորհք գտնենք այն ժամանակումն՝
որ օգնութիւն պէտք է։

ԳԼ. Ե

Քրիստոս մեծ քահանայապետը։

1 Պատճառնոր՝ ամեն քահանայապետ մարդկանցից
առած՝ և մարդկանց համար Աստուածային բանե-

րումը կանգնած է. որ պատարագներ և մատաղներ
2 մատուցանէ մեղաց համար. Որ նա կարող է չա-
փով չարչարակից լինիլ տգէտներին և մոլորված-
ներին. պատճառնոր՝ իսկ ինքն էլ տկարութենով
3 պատած է։ Այն պատճառովը պէտք է՝ որ ինչ-
պէս ժողովրդին համար՝ այնպէս էլ իրեն անձին
4 համար պատարագ մատուցանէ մեղաց համար։ Եւ
չէ թէ մինն իրեն անձնովն է այն պատիւն առ-
նում. բայց նա որ Աստուածանից կանչված է՝
5 ինչպէս Ահարոն։ Իսկ այսպէս էլ Քրիստոս չէ թէ
ինքն փառք դրաւ իրեն անձին՝ որ քահանայապետ
լինի. բայց նա որ ասաց նորան՝ թէ Դու ես իմ
6 Որդիս, ես այսօր ծնայ քեզ։ Ինչպէս որ էլ միւս
տեղումն ասումէ. Դու քահանայ ես յաւիտեան
7 Մելքիսեդեկի կարգին պէս։ Նա որ իրեն մարմնոյ
օրերումն աղօթք և աղաչանք սաստիկ աղաղակով
և արտասունքով մատուցանումէր նորան՝ որ կա-
րող էր ապրեցնել իրեն. և լսվումէր իրեն լաւու-
8 թեան համար։ Թէև Որդի է՝ այն չարչարանքնե-
9 րից հնազանդութիւնը սովորեց։ Եւ երբոր կա-
տարվեցաւ՝ իրեն ամեն հնազանդողներին համար
10 յաւիտենական փրկութեան պատճառ էլաւ։ Եւ
Աստուածանից անուանվեցաւ յաւիտենական քահա-
11 նայապետ՝ Մելքիսեդեկի կարգին պէս. Որ նորա
համար շատ բան ունինք ասելոյ, որ դժուար է
խօսքերով մեկնել. ինչուոր թոյլ և տկար էլաք
12 ականջներով. Նորա տեղակ որ պէտք էր ձեզ վար-
դապետ լինիլ ժամանակին մտիկ տալով. կրկին
պէտք է որ դուք սովորիք՝ թէ ինչ են Աստուծոյ
խօսքերի առաջին նշանագիրները. և կարօտ էլաք

13 կաթի՛ և ո՛չ թէ հաստատ կերակուրի ։ Ինչու որ՝
ամէն ով որ կաթնակեր է․ տգէտ է արդարու-
14 թեան խօսքին, որովհետև տղայ է ։ Բայց հաս-
տատ կերակուրը կատարեալներին է․ որ նորանք
չափահաս են․ և նորահամար ունելոյ վարժված
գործիքներ ունին՝ բարին և չարն իրարից ջոկելոյ
համար ։

ԳԼ․ Զ

Հաւատքը չուրանալ ու հաստատ մնալ ։

1 Նորահամար Քրիստոսի վարդապետութեան առա-
ջին սկզբունքները թողենք, և դէպի կատարեալը
գանք․ առանց նորէն հիմն դնելոյ ապաշխարու-
թեան այն մեռած գործքերիցը, և հաւատքին՝ որ
2 դէպի Աստուած է․ Եւ մկրտութիւնների ուսմուն-
քին, և ձեռքի ձեռնադրութեան, և մեռելների
յարութիւն առնելոյն, և յաւիտենական դատաս-
3 տանին ։ Եւ հիմի՛ նա անենք՝ թէ որ Աստուած
4 հրամայէ ։ Պատճառնոր՝ անկարելի է՝ որ նորանք
որ մին անգամ մկրտված են, որ երկնաւոր պար-
գեւների համն առին, և Սուրբ Հոգուն մասնակից
5 եղան, Եւ Աստուծոյ աղնիւ խօսքի, և նոր գա-
6 լու աշխարհքի զօրութիւնների համն առին, Եւ
յետոյ կործանվին․ որ նորանց միւսանգամ նորոգվին
ապաշխարութիւն գալոյ․ ինչու որ՝ Աստուծոյ Որ-
դոյն կրկին իրենց համար խաչեցին և կրկին խայ-
7 տառակ արին ։ Պատճառնոր մին հող՝ որ շատ ան-
գամ իրեն վերայ եկած անձրեւը խմէ, և շահաւոր

պտուղ բուսցնէ նորանց համար՝ որ գործեցին
նորան, նա Աստուծոյ օրհնութիւնը կընդունի ։
8 Բայց նա որ փուշ և տատասկ է բերում, անպիտան
է՝ և անէծքին մօտ․ և նորա վերջն՝ այրվիլն է ։
9 Բայց հաստատ եմ ձեզ համար սի՛րելիներ, որ
լաւ կողմն էք, և նա որ լիքն է փրկութենով․ թէ
10 և այսպէս ենք խօսում ։ Ինչու որ՝ Աստուած անի-
րաւ չէ՛՝ որ մոռանայ ձեր գործքերն ու սէրն, որ
նորա անունովը ցոյց տուիք․ նորանով որ սրբերին
ծառայումէիք և ծառայումէք ։
11 Եւ մենք ցանկանումենք՝ որ ձեզանից ամէն մէ-
կըդ իսկ այն ջանքը ցոյց տայ՝ որ յոյսը հաստատ
12 մնայ մինչեւ վերջը․ Որ մոքով թոյլ չ՛լինիք․ բայց
նմանօ՛ղ էլէք նորանց՝ որ հաւատքով և երկայն-
13 մտութենով աւետիքները ժառանգեցին ։ Պատ-
ճառնոր Աստուած երբոր Աբրահամին տուաւ ա-
ւետիքի խոստմունքը, որովհետև մին ուրիշ աւե-
14 լի մեծ չ՛կար՝ որ նորանով երդում ուտէ․ Իրեն
անձնովն երդում կերաւ, և ասաց․ Այս օրհնելով
15 կօրհնեմ քեզ, և շատացնելով կ՛շատացնեմ ։ Եւ
նա այնպէս երկայնամիտ եղաւ՝ և աւետիքին հա-
16 սաւ ։ Իրաւ է որ մարդիկ նորանով են երդում ու-
տում՝ որ իրանցից վերեւ է, և նորանց ամէն հա-
կառակութիւնների վճիռն՝ երդումն է՝ որ նորանով
17 բանը հաստատվումէ ։ Նորահամար Աստուած էլ՝
որովհետև էլ աւելի կամեցաւ աւետիքի ժառան-
գօղներին ցոյց տալ՝ իրեն խորհրդոյ հաստատու-
18 թիւնը, երդումն մէջ դրաւ․ Որ երկու բանով՝ որ
չեն փոփոխելի, որ նորանցով անկարելի է որ Աս-
տուած սուտ խօսի, հաստատ մխիթարութիւն ու-

նենանք. մենք որ ապաւինեցանք առաջի դրած
19 յոյսը ձեռքով բռնելոյ։ Որ նորան՝ հաստատ և
անշարժ խարիսխի պէս ունինք մեր անձներիս հա-
մար. որ էլ մտնումէ վարագուրի ներսի կողմը.
20 Որ տեղ որ մեր առաջնորդ Յիսուսը մտաւ մեզ
համար, Մելքիսեդեկի կարգին պէս՝ յաւիտենա-
կան քահանայապետ ելած։

ԳԼ. Է

Քրիստոսի բաղդատութիւնը Մելքիսեդեկի հետ։

1 Պատճառնոր՝ այս Մելքիսեդեկս Սաղէմի թագա-
ւոր էր. բարձրեալ Աստուծոյ քահանայ. որ դուրս
եկաւ Աբրահամին առաջը, երբոր նա թագաւոր-
ների կոտորելուցն յետ դարձած գալիս էր՝ և օրհ-
2 նեց նորան. Որ Աբրահամ նորան էլ ամէն բա-
ներից տասանորդ տուաւ. Նա առաջ թարգման-
վումէ արդարութեան թագաւոր, և ապա՝ Սաղէ-
մի թագաւոր՝ որ է խաղաղութեան թագաւոր։
3 Առանց հօր, առանց մօր, մին ազգի մէջ չ'հա-
մարված, որ ո՛չ օրերի սկիզբն ունի, և ո՛չ կե-
նաց վերջը. Աստուծոյ Որդոյն նմանէլած՝ կենում
մնումէ յաւիտենական քահանայ։
4 Հիմիկ տեսէ՛ք թէ քանի՛ մեծ էր սա՝ որ Աբրա-
համ նահապետն էլ նորան տասանորդ տուաւ այն
5 աւարից։ Եւ Ղեւիի որդիքներից նորանք որ քա-
հանայութիւնը առնումեն, հրաման ունին տասա-
նորդ առնելոյ ժողովրդից օրէնքին պէս. այսինքն՝
իրենց եղբարներից. թէ և իրենք էլ Աբրահամի

6 երանքից են առաջ եկած։ Բայց նա, որ նորանց
ազգի մէջ չ'համարված՝ տասանորդ առաւ Աբրա-
համից. և օրհնեց նորան՝ որ աւետիքներն ընդու-
7 նել էր։ Հիմիկ առանց ամէն հակառակութեան
է, որ ցածն է վերինից օրհնվում։
8 Եւ այստեղ մեռնելոյ մարդիկ տասանորդ են
առնում. բայց այնտեղ վկայվեցաւ թէ նա կեն-
9 դանի է։ Եւ ինչպէս որ խօսքի կարգն է բերում.
ասեմ թէ Աբրահամով Ղեւին էլ՝ որ տասանորդ
10 է առնում, տասանորդ տուաւ։ Ինչուոր՝ դեռ նա
իրեն հօր երանքումն էր՝ որ երբոր Մելքիսեդեկ նո-
րա առաջն եկաւ.
11 Ապա ուրեմն թէ որ կատարելութիւնը Ղեւտա-
ցոց քահանայութենովն էր, (ինչուոր ժողովուրդը
նորա ներքեւն օրէնքն ընդունեց). էլ ի՞նչ պէտք
էր որ Մելքիսեդեկի կարգին պէս մին ուրիշ քա-
հանայ առաջ գայ՝ և Ահարօնի կարգին պէս չաս-
12 վի։ Բայց երբոր քահանայութիւնը փոխվումէ,
13 պէտք էր որ օրէնքն էլ փոխվի։ Պատճառնոր՝ նա
որ նորա համար այսպէս է ասվում՝ ուրիշ ցեղի
մասնակից է. որ նորանցից մինը սեղանին հաղորդ
14 չէլաւ։ Ինչուոր յայտնի բան է՝ որ մեր Տէրը,
Յուդայի ցեղից ծագեց. որ այն ցեղի վերայ Մօ-
սէսն բնաւ բան չ'խօսեց քահանայութեան հա-
15 մար։ Եւ էլ աւելի յայտնի է թէ Մելքիսեդեկի
նմանութեան պէս մին ուրիշ քահանայ պիտի ա-
16 ռաջ գայ, Որ մարմնաւոր պատուիրանքին պէս չէ-
լաւ, բայց վերջը չունող կեանքի զօրութեան պէս։
17 Ինչուոր՝ վկայվեցաւ, թէ Դու քահանայ ես յա-
18 ւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս։ Էլ դէն է

ձգվում առաջին պատուիրանքն՝ իրեն տկարու-
19 թեան և անօգուտ լինելոյն համար։ Պատճառնոր՝
օրէնքն ոչ մին կատարելութիւն չ'գործեց, և ներս
մտաւ ազնիւ յոյս՝ որ նորանով մօտենումենք Աս-
20 տուծոյ մօտ։ Եւ այնքան որ առանց երդումի չէ.
(ինչուոր՝ նորանք առանց երդումի քահանայ են
21 եղած.) Բայց սա՝ երդումով նորա ձեռովն՝ որ ա-
սաց նորան. Տէրն երդուաւ՝ և էլ չի՛ զղջանալ,
22 թէ դու քահանայ ես յաւիտեան։ Եւ այսքան
աւելի ազնիւ ուխտապայմանի երաշխաւոր եղաւ
Յիսուսը։

23 Եւ նորանք շատ քահանայ են էլէլ. ինչուոր՝ մա-
24 հըն արգելումէր նորանց՝ որ միշտ մնան։ Բայց սա
որովհետեւ յաւիտեան է կենում, քահանայու-
25 թիւնն ունի առանց անցանելոյ. Որ նորա համար
էլ բոլորովին կարող է կենդանի անել նորանց՝
որ նորանով մօտենումեն Աստուծոյ մօտ. ինչուոր՝
միշտ կենդանի է որ նորանց համար բարեխօսու-
թիւն անէ։

26 Պատճառնոր՝ ճիշտ այսպէսի քահանայապետ էր
վայելում մեզ, սուրբ, անմեղ, անարատ, մեղա-
ւորներիցն ջոկված և երկնքիցն էլ վեր բարձրա-
27 ցած։ Որ նորան պէտք չէ՛ ինչպէս ուրիշ քահա-
նայապետներին, որ ամեն ժամանակ առաջ իրենց
մեղքերին համար պատարագներ մատուցանեն՝ և
յետոյ ժողովրդին համար. բայց սա մին անգամ
կատարեց այն նորանով՝ որ իրեն անձն պատարագ
28 մատոյց։ Օրէնքն մարդկանց կանգնացնումէ քա-
հանայապետ՝ որ պատած են տկարութենով. բայց
այն երդումի խօսքն՝ որ օրէնքից ետեւ է՝ կանգնա-
ցնումէ Որդոյն՝ որ յաւիտեան կատարեալ է։

ԳԼ. Ը

Քրիստոսի քահանայութեան բաղդատութիւնը Ղեւտացի-
ներին քահանայութեանը հետ։

1 Եւ ասաց խօսքերի գլուխն այս է. մենք այսպէսի
քահանայապետ ունինք, որ մեծութեան աթոռի
2 աջ կողմն նստեց երկնքումն։ Եւ սրբութեանց պաշ-
տօնեայ է՝ և ճշմարիտ խորանի, որ նորան Տէրն
3 կանգնացրուց՝ և ո՛չ թէ մարդ։ Պատճառնոր՝ ա-
մեն քահանայապետ մատաղներ և պատարագներ
մատուցանելոյ համար կարգված է. ուրեմն նորան
էլ պէտք է որ մին բան ունենայ՝ որ մատուցանէ։
4 Ինչուոր եթէ երկրիցս էր՝ էլ քահանայ չէր. պատ-
ճառնոր նորանք կային՝ որ օրէնքին պէս պատա-
5 րագ էին մատուցանում։ Որ նորանք երկնաւոր բա-
ների առակին և օրինակին ծառայումէին, ինչպէս
որ հրաման եղաւ Մօսէսին. երբոր նա ժամի խորա-
նին շինելու էր, Մտի՛կ տուր ասումէ. որ ամեն
բան անես այն օրինակին պէս՝ որ ցոյց տվվաւ քեզ
6 սարումն։ Բայց հիմի՛կ Յիսուս աւելի ազնիւ պաշ-
տամունքի հասաւ, որքան ինքն աւելի լաւ ուխ-
տապայմանի միջնորդ է՝ որ աւելի ազնիւ աւետիք-
ների վերայ հաստատվեցաւ։

7 Ինչուոր՝ եթէ առաջինն առանց պակասութեան
լինէր, էլ երկրորդին համար տեղ չէր խնդրվիլ։
8 Բայց ահա՛ յանդիմանումէ նորանց և ասում.
Ահա՛ օրեր կ'գան՝ ասումէ Տէրն. և նոր ուխտ կը
կատարեմ Իսրայէլի տանն և Յուդայի տանն վե-

9 րայ ։ Ո՛չ թէ այն ուխտին պէս՝ որ նորանց հարանց
հետ դրի՝ այն օրումն, որ ձեռքիցն բռնեցի նորանց
Եգիպտացոց երկրիցն հանելոյ համար. ինչուոր՝ նո-
րանք հաստատ չ'կացան իմ ուխտիս մէջ, և ես
երեսից ձգեցի նորանց, ասումէ ամենակարող Տէ-
10 րըն ։ Բայց այս է ուխտն՝ որ կ'դնեմ Իսրայէլի տա-
նըն հետ՝ այն օրերիցն ետև, ասումէ Տէրը. կը-
տամ իմ օրէնքներս նորանց մտքին մէջ՝ և նորանց
սրտերին մէջ կ'գրեմ նորանց. և նորանց Աստուած
11 կ'լինիմ, և նորանք ինձ ժողովուրդ կ'լինին ։ Եւ էլ
նորանց ամեն մէկը չի՛ սովորցնիլ իրեն քաղաքա-
ցուն, և ո՛չ էլ ամեն մէկն իրեն եղբօրը՝ և ասել,
թէ ճանաչէ՛ Տէրն. ինչուոր՝ ամենքն էլ կ'ճանա-
չեն ինձ՝ նորանց փոքրներիցը մինչև մեծամեծնե-
12 րը ։ Պատճառնոր՝ նորանց անօրէնութիւններին
քաւիչ կ'լինիմ. և նորանց մեղքերն ու անօրէնու-
թիւններն էլ չեմ յիշիլ ։
13 Ապա նոր ասելովը՝ այն առաջինը հնացրուց. և
նա որ հնանումէ և ծերանում՝ մօտ է ապակա-
նութեան ։

ԳԼ. Թ

Վկայութեան խորանը և Ղևտացոց պատարագը իբրև օրինակ Քրիստոսի քահանայապետութեանը ։

1 Ուղորդ որ առաջին կտակարանն էլ այն ժամանակը
պաշտամունքի իրաւունք ունէր՝ այն աշխարհական
2 սրբարանը ։ Ինչուոր՝ առաջին խորանն այսպէս
պատրաստուեցաւ. որ նորանում էր ճրագակալը՝ և

սեղանը և նուէրքի հացը, և այն Սրբութիւն էր
3 կոչվում ։ Եւ երկրորդ վարագուրիցն ետև այն
խորանն էր՝ որ Սրբութեանց սրբութիւն էր կոչ-
4 վում, Որ նորանում կար ոսկէ բուրվառը. և կը-
տակարանների անտուկը ներսից ու դրսից ոսկով
պատած, որ նորանում կար ոսկէ սափորը մանա-
նայով լիքն, և Ահարօնի գաւազանն՝ որ ծաղկեց,
5 և կտակարանների տախտակները, Եւ նորա վերայ
փառաց քերոբէներն՝ որ շուք էին անում քաւու-
թեանը վերայ. որ նորա համար պէտք չէ հիմիկ
մին մին ասել ։
6 Եւ երբոր այն ամենն այնպէս պատրաստված էր,
քահանայքն ամեն ժամանակ մտնումէին առաջին
խորանին մէջ՝ որ պաշտամունքները կատարեն.
7 Բայց երկրորդին մէջ քահանայապետը տարին մին
անգամ, նա էլ թէ առանց արիւնի, որ իրեն հա-
մար՝ և ժողովրդի ագիտութիւններին համար մա-
8 տուցանումէր. Որ Սուրբ Հոգին նորանով սա ցոյց
էր տալիս՝ որ դեռ սրբութիւնների ճանապարհը
յայտնված չէր. Նորահամար որ՝ առաջին խորանը
9 դեռ հաստատ կանգնած էր. Որ նա մին առակ էր
այն ժամանակին համար, որ առաջի կար. որ նո-
րանում պատարագներ և մատաղներ էին մատու-
ցանվում, որ խղճմտանքին մտիկ տալով չէին կա-
րող կատարեալ անել նորանց՝ որ պաշտումէին,
10 Բայց մինակ կերակուրներով և խմելիքներով և
կերպ կերպ լուացմունքներով մարմնոյ արդարու-
թիւններ. որ նորանք մինչև շիտակվելոյ ժամանա-
11 կը կարգված էին ։ Իսկ Քրիստոս որ յետոյ լինելու
բարիքների Քահանայապետ եկաւ՝ մեծ և կատար-

եալ՝ և առանց ձեռքի շինած խորանովը, այսինքն՝
12 որ այս ստեղծվածներիցը չէ, Եւ ո՛չ թէ նոխազնե-
րի և որջառների արիւնովը. այլ իրեն արիւնովը
մին անգամ մտաւ այն սրբատեղը՝ և յաւիտենա-
13 կան փրկութիւն գտաւ: Ինչուոր՝ եթէ ցուլերի և
նոխազների արիւնը՝ և երինջների մոխիրը ցանելով
սրբումէր պղծվածներին՝ մարմնաւոր սրբութիւն
14 ստանալոյ համար. Էլ ո՞րքան աւելի Քրիստոսի
արիւնն՝ որ յաւիտենական Հոգով ձեռօվն՝ իրեն
անձն անարատ պատարագ մատոյց Աստուծոյն,
ձեր խղճմտանքը կ'սրբէ այն մեռած գործքերիցն՝ որ
կենդանի Աստուծոյն պաշտէք:
15 Եւ նորահամար նա նոր ուխտի միջնորդ է, որ
երբոր մահ էլաւ փրկութեան համար այն առաջին
ուխտի ժամանակումն էլած յանցանքների պատճա-
ռովը, աւետիքն առնեն նորանք՝ որ ժառանգու-
16 թեան մէջ կանչված են: Պատճառնոր՝ որտեղ որ
մին կտակ կայ՝ հարկաւոր է որ այն կտակ գրողի
17 մեռնիլն առաջ բերվի: Ինչու որ՝ կտակ մեռնելուցն
ետեւ հաստատ է. ապա թէ չէ՝ ի՞նչպէս հաստատ
18 կ'լինի՝ քանի որ այն կտակ գրողը կենդանի է: Նո-
րահամար առաջինն էլ առանց արիւնի չ'հաստատ-
19 վեցաւ: Պատճառնոր՝ երբոր Մօսէսն օրէնքի ամեն
պատուիրանքները պատմեց ժողովրդին, ցուլերի և
նոխազների արիւնն առաւ՝ ջրի և կարմիր բրդի և
զոպայի հետ, և իսկ այն կտակարաններին և ամեն
20 ժողովրդին վերայ ցանեց, Եւ ասաց. Սա է կտա-
կի արիւնն՝ որ Աստուած նորան պատուիրեց ձեզ:
21 Եւ խորանին և պաշտամունքի ամեն ամաններին
22 վերայ էլ իսկ այնպէս արիւնը ցանեց: Եւ հա-

մարեա՛ թէ ամեն բան արիւնով էր սրբվում օրէն-
քի հրամանին պէս, և առանց արիւն թափելոյ
թողութիւն չէր լինում:
23 Ապա հարկաւոր էր՝ որ երկնաւոր բաների օրի-
նակներն այսպէսի բաներով սրբվին. բայց յատուկ
երկնաւորներն ինքնին նորանից աւելի ազնիւ պա-
24 տարագներով: Պատճառնոր՝ չէ թէ ձեռքով շին-
ված սրբատեղերին մէջ մտաւ Քրիստոս՝ որ ճշմար-
տութեան օրինակներ էին, բայց իսկ յատուկ եր-
կնքին մէջ՝ որ Աստուծոյ երեսի առաջին երեւի
25 մեզ համար: Չէ որ շատ անգամ իրեն անձն պա-
տարագ մատուցանէ՝ ինչպէս որ քահանայապետն,
որ տարուց տարի մտնումէր սրբութեանց սրբու-
26 թիւնն օտար արիւնով. Ապա թէ չէ՝ պէտք էր որ
նա աշխարհքի սկզբիցն ետեւ շատ անգամ չար-
չարվի. բայց հիմիկ՝ ահա՛ ժամանակների վերջումը
մին անգամ յայտնուեցաւ, որ մեղքը դէն ձգէ
27 իրեն պատարագովը: Եւ ինչպէս որ մարդկանց
համար սահմանված է մին անգամ մեռնելն՝ ու
28 նորանից ետեւ դատաստանը. Ճիշտ այնպէս էլ
Քրիստոս մին անգամ պատարագվեցաւ շատերի
մեղքերը վերառնելոյ համար. բայց երկրորդ ան-
գամն առանց մեղքի կ'յայտնվի նորանց՝ որ ապա-
սումեն նորան հաւատքով որ փրկվին:

ԳԼ. Ժ

Քրիստոսի հաշտարար պատարագին գերազանցութիւնը:

1 Պատճառնոր՝ օրէնքն յետոյ գալու բարիքների
շուքն ունէր, ո՛չ թէ այն բաների յատուկ կեր-

պարանքը․ տարուց տարի միշտ նոյն պատարագ-
ներն են մատուցանում՝ որ չեն կարող կատարեալ
2 անել մատուցանողներին ։ Ապա թէ չէ՞ կ՚դադա-
րէին այն մատուցանելուցը, նորահամար որ պաշ-
տօն անօղները նորանից ետեւ էլ մեղքի խղճմը-
տանք բնաւ չէին ունենալ․ ինչուոր՝ մինանգամ
3 սրբվեցան ։ Բայց այն պատարագներով տարուց տարի
4 մեղքերի յիշատակ էր լինում ։ Ինչուոր նոխազնե-
րի և ցուլերի արիւնը չէր կարող մեղքերը վերաւ-
5 նել ։ Նորահամար իրեն աշխարհք մտնելոյ ժամա-
նակումն ասումէ․ Մատաղներ և պատարագներ
չ՚կամեցար, բայց մարմինը պատրաստեցիր ինձ ։
6 Ողջակէզներն ու մեղաց համար պատարագները հաճոյ
7 չէլան քեզ ։ Այն ժամանակն ասացի թէ՝ Ահա՛ ե-
կի․ գրքերի խօրքերումը գրված է ինձ համար՝ քո
8 կամքդ անելոյ՝ ո՛վ Աստուած ։ Վերեւումն ասում
է թէ՝ Մատաղներն ու պատարագները և ողջակէզ-
ներն ու մեղաց համար պատարագները հաճոյ չէլան
քեզ, և չ՚կամեցար նորանց՝ որ օրէնքի հրամանին
9 պէս նորանք էին մատուցանվում․ Ապա ասումէ․
Ահա՛ գալիս եմ քո կամքդ անելոյ՝ ո՛վ Աստուած.
10 առաջինն ձգումէ որ երկրորդն հաստատէ․ Որ այն
կամքովը մենք էլ սրբվեցանք՝ մինանգամ Յիսուսի
Քրիստոսի մարմնոյ պատարագովը ։
11 Եւ ամեն քահանայապետ ամեն օր կանգնած
պաշտամունք է կատարում․ և իսկ այն պատա-
րագները շատ անգամ մատուցանում, որ բնաւ
12 չեն կարող մեղքերը վերաւնել ։ Բայց սա մին պա-
տարագ մատոյց մեղաց համար, և միշտ և յաւի-
13 տեան նստեց Աստուծոյ աջ կողմն ։ Եւ սորանից

ետեւ սպասումէ՝ մինչեւ որ իրեն ամեն թշնամի-
14 ներն իրեն ոտաց ներքեւը դնվին ։ Ինչուոր՝ մին
պատարագով միշտ և յաւիտեան կատարեց նո-
15 րանց որ սրբվումեն ։ Բայց Սուրբ Հոգին էլ վկա-
16 յումէ մեզ, երբոր առաջ ասաց․ Թէ սա է ուխ-
տըն՝ որ կ՚դնեմ նորանց հետ այն օրերիցն ետեւ․
կ՚տամ իմ օրէնքներս նորանց մտքին մէջ, և նո-
17 րանց խորհուրդներին մէջ կ՚գրեմ նորանց ։ Յետոյ
ասումէ՝ թէ Նորանց մեղքերն ու նորանց անօրէ-
18 նութիւնները մին էլ չեմ յիշիլ ։ Բայց որտեղ որ
թողութիւն է՝ այնտեղ էլ մեղքի համար պատա-
րագ պէտք չէ ։
19 Ուրեմն ե՛ղբարք՝ համարձակութիւն ունինք սըր-
20 բատեղը մտնելոյ Յիսուսի արիւնովը․ Որ նա պատ-
րաստեց նոր և կենդանի ճանապարհ մեզ համար
21 վարագուրի միջովը, այսինքն՝ իրեն մարմնովը, Եւ
22 մեծ քահանայ Աստուծոյ տան վերայ ։ Ապա թո՛ղ
մօտենանք նորան ճշմարիտ սրտով, կատարեալ հա-
ւատքով, սրտերս լուացած չար խղճմտանքիցը, և
23 մարմիններս մկրտված սուրբ ջրովը ։ Պի՛նդ բռնենք
յուսոյ դաւանութիւնն առանց շարժվելոյ․ պատ-
ճառնոր հաւատարիմ է նա՝ որ նա խոստացաւ ։
24 Եւ հոգս անենք իրար համար՝ դէպի սէր և բարի
25 գործքեր յորդորելով ։ Եւ չ՚թողենք մեր իրար ժո-
ղովքն, ինչպէս որ մին քանիսն սովոր են անել․
բայց եւս յորդորենք, և այնքան էլ աւելի՛ որքան
տեսնումէք՝ որ այն օրը մօտեցած է ։
26 Պատճառնոր եթէ մենք ճշմարտութեան գիտու-
թիւնն ընդունելուցն ետեւ՝ յօժար մտքով մեղք
գործենք, էլ նորանից ետեւ միւսանգամ մեղաց

27 համար պատարագ չի մնում, Այլ դատաստանի
ահաւոր սպասելը, և կրակի նախանձն՝ որ հակա-
28 ռակօղներին կ'լափէ. Մինն որ Մօսէսի օրէնքն ա-
նարգումէր՝ առանց ողորմութեան երկու կամ ե-
29 րեք վկայով մեռնումէր. Էլ ո՞րքան աւելի սաս-
տիկ պատժոյ արժանի կ'համարիք նորան, որ Ա-
տուծոյ Որդուն ոտի տակ կոխեց. և նոր ուխտի
արիւնը պիղծ համարեց՝ որ նա սրբվեցաւ նորա-
30 նով. և շնորհաց Հոգուն նախատինք տուաւ ։ Բայց
գիտումենք նորան՝ որ ասաց. Վրէժ առնելն իմն
է, և ես հատուցումն կ'տամ՝ ասումէ Տէրը. և
31 կրկին թէ Տէրը կ'դատէ իրեն ժողովրդին ։ Սաստիկ
վախենալոյ բան է՝ կենդանի Աստուծոյ ձեռքին
մէջ ընկնիլը ։
32 Ուրեմն յիշեցէ՛ք առաջին օրերն, որ դուք լու-
սաւորվեցաք և շատ նեղութիւններին և չարչա-
33 րանքներին համբերեցիք. Ինչուոր ժամանակ կար՝
որ նախատինքների և նեղութիւնների մէջ խայ-
տառակվեցաք, և ժամանակ կար՝ որ այնպէսի բան
34 քաշօղներին հետ մասնակից էյաք ։ Պատճառնոր
կապվածներին հետ էլ չարչարվեցաք, և ձեր ապ-
րանքների յափշտակութիւնն էլ ուրախութենով
ընդունեցիք. Ինչուոր գիտումէիք որ ձեր անձնե-
րիդ համար էլ աւելի լաւ ստացուածք ունիք եր-
35 կընքումն՝ որ կենում և մնումէ ։ Ուրեմն չ'ձգէք
ձեր վստահութիւնն՝ որ նորանում մեծ վարձքի
36 հատուցումն կայ ։ Համբերութիւն պէտք է ձեզ.
որ Աստուծոյ կամքն անելով՝ աւետիքին հանէք ։
37 Ինչուոր՝ մին քիչ ժամանակ էլ՝ և նա որ գալու
38 է՝ կ'գայ և չի՛ ուշանալ ։ Բայց իմ արդարս հա-

ւատքից կապրի. և թէ որ մինն երկմիտ լինի, նո-
39 րան իմ անձս չի հաւանել ։ Իսկ մենք երկմտու-
թենով չենք՝ որ կորչինք. այլ հաւատքով որ հո-
գիներս փրկվին ։

ԳԼ. ԺԱ.

Հաւատոյ օրինակներ ։

1 Հաւատքն ի՞նչ է, եթէ ո՛չ յուսացած բաների
հաստատութիւն, և այն բաների ցոյց տալն՝ որ
2 չեն երեւում ։ Ինչուոր նորանով առաջին մարդիքը
վկայութիւն ընդունեցին ։
3 Հաւատքով ենք իմանում որ աշխարհքները հաս-
տատվեցան Աստուծոյ խօսքովը, որ աներեւոյթ
4 բաներից այս երեւօղներս էլան ։ Հաւատքով Աբէլ
Կայէնից աւելի լաւ պատարագ էր մատուցանում
Աստուծոյն՝ որ նորանով էլ վկայութիւն ընդու-
նեց որ արդար է. Ինչուոր այն պատարագներին
վերայ վկայութիւն էլաւ նորան Աստուածանից.
որ նա՝ թէեւ մեռաւ նորանով, բայց դեռ հիմիկ
խօսումէ ։
5 Հաւատքով Ենոք փոխվեցաւ՝ որ մահը չ'տեսնէ.
և ոչ մին տեղ չէր գտնվում. Ինչուոր՝ Աստուած
փոխեց նորան. և իրեն փոխվելուցն առաջ վկայ-
6 վեցաւ՝ որ հաճոյ է Աստուծոյն ։ Բայց առանց հա-
ւատքի անկարելի է հաճոյ լինիլ Աստուծոյն. այլ
նորան որ Աստուծոյն մօտենումէ՝ պէտք է որ հա-
ւատայ՝ թէ Աստուած կայ. և նորանց որ խնդ-
րումեն նորան՝ պարգեւ կ'հատուցանէ ։

7 Հաւատքով Նոյ հրաման առաւ դեռ չերեւած
բաների համար՝ և խիստ վախով բռնված շինումէր
այն տապանն իրեն տան փրկութեան համար, որ
նորանով աշխարհքիս դատեց. և այն արդարու-
8 թիւնը ժառանգեց՝ որ հաւատքիցն է։ Հաւատքով
Աբրահամ երբոր կանչվեցաւ՝ հնազանդ եղաւ՝
դուրս գնալոյ այնտեղն, որ նորա ժառանգութեան
պէս պիտի առնէր. դուրս եկաւ գնաց և չէր գի-
9 տում թէ ուր գնայ։ Հաւատքով պանդուխտ ե-
ղաւ աւետիքի երկրումն իբր մին օտար տեղում.
խորաններում բնակվեցաւ Սահակի և Յակոբայ
հետ՝ որ նորանք էլ նորա հետ իսկ այն աւետիքի
10 ժառանգ էին։ Պատճառնոր՝ սպասումէր այն հի-
մունքով հաստատված քաղաքին, որ նորա ճար-
տարապետն ու շինողն Աստուած է։
11 Հաւատքով Սառան ինքն էլ՝ որ ամուլ էր,
սերմն առնելոյ զօրութիւն էր ընդունում՝ որդի
ծնելոյ համար. և ժամանակից դուրս հասակի մէջ
որդի էր ծնում. ինչուոր հաւատարիմ համարեց
12 նորան՝ որ նա խոստացաւ։ Նորահամար այն մէ-
կից՝ որ էլ իրեն ժամանակով անցած էր՝ այնքան
շատեր ծնվումէին, ինչպէս երկնքի աստեղներն ու
ինչպէս աւազը ծովի եզրին մօտ՝ առանց համարի։
13 Սորանք ամենքը մեռան հաւատքի մէջ, և դեռ
աւետիքներին չընդունեցին. բայց հեռուանց տե-
սին նորանց՝ և ուրախացան. և դաւանեցին թէ
14 օտար և պանդուխտ են երկրումս։ Պատճառնոր՝
նորանք որ այնպէսի բաներ են խօսում՝ յայտնի
ցոյց են տալիս՝ որ մին գաւառի են ման գալիս։
15 Եւ թէ որ նա կ՚յիշէին՝ որ նորանցից դուրս եկին,

16 ժամանակ կար յետ դառնալոյ։ Բայց հիմիկ մին
աւելի աղնիւին են ցանկացած, այսինքն երկնաւո-
րին. և նորահամար Աստուած էլ ամօթ չի հա-
մարում՝ նորանց Աստուած կոչվել. ինչուոր քա-
ղաք պատրաստեց նորանց համար։
17 Հաւատքով Աբրահամ Իսահակին պատարագ
մատոյց՝ իրեն փորձվելոյ ժամանակումը. և միածը-
նունդ որդոյն մատուցանումէր նորան որ աւետիքն
18 ընդունել էր. Նորան որ ասվեցաւ՝ թէ Իսահակով
19 կ՚կոչվի քո զաւակդ։ Նա միտք արաւ՝ թէ Աստ-
ուած կարող է մեռելների միջից էլ յարուցա-
նել. և այս պատճառովս էլ օրինակի համար ըն-
20 դունեց նորան։ Հաւատքով Իսահակ Յակոբին և
21 Եսաւին օրհնեց նոր գալու բաներին համար։ Հա-
ւատքով Յակոբ իրեն մեռնելոյ ժամանակումը Յո-
սէփի որդիքներիցն ամեն մէկին օրհնեց, և իրեն
գաւազանի ծայրին վերայ ընկած երկրպագութիւն
22 արաւ։ Հաւատքով Յօսէփ իրեն վախճանվելոյ ժա-
մանակումը յիշեց Իսրայէլի որդոց դուրս գնալը,
և իրեն ոսկորներին համար հրաման տուաւ։
23 Հաւատքով Մօսէս՝ երբոր ծնվաւ՝ երեք ամիս
թաքուն պահվեցաւ իրեն ծնօղքիցը. ինչուոր՝ տե-
սին թէ մանուկը գեղեցիկ էր և չ՚վախեցան թա-
24 գաւորի հրամանիցը։ Հաւատքով Մօսէս՝ երբոր
մեծացաւ՝ չ՚կամեցաւ փարաւօնի աղջկան որդի
25 կոչվիլ. Աւելի լաւ համարեց Աստուծոյ ժողովրդին
հետ չարչարվիլ, քան թէ քիչ ժամանակ մեղքով
26 վայելել։ Աւելի աղնիւ համարեց Քրիստոսի նախա-
տինքները, քանթէ Եգիպտացոց հարուստ գանձե-
րը. ինչուոր աչք դրած մտիկ էր տալիս վարձքի

27 հաստացմունքին։ Հաւատքով թողեց Եգիպտացոց
երկիրը, և չ'վախեցաւ թագաւորի բարկութենիցը.
ինչուոր՝ համբերութենով աներևոյթ բանները տե-
28 սածի պէս համարեց։ Հաւատքով արաւ զատիկն
ու արիւն թափելը. որ առաջնեկների սատակօղը
29 չ'մօտենայ նորանց։ Հաւատքով անցան կարմիր
ծովն ինչպէս ցամաք երկրի վերայ. որ Եգիպտացի-
ներն էլ նա փորձեցին՝ և խեղդվեցան։
30 Հաւատքով Երիքովի պարիսպները վէր ընկան,
երբոր եօթն օր նորա չորս կողմովը պտըտեցին։
31 Հաւատքով Րախաբ պոռնիկը չ'կորաւ անհաւատ-
ներին հետ, որ նա լրտեսներին ընդունել էր խա-
ղաղութենով։
32 Եւ հիմիկ՝ էլ ի՞նչ ասեմ. ինչուոր՝ ժամանակս
բաւական չէ՛ պատմելոյ Գեդէօնի, Բարակի, Սամփ-
սօնի, Յեփթայի, Դաւթի և Սամուէլի և ուրիշ
33 մարգարէների համար։ Որ նորանք հաւատքով թա-
գաւորութիւնները յաղթեցին. արդարութիւն
գործեցին. աւետիքներ ստացան, առիւծների բե-
34 րանները խցկեցին. Կրակի զօրութիւնն անցրին.
սրի բերանիցը պրծան. տկարութենից զօրացան.
պատերազմի մէջ զօրաւոր էլան. օտարների բա-
35 նակներն առին։ Կանայքն իրենց մեռելները յետ
ընդունեցին յարութենից. կէսերը սաստիկ չար-
չարվեցան և չ'կամեցան ազատվիլ, որ աւելի լաւ
36 յարութեան հասնեն. Եւ կէսերը տանջանքների
և ծեծերի համբերեցին, կապանքների և բանտերի.
37 Քարկոծվեցան, սղոցվեցան, փորձվեցան, սրով
սպանված մեռան. ոչխարի մորթերով և այծի կա-
շիքներով մանեկին. կարօտութիւն քաշած, նե-

38 ղացած, չարչարված. Որ աշխարհք նորանց ար-
ժանի չէ. անապատ տեղերի մէջ մոլորվեցան և
սարերի և այրերի՝ և երկրի փոսերի մէջ։
39 Եւ սորանք ամենքը հաւատքով վկայութիւն ա-
40 ռին, և աւետիքը դեռ չընդունեցին։ Ինչուոր՝
Աստուած մեզ համար աւելի լաւ համարեց, որ
առանց մեզ չ'կատարվին։

ԳԼ. ԺԲ

*Համբերութեան և հաւատքի մէջ հաստատ մնալոյ հա-
մար խրատ։*

1 Ուրեմն մենք էլ՝ որ վկաների այսքան բազմութիւն
ունինք մեր չորս կողմովը պատած՝ ամեն գոռոզու-
թիւն ձգենք, և մեղքն էլ որ պաշարումէ մեզ.
համբերութենով վազենք այն պատերազմի մէջ
2 որ մեր առաջին կայ։ Մտիկ տանք Յիսուսին հա-
ւատքի զօրագլխին և կատարօղին. որ նա ուրա-
խութեան տեղ՝ որ նորա առաջին կար, խաչն ի-
րեն վերայ առաւ, և ամօթը ո՛չ ինչ համարեց.
և Աստուծոյ աթոռի աջ կողմն նստեց։
3 Ուրեմն մտածեցէք նորան, որ համբերութենով
այսպէսի բաներ քաշեց այն մեղաւորների հակա-
ռակութենիցը. որ դուք վաստակած չ'լինիք ձեր
4 անձներովդ՝ և թուլանաք։ Ինչուոր՝ դեռ մինչև
արիւն թափելոյ չափ պատերազմելով հակառակ
5 չէք կացած մեղքին. Եւ մոռացաք այն մխիթարու-
թիւնն՝ որ ձեզ հետ ինչպէս որդեակներին հետ է
խօսում։ Իմ որդեակս մի՛ թուլանար Տէրի խրա-

տիցը. և թո՛ղ սիրտդ չ'կոտրվի՝ երբոր յանդի-
6 մանվիս նորանից: Պատճառնոր՝ Տէրը՝ նորան որ
սիրումէ՝ խրատումէ՝ տանջումէ ամեն որդի՝ որ ըն-
7 դունումէ: Խրատին մէջ թէ որ համբերութենով
կենաք, Աստուած ձեզ հետ ինչպէս որդոց հետ
կ'վարվի. ո՞ր որդի կայ՝ որ նորան հայրը չի խրա-
8 տում: Բայց թէ որ առանց խրատի լինիք՝ որ ա-
մենքը մասնակից եղան նորան. ապա խորթ կ'լինիք՝
9 և չէ թէ որդիք: Ինչուոր՝ եթէ մեր մարմնաւոր
հարանցիցն՝ որ խրատող ունինք՝ վախով ամաչում-
էնք, էլ ո՞րքան աւելի պիտի հնազանդվինք հոգի-
10 ների Հօրը՝ և ապրինք: Ինչուոր՝ սորանք մին քիչ
ժամանակ իրենց կամից պէս են խրատում. բայց
նա օգտի համար՝ որ նորա սրբութիւնն ընդունինք:
11 Ամեն խրատ՝ առնելոյ ժամանակումն ուրախութիւն
չի երեւում, բայց տրտմութիւն. այլ յետոյ նո-
րանով վարժվածներին խաղաղութեան պտուղ է
վճարում արդարութենով:
12 Նորահամար հաստատեցէ՛ք թուլացած ձեռնե-
13 րը. և տկարացած ծնկները. Եւ ձեր ոտների գը-
նալոյ ճանապարհը շիտակեցէ՛ք, որ նա՝ որ կաղ է՝
14 չ'գլորվի, բայց էլ աւելի բժշկվի: Հետեւեցէ՛ք
խաղաղութեան ամենին հետ՝ և սրբութեան, որ
15 առանց նորան ո՛չ ով Տէրին չի՛ տեսնիլ: Զգո՛յշ
կացէք, որ չ'լինի թէ մինը յետ մնայ Աստուծոյ
շնորհքիցը, Որ մին դառն արմատ վեր չ'բուսնէ և
նեղութիւն տայ, և նորանով շատ հոգիք պղծվին,
16 Որ մինը պոռնիկ և պիղծ չ'լինի՝ ինչպէս Եսաւ. որ
մին կերակուրի համար իրեն առաջնեկութիւնը
17 ծախեց: Գիտումէք՝ որ թէեւ յետոյ կամեցաւ

օրհնութիւնը ժառանգել, անպէտք գտվաւ. ին-
չուոր ապաշխարութեան ճար չ'գտաւ թէեւ ար-
տասուքով խնդրեց նորան:
18 Պատճառնոր՝ դուք չէք մօտեցած այն սարին՝ որ
ձեռք կարող էին դիպչել, որ կրակով վառված
էր՝ և այն մէգին և մշուշին և խաւարին և մթին.
19 Որ այն տեղ փողը փչումէր և հրամանքների ձայ-
նը, որ նորանից յետ քաշվեցան նորանք որ լսե-
20 ցին, որ խօսքը կրկին չասվի նորանց: Ինչուոր՝ չէին
դիմանում այն հրամանին. և թէ որ անասուն մօ-
21 տենումէր սարին՝ քարկոծ էր լինում: Եւ այնպէս
ահաւոր էր այն տեսիլքն, որ Մօսէս էլ ասումէր,
22 թէ Ահով բռնված եմ և դողումեմ: Բայց մօտե-
ցել էք Սիօն սարին և կենդանի Աստուծոյ քաղա-
քին, երկնաւոր Երուսաղէմին, և հազար հազա-
23 րաւոր հրեշտակների բազմութեանը. Եւ առաջի-
նեկների եկեղեցոյն՝ որ երկնքումը գրված են, և
Աստուծոյն ամենքի Դատաւորին, և կատարեալ
24 արդարների հոգիներին. Եւ Յիսուսին նոր կտակա-
րանի միջնորդին. և նորա արիւն թափելոյն՝ որ ա-
ւելի լաւ է խօսում քան թէ Հաբելինը:
25 Զգո՛յշ կացէք որ չ'լինի թէ երես յետ դարձը-
նէք նորանից՝ որ խօսեց. պատճառնոր՝ եթէ նո-
րանք չ'կարացին պրծնիլ՝ որ երես դարձրին նորա-
նից՝ որ երկրիս վերայ հրաման էր տալիս, էլ որ-
քան աւելի մենք, թէ որ երկնաւորիցն երես դար-
26 ձընենք. Որ նորա ձայնն այն ժամանակումը երկիրը
շարժեց. և հիմիկ խոստացել է՝ և ասումէ. թէ
Նորէն կ'շարժեմ, չէ թէ մինակ երկիրը՝ բայց եր-
27 կինքն էլ: Բայց այն մինը ցոյց է տալիս՝ որ շարժ-

ուելի բաներն իբր թէ եղածները պիտի փոխուին , որ
28 հաստատ մնան նորանք որ շարժուելի չեն : Նորա-
համար որովհետեւ չ'շարժուելի թագաւորութիւն
ընդունիլցինք , պի՛նդ բռնենք այն շնորհքն՝ որ նո-
րանով պաշտումենք Աստուծոյն , ինչպէս որ հաճոյ
29 է նորան՝ ահով և դողալով : Պատճառնոր մեր Ա-
ստուած այրող փչացնող կրակ է :

ԳԼ· ԺԳ

Առաջնորդներին հնազանդելոյ համար խրատ :

1 Եղբայրսիրութիւնը թո՛ղ հաստատ լինի ձեր մի-
2 ջումը : Օտարասիրութիւնը մի՛ մոռանաք . պատ-
ճառնոր՝ նորանով մինքանիսն առանց գիտելոյ հը-
3 րեշտակներին ընդունեցին : Յիշեցէ՛ք կապուածնե-
րին ինչպէս թէ դուք էլ նորանց հետ կապուած
լինէիք . և չարչարուածներին՝ ինչպէս թէ դուք էլ
4 մարմնումն էք : Ամուսնութիւնն ամեն կողմանէ
պատուական է՝ և անկողինները սուրբ . բայց շը-
նացողներին և պոռնիկներին Աստուած կ'դատէ :
5 Վարքերն առանց արծաթասիրութեան լինին , որ
բաւական համարէք նա՝ որ ձեռներումն ունիք .
ինչուոր իսկ ինքն ասաց , թէ Չեմ թողիլ քեզ՝ և
6 երեսից չեմ ձգիլ : Այնպէս որ համարձակ լինինք
ասելոյ . Տէրն է իմ օգնականս , և չեմ վախենալ ,
7 ի՞նչ կանէ ինձ մարդը : Յիշեցէ՛ք ձեր առաջնորդ-
ներին՝ որ Աստուծոյ բանը խօսեցին ձեզ . նայեցէ՛ք
նորանց վարմունքի վախճանին՝ և նմա՛ն էլէք նորանց
8 հաւատքին : Յիսուս Քրիստոսն՝ երեկ և այսօր , և
նոյն էլ յաւիտեան :

9 Կերպ կերպ ուսմունքներով և օտար խօսքերով
մի՛ շարժուիք այս և այն կողմն . ինչուոր՝ լաւ է որ
շնորհքով սրտերը հաստատուին՝ և ո՛չ թէ կերա-
կուրներով . որ նորանցով բնաւ բան չ'շահուեցան
10 նորանք՝ որ այնպէս գնացին : Մենք ունինք սեղան,
որ նորանից ուտելոյ իշխանութիւն չունին նորանք՝
11 որ խորանի պաշտամունքին ծառայումեն : Ինչուոր
այն անասունների արիւնն որ քահանայապետի ձե-
ռովը սրբատեղին մէջ մատուցանվումէր մեղաց
համար՝ նորանց մարմիններն այրվումէին բանակից
12 դուրսը : Նորահամար Յիսուս էլ՝ որ իրեն արիւնո-
վը ժողովրդին սրբէ , դրան դրսի կողմն չարչար-
13 վեցաւ : Ուրեմն ելէ՛ք բանակիցը դուրս գնանք նո-
րա մօտ , և նորա նախատինքը մեզ վերայ առ-
14 նենք : Պատճառնոր այստեղ հաստատ մնացող
քաղաք չունինք . բայց նա որ պիտի լինի՝ նորան
15 ենք ուզում : Ուրեմն նորա ձեռովն ամեն ժամանակ
օրհնութեան պատարագ մատուցանենք Աստուծոյ .
այսինքն՝ պռօշների պտուղ՝ որ դաւանումեն նորա
16 անունը : Բարի անելն ու հաղորդութիւն անելը
մի՛ մոռանաք . ինչուոր այնպէսի պատարագներին
17 է Աստուած հաւանում : Ակա՛նջ դրէք ձեր առաջ-
նորդներին , և հնազա՛նդ կեցէք նորանց . ինչուոր
նորանք արթուն են կենում ձեր հոգիներին հա-
մար՝ ինչպէս թէ համար պիտի տան ձեզ համար՝
որ նա ուրախութենով անեն , և չէ թէ յոգոց հա-
18 նելով , որ նա ձեզ օգուտ չէ : Աղօ՛թք արէք մեզ
համար . ինչուոր հաստատ գիտումենք որ բարի
խղճմտանք ունինք . ամեն բանի մէջ կամենումենք
19 բարի վարք ցոյց տալ : Եւ էլ աւելի աղաչումեմ՝

որ նա անէք , որ շուտով կարենամ դառնալ ձեզ
մօտ :

20 Եւ խաղաղութեան Աստուածն՝ որ մեռելներիցը
վեր հանեց հօտի մեծ հովիւը՝ յաւիտենական ուխ-
21 տի արիւնովը՝ մեր Տէր Յիսուսին , հաստատէ՛ ձեզ
բարի գործքերի մէջ նորա կամքն անելոյ . և գոր-
ծէ մեզանում ինչ որ հաճոյ է նորա առաջին Յի-
սուսի Քրիստոսի ձեռովը . որ նորան փառք յաւի-
տեանս . ամէն :

22 Աղաչումեմ ձեզ եղբարք , որ այս մխիթարու-
թեան խօսքիս ականջ դնէք , ինչուոր քիչ գրեցի
23 ձեզ : Ճանաչումէք մեր Տիմօթէոս եղբօրն որ ձեզ
մօտ ուղարկված է . թէ որ նա շուտով գայ՝ նորա
24 հետ կ'տեսնեմ ձեզ : Ողջո՛յն տուէք ձեր ամեն ա-
ռաջնորդներին , և ամեն սրբերին . ողջոյն են տա-
25 լիս ձեզ նորանք որ Իտալիայի կողմերումն են : Շը-
նորհքն ձեզ ամենից հետ . ամէն :

Եբրայեցւոց վերայ Իտալիա երկրէն գրվեցաւ Տիմո-
թէոսի ձեռովը :

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՅԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Նեղութեան ժամանակում համբերել :

1 ՅԱԿՈՎԲՈՍ՝ Աստուծոյ և Տէր Յիսուսի Քրիստո-
սի ծառայ . տասներկու ցեղերիդ որ ցրված էք՝
ողջոյն :
2 Ամեն ուրախութեան արժանի համարեցէ՛ք եղ-
բարք , երբոր կերպ կերպ փորձանքի մէջ ընկնիք :
3 Գիտացէ՛ք՝ որ ձեր հաւատքի փորձը՝ լաւ կարգ-
4 ված՝ համբերութիւն է գործում : Բայց համբերու-
թիւնը պէտք է կատարեալ գործ ունենայ . որ ա-
մեննեւին ամբողջ և կատարեալ լինիք . և ո՛չ մին
բանով պակասութիւն չունենաք :
5 Իսկ թէ որ ձեզանից մինը պակասված լինի իմաս-
տութենիցը , թո՛ղ խնդրէ Աստուածանից , որ ա-
մենիս տալիս է առատութենով և չի նախատում .
6 և կ'տվվի նորան : Միայն թէ թո՛ղ հաւատքով
խնդրէ՝ և ո՛չ թէ երկմտութենով . պատճառնոր՝
ով որ երկմիտ է՝ քամիով ծփված և տատանված

7 ծովու ալիքներին նման է ։ Այնպէսի մարդն թո՛ղ
յոյս չունենայ որ Աստուածանից մին բան առնէ ։
8 Պատճառնոր երկմիտ մարդն՝ առանց հաստատու-
թեան է իրեն ամեն ճանապարհներումը ։
9 Թո՛ղ խոնարհ եղբայրը պարծենայ իրեն բարձ-
10 րութենումը ․ Եւ նա որ հարուստ է՝ իրեն խոնար-
հութենումը ․ ինչուոր խոտի ծաղկի նման կանցա-
11 նէ ։ Ինչուոր արեգակը ծագեց իրեն խիստ տաքու-
թենովը՝ և խոտը ցամաքացրուց , և նորա ծաղիկը
թափվեց , և նորա երեսի գեղեցկութիւնը կորաւ ․
այնպէս էլ հարուստն իրեն շահված բաների հետ
կ՛թառամի ։
12 Երանելի՛ է այն մարդն՝ որ համբերումէ փոր-
ձանքների ․ ինչուոր՝ եթէ ընտիր գանվի՝ կենաց պը-
սակը կառնէ , նա որ Տէրն խոստացաւ իրեն սի-
13 րողներին ։ Ո՛չ ով որ փորձանքին մէջ է , թո՛ղ
չասէ թէ Աստուածանից եմ փորձվում ․ ինչուոր՝
Աստուած չար բաների փորձող չէ՛ ․ նա ոչ մինին
14 չի՛ փորձում ․ Ամեն մէկը փորձումէ՝ երբոր իրեն
15 ցանկութիւններիցն քաշվումէ և խաբվում ․ Ապա
նորանից ետեւ ցանկութիւնը յղացած՝ մեղք է
ծնում ․ և մեղքն էլ երբոր կատարվի՝ մահ կ՛ծնի ։
16 Մի՛ խաբվիք իմ սիրելի՛ եղբարքս ․ (17) Պատճառն-
որ ամեն բարի տուրքերը , և ամեն կատարեալ
պարգեւները՝ վերեւիցն են վէր եկել լուսոյ Հօրի-
ցը ․ որ նորանում ընաւ փոփոխմունք կամ շուռ-
18 տուող շուք չ՛կայ ։ Իրեն կամենալոյն պէս ծնաւ
մեզ ճշմարտութեան խօսքովը , որ մենք նորա ու-
19 նեցածների առաջին պտուղ լինինք ։ Գիտացէ՛ք
իմ սիրելի եղբարքս ․ թո՛ղ ամեն մարդ ժի՛ր լի-

նի՝ լսելոյ համար , և ծանր՝ խօսելոյ համար , և
20 ծանր՝ բարկանալոյ համար ։ Պատճառնոր մարդոյ
բարկութիւնն Աստուծոյ արդարութիւնը չի՛ գոր-
ծում ։
21 Որահամար ամեն պղծութիւն , և չարութեան
աւելանալը ձգեցէք , և խոնարհութենով ընդունե-
ցէ՛ք այն առաջին խօսքն՝ որ կարող է ձեր հոգի-
ներն ապրեցնել ։
22 Խօսքն անող էլէ՛ք , և ո՛չ թէ մինակ լսող հա-
23 մարէք ձեր անձները ։ Ինչուոր եթէ մինը մինակ
խօսքի լսող է՝ և ո՛չ անող , նա նման է այն մար-
դոյն՝ որ պշուցած կ՛նայի իրեն երեսին՝ որ հայելոյ
24 միջումն երեւումէ ․ Որ նայելով տեսաւ իրեն՝ և
անցաւ , և էլ շուտով մոռացաւ թէ ինքն ինչպէս
25 էր ։ Բայց նա՝ որ ազատութեան կատարեալ օրէն-
քին մէջ աչքը ձգած մտիկ կ՛տայ՝ և նորանում
կ՛կենայ , նա մոռացող լսող չէլաւ՝ բայց գործ
26 կատարող ․ նա՝ իրեն անելովը երանելի՛ կ՛լինի ։ Թէ
որ մինն կամենայ աստուածապաշտ լինել՝ և իրեն
լեզուն չ՛սանձահարէ , այլ իրեն սիրտն զբաղմուն-
քի տայ , այնպէսի մարդոյ աստուածապաշտութիւ-
27 նը զուր է ։ Սուրբ և անարատ աստուածապաշտու-
թիւնն Աստուծոյ և Հօր առաջին սա է , Որբերին
և որբեւէրիներին տե՛ս գալ իրենց նեղութեանը
մէջ ․ և իրեն անձն աշխարհքիցն անարատ պահել ։

ԳԼ. Բ

Երեսպաշտութիւն հարուստների դէմ, և կեղծ հաւատք։

1 Իմ եղբայրքս՝ չ'լինի՛ թէ երեսին նայելով ունե-
նաք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հաւատքը, որ
2 նա փառաց Տէրն է ։ Թէ որ մի մարդ մտնէ ձեր
ժողովարանը՝ որ ոսկէ մատանի և պայծառ հագուստ
ունենայ. մին աղքատ էլ մտնէ այնտեղ՝ կեղտոտ
3 շորերով, Եւ մտիկ տաք նորան որ պայծառ հա-
գուստ ունի, և ասէք՝ թէ Դու այս տեղս նստէ՛
պատուով, և աղքատին ասէք՝ թէ Այդ տեղդ
ոտաց վերայ կա՛ց, կամ թէ Ե՛կ իմ ոտներիս մօ-
4 տը նստէ՛ ։ Միթէ խղճմտանք չէ՛ք անում ձեզա-
նում, և չեղա՞ք չար խորհուրդների դատաւորներ ։
5 Լսեցէ՛ք ինձ իմ սիրելի եղբայրքս, չէ՞ որ Աստ-
ուած ընտրեց այս աշխարհքիս աղքատներին, որ
հաւատքով հարուստ են, և արքայութեան ժա-
ռանգ՝ որ Աստուած խոստացաւ իրեն սիրողներին ։
6 Բայց դուք ոչնչի տեղ էք դնում աղքատներին.
չէ՞ որ հարուստներն են ձեզ հարստահարում և
7 նորանք ձեզ դատաստան քաշում ։ Չէ՞ որ նորանք
են հայհոյում այն բարի անունն՝ որ ձեզ վերայ
8 կանչված է ։ Ապա թէ որ թագաւորական օրէնքը
կատարէք Գրքի ասածին պէս՝ թէ Սիրէ՛ քո ընկե-
9 րիդ քո անձիդ պէս, լա՛ւ էք անում ։ Բայց եթէ
երեսին նայէք՝ մեղք էք գործում, յանդիմանված
10 օրէնքից ինչպէս օրէնքի քանդողներ. Ով որ ա-
մեն օրէնքը պահէ, և մինումը մեղանչէ, ամեն

11 օրէնքին եղաւ պարտական ։ Ինչու որ՝ նա որ ասաց՝
թէ Մի՛ սպաներ, ասաց էլ՝ թէ Շնութիւն մի՛ ա-
ներ. որ եթէ չ'սպանես՝ բայց շնութիւն անես, ե-
12 ղար օրէնքի քանդող ։ Այնպէս խօսեցէք՝ և այնպէ՛ս
արէք, որպէս (կ'վայելէ ձեզ) թէ ազատութեան
13 օրէնքով պիտի դատվիք ։ Պատճառնոր՝ անողորմ
դատաստան պիտի լինի նորա վերայ, որ ողորմու-
թիւն չի անում. ինչու որ ողորմութիւնը գլուխը
բարձր բռնած կ'պարծենայ դատաստանի առաջին։
14 Ի՞նչ օգուտ է իմ եղբայրքս, թէ որ մինն ասէ
որ հաւատք ունի՝ և գործ չունենայ. միթէ հա-
15 ւատքը կ'կարենա՞յ ապրեցնել նորան ։ Թէ որ մին
եղբայր կամ քոյր՝ մերկ լինին կամ օրվան կերակ-
16 րին կարօտ, Եւ ձեզանից մինն նորանց ասէ. Գը-
նացէ՛ք խաղաղութենով, տաքացէ՛ք և կշտացէ՛ք.
և մարմնոյ պէտք եղածը չ'տաք նորանց, ի՞նչ օ-
17 գուտ կ'լինի ։ Այնպէս էլ հաւատքը՝ եթէ գործք
18 չունենայ՝ ինքն իրանում մեռած է ։ Բայց լինի որ
մինն ասէ. թէ Դու հաւատք ունիս՝ և ես գործք
ունիմ. ցո՛յց տուր ինձ քո հաւատքդ առանց
գործքերի, և ես իմ հաւատքս ցոյց կ'տամ քեզ
19 իմ գործքերովս ։ Դու հաւատումես թէ մին Աս-
տուած կայ, լաւ ես անում. դեւերն էլ են հա-
20 ւատում և դողում ։ Կամենո՞ւմես գիտել ո՛վ
փուչ մարդ, որ հաւատքն առանց գործքերի ու-
21 նայն է ։ Մեր հայր Աբրահամը չէ՞ որ գործքերով
արդարեցաւ՝ իրեն որդի Սահակին պատարագ հա-
22 նելով սեղանի վերայ ։ Տեսնո՞ւմես՝ որ հաւատքն
օգնական եղաւ նորա գործքերին. և այն գործքե-
23 րովը հաւատքը կատարեալ եղաւ ։ Եւ կատարեցաւ

գիրքն՝ որ ասում է. Աբրահամ հաւատաց Աստու-
ծոյն, և արդարութիւն համարվեցաւ նորա հա-
24 մար. և Աստուծոյ բարեկամ կոչվեցաւ: Տեսնո՞ւմ
էք՝ որ մարդ գործքերով է արդարանում՝ և ո՛չ
25 թէ մինակ հաւատքով: Այնպէս էլ Ռախաբ պոռ-
նիկը. չէ՞ որ գործքերով արդարացաւ, որովհետեւ
լրտեսներին իրեն մօտ առաւ՝ և ուրիշ ճանապար-
26 հով արձակեց: Ինչպէս որ մարմինն առանց հոգոյ
մեռած է, այնպէս էլ հաւատքն առանց գործքե-
րի մեռած է:

ԳԼ. Գ

*Լեզուին չարաչար գործածութիւնը. իմաստութիւնն
՚ի վերուստ:*

1 Չլինի՛ որ շատերդ վարդապետ լինիք իմ եղբար-
քըս. գիտացէ՛ք՝ որ մեծ դատաստան պիտի ընդու-
2 նինք: Պատճառնոր՝ շատ բաներով մեղանչումենք
3 ամենքս. Թէ որ մինն խօսքովը չ՚մեղանչէ՝ նա՛ է
կատարեալ մարդ, որ կարող է իրեն բոլոր մարմի-
4 նը սանձահարել: Տե՛ս՝ որ ձիոյ բերանը սանձք ենք
դնում՝ որ նորանք հնազանդվին մեզ, և նորանց
5 բոլոր մարմինները հնազանդացնումենք: Ահա՛ նա-
ւերն էլ ինչպէս մեծ բան են, և սաստիկ քամինե-
րով են քշվում. բայց փոքր թիով դառնումեն՝
որ կողմն որ նաւ կառավարողի միտքը կամենայ:
6 Այնպէս էլ լեզուն մին փոքր անդամ է՝ և մեծ
մեծ բաներ է խօսում. տե՛ս որ մին փոքր կրակ էլ
7 ի՛նչպէս անտառներ է կրակ տալիս: Եւ լեզուն կը-

րակ է՝ անիրաւութեան զարդարանք. լեզուն դըր-
ված է մեր անդամներին մէջ, որ նա բոլոր մարմի-
նըն ապականումէ, և կրակով վառում մեր ծննդի
պտուտքը, և ինքն բորբոքված այրվումէ գեհենի-
8 ցը: Գազաններին և թռչուններին և սողացող կեն-
դանիներին և ծովում լինողներին՝ ամեն բնութիւ-
նըն՝ հնազանդված է՝ և հնազանդվումէ մարդկային
9 բնութեանն. Բայց մարդկանց լեզուն ո՛չ ով կա-
րող չէ հնազանդացնել՝ այն չարը և անկարգը՝ և
10 մահաբեր թոյնով լցվածն: Նորանով ենք օրհ-
նում Տէրը և Աստուած Հայրը, և նորանով ենք
անիծում մարդկանց՝ որ Աստուծոյ նմանութենովն
11 ստեղծվեցան: Այն մին բերանիցն են դուրս գա-
լիս օրհնութիւն և անէծքներ. պէ՛տք չէ որ այն-
12 պէս լինի՝ իմ եղբարքըս: Միթէ մին աղբիւր հենց
13 մին ակնից քաղցր և դառն կ՚բղխէ՞: Իմ եղբար-
քըս միթէ կարելի՞ է՝ որ թզենին ձէթի պտուղ
բերէ, կամ խաղողի որթը թուզ. այնպէս էլ աղի
14 գետինն չի կարող քաղցր ջուր տալ: Ո՞վ է ձե-
զանում իմաստուն և խելացի. թո՛ղ իրեն բարի
վարքովը ցոյց տայ իրեն գործքերն իմաստութեան
15 հեզութենովը: Բայց թէ որ նախանձ՝ և դառնու-
թիւն և հակառակութիւն ունենաք ձեր սրտերու-
մը, մի՛ պարծենաք և սուտ մի՛ ասէք ճշմարտու-
16 թեան դէմ: Սա այն իմաստութիւնն չէ՝ որ վե-
րեւից է վէր գալիս, բայց երկրաւոր՝ շնչաւոր և
17 դիւական: Ինչուոր՝ որտեղ որ քէն և նախանձ
կայ, այնտեղ անկարգութիւն՝ և ամեն չար բաներ
18 կան: Բայց վերին իմաստութիւնը, առաջ սուրբ
է, և յետոյ՝ խաղաղութիւն անող, հեզ՝ շատ հա-

ւանօղ՝ ողորմութենով և բարի պտուղներով լիքն,
առանց մեղադրանքի, առանց կեղծաւորութեան ։
19 Արդարութեան պտուղը խաղաղութենով է սերմ-
վում նորանց համար, որ խաղաղութիւն են անում ։

ԳԼ. Դ

Առաքեալին զգուշացնումը մարմնային ցանկութիւնից և հպարտութիւնից ։

1 Ո՞ր տեղից են պատերազմունքներ, և ո՞ր տեղից
կռիւներ ձեր միջումը. չէ՞ որ ձեր այդպիսի ցան-
կութիւններիցը՝ որ զօրացել են ձեր անդամներու-
2 մը ։ Ցանկանումէք՝ և չունիք. սպանումէք և նա-
խանձումէք՝ և կարօղանում չէք հասնիլ. պատե-
րազմումէք կռւումէք՝ և չունիք, [պատճառն որ չէք
3 խնդրում ։ Խնդրումէք՝ և չէք առնում, պատճա-
ռընոր չար կերպով էք խնդրում, որ էլ ձեր ցան-
4 կութիւններումը մաշէք ։ Շնա՛ցօղներ՝ չէք գիտում
որ այս աշխարհքիս սէրը թշնամութիւն է Աստու-
ծոյ դէմ. պատճառն՝ ով որ կամենայ աշխարհքս
5 սիրել, իրեն անձն Աստուծոյ թշնամի կանէ ։ Կամ
թէ կարծումէք՝ թէ Գիրքը զուր տե՞ղն է ասում.
թէ Հոգին որ մեզանում բնակվեցաւ՝ փափագումէ
6 նախանձուն. Բայց աւելի շնորհք է տալիս. որ նո-
րա համար էլ ասումէ. Տէրն ամբարտաւաններին
հակառակ է կենում, և խոնարհներին շնորհք տա-
7 լիս ։ Ուրեմն հնազանդվեցէ՛ք Աստուծոյն, և հա-
կառակ կացէ՛ք սատանային. և կ'փախչի ձեզանից ։
8 Մօտեցէ՛ք Աստուծոյ, և նա կ'մօտենայ ձեզ ։ Սըր-

բեցէ՛ք ձեռներդ՝ ո՛վ մեղաւորներ, և սրտերդ շի-
9 տա՛կ արէ՛ք՝ ո՛վ երկմիտներ ։ Զարչարվեցէ՛ք՝ սո՛ւգ
արէք և լա՛ց էլէք. ձեր ծաղրը թո՛ղ սուգ դառ-
10 նայ, և ձեր ուրախութիւնը տրտմութիւն ։ Խո-
նարհվեցէ՛ք Տէրի առաջին, և կ'բարձրացնէ ձեզ ։
11 Իրար մի՛ բամբասէք ե՛ղբարք. ով որ իրեն եղ-
բօրը կ'բամբասէ՝ կամ իրեն եղբօրը կ'դատէ, օ-
րէնքն է բամբասում՝ և օրէնքն է դատում. ապա
թէ որ օրէնքը դատես, էլ օրէնքի կատարող չես՝
12 այլ դատաւոր ։ Մի՛ն է օրէնք Դնօղ և Դատա-
ւոր, որ կարօղ է փրկել և կորցնել. դու ո՞վ ես
որ ընկերիդ դատումես ։
13 Ահա՛ կան որ ասումեն, թէ Այսօր և վաղը գը-
նանք այս անուն քաղաքը, այնտեղ մին տարի լի-
14 նինք, վաճառենք և շահվինք ։ Դուք որ չէք գի-
15 տում վաղվան օրը, ի՞նչպէսի բան է ձեր կեանքը.
ինչուոր մրկի նման էք, որ քիչմի երեւումէ՝ և
ապականվում. որ նորա տեղը պէ՛տք էր ասել՝ Թէ
որ Տէրը կամենայ՝ կապրինք, և այս բանս կամ
16 այն բանն կանենք ։ Ուրեմն պարծենո՞ւմէք ձեր ամ-
բարտաւանութենովը. ամէն այնպէսի պարծանք-
17 ները չարութիւն են ։ Ով որ բարին գիտենայ՝ և
չանէ, նորա համար մեղք է ։

ԳԼ. Ե

Հարստութեան ունայնութիւնը. համբերութիւն նեղութեան մէջ. աղօթքին զօրութիւնը ։

1 Ուրեմն եկէ՛ք ո՛վ հարուստներ՝ լա՛ց էլէք և ողբ
արէք այն թշուառութիւնների վերայ, որ պիտի

2 գան ձեզ վերայ ։ Պատճառնոր՝ ձեր մեծութիւնը
3 ո՛չ ինչ է , և ձեր շորերը ցեցի կերակուր ։ Եւ ձեր
արծաթն ու ոսկին ժանգոտված , և նորանց ժան-
գը կ'լինի ձեզ դէմ վկայ , և ձեր մարմինները կու-
տէ . որ պէս կրակի նման դիզեցիք յետին օրի հա-
4 մար ։ Ահա՛ այն մշակների վարձքն՝ որ ձեր յան-
դերումը բանումեն՝ ձեզ մօտ են . ձեզանից զրկ-
ածն աղաղակումէ , և հնձօղների աղաղակը հա-
5 սաւ զօրութեանց Տէրի ականջը ։ Երկրի վերայ փա-
փուկ կացաք՝ և զբօսանքի մէջ էլաք . ձեր սրտերը
6 գիրացրիք՝ ինչպէս մորթելոյ օրին համար ։ Զրկեցիք
սպանեցիք արդարին , որ ձեզ հակառակ չէր կե-
նում ։

7 Իմ՛ եղբարքս երկայնամի՛տ էլէք մինչեւ Տէրին
գալը . ահա մշակը երկայնամիտ էլած սպասումէ
երկրի պատուական պտղին՝ մինչեւ որ առնէ կա-
8 նուխ և ուշ հաւոքը ։ Երկայնամի՛տ էլէք դուք էլ՝
հաստատեցէ՛ք ձեր սրտերը . ինչուոր Տէրին գալը
9 մօտացել է ։ Մի՛ տրտմացնէք իրար ե՛ղբարք , որ
չ'դատվիք . ահա՛ Դատաւորը դռան առաջին կանգ-
10 նած է ։ Ե՛ղբարք՝ չարչարանքի և երկայնամիտ լի-
նելոյ օրինակ առէ՛ք ձեզ մարգարէներին , որ Տէ-
11 րին անունովը խօսեցին ։ Ահա համբերօղներին երա-
նի ենք տալիս . Յօբայ համբերութիւնը լսեցիք՝ և
Տէրի կատարումն տեսիք . ինչուոր Տէրը շատ գը-
թած է և ողորմած ։

12 Իմ՛ եղբարքս՝ ամեն բանից առաջ՝ երդում մի՛
ուտէք , ո՛չ երկնքովը , ո՛չ երկրովը , և ո՛չ մին ու-
րիշ երդումով , բայց թո՛ղ լինի ձեր այոն՝ այո ,
և չէն՝ չէ՛ . որ մին կեղծաւորութեան մէջ չընկնիք ։

13 Թէ որ ձեզանից մինը նեղութիւն քաշէ , թո՛ղ
աղօթք անէ . Բէ որ մինն ուրախանայ , թո՛ղ սաղ-
14 մոս ասէ ։ Թէ որ ձեզանից մինը հիւանդանայ՝ թո՛ղ
եկեղեցւոյ երէցներին կանչէն , և նորա վերայ աղօթք
15 անեն , իւղով օծեն Տէրի անունովը ։ Եւ աղօթքը
հաւատքով՝ կ'փրկէ այն տկարացածին , և Տէրը վեր
կ'կացնէ նորան . և թէ որ մին մեղք գործած լի-
16 նի՝ կ'թողվի նորան ։ Մեղքերդ խոստովանեցէ՛ք ի-
րար , և իրար վերայ աղօթք արէ՛ք , որ բժշկվիք .
պատճառնոր՝ արդարների աղօթքները շատ զօրա-
17 ւոր են օգնականութիւն անելոյ համար ։ Եղիան
մարդ էր մեզ պէս չարչարանքի ներքեւ լինօղ . և
աղօթք արաւ՝ և անձրեւ չեկաւ երկրի վերայ ե-
18 րեք տարի և վեց ամիս ։ Եւ դարձեալ աղօթք ա-
րաւ՝ և երկինքն անձրեւ տուաւ՝ և երկիրն իրեն
պտուղը բուսացրուց ։

19 Իմ՛ եղբարքս՝ թէ որ մինը ձեզանից մոլորվի ճըշ-
մարտութեան ճանապարհիցը՝ և մինը դարձնէ նո-
20 րան , թո՛ղ գիտենայ՝ թէ նա որ մեղաւորին իրեն
մոլորութեան ճանապարհիցը կ'դարձնէ , իրեն հո-
գին կ'փրկէ մահից՝ և մեղաց շատութիւնը կը
ծածկէ ։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

*Մխիթարութիւն և յորդորանք հանդերձեալ փառաց կեն-
դանի յուսովը ։*

1 ՊԵՏՐՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ, ընտրուած-
օտարականներին՝ որ ցրուած էք Պոնտացոց, Գա-
ղատացոց և Կապադովկացոց և Ասիացոց և Բիւ-
2 թանացոց երկրներումը, Հօր Աստուծոյ կանուխ գի-
տութեան պէս. Հոգւոյ սրբութենովը, Յիսուսի
Քրիստոսի հնազանդութեան և նորա արիւնը թա-
փելոյ համար. շնորհք և խաղաղութիւն շատանայ
ձեզ վերայ ։
3 Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուսի Քը-
րիստոսի Հայրը, որ իրեն առատ ողորմութենովը
մեզ կրկին ծնաւ դէպի կենդանի յոյսը. Յիսուսի
Քրիստոսի մեռելների միջից յարութիւն առնելո-
4 վը, Դէպի այն անապականելի և անարատ և ան-
թառամ ժառանգութիւնն՝ որ երկնքումն պահուած
5 է ձեզ համար. Որ Աստուծոյ զօրութենովը պահ-

ուած էք հաւատքով դէպի այն փրկութիւնն՝ որ
պատրաստուած էր, որ յայտնուի յետին ժամա-
6 նակներումը. Որ նորանով ուրախ պիտի լինիք
դուք, որ հիմիկ ինչպէս որ բանը բերումէ քիչ մի
7 տրտմած էք կերպ կերպ փորձանքներին մէջ. Որ
ձեր հաւատքի փորձութիւնն աւելի պատուական
գտնուի քան կորստական ոսկին. որ կրակով փորձ-
ուած է, որ գովութիւն և փառք և պատիւ լինի
8 Յիսուսի Քրիստոսի յայտնուելոյ ժամանակումն. Որ
նորան չ'տեսիք՝ և սիրեցիք. որ նորան էլ հաւա-
տացիք թէև հիմիկ չէք տեսնում, և ուրախ էք
9 այն անպատմելի և փառաւոր խնդութենովը Ձեր
հաւատքի կատարածն ընդունելով, այսինքն հոգւոց
10 փրկութիւնը. Որ այն փրկութեան համար ման ե-
կին և քննեցին մարգարէներն, որ մարգարէանում-
էին այն շնորհքին համար՝ որ լինելու էր ձեզա-
11 նում: քննումէին թէ ի'նչպէս՝ և ի'նչպէսի ժամա-
նակի համար Քրիստոսի Հոգին՝ որ նորանցում էր,
գուշակումէր. որ նա առաջուց վկայումէր Քրիստո-
սի չարչարանքներին համար, և նորանց հետեւող
12 փառքին համար. Որ նորանց յայտնուեցաւ էլ, որ
չէ թէ իրենց անձներին, այլ մեզ համար էին բա-
պաստաւորում այն բաներն՝ որ հիմիկ պատմեցան
ձեզ նորանց ձեռովն՝ որ աւետարանը քարոզեցին
ձեզ այն Սուրբ Հոգովն՝ որ երկնքից ուղարկուե-
ցաւ. որ հրեշտակներն էլ ցանկանումէին նորանց
գոնեա' մութ կերպով տեսնել:
13 Նորահամար ձեր մտքի մէջքը պնդելով զարթ-
նացած՝ բոլոր յուսով սպասեցէ'ք այն շնորհքին
որ կ'հանէ ձեզ՝ Յիսուսի Քրիստոսի յայտնութե-

14 նումը, հնազանդ որդոց պէս. որ չ՚կերպարանվիք՝
այն ձեր առաջին ցանկութիւններին պէս՝ որ ան-
15 գիտութեան ժամանակումն ունէիք: Բայց այն Սըր-
բոյն պէս՝ որ ձեզ կանչեց, դուք էլ սո՛ւրբ էլէք
16 ձեր ամեն ճանապարհներումը: Սորա համար գըր-
17 ված է, Սո՛ւրբ էլէք, ինչու որ ես սուրբ եմ: Եւ
թէ որ Հայր կանչէք նորան որ առանց երեսնայե-
լոյ է դատաստան անում ամեն մէկի գործքին
պէս, ապա ձեր օտարականութեան ժամանակումը
18 վախով գնացէ՛ք: Գիտացէ՛ք՝ որ չէ՛ թէ ապական-
վելի արծաթով և ոսկով փրկվեցաք ձեր փուչ հայ-
19 րենական սովորութենիցը. Բայց Քրիստոսի պատ-
ուական արիւնովը, ինչպէս մի անբիծ և անարատ
20 գառի. Որ առաջուց ճանաչված էր աշխարհքի
սկըզբիցն առաջ. և ժամանակների վերջումն երևե-
21 ցաւ ձեզ համար, Որ նորանով հաւատացիք Աս-
տուծոյն՝ որ նորան մեռելների միջիցն յարոյց, և
նորան փառք տուաւ, որ ձեր հաւատքն ու յոյսն
22 Աստուծոյ վերայ լինի: Որ ձեր անձները սըրբեցէք
հնազանդ լինելով ճշմարտութեան (Սուրբ Հոգով)
առանց կեղծաւորութեան եղբայրսիրութենով, որ
սուրբ սրտով ջերմեռանդութենով իրար սիրէք:
23 Որովհետև նոր ծնվել էք՝ ո՛չ թէ ապականվելի՝
բայց անապական սերմիցը, այսինքն Աստուծոյ կեն-
24 դանի և յաւիտենական խօսքովը: Պատճառնոր՝
ամեն մարմին խոտի պէս է, և մարդոյ ամեն փառ-
քը խոտի ծաղկին նման. խոտը ցամաքեցաւ՝ և ծա-
25 ղիկը թափվեցաւ: Բայց Տէրին խօսքը մնում է յա-
ւիտեան. որ այն խօսքն է, որ ձեզ աւետարան-
վեցաւ:

ԳԼ. Բ

կենդանի յուսոյ պտուղները հոգատակներից և սպա-
սաւորներից:

1 Զգեցէք ամեն չարութիւնը և ամեն խաբէութիւ-
նը, և կեղծաւորութիւնը, և նախանձը, և ամեն
2 չարախօսութիւնը, Եւ նոր ծնված երեխաների
պէս, ցանկացէ՛ք այն բանաւոր և մաքուր կաթին՝
3 որ նորանով աճէք դէպի փրկութիւնը: Թէ որ հա-
4 մըն առել էք՝ որ Տէրը քա՛ղցր է. Որ նորան մօ-
տեցել էք ինչպէս կենդանի քարին, որ թէև մարդ-
կանցից անարգված, բայց Աստուծոյ մօտ ընտրված
5 և պատուական է: Դուք էլ կենդանի քարերի
պէս շինվումէք հոգևոր տաճար, անարատ քահա-
նայութիւն՝ որ հոգևոր պատարագ մատուցանէք
Աստուծոյ ընդունելի՝ Յիսուսի Քրիստոսի ձեռովը.
6 Պատճառնոր իսկ գրքին մէջ էլ կայ, թէ Ահա՛
Սիօնումն՝ անկիւնի գլուխ ընտիր պատուական քար
եմ դնում, և ով որ նորան հաւատայ՝ չի՛ ամա-
7 չիլ: Ուրեմն ձեզ հաւատացեալներիդ պատուական
քար է. բայց անհաւատներին այն քարն որ շի-
նողներն անարգեցին, նա անկիւնի գլուխ էլաւ.
8 Եւ գլորվելոյ քար, և գայթակղվելոյ քար, որ
խօսքից ապստամբվածները գայթակղվումեն. որ
9 իսկ նորա համար գրված էին: Բայց դուք ընտիր
ազգ էք, թագաւորութիւն, քահանայութիւն,
սուրբ ազգ, սեպհական ժողովուրդ. որ ձեր առա-
քինութիւններն ընծայէք նորան, որ ձեզ խաւա-

10 րիցը կանչեց դէպի իրեն զարմանալի լոյսը ։ Որ դուք
ժամանակով ժողովուրդ չէիք․ բայց հիմիկ Աստու-
ծոյ ժողովուրդ․ որ ողորմած չէիք, բայց հիմիկ ո-
ղորմութիւն գտիք ։
11 Սի՛րելիներ՝ աղաչումեմ ձեզ, ինչպէս պանդուխտ-
ներ և օտարականներ հեռո՛ւ փախէք մարմնաւոր
ցանկութիւններից, որ հոգիների դէմ են կռու-
12 վում ։ Ձեր վարքը հեթանոսներին մէջ պարկեշտ
ցո՛յց տուէք, որ այն բանումն որ ձեզ չարագործի
պէս բամբասումեն, ձեր բարի գործքերը տեսնե-
լով փառաւորեն Աստուծոյն քննութեան օրումը ։
13 Հնազա՛նդ եղէք ամեն մարդկային կարգին, Տէրին
համար․ թէ թագաւորին՝ ինչպէս թէ մին աւելի
14 մեծաւորին․ Թէ դատաւորներին՝ ինչպէս նորանից
ուղարկվածներին չարագործները պատժելոյ՝ և բա-
15 րեգործներն գովելոյ համար․ Պատճառնոր Աստու-
ծոյ կամքն այսպէս է, որ բարի գործքերով պա-
պանձացնէք անխելք մարդկանց ադիտութիւնն ։
16 Որ ազատի պէս լինիք, և չէ թէ որ ազատութիւնն
ինչպէս չարութեան ծածկոց ունենաք․ բայց ինչ-
17 պէս Աստուծոյ ծառաներ ։ Ամենին պատուեցէ՛ք․
եղբայրսիրութիւնը սիրեցէ՛ք․ Աստուածանից վա-
խեցէ՛ք․ Թագաւորներին պատուեցէ՛ք ։
18 Ծառաները հնազանդ լինին տէրերին ամեն վա-
խով․ չէ թէ մինակ նորանց որ բարերար և հեզա-
հոգի են, բայց նորանց էլ որ հաստագլուխ են ։
19 Ինչուոր սա էլ ճշմարիտ շնորհք է Աստուածանից՝
թէ որ մինը բարի խղճմտանքով նեղութիւնների
20 համբերէ անիրաւ տեղը ։ Պատճառնոր՝ ի՞նչ բարի
բան է, թէ երբոր մեղանչէք՝ տանջվիք, և համ-

բերէք․ բայց թէ որ բարիք գործէք՝ չարչարվիք և
21 համբերէք, նա շնորհք է Աստուածանից ։ Ինչուոր
դուք իսկ այդ բանիդ մէջ կանչվեցաք․ պատճա-
ռըն որ Քրիստոս էլ ձեզ համար մեռաւ, և ձեզ
օրինակ թողեց՝ որ նորա գնացքին ետեւէն գնաք․
22 Որ մեղք չ'գործեց, և խաբէութիւն չ'գտաւ նորա
23 բերանումն․ Որ բամբասվումէր ինքն նորա տեղ
չէր բամբասում․ չարչարվումէր՝ և ոխ չէր պա-
հում, բայց իրաւունքով դատողի ձեռքն էր յանձ-
24 նում․ Որ մեր մեղքերն իրեն մարմնովը խաչափայ-
տին վերայ բարձրացրուց․ որ այն մեղքերից ա-
զատվինք, և նորա արդարութեան համար կենդա-
25 նի լինինք․ որ նորա խոցերովը բժշկվեցանք ։ Պատ-
ճառնոր՝ մոլորված ոչխարների պէս էիք․ բայց հի-
միկ դարձաք դէպի Հովիւը և ձեր Հոգիների Հոգս
քաշողը ։

ԳԼ․ Գ

*Ցուցայ պատուէրները ամուսնացելոց և նեղութեան մէջ լի-
նող քրիստոնէից կեանքումը․ Մկրտութեան ուխտը ։*

1 Այսպէս էլ կանայքը հնազանդ լինին իրենց
մարդկանցը․ որ եթէ նորանք ապստամբված լինին
խօսքից, կանանց վարվելովը՝ և առանց խօսքի էլ
2 շահվին, Ձեր պարկեշտ երկիւղածութենով վար-
3 վիը տեսնելով․ Որ նորանց զարդարանքը չ'լինի՛
դրսեւանց՝ ծամերի հիւսվածքներով, և ոսկով զար-
դարված ծամակալներով, կամ գեղեցիկ շորերով․
4 Բայց սրտի ծածկված մարդը՝ հեզ և հանդարտ

հոգւոյ անապականութենովը, որ Աստուծոյ առաջին
5 շատ պատուական է. ինչուոր այնպէս էլ հին ժա-
մանակով կանայքն՝ որ իրենց յոյսը Աստուծոյ վե-
րայ էին դրել՝ զարդարումէին իրենց անձներն՝ ի-
6 րենց մարդկանց հնազանդ լինելով: ինչպէս որ Սա-
ռան՝ էլ հնազանդ էր Աբրահամին, և իրեն տէր
էր կոչում նորան. որ դուք նորա որդիքներ էք ե-
լէլ. բարեգործ էին, և կասկած չունէին ոչ մին
վախից էլ:
7 Այնպէս էլ մարդիկը թո՛ղ իմաստութենով բը-
նակվին նորանց հետ. ինչպէս տկար ամանի՝ կա-
նանց պատիւ տան՝ և ինչպէս կենաց շնորհքի ժա-
ռանգ ընկերներին. որ ձեր աղօթքը չ'խափանվի:
8 Եւ վերջապէս՝ մին միտք ունենաք, մին կամք,
9 եղբայրասէր լինիք, քաղցրասիրտ, խոնարհ: Զը-
լինի՛ չարին տեղակ չար հատուցանէք, կամ բամ-
բասանքի տեղ բամբասանք. բայց նորա հակառա-
կըն՝ օրհնեցէ՛ք, ինչուոր դէպի այդ կանչվեցաք,
10 որ օրհնութիւնը ժառանգէք: Պատճառնոր՝ ով որ
կամենումէ կեանքը սիրել՝ և իրեն օրերը բարու-
թեան մէջ տեսնել, թո՛ղ իրեն լեզուն լուռ պահէ
որ չար չ'խօսի, և իրեն պռօշներն՝ որ խաբեբայու-
11 թիւն չ'խօսին: Չարից յե՛տ քաշվի, և բարի ա-
նէ. խաղաղութեան ման գայ, և նորա ետևէն
12 գնայ: ինչուոր Տէրի աչքերն արդարների վերայ
են, և նորա ականջները դէպի նորանց աղօթքը.
13 Տէրի երեսը չարագործներին վերայ է: Եւ ո՞վ է
նա՝ որ չարչարէ ձեզ, թէ որ դուք բարի անելոյն
14 հետեւօղ լինիք: Բայց թէ չարչարվիք էլ արդա-
րութեան համար, երանելի էք. միայն թէ նորանց

15 ահ տալուցը մի՛ վախենաք և մի՛ շփոթվիք, Բայց
այն մին Տէր Քրիստոսին ձեր սրտին մէջ սո՛ւրբ
պահեցէ՛ք. պատրա՛ստ էլէք պատասխան տալ ա-
մենին որ համար է խնդրում՝ այն ձեր յուսոյ կող-
16 մանէ: Միայն թէ խոնարհութենով և վախով
քաղցր վարք ունենաք. որ նորանով որ չար են
խօսում ձեզանից, ամօթով մնան նորանք՝ որ բամ-
բասումեն ձեր բարի վարմունքը Քրիստոսումը:
17 Պատճառնոր՝ աւելի լա՛ւ է՝ եթէ Աստուծոյ կամքը
կամենայ՝ բարեգործութեան համար չարչարվիլ,
18 քան թէ չարագործութեան համար: ինչուոր Քը-
րիստոս էլ մինանգամ մեղաց համար ձեզ վերայ
մեռաւ, Արդարը անարդարների վերայ. որ ձեզ մօ-
տացնէ Աստուծոյն. որ թէեւ մարմնով մեռաւ,
19 բայց հոգովը կենդանի է. Որ նորանով գնաց այն
20 հոգիներին էլ քարոզեց՝ որ բանտումն էին. Որ
նորանք ժամանակով ապստամբված էին՝ երբոր
Աստուծոյ երկայնմտութիւնը համբերումէր նորանց
Նոյի օրերումը, երբոր տապանը պատրաստվումէր.
որ նորանով քիչ՝ այսինքն՝ ութ հոգի ջրիցը պըր-
21 ծան. Որ ձեզ էլ այն օրինակին պէս կատարէ մը-
կըրտութիւնը. (չէ թէ մարմնոյ աղտն ձգելով՝
բայց բարի խղճմտանաց հաստատութիւնը դէպի
Աստուած, Յիսուսի Քրիստոսի յարութենովը:
22 Որ գնացել է երկինքը, և Աստուծոյ աջ կողմն է.
հրեշտակներն ու իշխանութիւնները և զօրութիւն-
ները հնազանդվելով նորան:

ԳԼ· Դ

Յորդորանք սրբութեան մէջ ջանք անել երբ որ նեղութիւններ կան ։

1 Քրիստոս՝ որ մարմնով մեզ համար չարչարվեցաւ,
դուք էլ այն մտքովը վառուեցէ՛ք ձեզ. պատճա-
ռըն որ՝ ով որ մարմնով չարչարվումէ, մեղք անե-
2 լուցը դադարումէ. Որ էլ ոչ թէ մարդկանց ցան-
կութիւններին պէս՝ բայց Աստուծոյ կամաց պէս
3 ապրի իրեն մնացած ժամանակը ։ Պատճառնոր բա-
ւական է որ այն անցած ժամանակը հեթանոսաց
կամքին պէս անցկացրէք, որ նորանք վարվումէին
գիճութիւններով ցանկութիւններով, գինովնա-
լով՝ անառակութիւններով՝ հարբեցութիւններով՝
4 անօրէն կռապաշտութիւններով. Որ նորա համար
զարմանումեն որ դուք չէք վարվում իրենց հետ
այն անառակ կեանքի անկարգութեան մէջ, և հայ-
5 հոյումեն. Որ նորանք պիտի պատասխան տան նո-
րան՝ որ պատրաստված է՝ դատաստան անել կեն-
6 դանիներին և մեռելներին. Որ սորահամար՝ մեռել-
ներին էլ խոստմունք տվված է, որ մարդոյ կողմա-
նէ մարմնով պիտի դատվին, բայց հոգով կենդա-
նի լինին Աստուծոյ կողմանէ ։
7 Ամեն բանի վերջը մօտացել է. ուրեմն պարկե՛շտ
8 կացէք՝ և արթո՛ւն էլէք աղօթքով ։ Ամենից առաջ՝
պի՛նտ սէր ունենաք իրար հետ. պատճառնոր սէրը
9 ծածկումէ մեղաց շատութիւնը ։ Օտարասէ՛ր էլէք
10 իրար հետ՝ առանց տրտնջելոյ ։ Ամեն մէկդ ինչպէս

որ մին շնորհք է ընդունել՝ նա իրար հաղորդեցէ՛ք,
տուէ՛ք. ինչպէս Աստուծոյ կերպ կերպ շնորհաց
11 լաւ տնտեսներ ։ Եթէ մինը խօսի՝ թո՛ղ խօսէ ինչ-
պէս Աստուծոյ հրաման. եթէ մինն ընծայէ՝ թող
ըլնէ ինչպէս այն զօրութենից որ Աստուած է շը-
նորհում. որ ամեն բանի մէջ Աստուած փառա-
ւորվի Յիսուսի Քրիստոսի ձեռովը. որ նորան ըլնէ
փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն ։
12 Սի՛րելիներ՝ օտար բան մի՛ համարէք այն բոր-
բոքված նեղութիւնն՝ որ ձեզ փորձելոյ համար կը
լինի, իբր թէ մին օտար բան է պատահում ձեզ ։
13 Բայց ուրա՛խ էլէք ինչպէս Քրիստոսի չարչարանացը
մասնակից էլածներ, որ նորա փառքի յայտնու-
14 թեան ժամանակումը ցնծալով ուրախանաք ։ Ապա
եթէ նախատվէք էլ Քրիստոսի անունին համար,
երանելի էք. պատճառնոր փառաց և զօրութեան
անունն ու Աստուծոյ Հոգին հանգչումէ ձեզ վե-
15 րայ ։ Չ՚լինի՛ որ ձեզանից մինը չարչարվի ինչպէս
սպանող, կամ ինչպէս գող, կամ ինչպէս չարա-
գործ, կամ ինչպէս ուրիշի ապրանքի աչք դնող.
16 Ապա թէ ինչպէս քրիստոնեայ չարչարվի՝ թո՛ղ չա-
մաչէ, բայց փա՛ռք տայ Աստուծոյն այս անունո-
17 վըս. Ինչուոր ժամանակն է՝ որ դատաստան սկսի
Աստուծոյ տանիցը. բայց թէ որ առաջ մեզանից,
ապա ի՞նչ պիտի լինի նորանց վերջն՝ որ Աստուծոյ
18 աւետարանին չ՚հաւանեցին ։ Եւ թէ որ արդարը
դժուար կապրի, ապա ամբարիշտն ու մեղաւորը
19 ո՞րտեղ պիտի գտնվի ։ Սորահամար նորանք՝ որ
Աստուծոյ կամաց պէս չարչարվումեն, թո՛ղ հա-
ւատարիմ Ստեղծողին պա՛հ տան իրենց հոգիները
բարեգործութիւններ անելով ։]

ԳԼ. Ե

Երէցների, երիտասարդների և ընդհանուր քրիստոնէից պարտականութիւնները ։

1 Ուրեմն երէցներին աղաչում եմ՝ ինչպէս մին երեց-
ընկեր՝ և Քրիստոսի չարչարանքներին վկայ. և էլ
այն նոր գալու յայտնուելու փառքին մասնակից ։
2 Արածացրէ՛ք Աստուծոյ հօտն որ ձեզ մօտ է. որ
վերակացու լինիք՝ ո՛չ թէ ակամայ, այլ յօժար
կամքով Աստուծոյ կամքին պէս, ո՛չ թէ պիղծ
3 շահասիրութենով այլ յօժարութենով. Ո՛չ թէ
ինչպէս թեմերին վերայ տիրապետելով այլ հօտին
4 օրինակ լինելով. Որ երբոր Հովուապետը կերևի,
այն անթառամ փառաց պսակն ընդունիք ։
5 Այսպէս էլ դուք ե՛րիտասարդներ՝ հնազա՛նդ-
էլէք ծերերին. ամենքն իրար հետ խոնարհութիւն
ունենան. պատճառնոր Աստուած ամբարտաւան-
ներին հակառակ կայ, և խոնարհներին շնորհք է
6 տալիս ։ Խոնարհվեցէ՛ք Աստուծոյ հզօր ձեռին տակ,
7 որ ձեզ բարձրացնէ ժամանակներով ։ Ձեր բոլոր
հոգսը նորա վերայ ձգեցէ՛ք, ինչուոր՝ նա՛ է որ
հոգս է անում ձեզ համար ։
8 Արթո՛ւն էլէք՝ հսկո՛ւմ արէք. ինչուոր ձեր ո-
սոխ թշնամին՝ սատանան առիւծի պէս գոռումէ՝
ման է գալիս և պտրտում թէ ո՛րին կուլ տայ.
9 Որ հաւատքով հաստատված՝ հակառակ կենաք նո-
րան. գիտացէ՛ք որ այդ չարչարանքներդ ձեր եղ-
բարներն էլ իրենց անձներումը քաշեցին այս աշ-
խարհքիս մէջ ։

10 Եւ ամեն շնորհքի Աստուածը, որ ձեզ կանչեց
իրեն յաւիտենական փառքի մէջ Քրիստոսով Յի-
սուսով, որ մին քիչ նորա չարչարանքին մասնա-
կից էլաք, նա ձե՛զ զօրացնէ՛, կարօղացնէ, հաս-
11 տա՛տ անէ ։ Նորան իշխանութիւն և փառք յա-
ւիտեանս. ամէն ։
12 Սիղուանոս հաւատարիմ եղբօր ձեռո՛վ՝ ինչպէս
որ կարծումեմ՝ փոքր 'ի շատէ գրեցի ձեզ, որ յոր-
դորեմ և այս բանիս համար վկայութիւն տամ՝
թէ սա է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որ դուք
13 նորանում հաստատված կանգնած էք ։ Ողջո՛յն է
տալիս ձեզ՝ ձեզ հետ ընտրված եկեղեցին՝ որ Բա-
14 բիլոնումն է. և իմ որդի Մարկոսը ։ Իրար ողջո՛յն
տուէք սուրբ համբուրով. խաղաղութիւն ձեզ ա-
մենիդ հետ՝ որ Քրիստոս Յիսուսումն էք. ամէն ։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հաւատքին պտուղները և հաստատ հիմը սուրբ գրոց մէջ։

1 ՍԻՄՈՆ Պետրոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ և
առաքեալ, ձեզ որ մեզ հետ հաւասար պատուա-
կան հաւատքին հասիք՝ մեր Աստուծոյ և փրկիչ
2 Յիսուսի Քրիստոսի արդարութեամբը, Շնորհք և
խաղաղութիւն շատանայ ձեզ վերայ Աստուծոյ և
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութեամբը,
3 Ինչպէս որ Նորա աստուածային զօրութիւնը շը-
նորհեց մեզ այն ամեն բան՝ որ կեանքին և աստ-
ուածապաշտութեան համար պէտք է. Նորա գի-
տութեամբը, որ մեզ կանչեց դէպի փառքն ու վա-
4 յելչութիւնը. Որ նորանցով շատ մեծ և պատուա-
կան աւետիքներ են տուած մեզ. որ նորանցով
մասնակից լինինք աստուածային բնութեանը՝ աշ-
խարհքի ցանկութիւններից և ապականութիւննե-
5 րից յետ փախչելով։ Եւ իսկ սորա համար՝ ամեն

ջանք արե՛ք, որ ձեր հաւատքումդ ընծայէք առա-
քինութիւն, և առաքինութեամբը գիտութիւն,
6 Եւ գիտութեամբը ժուժկալութիւն, և ժուժկա-
լութեամբը համբերութիւն, և համբերութեամբը
7 աստուածպաշտութիւն, Եւ աստուածպաշտու-
թեամբը եղբայրսիրութիւն, և եղբայրսիրութեամբը
8 սէր։ Եթէ այս բաները ձեր անձներումդ պահէք՝ և
միշտ սորանց հետեւիք, որ դատարկ և անպտուղ
չե՛ն թողիլ ձեզ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գի-
9 տութեամբը։ Բայց նա՝ որ այս բաները իրեն հետ
չունի, կոյր է և կարճատես. և մոռացել է իրեն
10 առաջին մեղքերից սրբվիլը։ Սորա համար ե՛ղբարք՝
աւելի ջա՛նք արէք որ ձեր կոչումն ու ընտրութիւնը
հաստատ պահէք բարի գործքերով. պատճառնոր՝
այսպէս անելով ոչ մին ժամանակ չէք մեղանչիլ։
11 Ինչուոր այսպէս առատութեամբ կ՚տվվի ձեզ՝ որ
մտնէք մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի յա-
ւիտենական արքայութիւնը։
12 Նորա համար միշտ պատրաստ եմ որ ձեզ յի-
շացնեմ սորանց համար՝ Թէև գիտումէք և հաս-
13 տատված էք՝ այս եկած ճշմարտութեանումն։ Պատ-
ճառնոր իրաւունք եմ համարում, որ դեռ քանի
որ մարմնոյս մէջ եմ՝ յիշացնելով զարթնացնեմ
14 ձեզ։ Գիտումեմ որ շուտով պիտի ինձանից հա-
նեմ իմ մարմինս. ինչպէս որ մեր Տէր Յիսուս Քը-
15 րիստոսը ցոյց տուաւ ինձ։ Եւ ջանք եմ անում և
շտապում միշտ յորդորել ձեզ, որ իմ աշխարհ-
քից դուրս գալուցն ետեւ՝ այս բաները յիշէք։
16 Պատճառնոր՝ մենք ո՛չ թէ սուտումուտ հնարված
բաների հետեւելով ցոյց տուինք ձեզ մեր Տէր

Յիսուսի Քրիստոսի զօրութիւնը և գալը. այլ իսկ
մենք ինքներս աչքով տեսինք նորա մեծութիւնը,
17 Որ Աստուածանից և Հօրիցը փառք և պատիւ ա-
ռաւ, երբոր այն մեծվայելչութեան փառքիցն այն-
պիսի ձայն եկաւ. Թէ Դա՛ է իմ սիրելի Որդին՝
18 որ դորան հաւանել եմ: Եւ այս ձայնս՝ որ եր-
կնքիցն եկաւ՝ մենք ինքներս լսեցինք. որ իսկ նո-
19 րա հետ այն սուրբ սարումն էինք: Եւ մարգա-
րէական շատ հաստատ խօսքերն էլ ունինք. որ ե-
թէ սորանց միտք անէք՝ լա՛ւ կանէք. ինչպէս մին
ճրագի՝ որ լոյս տայ մութ տեղին մէջ, մինչեւ որ
ցերեկը լուսանայ, և արուսեակը ծագի ձեր սրտե-
20 րումը: Բայց առաջ սա պէ՛տք է գիտենաք. որ ա-
մեն մարգարէութիւն իրեն գրվածքի մեկնութիւնը
21 չունի: Պատճառնոր՝ ո՛չ թէ մարդկանց կամքին
պէս բնաւ մին ժամանակ տրվաւ մարգարէութիւն,
բայց Սուրբ Հոգուցն շարժված՝ խօսեցին Աստու-
ծոյ մարդիկը:

ԳԼ. Բ

Մոլորեցուցիչների, նոցա չար վարուց և նոցա պատժի մասին:

1 Սուտ մարգարէք էլ կային այն ժողովրդին մէջ,
ինչպէս որ ձեր մէջն էլ պիտի սուտ վարդապետ-
ներ լինին. որ ներս պրծած՝ կորստական հերձուա-
ծողութիւններ կ'մտցնեն. ուրանումեն այն Տէրն
որ իրենց գնեց՝ և իրենց վերայ շուտահաս կորուստ
2 են բերում: Եւ շատ մարդիկ կ'հետեւին նորանց
անառակութիւններին. որ նորահամար ճշմարտու-

3 թեան ճանապարհը կ'հայհոյվի: Եւ ագահութե-
նով իրենց մտքից հնարված խօսքերով ձեզ կը
խաբեն. որ նորանց դատաստանին ոչ մին ժա-
մանակ դատարկ չի կենալ, և նորանց կորուստը
զուր չի համնիլ:
4 Ինչուոր եթէ Աստուած մեղանչող հրեշտակնե-
րին չ'խնայեց, բայց խաւարի կապանքով ձգեց
5 տարտարոսը՝ և պահել տուաւ որ դատվին, Եւ ա-
ռաջին աշխարհքին էլ չ'խնայեց. բայց մինակ Նո-
յին որ ութերորդն էր՝ այն արդարութեան քարոզ-
չին պահեց աշխարհքի ջրհեղեղից, որ ամբարիշտ-
6 ներին վերայ ածեց, Եւ Սոդոմայոց և Գոմորայոց
քաղաքները մոխիր դարձնելով՝ դատաստան արաւ,
որ նորանով յետոյ եկող ամբարիշտներին օրինակ էր
7 դնում, Եւ փրկեց արդար Ղովտին՝ որ անկարգ
8 գիճութեան վարմունքներովը ձանձրացել էր. Ին-
չուոր այն արդարը նորանց մէջ բնակվելով որ աչ-
քովը տեսաւ և ականջովը լսեց, օրէցօր իրեն սուրբ
հոգին տանջումէր նորանց անօրէն գործքերովը:
9 Տէրը գիտումէ աստուածապաշտներին փրկել փոր-
ձանքից, և անօրէններին պահել դէպի դատաս-
տանի օրն՝ որ տանջվին:
10 Մանաւանդ նորանց՝ որ մարմնոյ պիղծ ցանկու-
թիւններին ետեւէն են գնացած. որ տէրութիւնն
անարգումեն, անամօթներ, յանդուգներ, որ չեն
11 վախում փառքը հայհոյել: Թէեւ հրեշտակներն որ
զօրութենով և կարօղութենով աւելի մեծ են նո-
րանցից, հայհոյանքի դատաստանը չեն բերում նո-
12 րանց վերայ Տէրի առաջին. Այլ սորանք ինչպէս
անխօս անասուններ՝ որ իրենց բնութեան պէս ա-

ւերվելու և ապականվելու համար են ծնված, հայ-
հոյումեն այն բաներն որ չեն գիտում, և իրենց ա-
13 պակ նութենովը կապականվին, Անիրաւութեան
վարձքովը տանջված. որ նորանք ցանկութիւն են
համարում այս օրվան փափկութիւնը. որ պղծու-
թեան հետևող պղտոր, և իրենց խաբեբայութե-
նովը փափկացած են, և ձեր հացկերութեան ընկեր
14 են լինում: Պոռնիկների նման աչքեր ունին, որ
մեղքից չեն դադարիլ. խաբումեն թեթևամիտ-
ների անձները. որ սրտեր ունին ագահութենով
15 բանված՝ անէծքի որդիք. Որ շիտակ ճանապարհը
թողած՝ մոլորվեցան. Բեօրեան Բաղաամի ճանա-
պարհին հետևելով անիրաւութեան վարձքը սի-
16 րեցին. Որ իրեն անօրէնութեանը յանդիմանող
առացաւ այն անխօս էշին. որ մարդու ձայնովը խօ-
սելով արգելեց այն մարգարէի անօրէնութիւնը:
17 Այսպէսիններն անջուր աղբիւրներ են, և մրրիկ
քամուց քշված ամպեր. որ խաւարի թանձր մթու-
թիւնը նորանց համար պահված կայ յաւիտեանս.
18 Որ մեծ մեծ դատարկ բաներ խօսելով գիճութիւն-
ներով մարմնոյ անառակ ցանկութիւններով խա-
բումեն նորանց, որ ճշմարտապէս փախչումեն նո-
րանցից. որ մոլորութեանց մէջն են ման գալիս:
19 Նորանց ազատութիւն են խոստանում, և իրենք
ապականութեան ծառաներ են. ինչուոր ինչ բա-
20 նով որ մինը յաղթվի, նորան էլ ծառայ է: Պատ-
ճառնոր՝ եթէ աշխարհքի պղծութիւններիցը փա-
խան՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութենովը,
և կրկին նորանում շաղախված պարտավվին,
21 նորանց վերջը չար կ'լինի քան թէ առաջինը: Ին-

չուոր լա՛ւ էր նորանց՝ որ ընաւ չ'ճանաչէին արդա-
րութեան ճանապարհը, քան թէ որ ճանաչեցին,
և յետ քաշվեցան այն սուրբ պատուիրանքի՛ն որ
22 տվաւ նորանց, Որ նորանց լաւ յարմար է գալիս
իմաստութեան այն ճշմարիտ առակը, թէ Շունն
կրկին դառնումէ դէպի իրեն փսխածը, և լուաց-
ված խոզը ցեխին մէջ թավալվումէ:

ԳԼ. Գ

Վերջի ժամանակների ծաղր անօղները. Քրիստոսի գալուստը և արժանաւոր պատրաստութիւն նորա համար:

1 Սի՛րելիներ՝ սա երկրորդ թուղթն է՝ որ գրումեմ
ձեզ. որ սորանով ձեր հաստատ միտքներդ զարթ-
2 նացնեմ յիշելու համար. Որ յիշէք այն խօսքերն
որ առաջուց ասված են սուրբ մարգարէներիցը՝ և
ձեր առաքեալներիցը՝ այն Տէրի և փրկչի պատուի-
3 րանքները: Բայց առաջ սա գիտացէ՛ք, որ յետին
օրերումը՝ բանի տեղ չ'դնօղ, ծաղրանօղ մարդիկ
կ'գան, որ իրենց ցանկութեանց պէս կ'վարվին,
4 Եւ կասեն՝ Ո՞ւր է նորա գալու աւետիքը. ինչուոր
նորանից ետև որ հարքը վախճանվեցան՝ ամեն բան
ճիշտ այնպէս կենումէ մնում աշխարհքի ստեղծա-
5 գործութեան սկզբից ետև: Բայց նորանք՝ որ
սա են ուզում՝ այն բանը մոռացել են, թէ եր-
կինքն սկզբից էլաւ, և երկիրս ջրից, և ջրով
6 հաստատվեցաւ՝ Աստուծոյ խօսքովը: Նորահամար
այն հին աշխարհքը՝ մին ժամանակ ջրհեղեղով ա-
7 պականված կորաւ: Եւ հիմիկ երկինքը և երկիրս

իսկ այն խօսքովը կացած ամբարված են. կրակի
համար պահված մինչեւ դատաստանին օրը, և ամ-
8 բարիշտ մարդկանց կորուստը: Եւ սա էլ ձեզանից
ծածուկ չ'լինի' սի'րելիներ, թէ Տէրին առաջին մին
օր հազար տարոյ պէս է, և հազար տարին ինչպէս
9 մին օր: Տէրը չի' ուշացնիլ աւետիքն' ինչպէս որ
մինքանիսն ուշ են կարծում, բայց երկայնամիտ է
լինում ձեզ վերայ. պատճառնոր չի' կամենում որ
մինը կորչի, այլ ամենքն ապաշխարութեան հաս-
10 նեն: Բայց Տէրին օրը գողի պէս կ'գայ. որ նորա-
նում երկինքը սաստիկ ձայնով կանցանէ, և տա-
րերքը կրակով վառված կ'հալվին, և երկիրն էլ և
11 ամեն բաներն էլ' որ նորանում գտնվին: Ուրեմն
երբոր այս ամենն այսպէս կ'հալվի, ի՞նչպէսի պէտք
է գտնվիք դուք' որ սուրբ և աստուածապաշտ կար-
12 գով պահէք, Եւ ջա'նք անէք հասնէք Տէրի գալու-
օրին, որ նորանում երկինքը կրակով այրված կը
քանդվին. և տարերքը կրակ ընկած կ'հալվին:
13 Բայց նորա խոստմունքին պէս, նոր երկնքի և նոր
երկրի ենք մօտիկ տալով սպասում. որ նորանցում
արդարութիւն է բնակվում:
14 Սորահամար սի'րելիներ' սորանից սպասելով ջա'նք
արէք' որ առանց պղծութեան և անարատ գտնվիք
15 նորա առաջին խաղաղութեան մէջ: Եւ Տէրի եր-
կայնամիտ լինելը փրկութիւն համարեցէ'ք. ինչպէս
որ մեր սիրելի եղբայր Պօղոսն էլ' այն աստուածա-
նից իրեն տրված իմաստութեան պէս' գրեց ձեզ:
16 Ինչպէս որ ամեն թղթերումն էլ խօսումէ այս բա-
ներիս համար. որ նորանցում մին քանի դժուար
հասկանալու բաներ կայն. որ ուսմունք չ'գիտօղնե-

րըն ու թեթեւամիտները նորանց կամքով ծռում-
են, ինչպէս որ ամեն գրքերն էլ' իրենց անձները
17 կորցնելոյ համար: Ուրեմն սի'րելիներ' դուք բանը
հասկացօղների պէս զգո'յշ կացէ'ք. որ չ'լինի թէ
անաւակ մոլորութենով շաղաղված' վէր ընկնիք
18 այդ ձեր հաստատութենիցդ: Աճեցէ'ք մեր Տէր և
Փրկիչ Յիսուսի Քրիստոսի շնորհքումն ու գիտու-
թենովը. Նորան ըլնէ փառք հիմիկ էլ' և մինչեւ
յաւիտենական օրն էլ. ամէն:

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Բանն' Որդին Աստուծոյ իբրեւ կեանք և լոյս. լուսոյ մէջ լինել:

1 Նա որ սկզբիցն էր, որ նորանցից լսեցինք, որ նո-
րան իսկ մեր աչքերովս տեսինք. որ նորա վերայ
մօտիկ տուինք, և մեր ձեռները դիպան կենաց բա-

2 նին վերայ ։ (Եւ կեանքը յայտնուեցաւ մեզ, և
տեսինք, և վկայումենք, և պատմումենք ձեզ յա-
ւիտենական կենաց համար, որ Հօր մօտն էր՝ և ե-
3 րեւեցաւ մեզ ։) Նա որ տեսինք և լսեցինք՝ պատ-
մումենք ձեզ, որ դուք էլ հաղորդութիւն ունե-
նաք մեզ հետ. և մեր հաղորդութիւնը լինի Հօր
4 հետ՝ և Նորա Որդի Յիսուսի Քրիստոսի հետ ։ Եւ-
այս գրումենք ձեզ, որ ձեր ուրախութիւնը կա-
տարեալ լինի ։

5 Եւ այս է այն աւետիքն՝ որ Նորանից լսեցինք՝ և
պատմումենք ձեզ. թէ Աստուած լոյս է, և ընաւ
6 մին խաւար չ'կայ Նորանում ։ Եթէ ասենք՝ թէ
Հաղորդութիւն ունինք Նորա հետ, և խաւարի մէջ
ման գանք, սուտ ենք ասում՝ և ճշմարտութիւնը
7 չենք անում ։ Բայց եթէ լուսոյ մէջ ման գանք՝
ինչպէս որ Նա լոյս է, ապա հաղորդութիւն ունինք
իրար հետ. և Նորա Որդւոյ Յիսուսի Քրիստոսի ար-
8 իւնը մեզ սրբումէ ամեն մեղքից ։ Եթէ ասենք թէ
Մենք մեղք չունինք, մեր անձներս ենք խաբում.
9 և ճշմարտութիւն չ'կայ մեզանում ։ Ապա եթէ մեր
մեղքը խոստովանվինք, Նա՛ հաւատարիմ է և ար-
դար՝ որ մեր մեղքը թողէ մեզ, և մեզ ամեն ա-
10 նիրաւութենից սրբէ ։ Եթէ ասենք՝ թէ Մենք ը-
նաւ մեղք չ'գործեցինք, սուտ ենք անում Նորան,
և Նորան խօսքը մեզանում չէ ։

ԳԼ· Բ

Քրիստոս քաւութիւն մեղաց. հաւատքի նշանները. զգուշանալ աշխարհասիրութիւնից ։

1 Ի՛մ որդեակներս, այս եմ գրում ձեզ՝ որ չ'մե-
ղանչէք, և եթէ որ մինը մեղանչէ, բարեխօս ու-
նինք Աստուծոյ մօտ Յիսուս Քրիստոսին՝ այն ար-
2 դարին և անարատին ։ Եւ Նա՛ է մեր մեղաց քա-
ւութիւնը. և ո՛չ թէ մինակ մերին՝ բայց ամեն
3 աշխարհքի էլ ։ Եւ սորանով ենք գիտում՝ որ ճա-
նաչեցինք Նորան, թէ որ Նորա պատուիրանքները
4 պահենք ։ Ով որ ասէ՝ թէ ճանաչեցի Նորան՝ և
Նորա պատուիրանքները չ'պահէ, սո՛ւտ է՝ և ճըշ-
5 մարտութիւն չ'կայ Նորանում ։ Բայց Նա՝ որ Նորա
խօսքը պահումէ, շիտակ է՝ որ Աստուծոյ սէրը Նո-
րանում կատարեալ է. սորանով ճանաչումենք որ
6 Նորանում ենք ։ Ով որ ասումէ թէ Նորանում եմ
բնակվում. այնպէս պէ՛տք է գնայ, ինչպէս որ Նա
գնաց ։

7 Սի՛րելիներ՝ չէ թէ մին նոր պատուիրանք եմ
գրում ձեզ, բայց այն հին պատուիրանքն՝ որ ըս-
կըբից ունէինք, և հին պատուիրանքն այն խօսքն
8 է՝ որ լսեցիք ։ Դարձեալ նոր պատուիրանք եմ գը-
րում ձեզ՝ որ ճշմարիտ է Նորանում և ձեզանում.
ինչուոր խաւարն անցաւ, և ճշմարիտ լոյսն ճիշտ
9 հիմիկ է երեւում ։ Ով որ ասէ թէ լուսոյն մէջ է՝
և իրեն եղբօրն ատէ, սուտ է՝ և դեռ հիմիկ խա-
10 ւարին մէջ է ։ Նա՝ որ իրեն եղբօրը սիրումէ, լու-

լոյսն մէջ է բնակվում, և գայթակղութիւն չ'կայ
11 նորանում։ Բայց նա՝ որ իրեն եղբօրն ատում է,
խաւարումն է, և խաւարի մէջ է ման գալիս, և
և չի՛ գիտում թէ ո՛ւր է գնում. ինչու որ խաւա-
րը կուրացրուց նորա աչքերը։
12 Գրում եմ ձեզ ո՛րդեակներ՝ պատճառնոր ձեր
մեղքերը թողված են ձեզ՝ նորա անունին համար։
13 Գրում եմ ձեզ հա՛րք՝ ինչու որ դուք ճանաչեցիք
նորան՝ որ սկզբից է. գրում եմ ձեզ ե՛րիտասարդ-
14 ներ՝ ինչու որ դուք յաղթեցիք չարին։ Գրեցի ձեզ
մանկունք՝ պատճառնոր դուք ճանաչեցիք Հօրը.
գրեցի ձեզ հա՛րք՝ պատճառնոր դուք ճանաչեցիք
նորան՝ որ սկզբից է. գրեցի ձեզ ե՛րիտասարդ-
ներ՝ ինչու որ դուք զօրացել էք, և Աստուծոյ խօս-
քը բնակվում է ձեզանում, և դուք յաղթեցիք չա-
15 րին։ Մի՛ սիրէք աշխարհքս, և ո՛չ էլ այն ամենն
16 որ աշխարհքիս մէջն է։ Թէ որ մինն աշխարհքին
սիրէ՝ Հօր սէրը նորանում չէ՛. պատճառնոր ամեն
ինչ որ աշխարհքումն է՝ մարմնոյ ցանկութիւն, և
աչքերի ցանկութիւն, և այս կեանքիս ամբարտա-
ւանութիւն. նա Հօրից չէ՝ բայց այս աշխարհքի-
17 ցըս է։ Եւ աշխարհքս անցանում է և նորա ցան-
կութիւնն էլ. բայց նա՝ որ Աստուծոյ կամքն է ա-
նում, մնում է յաւիտեան։
18 Ո՛րդեակներ՝ յետին ժամանակն է, և ինչպէս որ
լսեցիք՝ թէ Նեռն գալու է, և ճիշտ հիմիկ շատ
նեռներ են եկել, որ սորանով կարող ենք իմանալ՝
19 թէ յետին ժամանակն է։ Մեզանից դուրս գնա-
ցին, բայց մեզանից չէին. պատճառնոր՝ եթէ մե-
զանից լինէին, ապա մեզ մօտ կ'մնային. բայց որ

յայտնի լինի՝ թէ նորանք ամենքը մեզանից չէին
20 Եւ դուք օծութիւն ունիք այն Սրբից, և ամեն
21 բան գիտումէք։ Չ'գրեցի ձեզ՝ իբր թէ ճշմարտու-
թիւնը չէք գիտում, բայց որ գիտումէք նորան.
և որ ամեն ստութիւն այն ճշմարտութենից չէ՛։
22 Բայց ո՞վ է սուտ, եթէ ո՛չ նա՝ որ ուրանում է
թէ Յիսուսը չէ՛ Քրիստոսը. իսկ նա՛ է Նեռն, որ
23 ուրանում է Հօրը և Որդուն։ Ամեն ով որ Որդուն
ուրանում է, Հօրն էլ չի՛ ընդունում. նա որ Որ-
24 դուն դաւանում է, Հօրն էլ ընդունում է։ Դուք՝
նա որ լսեցիք սկզբից, թո՛ղ բնակվի ձեզանում.
պատճառնոր՝ թէ որ բնակվի ձեզանում նա՝ որ ըս-
կզբից լսեցիք, դուք էլ կ'բնակվիք Որդուն և Հօ-
25 րը մէջ։ Եւ սա է աւետիքն՝ որ նա աւետարանեց
26 մեզ՝ այսինքն յաւիտենական կեանքը։ Սա գրեցի
27 ձեզ՝ որ չ'լինի՛ թէ մինը մոլորացնէ ձեզ։ Եւ դուք
այն օծութիւնն, որ նորանից ընդունեցիք՝ կ'բնակ-
վի ձեզանում. և պէտք չէ՛՝ որ մինը սովորցնէ ձեզ.
բայց ինչպէս որ նորա օծութիւնը սովորցնում է ձեզ
ամեն բանի համար. այսպէս էլ ճշմարիտ է՝ և սուտ
չէ՛. և ինչպէս որ նա սովորցրուց ձեզ՝ կացէ՛ք նո-
րանում։
28 Եւ հիմիկ ո՛րդեակներ՝ կացէ՛ք նորանում. որ
երբոր նա կ'յայտնվի, համարձակութիւն ունենանք,
և չամաչենք նորանից՝ նորա գալոյ ժամանակումը։
29 Եթէ գիտումէք՝ որ նա արդար է, կիմանաք թէ
ամեն ով որ արդարութիւն կանէ՝ նորանից է
ծնված։

ԳԼ. Գ

Հաւատացեալք՝ իբրեւ Աստուծոյ որդիք՝ սրբուեն իրենց ամեն մեղքից. սէր գործքով և ճշմարտութիւնով:

1 Տեսէ՛ք՝ թէ Հայրն ի՛նչպէսի սէր շնորհեց մեզ. որ
Աստուծոյ որդիք կոչվինք. սորահամար աշխարհքը
չի՛ ճանաչում մեզ, պատճառնոր նորան էլ չ'ճա-
2 նաչեց: Սի՛րելիներ՝ հիմիկ Աստուծոյ որդիք ենք,
և դեռ յայտնի չէ՝ թէ ի՛նչ պիտի լինինք. գի-
տումենք՝ թէ երբոր նա կ'յայտնվի՝ նորան նման
կ'լինինք, ինչուոր կ'տեսնենք նորան՝ ինչպէս որ է:
3 Եւ ամեն ով որ այս յոյս ունի իրենում, սըր-
4 բումէ իրեն անձն՝ ինչպէս որ նա սուրբ է: Ամեն
ով որ մեղք է գործում, նա անօրէնութիւն էլ է
5 անում, և մեղքն ինքն անօրէնութիւն է: Եւ գի-
տումենք՝ թէ նա նորահամար յայտնուեցաւ՝ որ
մեր մեղքերը վերառնէ. և նորանում մեղք չ'կայ:
6 Ամեն ով որ նորանում հաստատված է՝ չի՛ մեղան-
չում. և ամեն ով որ մեղանչումէ, ո՛չ տեսաւ նո-
7 րան՝ և ո՛չ ճանաչեց նորան: Մա՛նկունք՝ չ'լինի
թէ մինը ձեզ խաբէ. նա՝ որ արդարութիւն է ա-
նում, արդար է, ինչպէս որ նա՛ էլ արդար է:
8 Եւ նա որ մեղք է անում՝ սատանայիցն է. ինչու-
որ սատանան սկզբիցը մեղանչումէ. նորահամար
յայտնուեցաւ Աստուծոյ Որդին՝ որ սատանայի
9 գործքերը քանդէ: Ամեն ով որ Աստուածանից է
ծնված՝ մեղք չի անում. ինչուոր նորա սերմն մը-
նումէ նորանում. և կարող չէ մեղանչել, պատ-

10 ճառնոր Աստուածանից է ծնված: Սորանով իրա-
րից յայտնի են Աստուծոյ որդիքը՝ և սատանայի
որդիքը.
Ամեն ով որ արդարութիւն չի անում՝ նա Աստ-
ուածանից չէ՛, և ո՛չ էլ նա՝ որ իրեն եղբօրը
11 չի սիրում: ինչուոր սա է այն պատուիրանքն՝ որ
12 սկզբիցը լսեցիք՝ որ պէտք է իրար սիրենք՝ Չէ՛ թէ
ինչպէս Կայէնն որ չարիցն էր՝ և իրեն եղբօրն ըս-
պանեց. և ինչո՞ւ համար սպանեց նորա՞. նորան
համար որ իրեն գործերը չար էին և եղբօրը բարի:
13 Մի՛ զարմանաք ե՛ղբարք, եթէ աշխարհքս ատէ
14 ձեզ: Մենք գիտումենք՝ որ մահիցը դէպի կեանքը
փոխվեցանք. պատճառնոր եղբարներին սիրումենք.
բայց ով որ չի սիրում եղբարներին, մահին մէջ
15 է մնում: Ամեն ով որ իրեն եղբօրն ատումէ՝ մար-
դասպան է. և գիտումէք՝ որ ամեն մարդասպան
յաւիտենական կեանքը չունի հաստատված իրա-
16 նում: Սորանով գիտացինք Աստուծոյ սէրը, որ
նա իրեն անձն դրաւ մեզ վերայ. և մենք էլ պէտք
17 է մեր եղբարց վերայ դնենք մեր անձներս: Նա՝ որ
այս աշխարհքիս ապրանքն ունենայ, և տեսնէ թէ
իրեն եղբայրը կարօտ է մին բանի, և իրեն գութը
փակէ նորանից, էլ ի՞նչպէս Աստուծոյ սէրը բը-
18 նակված կ'լինի նորանում: Ո՛րդեակներ՝ ո՛չ թէ
խօսքերով և լեզուներով սիրենք, այլ գործքով և
ճշմարտութենով:
19 Եւ սորանով ճանաչվումենք՝ թէ այն ճշմարտու-
թենիցն ենք. և նորա առաջի կանենք մեր սրտերի
20 քննութիւնը: Եթէ մեր սրտերը մեղադրեն մեզ,
բայց Աստուած մեր սրտերիցն էլ աւելի մեծ է՝ և

21 *ամեն բան գիտումէ ։ Սի՛րելիներ՝ եթէ մեր սրտերը*
չ՛մեղադրեն մեզ, համարձակութիւն ունինք Աս-
22 *տուծոյ առաջին, Եւ ինչ որ խնդրենք՝ կառնենք*
նորանից . պատճառնոր նորա պատուիրանքները
պահումենք, և այն բաներն՝ որ նորա առաջին հա-
23 *ճոյ են, անումենք ։ Եւ սա է նորա պատուիրանքն,*
որ հաւատանք նորա Որդւոյ Յիսուսի Քրիստոսի ա-
նուանին, և իրար սիրենք . ինչպէս որ նա պատուի-
24 *րանք տուաւ մեզ . Եւ նա՝ որ նորա պատուիրանք-*
ները պահումէ, նորանում հաստատված է՝ և նա
սորանում. և սորանից գիտումենք թէ բնակվումէ
մեղանում այն Հոգուցն՝ որ տուաւ մեզ ։

ԳԼ. Դ

Նշաններ որ նորանցով պէտք է փորձել սուտոցնողներին .
Աստուած սէր է ։

1 **Ս**ի՛րելիներ՝ *ամեն հոգւոյ մի՛ հաւատաք . բայց փոր-*
ձեցէ՛ք հոգիներն եթէ Աստուածանից են . պատ-
ճառնոր շատ սուտ մարգարէներ են եկել աշխարհք ։
2 *Եւ մենք սորանով ենք ճանաչում Աստուծոյ Հո-*
գին . ամեն հոգի որ Յիսուս Քրիստոսին մարմնով
3 *եկած է խոստովանում, նա Աստուածանից է ։ Եւ*
ամեն հոգի որ Յիսուս Քրիստոսին մարմնով եկած
չի խոստովանում, նա Աստուածանից չէ՛ . և սա
Նեռինն է, որ նորա համար լսեցիք թէ գալու է,
4 *և իսկ հիմիկ աշխարհքումն է ։ Դուք Աստուածա-*
նից էք ո՛րդեակներ, և յաղթեցիք նորանց . պատ-
ճառնոր՝ նա որ ձեղանում է՝ մեծ է, քան թէ

5 *նա՝ որ աշխարհքին մէջ է ։ Նորանք աշխարհքիցն*
են, նորահամար աշխարհքիցն են խօսում, և աշ-
6 *խարհքը լսումէ նորանց ։ Մենք Աստուածանից ենք.*
ով որ Աստուծոյն ճանաչումէ՝ լսումէ մեզ . և ով
որ Աստուածանից չէ՛՝ չի՛ լսում մեզ . սորանով
ենք ճանաչում ճշմարտութեան Հոգին՝ և խաբե-
բայութեան հոգին ։
7 *Սի՛րելիներ՝ իրար սիրենք, ինչուոր սէրն Աստուա-*
ծանից է . և ամեն ով որ սիրումէ՝ Աստուածանից
8 *է ծնված, և ճանաչումէ Աստուծոյն ։ Նա՝ որ չի*
սիրում, Աստուծոյն չի ճանաչում. ինչուոր Աս-
9 *տուած սէր է ։ Եւ սորանով Աստուծոյ սէրն երե-*
ւեցաւ մեր միջումն, որ Աստուած իրեն միածին
Որդին ուղարկեց աշխարհք, որ նորանով կենդանի
10 *լինինք ։ Սորանում է սէրն . որ ո՛չ թէ մենք սիրե-*
ցինք Աստուծոյն, բայց որ նա սիրեց մեզ, և իրեն
Որդին ուղարկեց մեր մեղքերը քաւելոյ համար ։
11 *Սի՛րելիներ՝ եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ,*
12 *ապա մենք էլ պէտք է իրար սիրենք ։ Ոչ մին ժա-*
մանակ մինը չի՛ տեսել Աստուծոյն . թէ որ իրար
սիրենք՝ Աստուած մեղանում է բնակվում, և նո-
13 *րա սէրը մեղանում կատարեալ է ։ Սորանով գի-*
տումենք որ մենք նորանում ենք բնակված՝ և նա
14 *մեղանում . որ իրեն Հոգուցը տուաւ մեզ ։ Եւ մենք*
տեսինք և վկայումենք, որ Հայրն իրեն Որդին ու-
15 *ղարկեց աշխարհքի Փրկիչ ։ Ով որ դաւանի՝ թէ*
Յիսուս է Աստուծոյ Որդին, Աստուած նորանում
16 *է բնակվում՝ և նա Աստուածանում ։ Եւ մենք*
հաւատացինք և ճանաչեցինք Աստուծոյ սէրն՝ որ
ունի մեզ վերայ . Աստուած սէր է, և ով որ սի-

րոյն մէջ է կենում Աստուծոյ մէջն է բնակվում,
17 և Աստուած նորանում է բնակվում։ Սորանում
է նորա սէրը կատարեալ մեզ հետ, որ համարձա-
կութիւն ունինք դատաստանի օրումը. պատճառն-
որ ինչպէս որ նա է՝ այնպէս էլ մենք ենք այս աշ-
18 խարհքումս։ Վախ չ'կայ սիրոյն մէջ. այլ կատար-
եալ սէրը հեռացնումէ վախին. ինչուոր վախը տան-
ջանք ունի. բայց նա՝ որ վախումէ, կատարեալ
19 չէ՛ սիրոյն մէջ։ Մենք սիրենք Աստուծոյն. պատ-
20 ճառնոր առաջ նա սիրեց մեզ։ Թէ որ մինն ասէ՝
թէ Սիրումեմ Աստուծոյն, և իրեն եղբօրն ատէ,
նա սուտ է. ինչուոր նա՝ որ իրեն եղբօրն որ տես-
նումէ՝ չի՛ սիրում, Աստուծոյն որ չի՛ տեսել՝ ի՞նչ-
21 պէս կարող է սիրել։ Եւ այս պատուիրանքս ու-
նինք նորանից, թէ նա որ Աստուծոյն սիրումէ՝
իրեն եղբօրն էլ սիրէ։

ԳԼ. Ե

Հաւատալ թէ Յիսուս է Աստուծոյ որդի և ճշմարիտ Աստուած։

1 Ամէն ով որ հաւատումէ՝ թէ Յիսուս է Քրիստո-
սը, Աստուածանից է ծնված. և ամէն ով որ ծը-
նօղին սիրումէ, նորանից ծնվածին էլ սիրումէ։
2 Սորանով ենք ճանաչում՝ թէ Աստուծոյ Որդին
սիրումենք, երբոր Աստուծոյն սիրենք, և նորա
3 պատուիրանքներն անենք։ Պատճառնոր Աստուծոյ
սէրը սա է, որ նորա պատուիրանքները պահենք.
4 և նորա պատուիրանքներն բնաւ ծանր չեն։ Ինչու-

որ՝ ամէն ով որ Աստուածանից է ծնված՝ յաղ-
թումէ աշխարհքին. և սա է յաղթութիւնն՝ որ
աշխարհքին յաղթումէ, այսինքն մեր հաւատքը։
5 Եւ ո՞վ է՝ որ յաղթումէ աշխարհքին, բայց միայն
նա՝ որ հաւատումէ, թէ Յիսուս Աստուծոյ Որ-
դին է։
6 Սա՛ է որ եկաւ ջրով և հոգով և արիւնով այս-
ինքն Յիսուս Քրիստոսն. ո՛չ թէ միայն ջրով, բայց
արիւնով և ջրով. և Հոգին է որ վկայումէ, որ
7 Հոգին է ճշմարտութիւնը։ Պատճառնոր երեք են
որ երկնքումը վկայումեն, Հայրն ու Բանը և Սուրբ
8 Հոգին. և այս երեքս մի են։ Եւ այս երեքս են որ
երկրումն են վկայում. հոգին, և ջուրը, և արիւ-
9 նը. և այս երեքս մի են։ Եթէ մարդկանց վկայու-
թիւնն ընդունումենք, ապա ուրեմն Աստուծոյ վը-
կայութիւնն աւելի մեծ է. սա է Աստուծոյ վը-
10 կայութիւնն, որ վկայեց իրեն Որդոյն վերայ։ Ով
որ հաւատումէ Աստուծոյ Որդոյն, այս վկայու-
թիւնս ունի իրեն անձնումը. ով որ չի հաւատում
Աստուծոյ Որդոյն, սուտ է անում նորան. պատ-
ճառնոր չի հաւատում այն վկայութեանն, որ Աս-
11 տուած վկայեց իրեն Որդոյ վերայ։ Եւ իսկ սա է
վկայութիւնն, որ Աստուած յաւիտենական կեան-
քը տուաւ մեզ. և այս կեանքս այն է՝ որ նորա
12 Որդոյ միջումն է։ Ով որ Որդոյն ընդունի, կեան-
քըն էլ կընդունի. և ով որ Աստուծոյ Որդոյն չըն-
դունի, կեանքն էլ չի՛ ընդունիլ։
13 Սա գրեցի ձեզ որ հաւատաք՝ թէ յաւիտենական
կեանքն ունիք, և էլ որ հաւատաք Աստուծոյ Որդոյ
14 անունին։ Եւ սա է այն համարձակութիւնն որ մենք

ունինք նորա մօտ, թէ ինչ որ նորա կամաց պէս
15 խնդրենք՝ կ՚լսէ մեզ: Եւ թէ որ գիտումենք՝ թէ մեր
խնդրվածքներին կ՚լսէ. ապա գիտումենք որ կառ-
նենք մեր խնդրվածքներն՝ որ խնդրումենք նորանից:
16 Թէ որ մինը տեսնէ՝ թէ իրեն եղբայրն մեղանչիլ է
էնպէսի մեղքով՝ որ դէպի մահն չէ, թո՛ղ խնդրէ Աս-
տուածանից՝ և կեանք կ՚տայ նորան՝ այսինքն նորան
որ մեղանչել է չէ թէ դէպի մահ. կայ մեղք՝ որ
մահու չափ է, նորա համար ես չե՛մ ասում որ
17 խնդրես: Ամեն անիրաւութիւն մեղք է. և կայ
18 մեղք որ մահու չափ է: Գիտումենք որ ամեն ով
որ Աստուածանից է ծնված՝ մեղք չի՛ գործում,
բայց նա՝ որ Աստուածանից է ծնված, իրեն ան-
19 ձըն պահումէ, և չարը չի մօտենում նորան: Գի-
տումենք որ մենք Աստուածանից ենք, և բոլոր աշ-
20 խարհք չարութեան մէջ է կենում: Եւ գիտում-
ենք որ Աստուծոյ Որդին եկաւ, և մեզ միտք տը-
ւաւ, որ ճշմարիտը ճանաչենք. և ճշմարտին մի-
ջումն ենք, այսինքն նորա Որդի Յիսուս Քրիստոսու-
մը. պատճառնոր նա ճշմարիտ Աստուած է՝ և յա-
21 ւիտենական կեանքն: Ո՛րդեակներ՝ ձեր անձներդ
պահեցէ՛ք կռապաշտութենիցը:

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՑ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

Մոլորութիւնից զգուշանալոյ համար խրատ:

1 ԵՐԷՑԻՍ կողմանէ ընտրեալ Կիւրիայիդ, և իրեն
որդեակներին՝ որ ես նորանց սիրումեմ ճշմարտու-
թենով, և ո՛չ թէ մինակ ես, բայց այն ամենքն
2 էլ որ ճշմարտութիւնը ճանաչել են. Այն ճշմար-
տութեան պատճառովն՝ որ մեզանում հաստատված
է, որ նա էլ ձեզ հետ լինի, և դուք յաւիտեան
3 մեզ հետ լինիք, Շնորհք, ողորմութիւն, խաղա-
ղութիւն Աստուած Հօրիցը, և Տէր Յիսուս Քրիս-
տոսից Հօր Որդուցը՝ լինի ձեզ հետ, ճշմարտու-
թենով և սիրով:
4 Շատ ուրախ էլայ, որ քո որդեակներիցդ գտի՝
որ ճշմարտութենով են գնում, այն պատուիրան-
5 քին պէս որ Հօրից առինք: Եւ հիմիկ աղաչումեմ
քեզ Կի՛ւրիա. իբր ո՛չ թէ մին նոր պատուիրանք
եմ գրում քեզ, այլ իսկ նա որ սկզբից ունէինք,
6 որ իրար սիրենք: Եւ սա է սէրն, որ նորա պատ-
ուիրանքներին պէս գնանք, և սա է պատուիրան-
քըն, որ ինչպէս որ լսեցիք սկզբից՝ այնպէ՛ս գը-

7 նոքա : Ինչուոր շատ մոլորացնողներ դուրս եկին աշ-
խարհքի մէջ. ով որ չի դաւանում Յիսուս Քրիս-
տոսին որ մարմնով է եկած, նա մոլորացնող է՝ և
8 նեռը : Զգո՛յշ կացէք անձներիդ՝ որ չ՚լինի թէ կոր-
ցնէք այն որ վաստակեցիք. բայց որ բոլոր վարձ
9 առնէք : Ամէն ով որ յանցանք գործէ, և չ՚կենայ
Քրիստոսի վարդապետութեանը մէջ, Աստուծոյն
չի ճանաչում. ով որ կենում է վարդապետութեա-
նը մէջ, նա՝ Որդոյն էլ և Հօրն էլ ընդունում է :
10 Թէ որ մինը ձեզ մօտ գայ և այս վարդապետու-
թիւնս չունենայ, մի՛ ընդունիք նորան ձեր տունը,
11 և ողջոյն մի՛ տաք նորան : Ով որ Ողջոյն տայ նո-
րան, մասնակից կ՚լինի նորա չար գործքերին :
12 Շատ բան ունէի ձեզ գրելոյ, բայց չ՚կամեցայ
թղթով և թանաքով գրել. պատճառնոր յոյս ու-
նիմ՝ որ ես ինքս գամ ձեզ մօտ, և բերանէ բերան
խօսիմ. որ մեր ուրախութիւնը կատարեալ լինի,
13 Ողջոյն են տալիս քեզ քո ընտրեալ քվոր որդիքը.
շնորհք լինի ձեզ հետ :

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ ԵՐՐՈՐԴ

Գայիոս ընդունում է եղբայրներին, իսկ Դիոտրեփէս արգելում է :

1 ԵՐԷՑԻՍ կողմանէ սիրելի Գայիոսին, որ ես սի-
2 րում եմ ճշմարտութենով : Սիրելի՛ քո ամեն բանի
յաջողութեան և առողջութեան համար աղօթք
եմ անում. ինչպէս որ քո անձնդ էլ յաջողու-
3 թեան մէջ է : Շատ ուրախ էլայ երբոր եղբարքն
եկին, և քո ճշմարտութեանդ վկայ էլան, ինչպէս
4 որ դու ճշմարտութենով գնումես : Էլ սորանից ա-
ւելի մեծ ուրախութիւն չունիմ, որ լսումեմ թէ
5 իմ որդեակներս ճշմարտութենով են գնում : Սի՛-
րելի՛ հաւատարմութենով ես գործում այդ ինչ որ
անումես եղբարներին, իսկ դա էլ օտարականնե-
6 րին կանես, Որ նորանք քո սիրոյդ վկայութիւն
տուին եկեղեցոյ առաջին. որ եթէ նորանց Աս-
տուծոյ արժանաւոր ճանապարհ ձգես, լա՛ւ կա-
7 նես : Ինչուոր Քրիստոսի անուանին համար դուրս ե-
կին, և ոչ մին հեթանոսից մին բան չեն առնում :
8 Ուրեմն պէտք է որ մենք ընդունինք այնպէսիներին,
որ օգնական լինինք ճշմարտութեան գործոյն :

9 Մի՛ն բան գրեցի եկեղեցւոյն. բայց Դիոտրեփէս
որ նորանց մէջումն առաջ ընկնողն է, մեզ չի ըն-
10 դունում։ Սորա համար թէ որ գամ՝ նորա գործքե-
րը կ՚յիշեմ՝ որ նա անումէ. շատախօսութեան չար
խօսքերով նեղացնումէ մեզ. և սորանով էլ բա-
ւական չի լինում, ինքն չի ընդունում եղբարնե-
րին, և նորանց էլ՝ որ ընդունումեն, արգելումէ.
11 և եկեղեցւոյ միջիցն էլ հանումէ։ Սի՛րելի՛ մի՛ լի-
նեք նման չարին՝ բայց բարոյն. ինչու որ ով որ
բարի է գործում՝ Աստուածանից է. և ով որ չա-
րիք է գործում՝ նա ո՛չ մին ժամանակ Աստուծոյն
12 չի՛ տեսաւ։ Դիմետր ջուր վկայութիւն ունի ամե-
նիցն, և եկեղեցուցն էլ, և իսկ ճշմարտութենիցն
էլ, և մենք էլ վկայումենք. և դու գիտումես որ
մեր վկայութիւնը ճշմարիտ է։
13 Շատ բան ունէի քեզ գրելոյ, բայց չեմ կամե-
14 նում թղթով և թանաքով գրել. Պատճառնոր՝
յոյս ունիմ որ իսկ մօտ ժամանակումն քեզ տես-
15 նեմ, և բերանէ բերան քեզ հետ խօսիմ։ Խաղա-
ղութիւն լինի՛ քեզ հետ. ողջոյն են տալիս քեզ
սիրելիքը. ողջոյն տուր մեր սիրելիներին ամեն մե-
կին իրեն անունովը։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

*Սուրբ հաւատքի մէջ և սուրբ կեանքով ապրելոյ հա-
մար խրատ։*

1 ՅՈՒԴԱՅ Յիսուսի Քրիստոսի ծառայ, և Յակով-
բայ եղբայր. ձեզ կանչուածներիդ՝ որ Աստուած հօ-
րից սիրված է՛ք, և Յիսուս Քրիստոսումն պահ-
2 ուած և ընտրված։ Ողորմութիւն, խաղաղութիւն
և սէր շատանայ ձեզ վերայ։
3 Սի՛րելիներ՝ որովհետև ամեն ջանք արի որ գրեմ
ձեզ մեր հասարակաց փրկութեան համար. հարկ
էլաւ ինձ որ գրեմ ձեզ՝ և աղաչեմ, որ ջանք ա-
նէք այն հաւատքին վերայ՝ որ մինանգամ սրբե-
4 րին պահ տվվաւ։ Պատճառնոր մինքանիսն ներս
պրծան մոլին, որ նորանք առաջուց հաստատված
էին այս դատաստանիս համար. ամբարիշտներ՝ որ
մեր Աստուծոյ շնորհքն՝ անկարգութիւն դարձրին.
և այն մին միակ (Աստուծոյն և) Իշխանին, և մեր
5 Տէր Յիսուս Քրիստոսին ուրացան։ Սորա համար իմ
կամքս աս է՝ որ ձեր միտքը բերեմ ձեզ որ այս ա-
մեն բաներս գիտումէք. թէ Աստուած մինանգամ

ժողովուրդը փրկեց Եգիպտոսից․ և երկրորդ ան-
6 դամ անհաւատներին կորցրուց ։ Եւ այն հրեշտակ-
ներն՝ որ իրենց իշխանութիւնը չ՚պահեցին, այլ
իրենց բնակութիւնը թողին, յաւիտենական կա-
պանքներով խաւարի մէջ պահեց մեծ օրի դա-
7 տաստանին համար ։ Ինչպէս որ Սոդոմ և Գոմոր,
և նորանց չորս կողմի քաղաքները, որ իսկ այն
կերպով պոռնկվեցան իրենց ընկերների մարմիննե-
րին հետ, օրինակի համար առաջներս դրվան՝ յա-
8 ւիտենական կրակի դատաստան ընդունելով ։ Ճիշտ
այնպէս էլ սորանք իբր քնով թմրացած՝ մարմինը
պղծումեն․ տէրութիւններին անարգում, և փառ-
9 քը հայհոյում ։ Մինչ որ Միքայէլ հրեշտակապետն
երբոր բանսարկու սատանայի հետ հակառակվելով
պատասխան էր տալիս Մովսէսի մարմնոյն համար,
չ՚համարձակվեցաւ հայհոյանքին դատաստան ա-
10 նել, բայց ասաց՝ Տէրը քեզ պատժէ․ Բայց սո-
րանք այն բանն որ չեն իմանում՝ հայհոյումեն․ և
ինչ որ էլ անխօս անասունի պէս բնութենով գի-
11 տումեն՝ նորանցով կապականվլին ։ Վա՜յ է նորանց,
ինչու որ Կայէնի ճանապարհովը գնացին․ և Բա-
ղաամի մոլորութեան պէս չար վարձքի շահին հե-
տևեցին, և Կորխայ հակառակութեան պէս կո-
12 րան ։ Սորանք ատելի են՝ քաղցրախօս խաբեբայք,
որ իրենց ցանկութիւններին են հետևում․ իրենց
սէրը ցոյց տալիս խաբեբայութենով, ձեզ հետ
ուրախութեան ընկեր են լինում, և առանց վախի
իրենց անձներն արածացնում․ անջուր ամպեր քա-
միներով անդադար տատանված․ պտուղ կորցնող
անպտուղ ծառեր, երկու անգամ մեռած՝ արմատից

13 պոկված, ծովու կատաղած ալիքներ, որ միշտ
իրենց անձների ամօթն են փրփրացնում․ մոլորված
աստեղներ, որ յաւիտենական խաւարի անդունդը
նորանց համար է պահված ։
14 Ենոքն էլ՝ որ եօթներորդն է Ադամից սորանց հա-
մար մարգարէացաւ՝ և ասաց․ Ահա՛ Տէրը հազա-
15 րաւոր սուրբ հրեշտակներով եկաւ, Որ դատաստան
անէ ամենին, և ամբարիշտներին յանդիմանէ իրենց
գործքերին համար՝ որ նորանք ամբարշտութենով
գործեցին․ և ամէն կսկիծ և ծանր խօսքերին հա-
մար՝ որ ամբարիշտներն ու մեղաւորները նորանից
16 խօսեցին ։ Սորանք են տրտնջօղներ և փափաօղներ,
որ իրենց անձների ցանկութիւնների պէս են գը-
նում․ և նորանց բերաններն ամբարտաւան բաներ
են խօսում․ երեսպաշտութիւն են անում շահի
17 համար ։ Բայց դուք սի՛րելիներ՝ յիշեցէ՛ք մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի առաքելոց առաջուց ասած խօս-
18 քերը․ Ինչու որ ասումէին ձեզ՝ թէ Յետին ժամա-
նակներումն անարգօղ մարդիկ կ՚լինին, որ իրենց
ամբարշտութեան ցանկութեանց ետևէն կ՚գնան ։
19 Սորանք են ջոկված հեռացած շնչաւորներ, որ
20 Հոգի չունին ։ Բայց մենք սի՛րելիներ՝ մեր անձներս
սուրբ հաւատքին վերայ շինենք Սուրբ Հոգովը,
21 աղօթք անենք, Որ անձներս Աստուծոյ սիրովը պա-
հենք․ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ողորմութեանը
մտիկ տալով՝ յաւիտենական կենացը հասնելոյ հա-
22 մար ։ Եւ մինքանիսին որ դատապարտվելոյ վերայ
23 են, խրատ տուէք ։ Եւ մինքանիսին ապրեցրէ՛ք՝
կրակից դուրս քաշելով․ և մինքանիսին վերայ խըղ-
ճացէ՛ք՝ որ վախով դատապարտէք այն շորն էլ՝ որ
մարմնից կեղտոտված է ։

24 Եւ Նորան՝ որ կարող է անարատ և անկեղտ պահել
ձեզ, և իրեն փառաց առաջին կանգնացնել ա-
25 ուանց վախի ցնծութենով. Այն մին Աստուծոյն՝
և մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսին լինի՛ փառք,
մեծութիւն, զօրութիւն և իշխանութիւն ամեն
յաւիտեաններից առաջ, և հիմիկ և ամեն յա-
ւիտեաններումն. ամէն:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Եօթը ճրագակալներին և աստղերին խորհուրդը:

1 ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի յայտնութիւնն՝ որն որ Ա-
ստուած տուաւ իրեն՝ որ ցոյց տայ իրեն ծառանե-
րին՝ այն որ շուտով պիտի լինի. և իրեն հրեշտա-
կի ձեռովն ուղարկեց ցոյց տուաւ իրեն Յօհաննէս
2 ծառային. Որ վկայեց Աստուծոյ բանին, և Յի-
սուսի Քրիստոսի վկայութեանն՝ որ տեսաւ. Նա որ

3 էր, և որ նորանից ետեւ պիտի լինէր: Երանի՜ նո-
րան՝ որ կարդայ կամ լսէ այս մարգարէութեան
խօսքերը, և պահէ նա՝ որ սորանում գրված է.
ինչու որ ժամանակս մօտացել է:
4 Յօհաննէսից եօթն եկեղեցիներին՝ որ Ասիայի մէջ
են, շնո՛րհք լինի ձեզ հետ՝ և խաղաղութին Ա-
ստուածանից՝ Նորանից որ է. և որ էր, և որ գա-
լու է, և եօթն Հոգիներից, որ նորա աթոռի ա-
5 ռաջիցն են. Եւ Յիսուս Քրիստոս՝ այն հաւատա-
րիմ վկայից, որ մեռելների միջից առաջինեկն
է, և երկրի թագաւորների իշխան. որ մեզ սի-
րեց, և մեր մեղաց կապանքներն արձակեց իրեն
6 արիւնովը, Եւ մեզ արաւ թագաւորներ և քա-
հանաներ Աստուծոյ և իրեն Հօր համար. որ նո-
րան փառք և զօրութիւն՝ հիմիկ և միշտ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:
7 Ահա՛ գալիս է ամպերով. և ամեն աչքերը կ'տես-
նեն նորան, և երկրի ծայրերը, և նորանք էլ որ խո-
ցեցին նորան. և երկրի ամեն ազգերը կոծ կանեն
8 նորա վերայ. իրաւի՝ ամէն: Ե՛ս եմ Ալֆան՝ և ես
եմ Բէն, ասումէ Տէր Աստուած, նա որ է՝ և որ
էր՝ և որ գալու է՝ Ամենակարօղը:
9 Ես Յօհաննէս ձեր եղբայր և հաւասար ընկեր
նեղութեան՝ և արքայութեան և համբերութեան
որ Քրիստոս Յիսուսումն է. ես Պատմոս ասված
կղզիումն էի՝ Աստուծոյ բանին համար, և Յիսուսի
10 Քրիստոսի վկայութեանը համար: Եւ Հոգի էլաւ
ինձ վերայ կիրակի օրը. և իմ ետեւէս մին մեծ
ձայն լսեցի ինչպէս փողի, որ ասումէր ինձ. Ես եմ
11 Ալֆան և Օն, առաջինը և վերջինը: Ինչ որ տես-

նումես՝ գրէ՛ մին գրքի մէջ, և տա՛ր տանել այն
եօթն եկեղեցիներին որ Եփեսոսի և Զմիւռնիայի,
և Պերգամոնի, և Թիւատրիայի, և Սարդիկէի,
12 և Փիլադելփեայի, և Լաւոդիկեայի մէջ են։ Եւ
դարձայ որ այն ձայնն տեսնեմ՝ որ ինձ հետ խօ-
սումէր. և երբոր դարձայ՝ եօթն ոսկի ճրագակալ
13 տեսի։ Եւ այն եօթն ճրագակալների միջումն (մին
կար) Որդւոյ մարդոյ նման, որ երկար վերարկու ու-
նէր հագած մինչև ոտների պճղները, և ծծերի մօտ
14 ոսկի գօտի կապած. Եւ նորա գլուխն ու մազերը
բրդի պէս՝ և ձիւնի պէս սպիտակ. և նորա աչքե-
15 րը կրակի բոցի պէս. Եւ նորա ոտները կարմրած
ազնիւ պղնձի պէս որ փռան մէջ կրակով կարմրած
16 է, և նորա ձայնը շատ ջրերի ձայնի պէս. Եւ ի-
րեն աջ ձեռին մէջ եօթն աստղներ ունէր, և նո-
րա բերանից երկու բերանի սուր էր դուրս գա-
լիս, և նորա երեսն արեգական պէս ճառագայ-
17 թած էր երեւում։ Եւ երբոր տեսի նորան՝ մեռա-
ծի պէս վէր ընկայ նորա ոտների առաջին. և իրեն
աջ ձեռն ինձ վերայ դրաւ՝ և ասաց ինձ. Մի՛ վա-
18 խենար, ես եմ առաջինը և վերջինը. Եւ կեանքը,
և ես է՛ Նա՛ որ մեռայ, և ահա՛ կենդանի եմ հի-
միկ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.
19 և ունիմ մահի և դժոխքի բանալիքները։ Գրէ՛ ինչ
որ տեսնումես՝ և ինչ որ է, և ինչ որ յետոյ լի-
20 նելու է։ Այն եօթն աստղների խորհուրդն որ իմ
աջ ձեռիս մէջ տեսիր, և այն եօթն ոսկի ճրագա-
կալները. եօթն աստեղները՝ եօթն եկեղեցիների հը-
րեշտակներն են, և եօթն ճրագակալները՝ եօթն
եկեղեցիներն են։

ԳԼ. Բ

*Եփեսացոց, Զմիւռնացոց, Պերգամայի և Թիւատիրի ե-
կեղեցոյ նամակներ։*

1 Եփեսացոց եկեղեցոյ հրեշտակին գրէ՛. Այսպէս է
ասում այն կարօղն՝ որ եօթն աստեղներն ունի ի-
րեն աջ ձեռումը, և եօթն ոսկի ճրագակալներին
2 մէջ ման է գալիս։ Գիտումեմ քո գործքերդ՝ և
քո վաստակներդ և քո համբերութիւնդ. և որ չա-
րերին չես համբերում, և փորձեցիր նորանց որ ի-
րենց առաքեալ են ասում՝ և չե՛ն, և Նըրայեցի՝
3 և սուտ են։ Եւ իմ անունիս համար համբերեցիր,
և նեղութիւն քաշեցիր և աշխատեցիր (և չ'թու-
4 լացար)։ Բայց սա եմ ասում քեզ՝ որ քո առա-
5 ջին սէրդ թողիր։ Յիշէ՛ Բէ ո՞րտեղից վէր ընկար՝
և զղջա՛, և քո առաջին գործքերդ արա. ապա
թէ չէ՝ ես կ'գամ շուտով, և քո ճրագակալդ կը
6 շարժեմ իրեն տեղիցը՝ թէ որ չապաշխարես։ Բայց
այս բանս արա՝ որ Նիկօլայոսի գործքերն ատես,
7 նա որ ես էլ ատումեմ։ Ով որ լսելոյ ականջ ու-
նի՝ թո՛ղ լսէ ինչ որ Սուրբ Հոգին ասումէ եկեղե-
ցիներին. Ով որ յաղթումէ՝ նորան կենաց փայ-
տից ուտել կ'տամ, որ Աստուծոյ դրախտին մէ-
ջըն է։

8 Եւ Զմիւռնացոց եկեղեցոյ հրեշտակին գրէ՛.
Այսպէս է ասում Նա՝ որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ
9 վերջ, որ էլաւ մեռեալ՝ և կենդանացաւ. Տեսի քո
գործքերդ և նեղութիւնդ և աղքատութիւնդ.

բայց քո աղքատութիւնդ մեծութիւն կ'լինի. և
նորանց հայհոյանքն որ իրենց համար ասումեն թէ
Հրեայ են՝ և չեն, բայց սատանայի ժողովք են։
10 Մի՛ վախենար այն բաներիցն որ պիտի չարչարվիս.
ահա՛ սատանան պատրաստված է որ ձեզանից բան-
տի մէջ ձգէ, որ փորձվիք, և տասն օր նեղութիւն
կունենաք. հաւատարիմ կաց մինչև մահ, և կե-
11 նաց պսակը կ'տամ քեզ։ Ով որ լսելու ականջ ու-
նի՝ թո՛ղ լսէ ինչ որ Սուրբ Հոգին ասումէ եկեղե-
ցիներին. ով որ յաղթումէ, երկրորդ մահիցը վը-
նաս չի՛ քաշիլ։
12 Եւ Պերգամայի եկեղեցոյ հրեշտակին գրէ՛. Այս-
պէս է ասում նա՝ որ երկու բերանի սուրը սրած
13 ունի. Տեսի քո գործքերդ, և որ դու այնտեղն
ես բնակվում՝ որտեղ որ սատանայի աթոռն է.
և իմ անունս ունիս, և իմ հաւատքս չուրացար՝
այն օրն, որ իմ Անթիպաս վկաս հաւատարիմ է-
լաւ. (ինչուոր ամեն հաւատացեալ՝ իմ հաւատա-
րիմ վկաս է,) որ ձեր միջումն սպանվեցաւ՝ որտեղ
14 որ սատանան է բնակվում։ Բայց քեզ դէմ քիչ
բան ունիմ. պատճառնոր քեզ մօտ կայ Բաղաամի
վարդապետութիւնն՝ որ Բաղակին սովորցրուց, որ
գայթակղութիւն դնէ Իսրայէլի որդոց առաջին,
որ նորանք կուռքի մատաղ ուտեն՝ և պոռնկութիւն
15 անեն։ Այսպէս էլ դու՝ Նիկողայեցոց վարդապե-
16 տութիւնն ունիս՝ որ ես ատումեմ։ Ուրեմն ապաշ-
խարէ՛, ապա թէ չէ՝ կ'գամ շուտով, և կ'կռվիմ
17 նորանց հետ իմ բերանիս սրովը։ Ով որ լսելու ա-
կանջ ունի՝ թո՛ղ լսէ ինչ որ Հոգին ասումէ եկե-
ղեցիներին. Ով որ յաղթումէ՝ այն պահված մա-

նանայիցն ուտել կ'տամ նորան, և սրբութեան
գիր կ'տամ նորան. և այն գրի վերայ նոր անուն
գրված, որ ո՛չ մինը չի՛ գիտում, բայց նա՝ որ
առնումէ։
18 Եւ Թիւատիրի եկեղեցոյ հրեշտակին գրէ՛. Այս-
պէս է ասում Աստուծոյ Որդին, որ նորա աչքերն
կրակի բոցի նման են, և նորա ոտները մաքուր
19 զտված պղնձի պէս. Տեսի քո գործքերդ, և սէրդ,
և հաւատքդ, և քո ծառայութիւնդ, և քո համ-
բերութիւնդ. որ քո վերջին աշխատանքդ շատ է
20 քան թէ առաջինը։ Բայց քեզ շատ բան եմ ա-
սում. նա որ Յեզաբէլ կնկանը թոյլ տուիր՝ որ
մարգարէ էր ասում իրեն, և իմ ծառաներիս մո-
լորութիւն է սովորցնում, որ պոռնկութիւն անեն
21 և կուռքի մատաղ ուտեն։ Եւ ժամանակ տուի նո-
րանց՝ որ ապաշխարեն իրենց պոռնկութեան հա-
22 մար, և չապաշխարեցին։ Ահա՛ ես նորան փռան
մէջ կ'ձգեմ, և նորա գործընկերներն էլ որ նա նո-
րանց հետ շնացաւ՝ մեծ մեծ նեղութիւնների մէջ.
23 թէ որ չապաշխարեն իրենց գործքերիցը։ Եւ նո-
րանց որդիքները մահով կ'սպանեմ. և ամեն եկե-
ղեցիները կ'ճանաչեն՝ թէ ես եմ որ քննումեմ ե-
րիկամունքները և սրտերը, և տալիս եմ ձեզ ա-
24 մեն մէկիդ իրեն գործքերի չափովը։ Բայց ձեզ ա-
սումեմ՝ որ Թիւատիրումն էք, և այս վարդապե-
տութիւնս չունիք. որ սատանայի խորութիւններն
էլ չ'ճանաչեցիք, ինչպէս որ նորանք խօսումեն.
25 Ձեզ վերայ ծանրութիւն չեմ ձգիլ։ Բայց նա որ
26 ունիք՝ պահեցէ՛ք մինչև ես գամ։ Եւ ով որ յաղ-
թումէ՝ և իմ գործքերս պահում մինչև վերջը,

27 նորան իշխանութիւն կ'տամ ազգերի վերայ. Եւ
երկաթէ գաւազանով կ'հովուէ նորանց, և բրուտի
28 ամանի պէս կ'փշրէ նորանց։ ինչպէս որ ես էլ իմ
Հօրիցս ընդունեցի, և կ'տամ նորանց առաւօտու
29 աստղը։ Ով որ ականջ ունի՝ թո՛ղ լսէ ինչ որ Հո-
գին ասումէ եկեղեցիներին։

ԳԼ. Գ

Նամակը Սարդիացոց, Փիլադելփիայի և Լաւոդիկեայի
եկեղեցիներին ։

1 Եւ Սարդիացոց եկեղեցւոյ հրեշտակին գրէ՛. Այն-
պէս է ասում նա՝ որ Աստուծոյ եօթն Հոգիքն,
և եօթն աստղերն ունի. Տեսի քո գործքերդ,
ինչու որ կենդանւոյ անուն ունիս՝ և մեռած ես։
2 Արթո՛ւն կաց, և սորանից ետև հաստատի՛ր, որ
(շուտով) պիտի մեռնիս. պատճառ որ քո գործ-
3 քերդ կատարեալ չ'գտի Աստուծոյ առաջին։ Ու-
րեմն միտքդ բե՛ր թէ ինչպէս լսեցիր, և պահէ՝ ու
ապաշխարէ. ապա թէ որ չ'զարթնանաս՝ կ'գամ
գողի պէս. և ո՛չ ով չիմանալ իմ գալս քեզ
4 մօտ։ Բայց մի քիչ անուններ էլ ունիս Սարդիա-
ցոց մէջ, որ իրենց շորերը չ'կեղտոտացրին, և սպի-
տակ շորերով են մանգալիս՝ որ նորան արժանի է-
5 լան։ Ով որ յաղթումէ՝ այսպէս սպիտակ կ'հագ-
նի. և նորա անունն կենաց գրքից չի՛ ջնջիլ. և
կ'դաւանեմ նորա անունն իմ Հօրս առաջին՝ և
6 նորա հրեշտակների առաջին։ Ով որ լսելու ականջ
ունի՝ թո՛ղ լսէ ինչ որ Հոգին ասումէ եկեղեցիներին։

7 Եւ Փիլադելփիայի եկեղեցւոյ հրեշտակին գրէ՛.
Այսպէս է ասում այն Սուրբը, ճշմարիտը, որ
Դաւթի բանալիքներն ունի. բանումէ՝ և ո՛չ ով
չ'կայ որ փակէ, և փակումէ՝ և ո՛չ ով չ'կայ որ
8 բանայ։ Տեսի քո գործքերդ. ահա՛ քո առաջիդ
դը բացված դուռն դրի, որ նորան ո՛չ ով կարող
չէ փակել, ինչու որ քիչ զօրութիւն ունիս, և իմ
9 խօսքերս պահեցիր, և իմ անունս չուրացար։ Ահա
ես սատանայի ժողովքը քեզ եմ տալիս, որ իրենց
համար ասումեն թէ Հրէայ են՝ և չեն, բայց սուտ
են ասում. ահա՛ կանեմ նորանց՝ որ գան քո ոտ-
ներիդ առաջին երկրպագութիւն անեն, և ճանա-
10 չեն թէ ես սիրեցի քեզ. Որովհետև իմ համբե-
րութեանս խօսքը պահեցիր, ես էլ քեզ կ'պահեմ
փորձանքի ժամումը. որ պիտի գայ բոլոր աշխարհ-
քին վերայ որ փորձէ ամենքն, որ երկրի երեսի վե-
11 րայ բնակված են։ Ահա՛ կ'գամ շուտով, բռնէ՛
այն որ ունիս, որ չ'լինի թէ մինն առնէ քո պը-
12 սակդ։ Ով որ յաղթումէ՝ սիւն կանեմ նորան իմ
Աստուծոյս տաճարումը, և էլ դուրս չի՛ գնալ.
և նորա վերայ կ'գրեմ իմ Աստուծոյ անունն, և
իմ Աստուծոյս քաղաքի անունը, այսինքն նոր Ե-
րուսաղէմինն՝ որ երկնքիցը պիտի վէր գայ իմ Աս-
13 տուածանիցս, և իմ նոր անունս։ Ով որ ականջ
ունի թո՛ղ լսէ ինչ որ Հոգին ասումէ եկեղեցի-
ներին։
14 Եւ Լաւոդիկեայ եկեղեցւոյ հրեշտակին գրէ՛.
Այսպէս է ասում Ամէնը՝ այն հաւատարիմ և
ճշմարիտ վկան, Աստուծոյ ստեղծուածների Սկիզ-
15 բը։ Գիտումեմ քո գործքերդ՝ որ ո՛չ ցուրտ ես՝ և

ո՛չ տաք. պէտք էր որ դու ցուրտ լինէիր՝ և կամ
16 տաք: Բայց դու գոլ ես՝ և ո՛չ տաք և ո՛չ ցուրտ,
17 որ պիտի փսխվիս իմ բերանիցս: Պատճառ որ ա-
սում ես թէ հարուստ եմ՝ և մեծացայ, և ո՛չ մին
բանով կարօտ չեմ. և չե՛ս գիտում՝ թէ դու ո-
18 ղորմելի ես՝ և ծոյլ՝ աղքատ, մերկ՝ և կոյր, Ու-
րեմն ես խրատ տամ քեզ. գնէ՛ ա՛ռ ինձանից կը-
րակումը փորձված ոսկի, որ հարստանաս, և սպի-
տակ շորեր՝ որ հագնիս, որ քո մերկութեան ա-
մօթը չերևի. և դեղ դի՛ր քո աչքերիդ որ տես-
19 նես: Ես ո՛ւմ որ սիրում եմ՝ յանդիմանում եմ և
խրատում. ուրեմն ջա՛նք արա, և ապաշխարէ՛:
20 Ահա՛ ես դռան առաջին կանգնած եմ և թակում
եմ. թէ որ մինը լսէ իմ ձայնս և դուռն բանայ,
կ'մտնեմ նորա մօտն՝ ու ընթրիք կանեմ նորա հետ,
21 և նա ինձ հետ: Ով որ յաղթում է կ'տամ նորան,
որ ինձ հետ նստի աթոռիս վերայ, ինչպէս որ ես
22 յաղթեցի՝ և նստեցի իմ Հօրս աթոռը: Ով որ ա-
կանջ ունի թո՛ղ լսէ ինչ որ Հոգին ասում է եկե-
ղեցիներին:

ԳԼ. Դ

Երկնքումն Աստուծոյ փառաց աթոռին տեսիլքը:

1 Եւ այս ամեն բաներիցս ետև՝ տեսի՛, և ահա՛
մի դուռն էր բացված երկնքումը և այն առաջին
ձայնն որ փողի պէս լսեցի՝ խօսումէր ինձ հետ և
ասում. Վե՛ր ելիր այստեղ՝ և ցոյց կ'տամ քեզ ինչ
2 որ լինելու է յետին ժամանակներումը: Եւ իսկ

այն ժամումը հոգի եկաւ ինձ վերայ. և տեսի որ
3 մին աթոռ կար երկնքումը: Եւ նա՝ որ աթոռին
վերայ նստած էր, յասպիս և սարդիոն ակունքի
4 նման տեսիլք ունէր: Եւ այն աթոռի չորս կողմա-
վը կանանչ կարմիր գօտիկ կար, որ զմրուխտի նը-
ման տեսիլք ունէր. և աթոռի չորս կողմովը քսան
և չորս աթոռներ, և այն աթոռներին վերայ քսան
և չորս երէցներ նստած էին սպիտակ շորեր հա-
5 գած, և իրենց գլխներումն ոսկի պսակներ: Եւ այն
աթոռից փայլատակմունք և ձայներ և որոտմունք
էին դուրս գալիս. և եօթն լամպարներ կրակով
բորբոքված աթոռի առաջին, որ նորանք Աստու-
6 ծոյ եօթն հոգիներն են: Եւ աթոռի առաջին ա-
պակոյ պէս ծով կար սպիտակ սառուցի նման, և
աթոռին մէջ չորս կենդանիք՝ որ առաջուց և յե-
7 տուց լիքն էին աչքերով: Եւ առաջին կենդանին
առիւծի նման էր, և երկրորդ կենդանին եզի նը-
ման, և երրորդ կենդանին մարդոյ երես ունէր, և
8 չորրորդ կենդանին թռած արծուի նման: Եւ այն
չորս կենդանիքն ամեն մէկը վեց թև ունէին, ի-
րենց չորս կողմովը և ներսևանց լիքն էին աչքե-
րով. և հանգիստ չէին առնում՝ ո՛չ ցերեկ և ո՛չ
գիշեր՝ ասելով. Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէր Աստուած
Ամենակարող, և որ էիր, և ես, և որ գալու ես:
9 Եւ երբոր այն կենդանիքը փառք, և պատիւ, և
գոհութիւն էին տալիս աթոռի վերայ նստողին՝ որ
10 կենդանի է յաւիտեանս յաւիտենից, Քսան և
չորս երէցները վէր էին ընկնում աթոռի վերայ նը-
ստողի առաջին, և երկրպագութիւն էին տալիս նո-
րան՝ որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից. և

իրենց պսակները վէր էին դնում աթոռի առաջին
11 և ասում. Արժանի՛ ես մե՛ր սուրբ Տէր Աստուած,
որ փառք, և պատիւ և զօրութիւն առնես.
պատճառ որ դու ստեղծեցիր ամեն բան, և քո
կամենալովդ ստեղծվեցան՝ և կենումեն հաստատ:

ԳԼ. Ե

Մորթված գառը առնումէ կնքված գիրքը որ բանայ:

1 Եւ աթոռի վերայ նստողի աջ ձեռումը մին գիրք
տեսի, որ ներսեւանց և դրսեւանց գրված էր, և
2 եօթը կնքով կնքված: Եւ մին զօրաւոր հրեշտակ
տեսի՝ որ մեծ ձայնով կանչումէր և քարոզում.
Ո՞վ է արժանի բանալ այս գիրքը՝ և սորա կնիք-
3 ներն արձակել: Եւ ոչ մինը՝ ո՛չ երկնքումը և ո՛չ
երկրի վերայ և ո՛չ երկրի ներքեւումը՝ կարող չէ՛ր
4 այն գիրքը բանալ, և ո՛չ էլ տեսնել նորան: Եւ
ես սաստիկ լաց էի լինում, որ ո՛չ ով չ՛գտվե՛ց
արժանի՝ որ այն գիրքը բանայ, և նորան մէջ նա-
5 յի: Եւ այն երէցներիցը մինն ասաց ինձ. Լաց
մի՛ լինիր, ահա յաղթեց այն Առիւծն որ Յուդայի
ցեղիցն է՝ Դաւթի արմատիցն, որ գիրքը բանայ՝
6 և նորա եօթն կնիքներն արձակէ: Եւ տեսի այն
աթոռին մէջ՝ և չորս կենդանիներին մէջ՝ և էրէց-
ներին մէջ մին Գառն էր կանգնած մորթածի նը-
ման, որ եօթն եղջիւր ունէր՝ և եօթն աչք, որ
Աստուծոյ եօթն Հոգիքն են, որ ուղարկված են
7 ամեն երկիրները: Եւ նա եկաւ՝ և այն աթոռի վե-
8 րայ նստողի աջ ձեռիցն (այն գիրքն) առաւ: Եւ

երբոր գիրքն առաւ չորս կենդանիներն ու քսան
և չորս երէցները վէր էին ընկնում Գառի առա-
ջին. և նորանց ամեն մէկը քնար ունէին՝ և ոսկի
9 բուրվառ խնկով լիքն, որ սրբոց աղօթքն է: Եւ
նոր երգով օրհնումէին և ասում. արժանի՛ ես այդ
գիրքդ առնել՝ և դորա կնիքները բանալ, ինչու որ
մորթվեցար, և քո արիւնովդ մեզ գնեցիր Աստու-
ծոյ համար ամեն ազգերից՝ և լեզուներից՝ և հե-
10 թանոսների ժողովրդից, Եւ մեր Աստուծոյն հա-
մար թագաւորներ և քահանաներ արիր, որ երկրի
11 վերայ թագաւորութիւն անենք: Եւ տեսի՝ և շատ
հրեշտակների ձայն լսեցի՝ որ աթոռի և չորս կեն-
դանիքների և էրէցների չորս կողմովը կանգնած
էին. և նորանց համարն էր բիւրք բիւրոց՝ և հա-
12 զարք հազարաց. Որ մեծ ձայնով ասումէին. Ար-
ժանի է Գառնդ՝ որ մորթված է՝ որ մեծութիւն և
իմաստութիւն և զօրութիւն և պատիւ և փառք
13 և օրհնութիւն առնէ: Եւ ամեն ստեղծվածներն
որ երկնքումն են և երկրի վերայ և ծովումը, և
նորանք որ նորա մէջն են, այն ամենքն լսեցի որ ա-
սումէին. Նա որ աթոռին վերայ նստած է՝ և Գա-
ռըն էլ, օրհնված բարձրացած և փառաւորված
14 լինի յաւիտեանս յաւիտենից: Եւ չորս կենդա-
նիքներն ասումէին, Ամէն. և էրէցները վէր էին
ընկնում նորա առաջին և երկրպագութիւն անում:

ԳԼ. Զ

Առաջի վեց կնիքները բաց է անում Գառը ։

1 Եւ տեսի որ Գառն այն կնիքներից մինը բացաւ,
և այն չորս կենդանիքների մինից լսեցի որոտմուն-
2 քի ձայնի պէս՝ որ ասումէր թէ Կ'գամ։ Եւ տե-
սի՝ և ահա մին սպիտակ ձի. և նա՝ որ նորա վե-
րայ հեծած էր՝ մին աղեղ ունէր. և մին պսակ
տվվաւ նորան, և եկաւ յաղթօղն՝ որ յաղթէ ։
3 Եւ երբոր երկրորդ կնիքը բացաւ, երկրորդ կեն-
4 դանից լսեցի՝ որ ասումէր՝ թէ Կ'գամ։ Եւ ուրիշ
ձի դուրս եկաւ կարմիր. և նա՝ որ նորա վերայ հե-
ծած էր՝ նորան տվվաւ որ խաղաղութիւնը վեր առ-
նէ երկրից, որ իրար մորթեն. և մին մեծ սուր
տվվաւ նորան ։
5 Եւ երբոր երրորդ կնիքը բացաւ, երրորդ կեն-
դանից լսեցի՝ որ ասումէր՝ թէ Կ'գամ. և տեսի՝
և ահա՛ մին սեւ ձի, և նա՝ որ նորա վերայ նըս-
6 տած էր՝ կշիռք ունէր իրեն ձեռքին ։ Եւ չորս կեն-
դանիների միջից ձայն լսեցի՝ Թէ Մինն կապիճի
չափ ցորենը մին դենարի, և երեք կապիճի չափ
գարին մին դենարի, և ձէթին և գինոյն վնաս
չ'տաս ։
7 Եւ երբոր չորրորդ կնիքը բացաւ, չորրորդ կեն-
8 դանից ձայն լսեցի՝ որ ասումէր՝ թէ Կ'գամ։ Եւ
տեսի՝ և ահա՛ մին մոխրագոյն ձի, և նա՝ որ նո-
րա վերայ նստած էր՝ նորա անունը Մահ էր, և
Դժոխք էր գնում նորա ետեւէն. և իշխանութիւն

տվվաւ նորան աշխարհքի չորրորդ բաժնին վերայ՝
որ սրով և սովով և մահով և երկրի գազաններո-
վը սատակացնէ ։
9 Եւ երբոր հինգերորդ կնիքը բացաւ, տեսի սե-
ղանի ներքեւն այն ամէն մարդկանց հոգիքն՝ որ մորթ-
ված էին Աստուծոյ բանին համար՝ և նորա վկայու-
10 թեան համար որ ունէին, Որ մեծ ձայնով ասում-
էին. Սո՛ւրբ Տէր և ճշմարիտ՝ մինչեւ ե՞րբ դա-
տաստան չես անում, և մեր արիւնի ոխը չես խնդ-
11 րում երկրի վերայ բնակողներից ։ Եւ սպիտակ վե-
րարկուներ տվվաւ նորանց, և ասվեցաւ նորանց՝
որ մին քիչ ժամանակ հանգիստ առնեն, մինչեւ
որ նորանց ծառայ ընկերներն ու նորանց եղբարնե-
րըն էլ կատարվին՝ որ նորանց պէս պիտի սպանվին։
12 Եւ տեսի երբոր վեցերորդ կնիքն բացաւ՝ մեծ
շարժմունք եղաւ. և արեգակը սեւացաւ այծի մա-
զէ կարկատանի պէս, և լուսինն իսպառ արիւնի
13 պէս եղաւ ։ Եւ երկնքի աստղները թափվեցան երկ-
րի վերայ՝ ինչպէս թզի ծառ տերեւ՝ որ սաստիկ
14 շարժվումէ քամուցը ։ Եւ երկինքը մագաղաթէ
գրքի պէս գլորվումէր. և ամէն սարեր և կղզիներ
15 իրենց տեղից շարժվեցան ։ Եւ երկրի թագաւոր-
ներն ու իշխաններն՝ հազարապետներն ու մեծա-
մեծները և զօրաւորները՝ և ամէն ծառաներն ու
ամէն ազատները թաքցրին իրենց անձները՝ այրե-
16 րի և սարերի քարերին մէջ։ Եւ սարերին ասում-
էին՝ Վէ՛ր ընկէք մեզ վերայ, և բլուրներին՝ թէ
Ծածկեցէ՛ք մեզ աթոռի վերայ նստօղի երեսից,
17 և Գառի բարկութենից ։ Ինչու որ նորա բարկու-
թեան մեծ օրը եկել է, և ո՞վ է կարօղ կենալ
նորա առաջին ։

ԳԼ. Է

Աստուծոյ հաւատարիմ ծառաներին կնքելը։

1 Եւ սորանից ետեւ տեսի՝ որ չորս հրեշտակ էին
կանգնած երկրի չորս անկիւնումը. և երկրի չորս
քամին էլ բռնել էին՝ որ քամի չ'փչէ՛, ո՛չ երկ-
րի վերայ՝ ո՛չ ծովի վերայ, և ո՛չ ծառերի վերայ։
2 Եւ մին ուրիշ հրեշտակ տեսի՝ որ արեւելքից դուրս
եկաւ, և կենդանի Աստուծոյ կնիքն ունէր, և
մեծ ձայնով աղաղակեց դէպի այն չորս հրեշտակ-
ներին՝ որ իշխանութիւն էին առել որ երկիրն ու
3 ծովն ապականեն. Եւ ասում էր. Վնաս մի՛ տաք
ո՛չ երկրին՝ ո՛չ ծովին՝ և ո՛չ էլ ծառերին, դա-
դարեցէ՛ք մինչեւ որ իմ Աստուծոյս ծառաներին
4 վերայ կնիք դնեմ իրենց ճակատներումը։ Եւ
կնքվածների համար լսեցի՝ հարիւր քառասուն և
չորս հազար՝ որ կնքվեցան Իսրայէլի որդոց ամեն
5 ցեղերից։ Յուդայի ցեղից՝ տասներկու հազար
կնքված. Ռուբէնի ցեղից՝ տասներկու հազար
կնքված. Գադայ ցեղից՝ տասներկու հազար կընք-
6 ված. Ասերի ցեղից՝ տասներկու հազար կնքված.
Նեփթաղիմի ցեղից՝ տասներկու հազար կնքված.
Մանասէի ցեղից՝ տասներկու հազար կնքված.
7 Շմաւօնի ցեղից՝ տասներկու հազար կնքված. Ղե-
ւիի ցեղից՝ տասներկու հազար կնքված. Իսաքարի
8 ցեղից՝ տասներկու հազար կնքված. Զաբուղոնի
ցեղից՝ տասներկու հազար կնքված. Յօսէփի ցե-
ղից՝ տասներկու հազար կնքված. Բենիամենի ցե-
ղից՝ տասներկու հազար կնքված։

9 Եւ այս բաներից ետեւ տեսի՝ և ահա՛ ժողո-
վուրդ էր որ նորանց համար չ'կար, ամեն հեթա-
նոսներիցն ու ամեն ազգերից և ամեն լեզունե-
րիցն ու ամեն ժողովուրդներից, որ աթոռի առա-
ջին և Գառի առաջին կանգնած էին իրենց վերայ
սպիտակ շորեր ձգած, և իրենց ձեռներումն ար-
10 մաւենիներ. Աղաղակումէին բարձր ձայնով և ա-
սում. փրկութիւն մեր Աստուծոյն՝ որ աթոռի վե-
11 րայ նստումէ, և Գառին։ Եւ ամեն հրեշտակները
կանգնած էին աթոռի և երէցների և չորս կենդա-
նիքների չորս կողմովը, և վէր էին ընկնում երես-
ներին վերայ աթոռի առաջին՝ և երկրպագութիւն
12 անում Աստուծոյն։ Ասելով. Ամէն. օրհնութիւն
և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պա-
տիւ և զօրութիւն և շնորհք լինի մեր Տէր Ա-
13 ստուծոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Եւ այն
երէցներից մինն ասաց ինձ. Սորանք՝ որ սպիտակ
շորեր են հագել՝ ո՞վ են, և կամ ո՞րտեղից են
14 գալիս։ Եւ ասացի նորան. Տէ՛ր՝ դու ես գիտում.
և ասաց ինձ. Սորանք են՝ որ մեծ նեղութիւննե-
րից են գալիս, և իրենց վերարկուները լուացին՝ և
15 սպիտակացրին Գառի արիւնովը։ Նորահամար Աս-
տուծոյ աթոռի առաջին են՝ և ցերեկ ու գիշեր
պաշտումեն նորան իրեն տաճարին մէջ. և նա՝ որ
աթոռի վերայ նստած է, բնակված է նորանց մի-
16 ջումը։ Ո՛չ կ'սովին՝ և ո՛չ կ'ծարաւին, և ո՛չ ով
չի՛ նեղացնել նորանց՝ ո՛չ արեգակը և ո՛չ տաքու-
17 թիւնը։ Եւ Գառն իրեն աթոռի միջից կարածա-
ցընէ նորանց, և կառաջնորդէ նորանց դէպի կենաց
աղբիւրի ջուրը. և Աստուած սրբեց ամեն արտա-
սունքը նորանց երեսներից։

ԳԼ. Ը

Եօթներորդ կնիքը . խունկ ունեցող հրեշտակը . առաջին չորս փողերին հնչեցնելը ։

1 Եւ երբ որ եօթներորդ կնիքը բացաւ՝ լռութիւն
եղաւ երկնքումը՝ կէս ժամի չափ ժամանակ ։
2 Եւ եօթն հրեշտակներ տեսի՝ որ Աստուծոյ ա-
ռաջին կանգնած էին . և եօթն փող տվուաւ նո-
3 րանց ։ Եւ մին ուրիշ հրեշտակ եկաւ կանգնեց սե-
ղանին մօտ , և ոսկի խնկաման ունէր . և շատ
խունկ տվուաւ նորան , որ ամեն սրբերի աղօթքը
մատուցանէ այն ոսկի սեղանին վերայ որ աթոռի
4 առաջին էր . Եւ խնկերի ծուխը՝ այսինքն սրբոց ա-
ղօթքը վեր ելաւ հրեշտակների ձեռներիցն Աստու-
5 ծոյ առաջին ։ Եւ հրեշտակն այն խնկամանը լց-
րուց այն սեղանի կրակից , և ձգեց նորան երկրի
վերայ . և որոտմունք և ձայներ և փայլատակմունք
6 և մեծ շարժ եղաւ ։ Եւ այն եօթն հրեշտակներն՝
որ այն եօթն փողերն ունէին՝ իրենց պատրաստե-
ցին որ փչեն ։
7 Եւ առաջին հրեշտակը փողը փչեց , և եղաւ կար-
կուտ և կրակ և արիւն խառնված՝ և ընկաւ երկ-
րի վերայ և երկրի երրորդ բաժինն այրեց , և ծա-
ռերի երրորդ բաժինն այրեց , և բոլոր կանանչ
խոտերն այրեց ։
8 Եւ երկրորդ հրեշտակը փչեց , և մին մեծ սարի
պէս որ կրակով բորբոքված էր՝ ընկաւ ծովի մէջ ,
9 և ծովի երրորդ բաժինն արիւն դարձաւ ։ Եւ լո-

ղացող կենդանիքների երրորդ բաժինը սատակվե-
ցաւ , և նա էլ որ կենդանի շունչ ունէր՝ ապա-
կանվեցաւ . և նաւերի երրորդ բաժինը ծովի մէջ
կործանվեցաւ ։
10 Եւ երրորդ հրեշտակը փչեց , և մին մեծ աստղ
ընկաւ երկնքից՝ ղամբարի պէս բորբոքված , և ըն-
կաւ գետերի և աղբիւրների երրորդ բաժնի վերայ ։
11 Եւ աստղի անունը Դառնութիւն էր . և շատ մար-
դիք մեռան այն ջրերի դառնութենից ։
12 Եւ չորրորդ հրեշտակը փչեց , և վիրաւորվեցաւ
արեգական երրորդ բաժինը , և լուսնի երրորդ բա-
ժինը . և աստղների երրորդ բաժինը , և նորանց
երրորդ բաժինը խաւարվեցաւ . և ցերեկի երրորդ
բաժինը լոյս չէր տալիս , այնպէս էլ գիշերի եր-
13 րորդ բաժինը ։ Եւ տեսի և ձայն լսեցի , որ մին հր-
րեշտակ երկնքին մէջ թռած մեծ ձայնով ասում
էր . Վա՜յ , վա՜յ , վա՜յ նորանց՝ որ բնակված են
երկրի վերայ , երբ որ այն միւս երեք փողերի ձայնը
կ՚լինի՝ որ հրեշտակները պիտի փչեն ։

ԳԼ. Թ

Հինգերորդ ու վեցերորդ փողերը ։

1 Եւ հինգերորդ հրեշտակը փչումէր . և տեսի որ
մին աստղ երկնքից վեր ընկաւ երկրի վերայ . և
2 անդունդի դռի բանալիքը տվուաւ նորան , Եւ այն
դռիցը ծուխ էր դուրս գալիս մեծ փռան ծխի պէս.
և արեգակն ու օդը խաւարվեցաւ ։
3 Եւ դռիցը մարախ էր դուրս գալիս երկրի վերայ.

և նորանց իշխանութիւն տվվաւ կարիճի խայթոցի
4 պէս : Եւ նորանց ասվեցաւ՝ որ երկրի խոտին վնաս
չ'տա՛ն, և ո՛չ էլ ամեն ծառերին, բայց միայն
երկրաւոր մարդկանց, որ Աստուծոյ կնիքը չունին
5 իրենց ճակատներին վերայ : Եւ հրաման տվվաւ
նորանց՝ որ չ'սպանե՛ն նորանց, բայց հինգ ամիս
չարչարեն նորանց . և նորանց չարչարանքը կարիճի
6 խայթոցի պէս էր՝ որ մին մարդոյ կծում է : Եւ այն
օրերումը մարդիք մահ կ'խնդրեն՝ և չեն գտնիլ . և
կ'ցանկանան մեռնելոյ՝ և մահը կ'փախչի նորանցից:
7 Եւ այն մարախի կերպը՝ նման էր ձիոյ՝ որ պատ-
րաստված է կռւի համար . և նորանց գլխներին վե-
րայ պսակի պէս մին բան՝ ոսկոյ նման . և նորանց
8 երեսները մարդոյ երեսի նման : Եւ նորանց մազերը
կնկան մազերի պէս . և նորանց ատամներն առիւ-
9 ծի ատամներէ նման . Եւ զրահներ ունէին՝ ինչպէս
երկաթէ զրահներ . և նորանց թեւերի ձայնն նը-
ման էր շատ կառք քաշող ձիանց պէս՝ որ կռւի
10 մէջ վազումեն : Եւ ագիներ ունէին կարիճի նը-
ման, և խայթոց կար իրենց ագիներումը . և իշ-
խանութիւն ունէին՝ որ հինգ ամիս մարդկանց չար-
11 չարեն : Եւ իրենց վերայ թագաւոր ունէին դժոխ-
քի հրեշտակը . և նորա անունը՝ Եբրայեցերէն Աղ-
12 բադոն էր . որ Հայերէն Կորուստ կասուի : Ահա՛ մին
վայն անցաւ, և երկու վայ էլ պիտի գան :
13 Եւ վեցերորդ հրեշտակը փողը փչեց . և ձայն
լսեցի այն չորս կենդանիներից՝ որ Աստուծոյ սե-
14 ղանի առաջին էին, Որ ասումէր վեցերորդ հրեշ-
տակին՝ որ այն փողն ունէր . Թէ Արձակէ այն չորս
հրեշտակներն՝ որ Եփրատ գետի վերայ կապված են:

15 Եւ այն չորս հրեշտակներն արձակվեցան, որ պատ-
րաստված էին ժամին և օրին և ամսին և տարոյն
համար, որ մարդկանց երրորդ բաժինն սպանեն :
16 Եւ նորանց ձիաւոր զօրքի համարը՝ բիւրք բիւրոց
17 և հազարք հազարաց՝ լսեցի նորանց համարը : Եւ
այն տեսիլքի մէջ ձիանք տեսի, և նորանց վերայ
հեծածները կրակէ և յակինթէ և ծծումբով վառ-
ված զրահներ ունէին . և ձիանքի գլխներն առիւ-
ծի գլխների նման . և նորանց բերանիցը կրակ և
18 ծուխ և ծծումբ էր դուրս գալիս : Եւ այս կոտո-
րումներից՝ մարդկանց երրորդ բաժինը մեռաւ այն
կրակից ու ծխից և ծծումբից, որ նորանց բե-
19 րանից դուրս էր գալիս : Ինչու որ նորանց զօրու-
թիւնն իրենց բերանումն էր՝ և իրենց ագիներու-
մը, և նորանց ագիներն օձի նման էին և գլխներ
ունէին՝ որ նորանցով սպանումէին անիրաւներին :
20 Եւ այն միւս մարդիքն որ չ'մեռան այս կոտո-
րումներից, չապաշխարեցին և յետ չ'դարձան ի-
րենց ձեռաց գործքերից, որ երկրպագութիւն չա-
նեն դեւերին և ոսկէ և արծաթէ և պղնձէ և քա-
րէ և փայտէ շինած կռքերին, որ ո՛չ տեսնել կա-
21 րող են՝ և ո՛չ լսել՝ և ո՛չ գնալ : Եւ չապաշխա-
րեցին իրենց մարդասպանութենից՝ ու մոգէ դեղ
տալուցն՝ ու պոռնկութենիցը՝ և գողութենիցը :

ԳԼ. Ժ

Յոհաննէսը մէկ գիրք է կուլ տալիս :

1 Եւ մին ուրիշ զօրաւոր հրեշտակ տեսի՝ որ եր-
կընքիցը վէր էր գալիս, և ամպ ունէր հագած՝ և

իրեն գլխին կանաչ կարմիր գօտիկ. և նորա երեսն
արեգական նման էր. և նորա ոտները կրակի սիւ-
2 նի պէս ։ Եւ իրեն ձեռքին մին փոքր գիրք ունէր
բացած. և իրեն աջ ոտը դրաւ ծովու վերայ, և
3 ձախը երկրի վերայ. Եւ մեծ ձայնով աղաղակեց՝
առիւծի պէս գոռաց. և երբոր աղաղակեց՝ եօթն
4 որոտմունքն իրենց ձայնովը խօսեցին ։ Եւ երբոր
եօթն որոտմունքը խօսեցին՝ կամենումէի գրել. և
ձայն լսեցի երկնքից՝ որ ասումէր, Կնքէ այն որ
5 եօթն որոտմունքը խօսեցին՝ և մի՛ գրեր ։ Եւ այն
հրեշտակն որ տեսի՝ որ իրեն ոտը դրաւ ծովու վե-
րայ՝ և միւսը ցամաքի վերայ, իրեն աջ ձեռքն
6 դէպի երկինքը բարձրացրուց, Եւ երդուաւ նորա-
նով Որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից, որ
ստեղծեց երկինքը՝ և ինչ որ նորանում է, և եր-
կիրը՝ և ինչ որ նորանում կայ, (և ծովը՝ և ինչ
որ նորանում է.) Թէ էլ աւելի ժամանակ չ'կայ ։
7 Բայց եօթներորդ հրեշտակի ձայն հանելոյ օրերու-
մըն՝ երբոր փողը կ'փչէ, Աստուծոյ խորհուրդը կը
կատարվի՝ Նա որ աւետարանվեցաւ իրեն ծառայ
մարգարէներիցը ։
8 Եւ այն ձայնն որ երկնքիցը լսեցի՝ կրկին խօսեց
ինձ հետ՝ և ասաց. Գնա՛ առ այն փոքր գիրքն՝ որ
հրեշտակը բաց բռնած ունի իրեն ձեռումը՝ և
9 կանգնած է ծովու և ցամաքի վերայ ։ Եւ ես գը-
նացի հրեշտակին մօտ՝ և խնդրեցի նորանից. և նա
ասաց ինձ՝ Ա՛ռ սորան՝ և կե՛ր սորան, և կ'դառ-
նանայ քո փորումդ, բայց քո բերանումդ քաղցր
10 կ'լինի մեղրի պէս ։ Եւ այն բաց փոքր գիրքն առի
հրեշտակիցը՝ և կուլտուի նորան. և իմ բերա-

նումն քաղցր էր մեղրի նման. և երբոր կերի՝ դառ-
11 նացաւ իմ փորումս ։ Եւ ասաց ինձ. Պէտք է որ
դու մին էլ մարգարէանաս ժողովուրդների՝ և ազ-
գերի՝ և լեզուների՝ և թագաւորների առաջին ։

ԳԼ. ԺԱ.

Երկու վկաները՝ որ սպանվումեն՝ դարձեալ կենդանի.
Եօթներորդ փողը ։

1 Եւ մին եղէգ տվվաւ ինձ գաւազանի նման. և
կանգնած էր հրեշտակը՝ և ինձ ասումէր. Վե՛ր
կաց և չափէ Աստուծոյ տաճարն ու սեղանն՝ և նո-
րանց էլ որ նորանում երկրպագութիւն են անում ։
2 Եւ գաւիթն որ տաճարիցը դուրս է՝ թո՛ղ նորան՝
և մի՛ չափեր. ինչու որ նա հեթանոսներին է տըր-
ված. և սուրբ քաղաքն էլ ոտի տակ կոխ կ'տան
3 քառասուն և երկու ամիս ։ Եւ իմ երկու վկանե-
րիս կ'տամ՝ և հազար երկու հարիւր և վաթսուն
4 օր կ'մարգարէանան՝ քուրձ հագած ։ Սորանք են էն
երկու ձիթենիքն՝ ու երկու ճրագները, որ Աստու-
5 ծոյ առաջին կանգնած են երկրումը ։ Եւ նորանք
որ կամենան վնաս տալ նորանց, կրակ դուրս կը-
գայ նորանց բերանիցը՝ և կայրէ իրենց թշնամինե-
րին. և նորանք որ կամենան վնաս հասցնել նո-
6 րանց՝ այսպէս պիտի սատակվին ։ Սորանք իշխա-
նութիւն ունին երկինքը փակելոյ՝ որ անձրև չ'գայ
իրենց մարգարէութեան օրերումը. և իշխանութիւն
ունին ջրերի վերայ՝ որ արիւն դարձնեն նորանց,
և ամեն կերպ պատուհասներով պատուհասեն եր-

7 կերը քանի անգամ որ կամենան ։ Եւ երբոր իրենց
վկայութեան ամեն օրերը կ'կատարեն , այն ժամա-
նակն այն գազանն՝ որ անդունդիցն է դուրս գա-
լիս՝ կռիւ կ'տայ նորանց հետ , և կ'յաղթէ նո-
8 րանց՝ և կ'սպանէ նորանց ։ Եւ նորանց մեռած
մարմիններն վէր ընկած կ'մնան նորանց մեծ քա-
ղաքի փողոցներին մէջ , որ նորա անունը հոգեւոր
մտքով Սօդօմ և Եգիպտոս է կոչվում . որտեղ որ
9 նորանց Տէրն էլ խաչվեցաւ ։ Եւ նորանց կ'տեսնեն
ամեն ազգերն ու ժողովուրդները՝ և ամեն լեզու-
ները ու հեթանոսները , ինչուոր նորանց մեռած
մարմինները վէր ընկած կ'մնան երեք օր ու կէս . և
թոյլ չեն տալ՝ որ նորանց ոսկորները թաղվեն գե-
10 րեզմանի մէջ ։ Եւ նորանք՝ որ երկրի վերայ բնակ-
ված են , ուրախ կ'լինին՝ և խնդութիւն կանեն նո-
րանց վերայ , մինչեւ որ մինը միւսին ընծաներ և
պարգեւներ տանեն . ինչուոր այս երկու մարգա-
րէքս չարչարեցին երկրի վերայ բնակողներին ։
11 Եւ երեք ու կէս օրիցն ետեւ՝ Աստուածանից
կենդանի հոգի կ'մտնէ նորանց մէջ , և վեր կ'կե-
նան կ'կանգնին իրենց ոտներին վերայ . և մեծ վախ
12 ընկաւ նորանց վերայ որ տեսին նորանց ։ Եւ մեծ
ձայն լսեցի երկնքիցն՝ որ ասումէր նորանց . Վե-
րացէ՛ք վե՛րեկէք այստեղ . և ամպերով վերացան
վերելան երկինքը . և նորանց թշնամիները տեսին
13 նորանց ։ Եւ նոյն ժամումը մեծ շարժմունք է-
լաւ , և քաղաքի տասներորդ բաժինը կործանվե-
ցաւ , և այն շարժիցն եօթն հազար մարդիք մե-
ռան . և նորանից ետեւ մեծ վախ էլաւ ամենքի
վերայ , և փառք էին տալիս երկնաւոր Աստու-

14 ծոյն ։ Ահա՛ երկրորդ վայն անցաւ , և երրորդ վայն
շուտով պիտի գայ ։
15 Եւ երբոր եօթներորդ հրեշտակը փողը փչեց ,
մեծ ձայն էլաւ երկնքումը՝ և ասաց . Բոլոր աշ-
խարհքի թագաւորութիւնն էլաւ մեր Տէրին՝ և
նորա Քրիստոսին . և կ'թագաւորէ ամենին վերայ
16 յաւիտեանս յաւիտենից ։ Եւ քսան ու չորս ե-
րեցներն՝ որ իրենց աթոռներին վերայ նստած էին
Աստուծոյ առաջին , իրենց երեսներին վերայ վէր
էին ընկնում՝ և երկրպագութիւն անում Տէր Աս-
17 տուծոյն , և ասում Գոհանումենք քեզանից Տէր
Աստուած Ամենակարող , որ էիր և ես , և քո մեծ
18 զօրութիւնդ առիր , և թագաւորեցիր . Եւ հեթա-
նոսները բարկացան , և քո բարկութիւնդ եկաւ ,
և մեռելների ժամանակն՝ որ դատվին . որ վարձք
տաս քո ծառայ մարգարէներին և սրբերին , և քո
անունեց վախեցողներին՝ փոքրներին և մեծերին՝ և
երկիրը ապականողներին ապականես ։
19 Եւ Աստուծոյ տաճարն որ երկնքումն էր՝ բաց է-
լաւ , և Աստուծոյ տապանակն երեւեցաւ իրեն
տաճարին մէջ . և փայլատակմունք և ձայներ և ո-
րոտմունքներ , և շարժմունքներ , և մեծ մեծ կար-
կուտ էլան ։

ԳԼ. ԺԲ

Ծնանող կինը . Միքայելը յաղթում է վիշապին ։

1 Եւ մին մեծ նշան երեւեցաւ երկնքումը . այսինքն
մին կին՝ որ արեգակն իրեն վերայ էր առել , և

լուսինն էլ իրեն ոտներին տակ. և իրեն գլխի վե-
2 րայ տասներկու աստղներից մին պսակ ։ Եւ յղի
էր. և ցաւ քաշելումը սաստիկ աղաղակումէր, և
շատ չարչարանքով ծնելոյ մօտ էր ։
3 Եւ մին ուրիշ նշան էլ երեւեցաւ երկնքումը. և
ահա՛ մին մեծ կրակի պէս վիշապ էր. որ եօթն
գլուխ ունէր և տասն եղջիւր, և նորա գլխներին
4 վերայ եօթն թագաւորական պսակ ։ Եւ նորա ա-
գին քաշումէր երկնքի աստղների երրորդ բաժի-
նը, և նորանց ձգեց երկրի վերայ. և վիշապը
կանգնած էր այն կնկան առաջին՝ որ պիտի ծնէր,
նորահամար որ երբոր կինն իրեն որդին ծնի՝ վիշա-
5 պը կուլ տայ նորան ։ Եւ կինն արու զաւակ ծնաւ՝
որ նա պիտի բոլոր հեթանոսներին երկաթէ գաւա-
զանով հովուէ. և նորա որդին յափշտակվեցաւ
6 Աստուծոյ մօտ՝ և նորա աթոռին մօտ ։ Եւ կինը
փախաւ մին անապատ երկիր՝ որ այն տեղ Աստ-
ուածանից տեղ էր պատրաստված նորա համար,
որ կերակրվի այն տեղ հազար երկու հարիւր և
վաթսուն օր ։
7 Եւ կռիւ ելաւ երկնքումը, Միքայէլը և իրեն
հրեշտակները կռվումէին վիշապին հետ. և վիշա-
8 պը կռվումէր իրեն զօրքերովը ։ Եւ չ'կարացին դէմ
կենալ, և տեղ էլ չ'գտաւ նորանց համար եր-
9 կնքումը ։ Եւ վեր ընկաւ մեծ վիշապը՝ այն առա-
ջին օձն, որ Բէեղզեբուղ և սատանայ է կոչվում,
որ բոլոր բովանդակ աշխարհքը մոլորացրուց. և ի-
10 րեն հրեշտակներն էլ իրեն հետ վեր ընկան ։ Եւ
մեծ ձայն լսեցի երկնքիցն՝ որ ասումէր. Հիմիկ զօ-
րութիւնն ու փրկութիւնը և թագաւորութիւնն

ելաւ մեր Աստուծոյն, և իշխանութիւնը նորա
Օծեալին. ինչու որ վեր ընկաւ մեր եղբայրների չա-
րախօսն՝ որ ցերեկ և գիշեր նորանցից չարախօսու-
11 թիւն էր անում Աստուծոյ առաջին ։ Եւ նորանք
յաղթեցին նորան Գառի արիւնովը՝ և նորա վը-
կայութեան խօսքովը. և բնաւ հաւան չ'կացան վի-
12 շայլին մինչեւ 'ի մահն ։ Սորահամար թո՛ղ ուրախ
լինին երկինքը, և ամենքդ որ բնակված էք նորա-
նում. վա՛յ երկրին և ծովուն, ինչու որ Բանսար-
կուն վեր ընկաւ ձեզ մօտ, որ նա մեծ սաստիկ
բարկութիւն ունի. պատճառանոր գիտումէ որ մին
քիչ ժամանակ պիտի մնայ ։
13 Եւ երբոր տեսաւ վիշապը՝ թէ վեր ընկաւ երկրի
վերայ, այն կնկան ետեւէն ընկաւ՝ որ այն արու
14 զաւակը ծնաւ ։ Եւ այն կնկանն երկու մեծ ար-
ծուի թեւ տվաւ՝ որ թռչի անապատն իրեն տե-
ղը. որ այն տեղ կերակրվումէր՝ մին ժամանակ և
ժամանակներ և կէս ժամանակ օձի երեսիցը հե-
15 ռու ։ Եւ օձն իրեն բերանիցը ջուր թափեց այն
16 կնկան ետեւէն՝ որ նորան ջրով խեղդէ ։ Եւ երկի-
րըն օգնութիւն արաւ կնկանը, և երկիրն իրեն բե-
րանը բացաւ և այն ջուրը կուլ տուաւ՝ որ վիշա-
17 պըն իրեն բերանիցը թափեց ։ Եւ վիշապը բարկա-
ցաւ այն կնկան վերայ, և գնաց որ նորա միւս
զաւակներին հետ կռիւ անէ՝ որ Աստուծոյ պատ-
ուիրանքները պահումէին, և Յիսուսի վկայութիւ-
նըն ունէին ։
18 Եւ ծովու աւազի վերայ կանգնեց ։

ԳԼ. ԺԳ

Եօթը գլուխ և տասը եղջիւր ունեցող կենդանին, և երկու եղջիւր ունեցող կենդանին :

1 Եւ տեսի որ ծովիցը մին գազան էր դուրս գա-
լիս, և եօթն գլուխ ունէր և տասն եղջիւր, և նո-
րա եղջիւրներին վերայ տասն թագաւորական պը-
սակ կար, և նորա գլխներին վերայ հայհոյութեան
2 անուններ : Եւ այն գազանն որ տեսի՝ այդ ինձի
նման էր, և նորա ոտներն արջի նման, և նորա
բերանն առիւծի նման. և այն վիշապը տուաւ
նորան իրեն զօրութիւնը և իրեն աթոռը և իրեն
3 մեծ իշխանութիւնը : Եւ նորա գլխներիցը մինը
մեռնելոյ չափ խոցված էր. և նորա մահի խոցն ող-
ջանումէր. և բոլոր երկիրը զարմացաւ այն գազա-
նին վերայ, (ինչուոր վիշապն իրեն թագաւորու-
4 թիւնը տուաւ նորան), Եւ երկրպագութիւն արին
վիշապին՝ որ իշխանութիւնը տուաւ գազանին, և
ասումէին. Ո՞վ կ'լինի այս գազանիս նման. կամ
5 ո՞վ կարող է դորա հետ կռիւ անել : Եւ բերան
տվվաւ նորան որ մեծ մեծ բաներ խօսի, և հայ-
հոյանք. և իշխանութիւն տվվաւ նորան քառա-
6 սուն և երկու ամիս : Եւ իրեն բերանը հայհոյան-
քով բացաւ Աստուծոյ դէմ, և հայհոյեց նորա
անունը՝ և նորա խորանը՝ և նորանց էլ որ երկըն-
7 քումը բնակված են : (Եւ տվվաւ նորան որ սրբե-
րին դէմ կռիւ հանէ և նորանց յաղթէ). և իշ-
խանութիւն տվվաւ նորան ամեն ազգերի և լե-

8 զուների և ժողովուրդների վերայ. Որ երկրպագու-
թիւն կանեն նորան այն ամենքն՝ որ երկրի երեսի
վերայ բնակված են, որ նորանց անունները գը-
րուած չեն Գառի կենաց գրքին մէջ՝ որ աշխարհքի
9 ստեղծագործութեան սկզբիցն է մորթված : Ով որ
10 լսելոյ ականջ ունի՝ թո՛ղ լսէ : Ինչուոր կան մին
քանիսն՝ որ պիտի գերութեան մէջ քաշվին, և
կան մին քանիսն՝ որ պիտի սրով մեռնին. և կան
մին քանիսն, որ պիտի իրենք իրենց սպանեն. այս
տեղ է սրբերի համբերութիւնն ու հաւատքը :
11 Եւ տեսի մին ուրիշ գազան՝ որ դուրս էր գա-
լիս երկրիցը, և երկու եղջիւր ունէր գառի նման.
12 և վիշապի նման էր խօսում : Եւ այն առաջի գա-
զանի ամեն իշխանութիւնը բանացնումէր նորա ա-
ռաջին. և այնպէս էր անում, որ երկիրն ու նորա
վերայ ամեն բնակօղները՝ երկրպագութիւն անեն
այն առաջին գազանին, մինչեւ որ նորա մահի խո-
13 ցըն ողջանայ : Եւ շատ նշաններ էր անում, և եր-
կընքիցը կրակ էր վէր բերում երկրի՝ մարդկանց
14 առաջին : Եւ մոլորացնումէր նորանց, որ բնակ-
ված են երկրի վերայ՝ այն նշաններովը որ տվված
էին նորա ձեռքն որ գործէ գազանի առաջին. և
երկրի բնակօղներն ասացին նորան՝ Պատկե՛ր շինէ
15 այն գազանին՝ որ այս սրի խոցից ապրեցաւ : Եւ
իշխանութիւն տվվաւ նորան՝ որ հոգի տայ այն
գազանի պատկերին, և որ պատկերն էլ խօսի. և
երկրպագութիւն կանեն նորան՝ երկրի վերայ ամեն
բնակօղները. և ով որ երկրպագութիւն չանէ գա-
16 զանի պատկերին, նորան կ'սպանէ : Եւ կանէ որ
ամենքը փոքրներն ու մեծամեծները, հարուստներն

ու ազատները և աղքատներին ու ծառաներին՝ ի-
րենց աջ ձեռումն ու իրենց ճակատումը դրոշմ
17 նշան ընդունին ։ Եւ որ ոչ մինը չ'կարողանայ գը-
նել և ծախել՝ թէ որ այն գազանի նշանն ու նո-
րա անունը՝ և նորա անունի համարը չունենայ ։
18 Այստեղ է իմաստութիւն. ով որ միտք ունի՝
թո՛ղ գազանի համարն համարէ. ինչու որ մին մար-
դոյ համարն է, և նորա անունի համարը սա է,
վեց հարիւր վաթսուն և վեց ։

ԳԼ. ԺԴ

Գառը և կնքվածները. յաւիտենական աւետարանը. աշխարհքին հունձքը ։

1 Եւ տեսի՝ և ահա՛ Գառն կանգնած էր Սիօն սա-
րին վերայ. և նորա հետ հարիւր քառասուն և
չորս հազար հոգի, որ նորա անունն ու նորա Հօր
անունը գրած ունէին իրենց ճակատներին վերայ ։
2 Եւ ձայն լսեցի երկնքից շատ ջրերի ձայնի պէս,
և մեծ որոտմունքի ձայնի պէս. և քնար ածողնե-
րի ձայնի պէս լսեցի՝ որ իրենց քնարներն ածում
3 էին ։ Եւ նոր երգեր էին երգում՝ աթոռի առաջին
և չորս կենդանիների առաջին՝ և երէցների առա-
ջին. և ո՛չ ով չի կարող գիտել նորանց երգերը՝
բայց միայն այն հարիւր քառասուն և չորս հա-
4 զարներն, որ երկրից ազատվել են ։ Սորանք են՝ որ
կանանց հետ չ'խառնակվեցան և կոյս են. սորանք
Գառի ետեւէն են գնում որտեղ որ գնայ. սո-
րանք մարդկանցից ընտրվեցան Աստուծոյ և Գառի

5 առաջին ։ Եւ նորանց բերանումը սուտ չ'գտա՛ւ՝
ինչու որ անարատ են ։
6 Եւ մին ուրիշ հրեշտակ տեսի որ թռչում էր եր-
կընքին մէջ, և յաւիտենական աւետիս ունէր ա-
ւետարանել ամեն ազգերին և լեզուներին՝ որ երկ-
7 րումը բնակված են ։ Եւ մեծ ձայնով ասում էր.
Վախեցէ՛ք Աստուածանից՝ և փառք տուէ՛ք նո-
րան. պատճառնոր նորա դատաստանի ժամը ե-
կաւ. և երկրպագութիւն արէ՛ք երկնքի և երկրի
և ծովի և աղբիւրի ջրերի Ստեղծողին ։
8 Եւ մին ուրիշ երկրորդ հրեշտակ էր գալիս նորա
ետեւէն և ասում. Վէ՛ր ընկաւ՝ վէ՛ր ընկաւ այն
մեծ Բաբիլօնն, ինչու որ ամեն հեթանոսներին հար-
բեցրուց իրեն պոռնկութեան բարկութեան հար-
9 բեցնող գինուցը ։ Եւ մին ուրիշ երրորդ հրեշտակ
էր գալիս նորանց ետեւէն՝ և մեծ ձայնով ասում.
Ով որ երկրպագութիւն արաւ գազանին և նորա
պատկերին, և կամ նորա նշանի դրոշմն տուաւ ի-
10 րեն ճակատը կամ իրեն աջ ձեռին վերայ, Այն-
պէսին Աստուծոյ բարկութեան բաժակից պիտի
խմէ՝ որ առանց խառնվելոյ թափվում է նորա բար-
կութեան բաժակին մէջ. և կրակով ու ծծմբով
11 պիտի տանջվի Աստուծոյ և Գառի առաջին ։ Եւ
նորանց ծուխը վեր կելլի յաւիտեանս յաւիտենից.
և ցերեկ և գիշեր հանգիստ չունին նորանք՝ որ
երկրպագութիւն արին գազանին՝ և նորա պատկե-
րին. և ով որ էլ նորա նշանն ու անունն ընդու-
12 նեցին ։ Այստեղ է սրբերի համբերութիւնը. նո-
րանք որ Աստուծոյ պատուիրանքները, և Յիսուսի
13 հաւատքը պահումեն ։ Եւ երկնքից ձայն լսեցի որ

ասումէր ինձ․ Գրէ՛, Երանի՜ այն մեռելներին որ
հիմիկ շուտով Տէրումը ննջեցին․ Հոգին սա է ա-
սում․ պատճառնոր իրենց աշխատանքներիցը հան-
գիստ առնին, բայց իրենց գործքերը գնացին իրենց
ետեւէն․
14 Եւ տեսի՝ և ահա՛ մին սպիտակ ամպ, և մ̄ը
նստած էր ամպի վերայ Որդոյ մարդոյ նման, և
նորա գլխին վերայ ոսկի պսակ, և իրեն ձեռումը
մին սրած գերանդի ունէր։
15 Եւ ուրիշ հրեշտակ էր դուրս գալիս երկնքիցը,
մեծ ձայնով աղաղակումէր՝ և ասում․ Դո՛ւ որ
ամպի վերայ նստած ես՝ ուղարկէ՛ քո գերանդիդ՝
և հնձէ՛․ ինչուոր հնձի ժամանակն եկաւ, և երկ-
16 րի հունձքը հասել է։ Եւ նա՝ որ ամպի վերայ
նստած էր՝ վէր ձգեց իրեն գերանդին երկրի վե-
րայ, և հնձումէր երկրի ամեն բնակօղներին։
17 Եւ ուրիշ հրեշտակ էլ դուրս էր գալիս այն տա-
ճարիցն՝ որ երկնքումն է, և սա՛ էլ սրած գերան-
18 դի ունէր։ Եւ ուրիշ հրեշտակ էր դուրս գալիս
սեղանիցն՝ որ իշխանութիւն ունէր կրակի վերայ,
և մեծ ձայնով աղաղակեց դէպի այն հրեշտակին՝
որ այն սրած գերանդին ունէր՝ և ասումէր․ Ու-
ղարկէ՛ քո սուր գերանդիդ՝ և երկրի այգոյ ող-
կոյզները քաղէ՛, ինչուոր դորա միջի խաղողն հա-
19 սել է։ Եւ հրեշտակն իրեն գերանդին ձգեց երկ-
րի վերայ, և նորա խաղողը քաղումէր, և ձգում
20 Աստուծոյ մեծ հնձանին մէջ։ Եւ հնձանը կոխվե-
ցաւ քաղաքի դուրս կողմումը, և արիւն էր դուրս
գալիս հնձանիցը մինչեւ ձիոյ սանձքը․ և նորա եր-
կարութիւնն հազար և վեց հարիւր ասպարէզ էր։

ԳԼ․ ԺԵ

Եօթը հրեշտակներ վերջին եօթը պատուհասներովը։

1 Եւ մին ուրիշ մեծ և զարմանալի նշան տեսի եր-
կընքումը․ եօթն հրեշտակ՝ որ վերջին եօթն պա-
տուհասը բռնած ունէին․ ինչուոր Աստուծոյ բար-
2 կութիւնը նորանցով էր կատարվում։ Եւ տեսի
մին ապակոյ նման ծով կրակի հետ խառնած․ և
նորանք որ յաղթեցին գազանին՝ և նորա անունի
համարին՝ և նորա պատկերին՝ և նորա դրոշմին,
նորանք կանգնած էին այն ապակոյ ծովի վերայ,
3 և Աստուծոյ քնարներն ունէին։ Եւ Մօսէսի երգն
ու Գառի երգն էին երգում Աստուծոյ առաջին,
ասելով․ Թէ Մեծ և զարմանալի են քո գործքե-
րըդ՝ Տէ՛ր Աստուած Ամենակարօղ․ արդար և ճըշ-
մարիտ են քո ճանապարհներդ, ո՛վ ամեն հեթա-
4 նոսների թագաւորդ։ Եւ ո՞վ է որ քեզանից չը
վախենայ՝ ո՛վ Տէր և քո անունդ փառաւորէ․
պատճառնոր մինակ դու ես սուրբ և արժանաւոր
երկրպագութիւն առնելոյ․ ինչուոր ամեն հեթա-
նոսները պիտի գան և քո առաջիդ երկրպագու-
թիւն անեն՝ ո՛վ Տէր, երբոր քո արդարութիւնդ
կ՚յայտնվի։
5 Եւ սորանից ետեւ տեսի՝ և վկայութեան խորա-
6 նի տաճարն՝ որ երկնքումն էր՝ բացվաւ։ Եւ եօթն
հրեշտակ էին դուրս գալիս՝ որ եօթն պատուհասն
ունէին, և տաճարումը մաքուր և պայծառ կտաւ
էին հագած, և ծծերի մօտովն ոսկէ գօտիկներ կա-

7 պած ։ Եւ այն չորս կենդանիներիցը մինն այս եօ-
թըն հրեշտակներին եօթն ոսկէ սկաւառակ տուաւ
Աստուծոյ բարկութենով լիքն՝ որ նա կենդանի է
8 յաւիտեանս յաւիտենից ։ Եւ տաճարը լցվաւ Աս-
տուծոյ փառաց՝ և նորա զօրութեան ծխովը. և
ո՛չ ով կարող չէ մտնել տաճարին մէջ՝ մինչև այն
եօթն հրեշտակների եօթն պատուհասները կա-
տարվին ։

ԳԼ. ԺԶ

Աստուծոյ բարկութեան սկաւառակները թափումն հրեշտակները երկրի վերայ ։

1 Եւ մեծ ձայն լսեցի տաճարից՝ որ ասումէր այն
եօթն հրեշտակներին. Գնացէ՛ք՝ և այդ եօթն ըս-
կաւառակներդ որ Աստուծոյ բարկութենովը լիքն
են՝ թափեցէ՛ք երկրի վերայ ։
2 Եւ առաջին հրեշտակը գնաց՝ և իրեն սկաւա-
ռակը թափեց երկրի վերայ, և չարաչար պատու-
հասներ եղան մարդկանց վերայ, որ գազանի դը-
րոշմն ունէին, և նորա պատկերին երկրպագութիւն
արին ։
3 Եւ երկրորդ հրեշտակն իրեն սկաւառակը թափեց
ծովի մէջ, և ջրերը դարձան մեռածի արիւն. և
ամեն կենդանի շունչ՝ որ ծովումն էր՝ սատակ-
վեցաւ ։
4 Եւ երրորդ հրեշտակն իրեն սկաւառակը թափեց
գետերի և ջրերի աղբիւրների վերայ և եղաւ ար-
5 իւն ։ Եւ ձայն լսեցի Ջրերի հրեշտակիցն՝ որ ա-

սումէր. Արդա՛ր է նա՝ որ էր և է, և սուրբ է
իրեն գործքերումն, որ այսպէսի դատաստան ա-
6 րաւ ։ Պատճառնոր այն ամբարիշտները սրբերի և
մարգարէների արիւնը թափեցին. նորահամար նո-
րանց արիւն խմել տուաւ՝ ինչպէս որ արժան էր ։
7 Եւ այն սեղանիցը ձայն լսեցի՝ որ ասումէր. Իրաւ
է՝ Տէ՛ր Աստուած Ամենակարող, արդար և ճշմա-
րիտ են քո դատաստաններդ ։
8 Եւ չորրորդ հրեշտակն իրեն սկաւառակը թա-
9 փեց արեգական վերայ ։ Եւ տվվաւ նորան որ
մարդկանց խաչէ կրակով. և սաստիկ տաքումն այր-
վեցան մարդիկը, և Աստուծոյն հայհոյեցին՝ որ այս
պատուհասներիս վերայ իշխանութիւն ունի. և չա-
պաշխարեցին որ փառք տան նորան ։
10 Եւ հինգերորդ հրեշտակն իրեն սկաւառակն
թափեց գազանի աթոռին վերայ. և նորա թա-
գաւորութիւնը խաւար եղաւ. և իրենց լեզուները
11 ծամումէին ցաւի տանջանքիցը ։ Եւ երկնքի Աս-
տուծոյն հայհոյեցին իրենց ցաւերի և դառն տան-
ջանքի պատճառովը. և չապաշխարեցին իրենց գործ-
քերիցը ։
12 Եւ վեցերորդ հրեշտակն իրեն սկաւառակը թա-
փեց մեծ Եփրատ գետին վերայ, և նորա ջրերը
ցամաքեցան՝ որ արևելքի թագաւորներին համար
13 ճանապարհ պատրաստվի ։ Եւ տեսի որ վիշապի բե-
րանիցն՝ ու գազանի բերանիցը՝ և սուտ մարգարէի
բերանիցն երեք պիղծ հոգի էին դուրս գալիս գոր-
14 տի նման ։ Ինչու որ նորանք դիւական հոգիք էին՝
որ նշաններ էին անում, և գնումէին բոլոր երկրի
թագաւորների մօտ՝ որ նորանց ժողովեն կռվելոյ

համար, Ամենակարող Տէրի մեծ օրումը. (պատ-
15 ճառնոր այսպէս ասաց Տէրը) Ահա՛ գողի նման
եմ գալիս, երանի՜ նորանց որ արթուն լինին, և
իրենց շորերը պահպանեն. որ մերկ ման չ'գան, և
16 իրենց ամօթանքը չերևի: Եւ կ'ժողովեմ նորանց
մինտեղ՝ որ Եբրայեցերէն Արմաքեդօն է կոչվում:
17 Եւ եօթներորդ հրեշտակն իրեն սկաւառակն թա-
փեց օդի վերայ. և մեծ ձայն դուրս եկաւ երկնքի
(տաճարից) ու աթոռից՝ որ ասումէր թէ՝ Էլաւ:
18 Եւ փայլատակմունք և ձայներ և որոտմունք է-
լան. և մեծ շարժմունք էլաւ՝ որ այնպէսի մեծ
շարժմունք չի էլած սկզբիցը՝ քանի որ մարդիք
19 երկրի վերայ հաստատվել են: Եւ մեծ քաղաքն ե-
րեք կտոր էլաւ, և ազգերի քաղաքները վեր ըն-
կան. և մեծ Բաբիլօնը յիշվեցաւ Աստուծոյ առա-
ջին, որ իրեն սրտմտութեան գինոյ բաժակն նո-
20 րան տայ: Եւ ամեն կղզիները փախան, և սարերը
21 միջից առնվեցան: Եւ երկնքիցը մեծ մեծ կար-
կուտ էր վեր գալիս մարդկանց վերայ, մինը մին
տաղանդի կշռքի չափով. և մարդիք հայհոյեցին
Աստուծոյն երկնքումը՝) այն կարկտի պատուհասի
համար, ինչուոր մեծ և սաստիկ էր այն պատու-
հասը:

ԳԼ. ԺԷ

Նեռին թագաւորութեան նկարագրութիւնը մեծ պոռնկի օրինակով:

1 Եւ այն եօթն հրեշտակներից՝ որ այն եօթն բա-
կաւառակներն ունէին՝ մինն եկաւ խօսեց ինձ հետ՝

և ասաց. Ե'կ այստեղ՝ և քեզ ցոյց կ'տամ այն
մեծ պոռնկի դատաստանն, որ շատ ջրերի վերայ
2 է նստում, Որ նորա հետ պոռնկվեցան երկրի թա-
գաւորներն՝ ու երկրի բնակօղները նորա պոռնկու-
3 թեան հարբեցնօղ գինովը հարբեցան: Եւ ինձ հո-
գովս առաւ տարաւ անապատ տեղ. և մին կին
տեսի որ կարմիր գազանի վերայ նստած էր, և լի-
քըն էր հայհոյութեան անունով. և այն գազանն
4 որ տեսի՝ եօթն գլուխ ունէր և տասն եղջիւր: Եւ
այն կինը ծիրանիներ և կարմիրներ էր հագել, և
ոսկով և մարգարիտով և պատուական ակունքնե-
րով զարդարված էր, և մին ոսկի բաժակ ունէր
իրեն ձեռումը, որ լիքն էր գարշելի և պիղծ պո-
5 ռընկութենով: Եւ նորա ճակատումը գրված էր
անունն՝ խորհուրդ. Մեծ Բաբիլօնը՝ պոռնիկների
6 և երկրի գարշելիների մայրը: Եւ տեսի որ այն
կինն հարբած էր սրբերի արիւնովը՝ և Յիսուսի ա-
մեն վկաների արիւնովը. և երբոր տեսի նորան՝
7 մեծ զարմանքով զարմացայ:՝ Եւ հրեշտակն ասաց
ինձ. Ինչո՞ւ համար զարմացար. ես կասեմ քեզ
այն կնկան խորհուրդը, և այն գազանին էլ՝ որ
նորան վերկալած ունի. որ եօթն գլուխ ունի և
8 տասն եղջիւր: Գազանդ որ տեսիր՝ նա էր, և չէ,
և պիտի դժոխքիցը դուրս գայ՝ և կորուստը գնայ.
և ամենքն որ երկրի վերայ բնակված են՝ որ նո-
րանց անունները գրված չե՛ն կենաց գրքին մէջ
աշխարհքի ստեղծագործութենից հետէ՝ կ'զար-
մանան երբոր տեսնեն այդ գազանդ որ էր, և չէ,
9 և մօտ է: Այստեղ է իմաստութիւնը՝ նա որ միտք
ունի. այն եօթն գլուխն՝ եօթն սարերն են որ կի-

նը նորանց վերայ նստած է. (և նորանք եօթն թա-
10 գաւորներ են.) և եօթն թագաւոր էին, հինգը
վեր ընկան, և մինը կայ, և մինը դեռ չէ եկել.
11 և երբոր գայ՝ մին քիչ ժամանակ ունի։ Եւ գազա-
նըն որ էր, և չէ, նա էլ ութերորդն է. և այն
12 եօթնիցն է, և պիտի կորուստը գնայ։ Եւ տասն
եղջիւրներն որ տեսիր՝ տասն թագաւոր են. որ
դեռ թագաւորութիւն չեն առել, բայց պիտի
ճիշտ մին ժամի չափ թագաւորի պէս իշխանու-
13 թիւն առնեն այն գազանի հետ։ Սորանք մին կամք
ունին, և իրենց զօրութիւնը և իշխանութիւնը
14 կ'տան գազանին։ Եւ կռիւ կանեն Գառին հետ,
և Գառն կ'յաղթէ նորանց, ինչու որ նորանց Տէրն
է, և թագաւորների Թագաւորը. և նորանք՝ որ
նորա հետ են կոչված, ընտրված և հաւատաց-
15 եալ։ Եւ ասաց ինձ. Այդ ջուրդ որ տեսիր՝ որ
տեղ որ պոռնիկը նստած էր, ժողովուրդներ են,
16 և բազմութիւններ և ազգեր և լեզուներ։ Եւ տա-
սըն եղջիւրներն՝ որ տեսիր գազանումը, նորանք
(կ'ատեսնեն պոռնկին) և կատեն նորան. և նորա
17 մարմինը կուտեն՝ և կրակով կայրեն նորան։ Պատ-
ճառ որ Աստուած դրաւ նորանց սրտին մէջ՝ որ
նորանք մին կամք ունենան, և որ իրենց թագա-
ւորութիւնը տան գազանին՝ մինչև որ Աստուծոյ
18 խօսքը կատարվի։ Եւ կինն որ տեսիր՝ այն մեծ քա-
ղաքն է, որ թագաւորութիւն է անում երկրի
թագաւորութիւնների վերայ։

ԳԼ. ԺԸ

Մեծ Բաբիլոնի անկումը։

1 Եւ այս բաներիցս ետև տեսի որ մին ուրիշ հրե-
շտակ երկնքիցը վեր էր գալիս՝ որ մեծ իշխանու-
թիւն ունէր, և երկիրը լուսաւորվեցաւ նորա փառ-
2 քիցը։ Եւ մեծ ձայնով աղաղակեց՝ և ասաց.
Վէ՛ր ընկաւ այն մեծ Բաբիլոնը, և էլաւ դևերի
բնակութիւն՝ և ամեն պիղծ հոգիների կենալոյ
տեղ, և ամեն անսուրբ և ատելի հոգիների բանտ։
3 Պատճառ որ նորա պոռնկութեան գինոյ բարկու-
թենիցը խմեցին ամեն ազգերն ու երկրի թագա-
ւորները՝ որ նորա հետ պոռնկվեցան. և երկրի վա-
ճառականները հարստացան նորա փափկութեան
4 առատութենիցը։ Եւ ձայն լսեցի երկնքիցն՝ որ ա-
սումէր. Դո՛ւրս եկէք դորա միջիցն ի՛մ ժողովուրդ,
որ մասնակից չ'լինիք դորա մեղացը, և դորա պա-
5 տուհասը չ'նդունիք. Ինչու որ դորա մեղքերը հա-
սին մինչև երկինքը. և Աստուած յիշեց դորա
6 անիրաւութիւնները։ Եւ հատուցումն արէ՛ք դո-
րան՝ ինչպէս որ դա հատուցումը տուաւ ձեզ, և
թո՛ղ դա իրեն գործածների չափովը երկու պատիկ
առնէ. և այն բաժակն որ դա լցրուց ձեզ, լցրէ՛ք
7 դորա համար երկու չափով. Եւ որչափ որ իրեն
փառաւորեց և փափկացաւ, այնչափ սուգ և տան-
ջանք հատուցումը տուէ՛ք դորան. ինչու որ իրեն
սրտումն ասումէր՝ թէ Միշտ թագուհի պիտի նըս-
տիմ՝ և որբևայրի չե՛մ լինիլ. (և էլ սուգ չե՛մ

8 տեսնիլ)։ Նորահամար ճիշտ մին օրումը պիտի
գան նորա վերայ պատուհասՙ մահ, և սուգ, և
սով, և կրակով պիտի այրվի. ինչուոր հզօր է Տէր
9 Աստուածն որ նորա դատաստանն արաւ։ Եւ լաց
և կոծ կանեն նորա վերայ երկրի թագաւորներնՙ որ
նորա հետ պոռնկվեցան և խաղացին. և ողբ կա-
նեն երբոր տանջանքով նորա այրվելոյ ծուխն կը
10 տեսնեն։ Հեռու կ'կանգնեն նորա տանջանքի վա-
խիցըՙ և կասեն. Վա՛յ քեզՙ մե՛ծ քաղաքդ Բաբի-
լօն, զօրաւոր քաղաք. ինչուոր ճիշտ մին ժամու-
11 մը քո դատաստանդ եկաւ հասաւ։ Եւ երկրի վա-
ճառականները ողբ և սուգ կանեն քեզ վերայ,
ինչուոր ո՛չ մինը չ'կայ որ նորանց բեռներն առնէ։
12 Եւ քեզանից էլ շահ չ'լինիլ ոսկոյ և արծաթի և
պատուական ակունքներիՙ և մարգարիտի և բեհե-
զի և ծիրանի և ոսկէթելի և կարմիր որդի, և ա-
մեն կերպ խնկէ փայտիՙ և ամեն փղի ոսկորից շի-
նած ամաններ, և ամեն ազնիւ փայտից և պղնձից
13 և երկաթից և կիճ քարից շինած ամաններ, Եւ
կինամօն և ամեն կերպ խունկ և իւղ և կնդրուկ,
և գինի և ձէթ, և շարմաղի ալիւր և ցորեն, և
ամեն կերպ ապրանք, արջառ և ոչխար. և ձիանք
և կառքերՙ այն որ մարդկանց մարմիններին և հո-
14 գիներին կ'վայելէ։ Եւ քո անձիդ ամեն ցանկու-
թիւնը գնաց քեզանից, և ամեն լուսով փայլող
վայելչութիւնը, պարարտն ու գիրացածը և սպի-
տակը գնաց քեզանից, և էլ չես գտնիլ դորան։
15 Եւ ամեն վաճառականներնՙ որ սորանցով հարստա-
ցանՙ նորանից հեռու կ'կենան քո տանջանքի վա-
16 խիցը լաց և սուգ անելով. Կասեն. Վա՛յ վա՛յ

այն մեծ քաղաք, որ բեհեզներ և ծիրանի և կար-
միր որդ էիր հագած. և ոսկով և ազնիւ քարե-
17 րով և մարգարիտով զարդարված. Ինչուոր ճիշտ
մին ժամի մէջ այնչափ մեծութիւնդ պակասվեցաւ.
և ամեն նաւավարներն ու այն ամենքն որ նաւով
տեղեր են գնում, և նորանք որ նաւի մէջ են գոր-
ծում, և այն ամենքն որ ուռկան են բանացնումՙ
18 հեռու կ'կանգնեն լաց լինելով, Եւ կաղաղակենՙ
նորա այրվելոյ ծուխը տեսնելով և կասեն։ Ո՞ր
19 քաղաք է նման այս մեծ քաղաքին. Եւ հող կ'ձը-
գեն իրենց գլխներին վերայ, և մեծ ձայնով կա-
ղաղակեն և լաց և սուգ անելով կասեն. Վա՛յ
վա՛յ մեծ քաղաք, որ նորանով էինք հարստանում
ամենքս, որ ծովի վերայ նաւեր ունէինք քո պատ-
ուականութեան համար. Ի՞նչպէս մին ժամի մէջ
20 ապականված կործանվեցար։ Ուրա՛խ էլէք նորա
վերայ երկինքՙ և սուրբ առաքեալք և մարգարէք,
ինչուոր Աստուած ձեր դատաստանը դատեց նո-
րա վերայ։

21 Եւ մին զօրաւոր հրեշտակՙ մին քար առաւ մեծ
ջաղացաքարի պէսՙ և ձգեց ծովի մէջ ասելով.
Այսպէս պիտի սաստիկ վէր ընկնի Բաբիլօն մեծ
22 քաղաքը, և էլ չի՛ գտնվիլ. Եւ էլ քնար ածող-
ների, և երաժիշտների և արուեստականների, և
և փող փչողների և թմբուկի ձայն չ'պիտի՛ լսվի
23 քո միջումդ։ Եւ ճրագի լոյս և ջաղացի ձայն էլ
բնաւ չ'պիտի երեւի քո միջումդ. և փեսայի ձայն
և հարսի ձայն էլ չ'պիտի լսվի քեզանում. և ո՛չ
էլ քո վաճառականներդ երկրի մեծաւորներ և
փառաւորներ կ'լինին. որ նորանք քեզանով էին ու-

բախանում, պարծենում. ինչուոր քո դեղատուու-
թեան կախարդութենովը ամեն ազգերը մոլորվե-
24 ցան ։ Եւ քեզանում գտնուաւ մարգարէների և սըր-
բերի և այն ամենի արիւնն՝ որ կենդանեաց երկ-
րումը գրված են ։

ԳԼ. ԺԹ

Ընտրուածներին յաղթանակի երգը որ Աստուծոյ դատաստանը կատարվել է մեծ պոռնկին նկատմամբ ։

1 Եւ սորանից ետեւ մեծ բազմութեան ձայն լսեցի
երկնքումն՝ որ ասում էին. Ալէ՛լուիա, փրկութիւն
և փառք և պատիւ և զօրութիւն մեր Աստուծոյն։
2 ինչուոր նորա դատաստանները ճշմարիտ և արդար
են. որովհետեւ այն մեծ պոռնիկը դատեց իրեն
պոռնկութենովը, և իրեն ծառաների արիւնի վը-
3 րէժը խնդրեց նորա ձեռքիցը ։ Եւ երկրորդ անգամ
էլ օրհնեցին և ասացին, Ալէ՛լուիա. և նորա
ծուխը դուրս էր գալիս յաւիտեանս յաւիտենից ։
4 Եւ քսան և չորս երէցներն ու չորս կենդանիքները
վէր ընկան և երկրպագութիւն արին Աստուծոյն՝
որ իրեն փառաց աթոռի վերայ նստած էր՝ և ա-
5 սացին. Ամէն՝ Ալէ՛լուիա ։ Եւ աթոռիցը ձայն էր
դուրս գալիս՝ ասելով. Օրհնեցէ՛ք Աստուծոյն՝ նո-
րա ամեն ծառաներդ, և դուք է՛լ որ նորանից
6 վախում էք՝ փոքրներդ և մեծերդ ։ Եւ մեծ բազ-
մութեան ձայն լսեցի՝ շատ ջրերի ձայնի պէս, և
սաստիկ որոտմունքի ձայնի նման, որ դարձեալ ա-
սում էր. Ալէ՛լուիա, պատճառնոր Ամենակարող

7 Տէր Աստուածը թագաւորեց ։ Խնդա՛նք և ուրա՛խ
լինինք, և փա՛ռք տանք նորան. ինչուոր Գառնի
հարսանիքն եկաւ. և կինն՝ (նորա հարսն) իրեն
8 պատրաստեց ։ Եւ տվվաւ նորան՝ որ սպիտակ սուրբ
և լուսով փայլող բեհեզ հագնի. ինչուոր բեհեզը
9 սրբոց արդարութիւնն է ։ Եւ երէցներիցը մինն ա-
սում էր ինձ. Գրէ՛ դա, Երանելի՛ են այն ամենքն՝
որ կանչված են Գառնի հարսանիքի ընթրիքը. (և
ասաց ինձ՝ սա են Աստուծոյ ճշմարիտ խօսքերը ։)
10 Եւ ես վէ՛ր ընկայ նորա առաջին որ երկրպագու-
թիւն անեմ նորան. և ասաց ինձ. Զգո՛յշ կաց՝
մի՛ ընկներ իմ առաջիս, ինչուոր ես էլ ծառայ
ընկեր եմ քեզ հետ և քո եղբայրներիդ հետ, որ
Յիսուսի Քրիստոսի վկայութիւնն ունին. միայն
Տէր Աստուծոյն երկրպագութիւն արա՛. (պատ-
ճառնոր այդ տեսիլքդ և մարգարէութեան հոգիդ
Յիսուսի հաստատութենովն է.) ինչուոր Յիսուսի
վկայութիւնը Սուրբ Հոգովն է, որ մարգարէնե-
րումն էր ։
11 Եւ տեսի երկինքը բացված, և ահա մին սպի-
տակ ձի. և նա՝ որ նորա վերայ հեծած էր, կո-
չվում էր Հաւատարիմ և Ճշմարիտ, և արդարութե-
12 նով է դատաստան անում՝ և կռվում ։ Եւ նորա
աչքերը կրակի բոց, և նորա գլխի վերայ շատ
պսակներ կար. և անուն ունէր գրած, որ նորան
13 ո՛չ մինը չի գիտում՝ բայց միայն ինքն ։ Եւ իրեն
վերայ արիւնով ներկած շոր էր ձգել. և նորա ա-
14 նունն Աստուծոյ Բան էր կոչվում ։ Եւ երկնքի զօ-
րավարներն ու զօրքերը՝ նորա ետեւէն գնում էին
սպիտակ ձիով սուրբ և սպիտակ բեհեզ հագած ։

15 Եւ նորա բերանիցը սրած սուր էր դուրս գալիս,
որ նորանով զարկէ ազգերին . և նա երկաթէ գա-
ւազանով կ'հովուէ նորանց . և Ամենակարող Աս-
տուծոյ բարկութեան սրտմտութեան գինոյ հնձա-
16 նը նա պիտի կոխէ ։ Եւ իրեն վերարկուին վերայ
և իրեն անդամներին վերայ գիր ունէր գրած .
ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐ՝ ԵՒ ՏԷՐԵՐԻ ՏԷՐ ։
17 Եւ ուրիշ հրեշտակ տեսի՝ որ կանգնած էր արե-
գական վերայ, և մեծ ձայնով աղաղակեց և ա-
մեն թռչուններին՝ որ երկնքի մէջ թռչումեն՝ ա-
սաց . Եկէ՛ք հաւաքուեցէ՛ք մեծ Աստուծոյ ընթրի-
18 քը ։ Եւ կերէ՛ք թագաւորների մարմինները, և
ձիանքի՝ և նորանց վերայ ամեն հեծածների մար-
մինները, և ազատների և ծառաների՝ մեծի և
փոքրի մարմինները ։
19 Եւ տեսի գազանին և երկրի թագաւորներին և
նորանց զօրքերին մինտեղ ժողոված՝ որ կռիւ ա-
նեն նորա դէմ որ այն սպիտակ ձին հեծել էր՝
20 և նորա զօրքերին դէմ, Եւ գազանը բռնվեցաւ,
և նորա հետ սուտ մարգարէն էլ՝ որ նշաններ էր
անում նորա առաջին, և նորանցով մոլորացրուց
նորանց՝ որ գազանի դրոշմն առին, և նորանց էլ՝
որ երկրպագութիւն արին նորա պատկերին . և նո-
րանց այնպէս կենդանի ձգեցին կրակի լճին մէջ՝ որ
21 ծծմբով այրվումէ ։ Եւ ուրիշները մեռան այն ձիոյ
վերայ նստողի սրիցն, որ նորա բերանիցը սուր էր
դուրս գալիս . և ամեն թռչունքները կշտացան նո-
րանց մարմիններիցը ։

ԳԼ. Ի

Կապելը և արձակելը վիշապը · Գոգ և Մագոգ · վերջին դատաստան ։

1 Եւ մին ուրիշ հրեշտակ տեսի՝ որ վէր էր գալիս
երկնքիցը, և դժոխքի բանալիքն ունէր, և մին մեծ
2 շղթայ իրեն ձեռումը ։ Եւ այն առաջին վիշապին
բռնեց՝ որ է Բանսարկուն և սատանան, և նորան
3 կապեց հազար տարի . Եւ ձգեց նորան դժոխքի
անդունդը, և փակեց՝ և կնիք դրաւ նորա վերայ՝
որ էլ չ'մոլորացնէ ազգերին, մինչեւ որ հազար
տարին լցվի . և նորանից ետեւ պէտք է որ նա
մին քիչ ժամանակ արձակվի ։
4 Եւ աթոռներ տեսի, և նորանց վերայ նստեցին .
և դատաւորութիւն տվվաւ նորանց, որ ընտրէն
նորանց հոգիքն որ գլխատվել էին Յիսուսի վկա-
յութեան համար՝ և Աստուծոյ բանին համար . և
նորանց որ երկրպագութիւն չի արին գազանին,
(և ո՛չ էլ նորա պատկերին), և նորա դրոշմը չա-
ռին իրենց ճակատն՝ և ո՛չ էլ իրենց աջ ձեռին
վերայ . և սորանք կենդանացան՝ և Քրիստոսի հետ
5 թագաւորութիւն արին հազար տարի ։ Եւ սորա-
նից ետեւ էլ ո՛չ ո՛վ չ'կենդանացաւ մեռելների-
ցը, մինչեւ որ հազար տարի լցվի . սա է առաջին
6 յարութիւնը ։ Երանի՛ այն սրբերին, որ բաժին
ունին առաջին յարութեան մէջ . սորանց վերայ
իշխանութիւն չունի երկրորդ մահը . բայց Աստու-
ծոյ՝ և (Տէր Յիսուսի) Քրիստոսի քահանայք կ'լի-

նին. և նորա հետ կ'թագաւորեն հազար տարի ։
7 Եւ հազար տարուան ետեւ՝ կարձակի սատանա-
յին՝ և այն բանտիցը կ'հանէ. և դուրս կ'գայ և
կ'մոլորացնէ բոլոր ազգերն որ երկրի չորս կողմումն
են. և Գոգն ու Մագոգն էլ (իրեն ձեռքն կառ-
նէ՝) որ ամեն զօրքերն կռւի մէջ ժողովէ. որ նո-
8 րանց համարը ծովի աւազի պէս է ։ Եւ դուրս կը-
գան երկրի լայնութեան վերայ, և սրբերի բա-
նակները և սիրելի քաղաքը կ'պատեն չորս կողմով.
9 Եւ երկնքիցը կրակ վէր կ'գայ Աստուածանից՝ և
հայրէ կ'սատակացնէ նորանց և նորանց զորագլուխ
սատանան՝ որ նորանց մոլորացրուց՝ կ'ձգվի կրակի
և ծծմբի ծովը, որտեղ որ այն գազանն՝ ու սուտ
10 մարգարէն էին. Եւ կ'չարչարվին ցերեկ և գիշեր ։
11 Եւ մին սպիտակ մեծ աթոռ տեսի, և նորան էլ
որ նորա վերայ նստած էր. որ նորա երեսիցն եր-
կինքն ու երկիրը փախումէին և փախչում. և տեղ
12 չ'գտվաւ նորանց համար ։ Եւ տեսի որ մեռելները
մեծ և փոքր՝ կանգնած էին աթոռի առաջին. և
գրքեր էին բացվում. և մին ուրիշ գիրք բացվաւ,
որ է կենաց գիրքը, և մեռելները դատվեցան այն
13 գրքերիցն իրենց գործքերին պէս ։ Եւ ծովն իրեն
մէջի մեռելներն տուաւ, և մահն և դժոխքն իրենց
մեռելները. և ամեն մէկն իրենց գործքերին պէս
14 դատվեցան ։ Մահն ու դժոխքը մտանվեցան կրակի
15 լճին մէջ. (սա է երկրորդ մահն ։) Եւ ով որ գըր-
ված չ'գտվաւ կենաց գրքին մէջ, կրակի լճին մէջ
ձգվեցաւ ։

ԳԼ. ԻԱ.

Յօթներորդ տեսիլք Նոր Երուսաղէմի համար ։

1 Եւ տեսի՝ նոր երկինք և նոր երկիր. ինչուոր ա-
ռաջին երկինքն ու երկիրն անցաւ. և ծով էլ չը-
2 կար ։ Եւ սուրբ՝ քաղաքն՝ այն նոր Երուսաղէմը
տեսի՝ որ վէր էր գալիս Աստուածանից երկնքիցը՝
պատրաստված ինչպէս մին զարդարված հարսն ի-
3 րեն մարդուն համար ։ Եւ ձայն լսեցի երկնքիցն՝ որ
ասումէր. Ահա՛ Աստուծոյ խորանը մարդկանց մի-
ջումը, նա կ'բնակվի նորանց հետ. և նորանք
կ'լինին նորան ժողովուրդ, և սա նորանց Աստուած ։
4 Եւ ամեն արտասունքը կ'սրբէ նորանց աչքերիցը.
և էլ մահ չի՛ լինիլ, ո՛չ սուգ և ո՛չ աղաղակ. և
ո՛չ ցաւ և ո՛չ աշխատունք էլ չի՛ լինիլ, ինչուոր
5 առաջինն անցաւ ։ Եւ նա որ աթոռին վերայ նըս-
տած էր՝ ասաց ինձ. Ահա՛ ամեն բան նոր եմ շի-
նում. և ասաց ինձ. Գրէ՛. ինչուոր՝ այս խօսքե-
6 րըս ճշմարիտ և հաւատարիմ են ։ Եւ ինձ ասաց.
Եղաւ. ես եմ Ալֆան և Օն. սկիզբն ու վերջը.
ես ձրի կ'տամ ծարաւներին կենաց աղբիւրի ջը-
7 րիցը ։ Ով որ յաղթէ, այս ամենս կ'ժառանգէ.
և ես կ'լինիմ նորան Աստուած, և նա կ'լինի ինձ
8 որդի ։ Բայց ծուլերին և անհաւատներին, մար-
դասպաններին և պոռնիկներին, և կախարդներին,
և կռապաշտներին՝ և մահաբեր տուօղներին՝ և
ամեն սուտ ասօղներին՝ և ամբարիշտներին՝ նորանց
բաժինն այն լճումը կ'լինի որ կրակով և ծծմբով
վառվումէ. որ է երկրորդ մահը ։

9 Եւ մինն այն եօթն հրեշտակներիցն՝ որ այն եօ-
թըն սկաւառակըն ունէին՝ վերջին եօթն պատու-
հասներովը լցված, ինձ մօտ եկաւ. խօսեց ինձ
հետ և ասաց. Ե՛կ՝ ցոյց տամ քեզ Գառին կին
10 հարսը: Եւ հոգովս առաւ տարաւ ինձ մին բար-
ձըր սար, և ինձ ցոյց տուաւ այն մեծ սուրբ քա-
ղաքը՝ Երուսաղէմը, որ երկնքիցն էր վեր եկել Աս-
11 տուածանից: Եւ Աստուծոյ փառքն ունէր. և
լուսաւորութիւն ունէր պատուական ակունքի պէս,
[illegible] սառուցի պէս պայծառ յասպիս քարի նը-
12 ման: Եւ նորա պարիսպները մեծ և բարձր էին,
և տասներկու դուռն ունէր. և տասներկու դըռ-
նումն տասներկու հրեշտակ. և ամեն մէկ դռների
վերայ անուններ էին գրած՝ որ Իսրայէլի տասներ-
13 կու ցեղի անուններն էին: Արեւելքի կողմիցն ե-
րեք դուռն, և հիւսիսի կողմիցն երեք դուռն, և
հարաւի կողմիցն երեք դուռն, և արեւմուքի կող-
14 միցն երեք դուռն: Եւ քաղաքի պարիսպը տասն-
երկու հիմունք ունէր, և նորանց վերայ Գառի
15 տասներկու առաքելոց տասներկու անունները: Եւ
նա որ ինձ հետ խօսումէր, մին ոսկէ եղէգ ունէր
իրեն ձեռումը, որ քաղաքը և նորա դռները և
16 նորա պարիսպները չափէ: Եւ քաղաքը քառակու-
սի էր. և որչափ նորա երկայնութիւնն էր, այն-
չափ էլ նորա լայնութիւնը՝ և բարձրութիւնը՝
հաւասար. և նորա երկայնութեան չափը տասն-
երկու հազար ասպարէզ էր. և նորա լայնութիւնն
17 ու բարձրութիւնը միաչափ: Եւ նորա պարիսպը
չափեց հարիւր և քառասուն և չորս ասպարէզ.
18 մարդոյ չափովն՝ որ հրեշտակինն է: Եւ քաղաքի

պարիսպների շինուածքը յասպիս քարից էր. և քա-
ղաքն մաքուր ոսկի էր՝ յիստակ և սպիտակ ապա-
19 կոյ նման: Եւ քաղաքի հիմունքն ամեն ազնիւ ա-
կունքներից էր. պարսպի առաջին հիմն յասպիս,
երկրորդը՝ շափիղայ, երրորդը՝ պղնձադոյն, չորրոր-
20 դը զմրուխտ. Հինգերորդը՝ եղնգնաքար, վեցեր-
րորդը՝ սարդիոն, եօթներորդը՝ ոսկէքար, ութեր-
րորդը՝ բիւրեղ, իններորդը՝ տպազիոն, տասներոր-
դը՝ քրիսոպրասոս, տասնեւմէկերորդը՝ ամէթօս:
21 Եւ տասներկու դուռն կար՝ տասներկու մարգարի-
տից՝ մին ձեւով. և ամեն մէկ դուռն մին մար-
գարիտից. և քաղաքի բաց փողոցները յիստակ
22 ոսկի՝ ինչպէս պայծառ ապակի: Եւ տաճար չ՚տե-
սի՛ նորան մէջ, ինչու որ Տէր Աստուած Ամենակա-
23 րօղը՝ և Գառն էր տաճար նորա մէջ: Եւ քաղա-
քը ընաւ արեգակին և լուսնի պէտք չունէր՝ որ
լուսաւորեն նորան. ինչու որ Աստուծոյ փառքը
միշտ լուսաւորումէր նորան, և նորա ճրագը Գառ-
24 նըն էր: Եւ հեթանոսները նորա լուսովն էին գը-
նում. և երկրի թագաւորները նորա փառաց լոյսը
25 հագնում: Եւ նորա դռները չէին փակվում ցերեկ
և գիշեր, այլ միշտ բաց էին մնում. և գիշեր էլ
26 չէր լինում նորան մէջ: Եւ ազգերի փառքն ու
27 պատիւը կ'բերեն նորա մէջ: Եւ ընաւ չար կամք
ունող չի՛ մտնիլ այն տեղ, և ո՛չ էլ պիղծ՝ և սը-
տութիւն, բայց միայն նորանք՝ որ Գառին կենաց
գրքին մէջ գրված են:

ԳԼ. ԻԲ

Յաւիտենական կենաց հաստատ ուրախութիւնը։

1 Եւ ինձ մին մաքուր գետ ցոյց տուաւ, կենդանի
ջրի՝ սառուցի նման փայլուն, որ Աստուծոյ և
2 Գառի աթոռիցն էր դուրս գալիս։ Եւ քաղաքի
բաց փողոցներին միջումն գնում. և գետի եզերքն
այս կողմից այն կողմից կենաց ծառ կար՝ որ տասն-
երկու պտուղ էր բերում. ամեն մէկ ամսին իրենց
պտուղը տալիս էին. և ծառի տերևը բժշկու-
3 թիւն էր հեթանոսներին համար։ Եւ այնտեղն էլ
բնաւ նզովք չ'կար. և Աստուծոյ և Գառի աթո-
ռըն էր նորանում. և նորա ծառաները պաշտում
4 էին նորան։ Եւ նորա երեսը տեսնումէին. և նորա
5 անունը գրած էր նորանց ճակատումը։ Եւ գիշեր
չ'կար այնտեղ, և բնաւ ճրագի և արեգական լոյս
պէտք չէր այնտեղ. պատճառ որ Տէր Աստուածը
լուսաւորումէր նորանց. և կ'թագաւորեն յաւի-
տեանս յաւիտենից։

6 Եւ ասաց ինձ. Այս խօսքերս հաւատարիմ և
ճշմարիտ են. և Տէրը սուրբ մարգարէից Աստուա-
ծը իրեն հրեշտակն ուղարկեց՝ որ իրեն ծառաներին
7 ցոյց տայ նա որ շուտով պիտի լինի։ Ահա՛ շու-
տով կ'գամ. երանի՛ նորան՝ որ այս գրքի մարգա-
րէութեան խօսքերը կ'պահէ։

8 Եւ ես Յօհաննէս այս ամեն բաներս լսեցի և
տեսի. և երբոր լսեցի և տեսի, վեր ընկայ՝ որ եր-
կրպագութիւն անեմ այն հրեշտակին, որ այս ա-

9 մեն բաներս ցոյց էր տալիս ինձ։ Եւ ինձ ասաց.
Մի՛ ընկնիր իմ առաջս՝ և երկրպագութիւն մի՛ ա-
ներ. ինչու որ ես էլ ծառայ ընկեր եմ քեզ և քո
եղբայրներին՝ որ այս գրքիս մարգարէութեան խօս-
քերը կ'պահեն. Աստուծոյն երկրպագութիւն արա՛։
10 Եւ ասաց դարձեալ ինձ. Մի՛ կնքեր այս գրքի
մարգարէական խօսքերը. ինչու որ ժամանակը մօ-
11 տացել է։ Ով որ անիրաւ է՝ թո՛ղ անիրաւա-
նայ, և ով որ կեղտոտ է՝ թո՛ղ կեղտոտվի, և ո՛վ
որ արդար է՝ թո՛ղ էլ արդարանայ, և ով որ սուրբ
12 է՝ թո՛ղ էլ սրբվի։ Ահա՛ շուտով կ'գամ՝ և իմ
վարձքս էլ ինձ հետ. որ ամեն մէկին հատուցա-
13 նեմ իրեն գործքին պէս։ Ե՛ս եմ Ալֆան և Օն.
սկիզբն ու կատարածը, առաջինն ու վերջինը։
14 Երանելի՛ են նորանք՝ որ նորա պատուիրանքները
կ'պահեն. նորանք իշխանութիւն ունին որ կենաց
փայտից ուտեն՝ և քաղաքի դռնովը ներս մտնեն։
15 Բայց դուրս պիտի գնան շները, և մահադեղ տը-
ւողները, սպանողները, և կռապաշտները, և այն
ամենքն որ ստութիւն են սիրում։

16 Ե՛ս՝ Յիսուս իմ հրեշտակս ուղարկեցի՝ որ վկայէ
ձեզ եկեղեցիներից՝ այս բանիս համար. ե՛ս եմ
Դաւթի արմատն ու ցեղը, և առաւօտու պայծառ
17 աստղը։ Եւ Հոգին՝ և հարսն ասումեն Ե՛կ. և նա
որ լսումէ թո՛ղ ասէ՝ Ե՛կ. և ով որ ծարաւ է՝
թո՛ղ գայ, և նա որ կամենումէ կենաց ջուրը ձրի
առնել։

18 Եւ վկայումեմ ամենին՝ ով որ այս գրքի մար-
գարէութեան խօսքերը լսումէ. թէ որ մինն բան
աւելացնէ սորա վերայ, Աստուած կաւելացնէ նո-

րա վերայ այն եօթն պատուհասներն՝ որ այս գըր-
19 *քումս գրված են ։ Եւ թէ որ մինն այս գրքիս*
մարգարէութեան խօսքերիցը բան պակասցնէ ,
Աստուած կ'պակասցնէ և կ'կտրէ նորա բաժինը
կենաց ծառիցը , և սրբերի քաղաքիցն՝ որ այս
20 *գրքումս գրված են ։ Նա որ այս բաները վկայեց՝*
ասաց . Եւ շուտով կ'գամ. Ամէն ։ Ե՛կ Տէր Յի-
21 *սուս ։ Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը լինի՛*
ամէն սրբերին վերայ . Ամէն ։

ՎԱԽՃԱՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Им. А. Мясн...
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՎՐԻՊԱԿ

113—123 *Երեսների ճակատները* ''ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ'' *լինելոյ տեղ վրիպումով* ''ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ'' *ելած է ։*

ՀՀ Ազգային գրադարան
NL0028336

1278